ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

ՍԱՂՄՈՍԱՑ

Յօրինեալ 'ի Տ. Միքայէլ վարդապետէ Չամչեանց՝ Յաշակերտութենէ ամենապատիւ Մխիթարայ Աբբայհօր.

Տպագրեալ հրամանաւ Հոգեւոր տն Ստեփաննոսի Գծի Աբբայի Ագոնց, ծայրագոյն Արքեպիսկոպոսի.

Յամի տն. 1818. և հայոց. ՌՄԿԷ.

Բաժանեալ 'ի տասն հատորս:

ՀԱՏՈՐ Դ.

Կրոնք
715

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

[illegible]
ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]

Նուէր

Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966



Մի՛ նախանձիր ընդ չարս· և մի՛ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութ՟ին։

ԿԱՆՈՆ Գ

ՍԱՂՄՈՍ ԼԶ.

Հանգամանք կենաց արդարոց եւ մեղաւորաց՝ համեմատութեամբ միմեանց. միանգամայն եւ յորդոր գնելոյ 'ի բարին, եւ խոտորելոյ 'ի չարէն. հայեցեալ թէ զինչ լինիցի այնոցիկ՝ որք առնեն զբարին, եւ զինչ այնոցիկ՝ որք գործեն զչար:

Սաղմոս 'ի Դաւիթ:

1 Մի՛ նախանձիր ընդ չարս. եւ մի՛ ընդ այնոսիկ՝ որ գործեն զանօրէնութիւն: 2 Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս դալարի խոտոյ վաղվաղակի անկցին: 3 Յուսա՛ 'ի Տէր՝ եւ արա՛ զքաղցրութիւն. բնակեա՛ յերկրի, եւ հովուեսցիս 'ի մեծութեան նորա: 4 Ուրախեա՛ 'ի Տէր, եւ նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո, եւ յուսա՛ 'ի նա: 5 Նա արասցէ եւ հանցէ որպէս զլոյս զարդարութիւն քո. եւ զիրաւունս քո որպէս զօր հասարակ: 6 Հնազանդ լեր Տեառն՝ եւ պաղատեա՛ նմա. եւ մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առաջնորդեալ իցեն ճանապարհք իւրեանց, ընդ մարդոյ՝ որ գործեն զանօրէնութիւն: 7 Լռեա՛ 'ի բարկութենէ, եւ հանգիր 'ի սրտմտութենէ, եւ մի՛ նախանձիր ընդ չարս: 8 Զի չարք վաղվաղակի սատակեսցին. բայց որք համբերեն Տեառն, նոքա ժառանգեսցեն զերկիր: 9 Փոքր մի՝ եւ այլ ո՛չ եւս իցէ ամպարիշտն. խնդրեսցես զտեղի նորա, եւ ո՛չ գտցես: 10 Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր. եւ փափկասցին 'ի բազում խաղաղութենէ իւրեանց: 11 Սպասէ մեղաւոր արդարոյ, եւ կրճտէ 'ի վերայ

նորա զատամունս իւր. այլ տէր ծիծաղեսցի զնովաւ: 12 Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա: 13 Սուր հանին մեղաւորք, և լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատն և զտնանկն. սպանանել զայն՝ որ խոնարհն է սրտիւ: 14 Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին: 15 Լաւ է սակաւիկ ընդ արդարոյ, քան զբազում մեծութիւն մեղաւորաց. և բազուկք ամպարշտաց խորտակեսցին: 16 Հաստատէ տէր զարդարս, և ճանաչէ զաւուրս անբծից. ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի: 17 Մի՛ ամաչեսցեն նոքա 'ի ժամանակս չարութեան. այլ յաւուրս սովոյ յագեսցին: 18 Զի մեղաւորք կորիցեն. այլ թշնամիք տն 'ի փառաւորել և 'ի բարձրանալ իւրեանց՝ պակասեսցին որպէս ծուխ, զի պակասէ: 19 Փոխ առնու մեղաւորն՝ և ո՛չ հատուցանէ. այլ որ արդարն է՝ ողորմի և տայ: 20 Ոյք օրհնեն զտէր՝ ժառանգեսցեն զերկիր. և ոյք անիծանեն, սատակեսցին 'ի նմանէ: 21 'Ի տնէ ուղղին գնացք առն. զճանապարհս նորա նա կամի յոյժ: 22 Թէպէտ և գայթակղեսցի, նա մի կործանեսցի. զի տէր ձեռնկալու է նորա: 23 Մանուկ էի ես՝ և ծերացայ. և ո՛չ տեսի զարդարն արհամարհեալ, և ո՛չ զզաւակ նորա՝ թէ մուրանայ հաց: 24 Զօրհանապազ ողորմի և տայ փոխ. զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան: 25 Խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի. բնակեսցես յաւիտեանս յաւիտենից 'ի նմա: 26 Տէր սիրէ զիրաւունս, և ո՛չ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա: 27 Անօրէնք հալածեսցին 'ի միասին. և զաւակ ամպարշտաց սատակեսցի: 28 Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր. և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից 'ի նմա: 29 Բերան արդարոյ խորհի զիմաստութիւն. և լեզու նորա խօսեսցի զիրաւունս: 30 Օրէնք այ իւրոյ են 'ի սրտի իւրում. և մի գայթակղեսցին գնացք նորա: 31 Հայի մեղաւորն ընդ արդար, և խնդրէ սպանանել զնա. այլ տէր ո՛չ թողու զնա 'ի ձեռս նորա, և ո՛չ դատապարտէ զնա՝ յորժամ դատի զնա: 32 Համբեր՛ տն՝ և պահեա՛ զճանապարհս նորա. և բարձր արասցէ զքեզ 'ի ժառանգել զերկիր. և զսատակումն մեղաւորաց տեսցես: 33 Տեսի զամպարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրսն լիբանանու: 34 Անցի՝ և ահա ո՛չ էր. խնդրեցի՝ և ո՛չ գտաւ տեղի նորա: 35 Պահեա՛ զանմեղութիւն. և տե՛ս զուղղութիւն. զի գոն մնացուածք առն խաղաղարարի: 36 Անօրէնք հալածեսցին 'ի միասին. և զաւակ ամպարշտաց կորիցէ: 37 Փրկութիւն արդարոյ 'ի տնէ է. վերակացու է նոցա 'ի ժա-

ժամանակի նեղութե։ 38 Օգնեսցէ նոցա տէր՝ և փրկեսցէ զնոսա. ապրեցուսցէ 'ի մեղաւորաց, և կեցուսցէ զնոսա, զի յուսացան 'ի նա։

ՎԵՐՆԱԳԻՐ.

Սաղմոս 'ի դաւիթ.

ՅԵԲՐԱՅԱԿԱՆՆ ՄԻՈՎ բառիւ դնի այս վերնագիր, լեդաւիդ այս է 'ի դաւիթ։ 'Ի լատինս յաւելեալ լինի և բառդ ինքն. և դնի այսպէս. * սաղմոս ինքեան դաւթի ||։ Զայսմանէ այլուր ևս յիշատակեալ է մեր։ (տես. և 'ի ներած. գլ. Է. 'ի վերջն։)

Սոյն այս սաղմոս է մի յայնց՝ որք յօրինեալ են ըստ այբուբենից՝ երկու երկու տամբք. իբր զի առաջին տունն սկսանի տառիւս ալէֆ. և երկրորդն 'ի նոյն շարայարի։ Երրորդ տունն սկսանի տառիւս բէթ. և չորրորդն 'ի նոյն կարգի։ Հինգերորդ տունն սկսանի տառիւս գիմալ. և վեցերորդն 'ի նոյն բերի։ Սոյն կարգ պահի մինչև 'ի վերջն։ Ուստի և տունք այսր սաղմոսի՝ որք առ մեզ յերեսուն և ութ համարս բովանդակին, մարթ էր երեսուն և ութ գրով սկզբնաւորիլ յայբէ մինչև 'ի վերջինն. իսկ յայլս աւելի տամբք առաջի դնին։ Եւ թէպէտ յեբրայականն 'ի միում կարգի պակասի տառ մի, այն է տառդ այն. բայց այդ երևի վրիպակ լինել. (զորմէ տես 'ի համարն. 27։) Իսկ թէ յինչ առթէ յօրինեալ իցէ դաւթի զայս սաղմոս, ամենևին չէ յայտ։ Ոմանք 'ի րաբունեացն հրէից ասեն՝ թէ զայս ասաց դաւիթ իբր գուշակութիւն օրհասական մահուն սաւուղայ։ Ոմանք թէ զայս ասաց՝ հայելով 'ի հալածանս աբեսաղոմայ։ Այլ այսպիսի բանք չունին հաստատուն հիմն, և կարծեօք միայն աւանդին։ Կան ևս՝ որք ասեն՝ թէ զայս ասացեալ իցէ ուրումն ղևտացւոյ, հայելով 'ի գերութիւնն բարեկենի, առ 'ի քաջալերելոյ զգերեալսն։ Բայց այս կարծիք չէ ինչ հաւանական. և ոչ կարէ իւիք հաւաստիլ։

Այս մի ինչ յայտնի է, զի այս սաղմոս է իբր հանգանակ կամ իբր հաւաքումն պէսպէս վճռոց կամ առակաց առ 'ի յորդոր բարեպաշտից վասն այլ և այլ իրաց։ ա̄. վասն զգուշանալոյ 'ի ճանապարհէ ամպարշտաց՝ առաջի դնելով զհանգամանս թշուառութեան և չարութեան նոցա։ բ̄. վասն յուսալոյ յա̄ծ, յայտ արարեալ զխնամս նորա 'ի վերայ արդարոց յուսացելոց 'ի նա։ գ̄. վասն հետևելոյ ազգի ազգի առաքինական գործոց, ցուցանելով թէ քանի բարիս առնէ ա̄ծ այնպիսեաց. և զիարդ մերժէ զայնոսիկ՝ որք գործեն զչար. զորմէ տես և 'ի գիրս յոբայ. (գլ. իա̄.) զի և այն ըստ սմին առաջի դնի։

ԲԱՆ

ա̄. Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ որ գործեն զանօրէնութիւն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այր արդար և բարեպաշտ՝ տեսեալ թէ չարք կամ ամպարիշտք զհետ լինելով անօրէնութեան, և 'ի նմին կալով, վայելեն 'ի մեծութեան, կամ անդորրութեան 'ի հանգստեան, յերկուս յանբարի և յանկարգ կիրս կարէ շարժիլ, այսինքն կամ 'ի հաճութիւն, և կամ 'ի տհաճութիւն. հաճութիւն ընդ գործն՝ իբր ընդ բարի ինչ, և տհաճութիւն ընդ անձն՝ իբր ընդ չար։ Քանզի դատելով 'ի միտս, թէ ամպարիշտք իւրեանց անօրէնութեամբք յաջողութիւն գտանեն՝ կարէ շարժիլ 'ի նմա կիրք հաճելոյ ընդ գործ նոցա իբր ընդ բարի. և երբեմն ընդ հակառակն՝ նողկալով ընդ գործ նոցա՝ կարէ շարժիլ 'ի նմա տհաճութիւն կամ կիրք ատելոյ զգործօղն. և զի չար է հաւանութիւն այսպիսի կրից՝ թէ առաջնոյն, և թէ երկրորդին, զգուշացուցանէ և ասէ։

Մի՛ նախանձիր ընդ չարս. և մի՛ ընդ այնոսիկ որ գործեն չանօրէնութեան։ Բառս նախանձել՝ երբեմն առեալ լինի 'ի չար կողմն՝ փոխանակ մախալոյ. և երբեմն 'ի բարին՝ փոխանակ նախանձայոյզ լինելոյ կամ նախանձաւոր։ Իսկ զանազանութիւն սոցա յայտ է. զի յերկոսին ևս կրկին ներհական ներգործութիւնք տեսանին։ 'Ի չար նախանձն տեսանի նախ հաճութիւն կամ ուրախութիւն ընդ չար օտարին. տեսանի երկրորդ տհաճութիւն, կամ տրտմութիւն ընդ բարին նորա։ Այլ 'ի բարի նախանձն կամ 'ի նախանձաւորութեան երկոքին այսոքիկ ընդ հակառակն պատահին. այսինքն հաճութիւն 'ի բարին՝ կամ իբր 'ի բարին. և տհաճութիւն ընդ չարն կամ իբր ընդ չարն։

Ապա զի մի արդարն զչար գործս կամ զանօրէնութիւնս ամպարշտաց իբրև բարի ինչ վարկանելով հաճեսցի և հաւանեսցի ընդ այնս նախանձաւորութեամբ, և կամ զանձինս նոցա չար համարելով՝ տհաճեսցի կամ ատեսցէ զնոսա, ազդ առնէ մարգարէն և ասէ. մի նախանձիր ընդ չարս. այսինքն մի հաճեսցիս ընդ գործս չարաց և ընդ անօրէնութիւնս նոցա իբրև ընդ բարի ինչ, կամ իբրև ընդ այնպիսի՝ որ իցէ առիթ յաջողութեան գտանելոյ. և մի ևս հակառակ այսմ՝ տըհաճելով ընդ գործս նոցա՝ ատեսցես զանձինս նոցին. այլ՝ ատեա՛ զգործսն, և ցաւեաց ընդ գործօղսն։

Այլ քննել արժան է. զի մարգարէն փոխանակ ըզգործսն առաջի դնելոյ և ասելոյ, մի նախանձաւոր լինիր ընդ գործս չարաց, կամ ընդ գործս անօրինաց, զգործօղսն 'ի մէջ բերէ. մի նախանձիր ասէ ընդ չարս, և այլն։ Այլ յայտ է թէ զայս ըստ հասարակ ոճոյ 'ի կիր առնու, զի այս ոճ սովորական է յընթացս սաղմոսին. որպէս և յայտ է. իբր զի երբեմն փոխանակ գործօղին զգործն առաջի դնէ սաղմոսերգուն, և երբեմն փոխանակ գործոյն զգործօղն։ Սակայն առանօր այս ոճ առաւել զգուշութիւն տայ արդարոյն քան թէ եղեալ էր պարզագոյնս. իբր զի եթէ չէ արժան նախանձաւոր լինել ընդ գործօղ չարին, քանի ևս ընդ չար գործ նորա, որով և գործօղն լինի չար։ Իսկ դարձեալ որովհետև այս յորդոր մարգարէին կարգի 'ի զգուշութիւն ոչ միայն 'ի գործս չար մարդկան, այլև 'ի գործօղսն, զգործօղսն առաջի դնելով՝ ոչ միայն զնոսին՝ այլ և զգործս նոցա տայ իմանալ. Իսկ 'ի յաւելուլն զկնի և զայն եւս հաստատուած բանի թէ և մի ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէնութիւն, սովին բացատրէ զառաջին ասացեալն, և առաւել սաստկացուցանէ զզգուշութիւն իւր, որպէս թէ եղեալ էր. մի նախանձիր ընդ չարս, և մի ընդ ո՛ և իցէ մարդ՝ որ գործէ զանօրէնութիւն ինչ՝ թէ ծանր իցէ, և թէ թեթև. կամ թէ մի նախանձիր ընդ այնոսիկ, որք օրէնս ունին, և ընդդէմ օրինաց գործեն. Մարթ է աստանօր՝ զբառդ Նախանձիլ ըստ յատուկ նշանակութեան 'ի չար կողմն առնլով՝ յայլ իմն միտս վերածել զմեկնութիւն այսր բանի, փոխանակ մախալոյ. և ըստ այսմ առեալ, կամի ասել. 'ի տեսանելդ զչարս և զգործօղս անօրէնութեան անդորրացեալ յերջանկութեան՝ մի տրտմիր, և մի ասեր ընդ միտս, տեսանես՝ զիարդ յաջողեալ է դոցա. զիարդ երջանկացեալ կան 'ի բարութեան, զիարդ 'ի հանգստեան վայելեն. իսկ ես որ այսչափ աշխատիմ ծառայել տ̃ն, 'ի թշուառութեան և 'ի տուայտութեան մաշիմ. Զայսպիսիս մի իշխեսցես ասել խորհիլ 'ի միտս. և մի յայսպիսիս ուշաբերելով տրտմեսցիս 'ի սիրտ քո.

Մարթ է դարձեալ զբառդ Նախանձիլ առնուլ աստ փոխանակ զչարելոյ, կամ պժգալոյ կամ զայրանալոյ. զորմէ արժան է գիտել. զի այր արդար տեսանելով երբեմն զանկարգ արարս ոմանց, կամ զո՛ և իցէ սխալանս, զորս գուցէ նոքա յանգէտս կամ յանհոգս գործեն. և կամ յեղանակ գործելոյ իւրեանց արհամարհանս ցուցանեն, այսու տեսութ̃բ զչարի և պժգայ, կամ զայրագնի. եւ և 'ի բարկութ̃ի գրգռի, երբեմն նաև 'ի կռիւ. Յայսպիսի կիրս ասէ մի ըմբռնիր, այլ անտես արարեալ՝ կաց 'ի խաղաղութեան. զի մի և դու 'ի նոյնս համարի գոյցես. Զայս եղեալ մարգարէն առաջի առնէ այժմ զպակասիլ չարաց՝ նմանաբանութեամբ իմն. և ասէ.

Բ. Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին. որպէս դալարի խոտոյ՝ վաղվաղակի անկցին.

Սբ̃ գիրք զարդարն նմանեցուցանեն հաստատուն և տեւողական ծառոց. զոր օրինակ մայրից, ոստանե-

նեաց, և այլն. որպէս յասել անդ մարգարէին. * ար-
,, դարքն որպէս զարմաւենիս ծաղկեսցին, և որպէս
,, զմայրսն Լիբանանու բազումք եղիցին ‖. (սաղ. ղա. 12.) Եւ զայս նմանութիւն տան, ոչ առ 'ի ցուցանել՝ թէ այնպիսի են, և այնչափ միայն, այլ առ 'ի ցուցանել՝ թէ հաստատուն կան և տևեն՝ յաստիս 'ի շնորհս, և 'ի հանդերձեալն 'ի փառս. զի ասի զնոցանէ * ար-
,, դարք յաւիտեան կացցեն ‖. (իմաստ. Ե. 16.) և յիշատակ նոցա յաւիտեան եղիցի՝ ըստ գրելոյ սաղմոսերգուին. (սաղ. ՃԺա. 6.)

Եւ զոր օրինակ զարդարս՝ ծառոց և այլ մեծամեծ իրաց համեմատեն սբ գիրք, սոյնպէս և զամպարիշտս յանարգ իրս օրինակեն, այսինքն 'ի ստուեր, 'ի մրրիկ, 'ի փոշի, և այլն. Եւ բազում անգամ 'ի դալարի, կամ 'ի խոտ. ըստ այնմ. * ընդ առաւօտս որպէս դա-
,, լարի բուսցին, ընդ առաւօտս որպէս դալարի զուար-
,, ճասցին և ծաղկեսցին. ընդ երեկոյս թարշամեսցին, չորասցին և անկցին ‖. (սաղ. Ձթ. 4.) Եւ թէ * 'ի բուսանել մեղաւորաց որպէս խոտ... սատա-
,, կեսցին ‖. (սաղ. ղա. 7.) Եւ թէ * Եղիցին նոքա
,, որպէս խոտ տանեաց, որ մինչչև 'ի բուսն եկեալ էր՝
,, չորացաւ ‖. և այլն. (սաղ. Ճիը. 6.) ըստ այսմ է տեսանել և յայլ բազում տեղիս.

Իսկ պատճառ հասարակ խոտոյ կամ դալարւոյ նմանեցուցանելոյ բազում է. մի՝ զի որպէս հասարակ խոտն չունելով զարմատ խոր՝ 'ի ժամանակի կարօտութե, այսինքն յերաշտութեան՝ ոչ կարէ ձգել յինքն զբաւական հիւթ երկրի, որով և ցամաքի, այսպէս և ամպարիշտք չունելով զարմատս երջանկութեան իւրեանց 'ի խորութե յաւիտենականութե. որովհետև այն երջանկութիւնք նոցա ոչ կարգին առ յաւիտենական կեանս, այլ առ ժամանակաւորս, ցամաքին, այսինքն ոչինչ օգտին. զի 'ի մեկնիլ իւրեանց 'ի ժամանակաւորացս՝ մեկնին և երջանկութիւնք նոցա. կամ որ նոյն է, 'ի մեռանիլ նոցա՝ մեռանի և երջանկութի նոցա. Երկրորդ՝ զի հասարակ խոտն՝ թէ և արմատ խոր ունիցի՝ բայց փափուկ գոլով և ոչ զօրաւոր որպէս զծառս՝ յո և իցէ պատահարաց կարէ թառամիլ և ցամաքել. այսպէս և ամպարիշտք, և երջանկութ՟իք ամպարշտաց յոյժ և իցէ դիպուածոց ներքնոց և արտաքնոց դիւրաւ կարեն եղծանիլ։ Երրորդ՝ որպէս խոտն ոտնակոխ լինելով յանասնոց և ՚ի մարդկանէ՝ գնայ յապականութիւն. այսպէս և երջանկութ՟իք ամպարշտաց բազում անգամ ոտնակոխ լինելով ՚ի պէսպէս իրաց, եւ և ՚ի մարդկանէ՝ դառնան ՚ի թշուառութ՟ի։ Չորրորդ՝ որպէս խոտն որչափ և գեղեցիկ իցէ ՚ի ցամաքելն անդ տգեղանայ, այսպէս և երջանկութիւն ամպարշտաց, թէ և փառաւորագոյն փայլեսցի՝ ՚ի մեռանիլ նոցա վերածի ՚ի տգեղութիւն, այսինքն ՚ի դատապարտութ՟ի։ Հինգերորդ՝ որպէս ոմանք յանուշահոտ խոտոց ՚ի ցամաքելն կորուսեալ զանուշահոտութիւն իւրեանց՝ նեխին, և ծանրանան գարշ հոտով, այսպէս և ամպարիշտք՝ որք բուրեն զհոտ երջանկութ՟ե՝ վաղվաղակի ցամաքեալ նեխեսցին, և բուրեսցեն զհոտ ապականութ՟ե։ Վեցերորդ՝ որպէս խոտ ցամաքեալ կերակուր լինի անասնոց և ձարակ հրոյ, սոյնպէս և ամպարիշտք ՚ի ցամաքելն այսինքն ՚ի մեռանելն՝ կերակուր լինին որդանց, և ձարակ հրոյ գեհենին։ Յայս ամենայն, և յայլ եւս բազում համեմատութ՟իս խոտոյ հայելով մարգարէն՝ ասէ։

Զի որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցեն. որպէս դալարի խոտոյ վաղվաղակի անկցեն։ Խոտ ասելով իմանայ զի և իցէ հասարակ խոտ. իսկ դալարի խոտոյ ասելով իմանայ զթարմ խոտ կամ զփափուկ մասն խոտոյ (թէ վայրի իցէ, և թէ ընտանի)։ Հայելով յառաջինն՝ դնէ ցամաքիլ. իսկ հայելով յերկրորդն՝ դնէ անկանել։ Եւ թէպէտ երկոքին եւ ըստ նոյն մտաց դնին, բայց պատճառ այլեայլ օրինակաւ դնելոյն է կրկին. մի՝ զի ցուցցէ՝ թէ ամպարիշտք յաստի կեանս ցամաքին ՚ի խնամութ՟է ա՟ծային շնորհաց, և ապա անկանեն ՚ի դատապարտութ՟ի յաւիտենական. և մտանեն ՚ի հուրն անշէջ իբրև զչորացեալս։ Եւ մի եւս՝ զի ցուցցէ զարագութ՟ի ասացելոյ իւրոյ. քանզի հայելով ՚ի ցամաքիլն կամի ասել. զոր օրինակ խոտն սակաւ տեւողութ՟ի ունի ՚ի կեանս՝ զի վաղվաղակի ցամաքի, այսպէս և ամբարիշտք սակաւ ունին տեւել յերջանիկ կեանս. զի յետ փոքու հանդերձեալ են կորուսանել զայն։ Հայելով և յանկանելն՝ կամի ասել. որպէս թարմ և փափուկ խոտ 'ի կանաչին 'ի փափկութե՜ անդ՝ փոքու ինչք վնասի, կամ կերակուր լեալ կենդանեաց՝ վաղվաղակի անցանէ յապականութի. սոյնպէս պատահի և ամպարշտաց, զի 'ի փափկանալ անդ իւրեանց՝ թշուառութեց պատահին, և յետ մահուն կերակուր լեալ որդանց՝ լինին իբրև զշեղեալս։ Իսկ եթէ բազում ամս ևս կեցցեն յերջանկութե՜՝ անցցէ ամենայն. և ոչ ինչ օգտեսցին յայնց՝ զորս ունէին։

Զայս և ինքեանք իսկ հանդերձեալ են վկայել ասելով. * Զինչ շահ եղև մեզ հպարտութիւն, և զինչ
„ մեծութի ամբարտաւանութեցն իցէ մեզ նպաստա-
„ ւոր. եանց այն ամենայն իբրև ստուեր, և իբրև
„ զհամբաւ առն ընթացեալ. և իբրև զնաւ սահեալ
„ 'ի վերայ ջուրց... նոյնպէս և մեք եղեալք՝ պակա-
„ սեցաք. և առաքինութեան նշանակ ոչ կարացաք
„ ցուցանել. բայց 'ի չարիս մեր մաշեցաք ‖. (իմաստ. Ե. 8 = 14։)

Առաւել քան զոսա ունին ասել այնոքիկ՝ որք ունելով զքրիստոնէական հաւատս՝ և տնկեալ գոլով 'ի մէջ եկեղեցւոյ իբրև զծառս՝ յանդգնին գործել զգործս անհաւատի, և ցամաքին իբրև զխոտ. որով և հանդերձին անցանել յառաւելագոյն թշուառութի։

Այսպիսիքս որպէս կարեն չարեօք իւրեանց լինել օրինակ չարագործութեան, սոյնպէս կարեն և պատժովք իւրեանց լինել օրինակ զգաստութեան. որպիսի եղև կինն ղովտայ. զի դառնալով յարձան աղի՝ հայեցողաց յինքն մատուցանէր աղ զգաստութեան. ըստ որոյ արձան աղի կարեն ասիլ նախայիշեալ չարք. զի հայելով մեր 'ի նոսա զգաստանամք չգնալ ըստ նոցա 'ի չար գործս՝ զորս թողաք. * յիշեցէք զկինն
„ ղովտայ ‖ (ղուկ. ժէ. 32։)

Այլ աստ քննել արժան է. զի մարգարէն փոխանակ ասելոյ՝ երջանկութիւնք ամպարշտաց եղծցին, և ես թէ գործք նոցա անցցեն, և այլն. զանձանց նոցին խօսելով ասէ. * որպէս խոտ վաղվաղակի ցամաքես-
„ ցին ‖. և այլն. (ըստ որում դնէ 'ի համարն. 8. 9. 27. 33. և 36։) Այլ զմի օրինակ ասացաք 'ի վերոյ և այլուր՝ այս է ոճ ճարտասանական. և միտ բանին 'ի նոյն հայի, զի եթէ ինքեանք ցամաքին և անցա-

նեն, ապա և երջանկութիւնք նոցա ընդ նոսին, զի ոչ են նոցա, և ոչ վայելեն 'ի նոսա. բայց ոչ այսպէս է և վիճակ արդարոց. զի նոքա յա՟ծ ունելով զամենայն, և 'ի նա դնելով զյոյս իւրեանց, վայելեն նովաւ 'ի խաղաղութեան. առ որ յորդոր լեալ մարգարէին ասէ։

Գ. Յուսա 'ի տէր. և արա քաղցրութիւն. բնակեա յերկրի. և հովուեսցիս 'ի մեծութեան նորա։

Այս բան է իբր պատասխանի առ տարակուսեալ անձն. զի 'ի զգուշացուցանել մարգարէին մի նախանձիլ ընդ չարս, և 'ի հաստատել՝ թէ չարք կորնչին և չքանան, մարթ էր հարցանել. զինչ ապա պարտ իցէ առնել առ 'ի ստանալ զերջանիկ կեանս, և առ 'ի վայելել 'ի բարութեան. պատասխանէ այսմ հարցման, ասելով։

Յուսամ 'ի տէր (և արա քաղցրութիւն)։ Կամի ասել. մի ինչ տարակուսիր՝ թէ զինչ պարտիս առնել առ 'ի լինել երջանիկ. ահա ցուցանեմ քեզ ճանապարհ աներկեան. զյոյս քո դիր յայն, որ է աղբիւր երանութեան. յայն ասեմ՝ որ է սկիզբն ամենայն բարութեան. 'ի նոյն յայն՝ որ է ինքնութիւն ամենաբաւական լինելութեան։ Եւ 'ի յուսալդ 'ի նա՝ ջանա գործել զբարիս. և առ այս յարէ։

Եւ արա քաղցրութիւն։ Որ շաղկապդ և՝ կրկին մտօք յարէ զայս բան ընդ վերնոյն. մի՝ պատճառաբար, և մի ևս՝ հետևաբար։ Ըստ առաջնոյն կամի ասել. որպէս զի կարիցես ճշմարտապէս յուսալ յա՟ծ, հարկ է քեզ առնել զքաղցրութիւն. այսինքն հաճիլ ընդ հաճոյս ա՟յ, և գործել զայն. զի սա ծնանի զյոյս առ ա՟ծ. իսկ առանց հաճելոյ ընդ այն՝ ընդ որ հաճի ա՟ծ՝ ոչ է մարթ յուսալ յա՟ծ. Ըստ երկրորդին կամի ասել, եթէ ճշմարտապէս յուսաս յա՟ծ՝ գտանես 'ի նմանէ զօգնութիւն, և նովաւ կարես առնել զքաղցրութիւն։ Իսկ քաղցրութիւն ասելով իմանայ զայնպիսի գործս՝ որք են բարիք՝ ոչ միայն յինքեանս, այլև առաջի ա՟յ և առաջի մարդկան. և են ընդունելի ա՟յ. և իբրև քաղցր ընծայ նուիրելի 'ի սեղան նորա. (զորմէ տես և 'ի սաղ. ժդ. 2։) Զայս եդեալ մարգարէին հետեւեցուցանէ և ասէ ։

Բնակեա՛ զերկիր ։ Կամի ասել․ եթէ ձեռնարտակես յուսաս յա̃ծ, և կատարես զհաճոյս նորա, ամենայն ինչ քոյ է․ քոյ է երկինք և քոյ է երկիր․ քոյ է լիութիւն աշխարհիս և քոյ է մեծութ̃ի նորա․ զի զայս ամենայն արար ա̃ծ վասն նորա, որք կատարեն զհաճոյս իւր․ ուրեմն և դու 'ի կատարելդ զհաճոյսն ա̃յ՝ համբերութեամբ վայելեսցես յայս ամենայն ։ Եւ զի զայս ասէ մարգարէն առ այնպիսի ոք, որ դեռ ևս կեայ 'ի մարմնի 'ի վերայ երկրի, վասն այնորիկ 'ի սկզբան ոչ զժառանգութ̃ի երկնից, այլ զխաղաղական բնակութ̃ի երկրի առաջի դնէ այնպիսումն․ բնակեա՛ ասէ զերկիր ։ այսինքն խաղաղութ̃բ բնակեսջիր 'ի վերայ երկրի․ զի եթէ բարեկամ ես և սիրելի այնմ, որոյ է երկիր, և որոյ է ամենայն լիութիւն երկրի, ո՛վ կարէ մերժել զքեզ յերկրէ անտի, կամ 'ի բաց հեռացուցանել ըզքեզ անտի․ և մնայ քեզ այնուհետև վայելել 'ի մեծութ̃ե նորա․ և առ այս յարէ ։

Եւ հովուեսցիս 'ի մեծութեան նորա ։ Այսինքն՝ որ ինչ մեծութ̃ի և բարութիւն կայ 'ի վերայ երկրի, հովուեսցիս յայն ամենայն ։ Ուր բառդ հովուել՝ դնի փոխանակ հանգստեամբ վայելելոյ 'ի բարիս, և բերկրական հոգւով անցուցանելոյ զկեանս 'ի մէջ բազմադիմի բարութեանց՝ որք գտանին յաշխարհի ։ Զայսպիսի բարութ̃իս կոչէ մարգարէն մեծութ̃ի երկրի՝ հայելով յարդարն․ և այս՝ ըստ երից․ նախ՝ զի որ արդարն է՝ վայելէ 'ի բարութ̃իս աշխարհի, ոչ ըստ փոքրկութ̃եց նոցին, զորպիսիս ունին չարք․ այլ ըստ մեծութ̃եցն, զորս միայն արդարք վայելեն, ըստ որում իբրև յա̃յ առեալ ունին․ վասն զի բարիք աշխարհիս յայնժամ համարին մեծ, և են մեծ, յորժամ վայելեալք լինին իբրև պարգևք ա̃յ, որպէս վայելեն արդարք․ իսկ յորժամ վայելեալք լինին սոսկ իբրև ախորժական ինչ կամ իբրև հաճոյ զգայութեան, որպէս առնեն չարք․ ոչ համարեալ լինին մեծ, այլ փոքր ։ Երկրորդ՝ զի բարիք աշխարհիս թէպէտ և համեմատութ̃բ յաւիտենական բարեաց յանչափս փոքր են, և ոչ կարեն ասել մեծ, բայց քանզի արդարք կարգեն զայնս առ յաւիտենական մեծութիւն, և ջանան հասնել նոքօք զայնս, սոքին են մեծ համարին, և կարեն կոչիլ մեծութիւն, ոչ զի մեծ են, այլ զի 'ի մեծ ինչ դիմեն։ Եւ թէպէտ չարք առաւել մեծ համարին զնոսա, բայց այս համարումն ոչ է վասն այսորիկ, զի այնոքիկ բարիք են այնպիսի, այլ վասն այնորիկ՝ զի ինքեանք փոքրկացեալ են. այսինքն նուաստացեալ են, որով և սոքին մեծ երևին արտաքուստ յաչս նոցա. ուստի և մեծութիւն վարկանին զնոսա։ Երրորդ՝ զի որ ինչ մեծ է, յայտ է թէ ունի ինչ առաւելութի. արդ բարիք աշխարհիս առաւելուն յարդարսն վասն ոչ կամելոյ նոցա ունել զառաւելն, վասն այնորիկ և այն բարիք մեծութի են առ նոսա։ Իսկ որովհետև ամբարիշտք պակաս համարին զայնոսիկ բարիս՝ որչափ և իցեն, զի ոչ կարեն լիանալ նոքօք և կամ շատանալ, վասն այնորիկ և այնոքիկ բարիք՝ որք մեծութի են առ արդարս, փոքրկութի են առ ամբարիշտս։

Այլ վասն զերանութեանս նորա՝ որ դնի 'ի վերայ հեզոցն, գիտելի է, զի սա թէպէտ և կարէ աստանօր յարաբերել զա̃ծ, որպէս թէ եղեալ էր, * և հանգուս-
„ ցին 'ի մեծութենն ա̃յ ||. ըստ որում երևի առնուլ լամբրոնացւոյն և վարդանայ. բայց ըստ իմն յարաբերէ զերկիրն. որպէս թէ եղեալ էր. * և հանգուս-
„ ցին 'ի մեծութենէ երկրի ||։ Եւ այս յայտ է նաև 'ի կարգէ բանին։

Այլաբանօրէն՝ այս երկիր հայի յեկեղեցի. յոր միտս կամի ասել. բնակեալ յեկեղեցւոջ ա̃ն, և միանիցին խորհրդովք նորա. զի չիք արտաքոյ նորա ոչ ճշմարիտ մեծութիւն հոգևորական, և ոչ փրկութիւն յաւիտենական։

Վերածաբար, հայի յարքայութիւն երկնից. և յայս միտս՝ յորդորէ զմեզ մարգարէն՝ փութալ ունել անդ բնակութի, և բերկրել 'ի մեծութե նորա յաւիտեան։ Բարոյաբար՝ հայի 'ի հաստատութի առաքինութեց, մանաւանդ 'ի խոնարհութիւն, որ օրինակի յերկիր. յորում թէ որ հանգիցէ, վայելեսցէ զմեծութիւն նորա. զի որ փոքրկացուցանէ զանձն, մեծասցի։ Դարձեալ ըստ բարոյական իմաստից այս բան հայի յայնպիսի անձն, որ զ յոյս իւր եդեալ յա̃ծ՝ քաղցրութե̃ վարի ընդ այլս. որով և խաղաղութեամբ կեայ 'ի

715

վերայ երկրի. և ըստ այսմ բառս հեզութիւն՝ նշանակէ քաղցրաբարոյութիւն. որով 'ի վարիլ մարդոյ ընդ այլս նաև ընդ խստաբարոյս՝ ոչ խստանայ, այլ անուշութեամբ կենցաղի, և այնու զխստութիւն նոցա ևս կակղացուցանէ և զդառնութիւն նոցին քաղցրացուցանէ, եթէ բանիւ և եթէ գործով. * պատասխանի ողոք ,, դարձուցանէ զսրտմտութիւն. բան խիստ յարուցանէ ,, զբարկութիւն ‖. (առակ. ժե. 1.) խիստ ընդ խստի հարեալ ձայն հնչէ. իսկ * ցօղ զովացուցանէ զտապ, ,, և բան բարի (զովացուցանէ) քան զտուրս ‖. (սիր. ժը. 15.)

Ծառացաւ ընկերդ ընդդէմ քո, և արձակեաց 'ի քեզ զբանս նախատանաց իբրև զռումբս և իբրև զնետս, դու քաղցրաբարոյութեամբդ զիջո՛ և շիջո՛. Յարձակիլ ամբաց 'ի վերայ պարսպի, պարսպապահք դնեն պարկս բրդոյ կակղոյ առ պարսպաւ. 'ի հարկանել ամբաց ընդ այնս՝ կորուսանեն զոյժն և թուլանան. դու ևս դիր զքև զքաղցրաբարոյութիւնդ. ապա թէ ոչ՝ առաւել ևս խստացուցանես զբանս ընկերիդ և դառնացուցանես զսիրտ նորա. որով ոչ միայն նմա վնասես, այլ և քեզ. զի 'ի խստանալդ խորտակիս, և երբեմն իբրև ապակի բեկանիս նաև 'ի փոքրիկ քարէ. Եթէ իցէ 'ի քեզ սէր առ ընկերն, 'ի սիրոյ անտի իբր 'ի հրոյ ցոլանայ առ նա քաղցրութիւն, և 'ի բանից նորին ոչ շիջանի. բայց ոչ գիտեմ որպիսի հուր է սէր քո՝ որ կաթիլ մի ջրով շիջանի. որով և քաղցրութիւնդ եղծանի, և տիրէ 'ի քեզ դառնութիւն. և 'ի լինել այսր՝ ոչ ևս կարես խաղաղութեամբ բնակիլ յերկրի, և ոչ ևս երջանկաբար հովուիլ 'ի մեծութեան նորա. Ուրեմն ըստ յորդորելոյ մարգարէին առ 'ի ձեռն ըզքաղցրութիւն, և նովաւ վարելով վայելեսցես 'ի բարութեան. և եթէ տկարասցիս 'ի սմին և կամ պակասեսցիս իւիք՝ դիմեա՛ յԱստուած և խնդրեա՛ 'ի նմանէ. և նա յաջողեսցէ առաւել քան զոր կարես. և ահա յայս յորդորելով մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ.

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

Տ17

Դ. Խնդա՛ 'ի Տ̃ր, և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո. յայտնեա՛ առաջի Տեառն զճանապարհս քո, և յուսա՛ 'ի նա։

Ե. Նա արասցէ և հանցէ որպէս զլոյս զարդարութիւն քոյ. և զիրաւունս քո որպէս զօր հասարակ։

Գրէ սուրբ գրիգոր լուսաւորիչն մեր 'ի յաճախապատում գիրս. (ճառ. ժԹ.) թէ * որպէս տղայք՝ որ
„ ոչ գիտեն բանիւք զպէտս մարցն խնամոց առնուլ.
„ այլ արտասուօք զպէտսն խնդրեն և առնուն 'ի խնամոց
„ սիրոյն. զի ոչ դադարեն 'ի լալոյ, մինչև ամենայն
„ խնամք 'ի մարցն կատարին. և ապա դադարին
„ և զուարճանան և հանգչին, այսպէս պարտ է լինել
„ մեզ առ բարեգութ տէրն, որ խնամէ զմեզ յաներևոյթս
„ արարչական սիրով‖։ Եթէ ոչ լամք և
արտասուեմք՝ այսինքն եթէ ոչ խնդրեմք, զայրանայ.
զի որպէս գրէ ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. Է.)
* մարդիկ 'ի խնդրելն (ուրուք ինչ 'ի նոցանէ) ձանձրանան.
„ իսկ Ա̃ծ յոչ ժտելն զայրանայ. և 'ի ժտելն
„ բանայ զգութ իւր, և լցուցանէ առատութ̃բ կամօք
„ իւրովք‖։ Եւ զի կամի տալ՝ կամի ևս զի աղաչեսցուք,
որպէս զի տացէ. յայս իսկ բազում իրօք և
բազում առակօք յորդոր լինի մեզ աղաչել և խնդրել.
և որպէս ասէ իգնատիոս վարդապետ ('ի մեկն. ղուկ.
ժա̃. 7.) * եթէ ոչ կամէր տալ, և ոչ աղաչանօքն
„ տայր, և ոչ այսպիսի առակս յօդէր, և ոչ հնարս
„ մեզ ուսուցանէր՝ հանդիպել շնորհին‖։

Սմին իրի և մարգարէն 'ի սոյն համարձակեցուցանէ
զմեզ աստ 'ի խնդիր մատչիլ առ Ա̃ծ. և մաղթանօք
խնդրել. իսկ եթէ չխնդրիցեմք, կամ ոչ առնումք,
և կամ զոր առնումք մեծ ինչ ոչ համարիմք, և կորուսանեմք
ևս. ուստի ասէ նախայիշեալ վարդապետդ՝
այն է յովհան ծործորեցի ('ի մեկն. մատ. գլ. Թ.)
* առանց մաղթանաց ոչ ոք առնու պարգևս յԱ̃յ. զի
„ մի կորուսցէ‖։ Իսկ թէ երբեմն ոչ առնումք զոր
խնդրեմք, այն հայի 'ի հաճոյս կամացն Ա̃յ, և յօգուտ
անձանց մերոց. որպէս պատահեցաւ մեծամեծ Ս̃րբց,
որոց ոչ լուաւ Ա̃ծ, որպէս մովսէսի 'ի մտանել յեր-

կլրն աւետեաց, երեմիայի վասն անարժանութեան ժողովրդեանն. պօղոսի՝ առ 'ի ցոյց զօրութեան ա՟ծն, և այլն: Օսոսա յառաջ բերեալ սարգսի շնորհալւոյ ('ի մեկն. ա՟. յովհ. է՟. 14. ճառ. թ՟.) յաւելու. * և
„ այս (ասէ) վասն էր գրեցաւ, զի մեք մի տրտմեսցուք
„ և մի վհատեսցուք, յորժամ խնդրիցեմք ինչ յա՟յ, և
„ ոչ առնուցումք ‖ :

Արդ 'ի չորս դասս վերածին, որք միանգամ խնդրեն ինչ յա՟յ: Յառաջին դասու են նոքա՝ որք ոչ գոլով 'ի շնորհս, կամ որ անարգեալ գոլով առաջի ա՟յ՝ խնդրեն յա՟յ ոչ զայն՝ որով ինքեանք լինին բարի, այլ զայն՝ որով ինքեանց լինիցի բարի. որպիսի են հասարակօրէն անհաւատք՝ ըստ որում են անհաւատք, ևս և այնոքիկ ամբարիշտ հաւատացեալք, որք գոլով 'ի մեղս և ոչ կամելով դառնալ 'ի մեղաց՝ կան յաղօթս առ ա՟ծ, և խնդրեն 'ի նմանէ՝ զոր օգուտ տեսանեն ինքեանց:

Յերկրորդ դասու են նոքա՝ որք խնդրեն յա՟յ զայն՝ որով ինքեանք լինին բարի, և այնու ինքեանց ևս յայտ է թէ լինի բարի. որպիսի են այնոքիկ մեղաւորք, որք դիմեն առ ա՟ծ կամօք դառնալոյ 'ի մեղաց, և բաղձեն զդուռն ողորմութե՟ նորա:

Յերրորդ դասու են նոքա, որք գոլով բարի, խնդրեն յա՟յ՝ զի լիցին և ևս բարի, կամ հաստատեսցին 'ի բարին, կամ զի ոչ գիտելով թէ իցեն բարի, խնդրեն՝ զի իցեն. որպիսի են այնոքիկ արդարք՝ որք խնդրեն զարքայութի՟ն ա՟յ, և զարդարութի՟ նորա. և կամելով յառաջանալ 'ի բարին, և զարգանալ 'ի գործս առաքինութե՟՝ թախանձանօք պաղատին առ նա:

'Ի չորրորդ դասու են նոքա, որք հասեալ 'ի չափ կատարելութեան՝ խնդրեն յա՟յ՝ ոչ զայն՝ որ իւրեանց է, այլ զայն՝ որ ա՟յ. այսինքն որք ոչ խնդրեն՝ զի լինիցի ինքեանց այսպիսի ինչ կամ այնպիսի, այլ զի յա՟մի փառաւորեսցի ա՟ծ:

Յայսպիսի խնդրողս են որք առնուն, և են որք ոչ առնուն. քանզի են ոմանք՝ որք գործունեայ կամօք խնդրեն. որպիսի են նոքա, որք 'ի խնդրելն ինչ յա՟յ՝ գործակից լեալ նմա՝ ինքեանք ևս հետամուտ լինին գտանել զայն՝ զոր խնդրեն. և գտանեն իսկ իբր 'ի բազումս ։ Այն և այլք՝ որք անգործունեայ կամօք խնդրեն ․ որպիսի են նոքա, որք 'ի խնդրելն ինչ յա՟յ՝ ոչ ջանան և ինքեանք գործակից լինել ա՟յ, և հետամուտ լինել առ 'ի գտանելոյ զխնդրեալսն, կամ որք առ անգամ մի վեր 'ի վերոյ խնդրեալ՝ դադարեն 'ի խնդրելոյ ․ և սոքա հասարակօրէն ոչ առնուն զոր խնդրեն ։

Այն և բազումք, որք թէպէտ և սրտի մտօք խնդրեն, բայց յայլմէ կողմանէ արգելս դնեն գտանելոյ զայն՝ զոր խնդրեն ․ սոքա ևս ոչ առնուն զխնդրեալսն ․ որպիսի են նոքա, որք անողորմ բարս ունին ․ և որոց խնդրեն 'ի նոցանէ՝ ոչ տան ․ և կամ թէ և չիցեն անողորմ, բայց յիմիք ժամանակի դարձուցեալ իցեն զերեսս իւրեանց 'ի կարօտելոյ, վասն որոյ և Ա՟ծ իբր թէ զերեսս դարձուցանելով 'ի նոցանէ ոչ տայ զոր խնդրեն, մինչև ծանիցեն զոր արարինն ։ Որպիսի են և նոքա որք զսիրտ իւրեանց եդեալ ունին յանկարգ ինչ՝ որ հակառակի խնդրեցելոյն ։ Որպիսի են և նոքա որք ոչ խոնարհութեամբ, այլ ծածուկ անձնահաճութ՟բ և իբր անկարօտ ընծայեցուցանեն զինքեանս առաջի ա՟յ ըստ փարիսեցւոյն ։ Որպիսի են և նոքա՝ որք թուլութ՟բ, և գաղջութ՟բ խնդրեն ինչ յա՟յ ․ և կամ տարացնդեալ խորհրդով՝ և լքեալ սրտիւ ․ և պղտորեալ կամօք կամ յաղօթս ։ Որպիսի են և նոքա՝ որք զմնոտիս և զանպիտանս խնդրեն յա՟յ և ոչ զանանցս կամ զօգտակարս հոգւոյ ․ վասն այսորիկ ասէ բարսեղ վարդապետ ․ (մարկ ․ ժդ ․) * չառնուս, զի ոչ „ զայն խնդրես, այլ զայս ‖ ․ Որպիսի են և նոքա որք 'ի խնդրելն ազատիլ յիմեքէ՝ ոչ զգուշանան անտի ․ և կամ ոչ հեռանան յառթէ այնր ։ Զայսպիսեաց ասէ առաքեալն ․ * խնդրէք, և ոչ առնուք, վասն զի չարաչար խնդրէք, „ զի անդէն 'ի ցանկութիւնս ձեր մաշեսջիք ‖ ․ (յակ ․ դ ․ 3 ․)

Այն և այլք՝ որք զայնպիսիս խնդրեն՝ որ թէպէտ և ըստ ինքեան բարի են, բայց վասն ինքեանց չեն բարի ․ վասն որոյ և Ա՟ծ բազում անգամ ոչ տայ զայն այսպիսեաց ։ Այլ կամ թէ և բարի իցեն նա և վասն ինքեանց, բայց Ա՟ծ կամելով զբարեգոյնն տալ՝ ոչ շնորհէ զայն՝ զոր խնդրեն ։

Յայսմ ա՟մք իւրաքանչիւրոք կարէ ինքնին ուսուցումն տալ՝ թէ ընդէ՞ր զոր խնդրեն մարդիկ ինչ յա՟յ՝ երբեմն առնուն և երբեմն ոչ։ Եթէ ըստ նախակարգեալ արգելչաց խնդրեսցեն՝ կամ ոչ առնուն, կամ այնչափ և այնպէս ոչ առնուն, որչափ և որպէս խնդրեն։ Իսկ եթէ ըստ պահանջեալ հանգամանացն խնդրեսցեն՝ զարժանին առնուն. զորմէ երկար գրէ և ծործորեցին ('ի մեկն. մատ. ժ՟ը. 19։) Զայսպիսի խնդրելս ժտել կոչէ մարգարէն. ասելով։

Ժտեա՛ 'ի տ՟ր. և նա տացէ քեզ զխնդրուածս սրտի քո։

Ժտելն ըստ յատուկ նշանակութե՟ն իւրում առեալ՝ երեքումբք առաւելու քան զլոկ խնդրելն. ա՟, փութահութ՟բ. բ՟, թախանձանօք. գ՟, հանապազորդութ՟բ։ Իսկ ըստ այսմ առեալ՝ կամի ասել. ըստ փութահութեանդ՝ զոր ունիս առ ա՟ծ, թախանձանօք խնդրեա՛ 'ի նմանէ. և հանապազորդեա՛ 'ի խնդիրս քո. զի թէ այսպիսի օրինակաւ խնդրեսցես, և զորգել ինչ ոչ գիցես, նա կատարեսցէ զամենայն՝ և անշուշտ տացէ՝ զոր խնդրես. զի կամի տալ. մանաւանդ թէ առաւել ցանկայ տալ քան առնուլ. 'ի տալն ոչ պակասի. և յոչ խնդրել մեր՝ զժգմնի. աղաչէ՝ զի աղաչեսցուք, այսինքն թէ կամի՝ զի խնդրեսցուք և առցուք, որպէս յայտ է 'ի նախադրելոցդ։ Եթէ յամեցուսցէ՝ զբարին գիտէ՝ երբ զի յօգուտ մեր հայելով յապաղէ, նաև զի այնու առաւել փափաքելի արասցէ զխնդրելին. եթէ փութով և դիւրաւ տայր՝ այնչափ յարգոյ ոչ երևէր տուեալն. * դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհի‖։ Ո՛չ ասէ մարգարէն՝ տացէ զխնդրուածս քո. այլ զխնդրուածս սրտի քո։ Այս ևս թէպէտ 'ի նոյն հայի, բայց թուի թէ սիրտ դնելով՝ կամի աւելի ինչ իմացուցանել՝ յերկուց կողմանց ևս. այսինքն 'ի կողմանէ տուողին, և 'ի կողմանէ խնդրողին։ Ի կողմանէ տուողին իմացուցանէ նախ՝ թէ նա գոլով ամենառատ՝ ոչ միայն տայ զայն՝ զոր յայտնի խնդրէ արդարն, այլ և զայն զոր յայտնի ոչ խնդրէ, բայց սիրտ նորա յօժարեալ է 'ի նոյն։ Երկրորդ՝ թէ ա՟ծ ոչ հայի 'ի բանս խնդրուածոցն, այլ 'ի սիրտ արդարոյն, 'ի պէտս և 'ի կարիս նորա, և ըստ այնմ առաւել տայ զպարգևս իւր քան զոր խնդրէ արդարն։

Ի կողմանէ խնդրողին իմացուցանէ, թէ որ խնդրէ ինչ յա̅յ, պարտի 'ի սրտէ խնդրել, և ոչ սոսկ բերանով. զի որպէս ասացի, ա̅ծ 'ի սիրտն հայի և ոչ 'ի բանն. և ևս պարտի ունել զսիրտ ընդունակ, և զանօթ սրտի դատարկ յանկարգութեանց. որպիսի է նա որ խնդրէ խոնարհութ̅բ հանդարտութ̅բ, և համաձայնութ̅բ ա̅ծային կամաց, և այլն։

Արտև իմացեալ լինի աստ բոլոր հոգին ըստ կամացն և ըստ մտաց. ըստ կամացն՝ 'ի փափաքել առ բարին և զբարին խնդրել սիրով. ըստ մտացն՝ 'ի ճանաչել զճշմարիտ բարին, և զայն խնդրել հաւատով. * զի „ խնդրելն 'ի հաւատոյն է, և առնուլն՝ 'ի ձեռն „ խնդրուածոյն ‖. որպէս ասէ ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. է̅.)

Ասացի * զճշմարիտ բարին ‖. որպիսի է շնորհքն ա̅յ, պարգևք առաքինութ̅ե, յաջողութ̅ի գործոց բարեաց, և որ մեծն է, արքայութիւն երկնից. իսկ որք արտաքոյ են այսպիսեաց՝ չեն վասն մեր ճշմարիտ բարի, այլ անարգ և իբր ոչինչ։ Առաքեալք բազում ինչ խնդրեալ էին 'ի ք̅նէ. բայց ք̅ս 'ի վերջին ընթրիսն ասաց ցնոսա. * մինչև ցայժմ ոչինչ խնդրեցէք ‖. (յովհ. ժ̅զ. 24.) զի զայն խնդրեցէք՝ որ էր իբր ոչինչ։ Մատեաւ առ յ̅ս մայր որդւոցն զեբեդեայ խնդրել ինչ 'ի նմանէ. զինչ խնդրես կին դու. թերևս զարքայութիւն կամ զփրկութ̅ի. գուցէ զփառս ա̅յ կամ զարդարութ̅ի նորա. զայսպիսիս ոչ խնդրէ, այլ զփառս իւր և զփառս որդւոց իւրոց. Նստցին ասէ սոքա մին ընդ աջմէ քումմէ և մին յահեկէ 'ի փառաւորութ̅ե քում. (մատ. ի̅. 21.) ըստ սմին խնդրեմք և մեք 'ի ք̅նէ, առ որս տայ պատասխանի. * ոչ գիտէք զինչ „ խնդրէք ‖. (մատ. ի̅. 22.) Սողոմոն արդարև ոչ խնդրեաց յայտնի զարքայութին ա̅յ, բայց գիտաց՝ զոր խնդրեացն. այն է արդարութ̅ի ա̅ծային իմաստութեան. (գ̅. թագ. գ̅. 10.) ա̅ծ ևս ետ նմա զայն ամենայն զոր ոչն խնդրեաց. ասելով, այդ ամենայն յաւելցի քեզ. որով ցուցանի նաև առատաձեռնութին ա̅յ. զի 'ի խնդրել զմի ինչ՝ բազում անգամ տայ զբազումս։ Արդ եղեալ մարգարէին անպայման զժտելն՝ յորդոր լինի յետագայ բանիւդ՝ այլ իմն խնդրով ևս մատչիլ առ ա՟ծ, և ասէ ։

Յայտնեա՛ առաջի տ՟ն ըզճանապարհս քո, և յուսա՛ 'ի նա ։ Թէպէտ և յայտնի է առաջի ա՟յ ամենայն ճանապարհ մեր, բայց կամի ա՟ծ՝ զի և մեք յայտնեսցուք զայն առաջի իւր, ոչ զի ծանիցէ, այլ զի ծանուսցէ, բարի իցէ, թէ ոչ բարի ։ Իսկ ճանապարհաւ խնդրեալ լինի աստ ոչ ո՛ և իցէ գործ մարդոյ՝ որպէս այլուր ասացեալ է մեր, կամ ըստ լամբրոնացւոյն * պատահմունք ընթացից մարդոյ || . այլ որոշեալ վիճակ կենաց՝ կամ ըստ վարդանայ այնպիսի վարք զոր ընտրէ մարդ, առ 'ի գնալ նովաւ առ ա՟ծ, կամ առ 'ի հասանել նովաւ 'ի փրկութիւն յաւիտենական. կամ այնպիսի կեանք, որով կամի մարդ ծառայել ա՟յ, և ժամանել յարքայութիւն ։

Այսպիսի ճանապարհ երբեմն երևի բարի, բայց կամ ոչ է բարի, և կամ վտանգաւոր ։ Երբեմն ևս թէպէտ և է բարի, բայց բարեգոյն ևս էր մարդոյ գնալ ընդ այլ՝ քան ընդ այն. զի ոչ ամենայն ճանապարհ է վասն ամենեցուն ։ Երբեմն ևս թէպէտ և է բարեգոյն, բայց տարժանելի, և դժուարագնալի, կամ մթին և տարակուսելի, և այլն ։ Արդ որ միանգամ ծառայել կամի ա՟յ, կարևոր է նմա յայտնել ա՟յ զվիճակ կենաց իւրոց, և խնդրել 'ի նմանէ՝ զի ուղղեսցէ զնոյն ։

Յայս յորդորէ մարգարէն ասելով. 'ի ժամելդ և 'ի խնդրելդ յա՟յ ուղղել զճանապարհս քո. դու ինքն ևս 'ի միտ ա՛ռ զնոյն, և ըստ տեսանելոյ քո զայն՝ դի՛ր բացայայտ առաջի ա՟յ, թէ ահա այս է ընթացք կենաց իմոց, ընդ որ գնամ, և ոչ իմանամ. աղաչեմ, դու ուղղեա՛, դո՛ւ առաջնորդեա՛, դո՛ւ արա՛ որպէս և գիտես ։ Եւ 'ի յայտնելդ զայս այսպէս՝ **յուսա՛ 'ի նա.** այսինքն զյոյս քո 'ի նա դնելով՝ ա՛կն կալ նմա, զի նա ոչ առնէ անտես. և առ այս յարէ ։

Եւ արասցէ ։ Այսինքն 'ի յայտնել քոյ զճանապարհս քոյ առաջի ա՟յ, և 'ի յուսալդ 'ի նա, նա արասցէ և կատարեսցէ ըստ այնմ՝ զոր ինքն գիտէ. իսկ թէ զի՛արդ՝ յայտ առնէ ասելով ։

Եւ հանցէ որպէս զլոյս զարդարութիւն քո. և զիրաւունս քո որպէս զօր հասարակ ։ Աստանօր արդարութ՟իք իմա-

ցեալ լինին գործք արդարք, այսինքն անարատք և կատարեալք, որք իցեն հաճոյ այ՟, և արժանի վարձուց: Իսկ իրաւամբք իմացեալ լինի աստ՝ պահանջողութի՟ պաշտպանութեն՟ այ՟. կամ արժանաւորութիւն պաշտպանեալ լինելոյ յայ՟. կամ ըստ լամբրոնացւոյն՝ այնպիսի գործ, * որոյ զղջումն ոչ հետևի. և որ ըստ
,, օրինաց կատարի ‖. որոյ և զհետ գայ արժանի գտանել պաշտպանութե՟ այ՟:

Բայց առ բարւոք իմանալոյ զասացեալսդ՝ արժան է գիտել. զի 'ի գնալ երկիւղածաց տեառն զճանապարհ առաքինութեան, կամ 'ի ծառայել նոցա այ՟, երկու ինչ կայ առաջի, այսինքն առնել և կրել: Առնելն հայի 'ի բարին, որ կատարի խորհրդով, բանիւ և գործով, որով և արդար գտանի մարդ առ ա՟ծ, առ ընկերն, և առ ինքն. իսկ կրելն հայի 'ի չարն, այսինքն 'ի պէսպէս փորձութիւնս 'ի ներքոյ և արտաքոյ, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և այլն:

Յառաջինն հայելով ասէ. Հանցէ որպէս զլոյս զարդարութի՟ս քո: Որպէս թէ ասէր. 'ի յայտնելդ առաջի այ՟ զճանապարհս քո, թէ ա՛րդեօք զորս առնես 'ի ծառայելդ նմա, իցեն արդար՝ և հաճոյ նմա. եթէ իցեն այնպիսի, նա ինքն յայտնեսցէ, այսինքն լուսաւորելով զմիտս քո՝ ցուցցէ քեզ թէ այնպիսի են. և 'ի սոյն իսկ զօրացուսցէ զքեզ շնորհօք՝ գնալ յայնս. և ըստ այսմ լոյսն դնի աստ փոխանակ ներգործութե՟ լուսոյ, որ է յայտնի կացուցանել զճանապարհս արդարութեան, և ընդ նոյն առաջնորդել յառաքինութենէ յառաքինութիւն. ըստ որում ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա՟. յովհ. ա՟. 7.) թէ * լոյս ասէ զգործս
,, լուսոյ, և իբրև ճանապարհ իմն ցուցանէ զմասունս
,, առաքինութե՟ցն. վասն զի գնացք են յառաքինութ՟է
,, յառաքինութիւն. որպէս ասէ դաւիթ ‖: Իսկ եթէ այն ճանապարհք քո չիցեն այնպիսի, այսինքն հաճոյ այ՟ և արդար, թէ՛ և դու այնպիսի լինել կարծիցես, ցուցցէ և զայն, և այսու նահանջեսցէ զքեզ յայնցանէ: Եւ զայս ամենայն արասցէ այնպիսի օրինակաւ, մինչ գրեթէ իբրև զլոյս յայտնի տեսցես զնոսին:

Իսկ յերկրորդն հայելով՝ ասէ. Եւ զիրաւունս քո որպէս զօր հասարակ: Որպէս թէ ասէր. 'ի յայտնելդ առաջի տ̄ն զտառապանսդ՝ արասցէ նա քեզ իրաւունս, այսինքն ցուցցէ քեզ իրաւամբք զպաշտպանութ̄ի իւր. ըստ որում 'ի տառապիլդ անդ՝ ըստ պատշաճի ի̄մն ստանաս իրաւունս գտանելոյ զպաշտպանութ̄ի նորա։ Եւ զայս պաշտպանութիւն ցուցցէ քեզ ա̄ծ՝ կամ զօրացուցանելով զքեզ՝ առ 'ի դիւրաւ վանել զփորձութ̄իսն, կամ թուլացուցանելով զնոսին, կամ բառնալով, և կամ յայլ ի̄մն շրջելով։ Եւ զոյն զայս արասցէ՝ լուսաւորելով զմիտս քո՝ և բորբոքելով զկամս քո, այնպիսի օրինակաւ՝ որպէս թէ իցես յօր հասարակ, այսինքն 'ի կէս աւուր, կամ 'ի միջօրեայ ժամու, յորում առաւել տիրէ լուսաւորութ̄ի արևու և բորբոք ջերմութ̄ե նորա։ Այս մեկնութ̄ի զոր եդաք՝ որպէս երևի, հայի 'ի ներքին նշանակութիւն այսր բնաբանի ըստ կարգի նախընթացց և հետևորդ տանց։

Երկրորդական մեկնութեամբ՝ բառդ արդարութիւն առեալ լինի փոխանակ անմեղութեան, և բառդ իրաւունք՝ առեալ լինի փոխանակ արդար դատաստանի. և ըստ այսմ կամի ասել. 'ի տառապիլ քո 'ի ձեռաց օտարաց կամ 'ի թշնամեաց, յայտնեա՛ տ̄յ՝ զորս կրես. և 'ի նա ընկեա՛ զդատաստանս քո. և նա իւրով հայրագութ նախախնամութ̄բ, և հզօր պաշտպանութ̄բ ցուցցէ զարդարութիւնս և զիրաւունս քո առաջի ամենեցուն՝ այնչափ յայտնի և այնպէս պայծառ, որչափ յայտնի տեսանի լոյս, և որպէս պայծառ երևի միջօրէ։

Համառօտիւ ևս. յայտնեա՛ տ̄յ զկեանս քո, և յա՛նձն արա նմա, և նա խնամեսցէ զքեզ, և յամենայն վըտանգս պաշտպանեսցէ։

Յարմարական մեկնութ̄բ այս բան հայի առ այնոսիկ, որք վասն արդարութ̄ե 'ի տառապանս են. և արտաքուստ յարհամարհանս, և ո՛չ ոք տեսանէ զարդարութիւն նոցա զոր ունին 'ի ներքս։ Սակայն եկեսցէ օր՝ զի հանցէ ա̄ծ 'ի լոյս զայն արդարութիւն, և յայտնի ցուցցէ թէ ունին նոքա զիրաւունս առ վարձս արդարութ̄ե։ Յայս խրախուսելով մարգարէին զարդարն՝ յորդորէ յանձնել տ̄յ զամենայն, և հնազանդիլ նմա. ուստի յարէ զկնի, և ասէ։

Է. Հնազանդ լեր Տ՟ն, և ծառայեա նմա. և մի նախանձէր ընդ այնոսիկ՝ որոց առաջեալ իցեն ճանապարհք իւրեանց. ընդ մարդոյ՝ որ գործէն զանօրէնութիւն։

Առաջին լինի հնազանդիլ Ա՟յ, մի՝ 'ի պահել զօրէնս նորա, յորժամ զոր միանգամ հրամայեալ է առնել՝ առնեմք, և յորոց արգելեալ է՝ հրաժարիմք։ Յայն վերածի և հնազանդութիւն ա՟ծային խրատուց, եւս և հնազանդութիւնն մարդկային հրամանաց, եթէ լիցի ըստ Ա՟յ և վասն Ա՟յ։ Երկրորդ՝ 'ի հաւանիլ մեր ընդ գործս նախախնամութ՟են Ա՟յ. իբր զի զոր միանգամ առնէ Ա՟ծ յաշխարհի աստ ըստ իւրում ամենահայեաց տեսչութեանն՝ եթէ 'ի մեզ, և եթէ յայլս, յամենայնի հաճեսցուք ընդ կամս նորա, և ցուցցուք զմեզ պատրաստ յա՟մի յո՛ և իցէ իրս, յինչ և իցէ դիպուածս, 'ի յաջողութ՟ե և 'ի ձախորդութեան, և այլն. և մի՛ բնաւ իշխեսցուք ասել. զի՞ է՝ զի այս ինչ այսպէս լինի, և այն ինչ այնպէս. զի՞ է՝ զի ոչ լինի այս այսպէս, և այն այնպէս. և այլն։ Երրորդ՝ 'ի մնալ մեր գոհ 'ի խնդրուածս պարգևացն Ա՟յ. իբր զի 'ի խնդրել մեր ինչ յԱ՟յ՝ եթէ ոչ տացէ, կամ եթէ զայլ ինչ տացէ, մի՛ դժուարասցուք. այլ գոհասցուք, և հպատակեսցուք նմա զկամս մեր ասելով. զոր կամի՝ արասցէ. զի միայն զբարին կամի, և ոչ երբեք զչար։

Իսկ ծառայելն Ա՟յ կրկին օրինակաւ լինի, կամ այսպէս ասացից, երկու են տեսակք ծառայութեանն Ա՟յ. մին՝ հասարակ, և միւսն՝ յատուկ։ Առաջին տեսակ ծառայութ՟ենն Ա՟յ է կատարել զհաճոյսն Ա՟յ յամենայնի, միանգամայն պարապելով և ծառայութ՟ե աշխարհային գործոց 'ի փառս Ա՟յ. որպէս առնեն բարեպաշտ և երկիւղած անձինք, որք թէպէտ և են յաշխարհական կարգի, բայց յամենայնի խնդրեն կատարել զայն միայն, որ է հաճոյ Ա՟յ, և խորշիլ յայնմ ամենայնէ՝ որ անհաճոյ է նմա։ Եւ թէպէտ այսպիսիք պարապին նաև այլոց գործոց, զո՛ր օրինակ արհեստի, վաճառականութեան, և այլն, բայց զայն ամենայն կատարեն ըստ հաճոյ լինելոյ Ա՟յ, կամ գիտելով՝ թէ հաճոյ են Ա՟յ. և եթէ գիտէին՝ թէ չեն հաճոյ նմա, յետս կային յայնպիսի իրաց։

Այս ծառայութիւն ա̃յ կոչի հաստատուն, զի պարտաւորէ առ հաստատուն զամենայն բանաւորս իրաւամբք և արդարութեամբ. վասն զի եթէ զամենայն ինչ յա̃յ ունին, ապա և զամենայն ինչ պարտական են ըստ հաճոյս նորա վարել. և յամենայնի ըստ հաճոյս նորա կեալ։ Եւ այս առ ՚ի յօգուտ անձանց իւրեանց. զի որովհետև այն ամենայն որ հաճոյ է ա̃յ, է ուղիղ և բարի, ՚ի խնդրել և ՚ի կատարել բանաւորաց զայնոսիկ՝ լինին յինքեանս ուղիղ և բարի. որով և լինին սիրելի ա̃յ, և ընկալեալ լինին ՚ի նմանէ ՚ի ժառանգութիւն անանց բարեաց։

Եւ թէպէտ այսպիսի ծառայք ա̃յ՝ հաստատուն բնութե̃ վիճակեալ գոլով, և եղծանելի մարմնոյ, վրիպին երբեմն ՚ի յանցանս, բայց ապաւէն ունելով զողորմութիւն նորա՝ որում ծառայեն, դիմեն խոնարհութե̃ ՚ի գթութիւն նորա նպաստիւք շնորհաց նորին, և խնդրեն ներումն յանցանաց իւրեանց. և գտանելով զոր խնդրենն՝ ցնծան ընդ հովանեաւ խնամոց նորա։ Իսկ երկրորդ տեսակ ծառայութեանն ա̃յ է յատուկ այնոցիկ՝ որք հրաժարեալ յամե̃՝ միայն ա̃ծայնոց պարապին իբրև ներքին ծառայք. որպիսի են ՚ի նոր օրէնս միայնակեացք, անապատաւորք, ճգնաւորք և սոսկ կրօնաւորք. և ՚ի հին օրէնս ոմանք ՚ի մարգարէից։ Ի մէջ սոցա ևս գտանին երրեակ կարգք. յառաջնումն են նոքա՝ որք դեռևս անկատարքն են և սկսանօղք, յերկրորդումն են զարգացեալքն. իսկ յերրորդումն կատարեալքն։

Արդ աստանօր որպէս յայտնի տեսանի յընթացից սաղմոսիս՝ բանք մարգարէին տիրապէս հայեն յառաջին տեսակ ծառայութե̃ն ա̃յ, այն՝ որ հասարակաց է. զոր և ընդ հնազանդութե̃ ՚ի միասին եդեալ՝ առ երկոսին ևս յորդոր լինի, և ասէ։

◆

Հնազանդ լեր տ̃ն, և ծառայեա նմա։ Մեկնութի̃ այսր յայտ է ՚ի վերոյգրելոցդ. իսկ համառօտիւ կամելով ասել. միտ բանին բովանդակի յայս. ջանա՛ զի կացցես ըստ ակնարկութեան հաճոյիցն ա̃յ յամենայն իրս. և այսու ծառայեա՛ նմա. կամ թէ ցոյց այսու՝ թէ ծառայես նմա. և զայն համարեսջիր քեզ պարծանս. մի՛ նայիր թէ զինչ առնեն այլք, որք ոչ հնազանգիտեն ոչ և ոչ ծառայեն նմա, այլ նայեան յայտ թէ ում հնազանդիս, և ում ծառայես։ Կշռեա՛ եւս մտօք քո թէ քանի մեծ է նա, քանի բարի է, քանի հզօր է, և քանի առատ՝ որում դու հնազանդիս և ծառայես։ Եթէ մարդիկ յանձն առնուն հնազանդել մարդոյ և ծառայել նմա, չիցէ՞ քեզ արժան հնազանդիլ ամենակալին ոչ, և ծառայել մեծվայելչութեան փառաց նորա։ Եթէ մարդիկ փառս համարին ծառայել թագաւորի երկրաւորի, քանի՞ եւս մեծ փառք լիցին քեզ ծառայել ամենիշխան և ամենազօր թագաւորին երկնաւորի։ Հայեաց և յայնոսիկ՝ որք ծառայեն ախտից իւրեանց· տես թէ զիարդ տառապին․ և եթէ գոցես զնոսա 'ի յաջողութեան՝ երազ համարեա զայն· զի այն յաջողութիւն նոցա աներևոյթ իմն է։ Կամելով ապա մարգարէին զգուշացուցանել զարդարն չհայիլ 'ի նոսա՝ և չհետևիլ նոցա, յարէ զկնի, և ասէ։

Մի՛ նախանձիր ընդ այնոսիկ՝ որոց առակեալ իցեն ճանապարհք իւրեանց· ընդ մարդոյ՝ որ գործէն զանօրէնութիւն։

Այս այն է՝ զոր եդ 'ի համարն· Ա․ * մի՛ նախանձիր „ ընդ չարս, և մի՛ ընդ այնոսիկ՝ որք գործեն զանօրէ„ նութիւն ‖։ Այլ աստ յաւելու և զառակիլ ճանապարհաց նոցա։

Իսկ բառդ առակիլ ճանապարհին՝ դնի աստ փոխանակ բարի և զօրեղի երևելոյ ճանապարհի ամբարշտաց թէ և չար իցէ· կամ իբր պայծառ և փառաւոր փայլելոյ այնմ։ Զի բառդ առակ՝ յորժամ եղանակէ առակին՝ նշանակէ զայնպիսի ինչ որ իցէ յայտնիչ իրիք ճշմարտութեան կամ ստութեան։ Նշանակէ երկրորդ զայնպիսի ինչ, որոյ 'ի յայտնիլն ամօթ կրէ ոք, յոր միտս առեալք, առակ նշաւակի լինել։ Նշանակէ երրորդ զնշաւակն, այսինքն զայնպիսի ինչ, յոր զարմացմամբ լինի հայիլ։ Իսկ յայսմանէ առակելն նշանակէ յանդիմանել զիմն, կամ յայտնել զիմն հասարակաց· և այս՝ կամ բանիւ և նմանութեամբ, և կամ գործով և իւիք արարողութեամբ։

Իսկ զի ամբարիշտք զընթացս կենաց իւրեանց (թէպէտ և չար իցեն) իբրև զճանապարհս երջանկութեան երևեցուցանեն արտաքուստ, ասելն իսկ ճանապարհք նոցա առակեալ լինին, այսինքն երևելի լինել երջանիկ։ Եւ որովհետև որք ունին զերջանիկ կեանս, համարեալ լինին նախանձելի, զգուշացուցանէ մարգարէն մի նախանձիլ ընդ նոսա՝ կարծելով թէ ճանապարհք նոցա երջանիկ իցեն. զի այն է արտաքին երևոյթ միայն. իսկ եթէ ՚ի ներքս հայեսցիս, չարութիւն և անօրէնութիւն ճանապարհք են. որպիսի է և ճանապարհ անօրէն մարդոյ, կամ այնպիսւոյ որ ոչ դադարէ ՚ի գործելոյ զանօրէնութիւն։

Լամբրոնացին զբառդ [illegible]՝ առնու փոխանակ նշաւակ լինելոյ. և ասէ թէ * որպէս յառակն (այսինքն „ յայն՝ որ իբրև նշաւակ եղեալ լինի) ամենեքին „ զարմացմամբ հային, այսպէս և ՚ի գործս մարդկան, „ որք առանց օրինաց գնան ՚ի կենցաղս՝ հայեցեալ՝ „ հիանան ընդ նոցա որպէս անիրաւութիւնս, „ և ընդ ոչ ՚ի վերայ նոցին երկայնմտութիւնն. ընդ „ այնպիսեան ասէ մի նախանձիր. զի ամենեքին ՚ի բե- „ րան ունին, և նախատեն զնոսա վասն չար գործոյն. „ թէպէտ և հեշտութեամբ տեսանեն զնոսա վարեալ „ ՚ի կենցաղս. մի նախանձիր (ասէ) ընդ փառաւոր „ խստասրտութիւնն. զի առակ եղև ամենայն երկիր „ անօրէնութեամբ իւրով. և մի ընդ արքայ առաջա- „ կութիւն, որ առակն եղև իմ ‖. ՚Ի սոյն հայի և մեկնութիւնն վարդանայ։

Այսու ամենայնիւ ունիմք, ՚ի բարեպաշտից յայլ իմն միտս բերեին ասելով, * զի՞ է զի ճանապարհք ամ- „ պարշտաց յաջողեալ են. և երջանկացան ամենեքին՝ „ որք արհամարհեն զարհամարհանս ‖. (երեմ. ժբ. 1.) Ոչ այդպէս. մտիր ՚ի ս՟բ գիրս. տես թէ քանի բարիս վկայեն զարդարոց, և զորքան չարիս խօսին զամպարշտաց. * վայ անօրինին. չարիք ըստ գործոց ձեռաց իւրոց անցցեն ընդ նա ‖. (եսայ. Գ. 11.) զի * անօրէնք իբրև զծով ծփեսցին և զհանգիստ մի գտցեն ‖. (եսայ. ԾԷ. 20.) Ամպարիշտք յիրաւի արտաքուստ առակեալ տեսանին, այսինքն երջանիկ երևին, բայց ՚ի ներքս ՚ի թշուառ կեանս տառապին. արտաքոյ խնձոր գեղեցիկ, ՚ի միջի որդնալից աղէտ. չքնաղանկարկ տախտակ, ՚ի միջի ցեց և ուտիճ. ոսկեզօծ տեսիլ՝ ՚ի ներքս կապար և պղինձ, մտիր ՚ի փորձաքարն, այսինքն ՚ի խիղճ մտաց նոցա. նա վկայէ քեզ զկիսանկ թշուառութեան նոցին: Եթէ տեսցես զվայելչազարդ իշխան որ ՚ի ձեռս դահճի՝ թշուառ կարգաս զնա. այլ թշուառագոյն ևս է մեղաւորն մատնեալ ՚ի ձեռս ներքին դահճի, զի առակ է. * որ „ ինչ է դահիճն պարտաւորին, այն ինչ է խիղճն մե„ ղաւորին ‖. ՚ի մէջ ամենայն նեղութեանց մարդկային կենաց ոչ ինչ է մեծագոյն նեղութիւն քան ըզխիղճն յանցանաց: Ուրեմն ՚ի տեսանել քո՝ թէ առաջեալ են ճանապարհք ամպարշտաց՝ մի նախանձիր նոցա. ՚ի ներքս դժոխք են:

Աստանօր որպէս և տեսանի, մթութիւն կայ շարադրութեան. և այս ծագեալ է յերկուց. մի՝ ՚ի դերանուանէդ իւրեանց. այլ այս զնի իբր բացայայտիչ բառիս որոյ, առ ՚ի հաստատութիւն բանին. և կամ զնի առ ՚ի զարդ, որպէս և յայտ է յայլոց տեղեաց սաղմոսիս. Երկրորդ ՚ի բառէս ընդ յաջողոյ. այլ այս բառ կամ զնի իբրև նախդրիւ տրական. որպէս և զնի յայլ քանի մի սաղմոսս մեր. և կամ ընդ այդու բառիւ կրկնի զօրութ̃ի բառդ ճանապարհ. և բոլոր շարադրութ̃ի բանին պարզի այսպէս. * մի նախանձիր ընդ չարս, որոց ճանապարհք առաջեալ են, և մի ընդ ճանապարհ մարդոյ որ գործէն զանօրէնութիւն ‖. ուր տառդ ն թէպէտև աւելորդ երևի. որոյ վասն և ՚ի սաղմոսս ինչ մեր ոչ զնի, բայց ունի զզօրութիւն բառից այնպիսի. ո̃պ թէ եղեալ էր. մի նախանձիր ընդ այնպիսի մարդ, կամ ընդ ճանապարհ այնպիսի մարդոյ՝ որ ոչ դադարի ՚ի գործելոյ զանօրէնութիւն, այլ կրկնէ և կրկնէ. զի այսպիսիս ՚ի գործելն վերստին՝ մինչ կարծէ թէ կարէ դարձեալ կրկնել՝ զրկի ՚ի խորհրդոց: Ենրիկոս Բ̃ թագաւոր գաղղիոյ միշտ յաղթօղ գտաւ ՚ի սրախաղութ̃ս. և մինչ կամեցաւ դարձեալ զնոյն գործել՝ թագուհին և իշխանք նորա աղաչեցին զնա, մի զնէր զանձն քո ՚ի վտանգ. նա ետ պատասխանի. * զայս մի նուագ ևս խաղացից, և այլ ոչ ևս ‖: Եւ որպէս ասաց՝ այնպէս եղև, զի ՚ի խաղի անդ կուրացան աչք նորա: Այսպէս պատահի և այնոցիկ՝ որք ոչ կամին յետս կալ յանօրէնութենէ. այլ ՚ի նոյն մոլին ասելով՝ զայս մի նուագ ևս գործեցից. և ՚ի գործեղն մերժեն յա՟յ, և վճռեն մատնել 'ի մահն յաւիտենական. Ուրեմն չէ պարտ նախանձել և հետևել այսպիսեաց.

Մարթ է աստանօր բառիւդ անօրէնութիւն՝ իմանալ և զայնպիսի գործ, որ յառաջ գայ 'ի զայրագնելոյ ոգւոյ կամ 'ի բարկութենէ և 'ի սրտմտութենէ. որով անօրինեն չարք ոչ միայն յինքեանս, այլև յայլս՝ նախատելով, յանդիմանելով, հայհոյելով, կռուելով, հարկանելով, սպանանելով, խռովեցուցանելով, գայթակղեցուցանելով և այլն. Ընդ այսպիսիս ասէ մի՛ նախանձիր, և 'ի գործոց սոցա 'ի բաց կաց. և զայս զգուշութիւն 'ի մասնաւորի ևս առաջի դնէ մարգարէն և ասէ.

Է. Լռեա՛ 'ի բարկութենէ, և հանգի՛ր 'ի սրտմտութենէ. և մի՛ նախանձիր ընդ չարս.

Բարկութիւնն է կիրք վրէժխնդրութեան եռացմամբ արեան զսրտիւ. Այս կիրք կարէ լինել երբեմն բարի, եթէ իցէ ըստ արդարութեան և ըստ կարգի. որպէս բարի է բարկանալ հօր ըստ օրինի 'ի վերայ որդւոյ 'ի գործել նորա զանկարգ ինչ, կամ բարկանալ տեառն ըստ կարգի 'ի վերայ ծառայի, և այլն. Բայց քանզի է կիրք այլայլիչ, բազում անգամ թէև բարի իցէ, վրիպելով 'ի կարգէ, վրիպի և 'ի բարի գոլոյ. և այս կամ վասն անցանելոյ ըստ չափն, և կամ վասն երկար ունելոյ, կամ վասն 'ի տարագն սխալելոյ, և կամ վասն այլ ինչ անկարգութեան ընդ մէջ մտանելոյ. Իսկ եթէ չիցէ ըստ արդարութեան և ըստ կարգի՝ է չար, երբեմն թեթև, և երբեմն ծանր. երբեմն ներելի, և երբեմն մահուչափ. Իսկ եթէ սաստկասցի, լինի պատճառ բազում չարի. լինի և խանգարիչ կենաց բարկացողին. զի այլայլէ նախ զմարմնական կեանս՝ խանգարելով զշարժմունս չորից հիւթոց. այլայլէ երկրորդ զզգայական կեանս՝ վրդովելով զզգայութիւնս. այլայլէ երրորդ զբանական կեանս՝ պղտորելով զմիտս և զկամս. այլայլէ չորրորդ զգերբնական կեանս՝ խռովելով զհոգին բոլոր. այլայլէ և ողջոյն զմարդն և նմանեցուցանէ այսահարի կամ խելագարի. Վասն որոյ որք միանգամ զհետ լինին սաստինաւկան կենաց՝ ջանան ջնջել 'ի սրտից իւրեանց զայս կիրս՝ թէև բարի երևեսցի. ապա թէ ոչ՝ ոչ կարեն կալ 'ի խաղաղութեան և յանդորրութե՟, որ կարի կարևորն է Ճանապարհի առաքինութե՟. սմին իրի զգուշացուցանէ մարգարէն ասելով.

ԼՌԵԱ 'Ի ԲԱՐԿՈՒԹԵՆԷ. Այսինքն դադարեա 'ի բարկութէ՟. Ո՛չ ասէ մի բարկանար 'ի զուր. այլ ԼՌԵԱ. որով զատաւել ինչ կամի յայտնել. որպէս թէ ասէր. զորօրինակ 'ի լռել մարդոյ՝ ոչ ևս լսի ձայն նորա, նոյնպէս և դու այնպէս դադարեա 'ի բարկութէ՟, զի մի երևեսցի թէ ունիս 'ի քեզ կիրս բարկութեան. Եւ եթէ առիթ ինչ բարկանալոյ ընդ առաջ եկցէ՝ և յորդոր լիցի քեզ բարկանալոյ, դու 'լռեա. այսինքն մի տար տեղի բորբոքելոյ այնմ. և եթէ սկսանիցի սիրտ քո այլայլիլ՝ դադարեցո. որով և գտցես զհանգիստ. և առ այս յարէ.

ԵՒ ՀԱՆԳԻՐ 'Ի ՍՐՏՄՏՈՒԹԵՆԷ. Սրտմտութիւնն է բարկութիւն սաստկացեալ. Արդ որպէս 'ի բարկութենէն ասէ պարտիս լռել, նոյնպէս և 'ի սրտմտութե՟ պարտիս հանգչել, այսինքն դադարել. որ է ասել. մի սրտմտիր. Վասն բարկութե՟ եդ ԼՌԵԱ. իսկ վասն սրտմտութե՟ դնէ ՀԱՆԳԻՐ. Երկրորդին ևս թէպէտ վերջին ցուցանէ, բայց քանզի աւելի է սրտմտութի՟ քան զբարկութի՟՝ սմին իրի վասն սրտմտութե՟ զաւելին դնէ. Հանգիր ասէ 'ի սրտմտութենէ. որպէս թէ ասէր, աւելի ևս զգուշացիր չսրտմտիլ. որով և գտցես հանգիստ մեծ. Զայլ ինչ միտս ևս մարթ է առնուլ ասա զհանգչիլն և մեկնել այսպէս. եթէ ոչ բարկասցիս. ոչ ևս սրտմտեսցիս. որով և գտցես հանգիստ 'ի տառապանաց սրտմտութեան. զօրացիր ապա յաղթել բարկութե՟դ, զի կործանեսցես և զսրտմտութիւնդ. իսկ թէ քանի մեծ իցէ այս գործ՝ լուր իմաստնոյն որ ասէ. * Լաւ
„ է այր համբերող քան զհզօր. և որ յաղթէ բար-
„ կութեան՝ լաւ է քան զայն՝ որ առնու զքաղաքս‖.
(առակ. ժզ. 32.) զի առաջինն հայի 'ի բռնադատութիւն բնութե՟, իսկ միւսն 'ի բռնադատութիւն արհեստի, և է արտաքին. Առաջինն է մարտ ընդ անձին, իսկ երկրորդն ընդ օտարին. նա ընդ անձ՟ն մխի, սա ընդ այլս մրցի. Երանելին դաւիթ յաղթելով

բնական կրից 'ի չսպանանելն զսաւուղ առաւել գովելի գտաւ քան յաղթելով զողիաթու 'ի սպանանելն զնա. ուստի և սուրն՝ որով սպան նա զգողիաթ՝ եղաւ յերկրաւոր երուսաղէմի. իսկ սուրն համբերութեան՝ որով խնայեաց նա 'ի սաւուղ՝ եղաւ յերկնաւորն. ըստ այնմ լիցի և քեզ եթէ սրով համբերութեան հատցես զբարկութիւնդ.

Այս բանք կարեն մեկնիլ նաև 'ի չարսն հայելով. յոր միտս տեսանի և մեկնութիւն ըմբռնացուցն. որպէս թէ ըղեալ էր .'ի տեսանել քո զչարն 'ի յաջողութեն, մի բարկանար 'ի սրտի քում, թէ ընդէր գտեալ իցէ նորա յաջողութիւն, և զգոյշ լեր՝ զի մի սրտմտեսցիս և տատասցես 'ի սրտի քում. զինչ է այս, զի սա չարիս գործէ, և յաջողութիւն գտանէ. իսկ ես զհետ գոլով բարի գործոց՝ տառապիմ և յաջողութիւն ինչ ոչ գտանեմ. մի ասէ տեղի տացես այսպիսի շարժմանց սրտի քո ընդդէմ չարաց. Այլ թերևս յայս սակս յաւելու ասէ.

Ա.— Մի՛ նախանձեր ընդ չարս. Այսինքն մի զչարելով ընդ յաջողութիւն չարաց՝ բարկանայցես 'ի վերայ նոցա, և կամ ընդ հակառակն՝ տեսանելով թէ չարք յաջողուն գտանեն, դու ևս հետևիցես գործոց նոցա. զի այսպիսեաց կատարած ոչ է բարի, այլ չար. զոր և յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով.

Ը. Զորս վաղվաղակի սատակեսցեն. Բայց որք համբերեն տեառն նոքա ժառանգեսցեն զերկիր.

Չարք ասելով իմանայ զայնոսիկ՝ որք գոլով 'ի չարիս, ոչ զղջան ընդ այնս, այլ հաճելով կամին մնալ 'ի նոսին, և անկերկիւղ կատարել զկամս իւրեանց. Այլ կամ թէև տհաճեալ իցեն ընդ այնս՝ բայց վասն դժուարութեանց ոչ կամին յետս կալ 'ի նոցունց, և կամ յապաղեն թողուլ զնոսին, մինչև ինքեանք թողեալ լինիցին 'ի նոցանէ. և այն՝ առանց յապաղելոյ. վասն որոյ ասէ.

Զորս վաղվաղակի սատակեսցեն. Սատակիլ ասէ զնոցանէ որք յանջատին 'ի կենաց աստի՝ կամ չքանան, որպէս անբանք, և կամ 'ի թշուառութիւն անզերծ մատնին. Այլ զի անպարկեշտք 'ի մահուն իւրեանց մատնին 'ի թշուառութիւն յաւիտենական , վասն որոյ կրաւանք ասի վնասակ սատակիլ : Եւ որովհետեւ չարութիւն մեղաց եղեւ պատճառ մահու , որք յաւելուն 'ի նոյն , և յաճախեն յայն , մահն փաղփաղէ առ նոսա . զի մեղքն հանգոյն խիթանի մղէ զմահ իբրեւ զկերիչոր՝ ըղձեալ ամպարշտաց . վասն զի * խայթոց մահու մեղք են || . (ա. կոր. ժե. 56 .)

Այս փաղփաղելս մահուան ըստ կրկին մտաց ասի . մի վասն սակաւ տեւողութեան աստի կենաց . վասն զի ցորչափ և կեցցեն չարք յաստիս , այն ժամանակաւոր կեանք նոցա է իբր ստուեր համեմատութեամբ յաւիտենական կենաց , ուստի և 'ի սատակիլ նոցա՝ այն կեանք նոցին իբրեւ ստուեր չքանի . որով և կարէ ասիլ վասն նոցա՝ թէ փաղփաղակի սատակին . այսինքն յետ սակաւու բանինն 'ի կենաց , և մնանեն ոչ 'ի կեանս , այլ 'ի մահ և 'ի թշուառութիւն յաւիտենական . Երկրորդ՝ ըստ փութով մեռանելոյ նոցա . զի հասարակօրէն չարք առաւել փութով մեռանին քան թէ բարեկեացք . վասն զի կամ չարաչար վարելով նուազին կեանք նոցա . կամ առիթ տալով անկանին 'ի վտանգ մահու . և կամ որ դատողայինն է , պատուհասին յոյժ . Ասացի * հասարակօրէն || . զի ոչ յամենայնի այսպէս կատարի . բայց ընդհանրապէս խօսելով մահն առաւել վաղ հասանէ չարաց քան բարեաց . յոր միտս եդ (և 'ի համարն 2 .) թէ * չարք որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին . որպէս դալար խոտոյ վաղվաղակի անկցեն || .

Իսկ թէ ած թոյլ տայ ամենեց ապրել երկար , այն կամ վասն օգտի նոցա է՝ զի դարձցին , և կամ վասն օգտի արդարոց . ուստի ասէ Շնորհալին ('ի մեկն. մատ. գլ. Գ.) որպէս * Ներէ սերմանողն ցորենոյ մինչ 'ի կալն : զի (ցողունն) սնուցիչ է ցորենոյն , (նոյնպէս և ած) ներէ այժմ ամպարշտաց վասն արդարոց , յորժամ բարւոյ իւրք նոցա լինին պատճառ || .

Արդ մարգարէն որպէս յասելն 'ի վերոյ , չարք իբրեւ խոտ վաղվաղակի ցամաքեսցին , առաջի եդ զբնակիլ արդարոյն յերկրի խաղաղութեամբ , նոյնպէս և առ նոյն յաւելու՝ ասելով .

[illegible]

ինքն՝ որք 'ի տառապանս և 'ի փորձանս ոչ զայրացնին յինքեանս, և 'ի նեղէն ինչ յայլոց ոչ շարժին 'ի վրէժխնդրութիւն, այլ համբերեն Տն, այսինքն զ յոյս իւրեանց յԱծ դնեն, հաւատով՝ թէ հաւատարիմ է նա տալ զվարձս համբերողաց, նոքա ժառանգեսցեն զերկիր. (այլ թէ որպէս, տես 'ի համարն. 10.) Իսկ ամբարիշտք զուրկ գոլով 'ի յուսոյ համբերութեան՝ զուրկ գտցին և 'ի մասնակից լինելոյ ժառանգութեան արդարոց. բայց թէ զինչ՝ յայտ առնէ ասելով.

Ժ. Փոքր մի և այլ ոչ ևս իցէ ամբարիշտն. խնդրեսցես զտեղի նորա, և ոչ գտցես.

Ի վերայ երկիցս եդ զվաղվաղակի կորուստ ամբարշտաց, նմանեցուցանելով զնոսա նախ խոտոյ՝ յասելն. * որպէս խոտ վաղվաղակի ցամաքեսցին ||, և ապա դալարւոյ՝ որ առաւել դիւրակորուստ է, յասելն. * որպէս դալարի խոտոյ վաղվաղակի անցցեն ||. զկնի որոյ անպայման եդ զբանն ասելով. * չարք վաղվաղակի սատակեսցին ||. Նոյնպէս խօսի և 'ի համարն 12. և 'ի 18. ուր և պակասման ծխոյ նմանեցուցանէ զխութանակի կորուստ նոցա. և 'ի համարսն 27. և 34. ցուցանէ զիսպառ կորնչիլ նոցա. Զսոսա զամենեսին 'ի մի ինչ համառօտ բան բովանդակէ առանոր. և ասէ.

Փոքր մի և այլ ոչ ևս իցէ ամբարիշտն. Որպէս թէ ասէր, 'ի տեսանելդ զամբարիշտն 'ի յաջողութեան և 'ի փառաւորութեան, մի կարծեսցես՝ թէ ունի տևել նա 'ի նմին. փոքր մի ժամանակ է այն. և յետ այնորիկ բարձցի, և լինիցի իբրև զչեղեալ. զի ընդ մեռանել նորա մեռցի և փառք նորա երջանկութիւն նորին. կամ ոչ ևս իցէ՝ ոչ նա՝ որ երջանկութեամբ կեայր, և ոչ երջանկութիւն նորա՝ յորում զուարճանայր. ոչ իշխանութիւն տեղւոյն՝ ուր էր, և ոչ ժառանգութիւն այնր՝ յորում բնակէր. Սմին իրի յաւելու զկնի և ասէ.

Խնդրեսցես զտեղի նորա, և ոչ գտցես. Նոյնպէս խօսի մարգարէն զամբարշտաց, որպէս թէ խօսէր զանբանից, և զանդրխտան տնկոց. զի որպէս 'ի սատակել անբանից, և ոչ իսկ տեղի նոցա երևի իբր որոշ ինչ ժառանգութիւն նոցին, նոյնպէս և 'ի մեռանել ամպարշտին՝ ոչ ևս գտցի տեղի նոցա, իբրև սեփական ինչ նոցին. որ է ասել, Ջնջին նոքա յերկրէ իբրև թէ չէին յերկրի։

Եւ զոր օրինակ անպիտան տունկք փութով խլին յարմատոյ, և յետ խլեալ լինելոյ՝ յանցանել ժամանակաց՝ 'ի խնդրելդ թէ ուր էր տեղի նոցա, ոչ տեսանես, այսպէս և ամպարիշտն իբրև անպիտան ծառ կամ իբրև փտտակար տունկ վաղվաղակի խլեալ լինի յերկրէ, և ոչ ևս տեսանի տեղի նորա։ Եւ եթէ տեսանիցի ևս՝ այն ոչ ևս է նր, այլ այլոց։ Եւ դարձեալ՝ 'ի կարծել ամպարշտին՝ թէ ժառանգէ զերկիր, այնպէս բարձցի անտի՝ մինչ ոչ ևս ունել 'ի նմա և ոչ թիզ մի տեղւոյ. զի և զոր ունէրն ոչ էր իւր ժառանգութիւն. քանզի անարժանութեամբ ունէր. զի երկիր ոչ է արարեալ 'ի ժառանգութիւն չարաց, այլ բարեաց անդորրացելոց յինքեանս, և առ այլս. սմին իրի յաւելու մարգարէն ասել 'ի յաջորդ համարն։

Ժ. Այլ որ հեզքն են՝ նոքա ժառանգեսցեն զերկիր. և փափկասցեն 'ի բազում խաղաղութեան իւրեանց։

Այս այն է՝ զոր ասաց տէրն. * Երանի հեզոց՝ զի նոքա ժառանգեսցեն զերկիր ‖. (մատ. Ե. Ե.) Այլ գիտելի է, զի կրկին ազգք են հեզոց, 'ի բնութենէ և յառաքինութենէ. իբր զի ոմանք ասին հեզք, զի հեզաբարոյ բնութեամբ են վիճակեալ. ոմանք ևս ասին հեզք՝ զի ստացեալ ունին զառաքինութիւն հեզութեան՝ մանաւանդ եթէ այն առաքինութիւն նոցա իցէ օժանդակեալ 'ի պարգևաց հոգւոյն սբյ։ Այսպիսի հեզք ասին յատկապէս նոքա, որք 'ի դնիլ առթի բարկութեան՝ կամ զայրանալոյ սրտի, ամենևին ոչ տան տեղի, այլ մնան հանդարտ իբրև որդիք բարձրելոյ. և այն հանդարտութիւն նոցա՝ իբրև զջուր 'ի լըպունդ տարրացեալ 'ի հոգիս նոցա՝ առնէ զնոսա խաղաղացեալս և զուարճացեալս։ Արդ առ 'ի երջանկութի̃ ժառանգել զինն՝ պիտոյ է ունել խաղաղութի̃ և բերկրութի̃, զի տիրապէս ժառանգելն է հանգստեամբ վայելել զինն. և զի լաւ վերոյգրելոցդ հեզք կատարելապէս ունին զխաղաղութի̃ և զբերկրութի̃ 'ի վեբայ երկրի, վասն որոյ և երջանիկ կենօք ժառանգեն զերկիր։ Յայտնիկ հայելով՝ առէ.

ԱՅԼ ՈՐ ՀԵԶՔՆ ԵՆ, ՆՈՔԱ ԺԱՌԱՆԳԵՍՑԵՆ ԶԵՐԿԻՐ։ Որպէս թէ ասէր. որովհետև հեզք տարապարտ են յանձանց իւրեանց զանկարգ կիրս բարկութե̃ զայրացուցիչս կենաց, և ստացեալ են զհանդարտութի̃ մեծ, տիրապէս նոքին ժառանգել զերկիր. այսինքն հանգստեամբ կեալ յերկրի, և հանգստեամբ վայելել ՚ի բարութիւնս երկրի. ոչ երբեք խռովք, այլ երբեք ողջիք ո̃յ, ոչ երբ յերս օտարի, այլ երբեք յիւրեանց ստացուածս. զի որ զամենայն արար յոչինչ, ոչ վասն ամպարշտաց ամբոխելոց, այլ վասն նոցա՝ այսինքն վասն առաքինութեամբ հանդարտելոց արարեալ է զերկիր, և նոցա է տուեալ զայն առ ՚ի ժառանգել զնոյն, և անցուցանել ՚ի նմա զառօրեայ կեանս իւրեանց խաղաղութեամբ և զուարճութե̃. յոր միտս յաւելու ասել.

ԵՒ ՓԱՓԿԱՍՑԵՆ ՚Ի ԲԱԶՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԻՒՐԵԱՆՑ. Փափկանալն է անդորրութեամբ հեշտանալ կամ քաղցրանալ. արդ որովհետև հեզք զամենայն դառնութիւն և խռովութիւն ՚ի բաց մերժեալ են ՚ի սրտից իւրեանց, և տարրացուցեալ են յինքեանս զխաղաղութիւն, ՚ի վայելելն զբարութիւնս երկրի՝ քաղցրանան յայնմ իւրեանց խաղաղութե̃. որպէս թէ ՚ի թէատրոնի խաղաղութե̃ Ճեմբին։

Զայս խաղաղութիւն յորում փափկանան հեզք, առէ լինել բազում. վասն զի ոչ միայն ՚ի բանական մասին է, այլև ՚ի զգայութի̃ս. զի ՚ի ձեռն հեզութեան զգայութիւնք նոցա խաղաղացեալ գոլով՝ մնան ՚ի խաղաղութեան. և զբանական մասն թողուն ՚ի նմին խաղաղութեան. և երբեմն ես այն խաղաղութիւն նոցա որ ՚ի ներքս՝ յառիթս ինչ առաւելեալ լինելով՝ առաւելութեամբ զեղու և առ արտաքս. որով և բազում լինի խաղաղութիւն նոցա։ Եւ դարձեալ ՚ի բազմապատիկ և ՚ի բազմատեսակ առիթս խաղաղ պահելով զինքեանս, բազմանայ և խաղաղութիւն նոցա, կամ թէ ըստ բազում իրաց լինի խաղաղութի̃ նոցա. վասն որոյ և նոքին փափկանան ոչ սոսկ ՚ի խաղաղութեան, այլ ՚ի բազում խաղաղութե̃. ոչ յեկամուտ և ՚ի յօտար խաղաղութե̃, այլ յիւրեանց խաղաղութե̃, զի արդեամբք իւրեանց ստացեալ են զայն, և աւարեալ են իւրեանց սեպհական ։

Կան և այս որք իբրև զհեզս 'ի խաղաղութեան համարին, բայց ոչ յիւրեանց խաղաղութեան, այլ՝ յայլոց. իբր զի ցորքան այլք խաղաղութեամբ վարին ընդ նոսա, և ընդդէմ նոցա ոչ գործեն՝ երևին լինել 'ի խաղաղութե. իսկ եթէ ընդ հակառակս բերիցեն այլք՝ յանխնաականս 'ի բարկութենէ, խառնին և եղծանին. որով յայտնի ցուցանեն՝ թէ սուտ էր հեզութիւն նոցա ։ Որպէս այնչափ տարբերին 'ի ճշմարիտ հեզոյ, որչափ տարբերի ճշմարիտ ոսկին 'ի սուտ ոսկւոյ (այսինքն խառն 'ի խալզէ ։) Զինչ սուտն և ոսկին վառի նոյն իմն երևին. սակայն մին 'ի ջերմութէ հալի և 'ի ջուրց լուծանի. իսկ միւսն ոչ 'ի ջերմութենէ և ոչ 'ի խոնաւութենէ ։ Այնպէս սուտ հեզն թէև կարծի 'ի խաղաղութեան վայելել՝ 'ի ջերմ խօսից հալի, և 'ի ջուրց հակառակութէ եղծանի. իսկ ճշմարիտ հեզն՝ յամենայնի հաստատուն կալով ժառանգէ խաղաղութբ զերկիր, և փափկանայ 'ի խաղաղութե անդ իւրում։

Այլ ծանիր և, զի 'ի ժառանգել հեզոց խաղաղութեամբ զերկիր՝ նոյն իսկ ժառանգեն և զանձինս իբր զերկիր իւրեանց. զի 'ի ձեռն հեզութեան խաղաղացեալ և անդորրացեալ յինքեանս՝ մնան 'ի ժառանգութեան իւրեանց. և ոչ ելանեն արտաքոյ ինքեանց բարկութեամբ ։

Դիւրաւ մարթ է ստանալ զայս առաքինութիւն՝ եթէ մարդ յաճախակի յաւիթս բարկութեան յամբոխելն հանդարտեցուսցէ զամբոխումն իւր, և զուսպ կալցի զինքն. ապա թէ յամբոխելն անդ սկսանիցի բարկանալ՝ առաւելու զամբոխումն, և տիրէ բարկութիւն ։ Ի կամիլդ լռեցուցանել զամբոխս մարդկան եթէ աղաղակեսցես և սաստեսցես աղաղակաւ. * լռեա լռլուք ||, քո աղաղակ ևս 'ի նոյն խառնելով՝ առաւելու զամբոխն. իսկ եթէ քաղցրութբ և մեղմով յորդոր լիցիս, լիցի հանդարտութի. զի Է մարդոյ է բանդ, և ոչ ընդ աւերայ ծովու ։ Արեւմն և յամբոխել սրտի քո՝ մի յարձակիր բարկութբ, այլ զսպեա զքեզ քաղցրութբ ։ Եթէ ամիս մի և եթ աշխատեսցիս 'ի սոյն սրտի միտօք՝ սկսանիս առնուլ զճաշակ հեզութեան. և եթէ փոքր մի եւս, ստացեալ անշուշտ զառաքինութիւն ճշմարիտ հեզութեան, եւ անդորր ժառանգեսցես զերկիր եւ զերկինս ընդ քեզ.

Այս ժառանգութիւն հեզոց է իբր գրաւ կամ մանաւանդ իբր առհաւատչեայ ժառանգելոյ նոցա եւ զերկիրն կենդանեաց, որ սուրբ վերին երուսաղէմ. եւ զի երուսաղէմ թարգմանի տեսութիւն խաղաղութեան, հանդերձեալ են նոքա տեսանել եւ վայելել անդ զանսահման խաղաղութիւն, եւ փափկանալ 'ի նմա յաւիտեանս յաւիտենից. Սուրբ Լուսաւորիչն մեր 'ի գիրս յաճախապատումն ասացեալ. (Ճառ. ժա.) զառաջին եղեալ բանդ բանիւն քան վերածէ 'ի ժառանգութիւն այսր ասելով. * Երանի հեզոց. զի նոքա ժառանգեսցեն զերկիրն կենդանեաց. ուր ոչ իսկ հասանէ մահ ‖. զայսպիսին ասէ եւ 'ի վերջնում Ճառի. Եւ Ներսէս Շնորհալին ('ի մեկն. մատ. ե.) յետ ասելոյ թէ * հեզն եւ խաղաղարարն ընդ ամենեսին ունելով սէր, ժառանգէ առանց „ խռովութեան զերկիր ‖. յաւելու ասել. * բայց այլոց „ հաճոյ թուեցաւ իմանալի երկիր ասել զխոստացեալն „ Տեառն, որ է նա կենդանեաց վայրը ‖.

Այլ պարտաւորեն, որք հեզութեամբ կեան 'ի մէջ եկեղեցւոյ՝ ժառանգեն զբարութիւնս եկեղեցւոյ. Սուրբ Լուսաւորիչն մեր. ('ի յաճախ. Ճառ. Ժ.) * յասելն „ Տեառն երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր, „ զաւետեաց եկեղեցւոյ ասէ երկիր. որ ամենահաւան „ կենօք հանդարտութեամբ են 'ի վերայ, ազատեալք „ յամբարշտաց եւ 'ի խռովութեանց փորձանաց եւ յամե„նայն գժնդակաց ‖. Այլ թէ քանի բարւոք առաքի„նութիւն է հեզութիւն. երկար խօսի ('ի Ճառն ժա. երես 128. մինչեւ 'ի 133.)

Արդ մարգարէն առաջի եդեալ զբարի վիճակ հեզոց՝ սկսանի քաջալերել զմեզ՝ մի լքանիլ եւ մի 'ի բաց թողուլ զայնպիսի երջանիկ առաքինութիւն, պատճառելով՝ թէ 'ի հեզգանալ մեր՝ յառնեն անպարկեշտք 'ի վերայ գլխոց մերոց, եւ առնեն ընդ մեզ՝ զոր ինչ եւ կամին. զի այս պատճառ չարժէ ինչ, եւ ոչ ինչ զօրէ. քանզի թէեւ կամիցին չարք առնել մեզ զչարիս, որ տէր է նոցա ոչ թողու. եւ զայս առաջի դնէ մարգարէն 'ի չորեքին յաջորդ համարսն, եւ յորս զկնի. Կ. նոսա ասէ.

ժա. Սպասէ մեղաւոր արդարոյ. և կրճտէ 'ի վերայ նորա զատամունս իւր. այլ Տէր ծիծաղեսցի զնովաւ.

ժբ. Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասեալ է օր նորա.

Մ՛եղաւոր ասելով աստ ոչ իմանայ մարգարէն զո՛ր և իցէ մարդ մեղուցեալ՝ կամ զայն՝ որ ըստ որում մարդ ստահակն անկեալ իցէ 'ի մեղս. զի այսպիսիս հասարակորէն ոչ ատէ զարդարն, և ոչ կրճտէ զատամունս իւր 'ի վերայ նորա. մանաւանդ թէ փափագի մերձենալ առ նա, առ 'ի նմանէ գտանել զայն՝ զոր կորոյս մեղօք. Այլ իմանայ զայնպիսի մարդ՝ որ հաճեալ է ընդ գործս մեղաց, և հաստատեալ է զկամս իւր 'ի նոյն. զի այնպիսին արդարև ատէ զարդարն որպէս խաւար զլոյս, կամ որպէս հուր զջուր. և ոչ իսկ կամի տեսանել զնա զի մի յանդիմանեսցին կեանք իւր. Յայսպիսի մեղաւորս ակնարկելով ասէ.

Սպասէ մեղաւոր արդարոյ. և կրճտէ 'ի վերայ նորա զատամունս իւր. Այնինքն մեղաւորն հայեցեալ 'ի վերայ արդարոյն, և տեսեալ զգործս նորա բարիս, և զկեանս նորա անարատս՝ սպասէ նմա ըստ բաղում իրաց. մի՝ զի տեսցէ նաև զնորա պակասաւոր գործս, և այնու տեսութեամբ թեթևացուսցէ զխայթ խղճի մտաց 'ի վերայ չար գործոց իւրոց, ասելով յանձն իւր. ահա և արդարն պակասի. Երկրորդ՝ որ 'ի նոյն գլուխ սպասէ՝ զի գտցէ զնա իւիք մեղադրելի՝ առ 'ի անմեղադրելի առնել զանձն իւր. Երրորդ՝ սպասէ զի եթէ ոչ գտցէ զնա այնպիսի՝ հնարեսցի յորոգայթ ինչ մեղաց արկանել զնա. որպէս զի տեսեալ զնա իւր հաւասար՝ համարձակ լիցի 'ի գործս մեղաց. Չորրորդ՝ սպասէ՝ զի եթէ տեսցէ զարդարն 'ի պակասութեան կամ անկեալ 'ի մեղս, ցուցցէ զայն պակասութիւն նր̃ նաև այլոց, և կամ հռչակեսցէ զպակասութիւնս նորա բամբասանօք, և կամ այլով իւիք առ 'ի վատահամբաւ առնել զնա՝ որպէս զի նորա վատահամբաւութ̃ն ինքն մի երևեսցի այնպիսի. Հինգերորդ՝ սպասէ 'ի կորուսանել զարդարն. զի մի ևս տեսանելով զնա յանդիմանեսցի 'ի գործոց նորա. և 'ի սոյն իսկ որոնէ աութ կամ միջոց նուաճելոյ զնա, և կամ չարիս ինչ հատուցանելոյ նմա, եւ և ջնջելոյ զնա յերկրէ, և զյիշատակ նորա 'ի մարդկանէ. Այլ յոչ յաջողիլ միում յայսցանէ՝ զայրագնի, և կրճտէ զատամունս իւր 'ի վերայ նորա, և չարիս սպառնայ նմա. երբեմն 'ի ներքուստ, և երբեմն արտաքուստ.

Բայց սմին և դեռ սպասէ կորուսանել զարդարն. և 'ի տեսանելն անդ զփրկութիւն նորա՝ կատաղի և կրճտէ զատամունս իւր. որպէս պատմի թէ սուրբ ոմն աղեկնտոս անուն ետես զդեւն՝ զի երբեմն լայր և երբեմն կրճտէր զատամունս, զի տեսանէր թէ մարդիկ հասեալ 'ի փրկութիւն՝ լնուն զտեղի իւրեանց յերկինս. Իսկ եթէ քննեսցուք զայսցն՝ յայս խորհուրդս դառնեմք և զայնոսիկ ամպարիշտս՝ որք ատեն զարդարն. զի ինքեանք չունելով յոյս կենդանի առ 'ի ժառանգութիւն երկնից արքայութեանն՝ տեսեալ թէ արդարք հանդերձեալ են 'ի նոյն ժամանել՝ յատելութիւն շարժին ընդդէմ նոցա. և վասն այսորիկ կրճտեն զատամունս իւրեանց 'ի վերայ նոցա. Իսկ թէպէտ բացայայտ ոչ գիտեն զայս, բայց չարութիւն նոցա լռելեայն 'ի սոյն բերի.

Ցայսպիսի չար կամաց նոցա երկու ինչ կարէ զերծուցանել զարդարն. մին է 'ի կողմանէ արդարոյն. իբր զի եթէ արդարն հաստատուն կայցէ յարդարութեան, և ոչ միտեսցէ 'ի չարն, չար ինչ ոչ կարէ առնել նմա ամպարիշտն. յայս միտս ասէ բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. Ժդ.) * եթէ մեք մեզ չար չառնիցեմք, „ չիցէ ոք՝ որ մեզ չար առնիցէ . . . եթէ մեք „ զմեզ չթշնամանեմք, չիցէ ոք՝ որ զմեզ թշնամանել „ կարիցէ ‖. Երկրորդն է 'ի կողմանէ այ. զորմէ խօսի մարգարէն զկնի՝ ասելով.

Այլ տէր ծիծաղեսցի զնովաւ. Այսինքն՝ ած որ գիտէ զամենայն, և 'ի ձեռին ունի զամենայն, և իւրով նախախնամութեամբ թոյլ տայ երբեմն մեղաւորին յառնել 'ի վերայ արդարոյ, ծիծաղեսցի զնովաւ. որ է ասել՝ ընդունայն համարեսցի զհնարս և զսպառնալիս նորա. Այլ այս փոխաբերութիւն՝ որ ընծայի այ, այսինքն է ծիծաղել 'ի վերայ մեղաւորի՝ ոչ 'ի մէջ բերէ զհամեմատութիւն ինչ ընդ զօրութեանն այ և ընդ զօրս մեղաւորի և ընդ սպասաւորս նորա. այլ միայն յայտ առնէ՝ թէ զի յանգործ կացուցանէին զսպասաւորս մեղաւորին՝ ամենևին ծիծաղելի առնէ զնա, և ծիծաղելի ցուցանէ զսպասաւորս նորա.

Զի զօրինակ այր հզօր և կարող 'ի տեսանելն զտըկար և զապիկար ոք՝ որ մեծամեծս սպառնայ 'ի վերայ այլոց ուրուք եղելոյ ընդ իւրով ձեռամբ՝ ծիծաղի զնովաւ. և այս ծիծաղիլ նորա ցուցանէ ծիծաղելի լինել սպառնալեաց տկարին, և ոչինչ ազդել. այնպէս յորժամ զի ունայնացուցանէ զսպասաւորս մեղաւորին կամ սատանայի, և անպիտան կացուցանէ զկրճնել սատանայից նորին՝ առի ծիծաղել զնոսա.

Այս ծիծաղիս հայի և 'ի վրէժխնդրութիւնն ոչ. որով և միտ բանին լինի այս. զի վրէժ խնդրեսցէ 'ի մեղաւորէ յաւուր՝ յորում ունի դատել զնա, և կորուսանել. Զայսմ օրէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն առեալ.

ժգ. Քանզի յառաջագոյն տեսանէ, զի հասանելոց է օր նորա.

Այսինքն թէ զի՝ որ յաւիտենից առհմանեալ է ժամ և ժամանակ ամենայնի, յառաջ քան զյաւիտեանս գիտէ և յայտնի տեսանէ՝ թէ երբ հասանէ օր կորստեան մեղաւորին. մանաւանդ թէ իբր հասեալ տեսանէ. Եւ եթէ թոյլ տացէ նմա վնասել արդարոյն՝ կամ նմա սպանանել զնա, եկեսցէ օր՝ զի նա ինքն զամբարշտութիւն կորուսցէ՝ ոչ միայն ժամանակաւոր մահուամբ, այլև յաւիտենական դատապարտութեամբ. Եւ թէպէտ մեղաւորն հեռի կարծէ յիւրմէ զօրն զայն, կամ յապաղելի համարի, բայց զի մօտ տեսանէ զնոյն, և առ դուրս հասեալ.

Իսկ այս օր, այսինքն է օր նորա, կամ օր իւր, են. 'ի սուրբ գիրս բազում ուրեք գնի փոխանակ վերջին աւուր մարդոյ, կամ փոխանակ այնր աւուր. յորում ոչ ևս կարիցէ մարդ ապրել, այլ կամ մահուամբ ունի վերջանալ. և կամ այլով իւիք կործանիլ. յոր միտս ասաց դաւիթ վասն սաւուղայ. * օր իւր եկեսցէ, և մեռցի ‖. (ա. Թագ. իզ. 10.) Աստի և յասելն աստ, հասեալ է օր նորա. կամի ցուցանել զհասանել աւուր կատարածի նորա, կամ աւուր կորստեան նորա. յոր միտս՝ օրհասս կոչեմք զայսպիսի աւուրս. Եւ սակայն որք միանգամ ընկղմեալ են 'ի մեղս և 'ի գործս չարեաց՝ այնինչ խորհին զայսմանէ, և ոչ կրեն ինչ երկիւղ յաստուծոյ. վասն որոյ և համարձակ մտեն 'ի գործել ընդդէմ այլոց զչար. եթէ և անմեղք իցեն նոքին. և այս ոչ միայն սրտիւ և բերանով, այլ և գործով. զոր և յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն, ասելով.

ԺԴ. Սուր հանին մեղաւորք, և լարեցին զաղեղունս իւրեանց. հարկանել զաղքատն և զտնանկն. սպանանել զայն՝ որ խոնարհն է սրտիւ.

ԺԵ. Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա. և աղեղունք նոցա փշրեսցին.

'Ի վերոյ եզակի եդ յասելն. * սպասէ մեղաւոր արդարոյ ||. և եցոյց միայն զչար կամս նորուն ընդդէմ արդարոյն, և զսպառնալիս բերանոյ նորին 'ի կրճտելն զատամունս 'ի վերայ նորա։ Իսկ աստ յոգնակի խօսի, 'ի մէջ բերելով և զգործս նոցա ծանուցանէ՝ իբրև զչար պտուղ չար կամաց և անիրաւ սպառնալեաց նոցա առ 'ի կորուստ արդարոյն՝ յասելն.

Սուր հանին մեղաւորք, և լարեցին զաղեղունս իւրեանց. Այս ինքն ամպարիշտ մարդիկ՝ որք հանապազ զհետ են չարեաց, և կամին նուաճել զարդարս, զինեցան սրով և աղեղամբք. սրով ընդդէմ այնր՝ որ մօտակայ է, և աղեղամբք՝ ընդդէմ այնր՝ որ հեռաւոր է. զի սուրն 'ի մօտաւոր ներգործէ, և աղեղն 'ի հեռաւոր. Որովհետև կամի ցուցանել մարգարէն՝ թէ այսպիսի չարք ոչ խնայեն ոչ 'ի մօտաւորս և ոչ 'ի հեռաւորս, այլ անխնայ բերեն 'ի վնասել և 'ի կորուսանել. ոչ եթէ միայն զնմանիս իւրեանց, այլև զայլ բարիս, զոր աղքատ և տնանկ կոչէ ասելով.

Հարկանել զաղքատն և զտնանկն. սպանանել զայն որ խոնարհն է սրտիւ. Աղքատ կոչէ կամ զայն՝ որ չունի ինչ, և է խիստ աղքատ. և կամ մանաւանդ զայն՝ որ է այր արդար. և աղքատ ասի ըստ երկուց. մի՝ զի աղքատացեալ իցէ երբեք յաչս մեղաւորաց. և երկրորդ՝ զի է հոգւով աղքատ ըստ նմին բանի. 'ի սոյն միտս տնանկ եւս կոչէ զնա. զոր և անուանէ խոնարհ սրտիւ. այսինքն այնպիսին՝ որ իցէ ճշմարտապէս և 'ի սրտէ խոնարհ, և ոչ կեղծաւորութ̃բ՝ կամ լոկ բանիւ։ Յայաղխի այր, ասէ, ոչ խնայեն մեղաւորք, այլ կամին սրով և նետիւք աղեղանց հարկանել, կամ սրով օրինակաւ

և խլէ սպանանել և կորուսանել։

Բայց բանքս նմանութեանք են կարեն առեալ լինել. յոր միոս բառիս սուր՝ իմացեալ լինին նախատինք և արհամարհանք որք 'ի մօտուստ՝ և յանդիման վիրաւորեն զայլս։ Իսկ բառիս աղեղունք՝ իմացեալ լինին բամբասանք՝ որք 'ի հեռուստ և 'ի յետուստ լարին 'ի վերայ այլոց։ Սրով և միտ բանին լինի այս, թէ մեղաւորք նախատանօք և բամբասանօք հարկանեն զարդարն, և սպանանեն զնա՝ ոչ իրօք, այլ կամ ամաչեցուցանելով 'ի նախատելն, և կամ վատահամբաւելով

'ի բամբասելն։

Իսկ Լամբրոնացին սրով և աղեղամբք իմանայ զթելադրութիւնս դիւաց, որք արկեալ լինին 'ի միտս առ 'ի հարկանել և սպանանել զհոգին։ Բայց այն հարուած և այն սպանութիւն նոցա ինքեանց վնասեցէ։ Սուր հանին և մահ և սատանայ ընդդէմ յիսուսի 'ի սպանանել, բայց ինքեանք սպանան. ըստ որում ասէ բարսեղ փառաւորեալ ('ի մեկն. մարկ. 'ի գլ. ԺԴ. եւ և 'ի գլ. ԺԵ.) * զէնն որով յաղթեաց թշնամին (սատա-
„նայ) եղև նա նմա (այսինքն սատանայի) 'ի դաղումն
„և 'ի սատակումն, և նետիւն՝ որով մեռաւ կենդա-
„նութիւնն մեր՝ նովին մեռաւ մահ՝ սպանողն մեր.
„ըստ որում և սաղմոսերգուն զայն յառաջագոյն եր-
„գէր և ասէր. սուր եհան մեղաւորն այսինքն սատա-
„նայ, և լարեաց զաղեղն իւր, հարկանել զաղքատն
„և զտնանկն՝ սպանանել զայն՝ որ խոնարհ էր սրտիւ՝
„այսինքն զք̃ն, որ ասաց, ես հեզ եմ և խոնարհ սըր-
„տիւ . . . սուր նորա մտցէ 'ի սիրտ նորա. և աղեղն
„նորա փշրեսցի‖. զորոց որոշակի և յայտնակի խօսելով մարգարէն ասէ։

ԺԴ. **Սուսերք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա. և աղեղունք նոցա փշրեսցին։** Կամի ասել. 'ի զինիլ մեղաւորաց ընդդէմ արդարոյ սրով և աղեղամբ առ 'ի հարկանել և սպանանել զնա, նախ առաջին ինքեանք զինքեանս հարկանեն և սպանանեն 'ի հոգիս իւրեանց եւ և 'ի մարմինս. 'ի հոգիս, զի առ 'ի մահ մեղանչեն, այսինքն մահուչափ : Ի մարմինս , զի երբեմն անձնասպան եւս լինին . որպէս պատահեցաւ սաւուղայ , աքիտոփելի , եւ այլոց բազմաց : Երկրորդ՝ պարտաւոր առնեն զինքեանս յաւիտենական մահուան . յորում սուրք նոցա այսինքն գործք սրոյ նոցա դարձցին նոցա 'ի պատիժ յաւիտենական , եւ մտցեն 'ի սիրտ նոցա . այսինքն հասցեն 'ի նոսա : Այնպէս եւ գործք աղեղանց նոցա փշրեսցին . այսինքն անպիտանասցին առ այլս , եւ դարձցին 'ի նախատինս իւրեանց : Երրորդ՝ զի 'ի կամել նոցա սպանանել զարդարն՝ երբեմն թոյլ տայ ած զի ինքեանք սպանցին յայլոց . եւ 'ի կամել նոցա վատահամբաւ կացուցանել զարդարն՝ ինքեանք վատահամբաւեսցին . եւ այսու սուրք նոցա եւ նետք նոցին մտանեն 'ի սիրտս նոցա :

Եւ 'ի լինել այսր՝ աշխատանք նոցա դառնան յոչինչ , եւ զօրութիւնք նոցա փշրին , այսինքն անզօր մնան ընդդէմ այլոց , եւ կամ կրօք իսկ խորտակին . որպէս պատահեցաւ բազմաց , մանաւանդ տիրասպան Հրէից :

Ապաքէն աղեղն ծուռն 'ի հարկանելն զնէմ՝ երեւին պատառել զնոսա . բայց ոչ նոքա , այլ ինքեանք պատառին եւ խորտակին . ինքեանց եւ ոչ թէ նոցա վնասեն . նոյնպէս եւ աղեղ բանից եւ գործոց անպարկեշտ մարդկան 'ի հարկանելն զարդարս՝ յինքեանս խորտակին : Զսոյն գրելով եւ բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . գլ . ժդ . 'ի յորդորակին՝) ասէ . * վէմք յեզերս ծովու կոծեցեալ՝ բեկանեն զալիս || : նոյնպէս առէ եւ 'ի կծել արդարոց 'ի բանից եւ 'ի գործոց թշնամեացն՝ բեկանին՝ ոչ ինքեանք , այլ թշնամիքն : * պայ-
,, ծառ եւ գեղեցիկ է (ասէ 'ի գլ . ժդ .) բարեպաշտացն
,, այս պատերազմ . նոր եւ չքնաղ յաղթութեանցն
,, տեսիլ . վասն զի սա հարկանեն նոցա թշնամիքն , եւ
,, ինքեանք (թշնամիքն) գլորին . նենգեն , բայց նո-
,, քեանք ընկենին . նետս ձգեն ուժգնաբար , այլ եթէ
,, համբերեսցուք , յինքեանս դարձցին նետք նոցա . 'ի
,, նոսին կրկնեսցին սուրք իւրեանց || :

Եւ սրբն յակոբ մծբնայ հայրապետ զսոյն յարմարեցուցանէ հաւանոյ , 'ի մէջ բերելով զպահս եսթերայ եւ մուրթքէի . եւ գրէ ('ի ճառն . դ .) այսպէս . * Եւ

„ Եղեն պտուղք մարթքէի և եսթերայ իբրև գլխահամն. և ընկալաւ զնետս մահու համանայ. և համանն յանօրէնութեան իւրում շաղեցաւ. և սուրն սատակիչ եմուտ 'ի սիրտ նորա. և աղեղն նորա՝ որ լարեալ էր յանօրէնութիւն՝ փշրեցաւ. որպէս և գրեալ է վասն ամպարշտաց. սուրք իւրեանց մտցեն 'ի սիրտս իւրեանց. և աղեղունք նոցա փշրեսցին. այս ամենայն եկն կատարեցաւ 'ի վերայ համանայ... և խորխորատն՝ զոր փորեաց նա՝ անկաւ 'ի նմին. և որս, զոր թաքոյց՝ եառ զնա նորա. և որոգայթ նորա նմին պատրաստեցաւ. և անկաւ նա 'ի գործս անօրէնութեան. և եղև սատակումն նորա յաւիտեանս ժամանակաց‖։

Այսպիսի ներգործութիւնք բազում անգամ հրաշիւք եւս երևեցան. յորս և յայսմիկ տեսաք, զի 'ի պաշտպանել արդարոյն առ յոյ՝ պատահեցան թշնամիք նորա. որով և տուեալ հզօր ցուցաւ խոնարհութիւն տկար և աղքատ արդարոյն քան զբարձրութիւն մեծազօր և լիափարթամ ամպարշտին, տուեալ մեծ և չքնաղ երևեցաւ աղքատութիւն միոյն 'ի պաշտպանելն, քան զզօրութիւն միւսոյն 'ի վնասելն։ Վասն որոյ և զոյն զայս առիթ առեալ մարգարէին ցուցանէ յանջարդ բանիւն՝ թէ լաւ եւս է լինել արդար աղքատութեամբ, քան լինել ամպարշտ հանդերձ զօրութբ̃ և մեծութբ̃. յասելն։

ԺԶ. Լաւ է սակաւուն ինչ արդարոյ, քան զմեծութիւն մեղաւորաց. և բազուկք ամպարշտաց կորուսցեն։

Սակաւուց է իմանալ զայս բան. զի հասարակաց յօժարութիւն ոչ ընդ այս՝ այլ ընդ հակառակն բերի. լաւ է առնն բազում ինչ ունել քան սակաւ։ Իսկ սակայն լաւութիւն սակաւ ունելոյ յանցաւոր ստացուածոյ՝ միշտ ճշմարիտ քարոզի. զի է պատճառ անդորրութեան կենաց և զգաստութեան վարուց. և այս՝ յամենեսին առ հասարակ՝ այսինքն յարդարն և յամպարշտսն, բայց առաւել ես յարդարն։ Այլն իբր ասէ։

Լաւ է սակաւուն ինչ արդարոյ՝ քան զմեծութիւն մեղաւրաց։ Այսինքն լաւ է, զի մարդ ունիցի սակաւ ստացուածս, կամ ըստ եբրայեցւոյն՝ սակաւ գիտութիւն կամ սակաւ զօրութիւն, միայն թէ իցէ արդարու- քան թէ ունիցի բազում փարթամութիւն կամ գիտութիւն, և իցէ մեղաւոր։ Զի առաւել օգուտ է արդարոյն սակաւութիւն ստացուածոց, քան մեղաւորին շատութիւն փարթամութեանց։ Վասն որոյ առաւել երջանիկ է արդար նուաստակեաց քան մեղաւոր յղփացեալ։ Վասն իւր յաւէտ ցանկալի է արդար լինել սակաւուք և [illegible] շատացեալ, քան ամենից լինելոյ արդար բազմօք մեծամեծ, և [illegible] թշուառական։

Զայն զայս բազում ուրեք բազում զգուշութեամբ ուսուցի զնէ ամենայնն գիրն յաւէտ. * լաւ է սակաւիկ „ինչ արդարութեամբ՝ քան զբազում ինչս անիրա- „ւութեամբ։ (Առակ. ԺԶ. 8.) Զնոյն կրկնէ և իմաստունն բազմապատիկ օրինակաւ 'ի գիրս առակաց. ('ի գլ. ԺԵ. 16. և 29.) ասէ. * լաւ է փոքր բաժին եր- „կիւղիւ տեառն, քան զգանձս մեծամեծս աներկիւ- „ղածութբ... Լաւ է սակաւիկ ինչ առնուլ արդա- „րութբ, քան զբազում արդիւնս աներկիւղածութբ։ Նոյն ('ի գլ. ԺԶ. 8.) ասէ. * լաւ է սակաւ ինչ առնուլ „երկիւղիւ տն, քան զգանձս մեծամեծս ամբարշտու- „թբ։ (Տես և 'ի գլ. ԺԷ. 1. և 'ի ԻԸ. 6. և 22. Եւ դարձեալ 'ի գլ. Գ. 14. և 'ի գլ. Ը. 19. ևն.)

Իսկ պատճառ այսմ այսպէս լինելոյ է բազում։ Մի՝ զի առաւել բարւոք կարգին սակաւ ինչք արդարոյն, քան բազում ստացուածք ամբարշտին. վասն զի արդարն ունի մատակարար և հոգատար ընչից իւրոց զնա ինքն զԱծ, որ յամենայնի զխնամ իւր անպակաս առնելով 'ի վերայ արդարոյն, այնպէս կարգաւորէ զսակաւ ինչս նորա, մինչ գրեթէ 'ի սակաւութեան անդ իբր 'ի մեծութեան բերկրել։ Իսկ ամբարշտին թշնամի ունելով զԱծ՝ ընդ հակառակն առաջնորդի։ [illegible]՝ զի արդարն 'ի ձեռն առաքինութեանց բարւոք կենցաղավարելով՝ զսակաւիկն զայն՝ զոր ունի՝ հանգստեամբ վայելէ։ Իսկ ամբարշտին 'ի մեծութեն իւրում՝ շատ և կամ ընդ հակառակն ունի կեանս վարելով կամ զինչս իւր յանարժան գործս վատնելով՝ թշուառանայ 'ի նոսին :

Երրորդ՝ զի արդարն՝ 'ի սակաւուն շատանալով՝ գոհ գտանի, և կայ ուրախ : Իսկ ամպարիշտն 'ի բազում մեծութեան ոչ շատանալով՝ տժգոհ կայ և տխուր. և հանապազ մղի խթանօք ագահութեան՝ և եւս առաւելուլ 'ի մեծութ՟ե. որով և տանջի՝ եւս և հալի և մաշի 'ի տունջեան և 'ի գիշերի՝ առ 'ի զինչս յաւելլոյ կամ առ 'ի յապահովս թողլոյ :

Չորրորդ՝ զի արդարն ունի 'ի հոգի իւր մխիթարութիւն մեծ. առ որով սնոտի համարի զամենայն մեծութիւն. առաւել յարգոյ է նմա զգեստ աղքատութեան քան շքեղութիւն արքունի հանդերձից. առաւել ախորժելի է նմա աղքատին կերակուր քան զհամադամ խորտիկս թագաւորաց. որպէս յայտնի տեսաւ այս 'ի սուրբն լուտովիկոս յորդի կարոլոսի թագաւորին նէապօլսոյ. որ կրօնաւորեալ 'ի կարգ փրանկիսկեանց՝ ասէր. առաւել համեղ թուի ինձ պատառ մի հացի՝ զոր մուրանայի, քան զփափկութիւն թագաւորական սեղանոյ : Իսկ ամպարիշտն զուրկ է 'ի մխիթարութ՟է հոգւոյ. որով և զուրկ գտանի 'ի մխիթարութենէ անտի՝ զոր կարծէ ունել 'ի բազում լիութ՟ե և մեծութ՟ե. զի յոր ինչ և ծախեսցէ զնոսին առ 'ի գտանելոյ զմխիթարութիւն ինչ, նովին գտանէ դառնութիւն կրկին. մի՝ 'ի տալն կամ 'ի ծախելն վասն գտանելոյ, զի ցաւ է նմա այն ծախք, և մի եւս՝ 'ի գտանելն անդ. զի զոր ինչ և գտանիցէ՝ անցաւոր է, և սնոտի, մանաւանդ թէ բազում անգամ և վնասակար հոգւոյ կ՟մ մարմնոյ :

Բարոյապէս, լաւ է սակաւ ինչ գործ բարի՝ բարւոք գործեալ՝ քան զբազում գործս բարիս ոչ բարւոք արարեալ. զորօրինակ լաւ է բարի հոգւով տալ սակաւ զողորմութիւն՝ քան զբազումս սնափառութ՟ե, կամ թիւր դիտաւորութեամբ : Զերկուս լումայս էարկ այրին 'ի գանձանակն, իսկ այլք բազումս. այլ զինչ ասաց Քս՟. * ամէն ասեմ ձեզ՝ զի այրին այն տառա-
,, պեալ շատ էարկ քան զամենեսին ‖ . (մարկ . ժբ . 43 :) Քանքարատուն ոչ հայեցաւ 'ի բազմութիւն շահուն, այլ 'ի հաւատարմութիւնն 'ի սակաւուն . * որով-
,, հետև 'ի սակաւուդ հաւատարիմ եղեր ‖ : և այլն . (մատ . իե . 21 :) Զի ա՟ծ անկարօտ գոլով ոչ հայի

յորքանն, այլ յորպէսն. կամ որպէս ասէ՝ * ոչ հայի „ 'ի բայն, այլ 'ի մակբայն ‖. այսինքն թէ ոչ հայի 'ի գործն՝ թէև մեծ իցէ և բազում, այլ յեղանակ գործոյն՝ թէև փոքր իցէ և սակաւ: Եթէ արդարութ̃ իցէ սակաւն՝ ընդունելի է նմա. իսկ եթէ առանց արդարութեան իցէ բազումն՝ արհամարհելի է նմա: Ապա եթէ անիրաւութիւն ինչ իցէ՝ ամենևին ատելի է նմա. և որք գործեն՝ դատապարտին յարդարութենէ նորա, նա և բազուկք նոցա խորտակին. ըստ որում և ասէ մարգարէն:

Եւ բազուկք ամբարշտաց խորտակեսցին: Բազկօք իմացեալ լինին աստ նախ այն իրք՝ որք այլաբանին 'ի բազուկ. որպիսի են իշխանութիւնք, ուժգնութիւնք, մեծութիւնք, ինչք, փառք, եւն: Երկրորդ իմացեալ լինին այն իրք՝ որք բազկօք կատարին. որպիսի են այն գործք՝ որք վնասիչ են այլոց, կամ հարուածիչ, կամ բռնադատիչ, կամ կորուսիչ, եւն: Այս ամենայն ասէ զորս երևեցուցանեն ամպարիշտք, կամ որով սպառնանն, ունայնասցին և անպիտանասցին: Եւ զի զայսոսիկ նմանեցոյց բազկաց, վասն այսորիկ փոխանակ ասելոյ՝ ունայնասցին՝ ասէ խորտակեսցին:

Եւ եթէ առ ժամանակ մի ևս երևեսցին, բայց 'ի ժամանել աւուր մահու ոչինչ ազդեսցին, մանաւանդ թէ 'ի թշուառութիւն նոցա դարձցին: Սոքիմբք կամի ցուցանել մարգարէն զդիւրակործան լինել իշխանութեան ամպարշտաց, և զվաղանցիկ լինել մեծութեան նոցա, և զչարավախճան կորնչիլ գործոց նոցին: Եւ ընդ հակառակն սովին իսկ ցուցանէ զհաստատուն լինել արդարոց 'ի բարին. իսկ թէ զիարդ՝ յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով:

ժզ. Հաստատէ Տէր զարդարս. և ճանաչէ զճանապարհս անբծից. ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի:

Հաստատութիւն շինուածոյն կախի զայնմանէ՝ յոր յեցեալն է. արդ մեծութիւնք ամպարշտաց և զօրութիւնք նոցա յեցեալ գոլով յանցաւորս՝ ըստ անհաստատ լինելոյ անցաւորաց՝ նման անհաստատ և յինքեանս, և ընդ նոսին կործանին: Իսկ մեծութիւնք և զօրութիւնք արդարոց՝ ոչչափ և իցեն՝ եթէ՛ սակաւ, և եթէ բա-

զում, եթէ հոգւոյ՝ և եթէ մարմնոյ, յեցեալ զօրով յամենահաստատ խնամս ա՟յ՝ մնան հաստատուն 'ի ձեռս ա՟յ. մանաւանդ թէ նա ինքն ա՟ծ առնէ՝ զի ոչ միայն մեծութիւք արդարոց, այլ և նոքին իսկ արդարքն մնասցեն հաստատուն ըստ հաճութեան իւրում. վասն
որոյ ասէ.

Հաստատէ տէր զարդարս. Այս հաստատութիւն արդարոց լինի ըստ երից. մի ըստ անկործան պահելոյ զնոսա ա՟յ. զի որովհետև արդարք զյոյս իւրեանց ոչ յինքեանս՝ այլ յա՟ծ են հաստատեալ, ա՟ծ ևս 'ի հասանել վտանգի կործանման նոցա՝ հաստատուն պահէ զնոսա, կամ առնէ՝ զի մի անկցին. Երկրորդ՝ ըստ շատացեալ պահելոյ զնոսա ա՟յ. զի որովհետև արդարք ոչ ունին զիւրեանց մխիթարութիւն 'ի կենցաղական բարիս՝ այլ յա՟ծ, 'ի պակասիլ կենցաղականացս՝ այնպէս առնէ ընդ նոսա՝ զի մնասցեն գոհ և շատացեալ. և այսու հաստատէ զնոսա. այսինքն պահէ զնոսա 'ի հաստատուն մխիթարութե՟ և խաղաղութեան սրտի, և 'ի հաստատուն զուարճութեան հոգւոյ. Երրորդ՝ ըստ ոչ թողլոյ զնոսա ա՟յ իսպառ. իբր զի թէև յամենայն կողմանց պաշարիցին արդարք 'ի տառապանս, և զրկեալ լիցին յամենայն մխիթարութենէ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, մինչև կարծել նոցա, թէ թողեալ լքեալ իցեն յա՟յ, ա՟ծ զաղտնի պաշտպանութբ՟՝ յայնժամ մեծի տուայտութեան նոցա անվթար և անբիծ պահէ զնոսա, մինչև ցօրն ցայն՝ կամ մինչև 'ի ժամն յայն, յորում մխիթարելոց է զնոսա հոգևորական բերկրութեամբ. կամ մինչև ցայն ժամանակ, յորում հանդերձեալ է զուարճացուցանել զնոսա յաւիտենական ուրախութեամբ. Զայսմանէ որոշակի ևս խօսի մար-
գարէն, և ասէ.

Ճանաչէ տէր զաւուրս անբծից. Աւուրքս նշանակին աստ այն ժամանակք, յորս իւրաքանչիւր արդարոց լինիցի վախճան տառապանաց, և սկիզբն ամենաերջանիկ կենաց 'ի յաւիտեան. Զայսպիսի յետին աւուրս արդարոց որք յանբծութեան կեցին՝ ճանաչէ (ասէ) ա՟ծ. այսինքն յայտնի տեսանէ, ըստ որում և սահմանեալ է՝ զի 'ի հասանել այնց աւուրց՝ տացէ վախճան վշտաց նոցա, և ընկալցի զնոսա 'ի հանգիստն յաւիտենից.

Մարթ է աստ աւուրբք իմանալ և զընթացս կենաց, կամ որպէս գրի յայժմու օրինակս եօթանասնից՝ իմանալ զճանապարհս, որք օրինակին յընթացս կենաց, յորս տառապին արդարք, և 'ի տառապանս գոլով համբերութեամբ ծառայեն այ, և յամենայն փորձութիւնս՝ անբիծ և անարատ պահեն զանձինս իւրեանց 'ի մեղաց։ Զայս ամենայն ճանաչելով այ՝ 'ի լնանալ աւուրցն՝ տացէ նոցա վարձս բարեաց յաւիտեան. յոր
միւս յարէ զկնի, և ասէ.

Ժառանգութիւն նոցա յաւիտեան եղիցի։ Բառդ յաւիտեան՝ 'ի կեանսն միւս կարէ առնուլ լինել. մի՝ փոխանակ երկար ժամանակի. յոր միտս բազում ուրեք 'ի գործ ածի այս բառ 'ի սուրբ գիրս։ Երկրորդ՝ փոխանակ անվախճան տևողութեան։ Ըստ առաջնոյն կամի ասել. արդարք՝ որք անբծութեամբ կան 'ի ծառայութեանն այ՝ երկար ժամանակաւ 'ի խաղաղութեան ժառանգեսցեն զկեանս՝ նաև որդիք նոցա յետ նոցա։ Ըստ երկրորդին կամի ասել. արդարք թէև չունիցին ինչ մեծութիւն կամ հանգիստ յաստի կեանս, 'ի հանդերձեալն ունիցին զժառանգութիւն յաւիտենական երանութեան. վասն որոյ թէև չարչարեսցին աստ, այն չարչարանք նոցա գործին նոցա 'ի փառս, և ոչ 'ի նախատինս, և առ
այս յարէ զկնի, և ասէ.

ժէ. Ո՛չ ամաչեսցեն նոքա 'ի ժամանակի չարութեան. այլ յաւուրս սովոյ յագեսցին։

Ժամանակք չարութեան կոչին աւուրք ներքին տառապանաց և փորձութեանց, ևս և աւուրք արտաքին նեղութեանց, ձախորդութեանց, հալածանաց, ևն։ Զի այսպիսի պատահարք գոլով չար ինչ և առ չարն հակեցուցիչ, աւուրքն ևս՝ յորս պատահին այսպիսիք՝ կոչին ժամանակք չարութեան։ Արդ յըմբռնել արդարոց յայսպիսի աւուրս, ծաղր առնեն զնոսա ամբարիշտք, և կամ զարմանան, թէ զի է՝ զի նոքա յարդարութե կալով՝ յայսպիսի տառապանս մաշին, և զաւուրս բարութեան ոչ տեսանեն. ուրեմն սուտ է ասեն այն յոյս նոցա, որով կարծեն՝ թէ կալով յարդարութեան՝ ունիցին վայելել 'ի բարութե։ Որոց ընդդէմ պատասխանէ մարգարէն՝ ասելով.

Մի՛ ամաչեսցեն նոքա 'ի ժամանակս չարութեան. Այսինքն նոքա որք արդարքն են, և անբծութեամբ ծառայեն ա՟յ՝ 'ի հասանել 'ի վերայ նոցա աւուրց նեղութեան և տառապանաց, աւուրց աղքատութեան և հիւանդութեան և այլն. որովհետև նոքա համբերեն այնմ ամենայնի, և ոչ հեռանան 'ի ծառայութենէն ա՟յ, մի՛ ամաչեսցեն իբր ունայնավաստակք և զրաջանք, այլ շահեսցին 'ի նոսին զվարձս մեծամեծս, զորս տացէ նոցա ա՟ծ յարքայութե՟ իւրում.

Լամբրոնացին փոխանակ ընթեռնլոյ ժամանակ չարութեան՝ ընթեռնու ժամանակ նեղութեան. և այնու իմանայ զժամանակ դատաստանին. յայնմ աւուր ասէ մի՛ ամաչեսցեն արդարք, այլ փայլեսցին փառօք, և բերկրեսցին յաւիտեան. Իսկ իբր առհաւատչեայ այնր բերկրութե՟ ունիցին յաստի կեանս մխիթարութի՟ ոչ միայն զներքին, այլև բազում անգամ զարտաքինն ևս թէև 'ի վերջին թշուառութե՟ իցեն, ևս և յանհնարին սովու. և առ այս յարէ.

Եւ յաւուրս սովոյ յագեսցին. Որ 'ի հասարակի եդ 'ի վերոյ, աստ մասնաւորէ առ մի՛ ինչ՝ այսինքն առ աւուրս սովոյ. որով խնդրեալ լինի նախ՝ սովն հասարակ և արտաքին, և երկրորդ՝ սովն հոգևոր և ներքին. Երկոքին սոքա ևս անպատմելի վիշտ են մարդոյ. բայց սակայն ասէ՝ թէ որք անբծութեամբ վարուց ծառայեն ա՟յ՝ նոքա յայսպիսի աւուրս մի՛ իսպառ մնասցեն քաղցեալ. այլ գտցեն իւրեանց կերակուր եթէ հոգւոյ 'ի շնորհացն ա՟յ, և եթէ մարմնոյ 'ի խնամոց նորա. և նոքիմբք յագեսցին. (զայսմանէ տես և 'ի համարն. 23.)

Եւ եթէ երբեմն դէպ լիցի ոչ յագել արդարոց յաստի կեանս, 'ի հանդերձեալն պահի նոցա յագուրդ յաւիտենական. զի որովհետև անդր ամբարեցին զարդիւնս գործոց իւրեանց, անդէն գտցեն և յագեսցին յաւիտեան. Իսկ մեղաւորք աստ տանջին 'ի սովոյ շնորհաց և երկնային մխիթարութեանց. և անդ տագնապեսցին 'ի սովոյ ա՟ծային ողորմութե՟, ևս և 'ի սովոյ ո՛ և իցէ բարեաց. որով և զրկեալ յամենայնէ՝ կորիցեն. ըստ որում և յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն՝ ասելով ։

ժէ. Ահա մեղաւորք կորիցեն. այլ Թշնամիք Տն ՚ի փառաւորել և ՚ի բարձրանալ իւրեանց պակասեսցեն. որպէս ծուխ ղէ պակասէ ։

Կորնչիլ մեղաւորաց կարէ լինել, մի՛ յաստի կեանս, և մի՛ ՚ի հանդերձեալն. վասն հանդերձելոյն չիք տարակոյս առ այնոսիկ՝ որք հաւատան սուրբ գրոց. իսկ վասն կորստեան որ լինի յաստի կեանս՝ գիտելի է. զի այս կորուստ մեղաւորաց կարէ լինել ըստ ներքնոյն և ըստ արտաքնոյն ։ Ըստ ներքնոյն առաջին կորուստ նոցա է կենաց՝ որ լինի մահուամբ. երկրորդն է կորուստ առողջութեան, զգայութեան, զօրութեան, գեղեցկութե̃ և այլն. թող զկորուստ հոգւոյն ։ Ըստ արտաքնոյն առաջինն է կորուստ ստացուածոց, իշխանութե̃, համբաւոյ ևն. երկրորդն է կորուստ արտաքին անձանց՝ այսինքն որդւոց, կնոջ, ազգականաց, բարեկամաց, քաղաքացեաց ևն ։ Այս ամենայն Թէպէտ և հասարակ է՝ արդարոյ և մեղաւորաց, բայց ըստ որում մասնաւոր պատիժ՝ և ըստ որում դառնացուցիչ դիպուած, յատուկ է մեղաւորաց ։

Արդ ՚ի կորուսանել մարդոյ զայսոսիկ՝ Թէպէտև ըստ հասարակ խօսից ոչ ասեմք կորեաւ (բայց ՚ի կորստենէ կենաց). այլ Թէ կորոյս, բայց կարէ եւս երբեմն ասել կորեաւ. զորօրինակ ՚ի զրկիլ ուրուք ՚ի զգայութենէ կամ ՚ի զօրութենէ, կարէ նա ինքն ասել ցայլս՝ ահա կորեայ. նոյնպէս և յանկանիլ ուրուք յիշխանութենէ՝ կարէ զնոյն ասել. այսինքն Թէ կորեայ ։ Եւս և ՚ի տարագրիլ ուրուք ՚ի բարեկամաց՝ կարէ նոյնպէս ասել կորեայ ։ Եւ զորօրինակ կարէ այսպիսի ասել վասն իւր՝ կորեայ, նոյնպէս և այլք կարեն ասել զնմանէ. կորեաւ կամ կորիցէ ։ Ըստ այսմ առման խօսի աստ մարգարէն՝ յասելն ։

Ահա մեղաւորք կորիցեն ։ Ահա ասելով ցուցանէ Թէ մեղաւորք Թէպէտև առ ժամանակ մի վայելեսցեն ՚ի բարիս, բայց փութով եւս և կամ յանկարծ կորիցեն. զի անցցէ այն վայելումն նոցա, և յաջորդեսցէ Թշուառութիւն՝ կամ յաստի, և կամ ՚ի հանդերձեալն. յաստի պէսպէս օրինակաւ, այսինքն կորստեամբ կենաց կամ առողջութեան, և կամ կորստեամբ իշխանութեան և փարթամութեան են. և ՚ի հանդերձեալն կորստեամբ յաւիտենական փրկութեան։ Այլ առ բացայայտ կացուցանելոյ զայս, այսինքն զըստ ամենայնի և զվաղվաղակի կորուստ նոցա՝ ՚ի մէջ բերէ մարգարէն զնմանութ̃ի պակասման ծխոյ և ասէ։

Այլ թշնամիք Տեառն՝ ՚ի փառաւորել և ՚ի բարձրանալ իւրեանց պակասեսցեն. որպէս ծուխ՝ զի պակասէ։ Զորս յառաջն մեղաւորս կոչեաց, զնոյն թշնամիս տեառն անուանէ աստ։ Վասն զի ամենայն որ մեղանչէ և կայ ՚ի մեղս՝ թշնամի առնէ զինքն ա̃յ. զի անարգէ կամ արհամարհէ զհրամանս նորա և զմեծվայելչութ̃ի նորին. քանզի գիտելով՝ թէ այն՝ զոր գործէ է ընդդէմ հաճոյից նորա և ատելի նմա, նախամեծար առնէ զայն քան զհաճոյս նորա. կամ որ նոյն է՝ առաւել ընտրէ առնել զկամս իւր՝ քան զկամս ա̃յ, թէև գիտէ՝ թէ ա̃ծ բարկանայ վասն այսր։ Եւ ահա այսու թշնամի ա̃յ կացուցանէ զանձն։

Արդ ասէ, այսպիսիք թէև փառաւորեսցին ՚ի մարդկանէ, և բարձրասցին իշխանութ̃բք կամ մեծութ̃բք, մի կարծեսցեն թէ ունին տեւել ՚ի նոսին. այլ ՚ի փառաւորելն անդ՝ այսինքն մինչդեռ ՚ի փառս են կամ ՚ի բարձրութեան՝ պակասեսցեն. այսինքն ոչ ևս մնասցեն այնպիսի, որպիսի էին, կամ թէ բարձցին ՚ի միջոյ, և ոչ ևս երևեսցին որպէս պատահի ծխոյ. զի ծուխն յորժամ բարձրանայ, ՚ի բարձրանալն անդ պակասի. և ոչ իսկ թողու շաւիղ զկնի իւր. ըստ այսմ պատահեսցի և թշնամեաց տ̃ն։

Այս բանք ըստ ըմբռնողութեան հային և ՚ի դևս, որք յաւուրն դատաստանի պակասեսցին յերեսաց երկրի. և իբրև ծուխ հալածեսցին ՚ի դժոխս։ Զայսոսիկ եդեալ մարգարէին ՚ի մէջ բերէ և զմասնաւոր չարութիւն մեղաւորաց, առ ՚ի ցուցանել թէ ՚ի պակասիլ նոցա իբրև զծուխ՝ ոչ ունին գտանել զողորմութիւն յա̃յ մինչև ց յաւիտեան. վասն զի և ինքեանք անողորմ գտան առ ընկերս. իսկ թէ որ իցէ այն անողորմութ̃ի նոցա՝ յայտ առնէ ՚ի յաջորդ համարն ասելով։

ԺԹ. **Փոխ առնու մեղաւորն՝ և ոչ հատուցանէ. այլ որ արդարն է, ողորմի և տայ։**

Յայտ է թէ որ 'ի կարեւոր ժամանակի ոչ առնէ զողորմութիւն՝ զոր կարէ, ոչ գտանէ և ինքն յԱյ զողորմութիւն՝ 'ի կողմանէ իւրմէ. իսկ որ նաև զայլոցն 'ի նոցա կարեւոր ժամանակի յափշտակիցէ, որում ողորմութեան ակնունիցի։ Զինչ ասա՝ որ խաբելով զայլս, մանաւանդ զաղքատս, զորբս և զայրիս՝ առնուցու 'ի նոցանէ զորս ունին՝ անուամբ փոխոց, և ոչ հատուցանիցէ նոցա։ Զայսպիսեաց ահա խօսի աստ մարգարէն՝ յասելն։

Փոխ առնու մեղաւորն և ոչ հատուցանէ։ Կամի ասել, մեղաւորն, որ հաստատեալ ունի զկամս իւր 'ի չարիս, գութ ոչ ունի առ ընկերն. այլ որպէս անգութ է առ ինքն 'ի կորուսանել, սոյնպէս անգութ է և առ ընկերն։ Եւ զի այսպիսիս կամի կեալ ըստ հաճոյից իւրոց, 'ի պակասիլ նմա իրիք՝ փոխ առնու երբեմն յայլմէ, թէև գիտիցէ՝ թէ ոչ կարէ հատուցանել, մանաւանդ թէ և ոչ իսկ կամի հատուցանել վասն իւրոյ անգթութեանն. քանզի և ինքն ոչ յուսայ՝ թէ հատուսցի ինքեան բարի ինչ յԱյ։

Այսպիսիք ըստ ասելոյ լամբրոնացւոյն փոխ առեալ նաև յԱյ զկեանս իւրեանց և զժամանակ ապաշխարութեան՝ ոչ հատուցանեն նմա զոր պարտին՝ զգործս բարեաց, կամ գոնէ զգոհութիւն. իսկ արդարն ընդ հակառակն բերի. վասն որոյ ասէ։

Այլ որ արդարն է, ողորմի և տայ։ Այսինքն այր արդար ոչ միայն հատուցանէ զառեալ փոխն, այլև ողորմութիւն ևս տայ կարօտելոց. որով և փոխ տայ Այ ըստ գրեցելումն թէ. * փոխ տայ Այ՝ որ ողորմի տնանկին ‖. (Առակ. ԺԹ. 17.) զի թէև աղքատ իցէ, ոչ պակասի նմա այն ինչ՝ որով շատասցի ինքն, և շատացուսցէ զայլս ըստ կարի գոնէ բանիւք խրատու և մխիթարութեան։ Ասող զայն՝ զի յաղքատութեան անդ իւրում զԱծ ունելով՝ ունի զամենայն, և ժառանգէ զրեթէ զամենայն. ըստ որում ասաց մարգարէն ('ի վերոյ 'ի համարն. 3.) զոր և այլով իմն բանիւ յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով։

Ի․ Ոյք օրհնեն զտ̃ր՝ ժառանգեսցեն զերկիր․ և ոյք անիծանեն՝ սատակեսցին ՚ի նմանէ։

Օրհնել զտէր լինի երրակի․ բանիւ, սրտիւ, և գործով։ Բանիւ՝ յորժամ վերառաքին ա̃յ բանք օրհնութեան, եւս և բանք գոհութեան։ Սրտիւ՝ յորժամ ՚ի ներքս ՚ի հոգւոյն մատուցանին ա̃յ նոյնպիսի բանք օրհնութեան և գոհութեան․ և այս գերագոյն է քան զառաջինն։ Գործով՝ յորժամ կատարի ՚ի բանաւոր ստեղծուածոց այն ամենայն՝ որով փառաւորի ա̃ծ, կամ յորժամ պահին ամենայն պատուիրանք նորա ՚ի մարդն․ և սա լրապէս առեալ՝ գերագոյն եւս է քան զառաջինսն։ Յայսոսիկ օրհնութիւնս հայելով ասէ մարգարէն։

Ոյք օրհնեն զտէր, ժառանգեսցեն զերկիր։ Այսինքն ամենեքին նոքա որք հաճելով ընդ ամենայն զոր արար և զոր առնէ ա̃ծ՝ օրհնեն զնա, և կան գոհ զնմանէ, և պահեն զհրամանս նորա, ժառանգեսցեն զերկիր, այսինքն հանգստեամբ վայելեսցեն զբարութ̃իս երկրի։ Իսկ ամպարիշտք փոխանակ վայելելոյ՝ զրկեսցին․ և առ այս յարէ։

Եւ ոյք անիծանեն, սատակեսցին ՚ի նմանէ։ Որպէս զօրհնելոյն ասացաւ, սոյնպէս և զանիծանելոյն ասի լինել երրակի․ բանիւ, սրտիւ, և գործով․ բանիւ յորժամ ոք տրտնջէ զա̃յ, և կամ հայհոյէ զանուն նորա սուրբ, և կամ անարգ ցուցանէ առաջի այլոց զմեծութ̃ի նորա կամ զխնամս նորին․ և կիմ յորժամ անիծանէ զանձն իւր, և կամ զարարածս ա̃յ ե̃ն։ Սրտիւ՝ յորժամ ՚ի ներքս ՚ի հոգւոյն տրտնջէ կամ հայհոյէ ե̃ն։ Գործով՝ յորժամ գործէ ընդդէմ հաճոյից ա̃յ․ և կամ պաշտէ զայն ինչ՝ որ ոչ է ա̃ծ։

Արդ որք միանգամ ասէ՝ այսպիսի օրինակաւ անիծանեն՝ այնպիսիքն սատակեսցին ՚ի նմանէ․ ուր բառդ ՚ի նմանէ՝ հայի յերկիր․ և դնի փոխանակ բառիս յերկրէ․ որպէս թէ ասացեալ էր․ սատակելով բարձցին յերկրէ։ (Զայսմանէ տե՛ս և ՚ի համարսն․ 8․ և 9․ եւս և 2։) Իսկ թէ որք օրհնենն զա̃ծ ըստ վերոգրելոյդ՝ զվարձ օրհնին յա̃յ, և զո՛ր խնամս տեսանեն ՚ի նմանէ, և զո՛րպիսի բարիս գտանեն, սկսանի մարգարէն կարգաւ առաջի դնել. և նախ ասէ ։

իա. Ի Տեառնէ ուղղին գնացք առն. զճանապարհս նորա նա կամի յոյժ ։

Գնացք առն ասելով խմանայ զգործս այնպիսի մարդոյ, որ կամի կեալ ըստ այ, և ծառայել այ ։ Արդ գործք այսպիսի մարդոյ երրակի ուղղին 'ի տ̄նէ. Մի՝ յորժամ ցուցանէ նմա տ̄ծ լուսաւորութ̄ մտաց՝ թէ զինչ պարտ է առնել ։ Երկրորդ՝ յորժամ 'ի ձեռն շնորհաց զօրացուցանէ և առաջնորդէ նմա գնալ 'ի նոյն ։ Երրորդ՝ յորժամ յատուկ նախախնամութ̄ իւրով պաշտպանէ յարգելչացն ։ Յայտնիկ հայելով ասէ ։

Ի Տեառնէ ուղղին գնացք առն ։ Կամի ասել. որ միանգամ փութայ գնալ ըստ հաճոյս այ, այնպիսին միշտ գտանէ զօգնութի 'ի նմանէ. որով և ուղիղ ընթանայ. այսինքն զայնպիսիս գործէ՝ որք են ուղիղ և հաճոյ այ, և այն յաջողութ̄ և առանց վտանգի ։

Այլազգ ևս կարէ մեկնիլ այս բան իբրև 'ի հասարակի խօսելով. որպէս թէ եդեալ էր. գնացք կամ գործք մարդոյ յորժամ թիւրին՝ այն ոչ է յայ, այլ 'ի մարդոյ. իսկ յորժամ դիւրին, այն է յայ, և 'ի շնորհաց նորա ։

Իսկ եթէ զբառդ ուղղին՝ առցուք փոխանակ կառավարելոյ, միտ բանին լինի այս. գործք մարդոյ եթէ յայ կառավարին, և 'ի նմանէ առաջնորդին, առ 'ի բարին յաջողին. իսկ եթէ 'ի նմանէ ոչ առաջնորդեսցին, թէև բարի թուիցին՝ ոչ յաջողին, և կամ 'ի չարն յանգին ։

Նարեկացին զբառդ ուղղին՝ փոխանակ փորձելոյ առնու ատ ('ի գոյ. մծբ.) յասելն * 'ի տ̄նէ փորձեցաւ ըն-
,,թանել ըստ վեհին դաւթի գնացք բարի մարդկան‖ ։ Իսկ քանզի նպատակ այսր ամենայնի է գնալ 'ի ճանապարհս տեառն՝ յայն հայելով մարգարէին, ասէ ։

Զճանապարհս նորա նա կամի յոյժ ։ Այս բան կրկնակի կարէ յարիլ 'ի նախընթացն. մի՝ պատճառաբար, և մի ևս՝ հետևաբար ։ Ըստ առաջնոյն կամի ասել. որովհետև նա, այսինքն այր արդար մեծապէս կամի զճանապարհս այ՝ այսինքն զհաճոյս այ և զօրէնս նորա՝ առ 'ի գնալ 'ի նոյն, վասն այնորիկ և 'ի տեառնէ ուղղին գնացք նորա ։ Ըստ երկրորդին կամի ասել. յորժամ ուղղին գնացք արդարոյն 'ի պատուիրանս ա՟յ, արդարն տեսեալ և ճաշակեալ զքաղցրութիւն այնոցիկ պատուիրանաց՝ կամի յոյժ զնոյնս, այսինքն մեծապէս հաճի գնալ 'ի նոսին ։

Այլ եթէ յանդրադարձն առցուք զայս բան, յա՟ծ վերածելով զգերանուն նա, որպէս երևի առնուլ լամբրոնացւոյն՝ մեկնի այսպէս. 'ի գնալ արդարոյն ուղղութեամբ, ա՟ծ հաճի յոյժ ընդ ճանապարհս նորա ։ Ըստ այսմ այս բան վերածի և 'ի դէմս ք՟սի, որոյ տնօրէնութեանն գնացք 'ի սկզբանէ անտի ուղղեցան, այսինքն կարգադրեցան 'ի Հօրէ 'ի ձեռն նախագուշակ իրաց և մարգարէութեանց. որով ցուցանիւր՝ թէ ընդ որ ճանապարհ գնալոց էր ք՟ս՝ նա կամէր յոյժ ։ Զայս մեկնութիւն յիշէ և Վարդան. այլ ընթացք սաղմոսի յայն ևեթ հայի, թէ ա՟ծ օգնէ ծառայից իւրոց. և ուղղէ զճանապարհս նոցին. առաջնորդէ նոցա և պահէ զնոսա. և նոքա հաճեալ ընդ այնս գնան ամբծութեամբ ։ Եւ առ հաստատութիւն այսր՝ յաւելու մարգարէն ասել ։

ԻԴ. Թէպէտև գայթակղեսցի, նա մի կործանեսցի. զի Տէր ձեռնկալու է նորա ։

Գայթակղիլն դնի աստ փոխանակ սահելոյ կամ սայթաքելոյ ։ Իսկ սահիլ արդարոյն կարէ լինել ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։ Ըստ հոգւոյ՝ յորժամ սահի 'ի ներելի մեղս, կամ սխալի 'ի խորհուրդս, կամ վարանի 'ի տարակուսանս ոչ բարիս. կամ պաշարի յանպխսի փորձութիւնս՝ յորս պատահի նմա իւրք տկարանալ՝ կամ կիսահուան գտանիլ. և՟ն ։ Ըստ մարմնոյ կրկնակի, այսինքն ըստ ներքնոյն, և ըստ արտաքնոյն. ըստ ներքնոյն՝ յորժամ տկարանայ 'ի նոյն, կամ հիւանդանայ. ըստ արտաքնոյն՝ յորժամ կորուսանէ զստացուածս, կամ զրկի յորդւոց, կամ կրէ վիշտս յօտարաց, և այլն ։

Այնպէս և կործանումն կարէ լինել ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. ըստ հոգւոյ՝ անկանելով 'ի մահուչափ մեղս, կամ թողեալ լինելով յա՟յ, և՟ն ։ Ըստ մարմնոյ, իսպառ տկարանալով և յանպիտանութիւն դանալով. կամ ըստ ամենայնի զրկելով յամենայնէ են. Եւ և՛ որ վերջինն է 'ի մարմնաւոր չարիս՝ մեռանելով. Արդ բանք մարգարէին սկզբնաբար և տիրապէս հային 'ի հոգևորն, և երկրորդաբար 'ի մարմնաւորն, յաւէն.

Թէպէտ և գայթակղեսցի (արդարն), նա մի՛ կործանեսցի. Այսինքն թէպէտ և պատահի արդարոյն անկանել 'ի վրիպմունս, կամ 'ի փորձանս և 'ի վիշտս, որք 'ի ճանապարհի աստի կենաց անպակաս են իբր խոչ ընդ ոտն՝ թէ՛ ըստ հոգւոյ, և թէ ըստ մարմնոյ, բայց ոչ լիցի նմա խափան ընկղմիլ յայնս կամ կործանիլ. Կամ ըստ լամբրոնացւոյն. թէպէտ և սահեսցի արդարն 'ի մեղս, բայց ոչ մնասցէ 'ի նմա իբր անկանգնելի կործանեալ. այլ յառնէ՝ օգնութիւն գտեալ 'ի տեառնէ.

Եւ առ այս յարէ.

Զի տէր յենակալ է նորա. Որպէս թէ ասէր. որ տէրն է, նա ինքն օգնական է նորա և պաշտպան. որ և իբրև թէ ձեռամբ իւրով կալեալ պահէ զնա, զի մի՛ խափան կորիցէ, կամ հասցէ յայնպիսի վիճակ, յորում գլխովին թշուառասցի. Զայս հաստատագոյն ևս ցուցանէ մարգարէն յաջորդ բանիւն՝ ասելով.

իե. Մանուկ էի ես և ծերացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ. և ոչ զաւակ նորա թէ մուրանայ հաց.

իզ. Զօր հանապազ ողորմի և տայ փոխ. զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան.

Յայսմիկ բանդ արդար ասելով՝ իմանայ զայն՝ որ ամենայն մասամբ արդարն իցէ. այսինքն հաւատարիմ առ Ած, հաւատարիմ առ ընկերն, հաւատարիմ և առ ինքն. (զորմէ տե՛ս 'ի սաղ. ճ. 1.) Այսպիսի էր նա ինքն դաւիթ՝ մինչև էր մեղուցեալ, ևս և յետ մեղա՛յ գոչելոյն. Այսպիսի էր և յոբ, և այլք բազումք, որք յիշատակին 'ի սուրբ գիրս, և կոչին արդարք. Յայսպիսիս, և 'ի սոցին նման արդարս հայելով մարգարէին, ասէ.

Մանուկ էի ես, և ծերացայ. և ոչ տեսի զարդարն արհամարհեալ. Կամի ասել. 'ի մանկութենէ իմմէ մինչև ցհասակ ծերութեան իմոյ 'ի մէջ միջոցի այսչափ ամաց ոչ տեսի թէ արդարն լինիցի արհամարհեալ, կամ թողեալ։ Եւ պատճառն է՝ զի ա՟ծ ինքնին զօրով պաշտպան և պահապան արդարոյ՝ ոչ թողու՝ զի մնասցէ նա յարհամարհութե՟ և ՚ի լքման անդ։

Այս ասացուած երևի ընդդէմ ելանել և ինքեան դաւթի. զի ինքն իսկ որ ասէ զայդ, ՚ի մանկութեան անդ իւրում արհամարհեալ եղև. և յետ այնորիկ ՚ի լինելն այր կատարեալ՝ զնոյն արհամարհութե՟ կրեաց՝ ծանունս և բազումս։ Թող զայլ արդարս յիշատակեալս ՚ի ս՟բ գիրս, և արտաքոյ ս՟բ գրոց, որք արհամարհեալ և լքեալ երևեցան։

Այլ ասելի է թէ արհամարհեալ գոլն խնայեալ լինի աստ ըստ ոչ իսպառ լքանելոյ. իբր թէ ասել. արդարն ոչ արհամարհի իսպառ. և այս կարէ մտածիլ երրակի. մի՝ ՚ի կողմանէ նորին իսկ արհամարհեցելոյն, այսինքն ՚ի կողմանէ արդարոյն. վասն զի թէպէտև արհամարհի և տառապի արդարն, բայց ոչ իսպառ. զի ոչ լինի նաև յինքեան արհամարհեալ, և լքեալ. այլ մանաւանդ յարգեալ, և իբրև ՚ի բոլս զատութեան եղեալ, և առաջի ա՟յ և հրեշտակաց նորա պատուական երևեալ։

Երկրորդ՝ ՚ի կողմանէ արհամարհողաց արդարոյն. վասն զի թէպէտ և արհամարհեն և նեղեն չարք զարդարն, բայց ոչ իսպառ. իբր զի յարհամարհելն և ՚ի նեղելն անդ՝ յարդարութենէ նորա յանդիմանեալ լինելով՝ ՚ի պատուի ունին զնա ՚ի ներքս ՚ի միտս իւրեանց. որպէս և յայտնի տեսաւ այս ՚ի բազումս. ուստի և ոչ իսկ առ արհամարհօղս՝ իսպառ արհամարհեալ համարի արդարն, այլ մանաւանդ պատուեալ. զի առաւել մեծ է այն համարումն՝ զոր ունին նոքա զարդարոյն՝ քան զարհամարհանսն և զտառապանսն, զորս տան նմա։

Երրորդ՝ ՚ի կողմանէ նոյն իսկ արհամարհութեան. զի թէ և կրեսցէ արդարն զարհամարհութիւն մեծ, բայց ոչ իսպառ, այսինքն յամենայն ընթացս կենաց իւրոց, և կամ ՚ի յաւիտեան. վասն զի եկեսցէ ժամանակ՝ յորում յայտնեսցի՝ թէ յաւէտ պատուոյ էր արժանի քան արհամարհանաց և վշտաց. որպէս և յայտնի ցուցաւ ՚ի նա ինքն ՚ի դաւիթ, ՚ի դանիէլ, ՚ի շուշան և այն։ Իսկ եթէ ոչ յաստիս, անտարակոյս 'ի հանդերձեալն ցուցցի այն. ոպ յայտ է յաղքատ Ղազարն։ Իսկ այս առժամանակեայ արհամարհութիւն և տառապանք արդարոյն է 'ի յատուկ խնամոցն իւր, վասն բազմապատիկ պատճառաց. մի՝ զի Ած կամի այնու յաւելուլ զարդիւնս գործոց արդարոյն. որպէս արար ընդ Տոբիթ։ Երկրորդ՝ զի տացէ այլոց օրինակ համբերութեան, որպէս արար ընդ Յոբ։ Երրորդ՝ զի զանշիջելի ցուցէ զարդարութիւն ծառայից իւրոց. որպէս արար ընդ երիս մանկունս։ Չորրորդ՝ զի մարզեսցէ զարդարն յառաքինութիւնս, որպէս արար ընդ Յակոբ։ Հինգերորդ՝ զի զօրացուսցէ զարդարն առ մեծագոյն գործս բարեաց. որպէս արար ընդ Դաւիթ։ Վեցերորդ՝ զի նախանկարեսցէ կամ կերպարանակիցս արասցէ որդւոյ իւրոյ, ոպ արար ընդ Հաբէլ։ Եօթներորդ՝ զի իբրև 'ի վերայ յեսանի սրեսցէ զզօրութիւնս արդարոյն յարհամարհանսն անդ՝ առ 'ի յօժարագոյն ծառայել նիքեան, որպէս արար ընդ մարգարէս և ընդ առաքեալս։ Ութերորդ՝ զի առժամանակեայ արհամարհանօք և վշտօք մաքրեսցէ զարդարն 'ի յանցանաց՝ զոր գործեալ իցէ նորա ըստ մարդկային տկարութեան. որպէս արար և առնէ ընդ բազումս։ Վասն յարհամարհիլն և 'ի տուայտիլն արդարոյն ոչ պարտի ընկճիլ, այլ առաւել ևս ուրախանալ և զօրանալ։

'Ի վերայ այսր ամենայնի՝ աւելի է ևս, թէ մարգարէն աստանօր ըստ հասարակ ընթացից կենաց արդարոյն խօսի զայդ. իբր զի հասարակօրէն տեսչութիւն Ածային ոչ թողու զարդարն մնալ արհամարհեալ, և տուայտեալ. այլ ցուցանէ 'ի նա յայտնապէս զխնամս իւր, ևս և յորդիս նորա։ Իսկ եթէ կամիս բարւոք իմանալ զայս, և իբրև թէ ձեռօք շօշափել՝ ընթերցցիր զգիրս Տոբիթայ. և հայեաց յընթացս կենաց նորա, յորում իբր 'ի հայելւոջ տեսանես լրացեալ զայս բան. և զայլ ամն նման ասացուածս՝ որք պարունակին յայս սաղմոս և յայլ սաղմոսս։ Իսկ այն լիցի քեզ իբր կանոն մեկնելոյ զամենայն բանս ասացեալս 'ի վերայ արդարոց 'ի սաղմոսի, և 'ի գիրս առակաց, և 'ի մարգարէութիւնս։

Ամբրոսիոսն յայլ իմն մասն մեկնէ զայս բան ըստ հոգևորին առեալ. իբրև թէ առել 'ի գլխոց արդարոյն. գրեթէ մանուկ էի յորժամ 'ի նորոգ դարձին իմում ունէի զհոգի երկիւղի. իսկ յորժամ առի զսիրոյն հաստատութիւնն՝ եղէ իբրև զծեր. և ոչ տեսի զարդար խորհուրդս մտաց իմոց արհամարհեալ 'ի դիւաց. և ոչ զծնունդ մտաց իմոց՝ կարօտ. զի ա̃ծ կերակրէ զայն երկնային հացիւն։ Գեղեցիկ է այս մեկնութիւն, բայց պարզ խորհրդական. իսկ բան մարգարէին հայի յոյժ խորին արհամարհիլ արդարոյն, և 'ի յատուկ խնամս ա̃յ՝ որ'ի վերայ որդւոց նորա. զոր և որոշակի դնէ զկնի՝ ասելով։

Եւ ոչ զաւակ նորա, թէ կարօտանայ հաց։ Այսինքն զաւակ արդարոյն եթէ ըստ արդարութեան ծնողին իւրոյ կացցէ ոչ հասցէ յայնպիսի թշուառութիւն, մինչև ստիպեսցի մուրանալ յայլոց զկարևոր պիտոյս կենաց, որպիսի է հացն։ Իսկ եթէ այլազգ պատահել երևեսցի յանձնս, այն կամ կամաւորական է, որպիսի են աղքատացեալքն կամաւորապէս, և կամ վասն գաղտնի ինչ պատճառի, զոր տեսանէ ամենահայեաց ակն հաստչին բոլորեցունց. ապա թէ ոչ ըստ հասարակ ընթացից՝ ոչ այր արդար, և ոչ զաւակ նորա կրէ զայնպիսի պակասութիւն։

Զայս յայտնի աւանդեաց տոբիթ որդւոյ իւրում տոբիայ՝ յասելն առ նա. * Յիշեա՛ դու զտէր ա̃ծ քո
,, զամենայն աւուրս կենաց քոց. մի մեղանչիցես դու,
,, և կամ յանցանիցես զպատուիրանօք նորա. այլ ա-
,, նիցես զարդարութիւն զամենայն կեանս քո. և մի
,, գնասցես դու 'ի ճանապարհս անիրաւութեան. զի
,, յորժամ առնիցես դու զճշմարտութիւն, յաջողես-
,, ցին ամենայն գործք քո, և ամենեցուն որոց գործեն
,, զարդարութիւն . . . . Որչափ և իցէ քոյ՝ ըստ նմին
,, բազմութեան արասցես զողորմութիւն. եթէ սակաւ
,, իցէ քոյ, ըստ սակաւուն. և մի յապաղեսցես առնել
,, զողորմութիւն . . . . Եւ մի երկնչիցիս որդեակ՝ զի
,, աղքատացաք, կան քոյ բազում ինչք և ստացուածք՝
,, եթէ երկնչիցիս դու յա̃յ, և 'ի բաց լինիցիս յամե-
,, նայն մեղաց, և արասցես դու զհաճոյսն առաջի նո-
,, րա ||. (տոբ. դ. 5 = 23։) Որովք յայտնի տեսանի,
թէ արդարն բաւականացեալ է յինքեան՝ մինչև ոչ

միայն ոչ կարօտիլ այլոց, այլ և յիւրոց անտի տալ կարօտելոց. ամին իրի յարէ զհետ մարգարէն. և ասէ.

Զօր հանապազ ողորմի և տայ փոխ. Այսինքն արդարն շատացեալ գոլով այնու՝ զոր ունի, եթէ տեսցէ զոք կարօտեալ մարմնաւոր պիտոյից կամ հոգևոր կերակրոյ, 'ի գութ շարժի 'ի վերայ նորա, և տայ նմա՝ զոր կարէ. Իսկ եթէ կարօտեալն խնդրեսցէ ինչ փոխ, ոչ դարձուցանէ զերեսս իւր 'ի նմանէ, այլ տայ. և այս՝ ոչ եթէ միանգամ, այլ զօր հանապազ. այսինքն միշտ. որ է ասել. յամենայնի և միշտ պատրաստ է արդարն տալ որչափ և կարէ 'ի կողմանէ իւրմէ. և որչափ հարկաւոր իցէ 'ի կողմանէ խնդրողին. Ոչ խորհի 'ի տալն՝ թէ ոչ մնայ ինչ ինքեան՝ կամ որդւոց իւրոց. զի գիտէ՝ թէ որ ետ, և ևս տայ, և որ արար ինքեան՝ առնէ և որդւոց իւրոց. Յողորմիլն անդ՝ ոչ համարի տալ՝ այլ առնուլ. ըստ որում ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. ժԴ. 'ի յորդ.) * ոչ տալ այլ առնուլ համարեսցիս (զտալդ) ‖. Ի տալն զողորմութիւն՝ ոչ խնդրէ աստ առնուլ զփոխարէնն, այլ 'ի հանդերձեալն. մի՛ արդեօք յաստի խնդրելով՝ զրկեսցի անտի. զորմէ ասէ նոյն բարսեղ վարդապետ ('ի վերոյիշեալ տեղւոջ.) * որպէս ոք ոստանայնի ծա- ,, ռայ՝ յարքունի սեղան կոչեցեալ. և չմնալով ժամա- ,, նակին՝ նման տղայոց յառաջագոյն զորովայն իւր ,, լնու վատթար կերակրովք, զրկելով զինքն 'ի թա- ,, գաւորական կերակրոյն. այսպէս է՝ որ աստ խնդրէ ,, զփոխարէնն (ողորմութեան) քան զոր անդէն պատ- ,, րաստեալ է ‖.

Այնպէս է և որ ընդ տալն զողորմութիւն իսկոյն պահանջէ զփոխարէնն. առ որ ասէ նոյն վերոյիշեալ բարսեղ վարդապետ. ('ի նմին ճառի.) * դու յոր- ,, ժամ փոխ ումեք տացես՝ կամիս բազում ժամանակս ,, յամել, զի շահն բազմասցի. իսկ աստ ընդ տալն ,, պահանջես. և այն զի դու աստէն չես մնալոց, այլ ,, անդ ես գնալոց ‖.

Զինչ ապա արդ իցէ ասել զնոցանէ՝ որք բազմապատիկ ողորմութիւն գտեալ յայ՝ ոչ կամին ողորմիլ այլոց. որով և անարժան գտանին նմին իսկ ողորմութեան այ՟, ևս և արգելս դնեն այնմ. և գրեթէ յորդոր լինին այ՟ չողորմել ինքեանց։ Ինքեանք ոչ ուսան յայ՟ ողորմել. ած՟ ուսանի 'ի նոցանէ չողորմել։ Ո՛չ ուսան տալ՝ այլ առնուլ, ած՟ ևս ուսանի 'ի նոցանէ ոչ տալ՝ այլ առնուլ։

Օ սոցին հակառակն տեսանեմք 'ի բարեպաշտս, որք առաւել կամելով ողորմել աղքատաց քան առնուլ, յայտնի ցուցանեն՝ թէ ունին յանձինս զաղքատութիւն հոգւոյ ըստ բանիցն քսի՟. որոց յոմանս այնչափ եղև այս աղքատսիրութիւն, մինչև աղքատովք բերկրել։ Լուդովիկոս թագաւոր՝ աղքատ հիւանդաց ծառայէր. և՛ յամենայն աւուր զերիս աղքատս կերակրէր 'ի սեղանի իւրում, և ինքն զյաւելեալսն 'ի նոցանէ ուտէր։ Եղիսաբէթ թագուհի՝ աղքատացելոց ծառայէր. ընդ նոսին ուտէր. և ըստ նոցին զգենոյր։ Այնպէս և թագաւոր մեր աշոտ երրորդ ողորմածն կոչեցեալ. որ յետ կանգնելոյ զաղքատանոցս և զուրկանոցս, առ ինքն հաւաքէր զգոնջացեալսն և զկաղսն և զկոյրսն. և բարձակից ինքեան առնէր 'ի խրախճանութիւնս. զորմէ և այլ բազում ինչ գրէ ասողիկ. (գ. 8.) այնպիսի գութ և կողակից նորա խոսրովանոյշ թագուհին. (տե՛ս 'ի պատ. հայոց. դ. 28։) Այսպիսեօք ցուցին սոքա թէ քանի մեծ է ողորմել աղքատաց. ցուցին ևս թէ իցեն փարթամ և աղքատ. լե՛ր և դու առ աղքատս՝ լեզուաւ աղքատ, և ձեռօք փարթամ. (յակ. բ. 16։)

Յայսմ վիճակէ ոչ են օտար՝ կրօնաւորք, որք ուխտեն զաղքատութիւն կամաւոր. զի այսու հաւանեալ լինին ողորմել ոչ եթէ զօրհանապազ, այլ մինչև 'ի մահ. ըստ որում զոր ինչ կարէին ունել 'ի կեանս իւրեանց՝ թողուն զամենայն. և թողլով զամենայն ունին զամենայն. * ոչինչ ունիմք և զամենայն ինչ ունիմք ‖. (բ. կոր. զ. 10։) զի զանձ ամենայնի է կամաւոր աղքատութիւն. որ ունի զայն՝ ամենափարթամ է. զի անկարօտ է. և որում կարօտի՝ լիացուցանէ նա՝ որոյ վասն աղքատացեալ է. որում և փոխ տուեալ է՝ զոր ունել կարէր, և հանդերձեալ է տոկոսեօք առնուլ։ Իսկ որք յետ թողլոյ զամենայն՝ սրտիւք յարին յայնս՝ 'ի կարօտութեան թշուառանան։ Այսպիսիքս կամին ունել զպատիւ կամաւոր աղքատութեան, միանգամայն և զհանգիստ փարթամութեան. կամին երևիլ աղքատացեալ վասն քի և նոյնն պատուիլ, բայց կամին ևս զամենայն իրաց լիութ՟ի ունել և նոյնն գովիլ. որով և լինին գայթակղութ՟ի պարզամտաց, և փոխանակ շահելոյ՝ լինին պատճառ կորստեան բազմաց: Արդ առաջի եդեալ մարգարէին զվիճակ արդարոյն՝ խօսի և զօրհնութ՟է զաւակի նորա ասելով:

Զաւակ նորա օրհնեալ եղիցի յաւիտեան: Այս բան է իբր պատճառ կամ իբր բացատրութիւն այնր՝ զոր ասաց, թէ զաւակ արդարոյն ոչ մուրանայ զհաց. և պատճառն է ասէ՝ զի զաւակ արդարոյն օրհնեցի յ՟այ: Այս օրհնութիւն կրկնակի կարէ լինել. հոգևոր և մարմնաւոր: Հոգևորն է լիութիւն հոգևորական բարեաց տուեալ յ՟այ ըստ կարի ընդունողին: Նոյնպէս և մարմնաւորն է լիութիւն անցաւոր բարեաց՝ ումանց շատ և ումանց սակաւ՝ իւրաքանչիւր ըստ իւրում պիտոյութեան:

Արդ բանք մարգարէին թէպէտ և գլխաւորաբար հային յօրհնութիւն հոգևոր, բայց հային և ՚ի մարմնաւորն, առ ՚ի ցուցանել՝ թէ ա՟ծ բազում անգամ վասն արդարութ՟է ծնողաց տայ որդւոց նոցա զլիութիւն բարեաց, ոչ եթէ զաւուրս քանի մի, այլ յաւիտեան:

Իսկ բառիդ յաւիտեան, որպէս ասացաք այլուր՝ իմացեալ լինի նախ երկար տևողութիւն ասոր կենաց. և ըստ այսմ կամի ասել, զաւակ արդարոյն ունիցի զլիութիւն բարեաց մինչև ՚ի կատարած կենաց իւրոց. և եթէ չունիցի ևս ինչ այնպիսի ըստ արտաքին պիտոյից՝ այն քանիկ նորա օրհնութ՟ի է վասն նորա. զի շատացեալ գոլով սակաւուք՝ կայ ՚ի խաղաղութեան մեծի: Երկրորդ՝ իմացեալ լինի ըստ հասարակ առման, որով նշանակի անվախճան տևողութիւն. և ըստ այսմ կամի ասել, զաւակ արդարոյն ունիցի զլիութիւն հոգևոր բարեաց յանվախճան կեանս. նաև զի այնպիսի զաւակ այնպէս ՚ի կիր առնու զմարմնաւոր բարիս՝ զի նոքիմբք շահեսցի զվարձս, որ մնասցէ յաւիտեան: Խորհրդաբար այս բան հայի յորդին Ա՟յ կրկնակի, մի՝ զի ինքն միայն գոլով արդար ամենևին, միշտ ողորմեցաւ ազգի մարդկան, և ետ նոցա փոխ զշնորհս իւր:

Իսկ երկրորդ՝ զի ինքն միայն գտաւ արդար զաւակ արդարոյն ադամայ (մինչդեռ 'ի դրախտի էր նա.) անկարօտ մուրանալոյ յայլմէ զզօրութի՟ն կամ զմեծութիւն ։ Յետ խօսելոյ մարգարէին զայսոսիկ՝ մատչի 'ի բան խրատու և ասէ ։

ԻԷ. Խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի. բնակեսցես յաւիտեանս յաւիտենից 'ի նմա ։

Գովեաց 'ի վերոյ զարդարն. և եցոյց թէ քանի բարի լինի նմա, և զաւակի նորա. պարսաւեաց և զամպարիշտն, և եցոյց թէ քանի չարեաց ունի պատահել. Որովք և ցանկալի երևեցոյց զվիճակ արդարոյն, և ատելի զկեանս ամպարշտին. ապա կամելով առաջի դնել՝ թէ զինչ պարտ իցէ առնել մարդոյ՝ զի իցէ արդար, և յորոց խորշել՝ զի մի գտցի ամպարիշտ, յորդորէ 'ի հասարակի, և ասէ ։

Խոտորեա՛ 'ի չարէ, և արա՛ զբարի ։ Որպէս թէ ասէր. եթէ կամիս արդար լինել. առ քեզ զայս ընդհանրական խրատ. յորժամ տեսանես, թէ այս ինչ չար է, կամ արտաքոյ ուղիղ կանոնի, կամ ընդդէմ խղճի մտացդ, մի՛ առներ զայն ։ Իսկ յորժամ տեսանես, թէ այս ինչ է բարի, առ որ և պարտաւորէ զքեզ խիղճ մտաց քոց՝ արա՛ զայն ։

Այլազգ ևս կարէ յարիլ այս բան 'ի նախակարգեալսդ. որպէս թէ եդեալ էր. որովհետև ծանեար զվիճակ չարաց և բարեաց՝ զայն թէ զինչ թշուառութի՟ք հասանեն չարաց, և որ երջանկութի՟ք բարեաց, խոտորեա՛ ապա 'ի չարէ, և զհետ լե՛ր բարւոյ ։

Ոչ դնէ մարգարէն, 'ի բաց կա՛ց 'ի չարէ, այլ խոտորեա՛. զի խոտորիլն զզգուշութիւն ևս 'ի մէջ բերէ, յորոշելն զբարին 'ի չարէ անտի՝ որ առ երևոյթս բարի տեսանի և թակարթէ զմարդն ։ Ուստի ասէ սուրբն Շնորհալի ('ի մեկն. ա. պետ. գ. 11. ճառ է.) * ոչ
„ ասաց՝ հեռասցի 'ի չարէ՝ այլ խոտորեսցի (կամ
„ խոտորեա՛) զի խոտորիլն յանկաւոր տեսանի մտացն
„ քան զհեռանալն. վասն զի բարին և չարն՝ մի ճա-
„ նապարհակցութիւն ունին 'ի բնութիւնս և բազում
„ անգամ խաբէ չարն զպարզամիտսն, զչարին ճանա-
„ պարհն իբր զբարւոյն վարկանիլ, և զբարւոյն իբրև

,, զատոյգ չարի. արդ հրամայէ զմտազմանել զնոսա մեծաւ ,, իմաստութբ̃. և ապա խոտորեցուցանել զոտն ,, 'ի չար Ճանապարհացն, և 'ի բարեացն հաստատել Ճանապարհ ||.

Ըստամնոր մարգարէն նախ դնէ զխոտորիլն 'ի չարէ և ապա զհետ լինել բարւոյ. զի առանց 'ի բաց կալոյ 'ի չարէ' ոչ կարէ մարդ զներհակն այնր գործել զբարին. ուստի ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. Ժ.) Նախ * խոտորեա 'ի չարէ. և ապա կարես առ- ,, նել զբարին ||.

Զերկոսին զայսոսիկ 'ի միասին դնելով զխոտորիլն 'ի չարէ և զառնելն զբարին, յայտնի ցուցանէ' թէ առ 'ի լինել բարի կամ արդար, չէ բաւական խոտորիլ 'ի չարէ. այլ պիտոյ է առնել և զբարին. ըստ որում ասէ և սուրբն Շնորհալին ('ի Նախայիշեալ Ճառդ.) * ոչ է բաւական միայն խոտորիլն 'ի չա- ,, րեաց, այլ եթէ զբարեգործութիւնն մերձաւոր իւր ,, ոչ ունիցի' ոչինչ է ||. Եւ ապա յարէ զկնի. * Թուի թէ (ասէ') այս այն է' զոր ասաց այլուր սոյն մար- ,, գարէ. զմեղս ատեցի և անարգեցի. և չհամա- ,, րեցաւ զայն բաւական 'ի լրումն առաքինութեանց, ,, այլ 'ի վերայ եած և ասաց, և զօրէնս քո սիրեցի ||. (Տես և 'ի սաղ. ճժ̃. 14.) Զայս եդեալ մարգարէին հետևեցուցանէ, և ասէ.

Բնակեսջիր յաւիտեանս յաւիտենից 'ի նմա. Ըստամնոր եթէ բառս 'ի նմա, դիցի փոխանակ երկրի, բառդ յաւիտեանս յաւիտենից դնի փոխանակ երկար տևողութե. որպէս թէ ասացեալ էր. եթէ խոտորեսցիս 'ի չարէ, և արասցես զբարին, կեցցես խաղաղութեամբ 'ի վերայ երկրի զօրհնաբար կամ զաւուրս բազումս, և որդիք քո զհետ քո. Իսկ եթէ բառդ 'ի նմա' առցի փոխանակ երկրին կենդանեաց, այսինքն փոխանակ արքայութե, բառդ յաւիտեանս յաւիտենից դնի փոխանակ անանց և անվախճան տևողութե, որպէս թէ ասացեալ էր. 'ի կեալդ արդարութբ̃ ըստ հաճոյս իմ' բնակեսցես յարքայութե երկնից, և վայելեսցես յանպատում երանութե յաւիտեանս յաւիտենից.

Այլ եթէ բառդ 'ի նմա' դիցի փոխանակ նոյն իսկ բարեգործութեան, այսինքն փոխանակ խոտորելոյ 'ի չարէ, և առնելոյ զբարիս, կամ փոխանակ սրբութեան, որպէս առնու լամբրոնացին, յայնժամ բառդ յաւէտենս յաւիտենից' դնի փոխանակ յարատեւութեան մինչև 'ի մահ. որպէս թէ ասէր. միշտ կա՛ց 'ի բարեգործութեան և 'ի սրբութեան. զի եթէ 'ի նմին տեւեսցես, հաստատեսցէ զքեզ ած 'ի բարիս յաստի կեանս. և ապա ածցէ զքեզ յանանց բարութիւն ըստ խոստմանց իւրոց, և ըստ արդար իրաւանց, որով ունի հատուցանել իւրաքանչիւր ըստ գործս իւր. Եւս և ո՛չ արասցէ անտես զայնոսիկ որք միանգամ յարատեւեն 'ի բարեգործութեան և 'ի սրբութեան։ Իսկ առ 'ի հաստատութիւն այսր Ճշմարտութեան յարէ զկնի մարգարէն, և ասէ։

ԻԶ. Տէր սիրէ զիրաւունս. և ո՛չ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. այլ յաւիտեան պահէ զնոսա։

Բառս իրաւունս' այլապէս նշանակութեամբ առեալ լինի. երբեմն փոխանակ օրինաց. երբեմն փոխանակ արդարութեան. երբեմն փոխանակ դատաստանի. երբեմն փոխանակ աննենգ բանից կամ վճռոյ. երբեմն փոխանակ գործոց' որք յառաջ գան յիրաւանց. երբեմն փոխանակ տեսչութե' որ ըստ իրաւանց։

Բայց այս ամենայն առմունք հիմնին 'ի մի եւեթ յատուկ նշանակութիւն իրաւանց, որ սահմանի այսպէս, * ունելութիւն տէրութե առ իրն իւր առ իւր ||. կամ ներքին պահանջողութիւն առ իրն իւր առ իւր. կամ պատշաճաւորութիւն արդար առ այս և առ այն։ Կամ արդար վերաբերութե առ իր ինչ իւր առ իւր. այսինքն իւր առ ստացուած իւր, կամ իւր առ վարձ աշխատանաց իւրոց. կամ իւր առ պարտք հատուցանելի ինքեան և այլն։ Ո՛ր օրինակ մարդն' որ ունի արդար հայեցուածս առ անուն իւր' 'ի պահել զայն, կամ առ իրն' որ բարձեալ է 'ի նմանէ, կամ առ կալուածն' զոր գնեալ է, կամ առ սակ արկեալ դրամն' որ հատուցանելի է իւր վարձ, և այլն. ասի ունել իրաւունս առ այն. ուստի և այն արդար հայեցուածս կամ պահանջողութիւն կոչի իրաւունք։ Իսկ եթէ դէպ լիցի ումեք ըստ այնմ իրաւանց խօսել, կամ վարել, կամ դատել, ասի իրաւամբք առնել։ Յայս միտս առեալ լինի տեւապէս բաղդ **երանութեան**. և 'ի սոյն միտս առնու նաև աստ մարգարէն յաւելն.

Տէր սիրէ զիրաւունս. Ոչ կամի ասել, թէ տէր սիրէ զայն իրաւունս, զոր յինքեան ունի, կամ թէ սիրէ զիւր իրաւունս, զի յայսմ չէր տարակոյս. այլ թէ սիրէ զիրաւունս՝ հայելով յայլս. որ է ասել. կամի՝ զի մի բռնադատեսցին իրաւունք ո՛ և իցէ ստեղծուածոց. և զի այսպէս կամի, կամի ևս առնել զիրաւունս իւրաքանչիւրոց յիւրում ժամանակի կամ հատուցանել զիւրաքանչիւրոցն իրաւանց իւրեանց. և ոչ կամի անտես առնել զիրաւունս ուրուք, մանաւանդ հայելով 'ի ծառայս իւր. և առ այս յարէ.

Եւ ոչ ընդ վայր հարկանէ զսուրբս իւր. Սուրբք այ՟՝ որք հաստատութ՟բ ծառայեն նմա, և 'ի բազում տառապանս համբերեն վասն նորա, զկրկնակ իրաւունս ստանան. մի՝ ներքին՝ առ վարձս ծառայութեան և համբերութեան իւրեանց. և այս 'ի խոստմանէն այ՟, և 'ի յաջողելոյ շնորհաց նորա. իբր զի ողորմեալ ած՟ խոստացեալ է տալ վարձս ծառայութեան. և առ 'ի ծառայել՝ տայ շնորհս, 'ի ծառայելն անդ՝ ստանայ մարդն զունելութիւն տէրութեան առ վարձն իբր առ իւրն իւր, և այն է ներքին իրաւունք նորա. որով և վարձքն այն տուեալ լինի ըստ արդարութեան. յոր միտս առաքեալն կոչէ զայն * պսակ արդարութեան ||. (Բ. տիմ. դ. 8.)

Երկրորդ՝ արտաքին՝ առ հատուցումն զրկանաց զորս կրեն արդարք յայլոց, զո՛ր օրինակ 'ի մարդկանէ և 'ի դիւաց. և այս յառակապէս ասի իրաւունք վրէժխնդրութեան. զոր այ՟ է խնդրել. յոր միտս գրի 'ի գիրս յայտնութեան ասել սրբոց առ ած՟. * Մինչև յե՛րբ տէր ոչ „ դատիս և խնդրես զվրէժ արեան մերոյ 'ի բնակչաց երկրի ||. (յայտ. զ. 10.)

Երրորդ՝ անյատուկ և ըստ պատշաճի միայն առ պաշտպանութիւն այ՟. որ և ասի իրաւունք պաշտպանութե՟, այսինքն՝ պաշտպանեալ լինելոյ.

Յայսպիսի իրաւունս տեսեալ այ՟ զծառայս իւր՝ **ոչ ընդ վայր հարկանէ զնոսա.** այսինքն ոչ մերժէ զնոսա յիրաւանց անտի նախակարգելոց. Ըստ առաջնոյն՝ ոչ զրկէ զնոսա 'ի վարձուց անտի՝ առ որս ունին զիրաւունս.

Ըստ երկրորդին՝ ոչ հաճի՝ զի կրեսցեն ինչ ընդդէմ իրաւանց իւրեանց, զրկելով յայնցանէ՝ որ իւրեանցն իցէ. և եթէ կրեսցեն, ինքն լինի վրէժխնդիր. Ըստ երրորդին՝ ոչ թողու զնոսա ընկճիլ իսպառ ՚ի նեղութեանց և ՚ի փորձութեանց. այլ պաշտպան լինի նոցա, պահէ և զօրացուցանէ, փառաւորէ և բարձրացուցանէ զնոսա.

Այլազգ մեկնէ Լամբրոնացին ընդ նմին և Վարդան զբառդ **ոչ ընդվայր հարկանել**, զի առնուն փոխանակ ոչ ՚ի զուր չարչարելոյ. որպէս թէ այս լինէր միտ բանին. ոչ ընդվայր այսինքն ոչ զուր տարապարտուց հարուածէ և չարչարէ ա͞ծ զսուրբս իւր. այլ վասն բազում կարևոր պատճառաց, (զորոց ասացաք սակաւուք ՚ի համարն. 23.) Բայց այս մեկնութիւն է ըստ յարմարութեն միայն. որպէս յայտ է և յեբրայականէն և յայլոց թարգմանութեանց. մանաւանդ զի դիտումն մարգարէին է ցուցանել՝ թէ ոչ լքանէ ա͞ծ զսբս իւր. այլ խնամէ զնոսա. զորս և ունի պատուել յաւիտեան. Իսկ առ այս յարէ.

Այլ յաւիտեան պահէ զնոսա: Կամի ասել. ոչ որպէս կարծեն անխորհուրդք՝ թէ ՚ի զուր տառապին արդարք՝ համարելով թէ յետ փոքու ժամանակի կորնչելոց իցեն. զի թէպէտ և տառապին, բայց տէր է՝ որ պահէ զնոսա. Իսկ եթէ մահուամբ յերկրէ աստի բարձցին, նա ինքն՝ որում հաւատարմութեամբ ծառայեցին՝ յաւիտեան ունի պահել զնոսա. վասն զի հանդերձեալ է առնուլ զնոսա առ ինքն, առ իւր ունել, և առ իւր փառաւորել զնոսա յաւիտեան՝ ոչ միայն հոգւով, այլ և մարմնով՝ յարուցանելով զնոսա յերկրէ փառօք.

Նաև յերկրի աստ յետ մեկնելոյ նոցա աստի՝ պահեսցէ զնոսա փառաւորեալս ՚ի յիշատակս նոցա մինչև ՚ի կատարած աշխարհի. Իսկ որք միանգամ չարիս ինչ հասուցին նոցա, եթէ չիցեն գտեալ զներումն, դատեսցէ զնոսա և պատուհասեսցէ. Արդ զոր օրինակ հանդերձեալ է ա͞ծ փառաւորել զսուրբս իւր, նոյնպէս հանդերձեալ է անարգել և մերժել զայնոսիկ՝ որք ՚ի բաց կացին ՚ի սրբութենէ. ամին իրի յարէ և ասէ.

ԻԸ. Անօրէնք հալածեսցին 'ի բաց. և զաւակ ամպարշտաց սատակեսցի:

ԻԹ. Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր. և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից 'ի նմա:

Զորս միանգամ խօսեցաւ մարգարէն մինչև ցաստ զչարաց, և զբարեաց, զայնոսիկ զամենայն յայսոսիկ երկուս համարս բովանդակէ. և ներհակաբար ընդ միմեանս համեմատելով կրկնէ զասացեալսն իւր, և ասէ.

Անօրէնք հալածեսցին 'ի բաց. և զաւակ ամպարշտաց սատակեսցի: Ուր բառդ 'ի բացն դնի փոխանակ բառից ամենայն. զի որպէս յասելն ('ի սաղ. ԺԳ. 4.) * 'ի միասին անպիտանացան ||. իմացեալ լինի աստ ամենեքին. ըստ այսմ իմացեալ լինի և աստ. որով և միտ բանին լինի այս: Ամենայն անօրէնք և ամպարիշտք՝ իբր անարժանք տարագիր լիցին յաշխարհէ աստի. և 'ի բաց մերժեսցին յարքայութենէ երկնից. նոյնպէս և որդիք նոցա, եթէ կեցեալ իցեն ըստ վարուց նոցա: (Զայսմանէ տես և 'ի համարն. 2. 8. 9. 14. 18. և 20.)

Լամբրոնացին վերածէ զայս բան յօր դատաստանի. և անօրինօք իմանայ զայնոսիկ՝ որք խոտորեալ են յօրինաց. իսկ ամպարշտօք իմանայ զայնոսիկ՝ որք անմասն են 'ի բարւոյ. որով իմանայ զդևս, որոց զաւակ կոչէ զչարս: Որք և նոքա ասէ 'ի միասին 'ի միում բոպէի հալածեսցին յերեսաց երկրի յաւուրն դատաստանի՝ 'ի սատակումն յաւիտենից:

Զոր յաւելու Վարդան, թէ անօրէնք աստ հալածին յօրինաց. և անդ 'ի բանէ անտի, զոր ասէ, երթայք յինէն անիծեալք. նոյնպէս և խորհուրդք նոցա իբրև զաւակք նոցին կորիցեն: Զայս եդեալ մարգարէն՝ զներհակն այսր խօսի զարդարոց. և ասէ.

Այլ արդարք ժառանգեսցեն զերկիր. և բնակեսցեն յաւիտեանս յաւիտենից 'ի նմա: Այսինքն նոքա՝ որք արդարքն են՝ հանգստեամբ վայելեսցեն զբարութիւնս երկրի, և խաղաղութեամբ կացցեն 'ի նմա՝ ցորչափ իցեն կենդանի: Նա ըստ այսմ իբրև ներկայ իմանալի և բայց ժառան-

գեղջէն, որպէս ընթեռնու և յակոբ մծբնայ հայրապետ 'ի վերջնում ճառի, յասելն. * արդարք ժառան-
,, գեն զերկիր. և բնակեն 'ի նմա յաւիտեան‖։ Իսկ յետ ժառանգելոյ ասա՝ արժանացեն բնակել յերկրին կենդանեաց իբրև յիւրեանց ժառանգութե յաւիտեանս յաւիտենից։ (Զայսմանէ տես 'ի վերոյ 'ի համարն. 24. և 25։ ևս և 'ի համարն 3. 8. 10. և 16։)

Զայս առաջի արարեալ մարգարէին՝ մատչի դարձեալ 'ի գովութի արդարոյ, և ասէ։

խթ. Բերան արդարոյ խորհի իմաստութիւն. և լեզու նորա խօսեսցի իրաւունս։

Որ միանգամ 'ի ներքուստ անուշահոտութը լցեալ իցէ, զնոյն և առ արտաքս ցնդէ և սփռէ։ Իսկ որ անուշահոտ ինչ կերիցէ՝ որպէս որ ուտիցէ զկինամոն (այսինքն տարչին,) բերան նորա զնոյն անուշութիւն հոտոյ բուրէ. այսպիսի է և կեանք արդարոյ. զի ունելով յինքեան զարդարութիւն, և ճաշակելով զերկնային իմաստութիւն, զնոյն բուրէ և բերան նորա։

Սմին իրի ասէ մարգարէն։

Բերան արդարոյ խորհի իմաստութիւն։ Այսինքն արդարն գոլով լի հոգևորական իմաստութը՝ յորժամ բանայ զբերան իւր, զայնպիսի ինչ խօսի՝ որ է ըստ իմաստութեան. նախ՝ զի զոր խօսի՝ այն խօսք նորա ունի յինքեան զիմաստ բարի, և այլոց ևս զնոյն հաղորդէ. երկրորդ՝ զի խօսք նորա ոչ կարէ իրաւամբք յանդիմանեալ լինել յայլոց. ևս և այն խօսք նորա ոչ ձկտի յանդիմանել զայլս, կամ անարգ ցուցանել զնոսա. երրորդ՝ զի խօսք նորա ըստ կարգի, ըստ ժամանակի և ըստ տեղւոյ արտասանեալ ընդ բերանն՝ ախորժելի լինի 'ի լսել. զի ոչ խօսի յանյարիրս յանդէպս և յանպատշաճս, այլ յառաջագոյն քննելով, թէ զինչ և զիարդ պարտ իցէ խօսել. որոյ վասն յորդորիմք 'ի վարդապետաց ճանաչելով արտասանել զբանն. յոր միտս ասի յառակս՝ թէ * խարտեսցի բանն՝ և ելցէ 'ի
,, բերանն ‖. որ է ասել. քննեսցի նախ բանն 'ի միտս, խարտեսցի 'ի ստութենէ և յանկարգութէ, և ապա արտասանեալ ելցէ բերանով։

Այս իսկ ոչ ասէ մարգարէն. բերան նորա խօսի զի-

մաստութիւն. այլ խօրհի. իբր զի զոր խօսի բերան արդարոյն, միտք նորա նախ խորհի զայն՝ զոր կամի խօսիլ. և տեսեալ թէ բարի է և ուղիղ՝ հրամայէ տալ բերանոյն խօսիլ. որով և բերան նորա գրեթէ յինքն զգենլով զմիտս, իբրև միտք խորհի և խօսի. մանաւանդ զի որպէս ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախապատում գիրս. (Ճառ. ժա̅. 140.) * բերանն է Ճշմարիտ բանին որպէս
„ Ճրագարան լուսոյ ||.

Զայս հեթանոս փիլիսոփայք ևս պահեցին. և այժմ իսկ ոչ սակաւք յիմաստնոց աշխարհիս պահեն. որոց և բանք ընտիր փայլեն 'ի բերանս նոցա, և սակայն ոչ ըստ ա̅ծային իմաստութե̅, այլ ըստ մարդկայնոյն. ուստի և բանք նոցա թէպէտ և կարեն ասիլ՝ իմաստութեամբ, այլ ոչ այնպիսեաւ՝ որ իցէ և ա̅ծային իրաւամբք այսինքն ըստ ամենայնի համաձայն ա̅ծային օրինաց. իսկ արդարոյն իմաստութբ̃ և իրաւամբք. Ըմբռնայլն բերանով արդարոյ իմանալ ասա զմիտս. զի միտք արդարոյն ասէ * միշտ զվերին փառացն իմաստու-
„ թիւն խորհի. և առ ինքեան 'ի ներքին մարդն զնը-
„ մանէ խօսի... և լեզու նորա շարժի խօսել զիրա-
„ ւունս ա̅յ ||. Եւ առ այս յարէ մարգարէն.

Եւ լեզու նորա խօսեսցէ զիրաւունս։ Այս բան հայի 'ի նախադրեալդ. և նոյնանշան ընդ նմա. բայց յաւելու նաև զայս մի ինչ սեպհական արդարոյ. իբր զի ըստ ասելոյ մեր այժմ՝ զոր խօսի լեզու արդարոյն, այն բանք նորա իրաւունք են. այսինքն ունին յինքեանս զիրաւունս և զիրաւացի պատճառս. և են համաձայն ամենայն իրաւանց, ոչ միայն մարդկայնոյն, այլև ա̅ծայնոյն. կամ թէ ոչ ընդդիմանան՝ ոչ այնմ՝ որ պարունակի յօրէնս ա̅յ. և ոչ այնմ՝ որ գտանի յօրէնս մարդոյ, այլ համեմատ. Եւ եթէ երբեմն արտաքուստ անհամեմատ երևեսցին, 'ի ներքուստ համաձայն գտանին։ Որով և կատարելութիւն բանից արդարոց գերագոյն գտանի քան զհանգամանս բանից արտաքին իմաստնոց։ Եւ ըստ այսմ մեղուաց նմանին այսպիսի արդարք. զի ոչ մխեն զբերանս իւրեանց յանպիտանս, այլ 'ի պատուականս, և ոչ շաղախեն զայն 'ի դարշելիս որպէս
բզէզք, այլ յազնիւս։

Ասէր մարգարէն փոխանակ ասելոյ՝ բերան արդարոյ և լեզու նորա, ասել. արդարն զիմաստութ͞ի խորհի և զիրաւունս խօսի, բայց ոչ առնէ այսպէս, այլ զբերան 'ի մէջ բերէ և զլեզու, առ 'ի քաղցր ընծայեցուցանել և զօրաւոր ցուցանել զբան իւր. զի այսպիսի ձև բանի զարթուցիչ է լսելեաց. և ես՝ առ 'ի ցուցանել զառաւելութ͞ի կատարելութ͞ե բանից արդարոյն. զի որովհետև արդարն կարգաւորեալ ունի զբերան իւր իմաստութեամբ, և սովորեցուցեալ է զլեզու իւր 'ի բանս իրաւացիս, 'ի խօսելն անդ՝ թէ և ինքն ոչ լիցի ուշադիր բանից իւրոց, բերան նորա իմաստունս բարբառի, և լեզու նորա ըստ իրաւանց խօսի։ Եւ սորա պատճառն է այն՝ զոր տայ մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով։

Է. Օրէնք ա͞յ իւրոյ են 'ի սրտի իւրում. և ոչ գայթագղեսցին գնացք նորա։

Ամենեքեան խոստովանին թէ կայ 'ի միտս ամենեցուն տպաւորեալ լոյս օրինաց՝ կոչեցեալ բնական օրէնք, որ ըստ աւանդելոյ ա͞ծաբանից՝ է հաղորդութիւն ինչ կամ նմանութիւն այնր յաւիտենական օրինաց, զոր ունի ա͞ծ 'ի միտս իւր։ Զսոյն զայս տպաւորութիւն բնական օրինաց թէպէտև ամենեքին ունին, զի է հասարակաց, այսինքն ամենայն բանականաց, բայց արդարն ունի և զառաւելութիւն ինչ՝ այսինքն զունակութիւն նաև այնոցիկ օրինաց, զորս որոշակի և բացայայտ տուեալ է ա͞ծ, որպիսի են տասնաբանեայ օրէնք, և պարունակեալքն 'ի նոսա, որք զտպաւորութիւն նախայիշեալ բնական օրինաց լուսափայլ երևեցուցանեն։

Այսմ օրինակ կարէ լինել այն, զի ահա նոյն զգայութիւնք են յերկամեայ տղայն և յանասունն. և սակայն 'ի տղայն օժանդակեալ 'ի բանական մասնէ՝ բազմօք առաւելուն.

Ա՛ռ զայն՝ զի յիրում մտածեալ նոյն են բնական օրէնք ընդ ա͞ծայնոյն. և զանազանութ͞ի նոցա յայտ է, զի ըստ որում են 'ի բնէ տպաւորեալ՝ ասին բնական, իսկ ըստ որում որոշակի են աւանդեալ՝ ասին ա͞ծայինք։ Եւ զի ոչ միայն իբրև այնպիսի, այլև իբրև այսպիսի, այսինքն ոչ միայն իբրև բնական օրէնք այլ և իբրև ա՟ծային պատգամք՝ հաստատեալ են այնորիկ 'ի միտս արդարոյն, վասն այսորիկ ասէ.

Օրէնք ա՟յ իւրոյ են 'ի սրտի իւրում. Այսինքն այնորիկ օրէնք՝ զոր տպաւորեալ և տուեալ է ա՟ծ 'ի մարդիկ՝ հաստատուն կան 'ի սիրտ արդարոյն՝ և անշարժ պահին 'ի նմին, որպէս և տուեալն են. Եւ այսորիկ օրէնք այնպէս գրուեալ են զսիրտ նորա, մինչև ոչ գտանիլ անդէն տեղի ընդունելոյ զօրէնս աշխարհի, կամ զօրէնս ախտից. ուստի եթէ որոնեսցես 'ի սիրտ նորա՝ ոչ գտանես զայլ օրէնս ինչ՝ բայց եթէ զա՟յ. Սմին իրի ոչ ասէ մարգարէն սոսկապէս օրէնք ա՟յ. այլ՝ ա՟յ իւրոյ. որով ցուցանէ՝ թէ ոչ զն՟ և իցէ ա՟յ՝ զոր մոլիք և յիմարք պաշտեն, այլ միայն զիւրոյ ճշմարտին ա՟յ զօրէնսն ունի 'ի սրտի իւրում. և ունելով զնոյն՝ ոչ այլով՝ այլ նովաւ վարի յամենայնի՝ 'ի բանս և 'ի գործս. նովաւ իբր աղիւ համեմէ զբան իւր. նովաւ իբր կանոնաւ ուղղէ զայն զոր խօսի. նովաւ իբր կշռով չափէ զայն՝ զոր հեղու յականջս այլոց. Եւ ոչ այսչափ միայն, այլ և ունի զայն իբր լոյս 'ի տեսանել զճանապարհ իւր. իբր գաւազան 'ի վանել զարգելս իւր. և իբր առաջնորդ՝ առ 'ի ոչ մոլորելոյ 'ի գնացս իւր. և առ այս յարէ.

Եւ ոչ գայթակղեսցին գնացք նորա. Այսինքն կեանք ն՟ր և գործք՝ զորս գործէ 'ի կեանս իւր, կամ ընթացք կենաց նորա մի՛ մոլորեսցին, կամ մի՛ սահեսցին յայնպիսիս՝ որք իցեն ընդդէմ ա՟յ, կամ ընդդէմ օրինաց. Կամ որ նոյն է՝ արդարն զգուշութ՟բ գնալով յօրէնս ա՟ծ, ոչ սահեսցի և ոչ գլորեսցի յորոգայթ մեղաց, կամ 'ի դարանս սատանայի, և կամ 'ի հնարս չարութեան, զոր նիւթէ ընդդէմ նորա այր մեղաւոր. զորմէ 'ի մանաւորի խօսելով մարգարէն՝ ասէ.

լա. [illegible]այի մեղաւորն ընդ արդար, եւ խնդրէ սպանանել զնա. այլ Տէր ոչ թողցէ զնա 'ի ձեռս նորա. եւ ոչ դատապարտէ զնա, յորժամ դատի զնա.

Այս այն է՝ զոր ասաց 'ի վերոյ ('ի համարն 11. 12. 13. և 14. տես զոր ասացաք յայնս.) բայց մարթ է մեկնել զայս, վերածելով նաև 'ի նախընթաց երկուս համարսն. զի ասաց 'ի նոսին՝ թէ արդարն իմաստութեամբ խօսի, և համաձայն իրաւանց կարգէ զբան իւր. և թէ ունելով զօրէնս ա՟յ 'ի սրտի իւրում՝ ըստ այնմ գնայ, և ոչ գայթակղի. Զինչ ասա որ մեղաւորն իցէ. Պատասխանէ.

Հայէ մեղաւորն ընդ արդարն, և խնդրէ սպանանել զնա. Այսինքն 'ի խօսիլ արդարոյն իմաստութեամբ, և 'ի գնալ նորա ուղղութ՟բ, կամ 'ի գործել նորա զայնպիսի ինչ որ երևի իբր նուազեցուցիչ փառաւորութ՟ե մեղաւորի, կամ գործոյ նորա, կամ իշխանութեանն և այլն, զչարեալ ընդ այն՝ ուշ դնէ նմա՝ ոչ առ 'ի օգտիլ՝ կամ խրատ առնուլ զգաստութեան անձին իւրոյ, այլ՝ առ 'ի վնասել նմա, կամ առ 'ի արկանել զնա յորոգայթ, կամ առ 'ի ըմբռնել զնա 'ի բանս նորա, կամ առ 'ի գտանել զարատ 'ի գնացս նորա, կամ առ 'ի խափանել զգործ նորա. և կամ որ մեծն է քան զա՟մ, առ 'ի կորուսանել զնա, կամ բառնալ զկեանս նորա. և այս՝ կամ ինքնին, և կամ 'ի ձեռն այլոց, կամ չարախօսելով 'ի դատաստանի, և կամ մատնելով 'ի ձեռս խնդրողաց անձին նորա. Կամ դարձեալ հետամուտ լինի նմա՝ զմնէ բանիւ սպանանել զնա՝ որ կարէ լինել կամ թշնամանելով դէմ յանդիման, և կամ բամբասելով 'ի յետուստ։

Այլ Տէր ոչ թողու զնա 'ի ձեռս նորա. Այսինքն ոչ թողու ա՟ծ՝ զի արդարն անկցի 'ի ձեռս մեղաւորի. կամ որ նոյն է՝ ոչ թողու՝ զի մեղաւորն ունիցի զարդարն յիշխանութեան իւրում, և ըստ հաճոյս անձին իւրոյ արասցէ ընդ նմա՝ զոր ինչ և կամի. Եւ յայս իսկ տայ արդարոյն խօսիլ իմաստութ՟բ, և գործել ուղղութ՟բ. զի մի կարասցէ մեղաւորն ըմբռնել զնա. Եւ եթէ թոյլ տացէ, այն է վասն ցուցանելոյ մեղաւորին ըզհամբերութիւն արդարոյն՝ զի զգաստասցի և դադարեսցի 'ի չարութ՟է. Եւս և վասն մեծագոյն բարւոյ արդարոյն, առ 'ի յաւելուլ զվարձս ն՟ր, և առ 'ի պսակել զնա փառօք. Եւ զոր կարծէր մեղաւորն՝ թէ 'ի կամիլ իւր կորուսանել զարդարն՝ ա՟ծ ևս կամիցի կորուսանել զնա, զներհակն տեսցէ, զի այլազգ դատելոց է ա՟ծ՝ քան զոր նա կարծէ. և զայս յայտ առնէ մարգարէն զհետ եկեալ բանիւն ասելով.

Եւ ոչ դատապարտէ զնա, յորժամ դատի զնա. Այսինքն ոչ այնպէս դատէ ա՟ծ զարդարն, որպէս կարծէ մեղաւորն. քանզի 'ի հասանել ժամուն, յորում դատելոց է զնա, ոչ եթէ դատապարտելի ցուցանէ զնա, որպէս ցուցանել կամէր մեղաւորն, այլ յայտնի ցուցեալ զիրաւունս նորա եւ զարդարութի՟ն նորին՝ փառաւորէ զնա։ Եւ զսոյն զայս առիթ առեալ 'ի յորդոր մասին մարգարէն առ արդարն, եւ ասէ։

ԼԴ. Համբեր Տեառն, եւ պահեա զճանապարհս նորա. եւ
բարձր արասցէ զքեզ՝ 'ի ժառանգել զերկիր. եւ
զսատակումն մեղաւորաց տեսցես։

Համբերել Տեառն է երկայնմտութեամբ յուսալ 'ի նա 'ի նեղութեան կամ 'ի փորձութեան. (որպէս ասացաք 'ի սաղ. ԻԶ. 2. եւ ԻԶ. 14.) Եւ զի յայտ արար մարգարէն 'ի վերոյ զփորձիլ արդարոյն 'ի մեղաւորէ. եւ եդ առաջի՝ թէ ա՟ծ 'ի դատելն՝ հանդերձեալ է ցուցանել զիրաւունս արդարոյն, այժմ հետեւեցուցանէ՝ ասելով։

Համբեր Տեառն։ Որպէս թէ ասէր. որովհետեւ տէր է պաշտպան քո. եւ նա ունի հատուցանել քեզ ըստ գործոց քոց, ուրեմն համբեր նմա. եւ եթէ անագանեսցէ հատուցանել, դու մի լքանիր, այլ երկայնամիտ լեր, եւ յուսալով 'ի նա՝ արա զոր 'ի ձեռին ունիս. եւ առ այս յարէ։

Եւ պահեա զճանապարհս նորա։ Այսինքն զյոյս քո հաստատելով 'ի նա՝ կալ զճանապարհն զոր սկսար. զճանապարհն ասեմ արդարութեան. զի այն է ճանապարհ նորա, այսինքն ա՟յ. ընդ որ գնալով քո՝ ժամանես յերանութի՟ն յաւիտենական. նաեւ 'ի վերայ երկրի լինիս երանելի. 'ի սոյն սակս յարէ, եւ ասէ։

Եւ բարձր արասցէ զքեզ՝ 'ի ժառանգել զերկիր։ Այսինքն փառաւորեսցէ զքեզ ա՟ծ. ‘Նաեւ յանդիման մեղաւորաց՝ որք կամէին կորուսանել զքեզ՝ պատուական ցուցցէ զքեզ. եւ արասցէ, զի ժառանգեսցես աստ զերկիր մահկանացուաց. եւ ապա 'ի լնանալ ժամանակի՝ ժառանգեսցես յերկիրն կենդանեաց իբրեւ 'ի քոյ սեպհական կալուած։ Յայնժամ ծանիցես՝ թէ քանի բարի լեալ իցէ պահել զճանապարհս Տեառն, եւ քանի չար խոտորիլն 'ի նմանէ։ Մանաւանդ յորժամ յայտ-

նի ևս տեսցես զթշուառութիւն մեղաւորաց, զոր և
յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

Եւ զսատակումն մեղաւորաց տեսցես։ Այս բան կարէ հայիլ յաստիս և 'ի հանդերձեալն. որպէս թէ եղեալ էր. 'ի խորխատալ մեղաւորաց, ևս և 'ի ճոխանալ և 'ի բարձրանալ նց̃ 'ի վերայ քո, և 'ի կամիլ նոցա վնասել քեզ, կամ սպանանել զքեզ, ա̃ծ այնպէս առնէ՝ զի դու ինքն յառաջագոյն տեսցես զսատակիլ նոցա, որպէս եղև բազմաց։ Իսկ եթէ յաստիս ոչ տեսցես զայս, 'ի հանդերձեալն ունիս տեսանել 'ի դատապարտիլ նոցա 'ի սատակումն յաւիտենից։ Այլ զի մի կարծեսցի՝ թէ յամէ այս կորուստ նոցա, և կամ չիցէ հաւաստի կործանիլ նոցին՝ ցուցանէ մարգարէն զայն յաջորդ բանիւն իբր ականատես վկայ, ասելով։

ԼԵ. Տեսի զամպարիշտն վերացեալ, բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու։

ԼԶ. Անցի, և ահա ոչ էր. խնդրեցի, և ոչ գտաւ տեղի նորա։

Վերանալ և բարձրանալ ամպարշտին կրկնակի է. մի 'ի ներքուստ, և մի արտաքուստ. 'ի ներքուստ է ամբարտաւանիլ նորա, և վերագոյն համարիլ զանձն քան զայլս ե՛ն. որով և լինի ատելի այ̃, և սրբոց նորա. յոր միտս առնու և սուրբն յակոբ Մծբնայ հայրապետ ('ի Ճառն Ե.) յասելն. * տեսի զամպարիշտն
„ վերացեալ բարձրացեալ՝ որպէս զմայրսն լիբանանու.
„ անցի, և ոչ էր ուրեք. խնդրեցի, և ոչ գտի զնա.
„ ամենայն որ հպարտացաւ՝ խոնարհեցաւ ‖. Իսկ արտաքուստ վերանալն է մեծանալ փարթամութեամբ, և ելանել յիշխանութիւն և 'ի փառս։ Առաջինն է ամպարշտաց. իսկ երկրորդն հասարակ. զի և արդարք կարեն մեծանալ փարթամութ̃բ, որպէս աբրահամ, իսահակ, յակոբ, և այլք. ևս և ելանել յիշխանութ̃ի, որպէս յովսէփ, դաւիթ, եզեկիա, յովսիա, և այլք։ Արդ մարգարէն ոչ խօսի աստ զներքնոյն. զի զայն դնէ արդէն ունել ամպարիշտ մարդոյ. այլ խօսի զարտաքնոյն։ Այս կամի ցուցանել՝ թէ ո՛չինչ օգտէ, և ո՛չինչ օգնէ ամպարշտի այն մեծանալ իւր։ Իսկ թէ

զիարդ՝ յայտ առնէ, ասելով։

Տեսի զամպարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրսն Լիբանանու։ Զամպարիշտ ասելով իմանաց զն և իւր մարդ՝ որոյ վարք թիւրեալ իցէ ՚ի բարութենէ, կամ խոտորեալ իցէ յուղիղ կանոնաց։ Տեսի ասէ ես զայսպիսի մարդ մեծացեալ փարթամութեամբ, որպէս թէ էր վերաբազմեալ ՚ի փարթամութեան անդ իբր ՚ի գահոյս։ Տեսի ևս ասէ զի եղեալ էր այնպիսին յիշխանութիւն, որով և բարձրացեալ երևէր իբրև զծառս, մանաւանդ թէ իբրև զմայրս՝ որք լինին ՚ի Լիբանան բարձր յոյժ, և հաստարմատ։ Ես ՚ի տեսանելս իմ զարմացայ. զիարդ ասեմ այսպիսի ամպարշտի յայսպիսի եհաս մեծութիւն և իշխանութի. և առաւել ես զարմացայ, զի վարկայ՝ թէ նա միշտ մնալոց իցէ յայնմ մեծութե և իշխանութե. բայց այս իմ զարմացումն, և այս իմ վարկումն ոչ երկարեցաւ. որովհետև և այն մեծութի և իշխանութիւն նորա ոչ տևեաց երկար. և առ այս յարէ։

Անցի, և ահա ոչ էր. խնդրեցի՝ և ոչ գտաւ տեղի նորա։ Ճարտասանականն ոճով խօսի, առ ՚ի զօրաւոր առնելոյ զբան իւր. զի փոխանակ ասելոյ՝ վաղվաղակի բարձաւ ամպարիշտն՝ որ մեծացեալն էր և փառաւորեալ, տեսի ասէ և ահա ոչ էր. որպէս թէ ասէր. ՚Ի գնալ իմում զճանապարհ աստի կենաց տեսի ՚ի ճանապարհի զամպարիշտն ՚ի մեծութե և յիշխանութե ճոխացեալ, և իբրև զմայրս Լիբանանու հաստատեալ. և ահա յանցանելն իմ վերստին ընդ նոյն, այսինքն ՚ի շրջան առնուլ ամաց ընթացից կենաց իմոց, և ՚ի հայելս իմ աստ և անդ՝ ոչ տեսի զնա. զի ոչ ևս էր. Խնդրեցի և հարցի. ուր է նա, և ուր տեղին այն՝ յորում բարձրացեալ տեսի զնա. որոնեցի, և ոչ գտի՝ զի ոչ էր մնացեալ՝ և ոչ իսկ հետք այնր մեծութե և իշխանութե նորա, որպէս թէ բնաւ չէր եղեալ։

Այս ասացուած ոչ է բանից բարդութի, և ոչ հռետորաց շաղփաղփութի, այլ ամենևին ճշմարտութիւն։ Ապաքէն յընթեռնուլ մեր զպատմութիւն՝ տեսանեմք ՚ի նոսա վերացեալ և բարձրացեալ զբազումս ևս և զամպարիշտս իբրև զմայրս Լիբանանու. և ուր են նոքին. յանցանելն յառաջ ոչ ևս գտանեմք զնոսա։ Ուր

է նինոս մեծ. ուր Նաբուգոդոնոսոր փառաւոր. ուր աղեքսանդր հզօր. ուր և այլք անհամարք։ Ո՞ւր ապա և այն մեծամեծ թագաւորութիւնք. ուր իշխանութիւն հռովմայեցւոց. ուր կայսերութիւն յունաց. ուր ինքնապետութիւն մարաց. ուր և մեծութի̃ այլոց ազգաց. ահա ոչ են. և ոչ իսկ մնացին հետք մեծութեան և իշխանութ̃ե նոցա։ Թողում զայնոսիկ՝ զորս ոչ եթէ 'ի պատմութ̃իս ընթեռնումք. այլ 'ի տեղիս տեղիս աչօք տեսաք, և տեսանեմք. զորոց յանուանէ գրել չէ օրէն. զի մի կամելով զամենս շինել՝ ստիպեցիմք զայլս աւերել։ Ո՞չ լաւ էր այսպիսեաց մնալ 'ի չափու, քան վերանալ արտաքոյ չափու, և թաւալիլ 'ի բարձրութ̃ե. լաւ էր մրջման և ցեցոյ զերկրաւ գալ և կերակրիլ, քան թեւօք թռչել և կործանիլ. և սակայն 'ի թեւաւորիլն անդ և 'ի բարձրանալ՝ լինին որս թռչնոց և սարդից. որոց վասն ասի. * Թեւս առեալ մրջիւն թռչի.
,, բայց վտանգի և կործանի‖։

Իսկ թէ մարգարէն ընդէ՞ր մայրից նմանեցուցանէ զայսպիսիս. պատճառն այս է ասէ լամբրոնացին. զի թէպէտև մեծ են մայրիք, բայց անպտուղ. և ըստ վարդանայ որջք գազանաց. նոյնպէս և ամպարշտաց մեծութ̃իք և բարձրութ̃իք անպտուղ են. և ինքեանք որջք դիւաց։ Իսկ զլիբանանուն յաւելլով՝ ցուցանել կամի զառաւելութիւն մեծութեան և բարձրութեան նոցա. որովհետև մայրք բուսեալք 'ի լիբանան մեծ են քան զոր լինին յայլ տեղիս պաղեստինու։ Եւ զի այսչափ մեծ գոլով և բարձր՝ ոչ ևս մնան՝ ոչ ինքեանք և ոչ մեծութիւնք նոցա և ոչ բարձրութ̃իք նոցին, ապա յիմարութ̃ի է ցանկալ հաւասարիլ նոցա. այլ յաւէտ փոխանակ այնմ ցանկանալոյ՝ ցանկալ արժանաւոր սրբութեան և անարատութ̃ե վարուց առն արդարոյ. զի այսպիսումն միայն մնայ պտուղ։ Սմին իրի յորդորէ մարգարէն, և ասէ։

ԼԷ. Պահեա՛ զանմեղութիւն, և տե՛ս զուղղութիւն, զի գոն մնացուածք առն խաղաղարարի։

Զընթացս առաքինութեան իբր հաստատութ̃ե կանոն՝ է խոտորել 'ի չարէ, և առնել զբարին. որպէս և եդ մարգարէն ('ի համարն 25.) իսկ խոտորումն 'ի չարէ կրկնակի կշռի. մի՛ խորշելով 'ի մեծ չարէ. և մի նա՛ նաև 'ի փոքուէ, որպիսի է նա՛ որ ոչ միայն խորշի յաղտեղի խօսից, այլ և յարատոյ դատարկ բանից. Նոյնպէս և առնել զբարին կրկնակի չափի. մի՛ առնել զայն՝ առ որ պարտաւորի յօրինաց. և մի նա՛ զայն՝ առ որ ոչ պարտաւորի. որպիսի է նա որ ոչ միայն պահէ զհրամայեալ պահս, այլ և զոչ հրամայեալսն. Զկատարեալ խոտորումն 'ի չարէ կոչէ աստ մարգարէն անբծութիւն. և զլիուլի կատարումն բարեաց կոչէ ուղղութիւն՝ յասելն.

Պահեա զանբծութիւն, և տես զուղղութիւն. Բառքդ անբծութեան և ուղղութեան՝ որք 'ի վերջացեալն գնին, 'ի թանձրացեալն նշանակեն աստ՝ փոխանակ անբիծ կենաց, և ուղիղ վարուց. որպէս թէ եղեալ էր. պահեա՛ 'ի քեզ զանբիծ կեանս, և տես զուղիղ վարս. այսինքն կալ յանձին քում զայնպիսի կեանս, որ իցէ ազատ ոչ միայն 'ի մեղաց, այլ յո՛ և իցէ բծէ յանցանաց, կամ յայնպիսի անկատարութենէ՝ որ կարէ բիծ ինչ տպաւորել 'ի վարս քո. Տես ևս զուղղութիւն. այսինքն՝ տես թէ զինչ իցէ համաձայն ուղիղ կանոնի, և արա՛ զայն.

Եւ մի՛ ասեր թէ ես չեմ պարտական առ այդ.

Մարգարէն հայելով յանբծութիւն՝ դնէ զբառդ պահեա. իսկ հայելով յուղղութիւն՝ դնէ զբառդ տես. Երկոքին ևս թէպէտ 'ի նոյն միտս դնին, այսինքն փոխանակ առնելոյ զանբիծ կեանս և զուղիղ վարս, բայց քանզի առ զգուշանալոյ 'ի բծէ պահանջի պահպանութիւն. և առ 'ի գտանելոյ զուղղութիւն՝ պահանջի տեսութիւն՝ վասն այսորիկ ըստ միոյն դնէ պահել, և ըստ միւսոյն տեսանել.

Այլազգ ևս կարէ կարգիլ այս բան. զի որովհետև տեսութիւնն վերաբերի 'ի միտս, և պահպանութիւնն 'ի կամս կամ 'ի գործս կամաց, զերկոսին զայսոսիկ 'ի միասին դնելով՝ կամի ասել. տե՛ս միտօք քովք՝ որ իցէ ուղիղ, և որ իցէ թիւր, և ըստ տեսանելոյդ կամեաց և գործեա՛, զի այսու կարես պահել զքեզ անբիծ. Կամ այլազգ ևս. պահեա՛ զանբծութիւն 'ի կամս, և տե՛ս զուղղութիւն 'ի միտս.

Իսկ համբերանացն 'ի վերայ ստացեալ առաքինութեանց ածէ զայս. որպէս թէ ասացեալ էր. պահեա՛ անբիծ զառաքինութիւնն զորս շահեցար, և տես՝ զի մի խոտորեսցիս յուղղութենէ՝ զոր զհետ եղեր. Ոմանք աստ զանբծութիւն վերածեն առ ունողն, իսկ զուղղութիւն առ այլս, որպէս թէ եդեալ էր. պահեա զքեզ անբիծ, և վարեսջիր ընդ այլս ուղիղ, այս է ըստ կանոնի արդարութեան. որով և գտցես խաղաղութիւն 'ի քեզ և յայլս, և ունիցիս զարդիւնս բարեաց. Զայսոսիկ եդեալ յաւելու և աստ.

Զի են մնացուածք առն խաղաղարարի. Զոր 'ի վերոյ արդար կոչեաց, աստ խաղաղարար անուանէ զնա. զի այր արդար կանոնաւորելով զամենայն՝ որ յինքեան և որ արտաքոյ ինքեան՝ պատճառէ զխաղաղութիւն. որով և լինի խաղաղարար ինքեան և այլոց. քանզի այսպիսին իբրև աղ պահէ զինքն և զայլս 'ի յանդորրու. * այն ոչ միայն ինքեան է, այլև այլոց (ասէ բարսեղ ,, վարդապետ 'ի մեկն. մարկ. գլ. Թ.) զի պահէ զինքն ,, անապական և զայլս ||. Եւ ահա այսպիսի գոլով ար- ,, դարն՝ ժառանգէ զերանութիւն որդւոյն այ̃. ըստ այնմ. (մատ. Ե. 9.) * Երանի խաղաղարարաց զի նոքա որդիք այ̃ կոչեսցին ||.

Իսկ մնացուածք այսպիսի խաղաղարարի՝ զոր դնէ մարգարէն՝ հնգապատիկ կարեն լինել. Մի՝ ըստ ա՛նմ՝ զի բարի յիշատակ նորա, և բարի անուն նորա մնայ յետ մահու նորին. Երկրորդ՝ ըստ այնմ՝ զի զաւակք նորա մնան իբրև բարի ժառանգք բարի ծնողի. Երրորդ՝ ըստ այնմ՝ զի գտանէ 'ի կեանս իւր զմնացուած բարի, այսինքն զայնպիսի պտուղ բարեաց՝ որում ակնունելով աշխատի, թէև 'ի կասկածի իցէ՝ թէ գտանիցէ՞ արդեօք. որպէս որ յետ բազում տառապելոյ վասն ստանալոյ զայս ինչ առաքինութիւն կամ զայն ինչ բարի վիճակ, կամ բարի որդի, ևն, հասցէ փափաքանաց իւրոց, և վայելեսցէ 'ի նմա, և բերկրեսցի նովաւ, իբր մնացուածովք աշխատանաց իւրոց. Չորրորդ ըստ այնմ՝ զի յընթացս կենաց իւրոց ունի զներքին մխիթարութիւն իբրև զմնացուած կամ իբրև զվարձանս առաքինութեան, կամ իբրև զգրաւ յաւիտենական երանութեան. Հինգերորդ ըստ այնմ՝ զի գանձեալ պահին վասն նորա մեծամեծ մնացուածք, այսինքն վարձք գործոց նորին 'ի հանդերձելումն 'ի փառս արքայութեան որք տուեալ լինին նմա 'ի մտանիլ նր. յոր միտս երանի տուեալ լինի այսպիսեաց 'ի գիրս յայտնութե. (ժդ. 13.) յասելն. * Երանի մեռելոցն՝ որք 'ի տէր ննջեցին . . . միայն գործք իւրեանց (իբրև զմնացուածք նոցա) չոքան զհետ նոցա ‖.

Այսքիկ ամենեքին ահա մնացուածք ասին առն խաղաղարարի յաստիս և 'ի հանդերձելումն. յորոց եթէ պակասեսցի ինչ նմա յաստի կեանս, 'ի հանդերձեալն պահին մեծամեծքն. և ներհակն այսոցիկ պատահի անօրէն մարդկան, ըստ որում ասաց մարգարէն 'ի բազում տեղիս, զոր և կրկնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով.

ԼԷ. Անօրէնք հալածեսցին 'ի միասին. և շառաւիղ ամպարշտաց կորիցէ.

Այս այն է՝ զոր ասաց 'ի համարն. 27. (տես անդ.) Իսկ պատճառ կրկնելոյն և ասել՝ այս է, զի ցուցցէ թէ բարի ինչ ոչ է լինելոց անօրինաց՝ այլ որպէս 'ի չարիս անցուցին նոքա զկեանս իւրեանց, սոյնպէս և չարեօք հանդերձեալ են կորնչել առ հասարակ. սմին իրի անպայման դնելով զբանն՝ ասէ.

Անօրէնք հալածեսցին 'ի միասին. Այսինքն ո՛ և իցէ անօրէնք՝ որք երևին տիրապետել յերկրի, տարագրեսցին յերկրէ, և ապա նաև յարքայութենէ երկնից, նոյնպէս և զաւակ նց. Եւ առ այս յարէ.

Եւ շառաւիղ ամպարշտաց կորիցէ. Այսինքն եթէ այնպիսի ամպարիշտք և անօրէնք ունիցին որդի, նա ևս մի՛ մնասցէ, միայն թէ ըստ ամպարշտութեան ծնողաց իւրոց գնացեալ իցէ. Զոր միտս՝ ոչ դնէ որդի՝ այլ զաւակ. առ 'ի ցուցանել՝ թէ իցէ հարազատ ժառանգ ամպարշտութե ծնողաց իւրոց. Իսկ եթէ յարդարութեան կացցէ, այնպիսին ոչ մնայ զաւակ ամպարիշտ ծնողաց, այլ իբրև զաւակ օրհնեալ յԱյ. զի արդարութեամբ որ վերջացաւ 'ի ծնօղս իւր՝ յիւրմէ սկսաւ. Այլ եթէ զաւակ ամպարշտաց յարդարութե կալցի 'ի պատիժ նց տաժեսցէ զկեանս. կամ զառողջութի անձին իւրոյ, կամ զկորուստ ընչից ևն, որպէս պատահեցաւ և պատահի բազմաց, այն կարգի ոչ յօգուտ ծնողաց, այլ յօգուտ բարի զաւակին.

Զայս ամ՝ զոր խօսեցաւ մարգարէն յայսմ սաղմոսի 'ի վերայ ամպարշտաց՝ բաւական համարի. վասն որոյ և թողու զնոսա ։ Իսկ զոր միանգամ խօսեցաւ 'ի վերայ արդարոց, զամենայնն 'ի մի հաւաքէ աստանօր 'ի վերջ սաղմոսիս. և բովանդակելով զբան իւր՝ ասէ ։

լէ. Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է. վերակացու է
նոցա 'ի ժամանակս նեղութե՟ ։

Փրկութ՟ի արդարոց զոր ցուցանէ ա՟ծ՝ կրկնակի է, մի՝ ըստ աստի կենաց, և մի ևս՝ ըստ հանդերձելումն ։ Յաստի կեանս՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ։ Ըստ հոգւոյ՝ բազմապատիկ օրինակաւ. մի՝ անարատ պահելով 'ի մեղաց ։ Երկրորդ 'ի վրիպել նոցա՝ յապաշխարութիւն կենաց ածելով ։ Երրորդ՝ լուսաւորելով զխաւար մտաց ։ Չորրորդ՝ բարեկարգելով զյարձակումն անձնիշխան կամաց ։ Հինգերորդ՝ քաջալերելով 'ի ներքին լքմանց ։ Վեցերորդ՝ մխիթարելով 'ի վիշտս տառապանաց ։ Եօթներորդ՝ տալով յաղթութ՟ի ընդդէմ փորձութեանց ։ Ութերորդ՝ պաշտպանելով 'ի չարակամութենէ դիւաց ։ Իններորդ՝ զերծուցանելով 'ի հոգեկործան վտանգաց ։ Տասներորդ՝ զօրացուցանելով 'ի ճանապարհս առաքինութ՟եց ։ Մետասաներորդ ձեռնտու լինելով 'ի դժուարութիւնս գործոց բարեաց. և այլն՝ որ 'ի կարգի ։

Սոյնպէս թէպէտ և ըստ մարմնոյ բազմապատիկ ցուցանէ ա՟ծ զփրկութիւն իւր առ արդարս՝ զերծուցանելով զնոսա 'ի պէսպէս փորձանաց, և ձեռնտու լինելով նոցա առ այլ և այլ իրս. բայց երբեմն 'ի հոգևոր օգուտ նոցա նայելով՝ ոչ այնչափ ըստ մարմնոյ ցուցանէ, որչափ ըստ հոգւոյ ։ Իսկ տակայն 'ի մարմնաւորսն անդ ևս այնպիսի օրինակաւ վարի ընդ նոսա, մինչև յայտնի ցուցանել՝ թէ ինքն է փրկիչ նոցա ։

Իսկ վասն փրկութ՟ե՝ որ 'ի հանդերձելումն, այսինքն վասն հասանելոյ արդարոց 'ի փրկութիւն յաւիտենական, գիտելի է. զի այս է ձրի պարգև ա՟յ, բայց ա՟ծ ոչ տայ ձրի. իբր զի ա՟ծ թէպէտ և ձրի կամի փրկել, և վասն այնորիկ ձրի տայ զշնորհս հարկաւորս առ 'ի փրկութիւն. բայց ոչ փրկէ՝ եթէ և մարդն ոչ լիցի գործակից այնմ շնորհաց. միայն թէ լիցէ հասեալ 'ի բանսարկութիւն ։ Ուրեմն եթէ այնոր գործակից լիցի մարդ՝ աներկբայ տայ Աստուած զայն փրկութիւն իբրեւ զվարձս ։ Իսկ 'ի տղայս յորս չիք բանսարկութիւն՝ այս գործակցութիւն է 'ի հաղորդակցութենէ արդեանցն Քրիստոսի ։ Արդ բանք մարգարէին թէպէտեւ ուղղակի հային 'ի փրկութիւն աստի կենաց, բայց հային լաւելայն եւ 'ի փրկութիւն հանդերձելոյն. եւ կամ յերկոսին եւս միանգամայն՝ յաւէտն ։

Փրկութիւն արդարոց 'ի տեառնէ է ։ Այսինքն, այն փրկութիւն՝ որով փրկին արդարք՝ ոչ է 'ի զօրութենէ իւրեանց, կամ 'ի կարողութենէ իշխանաց, եւ կամ յաջողեալ 'ի տկարէ ումեքէ, այլ 'ի տեառնէ, այսինքն յայնմանէ՝ որ է ինքնիշխան տէր ամենայնի ։ Այլ թէ զիարդ փրկէ զնոսա՝ յայտ առնէ մարգարէն այլեայլ բանիւ, եւ նախ ասէ ։

Ապաւէն է նոցա 'ի ժամանակս նեղութեան ։ Ժամանակք նեղութեան արդարոց բազում են. այսինքն ժամանակք արտաքին եւ ներքին փորձութեանց՝ որք վտանգեն զարդարս ։ Ժամանակք խաւարման մտաց, եւ մթութեան կամաց, եւ ցրման հոգւոյն. ժամանակք պէսպէս ձախորդութեանց եւ զրկողութեանց, հիւանդութեան եւ աղքատութեան, կորստեան ստացուածոց եւ բարձման զաւակաց, եւ այլ անհամար գլխացուածոց ։

Յայս ամենայն ժամանակս նեղութեան՝ վերակացու լինի Աստուած արդարոց պէսպէս օրինակաւ. այսինքն կամ բառնալով զատիթս նեղութեանց, կամ նուաղեցուցանելով զնոսին. կամ առանց բառնալոյ եւ առանց նուազեցուցանելոյ զայնս՝ զօրացուցանելով զարդարսն 'ի համբերութիւն. կամ մխիթարելով զնոսա, եւ կամ յատուկ իմն օրինակաւ օգնելով նոցա ։ Եւ զայս օգնութիւն, նոյնպէս եւ զփրկութիւն 'ի մասնաւորի եւս առաջի դնէ մարգարէն ասելով ։

ԼԹ. **Օգնեսցէ նոցա տէր, եւ փրկեսցէ զնոսա ։ Ապրեցուսցէ 'ի մեղաւորաց. եւ կեցուսցէ զնոսա. զի յուսացան 'ի նա ։**

Օգնելն է առնել ումեք զայնպիսի ինչ, որով կարիցէ նա բաւական լինել առ իմն՝ առ որ ինքնին առանձին չէր կարող. եւ այս կարէ լինել կրկնակի. մի՝ յորժամ առնելի է իրն, բայց որ կամի՝ չկարէ ինքնին կատարել, կամ ոչ կարէ դիւրաւ առնել, այլ կարօտի այլում՝ առ 'ի կարողանալ և բաւականանալ առ այն. զորօրինակ 'ի գործել, 'ի շինել, 'ի գնալ, 'ի գրել, 'ի խօսիլ, և այլն: Երկրորդ՝ յորժամ վնասելի է իրն իբր չար, կամ յորժամ ազատութիւն գտանելի է 'ի չարէ. զորօրինակ եթէ ոք 'ի շիջուցանել զհրդեհ՝ կարօտ լիցի այլում. կամ եթէ 'ի վանել զթշնամին՝ կարօտ լիցի ընկերի. և այլն: Եւ կամ եթէ ոք անկեալ 'ի ծով, կամ 'ի բանտ կամ 'ի հիւանդութիւն, և այլն, կարօտիցի այլում, զի նովաւ կարողասցի գտանել զազատութիւն:

Այլ գիտելի է՝ զի այս երկրորդ եղանակաւ օգնելս եթէ մտածեսցի իբրև այն ինչ՝ որով ոչ վնասի ոք 'ի չարէ, ասի պաշտպանել: Իսկ եթէ մտածեսցի իբրև այն ինչ՝ որով ոք անմերձենալի մնայ 'ի չարէ՝ ասի պահպանել: Եւ եթէ մտածեսցի իբրև այն ինչ՝ որով ազատի ոք ներգործութեամբ 'ի չարէ՝ ասի փրկել. նոյնպէս և եթէ ազատելով 'ի չարէ՝ հասցէ 'ի բարին՝ դարձեալ փրկել ասի կամ ազատել: Եւ եթէ այն չար իցէ կենաց վտանգ, և չև է հասեալ՝ ասի ապրեցուցանել, մանաւանդ եթէ 'ի բարին բերիցի: Եւ եթէ հասեալ իցէ չարն, ասի պրծուցանել. և եթէ յայնմ չարի տացէ ազատիչն զպահպանութիւն կենաց՝ կամ պահեսցէ 'ի կեանս, ասի կեցուցանել: Եւ թէպէտ այսորիկ ամենեքին բազում անգամ 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին, բայց ունին յինքեանս գոնէ արմատաբար զայսոսիկ որոշմունս: Եւ ահա յայսոսիկ հայելով՝ խօսի աստ մարգարէն, և նախ ասէ:

Օգնեսցէ նոցա տէր և փրկեսցէ զնոսա: Որպէս ասացաք 'ի վերոյ, որովհետև արդարոց է դիմել 'ի բարին, և խորշիլ 'ի չարէ, վասն դիմելոյ նոցա 'ի բարին ասէ օգնեսցէ նոցա տէր. այսինքն ձեռնտու լինելով նոցա կարողացուսցէ, և բաւականացուսցէ զնոսա առ գործս բարիս. իսկ վասն խորշելոյ 'ի չարէն ասէ փրկեսցէ զնոսա. այսինքն ներգործութ̅բ ազատեսցէ զնոսա յինչ և իցէ չարէ՝ ուր յեբր″, 'ի կատարեալն դնի, այսինքն օգնեաց և փրկեաց:

Հայելով 'ի կարգ նախընթաց բանից սաղմոսիս՝ երևի թէ մարգարէն ըստ նոյն իմացուածոյ դնէ աստ զօգնելն եւ զփրկելն . զօգնելն վասն գտանելոյ զազատութիւն 'ի չարէ , եւ զփրկելն վասն զերծուցանելոյ անտի իրօք . որպէս թէ ասացեալ էր . յորժամ եւ իցէ ժամանակի 'ի վտանգիլ արդարոց , ոչ թողցէ զնոսա ա̃ծ . այլ վերակացու լինելով նոցա՝ օգնեսցէ նոցա . որով եւ կարողացուսցէ զնոսա գտանել զազատութիւն 'ի վտանգէ եւ շահիլ 'ի նեղութեան անդ զարդիւնս բարեաց . եւս եւ ինքնին պաշտպան լեալ նոցա՝ Փրկեսցէ զնոսա 'ի նեղութեանց անտի . եւ ազատեսցէ 'ի վտանգից , եւ 'ի ձեռաց թշնամեաց նոցա ։ Եւ առ այս յարէ եւ ասէ ։

Ապրեցուսցէ 'ի մեղաւորաց ։ Զորս բազում անգամ ասաց 'ի վերոյ ('ի համարն . 11 . 13 . 14 . եւ 31 .) եւ յայտ արար պէսպէս բանիւք՝ թէ մեղաւորք զիա՛րդ զհետ պնդին արդարոց , եւ թէ զիա՛րդ ա̃ծ պահէ զարդարն 'ի ձեռաց նոցա , աստ զամենայնն համառօտէ 'ի մի յայս բան՝ ասելով . Ապրեցուսցէ զնոսա 'ի մեղաւորաց . այսինքն ազատեսցէ ա̃ծ զարդարսն յն̃ եւ իցէ որոգայթից եւ հնարից՝ զորս նիւթեն մեղաւորք ընդդէմ նոցա առ 'ի կորուսանել զնոսա . որով եւ պահէ զնոսա 'ի կեանս ։ Եւ առ այս յաւելու ։

Եւ կեցուսցէ զնոսա ։ Կեցուցանել եւ կենդանացուցանել թէպէտ եւ երբեմն 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին , բայց 'ի նշանակութեն իւրեանց տարբերին . զի կեցուցանելն փաղանշանէ միայն զվտանգիլն կենաց . իսկ կենդանացուցանելն փաղանշանէ զգոյութիւն կենաց . իբր զի կեցուցանելն լինի յայնժամ՝ յորժամ գոյ վտանգ կենաց . իսկ կենդանացուցանելն լինի յայնժամ՝ յորժամ բարձեալ է կեանք , կամ չիք կեանք ։

Ուստի եթէ ոք յարուցանիցէ զմեռեալն՝ ասի կենդանացուցանել . կամ եթէ տացէ կեանս այնպիսումն որ չունիցի կենդանութիւն , նոյնպէս կենդանացուցանել ասի . իսկ եթէ չիցէ ոք մեռեալ , այլ միայն անկեալ 'ի վտանգ կենաց , կամ յառիթ մահու , ազատելն անտի կամ պահելն 'ի կեանս՝ ասի կեցուցանել ։ Եւ զի ցորչափ կեամք 'ի կեանս յայս , 'ի վտանգի եմք ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ , վասն որոյ հանապազ աղաղակեմք առ ա̃ծ կեցո՛ տէր ։

Արդ թուի թէ մարգարէն յասելն աստ կեցուսցէ տէր զարդարսն՝ ոչ միայն ակնարկէ 'ի գործ կեցուցանելոյն. այլ և 'ի գործ կենդանացուցանելոյն. որպէս թէ ասէր. յանկանիլ արդարոց 'ի հոգևոր և 'ի մարմնաւոր վտանգս կենաց՝ ազատէ զնոսա ա̃ծ. և յետ մահու նոցա կենդանացուցանէ զնոսա. այսինքն վերառնու զնոսա փառօք 'ի կեանս անմահս։ Տայ մարգարէն և զպատճառն՝ թէ ընդէ՞ր այսպէս առնէ ընդ նոսա ա̃ծ։

Զի յուսացան առ 'ի նա։ Իբր թէ վասն այնր ա̃ծ օգնէ արդարոց և կեցուցանէ զնոսա, զի նոքա ոչ 'ի զօրութիւն իւրեանց և ոչ յայլ ինչ եդին զյոյս իւրեանց, այլ միայն յա̃ծ. իսկ * յոյս (որ առ ա̃ծ,) ոչ ամաչեցուցանէ ‖. (Հռոմ. Ե. Ե.) Իսկ թէպէտ ա̃ծ ձրի ողորմութեամբ օգնէ և փրկէ, բայց կամի, զի և մեք յուսասցուք 'ի նա. և յաղագս այսորիկ տայ նախ նըպաստ շնորհաց իւրոց առ 'ի յուսալ 'ի նա. և 'ի յուսալն օգնէ և փրկէ. ազատեցուցանէ և կեցուցանէ. և 'ի կէտ կատարման ամենայնի՝ ժառանգեցուցանէ 'ի կեանսն յաւիտենականս։

ՍԱՂՄՈՍ Զ.

Բանք պաղատանաց 'ի դիմաց Դաւթի և 'ի դիմաց իւրաքանչիւր ապաշխարողի 'ի ցաւագնեալ սրտէ և 'ի խոնարհ հոգւոյ վասն գտանելոյ յա̃յ զթողութիւն մեղաց, գանգատելով միանգամայն և զթշնամեաց յարուցելոց 'ի վերայ։

Սաղմոս 'ի Դաւիթ առ յիշատակէ շաբաթու։

1 Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս։ 2 Զի նետք քո հարան զիս. և յիս հաստատեցաւ ձեռն քո։ 3 Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո։ 4 Ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց. յերեսաց մեղաց իմոց։ 5 Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։ 6 Նե-

Նեխեցան և փտեցան վէրք իմ, յերեսաց անզգամութե̄ իմոյ: 7 Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ. զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք. և ոչ գոյ բժշկութի̄ մարմնոյ իմոյ: 8 Զարչարեցայ և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ: 9 Տէր առաջի քո է ա̄մ ցանկութիւն իմ, և հեծութիւն իմ ՚ի քէն ոչ ծածկեցաւ: 10 Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութի̄ իմ. լոյս աչաց իմոց, և այս ոչ եղեւ ընդ իս: 11 Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կային. և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն: 12 Բռնադատէին զիս և խնդրէին զանձն իմ. որք խնդրէին չար ՚ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութի̄, և զնենգութիւն զօրհանապազ խորհեցան: 13 Բայց ես որպէս խուլ՝ ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր: 14 Եղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ. և ոչ գոն խօսք ՚ի բերան նորա: 15 Զի ՚ի քեզ տ̄ր յուսացայ, և դու լուիցես ինձ տ̄ր ա̄ծ իմ: 16 Զի ասացի՝ թէ մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ՚ի սասանել ոտից իմոց՝ ՚ի վերայ իմ մեծամեծս խօսեցան: 17 Զի ես ՚ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ: 18 Զանօրէնութի̄ս իմ պատմեցից. և հոգացայց վասն մեղաց իմոց: 19 Իսկ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս. և բազմացան ոյք ատէին զիս ՚ի տարապարտուց: 20 Որք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. չար խօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութե̄: 21 Մի՛ թողուր զիս տէր ա̄ծ իմ. և մի՛ ՚ի բացեայ առներ յինէն, հայեա՛ց յօգնել ինձ տէր փրկութեան իմոյ:

ՎԵՐՆԱԳԻՐ.

Սաղմոս ՚ի դաւիթ առ յիշատակէ շաբաթու:

ՅԵԲՐԱՅԱԿԱՆՆ ԵՒ Ի ՔԱՂ*դէականն ոչ գնի ՚ի վերնագրի սոսա բառդ շաբաթու. այլ այնչափ միայն. * Սաղմոս ՚ի դաւիթ առ յիշատակ: Իսկ յայլ Թարգմանութիւնս բաց յասորւոյ ըստ մերումս գնի, և յաւելեալ լինի նոյն բառ, այսինքն բառդ շաբաթու, որով կարի իմն դժուարանայ մեկնութիւն վերնագրիդ: Բայց սա-*

կայն մարթ է եւ զերրեակ բացատրութ՟ի տալ։

Մի՛ թէ այս սաղմոս իցէ ասացեալ առ 'ի երգել յաւուր շաբաթու վասն յիշատակի մեծի իրիք բարերարութ՟ե, որով լեալ իցէ կամ քաւութ՟ի մեղաց, կամ ազատութ՟ի 'ի գերութ՟է, կամ առողջութ՟ի 'ի հիւանդութ՟է, եւ կամ այլ ինչ արժանի յիշատակի. եւ ըստ այսմ առեալ՝ կամի ասել. այս սաղմոս երգի 'ի շաբաթու վասն յիշատակելոյ զայս ինչ կամ զայն։

Երկրորդ՝ թէ այս սաղմոս յօրինեալ իցէ ըստ ձայնի կամ ըստ եղանակի այնց սաղմոսաց՝ որք երգեալ լինէին յաւուրս շաբաթու, կամ յայնպիսի եղանակ, որ իցէ եղանակ շաբաթու. որպէս թէ եդեալ էր. այս սաղմոս երգելի է առ 'ի յիշատակ եղանակաց շաբաթու. որ է ասել, ըստ այնց եղանակաց, որով երգին սաղմոսք շաբաթու։

Երրորդ՝ թէ այս սաղմոս ասացեալ իցէ վասն յիշատակի շաբաթու, այսինքն հանգստեան. ըստ որում շաբաթն հանգիստ թարգմանի. որով նշանակի նախ հանգիստ սրբութեան վարուց՝ որ իցէ կորուսեալ մեղօք. կամ հանգիստ թողութ՟ե մեղաց, եւ կամ հանգիստ խղճի մտաց, որ ասացեալ իցէ 'ի ձեռն ապաշխարութ՟ե. երկրորդ՝ հանգիստ ազատութեան մարդկային բնութ՟ե 'ի ձեռն փրկութ՟ե տ՟ն մերոյ. երրորդ՝ հանգիստն յաւիտենից. որ պահի ապաշխարողաց։

Կարէ նշանակել եւ զհանգիստ մարմնոյ յաւուր շաբաթու. որով հարկ էր դադարել յարտաքին եւ 'ի զբաղեցուցիչ գործոյ, եւ նահանջել յերկար ճանապարհորդութենէ, եւ պարապել հոգեւորաց, եւ անդորր կենաց։ Բացի * յերկար ճանապարհորդութենէ‖. զի ընդ կարճոյ կարէին գնալ ուրեք մղոն մի, եւ կամ յասպարէզս երիս (որ է հազար հինգհարիւր քայլ, այն է մղոն եւ կէս. կամ հարիւր եւ վաթսուն փոքր ասպարէզս, որ է հազար վեցհարիւր քայլ.) ըստ որոյ ճանապարհ շաբաթու կոչիւր առ հրէայս ճանապարհն երից ասպարիզաց. (գործ. ա՟. 12։) Յայս հանգիստ եւ կարէ հայիլ աստ բառդ շաբաթ առ 'ի յիշատակ հանգստեան հոգւոյ. Իսկ սակայն այսոքիւք եւ ճշմարտութ՟ի իմաստիցն յայտնի ոչ երեւի։

Այլ եթէ պասոց շաբաթ բառս ընթերցցի այս վերնագիր, կարէ մեկնիլ 'ի յիշատակ Թողութեան մեղացն դաւթի. իբր թէ դաւիթ մարգարէ ասացեալ իցէ զայս սաղմոս առ 'ի յիշատակ Թողութեան մեղաց իւրոց, եւ և վասն յիշատակի իւրաքանչիւր ապաշխարող անձին. զի որպէս վկայէ հասարակաց կարծիք, զայս սաղմոս ասաց դաւիթ առթիւ ապաշխարութեան վասն մեղաց իւրոց, որով մեղաւ 'ի բերսաբէ, և յուրիա: Այլ թէ 'ի գնիլ այսր առթի երբ իցէ ասացեալ դաւթի զայս սաղմոս՝ թէպէտ յայտնի ոչ աւանդի, բայց հաւանականագոյն է կարծել՝ թէ ասաց 'ի դառնալ իւրում յերուսաղէմ՝ յետ հալածելոյ յերեսաց աբեսաղոմայ. զի այն հալածումն որպէս ցուցանէ մեկնիչն (բ. թագ. ժբ. 11. և այլն.) եղև վասն բանի մեղացն ուրիայ: Արդարն համարի յետ բազում ժամանակաց ասացեալ. իսկ այլք ասեն՝ թէ անմիջապէս յետ յանդիմանեալ լինելոյ 'ի նաթանայ ասաց զայս. այս եւս չէ հեռի 'ի ճշմարտութենէ. և 'ի նոյն հայի ըստ առթին:

Կան եւս որք ասեն՝ թէ զայս ասացեալ իցէ դաւիթ 'ի հիւանդանալ իւրում. բայց այս երևի երկբայական: Ոմանք եւս ասեն՝ ըստ աւանդելոյ 'ի վերնագրին ասորեաց՝ թէ զայս ասաց 'ի ժամանակի՝ յորում եկն առ անքուս, և զրպարտեցաւ 'ի ծառայից նորա (ա. թագ. իա. 11:) այս կարծիք չունի տեղի հայելով 'ի բանս սաղմոսիս: Ոմանք յաւելուն ասել, թէ այս սաղմոս հայի 'ի հիւանդութիւն և յառողջութիւն եզեկիայ արքայի: Այլք թէ հայի յանգս յոլոց արդարոց: Այլ այսքիկ յետին կարծիք ոչ հային 'ի նկարագիրն՝ այլ 'ի յարմարական մեկնութիւն:

ԲԱՆ

ա. Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Սկզբնաւորութիւն սաղմոսիս նոյն է ընդ սկզբնաւորութեան վեցերորդ սաղմոսի. զի այն եւս սկսանի ասենեւին նովին բանիւ. * Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս, և մի բարկութեամբ քով խրատեր զիս ‖. Եւ զի անդ ըստ կարի վճարեցաք՝ զոր ինչ արժան էր խօսել 'ի վերայ այսր. ոչ մնայ մեզ ասել ինչ աստ յայնցանէ. տես անդ:

Իսկ թէ ընդէր և աստ զնոյն կրկնէ մարգարէն, այս եւեթ երևի լինել պատճառն, զի տակաւին 'ի նոյն կիրս զղջութեան կամ 'ի նոյն զգածումն ըմբռնեալ էր, վասն որոյ և նովին զգածմամբ խօսելով՝ զնոյն երկրորդէ և աստ:

Այլ կամելով մեր ինչ մի ևս յաւելուլ աստանօր՝ մարթ է ասել, թէ զոր անդ խօսեցաւ մարգարէն հայելով 'ի վիճակ աստի կենաց. աստ զնոյն կրկնէ հայելով նաև 'ի վիճակ հանդերձելոյն ըստ երգելոյ շարականին, կարգեալ զբան իւր 'ի դիմաց իւրոց, և 'ի դիմաց իւրաքանչիւր հաւատացելոց՝ ասելով. ◆

Տէր մի սրտմտութեամբ քով յանդիմաներ զիս. և մի բարկութեամբ քով խրատեր զիս: Սրտմտութիւն է բարկութիւն սաստկացեալ, կամ բարկութիւն բորբոքեալ: Ասէ և սրտմտութեամբ յանդիմանելն ա̃յ 'ի հանդերձեալն՝ հայի յայն, որով յանդիմանելոց է ա̃ծ զմեղաւորս յաւիտենական դատապարտութեամբ յասելն առ նոսա. * երթա՛յք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական ‖:

Զբարկութեամբ խրատելն ևս 'ի սոյն վերածէ բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժե.) այս յանդիմանութիւն ասէ, զոր թափելոց է տէր. երթա՛յք յինէն անիծեալք, այնպիսի և այնչափ դառն է * քան զոր
,, ոչինչ դառնի դառնագոյն. (և) այս է բարկութեամբ
,, խրատելն ‖: Եւ սակայն ըստ առաջիկայ մեկնութեան, բարկութեամբ խրատելն ա̃յ 'ի հանդերձեալն՝ ակնարկէ յայն՝ որով առ ժամանակ մի խրատելոց է, այսինքն պատժելոց է ա̃ծ զայնոսիկ՝ որք թէպէտ և 'ի շնորհս իցեն մեռեալ, բայց չիցեն ըստ ամենայնի քաւեալ 'ի ներելի մեղաց, կամ չիցեն ըստ ամենայնի վճարեալ զպատիժ թողեալ մեղացն. և յայս միտս այսինքն վասն քաւութեան ներելի մեղացն, և վասն թողութեան պատժոցն՝ զորս կրեն ննջեցեալքն, աղաչեմք հանապազ զա̃ծ ողորմել նոցա, ներել, և հանգուցանել. որպէս է տեսանել 'ի շարականի ննջեցելոց:

Եւ զի ըստ այսմ կարգի պատշաճաւորաբ յառաջ դասի բան ոչ խրատելոյ բարկութե՟՝ քան զբանն ոչ յանդիմանելոյ սրտմտութե՟, վասն այսորիկ 'ի շարականի յառաջադասութե՟ դնի այս բան 'ի չորրորդ ձայնին յասելն ։

* Զլուսաւորեալս ծննդեամբ 'որ աւազանին մի բար-
,, կութե՟ խրատեր (առժամանակեայ խիստ պատժովք)
և մի սրտմտութե՟ քով յանդիմաներ. (մերժելով զնոսա յաւիտեան յերեսաց քոց)‖.

Զսոյն զայս՝ զոր 'ի դիմաց իւրաքանչիւրոց առաջի դնէ մարգարէն, վասն իւր և պաղատի՝ հայցելով 'ի հանդերձեալ կեանս. որպէս թէ ասէր. աղաչեմ ըզքեզ տէր, խրատեա՛ զիս աստ, և յանդիմանեա՛ զիս 'ի կեանս յայս, և մի 'ի հանդերձելումն. զի անդ խրատելն է սաստիկ, իսկ յանդիմանելն է անբերելի և անվերջ. Որով միանգամայն և խնդրէ յայ՟՝ զի եթէ կամիցի աստ խրատել և յանդիմանել, մի բարկութեամբ արասցէ զայս և մի սրտմտութե՟. զի այսպիսի օրինակաւ խրատելն և յանդիմանելն՝ ոչ այնչափ յօգուտ կարգի՝ որչափ 'ի մերժումն. (որպէս ասացեալ է մեր 'ի սաղ. Զ. 1. տես անդ։)

Իսկ պատճառ այսպիսի օրինակաւ խօսելոյ մարգարէին այն է՝ զի պաշարեալ էր յերկիւղ մեծ. զարհուրեալ էր յերեսաց բարկութեանն այ՟ և սրտմտութե՟ նորա. վասն զի դեռ տեսանէր զնշան բարկութեան նորա 'ի վերայ իւր. ըստ որում յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով ։

Բ. Զի նետք քո հարան յիս, և յիս հաստատեցաւ ձեռն քո ։

Բարկութիւնն այ՟ օրինակի յաղեղն. (որպէս ունիմք ասել 'ի սաղ. ԾԷ. 8.) Իսկ գործք բարկութեան նորա կամ պատիժքն, զորս տայ ած՟ 'ի բարկանալն՝ օրինակին 'ի նետս. զի որպէս նետք յաղեղանց արձակին, սոյնպէս և պատիժք 'ի բարկութե՟. Այլ գիտելի է՝ զի ոչ ամենայն նետք կամ պատիժք՝ զորս առաքէ ած՟, են գործք բարկութե՟ նորա. այլ երբեմն գործք սիրոյ առ 'ի ձգել յինքն զայն՝ յոր արձակէ. և երբեմն գործք յատուկ խնամոց առ 'ի ցոյց հաւատարմութե՟ այնր՝ զոր հարկանէ. որպէս եղև ընդ յոբ, որ ասէր.

*՚Նետք տեառն 'ի մարմնի իմում են‖. (յոբ. Զ. 4։) Ուր ասէ վանական վարդապետս. * յոբ և դաւիթ զմի ,, օրինակ ասեն զհարուածսն, զոր թոյլ տալով այ՟ էած ,, 'ի վերայ նոցա թշնամին սատանայ. նետք քո հա- ,, րան յիս (ասաց դաւիթ). սա ասէ, նետք տն՟ 'ի մարմնի իմում են‖։

Բայց այսու ամենայնիւ այն նետք գոլով իբր պատիժ՝ համարին և են գործք բարկութեանն այ՟։ Ուստի և նա ինքն յոբ՝ որ ասաց * նետք տեառն 'ի մար- ,, մնի իմում են‖, անմիջապէս յաւել ասել զկնի. * և ,, սրտմտութիւն նոցա ծծէ զարիւն իմ‖. որով ցուցանէ՝ թէ այն նետք ևս էին գործք սրտմտութեան կամ բարկութեանն այ՟։

Այս արդ քանզի այլևայլ նետք՝ այսինքն պատիժք արձակեցան 'ի վերայ դաւթի յետ մեղանչելոյ նորա. զորս և թուեալ եմք ('ի սաղ. Է. 10։ և 'ի սաղ. ԼԱ. 4։) յայտնապէս նետս հայելով յոգնակի խօսի աստ, և ասէ։

Զի նետք քո հարան յիս։ Կամի ասել. բազմապատիկ նեղութիւնք և փորձութիւնք եկին և հասին 'ի վերայ իմ առ 'ի պատիժ մեղաց իմոց։ Այս զի 'ի բարկութենէ քումմէ ասէ արձակեցան նոքին, վասն որոյ և ուժգին հասին, որով և հարան յիս. այսինքն մխեցան յիս. որ է ասել. մինչև 'ի ներքս թափանցելով տանջեցին զիս այն նեղութիւնք։ Որ ինչ միայն ասէ մխիթարէր զիս, զի քո էին այն նետք, և ոչ օտարի։

Այսոքիկ նետք կամ հարուածք թէպէտև 'ի բարկութենէն այ՟ եկին 'ի վերայ դաւթի, բայց ոչ բարկութեամբ. կամ թէպէտև բարկութեամբ արձակեցան, բայց ոչ բարկութբ՟ հարին. վասն զի արդէն քաւեալ էր այ՟ զմեղս դաւթի. և ըստ մեզ խօսելով՝ զիջեալ էր բարկութիւնն այ՟. և սակայն նետքն արձակեալք 'ի բարկութենէ նորա ոչ էին յետս նահանջեալ։ Ուստի ած՟՝ որ 'ի բարկութենէ իւրմէ արձակեալ էր զպատիժս 'ի վերայ դաւթի, ոչ բարկութբ՟, այլ ողորմութեամբ իւրով հարկանէր զնա 'ի ձեռն այնց պատժոց. Այս այն միայն էր՝ որ մխիթարէր զդաւիթ. որով և 'ի կրել նորա զպատիժս՝ զանձն այնց պատժոց արժանի համարելով՝ համբերութեամբ և սիրով տանէր. զայս ևեթ խնդրէր․ զի մի՛ և բարկութեամբ հարուածեսցէ զինքն։

Իսկ թէպէտ լամբրոնացին և այլք ոմանք դնեն բարկութեամբ լինել, բայց յընդարձակ միտս առնուն, փոխանակ ասելոյ՝ 'ի բարկութենէ․ կամ՝ դուցէ ըստ հատանելոյն, այլ ոչ ըստ հարկանելոյն․ իբր զի հարուածին դաւթի եհաս բարկութի̃, և եհար առանց բարկութեան։ Իսկ այս զանազանութիւն առեալ լինի 'ի հանգամանաց, և 'ի վախճանէ հարկանելոյն․ իբր զի եթէ այն հարուած իցէ առ 'ի յօգուտ՝ ասի լինել 'ի բարկութենէ, բայց ոչ բարկութեամբ․ ապա թէ ոչ՝ այն լինէր գործ ատելութե̃։ Իսկ եթէ իցէ առ 'ի վնաս հոգւոյ կամ առ 'ի կորուստ, պարզապէս ասի լինել բարկութեամբ։ Արդ եթէ և նեղահարիլն դաւթի իմացի ըստ վնասելոյ նորա հոգւոյն 'ի մեղանչել իւր, ասի բարկութեամբ նեղահարիլ։ Բայց մեր բանիւն ոչ հայի յայս, զի նա խօսի առ զգաստացն, զորս կրեաց՝ յետ վերստին ընդունելոյ զշնորհս, և հաշտելոյ ընդ ա̃յ։

Ա՛րթ է աստանօր այսորիկ նետիւք իմանալ և ըղձայրատուր նետս բանից, զորս արձակեաց ա̃ծ 'ի վերայ դաւթի ձեռամբ նաթանայ յասել նորա առ նա․ * ընդէ՞ր անարգեցեր զբան տեառն՝ առնել չար առաջի „ աչաց նորա․․․ և արդ մի՛ հեռասցի սուր 'ի տանէ „ քումմէ մինչև ցյաւիտեան, փոխանակ զի անարգե- „ ցեր զիս․․․ այսպէս ասէ տէր․ ահա ես յարուցից „ 'ի վերայ քո չարիս 'ի տանէ քումմէ․․ և այլն․ (Բ̃․ Թագ․ Ժ̃Բ․ 9 = 13․) Այսոքիկ նետք բանից տեառն հարան 'ի դաւիթ․ և պատառեցին զսիրտ նորա յոյժ և 'ի լաց․ և որ մեծն է, նա ինքն ա̃ծ՝ զներգործութիւն այսոցիկ նետից, նոյնպէս և զնետից պատժոցն գրեթէ ձեռամբ իւրով մխեաց յանձն դաւթի․ յաղագս յաւելու ասել․

Եւ յիս հաստատեցաւ ձեռն քո։ Այս բան է իբր արտաձայն նախակարգեալ բանիցն․ որպէս թէ ասէր․ վասն այնորիկ նետք քո սաստկապէս թափանցեցին յիս, զի ամենազօր ձեռն քոյ մխեաց յիս ուժգին զնետսն զայնոսիկ․ և իբր թէ վարեաց յիս․

Իսկ ձեռն ասել ա̃յ՝ չորեքկին իմացեալ լինի 'ի սուրբ

գիրս. մի՝ փոխանակ բարկութե՛ն նորա. և այս՝ յանձախակի. ըստ այնմ * ո՛չ դարձաւ սրտմտութիւն նորա.
,, այլ տակաւին ձեռն իւր բարձրացեալ է‖. (Եսայ. ե. 25. սոյնպէս է՝ և ժթ. 16. և Եզեկ. գ. 14, և սաղ. խգ. 3. ծգ. 21. հգ. 3. ճե. 26. և այլն.) Եւ ըստ այսմ երբեմն նաև գործ բարկութեանն այ կոչի ձեռն. ըստ այնմ. * 'ի վերայ նեղչաց նորա արկեալ
,, էր զձեռն իմ‖. (սաղ. ձ. 14.) Երբեմն և այն ինչ՝ որ երևի լինել գործ բարկութեանն այ՝ Թէպէտև չիցէ. յոր մինս առի 'ի գիրս յոլովս. (բ. 5.) * Աղէ
,, առաքեա՛ զձեռն քո և արկ զոսկերօք նորա‖. Սոյնպէս և վրէժխնդրութիւն այ կոչի ձեռն. ըստ այնմ.
* ընկալաւ 'ի ձեռանէ տեառն կրկին զհատուցումն մե-
,, ղաց իւրոց‖. (Եսայ. խ. 2. ըստ այսմ է՝ և ե. 26. ժզ. 27. և սաղ. ի. 9. ևն.)

Երկրորդ՝ փոխանակ նախախնամութեան այ. կամ կառավարութեան նորա 'ի հասարակի. ըստ այնմ. * եթէ
,, զբարիս ընկալաք 'ի ձեռանէ տեառն, չարեացս ո՞չ
,, համբերիցեմք‖. (յոբ. բ. 10. ըստ այսմ է՝ և ե. 18. և իմաստ. է. 16. եսայ. խթ. 16. կե. 2. սաղ. լ. 16. ղդ. 4. ճգ. 28. ճժը. 109. ճլը. 5. 10. ճխդ. 16. ևն.)

Երրորդ փոխանակ մասնաւոր օգնութեանն այ կամ ձեռնտուութեան նորա. ըստ այնմ. * ձեռն ետու նո-
,, ցա և ասեմ. ես եմ տէր ած ձեր‖. (եզեկ. ի. 5. ըստ այսմ է՝ և եսայ. կզ. 14. սաղ. լը. 12. ձէ. 6. ձը. 21.) Սոյնպէս և պաշտպանութիւնն այ կոչի ձեռն. ըստ այնմ. * Առաքեա՛ զձեռն քո 'ի բարձանց,
,, և փրկեա՛ զիս‖. (սաղ. ճխգ. 7. ըստ այսմ է՝ և հգ. 11. ճժը. 173. եսայ. ժա. և յայլ բազում տեղիս.)

Չորրորդ՝ յաճախագոյն ևս փոխանակ ամենակարողութեանն այ, կամ ամենակալ կարողութե՛ և ինքնիշխանութեան նորա. ըստ այնմ. * զի ո՛չ չքաւորէ ամե-
,, նազօր ձեռն քո‖. (իմաստ. ժա. 18. ըստ այսմ է՝ և եսայ. խե. 15. կզ. 2. սաղ. ղդ. 5. ճա. 26. ևն.) Սոյնպէս և զօրութիւնն այ յիշի բազում ուրեք բառիւս ձեռն. ըստ այնմ. * արի տէր ած իմ. բարձր
,, եղիցի ձեռն քո‖. (սաղ. ժ. 12. ըստ այսմ է՝

հէ. 42։ ձը. 14։ ճլէ. 7։ երեմ. ժզ. 21։ եզեկ. ա. 3։ և յայլ բազում տեղիս։)

Ըստ այսոցիկ չորից նշանակութեանցս՝ այս ոճ՝ այսինքն է՝ հաստատել կամ հասանել ձեռին տեառն 'ի մարդ, կամ հպել և կամ մխել՝ պէսպէս օրինակաւ կարէ իմանիլ. երբեմն իբր ձեռն վրէժխնդիր դատաւորի, կամ իբր սոսկապէս վրէժ խնդրողի, յորժամ պատուհասէ զմարդ առ 'ի վնաս կամ առ 'ի յօգուտ, որպէս ասացաք 'ի վերոյ. առ 'ի վնաս՝ յորժամ հարուածէ 'ի բարկութենէ, միանգամայն և բարկութեամբ. առ 'ի յօգուտ՝ յորժամ հարուածէ 'ի բարկութենէ՝ բայց առանց բարկութե̃։ Երբեմն իբր ձեռն բժշկի. յորժամ դեղ դառնութեան մատուցանելով առողջացուցանէ և կեցուցանէ զհոգին։ Երբեմն իբր ձեռն վիրահատի՝ յորժամ ճմլելով զվէրս հոգւոյն՝ կամ հատանելով զփտութիւնն ներքին՝ բուժէ զկարողութիւն հոգւոյն։ Երբեմն իբր ձեռն արհեստաւորի, յորժամ կամի՝ առաքինի ձևացուցանել զմարդն՝ որպէս թէ իբրև զմոմ ճմլելով զնա. կամ յորժամ կամի կերպարանել զնա իբրև զպատուական իմն. որպէս թէ իբրև զոսկի հանելով, կամ իբրև զարծաթ խառնելով, կամ իբրև զքար կոփելով, կամ իբրև զփայտ տաշելով։ Երբեմն իբր ձեռն զննողի 'ի փորձել, յորժամ իւիք բաղխէ զմարդ 'ի ցուցանել զհաւատարմութիւն նորա, կամ զանհաւատարիմն լինել. զօրօրինակ առնէ բրուտն 'ի բաղխել զանօթն ձեռօք, 'ի ցուցանել 'ի ձայնէն զամբողջութիւն նորուն։ Երբեմն իբր ձեռն զարթուցչի. յորժամ շարժէ զխիղճ մտացն 'ի զարթնուլ և 'ի զգաստանալ։ Երբեմն իբր ձեռն հաստչի՝ յորժամ իբր արարիչ պահէ զմարդն 'ի գոլ և 'ի գործել յընդհանրական նախախնամութե̃ իւրում։ Երբեմն իբր ձեռն ինքնիշխան տեառն, յորժամ վարէ զմարդն ըստ հաճոյս իւր յայս գործ կամ յայն. կամ ընդ հակառակն՝ յորժամ առանց մերժելոյ զոք հարկանէ զնա։ Երբեմն իբր ձեռն հօր. յորժամ ցուցանէ մարդոյ զգութ իւր։ Երբեմն՝ իբր ձեռն պաշտպանողի, յորժամ ազատէ զմարդ կամ հանէ 'ի վտանգից, և կամ փրկէ յո՛ և իցէ վնասուց. կամ յորժամ վանէ զարգելս, և խափանէ զուժգնութիւն փորձութեանց և այլոց այսպիսեաց ։ Երբեմն իբր ձեռն խնամակալի կամ մնուցչի, յորժամ խնամէ զպիտոյս մարդոյ ըստ հոգւոյ կամ ըստ մարմնոյ ։ Երբեմն իբր ձեռն ուսուցչի կամ վարդապետի՝ յորժամ գրեթէ մատամբ ցուցանելով ուսուցանէ մարդոյ զուղիղն, և օրէնսդէտ առնէ զնա ։ Երբեմն իբր ձեռն առաջնորդի՝ յորժամ ուղղէ զընթացս մարդոյ և որպէս թէ ձեռամբ կալեալ առաջնորդէ նմա ըստ գերբնական կենաց ։ Երբեմն իբր ձեռն դաստիարակի՝ յորժամ ազդ առնէ մարդոյ՝ առնել զոր արժան է. և խորշիլ՝ յորոց պարտ է. և զայս կամ արտաքուստ յորդորելով, և կամ 'ի ներքուստ զմիտսն լուսաւորելով, և զկամսն շարժելով ։ Երբեմն իբր ձեռն բարեկամի՝ յորժամ պահէ զմարդն 'ի շնորհս իւր և 'ի բարեկամութեան ։ Երբեմն իբր ձեռն փեսայի, յորժամ սփոփէ զհոգի մարդոյ, և լնու զնա բարեօք ։

Զայս ամենայն ետես դաւիթ յայլ ժամանակս, բայց զոր աստ յիշէ՝ է առաջինն. այսինքն հարուածիլ իւր յ͞այ իբր 'ի վրէժխնդիր դատաւորէ բարկացելոյ, բայց ոչ բարկութեամբ հարկանողի. վասն որոյ և ոչ ասէ, մերժեաց զիս ձեռն քո. այլ հաստատեցաւ յիս ձեռն քո. զոր այլուր ծանրանալ կոչեաց ('ի սաղ. լ͞ա. 4.) յասելն. * ծանրացաւ ձեռն քո 'ի վերայ իմ ‖. (տես զոր ասացաք անդ ։)

Յայս բան զօրութեամբ իմն խնդրէ մարգարէն, զի դադարեսցի ա͞ծ 'ի յարձակելոյ զնետս իւր, և այս՝ ըստ նմանութեան աղեղնաւորի, որ 'ի կամիլն հարկանել զոք աղեղամբ՝ 'ի հասանել նետին յայն զոր դիտէ խոցել՝ ամփոփէ զձեռն իւր 'ի յարձակելոյ զայլ նետս. զի եղև զոր դիտէր (եգեալ թէ չիցէ յայլ կամս ։) Ըստ սմին հանգստութեան մտածեալ աղաչէ մարգարէն զա͞ծ. աւասիկ ասէ հասին և հարան յիս նետք քո՝ զորս արձակեցեր առ իս. բաւական է տէր. ամփոփեա՛ այսուհետև զձեռն քո, և հանգիր յաշխատելոյ 'ի լարել զաղեղն բարկութե͞ն ։

Բանք այսր համարոյ տիրապէս ասացեալ լինին և 'ի դիմաց մարդկայնոյ բնութեան, որ հարաւ այսինքն պատուհասեցաւ 'ի բարկութենէ ա͞յ. և պատշաճագոյն ևս առին 'ի բերանոյն ք͞ի. որ երաշխաւոր եղև վասն մեր. և հարաւ 'ի բարկութ՟է հօրն վասն մեղաց մերոց. զի յարձակել հօրն երկնաւորի զնետ բարկութ՟ե իւրոյ 'ի վերայ մեր, նա ինքն որդի առաջի եդ զանձն. ետես հայր, և ոչ խնայեաց. այլ ասէ, * Հարից զհովիւն ‖. (զաք. ժգ. 7.) ասաց, և եհար ուժգին. որով և հաստատեցաւ ձեռն իւր 'ի նա։

Բարոյապէս, այս հարկանիլս կարէ իմացեալ լինել 'ի վերայ խոցոտման հոգւոյն 'ի դիւաց. և յայս միտս նետիւք իմանայ աստ լամբրոնացին զդեւս, * որք խոցոտեն ասէ զներքին մարդս ‖։

Իսկ 'ի հասարակի խօսելով՝ մարթ է աստ նետիւք իմանալ զո՟ և իցէ ա՟ծային բանս և զապառնալիս, ևս և զպէսպէս հարուածս, զորս արձակէ ա՟ծ 'ի վերայ մեղաւորաց իբրև զնետս, երբեմն բարկութեամբ՝ 'ի մերժել զնոսա, կամ 'ի կորուսանել. և երբեմն 'ի բարկութ՟է, բայց գթութեամբ առ 'ի որսալ զնոսա, և 'ի ձգել առ ինքն, կամ առ 'ի մաքրել զբիծ մեղացն։ Որպէս և հարուածով ձեռին ա՟յ մարթ է իմանալ զհարկանելն ա՟յ զսիրտ մեղաւորի երբեմն բարկութ՟բ 'ի խստացուցանելն. և երբեմն 'ի բարկութ՟է՝ բայց խնայութ՟բ, 'ի զգաստացուցանելն, կամ 'ի քաւել զպատիժ մեղացն. երբեմն ևս այլով օրինակաւ ըստ նախակարգեալ բանիցդ։ Այլ թէ 'ի յարձակիլ այսպիսի նետից 'ի բարկութ՟էն ա՟յ՝ զինչ ներգործի 'ի մարդն՝ յայտ առնէ մարգարէն յանձն իւր նկարելով. և նախ զոր միանգամ զգաց յինքեան 'ի յարձակմանէ նետիցն, աստէն առաջի տարածանէ, և ասէ։

Դ. Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քոյ։

Ե. Ո՛չ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։

Ողջութիւն մարմնոյ է 'ի համաձայնութ՟է զօրութ՟եց ներքին հիւթոցն. ըստ այլայլիլ այսր համաձայնութ՟ե հասանէ հիւանդութիւն կամ նիհարութ՟ի, և երբեմն նաև վէրք. առ որոյ բժշկութիւն պիտոյ է ստանալ դարձեալ զայն համաձայնութ՟ի. ըստ սմին է իմանալ և զբժշկութ՟է հոգւոյն։

Արդ տեսեալ Դաւթի զհարուածիլ իւր 'ի վրէժխնդրութենէն ա՟յ, այնպիսի տագնապ պաշարեաց զոգի նորա, մինչև զգածել նաև զմարմինն, և ամբոխել ըղխառնուած չորից հիւթոցն՝ որ 'ի մարմնի, և նիհարացուցանել զնա, և գրեթէ հիւանդացուցանել։ Զի 'ի յիշել նորա՝ թէ զայնչափ և զայնպիսի բարերար իւր զարթոյց 'ի սրտմտութիւն 'ի վերայ ինքեան. և թէ մեղք իւր 'ի ներքոյ արկին զինքն այնպիսի բարկութեան, շուարէր 'ի միտս, և սարսափէր յանձն իւր, և ոչ կարէր հանգչիլ։ Իսկ զայս կամելով առաւելութեամբ իմն յայտնել՝ 'ի ձև չափազանցութե՟ առաջի դնէ զբան իւր և ասէ։

Ո՛չ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան քո։ Ասովին ոչ ցուցանէ թէ անկեալ կայր 'ի ծանր հիւանդութիւն անբժշկելի որպէս թուեցաւ ոմանց. այլ զվտանգիլ մարմնոյն 'ի ներքոյ և արտաքոյ։ Ըստ ներքնոյն առեալ՝ կամի ասել. տեսանելով զբարկութիւն քո 'ի վերայ իմ հալիմ և մաշիմ, ոչ միայն 'ի հոգւոս, այլև 'ի մարմինս իմ. և այնչափ նուաղիմ, մինչև ոչ ևս տեսանել յիս զբժշկութիւն, կամ ոչ ևս յուսալ թէ գուցէ ինձ ճար բժշկութե՟, բայց եթէ դադարեսցի բարկութի՟ քո։ Ըստ արտաքնոյն առեալ՝ կամի ասել. 'ի հարուածել զիս նետից բարկութե՟ քո, անկայ 'ի ծանր ծանր փորձանս և 'ի մեծամեծ վտանգս, յանհնարին զրկանս և 'ի չարաչար տուգանս, 'ի նախատինս և 'ի թշնամանս. և ոչ գոյ ուստեք ինձ բժշկութիւն՝ այսինքն ազատութիւն։

Համառօտիւ ևս կարէ մեկնիլ այս բան այսպէս. ամենայն մասունք մարմնոյ իմոյ՝ ներքինք և արտաքինք սարսափեալ են և 'ի տագնապի կան, և ոչ գոյ մասն՝ որ իցէ առողջ, այսինքն որ իցէ ըստ առաջնումն որպիսութեան զօրաւոր և զուարթացեալ. և այս յերեսաց բարկութեան քո. այսինքն վասն բարկանալոյ քո ընդ իս. կամ վասն տեսանելոյ իմ զքեզ բարկացեալ 'ի վերայ իմ։

Լամբռնացեալն մարմնով իմանայ աստ զստորին մասն բանականութեան, կամ զզգայական մասն, որ ապականեալ մեղօք, և անկեալ ընդ բարկութեամբն ա՟յ՝ դժուարաւ գտանէ բժշկութիւն։

Մա՛րթ է եւ ասել՝ թէ աստանօր բառդ մէջքն՝ որ է անուն մասին, դնի փոխանակ բոլորին, այսինքն փոխանակ բոլոր անձին, եւ ըստ այսմ դիւրանայ մեկնութիւն այսր բանի. զի կամի ասել, թէ յերեսաց բարկութեան քո ըստ ամենայնի ահարեկեալ եւ նուաղեալ եմ, եւ չիք յիս կատարեալ առողջութիւն, կամ ըստ եբրայականին՝ Մթօմ, այս է ամբողջութիւն. այսինքն ամբողջ եւ անթերի առողջութիւն։ Եւ զայս կամելով առաւել եւս հաստատել յարէ զկնի, եւ ասէ.

Դ. Ո՛չ գոյ խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց։

Ոսկերօք իմացեալ լինելն աստ նախ ըստ ձայնին բուն ոսկերքն, յորս հաստատութիւն ունի կազմուած մարմնոյն. իսկ բարձումն խաղաղութեան ոսկերաց է խռովիլ նոցա. եւ այս թէպէտ բազում օրինակաւ կարէ պատահիլ, որպէս խախտելով, փտելով, եւ այլն, բայց թուի թէ աստ դնի փոխանակ նուաղելոյ նոցա կամ փոխանակ տկարանալոյ եւ դողդոջալոյ. եւ ըստ այսմ յասելն. * ոչ գոյ խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց ‖. կամի ասել. 'ի բազում տրտմութեանց եւ ցաւոց՝ զոր ունիմ 'ի վերայ սարսափելի մեծութեան մեղաց իմոց՝ նաեւ ոսկերք իմ խռովեցան, եւ առողջ գոյն նոցա բարձաւ. որով դիւրէ յայտ առնել մարգարէն զառաւելութիւն տրտմութեան եւ ցաւոց իւրոց, եւ զմեծութիւն երկիւղին, յոր ըմբռնեալ էր։ Երկրորդ՝ ոսկերօք իմացեալ լինելն աստ փոխաբերաբար ներքին ներգործական զօրութիւնք բոլոր մարդոյ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ. վասն զի որպէս ոսկերօք հաստատի մարմինն 'ի գործել, սոյնպէս եւ ներքին զօրութեամբք բոլոր մարդն։ Արդ այս զօրութիւնք իմ եւս ասէ պակասեցան 'ի խաղաղութենէ յերեսաց մեղաց իմոց, այսինքն վասն չարութեան մեղաց իմոց. եւ այս բազում օրինակաւ. մի՝ կորուսանելով զուժգնութիւն իւրեանց. երկրորդ՝ տկարանալով 'ի գործս բարիս. երրորդ՝ թախծութեամբ եւ տրտմութեամբ զգածելով. չորրորդ՝ անկարգանալով 'ի մէջ իւրեանց. հինգերորդ՝ բաժանելով յիրերաց եւ յառնելով ընդդէմ միմեանց։ Ոսկր շարժեալ 'ի տեղւոջէ իւրմէ՝ պատճառէ զցաւ սաստիկ. քանի եւս կարողութիւնք հոգւոյն 'ի բաժանիլն 'ի միմեանց, և 'ի յառնելն ընդդէմ հրամանի բարձրելոյն. * ո՞ խստացաւ ընդդէմ նորա, և հանդարտեաց‖. (յոբ. Թ. 4։) ուստի և գրեալ է թէ * ո՛չ ունին հանգիստ՝ որք երկիրպագեն գազանին . . . ,, և որք երկիրպագեն պատկերին‖. (յայտ. ԺԴ. 11։) Ամբռնացին 'ի վերայ երից զօրութեանց հոգւոյն մինչև զայս բան, այսինքն բանականին, ցասմնականին և ցանկականին, որք են 'ի բնութեանս մերում. սոքա ասէ խռովեցան մեղօքն ադամայ, և կորուսին զխաղաղական գոլ իւրեանց. և տկարացան յինքեանս և 'ի գործս իւրեանց, որպէս և էառ մարգարէն զկրկին փոքր սորա։

Բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա̃.) ոսկերօք իմանայ և զառաքինութիւնս հոգւոյն. և զայսոսիկ զերկոսին համարս 'ի դէմս մարդկային բնութեան վերածելով՝ գրէ այսպէս. * մարդն որքան 'ի պատուի ,, բանապահութեանն էր՝ յոյժ առոյգ էր և գեղեցիկ. և յորժամ արհամարհեաց զպատուիրանն, և ,, յարեցաւ 'ի սատանայ՝ վիրաւորեալ եղև յոտից մինչև ցգլուխ անբժշկելի վիրօք. ըստ այնմ թէ թարախեցան վէրք քո, և չգոյ բժշկութիւն. և թէ ոչ ,, գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց մեղաց իմոց. ,, ուստի ոչ է խաղաղութիւն ոսկերացս այսինքն առաքինութեանց հոգւոյս յերեսաց բարկութեան քո‖։

Ցամաքին ոսկերք որպէս խոտն յերեսաց բարկութե̃ն ա̃յ, սոյնպէս և նորոգին 'ի շնչելոյ շնորհաց նորա, և կենդանանան. որպէս ետես եզեկիել մարգարէ. (եզեկ. ԼԷ. 10։) Եւ սակայն 'ի յիշատակութենէ գործոցն դողան ևս, և դողդոջան. իբր զի թէպէտև ապաշխարութ̃բ քաւին և նորոգին, բայց 'ի յիշելն անդ զոր գործեցին՝ դողութ̃բ ի̃ն զգածին. և հոգին հայելով յեղեալսն՝ պատկառի. որպէս որ յուցեալ իցէ անարգանս առ բարեկամ իւր՝ 'ի հաշտիլն ընդ նմա՝ յորժամ յիշէ զոր արար ընդդէմ նորա՝ խռովի և տրտմի՝ թէ ընդէ՞ր արար. և 'ի վարիլն ընդ նմա և 'ի խօսիլն՝ ընդ հայել յերեսս նորա՝ ամն ածէ 'ի նմանէ. * զի երես յերեսաց պատկառի‖. ըստ սմին և որ մեղանչէ առ ա̃ծ, 'ի հաշտիլն ընդ նմա տակաւին ամաչէ, և զօրութիւնք հոգւոյ նորա խռովին։

Այս է աՀա պտուղ չարութեան մեղացն. որ քաղցրութեամբ ճաշակեալ լինի, և դառնութիւն ծնանի։ Կրկէ (կամ չիւչէ) ասացեալ օշարակն թէ և ոսկեղէն բաժակաւ մատուցի և խառն քաղցր հիւթով արբցի, լինի թոյն մահաբեր. և եթէ հնար լիցի դեղով թափել զզօրութիւն նորա, արդարև ըմպօղն ազատի 'ի մահուանէ, բայց տկարանայ յոսկերսն և դողդոջէ։ Այնպէս և մեղք իբր ոսկեղէն բաժակաւ քաղցր ըմպին. բայց զոյն ներգործեն 'ի հոգին։

Արժան է աստ հայիլ և յայն, զի մարգարէն 'ի յիշելն 'ի վերոյ զբժշկութիւն անձին' եդ * յերեսաց բարկութեան քո‖. իսկ 'ի յիշելն աստ զխաղաղութի ոսկերացն' դնէ * յերեսաց մեղաց իմոց‖. զի հայելով յերեսս բարկութեն ոչ 'ի բարկութե անդ' անբժշկելի տեսանէր զինքն, և պատկառէր. իսկ հայելով յերեսս մեղաց իւրոց' անխաղաղելի տեսանէր զոսկերսն իւր, և խռովէր. և յառաւելուլ տխրութե սրտի գրեթէ յուսահատ լինէր' զի ընկղմեալ տեսանէր զինքն յանօրէնութեց, և ընկճեալ 'ի ծանրութէ նոցին. և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարին ասելով։

Ե. Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։

Ի յաճախել բազմութեան նիւթոյ' որպէս փայտից և քարանց 'ի վերայ ուրուք, յայտ է թէ բարձրանան զնովաւ, ևս և զգլխով նր. և յառաւելուլն անդ' ծանրանան յոյժ, մինչև սպառ ճնշել զնա. այնպէս է տեսանել և 'ի յաճախութե մեղաց 'ի դիզել նոցա 'ի վերայ մարդոյ։ Զայլ իմն բերից օրինակ առաջի. իբր զի տեսանեմք' զի 'ի յորդել հեղեղաց' պատահի երբեմն' զի այնչափ բարձրանան ջուրք գետոց, մինչև ծածկել զթուփս, ևս և զծառս եղեալս առ եզերբ գետոյն, և անցանել իսկ զգլխովք նոցա. և եթէ լինիցին ջուրք աւազով' որպէս է 'ի բազում ջուրս' յորս է յաճախութի աւազոյ, 'ի մնալն երկար' ծանրանան 'ի վերայ նոցա' զոր ծածկեն։ Այնպէս և յառատանալ այսինքն 'ի բազմանալ և 'ի յաճախել մեղաց և անօրէնութեանց' ծածկեն զամենայն զոր ինչ և դառնեն 'ի հոգին' նաև զանձնիշխանական զօրութիւնն' որ է իբր գլուխ 'ի գոյն բանական, և զխիղճ մտացն որ ըստ լամբռնացւոյն է իբր գլուխ 'ի գործնական կենսս ։ Եւ եթէ անօրէնութիւնքն իցեն ծանր կամ մեծ, իսպառ նուաճեն զհոգին ։ Եւ արդ քանզի այն անօրէնութ՟իք՝ զորս գործեաց Դաւիթ յանցս ուրիայ և բերսաբեայ, եղեն բազում և մեծ. հայելով 'ի բազմութիւնն՝ դնէ բարձրանալ. իսկ հայելով 'ի մեծութիւնն՝ դնէ ծանրանալ. ուստի ասէ նախ ։

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ ։ Այսինքն անօրէնութիւնք իմ այնչափ բազմացան և կուտեցան յիս, մինչև բարձրանալ քան զգլուխ իմ. որ է ասել. բազում եղեն յոյժ, և անցին ըստ չափ, որով գրեթէ խեղդեցին զհոգի իմ, ևս և զանձնիշխանական մասն հոգւոյս, կամ ըստ եբրայականին զզօրութիւն իմ, այսինքն զզօրութ՟իս անձնիշխանութ՟ե հոգւոյս ըստ դատողութեան մտաց և ըստ ընտրութ՟ե կամաց, մինչև ոչ ևս կարել ինձ համբառնալ 'ի վեր զգլուխ ։

Եւ թէպէտ երկու ևեթ 'ի թիւ բերին անօրէնութ՟իք Դաւթի. այսինքն շնութ՟ի և մարդասպանութ՟ի, բայց յերկոսին յայդոսիկ բազում ցուցաւ յանցաւորութ՟ի նորա. զի հայելով յուրիա՝ այլ և այլ օրինակաւ անօրինեցաւ 'ի նա. մի՝ յափշտակելով զկին նորա ։ Երկրորդ՝ նենգելով նմա ։ Երրորդ՝ մատնելով զնա 'ի մահ. և այլն ։ Հայելով և 'ի բերսաբէէ՝ բազում եղև. մի՝ զի ոչ միայն մեղաւ մերձենալով 'ի նա, այլև մեղոյց զնա. երկրորդ՝ զի անհաւատարիմ կացոյց զնա առ այր իւր. երրորդ՝ զի շնացող եցոյց զնա առաջի բազմաց, և այլն ։ Հայելով և 'ի ժողովուրդն առաւել ևս բազում եղև. մի՝ զի գայթակղեցոյց զնոսա. երկրորդ՝ զի եղև նոցա օրինակ չար. երրորդ՝ զի եղև պատճառ՝ որոյ վասն գործեցան մեղք մեծամեծք 'ի բազումս. չորրորդ՝ զի վասն մեղաց նորա զհետ եկին ծանր ծանր չարիք 'ի նոսա ։

Այլ առաւել ևս բազմացոյց զանօրէնութիւնսն հայելով յա՟ծ. զորոյ զօրէնսն յայտնի առ ոտն եհար. և զայրացոյց այսինքն գրգռեաց զթշնամիս նորա 'ի հայհոյանս (բ՟. թագ. ժբ՟. 14։) Թող զայն՝ որով բազմապատիկ անօրինեցաւ նաև առ ինքն, կորստեամբ սրբարար շնորհաց, կորստեամբ գերապանծ հոգևոր պարգևաց, կորստեամբ անուան և պատուոյ. և այլն։ Վասն որոյ և իրաւամբ բազում համարելով զանօրէնութիւնս իւր՝ ասէ * բարձրացան քան զգլուխ իմ ‖։

Իսկ հայելով 'ի մեծութ̃ի նոցին ասէ։

Որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։ Այսինքն այնպէս մեծ եղեն անօրէնութիւնք իմ, մինչ զի որպէս զծանր բեռն յեցեալ 'ի վերայ իմ իբր 'ի վերայ անսուրբ անասնոյ ընկճեցին զիս. որ է ասել, յանհնարինս ճմլեցին՝ այսինքն ցաւեցուցին զիս, և 'ի դառն տխրութիւն խղճի մտաց ըմբռնեցին զհոգի իմ։

Այլ թէ զիարդ մեծ և ծանր եղեն մեղք դաւթի, 'ի պարագայից կամ 'ի հանգամանաց նոցին չափին, թող զթիւն՝ զորս եդաք. զի հայելով յուրիա չորեքկին ծանրացան այն մեղք. մի՝ զի անմեղ էր նա. երկրորդ զի հաւատարիմ էր. երրորդ՝ զի յայնժամ վասն նորա պատերազմէր. չորրորդ՝ զի 'ի զուր մատնեցաւ 'ի սաստկակողմն ճակատուն առ 'ի մեռանիլ։ Իսկ հայելով յա̃ծ՝ առաւել ևս ծանրացան մեղք նորա. զի բարերարութ̃իքն ա̃յ առաւել եղեն 'ի դաւիթ քան յայլս. վասն զի 'ի հովուութենէ վերացոյց զնա ա̃ծ, և արար միանգամայն թագաւոր և մարգարէ. և եհեղ 'ի նա զամենայն լիութիւն բարեաց ըստ մարմնաւորին և ըստ հոգևորին. մեծութ̃ի արտաքին բազում յոյժ. զօրութիւն ներքին սաստիկ. 'ի մարմնի գեղեցկութ̃ի. 'ի բազուկս ոյժ ահաւոր. 'ի հոգին գերազանց ընդարձակութիւն. 'ի միտս լուսաւորութ̃ի պայծառ, յայտնութիւն գաղտնեաց, և յափշտակութ̃ի խորհրդոց. իսկ 'ի կամս երկնային մխիթարութ̃իք, անպատմելի սփոփութ̃իք, և անճառելի զմայլողութիւնք, և այլ ևս բազմադիմի զեղմունք բարերարութ̃եց, զորս ոչ էր արարեալ ա̃ծ այլում ումեք յորդւոց ադամայ։

Արդ նա ընդդէմ այսր ամենայնի անհաւատարիմ գտանելով, և զայս ամենայն իբր անպիտան ինչ մերժելով՝ մեղաւ առ այսպիսի բարերար իւր. որով և յանհնարինս ծանրացան անօրէնութիւնք նորա. զորս թէպէտև նախ քան զազդ առնել նաթանայ զգայր, այլ զի զրկեալ էր 'ի լուսոյ շնորհաց, և ծածկեալ էր խիղճ մտաց նորա 'ի բարձրութ̃է անօրէնութ̃եցն, զմեծութիւն նոցա ոչ տեսանէր, վասն որոյ և չհամարէր լինչ զծանրութ̃ի նոցին։ Իսկ 'ի ծագել և 'ի հասանել 'ի նա լուսոյ շնորհաց՝ ետես և զարհուրեցաւ. և զգացեալ զծանրութիւն մեղացն՝ խոնարհեցաւ և նուաճեցաւ խոպառ, մինչև անկանիլ նմա 'ի վերայ գետնոյ, (որպէս գրի ը̃. Թագ. ժը̃. 16 = 20.) և ոչ համարձակիլ կանգնիլ և 'ի վեր նայիլ։

Այնպէս պատահի և այլոց մեղաւորաց, յորս թէպէտ և կան ոմանք որք առաւելուն մեղօք քան զդաւիթ, բայց ընկղմեալ և ծածկեալ 'ի նոցունց՝ մ̃իան թըմբրեալ. իսկ 'ի գալ շնորհաց տեսանեն զգարշութիւն մեղացն, և զգան զծանրութիւն նոցա. և 'ի ձանձրացմանէ աստի 'ի միտ առնուն, թէ քանի չար եղև ինքեանց յարելն 'ի մեղս։

Այս ծանրանալ բեռին անօրէնութեան հայի և 'ի յամելն 'ի մէջ մեղաց. զի որչափ յամէ ոք 'ի մեղս, այնչափ ծանրաբեռնի, եթէ խղճիւ, և եթէ ապերախտութեամբ, եթէ յանցաւորութ̃բ, և եթէ այլովք անկարգութ̃բք. և քանզի որպէս ասի՝ որքան երկար մնայ մարդ 'ի մեղս՝ այնքան հեռանայ յարդարութենէ և յ̃այ. և 'ի հեռանալն դժուարին լինի դառնալ. զի հեռաւորութիւն ճանապարհի դժուարութ̃ի մեծ տայ դարձի։ Նա զի և կամքն խստանայ. որով անօրէնութիւնն ծանրանայ, և ուղղութիւնն գրեթէ անկարանայ։ Ո՝րչ գաւազան դիւրաւ կրկնի յոր կողմն և կամիցիս. իսկ բլրան ընդդէմ դառնայ. և եթէ բռնաւ արասցես՝ գուցէ բեկանիցի. ըստ սմին ցորքան չէ հաստատեալ կամքն 'ի չարն՝ դիւրաւ կարէ ուղղել. իսկ եթէ յամելով յանօրէնութիւնս հաստատեսցի 'ի նմին՝ հակառակ զինի շնորհաց. և երբեմն յուսահատութեամբ բեկանի։ Եւ թէպէտ որ յամէ 'ի մեղս՝ յուսացուցանէ զինքն՝ յապայն ուղղել, բայց զանձն խաբէ։ Եթէ զթեթևդ ոչ կարես ուղղել, զիարդ ըզծանրն և զմեծն։ Եթէ զհիւանդն չկարես բժշկել, զիարդ կարես զմեռեալն յարուցանել։ Աստուծոյ միայն է այդ կարողութիւն։ Այսպիսի և յայսքան հանգամանս ծանրութեան մեղաց հայելով մարգարէն ասէ, անօրէնութիւնք իմ որպէս բեռն ծանր ծանրացան 'ի վերայ իմ։

Այսքիկ բանք ասին և 'ի դիմաց մարդկայինս բնութեան. զի հարեալ 'ի նետից բարկութեանն ա՟յ, և անբժշկելի մնացեալ, 'ի բազմանալ և 'ի ծանրանալ անօրէնութեանցն ոչ ևս կարաց բառնալ. վասն որոյ և խնդրէր զարարիչ իւր, զի ինքնին եկեալ բարձցէ զայնս ։

Աստանօր ոմանք բառիս անօրէնութիւնք՝ իմանան ըզպտուղս նոցին այսինքն զպատիժս կրելոց վասն անօրէնութեանց, յոր միտս կամի ասել. պատիժք իմ բազում եղեն յոյժ և ծանր վասն բազմութեան և ծանրութեան անօրէնութեանց իմոց ։ Յայս միտս երևի և բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա.) ըստ որոյ ասէ 'ի բերանոյ դաւթի * զանօրէնութիւնս (այսինքն զպատիժս անօրէնութեանց) բարձրացոյց քան ,, զգլուխ իմ. և որպէս ծանր բեռն ծանրացոյց 'ի վերայ իմ ‖ ։ Բայց միտ բանին թուի թէ հայի ոչ 'ի կրելն զպատիժս անօրէնութ՟էց, այլ որպէս դնէ և նարեկացին ('ի բանն է.) 'ի զգալն զբազմութիւն և զմեծութիւն նոցին. որոց 'ի չար ներգործութիւնան հայելով յարէ զկնի, և ասէ ։

Է. Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ ։

Վէրք վնասակարք՝ մանաւանդ որք 'ի ներքին մասունս մարդոյ իցեն՝ յորժամ անհոգութ՟բ անդարման մնան՝ թէպէտև առ ժամայն ոչ տայցեն ցաւ սաստիկ, բայց առ սակաւ սակաւ զայրանալով սկսանին խոտանալ և նեխիլ. որով և գնան 'ի փտութիւն, և ապականեն նաև զշրջակայ մասունս մարմնոյ ։ Այնպէս և վէրք հոգւոյն՝ յորժամ ապաշխարութ՟բ ոչ բժշկին, այլ մանաւանդ բազմօրեայ ժամանակաւ ախորժանօք մնեալ լինին, նեխին և փտին ։

Իսկ վէրք հոգւոյ ասելով իմանամք զչար արատն զայն կամ զգարշութիւնն որ պատճառի 'ի հոգին 'ի մեղաց վասն բաժանելոյ յա՟յ. զի զոր օրինակ 'ի բաժանիլ օդոյ 'ի լուսոյ՝ մնայ 'ի նմա խաւար, այսպէս և 'ի բաժանիլ հոգւոյն յա՟յ մնայ 'ի նմա այնպիսի ինչ՝ որ ասի արատ չար, կամ գարշութիւն կամ խաւար, և կամ մանաւանդ վէրք ։ Եւ կամ դարձեալ որպէս 'ի հատանիլ անդամոյ սրով վիրաւորի, այնպէս և 'ի բա-

ժանիլ հոգւոյն յւ̃յ մեղօք՝ վէրս ընդունի. և եթէ վէրստին ոչ միասցի ընդ նմա, մնայ 'ի նմա այն վէրք, և յոչ բժշկիլն սկսանի նեխիլ և փտիլ. յոր միտս ասէ Նարեկացին ('ի բանն ծ̃.) * Նեխեցան և փտեցան վէրք
,, իմ 'ի յանզգամս անբժշկութ̃ի‖. այսինքն վասն ոչ
բժշկելոյ անզգամս.

Իսկ նեխիլ վիրաց 'ի հոգին է տիրել չարութե̃ մեղաց 'ի հոգին, և խստայուցանել. որով և հոգին խստանայ յինքեան և ժանտանայ առ հոգևորս, գերի 'ի զգայութեանց և բերի յանկարգս. ըստ այսմ և փտիլ վիրաց հոգւոյն է ապականիլ հոգւոյն ոչ եղծմամբ յինքեան՝ այլ փտութեամբ կարողութեանցն, այսինքն մթութեամբ կամաց. մինչև չտալ տեղի խայթուածոյ խղճի մտաց, և լինել անյարմար առ գործս գերբնականս կենաց. Եւ զի այսպէս պատահեցաւ դաւթի՝ սմին իրի ասէ.

Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ. Սարգիս շնորհալի հայելով 'ի վիճակ մեռեալ հոգւոյ, և 'ի նոյն յարմարեալ զառաջիկայ բնաբանդ, գրէ ('ի մեկն. յակ. ա̃. 5. Ճառ դ̃.) այսպէս. * զոր օրի-
,, նակ մարմին մեռեալ 'ի ցաւոց՝ անգործ կայ մնայ,
,, դնի 'ի գերեզմանի, և անյայտի. նեխի փտի և ապա-
,, կանի, և որդունս ծնանի, այսպէս և հոգի մեռեալ
,, 'ի մեղաց անտի՝ 'ի մարմնումն եղեալ կայ իբրև
,, 'ի շիրմի, և դիակիր շրջի նա զօրէն անասնոյ, նե-
,, խեալ, փտեալ և ապականեալ, և զանազան որ-
,, դունս չարեաց ծնեալ... զայսոսիկ կրեալ դաւթի,
,, և 'ի զգայութիւն եկեալ 'ի մեղացն դառնութենէ
,, ասաց. Նեխեցան և փտեցան վէրք իմ յերեսաց
,, անզգամութե̃ իմոյ‖.

Իսկ բառդ **անզգամութիւն**՝ բազմօրինակ կարէ առեալ լինել. մի՝ փոխանակ այնպիսի անօրէնութե̃՝ որ գործի չարութեամբ և նենգութե̃. որպէս արար դաւիթ ընդ ուրիա. որոյ վասն ասաց ('ի սաղ. կ̃ը. 7.) * ա̃ծ
,, դու ծանեար զանզգամութի̃ իմ‖. Եւ որպէս երևի յայս միտս ոչ դնի աստ այս բառ. Երկրորդ՝ փոխանակ ստահակութեան. որպէս այն որ ասի 'ի գիրս յոբայ. (ը̃. 10.) թէ * ոչ ետ անզգամութիւն ա̃յ‖. որ է ասել՝ ոչ ստահակեցաւ առ ա̃ծ. Յայս միտս մեկնէ

ատ լանկրմնացին զայս բան. իբր թէ վասն ստահակութեան նեխեալ և փտեալ իւեն վէրք հոգւոյն. Մեր գէորգ վարդապետ. ('ի մեկն. եսայ.) առնու զայդ փոխանակ անհնազանդութե. * ամենայն չարեաց պատ-
,, ճառ անհնազանդութիւնն է (ասէ.) ըստ այնմ թէ
,, փտեցան վէրք իմ յերեսաց անզգամութեան իմոյ‖. այսինքն վասն անհնազանդութեանս. Երրորդ՝ փոխանակ յանդուգն համարձակութե՝ յոր միտս ասէր պօղոս. (բ̅. կոր. ժա̅. 1.) * լաւ էր եթէ ներէիք փոքր
,, մի և խնամ անզգամութենս‖. որպէս թէ ասէր, ներէիք համարձակութեանս՝ որ գուցէ երևիցի ձեզ անզգամութիւն, այսինքն յանդուգն համարձակութի. Յայս միտս մեկնեն ոմանք զայս բան. իբր թէ ասել. վասն յանդգնելոյ իմ 'ի մեղս փտեցան վէրք իմ. այլ այս արտաքոյ երևի դիտման այսր բանի. Չորրորդ՝ փոխանակ ժանտութեան. որպէս զնաբաղայ ասի. * Նաբաղ անուն նորա և անզգամութիւն նորա ընդ նմա‖. (ա̅. թագ. իե̅. 25.) Յայս միտս առնուն ոմանք ատ զանզգամութիւնն. իբր թէ ասել, վասն ժանտ դատնելոյ իմ առ ուրիշ՝ փտեցան վէրք իմ. բայց այս ևս ոչ համաձայնի մտաց բանին. Հինգերորդ՝ փոխանակ ո՛ր և իցէ չար գործոյ կամ փոխանակ զինչ և իցէ յանցանաց. յոր միտս ասէ սողոմոն զմեղաւորէ. * կո-
,, րեաւ վասն անզգամութե իւրոյ‖. այսինքն վասն յանցանաց իւրոց. (առակ. Ե̅. 23.) Յայս միտս մեկնեն բազումք զայս բան. որպէս թէ եղեալ էր. նեխեցան վէրք իմ վասն յանցանաց իմոց. կամ թէ ես ինքն նեխեցայ և փտեցայ 'ի չար ներգործութէ մեղաց. Յայս միտս թուի լինել և սարգիս շնորհալի ('ի մեկն. ա̅. պետ. գ̅. 22. ճառ Ը̅. յորդ.) 'ի խօսիլն զչարութենէ մեղաց. * զնորա չարահոտութիւնն (ասէ) ծանուցեալ
,, մեծն 'ի մարգարէս դաւիթ՝ ասէր ողբալով, նեխե-
,, ցան և փտեցան վէրք իմ‖. Վեցերորդ՝ փոխանակ անմտութե կամ յիմարութե. յոր միտս ասէ եզեկիել ցծեփօղս որմոյն. * անզգամութիւն է այդ, զի փլանե-
,, լոց է‖. (եզեկ. ժգ̅. 11.) Յայս միտս ասէ և ժողովօղն. * հայեցայ տեսանել զիմաստութիւն և զանզգա-
,, մութիւն. և տեսի թէ առաւելութի է իմաստութե
,, քան անմտութե‖. (ժող. բ̅. 12.) Յայս միտս մեկ-

նեն ամենք զայս բան, որպէս թէ ասել, վասն անմտութե՛ իմոյ վէրք իմ փտեցան. ըստ որում դնի յեբր″. և 'ի քաղդ″. և յասոր″: Եօթներորդ՝ փոխանակ ապախտ առնելոյ կամ կամովին չզգալոյ զայս ինչ կամ զայն. որպէս որ կամօք ոչ զգայ զբարին կամ զչարն. և վասն չզգալոյն հեռացեալ լինի չար ինչ, և խանգարումն գործոց, կամ եղծումն վարուց և այլն. յոր միտս ասէ իմաստունն. * անզգամութի՛ առն ապականէ զճանա- ,, պարհս նորա ||. (առակ. ժԹ. 3.) որպէս թէ ասէր, յորժամ մարդ կամովին ոչ զգայ՝ զոր պարտի զգալ, և ըստ զգալոյն գործել, այն չզգալ նորա եղծանէ զգործս նորա, և թիւրէ զվարս:

Արդ թուի թէ մարգարէն ըստ այսմ նշանակութե՛ առնու աստ զբառդ անզգամութիւն, այսինքն փոխանակ կամաւորապէս չզգալոյ. և կամի ասել. 'ի կալ իմում այնչափ ժամանակ 'ի մեղս, թէպէտև հարկանէր զիս խիղճ մտաց իմոց՝ թէ չար է զոր առնես, բայց ես անզգամանայի. այսինքն հաճեալ գոլով ընդ մեղսն՝ կամաւորապէս անզգայ լինէի, կամ չարաչար հաճութեամբս ոչ կամէի զգալ. և այս ոչ զմի օր, և ոչ զմի ամիս. այլ զամիսս ինն և առաւել ևս: Եւ ահա յերեսաց այսր անզգամութեան իմոյ, այսինքն վասն ոչ կամելոյս զգալ՝ վէրք հոգւոյ իմոյ՝ որք տարրացան յիս մեղօք, կամ նոյն իսկ մեղք իմ՝ որք եղեն վէրք հոգւոյ իմոյ, այսինքն պատճառ վիրաց հոգւոյս՝ անզգարմանս մնացեալ յինքեանս՝ նեխեցան և փտեցան. նեխելով ժանտացուցին զիս, և բուրեցին զհոտ գայթակղութե՛ առ այլս: Եւ փտելով թմրեցուցին զհոգի իմ և ապականեցին զամենայն բարեգործութիւնս իմ: Այլ դու ինքն տէր որ ամենաճարտար բժիշկդ ես, կամելով բժշկել զիս՝ հաճեցար պատուել զվէրս իմ նեխուք քոյք զօրս արձակեցեր ձեռօք Նաթանայ. և ձեռն արկեր հատանել զփտութիւնս իմ սրով պատժոց, որով հարեր զիս:

Բարոյապէս մարթ է աստ զբառդ վէրս՝ առնուլ 'ի թանձրացեալն, որով նշանակի հոգին վիրաւորեալ, նեխեալ և փտեալ՝ իբրև զվիրաւորս՝ որք են 'ի գերեզմանս. (սաղ. ձէ. 5.) մանաւանդ 'ի մնալն 'ի մեղս երկար: Որ 'ի յամելն նեխի և փտի. մեռեալ անասուն՝ որչափ մնայ՝ այնչափ գարշանայ. սոյնպէս և մեղաւորն որ մեռեալ է մեղօք՝ որչափ մնայ 'ի մեղս, այնչափ գարշահոտի. * վասն պղծութեան ապականեցայք ապականութ̃բ ‖. (միք. բ̃. 10.)

Որ յամէ 'ի մեղս, և յապաղէ դառնալ, անօրինի նախ յանձն իւր. զի առաւել կամի մնալ չար՝ քան բարի. հիւանդ քան առողջ. ծառայ քան ազատ. աղքատ քան փարթամ. աւազակ քան թագաւոր. անօգուտ քան օգտակար. խաւար քան լոյս. եւ և ոչ կամի ունել ինչ 'ի բարեաց, և կամ հաղորդ գտանել ա̃ծային բարութեանց. Անօրինի երկրորդ և յընկերն. նախ զի ապականէ զնա չար օրինակաւ իւրով. երկրորդ՝ արգելու զնա 'ի յառաջադիմելոյ. որպէս որոմն փաթարացուցանէ զցորեանն. վասն որոյ նախ ժողովի և մտանի 'ի հուր. երրորդ՝ զրկէ զնա 'ի նպաստից հոգևոր հաղորդութեան և յօգնական լինելոյ ընդդէմ սատանայական պատերազմաց. չորրորդ՝ որպէս գօսացեալ անդամ տգեղացուցանէ զբոլոր մարմինն հասարակութեան, և որպէս բիրտ ձայն տաղտկացուցանէ զներդաշնակութիւն երգոց. հինգերորդ՝ պատճառ լինի պատժոց նոցա, որպէս աքար ժողովրդեանն իսրայէլի. (յեսու. է. 4.) եւ և պատժոց անբանից. ըստ որում և նոքա պատժեցան առ ջրհեղեղաւ.

Օ՜ այսուիկ գիտելով, 'ի յապաղել ա̃ծային շնորհաց առ 'ի դառնալ 'ի մեղաց՝ մի յապաղեր. և մի խոստանար քեզ զվաղիւն կամ զայլ օր. զի այսպիսի խոստումն մնոտի է, և աւելի ոչ. Տեսանեմք՝ զի ա̃ծ ոչ կամեցաւ ընդունել զժամանակն, այլ զկանուխն, այսինքն զերեխայրին. ապա և դու զերեխայրին ա̃ծային աղարարութ̃ենց մատո նմա ապաշխարութ̃բ, և մի յանձն առնուր յապաղելովդ զժամանակն մատուցանել. (թւոց ժ̃ը. 30.) Եթէ զժամանակն խոստացիր՝ ոչ կարես տալ. զի որ անցանն է՝ չէ 'ի ձեռին քում. դու զոր 'ի ձեռին ունիս՝ ոչ տաս, և զիա՞րդ զոր ոչ ունիս՝ խոստանալ վստահանաս. այդպիսի խոստումն ոչ միայն անկարգ է, այլև պատճառ կորստեան. Յայս հայելով՝ ասէ սիրաք (իթ. 24.) * չարաչար խոստումն զբ̃զմս կորոյս ‖. չարաչար ասէ. զի զժամանակն հատարակաց իւրացուցանէ. և որ տուեալ է նմա յա̃յ վասն զգաստանալոյ՝ ծախէ զայն 'ի նախատինս ա̃յ. և գիտելով՝ թէ ամենեւին ատելի է ա̃յ մեղքն՝ հաստատուն պահէ զայն ընդդէմ կամաց նորա և յանդիման աչաց նորին. և դարձեալ՝ կամի զվատթարագոյն և զանօգուտ մասն կենաց իւրոց, զվաղուեան աւուրն, կամ զծերութեանն տալ ա̃յ, իսկ զպատուական և զպատրաստական մասն ներկայ կենաց իւրոց՝ ինքեան պահել. և այն ոչ 'ի սփոփանս, այլ 'ի տանջանս. զի 'ի մեղս մաշելով տանջի 'ի մեղաց. և կարելով ազատիլ, կամի 'ի նոյն անազանիլ. Փարաւոն տառապէր 'ի գորտանց, և կարելով ազատիլ 'ի նոցունց 'ի նմին աւուր՝ կամեցաւ օր մի ևս անազանիլ, յասելն ցմովսէս՝ թէ 'ի վաղիւն փարատեցո յինէն զսոսա. (ելից. է. 10.) ուր կարէր առօրէն զերծանիլ. Որչափ անազանիս, այնչափ ապականիս. և ա̃ծ ևս տաղտկացեալ յապականութէ քումմէ՝ լքանէ զքեզ, որպէս բժիշկ զանբժշկելին. քանզի ասէ սիրաք. (ժ. 11.) * Հիւանդութիւն երկար ծանրացուցանէ զբժիշկն ‖. մինչև ոչ ևս բժշկել զնա. Առաքեալքն չկարացին բժշկել զայսահարն. զի 'ի մանկութենէ հետէ ըմբռնեալ էր 'ի դիւէն. որով նշանակի դժուարութիւն բժշկութեան այնր՝ որ հնացեալ է 'ի մեղս. Նոր հարուածն փութով բժշկի. հնացեալն դժուարանայ. Եւ թէ յիրաւի դժուարին իցէ այսպիսեաց նորոգումն՝ յայտ արար տէրն մեր 'ի յարուցանելն զղազարոս. նախ ցաւագինս յայտնեաց զայն աշակերտաց իւրոց. և ապա աշխատեցաւ գալ 'ի բեթանիա. եկաց, խռովեցաւ, և 'ի ձայն բարձր աղաղակեաց. Ընդ այլս ոչ արար այսպէս, այլ ը̃ ղազար՝ ընդ չորեքօրեայ մեռեալն. 'ի ցուցանել թէ դժուարին է յառնել նեխելոյն 'ի մեղս՝ իբր չորեքօրեայ մեռելոյ. * 'ի վերայ երից ամպարշտութեանցն գազայ, և 'ի վերայ չորիցն ոչ դարձայց 'ի նոցանէ ‖. (ամովս ա̃. 6.) յառաջնումն հիւանդ. յերկրորդումն մեռեալ. յերրորդումն նեխեալ. 'ի չորրորդումն դատապարտեալ. վասն որոյ և յառնել նորա ծանր, և անհնարին.

Այս քանզի որպէս և յաջորդ սոցին ըստ ասելոյ մեր 'ի նախընթաց համարն, պատշաճագոյն ևս ասին 'ի դիմաց ապականեալ մարդկայնոյ բնութեան, որ յանկանելն 'ի վիճակէ անմեղութեան՝ վիրաւորեցաւ չորեքկին. 'ի միտս՝ կուրութեամբ, 'ի կամս չարութեամբ, 'ի ցանկականն անկարգութեամբ, և 'ի ցասմնականն տկարութեամբ. որով և մատնեցաւ յանհնարին տառապանս և յանարգանս. զոր և յայտ առնէ մարգարէն յանձն իւր նկարելով, յասելն.

Է. Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ. զօրհանապազ տրտմեալ գնայի. զի անձն իմ լի եղև չարչարանօք. և ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ.

Ը. Չարչարեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի ի հեծութենէ սրտի իմոյ.

Չորեքկին դիպի մեղուցելոյն տառապիլ, նոյնպէս և տրտմիլ և խոնարհիլ. մի՝ 'ի մեղսն, երկրորդ՝ 'ի մեղաց. երրորդ՝ 'ի վերայ մեղաց. չորրորդ՝ վասն մեղաց. Իջացի * նախ 'ի մեղսն ‖. և այս մնացի 'ի մեղանչելն անդ. զի այնու բաժանի հոգին յԱյ իւր 'ի գերբնական առարչէ. և որովհետև 'ի բաժանմանն է ցաւ և տառապանք, այն բաժանումն պատճառէ 'ի հոգին տառապանք մեծ. ընդ նմին և անարգն գոլ, և տրտմութիւն դառն, և այս յամ մեղս. Ուր արժան է գիտել, զի կան մեղք՝ որք միշտ վշտօք կատարին, որպէս բարկանալ, նախանձիլ, ևն. Եւ կան որք հեշտութեամբ, որպէս փառաւորիլ, պարծիլ, որկրամոլիլ, վաւաշիլ, և այլն. Եւ կան որք խառն են, որպէս գողանալ, սպանանել, ևն. 'Ի սոսա յամենեսին զիարդ և կատարեսցին՝ կայ և տառապանք հոգւոյ անհնարին, որովհետև զրկի հոգին 'ի գերբնական կենաց, կամ անկանի յայն ինչ՝ որ է թշնամութիւն 'ի մէջ իւր և 'ի մէջ ծայրագոյն բարւոյն իւրոյ. Եւ թէպէտ մեղանչօղն՝ 'ի մեղանչելն անդ վասն յարելոյ 'ի չար ներգործութիւն մեղացն՝ ոչ զգայ և ոչ ըմբռնէ զտառապիլն, բայց յինքեան տառապի հոգին և չարչարի, և 'ի վատթարութիւն յետին խոնարհի. ուստի նաև յայն հեշտութիւնսն հայելով կարէ մարդ ճշմարտիւ ասել. տառապեցայ, չարչարեցայ, տրտմեցայ, և իջի յանարգութի. որպէս եղև կայենի. զի 'ի մեղանչելն անդ նախանձու եղբօրն * տրտմեցաւ

յոյժ և խոնարհեցան անկան երեսք նր̃‖. (ծնն. դ̃. 5.) մինչև 'ի խօսիլ ըդ̃ առ նա՝ չկարաց տալ նմա պատասխանի վասն դառնութեան և տրտմութե̃ իւրոյ. որ և 'ի դէմսն սփռեալ տեսանիւր. զի որպէս յառաքինութենէ ուրախութի̃ սփռի յերեսս, սոյնպէս և 'ի ներգործութենէ մեղաց տրտմութիւն. * սիրտ թխրեալ տածէ (յերեսս) տրտմութիւն‖. (սիրաք լդ̃. 22.) * սիրտ չարայոյզ ծանրասցի ցաւօք‖. (սիրաք գ̃. 29.) Լքացի * երկրորդ 'ի մեղաց‖. և այս մտածի յետ մեղանչելոյն, մինչև իցէ զղջացեալ. վասն զի 'ի մեղաց անտի տառապի հոգին. զի տեսանէ յինքեան զանկարգութիւն մեծ. օրինակ այսմ՝ որպէս որ գիտէ զարհեստ նկարագրութե̃ (կամ ռէսիմի) 'ի տեսանելն զանհամեմատութիւն նկարու՝ պժգայ. սոյնպէս և հոգին՝ որ բնական լուսով գիտէ զարհեստ ուղղութեան կենաց, 'ի տեսանելն անդ յինքեան զայլանդակութիւն մեղաց՝ յանհնարինս պժգայ. և 'ի խայթելոյ խղճի մտացն պատի և տապի տխրութբ̃. կքանի և խոնարհի, բայց դառն խոնարհութեամբ. մինչ ոչ ևս համարձակիլ կալ առաջի նր̃, կամ հայիլ 'ի նա վստահութբ̃. Եւ երբեմն այլապէս ևս չարչարի. զի 'ի յորդորել խղճի մտաց դառնալ 'ի մեղաց, և յոչ կամիլ մարդոյ զղջալ և դառնալ, այլ իմն տառապանք ծնանի 'ի հոգին՝ որ զրեթէ խեղդէ զնա. և ինքն ոչ̃ ծով ծփայ. ըստ որում ասէ մարգարէն. * այլ անօրէնք իբրև զծով ծփեսցին և զհանգիստ մի գտցեն‖. (եսայ. ծէ̃. 20.) Զի դառնաշունչ հողմն խղճի մտաց չարաչար շարժէ և ծփէ զհոգին. * և եղև շարժումն մեծ 'ի ծովուն‖. (մատ. ը̃. 24.) Մեղքն արտաքին իմն գոլով 'ի մխիլն 'ի հոգին իբր փուշ կամ մանաւանդ իբր ցից, շարժէ զնոյն և փրփրեցուցանէ. Տապումն տենդի պատճառի յարտաքին ջերմութենէ մտելոյ 'ի ջերմութիւն ներքին, որով տագնապեցուցանէ զմարդն ողջոյն. Սոյնպէս է և մեղքն. որ յետ մտանելոյ 'ի հոգին՝ չար ևս տագնապէ զմեղուցեալն. և յայս սակս ասէ իմաստուն ոմն. (սենեքա) * մեծագոյն տանջանք յանցաւորին է նոյն իսկ յան-
,, ցանքն. զի խիղճն յանցանաց ոչ թողու զնա‖. ինքն կամի 'ի բաց ձգել. բայց նա ոչ թողու. Ոչ գիտեն

այլք զմեղս նոցա, ապա ընդէր տանջի. զի յիւրմէ ոչ
թաղչի. վասն այն տանջի և ոչ հանգչի.

Ասացի * երրորդ 'ի վերայ մեղաց ‖. և այս մտածի 'ի դատմանն անդ առ ա̃ծ. զի յայնժամ ես տառապի մարդ՝ ոչ 'ի մեղաց որպէս 'ի վերոյ, այլ որպէս ասացաք՝ 'ի վերայ մեղաց. յորոյ վերայ տրտմի և ցաւի, զղջայ և խոնարհի բեկեալ սրտիւ. հեծէ և ողբայ ցաւագնեալ ոգւով և այլն. և այս կարէ լինել նաև յետ դարձին, որպէս և յայտ է. Այս տրտմութիւն է այն, զորմէ գրէ առաքեալն. (բ. կոր. է. 9.) * արդ ուրախ
,, եմ՝ ոչ զի տրտմեցայք, այլ զի յապաշխարութիւն
,, տրտմեցայք. քանզի տրտմեցայք դուք ըստ ա̃յ, զի
,, մի իւիք զրկիցիք (կամ յետնեալ գտանիցիք) 'ի
,, մէնջ. զի որ ըստ ա̃յ տրտմութիւն է՝ զապաշխարու-
,, թիւն 'ի փրկութի̃ առանց զղջանալոյ գործէ ‖. Տրտմութեամբ ոչ ինչ տուգանի. բայց եթէ կամ կորուստ և կամ փրկութի̃. եթէ 'ի մեղաց՝ կորուստ, եթէ 'ի
վերայ մեղաց՝ փրկութի̃.

Ասացի * չորրորդ վասն մեղաց ‖. և այս մտածի 'ի կրելն զպատիժս մեղաց, որ և կարէ լինել երեքկին. մի՝ յառաջ քան զդարձն. որպէս պատահեցաւ մանասէի և այլոց բազմաց, զորս պատժեաց ա̃ծ, և պատժելով ձգեաց առ ինքն. Երկրորդ՝ յետ դառնալոյ 'ի մեղաց. որպէս եղև նոյն իսկ դաւթի և այլոց՝ յորս ոչ խնայեաց ա̃ծ արձակել զպատիժս առ խրատ մաքրելոյ զնոսա. Երրորդ՝ յառաջ և զկնի. որպէս արար ոմանց 'ի սրբոց. Այս ա̃մ հային առաջի եղեալ բանքդ
յաւելն.

Տառապեցայ և խոնարհ եղէ յոյժ. զօրհանապազ տրտում գնայի զի անձն իմ լի եղև չարչարանօք. և ոչ գոյ բժշկութի̃ մարմնոյ իմոյ. Չարչարեցայ, և խոնարհ եղէ մինչև յոյժ. մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ. Այս բան եթէ նախ քան զդարձն իմացեալ լիցի, մեկնի այսպէս. 'ի մեղանչել իմում տառապեցայ 'ի հոգիս. թէպէտև ոչ կամէի զգալ. որով և խոնարհ եղէ յոյժ. այսինքն կորացայ և իջի 'ի յետին անարգութիւն. Իսկ 'ի հարկանել խղճի մտացս զօր հանապազ տրտում գնայի. այսինքն տրտմութեամբ անցուցանէի զկեանս իմ. Մանաւանդ զի անձն իմ լի եղև չարչարանօք. Այսինքն ըստ ա̃մի պաշարեալ եղև անձն իմ, այս է հոգի իմ 'ի տանջանս խղճի մտաց. մինչև ասել, ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ. զի ոչ տեսանէի՝ թէ կայցէ ինձ առողջանալ, կամ ոչ ևս յուսայի՝ թէ ունիմ գտանել զբժշկութիւն տառապանացս՝ որ զեղեալ էր և 'ի մարմին իմ. և ես փոխանակ բժշկութե̃ն գտանելոյ գտի վիշտս. որով և չարչարեցայ. այսինքն 'ի փորձութիւն ձգեալ և քարշեալ՝ վշտացայ, և չարեաց 'ի չարիս գնալով խոնարհ եղէ մինչև յոյժ. այսինքն ամենևին խոտելի և գարշելի եղէ։ Վասն որոյ և մռնչէի ի հեծութենէ սրտի իմոյ։ Այսինքն յայսպիսի տառապանս մատնեալ՝ 'ի խայթել խղճի մտացս, և 'ի յանդիմանել նորա զիս՝ թէ զինչ արարեր, և զինչ առնես, ես իբրև արբեալ, և ընդ ծանրութեամբ մեղաց նուաճեալ, թէպէտ և անքոյթ լինէի, սակայն միանգամայն և ստիպէի հեծել, այսինքն հառաչել և յոգւոց ելանել. ևս և մռնչել, այսինքն 'ի ներքս 'ի հոգիս իմ՝ ոհ և ո̃հ գոչել։ Իսկ եթէ այս բան իմացեալ լինի 'ի դարձին դաւթի միանգամայն և յետ դարձի նորա, որպէս և է ճշմարտիւ, միտ բանին դիւրանայ, և մեկնի այսպէս. 'ի դառնալ իմում առ քեզ, յորժամ յիշեցի՝ թէ զիա՛րդ ապերախտ գտայ առ այդպիսի բարերարդ իմ, տառապեցայ յանհնարին ցաւոց սրտիս. և խոնարհ եղէ յոյժ, տեսանելով զիս ամենևին թշուառացեալ առաջի մեծ վայելչութեան քո։ Եւ զի այս ցաւ և ճանաչումն միշտ ընդ իս էր, վասն այսորիկ զօրհանապազ տրտում գնայի. այսինքն թէ 'ի տունջեան և 'ի գիշերի, 'ի ննջել և 'ի յառնել, 'ի նստիլ և 'ի գնալ յամենայնի տրտմութե̃ մաշէի. 'ի ներքոյ և արտաքոյ. 'ի ներքոյ՝ լի անձն իմ, այսինքն հոգի իմ լի եղև չարչարանօք. վասն զի պէսպէս տագնապիչ խորհուրդք 'ի միտս իմ յաճախէին. և սաստկագին ցաւք 'ի կամս իմ զօրանային. յորոց զեղոյր և թաղձութիւն անհնարին 'ի մարմինս իմ. վասն որոյ և արտաքոյ ես որպէս և տեսանեմ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ։ (Օայսմանէ տես և 'ի համարն 3։)

Իսկ կրկնումն բանին՝ զոր դնէ ասելով. * չարչարեցայ „ և խոնարհ եղէ մինչև յոյժ ‖, ցուցանէ նախ զտառապութիւն իւրն. և երկրորդ՝ զառաւելութիւն նորին. որով կամի ասել՝ թէ փոխանակ սփոփեալ լինելոյ ատուեալ ես տառապեցայ և տառեալ ես խոնարհեցայ՝ մինչև յոյժ. այսինքն խիստ. և յայսմանէ՝ սկսայ հեծել և հառաչել և մնչել.

Իսկ մնչելն է անհեթեթ ձայնիւ ընդ կոկորդն գոչել գազանաց 'ի զայրանալոյ. այլ յորժամ զմարդոյ ասի, ցուցանէ զսաստկութիւն կրից բարկութեան կամ տրտմութեան կամ ցաւոց, և զի յանհնարին կիրս տրտմութեան ըմբռնեալ էր Դաւիթ. և սիրտ նորա հեծէր այսինքն հառաչէր, կամ ասացից՝ հեվայր և տքայր, 'ի հեծութենէ անտի և բերան նորա աղէտախառն ձայնիւ ահագինս գոչէր, յասելն. ո՜վ զինչ պատահեաց ինձ. զիա՞րդ եղև ինձ այնչափ անխրատիլ առ իմ մի միայն ծայրագոյն բարի, առ իմ ամենաբարի բարերար. ո՞ւր էր՝ զոր հաստուցի նմա. ո՞ւր էր՝ զոր ասէի առ նա. ա̅ծ սրտի իմոյ՝ բաժին իմ ա̅ծ յաւիտեան. ո՞ւր էր՝ որով գոչէի. սիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ ա̅ծ կենդանի.

Այս ա̅մ զոր ասացաք՝ կարէ վերածիլ և 'ի տառապանս յայնոսիկ, զորս կրեաց Դաւիթ 'ի պատիժ մեղաց իւրոց. (զորոց տե՛ս 'ի սաղ. լ̅ը. 4. և որ զկնի.)

Այլ պատշաճագոյն ես կարէ վերածիլ 'ի դէմս մարդկային բնութեան, մինչև էր մարմնացեալ բանն ա̅ծ. որպէս և յայտ է. ես և 'ի դէմս իւրաքանչիւր ապաշխարողի.

Այլ թէ քանի փափաքելի էր Դաւթի ունել զվիճակն անմեղութե՛ զոր կորոյս, և գտանել զառաջին համարձակութի՛ իւր՝ զոր ունէր առ ա̅ծ՝ յայտ առնէ 'ի յաջորդ համարն հանդերձ հեծութե՛ սրտի, և ասէ.

Թ. Տէր առաջի քո է ա̅մ ցանկութիւն իմ. և հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ.

Ցանկութիւն պէսպէս օրինակաւ առեալ լինի. մի՝ փոխանակ սաստիկ զխնդրութեան բաղձանաց. և այս է յատուկ իւր նշանակութիւն. Երկրորդ՝ փոխանակ ծ և իցէ յօժարութեան բաղձանաց առ բարին կամ իբր առ բարին. Երրորդ՝ փոխանակ արմատոյ յօժարութեան՝ որ մղէ առ չարն կամ առ այն՝ որ է ընդդէմ ուղիղ բանի. զոր ոմանք յարդեացս կոչեն ըղձէ.

յոր միտս բաղում ուրեք 'ի գործ ածէ առաքեալն զայս բառ ։ Չորրորդ՝ փոխանակ վառվառ յօժարութե՟ ։ Ոմանք աստանօր ըստ այսմ յետին նշանակութեան առնուն զբառդ **ցանկութիւն**․ և ոմանք ըստ երրորդին և ոմանք ըստ երկրորդին․ բայց կարգ բանից սաղմոսիս ըստ առաջնոյն տայ իմանալ, յասելն ։

Տէր առաջի քո է ամ՟ ցանկութիւն իմ ։ Յայտ է թէ բաղում էր ցանկութիւն մարգարէին, և առ բաղում․ բայց մասնաւոր ցանկութիւն նորա ըստ ցուցանելոյ կարգի սաղմոսիս՝ էր ըստ ամենայնի հաշտ ունել ընդ ինքեան զա՟ծ․ և գնալ առաջի նորա իբրև զառաջինն՝ մինչև էր մեղուցեալ ։ Այս ցանկութիւն նորա այնչափ սաստկացեալ էր 'ի նմա՝ մինչև յօժարել նմա զամենայն ինչ զիւր տալ ընդ այսր, ես և զկեանս՝ միայն թէ ժամանեսցէ՝ որում ցանկայ ։ Այս առ 'ի ցուցանել՝ թէ ճշմարտիւ այսպիսի է իւր ցանկութիւն՝ վկայ կոչէ զնոյն ինքն զա՟ծ ասելով․ առաջի քո է տէր․ որպէս թէ ասէր․ դու ինքն յայտնի տեսանես զի ամենայն ցանկութիւն իմ ըստ ամ՟ի յայս և եթ բերի զի տեսից զքեզ հաշտ ընդ իս․ 'ի սոյն հեծեմ և զսոյն հառաչեմ առաջի քո․ վասն որոյ յարէ ։

Եւ հեծութիւն իմ 'ի քէն ոչ ծածկեցաւ ։ Հեծութիւն է հառաչումն ինչ 'ի կրելոյ զտրտմութիւնս ծանունս, կամ 'ի տառապելոյ 'ի սաստիկ ցաւոց 'ի ներքս, և կամ յունելոյ զհոգ մեծ ։ Արդ 'ի ցանկալ դաւթի հաշտ ունել զա՟ծ ընդ ինքեան, որչափ 'ի նոյն ցանկայր, նոյնչափ եւ տխրէր և հոգայր՝ զի խռովեցոյց զհաշտութիւնն որ ընդ նմա․ վասն որոյ և 'ի տխրութենէ անտի հեծէր, այսինքն յոգւոց հանէր․ կամ ասացից հեւայր և տքայր․ և զայս առնէր ոչ եթէ պակասելով 'ի յուսոյ, կամ ժանտանալով 'ի հոգի իւր․ այլ ծայրագոյն խոնարհելով առաջի աչացն այ՟ և 'ի ներկայութեան նորին․ ուստի և ասէ, այս հեծելս իմ ոչ է ծածուկ առ 'ի քէն․ այլ յայտնի և ակն յանդիման առաջի քո ։

Յասելն զայս, կամի իմացուցանել և զայն՝ զոր ոչ համարձակի յայտնի ասել․ այսինքն նայիլ այ՟ քաղցրութեամբ առ ինքն ։ Այսմ փափաքէր՝ ոչ զի մխիթարեսցի՝ զի անարժան համարէր զինքն մխիթարութե՟․

այլ զի ծանիցէ՝ թէ ամենևին հաշտեալ է ընդ նմա ա͞ծ, և ոչ յիշէ բնաւ զմեղս նորա. և զի որպէս ասացաք՝ ոչ համարձակի յայտնի առնել զայս, սմին իրի միայն զկիրս իւր առաջի դնէ, և ասէ.

Ժ. Սիրտ իմ խռովեցաւ յիս, և եթող զիս զօրութիւն իմ. լոյս աչաց իմոց՝ և այն ոչ եղև ընդ իս.

Երկակի է խռովութիւն սրտի, ներգործական և արմատական. Ներգործականն է ներգործութի͞ պղտորին սրտի և զգայական յօժարութեան որ ի նմա՝ ի ներքոյ կրից՝ այսինքն ի բարկութենէ, ի տրտմութենէ, յուրախութե͞, ևն. Իսկ արմատականն կամ ունակականն է անկարգ տրամադրութիւն յօժարութե͞ պատճառաւ ի պղտորիլ և ի պղտորել.

Այլ անկարգ տրամադրութիւն կարէ մտածիլ ի հասարակի և ի մասնաւորի. Եթէ ի հասարակի մտածեսցի՝ արմատացեալ տեսանի այս յամենայն որդիս մարդկան ի ստորին մասն անձնիշխանութե͞ վասն պակասելոյ ի զօրութենէ սկզբնական արդարութե͞. և այս է պատճառն, որով հանապազ գտանեմք ի սիրտ մեր խռովութիւն և մարտ ընդդէմ վերին մասին. զի ի կամիլ նորա զբարին՝ սա խռովի և ընդդէմ դառնայ. յոր միտս ասէ առաքեալն. * կամքն առաջի կան իմ, և առնել զբարին ոչ, ևն. (Հռովմ. Է. 18.) վասն զի կամքն յոր օգուտ և բերիցի ըստ վերին մասին, սա ի նմանէ խորշի, որպէս հիւանդն ի դեղոյ. Իսկ եթէ ի մասնաւորի մտածեսցի, յումեմն առաւել է այս տրամադրութիւն, և յումեմն նուազ. և այս՝ կամ վասն այլևայլութեան խառնուածոյ բնութեան. որով տեսանեմք՝ զի ոմանք բնութե͞ բարկացողք են, և ոմանք տրտում, ևայլն. և կամ վասն յաւէտ և նուազ տեղի տալոյ կրից. զորօրինակ որ յաւէտ տեղի տայ բարկութե͞՝ յաւէտ ստանայ զխռովիչ տրամադրութիւն ի բարկանալ. որ առաւել և յաճախ տեղի տայ կրից տրտմութեան՝ առաւել տրամադրի ի խռովիլ տրտմութեամբ, ևն. վասն զի յորժամ յաճախէ ընդունելութ͞ի այսպիսի կրից՝ ոչ միայն զօրանայ ի նմա ունակութիւն անկարգ, այլև թուլանայ զօրութիւն վերին մասին ի զուսպ ունել զայն և ընդդէմ դառնալ անկարգութե͞ կրից և պղտորութեան ։ Արդ բան մարգարէին ըստ առաջին հատուածոյն հայի միանգամայն 'ի ներգործական և յարմատական խռովութիւն հոգւոյն. իսկ ըստ երկրորդ հատուածոյն հայի 'ի զօրութիւնն զսպիչ արմատական և ներգործական խռովութեանն. ապա ըստ առաջնոյն ասէ ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս ։ Սրտիւ իմացեալ լինի աստ նախ նոյն իսկ կազմուած սրտին, որ է տեղի կրից, երկրորդ՝ ստորին մասն կամաց. յորում է արմատական խռովութիւն՝ և ըստ այսմ կամի ասել. 'ի բազում տրտմութենէ և 'ի ցաւագին տխրութենէ՝ յորս պաշարեալ կամ՝ խռովեցաւ և պղտորեցաւ սիրտ իմ, խռովեցաւ ընդ նմին և յօժարութիւն սրտի իմոյ. այսինքն ստորին մասն կամացս. որով ոչ միայն 'ի ներգործական խռովութենէ տրտմութեան տագնապիմ, այլև 'ի բաղխմանէ արմատական խռովութե̃ սրտիս վտանգիմ. յոր միտս յեբրայականն դնի. * բաղխէ սիրտ „ իմ յիս ‖ ։

Եւ զի ցուցցէ՝ թէ այս պղտորութիւն ոչ է արտաքուստ, այլ 'ի ներքուստ և 'ի ներքս, ոչ ասէ սոսկապէս՝ սիրտ իմ խռովեցաւ. այլև յաւելու զբառդ յիս. որպէս թէ ասէր. ես եմ՝ որ խռովեալս եմ. ես եմ պատճառ իմոյս խռովութեան, ես զարթուցի և ես կրեմ, ես ինքն մեղայ, և ես ինքն խռովեալ գտայ ։ Եւ այս իմ խռովութիւն ասէ այնչափ զօրացաւ յիս՝ մինչև տկարացուցանել զզօրութիւն իմ զզսպիչն խռովութեանս ։ Սանական վարդապետ զխռովիլ սրտին առնու փոխանակ ծորելոյ կամ թափելոյ. և գրէ ('ի մեկն. յոբ. գլ. լէ.) այսպէս. * 'ի վերայ այսր „ ամենայնի խռովեցաւ սիրտ իմ և ծորեաց 'ի տեղւո- „ ջէ իւրմէ. զոր սովորակի ասեն մարդիկ՝ եթէ թա- „ փեցաւ սիրտ իմ 'ի տեղւոջէ իւրմէ. ջանամ նմա- „ նել մարգարէին թէ սիրտ իմ եթող զիս, և խռո- „ վեցաւ 'ի փորի իմում ‖ ։ Այսու խռովութեամբ սրտի կարէ իմացեալ լինել և վերջին տագնապ հոգւոյն (այն է վիճակ հոգեվարութեան.) յորում 'ի շիջանիլ սրտին՝ մեկնի հոգին. զի 'ի մահուն յետին է սիրտն. քանզի որպէս ասէ ծործորեցին. ('ի մատ. ժբ.) * սիրտն յառաջ գոյանայ և յետոյ մեռանի ‖ ։ Եւ ըստ այսմ առեալ՝ կամի ցուցանել մարգարէն, թէ 'ի յետին տագնապի տանջի. խօսի ապա և վասն երկրորդին ասելով։

Եւ թողեալ զիս զօրութիւն իմ։ Բառիւս զօրութիւն՝ որպէս յայտ է 'ի վերոգրելոցդ՝ իմացեալ լինի աստ ուժգնութիւն վերին մասին՝ ըստ երից. մի 'ի կառավարել զստորին մասն ըստ որում է խռովիչ արմատական և տնական ջերմամբ. երկրորդ՝ 'ի վանել ըզտրտմագին և զզայրագին ներգործական խռովութիւնս. երրորդ՝ 'ի քաջալերել զսիրտն և զայլ կարողութիւնս հոգւոյն։ Այս զօրութիւն իմ ասէ եթող զիս, և որպէս թէ մեկնեցաւ յինէն. որ է ասել, թուլացաւ և տկարացաւ յոյժ վասն մեղաց իմոց։ Եւ ոչ այսչափ միայն, այլև իմացականութիւն իմ խաւարեցաւ. և առ այս յարէ։

Լոյս աչաց իմոց, և այս ոչ եղև ընդ իս։ Լոյս աչաց ասելով սկզբնաբար իմանայ զլոյսն ներքին. այսինքն զուղիղ ճանաչումն մտաց, մանաւանդ զգիտակցութիւն այսինքն զլոյսն խղճի մտաց. երկրորդաբար՝ զզգալի լոյսն. այս լոյս ասէ՝ եթէ ներքինն և եթէ զգալին ոչ եղև ընդ իս։ Սոյն այս ասացուած եթէ առցի յետ դարձին՝ յայտ առնէ զներգործութ̃ի խռովութեանն՝ զոր ունէր դաւիթ վասն անհնարին տրտմութեան և ցաւոց 'ի վերայ մեղաց և գայթակղութեանցն. և ըստ այսմ յասելն՝ ոչ եղև ընդ իս՝ ոչ ցուցանէ թէ լոյս աչաց իւրոց յիրաւի ոչ եղև ընդ նմա, այլ թէ այնչափ սաստիկ ըմբռնեալ եղև 'ի ցաւս և 'ի տրտմութիւնս՝ մինչ գրեթէ խաւարիլ աչաց իւրոց ըստ հոգւոյն, ևս և ըստ մարմնոյն 'ի բազում լալոյ, և ոչ տեսանել զլոյս համարձակ, և ոչ ըմբռնել ուղղութեամբ զորս տեսանէր։ Համանգոյն այսմ խօսեցաւ 'ի վերոյ հայելով յանբժշկութիւն մարմնոյ՝ յասելն * ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ ևն. որով ոչ ցուցանէր թէ կայ 'ի հիւանդութեան՝ այլ թէ այնչափ տառապի ցաւօք և տրտմութեամբ, մինչ գրեթէ ըմբռնեալ իցէ հիւանդութեամբ։

Իսկ եթէ առցի յառաջ քան զդարձն, կրկնակի յարի 'ի նախընթաց բանն, պատճառաբար և հետևաբար։ Պատճառաբար՝ կամի ասել. որովհետև լոյս աչաց իմաց, այսինքն ուղիղ ճանաչութիւն իմ ոչ առաջնորդեաց ինձ՝ վասն այնորիկ վրիպեցայ, որով և խռովեցաւ սիրտ իմ: Հետևաբար՝ կամի ասել, 'ի խռովիլ սրտի իմոյ և 'ի պղտորիլ ստորին մասին կամացս՝ տիրեաց և 'ի միտս իմ խաւար՝ այսինքն անգիտութիւն կամ մոլար ճանաչումն. և ոչ առաջնորդեաց ինձ 'ի բարին, Եւ առ 'ի իմացուցանել զայս, ոչ ասէ՝ ոչ եղև առ իս, կամ յիս, այլ ընդ իս. զի թէպէտև ճանաչումն մտաց նորա և գիտութիւնն 'ի նմա էր և առ նմա, բայց ոչ ընդ նմա: Զայս և 'ի մեզ հանապազ տեսանեմք. զի թէպէտ կայ 'ի մեզ ճանաչումն ինչ ուղիղ զայսմանէ և զայնմանէ, բայց բազում անգամ ոչ լինի ընդ մեզ. զի ոչ գործէ ընդ մեզ, այլ 'ի տեղի նորա օտար ճանաչումն. զի ըստ զգածելոյ յիրն՝ յաջորդէ այլ ճանաչումն ներհակն. որով և առաջին ճանաչումն մեր թէպէտ և յայնժամ իցէ 'ի մեզ, բայց ոչ է ընդ մեզ. զորօրինակ որ ճանաչէ զհամադամն լինել այս ինչ կերակրոյ, եթէ 'ի հիւանդանալն կերիցէ զայն՝ ոչ ևս այնու ճանաչմամբ ճանաչէ զայն՝ վասն խռովելոյ զօրութե՟ քմացն. այլ օտար ճանաչմամբ ըստ զգածելոյ նոյն զօրութեան քմացն: Աստի և այն առաջին ճանաչումն թէպէտ և 'ի նմա իցէ, բայց ոչ է ընդ նմա 'ի ճանաչելն անդ: Զերկոսին զայսոսիկ ևս մարթ է տեսանել յայսմ բանի. զի վասն ունելոյ ըզճանաչումն դնէ զբառդ իմոց, յասելն, լոյս աչաց իմոց: Իսկ վասն ոչ գործակից լինելոյ ընդ նմա այնր լուսոյ՝ դնէ զբառդ ընդ իս, յասելն, ոչ եղև ընդ իս:

Իսկ շարադրութիւն բանին՝ որ երևի ունել մթութի՟ ինչ, պարզի այսպէս: Կարծէի՝ թէ լոյս աչաց իմոց՝ որ էր յիս, իցէ ընդ իս. բայց այս իմ լոյս ոչ եղև ընդ իս: Եթէ զայս բան հարցականապէս դիցուք առաջի՝ բարւոք ևս պարզի. որպէս թէ եղեալ էր. արդեօք ընդ իս իցէ կամ ընդ իս էր լոյս աչաց իմոց՝ որ յիս. պատասխանէ. այս լոյս ոչ եղև ընդ իս. այսինքն ոչ գործեաց ընդ իս, կամ ոչ առաջնորդեաց ինձ 'ի գործս իմ:

Յարմարական մեկնութեամբ՝ բառիս լոյս աչաց՝ կարէ նշանակիլ որդի սիրելի, կամ բարեկամ մտերիմ. զոր որդիք մարդկան երբեմն լոյս աչաց կոչեն, և ըստ այսմ կամի ասել. 'ի թողուլ զօրութեան իմոյ զիս՝ խնդրէի զսիրելիս իմ օգնել 'ի նոցունց և մխիթարել. բայց ոչ ոք 'ի նոցանէ գտաւ առ իս կամ ընդ իս : 'Ի հանդերձելումն ևս սոյն այս պատահի. զի անձն այն սիրելի՝ զոր դու կոչես լոյս աչաց իմոյ՝ 'ի թողուլ զքեզ ա̄յ՝ ոչ եղիցի ընդ քեզ, ոչ օգնեսցէ քեզ, և ոչ հայեսցի 'ի քեզ : Սոյնպէս և ոչ խրատիչն քո և ոչ ուսուցիչն, որք տային լոյս աչաց հոգւոյդ :

Հոգևորապէս՝ լոյս աչաց է օրէնքն ա̄յ, նոյնպէս և խընամք տեսչութեան նորա : Սոյն այս ասէ 'ի մեղանչել իմում ոչ եղև ընդ իս, որ է ասել. լոյս օրինացդ և խնամք տեսչութեանդ արդարև յիս էր, բայց ես ոչ տալով նմա տեղի՝ արարի՝ զի ոչ լիցէ ընդ իս 'ի գործել ըստ լուսաւորելոյ նորա : Յայս հայի և մեկնութիւն լամբրոնացւոյն :

Այս ամենայն զոր ասացաք, կարէ ասիլ և 'ի դիմաց մարդկայնին բնութեան. ևս և 'ի դիմաց ադամայ, և 'ի դիմաց իւրաքանչիւր մարդոյ. զոր և ամենայն ոք կարէ ինքնին հաւեցուցանել և մեկնել :

Մինչև ցայս վայր խօսեցաւ մարգարէն զներքին կրից իւրոց, այսինքն զայնցանէ զորս կրեաց 'ի ներքս. այժմ սկսանի խօսիլ և զարտաքին կրից, այսինքն զայնցանէ զորս կրեաց յայլոց, 'ի բարեկամաց և 'ի թշնամեաց. զորոց խօսի յերկու յաջորդ համարսդ. (և ապա 'ի համարն. 16. 19, և 20.) արդ՝ նախ ասէ.

ժա̄. Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կային. և մերձաւորք իմ հեռի եղեն յինէն :

ժբ̄. Բռնադատէին զիս, և խնդրէին զանձն իմ այլ խնդրէին չար 'ի վերայ իմ. խօսեցան զանօրէնութի̄. և զնենգութի̄ զօր հանապազ խորհեցան :

Բարեկամ ասի ոք ումեք՝ որ հաճեալ ընդ անձն նորա՝ բարի կամի նմա ոչ վասն իւր, այլ վասն նորա 'ի փոխադարձ սիրոյ նորին : Սէր երեք ինչ է տեսանել. մի՝ զի հաճութիւնն ուղղակի ոչ լիցէ ընդ այն՝ որ է անձին, այլ ընդ անձն : Երկրորդ՝ զի կամիլն զբարին ոչ լիցէ վասն իւրոյ օգտի, այլ վասն օգտի սիրեցելոյն. իսկ եթէ իցէ վասն իւր՝ այն ոչ հայի 'ի բան բարեկամութեան, բայց և ոչ ներհակի այնմ. Երրորդ՝ զի երկուստեք պարտի լինել այն բարեկամական սէր, կամ կամեցողութիւն բարւոյ. ապա թէ ոչ՝ ոչ ասի բարեկամ, այլ միայն սիրելի ոք. զի հնար է ումեք լինել սիրելի, այլ ոչ լինել բարեկամ. բայց չէ հնար լինել ումեք բարեկամ և ոչ լինել սիրելի. և թէպէտ երբեմն նաև սոսկ սիրելին բարեկամ անուամբ կոչի, բայց ոչ սահմանաւ բարեկամութեան.

Իսկ մերձաւորն եթէ ըստ մասնաւոր նշանակութեանն առցի՝ յայտ առնէ զայն՝ որ իցէ ծանօթ իւիք մերձաւորութեամբ, այսինքն ազգականութեամբ, խնամութեամբ, դրացութեամբ, քաղաքականութեամբ, սիրով, ընկերութեամբ ևն. Իսկ եթէ ըստ ստուգաբանութեան առցի, յայտ առնէ զայն՝ որ մօտ է՝ եթէ տեղեաւ իցէ, և եթէ այլով իւիք, եթէ սիրելի իցէ և եթէ թշնամի. և զայսպիսիս տիրապէս կոչեմք մօտաւորս. Որք ամենեքին առ հասարակ որպիսի և իցեն՝ եթէ այսպիսի և եթէ այնպիսի՝ 'ի սուրբ գիրս ընկեր կոչին. յոր միտս ասի. * սի-
,, րեսցես զընկեր քո ‖. (ղևտ. ժթ. 18.)

Արդ աստանօր բառդ բարեկամ՝ առեալ լինի ըստ այնմ նշանակութեան զոր եդաք. իսկ բառդ մերձաւոր՝ որ երկիցս յիշատակի՝ յառաջնումն առեալ լինի ըստ մասնաւոր նշանակութեան. իսկ յերկրորդումն առեալ լինի ըստ ստուգաբանութեան փոխանակ մօտաւորի, որպէս յայտ է յեբրայականէն և յայլոց թարգմանութեանց. յոր միտս և լամբրոնացին մօտաւոր դնէ աստ. Ըստ այսոցիկ նշանակութեանցս խօսելով՝ ասէ.

Բարեկամք իմ և մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան և կացին. Այսինքն նոքա՝ որք էին իմ ճշմարիտ բարեկամ և իմ բազմամեայ մերձաւոր՝ տեսեալ թէ ես 'ի սուգ և 'ի տրտմութիւն ըմբռնեալ եմ վասն մեղաց իմոց, և կրեմ զբազում տառապանս 'ի պատիժ անօրէնութեան իմոյ, առաջի իմ մերձեցան և կացին. այսինքն ներկայացան առաջի իմ. բայց ոչ մատուցին ինձ սփոփանս ինչ, այլ իբրև արձան կացին և մեկնեցան. Եւ կամ դարձեալ երևեցուցին ինձ զինքեանս, ոչ զի մխիթարեսցեն զիս. այլ զի ներկայութեամբ իւրեանց յանդիմանելի ցուցցեն զիս. որպէս թէ ասել կամելով. ով դու բարեկամ մեր զիա՞րդ համարձակեցար յայդպիսի անօրէնութիւն, աւասիկ ընկալար զհատուցումն, եւն. որպէս արարին և բարեկամքն յոբայ ընդ յոբ.

Բարեկամութիւն այսպիսեաց ապակեայ շղթայ է, որ 'ի շարժիլն խորտակի և քակտի. Ձիւն հալի 'ի ջրոյ և 'ի հրոյ. այսպիսի բարեկամութիւն եւս հալի 'ի սնոտի ինչ բանէ և 'ի բանսարկութենէ օտարաց իբր 'ի ջրոյ. հալի և 'ի հրոյ. իբր զի յայրել բարեկամին 'ի հալածանաց և 'ի մաշիլ նորա 'ի պարտուց, և յայլոց դիպուածոց՝ ապականի իբր 'ի հրոյ. Իսկ ճշմարիտ բարեկամութիւնն անդամանդ է անլուծանելի.

Այս բան կարէ մեկնիլ և 'ի վերայ այնց բարեկամացն դաւթի՝ որք յարեցան և միաբանեցան ընդ աբեսաղոմայ յանդիմանն նորա, որով որպէս թէ կացին առաջի նորա. և եղեն եւս ընդդէմ նորա առ 'ի կորուսանել զնա. Իսկ 'ի լինել այսր՝ թօթափեցան 'ի նմանէ նա և այլք՝ որք իւրքն էին. և առ այս յարէ և ասէ.

ԺԲ. Մերձաւորք իմ հեռի եղեն յինէն. Այսինքն նոքա՝ որք մերձ իմ կային՝ եթէ զօրականք և եթէ ծառայք, 'ի տառապիլ իմում, նոյնպէս և 'ի հալածիլ իմում՝ թողին զիս ըստ մեծի մասին, և 'ի բաց հեռացան յինէն.

Զայս բան 'ի դէմս քրիստոսի առնու եկեղեցին 'ի շարականի յերգելն առ նա. * Այսօր բարեկամք և մեր-
,, ձաւորք քո (այսինքն բազումք յայնցանէ՝ որք 'ի ծա-
,, ծուկ բարեկամ էին, ընդ որս և յուդայ) հեռի ե-
,, ղեն 'ի քէն. օտարացան և եղբարք քո ‖. այսինքն առաքեալքն. Իսկ այս հայի նախ 'ի ժամն յայն՝ յորում ըմբռնեցաւ 'ի պարտիզին գեթսեմանի. ուր թողին զնա առաքեալքն և փախեան. յայս միտս առնու և բարսեղ վարդապետ, ('ի մեկն. մարկ. ԺԴ.) Երկրորդ՝ հայի 'ի ժամ խաչելութեան. ըստ որոյ ասէ նոյն բարսեղ վարդապետ ('ի մարկ. ԺԵ.) * կային և ա-
,, մենայն ծանօթք նորա 'ի հեռաստանէ. որպէս զի
,, կատարեսցի այն՝ զի ասէ. ծանօթք իմ և մերձա-
,, ւորք իմ հեռի եղեն յինէն ‖. Երրորդ՝ հայի 'ի գործ փրկութե՟ մերոյ՝ զոր առանձինն կատարեաց տէրն մեր չունելով զոք իւր օգնական. առ որ 'ի վկայութիւն բե-

րել զայն՝ գեորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) յասելն բանիւ եսայեայ. * Հնձան հարի միայն, և 'ի հեթանոսաց՝ որ է յազգաց՝ ոչ ոք էր ընդ իս. ոչ ար-
„ դար, ոչ հայրապետ, ոչ մարգարէ, ոչ սուրբ ոք. որ-
„ պէս այլուր ասէ. բարեկամք իմ և մերձաւորք իմ
„ հեռի կացին յինէն։

Լամբրոնացւոյն 'ի բարոյական միտս առեալ զայս բան մեկնէ 'ի վերայ հնարից դիւացն, որք իբր բարեկամ մերձենան և պատրեն, նենգեն և 'ի մեղս արկանեն. որով և մտաւորքն մեր՝ այսինքն հրեշտակք՝ հեռի լինին 'ի մէնջ. այսինքն 'ի բաց առնուն 'ի մէնջ զխնամս իւրեանց։ Եղեալ մարգարէին զմերձենալ և զհեռանալ բարեկամաց և ծանօթից, առաջի առնէ այժմ և զայն զոր գործէին նոքա ընդդէմ իւր. և ասէ։

ԺԲ. Բռնադատէին զիս, և խնդրէին զանձն իմ։ Կամի ասել. որք դարձան ինձ 'ի թշնամութիւն՝ բռնադատէին զիս, այսինքն բուռն առնէին ինձ մեկնիլ և մերժիլ յիմոցս, ևս և բռնի վարէին զիս 'ի թագաւորութենէ իմմէ. որպիսի եղեն աբեսաղոմ, աքիտոփէլ, և որք միաբանեցան ընդ նոսա։ Եւ խնդրէին զանձն իմ. այսինքն կամէին կորուսանել զիս. (ըստ որում գրի 'ի Բ. Թագ. ԺԵ. ԺԶ. և ԺԷ։) Եւ զի զոր խնդրէին առնել՝ չար էր, և զոր խորհէինն՝ անօրէն, զայս կամելով յայտ առնել՝ յարէ զկնի, և ասէ։

Որ խնդրէին չար 'ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւն։ Այսինքն նոքա որք խնդրէին և կամէին չարիս հասուցանել ինձ, խօսեցան զանօրէնութիւն. այսինքն խօսեցան 'ի մէջ իւրեանց գործել ընդ իս զայնպիսի գործս, որք էին անօրէն. որպիսի էր այն՝ զոր խօսեցաւ աքիտոփէլ վասն խայտառակելոյ զդաւիթ (Բ. Թագ. ԺԶ. 21.) և վասն սպանանելոյ զնա (Բ. Թագ. ԺԷ. 1=4։) Որպիսի էր և այն զոր խօսեցաւ սեմէի (Բ. Թագ. ԺԶ. 7. 8.) որոց նման խօսեցան և այլք բազումք ընդդէմ նորա 'ի հալածիլ նորին յաբեսաղոմայ՝ 'ի մէջ բերելով զյանցանս նորուն, յասելն. որովհետև զայդպիսի անօրէնութիւն գործեալ է դորա, զարժանին եգիտ, ևն։ Եւ զի նենգութիւն ևս կայր 'ի նոսա՝ զայն ևս 'ի մէջ բերէ ասելով.

Եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան։ Այսու եւ զգործս թշնամեացն, եւ յետոյ զխօսսն. յաւելու այժմ եւ զխորհիլ նոցա. որպէս թէ ասէր, ոչ միայն յայտնի գործելին եւ խօսէին զչարիս, այլ եւ գաղտ խորհէին զմեծն խորհուրդ նենգութեան. առ 'ի պատրելոյ զիս՝ զի որսասցեն զանձն իմ յորոգայթ կորստեան. եւ այն ոչ եթէ միանգամ, կամ զօր մի միայն, այլ զօրհանապազ. զի յորմէ հետէ թշնամանեցան ընդ իս՝ ոչ եւս դադարեցին 'ի խորհելոյ նենգութիւն 'ի վերայ իմ։

Այս բանք տիրապէս հային առ տիրասպանն հրէայս. որք հանապազ խորհէին բառնալ զկեանս կեցուցչին իւրեանց. խորհէին նենգութիւն, եւ խօսէին զանօրէնութիւն. խնդրէին կորուսանել զնա, եւ բանսարկուէին մատնել 'ի մահ խաչի։ Իսկ թէ 'ի խորհել եւ 'ի գործել նոցա զայսպիսիս՝ զինչ արժան էր առնել, եւ յինչ օրէն էր ուշ դնել, առաջի նկարէ ասելով.

ԺԴ. Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։

ԺԵ. Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ. եւ ոչ գոն խօսք 'ի բերան նորա։

Յետ մեղանչելոյն դաւթի՝ մինչդեռ էր ապաշաւեալ՝ բազում տրտմութիւնք եղեն զնմանէ 'ի ժողովրդեանն. եւ ապա զկնի ապաշաւելոյն 'ի յառնել աբեսաղոմայ եւ այլոց բազմաց 'ի վերայ նորա. եւ 'ի մերժիլն իւր իբր անարգեալ՝ բազումք բազում ինչ խօսէին ընդդէմ նորա. որպէս յայտ է 'ի նախադրելոցդ. եւ նա յայնմ ամենայնի եղեւ իբրեւ խուլ եւ համր. ըստ առաջնոյն այսինքն նախ քան զդարձն կամաւորապէս անհոգ եւ անփոյթ լինելով. իսկ ըստ երկրորդին կամաւորապէս համբերելով։ Այլ ինձ երեւի՝ այս բանքն ոչ հային յառաջինն, այլ յերկրորդն. եւ յայս միտս ասէ։

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ. որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր։ Իբր թէ ասէր. 'ի նախատել զիս մարդկան եւ 'ի չարախօսել նոցա զինէն, հայէի ես ոչ 'ի բանս նոցա, այլ յանօրէնութիւնս իմ, որոց արժանի էին այն բանք. եւ 'ի խորհել իմում՝ պարտաւոր դատէի զիս այնմ ամենայնի. վասն որոյ խոնարհէի, և համբերութեամբ տանէի. որով և արարի զիս հանգոյն այնպիսի մարդոյ՝ որ իցէ խուլ և համր. զի որպէս նա ոչ լսէ և ոչ խօսի, այսպէս եղէ և ես. զի իբրև զխուլ որպէս թէ ոչ լսէի, և իբրև զհամր ոչ խօսէի ինչ ընդդէմ: Զերկոսին 'ի միասին դնէ՝ հայելով յայն՝ որ 'ի բնէ խուլ իցէ. զի այսպիսին՝ նաև համր է: Այլ յասելն աստ՝ որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր՝ ոչ կամի ցուցանել՝ թէ համրն ոչ բանայ զբերան, որովհետև կարէ բանալ, և բանայ իսկ 'ի ձայնել. բայց ոչ բանայ 'ի խօսել. և ը͞ս այսմ դնէ զոչ բանալ բերանոյն. զոր առ բացայայտելս իմացուցանելոյ՝ կրկնէ զնոյն՝ և ասէ:

ժ͞դ. Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ. և ոչ գոն խօսք 'ի բերան նորա: Որպէս թէ ասէր, 'ի վատաբանիլս և 'ի հալածիլս, և 'ի լսելս զբանս չարս զինէն՝ կայի հանգոյն այնպիսի մարդոյ, որ ոչինչ լսիցէ, և ոչինչ կարիցէ յօդել 'ի բերանի իւրում:

Այս բանք ուղղակի ասին 'ի դիմաց ք͞ի՝ 'ի կալ նորա առաջի աննայի և կայիափայի, պիղատոսի և հերովդէի իբր այնպիսի ոք՝ որ ոչ խօսի. որպէս ասի 'ի շարակնոցն. * 'ի հարցանել պիղատոսի՝ տէրն ոչ տանէր պա-
„ տասխանի. զի կանխասաց գիրն լցցի, եղէ ես մարդ՝
„ որ ոչ խօսի ||: Այս բան լցաւ 'ի տէրն մեր նաև 'ի կալ նորա առաջի տանջողաց իւրոց. ըստ որում մարգարէացեալ էր և եսայի յասելն զնմանէ * այր
„ մի 'ի հարուածս, և գիտէ համբերել ցաւոց... առ
„ վշտին ոչ բանայ զբերան իւր... իբրև զորոջ առա-
„ ջի կտրչի անմռունչ կայ՝ այնպէս ոչ բանայ զբերան
„ իւր ||: (եսայ. ծ͞գ. 7.) ևս և * ոչ հակառակեսցի
„ և ոչ աղաղակեսցէ ||. (մատ. ժ͞բ. 19:) Բան մի միայն բաւական էր նմա ցուցանել զանմեղ լինելն իւր, բայց լռու եղև առ 'ի անմեղս առնելոյ զմեզ. զի առ այն եկեալ էր, և առ այն իսկ մատնեալ էր զանձն կամաւ 'ի ձեռս նոցա: Որով և յայտնի լինի թէ լռու լինել տեառն մերոյ 'ի չարչարանսն անդ, և լռութեամբ տանիլն՝ ոչ ցուցանէր զթեթևութիւն կրիցն, այլ զառաւելութիւն սիրոյն որ առ մեզ, և զյօժարութիւն կամաւոր յանձնառութեան այնր չարչարանաց ոչ խընայելով յինքն առ 'ի խնայել 'ի մեզ:

Յայտ արարեալ մարգարէին զայն ինչ՝ զոր ոչ արար 'ի չարախօսին և 'ի հալածչին՝ քանզի իբրև խուլ ոչ լուաւ, և իբրև համր ոչ խօսեցաւ, յայտ առնէ այժմ և զայն զոր արար՝ եթէ սրտիւ, եթէ բանիւ և եթէ գործով. և նախ ասէ.

ԺԵ. Ես 'ի քեզ տէր յուսացայ. և դու լուիցես ինձ տէր ա՟ծ իմ.

Չափ յուսոյ երանելոյն դաւթի առ ա՟ծ ըստ ցուցանելոյ սաղմոսաց նորա առաւել քան զչափ տեսանի. կամ այսպէս ասացից՝ երևի լինել առաւել քան զամենայն որդւոց մարդկան, ըստ չորից. մի՝ ըստ սաստկութեան՝ զի յամենայն սրտէ և բոլորովին յա՟ծ ունէր եդեալ զայն. երկրորդ՝ ըստ հաստատութեան՝ զի անդրդուելի պահէր զայն առ ա՟ծ. երրորդ՝ ըստ հանապազորդութեան, զի միշտ և հանապազ նովաւ մնայէր առ ա՟ծ. չորրորդ՝ ըստ տարածութե՟, զի յամենայն դիպուածս՝ 'ի յաջողութեան և 'ի ձախորդութեան, 'ի խաղաղութեան և 'ի փորձութեան զնոյն առնոյր իւր ապաւէն. Եւ զի * յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ‖, (Հռովմ. Ե. 5.) զայսպիսի սաստիկ և հաստատուն յոյս ունելով դաւթի միշտ և յամենայնի՝ ոչ երբէք ամաչէր, այսինքն ոչ երբէք զրկեալ լինէր յայնմանէ՝ որոյ վասն յուսայր. Յայս յոյս ապաստանեալ և յայնմ մեծի նեղութեան իւրում զոր կրէր 'ի ներքոյ և արտաքոյ, մատչի առ ա՟ծ, և ասէ.

Ես 'ի քեզ տէր յուսացայ. և դու լուիցես ինձ տէր ա՟ծ իմ.

Այս բան կրկնակի կարէ առեալ լինել. մի՝ յինքեան, և մի ևս՝ հայելով 'ի նախընթաց համարդ. Եթէ յինքեան առցի, կամի ասել. 'ի քեզ յուսալով՝ ձայն բարձի առ քեզ. և զի դու լսես ձայնի յուսացելոց 'ի քեզ՝ ակն ունիմ թէ լուիցես և ինձ. և մի որպէս ես եղէ իբր խուլ և անլուր, դու ևս անլուր լինիցիս առ իս. այլ լուիցես ինձ. զի եթէ ոչ լսէիր՝ ոչ յուսայի առ քեզ, ըստ ասելոյ լամբրոնացւոյն.

Իսկ եթէ առցի ըստ հայելոյ 'ի նախակարգեալ համարն, միտ բանին ակնարկէ յազատութի՟ տառապանաց ներքնոց և արտաքնոց. զորս յիշեաց 'ի վերոյ. որպէս թէ եդեալ էր. պաշարեցին նեղութիւք զանձն իմ, և ոչ գտաւ ինձ ոք մխիթար. զի և բարեկամք իմ փոխանակ մխիթարելոյ զիս՝ անհնար եղեն ինձ, և որք ծառայք էին իմ՝ յարեան 'ի վերայ իմ. և ամենեքին առ հասարակ չարիս խնդրեցին, չարիս խորհեցան, և չարիս խօսեցան զինէն: Յայսմ ամենայնի զինչ ունէի առնել՝ բայց եթէ խուլ և համր լինելով 'ի քեզ միայն յուսալ, և առ քեզ դիմել. քեզ զցաւս իմ յայտնել և զքեզ զազատիչ իմ աղաչել. և դու տէր ա̃ծ իմ՝ որ տեսանես զտառապանս իմ՝ լուր աղաչեմ, լուր ինձ. և արա առ իս զոր ինչ և կամիս: Իսկ թէ զինչ խորհէր զթշնամեաց իւրոց 'ի յուսալ իւր առ ա̃ծ՝ յայտ առնէ ասելով:

ԺԶ. Զի ասացի թէ՝ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

Որպէս յայտ է 'ի վերոյգրելոցդ՝ 'ի հալածիլ դաւթի՝ 'ի սկզբան անդ ոչ մխեաց նա զձեռն իւր 'ի պատերազմ. մանաւանդ թէ և ոչ իսկ ակն ունէր յաղթել պատերազմաւ. վասն որոյ ընտրեաց երկու ինչ. մի՝ համբերել չարախօսութեան թշնամեացն, առ որս եղև իբր խուլ և համր. և մի ևս՝ յուսալ յա̃ծ և 'ի նա ապաւինիլ՝ հայելով 'ի գործս թշնամեաց: Իսկ թէպէտ յետոյ ձեռն էարկ պատերազմի, բայց այն եղև վասն հարկի. որոյ և յաղթութիւնն եղև յա̃յ վասն յուսալոյ նորա առ ա̃ծ. և առ 'ի յայտ առնել զայս ամենայն՝ ասէ:

Զի ասացի՝ թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. Այսինքն՝ 'ի հալածիլ և 'ի նախատիլ իմում խորհեցայ 'ի միտս իմ, և յիս ինքն խօսելով՝ ասացի 'ի սրտի իմում. բարի է ինձ համբերել և յուսալ յա̃ծ, զի նա լիցի ինձ պաշտպան. քանզի գիտեմ՝ զի 'ի պաշտպանել նորա զիս՝ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. այսինքն մի կարասցեն առնել ընդ իս՝ զոր խորհին. և ոչ կարելով առնել՝ մի լիցի նոցա ուրախանալ 'ի վերայ իմ, և ասել՝ թէ նուաճեցաք զնա: (Նոյն վասն ոչ ուրախ լինելոյ թշնամեաց՝ տես զոր ասացաք 'ի սաղ. ԻԹ. 1.) Այս բան այլազգ ևս կարէ կարգիլ. իբր թէ 'ի յուսալ դաւթի առ ա̃ծ՝ ասացեալ իցէ 'ի սրտի իւրում. որովհետև յուսացայ յա̃ծ՝ ակն ունիմ թէ գուցէ 'ի նմանէ զպաշտպանութիւն ընդդէմ թշնամեաց իմոց. զի մի եւ ուրախ լիցին նոքա 'ի վերայ իմ։ Կամ թէ 'ի յուսալ իմում ասացի առ ա̃ծ, աղաչեմ զքեզ տէր՝ արա զի մի ուրախ լիցին յիս թշնամիք իմ. եւ մի կատարեսցին 'ի վերայ իմ այն ամենայն՝ զոր խօսեցան զինէն. զոր եւ առաջի դնէ յաջորդ բանիւն ասելով։

Ի սասանել ոտից իմոց՝ 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան։ Ոտիւք իմացեալ լինին աստ ըստ փոխաբերութե̃ այն իրք՝ որովք իբր ոտիւք կայր եւ գնայր դաւիթ 'ի թագաւորութեան իւրում. որոց մին էր իրաւունք իշխանութե̃ն՝ զոր ունէր. եւ միւսն էր հաճոյ լինել իւր առաջի ժողովրդեան. եւ զի 'ի հալածիլ իւր երկոքին սոքա սասանեցան, թէպէտեւ ոչ կործանեցան՝ ասին իբր ասէ. 'ի սասանել ոտից իմոց՝ այսինքն 'ի խախտիլ իշխանութե̃ս, եւ յանհաճոյ լինել անձինս առ ժողովուրդն (որով եւ տարագրեցայ 'ի թագաւորութե̃ս,) թշնամիք իմ խորհուրդ արարեալ 'ի մէջ իւրեանց՝ մեծամեծս խօսեցան 'ի վերայ իմ։

Մարթ է եւ ասել՝ թէ խելամտութե̃ ձեւով խօսելով զմասն դնէ փոխանակ բոլորին, այսինքն զոտսն փոխանակ բոլոր անձին. որպէս թէ ասէր. 'ի սասանիլ իմում՝ 'ի թագաւորութենէ, կամ 'ի հալածիլս իմ՝ մեծամեծս խօսեցան զինէն թշնամիք իմ։

Մեծամեծս ասելով իմանայ ոչ միայն զմեծագոյն չարիս, այլ եւ զմեծաբանութեան եւ զամբարտաւանութե̃ խօսս. (որպէս յայտ է. 'ի բ̃. գիրս թագ. ժզ̃. 20։ եւ ժէ̃. 2 = 14։) Եւ զոր խօսեցանն թէպէտ եւ 'ի գործ եդին, բայց ա̃ծ պաշտպան լեալ դաւթի՝ խորտակեաց զյարուցեալսն 'ի վերայ նորա։

Զայս բան ողջոյն ընդ նախընթաց հատուածոյն մարթ է տարածել եւ 'ի վերայ այնր սասանման դաւթի՝ որ եղեւ մեղօք, (ըստ այնմ զոր ասաց 'ի սաղ. իթ. 7. 8.) որպէս թէ եղեալ էր. ես ասացի 'ի ժամանակի յաջողութե̃՝ թէ միշտ անսասան մնացից, եւ թշնամիք իմ մի կարասցեն ուրախանալ 'ի վերայ իմ. բայց յորժամ մեղօք սասանեցան ոտք իմ, այսինքն զգայութիւնք իմ, իբր թէ յորժամ գլորեցայ 'ի մեղս, թշնամիք իմ բացին զբերանս իւրեանց 'ի վերայ իմ, և մեծամեծս խօսեցան, և արարին զիս նշաւակ իւրեանց։ Եւ արդարև զայս գիտելով դաւթի՝ և յայտնի տեսանելով՝ թէ մեղք իւր եղեն պատճառ կրելոյ զայնքան պատուհաս՝ պարտաւոր և արժանի համարէր զինքն այնմ ամենայնի. և յայս ակնարկելով յարէ զկնի, և ասէ.

ժէ. Ես 'ի տանջանս պատրաստ եմ. և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Որ միանգամ ճանաչէ թէ քանի չար է մեղքն, և քանի դառն է բաժանիլ յա՟յ մեղօք, ոչ միայն անհնարին ցաւօք պաշարի, այլև յօժարակամ յանձն առնու կրել զո՛ և իցէ վիշտս, միայն թէ ջնջեսցին այն մեղք, և բարձցի այն բաժանումն 'ի միջոյ. և զի ըստ նախակարգեալ բանիցդ 'ի սոյն կիրս ըմբռնեալ էր դաւիթ՝ զայն կամելով յայտ առնել՝ ասէ.

Ես 'ի տանջանս պատրաստ եմ։ Որպէս թէ ասէր. որովհետև մեղօք իմովք դառնացուցի զքաղցրութիւն երեսաց քոց, պատրաստ եմ կրել զամենայն տանջանս, այսինքն զամենայն վիշտս նախատանաց և անարգանաց, զամենայն վիշտս ձաղանաց և ձաղկանաց, զամենայն վիշտս հալածանաց և աքսորանաց, միայն թէ տեսից միւսանգամ հաշտ զերեսս քո ընդ իս։ Այս բան մարգարէին յայտնի ցուցանէ թէ վիշտն ոչ այնչափ է յիրսն, որչափ 'ի կիրսն. զի ահա սա և այլք սիրով կրեն, զոր այլք երբէք բնաւ չախորժեն։

Լամբրոնացին զպատրաստ լինելն առնու առ փոխանակ զգաստ կալոյ, և տանջանօք իմանայ զչար խորհուրդս տանջիչս. որպէս թէ եղեալ էր. զգուշանամ այսուհետև 'ի չար խորհրդոց, զի մի ես յաղթեցայց. կամ ըստ վարդանայ, ես 'ի տանջանս խղճի մտաց տապիմ, բայց յօժարութ՟բ ես կրեմ զայս զի արժանի եմ այսպիսի տանջանաց. և զպատճառն տայ մարգարէն ասելով.

Եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ Աստանօր բառդ Եւ՝ դնի փոխանակ պատճառական շաղկապիս Զի. որպէս սովորութիւն է սուրբ գրոց՝ վարել զայս շաղկապ յայս միտս. ըստ այնմ. (Եսայ. կդ. 5.) * արդ
,, ահա դու բարկացար, և մեք մեղաք ‖. այսինքն զի

մեք մեղաք. սոյնպէս է և յայլ բազում տեղիս. Իսկ բառդ ցաւ դնի փոխանունութեն ձևով ըստ Ճարտասանից՝ փոխանակ պատճառի ցաւոց. այսինքն փոխանակ մեղաց՝ որ պատճառեաց 'ի դաւիթ զցաւ մեծ. զի որպէս այլուր ասացաք՝ սովորութիւն է Ճարտասանից զանուն գործոյն դնել փոխանակ անուան պատճառին, որ կարի յաճախ 'ի գործ ածի 'ի սաղմոսի.

Յայս միտս առեալ կամի ասել. պատճառ պատրաստ լինելոյ իմ առ տանջանս՝ այս է, զի առաջի աչաց իմոց ունիմ զմեղս իմ, յորմէ ծնանի յիս ցաւ սաստիկ 'ի վերայ նոյն մեղացս. և այն ցաւ է՝ որ յօժարեցուցանէ զիս կրել զոր և իցէ նեղութիս՝ առ 'ի քնջեալ տեսանելոյ զայնոսիկ առաջի աչացն այ.

Այս բանք ասին և 'ի դիմաց քի՝ որ յանձն առեալ զցաւս մեղաց մերոց՝ և առաջի իւր ունելով զայն յամենայն ժամ՝ յօժարակամ մատնեաց զանձն 'ի տանջանս վասն մեր. Նոյն այս ասի և 'ի դիմաց ո և իցէ Ճշմարիտ ապաշխարողի. զի այսպիսս յիրաւի պատրաստ գտանի առ ամենայն՝ առ 'ի կատարելապէս հաշտեցուցանել զերեսս այ. ոչ հայի յայն զոր կրէ, այլ փութայ յայն՝ զի կրելով դեղ դարմանի մատուցանէ ցաւոց իւրոց, զոր ունի 'ի վերայ մեղաց. զի եթէ Ճշմարիտ իցէ ապաշխարել նորա՝ յայն բերի փոյթ նորա և 'ի նոյն հոգայ. ըստ որում է տեսանել և յերանելեն դաւիթ. որոյ փոյթ այս էր՝ զի ըստ ամենայնի քնքեալ տեսցէ զանօրէնութիս իւր. վասն որոյ և միշտ զնմանէ հոգայր. և զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով.

ժը. Զանօրէնութիւնս իմ պատմեցից. և հոգացայց վասն մեղաց իմոց.

Որչափ վնաս է մարդոյ պատմել առաջի այ զբարեգործութիւնս իւր՝ այնչափ օգտակար է նմա տարածել այսինքն խոստովանիլ զանօրէնութիս առաջի նորա. զի զոր մին կորուսանէ՝ միւսն գտանէ. զոր մին գտանէ՝ միւսն կորուսանէ. փարիսեցին խոստովանեցաւ առաջի այ զգործս իւր բարիս. մաքսաւորն ևս խոստովանեցաւ առաջի աստուծոյ զգործս իւր չարս, այսինքն զմեղս. փարիսեցին խոստովանելով կորոյս՝ զոր ունէր զբարիս՝ եւ եգիտ զոր ոչ ունէր զչարիս, այսինքն ըզմեղս. Նոյնպէս եւ մաքսաւորն խոստովանելով՝ կորոյս զոր ունէր զմեղս. եւ եգիտ զոր ոչ ունէր զբարիս. * Զի զոր խոստովանի ոք առաջի ա͞յ՝ կորուսանէ‖. ասէ Իգնատիոս վարդապետ. ('ի մեկն. ղուկ. ժ͞է. 14.) Զոր բացայայտ եւս արձանագրէ սարգիս շնորհալի ('ի մեկն. կաթ. յակ. Թ.) ասելով. * զոր ինչ միանգամ ,, խոստովանի ոք՝ կորուսանէ, եթէ զմեղս, եւ եթէ ,, զարդարութիւն‖. Ցանկանալով ապա եւ մարգարէին՝ իսպառ կորուսանել զմեղս իւր եւ զյիշատակ նոցուն, փափաքի խոստովան լինել զնոյն առաջի ա͞յ, եւ յայտնի պատմել նմա, սմին իրի ասէ.

Զանօրէնութիւնս իմ պատմեցից. Որպէս թէ ասէր. որովհետեւ ճանաչեմ, զի անօրինեցայ առ ա͞ծն իմ, եւ մեղայ նմա, որով եւ արժանի գոլ կրել նեղութիւն բազում 'ի հալածչաց, ամբաստան եղէց առաջի ա͞յ՝ ոչ զհալածչաց, այլ զանձնէ իմմէ. ոչ զչարիս նոցա յայտնելով, այլ զանօրէնութիւնս իմ մի առ մի պատմելով. եւ յայս իսկ ոչ ասէ յայտնեցից, այլ պատմեցից. իբր թէ ասել, ըստ ամենայն հանգամանացն եղից առաջի. որով եւ գտից հնարս լիակատար քաւութեան. եւ առ այս յարէ.

Ես հոգացայց վասն մեղաց իմոց. Այսինքն 'ի պատմելս իմ զանօրէնութիւնս անձին իմոյ առաջի ա͞յ՝ ոչ եւս մոռացայց եւ ոչ եղէց անհոգ, այլ հոգացայց, այսինքն հոգ տարայց, եւ փոյթ կալայց խորհրդով՝ բանիւ եւ գործով՝ առ համայն քաւութիւն մեղաց իմոց. որպէս զի եւ ա͞ծ հոգ ունիցի զինէն 'ի քաւել զիս յամենայն մեղաց՝ ջնջելով զնոսա իսպառ. Արդարեւ ճշմարիտ ապաշխարողի ցոյց. ապա թէ ոք յետ ապաշխարելոյ անհոգ կայցէ՝ ոչ կարէ կալ հաստատուն. թուլասցի 'ի հոգին, եւ 'ի չարագոյնն գլորեսցի. որպէս եւ յայտնի տեսանեմք 'ի գաղջ քրիստոնեայս.

Սովին այսու յորդորիմք եւ մեք 'ի խորհրդական խոստովանութիւն 'ի պատմել զմեղս մեր առաջի քահանայի յառանձնութեան, եւ հոգ ունել ոչ եւս մեղանչելոյ. Բայց քանզի կան ոմանք ոչ տեսանեն եւ ոչ զգան յինքեանս ծանր ինչ մեղս՝ համարձակին եւս ասել, զինչ հարկ իցէ խոստովանիլ. Ո՛չ տեսանես, զի ոչ կամիս տեսանել. հեռացո՛ 'ի քէն, և տեսցես. յորժամ տեսանելի ինչ հալեալ իցէ ընդ աչս՝ ոչ տեսանի. 'ի մեկնելն յաչաց՝ յայտնի տեսանի. մեղք յարեալ 'ի հոգին ոչ նշմարի, 'ի կամիլդ մեկնել 'ի բաց՝ յայտնի տեսանես։ Ասես թէ ոչ զգամ. այո՛ ոչ զգաս, զի ընդարմացեալ է 'ի նոյն հոգի քո. հիւանդն ամսօրեայ կացեալ 'ի գարշահոտ սենեկի՝ հոտ ինչ գարշութեան՝ ոչ զգայ, զի թմրի ըմբռնողական զօրութիւնն. եթէ ելցէ արտաքս, և դարձցի հոտոտել՝ յայնժամ զգայ։ Թռչուն ոչ զգայ՝ թէ ըմբռնեալ իցէ յաւող. 'ի կամիլն մեկնիլ զգալով զգայ. ըմբռնեալ եւ դու յաւող մեղաց, ոչ իմանաս, վասն զի ոչ կամիս մեկնիլ. 'ի մեկնիլդ քաջ իմասցիս։

Եթէ չունէաք զմահուչափ ինչ մեղս (յորմէ պահեսցէ տէր զհաւատացեալս իւր) ներելի մեղք յորդորեն զմեզ 'ի խոստովանութ՟ի. և որչափ փոյթ յաճախեն սոքա 'ի մեզ, այնչափ արժան է մեզ փոյթ մատչել 'ի խոստովանութ՟ի։ Հայելի է հոգի մեր, յոր անդադար փչեն շունչք ներելի մեղաց, ապա որպէս սրբեմք զհայելին պաստառաւ, այնպէս զհոգի մեր խոստովանութեամբ։ Երկաթ 'ի խոնաւ տեղւոջ եդեալ խոնաւանայ, պարտ է յաճախ սրբել. ապա թէ ոչ՝ ժանկահարի (այսինքն փտտի). և յայնժամ հարկ լինի քեբել։ Այնպէս հոգի մեր կայ 'ի խոնաւութ՟ե ջուրց աշխարհի, և միշտ խոնաւանայ ներելի մեղօք. ապա պարտ է սրբել զայն յաճախ խոստովանութ՟բ. եթէ յապաղեսցուք՝ ժանտանայ, և թշուառանայ։

Ի պարտէզս մեծամեծաց յօրինեն 'ի ծառոց կամ 'ի կանաչաւոր թփոց արձանք մարդոյ հատմամբ տերևոց և ոստոց. յանցանել ամսոյ ընձիւղին ոստք և տերևք, և սկսանին խանգարել զկերպարանս արձանացն. վասն որոյ հարկ լինի վերստին հատանել զտերևսն և զոստսն, և ձևացուցանել զկերպարանսն, ապա թէ թողուցուն անհարթ, ամենևին ոչ մնայ 'ի նոսա նշմարանք կերպարանաց մարդոյ։ Այնպէս իմն և 'ի մարդն յորում անդադար բուսանին տերևք և ոստք ներելի մեղաց. վասն որոյ հարկ է խոստովանութեամբ հատանել զայնս, և բարեձևս գործել զհոգին. ապա թէ անփոյթ լիցի մարդ 'ի խոստովանիլ՝ հեղ-

ձուցանեն նոքա զհոգին․ զի որպէս ասէ սարգիս շնորհալի (՚ի մեկն․ ա̃․ յոհ․ դ̃․ 10․ Ճառ ե․ յորդ․)
* մեղքն որ ստէպ ստէպ խոստովանելին՝ նուաղագոյն լի-
„ նին․ և որ ոչն խոստովանելին, ևս քան զևս թանձրա-
„ նան ‖․ և զհոգին՝ որ ՚ի պատկեր ա̃յ էր՝ դարձուցա-
նեն ՚ի պատկեր սատանայի․

Մնացի ՚ի վերոյ՝ * յառանձնութեան ‖․ զի չէ բաւական այն հրապարակական խոստովանութի̃՝ որ լինի ՚ի մէջ եկեղեցւոյ ՚ի հասարակի յասելն զհրաժարիմքն․ այլ պիտոյ է առանձինն ասել զյատուկ մեղս յականջս քահանային․ Հրամայեաց ա̃ծ՝ զի զվասն մեղացն մատուցեն արտաքոյ բանակին, և ոչ ՚ի մէջ բանակին․ (ղևտ․ դ̃․ 12․) արդ խորհրդաւոր խոստովանութիւնն է իբր պատարագ վասն մեղաց․ վասն որոյ պարտ է արտաքոյ բանակին կատարել առանձինն․ Ուստի և մարգարէն ոչ ասէ աստ՝ թէ պատմեցից զանօրէնութիւնս իմ ՚ի մէջ եկեղեցւոյ․ որպէս զօրհնելոյն ասէ այլուր, այլ որոշակի յայտնելով, որ լինի յառանձնութեան․ որոյ վասն յաւելու ևս ասել, հոգացայց․

Այն հրապարակական խոստովանութիւն ոչ է հոգալ, այլ մանաւանդ անհոգանալ․ զի յասելն զայն՝ ոչ ևս հոգայ զմեղքին զիւր մեղսն յայտնել և հատանել, այլ կամի ցուցանել միայն՝ թէ ունի մեղս․ Ճշմարիտ խոստովանութեան է հանել ՚ի սրտէ անտի զմեղսն և դնել առաջի քահանային․ զխոտն յարմատոյ խլել, և իբրև զհերս փետել․ բրել և պեղել արտաքս, և սրբել․ հեղուլ ևս ՚ի նոյն զարտասուս իբրև զջուր այրիչ (այն է քէզապ,) և այսպէս առնելով նորոգել զհոգին․

Են բազումք՝ որք թէպէտ և յօժարին ՚ի ճշմարիտ խոստովանութիւն, բայց տեսեալ ՚ի հոգիս իւրեանց զդիզացեալ կուտակութիւն մեղաց՝ սոսկան մերձենալ ՚ի նոսին․ զիարդ ձեռնարկից յայնս ասելով․ Բայց այդ ոչ է յերկիւղէ, այլ ՚ի չար ծուլութենէ․ որ ոչ տայ մարդոյ սրտապնդիլ առ ՚ի ձեռն արկանել ՚ի նոյն․ Խոստովանելի մեղք նման են եղնջոյ․ եթէ մեղմով և թուլութ̃բ հպեսցիս յեղինջն՝ խածանէ և այրէ․ իսկ եթէ յուժգին բուռն հարկանիցես՝ նուաճի և խլի․ այսպիսի ինչ են և խոստովանելի մեղք․

յոր միտս ասէ սողոմն. (առակ. ժե. 19.) * Ճանա-
„ պարհք վատաց ցցեալ փշովք ‖ ուր յայլս դնի եղինջօք. Հար զձեռն քո արութ՟բ. և մտի՛ր 'ի խոստովանութ՟ն խոնարհութեամբ. և սրբեսցես զանդաստան հոգւոյդ. և ազատեսցիս 'ի տանջանաց խղճի մտացդ. որով և զուարճասցիս և գոհասցիս զա՟յ. (Տես և 'ի սաղ. լա. 6.) Իսկ աստ գիտել արժան է՝ զի յաւել մարգարէին զայս բան՝ լռելեայն իմն ևս աղաչէ զա՟ծ, զի դադարեսցի 'ի խնդրելոյ զվրէժ մեղաց իւրոց. ոչ զի 'չ կամէր կրել զնեղութիւնս, զի առ այն պատրաստ եցոյց զինքն 'ի նախընթաց համարն, այլ զի կամէր ամենևին հաշտ տեսանել զնա ընդ ինքեան. և զի ըզգործս վրէժխնդրութեան նորա դեռևս տեսանէր 'ի վերայ իւր, այնու 'ի միտ առնոյր՝ թէ տակաւին ոչ է ամենևին հաշտ ընդ ինքն։ Սմին իրի յարէ զկնի և ասէ.

ԺԹ. Իսկ որք թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս. և բազումք էին, որք ատէին զիս 'ի տարապարտուց.

Ի. Որք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ. չար խօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան.

Թշնամիս իւր կոչէ աստ ոչ զօտարս, այլ զիւրսն, այսինքն զաբեսաղոմ, զաքիտոփէլ, և զմիաբանեալսն ընդ նոսա, որք յարեան 'ի վերայ դաւթի. և զի այս եղև 'ի վրէժխնդրութիւն մեղաց իւրոց. (որպէս գրի բ. թագ. ժբ. 10 = 13.) 'ի տեսանել դաւթի՝ թէ նոքա դեռևս կան 'ի թշնամութեան, և զօրանան 'ի վերայ իւր, յայսմանէ որպէս ասացաք՝ յայտնի տեսանէր, թէ տակաւին բարկացեալ ցուցանէ ա՟ծ զինքն առ նա ոչ 'ի կորուսանել, այլ 'ի հարուածել առ ժամանակ մի. զայս յիշելով աւելի տխրէր, քան զոր 'ի հալածանաց կրէր. վասն որոյ ասէ.

Իսկ որք թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալ են քան զիս.

Բառդ իսկ որք՝ ունի աստ զզօրութ՟ի այնպիսի նշանակութեան՝ որ յայտ առնէ միանգամայն և զտրտմագին և զցաւալի կիրս հոգւոյն. որպէս թէ ասացեալ էր. աւաղ ինձ, և եղուկ եմ ես, զի տակաւին բարկացեալ տեսանեմ զա՟ծ 'ի վերայ իմ, զի ահա Թշնամիք իմ կենդանի են: Սովին ոչ ցուցանէ՝ թէ ցանկայ մահու թշնամեաց իւրոց, այլ թէ ընդէ՞ր իցեն՝ ոչ թէ կենդանի՝ այլ թշնամի. որպէս թէ ասէր. որք վասն մեղաց իմոց թշնամի եղեն ինձ, դեռ 'ի նոյն թշնամութեան կան, և 'ի թշնամութեան անդ զօրացեալ են քան զիս:

Ուր յաւելլով զբառդ քան զիս՝ յայտ առնէ՝ թէ ինքն ոչ խօսի զզօրանալոյ թշնամեաց իւրոց յինքեանս, և քան զայլս, այլ զզօրանալոյ նոցա քան զինքն. զի ընդ այս էր իւր տրտմութիւն, և ոչ ընդ այն. որովհետև այն այս էր, որ իբր նշան ցուցանէր զոգի նորա, թէ ուրեմն դեռ ոչ է զիջեալ բարկութիւն ա՟յ. և ունի տակաւին պատուհասել զինքն ձեռամբ թշնամեաց. մանաւանդ զի տեսանէր՝ զի առաւել ևս բազմանային նոքա՝ յոր միտս յաւելու ասել:

Եւ բազմացեալք էին՝ ոյք ատէին զիս 'ի տարապարտուց: Այսինքն թշնամիք իմ ոչ միայն ոչ պակասէին, և կամ որչափ էին այնչափ մնային, այլև առաւելուին ևս, և ամենեքին ատէին զիս. և այն՝ 'ի տարապարտուց. որպէս թէ ասէր. թէպէտ և ես վասն մեղաց իմոց պարտաւոր էի ատեցեալ լինելոյ, բայց թշնամիք իմ՝ որք հալածէին զիս՝ չունէին իրաւունս, կամ չունէին զարդար պատճառ ատելոյ զիս. զի չէի ինչ մեղուցեալ նոցա. ուստի 'ի տարապարտուց այսինքն առանց իրաւացի պատճառի էր ատել նոցա զիս. կամ թէ այն ատելութիւն նոցա նենգութ՟բ էր՝ այսինքն կեղծեալ պատճառօք, առ 'ի պատրուակել զչարութիւն իւրեանց՝ զոր ընդդէմ բարերարութեանցս առնէին: Զայս հայելով յարէ զկնի, և ասէ:

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ: Այսինքն յետ ընդունելոյ նոցա առ յինէն բարերարութիւն բազում, փոխանակ բարիս հատուցանելոյ՝ չարիս հատուցին, որպիսի եղև աբեսաղոմ. և փոխանակ ջատագով լինելոյ՝ խորհուրդ չար ետուն, որպիսի եղև աքիտոփէլ. և փոխանակ շնորհակալ լինելոյ՝ չարաչար թշնամանեցին, որպիսի եղև սեմէի. և փոխանակ յիս յարելոյ՝ 'ի թշնամիս իմ յարեցան, որպիսի եղեն բարեկամք և ազգականք իմ, ևս և զօրք բազում. (զայսմանէ տես և 'ի սաղ. լդ. 11. ուր կրկնի այս բան.) Իսկ այլևայլութիւն յայտ է. զի անդ խօսէր զսաւուղեանց. և աստ զաբեսողոմեանց։

Այլ ընդհանրապէս ասեալ՝ թէ՛ աստ և թէ անդ խօսի զայնպիսեաց՝ որք բարիս ընկալեալ 'ի բարեաց, չարիս հատուցանեն նոցա. և որ չարագոյնն է, կամին՝ զի և փոխս չար ցուցցեն, և չար տեսցեն նմին ինքեանց։ Յայս ակնարկելով մարգարէին յարէ զկնի՝ և ասէ։

Զար խօսէին, (կամ չարախօսէին) զինէն. զի ես երթայի զհետ արդարութեան։ Այս բան հայի նախ 'ի հալածիչն դաւթի, այսինքն յաբեսողոմեանս՝ որք զոյն զայս յայտնի գործեցին ընդդէմ դաւթի. վասն զի նա ինքն աբեսողոմ մինչև էր յափշտակեալ զթագաւորութիւն դաւթի՝ չարիս խօսէր զնմանէ՝ աղաւաղելով զարդարութի նորա՝ իբր թէ ոչ առնիցէ դատաստան արդար. ընդ որ և հաւան գտանէին լսօղք. (Բ. Թագ. ԺԵ. 2 = 7։) Նոյնպէս և աքիտոփէլ և որք ընդ նմա, եղծին և ապականեցին զարդարութիւնն դաւթի. (Բ. Թագ. ԺԶ. 21։) Դառնագոյն ևս արար սեմէի. (Բ. Թագ. ԺԶ. 7։) Դարձեալ և ամենեքին նոքա՝ որք միանգամ թշնամացան դաւթի՝ զարդար գործս նորա՝ 'ի չարն մեկնէին, և 'ի չարն դարձուցանէին։ Յայս միտս ասեալ զայս բան՝ բառդ զի դնի իբր անորոշ. որպէս թէ ասէր. ես զարդարութիւն գործէի. իսկ թշնամիք իմ չար խօսէին զինէն. և զարդարութի իմ զչար գոլ ցուցանէին, կամ սուտ։

Երկրորդ՝ այս բան հայի յայնոսիկ՝ որք տեսեալ թէ դաւիթ երթայ զհետ արդարութեան՝ այսինքն գործէ զգործս արդարութե, (որովհետև թշնամացեալ էին ընդ նմա) նախանձէին ընդ նա, և յարդար գործոց նորա յանդիմանեալ լինելով զչարէին, և չար խօսէին. որպէս զի արհամարհելի ցուցանելով զգործս արդարութեան նորա՝ մի՛ ստգտանիցին 'ի խղճէ մտաց՝ առնուլ օրինակ բարի, և այլն։

Այլ կշռել արժան է աստ՝ զի ոչ ասէ մարգարէն՝ գործէի զարդարութի. այլ թէ երթայի զհետ արդարութեան. և այս ևս թէպէտ զնոյն ցուցանէ, բայց յայտ առնէ և զհանապազորդութիւն գործելոյն. ըստ որում երթալն է շարունակել զընթացս ոտից. և այսու

կամի 'ի մէջ բերել զպատճառ չար խօսելոյ չարաց զանձնէ խրմէ. իբր զի եթէ դաւիթ երբեմն միայն գործէր զգործս արդարութե՟, և ոչ հանապազորդէր զնոյն՝ ոչ այնչափ ծանր երևէր այն յաչս չարաց. բայց զի հանապազ զնոյն գործէր, վասն որոյ և ծանր երևէր նոցա այն. յոր միտս ասի 'ի դիմաց այսպիսեաց 'ի գիրս իմաստութեան. * ծանր է մեզ և տեսանել զնա, զի
,, աննման են այլոց կեանք նորա, և այլազգի շաւիղք
,, նորա ‖. (իմաստ. բ. 15։)

Օսոյն զայս և առ մեօք տեսանեմք 'ի բազում յամպարշտաց, որք յարդարութե՟ բարեպաշտից յանդիմանեալ՝ չարիս խօսին զնոցանէ, առ 'ի անստգտանելի ցուցանելոյ զինքեանս։ Ոմանք կան՝ որք յորժամ տեսանեն՝ թէ այս ոք գնայ 'ի համեստութեան, 'ի լաւութեան, 'ի զգաստութեան և այլն, դժուարացեալ ընդ այն ասեն. մաղձ սրտի նորա առնէ զայդ, իսկ ինքն անման է 'ի բարւոյ. կամ թէ սուտ է՝ զոր դա առնէ. կամ թէ ո՛ գիտէ զինչ պատահեալ է նմա, և յոր չարիս ըմբռնեալ։ Ոմանք յորժամ տեսանեն՝ թէ այս ոք յաճախ մտանէ 'ի խոստովանութիւն և 'ի հաղորդութիւն՝ յանդիմանեալ լինելով 'ի գործոց նորա՝ ասեն, խղճմտոտ ոմն է, կամ կեղծաւոր է, և այլն։

Սոյնպէս յորժամ տեսանեն՝ թէ ոք աղօթից պարապի երկար, ծոմապահէ, տկարաց և աղքատաց նպաստ մատուցանէ, ասեն. արտաքին ինչ են այդորիկ, զոր առնէ, ո՛ գիտէ՝ թէ քանի չարիք կան 'ի սրտի նորա. և 'ի հաստատել զմիտս իւրեանց՝ յաւելուն երբեմն ասել. ոչ ապաքէն յայս ինչ ժամանակի զայսպիսի կամ զայնպիսի չարիս գործեաց դա. և այժմ վասն անմեղ ցուցանելոյ զինքն զայդպիսիկ գործէ, և այլն։

Ո՛չ հային 'ի բարին զոր առնէ՝ զի խոտորին աչք իւրեանց, այլ 'ի չարն՝ զոր գործեալ իցէ, մանաւանդ 'ի չար գործս իւրեանց, առ 'ի ծածկել զայնս, ոչ բարեաւն՝ զոր գործէ արդարն, այլ չարաւն՝ զոր երբեմն գործեալ իցէ նորա. ուստի և փոխանակ բարի ինչ ուսանելոյ յարդարոյն՝ զոր ունի, առնուն յինքեանս զչարն՝ զոր ոչ ունի։ Եթէ բարի էին և ինքեանք, յարդարութենէ բարւոյն բարիս ժողովէին, այլ զի չար են՝ 'ի բարւոյ անտի չարիս ժողովեն ։

Մեղու մերձեալ 'ի վարդ՝ զոր ինչ առնու անտի՝ մեղր գործէ. իսկ փաղանգ (որ է տեսակ մի սարդի) զոր առնու 'ի վարդից՝ 'ի թոյն փոխարկէ ։ Նոյնպէս և արք բարիք հայեցեալ յարդարն՝ բարի օրինակ առնուն. իսկ չարք զբարի գործս արդարոյն 'ի չարն դարձուցանեն. բայց որ չարագոյնն է՝ բազում անգամ նաև 'ի նոյն իսկ յարդարն չարիս հատուցանեն կրկին օրինակաւ, բարոյապէս և իրապէս. բարոյապէս՝ յորժամ յաճախակի պախարակելով զարդար գործս նորա, և ծաղր առնելով զընթացս կենաց նորա՝ թուլացուցանեն զնա յերթալոյ զհետ արդարութե՟ մինչև նմանեցուցանել զնա ինքեանց, և առնել իբրև զինքեանս չար. իրապէս՝ կամ ասացից ֆիզիգապէս, յորժամ վնասեն անձին նորա, կամ ստացուածոց նորին, կամ անուան նորուն, կամ տանն, և այլն ։

Նոյն բանք բարոյապէս հայլին 'ի թշնամութե՟ դիւաց. որք են կենդանի, այսինքն անմահ. և 'ի մեղանչել մեր զօրանան. և երբեմն ընկերելով միմեանց 'ի չարիս՝ բազմանան. և ատելութե՟ զինեն ընդդէմ մարդոյ տարապարտուց. զի առանց պարտուց, այսինքն առանց իրաւանց յառնեն 'ի վերայ նորա. և տեսեալ զնա 'ի բարին յօժարեալ՝ չարիս հատուցանեն նմա, այսինքն թէ ջանան չարիս հատուցանել նմա. կարեմ ասել ես՝ թէ չարախօսեն զնմանէ նաև առաջի այ՟՝ պախարակելի ցուցանելով զգնալ նորա զհետ արդարութեան ։

Նա սակայն եթէ զօրասցի մարդ շնորհօքն այ՟, և արասցէ 'ի կողմանէ իւրմէ՝ զոր կարէ՝ ունայնացուցանէ զհնարս նոցա, որով և յամօթ առնէ զնոսա. և արդարև եթէ ոչ կարէր մարդ 'ի սոյն հանդիսանալ, ա՟ծ ոչ թոյլ տայր դիւաց ելանել ընդդէմ մարդոյ. որպէս տէր առիւծու ոչ թոյլ տայ ելանել ընդդէմ ոչխարի ։ *Քանզի և յառաջնումն անդ ոչ թոյլ տայր ա՟ծ սատանայի մարտնչիլ ընդ նախաստեղծ մարդոյ՝ եթէ մարդն ոչ կարէր զդէմ ունիլ նորա. այլ զի կարող էր, վասն այնորիկ թոյլ ետ ։ Զայս հայելով ասէ եզնիկ կողբացի. ('ի գլ. ժթ.) * Այլ բնաւ իսկ „ասեն (հեթանոսք) ընդէր եմոյծ զնոսա (այսինքն

„ զաստուծոյ և զմարդ) 'ի կռիւ ընդ միմեանս . (զայս
„ առեալ հեթանոսք) այսու զանձնիշխանութիւն աս-
„ տուծոյ և մարդոյն կամին խափանել . . . (այլ ծա-
„ նիր՝ զի) իբրև ետես (ա՟ծ) զաստուծոյ նախանձու
„ բորբոքեալ (ընդդէմ մարդոյ) թոյլ ետ անձնիշխա-
„ նին ընդ անձնիշխանին ոգորել . քանզի գիտէր՝ ե-
„ թէ ոչինչ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնն
„ քան զնորայն . (ապա թէ ոչ՝ չտայր թոյլ) ։ Այլ
քանզի 'ի խնամոցն ա՟յ լինի զօրանալ, և 'ի թողլոյ
նոր՝ տկարանալ, յայն ապաւինելով մարգարէին՝ պա-
ղատի առ ա՟ծ, և ասէ ։

խա . Մի՛ թողուր զիս տէր ա՟ծ իմ . և մի 'ի բացէ առնէր յինէն . հայեաց յօգնել ինձ՝ տէր փրկութեան իմոյ ։

Բազում օրինակաւ լինի թողուլ ա՟յ զոք . մի՝ յորժամ թոյլ տայ գալ 'ի վերայ նորա նեղութեանց՝ կամ փորձութեանց, որպէս լինի 'ի հասարակի . զորոյ նա ինքն գիտէ զվախճանն ։ Երկրորդ՝ յորժամ 'ի նեղութիւնս կամ 'ի փորձութ՟իս կամ 'ի վտանգս ոչինչ իւիք մխիթարէ զնա՝ այլ մանաւանդ երբեմն յարուցանէ և զայլս, զի փոխանակ մխիթարելոյ վշտացուսցեն զնա, թէպէտ և ինքն ոչ տայ նմա թոյլ անկանելոյ . որպէս եղև ընդ յոբ, և ընդ այլ բազում արդարս ։ Երրորդ՝ յորժամ թոյլ տայ սահիլ 'ի ներելի մեղս, այլ ոչ կործանիլ, որպէս եղև բազմաց ։ Չորրորդ՝ յորժամ թոյլ տայ կործանիլ՝ այսինքն անկանիլ 'ի մահուչափ մեղս, որպէս եղև դաւթի և պետրոսի ։ Հինգերորդ՝ յորժամ առ ժամանակ մի թողու առանց շնորհաց, որպէս եղև ռախաբայ, պօղոսի, և այլն ։ Վեցերորդ՝ յորժամ իսպառ զրկէ զոք 'ի շնորհաց վասն չարութե՟ նորա . որպէս եղև կայենի, սաւուղայ, և այլն ։ Եօթներորդ՝ յորժամ դատապարտէ զոք յաւիտեան ։

Այնպէս և 'ի բաց առնիլն ա՟յ յումեքէ բազում օրինակաւ լինի . մի՝ յորժամ անմխիթար թողու զմարդ 'ի ներքուստ կամ արտաքուստ ։ Երկրորդ՝ յորժամ իբր անխնամ թողու, որպէս թէ ոչ հայիցի 'ի նա, թէպէտ և գաղտնի տեսչութեամբ խնամէ ։ Երրորդ՝ յորժամ ոչ օգնէ մարդոյ խոտորիլ 'ի չարէ և առնել զբարին ։ Չորրորդ՝ յորժամ ոչ պաշտպանէ զնա 'ի վտանգիլ նորա ։ Հինգերորդ՝ յորժամ խօսս անտես առնէ զնա ։ Այս ամենայն կարէ հայիլ այս բան մարգարէին՝ զոր ասէ ։

Մի թողուր զիս Տէր Ած իմ ։ Կամի ասել․ դու որ թոյլ տուր ինձ կործանիլ, և վասն մեղաց իմոց յայսչափ նեղութիւնս մտանիլ, և 'ի թշնամեաց իմոց այսպէս դատափետեալ՝ աղաչեմ մի թոյլ տար ինձ ընկճիլ իսպառ, և կամ յանհամբերութիւն անկանելով՝ մեղօք իւիք անխրատիլ առ քեզ, կամ առ այլ ոք ։ Եւ կամ դարձեալ՝ մի թոյլ տար ինձ իսպառ նուաճիլ և վանիլ 'ի թշնամեաց իմոց․ զի թէպէտ և ես պատրաստ եմ կրել վասն քո զամենայն, բայց իսպառ նուաճիլս իմ ցաւեցուցանէ զիս, ոչ զի նուաճիմ, այլ զի 'ի բարկութենէ քումմէ նուաղիմ․ իբր զի այնու տեսանեմ, թէ տակաւին չէ զիջեալ բարկութիւն քո․ և դեռ յիշես զմեղս իմ, որով բարկացուցի զքեզ․ իսկ եթէ կամիցիս՝ զի նուաճեալ և վանեալ եղէց, աղաչեմ զքեզ, գոնէ զայցելութիւն քո մի հեռացուցես յինէն․ և առ այս յարէ ։

Եւ մի 'ի բացէ առնիր յինէն ։ Կամի ասել, առաւել բարեկամք իմ և ազգք իմ իսպառ մերժեցին զիս, և 'ի բաց կացին յինէն․ և բազումք չար խօսին զինէն վասն զհետ երթալոյ իմ արդարութեան, և խորհին ևս կորուսանել զիս․ այլ դու Տէր Ած իմ մի առներ ընդ իս այսպէս․ այսինքն մի մեկնիր յինէն և մի զատչիր, և մի անօգնական և անպաշտպան թողուր զիս իբր զքոյ թշնամի․ կամ ըստ լամբռոնացւոյն * մի հեռացուցա-
„նէր յինէն զնախախնամութիւն քո, որպէս և ոչ
„ես հեռացուցանեմ յինէն զսէր քո, և զահ բար-
„կութեան քո ։ (Տես զայսմանէ և 'ի սաղ․ ԼԴ․ 21.)
Իսկ թէ զինչ պատճառ էր այդ առնել նմա, առաջի դնէ ասելով ։

Հայեաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ ։ Հայիլն այդ առ ոք՝ բազում օրինակաւ կարէ լինել՝ ներհակ այնմ, զոր եդաք 'ի վերոյ զթողլոյն այդ․ իսկ մանաւանդ որպէս առաւել լինի փոխանակ պաշտպանելոյ կամ խնամ տանելոյ և կամ օգնելոյ․ որոյ վասն իսկ 'ի սոյն մանաւորէ զհայիլն ասելով․ Հայեաց յօգնել ինձ Տէր փրկութեան իմոյ․ որպէս թէ ասէր․ դու՝ որ ես Տէր իմոյ փրկու-

թեան, կամ դու՝ յորոյ 'ի ձեռին է փրկելդ զիս՝ հայեաց առ իս. և հայելդ լիցի այս՝ զի օգնեսցես ինձ։ (Իսկ թէ յինչ միտս դնի բառս օգնել. տե՛ս 'ի սաղ. ԼԷ. 38։) Հոգևորապէս՝ այս խնդիր օգնութիւն գտանելոյ 'ի տեառնէ՝ հայելով առ երկոսին նախընթաց համարս, ակնարկէ 'ի պաշտպանութիւնն ա̃յ զոր ցուցանէ առ մարդս 'ի պատերազմիլ նորա ընդ սատանայի, առ 'ի յամօթ առնել զպարծանս նորուն, որով պարծէր՝ թէ յաղթեաց մարդոյ 'ի սկզբանն։ Ուստի առէ եզնակ կողբացի ('ի գլ. ԺԵ.) * վասն այնորիկ թողեալ
„ է ա̃ծ զսատանայ իբրև հրահանգս կռուանոցաց յաշ-
„ խարհի. զի յորժամ իւր նահատակեալքն (այսինքն
„ վասն իւր պատերազմօղքն) կռուիցին և յաղթիցեն
„ նմա, պարծանք առաջնոյ յաղթութեան նորա (որով
„ յաղթեաց մարդոյ) քակեսցին յայժմուն յայնպի-
„ սեացն մարդկանէ, որք լաւութեցն ցանկութեամբ
„ պարտիցեն զնա, և նշան յաղթութե՛ զնահատակու-
„ թիւն կանգնիցեն‖։

Աստանօր քննել արժան է, զի մարգարէն յայս համար յառաջնում հատուածի՝ յասելն, մի թողուր զիս՝ յաւել ասել. ՏԷՐ ԱԾ ԻՄ. իսկ յայս երկրորդ հատուած՝ յասելն հայեաց յօգնել ինձ՝ յաւել ասել՝ ՏԷՐ ՓՐԿՈ—ԹԵ ԻՄՈՅ։ Այս զանազանութիւն թէպէտ և հայելով յա̃ծ՝ զնոյն ցուցանէ, բայց հայելով յանձն խնդրողին զայլևայլութիւն ինչ 'ի մէջ բերէ. զի ոչ թողուլն պատճառի ա̃յ ըստ որում է հաստիչ. իսկ օգնելն 'ի նեղութեան՝ պատճառի ա̃յ ըստ որում է փրկիչ. մանաւանդ թէ ըստ որում է տէր փրկութեան. ամին իբր եդ յառաջնումն, տէր ա̃ծ իմ. իսկ յերկրորդումն տէր փրկութեան իմոյ. այսինքն այնպիսի տէր՝ յորոյ 'ի ձեռս է փրկութիւն եթէ ժամանակաւոր և եթէ յաւիտենական։

* * *

ՍԱՂՄՈՍ ԼԸ.

Ցոյցք համբերութեան արդարոյ 'ի ձեռն լռութեան. եւս և յայտարարութիւն կարճութեան կենաց և ունայնութեան ընթացից և ջանից մարդկան, որք եթէ 'ի պատկերի շրջին. միանգամայն և աղաչանք առ ած վասն գտանելոյ անդորրութիւն հոգւոյ յաստիս.

Ի կատարած. Իդիթոմայ. սաղմոս 'ի Դաւիթ.

1 Ասացի' թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի՛ մեղայց լեզուաւ իմով. 2 Եդի պահապան բերանոյ իմոյ' 'ի հակառակել մեղաւորին առաջի իմ. 3 Համր եղէ և խոնարհեցայ. լռեցի 'ի բարութե՟, և ցաւք իմ նորոգեցան յիս. 4 Ջեռաւ սիրտ իմ 'ի փորի իմում. և 'ի խորհուրդս իմ վառեցաւ հուր. 5 Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցոյց ինձ Տէր զկատարած իմ, և զթիւ աւուրց իմոց' քանի՛ն է, զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն. 6 Ահա չափով եդեր զաւուրս իմ. և կար զօրութե՟ իմոյ որպէս ոչինչ է առաջի իմ. սակայն ամենայն ընդունայն է ա՟մ մարդ [illegible]. 7 Ապաքէն որպէս 'ի պատկերի շրջի մարդ, սակայն 'ի զուր խռովի. գանձէ' և ոչ գիտէ ում ժողովէ. 8 Եւ արդ ո՞վ է համբերութ՟ի իմ, թէ ոչ դու Տէր. կամ կար զօրութե՟ իմոյ' թէ ոչ 'ի քէն. 9 Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեսցես զիս. նախատինս անզգամաց մի՛ արարեր զիս. 10 Համր եղէ, և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր. 11 Ի բաց արա յինէն զտանջանս իմ. զի 'ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ. 12 Յանդիմանութե՟ վասն մեղաց խրատեցեր զմարդ. մաշեցեր որպէս սարդոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ա՟մ մարդ. 13 Լո՛ւր Տէր աղօթից իմոց. ունկնդիր խնդրուածոյ իմոյ, արտասուաց իմոց մի՛ լռեր. 14 Պանդուխտ եմ ես առաջի քո, նժդեհ և անցաւոր' որպէս ամենայն հարք իմ. 15 Թո՛յլ արա ինձ զի հանգեայց. մինչև երթեալ իցեմ, առաւել ոչ ևս գտանիցիմ.

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. իդիթումայ. սաղմոս 'ի դաւիթ.

Ի ՔԱՆԻ ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ՍԱՂմոս մեր գտնի. *'ի կատարած իդիթումայ. „ օրհնութիւն 'ի դաւիթ ||. իսկ 'ի տպագրեալս և 'ի քանի մի ձեռագիրս գտնի ըստ գրելոյդ. *'ի կատարած. իդիթումայ. սաղմոս 'ի դաւիթ ||. և այս է համաձայն եբրայականին. յորում գտնի լամնացէախ լիդութուն միզմօր լէդաւիթ. այս է *'ի կատարած, առ իդիթումն, սաղմոս 'ի դաւիթ ||. ուր 'ի տեղի սաղմոսի՝ եդեալ է 'ի ձեռագիրս ինչ մեր, օրհնութիւն. յոր յաւելեալ է 'ի սաղմոսս ինչ և 'ի վարդանայն բառդ սաղմո, որոյ մին աւելորդ է. որպէս յայտ է և յայլոց թարգմանութեանց.

Իսկ իդիթումն կամ՝ ըստ եբր՛. եդութուն՝ որ յիշի աստ, է այն, որ 'ի ա. մնաց. (ժզ. 38.) կոչի իդիթուն. և 'ի ա. մնաց. (զ. 44.) կոչի եթան. որ և էր մին յերից սաղմոսանուագ դասապետաց յորդւոցն մերարեայ. (զոյգն տես 'ի Ներած. գլ. ժզ.) Արդ աւանդեն բազումք 'ի րաբունեացն հրէից, թէ եթան յօրինեալ իցէ զայս սաղմոս, և դաւիթ առեալ իցէ զսա 'ի կարգս սաղմոսաց. Բայց հաւանականագոյն կարծիք է՝ թէ դաւիթ յօրինեալ զայս սաղմոս տուեալ իցէ երգել այսմ իդիթումայ յայն ձայն՝ որոյ էր դասապետ. Եւ ըստ այսմ դիւրաւ բացատրի միտ բանի վերնագրիդ. իբր թէ ասել. այս սաղմոս իցէ ազդեալ 'ի դաւիթ, և տուեալ իդիթումայ 'ի կատարել. այսինքն 'ի նուագել ըստ իւրում դասու իբրև օրհնութիւն սաղմոսաց. (իսկ վասն բառիս 'ի կատարած. տես 'ի Ներած. գլ. թ.) Այլ թէ յինչ առթէ և երբ իցէ յօրինեալ զայս սաղմոս՝ ոչ է յայտ. բազումք 'ի հրէից ասեն՝ թէ դաւիթ 'ի հիւանդութեան և 'ի ցաւս գոլով ասացեալ իցէ զսա. ոմանք թէ հայելով 'ի հալածանս սաւուղայ կամ աբեսաղոմայ իցէ յօրինեալ ։ Հաւանականագոյն է ասել. թէ զայս ասաց նա իբր շարունակութիւն նախընթաց սաղմոսին՝ 'ի նոյն առթէ, միանգամայն և յանձն իւր նկարելով զօգուտ պահպանութեան լեզուի, և զհամբերութիւն նեղութեան, և զունայնութիւն կարճութեան կենաց, և զողորմութիւն պանդխտութեան մարդկան, որպէս տեսցի յառաջիկայդ ։

ԲԱՆ

ա. Ասացի՝ թէ պահեցից զճանապարհս իմ. զի մի մեղայց լեզուաւ իմով.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ճանապարհ մարդոյ ասի նախ կեանք նորա. երկրորդ գործողութիւն նորա կամ գործք. երրորդ՝ միանգամայն առեալ՝ եթէ կեանք և եթէ գործողութիւնք նորին, այսինքն ընթացք կենաց նորա. ըստ այսմ երրորդ նշանակութեան դնի աստ յասելն ։

Ասացի թէ պահեցից զճանապարհս իմ ։ Կամի ասել. հայեցեալ յընթացս կենաց իմոց՝ տեսի 'ի նմա բազում որոգայթս և փորձութիւնս, բազում խոչընդոտս և արգելս. բազում շփոթութիւնս և անկարգութիւնս, և այլ ևս բազումս 'ի ներքոյ և արտաքոյ, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, 'ի հանգստեան և 'ի նեղութեան ։ Զայս ամենայն տեսեալ իմ և երկուցեալ թէ գուցէ գլորեցայց. և կամ պակասեցայց յիմէք. ասացի. այսինքն խորհեցայ. և հաստատութեամբ եդի 'ի մտի՝ զգուշութեամբ պահպանել զընթացս կենաց իմոց ։ Եւ զի առաւել դիւրին է մարդոյ սահել լեզուաւ քան այլովք անդամովք՝ յայն առաւել ուղղէ զառաջադրութիւն իւր. վասն որոյ յարէ ։

Զի մի մեղայց լեզուաւ իմով ։ Կամի ասել. մեծագոյն զգուշութիւն իմ զոր զգուշանալոց եմ 'ի ճանապարհս կենաց իմոց՝ եղիցի այս, զի մի խօսեցայց զայնպիսի ինչ, որ լիցէ մեղք կամ գործ մեղաց և կամ պատճառ մեղաց՝ թէ ինձ և թէ այլոց ։ Եւ եթէ յայսմ գտայց անարատ՝ զերծ գտայց և յայլ բազում չարեաց, որք բղխեն 'ի սրտէ միջնորդութ̃բ լեզուի իբր յաղբերէ անօրէնութեան ։

Բարոյապէս առեալ, բառդ պահել՝ դնի աստ փոխանակ զուսպ ունելոյ. յոր միտս յաւելու զբառդ ԻՄ. զի Ճանապարհք՝ եթէ տեառն են՝ հետևելի և գնալի են. իսկ եթէ մեր են՝ զսպելի են, մանաւանդ պահպանութեամբ լեզուի. որոյ վասն հետևեցուցանէ թէ զի մի մեղայց լեզուաւ իմով. որպէս թէ ասացեալ էր. պահպանութիւն Ճանապարհաց իմոց տիրապէս այս է՝ զի մի մեղայց լեզուաւս. կամ թէ փոյթ իմ այս է՝ զի բարւոք պահեցից զլեզու իմ, որպէս զի մի մեղայց նովաւ. և վասն այսորիկ յաւելու դնել յոյն զպահապան. ուստի ասէ ։

Ե. ԵԴԻ ՊԱՀԱՊԱՆ ԲԵՐԱՆՈՅ ԻՄՈՅ՝ 'Ի ՀԱԿԱՌԱԿԵԼ ՄԵՂԱՒՈՐԻՆ ԱՌԱՋԻ ԻՄ ։

Որչափ վտանգաւոր իցէ փորձութիւնն՝ այնչափ զգուշութիւն պիտոյ է. արդ փորձութիւնն լեզուի վտանգաւոր լինի յոյժ և ստիպաւ զգուշ՝ յորժամ հակառակօղ ոք ընդդէմ ելանէ. զի որովհետև այնու հակառակութ̃բ նուաճելի երևի մարդ և բանք նորա իբր անպիտան, մանաւանդ եթէ 'ի հակառակիլն 'ի մէջ բերցին և նախատինք, կամ այնպիսի բանք, որք յայտնիցեն զպակասաւորութիւն անձին, զարթնուկիրք բարկութեան 'ի սիրտն, և յայնմանէ գրեթէ բռնադատի լեզուն ընդդէմ ելանել հակառակողին ։ Այլ ընդդէմ այսր երկու ինչ հնար է առնել. մի՝ հանդարտեցուցանելով զներքին բորբոքումն բարկութեան՝ քաղցր բանիւք խօսիլ, կամ անուշութ̃բ պատասխանել ։ Երկրորդ՝ եթէ դժուարին իցէ զայս առնել, բնաւ ինչ ոչ խօսիլ, կամ թէ փակել զբերանն ։ Յերկոսին 'ի սոսա ես կարէ հայիլ այս բան մարգարէին յասեն ։

ԵԴԻ ՊԱՀԱՊԱՆ ԲԵՐԱՆՈՅ ԻՄՈՅ՝ 'Ի ՀԱԿԱՌԱԿԵԼ ՄԵՂԱՒՈՐԻՆ ԱՌԱՋԻ ԻՄ ։ Այսինքն յորժամ մեղաւոր ոք առաջի իմ յանդիման հակառակէր բանից կամ գործոց իմոց, թէպէտ և բռնադատէր զիս բերան իմ դարձուցանել զբան նորա 'ի նա, կամ խայտառակել զնա բանիւք, բայց քանզի այս ոչ էր բարի՝ ոչ ինձ և ոչ նմա, վասն այսորիկ եդի պահապան բերանոյ իմոյ. այսինքն զգուշացուցի զբերան իմ՝ բնաւ չխօսիլ ինչ, և կամ պահպանութ̃բ խօսիլ, այսինքն զսպելով զկիրս, կմ̃ առանց կրից, և առանց դառնութ̃ե։

Կարէր ասել՝ լռեցի. որպէս դնէ 'ի ստորև և այլուր. կամ թէ ոչ բացի զբերան իմ, բայց ոչ ասէ այդպէս. զի ոչ կամի ցուցանել՝ թէ յայսպիսի դիպուածս միշտ լռէր, այլ թէ ըստ պիտելոյն լռէր, և ըստ պիտելոյն օրինօք խօսէր. և վասն այսր իսկ զսպէր զբերան իւր խոհեմութ̃բ և հեզութ̃բ, եւ և խոնարհութ̃բ և երկիւղիւն այ̃. որովք իբր բանալեօք ըստ պատշաճի և ըստ ժամանակի փակէր և բանայր զնոյն. և զայս կոչէ պահապան բերանոյ, ըստ որում պաշտօն պահապանի դրան է բանալ զդուռն կամ փակել՝ երբ պիտոյն է, և որոց արժան է։ Զսոյն յորդորէ և իմաստունն յասելն. (սիրաք իը̃. 28.) * բերանոյ քո արասցես դրունս և փականս ‖։ Ըստ որոյ ասէ բարսեղ մարգապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժը̃. 'ի յորդորակն.)* պարտ „ է իւրաքանչիւր ումեք 'ի մէնջ փակ և դուռն դնել „ բերանոյ ըստ խրատուն դաւթի. եդի պահապան „ բերանոյ իմոյ ‖։

Այս պահապան է առաքինութիւն լռութեան. եթէ փափաքիս ստանալ զայս առաքինութ̃ի, զգոյշ լեր 'ի շատախօսութենէ, և 'ի խստութենէ բանից, * զի ա„ռաքինութ̃ի ոչ կարէ ունեալ լինել մոլութ̃բ ‖։ Այր առաքինութ̃ե չորս են գործք. առաջին գործն է սուտ լռելն. զորմէ խօսի 'ի յաջորդ համարն. և այս լռութիւն է այն՝ որով ուսանի մարդ զխօսիլն. որպէս ուշադրութիւնն է այն՝ որով լինի ուսանել զի՛ և իցէ արհեստ. զի լռութիւնն տայ մոռանալ զսովորութիւն անկարգ խօսելոյ, և ստանալ զկարգ խօսելոյ. որպէս առ 'ի բարւոք գիտել ինչ՝ լաւ է մոռանալ զյոռեպէս ուսեալն։ 'Ի նմալդ 'ի լռութեան ուսանիս զեղանակ խօսից. յայս սակս պիւթագորաս (որպէս ասի) զամս հինգ լուռ պահէր զաշակերտեալսն իւր, առ 'ի մոռանալ զոչ բարւոք ուսեալսն։ Այլ այս սուտ լռութիւն եթէ ոչ կարգեսցի առ գերագոյն ինչ վախճան՝ ոչ երևի լինել 'ի կարևորաց և յօգտակարաց. որպէս պիւթագորայն. ուստի աստ եղնակ կոչեցի ('ի գլ. կ՟ա.) * Հինգամեայ լռութիւնն, զոր նորա յաշակերտութիւն „ եկելոցն սահմանեաց (պիւթագորաս,) „ թէպէտև մեծի ժուժկալութեան օրինակ էր, քանզի „ և ոչ հարցանել ինչ իշխէին՝ բայց միայն լսել, „ այլ ոչ ինչ կարի յօգուտ էր‖. Իսկ 'ի կարգիլն առ բարի վախճան՝ գովելի լինի. որով առաջնորդի մարդ ուսանիլ զբարուոք խօսիլն ոչ միայն ընդ մարդոյ, այլ և ընդ ա՟յ՝ ուր 'ի կամելն խօսիլ բարուոք ընդ ա՟յ՝ լաւ 'ի խօսելոյ զունայնս ընդ մարդոյ. Մովսէս ճարտարախօս էր, նոյնպէս և երեմիա. իսկ 'ի խօսիլն ընդ ա՟յ՝ մին ծանրալեզու ասաց զանձն. (ելից դ. 16.) և միւսն վկայեաց թէ խօսիլ ոչ գիտեմ. (երեմ. ա. 6.) Եթէ և դու բարուոք խօսեսցիս ընդ ա՟յ, ծանրալեզու լինիս առ դատարկաբանութ՟իս. և անգէտ 'ի խօսիլ զանկարգութիւնս.

Երկրորդ գործք այսր առաքինութեան է՝ սակաւ խօսիլ. զի 'ի խօսիլն զբազումս՝ բազում վրիպմունք բանից լինին. վասն զի բանք իմաստունք և ազնիւք սակաւ են. ապա եթէ շատ իցեն՝ անմտական և անպիտան զրոյցք պղպջեն 'ի նոսին, և երբեմն ևս մեղք. ըստ այնմ. * շատախօս լինելով ոչ զերծցիս 'ի մեղաց‖. (առակ. ժ. 19. և իէ. 28.) Եւ զի բազմութիւնք բանից ոչ թողացուցանեն լսել զձայն հոգւոյն սրբոյ՝ որ խօսի 'ի սիրտս մեր. ապաքէն բազում շշնջիւնք խափան լինին լսելոյ զձայն կոչողին. նոյնպէս և շատ խօսք արգելս տան լսելոյ զկոչումն հոգւոյն սրբոյ, կամ զներշնչութ՟ի նորա.

Երրորդ գործ այսր առաքինութեան է ըստ պատշաճի խօսիլ և ըստ տեղւոյն. զի որպէս առաքինութիւն ժուժկալութեան ոչ է յոչ ուտելն, այլ ըստ պատշաճի և ըստ չափու ուտելն. նոյնպէս և առաքինութիւն լռութեան ոչ է սոսկ յոչ խօսիլն, այլ ըստ պատշաճի և ըստ կարգի խօսիլն. ուստի և պահապան բերանոյ ասի, զի ըստ պահուն փակեալ պահեսցէ զդուռն, և ըստ պահուն զգուշութեամբ և պատուականապէս բացցէ. Զայս օրինակ պատուիրեաց ա՟ծ. ('ի գիրս թուոց ժթ. 15.) և ասէ. * ա՟մ աման բաց որ ոչ իցէ „ կափեալ կամ սերբկեալ. (այսինքն սրւեալ) պիղծ

„լցի‖. ուր բառդ խցեալ՝ ցուցանէ զփակ ունել բերանոյն յանպատշաճն. իսկ բառդ «քըքէնեալ» ցուցանէ զպատշաճողութ̃ի բանալոյ բերանոյն. եթէ բաց մնասցէ այս աման, ցնդին օդիքն՝ որ 'ի նմա, և եթէ չիցէ սերեկեալ՝ ծորի 'ի միջի եղեալն, և դնոյ ունոյն.

Չորրորդ գործ այսր առաքինութեան է ոչ խօսիլ խստութեամբ 'ի ժամու բարկութեան, այլ հեզութ̃բ և քաղցրութեամբ, ապա թէ ոչ՝ բազում չարիք ծագին. մի՝ կրկին բարկութ̃ի. զի բան բարկութեան ըզբարկութ̃ի ծնանի յայլս. ըստ այնմ. * բան խիստ յարուցանէ զբարկութիւն‖. (առակ. ԺԵ. 1.) Երկրորդ՝ խորտակումն սիրոյ. խիստ խօսեցար, հատեր զթել սիրոյ. Երրորդ՝ բեկումն սրտի. հարեր գաւազանաւ բանի զեղբայր քո, բեկեր զսիրտ նորա. Չորրորդ՝ ատելութիւն և թշնամութիւն. զոր խօսեցար՝ ցնդեցաւ, բայց 'ի հոգի եղբօրդ ատելութիւն ծագեցաւ. ոչ եւս հայի նա այնուհետեւ 'ի քեզ ախորժական աչօք, այլ խոժոռ բերմամբ. Հինգերորդ՝ ամօթ. զի յետ խստիւ խօսելոյ ընդդէմ եղբօրդ, ամաչես խօսել ընդ նմա. Եթէ փակեիր զբերանդ, լռէին հողմունք և գիջանէին ալիք. և լինէր խաղաղութ̃ի. Ապա եթէ բան քաղցր խօսէիր, շահէիր զեղբայրդ և զայլս եւս, ըստ այնմ. * բան քաղցր բազմապատկէ զբարեկամս, և մեղմացուցանէ զթշնամիս‖. (սիրաք Զ. 5.) Աղ դիր 'ի բանս քո, և մի թոյն. աղ քաղցրութեան և խոնարհութեան. զի * իմաստունն բանիւք զինքն սիրելի առնէ‖. (առակ. Ի. 13.) Իսկ թունալից բան զինքն և զայլս սպանանէ. Կաթիլ մի թունոյ արբուցեր 'ի միում պահու, բազում դեղք պիտոյ են և բազում ժամանակ 'ի բժշկել. Մի՛ բանիւ կործանեցեր զբազմամեայ բարեկամութիւնդ. հազարաւ ոչ կարես կանգնել. Զայսպիսի չարիս բերանոյ հայելով մարգարէն, եդի ասէ այնմ պահապան զլռութիւնն 'ի հակառակիլ մեղաւորի զի մի մեղայց լեզուաւ իմով. Ոչ ասէ՝ 'ի հակառակիլ մարդոյ, այլ մեղաւորի. որով ցուցանէ՝ թէ խրատամբ դնէ պահապան բերանոյն, զի բանալ զբերան ընդդէմ այնպիսի մարդոյ, այնինքն ընդդէմ այնր, որ իցէ չար՝ և չարութ̃բ հակառակօղ, ոչինչ օգտէ. վասն որոյ լաւ ևս է 'ի հակառակել այնպիսւոյն՝ լռել, քան խօսել. որպէս լռեաց նա ինքն դաւիթ ընդդէմ բանից սեմեայ. և ըստ այսմ թէպէտ և հնար է ասել, թէ զայս բան առաջի դնէ մարգարէն՝ յաւէտ վասն խսպառ լռելոյն քան վասն ըստ պատշաճի խօսելոյն, բայց զերկոսին ևս մարթ է իմանալ, սկզբնաբար՝ զլռելոյն, և երկրորդաբար զըստ օրինի խօսելոյն։

Բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժե.) զայս բան վերածէ 'ի դէմս ք՟ի. և 'ի բերանոյ նորին խօսելով ասէ. * եդի պահապան բերանոյ իմոյ 'ի հակառակել ,, մեղաւորացն յատենին պիղատոսի. լուռ եղէ և ,, ոչ խօսեցայ. զի դու արարեր ||։ Այս զի առ լռութ՟ի պատշաճ տրամադրութիւն է չլսելն և չզգալն, յայն ապաստան լինի ասելով։

Գ. Խուլ եղէ և խոնարհեցայ. լռեցի 'ի բարութենէ, և ցաւք իմ նորոգեցան յիս։

Խուլ լինելն է ոչ լսել. իսկ այս երրակի լինի. մի՝ 'ի կաղուածոյ ուղղոյն. որպիսի է նոցա՝ որք միանգամայն խուլ են և համր. երկրորդ՝ 'ի վնասելոյ փըղշտին, որ ասի թմբուկ լսելեաց. երրորդ՝ յաղտեղելոյ, կամ 'ի քամւոյ, կամ յայլ ինչ պակասութենէ։ Այսպիսի խլութիւն թէպէտ և դժուարակրելի է, բայց ոչ վնասէ հոգւոյն. ըստ որոյ ասէ գերոյգ վարդապետ. ('ի մեկն. եսայ.) * մարմնոյ խլութիւն ոչ- ,, ինչ կարէ վնաս առնել մեզ. այլ է ուրեք՝ զի զգաս- ,, տութեան ևս և պատճառ լինի մեզ. ըստ այնմ թէ ,, խուլ եղէ և խոնարհեցայ. և թէ եղէ ես որպէս ,, մարդ՝ որ ոչ լսէ. իսկ հոգւոյ խլութիւն հանապազ ,, զրկէ 'ի բարեաց ||։

Իսկ խուլ ձևանալ առ այլս՝ բազում օրինակաւ կարէ լինել. մի՝ յանզգամութենէ, որպէս պատմի զպապայ թագաւորէ 'ի գիրս բուզանդայ թէ յազդ առնել և 'ի խօսել ընդ նմա սրբոյն ներսեսի, նա կամովին խուլ լինէր՝ զի մի լուիցէ, և արգելցէ զմահ տիրիթայ։ Երկրորդ՝ յարհամարհութ՟է. որպէս պատմի զիմաստասիրէ ումեմնէ՝ թէ 'ի հակառակաբանել ումանց ընդդէմ նորա՝ նա իբր խուլ լինէր՝ ոչինչ համարելով զբանս նոցա, որով առաւել կրէին՝ որք խօսէին՝ քան նա որ երևէր խուլ լինել և ոչ լսել։ Երրորդ՝ 'ի կամակորութենէ, և երբեմն յանկնկալութենէ իւրեք. որպէս առնեն բազում անգամ տղայք ընդդէմ ծնողաց կամ այլոց։ Չորրորդ՝ 'ի խոհեմութենէ և 'ի խաղաղասիրութենէ, որպէս ասի զսաւուղայ, թէ 'ի քրթմնջել ժողովրդեան, նա իբրև զխուլ լինէր՝ զի մի խռովութիւն ինչ յարիցէ։ Հինգերորդ՝ 'ի խոնարհութ՟է, որպէս առնեն ոմանք յառաքինեաց որք 'ի նախատինս յայլոց, թէպէտ և լսեն, բայց յաւէտ ունկն դնելով խղճի մտաց իւրեանց քան բանից նոցա՝ իբր խուլ ձևանան. յայս յետին օրինակ խլութեան հայելով ասէ։

Խուլ եղէ և խոնարհեցայ։ Այսինքն 'ի հակառակիլ մեղաւորին ընդդէմ իմ և 'ի խօսիլ նորա զինէն ըզբանս հակառակս և նախատականս՝ ես ունկն դնէի ոչ այնմ որ խօսէր, այլ խղճի մտացս որ վկայէր. ուստի գրեթէ խուլ եղէ ոչ առ վկայութիւն խղճի մտացս, այլ առ նախատինս հակառակողին. որով և խոնարհեցայ, այսինքն վկայութ՟ խղճի մտացս տեսի՝ զի արժանի եմ նախատանաց. կամ թէ խոնարհ երևեցայ առաջի այլոց որով և ստիպեցայ լռել. և այսու եղէ իբրև խուլ։

Այս խլութիւն որպէս և տեսանես հիմնի նախ 'ի խոնարհութեան և 'ի հեզութեան. և երկրորդ՝ 'ի սէր սուրբ պահելոյ զսիրտն. զի որ ունի սէր առ սրբութիւն սրտի՝ խուլ լինի առ սնոտի բանս, առ նախատինս, առ բամբասանս, առ հայհոյանս, առ քսութ՟իս, և այլն. ուստի յորդորէ գրիգոր սկևռացի 'ի հրահանգսն. (յերես 502.) ասելով. * Այսպիսեաց ամե-
,, նայնի պարտ է փակել զունկնն, և ոչ թոյլ տալ
,, բնաւ մուտ լսելութեան, այլ նախանձել զբարւոք
,, նախանձն ըստ Դաւթի, որ ասէ. 'ի հակառակիլ մե-
,, ղաւորին առաջի իմ խուլ եղէ և խոնարհեցայ. և
,, եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, ոչ զայրանայ, և ոչ
,, առնու 'ի միտ, և ոչ պատասխանէ ‖. այլ 'ի լռութեան զսպէ զինքն. և առ այս յարէ զկնի մարգարէն, և ասէ։

Լռեցի 'ի բարեաց, (և ցաւք իմ նորոգեցան յիս։) Եբրակի լինի լռել 'ի բարութենէ. մի՛ վասն չարութեան և նախանձու, որով ոք ոչ կամի խօսել զբարիս, որպէս զի չար լիցի այլոց, կամ զի մի՛ լիցի նոցա բարի ե՟ն. Երկրորդ՝ վասն ծուլութեան, որպէս որ հեղգանալով ոչ խրատէ՝ զոր պարտ էր խրատել. կամ ոչ քարոզէ և այլն: Երրորդ՝ վասն առաքինութեան. և այս կարէ լինել ըստ բազում գլխոց. այսինքն կամ ըստ խոհեմութեան՝ զի մի՛ յոչ լռելն 'ի խօսելոյ զբարիս՝ չար ինչ ծագեսցի. կամ ըստ զգաստութեան՝ զի մի 'ի խօսելն պղտորեսցի ինքն, կամ պղտորեսցէ զայլս. կամ ըստ ակնածութե՟ և ըստ պարկեշտութեան՝ երբ զի ոչ տեսանէ ինքեան պատշաճ զխօսելն 'ի ներկայութեան մեծի. կամ ըստ խոնարհութեան, երբ զի անբաւական համարի զանձն 'ի խօսել զբարիս առաջի այլոց, միայն թէ չիցէ այն իւր պաշտօն. կամ ըստ համբերութեան՝ երբ զի ոչ կամելով խօսել զայն զոր տեսանէ բարի վասն իւր՝ լռելովն փափաքի տանջել զխորհուրդ իւր. կամ ըստ ակնկալութեան մեծի իրիք բարւոյ, երբ զի լռելովն 'ի խօսելոյ զայս ինչ բարի՝ հասցէ մեծագոյն բարւոյ. կամ ըստ հեզութեան և ըստ անոխակալութե՟, երբ զի թէպէտև ըստ կրից բարկութե՟ բարի տեսանէ թափել զանարգանս 'ի վերայ նախատչաց իւրոց, բայց հեզութե՟ զսպէ զինքն յայսպիսի առերևոյթ բարութենէ. կամ ըստ անբասիր լինելոյ, երբ զի լռելով 'ի ջատագովելոյ զինքն արդարութե՟՝ արդարասցի կամ անբասիր լիցի առաջի այ՟, եւ և առաջի մարդկան. կամ ըստ մաքրութե՟ խղճի մտաց. երբ զի տեսանելով թէ խիղճ մտաց իւրոց ոչ ստգտանէ զինքն, ոչ ախորժի բարիս խօսելով զինքենէ՝ ջատագովել. զի բարի խիղճ մտաց ոչ կարօտի ջատագովութեան. կամ ըստ հաստատութեան կամաց, որով յանձն առնու ոչ խօսել զբարիսն՝ զի մի՛ նահանջեսցի յառաջադրութենէ իւրմէ կամ յառաջիկայ առթէ, որպէս արար տէրն մեր. ըստ որում ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժդ.) զի լռեաց յատենին պիղատոսի և հերովդէի 'ի խօսելոյ զբարի բանս վասն իւր. զի թէ խօսէր՝ ամ'իբերան լինէին նոքա և ոչ դատապարտէին զնա 'ի մահ խաչի, որով և նահանջէր քն՟ յառաջադրութենէ իւրմէ՝ զոր առաջադրեալ էր մեռա-

նիլ 'ի վերայ խաչին. կամ հուսկ յետոյ ըստ անկարօտ լինելոյ 'ի խօսիլ, կամ ըստ անպէտ լինելոյ. իբր զի առանց խօսելոյ արգիլենքն խօսին. զի որպէս ասէ սուրբն Շնորհալի. ('ի մեկն. ա. պետ. ա. Չ. Ճառ. ա. յորդ.) * զոր ինչ միանգամ արգելունք գործոյն ա-
,, ղաղակեն զբարեաց ինչ իրիք, եթէ խոնարհութի̃
,, է, եթէ ժուժկալութի̃, եթէ անընչութիւն, եթէ
,, այլ ինչ այսպիսի, անդ ճարտարութիւն բանից ոչ է
,, պիտոյ||:

Ըստ այսոցիկ լռէր դաւիթ 'ի բարութենէ ըստ տեղւոյն, ըստ ժամանակին, և ըստ այլ պարագայից; Այլ քանզի որ պաշարի 'ի վիշտս, և 'ի նմին կրէ ընդհակառակութիւն, 'ի խօսիլն փոքր մի դիւրանայ. և ներհակ այսմ՝ 'ի լռելն խստանայ և դառնանայ. զայս և կամելով յայտ առնել մարգարէն՝ յարէ զկնի, և ասէ.

ԵՒ ՑԱՒՔ ԻՄ ՆՈՐՈԳԵՑԱՆ ՅԻՍ: Այսինքն այն ցաւք՝ զոր 'ի բազում վշտաց կրէի 'ի սրտի, և մեղմացուցանել կամէի, նորոգեցան և սաստկացան յիս վասն լռելոյ իմ 'ի ջատագովելոյ զիս ընդդէմ հակառակորդաց և նախատողաց անձին իմոյ. Իսկ զի 'ի լռելոյ աստի յաւելու 'ի նմա և զայրացութի̃, զայն ևս յայտ առնէ յաջորդ բանիւն՝ ասելով.

Դ. ՋԵՌԱՒ ՍԻՐՏ ԻՄ 'Ի ՆԵՐՔՍ ԻՄՈՒՄ. ԵՒ 'Ի ԽՈՐՀՈՒՐԴՍ ԻՄ ՎԱՌԵՑԱՒ ՀՈՒՐ:

Կրկնակի ջեռնու սիրտ մարդոյ, մի՛ յամբոխմանէ արեան և այլոց հիւթոց, որով և պատճառի հիւանդութիւն. և մի ևս՝ 'ի կրից, մանաւանդ 'ի բարկութենէ կամ 'ի զայրացմանէ, զի յեռանել մարդոյ զվնասն՝ զոր հասուցանէ ոք նմա, ջեռնու արիւն նորա 'ի սրտի, և խորհուրդք վրէժխնդրութե̃ յածին յերևակայութե̃ նորա կամ 'ի միտս նորին. Զայս հայելով մարգարէն ասէ.

ՋԵՌԱՒ ՍԻՐՏ ԻՄ 'Ի ՆԵՐՔՍ ԻՄՈՒՄ. Այսինքն 'ի նորոգել ցաւոցս վասն լռելոյ իմ 'ի խօսելոյ շարժեցաւ յիս զայրացութիւն կամ սրտմտութիւն անհնարին, որով և ջերմացաւ սիրտ իմ այնչափ սաստիկ, մինչև ջերմացուցանել նաև զփոր իմ, և զի այսմ հետևի և այլ-

այլութ՟ի ՚ի խորհուրդս, սմին իրի ասէ ։

Եւ ՚ի խորհուրդս իմ ջեռեցաւ հուր ։ Այսինքն ՚ի ջերմանալոյ սրտիս զայրացութ՟բ՝ շարժեցաւ կամ արծարծեցաւ ՚ի միտս իմ խորհուրդ վրէժխնդրութեան. և զի ցուցցէ զսաստկութիւն այնր խորհրդոյ՝ կոչէ զնա հուր. զի որպէս հուրն տոչորէ զենթակայն, և յորժամ սաստկանայ՝ դիւրաւ այրէ զայլս, այսպէս յորժամ խորհուրդ վրէժխնդրութե՟ն զօրանայ՝ տոչորէ այսինքն ապականէ զբարի յղացմունս մտաց, և դիւրաւ բերի յայրել զայլս՝ ՚ի հատուցանել վնասուն ։

Յարմարական և բարոյական մեկնութեամբ այս բան հայի ՚ի գալ ՚ի յայտ ներքին ախտից. զի զորօրինակ ախտ մարմնոյ՝ որ ՚ի ծածուկ կայ ՚ի ներքս՝ յուտել մարդոյ զդեղս կամ զվնասակար իրս՝ ՚ի յայտ գայ, սոյնպէս եթէ կայցէ ՚ի հոգին յօժարութիւն ախտաւոր՝ ՚ի մտածել մարդոյ զդեղն, այսինքն զբարի ինչ, և ՚ի ջեռնուլ սրտի նորա՝ իբրև հուր վառի այն ախտ, և ՚ի յայտ գայ ՚ի խորհուրդս, և իբրև ՚ի լոյս տեսանի, և կամ ՚ի գալ առթի ՚ի յայտ եկեալ բորբոքի. ըստ որոյ ասէ կիրակոս վարդապետ. (՚ի մեկն. հարիւր". եւագրի Է. 49.) թէ *՚ի մարմնի կայ ինչ ծածուկ „ ախտ, յորժամ վնասակարս ուտեմք՝ ՚ի յայտ գայ. „ սոյնպէս ՚ի հոգին կայ յօժարութ՟ի ախտաւոր. յորժամ խորհիմք (ընդդէմ այնր) զվնասակարս, գայ „ ՚ի յայտ ‖ ։ Զսոյն գործեն երբեմն և փորձութիւնք առաքեալք յա՟յ ։ Մեք գայլախազ քար եմք. և փորձութիւնք պողովատիկ հրահանք (այն է չախմախ.) ՚ի հարկանել զմեզ ա՟յ նոքօք՝ հուր սիրոյ ցայտէ ՚ի մէնջ ։ Եհար և զվէմն զք՟ո տանջանօք, ՚ի վառել զսիրտ մեր ՚ի հրոյ նորա ։ Խորհուրդ մեր մեղրաջուր է. ՚ի հարկանելն ա՟յ փրփրի փափաքմամբ, և ՚ի ջեռուցանելն՝ անձէ յառաքինութ՟իս. ըստ որում մեղրաջուրն հարմամբ փրփրի, և ջեռուցմամբ անձէ ։

Դարձեալ բարոյապէս առեալ՝ այս բան ընդ հակառակն նախադրելոցդ հայի ՚ի լուսաւորութ՟ի մտաց և ՚ի բորբոքումն կամաց ՚ի սէր առաքինութ՟եց և ՚ի սէր ա՟ծայնոց. և ըստ այսմ շաղկապդ Եւ՝ դնի իբր պատճառական. որպէս թէ ասացեալ էր. ջեռաւ կամք իմ սիրով ՚ի ներքս ՚ի հոգիս. վասն զի ՚ի խորհուրդս իմ վառեցաւ հուր. իբր թէ ասէր. պատճառ վառելոյ կամացս այս եղև՝ զի 'ի միտս իմ փայլեցաւ բարի մտածութիւն իբրև հուր։ Եթէ զշաղկապդ և՛ առցուք բաղհիւսաբար՝ մեկնի դարձեալ 'ի յարմարական միտս համեմատութեամբ նախընթաց համարոյն. զի 'ի համբերել մարդոյ և 'ի լռել նորա վասն ա̃յ, որչափ տառապի յինքեան, այնչափ ջեռնու սիրտ նորա սիրովն ա̃յ. և 'ի ջերմութենէ անտի սրտին բազում բարի մտածութիւնք կերպարանին 'ի միտս նորա, և երբեմն երկիւղալի խորհուրդք հրոյ գեհենոյն՝ բարեպէս ազդեալք. և զի այն մտածութիւնք տան լոյս մտաց, և զվառ կամաց, վասն այսորիկ հրոյ նմանեցուցանէ զայն, և ասէ. 'ի խորհուրդս իմ վառեցաւ հուր. այսինքն թէ 'ի միտս իմ ծնաւ բարի մտածութի̃ հանգոյն հրոյ՝ որ վառիցի, և լուսատու լինիցի։

Յաւել դնէ՝ զի առանց վառելոյ հոգւոյն 'ի ձեռն սիրոյ՝ սոսկ մտածութիւնն ոչ տայ զլոյս ազդողական. վասն զի որպէս պատրոյկ թէև տոգորեսցի յիւղ կամ 'ի մոմ՝ լոյս ոչ տայ՝ եթէ ոչ վառեսցի հրով, նոյնպէս և միտք թէև տոգորեսցի 'ի մտածութիւնս՝ ոչինչ օգտէ՝ եթէ ոչ վառեսցի հոգւին սիրով և բարի առաջադրութեամբ։ Այն վառումն ևս յայնժամ բարեպէս օգտէ՝ յորժամ ջանայ հոգին 'ի վառման անդ այրել զախտս և մաքրել, և զհոգին իբրև զոսկի 'ի հուր զտել։ Եւ այս յաջողի՝ առաջի առնելով զազգի ազգի ընդդիմութիւնս ընդդէմ ախտից։ Օրօրինակ՝ եթէ իցես նեղասիրտ, 'ի վառիլ քո բարի խորհրդով իւիք, առաջի մատո՛ զզանազան դիպուածս՝ որք շարժեն զքեզ 'ի նեղսրտութիւն. եթէ տեսցես՝ թէ այլայլի և չփոթի հոգիդ, համոզեա՛ զքեզ, և առաջադրեա՛ չնեղասրտիլ յայն դիպուած. ապա առաջի մատո՛ և զայլ դիպուած. և զնոյն արա՛. և այսպէս զտեսցի սիրտ քո 'ի նեղսրտութենէ, և վառումն սրտի քո լինի քեզ օգտակար և փրկարար։ Եթէ այս գործ վաստակեցուսցէ և նեղեսցէ զքեզ՝ այնու շահեցուցանէ։ Դեղ է. թէև դառն թուեսցի, յապայն օգտեսցէ։ Դառն է խոկումն մահու, դառն է և խոկումն դժոխոց, դառն է և խոկումն մեռուցման ախտից. դառն են արդարև այսպիսի խոկմունք, և ոչ բերկրալի. սակայն եթէ հոգի մարդոյ վառեսցի առ 'ի մաքրել զինքն՝ լինին բերկրալի. և մղեն զնա 'ի բարին։ Արդ այսմ ամի զոր ասացաք՝ հետևեցուցանէ մարգարէն, և ասէ։

Ե. Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի. ցո՛յց ինձ տէր զվախճան իմ, և զթիւ աւուրց իմոց՝ զինչ է, զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն։

Խօսիլ և ասել՝ թէպէտ և երևին զմի և զնոյն նշանակութիւն 'ի մէջ բերել, բայց յեղանակն և 'ի պարագայս զանազանին. ըստ եղանակին յայսմ մտածի զանազանութիւնն, զի խօսիլն է յայտ առնել զինչ այլում թէ բարւոք լինիցի, որպէս ամենն մարդիկ, և թէ այլով իւիք, որպէս ամենն հրեշտակք. (թող զանյատուկ խօսիլ անբանից.) իսկ ասելն՝ է ելուզանել զբան. այլ հայելով 'ի մարդն՝ նշանակէ յօդել զբան յայտարար 'ի ձեռն բառից՝ թէ մտաւոր իցեն բառքն, և թէ ձայնաւոր։ Ըստ պարագայից՝ յայսմ մտածի զանազանութիւն սոցա, զի խօսիլն է այսպիսի կամ այնպիսի բարբառով կամ այսպիսի և այնպիսի եղանակաւ յայտնել զբանն. իսկ ասելն ոչ հայի յայսպիսի կամ յայնպիսի բարբառ և եղանակ, այլ հայի միայն 'ի յօդել զբանն՝ եթէ 'ի ներքս և եթէ արտաքս։ Զերկոսին ևս՝ այսինքն զխօսիլն և զասելն ըստ այդոցիկ նշանակութեանց միանգամայն առաջի դնէ աստ մարգարէն յասելն։

Խօսեցայ լեզուաւ իմով և ասացի։ Այսինքն՝ 'ի ջեռնուլ սրտի իմոյ՝ խօսեցայ ընդ իս 'ի ներքս 'ի հոգիս իբր ընդ այլում, ոչ օտար լեզուաւ՝ զոր չկարիցեմ իմանալ, և ոչ այնպիսի լեզուաւ՝ զոր կարիցեն ամենեքին հասկանալ, այլ լեզուաւ իմով, այսինքն այնպիսի լեզուաւ, որ ինձ էր հասկանալի, որ է ասել՝ զոր խօսեցայ կամ խորհեցայ 'ի միտս իմ, բարւոք իմացայ, և ըստ իմանալոյս ասացի առ ած։

Ցո՛յց ինձ տէր զվախճան իմ, և զթիւ աւուրց իմոց, զինչ է, զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն։ Այս բան եթէ ըստ հնչման բառիցն կշռեսցի, յայտ առնէ զհետաքննելն ինչ խնդիր այնպիսի՝ որ երևի լինել արգելեալ 'ի տեառնէ. զի որ տէրն է կենաց և մահու՝

որչափ սաստիկ եցոյց զկատարած կենաց, այսինքն ըզմեռանիլ մարդոյ, այնչափ անստոյգ եթող՝ թէ երբ արդեօք իցէ կատարած, կամ քանի ժամանակ կայցէ մինչեւ 'ի կատարած, կամ որչափ արդեօք ունիցիմք կեալ եւ այլն. զի այս է յիշխանութեանն ա՟յ՝ զոր չէ մեզ արժան խնդրել. * ոչ է ձեր գիտել զժամս եւ զժամա-
„ նակս, զոր Հայր եդ յիւրում իշխանութեն ‖. (գործ. ա՟. 7.) եւ թէ * յորում ժամու ոչ կարծիցէք գայ որ-
„ դի մարդոյ ‖. (մատ. իդ. 44.) յորոյ վերայ ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժգ.) թէ սովին * իբրեւ զաւելորդ եւ զանօգուտ խնդիր արգել (զգիտելն) ‖. Պաւղոս գրէ առաքեալն. * վասն ժամուց եւ
„ ժամանակաց եղբարք չէ ինչ պիտոյ գրել առ ձեզ
„ (վասն զի ոչ վայել է ձեզ գիտել զայս) զի դուք
„ ինքնին իսկ ստոյգ գիտէք՝ թէ օր տեառն իբրեւ ըղ-
„ գող գիշերոյ՝ այնպէս հասանէ ‖. (ա. թես. ե. 1.)
Իբրեւ զգող դնէ. զի գողն յոչ գիտել մարդկան հասանէ. սպասէ՝ զի 'ի քուն լիցին մարդիկ, եւ յայնժամ գայ. սոյնպէս եւ օր մահուն։

Բայց ծանիր եւս՝ զի որչափ անօգուտ է գիտելն զայս՝ այնչափ օգտակար է ոչ գիտելն։ * Եւ այս (որպէս
„ ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախ. ճառ. ժե. երես
„ 179.) 'ի խնամոցն ա՟յ մատակարարի, զի մի գիտա-
„ ցեն (մարդիկ) զօր վախճանի իւրեանց. եւ հեղգա-
„ ցեալ վրիպեսցին յարդարութենէ. այլ արթունք եւ
„ պատրաստք 'ի գործս արդարութեան զա՟մ առօրս կե-
„ նաց իւրեանց մնասցեն ‖։

Եւ թէպէտ ոմանց 'ի սրբոց շնորհեցաւ այս, բայց սակաւ եւս նոցա այնպիսի շնորհք, որով շահեցան նոքա անուն. որպէս ասի զսրբոյն փրանկիսկոսէ, թէ ա՟ծային յայտնութեամբ գիտացեալ զօր վախճանի իւրոյ եւ զնախասահմանիլ իւր 'ի փառս՝ տիւ եւ գիշեր 'ի նոյն հառաչէր, եւ 'ի յիշելն՝ թէ յետ սակաւու աւուր գնալ հաւատեան 'ի փառս արքայութեանն՝ 'ի խնդութենէ հոգւոյն գրեթէ մերձենայր 'ի մահ. Արդ յայտ է թէ մարգարէն ոչ յայսպիսի գիտութիւն յօժարելով խօսի աստ։

Այլ եթէ ըստ ներքին իմաստից առցի այս բան, զի՛ր մեկնութիւն եւ պայքար ոչ հանգուցանէ զմիտս.

այսու ամենայնիւ ըստ երկուց կարէ առաջի դնել. մի՛ ըստ տարակուսական ըղձի, և մի և՛ս ըստ հաստ լինելոյ ստուգութեան. ըստ առաջնոյն կամի ասել. տարակուսեալ եմ 'ի խորհուրդս իմ թէ զի՞նչ լինիցի ինձ. դու ինքն տէր ցո՛յց զկատարած իմ, այսինքն ցո՛յց թէ զիա՞րդ ունի վերջանալ կատարած կենաց իմոց. և ես զիա՛րդ ունիցիմ անցուցանել զաւուրս պանդխտութեան իմոյ. արդեօք կայցէ՞ ինձ ժամանակ ապաշխարելոյ, թէ ո՛չ. տո՛ւր ես գիտել, թէ զի՞նչ ինչ պակասեալ է յանցեալ կենացս. Եւ կամ այլազգ ես՝ սակաւ և ցաւագին են կեանք իմ. վասն որոյ աղաչեմ զքեզ տէր, գո՛նէ զկատարած իմ աւարտեա՛ 'ի բարին. նոյնպէս և զաւուրս իմ քանի և իցեն՝ պահեա՛ 'ի խաղաղութեան. և տո՛ւր ինձ գիտել՝ թէ յո՛րքան իրս պակասեալ իցեմ, կամ ո՛րչափ ինչ 'ի բարեաց նուազեալ է յինէն. զի ջանացայց 'ի մնացեալ աւուրս իմ լցուցանել զայնս.

Ըստ երկրորդին կամի ասել, ցո՛յց ինձ, այսինքն լուսաւորեա՛ զմիտս իմ տէր, գիտել ազդու ճանաչմամբ թէ ճշմարտիւ հասանելոց է կատարած կենաց իմոց. կամ արա՛ զի ծանեայց՝ թէ ընդունայն են կեանք իմ, գիտելով՝ թէ յետ սակաւու կատարած լինելոց է կենացս. կամ որ նոյն է, յայտնի՛ արա ինձ զանցաւորութիւն կենացս, և զթիւ աւուրց իմոց՝ թէ քանի՞ն է. իբր թէ ասէր. տո՛ւր ինձ բարւոք ճանաչել՝ թէ քանի՛ սակաւ իցեն թիւք աւուրց իմոց, կամ թէ զիա՛րդ կարճ իցեն ընթացք անցաւոր կենացս. զի գիտացից՝ թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն. այսինքն է, 'ի միտ առից՝ թէ ո՛րչափ աւուրք պակասեցան, և ո՛րքան սակաւաւուրք մնացին. որովհետև յայսչափ քայլս կենաց իմոց անցին ամք բազում.

Պատճառ խնդրելոյ զայս մարգարէին երևի լինել նախ այս՝ զի նեղէր ընդ երկարութիւն պանդխտութե̃ իւրոյ. յայս միտս իմանայ և վանական վարդապետ. ('ի մեկն. յոբ. գլ. է̃.) ուր ասէ. * դաւիթ ընդ եր-
,, կարելն նեղէր ասելով. ցո՛յց ինձ տէր զկատարած
,, իմ, և զթիւ աւուրց իմոց ||. Երկրորդ՝ փափաքէր զի տպաւորեսցի ճանաչումն այսր 'ի սրտի իւրում. զի թէպէտև քան զա̃մ ինչ յայտնի է անցաւորութիւն

կենաց և կարճութիւն ամաց մերոց, բայց որչափ յայտնի է, այնչափ մթին տեսանի. զի զգայութիւնք մեր յանցաւորս յարելով՝ հակեն ընդ խրեանս և զմիտս՝ խորհիլ ոչ զանցաւորութիւն անցաւորաց, այլ զանցաւորսն՝ ժառանգելի անցաւոր կենաց։ Ուրեմն խնդրէ մարգարէն՝ զի ծանիցէ, և տպաւորեալ ունիցի 'ի միտս իւր զսակաւօրեայ կարճութիւն կենաց առ 'ի կեալ զգուշութեամբ և զգաստութեամբ։ Զի այսպիսի ճանաչումն զգաստացուցանէ զմարդն, և տայ արհամարհել զերկրաւորս, և յարիլ յերկնաւորս. որպէս և եղև ռոլանդոս երիտասարդ պոլոնիացի, որ ծանուցեալ զկարճութիւն անցաւոր կենացս, զգաստացաւ. և յետս կացեալ յանկարգ գնացից եղև կրօնաւոր 'ի կարգի քարոզչաց։

Մեկնութիւն առաջիկայ բնաբանիդ համառօտագոյն ևս բացատրի այսպէս. տուր ինձ տէր բարւոք ճանաչել զկատարած կենաց իմոց և զսակաւաւթիւ աւուրս իմ, և զպակասիլս իմ 'ի նոսին։ Զայս ասէ տեսանելով զսակաւօրեայ կեանս մարդկան, և զտկարութիւն կարողութեան նոցա. զորոց խօսի 'ի յաջորդ համարն, և ասէ։

Զ. Ահա չափով ետուր զաւուրս իմ. և կայք զօրութե̄ իմոյ որպէս ոչինչ է առաջի քո. սակայն ամենեւին ընդունայն է ամ̄ մարդ կենդանի։

Որչափ և երկար լիցեն կեանք մարդկան՝ ոչ են անչափ. այլ 'ի չափու են եղեալ, ոմանց այսչափ, և ոմանց այնչափ. բայց անհասանելի իմն է՝ թէ ընդէ՞ր ոմանց երկար լիցի և ոմանց սակաւ. զի՞ է՝ զի ոմանք 'ի մանկական հասակի մեռանին, և ոմանք յերիտասարդութեան, ոմանք՝ մեռեալ ելանեն յարգանդէ, և ոմանք 'ի խոր ծերութիւն ժամանեն։ Եթէ 'ի կարգ պատճառաց և պատահարաց հայեսցուք, դիւրին է իմանալ. զի 'ի պատահիլ այս ինչ իրի՝ ասեմք, այսպէս եղև, են. իսկ եթէ քննել կամիցիմք զընդէրն, ամենևին ոչ կարեմք հասու լինել այնմ. զի ա̄յ միայն է գիտելի։ Աստի և մարգարէն թողեալ զքննութիւն այնր՝ միայն 'ի չափաւորութիւն կենաց հայելով ասէ։

Ահա չափով եդեր զաւուրս իմ։ Ահա դնելով՝ կամի ասել. Թէպէտ և անտարակոյս գիտէի և գիտեմ, թէ սակաւ են աւուրք կենաց իմոց, բայց այժմ խորագոյնս տպաւորեալ տեսանեմ յիս զայս ճանաչումն. որով և այնչափ կարճ համարիմ զաւուրս իմ, մինչ գրեթէ իբրև զկէտ մի 'ի չափել զայն. ըստ որում դու ինքն քոյով նախախնամութեամբ չափ եդեալ ես այնմ։ Եւ որովհետև այս այսպէս է, ապա 'ի զուր է զհետ լինել այսպիսի կենաց, և խնդրել հանգիստ 'ի սմա։

Արդ զորօրինակ չափ եդեալ է ա̃ծ աւուրց կենաց մերոց, նոյնպէս չափ եդեալ է և զօրութե̃ մերոյ, և որպէս աւուրք մեր որչափ և տևեսցեն՝ սակաւք են, նոյնպէս և զօրութի̃ մեր որչափ և հզօր երևեսցի և մեծ, տկար իմն է և իբր ոչինչ։ Եւ առ այս յարէ։

Եւ կար զօրութի̃ իմոյ որպէս ոչինչ է առաջի քո։ Ասելն ասա՝ կար զօրութի̃՝ յայտ առնէ զկարելն զօրութե̃ մարդոյ՝ առնել զայս ինչ և զայն, և գործել այսպէս և այնպէս. և կեալ այսչափ և այնչափ, ևն։ Ահա այս իմ կարելս ասէ համեմատութե̃ ամենակալ զօրութե̃, և բաղդատութե̃ յաւիտենական կենաց՝ գրեթէ ոչինչ երևի առաջի իմ, որ է ասել. ամենևին տկար և անարգ է զօրութի̃ իմ, նոյնպէս և կեանք իմ և կեանք ամենայն մարդոյ. և առ այս յարէ և ասէ։

Սակայն ամենևին ընդունայն է ամենայն մարդ կենդի։ Սովին ոչ ցուցանէ մարգարէն՝ թէ մարդս յինքեան 'ի գոյացութեան իւրում իցէ ունայն, այլ թէ մինչդեռ մանեղի է, այսինքն մինչդեռ 'ի մարմնի է, կամ ըստ Եբր". և ըստ այլոց թարգ". մինչդեռ կեայ 'ի մարմնի, 'ի կեանս անդ ամենևին ընդունայն է, ոչ ինքն, այլ ամենայն զոր ունի. զի զոր ինչ ունի ունայն է. ունայն է առողջութիւնն զոր վայելէ, զի սակաւ իմն այլայլութեամբ եղծանի. ունայն է և զօրութիւնն, զի փոքու իւիք տկարանայ. ունայն է և գեղեցկութիւնն, զի յետ քանի մի ամաց դառնայ 'ի տգեղութի̃. ունայն է և փառքն, զի փութով փոխի յանարգանս. ունայն է և իշխանութիւնն, զի վաղ վերջանայ. ունայն է և մեծութի̃ն, զի դուզնաքեայ իմն դիպուածով կորնչի. ունայն է և մտաւոր աշխատութիւնն, զի իբր զհետս նաւուց չքասի.

ունայն է և բոլոր կեանք մարդոյ, զի 'ի հասանել մահու բարձցի 'ի միջոյ և անհետասցի նման հագագի, և միայն հոգի նորա մնասցէ, և դարձցի առ ա՟ծ տալ համարս գործոց իւրոց. իբր զի եթէ յունայնութիւնս անդ լեալ իցէ զհետ ունայնութեան, և լեալ իցէ մսեղի այսինքն մարմնասէր, ունայն ելցէ 'ի յաւիտենական բարեաց. իսկ եթէ չիցէ լեալ զհետ ունայնութեան, այլ զհետ գործոց բարութ՟ե՝ հասցէ 'ի լիութիւն յաւիտենական բարեաց:

Աստանօր հայելով 'ի նախընթաց հատուածոդ՝ մարթ է բառիս ընդունայն՝ իմանալ զմահկանացու գոլ մարդոյ. և զայս երիւք տայ իմանալ մարգարէն. մի՝ այնու՝ զի ասէ. չափով եդեր զաւուրս իմ. զի ոչ արարեր զիս անմահ որ տևէ յաւիտեան, այլ մահկանացու՝ կեալ այսչափ կամ այնչափ աւուրս. զի թէպէտ և յանմահութեան վիճակի ստեղծ ա՟ծ զմարդն, բայց յոչ անսալ նորա հրամանին ա՟յ՝ դատապարտեաց ա՟ծ՝ մահու վիճակիլ, ըստ որում և սպառնացաւ նմա թէ յանցանելդ զհրամանաւ իմով մեռանիցիս. և զայս վճիռ ոչ փոխեաց ա՟ծ և ոչ նահանջեաց յետս. որով և մարդն՝ որ անմահ ստեղծաւ՝ եղև մահկանացու. և տուժանօք կենաց ծանեաւ՝ թէ ճշմարիտ է ա՟ծ 'ի բանս իւր, և սատանայ սուտ. և պարտաւորեցաւ այնուհետև հաւատալ միայն ա՟յ, և չանսալ բնաւ սատանայի: Եւ որպէս վայելուչ գրէ եզնակ կողբացի. (գլ. ժ՟ը.) * եթէ չէր արարչին յետ յանցանելոյ զպատուիրա-
,, նաւն զմարդն մահկանացու արարեալ, հնազանդ
,, մարդն սատանայի հաւատայր և ոչ ա՟յ. զի սա ասաց,
,, եթէ ուտես 'ի պտղոյն՝ մեռանիս. և նա ասէր,
,, թէ ուտես՝ չմեռանիս, այլ իբրև զա՟ծս լինիս ‖:
եթէ հաստչին էր հաւատացեալ՝ 'ի լիութեան կենաց վայելէր. իսկ սատանայի հաւատալով ունայնացաւ 'ի կենաց:

Երկրորդ՝ տայ իմանալ այնու՝ զոր ասէ. * և կար գոյութեան իմոյ՝ որպէս ոչինչ է առաջի իմ ‖: Զի եթէ զօրութիւն մարդոյ ոչինչ կարէ, այս և ոչ զկեանս իւր պահել զօրէ. որով և ունայնանայ, այսինքն մեռանի, և լինի իբրև զչեղեալ ըստ աստի կենաց: Կամեցան ամենք հնարս հնարել առ 'ի ազատ մնալ 'ի մահուանէ · և ոչ կարելով ձեռնհաս լինել այնմ՝ ըզբաղեցուցին զինքեանս 'ի սնոտիս · զի գոնէ մոռասցին զյիշատակ նորա · որպիսի եղև և Ձերարտոս իշխան · բայց զոր ոչն կամէր յիշել՝ բռնադատեցաւ անմոռաց պահել ։ Սա շինեաց պալատ մի հոյակապ · և 'ի կարգել զնաւակատիս նորին՝ արար ընդունելութիւն մեծ բարեկամաց իւրոց ։ Իսկ 'ի գովել ամենեցուն զշինուած պալատին՝ ասաց ցնա մի ոմն 'ի բազմելոց · զամենայն ինչ գեղեցիկ յօրինեալ ես 'ի պալատիդ · մի ինչ է՝ որ տգեղացուցանէ զամենայն գեղեցկութիւն սորա ։ Իսկ 'ի հարցանել նորա թէ զինչ իցէ , պատասխանի ետ , դուռն տան քո · զի սա է՝ ընդ որ ելանելոց է մարմին քո մեռեալ ։ Այս բան այնպէս տպաւորեցաւ 'ի սրտի նորա , մինչև ոչ երբէք մոռանալ · որով և ամենայն գեղեցկութ՟ի պալատին երևէր նմա տգեղութ՟ի ։

Երրորդ՝ տայ իմանալ այնու , զի զմարդն կոչէ մահղի · իսկ որ մահղի է՝ գոլով բաղադրեալ 'ի չորից ներհական տարերաց՝ յեղծանել նոցա զմիմեանս՝ եղծանի և ինքն , այսինքն մեռանի ։ Կեանք մարդոյ կառաց նմանի՝ զոր ձգեն չորեքին տարերք · բայց քանզի հակառակ են միմեանց , 'ի հակառակիլն անդ խորտակեն զկեանս ։ Ուստի ասէ եզնիկ կողբացի · ('ի գլ · դ՟ ·)
* ամենայն կառք 'ի համազգեաց երիվարաց լծին , բայց
,, միայն այս կառաց (այսինքն մահղեաց) որ 'ի չհա-
,, մազգեաց լծեալ են (այսինքն 'ի չորից հակառակ տա-
,, րերաց , ուստի և խորտակին)‖ ։ 'ի գերընականս
միայն յաջողի այդ · որպէս 'ի կառսն անդ զոր ետես ե-
զեկիէլ (ա՟ · 10 ։)

Սոյն այս պատահի և 'ի բարոյական ընթացս · զի 'ի յառնել և 'ի հակառակիլ կրից և փորձութեանց՝ կործանեն երբեմն զհոգևոր կեանս · որպէս պատահեցաւ սմին իսկ դաւթի · որով և յայտնի գիտաց , թէ ընդունայն է կեանք մարդոյ ։ Ի մեծութեան ևս պատահի այս և յիշխանութեան · աւասիկ գլիմերէս թագաւոր վանդալաց , որ մեծացաւ յոյժ , և բարձրացաւ · 'ի պատերազմին ընդ զօրս կայսեր՝ յորժամ պաշարեցաւ 'ի մէջ լերանց 'ի բելիսարիոսէ , յանհնարինս մտեալ՝ խնդրեաց 'ի նմանէ զհաց , զսպունգ և զքնար · զհաց

՚ի պահել զկեանս. զսպունգ ՚ի սրբել զարտասուս. և զքնար ՚ի փարատել զցաւս։ Այլ իբրև կալեալ եղև և ածաւ առաջի յուստինիանոսի կայսեր՝ տեսեալ զփառս նորա՝ ասաց. ունայնութիւն ունայնութե՟ց ամենայն ինչ ընդունայն է։ Ուրեմն ամենևին ընդունայն է ամենայն մարդ մեղի. յունայնութե՟ կեայ, և յունայնութիւն գնայ՝ յորում վիճակի և մտածեսցի։ Բայց քանզի մարդիկ ոչ հային յայս, այլ տեսանելով զոմանս փարթամացեալս և զայլս փառաւորեալս, զոմանս փափկացեալս և զայլս մեծացեալս, համարին զկեանս նոցա իբր լիացեալս և երանեալս. վասն այսորիկ մարգարէն կամելով զայս ճանաչումն նոցա ուղղել, առաջի դնէ գեղեցիկ իմն նմանութ՟ի և ասէ։

Է. Ապաքէն որպէս ՚ի պատկերի շրջի մարդ. սակայն ՚ի նանիր խռովի. գանձէ՝ և ոչ գիտէ ում ժողովէ։

Ի բարւոք բացատրութիւն այսր բնաբանի արժան է աստ ինչ ինչ առաջի առնել, հայելով առ բան պատկերի. վասն որոյ գիտելի է նախ՝ զի պատկերն է նմանութիւն երևեցուցիչ նախատպին կերպարանեալ յայնմանէ՝ որոյ է. և է եօթնպատիկ. մի՝ ըստ բնական կամ ըստ գոյացական գոլոյ, որպէս որդի ուրուք ասի պատկեր հօր՝ զի ունի զնմանութիւն երևեցուցիչ իւրոյ սկզբնատպին այսինքն իւրոյ հօր՝ յորմէ ելեալն է։ Երկրորդ՝ ըստ արհեստական կամ ըստ նկարագրական գոլոյ, որպիսի է նկարեալ պատկեր մարդոյ կամ արձան նորա՝ զի ունի զնմանութիւն երևեցուցիչ մարդոյ՝ յորմէ օրինակի. որպիսի է և կնքեալ իրն հայելով առ կնիքն։ Երրորդ՝ ըստ տպաւորեալ կամ ըստ անցողական գոլոյ, որպիսի է այն՝ որ երևի ՚ի հայելւոջ։ Չորրորդ՝ ըստ ստուերական՝ կամ ըստ պակասական գոլոյ. որպիսի է ստուեր մարդոյ՝ զի ունի զնմանութ՟ի ինչ երևեցուցիչ արտաքին ձևոյ նորա, և ՚ի նմանէ ձևանայ պակասութ՟բ լուսոյ։ Հինգերորդ ըստ արտաքին, կամ ըստ կերպարանական գոլոյ, որպիսի է ծպտեալ կերպարան ուրուք՝ որով յանդիման լինի այլ ոք, ըստ որոյ է կերպարանեալ։ Վեցերորդ՝ ըստ գիտողական կամ ըստ ճանաչողական գոլոյ, որպիսի են պատկերացուցմունք յերևակայութեան, և իմանալի *պատկերք 'ի միտս. զի ունին զնմանութիւն՝ երեւեցուցիչ առարկայից իւրեանց՝ յորոց ծագին : Եօթներորդ՝ ըստ պարունակողական գոլոյ, կամ ըստ համաչափ պատելոյ զիրն, որպիսի է նոյնաչափ անօթ իրիք, ըստ որում պարունակելով զիրն ըստ չափու համեմատութեան նորին՝ յանդիման առնէ՝ զոր պարունակէ յինքեան, այլ այս պիտակապէս և անյատկապէս ասի պատկեր :*

Գիտելի է երկրորդ, զի 'ի պատկերն երկու ինչ ըմբռնի. մի՝ զի է յինքեան իր ինչ՝ գո՛նէ արտաքուստ. որպէս նկարեալ պատկերն է իր ինչ գոյացեալ 'ի ձեռն նկարու 'ի թղթի, կամ 'ի տախտակի. և միւս՝ զի է նմանութիւն այնմ զոր յանդիման առնէ : Ըստ այսմ երկրորդ բանի առեալ պա՛րտ է զգուշութեամբ գիտել 'ի պատկերի զզանազանութիւն և զնոյնութ՟ի. զանազանութիւնն տեսանի յայսմ, զի պատկերն ըստ որում նմանութիւն ինչ՝ ոչ է նոյն ընդ նախատպին՝ գո՛նէ ըստ էնթակայութեանն. որպէս պատկեր պետրոսի ըստ որում նմանութիւն ինչ՝ ոչ է պետրոս, այլ պատկեր նորա : Իսկ նոյնութիւնն տեսանի յայսմ, զի որ ինչ է նախատիպն յինքեան, նոյն է և պատկերն՝ ոչ յինքեան, այլ 'ի գոլն երեւեցուցիչ. յոր միտս 'ի տեսանել մեր զպատկեր թէոդոսի թագաւորի, ասեմք լինել թէոդոս թագաւոր, ըստ որում է երեւեցուցիչ անձին նորա. և յաղօթել մեր առաջի պատկերի սրբոյ ուրուք՝ ոչ ասեմք ո՛վ պատկեր սրբոյն պօղոսի, այլ ո՛վ սուրբ պօղոս՝ բարեխօս լեր վասն մեր :

*Գիտելի է երրորդ, զի որ ինչ է յարարածս՝ կարէ փոխաբերութեամբ իմն և անյատկապէս ասիլ պատկեր առաջին էին այսինքն ա՟յ. զի ամենեքին են նմանութիւնք ինչ երեւեցուցիչ կատարելութեանցն ա՟յ, յորմէ են. յոր միտս ասէ առաքեալն * աներեւոյթքն նորա (այսինքն աներեւոյթ կատարելութիւնքն ա՟յ) 'ի սկզբանէ աշխարհի, արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է մշտնջենաւորութիւն և զօրութ՟ի և ա՟ծութիւն նորա ||. (Հռոմ. ա՟. 20 :) վասն զի եթէ գոյացական էակք իցեն՝ գոլով նոքին հաղորդութիւն ինչ ա՟ծային գոյացութեան՝ իբր ստուերական նմանութ՟ի նորա՝ իւրեանց չափաւոր գոյացութեամբ յանդիման առնեն զան* չափութիւն գոյացութեան ա̃յ, և իւրեանց եղական բնութ̃ն զանեղութ̃ի բնութ̃ե նորա, և իւրեանց այս ինչ է լինելով՝ զանսահման է լինելն նորա. եւն.

Այլ զի հրեշտակք և մարդիկ առաւել քան զայլս յանդիման առնեն զայս ամենայն, վասն որոյ նոքա առաւել ևս ասին լինել պատկեր ա̃յ ըստ գոյացական գոլոյ՝ ըստ որում են էակք բոլորականք յիմացականութ̃ե և յանձնիշխանութ̃ե. և իբր այսպիսի յանդիման առնեն զանսահման գոլն իմացականութ̃ե և անձնիշխանութեանն ա̃յ յինքեան.

Այլ քանզի 'ի մարդն պարագրի բովանդակութիւն ն և իցէ գոլոյ՝ եթէ իմացական և եթէ զգայական, եթէ շնչաւոր և եթէ անշունչ, մասնաւորապէս զնմանէ ասի լինել 'ի պատկեր ա̃յ. ոչ զի յանդիման առնէ զա̃ծ իբր զգայական, և իբր շնչաւոր, այլ զի ցուցանէ զգերազանցութիւնն ա̃յ ըստ բովանդակելոյ զա̃մ աստիճան գոլոյ. Այս յաղագս այսորիկ միայն զմարդոյ է գըրեալ՝ թէ ստեղծաւ 'ի պատկեր ա̃յ. իսկ զհրեշտակաց այսպիսի ինչ ոչ գրի.

Աստի իմաստութեամբ գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժբ.) ասելով. * մարդն գեղեցիկ
,, գտաւ քան զայլս 'ի ստեղծուածոց. զի զամենայն
,, արարածական բնութիւնս յինքն ժողովեաց զիմանա-
,, լիս և զզգալիս, զշնչաւորս և զանշունչս. և ոչինչ
,, եթող արտաքոյ ինքեան. ուստի այսու օրինակաւ
,, առաւել ասի մարդն պատկեր ա̃յ քան թէ վասն մը-
,, տացն. ապա թէ ոչ՝ ևս առաւել զհրեշտակսն պարտ
,, էր պատկեր ա̃յ կոչել. բայց չգտանի (ասէ) 'ի գիրս
,, երբէք ասացեալ թէ հրեշտակքն ըստ պատկերի ա̃յ
,, եղեն. յայտ է ուրեմն թէ վասն այսորիկ ասէ ըզ-
,, մարդն պատկեր ա̃յ, զի զամենայն արարածս յինքն
,, բերէ զգալապէս. որպէս ա̃ծ իմանալաբար ‖. Նոյն
միտս է և սարգիս շնորհալի. ըստ որում գրէ ('ի մեկն. ա̃. պետ. դ. 11. Հաւ թ. յորդ.) թէ վասն այսորիկ 'ի պատկեր ա̃յ ասի մարդ, * վասն զի 'ի մարդում տե-
,, սանի ամենայն արարածական բնութիւն որ յերկինս
,, 'ի վեր, և որ յերկիր 'ի խոնարհ ‖.

Այլ թէպէտ ոմանք 'ի սրբոց հարց միայն ըստ հոգւոյն տասցեն զմարդն՝ պատկեր ա̃յ, որպէս գրէ և շնորհա-

լին առ միջագետս, բայց զայդ եդին ո՛չ ըստ բովանդակելոյ հոգւոյն զամենայն աստիճան գոլոյ, այլ ըստ դերազանցագոյն գոլոյ քան զմարմին, պարագրելով և 'ի մարմնի անդ զամենայն արարածական գոլս՝ իբր բոլորական էակ. ըստ որոյ և մարդն ասի կատարեալ, նա զի զպատկերն ա՟յ յինքեան կրելով՝ ասի հաստատուն 'ի գոլն մարդկային. որոյ վասն ասէ վանական վարդապետ ('ի մեկն. յոբ. գլ. ա՟.) * մարդ հաստատուն „ այն կոչի՝ որ բերէ զպատկեր ա՟յ ‖. Այլ դարձեալ զայդ եդին ըստ յայլեայլ վիճակս կերպարանելոյ. առ որ օրինակ բերէ կիրակոս վարդապետ զակն շափիղայ. ('ի մեկն. հարիւր. եւագրեայ 'ի մնաց. 24.) * շա-
„ փիղայ ակն (ասէ) այլեայլ երեւի. և որչափ հայի ոք՝
„ ոչ կարէ առնուլ զգոյնն. զի երբեմն կապուտակ ե-
„ րեւի, երբեմն ծիրանի, երբեմն սպիտակ, և երբեմն
„ այլագոյն. նոյնպէս և հոգի մարդոյն անճառելի է.
„ զի պատկեր է ա՟յ ‖:

Ասացի 'ի վերոյ * եթէ գոյացական էակք իցեն ‖. զի և պատահական էակք՝ գոլով հաղորդութիւն ինչ կատարելութեանցն ա՟յ՝ անյատկապէս և պխտակաբար կարեն կոչիլ պատկեր ա՟յ. ըստ որում իբր նմանութիւն ինչ՝ յանդիման առնեն զանսահման կատարելութիւն նորա. որպէս գեղեցկութիւն արարածոց զանսահման գեղեցկութիւն նորա. զօրութ՟ի արարածոց զանչափ զօրութիւն նորա. ըստ այսմ և այլ պատահական կատարելութ՟իք. զորօրինակ իշխանութ՟ի, մեծութ՟ի, իմաստութիւն և այլն:

Այլ 'ի յանդիման առնել սոցա ամենեցուն զգոլն ա՟յ և զկատարելութիւնս նորա՝ յանդիման առնեն միանգամայն և զիւրեանց ոչ գոլն կատարեալ, իբր այն՝ զոր տեսանեմք յանդիման առնել նկարեալ պատկերի մարդոյ. զի որպէս պատկեր մարդոյ ըստ որում իր ինչ՝ ո՛չ է այն ինչ, այսինքն մարդ, և ո՛չ կենդանի, այլ նկար ինչ անարգ, նոյնպէս և ամենայն էակք՝ որք փոխաբերութեամբ ասին պատկեր ա՟յ՝ համեմատութեամբ ա՟յ և ա՟ծային կատարելութեանց՝ են անարգ ինչ, մանաւանդ թէ իբր ոչինչ: Ուստի ցուցանեն փիլիսոփայք, թէ բառս էակ, եւ և բառքդ ա՟է, հոգի, իմաստուն, եւն. փաղանունաբար ոչ ստորոգին զա՟յ և զստեղծուածոց.

Յայս ա̃մ ակնարկելով մարգարէին՝ ասէ. Սակայն որպէս 'ի պատկերի շրջի մարդ, սակայն 'ի զուր խռովի. գանձէ, և ոչ գիտէ ո՛ւմ ժողովէ. Բառդ սակայն սատակացուցանէ զզօրութիւն բնաբանիդ. ըստ որում առաջի առնէ զհարցումն. զի որպէս ասէ վանական վարդապետ. ('ի մեկն. յոբ. գլ. ժն.) * ապաքէնդ հարցական է ||. որպէս թէ եղեալ էր, ո՞չ ապաքէն որպէս 'ի պատկերի շրջի մարդ. կամ միթէ ո՞չ գիտէք՝ զի որպէս 'ի պատկերի շրջի մարդ. իսկ այսպիսի եղանակ խօսից ազդու առնէ զբանն, և զօրագոյնս հաստատէ զճշմարտութիւն ասացելոյն. Արդ ըստ եօթնեակ զանազանութեան պատկերի զոր եդաք 'ի վերոյ, եօթնպատիկ օրինակաւ մարթ է առնուլ զմարդոյ շրջիլ 'ի պատկերի.

Նախ առաջին՝ եթէ պատկերն ասցի իբր բնական, կամ ըստ գոյացական գոլոյ, ասի զմարդոյ շրջիլ 'ի պատկերի ըստ գոլոյն իւրոյ այս ինչ էակ. և յայս միտս առեալ այս բան կարէ մեկնիլ կամ առ 'ի պատուի մարդոյ, և կամ առ 'ի անարգանս. Եւ 'ի պատուի մեկնի ըստ այնմ՝ ըստ որում մարդն ստեղծեալ է 'ի պատկեր ա̃յ, և կեայ 'ի նմին պատկերի, որ է պատիւ մեծ. և սակայն մարդս յայսպիսի պատուի գոլով՝ փոխանակ ա̃ծօրէն կենցաղավարելոյ 'ի զուր խռովի, այսինքն յընդունայն իրս խռովի, կամ այնպիսի իրաց պարապի, յորոց ոչինչ օգտի, այլ յաւէտ խանգարի՝ մանաւանդ 'ի գանձելն զինչս, յորս ո՛չ վայելէ յաւիտեան. և ո՛չ իսկ գիտէ՝ թէ յետ մահու իւրոյ ո՛ւմ վայելելոց իցէ.

Եւ 'ի յանարգանս մեկնի ըստ այնմ՝ ըստ որում մարդս ո՛չ գոլով ա̃ծ, այլ միայն պատկեր նորա՝ ոչ ճանաչելով զչափ իւր՝ կամի ա̃ծօրէն մեծանալ, փառօք, իշխանութեամբ, գանձիւք և̃ն. սակայն այս է 'ի զուր խռովիլ. զի այս ամենայն 'ի մեռանիլ նորա բառնի, և նա ո՛չ գիտէ թէ ո՛ ունի ժառանգել զսոսին զկնի իւր. Եւ որ յիմարութիւն մեծ է՝ փոխանակ յանդորրու պահելոյ զինքն՝ կամովին մատնի 'ի խռովութիւնս՝ առ իսպառ եղծումն նկարու իւրոյ. որպէս թէ չիցէ բաւական 'ի կրել զբնական վիշտսն. ուստի ասէ առ այսպիսիս ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. Զ.) միթէ

* չէ՞ բաւական՝ զի 'ի քրտան երեսաց ուտել հրամայեցար. (ընդէ՞ր ապա) այլ ես չարիս և հոգս 'ի վերայ տառապանաց յաւելուս. և թէ հոգայցես ես, զինչ կարիցես առնել, որ և քում անձինդ տէր ոչ ես‖։

Երկրորդ՝ եթէ պատկերն առցի աստ ըստ նկարագրական գոլոյ՝ այլով իմն օրինակաւ ասի զմարդոյ շրջել 'ի պատկերի, իբր զի շրջի յայնս՝ որք ոչ են այն ինչ՝ որ են, այլ իբր նմանութիւն ինչ այնր. որպէս իմաստութիւն մարդոյ ոչ է իմաստութիւնն որ էն, այլ պատկեր անեղ իմաստութեան. զի է հաղորդութ՟ի ինչ նորին, և իւրով չափաւորութեամբն յանդիման առնէ զանչափութիւն այնր իմաստութեան, յորմէ է. Նոյնպէս է և խոհեմութ՟ի, զօրութ՟ի, փափկութ՟ի, զուարճութիւն, փառաւորութ՟ի, մեծութ՟ի, գեղեցկութ՟ի, կենդանութիւն, և այլ զինչ և իցէ կատարելութիւն. զի այս ամենայն ոչ է այն ինչ որ էն, այլ իբր պատկեր այնր։

Իսկ արդ քանզի մարդս 'ի սոսին շրջի, զհետ գայ՝ թէ մարդս կեայ և շրջի 'ի պատկերի. ուստի ոչ ասի զնորմանէ շրջիլ յայնմ որ էն, այլ յայնմ որ է պատկեր, իբր անարգ ինչ և իբր ոչինչ. բայց սակայն ախտաւորութիւն մարդկային բնութ՟ե այնպէս վարէ զմարդն՝ մինչ զի յայսպիսի անարգ իրս անցուցանելով զկեանս՝ խռովի, այսինքն տագնապի՝ գտանել և գանձել զայսոսիկ. բայց 'ի զուր. որպէս 'ի զուր է ծարաւելոյն թողուլ զջուրն, և ձեռնարկել 'ի պատկեր ջրոյն առ 'ի ըմպել. և որպէս գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. թ.) * ոչ ոք է երբէք՝ որ ետես „նկարս նկանակի՝ թէև կարի սովեալ իցէ՝ ձգիցէ „զձեռն՝ առնուլ ուտել 'ի նմանէ‖. զի գոլով պատկեր՝ չիճարէ փափքանաց և կարօտանաց մարդոյ. սոյնպէս և այլ ամենայն իրք կենցաղոյս։ Իսկ եթէ վճարիցեն ինչ ես՝ փանաք են, և փութով եղծանին. ամին իրի զամենայն արհամարհէին սուրբք. որոց ոմանք որպէս ընթեռնումք՝ 'ի կեանս իւրեանց ոչ կամէին տեսանել զգեղեցիկ ինչ. ոմանք ոչ ճաշակէին զքաղցր իրս. ոմանք փակէին զլսելիս 'ի լուր երաժշտութ՟եց. ոմանք ոչ հոտոտէին յանուշահոտ ինչ. ոչ զի յանցանք էր՝ որոյ վասն հրաժարէին, այլ զի պատկեր տեսանէին, վասն այնորիկ ոչ մերձենային։ Իսկ որ յարի 'ի նոսա՝ կորնչի ընդ նոսա. և որ ժողովէ զնոսա՝ ժողովի 'ի նոսին։ Դու եթէ իբր 'ի մնայունս ինչ ձեռն արկանիցէ՝ որպիսի լինել կարծէ զմեծութիւնս, ոչ ժառանգէ զնոսին. զի 'ի մեռանիլ իւր թէպէտ մնան նոքին առ ժամանակ մի, բայց ոչ ինքեան, այլ՝ այլոց. և ինքն ոչ գիտէ՝ թէ ում մնան։ Զի թէ և կարգադրեսցէ այսպէս և այնպէս առնել. բայց ոչ կատարի այն կարգադրութիւն նորա, և կամ յետ սակաւ ժամանակի փոփոխի, և սակաւ օգտէ, զի յետ մեռանելոյ նորա՝ այն իրք ոչ են նորա։ Նա եթող զնոսա. և նոքա ազատեցան 'ի նմանէ։

Երրորդ՝ եթէ պատկերն անցի ասա ըստ տպաւորեալ գոլոյ՝ գեղեցիկ եւս մեկնի այս բան. իբր զի որպէս է պատկեր մարդոյ 'ի հայելւոջ՝ այսպէս է և անցաւոր կեանքս այս յորում շրջի մարդս. զի ցորչափ հայի ա͞ծ 'ի մարդն և պահէ զնա, կեանք նորա կայ և երևի իբր պատկեր ինչ տպաւորեալ յա͞յ, և ինքն կայ և շրջի 'ի նմա, այսինքն 'ի կեանս իւր՝ իբր 'ի պատկերի։ Այլ զօրօրինակ 'ի դադարել ուրուք 'ի նայելոյ 'ի հայելին՝ բառնի պատկերն, սոյնպէս և 'ի դադարել ա͞յ 'ի պահելոյ զմարդն՝ կեանք նորա դադարի։

Ի դնիլ այսր ցորչափ յինքեան է մարդ՝ կեանք նորա պարտի ասել այն ինչ որ ոչ է կեանք, այլ պատկեր կենաց. իսկ եթէ հասցէ 'ի հայօղն ինքեան յա͞ծ, և միասցի ընդ նմա՝ յորում է ճշմարիտ կեանք, յայնժամ և կեալ նորա ասասցի ճշմարիտ կեանք, և ինքն մարդն ասիցի ճշմարիտ կենդանի. յոր միտս ասաց տէրն մեր. * ես կենդանի եմ. և դուք ('ի հասանել ձեր առ իս) կենդանի լինելոց էք ‖. (յովհ. ժդ. 19.) Սակայն մարդս ոչ ուշ դնելով այսմ՝ 'ի զուր խռովի. իբր զի վայրապար զհետ լինի գտանել զայս ինչ և զայն. և գանձել զմեծութիւն, զիշխանութիւն. ևն. և ոչ գիտէ՝ ում գանձէ. զի յետ դադարելոյ իւրոյ 'ի կենաց՝ դադարի և այն. նոյնպէս դադարին և ինչք նորա 'ի լինելոյ յիշխանութեան նորա. և անկանին ընդ իշխանութ͞բ այլոց։

Դու որ յիմարագոյնքն էն 'ի սոսա՝ յառաջիկայս միայն

հայելով՝ և զգալոյն ընդ կարծեօք ունելով՝ 'ի սոսին կամին բերկրել. զներկայիւքս գալ, զապագայից ինչ ոչ զգալ. զորոց ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժգ̃.) * այնպէս են ոմանք չարք.
,, մինչև ասեն. թէ առ այժմ աստէն վայելեսցուք. և
,, ո՜ գիտէ թէ զինչ լինելոց է. տուր ինձ զայսօրն, և առ քեզ զվաղիւն ||.

Զորրորդ՝ եթէ պատկերն առցի աստ ըստ ստուերական կամ ըստ պակասական գոլոյ, այս բան այլով ինն համեմատութեամբ մեկնի. առ որոյ բացայայտութիւն գիտելի է. զի երեք ինչ է մտածելի 'ի ստուերական պատկերի կամ 'ի ստուերի. մի՝ մասն ոչնչի, այսինքն խաւարի. երկրորդ՝ մասն հաղորդութեան գոլոյ, այսինքն լուսոյ. և երրորդ՝ արտաքին ձև մարմնոյ 'ի լուսոյ։ Այնպէս է տեսանելի և 'ի մարդն. նախ՝ ոչնչութիւն, իբր զի է յոչնչէ և է յոչնչի. երկրորդ՝ մասն հաղորդութեան գոլոյ նորա, որ շնորհի յա̃յ. և երրորդ՝ կալն նորա 'ի գոյութեան իւրում իբր այսպիսի ինչ ըստ գաղափարին՝ որ է 'ի միտս ա̃յ. Աստի որ ոչ է ինչ 'ի մարդն՝ է յայնմանէ զի է նա յոչնչէ. և որ է ինչ 'ի մարդն՝ է յայնմանէ՝ զի հաղորդ գտանի գոլոյ առ յա̃յ. իսկ գոլն իւր այսպիսի՝ է 'ի գաղափարէն ա̃յ։ Արդ ահա ըստ այսմ մարդս և կեանք մարդոյ է իբր ստուերական պատկեր ա̃յ, և կեալ նորա է կալ իբր 'ի ստուերական պատկերի, կամ իբր 'ի ստուերի. ուստի և յարաք". յաւելեալ լինի նաև բառդ ստուեր յասելն * 'ի պատկերի շրջի մարդ, և որպէս ստուեր անցանէ ||. Նոյնպէս է և յեթէովպացւոցն. ուր դնի այսպէս * իբրև ստուեր անցանէ ամենայն (զոր ունի) ||. բայց ինքն իբր անանց՝ խռովութ̃բ սրտի ժողովէ զմեծութիւն. որպէս որ դիզիցէ ոսկի 'ի ստուերի. յորոյ անցանելն մնայ մեծութիւնն այն ոչ 'ի ստուերն, այլ 'ի ձեռս այլոյ։

Այս նմանութիւն կարէ առաջի դնել և ըստ երկրորդ տեսութեան. ըստ որոյ որ ինչ է 'ի մարդն, և արտաքոյ մարդոյ, գեղեցկութիւն, զօրութի̃, մեծութիւն, իշխանութիւն, և̃ն, են ստուեր անանց գեղեցկութե̃, և զօրութեան։ Բայց մարդս՝ անփոյթ լեալ՝ ախորժէ շրջիլ 'ի ստուերս յայսոսիկ. Արդ որ զարմանալին է՝

գիտելով թէ կորուսանելոց է զոսին, տառապանօք զհետ լինի ստանալ զոսս՝ այսինքն զփառս, և զիշխանութի, զանուն, և զմեծութի. են. զորս ոչ ունի ժառանգել. և ոչ գիտէ՝ թէ ով ժառանգելոց իցէ. ուրեմն 'ի զուր խռովի, այսինքն է ընդունայն տառապի. զի զոր կարէր ժառանգել զճշմարիտն մեծութի՝ կորուսանէ, և 'ի խնդրել զստուեր նորա՝ այլոց թողու. յերկոցունց ևս զրկեալ։

Նմանի այսպիսիս ձկնկուլ թռչնոյ, զորմէ գրի յառակս, թէ ունելով 'ի բերան իւր զձուկն 'ի վերայ գետոյ, տեսեալ զստուեր նորա յերեսս ջրոյ՝ կամելով յափշտակել զայն՝ եթող զձուկն. որով բարձաւ և ստուերն. և ինքն զրկեցաւ 'ի ձկանէ՝ զոր կարէր վայելել, և 'ի ըստուերէն զոր վայելել կարծէր։

Այլ ինձ օրինակ տայ այսմ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. թ.) * որպէս (ասէ) որ զկին „ իւր ատեցեալ թողուցու, և զշուք նորա (այսինքն „ զստուեր նորա) ջանայ զրկել. և կամ զորդին մեր„ժիցէ, և զշուք նորա՝ որ ապականի՝ զրկիցէ. այս„պիսի են նոքա՝ որք զաշխարհս սիրեն. զի այս ամե„նայն ստուեր է (հանդերձեալ մեծութեան) թէ „ փառս ասես, թէ հեշտութիւն և թէ զայլն ևս. „ վասն որոյ մարգարէն ասէ. ապաքէն որպէս 'ի պատ„կերի շրջին մարդիկ. այսինքն ստուգապէս զհետ շքի „ գնան. զի պատկերն շուք ասէ ‖. Եւ յաւելու զկնի ասել. * զհետ վազել շքոյ՝ մոլեկանաց է և յիմարե„լոց ‖. զի վազես ասէ զհետ մնոտեաց. պնդեա՛ զհետ երկնային երանութեանց. զի առ այն՝ տկարութի բնութեանդ օգնէ, և ոչ կարօտիս վազելոյ. իսկ առ այս՝ օգնականութիւն շնորհացն այ։

Յորժամ 'ի դրախտի էաք՝ զոր ինչ ունէաք, մեծ էր. իսկ այժմ զորս ունիմք՝ շուք և ստուեր. ապա չէ պարտ համարիլ ինչ զոսա, և յարիլ 'ի սոսին, այլ արհամարհել. * որպէս ոք եթէ թագաւոր իցէ (ասէ նոյն „ բարսեղ վարդապետ) և ապա փոխանակ թագի և „ ծիրանւոյ զաղքատի զգեստ տացեն նմա՝ ոչինչ „ զայն համարի. նոյնպէս և մեք ոչինչ համարեսցուք „ զմերձակայս իբրև զստուեր. զի ստուեր է այս, և „ ոչ փառք ‖։

Արդ որպէս զվայելչութեանց և զմեծութե̃ց ասացաք լինել իբր ստուերական պատկեր երկնային անանց բարութեանց, սոյնպէս իմանալի է և զթշուառութե̃ց, և զնեղութե̃ց մարդոյ՝ լինել իբր ստուեր յաւիտենական թշուառութեան և նեղութեան. ուստի նաև 'ի սմին իբր 'ի ստուերական պատկերի շրջի մարդ. և զոր օրինակ 'ի հասանել մարդոյ 'ի յաւիտենական կեանս՝ լինի ճշմարիտ կենդանի, սոյնպէս և 'ի հասանել նորա 'ի յաւիտենական թշուառութիւն՝ լինիցի ճշմարտապէս թշուառ։ Վասն որոյ պարտ է նմա՝ ջանալ ժամանել յառաջինն, զի զերծանիցի 'ի միւսոյն։

Հինգերորդ՝ եթէ պատկերն առցի աստ ըստ կերպարանական գոլոյ, այնպէս համեմատի մարդն առ այն ամենայն՝ զորս ունի. որպէս որ յանդիման լինի 'ի թէատրոնի խաղուց այլափոխ կերպարանօք զգեստուց և դիմակաց. զի որպէս այն ամենայն այլափոխ կերպարանք առերևոյթք են, և անհաստատ տեսութիւնք, այսպէս է և այն ամենայն՝ զորս ունի մարդ 'ի կեանս իւր։ Արդ որպէս 'ի զուր խռովի նա՝ որ 'ի թէատրոնական խաղս 'ի ձևանալն թագաւոր՝ հպարտասցի, 'ի ձևանալն զօրավար՝ խրոխտասցի, 'ի ձևանալն փարթամ՝ յոխորտասցի և̃ն, և ընդհակառակն 'ի ձևանալն աղքատ՝ տրտմեսցի, 'ի ձևանալն հիւանդ՝ հոգասցի, 'ի ձևանալն մեռեալ՝ սգասցի և̃ն, զի այս ամենայն առերևոյթ ինչ են. սոյնպէս 'ի զուր խռովի ամենայն որ միանգամ հպարտանայ յաշխարհի աստ ընդ փառս՝ զոր ունի, և խնդայ ընդ իշխանութիւնն՝ զոր ժառանգէ, կամ տրտմի ընդ աղքատութ̃ին յոր անկանի, և դառնանայ ընդ ձախորդութիւնն որ պատահի և̃ն։ Իսկ ոչ միայն 'ի զուր խռովի, այլ և յիմար գտանի՝ յորժամ ագահութ̃բ ցանկայ գանձել զմեծութ̃իս. զի ոչ վասն ինքեան գանձէ, վասն զի 'ի խաղի է, այլ վասն այլոյ, սակայն և զայն ոչ գիտէ։

Արդ որովհետև ըստ այսմ հինգերորդ մեկնութեան կեանք մարդոյ 'ի թէատրոնական խաղս օրինակի, արժան է առնուլ աստի խրատ զգաստութեան անձանց ըստ իւրաքանչիւր վիճակի, հայելով 'ի նպատակ գործոցն որք լինին 'ի թատրոնական խաղս. իբր զի անդ ոչ նա է գովելի, որ ձևանայ թագաւոր կամ զօրաւոր, փարթամ, կամ գեղեցիկ են․ և ո՛չ նա է պարսաւելի՝ որ ձևանայ աղքատ կամ յիմար, հիւանդ կամ կոյր են․ այլ նա է գովելի՝ որ 'ի ձևանալն այս ինչ և այն ինչ՝ զնոյն ձև կամ պաշտօն բարւոք վարէ․ և ներհակ այսմ՝ նա է պարսաւելի՝ որ 'ի ձևանալն այս ինչ կամ այն ինչ՝ ո՛չ բարւոք վարէ զայն ձև․ ուստի եթէ ոք 'ի ձևանալն աղքատ՝ բարւոք վարիցէ զայն ձև, և այլ ոք 'ի ձևանալն թագաւոր՝ ո՛չ բարւոք վարիցէ զնոյն, գովելի լինի աղքատ ձևացեալն, և պարսաւելի երևի թագաւոր ձևացեալն․ զի նպատակն՝ որ դիտի անդ՝ ո՛չ է ձևանալն՝ այլ բարւոք ձևանալն․ կամ բարւոք 'ի կիր առնուլն զայն։

Այնպէս է և 'ի կեանս մարդոյ․ զի ո՛չ նա է գովելի առաջի ա̃յ՝ որ իցէ ձևացեալ թագաւոր, կամ փարթամ, են, և ո՛չ նա է պարսաւելի՝ որ իցէ ձևացեալ տկար, կամ աղքատ են, այլ նա միայն է գովելի՝ որ գիտէ բարւոք ձևացուցանել զվիճակն՝ յորում կայ, թէ՛ թագաւոր իցէ և թէ՛ աղքատ․ և նա միայն է պարսաւելի՝ որ ո՛չ բարւոք ձևացուցանէ զնոյն։

Եթէ դու յաղքատութեան գոհ իցես, և քեզ մեծութիւն համարիս զհրաման ա̃յ, և փոյթ քո է գտանել ո՛չ զանցաւորս փարթամութիւն, այլ զանանցանելի բարութիւնս՝ ահա գովելի գտար յայդմ պատկերի, և ո՛չ ես 'ի զուր խռովիս․ զանձես, և գիտես՝ թէ ում ժողովես․ իսկ եթէ յաղքատութեան քում տժգոհ իցես, և փոյթ քո է գտանել ո՛չ զանանց բարութիւնս՝ այլ զանցաւոր մեծութիւնս, ահա պարսաւելի գտար, և 'ի զուր խռովիս․ զանձես և ո՛չ գիտես ում ժողովես։ Այնպէս 'ի թիւ արկ և զայլ իւրաքանչիւր վիճակ եթէ՛ ըստ երջանկութեան մարմնոյ իցէ, և եթէ ըստ թշուառութե̃։

Երկրորդ՝ եթէ պատկերն առցի աստ ըստ դիտողական գոյոյ՝ կրկին օրինակաւ կարէ մեկնիլ այս բան․ կարէ մեկնիլ նախ՝ նմանութեամբ երազելոյ․ զի որպէս որք 'ի նինջելն՝ յորժամ երազ տեսանեն, յերազի անդ 'ի դիտողական պատկերս երևակայութեան շրջին, ուտեն, գործեն, ժողովեն, և այլն․ և յորժամ զարթնուն՝ ոչինչ գտանեն, սոյնպէս է և կեանք մարդկան․ ո՛չ զի երազ է, այլ զի այնպիսի ինչ է, յորում եթէ առանց շնորհաց գործեսցեն մարդիկ, գրեթէ իբր յերազի շրջին. որով և մեծանալ նոցա կամ աղքատանալ նոցին, նոյնպէս առողջանալ նոցա կամ հիւանդանալ նոցին՝ համարի իբր երազ. ուստի և 'ի զուր խռովին. զի յերազի անդ գանձեն և ոչ գիտեն՝ ում ժողովեն. վասն զի 'ի հասանել մահու՝ յորժամ բաժանի հոգին 'ի մարմնոյ, իբրև յերազոյ զարթուցեալ՝ զամենայն ինչ որ մնայ յաշխարհի՝ ունայն տեսանեն, և իբր երազ։ Իսկ որ մնայ նոցա՝ այն է, զոր գանձեցին ինքեանց ոչ իբր յերազի շրջելով՝ այլ աստուածային շնորհօք գործելով։

Կարէ մեկնիլ երկրորդ ոչ նմանութ՟բ, այլ իրօք. վասն զի մարդն միշտ և յամենայնի ցորչափ արթուն կայ, պատկերաւ շրջի և գործէ, այսինքն պատկերակերպութեամբ երևակայութ՟ն, և անհնարին է նմա՝ ըստ որում է զգայական, առանց այսպիսի պատկերի գործել ինչ. վասն որոյ և իրօք ասի զնմանէ 'ի պատկերի շրջիլ, այսինքն պատկերակերպութ՟բ։

Եւ զի այսպիսի պատկերակերպութիւնք որովհետև նկարին նպաստիւք արտաքին զգայութեանց, բազում անգամ ձևման անկարգութեամբ, և խանգարեալ լինին թիւրութ՟բ. և եթէ մարդ յամենայնի զհետ լիցի առաջնորդութ՟ն սոցա, և ոչ կամիցի ուղղութեամբ իմացական մասին կարգաւորել՝ մոլորի, և 'ի բազում չարիս կործանի։ Եւ զի յորս յօժարի զգայութիւնն՝ զնոյն նկարէ յերևակայութեան՝ նմին իբր 'ի նոյն բերի և ըստ նմին գործէ։ Ապելլէս պատկերահան զամենայն դէմս նկարէր ըստ հանգամանաց դիմաց կանանց. զի զգայութ՟ք իւր 'ի սէր նոցա հակեալ էին. սոյնպէս և մարդ զոր ինչ սիրէ ըստ նոցին նկարէ ըզպատկերս յերևակայութեան իւրում. և յոր ինչ բերին զգայութիւնք իւր՝ 'ի պատկերս նոցին շրջի։ Եւ զի յօժարութիւն գանձելոյ զինչս յուժգին մղէ զմարդիկ՝ զայն ևեթ յիշէ մարգարէն, 'ի տեսանելն՝ թէ զխորդ երևակայութ՟ին ըստ զգայութ՟ն վարելով մղէ զմարդն ժողովել զինչս, որով և խռովեցուցանէ զնա. և եթէ մարդ անսասցէ նմա, և ըստ այնմ կամիցի ժողովել, թէպէտ և ժողովէ, բայց 'ի զուր. զի ոչ գիտէ՝ ում ժողովէ, և ոչ ևս գիտէ՝ թէ ով յետոյ ժողովելոց իցէ զայնս. զի թէև ինքն ըստ երևակայելոյ իւրոյ կեղծէ, և ըստ կեղծելոյն կամի ժողովել վասն որդւոց իւրոց, կամ վասն այլոց, բայց ոչ գիտէ ստուգիւ թէ մնա՞ն արդեօք 'ի ձեռս նոցա.

Եօթներորդ՝ եթէ պատկերն առցի ըստ պարունակողական գոլոյ, մարմին մարդոյ կարէ անյատկապէս ասել պատկեր հոգւոյ նորա ըստ պարունակելոյն զնա. որով և մարդն ասի շրջիլ ըստ հոգւոյ 'ի մարմնի իբր 'ի պատկերի. Յայս միտս մեկնէ լամբ". զայս բան. և գրէ այսպէս. * Բնական հոգին զգալի մարմնովս
„ որպէս ուրուականաւ իւիք շրջի. և որպէս պատկերն
„ ուրուական յամենայն իրաց ապականի, և յոչէութ՟ի
„ դառնայ, այսպէս և մարմինս՝ որ զգեստ է հոգւոյս և
„ բարձօղ. Իսկ թէ այսպէս է այս՝ 'ի զուր է խռովեն
„ հոգւոյս՝ և զցանկութիւն մարմնոյս կատարեն. զի
„ զինչ օգտէ գանձելն՝ յորժամ իւր ոչ է, այլ այնմ՝
„ որ զուրուականն սատակէ, և զգանձն յափշտակէ,
„ և ապա զերծեալ 'ի մարմնոյն՝ տիրէ հոգւոյն զղջումն
„ անտանելի՝ վասն մնոտի աշխատութ՟են, և 'ի նանիր
„ խռովութ՟ե ընդ երկիր սահելոյն‖.

Ըստ այսմ եօթներորդ տեսութեան նաև արտաքին կենցաղավարութ՟ի մարդոյ համարի պատկեր ներքնոյն. զի ըստ գրելոյ գէորգ վարդապետի ('ի մեկն. եսայ.) * որպէս դեղք զպատկերս նկարեն, (սոյնպէս) և
„ շարժմունք անդամոց զբարս մտաց‖.

Առաւել քան զայս՝ արտաքին կերպարան մարդոյ կարէ ասել պատկեր ներքին խառնուածոյն, և հանգամանաց ինչ հոգւոյն. ըստ որոյ 'ի տեսանել մեր զայս ոք կամ զայն ոք՝ դատեմք թէ իցէ ուշիմ կամ բթամիտ, հեզաբարոյ կամ նախանձոտ են. Ուստի տեսեալ ուրուք զպատկեր սոկրատայ՝ ասաց թէ իցէ վավաշոտ. 'Ի լսել սոկրատայ զայս՝ ասաց ցաշակերտսն իւր. յիրաւի բնութիւն իմ յայն բերի. բայց առաքինութեամբ զուսպ ունիմ զնա. զի իմաստունն իշխէ աստեղաց. Նա սա յայսպիսի պատկերի շրջելով ոչ եթող զինքն խռովիլ զհետ չար ցանկութեան և ոչ գանձեաց յինքն զաղտեղութիւնս. որով և օրինակ ետ զգաստութեան. զի թէ նա բնութ՟ե կարաց զայս առնել, քանի ևս մեք 'ի ձեռն շնորհաց. զի * առաւել

„ զօրէ շնորհքն քան բնութիւնն ‖ ։ Զսոյն ընթեռնումք և զաղնուականէ ումեքէ, որ 'ի վկայիլն 'ի խըռրազխմայից՝ թէ բնութբ՟ իցէ ագահ և ուխտ, բռնադատեաց զանձն յաճախել յողորմութիւն. և փոխանակ գանձելոյ զինչս՝ զօրացաւ ցրուել զայնս աղքատաց ։ Ողբեմք և այլովք բանիւք՝ զօրս եղաք աստ, այս մի ինչ ցուցանի՝ թէ որովհետև մարդս իբր 'ի պատկերի շրջի, չէ արժան զհետ սնոտեաց և անցաւորաց պնդիլ, այսինքն զհետ փառաց և իշխանութեան, զհետ մեծութեան և հեշտութե՟. նոյնպէս թէ չէ արժան խռովիլ վասն սոցա՝ թէ 'ի գտանելն և թէ 'ի կորուսանելն. այլ փութալ գնալ զհետ բարի գործոց և առաքինական կենաց. և անարատ պահել զանձն թէ 'ի յաջողութեան՝ և թէ 'ի ձախորդութե՟, թէ 'ի փորձութեան և թէ 'ի յանդորրութե՟. և զի յաստի կեանս առաւել են ձախորդութի՟ք և փորձութի՟ք քան անցաւոր երջանկութի՟ք և մեծութի՟ք, առաւել պիտոյ է մարդոյ ջանալ անխռով կալ 'ի նոսին քան 'ի զուր խռովիլ 'ի սոսին ։ Նաև քանզի կարևոր է 'ի սոյն օգնականութե՟ն ա՟յ առ 'ի զօրանալ և արիանալ, և 'ի ձեռն համբերութեան անկործան մնալ, 'ի նոյն փափաքելով մարգարէին՝ մատչի 'ի մաղթանս առ ա՟ծ, և ասէ ։

Ը. Բայց արդ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ո՞չ դու տէր. համ
հար զօրութե՟ իմոյ՝ թէ ոչ 'ի քէն ։

Համբերութիւնն չորեքկին կարէ առեալ լինել. մի՝ փոխանակ առաքինութե՟՝ որով ոք անդորր սրտիւ տանի նեղութե՟ց. երկրորդ՝ փոխանակ պատճառի համբերութե՟՝ որպիսի են նեղութի՟ք, որոց լինի համբերել. երրորդ՝ փոխանակ տուողի համբերութե՟. չորրորդ՝ փոխանակ ակնկալութե՟ վարձուց համբերութե՟ ։ Արդ աստանօր բառդ համբերութիւն՝ ոչ առեալ լինի ըստ առաջնոյն և ըստ երկրորդին, այլ ըստ երրորդին և ըստ չորրորդին, յասեն ։

Բայց արդ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ո՞չ դու տէր ։ Աստանօր եթէ բառդ համբերութիւն՝ առցի փոխանակ տուողի համբերութեան, միտ բանին լինի այս. որովհետև 'ի միոյ կողմանէ ունայնութիւն տեսանեմ զամենայն ինչ, և յայլմէ կողմանէ 'ի տառապանս մաշիմ. յո՛ ունիմ

ապաւինիլ, բայց եթէ 'ի քեզ տէր՝ զի դու միայն ես տուող համբերութեան, և դու միայն լիութ̃ի ամենայն բարւոյ. և արտաքոյ քո ստուեր է ամենայն և ունայնութ̃ի. և այս համաձայնի եբր". յորում դնի այսպէս. և * յի՞նչ այժմ ունիմ յուսալ տէր, յոյս իմ
,, 'ի քեզ է ‖.

Իսկ եթէ բառդ **համբերութ̃ե**՝ առցի փոխանակ ակնկալութեան վարձուց, միտ բանին լինի այս. իսկ արդ 'ի ստիպել և 'ի խռովել զիս ունայնութ̃եց և տառապանաց՝ որք պատեալ են զինև, որո՞վ կարեմ զօրացուցանել զիս բայց եթէ ակն ունելով՝ թէ 'ի համբերել իմում ունիմ ժամանել վարձուց մեծաց առ 'ի քէն: Եւ զի առ այս չէր ինքնին կարօղ. այլ զօրութեամբն ա̃յ, յայն հայելով յարէ զկնի և ասէ.

Եւս կար զօրութ̃ե իմոյ՝ թէ ոչ 'ի քէն: Ոչ յինքեն կարելս իմ զօրանալ ընդդէմ ունայնութ̃եց աշխարհի, և համբերել նեղութեանց՝ ոչ ուստեք է՝ եթէ ոչ 'ի քէն. կամ թէ կարելս իմ գործել զբարիս 'ի մէջ չարեաց և ունայնութեանց՝ առ 'ի քէն է. (զայսմանէ տես և 'ի համարն 6.) * Եւ զայս յայն սակս ասէ, զի մի
,, մարդիկ անձանց ստորագրիցեն զսկիզբն և զկատա-
,, րումն առաքինութեանն, այլ շնորհացն ա̃յ ‖. (որպէս գրէ սարգիս շնորհալի 'ի մեկն. ա̃. պետ. բ̃. 20. ճառ է̃.) Ընդ որով դիտէ և մարգարէն ցուցանել թէ այն ամենայն՝ զոր ունի մարդ՝ ըստ այնմ որ է՝ յա̃յ է. իսկ ըստ այնմ որ ոչ է՝ ոչ է յա̃յ. ուստի կարողութիւն, զօրութիւն, կատարումն գործոց բարեաց՝ են. յա̃յ է: Իսկ պակասութիւն, անկարութ̃ի, չարութ̃ի, մեղք, են. ոչ է յա̃յ. զի ա̃ծ ոչ է պատճառ պակասութեան՝ ըստ որում պակասութ̃ի, այլ բարձօղ այնր. և ոչ պատճառ մեղաց, այլ ատեցօղ նորին: Եւ արդ քանզի 'ի մէջ եբեր մարգարէն, թէ յա̃յ է ամենայն որ է 'ի մեզ, սոյնպէս 'ի մէջ բերէ այժմ և զայն՝ թէ ա̃յ է բառնօղն զպակասութիւնս մեր. և քանզի 'ի մէջ պակասութեանց մեծագոյնն է մեղքն կամ անօրէնութիւն, նախ զայն դնէ առաջի և ասէ.

Թ. Յամենայն անօրէնութ՟է իմմէ փրկեցեր զիս . նախատինս անզգամաց արարեր զիս ։

Ժ. Լուռ եղէ, և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր ։

Լրումն չարութեան է անօրէնութիւն . զի ոչ միայն չար կայուցանէ զանձն՝ յորում է, այլ և անարժան առնէ զնա ընդունելոյ զբարի ինչ յա՟յ ։ Եւ սակայն ա՟ծ գոլով լրումն բարութեան, առաւել հայելով 'ի բարութիւն իւր՝ քան 'ի չարութիւն անօրէնութեան մարդոյ՝ կանխէ շնորհօք, որով ազդ առնէ և կոչէ զնա յապաշխարութիւն . և 'ի շարժիլ մարդոյ՝ առնէ զի արասցէ, այսինքն թէ ապաշխարեսցէ, և 'ի յապաշխարելն ջնջէ զանօրէնութ՟իս նորա . և 'ի չար գոլոյ առնէ զնա բարի . զորոյ առեալ դաւթի զփորձ՝ շնորհակալ լինի զնմանէ, և ասէ ։

Յամենայն անօրէնութ՟է իմմէ փրկեցեր զիս ։ Ասելով ամենայն՝ յայտ առնէ զամենամեծ բարութիւնն ա՟յ . զի ոչ զմի միայն անօրէնութիւն իմ ասէ, այլ զամենայն քաւեցեր և սրբեցեր . որով և փրկեցեր զիս 'ի բռնութենէ նոցին ։ Եւ զի 'ի պատճառս անօրէնութեան նախատեալ էր այլոց՝ զայն ևս առաջի դնէ ասելով ։

Նախատինս անզգամաց արարեր զիս ։ Նախատինս առնել զոք՝ է առարկայ նախատանաց կացուցանել . այսինքն է՝ նախատելի կամ նախատակոծ առնել . արդ յայտ է թէ այսպէս արար ա՟ծ և ընդ դաւիթ, և այն 'ի բազում իրս՝ զորս թուեալ է մեր ('ի սաղ. լ՟ա. 4.) որ և յայտնի տեսանի 'ի նախատինսն, որով նախատեաց զնա սեմէի ։ Այլ զայսպիսի նախատ լինելս ոչ ինչ համարիմ ասէ, գիտելով թէ դու արարեր . վասն որոյ և ինձ պարտ է յաւէտ իբր խուլ լինել և լռութեամբ տանիլ, քան տխրութ՟բ տուայտիլ . սմին իրի յաւելու ասել ։

Ժ. Լուռ եղէ, և ոչ բացի զբերան իմ, զի դու արարեր ։

Այսինքն 'ի նախատել զիս թշնամեաց իմոց՝ եղէ ես իբրև ոչ լսող, վասն որոյ և ոչ խօսեցայ ինչ բերանով իմով ընդդէմ նոցա, և ոչ իսկ տրտնջեցի զնոցանէ առ այլս . վասն զի գիտէի՝ թէ դու արարեր .

իբր զի դու թոյլ ետուր՝ զի նախատեսցեն նոքա զիս ։ Զոր և յինքն հպեցուցեալ նարեկացւոյն ասէ. * և ,, արդ զինչ գոյ ասել ամաչեցելոյս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ. և հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի ըստ մարգարէութեն խրատու ‖. (նար. խէ ։)

Զսոյն յայտնի եցոյց դաւիթ 'ի դիպուածն սեմեայ. զի 'ի նախատել և յանիծանել նորա զինքն՝ ասաց. * թո՛յլ տուք նմա, թո՛ղ անիծցէ այնպէս. զի տէր ասաց նմա անիծանել զդաւիթ. և ո՛վ ասասցէ՝ թէ ,, ընդէ՞ր արարեր այդպէս ‖. (բ. թագ. ժզ. 10 = 12.) որով ոչ ցուցանէ՝ թէ ած հրամայեաց սեմեայ կատարել զգործ անիծանաց՝ իբր բարի ինչ, որով լեալ իցէ սեմէի հրամանակատար այ. զի յայտ է թէ մեղաւ նա այնու, ուստի և պատժեցաւ. այլ թէ թոյլ ետ չար կամաց սեմեայ առնել զայն գործ. որով զչար կամս նորա արար ած գործի խոնարհեցուցանելոյ զդաւիթ ։ Եւ նա ինքն դաւիթ գիտելով՝ թէ ած է՝ որ թոյլ տայ այսմ, յօժարամիտ խոնարհէր. բայց քանզի յայսպիսի վիշտս գոլով կրէր և զայնպիսի ինչ՝ որում զդէմ ունել ոչ կարէր, վասն որոյ աղաչէ զած և ասէ ։

ժա. Իմաց որս յինէն զտանջանս եմ. զի 'ի զօրութէ յեղէն զօ ես պատրաստեցայ ։

Ի սաղ. լէ. 17. ասաց. * ես 'ի տանջանս պատրաստ ,, եմ ‖. որով եցոյց, թէ յօժար է կրել զի՛ և իցէ տանջանս՝ առ 'ի քաւութիւն մեղաց իւրոց. իսկ աստ խնդրէ բառնալ զայն ։ Զայս ընդդիմութի լուծանէ բառդ է՛. զի թէպէտ և կարէ մարդ յօժարիլ առ 'ի տանիլ ի՛ և իցէ տանջանաց, սակայն յորժամ ինքն լինի ինքեան տանջանք, ոչ ևս յօժարի տանիլ. զի որովհետև ինքն է՝ որ տանի տանջանաց, եթէ ինքն լիցի տանջանք ինքեան, զիա՞րդ կարիցէ յօժարիլ 'ի նոյն ։ Արդ երկոքումբք լինի ոք ինքեան տանջանք. մի՝ 'ի ձեռն խղճի մտաց իւրոց. զորոյ զանտանելի դաժանութենէն այլուր ունիմք խօսիլ. (տես և 'ի յաջորդ համարն ։) Երկրորդ՝ 'ի ձեռն անձկութեան հոգւոյն, յորժամ խաւարաւ պաշարի 'ի դատմունս մտաց, և տագնապաւ մոլորի յընտրութիւնս կամաց. և տիրէ 'ի հոգին իմանալի դառնութիւն վտանգիւ։ Զայսուիկ կոչէ դաւիթ՝ իւր տանջանս լինել. իբր զի ո՛չ է յարտաքին պատճառաց, այլ յիւրմէ առ ինքն՝ ըստ որում է անձնիշխան էակ։ Յայսպիսի թշուառութ՟ենէ կամելով զերծանիլ, ասէ։

Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ։ Որպէս թէ ասէր. պատրաստ եմ տանիլ ամենայն տանջանաց՝ զոր տան ինձ այլք նախատանօք և հալածանօք. բայց ոչ կարեմ տանիլ տանջանաց իմոց. վասն որոյ աղաչեմ զքեզ հեռացո՛ զայն յինէն. կամ համառօտիւ եւս, բա՛րձ յինէն զտանջանս խղճի մտաց իմոց, կամ զպարտաւորութ՟ի մեղացս, յորմէ տանջի հոգի իմ։ Եւ ըստ այսմ զանուն գործոյն առնու փոխանակ անուան պատճառին. որպէս յասելն * ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ‖. (սաղ. լէ. 18.) ցաւօք իմացեալ լինի մեղքն՝ յորոյ վերայ ցաւէր։

Մարթ է եւս ասել, թէ այսու խնդրէ մարգարէն ազատիլ՝ ոչ 'ի տանջանաց, այլ 'ի տիրապետութ՟է նոցա, որպէս թէ ասէր. 'ի բա՛ց արա յինէն զբռնութիւն այնպիսի տանջանաց, որով ոչ եթէ ես 'լինիմ տիրող նոցա, այլ նոքա ինձ։

Հնար է դարձեալ ասել, թէ այսու խնդրէ ազատ լինել 'ի տանջանաց, ոչ զի տանջանք են, այլ զի իւր են. ըստ որում վասն մեղաց իւրոց էին. որպէս թէ ասէր. 'ի բաց արա յինէն զտանջանս իմ, ոչ ըստ այնմ զի են տանջօղք, այլ ըստ այնմ զի են պատժօղք, այս ինքն պատիժք մեղաց իմոց. որոց ոչ կարելով տանիլ հոգւոյս՝ լքայ. և պակասեալ 'ի զօրութենէ քումմէ՝ անկարացայ, և անպիտան գտայ։ Յայս ակնարկելով յարէ զկնի, և ասէ։

Զի 'ի զօրութենէ ձեռին քո ես պակասեցայ։ Զօրութ՟ ձեռին ք՟ոյ երկու ինչ մարթ է իմանալ աստ. մի՝ ըստ լամբ″. զօգնութ՟ին ք՟ոյ, որով զօրացուցանէ ա՟ծ զտկարութիւն մարդոյ, յորմէ եթէ ոք պակասեսցի, ոչ եւս կարէ տևել 'ի բարին, և ոչ համբերել չարին։ Եւ քանզի այն տանջանք, զորս յիշեաց 'ի վերոյ՝ էր և վասն պակասելոյ յայսպիսի օգնականութ՟է, սմին իրի խնդրեաց 'ի բաց առնել զայն յիւրմէ։

Երկրորդ՝ մարթ է իմանալ ընդ հակառակն զսաստկութի՟ բարկութե՟ն այ՟ կամ զսպառնալիս նորա. և յայս միտս կամի ասել. նուաղեցայ և տկարացայ յերեսաց բարկութեան քոյ, զմտաւ ածեալ՝ թէ գուցէ մատնեսցես զիս բարկութե՟ քում 'ի տանջանս:

Մարթ է համառօտագոյն ևս մեկնել ողջոյն զայս բան, հայելով 'ի տագնապ սրտի մարգարէին. որպէս թէ ասէր. 'ի բաց արա յինէն զանհնարին տագնապս, որով տագնապիմ յերեսաց բարկութե՟ քոյ, և նուաղիմ 'ի կեանս. քանզի տակաւին ոչ տեսանեմ զքեզ ըստ ամենայնի հաշտ ընդ իս. որովհետև դեռ ևս անպակաս են յինէն պատիժք մեղաց իմոց: Ըստ սմին պաղատէր և յոբ, ոչ յերկիւղէ, այլ 'ի պատկառանաց ասելով. * զձեռն քո 'ի բաց արա յինէն. և ահ „ քո մի զարհուրեցուսցէ զիս‖. (յոբ ԺԳ. 21.) որպէս է տեսանել 'ի մեկնութեան վանական վարդապետի: Որ և ('ի գլ. Է. 16.) համեմատեալ զայս բան սաղմոսի ընդ բանիցն յոբայ՝ գրէ այսպէս. դաւիթ * ասէ 'ի բաց արա յինէն զտանջանս իմ, զի (և այլն.) „ իսկ սա ասէ (յոբ), 'ի բաց կաց յինէն, զի ընդու„նայն են կեանք իմ. ոչ զայ՟ իմաստն, այլ զխրատն „ աղաչէ մերժել յինքենէ‖:

Օ այսպիսիս տայր ասել մարգարէին ոչ դառնութիւն սրտի նորա, այլ յոյս նորին, որով ակն ունէր՝ թէ ամենևին հաշտ ունիցի տեսանել զերեսս այ՟. նաև զի այնոքիկ պատիժք զորս կրէր, որչափ տրտմեցուցանէին զնա, այնչափ ևս մխիթարէին. զի նոքօք յայտնի տեսանէր, թէ ուրեմն քաւեալ է ած՟ զմեղս իւր. բայց դեռ կամի խրատել զինքն. ըստ որում սովոր է առնել և ընդ այլս. իբր զի հասարակօրէն 'ի թողուլն զմեղս՝ ոչ առանց պատժոյ թողու. և զայս 'ի մասնաւորի ևս յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով:

ԺԲ. Ստամբութե՟ վասն մեղաց խրատեցեր զմարդ. հալեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ:

Ստամբութիւնն է յանդիմանութի՟ մասնաւոր յանցանաց հանդերձ նախատանօք 'ի մեծէ առ փոքրն. որպէս յորժամ ոք յանդիմանն արասցէ ումեք զյանցանս գողութեան նորա նախատական բանիւք. և այս՝ կամ առ 'ի պատուհասել, և կամ առ 'ի խրատել: Արդ զոր մարդիկ բանիւք առնեն՝ ա̃ծ զնոյն առնէ երբեմն 'ի ձեռն յանդիմանութեան այլոց, և երբեմն 'ի ձեռն պատժոց. և զայս առնէ կամ առ 'ի զգաստացուցանել, և կամ առ 'ի մերժել: Երևի թէ աստանօր զերկոսին զայսոսիկ ևս տայ իմանալ յայս բան՝ յասելն:

Կշտամբութեան ձայն մեղաց խրատեցեր զմարդ: Կամի ասել. սովոր ես կշտամբութեամբ խրատել զմարդ, այսինքն է յանդիմանել զնա կամ պատժել վասն մեղաց՝ որպէս զի զգաստասցի. իսկ եթէ ոչ կամիցի զգաստանալ, մերժես զնա յերեսաց քոց. և ընկենես զնա երթալ զհետ հաճոյից իւրոց:

Եւ սակայն բազում անգամ փոխանակ զմարդն խրատելոյ և պատժելոյ՝ արկանէ զձեռն իւր զստացուածովք նորա, զի զարթուսցէ զնա. եթէ այնու ոչ զարթիցէ՝ 'ի նա ինքն ձգէ զձեռն: Այսմ օրինակ բերեալ եզնակ կողբացի ('ի գլ. Ի̃.) ասէ. * եթէ որդի ու-
„ րուք մտավարժ իցէ՝ գան ոչ ըմկլիցէ. և որք չեն
„ մտավարժ, բազում անգամ զծառայն տէրն առաջի
„ նորա գան հարկանէ՝ զի 'ի նա հայեցեալ, ընդ այն
„ լինիցի մտավարժ. ապա եթէ և այնու ևս ոչ խրա-
„ տիցի, 'ի նա իսկ մատուցանէ զտանջանս ||. Զայս եդեալ հետևեցուցանէ ('ի գլ. իա̃.) և ասէ. * արդ
„ քանզի իբրև յորդիս մատուցեալ է 'ի մեզ ա̃ծ խրա-
„ տել, երբեմն հարկանէ առաջի մեր իբրև զծառայ
„ զանասունս մեր, և երբեմն զանդս և զայգիս. զի ընդ
„ այս հայեցեալ՝ մտցուք ընդ լծով ա̃յ երկիւղին. ապա
„ եթէ այնու ևս ոչ խրատիցիմք՝ 'ի մեզ իսկ մատու-
„ ցանէ զտանջանս կամ ցաւով, կամ խեղութեամբ,
„ կամ դիւօք ||: Եւ զայսմանէ որոշակի խօսելով մարգարէն՝ յարէ զկնի, և ասէ:

Մաշեցեր որպէս սարդի ոստայն զանձն նորա: Մաշեցեր ասելով ոչ ցուցանէ՝ թէ ա̃ծ ինքնին մաշէ զանձն մարդոյ, այլ թէ թոյլ տայ մաշիլ. որպէս յասելն * խստա-
„ ցուցեր զսիրտ մեր չերկնչիլ 'ի քէն ||. (Եսայ. կգ̃.
„ 17.) կամ թէ * խստացոյց տէր զսիրտն փարաւոնի ||
(ելից Թ̃. 12.) ոչ ցուցանի թէ ա̃ծ ինքնին խստա-

ցուցանէ, այլ թէ թոյլ տայ խստանալ, կամ թէ ոչ կակղացուցանելով զայն առ ի խստացուցանել, նոյնպէս է իմանալ և զբառդ ճաշէյէր. և այս ըստ երկուց. մի՝ ըստ պատժոյ նեղութեան, և մի ևս՝ ըստ թողլոյ զմարդն 'ի կամս իւր։ Ըստ առաջնոյն կամի ասել, խրատելով քո զմարդ 'ի ձեռն նեղութեանց՝ արարեր՝ զի մաշեսցի այսինքն տկարասցի և նուաստասցի որպէս ոստայն սարդի՝ (այսինքն որպէս էօրիւմճէկ) առ 'ի զգաստանալ. և եթէ ոչ զգաստասցի, թշուառասցի։ Ըստ երկրորդին կամի ասել. 'ի թողուլդ զմարդ վարե՛լ ըստ կամս իւր, նա իբրև սարդ մաշէ զանձն իւր. զի որպէս սարդն մաշելով զաղիս իւր՝ գործէ զոստայն առ 'ի որսալ զճանճս, նոյնպէս և մարդս թողեալ յ՟յ՝ ծախէ և մաշէ զաղիս իւր, այսինքն զհանճար և զուշիմութ՟ի անձին իւրոյ յայս ինչ և յայն ինչ առ 'ի որսալ զունայն և զզազիր իրս կենցաղոյս. որով որչափ հեշտանայ և պարարի կարծէ 'ի մարմին իւր, այնչափ հիւծի և մաշի յանձն իւր, այսինքն 'ի հոգի իւր, զուրկ գոլով յա՟ծային շնորհաց, և 'ի հայրական խնամոց նորա։ Եւ զո՛ր օրինակ սարդք 'ի վախճանի որս լինին բրետաց կամ իշամեղուաց, կամ թռչնոց, և ածին 'ի բոյն նոցա, նոյնպէս և այնպիսիք 'ի վախճանի լինին որս դիւաց, և ածին 'ի դժոխս. և որպէս ոստայնք սարդից աւելածութեամբ վատնին և յաղբիւս թափին, նոյնպէս և գործք նոցա։

Արժ է զայս բան համդերձ նախընթաց հատուածով մեկնել և 'ի վերայ հասարակ ընթացից կենաց մարդկային բնութեան, հայելով միանգամայն և 'ի վիճակ առաջին մարդոյն, յոր միտս կամի ասել. յորժամ կայր մարդն առաջին 'ի յանդորրու, և բաւական համարէր զանձն իբր անկարօտ՝ կշտամբութեամբ խրատեցեր զնա, այսինքն թոյլ ետուր նմա՝ զի ծանիցէ զինքն և խոնարհեսցի. և 'ի մեղանչել նորա՝ մաշեցեր զանձն նորա, այսինքն պակասեցուցեր զնա 'ի սկզբնական արդարութ՟է. նոյնպէս և զծնունդս նորա. այսինքն զո՛ և իցէ մարդ. և նուազեցուցեր զթիւ ամաց կենաց նոցա. որով և խոտանացան. և իբր անօթ դատարկ երևեցան. ըստ որոյ իւրաքանչիւր մարդ կարէ ասել. * իբրև զոստայն սարդից մաշեցայ. և խոտան

„ գտայ‖ ․ (Նարեկ ․ իա̅ ։) Այլ առ այս յարէ ։ Սահման ընդհանուր է ամենայն մարդ ։ Այսինքն յունայնութեան շրջի ամենայն մարդ, և ինքն ևս յետ սակաւու ունայնանայ՝ ոչ 'ի հոգին, այլ 'ի մարմնաւոր կեանս իւր ․ (զայսմանէ տես և 'ի համարն 6 ։) Այլ յունայնանալն անդ տեսցէ՝ թէ ընդունայն էր այն ամենայն զոր կրեաց, և յոր խնդաց ․ և յայնժամ յայտնի երևեսցի բանն այն՝ թէ * որք լայցենն՝ որպէս թէ „ ոչ լայցեն ․ և որք խնդանն որպէս թէ չխնդայցեն ‖ ․

(ա̅ ․ կոր ․ է ․ 30 ։)

Բարոյապէս, որպէս յայտ է 'ի նախադրելոյդ՝ այսու կշտամբութ̃ք նշանակի ներգործութ̃ի գիտակցութ̃ե, այսինքն խղճի մտաց ։ Այս խիղճ մտաց հաստատեալ է 'ի մեզ յամենակարող զօրութենէն ա̅յ, և 'ի նմանէ առաքեալ իբր պատգամաւոր առ ամենայն որդիս մարդկան, 'ի կշտամբութիւն վրիպանաց և առ 'ի պահպանութիւն բարոյական կենաց ։ Սխալ է սա առ ամբարիշտս ․ որոյ վասն ժպրհեցան ոմանք ասել, թէ զի՞ պիտոյ էր զայսպիսի տանջիչ գոյաւորել 'ի մեզ ։ Այլ մեք գոհանամք զա̅յ, որ զոյն զայս տպաւորեաց 'ի հոգի մեր իբրև դաստիարակ բարի ․ և ոստիկան հզօր ․ որ 'ի թմրիլ մեր՝ զգաստացուցանէ, 'ի ննջելն զարթուցանէ, 'ի վրիպիլն ուղղէ, 'ի մոլորիլն աղաղակէ, 'ի վըտանգիլն զգուշացուցանէ, 'ի կործանիլն ձեռն կարկառէ ․ իբրև ծառայ սպասաւորէ, իբրև վարդապետ խրատէ, իբրև դայեակ մարզէ, իբրև մայր սնուցանէ ։ Զայս ծանեան և փիլիսոփայք ․ ուստի ասաց մին 'ի նոցանէ (եպիկտետոս անուն) * որպէս հարք զմանկունս իւրեանց յանձնեն դաստիարակի զգուշացուցանել զնոսա 'ի մոլութեանց, և դիմեցուցանել յառաքինութիւնս, սոյնպէս և ա̅ծ իբրև հայր յանձնեաց զմեզ գիտակցութ̃ե (այսինքն խղճի մտաց) զի „ նա ուսուսցէ մեզ միշտ ․ և ուղղեսցէ առ ամենայն „ բարիս, և խոտորեցուսցէ յամենայն չարէ ‖ ։ Այլ այս յանձնարարութիւն այնչափ հաստատուն է, մինչև անհնարին լինել նմա թողուլ զմարդն կամ մեկնիլ 'ի նմանէ ։ Ի կորնչիլ ստացուածոցդ՝ նա մնայ ․ 'ի հեռանալ այլոց՝ նա մերձենայ ․ 'ի փախչիլդ՝ նա հետապնդի ․ 'ի վանելդ՝ նա յաղթահարէ ․ 'ի թուլանալդ՝

նա զօրանայ. 'ի հիւանդանալդ՝ նա առողջանայ. 'ի վիրաւորիլդ նա դեղ ճարտարէ. 'ի դատիլդ՝ նա դատախազէ. 'ի թագուցանելդ՝ նա յայտնէ. յամբաստանիլդ՝ նա վկայէ. 'ի դատապարտիլդ՝ նա իբրև դահիճ տանջէ. Յամենայն կորստեան նա միայն մնայ և ասէ ցքեզ * ես միայն մնացեալ եկի պատմել քեզ‖. (յոբ ա. 16.) Մնայ արդարև, և 'ի մնալն զեկուցանէ՝ զինչ կորուսեր, ազդ առնէ՝ զինչ գործեցեր. ցուցանէ՝ ում վիճակեցար. Յամենայն վրիպմունս միշտ կշտամբէ, միշտ յանդիմանէ, միշտ չարախօսէ. 'ի հանգչիլդ 'ի քեզ չարչարէ. 'ի գովիլդ յայլոց՝ պարսաւէ. 'ի համբաւիլդ առ բազումս, նա մերձ կացեալ աւաղէ. * զինչ օգուտ յայլոց երանիլ, և 'ի քէն ,, կըշտամբիլ‖.

'Ի մեղանչելդ ոչ ոք տեսանէ, խիղճդ բաւական է. նա տեսանէ և կշտամբէ զքեզ. 'ի վայրկենի՝ յորում անկանիս, նա վկայ կանգնի. 'ի մեռանիլդ մեղօք՝ նա յառնէ, 'ի թաղիլդ՝ նա իբր որդն կրծէ և ուտէ. և զյիմարութիւն քո յերեսդ հարկանէ. 'ի խցանել զականջդ՝ խեղդէ, ահաբեկէ, և խռովեցուցանէ.

'Ի մեղանչել ադամայ՝ ա̅ծ իբրև հայր բարի կոչեաց զնա ասելով * ո՞ւր ես‖. պատասխանի ետ ադամ. * լուայ զձայն քո 'ի դրախտի աստ և երկեայ, քանզի ,, մերկ էի և թագեայ‖. (ծնն. գ. 9.) Զարմանք է, ձայնն էր քաղցր, ձայնօղն բարերար և բարեկամ. տեղին փափուկ. ոչ գոյր անդ ոչ դատաւոր և ոչ ամբաստանօղ. և սակայն 'ի լսել նորա զայսոսիկ երկուս ձայնս. * ո՞ւր ես‖ զարհուրի, փախչի և թագչի. Պատճառ. վասն զի մերկ եմ ասէ. զի մեղքն մերկացոյց զնա 'ի սիրոյդ. և ո՛ պատմեաց քեզ զայդ. խիղճ մտացս, որ մերկ կացոյց, այսինքն յայտնի եցոյց զչարիս իմ. Որչափ տրտմէր և սարսէր անտիոքոս. Իւո՞վ էր որ տրտմեցուցանէր զնա, ներքին վկայն. * յուշ ,, եղէն ինձ (ասէ) չարիքն‖. (ա. մակ. զ. 12.) Զսոյն գործէ յամենեսեան այս խիղճ մտաց 'ի խրատել և 'ի կշտամբել. * խրատեսցէ զքեզ ապստամ,, բութիւնդ քո. և չարիք քո կշտամբեսցեն զքեզ‖. (երեմ. բ. 19.) իբր թէ ասէր. խիղճ մտաց քոց խրատեսցէ զքեզ վասն ապստամբութեանդ. և կշտամ բեսցէ վասն չարեացդ ։ Բայց քանզի ա՟ծ է որ առնէ՝ զի խրատեսցէ զմարդ խիղճն մտաց , վասն այնորիկ ա՟յ տայ , և ասէ , կշտամբութ՟ք խրատեցեր զմարդ ։ Աստանօր 'ի ձեռագիրս մեր դնի բառս հանգիստ . Նոյնպէս և յեբրայականն բառս սելա , և յեօթանասնիցն բառս դիափսաղմա ։ Սոյնպէս դնի առ նոսա և 'ի վերջ վեցերորդ համարոյն ։ Եւ զի ըստ աւանդելոյ եբրայեցւոց բառս սելա նշանակէ միշտ , 'ի յարիլն աստ ցուցանէ զընդունայն լինել մարդկան միշտ և յամենայնի ։ Իսկ ըստ բարոյական տեսութեան ցուցանէ՝ հանգիստ առնուլ աստ , այսինքն զկայ առնուլ 'ի միտս , և խորհիլ զնախասացեալ բանսդ ։ Այլ ըստ եղանակի ձայնին՝ ցուցանէ զփոփոխութիւն եղանակին . (զորմէ տես 'ի Ներած" . գլ . Թ .) բայց ըստ ընթացից շարագրութեանն ցուցանէ փոխել կարգի բանին յայլ կերպարան , այսինքն 'ի մանաւոր մաղթանս . զի 'ի նոյն դարձուցանէ մարգարէն զբան իւր , և ասէ ։

ժբ. Լուր Տէր աղօթից իմոց . ունկն դիր խնդրուածոց իմոց , արտասուաց իմոց մի լռեր ։

Որ միանգամ ասաց մարգարէն յայս սաղմոս՝ էին նախ՝ արտասուաց բանք , կամ ասացից՝ յայտարարութիւնք գործոց և կրից հանդերձ արտասուօք . երկրորդ՝ էին խնդրուածք պէսպէս իւրաց . երրորդ՝ էին և աղօթք պաղատանաց ։ Զայսոսիկ հայելով նախ աղաչէ լսել աղօթից իւրոց , և ասէ ։

Լուր Տէր աղօթից իմոց ։ Այսինքն է , մի մերժեր զաղօթս իմ , այլ ընկալ զայն . և զոր խնդրեցի աղօթիւք՝ կատարեա՛ ։ Առաջի առնէ ապա և զբան խնդրուածացն ասելով ։

Ունկն դիր խնդրուածոց իմոց ։ Փոխանակ ասելոյ՝ լուր , որպէս եդ 'ի սկզբան , ասէ ունկն դիր , որով կամի առաւել յօժարեցուցանել զա՟ծ 'ի լսել . զի որ յօժարի լսել՝ մանաւոր իմն օրինակաւ ունկն մատուցանէ . և զի մարգարէն թախանձանօք պաղատէր՝ զոր խնդրէր , ցանկայր՝ զի յօժարութեամբ լուիցէ նմա ա՟ծ . վասն որոյ ասէ , ունկն դիր . այսինքն հաճեաց կատարել ըզխնդրուածս իմ ։ Ապա և զբան արտասուացն 'ի մէջ բերեալ ասէ ։

Արտասուաց իմոց մի՛ լռեր։ Այսինքն 'ի լսել քո զարտասուաց արժանի բանս իմ, մի՛ իբր ոչ լսօղ՝ անպատասխանի արձակեր զիս, կամ մի՛ ցուցաներ զքեզ իբր ոչ լսօղ, կամ անհոգ, կամ իբր լռօղ։ Եւ կամ 'ի տեսանել քո զիս արտասուօք մատուցեալ առաջի քո 'ի խնդրուածս՝ մի՛ անտես առներ, այլ մխիթարեա՛ զիս։ Այս ոճ հայի յայն՝ զոր եդ մարգարէն ('ի սաղմ. ծե. 1. տես անդ։) Արդ յետ առաջի դնելոյ մարգարէին զայս պաղատանս՝ 'ի մէջ բերէ և զվիճակ կենաց իւրոց. և խնդրէ զիւր առնել անձին՝ ասելով։

ժգ. Պանդուխտ եմ ես առաջի քո, Նժդեհ և անցաւոր՝ որպէս ամենայն հարք իմ։

ժդ. Թո՛յլ տուր ինձ զի հանգեայց. մինչչև երթեալ իցեմ, առաւել ոչ ևս գտանիցիմ։

Պանդուխտ և նժդեհ թէպէտ և 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին, զի երկոքին ևս 'ի մէջ բերեն զօտարութի, բայց երկոքումբք զանազանին. մի՝ յայսմ, զի պանդուխտն է յայնմ երկրի որ ոչ է իւր. իսկ նժդեհն ոչ է յայնմ երկրի որ է իւր. կամ պանդուխտ ասի նա՝ որ է յօտար երկրի. իսկ նժդեհ ասի նա՝ որ օտարացեալ է յերկրէ իւրմէ։ Երկրորդ զանազանին յայսմ զի պանդուխտ ասի նա՝ որ երկար բնակի յօտար երկրի. իսկ նժդեհ ասի նա՝ որ հարևանցիկ և անցողաբար բնակի։ Սմին իրի առ որոշումն նժդեհի 'ի պանդխտէ՝ երբեմն յաւելեալ լինի և անուանս անցաւոր։ Եւ եթէ այսպիսիս ընկալեալ լիցի յայլմէ, և խնամեալ լիցի 'ի նմանէ՝ հիւր կոչի, և նա հիւրընկալ։ Եւ արդ քանզի ա͞մ մարդ որ կեայ 'ի մարմնի, բնակի իբր յօտարութեան 'ի վերայ երկրի՝ մեկնեալ 'ի հայրենեաց իւրոց, վասն այնորիկ կոչի պանդուխտ և նժդեհ. սմին իրի ասէ։

Պանդուխտ եմ ես առաջի քոյ, Նժդեհ և անցաւոր, որպէս ամենայն հարք իմ։ Այսինքն թէ ոչ եմ ես քաղաքացի աշխարհիս, կամ բնակ երկրի, այլ եմ իբր պանդուխտ. և բնակիմ աստ իբր անցաւոր նժդեհ. քանզի և հարք իմ սկսեալ յադամայ և այսր զայսպիսի կալան բնակութիւն։

Այլ քննել արժան է՝ զի ոչ ասէ մարգարէն սոսկապէս՝ թէ եմ, այլ թէ ես առաջի քո. որով ցուցանէ նախ՝ թէ ո՛ և իցէ երկարութիւն կենաց համեմատութեամբ առ ա՟ծ՝ է առօրեայ պանդխտութիւն. * հազար ամ „յաչս տեառն՝ որպէս օր երեկին՝ զի էանց‖. (սաղ. ձթ. 4.) Ցուցանէ երկրորդ ըստ հակառակին՝ թէ այս սակաւօրեայ պանդխտութիւն՝ որով հեռի տեսանի ժառանգութիւնն ա՟ծային՝ երկար իմն թուի արդարոց. յոր միտս ասէ այլուր մարգարէն. * վայ ինձ զի ընդեր„կար եղև պանդխտութիւն իմ 'ի վերայ երկրի‖. (սաղ. ճժթ. 5.) Յայս հայելով և առաքեալն՝ ասէր. * Ինձ „կեանք ք՟ս է և մեռանիլ շահ. ապա եթէ կեանքս „մարմնոյ՝ այս ինձ պտուղ գործոյ է. և զինչ ընտրե„ցից՝ զայն ոչ գիտեմ. նեղեալ եմ յերկոցունց, զցան„կալն ելանել և ընդ ք՟ի լինել առաւել լաւ համա„րիմ‖. (փիլ. ա. 21.)

Ցուցանէ երրորդ՝ թէ 'ի պանդխտութեան իւրում ոչ է մոռացեալ զհայրենիսն՝ զերկնայինն Երուսաղէմ յոր միտս ասէ այլուր. * եթէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռասցի զիս աջ իմ‖. (սաղ. ճլզ. 5.)

Ցուցանէ չորրորդ՝ թէ իբրև պանդուխտ վարելով աստ՝ փոյթ մեծ ունի և զգուշանայ չգործել ինչ չար առաջի ա՟յ, կամ ընդդէմ հաճոյից նորա. յոր միտս յորդորէ պետրոս առաքեալ զհաւատացեալսն և ասէ. * սիրելիք աղաչեմ իբրև զպանդուխտս և զնժդեհս „'ի բաց մերժիլ 'ի մարմնաւոր ցանկութեանց՝ որք „զինուորին ընդդէմ հոգւոց‖. (ա. պետ. բ. 11. եբր. ժգ. 14.)

Ցուցանէ հինգերորդ՝ թէ որպէս պանդուխտ համարի զինքն, սոյնպէս իբրև պանդուխտ վարի առաջի ա՟յ. և որպէս պանդուխտն ոչ դեգերի յընդունայն իրս, այլ փութայ գնալ յառաջել ժամանել 'ի տեղի իւր, մանաւանդ 'ի յիշելն անդ զսիրելին՝ յորմէ անջատեալն է. սոյնպէս էր և ընթացք կենաց մարգարէին, որպէս ցուցանեն և բանք սաղմոսաց նորա.

Ըստ սմին պարտ է կեալ և հաւատացելոցս 'ի ք՟ս. և այս է իբր առաջին յատկութիւն կամ առաջին աստիճան քրիստոնէական կենաց. Ասացի * առաջինն‖, զի երեք աստիճանք թուին հոգևոր պանդխտութեան. ա-

ռաջինն է օտարացեալ տեսանելով մարդոյ զինքն յերկնային հայրենեաց՝ իբր պանդուխտ վարիլ՝ գիտելով թէ քաղաք մեր յերկինս է. * ամենեքեան մեք
„ օտարք և պանդուխտք եմք յերկրի, նշդեհք և ան-
„ ցաւորք. որպէս ամենայն հարքն մեր (ասէ սարգիս
„ շնորհալի 'ի մեկն. յակ. ա̃. 20. ճառ դ̃.) զի մեր
„ քաղաքականութիւն յերկինս է‖. Զի թէ և 'ի մեծութեան և 'ի փառաւորութեան իցեմք՝ իբր պանդուխտ պարտիմք վարիլ. առ որ օրինակ առնու յիշատակեալդ սարգիս շնորհալի զերանելին դաւիթ. ('ի մեկն. ա̃. պետ. ա̃. 17. ճառ դ̃.) ասելով. * պան-
„ դուխտ զինքն անուանէր (դաւիթ) 'ի մէջ թագաւո-
„ րութեանն, և անցաւոր որպէս ամենայն հարքն‖. և յաւելու թէ * զսրբոցն պանդխտութիւն ա̃ծայինն ա-
„ ռաքեալ վկայէ‖. Զի այս էր պատիւ իմ̃ սրբոցն ա̃յ. ըստ որում գրէ սոյն այս սարգիս շնորհալի ('ի ա̃. պետ. ա̃. 1.) * ընտրեաց ասէ զնոսա (այսինքն զսի-
„ րելիս իւր) նախ քան զլինելն աշխարհի յայս պատիւ
„ նշդեհութեան, և ելից յիւրում ժամանակի. զի յո-
„ րում ինքն եղև նշդեհ և պանդուխտ, և զնոսա 'ի
„ նմին յարոյց‖. Երկրորդ աստիճան հոգևոր պանդխտութե̃ է՝ օտարացեալ համարելով մարդոյ զանձն իւր 'ի մարմնոյ, իբր մեռեալ վարիլ. և սա առաւել է քան զառաջինն. զի սոսկ պանդուխտն կարէ շրջիլ որպէս և կամի, և զհաճոյս իւր կատարել. իսկ մեռեալն ոչինչ զգայ. ոչ 'ի գովելին մեծանայ, և ոչ 'ի պարսաւելին այլափոխի. Առ այսպիսիս ասէ առաքեալն. * ե-
„ թէ մեռայք ընդ ք̃սի 'ի տարերց աշխարհիս զի ես
„ իբրև զկենդանիս աստէն յաշխարհի կրօնաւորիք‖.
(կողոս. բ̃. 20.)

Երրորդ աստիճան հոգևոր պանդխտութեան է՝ օտարացեալ համարելով մարդոյ զինքն յա̃մէ՝ իբր խաչեալ վարիլ. և սա է գերագոյն քան զառաջինսն. զի այսպիսիս բևեռեալ կայ 'ի խաչին՝ յերկրէ 'ի վեր բարձրացեալ. և ցնծայ 'ի նմին ասելով. * այլ ինձ քաւ լի-
„ ցի պարծիլ, բայց միայն 'ի խաչն տ̃ն մերոյ յ̃ի ք̃ի,
„ որով ինձ աշխարհ 'ի խաչ ելեալ է և ես աշխարհի‖.
(գաղ. զ̃. 14. բ̃. կոր. է̃. 4.) Զայսպիսեաց ասէ առաքեալն. * իսկ որք ք̃սեանքն են՝ զմարմինս իւ-

„ րեանց 'ի խաչ հանին կարեօք և ցանկութեմբք հան-
„ դերձ» · (գաղ. Ե. 24.) Այս աստիճան պանդխտութե՛ է երրորդ երկինք · ուր չիք իշխանութիւն հեթանիութից, և ոչ ազդեցութե՛ ախտից։

Բայց թուի թէ մարգարէն 'ի վիճակ յատուկ պանդխտի հայելով դնէ զառաջիկայ բանդ · ուր և զօրութեամբ իմն 'ի մէջ բերելով զհասարակ հանգամանս պանդխտութե՛ խնդրէ հանգիստ անձին · որպէս սովոր է խնդրել պանդուխտ անցաւոր, աշխատեալ յուղւոյ · ուստի ասէ։

Թո՛յլ տուր ինձ զի հանգեայց։ Որպէս թէ ասէր · վաստակեալ եմ 'ի խղճէ մտացս, վաստակեալ եմ և 'ի կրից մարմնոյս, վաստակեալ եմ և 'ի պէսպէս վշտաց, որպէս վաստակեալ տեսանի պանդուխտ 'ի հասանել 'ի տեղի ուրեք · և ոչ այսչափ միայն, այլև աւուրք կենաց իմոց՝ որպէս նժդեհի են 'ի վերայ երկրի, վասն որոյ թո՛յլ տուր ինձ աղաչեմ, զի հանգեայց փոքր մի յայսմ ա̃մէ, այսինքն 'ի խղճէ մտացս և յընդունայն վշտացս, որ է ասել · բարձ յինէն զամենայն ծանրութիւն մեղաց իմոց · հեռի արա յինէն զընդունայն տաժանմունս, և դիւրացո զընթացս կենաց իմոց, առ 'ի կեալ ըստ հաճոյս կամաց քոց ցորչափ իցեմ 'ի պանդխտութե՛ իմում, զկնի որոյ ոչ ևս կարեմ առնել ինչ · և առ այս յարէ։

Մինչչև երթեալ իցեմ · ապա ոչ ևս գտանիցեմ։ Կամի ասել · աղաչեմ զքեզ՝ տուր զոր խնդրեմ, մինչչև մեռեալ իցեմ և դարձեալ 'ի հող, և մինչչև գնացեալ իցեմ 'ի տուն իմ յաւիտենական ապա ոչ ևս գտանիցեմ, այսինքն յորմէ տանէ ոչ ևս ունիցիմ դառնալ յայս տեղի պանդխտութեան։ Պիտումն բանին է խնդրել յա̃յ տալ ինքեան յերկրի աստ ժամանակ բարի և կեանս խաղաղական հաճոյ ա̃յ՝ ազատ 'ի մեղաց · որպէս թէ ասացեալ էր · մինչչև մեկնեալ է իմ յաշխարհէ աստի՝ տուր ինձ կեալ խաղաղութեամբ ըստ հաճոյս քոյ, և անդորրանալ 'ի պատուիրանս քո · ևս և լինել ուրախ 'ի քեզ, մինչչև գնացեալ իցեմ յանդառնալի տուն իմ։

Ոմանք իմացուցանեն անշուշտ և զայն՝ թէ կայ հանդերձեալ կեանք, ապա թէ ոչ՝ ոչ ասէր՝ մինչչև եր-

թեալ լցեալ. և այն. և ոչ իսկ կոչէր զինքն պանդուխտ, այլ սոսկ անցաւոր, որպէս են անասունք, և այլ անարգագոյն իրք. * զի թէ ոչ իցեն հանդեր-
,, ձեալքն (ասէ բարսեղ վարդապետ 'ի մեկն. մարկ.
,, գլ. ժ̄ը.) յոյժ քան զայնոսիկ որք վասն մեր են՝
,, անարգագոյն եմք. զի երկինք և երկիր, ծով և
,, գետ (որք վասն մեր են) երկարատևագոյնք են.
,, ոմանք և յանասնոց իսկ, զի ագռաւք, և փղաց
,, ազգք և այլք յերկար ժամանակս կան և անվտանգ
,, (որպէս օձք և վիշապք). իսկ մեզ դուզնաքեայ և
,, վտանգաւոր է աշխարհս‖. մինչև հասցուք յաշխարհըն վերին։

Իմացուցանէ դարձեալ սովաւ և զայն՝ թէ կարի յոյժ վտանգաւոր է անցք աստի կենաց առ հանդերձեալն. ուստի և վարդապետք՝ նեղ կամրջոյ նմանեցուցանեն զայս անցս՝ 'ի վերայ լայն և խոր ձորոյ. արդ որպէս վտանգ մեծ է անցանել ընդ այնպիսի կամուրջ 'ի գիշերի, սոյնպէս և առաւել ևս վտանգ մեծ է անցանել ընդ այն անձուկ անցս՝ որով ելանեմք աստի և գնամք 'ի հանդերձեալ կեանս. մանաւանդ զի գիշեր խոր ևս է. զի ամենեւին անծանօթ է մեզ այն. մինչև ընկալցի զմեզ ողորմութ̃ին ա̃յ, և արժանացուսցէ աներկեան հանգստեան 'ի յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ. ԼԹ.

Գոհութիւն 'ի բերանոյ դաւթի 'ի դիմաց եկեղեցւոյ և քս̃ի, և ցոյցք հաճութ̃են ա̃յ ոչ ընդ զոհս պատարագաց, այլ ընդ նուիրում̃ն անձին, միանգամայն և աղաչանք խնդրելոյ զօգնութ̃ի ա̃յ և զպաշտպանութ̃ի նորա ընդդէմ թշնամեաց։

Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ։

1 Համբերելով համբերի տեառն, և նայեցաւ առ իս, և լուաւ աղօթից իմոց։ 2 Եհան զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ։ 3 Հաստատեաց 'ի վերայ վիմ

զոտս իմ, և ուղղեաց զգնացս իմ: 4 Եդ 'ի բերան իմ օրհնութիւն նոր. զօրհնութիւն Տեառն Ա̅յ մերոյ: 5 Տեսցեն բազումք՝ և երկիցեն. և յուսասցեն 'ի Տէր. Երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա: 6 Ո՛չ հայեցաւ նա 'ի նանրութի̅. և ո՛չ 'ի մոլորութիւն սուտս: 7 Բազում արարեր դու՝ Տէր Ա̅ծ իմ զսքանչելիս քո, խորհրդոց քոց՝ ո՛չ ոք է որ նման է քեզ: 8 Պատմեցի և խօսեցայ. և բազում եղեն քան զթիւ. ընդ զոհս և ընդ պատարագս ո՛չ հաճեցար. լսելիս հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվասն մեղաց ո՛չ խնդրեցեր: 9 Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ գամ ես. 'ի գլուխս գրոց գրեալ է վասն իմ: 10 Առնել զկամս քո Ա̅ծ իմ կամեցայ, և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ: 11 Աւետարանեցից զարդարութի̅ս քո յեկեղեցւոջ մեծ. ահա զշրթունս իմ ո՛չ արգելից 'ի քէն: 12 Տէր դու գիտացեր, զի զարդարութի̅ս քո ո՛չ ծածկեցի 'ի սրտի իմում. զճշմարտութիւն քո՝ և զփրկութի̅ քո: 13 Ասացի՝ և ո՛չ թագուցի զողորմութի̅ս քո. և զճշմարտութիւնս քո 'ի ժողովրդենէ մեծէ: 14 Դու Տէր մի՛ հեռի առներ զգթութիւնս քո յինէն. զի ողորմութի̅ քո, և ճշմարտութի̅ յամենայն ժամ ընկալցին զիս: 15 Շուրջ եղեն զինև չարք՝ որոց ո՛չ էր նոյա թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ո՛չ կարացի տեսանել: 16 Բազում եղեն քան զհեր գլխոյ իմոյ. և սիրտ իմ եթող զիս: 17 Կամեա՛ց Տէր՝ փրկել զիս. և Տէր յօգնել ինձ նայեա՛ց: 18 Ամաչեսցեն և յամօթ լիցին, ոյք խնդրէին զանձն իմ բառնալ զնա. դարձցին յետս և ամաչեսցեն՝ ոյք խորհէին ինձ չար: 19 Կրեսցեն զամօթ առժամայն վաղվաղակի, որ ասէին ինձ վա՛շ վա՛շ: 20 Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, ոյք խնդրեն զքեզ Տէր: 21 Ասասցեն յա̅մ ժամ, մեծ է Ա̅ծ, ոյք սիրեն զփրկութիւնս քո: 22 Այլ աղքատ և տնանկ եմ, Ա̅ծ խորհեա՛ զիս. օգնական և պաշտպան իմ ես դու. Ա̅ծ իմ մի՛ յամենար:

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ.

ՅԱՅՍՄ ՎԵՐՆԱԳՐԻ ՉԻՔ ԻՆՉ աւելի քան զոր յայլ սոցին նման վերնագիրս ։ 'Ի լատինն և 'ի Թարգ". եօթ". յաւելեալ լինի և բառդ ինքն՝ առ 'ի ցուցանել թէ այս սաղմոս իցէ նորին իսկ դաւթի ։

Այլ թէ յինչ առթէ իցէ ասացեալ զայս, կամ յինչ միտս, պէսպէս կարծիք են ։ Ոմանք հայելով յերկրորդ համար այսր սաղ". ուր ասի * եհան զիս 'ի գբոյ տառապանաց 'ի կաւոյ և 'ի տղմոյ ‖. յայլ ինչ վերածեն զմիտս բանին՝ ասելով, թէ այս սաղմոս հայի ոչ 'ի դաւիթ՝ այլ յանցս դանիէլի՝ որ արկաւ 'ի գուբ առիւծուց. կամ յանցս երեմիայ՝ որ ընկեցաւ 'ի գուբ բանտին. ոմանք թէ հայի յանցս գերութեանն բաբելոնի և այլն ։ Այլ այսոքիկ կարծիք, որպէս այլուր ասացեալ է մեր, ոչ են նկարագրական՝ այլ յարմարական ։

Իսկ այլք ասեն՝ թէ այս սաղմոս իցէ ասացեալ 'ի դաւթայ յազատիլն իւր 'ի հալածմանց աբեսաղոմայ իբր շնորհակալութիւն. հայելով միանգամայն և յազատութիւնն իսրայէլացւոց եթէ 'ի ծառայութենէ եգիպտացւոց և եթէ 'ի գերութենէ բաբելացւոց ։ Եւ զի այն ազատութիւն օրինակ էր ազատութեան մարդկային ազգի 'ի գերութէ սատանայի և 'ի ծառայութէ մեղաց, երևի թէ ուղղակի յայն հայելով դաւթի կարգէ զբան իւր, խօսելով 'ի դիմաց մարդկայնոյ բնութեան, կամ 'ի դիմաց եկեղեցւոյ, և ապա 'ի դիմաց քսի, զամենայնն յանձն իւր նկարելով, որպէս տեսցի յառաջիկայդ ։

Ի Ռ Ն

ա. Համբերելով համբերի Տեառն. եւ նայեցաւ առ իս.
եւ լուաւ աղօթից իմոց:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Համբերելն կրկնակի առեալ լինի. մի՝ փոխանակ յօժար սրտիւ տանելոյ նեղութեանց. յայս միտս առնու լամբրոնացին աստ զայս բառ, բայց մեր բանին ուղղակի ոչ հայի 'ի սոյն. որպէս տեսցի այժմ: Երկրորդ՝ փոխանակ ակնունելոյ իմիք՝ գոլով 'ի նեղութեան, մանաւանդ յորժամ առընթեր դնի բառս [illegible] կամ [illegible], եւ այլն. յայս միտս առնու եւ վարդան. եւ տարբերութիւնն յայսմ է, զի առաջինն է ներգործութիւն առաքինութեան համբերութեան. իսկ երկրորդն է ներգործութի՟ յուսոյ՝ խառն ընդ ներգործութեան համբերութեան, ըստ որոյ յեբրայականն գրի կավօ կիվիթի այսինքն սպասելով սպասեցի. սոյնպէս դնի
եւ յայլ թարգ՛՛:

Արդ որպէս դաւիթ անկեալ 'ի նեղութիւն ակնունէր գտանել 'ի տեառնէ զփրկութի՟, սոյնպէս եւ ազգ մարդկան յետ մեղացն ադամայ՝ յանհնարին վիշտս մեղաց անկեալ՝ եւ 'ի բռնութենէ սատանայի տառապեալ՝ ակն ունէր այ՟, զի նայեցեալ առ ինքն՝ ժամանեցուսցէ զայցելութիւն իւր, զոր եւ խնդրէր բերանով նահապետաց եւ մարգարէից, եւ զնոյն յանդիման առնէր պէսպէս արարողութեամբք. եւ զի որում ակն ունէր՝ եգիտ, ամին իրի ասէ:

Համբերելով համբերի Տեառն. եւ նայեցաւ առ իս. եւ լուաւ աղօթից իմոց. Այս կրկնումն ցուցանէ զհաստատութի՟ եւ զհանապազորդութի՟ ակնկալութեանն, կամ զանսասան լինել յուսոյն. որպէս թէ եղեալ էր. այսչափ ժամանակ յայսպիսի տառապանս մատնեալ՝ ոչ երբէք յուսահատեցայ, այլ մանաւանդ հաստատութեամբ եգի զյոյս իմ յայն՝ որ արարն զիս. եւ յայս ապաւինեալ՝ չեղէ անպատուղ, եւ ոչ թողայ 'ի բաց 'ի յուսոյ իմմէ. վասն զի առ որ յուսացայ՝ հաճեցաւ նայիլ առ իս տեսանել՝ զինչ արդեօք կրեմ, զինչ առնեմ և զինչ խնդրեմ. Նայեցաւ արդարև յայն ամենայն զորս կրէի 'ի տառապիլ իմում յիս, և զորս առնէի 'ի յուսալո իմ. եւ և խոնարհեցաւ և լուաւ աղօթից իմոց՝ զորս մատուցանէի առ Նա. գթացաւ և եցոյց ինձ զփրկութիւն իւր։

Երկրորդաբար առեալ, այս կրկնումն ցուցանէ և զվըշտանալն 'ի համբերութեան. զի որ համբերէ՝ երկոքումբք վշտանայ, այսինքն թէ կրկնակի տոկայ, կամ կրկին տանի. մի՝ վշտացն. և մի եւս նմին իսկ համբերութեան. զի նոյն իսկ համբերութիւնն ունի ընդ իւր զծանրութիւն, որում տանի համբերօղն սիրով, և թէպէտ վշտացն եւս տանի՝ բայց ոչ սիրով. * զի ոչ ոք սի„ րէ զայն՝ որում տոկայ, թէև սիրեսցէ զտոկալն. զի „ թէպէտև ընդ տոկալ իւր խնդայ, բայց ոչ ընդ տո„ կալին ||. եթէ սիրով տոկայ 'ի սոսին՝ Ճշմարտիւ ասէ. համբերելով համբերի տեառն 'ի վիշտս իմ. և Նա լուաւ և փրկեաց զիս. իսկ թէ ոչ էր այն լսել և փըրկել՝ յայտ առնէ ասելով։

․ Եհան զիս 'ի գբոյ տառապանաց. 'ի կաւոյ և 'ի տըղմոյ։

Գուբն է խորխորատ անջուր, կամ խոր փոս՝ ուր ոչ գոյ ջուր և ոչ լոյս։ Իսկ զի յայսպիսի գուբս դիպուածով իմն մտանէ և ջուր, յայնմանէ մնայ 'ի յատակս նորա երբեմն հոտեալ տիղմ, այն է շաղախ, կամ ցեխ, և երբեմն պարզ կաւ, կամ կիսացամաք տիղմ նման կաւոյ։

Այսպիսիս օրինակին այն անելանելի խաւարային վիշտք և այն անզերծանելի վտանգք կամ գերութիք, յորս փոխանակ մխիթարութեան նշմարին թշուառութիւնք անձին, որք ըստ ցամաքութեան բանական մասին նմանին կաւոյ, և ըստ գարշահոտ ապականութեան զգայական մասին և ըստ մարմնաւոր վտանգից՝ հանգիտանան տղմոյ։

Արդ յայտ է՝ թէ բոլոր ազգ մարդկան վասն մեղացն ադամայ անկեալ կային յայսպիսի գուբ, այսինքն յանելանելի աղէտս մեղաց, և յանզերծանելի գերութի սատանայի, կուրացեալ 'ի միտս, և ցամաքեալ 'ի կամ ըստ բանական մասին · ապականեալ 'ի ցանկականն զարշահոտութեամբ ցանկութեան, և տկարացեալ 'ի ցասմնականն, յոտից մինչև ցգլուխ թաղեալ 'ի թշուառութիւնս ։ Տեսեալ ապա արարչին զպատկեր իւր յայնպիսում գբի՝ եկն և ազատեաց զնա, վասն որոյ ասէ ։

Եհան զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ ։

Այսինքն եհան զիս արարիչն իմ 'ի տառապանաց անտի մեղաց և գերութեան՝ յոր իբր 'ի գուբ անկեալ կայի, և այնու եհան զիս նաև 'ի կուրութենէ մտաց և 'ի խստութենէ կամաց իմոց, ևս և յապականութ՟է կրից և անկարգ ցանկութ՟եցս ։ Ոչ ասէ ազատեաց, այլ եհան · զի ցուցցէ նախ զմեծութիւն և զխորութ՟ի թշուառութեանն · զի հանելն յայս ակնարկէ ։ Ցուցցէ երկրորդ՝ զկարգաւորութիւն գործակցութ՟ե մերոյ · զի թէպէտ և նա ազատեաց զմեզ 'ի կորստենէ անտի, բայց առ 'ի վերածիլ մեզ ներգործութեամբ յայն՝ առ որ ունիմք հասանել, այսինքն առ փրկութիւն, պիտոյ է՝ զի և մեք լիցուք գործակիցք որպէս լինի 'ի հանման մարդոյ 'ի գբոյ ։ Ցուցցէ երրորդ՝ զմնացուածս ապականութեան մերոյ · զի թէպէտ զերծոյց զմեզ 'ի գբոյ անտի մեղաց և 'ի գերութենէ, բայց կան դեռ ևս 'ի մեզ մնացուածք կաւոյ և տղմոյ, այսինքն են թշուառութիւնք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, որք մնացին 'ի մարդկայինս բնութեան՝ ոչ իբր մեղք, կամ իբր գերութիւն, այլ իբր պատիժք մեղաց, և իբր նշան կորըստեան սկզբնական արդարութեան · և սոքին ևս սրբին ըստ կարի 'ի ձեռն շնորհաց՝ զոր առատապէս տայ ամենեցուն փրկիչն ամենայնի ։

Համառօտիւ իմն ես կամեցեալ մեկնել, գբով տառապանաց իմացեալ լինի նոյն ինքն սկզբնական մեղքն · իսկ կաւով և տղմով այն ամենայն ապականութ՟իք՝ որք զհետ եկին սկզբնական մեղաց · յորոց ազատութիւն գտեալ ազգի մարդկան՝ համարձակութ՟բ ասէ · Եհան զիս 'ի գբոյ տառապեցուցիչ մեղացն ադամայ, և յապականութ՟եց նորա ։

Այս բան կարէ հայիլ և 'ի դէմս ադամայ և այնոցիկ արդարոց՝ որոց հոգիք կապեալ կային 'ի դժոխս, այսինքն 'ի գուբն յայն՝ որ կոչի գոգն աբրահամու,

որ և էր ամենևին ցամաք յերանական տեսութենէն ա̃յ. և որ ինչ մխիթարութիւն կայր անդ յուսով գալըստեան փրկչին (ըստ վկայելոյ գրոց. ղուկ". ժԳ. 25.) համեմատութեամբ տեսութե̃ ա̃յ՝ էր իբր կու և տիղմ. Յայսմ գբոյ և 'ի տղմոյ եհան զնոսա փրկիչն յորժամ էջ առ նոսա հոգւով. ըստ այնմ. (շար.) * ստորի֊
,, ջեալ 'ի դժոխս կենդանագործեաց հզօրեղապէս զերամն
արդարոց||.

Սոյն այս կարէ առնուլ և 'ի դէմս իւրաքանչիւր հաւատացեալ ննջեցելոց՝ որք մեռեալ իցեն 'ի շնորհս. յոր միտս առեալ զայս բան յալէլուս ննջեցելոց 'ի Ճաշուն. իբր զի իւրաքանչիւր նոքա որք Ճշմարիտ և ուղիղ հաւատով 'ի ք̃ս ննջեցին՝ մինչև են հասեալ յերկնից բարութիւնս ըստ դաւանելոյ կաթուղիկէ եկեղեցւոյ, կան 'ի տառապանս ինչ՝ իբր 'ի գուբ. և են պաշարեալ յայնպիսի խաւար և 'ի վիշտ, որք նմանին կուոյ և տղմոյ. Եւ յորժամ նպաստիւք աղօթից և ողորմութեանց՝ որք լինին 'ի կենդանեացս՝ հանանիցեն նոքա 'ի հանգիստ արքայութեան, իւրաքանչիւր 'ի նոցանէ ընծայից ուրախութեամբ ունի ասել. եհան զիս տէր 'ի գբոյ տառապանաց 'ի կուոյ և 'ի տղմոյ. և այս լիագոյն կատարեսցի՝ յորժամ հանցէ տէր յարութբ̃ և զմարմինս մեր 'ի հողոյ.

Ի բերանոյ դաւթի եւս առի այս բան, յազատիլ նորա 'ի մեղաց իւրոց, եւս և 'ի տառապանաց իւրոց, յորս կայր իբր 'ի գուբ մտանեալ, մանաւանդ թէ իբր 'ի կու և 'ի տիղմ խրեալ. Եւ կամ ըստ դաւթի անյաղթի, յազատիլ նորա 'ի հիւանդութենէ իբր 'ի տղմոյ.

Սոյն զայս կարէ և ամենայն ոք առնել յազատիլ իւր 'ի մեղաց, և կամ 'ի տղմալից փորձութեանց ըստ լամբ". որով հնար լինի նմա ընթանալ զհետ ք̃ի, և ժամանել 'ի նա իբրև 'ի վէմ հաստատութե̃. Աստի ունէ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա̃. պետ. Բ̃. 4. Ճառ Դ̃.) * որ ոք կամիցի սուրբ ոտիւք զայն Ճանապարհն
,, գնալ (ընդ որ գնաց ք̃ս՝) պարտ և արժան է նմա՝
,, զտիղմ մեղացն՝ որ է օրինակ մեռելութե̃ մերկանալ
,, 'ի զղջապարտացն, և բոկոտն լինել, և այնպէս
,, յառաջ մատչել և 'ի վէմն մերձենալ. որպէս դա֊

„ ւիթ արար՝ յորժամ զյոլովութիւն տղմոյն 'ի բաց
„ լուաց . և կացոյց 'ի վերայ վիմի զիւր ոտս , յայնժամ
„ վստահացեալ ասաց , եհան զիս 'ի գբոյ տառապանաց ,
„ 'ի կաւոյ և 'ի տղմոյ . և կացոյց 'ի վերայ
„ վիմի զոտս իմ ||. Զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն , ասելով .

Դ. Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ . և ուղղեաց զգնացս իմ .

Արդ 'ի հասանել 'ի փրկութիւն յաւիտենական հարկ է մարդոյ ունել երկու ինչ . մի՝ հաստատութիւն ճշմարտութեան՝ կամ անմոլար ճանապարհ առ յաւիտենական կեանս . երկրորդ՝ անմոլար գնալ 'ի նոյն . կամ որ նոյն է՝ նախ ճշմարիտ հաւատ , և ապա ուղիղ գործք . զի թէ զառաջինն միայն ունիցի և զերկրորդն ոչ , ոչ կարէ հասանել .

Զսոյն զայս գերագոյն օրինակաւ ունէր մարդ 'ի սկզբնական արդարութեան . բայց անսալով առաջնորդութեան նախաչարին , գլորեցաւ 'ի գուբ ապականութեան , և նստաւ 'ի գբի անդ՝ 'ի խաւարի և 'ի տղմաշաղախ վիճակ . Իսկ որ եհան զնա 'ի գբոյ անտի , զերկուսին զայսոսիկ ևս ներգործեաց 'ի նմա . վասն որոյ ասէ .

Հաստատեաց 'ի վերայ վիմի զոտս իմ . և ուղղեաց զգնացս իմ .

* Թուի ինձ (ասէ սուրբն Շնորհալի 'ի մեկն . ա .
„ պետ . բ . 4 . ճառ դ .) եթէ ազգակից է բան
„ առաքելոյն այսմ բանի մարգարէութեան . վասն զի
„ նա ասաց . կացոյց 'ի վերայ վիմի զոտս իմ . իսկ սա
„ ասէ , մատուցեալ էք 'ի վէմն կենդանի ||. Արդ վիմով սկզբնաբար իմացեալ լինի նա ինքն Քս . որպէս յայտ է 'ի բանից առաքելոյն . (ա . կոր" . ժ . 4 .) 'ի վերայ այսր վիմի հաստատեաց հայր զմարդն՝ ճշմարիտ հաւատով և անարատ կրօնիւ . որով և կացոյց զեկեղեցի սուրբ .

Երկրորդաբար՝ վիմով իմացեալ լինի աստ հաստատութիւն ճշմարտութե հաւատոյ կամ հաստատութե անմոլար ճանապարհի առ յաւիտենական կեանս , զոր ճշմարտութեամբ եցոյց մեզ նա ինքն տէրն մեր . Արդ յայսպիսի ճանապարհ հաստատեալ այ զոտս մարդոյ՝

ուղղեաց զգնացս նորա ։

Ուր ոտիւք իմացեալ լինին ա և իցէ կարողութիւնք հոգւոյն. զի որպէս ոտիւք լինի ընթանալ, նոյնպէս և կարողութ՟բք հոգւոյ լինի գնալ՝ այսինքն գործել ։ Իսկ գնացիւք իմացեալ լինին ներգործութիւնք այնց կարողութեանց՝ այսինքն գործք՝ որք յառաջ գան 'ի մարդոյ միջնորդութ՟բ կարողութ՟եց, որպէս հաւատալն յառաջ գայ 'ի մտաց, սիրելն 'ի կամաց, եւն ։

Արդ 'ի հաստատել ա՟յ զմիտս և զկամս մարդոյ և զայլ կարողութ՟իս նորա 'ի ճշմարիտ հաւատս՝ որ 'ի ք՟ս, և 'ի բարի կրօնս, այնու իսկ ասի 'ի նոյն հաստատել զնոյն ինքն զմարդն. և յուղղելն զներգործութիւնս այսոցիկ կարողութեանց՝ ասի առաջնորդել նմա կամ ուղղել զգնացս նորա ։

Այս հաստատութիւն ոտից և ուղղութիւն գնացից կարի իմն վայելուչ յարմարի մարդոյ՝ եթէ հայեսցուք 'ի ձև նորա. ըստ որում 'ի մէջ չորքոտանեաց միայն մարդն է՝ որ ուղիղ և կանգուն ընթանայ երկու ոտիւք կարողութ՟եցն հաստատիլ 'ի հաւատս, և գնացիւք բարի գործոց ուղղիլ 'ի յաւիտենական կեանս ։

Բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա.) ասէ թէ * ոտք նշանակ մեղաւորաց են ‖. իսկ մեղաւորք իմանայ զորդիսն ադամայ, զորս հաստատեաց հայրն յաւիտենական 'ի վերայ վիմի, այսինքն 'ի վերայ ք՟ի 'ի ձեռն հաւատոյ, և նոյնն ուղղեաց և սրբեաց զգնացսն զայն՝ որով գնայր ադամ 'ի վերայ որդւոց իւրոց 'ի ձեռն սկզբնական մեղաց. յորոց ազատեցոյց զնոսա տէր. և զանհամարսն 'ի նոցանէ կանգնեալ վերածեաց 'ի կեանս ։ Սեաւի իգնատիոս վարդապետ ('ի մեկն. ղուկ. բ. 34.) խօսելով 'ի վերայ բանին զոր ասաց սիմէոն, թէ սա կայ 'ի կանգնումն բազմաց՝
ասէ. * վասն զի բազումք կանգնեցան նովաւ 'ի գլոր-
„ մանէ առաջին յանցանացն . . . ըստ այնմ, եհան
„ զիս 'ի գբոյ տառապանաց, 'ի կաւոյ և 'ի տղմոյ. և
„ կացոյց 'ի վերայ վիմի զոտս իմ. և ուղղեաց զգնացս
„ իմ. ըստ որում որք զպատշաճ հաւատս նորա ըն-
„ ծայեցին՝ կանգնեցան կացին 'ի վերայ հաստատուն
„ վիմի ‖ ։

Այս բան եթէ հայեսցի 'ի դաւիթ՝ ցուցանէ նախ վերածիլ նորա վերստին 'ի շնորհս, և առաջնորդիլ նորա յԱ՟յ 'ի բարին. երկրորդ ցուցանէ հաստատիլ նորա վերստին 'ի թագաւորութեան՝ և խնամիլ նորա յԱ՟յ. Այնպէս է իմանալ և վասն իւրաքանչիւր մարդոյ՝ յորժամ վերանեալ լինի 'ի շնորհս, և առաջնորդի յԱ՟յ. որով և բերի ցնծութ՟բ յօրհնութիւնս Ա՟յ և 'ի շնորհակալութ՟ի. և զի այս յաջողի 'ի նպաստիցն Ա՟յ, 'ի սոյն ակնարկելով՝ յարէ զկնի և ասէ.

Դ. Եարկ 'ի բերան իմ օրհնութ՟ի նոր. զօրհնութ՟ի Աստուծոյ մերոյ.

Ի նորոգիլ իրիք՝ նորոգին և յատկութիւնք նորա. և զի յատկութիւնք մարդոյ են խօսիլ բանիւք և գնալ ուղիղ գործով, եթէ 'ի հնութեան այսինքն յապականութեան բնութեան հաստատեալ իցէ մարդն՝ ըստ հին մարդոյն խօսի և գործէ. իսկ 'ի հաստատելն 'ի նորութեան՝ ըստ նոր մարդոյն խօսի և գործէ. արդ մարգարէն առաջի արարեալ զնորոգիլ մարդոյ ('ի համարն Գ.) զգործելն եդ 'ի նախընթաց համարն, իսկ զխօսելն աստ դնէ. Եւ զի գերագոյն է 'ի խօսս օրհնելն զԱ՟ծ բանիւք օրհնութեան, զնոյն 'ի մէջ բերէ և ասէ.

Եարկ 'ի բերան իմ օրհնութիւն նոր. զօրհնութ՟ի Աստուծոյ մերոյ. Կամի ասել մինչդեռ 'ի հնութեան էի, և չէի նորոգեալ, խօսէի և երգէի զերգս հինս. այսինքն զերգս անպիտանս, կամ զբանս ունայնութեանց աշխարհի և զմարմնաւորաց. իսկ 'ի նորոգելս իմ և 'ի հաստատելս 'ի վերայ վիմի՝ սկսայ խօսիլ և երգել զերգս նորս զԱ՟յ խմէ և զսիրոյ նորա. (այլ թէ զինչ իցէ և զիարդ լինի երգ նոր. տես 'ի սաղ. Լ՟Բ. Ա. Ղ՟Ե. Ա. և ՃԽ՟Թ. 8.) Զայս երգս ասէ եարկ 'ի բերան իմ Նա ինքն Ա՟ծ. որ է ասել՝ 'ի շնորհացն Ա՟յ յաջողեցաւ ինձ երգել զայսպիսի երգս. զոր և կոչէ օրհնութ՟ի Աստուծոյ մերոյ, այսինքն այնպիսի երգ՝ որ է յԱ՟յ, և Ա՟յ միայն ընծայելի, և ոչ այնպիսի երգ՝ որ իցէ յաշխարհայնոց, և առ աշխարհայինս մատուցանելի.

Այն այս յատուկ է իւրաքանչիւր ապաշխարողի՝ կամ այնմ որ բոլորովին դառնայ առ Ա՟ծ. զի այսպիսին գտեալ շնորհս յԱ՟յ՝ 'ի շնորհաց անտի նորա բղխէ 'ի սրտէ և 'ի բերանոյ խրախ զօրհնութիւնս նորա և զաղմամաղխս. մինչև ոչ միայն բերկրել 'ի հոգին, այլ և զայլս եւս շահել 'ի նոյն.

Եթէ այս բան 'ի բերանոյ մարդկային բնութեան առեալ՝ հայի նախ յայն օրհնութի̃, զորմէ ասաց այլուր մարգարէն * 'ի բերանոյ մանկանց տղայոց կատարեցեր ,, զօրհնութիւն ‖. զի զայս օրհնութի̃ ա̃ծ եարկ 'ի բերանս նոցա. որ և կատարեցաւ 'ի մտանել տեառն 'ի տաճարն յաւուր ծաղկազարդի. զոր տեսեալ մարդկային բնութե̃ աղաղակեաց, թէ եարկ տէր զօրհնութիւն նոր 'ի բերանս մանկանց խնց։ Հայի երկրորդ յայն օրհնութի̃ նոր, որով աղաղակեմք աբբայ հայր. զի հոգին սուրբ արկ և արկանէ 'ի սիրտ մեր՝ աղաղակել զայն։ Հայի երրորդ 'ի նոր պատուիրանս տեառն իբրև յօրհնութիւն։ Հայի եւս և յօրհնութիւնսն զորս եարկ 'ի մեզ ա̃ծ բանիւք առաքելոց և ուսմնութ̃ք նոցա։ Զայս եղեալ մարգարէին՝ հայի յառաջին բանն. և ըստ նոյնի համեմատութե̃ խօսելով ասէ.

Է. Տեսցեն բազումք և երկիցեն. և յուսասցին 'ի տէր. Երանեալ է այր՝ որոյ անուն տ̃ն յոյս է նորա.

Ի նախակարգեալ չորեսին համարան երկու ինչ տեսանիք. մի՝ մտանութ̃ի 'ի թշուառութ̃ի, երկրորդ ազատութ̃ի 'ի թշուառութ̃է անտի խնամօքն ա̃յ ե̃ւ յուսալոյ 'ի նա, եւն։ Հայելով յառաջինն ասէ.

Տեսցեն բազումք՝ և երկիցեն։ Այսինքն, տեսեալ բազմաց զմտանիլս իմ կամ զմտանիլ այլոց 'ի գուբ տառապանաց 'ի կաւ տղմոյ և 'ի տիղմ թշուառութե̃ վասն մեղաց, սոսկասցին, զի մի և ինքեանց լիցի անկանիլ 'ի նոյն, և կամ երկիցեն 'ի տեառնէ՝ դողցէ և ինքեանց ոչ խնայեսցէ։ Հայելով ապա և յերկրորդն ասէ.

Եւ յուսասցին 'ի տէր։ Այսինքն յերկնչելն անդ յանկանելոյ 'ի գուբ՝ միանգամայն և յուսասցին 'ի տէր. կամ եթէ անկեալ իցեն 'ի գուբ. մի յուսահատեսցեն՝ այլ հայելով յողորմութ̃ի և 'ի բարութ̃ի տեառն քաջալերեսցին և զյոյս իւրեանց 'ի նա դիցեն. որով ոչ միայն գտցեն զփրկութ̃ի, այլ և երանելի լինիցին. զի յուսոյ է հաստատել յերանութ̃ի. վասն որոյ ասէ, Երանեալ է այր, որոյ անուն Տեառն յոյս է նորա։ Որպէս ասէր. Ճշմարտապէս երանելի նա է՝ որ զյոյս իւր ոչ է եդեալ ՚ի սնոտի ինչ, այլ ՚ի տէր ամենակալ և ամենաբարի. զի այսպիսիս թէև ներգործութեամբ չզգայցէ զերանութիւնն զոր ունի, բայց անտարակոյս հասցէ յայն. (զորմէ տես և ՚ի սաղ՛. ա. 1. և ճժը. 1. 2.)

Իսկ յասելն աստ անուն Տն՝ բառդ անուն՝ բազում օրինակաւ կարէ նշանակել. մի՝ փոխանակ նորին իսկ Տեառն՝ որպէս թէ ասէր. յոյս նորա տէր է։ Երկրորդ՝ փոխանակ այնր, որով յօգնութիւն կոչի տէր առեալ զանուն նորա ՚ի բերան. որպէս թէ ասէր. երանեալ է այր որ կոչէ ինքեան յօգնութիւն զտէր։ Երրորդ՝ փոխանակ կարողութեան այ կամ տեսչութեան նորա, որպէս թէ ասէր. երանելի է նա, որոյ յոյս է կարողութիւնն այ կամ տեսչութի նորա։ Իսկ բառդ նորա՝ է որպէս բացայայտիչ բառիդ որոյ, և դնի իբր զարդ. որպէս թէ եդեալ էր. երանեալ է այր, որոյ յոյս է անունն տեառն, և ոչ թէ սնոտի ունայնութիւն կենցաղոյս. զոր և յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

Ե. Ո՛չ հայեցաւ նա ՚ի նանրութիւնս. և ոչ ՚ի մոլութիւնս սուտս։

՚Նանրութեամբ իմացեալ լինի աստ նախ՝ այնպիսի ինչ՝ որ ունայն է ՚ի բարեաց, երկրորդ՝ այնպիսի ինչ՝ յորմէ ոչինչ օգտի մարդ, այլ մանաւանդ վնասի, որպիսի են և սնոտի զբաղմունք։ Իսկ սուտ մոլութի իմացեալ լինի նախ այն ինչ՝ որ թէպէտ և երևի թէ իցէ բարեօք լի, բայց որ մերձենայ ՚ի նա՝ մոլորի և մոլի, այսինքն ընդդէմ ուղիղ ճանաչման գործէ և խօսի. երկրորդ՝ իմացեալ լինի խաբեբայութիւն բանից կամ պատրանք կենցաղոյս. և կամ ՚ի թանձրացեալն առեալ՝ իմացեալ լինի նա՝ որ խաբեբայ է և մոլորեցուցիչ։ Եւ զի այր արդար ոչ յարի յայսպիսիս, վասն այսորիկ ասէ.

Ո՛չ հայեցաւ նա ՚ի նանրութիւնս. և ոչ ՚ի մոլութիւնս սուտս։ Այսինքն ոչ հայեցոյց զմիտս իւր ՚ի նանիր և յանօգուտ իրս, և զյոյս իւր ոչ եդ ՚ի նոսին։ Նաև ոչ հայեցոյց զինքն յայնպիսի ինչ՝ որ մոլի առնէ զհոգին. և կամ թէ ոչ հաւատաց խաբէբայ բանից։

Մարթ է աստ նանրութեամբ իմանալ նաև զկուռս, և սուտ մոլութեամբ զկախարդութիւն, զհմայութիւն, զերազաբանութիւն են. յորս յուսան որք յիմարք և թերեհաւատք։

Մարթ է դարձեալ նանրութեամբ իմանալ զդատարկ բանս. որոց վասն պարտաւորիմք համարս տալ 'ի դատաստանի ըստ տեառն, (մատ. ժբ. 36.) Իսկ սուտ մոլութ̃բ իմանալ զիմաստակութիւն բանից, որ ատելի առնէ զմարդն, ըստ այնմ. (սիրաք. լէ. 23.) * որ իմաստակաբար խօսի՝ ատելի է ||։

Իսկ որք երկիւղածքն են՝ հեռի կան յայսպիսեաց աստի, և ա̃ծայնոց ևեթ պարապին, զա̃ծայնոց խօսին, և միայն յա̃ծ ապաւինին. գիտելով՝ թէ նա միայն կարող է * առնել՝ որում ցանկան, և տալ՝ զոր խնդրեն ||։

Այս բան յարմարի և այնոցիկ՝ որք զհետ լինելով առաքինութեանց, կամ տաղտկալով յաշխարհէ ոչ հային 'ի նանրութիւնս, և եթէ հային ևս՝ ոչ յօժարին, այլ պժգան. զի ինքեանք յայլ մարդ փոխեալ՝ այլազգ տեսանեն զիրս քան զոր յառաջն համարէին։ Որպէս փրանկիսկոս պորճեան յետ թաղելոյ զթագուհին 'ի կրանադա, իբրև դարձաւ 'ի պալատ իւր, ասաց. տեսանեմ զամենայն ինչ փոփոխեալ 'ի պալատիս։ Ոչ էր փոփոխեալ պալատն, այլ ինքն էր այլափոխեալ՝ նողկալով 'ի վայելչութեանց կենցաղոյս. որով մեծութիւնք պալատին իւրոյ նանրութ̃ի երևէին նմա, մինչև ոչ ևս կամիլ հայել 'ի նոսին։

Իսկ որք յօժարին հայիլ 'ի նանրութիւնս և զբաղին 'ի ստութիւնս և 'ի սնոտիս, 'ի նոսին նանրանան, և նոքօք ծանրանան. և որչափ յարին՝ այնչափ վտանգին։ Թիթեռն հայեցեալ 'ի գեղեցկութիւն լուսոյ ճրագին՝ շրջան առնու զնովաւ, և 'ի յարելն 'ի նա տարփմամբ՝ այրի. եթէ հայիցիս և դու 'ի նանիր վայելչութիւնս աշխարհի, և յարեսցիս 'ի նոսա այրիս։ Հայեցաւ Եւա 'ի պտուղն, և յարեցաւ 'ի նոյն, և այրեցաւ։ Եթէ հայիլ կամիցիս՝ ծանիր և այնպէս մատիր. տրամաբան ես, քննիչ և որոշիչ. նաև զի սեղանաւոր ես ընտրութեան (կամ տապեց, սառաֆ ես.) ծանիր զնմանութիւն ոսկւոյն․ մաքիր ՚ի զուտ ոսկւոյն․ զայն ևս, և նովաւ վճարեա զպարտս քո ՚ի ծառայութեանն ա՟յ․ ապա թէ զնմանիս և զստութիւնս խնդրեսցես, պակասիս և վրիպիս։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և զօրութիւնք հոգւոյդ, այսինքն միտք քո և կամք ոչ ևս կարեն կատարել զհաճոյս նորա։ Գրի ՚ի գիրս Ելից (Ե. 12.) թէ որդիքն իսրայէլի սփռեալք ընդ երկիրն եգիպտոսի վասն ժողովելոյ զեղեգն ՚ի յարդ շաղախոյ՝ ոչ կարէին բովանդակել զգործն արքունի․ ըստ սմին և կարողութիւնք հոգւոյն, ես և զգայարանք յորժամ սփռին ընդ երկրաւորս զկնի եղեգանց ունայնութեան և նանրութե՟ աշխարհի՝ ոչ կարեն բովանդակել զգործն ա՟յ։ Ապաւինեաց յոյս ոչ է անունն ա՟յ ըստ ասելոյ մարգարէին ՚ի նախընթաց համարն, այլ անցաւորաց առօրեայ վայելումն։ Եթէ փոխանակ ՚ի նանրութիւն հայելոյ՝ հայէին յայն՝ որ արար զամենայն՝ ՚ի նա դնէին զյոյս իւրեանց, տեսեալ թէ քանի հզօր է և որչափ մեծ, անհաս և անճառ․ և առ ՚ի ցոյց այսր առաջի առնէ մարգարէն ըզգործս ամենակարողութեան նորա և անքննին խորհըրդոց նորին ասելով։

է. Բազում արարեր դու՝ տէր ա՟ծ իմ զսքանչելիս քո․
խորհրդոց քոց՝ ոչ ոք է որ նման է քեզ։

Առ փրկութիւն մարդկան, կամ առացից առ ՚ի հանել զազգ մարդկան ՚ի գբոյ տառապանաց և գերութե՟ և ՚ի տղմոյ թշուառութե՟՝ բազում ինչ արար ա՟ծ․ որպէս յայտ է յամենայն գիրս, մանաւանդ յայնս՝ որք օրինակէին զայս փրկութիւն, որպէս սքանչելին այն ազատութիւն որդւոյն իսրայէլի ՚ի ծառայութե՟ եգիպտացւոց, և այլ ևս բազմապատիկ գործք սքանչելեաց՝ որք զհետ եկին այնր․ ըստ որում գրի ՚ի գիրս Ելից և Թըւոց․ ՚ի սոսին հայելով ասէ։

Բազում արարեր դու՝ տէր ա՟ծ իմ զսքանչելիս քո։ Այսինքն, բազմացուցեր զգործս սքանչելիս առ փրկութե՟ մարդկան, այնպիսի խորհրդով և այնպիսի օրինակաւ, զոր բաց ՚ի քէն ոչ ոք կարող է առնել։ Որոյ վասն յաւելու և զբառդ քոյ՝ առ ՚ի ցուցանել՝ թէ զայնպիսի գործեր ա՟ծ իբր զիւր յատուկ գործ․ ուստի և այն գործք ոչ միայն յինքեանս, այլև յեղանակ գործելոյն՝ էին զարմանալի, և անհամեմատ եղանակի գործելոյ ո՛ և իցէ ստեղծուածոց։ Եւ զայս կամելով յայտնել՝ յարէ զկնի և ասէ։

Խորհրդոց քոց՝ ոչ ոք է որ նմանի է քեզ։ Միտքն է շարադրութ՟ի այսր հատուածոյ հայելով 'ի բառդ խորհրդոց։ Այլ գիտելի է. զի այս բառ՝ որ 'ի մերումս և յեօթ″. և 'ի լատ″. են. դնի 'ի տրական հոլովն, առնի զզօրութ՟ն ներգործականին. որպէս թէ եղեալ էր. ոչ որ նմանի է քեզ 'ի խորհուրդս քոյ. որ է ասել՝ զայնպիսիս խորհիս, և այնպիսի եղանակաւ խորհիս, մինչ զի ոչ որ 'ի խորհիլն նմանի քեզ. կամ թէ բարձր են յոյժ խորհուրդք քո, և ո՛ կարիցէ նմանիլ քեզ։

Մարթ է և ասել՝ թէ բառդ խորհրդոց՝ դնի աստ 'ի մերումս իբր յատկացուցիչ սքանչելեաց, որպէս թէ եղեալ էր. բազում արարեր զսքանչելիս խորհրդոց քոց. բառ որում դնի 'ի միում ձեռագիր սաղմոսի։

Խորհրդաբար այս բանս առի 'ի դէմս քի, զի նա միայն եկեալ յայտնեաց և եցոյց զկատարումն այնչափ սքանչելեաց և խորհրդոց, որք եղեն 'ի հին օրէնս, և բայց 'ի նմանէ ոչ ոք գտաւ՝ որ կարէր յայտնել. զորօրինակ՝ թէ առ ինչ էր օձն պղնձի. առ ինչ էր փրկիլն Իսահակայ 'ի ձեռն խոյի. առ ինչ էր պատառումն կարմիր ծովուն և յորդանանու. առ ինչ էր ասացեալն դաւթի * ծակեցին զձեռս և զոտս ||, և այլն։ Զայսոսիկ և զայլ բազմապատիկ խորհրդաւոր իրս և սքանչելիս և զաստուածաւոր բանս ոչ ոք կարաց նման քի բացատրել մեզ. ուստի իրաւամբ ասէ. * և խորհրդոց քոց, ոչ ոք է՝ որ նմանի է քեզ ||։ Եւ զի անթիւ էին այն սքանչելիք և խորհուրդք, զգլխաւորսն եւեթ 'ի մէջ բերէ մարգարէն. և նախ ասէ։

Է. Պատմեցի և խօսեցայ. և բազում եղեն քան զթիւ. Զոհս և զպատարագս ոչ հաճեցար. զմարմին հաստատեցեր ինձ. զողջակէզս և զվս՟ մեղաց ոչ խնդրեցեր։

Երկու ինչ եդ 'ի նախընթաց համարն, այսինքն են սքանչելիք զորս արար ա՟ծ. և խորհուրդք՝ զորս նա ինքն եցոյց. և զի մարթ էր այնչափ սքանչելեաց բառ որում էին գործք՝ անկանիլ ընդ պատմութ̃բ. և ընդ հակառակն՝ չէր հնար այնոցիկ խորհրդոց ըստ որում էին գաղտնիք այ̃, պատմաբանիլ, այլ միայն խորհեալ լինել, և խօսիւք ինչ միայն 'ի մէջ բերիլ. սմին իրի վասն առաջնոյն դնէ պատմել, և վասն երկրորդին խօսիլ, յասելն.

Պատմեցի և խօսեցայ. և բազում եղեն քան զթիւ. Այսինքն պատմեցի բանիւ և գրով զգործս սքանչելեաց քոց՝ զորս արարեր ընդ հարս մեր, ևս և ընդ մեզ. ապա զմտաւ ածեալ և զգաղտնի խորհուրդս քոյ՝ զորս ցուցեր 'ի սքանչելիսն յայտնիս առ 'ի կատարել 'ի ժամանակի իւրում, չկարացի պատմել, այլ միայն խօսիւք ասել ինչ զայնցանէ, և ցուցանել՝ թէ համայն այնոքիկ կարգեալ են յանճառելի իրս. բայց 'ի խօսիլս իմ ասէ զայնցանէ՝ տեսի զի այնոքիկ բազում էին քան զթիւ. այսինքն այնչափ բազում էին, և 'ի բազմումն անդ այնչափ բազում գաղտնիք պարունակէին, մինչև անցանել քան զթիւ. և չկարել ինչ 'ի համար արկանել, և ոչ իսկ մօտ հասանել. Կամ համառօտիւ ևս. թէև պատմեցի և խօսեցայ զսքանչելեաց և զխորհրդոց քոց, բայց ո՛չ կարացի հասանել 'ի թիւ նոցին. Զայս եդեալ մարգարէին՝ զարմանայ 'ի խորհուրդս իւր, և բոլորովին յափշտակեալ յա̃ծ՝ ստիպի մատուցանել նմա ինչ 'ի շնորհակալութիւն. այլ թէ զինչ մատուցէ՝ և զինչ ո՛չ, սկսանի յայտ առնել 'ի յաջորդ բանսն իւր, ասելով.

Ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար. 'Ի սկզբանէ անտի աշխարհի, որք միանգամ պաշտօն մատուցին այ̃՝ ձեռն արկին նուիրել նմա պատարագս, այսինքն ազնիւ ընծայս. ընդ որս է իմանալ և զխունկս և զկնդրուկս ևս. Նուիրէին նմա և զոհս ողջակիզաց 'ի կենդանեաց՝ առ 'ի ցուցանել՝ թէ զենմամբ կենդանեաց խոստովանէին զնա լինել տէր կենաց և մահու. և ըստ որում աւանդի յա̃ծաշունչ գիրս, սոյն այս սկզբնաւորեցաւ յաբելէ արդարոյ, զոր և հանդիսացոյց նոյ. և յետ նորա այլք. Իսկ 'ի տարածիլ կռապաշտութ̃ն մարդիկ որք սովորեալ էին այ̃ մատուցանել զզոհսն՝ սկսան կռոց մատուցանել զայնս. Այս իբրև եհան ա̃ծ զորդիսն իսրայէլի յեգիպտոսէ՝ կա-

մեղօք զգուշացուցանել զնոսա յարարողութէ զոհիցն հեթանոսաց՝ կարգ եդ 'ի նոսա, որպէս ուսանի 'ի գիրս ղեւտացւոց. որոշելով զհատուկ զոհս յողջակիզաց՝ եդեալ և յատուկ զոհս վասն քաւութեան մեղաց.
(ղեւ. Դ. 3 = 13. և Ե. 6. 7.)

[illegible] պատարագք և զոհք, եւս և ողջակէզք յինքեանս մատուցեալք չարժէին ինչ. և ոչ իսկ ընդունելի էին առաջի այ՟, և ոչ եւս * էին կարօղ զմաքրու„թեան կատարել‖. այսինքն բառնալ զմեղս. (եբր. Ժ. 1.) Եւ սակայն երկրորդք կարէին լինել ընդունելի. մի՝ զի էին օրինակ այնր պատարագի որ մատուցաւ 'ի վերայ խաչին զորմէ երկար խօսի պօղոս (եբր. Թ. Ժ. ԵՆ.) ուստի ասէ գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) * ոչ անբանիցն արիւն բաւական „ գոլով առ ներելն, այլ զի նկարեալ էր 'ի նոսա „ խորհուրդ արեանն քսի՟‖. Երկրորդ՝ զի էին ցոյց խոստովանելոյ զա՟ծ տէր ամենայնի, առաջին սկիզբն և վերջին վախճան. Երրորդ՝ զի էին նշան ներքին հպատակութեան կամաց նուիրողին. իբր զի նուիրօղն ըստ այժմուդ ասելոյ՝ այնու պատարագաւ խոստովանելով զա՟ծ ամենայնի տէր, նուիրէր զինքն 'ի հաճոյս այ՟ հպատակութ՟ե՝ 'ի ձեռն խոնարհութեան և սրբութեան. Եթէ սոքին պակասէին, այն նուիրմունք համարեալ լինէին խաղարկութ՟իք առաջի այ՟. զորմէ տես 'ի մարգարէութե եսայեայ. (Ա. 11. և երեմիայ Է. 21.) Վասն զի 'ի մատուցման զոհից 'ի հնումն անդ՝ ա՟ծ ոչ հայէր յայն՝ որ մատուցանիւր, այլ յայն՝ որ մատուցանէր. ըստ որոյ ասէ գիրն. (Ծնն. Դ. 4.) * հայե„ցաւ ա՟ծ 'ի հաբէլ, և (ապա) 'ի պատարագս նորա‖. զորմէ գեղեցիկ գրէ վանական վարդապետ ('ի մեկն. յոբ. գլ. խա.) Եթէ մատուցօղն հաճեալ էր ընդ հաճոյս այ՟. ա՟ծ եւս հաճէր ընդ զոհս նորա. եթէ նա ոչ էր հաճեալ ընդ այն, և ոչ ա՟ծ հաճէր ընդ նա. զի ըստ որում ասացաք՝ ա՟ծ ոչ հայէր յայն՝ որ մատչէր. այլ յայն որ մատուցանէր. զի որպէս ասէ բզնունիս վարդապետ ('ի մեկն. ղուկ. Է. 46.) * յայտ է ամենայն ուստեք՝ զի ոչ 'ի նուէրս հայի, „ այլ 'ի միտս մատուցողացն‖. [illegible] ասող հանգիսիւ մատոյց այ՟ զոհ՝ այլ զինչ ասէ նմա ա՟ծ բերանով ստանալի ․ * Եթէ հաճոյ իցէ տեառն ողջակէզ և „ զոհ իբրև զլսել ձայնի տ̃ն ․ ահա լաւ է ունկնդրու„ թ̃ի քան զզոհ ընտիր, և հնազանդութ̃ի քան զճարպ „ խոյոց ‖ ․ (Ա․ Թագ․ ԺԵ․ 22․) որովք յայտնի տեառնի՝ թէ հաճութ̃ն այ̃ որ 'ի զոհսն, հայի 'ի հաճութ̃ի մարդոյ ընդ հաճոյսն այ̃, ևս և 'ի հպատակութ̃ի կամաց նորա 'ի հնազանդիլ յամենայնի՝ զոր հրամայէ ա̃ծ ։ Ըստ բանիցս ըստ այսոցիկ յաւելու ասէ ․

Ընդ զոհս և ընդ պատարագս ոչ հաճեցար ․ Կամի ասել․ ոչ պահանջես յինէն՝ զի մատուցից քեզ լոկ զոհս և զպատարագս, զողջակէզս և զվասն մեղաց․ այլ պահանջես զի հնազանդեցայց հրամանաց քոց՝ և առ այս յարէ ․

Լսելիս հաստատեցեր ինձ ․ ողջակէզս և վասն մեղաց ոչ խնդրեցեր ․ Լսելեօք յայտ է թէ խնդրեալ լինի գործիք լսելոյ, որով և լինի հնազանդիլ․ և զի ըստ Ճարտասանից երբեմն անուն գործեաց դնի փոխանակ անուան այնր՝ որ գործեօք կատարի, կամ փոխանակ անուան գործողութեան, յայս ոճ դնէ աստ մարգարէն զբառդ **լսելիս**՝ այսինքն փոխանակ հնազանդութեան, կամ փոխանակ գործողութեան հնազանդութ̃ե, կամ փոխանակ այնր՝ որով լինի անսալ արտաքուստ և 'ի ներքուստ․ որպէս թէ ասէր․ հաստատութ̃բ կամեցար ընդունիլ յինէն զհնազանդութիւն և ոչ թէ զողջակէզս և զզոհս վասն մեղաց․ կամ հաստատեցեր յիս լսողութիւն 'ի լսել և 'ի հնազանդիլ կամաց քոց, և ոչ թէ անսալով կամաց իմոց՝ մատուցանել քեզ զողջակէզս ․

Իսկ եթէ ըստ ձայնին ասցի բառդ **լսելիս**, կամի ասել․ ետուր ինձ զլսելիս այսինքն զականջս՝ լսել նովաւ ըզպատգամս քո, ևս և ետուր ինձ զմիտս իբր զիմանալի ականջս՝ իմանալ այնու զկամս քո, և առնել զոր հրամայես ․

Լամբ״․ փոխանակ լսելեաց ընթեռնու մարմին՝ ըստ դնելոյ առաքելոյն և եօթ״․ և հայելով 'ի նախընթաց համարն, ուր յիշի սքանչելի խորհուրդն այ̃, փոքր մի այլազգ մեկնէ զայս բան․ և գրէ այսպէս․ * Այս „ է բազում և սքանչելի խորհուրդն այ̃, զի զոհ „ խնդրեաց 'ի տղայաբարուցն իսրայէլէ պէսպէս տա-

„ բազմալքն զոր գրեաց մովսէս. և յորժամ սկսանի տալ՝
„ ոչ հաճեցաւ. ասելով, ոչ ուտեմ ես զմիս զուարակաց
„ քոց. մատո՛ ա̃յ պատարագ օրհնութիւն, և կատարեա՛
„ բարձրելոյն ուխտ զքեզ. և այս է ասելն՝
„ մարմին հաստատեցեր ինձ. թէ զմարմինս կամացն
„ սպանանելն խնդրեցեր յինէն ողջակէզ վասն մեղաց.
„ և ոչ զանբան ոչխարացն հօյլս‖.

Զայս բան սաղմոսս 'ի դէմս որդւոյն ա̃յ վերածէ պօղոս առաքեալ 'ի թուղթն առ եբր. (Ժ. 5 = 10.) ասելով. որովհետև * ոչ կարէր արիւն նոխազացն և ցլուց
„ բառնալ զմեղս, վասն որոյ 'ի մտանել իւրում յաշխարհ
„ ասէ, զզոհս և զպատարագս ոչ կամեցար.
„ բայց մարմին հաստատեցեր ինձ. ընդ ողջակէզս և
„ ընդ վասն մեղացն ոչ հաճեցար‖

Ուր երկու ինչ գիտէ առաքեալն. մի՝ թէ զոհք և պատարագք որք մեծ իմն էին 'ի հին օրէնս, յինքեանս անպիտան ինչ էին, և ոչ զօրէին ջնջել զմեղս. զի էին ստուեր այնր պատարագի՝ զոր մատուցանելոց էր որդին ա̃յ. վասն որոյ և աստուած հաճէր ոչ ընդ այս, այլ ընդ այն՝ որոյ էին նոքա ստուեր. իսկ թէ նոքօք քաւութիւն լինէր մեղաց, և հաշտութիւն ընդ ա̃յ, այն էր ոչ յինքեանց, այլ 'ի պատարագէ անտի որդւոյն ա̃յ, և 'ի կատարելոյ նորա զամենայն հաճոյս հօրն երկնաւորի.

Երկրորդ՝ գիտէ ցուցանել, թէ 'ի սկզբանէ անտի մինչև 'ի մտանել որդւոյն ա̃յ յաշխարհ՝ այսինքն մինչև ցայն օր՝ յորում յղացաւ նա յարգանդի կուսին, չեղև որ 'ի մարդկանէ՝ որ յամենայն վայրկենի ըստ ամենայնի և յամենայնի կատարեաց ներգործութեամբ զկամս ա̃յ. զի ամենեքին խոտորեցան, և 'ի միասին անպիտանացան. իսկ որք կատարէինն՝ այն էր 'ի նորա շնորհաց՝ զոր տայր վասն արժանաւորութեան մեծի խորհրդոյն կատարելոյ 'ի մարդեղութեն.

Միայն նա ինքն որդին ա̃յ գտաւ՝ որ 'ի վայրկենէ յղութեան իւրոյ ինքնին իւրով զօրութ̃ք կատարեաց զամենայն հաճոյս հօրն երկնաւորի. և զի զայս ամենայն արար հնազանդելով 'ի կերպարանս ծառայի, և հուսկ յետոյ պատարագելով զինքն 'ի վերայ խաչին, առ որ պիտոյ են ընելիք առ 'ի հնազանդիլ, և մարմին առ 'ի պատարագել, վասն այնորիկ հայրն երկնաւոր հաստատեաց նախ զայն. այսինքն թէ կամեցաւ, զի մարմնասցի որդին, և այնու ունիցի զլինելն՝ զնուէրքն և զպատարագն առ 'ի լնուլ՝ այսինքն առ 'ի հնազանդել նմա յամենայնի, և առ 'ի կատարել զամենայն կամս նորա. ըստ այնմ. * Ես եկի ոչ զի զկամս իմ արարից ‖. և այլն. (Յովհ. Զ. 38. տես և 'ի գլ. Ե. 30. և Ը. 20. և այլն.)

Զայսուիկ եղեւ՝ ցուցանէ առաքելոյն, թէ որդին այ 'ի յղանալն անդ, զայս բան մարգարէին լցուցանելով ասացեալ իցէ առ հայր. գիտեմ զի ոչ կամիս զզոհս անբանից և զպատարագս անզգայից, այլ զամենակատար հնազանդութիւն ամենակատար հաճոյից. և զի զայս ոչ ոք կարէ, բայց եթէ ես, վասն այսորիկ մարմին հաստատեցեր ինձ. այսինքն արարեր՝ զի մարմնասցայց, և մարմնով հնազանդեցայց կամաց քոց յամենայնի. Զայս եղեւ հետեւեցուցանէ, և ասէ.

Թ. Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ գամ ես. 'ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ.

Ժ. Առնել զկամս քո Ած իմ կամեցայ, և զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ.

Այս եղանակ խօսից ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց եթէ զխնդութիւն յօժարութե առ կատարումն հաճոյիցն այ. Զի յայտ արարեալ նախ թէ ընդ որ հաճի Ած, և ընդ որ՝ ոչ, առաջի դնէ զյօժարութիւն առ այն միայն ընդ որ հաճի, և ոչ առ այն՝ ընդ որ ոչ հաճի. վասն որոյ ասէ.

Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ գամ ես. եւն. Որպէս թէ ասէր. որովհետեւ ոչ հաճեցար ընդ զոհս զենմանց, և ընդ պատարագս ընծայից՝ այլ զի հնազանդութիւն ընծայեսցի հրամանաց քոց, և կատարեսցին հաճոյք քոյ, զայս գիտելով՝ ասացի 'ի միտս իմ, թէ ահաւասիկ գամ ես. այսինքն ահաւասիկ պատրաստ եմ կատարել զհաճոյս քոյ. իսկ թէ ուր ուսանիցիր այս՝ յայտ առնէ ասելով.

Ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ. Գլուխք գրոց ասեն այլ և այլ գիրք, կամ այլ և այլ հատուածք ածաշնչ գրոց. զորօրինակ, գիրք ծննդոց, գիրք ելից. ևն. զի որքա են գլուխ գրոց. կամ այլապէս հատուածք, կամ այլ և այլ ձայնք գրոց. ուստի և ոմանք փոխանակ դնելոյ 'ի գլուխս գրոց՝ թարգմանեն, 'ի հատուածս գրոց. ոմանք ևս 'ի ձայնս գրոց. զի 'ի սոսա յայտնի գրի կամքն այ, այսինքն թէ զինչ կամի ած յիւրաքանչիւր մարդոյ. Ուստի և իւրաքանչիւրոք կարէ ասել. գրեալ է վասն իմ 'ի սուրբ գիրս, թէ զինչ պարտիմ առնել. և զի գրեալ է՝ թէ զոր կամի ած՝ զայն արասցուք, այսինքն զհրամանս նորա՝ զայս և զայն, վասն որոյ և մեզ պարտ է զայն կամիլ և առնել. ամին իրի յարէ զկնի, և ասէ.

Առնել զկամս քո ած իմ կամեցայ. Այսինքն՝ ուրախեաւ հաճիւ՝ զի առաւել զկամս քո, զոր յայտնեալ ես 'ի գիրս, կամիմ և ես, որպէս և կամեցայ իսկ առնել զայնս.

Հնար է սոյն զբառդ կամեցայ՝ որոշակի առնուլ. և զբառդ առնել յարել 'ի նախընթաց բանն այսպէս. Յայնժամ ասացի՝ թէ ահաւասիկ գամ առնել զկամս քո ած իմ. որպէս և 'ի գլուխս գրոց գրեալ է զայսմանէ. վասն որոյ և ես կամեցայ զայս, այսինքն կամեցայ կատարել զկամս քո, կամ լնուլ զհրամանս քո՝ ոչ սոսկ արտաքսապէս, այլև 'ի ներքուստ 'ի սրտէ. և առ այս յարէ.

Եւ զօրէնս քո 'ի մէջ որովայնի իմոյ. Զոր նախ կամս ասաց, աստ օրէնս դնէ. զի կամքն այ յայտնի լինին յօրէնս նորա. վասն որոյ և օրէնքն այ կոչին յածաբանից կամք նշանի, այսինքն նշան կամաց այ. Զայն զայս ասէ կամեցայ կատարել 'ի մէջ որովայնի իմոյ, այսինքն 'ի ներքս 'ի սրտի իմում. զի որովայնն է պարունակող ներքին մասանց. և զի անուն պարունակողին ըստ ճարտասանից դնի երբեմն փոխանակ անուան պարունակելոյն, յայս ոճ վարելով մարգարէն՝ փոխանակ դնելոյ զպարունակեալն՝ դնէ զպարունակողն, ըստ որոյ ասէ վանական վարդապետս ('ի մեկն. յոբ. ժե.) * որովայն զսիրտն „անուանէ ||.

Եւ պատճառ այսպէս խօսելոյն է յայտնել զգգուչութիւն կատարմանն կամացն ա՟յ · եթէ զի ոչ միայն 'ի սրտի անդ իւրում կատարել ցանկայ զկամս նորա , այլ և պահպանու խելք զգուշացեալ ունի զմիտս իւր՝ զի մի թուլասցի կամ գաղջասցի 'ի կատարմանէ կամացն ա՟յ ։

Զայս ամենայն եդաք հայելով նիւթապէս 'ի նկարագիրն · իսկ հայելով 'ի նշանակեալն , ցուցանի սովաւ յանձնառութիւն որդւոյն ա՟յ գալ յաշխարհ և մարդանալ , և նովին կատարել զկամս հօրն երկնաւորի , և փրկել զազգ մարդկան ։ Յոր միտս յառաջ բերէ պօղոս առաքեալ զայս բան · զի յառաջն եդ զնախագրեալ բանն , թէ * ոչ կարէր արիւն նոխազացն
„ և ցլուց բառնալ զմեղս , վասն որոյ 'ի մտանել
„ իւրում յաշխարհ ասէ · զզոհս և զպատարագս
„ ոչ կամեցար · բայց մարմին հաստատեցեր ինձ · ընդ
„ ողջակէզս , և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար ‖ ·
„ զայս եդեալ հետևեցոյց · * յայնժամ ասացի՝ թէ
„ ահաւասիկ եկի · 'ի գլուխ գրոց գրեալ է վասն իմ ,
„ առնել զկամս քո ա՟ծ ‖ ·

Ապա 'ի սոյն յարէ անմիջապէս ասելով · * վերագոյն
„ ասէ թէ ընդ զոհս և ընդ պատարագս և ընդ ողջակէզս
„ և ընդ վասն մեղացն ոչ հաճեցար , և ոչ
„ կամեցար՝ որ ըստ (հին) օրինացն մատչէին · ապա
„ ասէ · ահաւասիկ գամ առնել զկամս քո ա՟ծ ·
„ մերժէ զառաջինն , զի զերկրորդն հաստատեսցէ ‖ ·
(եբր · Ժ · Ե = 10 ։) Որով ցուցանէ առաքեալն թէ որչափ ինչ առնէին մարդիկ , ոչ կարէին նոքօք հաշտել ընդ ա՟յ , նոյնպէս և 'ի ձեռն զոհից ոչինչ օգտէին 'ի փրկութիւն · զի որք մատուցանէինն , անկեալ էին 'ի շնորհաց , և մերժեալ էին յա՟յ վասն մեղացն ադամայ · և 'ի թշնամութեան գոլով ոչ կարէին՝ ոչ հաշտութեան զոհ մատուցանել , և ոչ հաճոյական ինչ ընծայել ։

Կամեցաւ ապա հայր միջնորդ հաշտութեան կացուցանել զորդին իւր միածին , և պատարագաւ նորա փրկել զմարդիկ ։ Նա 'ի յանձն առնուլ որդւոյն՝ հաճեցաւ հայրն ընդունել զզոհս և զպատարագս մարդկան · ոչ զի էին զոհք և պատարագք մարդկան , այլ զի որպէս ասացաք՝ էին օրինակ պատարագի որդւոյն իւրոյ զօրս կանխաւ նկարագրէր ։

Զայս յանձնառութիւն որդւոյն ըստ օրինակի յանձնառութեան մարդոյ ձեւացուցանէ մարգարէն. իբր թէ խոստակցելով իմն ասել որդւոյն առ հայր. որովհետեւ կամիս փրկել զմարդիկ պատարագաւ իմով, և վասն այնորիկ հաճոյ է քեզ՝ զի մարմին զգեցայց, ահաւասիկ եկի, այսինքն յանձն առի զգենուլ զմարմին, և կատարել այնու զկամս քո ։

Եւ զի 'ի գալ նորա և 'ի պատարագիլ՝ խափանեցան զոհք և ողջակէզք. վասն այնորիկ յաւել ասել առաքեալն 'ի վերայ. թէ * մերժէ զառաջինն զի զերկ-
„ րորդն հաստատեսցէ ‖. զի յայտ է թէ մերժեալ եղեն յիշատակեալ զոհքն և ողջակէզքն, և հաստատեցաւ ճշմարտութիւնն. * որով կամօք (ասէ)
„ և մեք սրբեցաք 'ի ձեռն պատարագի մարմնոյն յիսի
„ քսի միանգամ ‖. այսինքն 'ի կատարել կամացն այ, և 'ի միանգամ պատարագիլ որդւոյն, սրբեցաք և մեք 'ի մեղաց. Եբ. Ժ. տես զոր զկնի գրէ առաքեալն յայն գլուխ. մանաւանդ թէ զբոլոր թուղթն գրեալ առ եբրայեցիս ։

Յասացելոցս յայտնի տեսանի և գերազանցութիւն նորոյս քան զհնոյն. վիճակ նորոյս իբր կենդանւոյ, իսկ հնոյն իբր գծոյ. Պատարագք հնոյն ստուեր. իսկ նորոյս իսկութիւն. Վասն հնոյն ասէ. ոչ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուարակս, և ոչ 'ի հօտից քոց նոխազս. և դարձեալ՝ ընդ ողջակէզս ոչ հաճեցար, և ոչ կամեցար. իսկ վասն նորոյս ասէ՝ թէ բազում առաւելութբ հաճեցաւ. որպէս երկար գրէ առաքեալն. (յեբր. է. Ժ. և այլն, տես 'ի սարգիս շնորհալի. ա. պետ. բ. Ե. ճառ Դ.) Յայս իսկ տէրն մեր բազում ինչ 'ի հնոյ անտի կատարեաց առ 'ի կատարելութիւն նորոյս, մանաւանդ 'ի զոհ գառինն. զի եբրայեցիք որպէս գրէ բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա.) պատուիրեալ էին 'ի տասն ամսոյն առնուլ զգառն, և յետ իբր հինգ աւուր զենուլ 'ի չորեքտասանն լուսնի. բայց սմին և տէրն մեր հինգ աւուրբք յառաջ քան զզատիկն եկն 'ի քաղաքն՝ ուր չարչարելոց էր. և 'ի զատկին զենաւ. զի յայտ է թէ վեց աւուրբք յառաջ էած զնա քոյրն ղազարու. և 'ի հետևեալ աւուրն գնաց 'ի

քաղաքն․ Այլևս կատարմամբ կատարելագործեալ եցոյց զնուիրումն խորհրդոյ նորայս պատարագի․ զի մի և նոյն պատարագ գոլով՝ յամենայն աւուր յամենայն տեղիս անպակասաբար մատուցանի։ Այնպէս և յայլ բազում իրս 'ի հնոյ անտի կատարելով կատարելագոյնս կացոյց զնոսա․ ըստ որում և գրեալ էր զնմանէ
'ի գլուխս գրոց։

Խորհրդաբար, բառդ [illegible]՝ կամ ըստ ասորւոց բառդ [illegible]՝ հայի աստ 'ի քն ըստ կրկին տեսութեց․ Նախ՝ ըստ այնմ, զի նա է գլուխ կամ սկիզբն ամի այնոցիկ՝ որք գրեալ են 'ի գիրս կենաց․ յոր միտս կամի ասել․ 'ի գլուխն ամենայնի 'ի քն՛ գրեալ տեսանի, կամ յայտնի լինի՝ թէ զինչ կամիս զի արարից 'ի կատարել զհաճոյս քո։ Երկրորդ՝ ըստ այնմ զի որ ինչ գրի 'ի գիրս սուրբս՝ նա է գլուխ այսինքն վախճան ամի․ որոյ վասն գրեցաւ այն ամ․ կամ թէ առ նա հային ամենայն բանք գրոց, կամ եւս թէ առ 'ի դաշնակութի նորա են գրեալ, կամ թէ 'ի շնորհս նորա․ կամ թէ որինչ գրեալ էին 'ի սուրբ գիրս՝ եկեալ 'ի գլուխ տարաւ զամենայն․ որպէս յայտ է յաւետարանի․ (ղուկ․ իդ․ 27․ և 45․) վասն զի որպէս գրէ գէորգ վարդապետ․ ('ի մեկն․ եսայ․) * կատարած օրինացն քն է․ որ և ասաց՝ թէ մինչեւ վասն իմ գրեաց‖։ Յայս իսկ նա ինքն յորդորեաց քննել զգիրս․ (յովհ․ ե․ 29։)

Յարմարական մեկնութի, բառդ [illegible] կամ [illegible]՝ հայի աստ 'ի սկիզբն գրոց կրկնակի․ մի՝ 'ի սկիզբն բոլոր ածաշնչի․ զի գրի անդ՝ բանիւն այ լինել ամենայնի․ եւս և 'ի սկիզբն անդ դնի մարգարէութի մարմնանալոյ նորա, զոր գուշակեաց աստ։ Երկրորդ՝ հայի 'ի գլուխ և 'ի սկիզբն նոյն իսկ սաղմոսին․ զի այն բանք ըստ լրութե առեալ հային 'ի քն․ ըստ որում նա ինքն միայն գտաւ ճշմարտիւ երանեալ ոչ միայն ըստ կատարելութեան երանութե, այլ և ըստ կատարելոյ զամենայն
կամս հօր իւրոյ։

Բարոյապէս, բառդ [illegible]՝ հայի 'ի սկիզբն գրելոյ՝ այսինքն առաջադրելոյ, ասելով՝ ահաւասիկ գամ ես առնել զկամս քո ած իմ․ և զայս առաջադրութիւն անէ պարտ է առնել ոչ արտաքսապէս, կամ սոսկ իբր աւելորդաբար, այլ 'ի մէջ գլխայնի, այսինքն 'ի ներքս 'ի հոգին հաստատութիւն. ոչ իբր արտաքին նիւթ, այլ իբրև ճշմարտութիւն. այս թէ ոչ՝ ոչ լինի այն առաջադրութիւն, այլ պատկեր առաջադրութեան. իսկ պատկերն ոչինչ գործէ։ Յառաջադրելդ զմտաւ զքեզ 'ի գործել, և ոչ թէ սոսկ 'ի կամել. զի գլխաւորն է կամելն, այլ դժուարին է գործելն. քանզի 'ի գործելն ներկայ լինի առարկայն և պարագայք առարկային, որք դժուարացուցանեն զգործն։ Որ օրինակ. կամիս և առաջադրես օգնել սմա, թողուլ նմա, և այլն. 'ի գալ ատենին՝ ընդ առաջ ելանէ քեզ այնպիսի ինչ, կամ կիրք 'ի սրտի, որ խափան լինի գործոյն, և երբեմն 'ի չարն եւս խոտորեցուցանէ. որպէս ասաց ոմն. Ես * Հա,,նապազ զբարին կամիմ, այլ 'ի վատթարն նկրտիմ ‖. ըստ որում և առաքեալն ասէր. * կամքն առաջի կան ինձ, և առնել զբարին ոչ ‖. (Հռովմ. Է. 18.) և սակայն որպէս նա գրէ. * եթէ յօժարութիւնն առաջի,,կայ ըստ գոյին ընդունելի է, և ոչ եթէ ըստ չգոյին ‖. (Բ. Կոր. Ը. 12.) Ուրեմն այնպէս պարտ է մեզ առաջադրել՝ զի կարասցուք կատարել. և 'ի կատարելն կատարիլ. այսինքն թէ կատարելով զբարին՝ կատարելագործիլ 'ի նմին։ Այսմ ամենայնի հետևեցուցանէ մարգարէն, և ասէ։

Ժա. Աւետարանեցի զարդարութիւն քո յեկեղեցւոջ մեծի. ահա զշրթունս իմ ոչ արգելից 'ի քէն.

Երկու ինչ էր տեսանել առաւելապէս 'ի դաւիթ. մին էր այն, զի եղև փրկիչ իսրայելի, որպէս յայտ է 'ի գործոց նորա. և միւսն էր այն՝ զի եղև ազդարարող և հռչակող ամենայն օրինաց. որպէս և եղև օրինակ որդւոյն այ, որ մարդանալովն և կատարելով ըզկամս հօրն՝ երկու ինչ արար ազգի մարդկան. մի՝ զի փրկեաց զնոսա 'ի գերութենէ սատանայի. և մի ևս՝ զի քարոզեաց և ուսոյց զճանապարհն արքայութեան. որով ոչ միայն եղև փրկիչ ամենայնի, այլ և առաջնորդ առ յաւիտենականն կեանս։

Արդ՝ զայն ինչ որ ըստ ինքեան հայէր 'ի փրկութիւն՝ մարգարէն եդ 'ի վերոյ. այսինքն է պատարագիլ որդւոյն այ, և այնու փրկել։ Իսկ որ հայէր առ քարոզութիւն՝ դնէ աստ այնպիսի օրինակաւ՝ որ նիւթապէս վէրածի 'ի դէմ գաւթի, և խորհրդարար 'ի դէմ քոյ, յասէն։

Աւետարանեցի զարդարութիւն քո յեկեղեցւոջ մեծի։ Արդարութիւնք իմացեալ լինին աստ նախ օրէնքն այ, որք 'ի գիրս սաղմոսաց բազում անգամ կոչին արդարութիւնք, ըստ որում արդարութեամբ են եդեալ։ Երկրորդ՝ իմացեալ լինին գործք արդարութեան՝ զորս պահանջէ ած յիւրաքանչիւր մարդոյ։ Երրորդ՝ կարեն իմացեալ լինել նաև ողորմութիւնք այ. ըստ որում 'ի թարգմանութիւնս ինչ՝ ողորմութիւն և արդարութիւն 'ի տեղի միմեանց դնին 'ի սաղմոսի։ Չորրորդ՝ եզակի առեալ՝ արդարութիւն իմացեալ լինի աստ լիակատար հատուցումն այն, զոր հատոյց որդին այ վասն մեղաց մերոց. որով և արդարացոյց զմեզ։ Զայսպիսի արդարութիւնս ասէ **աւետարանեցի յեկեղեցւոջ մեծի։**

Իսկ աւետարանելն է խօսիլ յայտնապէս զայնպիսիս՝ որք են աւետիք մեծի իրիք բարւոյ. կամ քարոզել զայնպիսի վարդապետութիւն՝ որ է աւետաւոր փրկութեան. և զի 'ի քարոզել տեառն մերոյ նոյնպէս և դաւթի զարդարութիւնս, այնու աւետիս տայր փրկութեան. վասն այնորիկ ասէ. աւետարանեցի զարդարութիւնս քո՝ ոչ 'ի ծածուկ, այլ յայտնի. ոչ առաջի միոյ կամ երկուց, այլ բազմաց, զորս կոչէ **եկեղեցւոջ մեծի**. (զորմէ տես 'ի սաղ. իե. 12.) Այլ զի ցուցցէ թէ միշտ յօժարեալ էր 'ի այն, յաւելու և ասէ.

Ահա շրթանց իմոց ոչ արգելից 'ի քէն։ Ահա ասելով ցուցանէ զպատրաստական յօժարութիւն սրտի իւրոյ. սովին յօժարութեամբ ասէ ոչ երբէք արգելից զշրթունս իմ 'ի քէն. այսինքն ոչ թողից զշրթունս իմ, զի լռեսցեն 'ի խօսելոյ զայնպիսիս՝ որք հաճոյ են քեզ, կամ որք հային առ քեզ։

Եթէ այս բանք 'ի բերանոյ քոյ իմասցին ասացեալ, շրթամբք իմացեալ լինին խորհրդարար առաքեալքն, և ամենեքին նոքա, որոց տայ ած զհոգի սուրբ և զբան 'ի բանալ բերանոյ, ահա ասէ ոչ դադարեցուցից զնոսա 'ի քարոզելոյ զճշմարտութիւն քո։ Եւ թէ յիրաւի ինքն եւս զայն առնէր՝ վկայ կոչէ զնա ինքն զած, և ասէ.

ժբ. Տէր դու գիտացեր, զի զարդարութիւնս քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում. զճշմարտութիւն քո և զփրկութիւն քո.

ժգ. Ասացի՛ և ոչ թագուցի զողորմութիւնս քո. և զճշմարտութիւնս քո 'ի ժողովրդենէ մեծէ.

Ի սաղ. ճժը. 11. ասաց մարգարէն. * 'ի սրտի իմում թագուցի զբանս քո ||. իսկ աստ ասէ * ոչ ծածկեցի 'ի սրտի իմում զարդարութիւնս քո ||. տարբերութիւնն յայտ է՝ զի այն էր վասն իւր, իսկ այս վասն այլոց. քանզի անդ ծածկելն վասն այնորիկ էր՝ զի զգուշասցի 'ի կատարել զօրէնս, և մի մեղիցէ ընդդէմ այնմ. իսկ աստ ոչ ծածկելն ոչ էր վասն այնորիկ՝ զի ինքն զգուշասցի, այլ զի այլք զգուշասցին. Ուստի որպէս այն ծածկելն բարի էր վասն ինքեան օգտի, այսպէս և այս ոչ ծածկելս բարի էր վասն այլոց. և այնու նաև վասն իւր էր բարի. զի ունէր այնու առնուլ վարձս. որովհետև գործէր այնու զգործ արդարութե. զի ոչ ծածկելն զհաճոյս ա͞յ, այլ այլոց ևս յայտնել՝ առ գործս արդարութեան հայի.

Այլ քանզի կան՝ որք յորժամ ոչ տեսանեն մարթաւոր ինչ շահ, ծածկեն զբանսն ա͞յ 'ի սրտի իւրեանց, ոչ զի ինքեանք պահեսցեն ըստ նախադրելոցդ, այլ զի մի այլոց տացեն զոր ինքեանք ոչ պահեն. որով և այն բան ծածկեալ 'ի սիրտ նոցա նեխի, այսինքն թէ լինի պատճառ դատապարտութեան նոցին. Եւ զի մարգարէն ընդ հակառակն այսր գործէր, վասն այսորիկ վստահութեամբ իմն խօսի առ ա͞ծ, և ասէ.

Տէր դու գիտացեր, զի զարդարութիւնս քո ոչ ծածկեցի 'ի սրտի իմում. զճշմարտութիւն քո՝ և զփրկութիւն քո. Ուր արդարութեամբ խառնեալ լինին այն բանք, որք յայտնեն զարդարութիւնս ա͞յ. կամ յայտ առնեն՝ թէ ա͞ծ արդար է 'ի բանս և 'ի գործս իւր. զայսպիսի բանս ասէ ոչ թագուցի 'ի սրտի իմում. որ է ասել. ոչ արարի ես ըստ օրինակի նոցա, որք ծածկեն յինքեանս զբանս քո՝ զյայտնիչս արդարութեան քո, այլ յայտնապէս քարոզեցի.

Իսկ ճշմարտութի՟ խնամոց պահպանութեան խօսմանցն ա՟յ, և փրկութեամբ զկամքն ա՟յ փրկել զմարդիկ ։ Զայսոսիկ ասէ քարոզեցի, ցուցանելով ամենեցուն՝ թէ զիարդ հաւատարիմ ես 'ի հատուցանել ըզվարձս այնոցիկ որք առնեն զկամս քո, և զիարդ ողորմած ես և գթած 'ի փրկել զայնոսիկ՝ որք յուսան 'ի քեզ ։ Եւ առ 'ի հաստատուն ցուցանել զբան իւր՝ ասէ ․

Բայց և ոչ թաքուցի զողորմութիւնս քո . և զճշմարտութիւնս քո 'ի ժողովրդենէ մեծէ ։ Որովհետև 'ի վերոյ ասաց ոչ ծածկեցի, հետևեցուցանէ և ասէ . ոչ թաքուցի, այսինքն քարոզութիւն յայտնեցի, և ոչ իւիք թաքուցի զողորմութիւնս քո և զճշմարտութիւնս քո, այսինքն զգործս ողորմութեան քո և զբանս ճշմարտութեան քո 'ի մարդկանէ՝ առաւել ևս 'ի ժողովրդենէ մեծէ, այսինքն յիսրայելէ ։ Եւ քանզի որ քարոզեն այլոց, կարօտին ա՟ծային օգնութեան և պահպանութեան, ևս և ողորմութեան և ճշմարտութեան, սմին իրի աղաղակէ մարգարէն առ ա՟ծ, և ասէ ․

ժդ. Բայց դու տէր մի հեռի առներ զգթութիւնս քո յինէն . զի ողորմութիւն քո, և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցին զիս ․

Գթութիւն և ողորմութիւն թէպէտ և երբեմն 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին, բայց զանազանին երեքումբք . նախ՝ զի գթութիւնն հայի 'ի ներքին բարի շարժումն սրտի . իսկ ողորմութիւնն 'ի տարածումն շարժման սրտի առ արտաքս ։ Երկրորդ՝ զի գթութիւնն հայի առ ազգայինս և առ մերձաւորս . իսկ ողորմութիւնն հայի առ ամենեսին ։ Երրորդ՝ զի առարկայ գթութեան է փաղաքշանութիւն բարւոյ ինչ՝ որում կարօտի ընդունողն, իսկ առարկայ ողորմութեանն է փաղաքշանութիւն զերծուցանելոյ զոք 'ի թշուառութենէ . իբր զի գթութիւնն առ այն լինի՝ յորում ըստ ինքեան ոչ մտանի թշուառութիւն, այլ միայն կարօտութիւն իւիք բարւոյ . և եթէ կայցէ թշուառութիւն՝ այն երկրորդաբար մտանի . իսկ ողորմութիւն առ այն լինի, յորում ըստ ինքեան մտանի թշուառութիւն, այսինքն ողորմելի վիճակ ինչ, զոր բառնայ ողորմութիւն ․

Բայց երբեմն այլով իւիք ևս զանազանին 'ի միմեանց գթութիւն և ողորմութիւն՝ հայելով յեբրայականն, և 'ի թարգ". եօթ". իբր զի գթութիւն ըստ նոցա դնի երբեմն փոխանակ ներգործութե ողորմութե, իսկ ողորմութիւնն փոխանակ այնր՝ որով լինի ողորմիլ. (որպէս ասացեալ է մեր 'ի սաղ. իդ. Ե. և ունիք ևս առել 'ի սաղ". Ծ. Ա.) Նա թուի թէ ասէ ես ըստ այսմ յետին զանազանութե առնու. յաւելն.

Դու Տէր մի հեռի առներ զգթութիւնս քո յինէն. Որպէս թէ ասէր. ահա ես ոչ թաքուցի զողորմութիւնս քո յայլոց. արդ և դու ես մի թաքուցաներ յինէն զգթութիւնս քո այսինքն զգործս ողորմութեան քո, որ է ասել. մի անտես առներ 'ի ցուցանել առ իս զգթութիւն քո, և զայս յայտնապէս ես առաջի դնէ ասելով.

Ողորմութիւն քո, և ճշմարտութիւն քո յամենայն ժամ ընկալցին զիս. Յայսմ բանի ողորմութի իմացեալ լինի ողորմածութիւն այ, իսկ ճշմարտութի ուղիղ և անմոլար առաջնորդութի նորա կամ հաւատարմութի խոստմանն. որք ասէ ընկալցին զիս, այսինքն 'ի վեր առնուցուն զիս յընկղմանէ թշուառութե 'ի յանդորրութիւն կենաց. և այս՝ յամենայն ժամ. զի ցորչափ կեամք 'ի մարմնի՝ միշտ կարօտիմք ողորմութեն այ և ճշմարտութեան նորա. ողորմութեան՝ առ 'ի զերծանիլ 'ի թշուառութէ, և գտանել զփրկութիւն. և ճշմարտութեան՝ առ 'ի ոչ սայթաքել 'ի կրկին իւր, այլ ուղիղ առաջնորդիլ 'ի բարին, և յապահովլի ժամանել 'ի կեանսն յաւիտենականս, զոր խոստացեալ է մեզ այ. Դարձեալ՝ կարօտիմք ողորմութեանն այ՝ առ 'ի լնուլ զպակասութի մեր զհոգեւոր և զմարմնաւոր. և ճշմարտութեն այ, առ 'ի ոչ խաբիլ 'ի ստութէ կենցաղոյս. եւ և առ 'ի զգուշանալ 'ի բազմադիմի չարեաց կամ փորձանաց՝ որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ. Զայս եղեալ մարգարէն, և տեսեալ թէ պաշարեալ կայ 'ի չարեաց և 'ի թշուառութեց, տարածանէ զանձն առաջի այ, և ասէ.

ԺԵ. Շուրջ եղեն զինեւ չարք՝ որոց ոչ էր նոցա թիւ. հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

ԺԶ. Բազմացան եղեն քան զհերս գլխոյ իմոյ. և սիրտ իմ եթող զիս։

Բառդ չարք՝ եթէ առաւել լիցի 'ի թանձրացեալն, նըշանակէ զչար անձինս. իսկ եթէ առաւել լիցի 'ի վերացեալն, նշանակէ զպէսպէս չարիս. որպէս դնի աստ յեբրայականն և յայլ ամենայն թարգմանութիւնս. եւս և 'ի Նարեկին, յասել նորա ('ի բանն. Ծ.) * Հասին չարիք ինձ շուրջանակի ||. Այլ զի բազում եղեն այսպիսիք՝ որ պաշարեցին զԴաւիթ, վասն այսորիկ ասէ.

Շուրջ եղեն զինեւ չարք՝ որոց ոչ էր նոցա թիւ. (կամ ըստ տպագրեալ սաղմոսաց և այլ քանի մի ձեռագրաց. որոց ոչ գոյր թիւ.) Այսինքն այնչափ բազում եղեն չարք՝ որք պաշարեցին զիս, մինչև անթիւ լինել. ոչ զի իրօք անթիւ էին, այլ զի վասն բազմութեանն անթիւ գոլ ասին, այսինքն դժուարաթուելի. որպէս հեր գլխոյ անթիւ ասի վասն կարի բազմութեան և դժուարաթուելի լինելոյ. յոր միտս ասէ Նարեկացին ('ի բանն. Դ.) * Իսկ մեղանք իմոց յանցանաց անթիւք. զորս անհնար է առնուլ 'ի միտ ||. Արդ քանզի 'ի պաշարել այնչափ արտաքին չարեաց՝ հասին և ներքինք և մեծամեծք 'ի վերայ Դաւթի, վասն որոյ յաւելու զկնի և ասէ։

Հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել։

Աստանօր բառդ անօրէնութիւն՝ հայելով 'ի դերանունդ իմ՝ երկակի կարէ առաւել լինել. մի՝ փոխանակ մեղաց ըստ եբր". և ըստ այսմ կամի ասել. յետ փոքր ինչ հանգչելոյ 'ի հալածանաց Սաւուղայ, և 'ի բազում վտանգից պատերազմաց՝ անօրինեցայ բազմապատիկ օրինակաւ. որով զրեթէ թմբեցայ. մինչ զի իբր առ մի կացեալ յանօրէնութեան իմում ոչ կարացի տեսանել։ Երկրորդ՝ փոխանակ պէսպէս վտանգից փորձութեանց, կամ փոխանակ չարեաց. ըստ որոյ ասէ Նարեկ ('ի բանն. ԾԵ.) * Ժամանեցին ինձ չարիք և

„ Ես ոչ կարացի ճանաչել ըստ սաղմոսողին ‖ . զի 'ի խաւարի գոլով ոչ տեսի . Ելլադդ՝ փոխանակ պատժոց՝ որք հասին վասն անօրէնութեց . և այս առումն երևի լինել առաւ հարազատ . և ըստ այսմ կամի ասել . պէսպէս պատուհասք եկին 'ի վերայ իմ վասն անօրէնութեանց իմոց . և ես 'ի սկզբան մինչչև էին եկեալ՝ ամենևին ոչ կարծէի թէ այնպիսիք հասցեն . վասն որոյ և ոչ կարացի տեսանել, այսինքն նախատես լինել . այլ ոմանք զոչ կարելն իմանան փոխանակ ոչ կամելոյ . որպէս յասելն զքնէ , * ոչ կարէր անդ և ոչ մի „ ինչ զօրութիւն առնել ‖ . (մարկ . Զ . Ե .) Ո՛ ի որպէս ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն . ա . յովհ . Զ . 9 . ճառ Ե .) * զոչ կարելն փոխանակ ոչ կամելոյ ասէ ‖ . Արդ ողորմելի այսպիսի պատուհասք , զորս յիշեցաք , բազում եղեն յոյժ , վասն այնորիկ յաւելու ասել մարգարէն .

Բազում եղեն քան զհերս գլխոյ իմոյ . Բազում ասէ ըստ այլ և այլ իրաց , 'ի ներքոյ և արտաքոյ . 'ի ծանօթից և յանծանօթից , յիւրոց և յօտարաց . և զարմեալ՝ զի բազում էին կրկնաց հանդերձ հալածմամբ և արհամարհանօք , խայտառակութեամբ և անարգութեամբ և այլն . Վասն որոյ քան զհերս գլխոյ աւելի եղեն ասէ , կամ հանգոյն բազմութեան հերաց , և այս ըստ ըմբըր" . կարէ իմացեալ լինել ես և 'ի վերայ պէսպէս փորձութեանց , և վտանգից խորհրդոց , զորս տեսանեմք 'ի մեզ . և զի այս ամենայն կարէ ածել 'ի վերայ զքսումն սրտի , ամեն իրի ասէ .

Սիրտ իմ եթող զիս . Այսինքն ոչ եւս ետ ինձ սիրտ իմ զայնպիսի ուժգնութիւն , զորպիսի տայր յառաջին . Վասն զի զօրութիւնք մարմնոյ և զգայութեանց 'ի սրտէ առնուն ունին զուժգնութիւնս . և յորժամ սիրտն մեղկի 'ի կրից , թուլանայ տալ զայն ուժգնութի , որպէս թէ թողեալ էր զմարդն .

Այս բանք ասին և 'ի դիմաց Քի , ըստ որում կամավին թոյլ ետ նա վասն մեղաց մերոց՝ պաշարիլ 'ի չարաց և 'ի տանջանաց , այսինքն կրել զբազում չարչարանս . Իսկ զի երաշխաւոր եղև վասն քաւելոյ զանօրէնութիւնս մեր , զայն որ մեր էր՝ իւր ասէ լինել . հասին ինձ ասէ անօրէնութիւնք իմ . այսինքն հասին յիս պատիժք անօրէնութե՟ց մարդկան՝ զոր բարձեալ էի 'ի յուս իմ, և ես որ կամովին յանձն առի զայնոսիկ պատիժս, այնպիսի օրինակաւ կամեցայ կրել, մինչև կարծել բազմաց՝ թէ ես ոչ կարացի տեսանել զնոսա. և յայսպիսի չարչարանս գոլով ոչ կամեցայ զօրացուցանել զիս. այլ կամովին թողի, զի թողցէ զիս սիրտ իմ, և ոչ ազդեցէ այնպէս, որպէս ազդէրն։

Եթէ 'ի գլխոյ սուրբ եկեղեցւոյ ասացեալ լիցին այս բանք, հերովք գլխոյ իմացեալ լինին հաւատացեալքն՝ որք բուսան և բուսանին 'ի գլուխ եկեղեցւոյ այսինքն 'ի ք՟ս. Եւ ըստ այսմ չարեօք իմացեալ լինին հեթանոսք և հալածիչք եկեղեցւոյ. իսկ անօրէնութեամբք այսինքն անօրէն մարդկամբք՝ հերետիկոսք, որք բազում եղեն քան զհերս գլխոյ նորա, այսինքն քան ըզբազում հաւատացեալս. և առանց գիտելոյ սուրբ եկեղեցւոյ՝ յարեան ընդդէմ եկեղեցւոյ. և այնչափ ինչ գործեցին, մինչև կասկածիլ նմա, թէ եթող զնա սիրտ իւր. այսինքն հոգին սուրբ. Եթէ անօրէնութեամբ իմացեալ լիցին տիրապէս մեղքն, աստի ցուցանի՝ թէ թէպէտ և հասին և հասանեն մեղք յանդամս եկեղեցւոյ, բայց ապաշխարութե՟ ջնջին և ոչ ևս երևին. ուստի և եկեղեցին որպէս թէ ոչ տեսանէ. և ինքն մնայ յամենայնի սուրբ. և զոր կրէն, մոռանայ. որպէս թէ սիրտ իւր թողեալ իցէ զնա։

Բայց եթէ այս բանք ասասցին 'ի գլխոյ մարդկային բնութեան, չարեօք իմացեալ լինին այն ամենայն պատիժք՝ որ անկան 'ի վերայ մարդկան վասն մեղաց նախաստեղծիցն. և շուրջ եղեն զնոքօք. Իսկ անօրէնութեամբք իմացեալ լինին սկզբնական մեղքն, որք հասին 'ի ծնունդս նոցա ոչ գիտելով նոցա. ըստ որոյ ասէ * հասին ինձ անօրէնութիւնք իմ, և ես ոչ կարացի տեսանել ‖. իսկ վասն ներգործական մեղաց՝ բազում եղեն ասէ քան զհեր գլխոյ իմոյ, այսինքն քան զմեղս ադամայ՝ որ էր գլուխ իմ. վասն որոյ և անձնիշխան զօրութիւն իմ թուլացաւ իսպառ, և գրեթէ եթող զիս։

Բարոյապէս, սոքօք նշանակին չար խորհուրդք՝ որք հասանեն 'ի մարդն 'ի ժամ աղօթից. և շուրջ լինին զնովաւ. և գործեն զերկուս չարիս. առաջինն է զի բազում գոլով քան զհեր գլխոյ՝ վշտագնեն. այլ զոր-օրինակ 'ի գրել մարդոյ կամ 'ի յուտել կամ 'ի ննջել՝ յորժամ ձանձք ժողովլին՝ վանէ զայնս 'ի բաց. և այնպէս գրէ կամ ուտէ. սոյնպէս և յաղօթելն. յորում գրեթէ մեղր մատուցանի առաջի, յորժամ գան չար խորհուրդք՝ պարտ է վանել զնոսա ոչ եթէ տագնապելով՝ այլ ոչինչ համարելով. յորոյ օրինակ աբրահամ 'ի զոհելն՝ վանէր զթռչունսն՝ որք իջանէին 'ի վերայ յօշելոյ անդամամաթուեն. (Ծնն. ԺԵ. 11.)

Երկրորդն է այն՝ զի պղտորեն զհոգին, մինչև ոչ կարել մտաց տեսանել ինչ. ըստ որոյ ասէ. * և ես ոչ կարացի տեսանել‖. զի զորօրինակ 'ի պղտորեալ ջուրս՝ ոչ տեսանի երես նայողին, և ոչ նշմարի որ ինչ 'ի խորս է, սոյնպէս և 'ի պղտորեալ հոգին ոչ տեսանի պատկերն ա̃յ, և ոչ նշմարի որ ինչ կայ 'ի խորս սրտի.

Երրորդն է այն՝ զի վհատեցուցանեն և լքուցանեն զմարդ, մինչև կարծել՝ թէ սիրտն 'ի կայից իւրոց մեկնեալ գնայ 'ի բաց. ըստ որոյ ասէ. * և սիրտ իմ եթող զիս‖. Իսկ եթէ սրտիւ իմացեալ լիցի խորհուրդ սրտի՝ նշանակի այսու նաև տատանիլ սրտին. և այս յայնժամ լինի՝ յորժամ յաղօթսն անդ խորհուրդ մարդոյ թողեալ զաղօթողն շրջի յայլ տեղիս. այլ դու աղօթողդ 'ի թողուլ նորա զքեզ՝ մի թողուր զնա, այլ կոչեա զնա, եթէ ոչ գայ, ձգեա և քարշեա. և այս շատ է քեզ առ 'ի համոյ առնել զաղօթս քո առաջի ա̃յ.

Այս թողուլ սրտի կամ այս ցնդումն մտաց կարէ լինել յերից. մի՝ 'ի զբաղելոյ և 'ի պարապելոյ բազում գործոց առանց բարեկարգութեան. երկրորդ՝ 'ի տկարութենէ ցնդական բնութ̃ե առանց սանձի պահելոյ, և կամ թոյլ սնուցելոյ. երրորդ՝ 'ի չարութ̃է դիւին. որ գոլով թշնամի աղօթից, 'ի տեսանելն զմարդ յաղօթս՝ պէսպէս հնարս մեքենայէ՝ արկանել 'ի չփոթութիւն, կամ պղտորել. այլ յաղաղակել մարդոյ առ ա̃յ՝ նա ինքն փրկէ և օգնէ. ըստ որոյ և մարգարէն գոչելով առ նա ասէ.

ԺԴ. Հաճեաց տէր՝ փրկել զիս. և տէր յօգնել ինձ նայեաց։

Կամքն ա՟յ կրկնակի մասամբ. մի՝ ըստ նախընթացին, և մի՝ ըստ հետեւորդին. կամ որպէս ասէ սարգիս Շնորհալի. մի՝ իբր առաջին, և մի ևս՝ իբր երկրորդ. նախընթաց կամքն ա՟յ հայի 'ի կամեցեալն՝ ամենայն հայելոյ 'ի պարագայս նորին, կամ վերացուցեալ 'ի պարագայից. և ըստ այսմ փրկել մարդկան՝ վերացուցեալ, յոր և իցէ պարագայէ. առաւելի ամենայն կամաց ըստ նախընթացին. յոր միտս ա՟ծ կամի զի ամենայն մարդիկ կեցցեն. որպէս ասէ առաքեալն։ Իսկ հետեւորդ կամքն հայի 'ի կամեցեալն ըստ ամ՟ պարագայից մտածեալ. և ըստ այսմ փրկելն ընտրելոց՝ զորօրինակ պետրոսի, պօղոսի ևն՟, մտածեալ հանդերձ պարագայիւք առաւելի ամենայն կամաց ըստ հետեւորդին։ Արդ կամքն ա՟յ թէպէտեւ ըստ նախընթացին միշտ ոչ կատարի, բայց ըստ հետեւորդին միշտ կատարի։ Աստի և աստ ըստ հետեւորդին խօսի մարգարէն՝ յասելն։

Հաճեաց տէր՝ փրկել զիս։ Որպէս թէ ասէր. դու որ ընդ ամենեցուն փրկութիւն հաճիս՝ այժմ իսկ հաճիս և ընդ փրկութիւն իմ. կամեցի՛ր ուրեմն իբրեւ փրկել զիս 'ի բազում վշտաց իմոց. զի կամիլդ միայն բաւական է փրկել, և նայիլդ՝ օգնել։ Աստ զի զորս կամեցաւ տէր փրկել՝ փրկեցան, և յորս նայեցաւ՝ դարձան, թէև ըմբռնեալ էին 'ի չարաչար ախտս մեղաց։ Կամեցաւ փրկել զկատարինէ Հռովմայեցին, որ գեղեցկութեամբ իւրով կորուսեալ էր զքաղաքն. երևեցաւ նմա 'ի կերպարանս գեղեցիկ երիտասարդի, և հրաւիրեցաւ 'ի նմանէ յընթրիս։ Յուտելն անոյշ զկերակուրս՝ ետես կատարինէ յամենեսին 'ի նոսա զարիւն. և 'ի ճաշակել իւր՝ փոխեցաւ երիտասարդն 'ի կերպարանս Քի՟՝ փշեայ պսակ 'ի գլուխն, արեամբ թաթաւեալ 'ի մարմնի. և եղև աներևոյթ։ Յորմէ զահի հարեալ կատարինէայ՝ դարձաւ և զղջացաւ. ապաշխարեաց և փրկեցաւ։ Նոյնպիսի ինչ և այլոց ամենից պատահեցաւ, առ 'ի ցուցանել, թէ ա՟ծ 'ի կամելն փրկէ և կեցուցանէ։ Զայս կամելս ա՟յ, կամ ըստ ըմբռնացուցին զայս հաճելս՝ նայիլ ևս կոչէ մարգարէն յաւուրն գիշերի ·

Եւ տէր յօգնել ինձ նայեաց · Ողորմութեամբն կամեցաւ ոչ միայն փրկել զիս 'ի չարեաց, այլեւ օգնել 'ի բարիս · որպէս զի փառաւորեսցի անուն քո, եւ անյայտասցին սպառծանք թշնամեաց իմոց · եւ առ այս յարէ ·

ժե · Ամաչեսցեն եւ յամօթ լիցին, որ խնդրեն զանձն իմ բառնալ զնա · դարձցին յետս եւ ամաչեսցեն՝ որ խորհին ինձ չար ·

ժզ · Առեսցեն զամօթ առ ժամայն կաղկանդի, որ ասեն ինձ վաշ վաշ ·

ժէ · Ցնծասցեն եւ ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ տէր ·

ժը · Ասասցեն յամենայն ժամ, մեծ է տէր, որ սիրեն զփրկութիւն քո ·

ժթ · Ես աղքատ եւ տնանկ եմ, տէր խորհեսցի զինէն · օգնական եւ պաշտպան իմ ես դու տէր իմ մի յամենար ·

Զայսպիսի հնգեակսն հաւասար լիովին անմիջ մեկնել 'ի սաղմ · կթ · որ սկսանի, Տէր յօգնել ինձ նայեաց · զի նոյն բանք են յերկոսին եւս · Բայց քանզի սոքա եւ նոքա երկոքումբք մեկնին, մի՛ 'ի գլխոյ դաւթի եւ 'ի գլխոյ իւրաքանչիւր անձին, եւ մի եւս 'ի գլխոյ քի · զառաջնոյն ասելիք խօսել անդ, իսկ զերկրորդն խօսեսցուք աստ ·

Ըստ քս՛ տէրն մեր 'ի կերպարանս ծառայի գոլով խնդրէր 'ի Հօրէ զփրկութիւն ազգի մարդկան, եւ եւ զփրկել իւր 'ի ձեռաց թշնամեաց իւրոց՝ ոչ զի ինքնին ոչ կարէր, այլ զի Հօր ընծայելով զամենայն՝ 'ի նմանէ խնդրէր, որպէս եւ յայտ է · ըստ այսմ խնդրեաց եւ զանցանել բաժակին յանձնէն · Հայր իմ եթէ հնար է՝ անցցէ յինէն բաժակս · Եւ այսոքիկ բանք ոչ ցուցանեն զանկարութիւն ինչ 'ի քս՛, այլ զանկարութի մարդկայնոյ բնութեանն՝ զոր առեալն էր, եւ նովին խնդրէր 'ի Հօրէ յառնել փութով 'ի մեռելոց, եւ յարուցանել ընդ իւր զազգ մարդկան · որով եւ անձինն ամաչել թշնամիք իւր. վասն որոյ ասէ.

ԺԴ. **Ամաչեսցեն և յամօթ լիցին, որք խնդրէին զանձն իմ բառնալ զնա.** Երրեակ եղեն թշնամիքն քսի, նախ՝ տիրասպան հրէայք, ընդ որս և նոքա՝ որք գործակիցք եղեն հրէից 'ի նոյն, որպիսի եղև պիղատոս և հերովդէս և այլք. թող զդևս. Երկրորդ՝ հեթանոսք՝ որք հալածեցին և հալածեն զքս յանդամս նորա, և ջանան բառնալ զնա, այսինքն առնել՝ զի մի կացցէ հաւատ նորա, և կամ թէ ցուցցի սուտ լինել. Երրորդ՝ հերետիկոսք, որք բազում չարիս խորհեցան զնմանէ և զհաւատոցն որ առ նա.

Յամենեսին 'ի սոսա կարէ հայիլ այս բան. ըստ առաջնոյն 'ի յառնել տեառն մերոյ՝ ամաչեցին տիրասպանք. ըստ երկրորդին 'ի յաղթել քրիստոնէից՝ ամաչեցին հալածիչք. ըստ երրորդին 'ի յաղթանակել եկեղեցւոյ՝ ամաչեցին հերետիկոսք. Սոքա ամենեքին լցցին ամօթով յաւուրն յետնում, յորժամ տեսցեն, թէ զոր ինքեանք ատեցին և խաչեցին, հալածեցին և անարգեցին, նա լինի ինքեանց դատաւոր և դատապարտիչ առաջի ամենայն ազգաց. որով և կրկին ունին ամաչել. սմին իրի յարէ զկնի և ասէ.

Դարձցին յետս և ամաչեսցեն՝ որք խորհէին ինձ չար. Այս ած՝ այսինքն **դառնալ յետս և ամաչել**, ցուցանէ զկերպատին ամաչելոյ. որպէս թէ ասէր. յամաչել իւրեանց՝ դարձցին յիշել զոր արարին, և այնու կրկին եւս ամաչեսցեն. և զայս խօսի ոչ միայն զնոցանէ որք խնդրէին բառնալ զկեանս նորա, այլ և զնոցանէ՝ որք խորհէին, կամ (ըստ այլ ձեռագրաց) խնդրէին չարիս վասն նորա. Այս բան կարէ հայիլ և յայն դիպուած՝ յորում յասել տն մերոյ ցեկեալսն 'ի վերայ իւր, ես եմ, յետս յետս ընկրկեցան, և զարկան զգետնի, որով և խայտառակ եղեն և ամաչեցին յոյժ.

Մարթ է զայս բան 'ի բարի կողմն ևս մեկնել՝ հայելով յաղօթելն քսի առ հայր, զի տացէ թշնամեաց իւրոց շնորհս, որպէս զի դարձցին յետս 'ի չարեաց իւրեանց, և ամաչելով 'ի վերայ գործոց զոր գործեցին՝ պատկառեսցեն, և խոնարհեսցեն. Բայց առաջին մեկնութիւնն է ըստ նկարագրին. զոր և հաստատէ յաջորդ բանն յաւելն.

ԺԶ. Առցեն զամօթ առ ժամայն վաղվաղակի, որ ասեն ինձ վաշ վաշ։ Այսինքն նոքա որք 'ի խաչէն զիս պարծէին առնլով, վաշ վաշ, այսինքն ծիւ ծիւ, զի ահա նուաճեցաք զնա, եւն. յետ սակաւու առժամայն վաղվաղակի յառաջ քան զդատաստան 'ի յանձել խնամ կրեսցեն զամօթ մեծ. նոյնպէս և այլ թշնամիք իմ, որք հալածէինն զիս։ Այլ զօրօրինակ սոքա ունին ամաչել, սոյնպէս և ընդհակառակն հաւատացեալքն իմ հանդերձեալ են ուրախանալ։ Այլ առ այս յարէ։

ԺԷ. Ցնծասցեն և ուրախ լիցին 'ի քեզ ամենեքեան, որ խնդրեն զքեզ տէր։ Կամի ասել. որք խնդրեն ոչ զինքեանս և ոչ զհաճոյս իւրեանց, այլ զքեզ և զհաճոյս քո, նոքա հաւատասցեն յիս, և փրկեսցին. և ցնծասցեն վասն փրկութեան զոր գտին. ցնծասցեն և հրեշտակք ընդ փրկութիւն մարդկան, և ուրախ լիցին. և ամենեքին առհասարակ փառաւոր առնիցեն զքեզ. որոյ վասն յարէ զկնի։

ԺԸ. Ասասցեն յամենայն ժամ, մեծ է տէր, որ սիրեն զփրկութիւնս քո։ Կամի ասել. յուրախանալ հրեշտակաց՝ որք սիրեն զփրկութիւն մարդկան, ասասցեն՝ մեծ է տէր զի արար զայսպիսի գործ մեծ։ Նոյնպէս և յուրախանալ արդարոց 'ի վերայ փրկութեան իւրեանց, խոստովան լիցին՝ թէ յոյժ է այն սքանչելի փրկութիւն. քանզի այնչափ մեծ երևեցաւ ած յողորմութեան իւրում զոր կամեցաւ ցուցանել մեզ, մինչև ոչ խնայել յորդին իւր, այլ 'ի մահ մատնել զնա վասն փրկութեան մերոյ։ Կամ ըստ յոյնք''. 'ի տեսանել արդարոց զյաղթութիւն այդ՝ ասասցեն, մեծ է ած քան զթշնամիս մեր. զի վանեաց զնս, և փրկեաց զմեզ. կամ ըստ վարդ''. 'ի փրկել մարդկան՝ ասասցեն՝ մեծ է քս ած ճշմարիտ։

Այլ զայս նոքա եւեթ ճանաչեսցեն ասէ և ասասցեն՝ որ սիրեն զփրկութիւնս քոյ, այսինքն՝ որք փափաքեն ոչ սնոտի փրկութեան, այլ այնմ փրկութեան՝ որ է քոյ, այսինքն է յաւիտենականին, զոր դու միայն կարող ես առնել։ Իսկ յոգնակի դնել՝ զփրկութիւնս՝ ցուցանէ զբազմապատիկ հանգամանս փրկութեան. այլ յեբր''. և յայլ թարգ''. եզակի դնի։ Այս ամենայն եղեւ մարգարէին 'ի դիմաց քնի հայելով յայլս, այժմ զասնայ խօսիլ նոյնպէս 'ի դիմաց նորա ոչ յայլ հայելով՝ այլ յինքն. յանձն:

ԻԲ. Ես աղքատ և տնանկ եմ. Ած խորհեսցի զինէ: Տէրն մեր կոչի աղքատ և տնանկ՝ ոչ ըստ այնմ որ էր, զի էր լիութիւն անսահման բարութե. այլ ըստ այնմ՝ որ եղև, զի զգեցաւ զկերպարանս աղքատացեալ բնութե մերոյ. որ մեծատունն էր ասէ առաքեալն՝ վասն ձեր աղքատացաւ (Բ. կոր. Ը. 9.) որպէս թէ ասէր, նա որ յանբաւս մեծատունն էր՝ առեալ զմարդկային բնութիւն՝ երևեցաւ աղքատ և տնանկ՝ մինչև անդ 'ի ժամանակի չարչարանաց 'ի կախիլն մերկ 'ի վերայ խաչին: Այս հայելով ասէ, ես աղքատ և տնանկ եմ. որպէս թէ ասէր. ահա կամ ես կախեալ զխաչէ վասն փրկութե ազգի մարդկան իբր աղքատ և տնանկ՝ թողեալ յամենեցունց և անարգեալ յայնցանէ՝ որոց վս կրեմ զայս. այլ դու խորհեա զիս, այսինքն հայեաց յիս, և տես զոր կրեմ. և լցո զխափար իմ, վասն որոյ կրեմ. զոր կարացի ես առնել՝ արարի զամենայն, արա և դու զոր խնդրեմ 'ի փրկել զազգ մարդկան. որոյ վասն խնդրեմ օգնել ինձ փութով. և ասէ այս յարէ:

Օգնական և պաշտպան իմ ես դու. Ած իմ մի յամենար: Տէրն մեր կոչէ զհայր՝ Ած իմ, օգնական իմ, և պաշտպան իմ. զի խօսի 'ի կերպարանս ծառայի, ըստ որում մարդ, կամ ըստ որում որդի մարդոյ: Եւ ըստ որում այսպիսի՝ խնդրէ 'ի հօրէ՝ մի յամենալ, այլ փութալ 'ի յարուցանել զինքն, որպէս զի և ինքն յարուսցէ զամենեսեան 'ի կեանս յաւիտենականս:

ՍԱՂՄՈՍ Խ.

Ցոյց երանութեան այնր՝ որ ունի խնամ 'ի վերայ աղքատի. և բանք գանգատանաց 'ի բերանոյ դաւթի և 'ի դիմաց քնի 'ի վերայ թշնամեաց. մանաւորապէս 'ի գիւտ օգնականութեան և յաղթութեան.

Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ.

1 Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի
փրկէ զնա տէր. 2 Տէր փրկէ զնա և կեցուցանէ. ե-
րանելի առնէ զնա 'ի վերայ երկրի. և ոչ մատնէ զնա 'ի ձեռս
թշնամեաց իւրոց. 3 Տէր օգնական է նմա 'ի մահճի ցաւոց
իւրոց. զամենայն անկողինս նորա դարձուցանէ 'ի հիւանդու-
թենէ նորա. 4 Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն
իմ, զի մեղայ քեզ. 5 Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ՝
զի մեռցի, և կորիցէ անուն նորա. 6 Մտանէր տեսանել զնան-
րութիւն, խօսէր 'ի սիրտ իւր. և ժողովէր զանօրէնութիւնս
յանձն իւր. 7 Արտաքս ելանէր և զնոյն խօսէր. զինէն շշնջէին
ամենայն թշնամիք իմ. 8 Խորհեցան չար 'ի վերայ իմ. բան անօ-
րէնութեան եդին 'ի վերայ իմ. 9 Մի թէ որ ննջիցէ, և ոչ
ո՞չ ևս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութեան ի-
մոյ, յոր և ես յուսացայ. 10 Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց
առնել ինձ խաբէութիւն. 11 Այլ դու տէր ողորմեա ինձ, և
կանգնեա զիս. և ես հատուցից նոցա. 12 Յայսմ ծանեայ՝
թէ հաճեցար ընդ իս. զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ.
13 Այլ զիս յամբծութեան իմում ընկալար. և հաստատեցեր
զիս առաջի քո յաւիտեան. 14 Օրհնեալ տէր ած իսրայէլի
յաւիտեանս յաւիտենից, եղիցի եղիցի.

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած · սաղմոս ՚ի դաւիթ ·

ՎԵՐՆԱԳԻՐ ՍՈՐԱ ՄՕՏԻՍ ՉԿԱՐՕՏԻ մեկնութեան · զի նոյն է ընդ բազումս, զորոց խօսեցաք ՚ի տեղիս իւրեանց · (տես ՚ի սաղ · գ̃ · դ̃ · ևն ·) Իսկ թէ առ ինչ ասացեալ իցէ դաւիթ զայս սաղմոս, այլևայլ կարծիք են · Ոմանք իբր զգուշակութիւն վերածեն զսա ՚ի դէմս եզեկիայ արքային՝ հայելով ՚ի հիւանդութիւն և յառողջութիւն նորին · այլ այս կարծիք, որպէս այլոք ասացեալ է մեր՝ անհարկէ առ յարմարական մեկնութիւն · Այլք ասեն՝ թէ զայս սաղմոս ասաց դաւիթ յետ առնլոյ զյեբուս քաղաք, և յետ կարգելոյ տեսուչս ՚ի վերայ աղքատաց · Քանզի գրի թէ ՚ի պաշարել դաւթի զայն քաղաք՝ էին առ նովաւ բազում աղքատք, կաղք և կոյրք · առ որս հայեցեալ քաղաքացւոցն՝ սկսան նախատել զնա, թէ դոքօք եկեալ ես ՚ի վերայ մեր · Իսկ դաւիթ խնայեալ յաղքատսն՝ որոշեաց զնոսա, և կացոյց տեսուչս և սնուցս ՚ի վերայ նոցա ՚ի ղևտացւոց անտի զորդին լաւանայ, զորդին բարաքեայ, զորդին ղևեայ, զերեց որդին լադանայ զնախքայէլ, զյովնաթան, զյովէլ, և զայլս · և յայսմանէ շարժեալ՝ գրեաց զսաղմոս զայս երանելով զայնոսիկ՝ որք հոգ տանին աղքատաց, ՚ի մէջ բերելով և զյարութիւն թշնամեաց իւրոց · Այս կարծիս է և վարդան · Իսկ առաքելք հրէից ընդ որս և բազում երևելի մեկնիչք համարին · թէ այս սաղմոս ըստ ճառին հայի յանձն դաւթի և ըստ խորհրդոյն ՚ի ք̃ս, իբր զի դաւիթ յետ մեղացն անկեալ ՚ի հիւանդութ̃ի, յառողջանալն անդ՝ ասացեալ իցէ զայս մօտ ՚ի ժամանակս ապստամբութեանն աբեսաղոմայ · առ որով բազումք ՚ի բարեկամաց նորա թիկունս դարձուցին ՚ի նմանէ, և յարեցան յաբեսաղոմ, և սկսան խարէութեամբ վարել ընդ նմա, ընդ որս էր և աքիտոփէլ ·

Եւ թէպէտ ա̃ծաշունչն ոչ յիշէ զայս մանաւանդ հիւանդութիւն դաւթի, բայց երևելի մեկնիչք 'ի բանից նոյ սաղմոսաց գուշակեն զայն. որպէս և դաւիթ անյաղթ 'ի յառաջաբանութեան սաղ. և հաստատեն ևս թէ յայսմ առթէ իցէ ասացեալ դաւթի զայս սաղմոս 'ի գլխանց իւրոց, և տիրապէս 'ի դէմս որդւոյն ա̃յ՝ ըստ երից, մի՝ զի վասն մեր աղքատացաւ և 'ի մարմնի աղքատ երևեցաւ, (և զայս յիշէ 'ի համարն. 1.) որոյ զհետ յարէ և զպտուղն խորհելոյ զնմանէ. Երկրորդ՝ զի վասն մեր մատնեցաւ 'ի ձեռս թշնամեաց իւրոց՝ առաջնորդութե̃ և նենգութե̃ յուդայի, (և զայս յիշէ 'ի համարն. 5. մինչև 'ի 10.) Երրորդ՝ զի յարուցեալ 'ի մեռելոց յարոյց և զմեզ ընդ իւր. (և զայս յիշէ 'ի համարն. 11. մինչև 'ի վերջն.)

ԲԱՆ

ա. Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. յաւուր չարի փրկէ զնա տէր.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ամենայն սուրբ գիրք, և ամենայն ազգաց մասնաւորք տան վկայութի, թէ որ խնամ տանի աղքատի՝ խնամեալ լինի յա̃յ յարարչէ իւրմէ, և գտանէ առ 'ի նմանէ զբարիս. և սորա պատճառն է, զի այսպիսի օրինակաւ իւրով գրեթէ ստիպէ զա̃ծ հոգ ունել 'ի վերայ իւր. զի թէ ինքն արարած գոլով, և ոչ ունելով ինչ՝ հոգ տանի աղքատին, առաւել ա̃ծ՝ որ արարիչն է, և զամենայն ինչ ունի, ո՞չ ունիցի հոգ 'ի վերայ նորա. Բայց եթէ որ զհակառակն այսր տեսցէ, այն է վասն այլ ինչ պատճառի, որ կշռի ըստ երկուց. մի՝ 'ի կողմանէ ա̃յ, որ դիտելով զմեծագոյն օգուտ՝ անտես առնէ զփոքրունս. և մի ևս՝ 'ի կողմանէ մարդոյ, որ՝ կամ արգելս դնէ ձեռին ա̃յ, և կամ այլազգ գտանի տրամադրեալ. Եւ առակն 'ի հասարակի խօսելով՝ որ խնամէ զաղքատն, գտանէ խնամս յա̃յ. Եւ եթէ ըստ պահանջողութե̃ և ըստ ամենայն պատշաճողութե̃ արասցէ զայս, գտանէ զմեծագոյնն, մինչև երանեթիւն ևս ընդունիլ, և երանելի եւս լինել. 'ի այն յայս հայելով ասէ մարգարէն.

Երանի որ խորհի զաղքատն և զտնանկն. Խորհիլ զաղքատն երրակի կարէ լինել. մի՝ սոսկ ըստ խորհրդոյ, որպէս եթէ որ սոսկ զմտաւ ածիցէ զտնանկն. կամ միայն գիտիցէ, թէ է աղքատ՝ առանց առնելոյ ինչ նմա. Երկրորդ ըստ խորհրդոյ և ըստ յօժարութեան կամաց, որպէս եթէ որ զմտաւ ածելով զտնանկն՝ այսինքն զաղքատսն, 'ի գութ շարժիցի 'ի վերայ նորա, թէ և չիցէ ձեռնհաս նպաստել նմա. Երրորդ՝ նաև ըստ հոգ տանելոյն, որպէս թէ որ ըստ մտածելոյն և ըստ գթալոյն խնամ ցուցանիցէ աղքատին.

Արդ թուի թէ մարգարէն ըստ երկրորդին և ըստ երրորդին դնէ զխորհելն, և տայ երանի այնմ՝ որ այսպիսի օրինակաւ խորհի զաղքատն. յոր միտս թէպէտ և պարտ էր դնել երանի որ գթայ յաղքատն, կամ որ առնէ ողորմութիւն աղքատին և տնանկին, բայց ոչ դնէ այսպէս, այլ ասէ՝ երանի որ խորհի, առաւել ցուցանէ՝ թէ ոչ որ առնէ սոսկ զողորմութիւն՝ երանելի է, այլ որ խորհելով առնէ, և այս ըստ երից. մի՝ զմտաւ ածելով թէ զինչ կրէ աղքատն, յորում թշուառութեան տագնապի, որչափ խիստ կարօտի. և եթէ ինքն լինէր 'ի նմին վիճակի՝ զիարդ տանէր այնմ. և զայսպիսիս խորհելով՝ ողորմած լինի 'ի վերայ նորա, և փութայ օգնել նմա՝ որպէս և կարէ. Երկրորդ՝ ճանաչելով թէ որով և զիարդ պարտ իցէ լնուլ զկարօտութիւն աղքատին, ըստ տեղւոյն և ըստ ժամանակին, ըստ որպիսութեան և ըստ որքանութեանն, ըստ պատշաճի և ըստ արժանւոյն. զի տարբերք վայելչանայ ողորմութիւնն. Երրորդ՝ որ մեծն է՝ խորհելով և 'ի միտ դնելով՝ թէ զոր առնէ աղքատի՝ առնէ այ՟, ըստ այնմ. * փոխ տայ այ՟ որ ողորմի տնանկին ‖. (առակ. ժթ. 17. զօրակէ և ունիմք աւել այժմ.)

Իսկ ըստ այսմ զօրագրին ես լինէր դնել. * Երանի „ որ խորհի յաղքատն և 'ի տնանկն ‖. քան դնել * Ե„ րանի որ խորհի զաղքատն և զտնանկն ‖. ըստ որում գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. Ժ.) Այնպէս և սարգիս Շնորհալի. ('ի մեկն. յակ.

ա. 12. Հռոմ. դ.)

Այս բան տիրապէս առ ՚ի դէմս քոյ. յոր միտս ասէ մեծն խոսրով. (՚ի մեկն. ժամագր. երես. 96.) * երանի որ խորհի զաղքատն և զտնանկն՝ այն որ վասն ,, մեր աղքատացաւ ճշմարիտ մեծատունն՝ տնանկեալն ,, և որդին այ̃ ‖. Եւ ըստ այսմ խորհելն դնի աստ ոչ միայն ըստ երկրորդին և ըստ երրորդին, այլև ըստ առաջնոյն. քանզի ճշմարտիւ երանելի լինի մարդ՝ որ խորհի զաղքատացեալն վասն մեր զնա. զի ՚ի խորհելն զնմանէ՝ թէ զիարդ առ ՚ի փրկել զմեզ՝ զանձն ունայնացոյց՝ զկերպարանս աղքատի առեալ, յայսմ խորհրդեան գտանէ գանձ մեծ. որով և լնանի, և լինի երանելի.

Գտանէ * գանձ մեծ ‖, և այս ոչ միայն ՚ի կողմանէ տառապելոյն, այսինքն ՚ի կողմանէ քոյ՝ որ խորհեալ լինի, այլ և ՚ի կողմանէ խորհողին. ՚ի կողմանէ տառապելոյն՝ յայտ է թէ ՚ի խորհելն զնմանէ՝ տեսանէ ՚ի նմանէ զանչափ բարերարութիւն, զանճառելի գթութիւն, և զանկշռելի սէր. Իսկ ՚ի կողմանէ խորհողին՝ յայտ է թէ ՚ի խորհելն զնմանէ՝ ծնանի խոնարհութիւն ՚ի միտս նորա և բորբոքումն սիրոյ ՚ի կամս. ուրախութի̃ անպատում, և խաղաղութի̃ զմայլեցուցիչ, փափագ նմանակից լինելոյ քեզ, և հառաչանք ժամանելոյ առ նա, մինչև բոլորովին յափշտակիլ ՚ի նա, և ՚ի նմա կեալ. Իսկ թէ քանի երանութիւն իցէ մարդոյ յայսպիսի վիճակ ժամանել՝ նոքա ևեթ գիտեն՝ որք ժամանեցին. Ջանք սակաւ է այս խորհուրդ. գնա զերանին, և կէջ ՚ի խորս. և ժամանեսցես յանճառելիս. ՚Ի խորհելդ մերձիս ՚ի վէմն քո, և ընկալցիս զջուրն կենդանի. եթէ ՚ի սկզբան ոչ հասանիցես, միւսանգամ մատիր. Մովսէս եհար զվէմն, և ոչ ել ջուր, եհար միւսանգամ * և ել ջուր բազում ‖. (Թուոց. Ի. 11.) ՚Ի նոյն մտածութիւն ձգէ զխորհուրդ մեր նոյն իսկ սքանչելի խոնարհութիւնն քո, և նոյն ինքն քո աղքատացեալն վասն մեր. զի զգերօրինակ աստուածն միաւորելով ընդ անարգ անուանցն՝ ([illegible] ընդ [illegible]) [illegible] մեր ձգէ առ ինքն, այնպէս և որդին այ̃ միաւորելով ընդ աղքատացեալ բնութեան ձգէ զմտածութիւն մեր առ ինքն՝ ՚ի խորհել զնմանէ և զչարչարանաց նորա զոր կրեաց վասն մեր .

Այս խորհիլս զօրացուցանէ եւ զմեզ՝ արհամարհել զանձինս մեր, և գնալ զհետ քսի, և գործել ըստ հաճոյս նորա, մանաւանդ թէ ըստ նորա. Թեմիստոկլէս զօրավար յամենայնի խորհելով զքաջութիւնս Միլտիադէս զօրավարի՝ զօրանայր ըստ նմին գործել. քանի եւս մեք 'ի խորհիլն զքս. Արդարև ոչ միայն զօրանամք 'ի խորհիլն զնա, այլ և զնոյն ինքն զգենումք 'ի մեզ. զնոյն ինքն զտանեմք. և 'ի նոյն ինքն ժառանգեմք յարքայութիւն երկնից. Աջակողմեան աւազակն տեսեալ զնա 'ի յետին աղքատութեան՝ խորհեցաւ զնա. և եղև ընդ նմա յարքայութեան, * այսօր ընդ իս իցես 'ի դրախտին ‖. (ղուկ. իգ. 43.) որով յոյս ընկալաք և մեք, թէ նաև մեք 'ի խաչակցութեան մերում 'ի խորհիլն զնա՝ լինիմք ընդ նմա մինչդեռ այսօր 'ի ձեռս է. յոր միտս աղաղակեմք առ նա. * ընդ „ աւազակին քում խաչակցին արժանացո զմեզ դրախ„ տին ‖. Ուրեմն երանի է նա որ խորհի զաղքատացեալն վասն մեր զքս.

Երանութիւնս այս տուեալ լինի և նոցա որք խորհին զնա ոչ միայն յինքեան, այլև յանդամս իւր, այսինքն 'ի հաւատացեալս իւր. զի որ առ նոսա լինի վասն քսի, ինքեան համարի քս. ըստ որում վկայեաց նա ինքն ասելով. * որովհետեւ արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց, ինձ արարէք ‖. (մատ. իե. 40.) Եւ արդարև երանի այնմ որ այսպիսի աղքատի ողորմի. զի քսի առնելով՝ 'ի քսէ առնու զփոխարէնն. առաւել և յողորմիլն՝ ոչ այնչափ համարի տալ՝ որչափ թէ առնուլ. այնր իրի ասէ սուրբն Շնորհալի. ('ի մեկն. փ. յովհ. հատուածն 8.) * յողորմիլ աղքատաց և այն„ պիսի աղքատաց՝ որ վասն քսի աղքատացան, ոչ որ „ առնէ շնորհս, այլ մանաւանդ առնու՝ այսինքն ընդ„ ունի շնորհս ‖. Եւ առաւել եւս եթէ նախ քան ըզխնդրել աղքատին արասցէ. ապա թէ ոչ՝ յառաջագոյն առնու յաղքատէ զխնդրուածս և զպատկառանս. զի մեծ պատկառանս կրեն այսպիսի աղքատք 'ի խնդրելն. որով և գրեթէ պատկառանօք գնեն զտուրսն. և որ տայ յայնժամ՝ ոչ տայ ձրի, այլ իբր փոխարէն պատկառանաց նոցա և խնդրուածոց նոցին.

Յասացելոցս 'ի վերոյ տեսանի՝ թէ յասելն աստ երանի որ խորհի, և այլն. բառդ երանի դնի իբր նշանակիչ երանութեան. յոր միտս յեբրայականն դնի * երանութիւն այնմ որ խորհի||, եւն. և նոյն էր թէ ասէր, երանեալ է նա՝ որ խորհի զաղքատն. ըստ որում դնի և յայլ թարգմանութիւնս. (Իսկ զնշանակութե՛ է և ըղտարբերութենէ աղքատի և տնանկի խօսեցեալ է մեր 'ի սաղ՛՛. Թ. 18. տես անդ. Նոյնպէս թէ զի՛րդ ասիցի գտնէ աղքատ և տնանկ, տես 'ի սաղ՛՛. Իա. 24. և 'ի սաղ՛՛. ԼԹ. 22.)

Ոմանք աստանօր 'ի ձեռն աղքատի իմանան ըստ Տառին զանձն դաւթի, իբր թէ ասել նմա. երանի այնոցիկ, որք ոչ թողլին զնա, և ոչ յարեցան յաբեսաղոմ. Այս կարծիք կարէ ճշմարտիլ ըստ այնմ. զի դաւիթ նկարէր զքս, ուստի եթէ երանի էր այնոցիկ՝ որք յարեցան 'ի դաւիթ և ոչ յաբեսաղոմ, քանի ևս երանի է այնոցիկ՝ որք յարին 'ի քն, և ոչ 'ի սատանայ կամ յաշխարհ.

Իսկ թէ յորում իցէ այս երանութիւն, յայտ առնէ յաջորդ բանիւն, ոչ ըստ այնմ, որ է 'ի լիութեան բարւոյ, այլ ըստ այնմ, որ է յաղագս լինելն 'ի չարէ. զի որպէս ասացեալ է մեր. ('ի սաղ՛՛. Ա. 1. 2.) առ 'ի լինել մարդոյ կատարելապէս երանելի՝ պիտոյ է ունել զլիութիւն բարւոյ, և զերծ լինել յո՛ և իցէ չարէ. նոյնպէս առ 'ի լինել մարդոյ անկատարապէս երանելի, հարկ է ունել գոնէ զայնպիսի բարի՝ որով ասիցի ըստ իւիք երանելի, և զերծ լինել յայնպիսի չարէ՝ որով ոչ համարիցի թշուառ. Արդ ըստ բարւոյ մասին 'ի մասնաւորի ինչ ոչ գրէ աստ մարգարէն, զի համարի թէ որ խորհի զաղքատն՝ ունի հասանել այնմ. և զայս այսպէս եդեալ, յառաջ բերէ զայն ևեթ՝ որ հայի յազատն լինել 'ի չարէ.

Յաւուր չարի փրկէ զնա տէր. Որ չար կոչի նախ օրն ներքին փորձութեանց. երկրորդ՝ օրն ո՛ և իցէ նեղութեանց. երրորդ՝ օրն մահու վասն վախճանին. և չորրորդ՝ օրն ահեղ դատաստանի հայեցեալ 'ի դատապարտութիւն չարաց. Յայսպիսի աւուր ասէ փրկէ ած զայնպիսին՝ որ խնամ ունի աղքատին, զի որպէս նա յաւուր չարի փրկեաց զաղքատն 'ի կարօտութենէ, սոյնպէս և ած փրկեսցէ զնա ։ Զայս յայտ արար տէրն մեր մանաւանդապէս 'ի վերայ աւուրն դատաստանի յասելն զայնոսիկ՝ որ ցուցին խնամ առ աղքատս . Եկայք օրհնեալք հօր իմոյ . զի քաղցեայ և ետուք ինձ ուտել , և այլն .

Նմանապէս . առաջիկայ ընտրանօք հայր և յայն որ խորհի յաղքատացեալ և 'ի անանկացեալ կարօտելոց հոգւոյն . 'ի մերկել զայնս և 'ի դարմանել , և 'ի լնուլ առաքինութեամբք . զկարօտութիւնս նոցին . առ որ հայր ասացեալն բանի՝ թէ * յորժամ առնիցես ընդ-
,, ունելութիւն կոչեա զաղքատս , և զխեղս և զկաղս ,
,, և զկոյրս և երանելի լինիցիս ||. (ղուկ . ժդ . 13 .) կոչեա ապա յընդունելութիւն զկուրացեալ միտս , և բարի խորհրդով կերակրեա զնա , կոչեա և զաղքատացեալ կամսն քո , և զլիացո զնա առաքինութեամբ . կոչեա և զտկարացեալ ցասմնականդ , և զօրացո զնա առաքինութ՛ր արիութեան . կոչեա և զանկարգացեալ ցանկականդ , և ուղղեա բարեխառնութեամբ . սոյնպէս և զզգայարանսդ՝ զտեսանելիս , զլսելիս , զշօշափելիս . ևն . և բարեկարգեա զնամ , և երանելի լինիցիս , և յօրէ չարէ փրկեսցիս . և յայնժամ կատարեսցի 'ի քեզ զոր ասէ , երանի որ խորհի յաղքատն և 'ի տնանկս . յաւուր չարի փրկէ զնա տէր , ևս և կեցուցանէ բազում իրօք . զորոց խօսի մարգարէն 'ի յաջորդ երկուս համարս ասելով .

Բ. Տէր պահեսցէ զնա և կեցուսցէ . երանելի արասցէ զնա 'ի վերայ երկրի , և մի մատնեսցէ զնա 'ի ձեռս թշնամեաց իւրոց .

Փրկել և կեցուցանել այսու տարբերին 'ի միմեանց . զի փրկելն հայի յազատութիւն յո՛ և իցէ չարէ՝ բաւորում չար . իսկ կեցուցանելն հայի յազատութիւն 'ի վտանգէ կենաց . ուստի փրկելն է ներգործութեամբ և իրօք զերծուցանել զոք 'ի չարէ . իսկ կեցուցանելն է զերծուցանել 'ի վտանգէ կենաց , և պահել 'ի կեանս . (զորոց տես 'ի սաղ . լէ . 38 .) Իսկ քանզի յիւրաքանչիւր աւուր պէսպէս չարիք կարեն պատահիլ , և երբեմն վտանգք կենաց , յայտնապէս ակնարկելով մարգարէն յետ ասելոյ յաւուր չարի փրկէ զնա տէր , յա-

[illegible] առնել ։

Տէր փրկէ զնա եւ կեցուցանէ ։ Այսինքն թէ ոչ միայն փրկէ զնա աւէր յն եւ իցէ չարէ որ ըստ Հոգւոյ եւ որ ըստ մարմնոյ, այլ եւ կեցուցանէ, այսինքն պահէ զկեանս նորա յայտնագործ վտանգից որք կարեն հատուցանել նմա զմահ ըստ Հոգւոյ կամ ըստ մարմնոյ ։

Այլ թէ առ բարութիւն կեցուցանել՝ խնամել եւ զկենդանացուցանելն, որ է տալ կեանս, եւ ըստ այսմ կամի առնել. ուր ոչ միայն փրկէ զայնպիսին՝ եւ պահէ ՚ի կեանս յայս, այլ յետ մահու յարուցանէ զնա ՚ի փառաւոր կեանս ։ Այդ առաջին մեկնութիւնն է ըստ նըկարագրին. զի միւս մարգարէն է ցուցանել, թէ նա պահպանէ զայնպիսին ՚ի վտանգէ կենաց յերկրի աստ, եւ հաստատէ եւ երկարացուցանէ զնա ՚ի կեանս. եւ առ այս յարէ ։

Երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի ։ Այսինքն առաւել ՚ի վերայ, երանելի առնէ ստրկութեան նորա, որ չէ է անկան իւր բարիք, եւ ազատ ՚ի չարէ. եւ թէպէտ այսպիսի լինել ումեք ՚ի վերայ երկրի՝ է անհնարելի, բայց ըստ համեմատութեան եւ ըստ տանելոյ այսր վիճակի կարելի է, ոչ միայն ՚ի կարեւորաց լիութեան բարեաց, այլ եւ ՚ի կարճատել զերծ լինելոյ ՚ի չարեաց. վասն զի ըստ լիութեան բարեաց՝ բաւական ունի եւ աւանդել եւս ունի նա՝ որ ունի յիշատակն զնա՝ որ է ամենայն բարի, պահել եւ շնորհել հոգւոյն ՚ի նոյն անպարտութեան եւ ցնծոյ ։

Այնուհետեւ եւ ըստ զերծ լինելոյ ՚ի չարեաց՝ բաւական է մարդոյ գիտել, թէ ունի պաշտպան իւր զնա, զի փոյթ գիտելով՝ թէեւ ՚ի նեղութիւն խրախուսեալ, ՚ի նա ապաւինեսցի. եւ նմա յանձն արասցէ զինքն, միայն յապաւինի. եւ կրէ զնեղութիւն իւրեւ համբերութեամբ խնդրով եւ զփորձն համարելով աստուածային հաւատարիմ ծառայից իւրոց. մինչեւ առնել խաղ. ուրախ լինի ՚ի չարչարանս ։ Ոչ եթէ վասն ինչ հալածել նոցա ՚ի թշնամեաց հոգւոյ եւ մարմնոյ՝ ունելով ապաւէն զնա՝ որ ոչ թողու զնոսա ։ Մեծն իմն յարէ զինքն եւ առնէ ։

Եւ ոչ մատնէ զնա ՚ի ձեռս թշնամեաց իւրոց ։ Թշնամիս ասէ նա՝ որ ունի ընդ այլում զօրս ՚ի մարտի, եւ կամի նմա զչար. եւ յայտ է թէ հալածէ զաւանիս որ ՚ի վերայ երկրի՝ որ չունիցի ընդ զայնպիսին որ շարունակ իւրեան, գոնէ զգեւս ։ Ի ձեռս այսպիսեաց ասէ ոչ մատնէ ած զայն՝ որ խորհի զաղքատն. կամ որ նոյն է՝ ոչ թողու տայ՝ զի թշնամիք նորա արասցեն ընդ նա ըստ հաճոյս իւրեանց ։

Իսկ թէպէտ այսպիսիքս երբեմն երեւին մատնիլ, բայց այն կամ ոչ է իրապէս մատնութիւն, եւ կամ կայ գաղտնի ինչ պատճառ՝ զոր դիտէ արարիչն, որպէս եղեւ մանկունքն եօթնեայ, Եղեազարայ, եւ այլոց բազմաց. կամ մեծագոյն ինչ բարի, զոր դիտէ ած, որպէս եղեւ ՚ի մատնութեանն Յովսեփայ, Յոբայ, եւ այլոց. կամ օգուտ եւ վարձ մատնեցելոյն, որպէս եղեւ առաքելոց եւ հետեւողաց նոցա ։

Այս ոչ մատնիլս ՚ի ձեռս թշնամեաց կարէ եւ առ հանդերձեալ կեանս հայիլ. իբր զի յանջատանիլ հոգւոյ արդարոյն՝ ոչ մատնէ զնա ած ՚ի ձեռս դիւաց. այլ պահելով զնա ՚ի նոցանէ տանի առ ինքն ։ Այս ամենայն դնի իբր պտուղ խորհելոյ զաղքատն. եւ զայսոսիկ ՚ի հատուածի յայս ասացեալ մարգարէին՝ մատնութեան յերկուս փոփոխութիւնս, այսինքն յարտաքին եւ ՚ի ներքին կամ յանձնական. եւ զի զարտաքինոյն խօսեցաւ յայս համարս՝ յասելն. ոչ մատնէ ՚ի ձեռս թշնամեաց. զներքինոյն խօսի ՚ի յաջորդ համարն ասելով ։

Դ. Տէր օգնական է նմա ՚ի մահիճս ցաւոց իւրոց. զամ̅ անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութեան նորա ։

Երանութիւն արդարոյ ցուցանի կեայ ՚ի մահիճի առող ոչ է յայն զի ոչ ինչ կրէ, այլ յայն՝ զի ՚ի կրելն ունի իւր օգնական զիշխանն կենաց եւ մահու ։ Իսկ զի մարգարէն երանի ետ այսպիսումն ՚ի վերոյ, եւ վկայեաց՝ թէ ած երանելի առնէ զնա ՚ի վերայ երկրի. յաւելու եւ ասել, թէ այսպիսին երանելի գոլով՝ ոչ է ազատ ՚ի նեղութեանց, այլ մանաւանդ պաշարեալ ՚ի նեղութիւնս. ուստի եւ չէ արժան կարծել՝ թէ որ խորհի զաղքատն՝ ոչ ունիցի նեղութիւն ինչ, այլ թէ յունելն անդ զնեղութիւն՝ ած օգնէ նմա առ ՚ի բարին. եւ զի ՚ի մէջ ներքին կամ անձնական նեղութեանց ծանրագոյն է հիւանդութիւնն՝ թէ ըստ հոգւոյ իցէ, թէ ըստ մարմնոյ, այնու կամելով զայլս եւս իմացուցանել՝ զայն եւեթ ՚ի մէջ բերէ եւ ասէ ։

Տէր օգնական է նմա ՚ի մահճաց ցաւոց իւրոց. Մահիճն է կերտուածն այն՝ ուր գնի անկողինն, և է իբր պատուանդան անկողնոյ, և զի ըստ ոճոյ Հարտասանից մին գնի փոխանակ միւսոյն, վասն այսորիկ և աստ մահիճն գնի փոխանակ անկողնոյ, և ասի մահիճ՝ ցաւոց, ըստ որում է տեղի ցաւագնելոց. Իբր ասէ. որ խորհի զաղքատն և օգնէ նմա, եթէ անկցի ՚ի ցաւագարութ՟ի կամ ՚ի հիւանդութ՟ի ինչ, և գնիցի յանկողնի ՚ի վերայ մահճի, ոչ թողու զնա Ա՟ծ, և ոչ անտես առնէ, այլ որպէս նա օգնեաց աղքատին, նոյնպէս և Ա՟ծ օգնական լինի նմա, զ՟ի իբր մայր խնամ տանի ՚ի վերայ ն՟ր, մխիթարելով զնա ՚ի ներքս ՚ի հոգի իւր, և երբեմն տալով նմա նաև զառողջութ՟ի մարմնոյ. և առ այս յարէ.

Զամ՟ անկողինս նորա դարձուցանէ ՚ի հիւանդութենէ նորա. Մինչ բանին է՝ թէ զանկողինս հիւանդութեան նորա դարձուցանէ յանկողինս առողջութ՟ե, որ է ասել, առողջացուցանէ զնա, եթէ բարի անուանիցէ վասն նորա զայն առողջութ՟ի. Նայց կամելով մարգարէին ցուցանել զառաւելութ՟ի խնամոցն Ա՟յ՝ խօսի գեղազանց ոճիւ, այսինքն այնու ոճիւ և ձևով, որ ՚ի Հարտասանից կոչի փոխանունութիւն՝ խառն ընդ խելամտութեան, որով անուն պատուանդանին գնի փոխանակ անուան այնր՝ որոյ պատճառաւ պատուանդանի ՚ի նմա ինչ. և զի հիւանդութիւնն է պատճառ անկանելոյ ումեք յանկողին, և իբրև թէ առիթ պատուանդանելոյ ՚ի նմա, փոխանակ գնելոյ հիւանդութ՟ի՝ գնէ անկողին, որպէս թէ ասէր. զամ՟ հիւանդութիս նորա, որովք անկանի յանկողինս, դարձուցանէ յառողջութիւն. և այս՝ թէ ըստ հոգւոյ մտածեսցի, և թէ ըստ մարմնոյ. Իսկ պատճառ այսպիսի օրինակաւ խօսելոյն է (որպէս ասացաք) յայտ առնել զառաւելութիւն խնամոցն՝ զոր ցուցանէ Ա՟ծ ՚ի վերայ երկիւղածաց իւրոց, կամ խորհողաց զաղքատն. Այլ եթէ պահեսցի նշանակութիւն անկողնին բառից, փոքր մի այլազգ մեկնի այս բան ըստ նախընթաց հատուածոյն. իբր թէ որպէս որ դարձուցանէ և փափկացուցանէ զանկողինս հիւանդին բոլոր, հանգուցանէ զնա ՚ի հիւանդութեան նորա, նոյնպէս և Ա՟ծ ՚ի հիւանդանալ ծառայից իւրոց՝ նմանութ՟բ իմն խօսելով գրեթէ դարձուցանէ զբոլոր անկողինս նորա. որով և թեթևացուցանէ զնոսա 'ի հիւանդութենէ. որ է ասել, հանգուցանէ զնոսա 'ի հիւանդութ՟է նորա:

Հոգևորապէս՝ յանկանիլ երկիւղածին 'ի հեշտացուցիչ փորձութիւնս՝ որք օրինակին յանկողինս, ըստ որում իբր փափուկ անկողին զիւրացուցանեն՝ մինչև մերձ լինել հիւանդանալոյ հոգւով, ա՟ծ դարձուցանէ զհիւանդացուցիչ փորձութիւնն յառողջարար, կամ թէ տեսանելով զնա յայնպիսի փորձութ՟ի՝ զերծուցանէ զնա 'ի հիւանդութ՟է հոգւոյ, որ է ասել. փրկէ զնա: Դարձեալ՝ որ հիւանդացեալն է հոգևոր հիւանդութ՟ե մեղաց, և անկեալ է 'ի չար սովորութ՟իս իբր յանկողինս, եթէ խորհեսցի զաղքատն, այսինքն եթէ յա՟մ սրտէ ապաւինեսցի առ ք՟ս, զչար սովորութիւնս զայնոսիկ դարձուցանէ ա՟ծ 'ի հիւանդութենէ նորա, այսինքն դադարեցուցանէ 'ի հիւանդացուցանելոյ զնա. կամ որ նոյն է՝ առնէ զի մի ևս անկցի 'ի հիւանդութիւն, այսինքն 'ի մեղս. և թէպէտ մեղքն է մահ հոգւոյ, բայց հայելով յողորմութիւն ա՟յ և 'ի կարողութ՟ի նորա, է իբր հիւանդութիւն:

Սարգիս շնորհալի ('ի մեկն. յակ. ե. 15. Ճառ ժա՟.) զայս բան վերածէ առ ներգործութ՟ի օծման հիւանդաց. * տեսանելով (ասէ) տէր մեր զհաւատս ն՟ց (որք
„ 'ի հիւանդութ՟ե օծանէին յանուն տ՟ն) յարուցանէ
„ 'ի մահճաց անտի ցաւոցն, և զա՟մ անկողինս նորա
„ դարձուցանէ 'ի հիւանդութ՟է նորա‖:

Օայսուիկ եղեալ մարգարէին՝ մատչի յաղաչանս. և խնդրէ յա՟յ՝ ցուցանել և առ ինքն զհայրական խնամս 'ի հոգևոր հիւանդութ՟ե իւրում, յասելն:

դ. Ես ասացի տէր ողորմեա ինձ. բժշկեա զանձն իմ, եւ մեղայ քեզ:

Յայտ է թէ ա՟մ որ մեղանչէ, զրկի 'ի բարւոյ, և մատնի 'ի չար, այսինքն մերժի 'ի բարեկամութենէն ա՟յ, որ լինի նման ատելի և թշնամի. մերկանայ ըզսրբարար շնորհս՝ որ է կեանք հոգւոյ, և զգենու զաղտեղութ՟ի մեղաց՝ որ է հիւանդութիւն հոգևոր, մանաւանդ թէ մահ. կորուսանէ զարժանաւորութիւն վարձուց յաւիտենական կենաց, և արժանի լինի յաւիտենական պատժոյ. որով և լինի բոլորովին Թշուառ և ողորմելի.

Իսկ առ բարձումն այսր Թշուառութեան, կամ այսպէս ասացից, առ նորոգութիւն այսր ըստ ամենայնի պահանջի երեք ինչ. մի՝ 'ի կողմանէ մարդոյ՝ այն է դիմումն առ ա̃ծ 'ի ձեռն շնորհաց նորա. երկրորդ՝ 'ի կողմանէ ա̃յ, այն է, ողորմութիւն 'ի Թողուլ զմեղս. և երրորդ՝ 'ի կողմանէ հետևորդաց, այն է բարձումն պատժոյ. զի Թէպէտ և 'ի Թողուլ մեղացն՝ բառնի պարտաւորութիւն յաւիտենական պատժոյ, բայց մնայ պարտաւորութիւն ժամանակաւորին ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. ըստ հոգւոյ՝ բարոյական ինչ տկարութիւն պատճառեալ 'ի ներգործութենէ մեղաց, կամ անկարգութիւն կրից 'ի նոյն պատճառէ. ըստ մարմնոյ՝ հիւանդութիւնք. ցաւք, հարուածք, և այլն. Զայսր ամենայնի զփորձ առեալ Դաւիթ, և յայտնի գիտացեալ՝ Թէ վասն մեղանչելոյ իւրոյ է այն, նախ առաջի դնէ զդիմել իւր առ ա̃ծ, և ապա խնդրէ զողորմութիւն նորա՝ ոչ միայն Թողուլ զմեղս, այլև զպատիժն՝ 'ի ձեռն բժշկութեան անձին. սմին իրի ասէ.

Ես ասացի, Տէր ողորմեա ինձ. Որպէս Թէ ասէր. որովհետև ես եմ որ մեղայ քեզ. Ես ինքն ասացի, այսինքն ես ինքն 'ի ձեռն շնորհաց քոց դիմեցի առ քեզ աղաչանօք, և յաղաչելս իմ՝ չհամարձակեցայ զայլ ինչ ասել, բայց միայն զայս. Տէր ողորմեա ինձ. և ողորմեալդ լիցի յայսմ, զի Թողուցուս զմեղս իմ, որով և հանցես զիս 'ի հիւանդութենէ. և առ այս յարէ.

Բժշկեա զանձն իմ, զի մեղայ քեզ. Ըստ բժշկութե̃ իմացեալ լինի աստ՝ ոչ միայն այն՝ որ ըստ մարմնոյ, այլև այն՝ որ ըստ հոգւոյ. ըստ մարմնոյ իմացեալ՝ այս խնդիր ցուցանէ նախ զբարեպաշտութիւն Դաւթի, իբր զի 'ի հիւանդութեան իւրում ոչ 'ի բժիշկս՝ այլ յա̃ծ լինի ապաստան, և 'ի նմանէ խնդրէ բժշկութիւն. զորպիսի արար և Եզեկիա. զորոյ զներհակն յանդիմանեաց ա̃ծ 'ի Ասայ արքայ Յուդայ. զի 'ի հիւանդութեան ոչ խնդրեաց զա̃ծ. (Բ. Մնաց. ԺԶ. 12.) Ցուցանէ երկրորդ զմեծ զզղջումն սրտի նորա, զոր ունէր 'ի վերայ մեղաց իւրոց. որով և ցանկայր՝ զի իսպառ բարձցի յիշատակ նորա. և զի այն հիւանդութիւն էր իբր յիշատակ մեղայն, քանզի էր պատիժ մեղաց, վասն այսորիկ խնդրէ զբարձումն նորին. և 'ի սոյն սակս խոստովան լինի զնոյն ասելով. Ես մեղայ քեզ, որպէս թէ ասէր. վասն այսորիկ խնդրեմ զբժշկութիւն՝ վասն զի մեղայ քեզ, և վասն մեղացս անկայ յայս հիւանդութիւն, և եթէ բարձցես զայս յինէն, այնու գիտացից՝ թէ բարձեալ է և յիշատակ մեղաց իմոց.

Իսկ եթէ բժշկութիւնն՝ ըստ հոգւոյ իմացեալ լիցի, անուանս անձն դնի փոխանակ բանիս հոգի. ըստ որում դնի յեբր''. և յայլ թարգմանութ՟իս. Եւ ըստ այսմ այս խնդիր դաւթի հայի նախ 'ի բժշկութիւն մեղաց, որ թէպէտ և մահ է հոգւոյ առ գերբնական ներգործութ՟իս, բայց ասի և հիւանդութիւն, ըստ որում է տկարութ՟ի կարողութեանց հոգւոյն առ բարոյական գործողութ՟իս. և դարձեալ որպէս ասացաք 'ի վերոյ՝ այն որ մահ է, առաջի ողորմութեանն ոչ է իբր հիւանդութիւն. Հայի երկրորդ 'ի բժշկութ՟ի հոգևոր պատժոյ՝ որ վասն մեղաց. և որպէս թուի՝ այս է դիտումն մարգարէին, և այս է այն զոր խնդրէ յա՟յ. Զայս հայի և մեր աղաչանք՝ զոր սովին բանիւ մատուցանեմք յամ աւուր առ ա՟ծ 'ի փառք 'ի բարձունս.

Այլ մովսէս վարդապետ 'ի մեկնելն անդ զայս բան՝ միայն առ բժշկութ՟ի հոգւոյ վերածէ (յերես 206.) ասելով. այսու բանիւ՝ զոր ասէ, *Ես ասացի տէր ողորմեա ինձ և բժշկեա զանձն իմ. . . հայցէ ողորմութիւն ,, յողորմած տեառնէ, և զբժշկութ՟ի ոչ մարմնոյ խնդրելով, այլ զհոգւոյ‖.

Այս բան ասի և 'ի բերանոյն ք՟նի ըստ երկուց. մի՝ 'ի դիմաց իւրոց խօսելով. յոր միտս յասելն՝ Ես մեղայ քեզ, կամի ասել. Ես առի յիս զպարտաւորութիւն մեղաց մարդկան՝ առ 'ի քաւելոյ զայնս. վասն որոյ և մատնեցայ 'ի ցաւս և 'ի տանջանս, և աղաչեցի ըզհայրդ իմ ասելով. տէր ողորմեա ինձ, այսինքն ցոյց զողորմութիւն քո 'ի բառնալդ զմեղս զայսոսիկ, և 'ի բժշկելդ զիս 'ի ցաւոցս, և 'ի յարուցանելդ զիս 'ի գերեզմանէ.

Երկրորդ՝ հայելով յանձինս անդամոց իւրոց, որպէս թէ ասէր. աղաչեցի զհայրդ իմ, և ասացի, տէր ողորմեա ինձ, այսինքն անդամոց իմոց, և բժշկեա ըզբոլոր մարմին իմ, այսինքն զազգ մարդկան. զի ես մեղայ քեզ, այսինքն ընկալայ յիս զմեղս նոցա վասն բժշկելոյ զնոսա։ Եւ որպէս զի մի կարծեսցի թէ յատուկ իւր էր այն մեղք, զանմեղութիւն իւր ցուցանէ. ('ի Համարն 13.) յասելն. * այլ զիս յանբծութեան „ իմում ընկալար ||.

Մարգարէն յայտ արարեալ մինչև ցայս վայր 'ի դիմաց իւրոց և 'ի դիմաց քսի զգործս բարութեանն որ 'ի վերայ այնորիկ որ խնամ տանի աղքատի, և այլն, ապա սկսանի նոյնպէս 'ի բերանոյ իւրմէ և 'ի բերանոյն քսի յայտ առնել զգործս չարութե թշնամեացն, մանաւանդ այնր՝ որ օրինակէր զյուդայ, և նախ ասէ.

Ե. Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ՝ զի մեռցի, և կորիցէ անուն նորա։

Որպէս գրի. ('ի Բ. Թագ". ԺԵ. 1 = 7.) աբեսաղոմ որդի դաւթի բազմօք աշխատ եղև 'ի ձգել առ ինքն զսիրտ ժողովրդեան, և յայնմ միջոցի՝ բազումք յիշխանաց նորա յարելով յաբեսաղոմ, դարձան ծածուկ 'ի թշնամութիւն ընդդէմ դաւթի, և ցանկային մահուան նորա. և կամ ըստ ասելոյ ոմանց՝ յանկանիլ նոցա 'ի հիւանդութի՝ դարձուցին 'ի նմանէ զերեսս, և սպասէին մեռանելոյ նորա։ Զոցանէ խօսելով ասէ.

Թշնամիք իմ ասացին ինձ չար. երբ իցէ՝ զի մեռցի. և կորիցէ անուն նորա։ Այսինքն որք յառաջն ինձ բարեկամ էին՝ և բարի ասէին զինէն, դարձան 'ի թշնամութի, և ասացին ինձ չար. որ բառդ **ինձ**՝ դնի փոխանակ բառիս **զինէն**, որպէս թէ ասէր. սկսան չար խօսել զինէն. և որ մեծն է 'ի մէջ չարեաց՝ զայն խնդրէին վասն իմ, այսինքն զմահ, ասելով. **երբ իցէ զի մեռցի**, և անուն նորա կորիցէ, և յիշատակ անուան նորա ջնջեսցի։

Այս բանք յայտնի նկարագրեն զչարութի տիրասպան հրէից՝ մանաւանդ քահանայից նոցա, և փարիսեցւոց, որք ծարաւի էին արեանն քսի. և վասն բառնալոյ զկեանս նորա հանապազ խորհէին խորհուրդ չար, և ասէին, երբ իցէ զի մեռցի. և հաստատեցին 'ի մէջ իւրեանց, և ասէն. լաւ է մեզ զի մեռցի այրն այն. (յովհ՛. ժա. 50.) Զայս խորհուրդ իւրեանց գտին օգնական զորդի կորստեան զյուդա, որ օրինակեալ լինէր 'ի մատնիչս անձին դաւթի, ընդ որս էր և աբեսաղոմ և աքիտոփէլ, եւն, զորս և 'ի մասնաւորի յիշէ մարգարէն ասելով.

Զ. Մտանէր տեսանել. ընդունայնութիւն խօսէր 'ի սիրտ իւր. ժողովէր զանօրէնութիւնս յանձն իւր.

Է. Երթայր ելանէր և նոյն խօսէր. զինեն շշնջէին ամ թշնամիք իմ.

Ը. Խորհեցան չար 'ի վերայ իմ. բան անօրէնութեան եդին 'ի վերայ իմ.

Նոյն բանք ակնարկեն 'ի գլխաւոր թշնամին դաւթի, որդին էր աբեսաղոմ, որ երկիցս եմուտ առ հայր նենգութբ. մի՝ պատրուակաւ հրաւիրելոյ զնա 'ի կատարս խաշանց՝ առ 'ի սպանանել անդ զանդրանիկ որդի նորա զամնոն. (Բ. Թագ՛. ժգ. 24 = 30.) և մի եւս՝ պատրուակաւ կատարելոյ զուխտ իւր, յորում ունէր ապստամբել ընդդէմ նորա, և կորուսանել զնա. (Բ. Թագ՛. ժե. 8 = 14.) Այնպէս արար և աքիտոփէլ, զի 'ի յարելն յառաջագոյն 'ի խորհուրդ աբեսաղոմայ, մտանէր երբեմն առ դաւիթ նենգութբ՝ առ 'ի գիտելոյ և դիտելոյ ինչ ինչ զնմանէ. բայց 'ի մտանելն խորհէր զխորհուրդ նամրութե ընդդէմ նորա. նմին նման գտան և այլք բազումք, որք միաբանեալ էին ընդ աբեսաղոմայ. յայտնապէս հայելով ասէ.

Մտանէր տեսանել. Նոյնքն, որ թշնամացեալ էր ընդ իս, մտանէր առաջի իմ, կամ գայր առ իս տեսանել զիս պատրուակաւ այցելութեան, և կամ հարցանել ինձ ինչ բանիւք խաղաղութեան. բայց պատելով զնոյն կեղծեօք. և առ այս յարէ.

Ընդունայնութիւն խօսէր 'ի սիրտ իւր. Նմանօր բառդ ընդունայնութիւն՝ կրկնակի կարէ իմացեալ լինել. մի՝ փոխանակ անկարգ և վնասակար խորհրդոց. և մի եւս՝ փոխանակ ընդունայն բանից. ըստ առաջնոյն՝ բայդ խօսէր՝ դնի փոխանակ խորհելոյ. որպէս թէ եղեալ էր . 'ի գալ թշնամեացն առ իս հերպարանօք բարեկամի՝ խորհուրդ վասն խորհէր 'ի սրտի իւրում, որպէս դնի 'ի քաղդէականն .

Իսկ ըստ երկրորդին՝ կրկին օրինակաւ մեկնի այս բան, զի եթէ բառդ 'ի պէլէպ տացի իբր ներգործական, կամի ասել . բերան նորա խօսէր զունայն բանս զսղալցեալս 'ի սրտի իւրում . Իսկ եթէ տացի իբր նախդրիւ՝ փոխանակ բառիդ ― պէլէպ կամ լէպ սրտէ, կամի ասել, խօսէր ըստ սրտի իւրում զբանս ունայնս . Այս միտ բանին է՝ թէ թշնամին իմ 'ի գալն առ իս պատրուակաւ տեսանելոյ զիս, որովհետեւ չունէր կարեւոր բանս ինչ խօսելոյ . խօսէր զայնպիսիս որք էին ունայնք . յորմէ եւ նիւթէր 'ի սրտի զանօրէնութիւն . որոյ վասն յաւելու զհետ եւ ասէ .

Ժողովէր զանօրէնութիւն յանձն իւր . Այսինքն թէ որպէս բերանովն զնենգութիւն խօսէր, նոյնպէս եւ սրտին զանօրէնութիւն խորհէր . եւ զի ցուցցէ զյոլովութիւն անօրէնութեանն՝ ոչ ասէ խորհէր, այլ թէ ժողովէր . որ է ասել, բազմացուցանէր կամ դիզէր զանօրէնութիւն 'ի վերայ անօրէնութեան . Այս դարձեալ՝ առ 'ի ցուցանել՝ թէ այն ոչ էր սոսկ խորհուրդ, այլ հաստատութիւն առաջադրութեան, ոչ դնէ թէ ժողովէր 'ի միտ, կամ 'ի սրտի, այլ յանձն իւր . որպէս թէ ասէր . բոլոր անձամբ հաստատեալ էր զմիտս եւ զկամս իւր 'ի բազում չարիս՝ ընդդէմ անձին իմոյ .

Այս բան որպէս հայի 'ի սատանայ . զորմէ այսպէս գրէ սուրբն Շնորհալի ('ի մեկն . ա . պետ . բ . 2 . ճառ դ .) * զամենայն տեսակս (ասէ) անօրէնութեան ժո֊
,, ղովեաց յանձն իւր, զնենգութիւն, զկեղծաւորու֊
,, թիւն, զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն . եւ
,, սոքօք որսացաւ զմարդն 'ի կորուստ . նախանձեալ
,, ընդ մեծութիւն պատուոյ նորա, կեղծաւորեցաւ առ
,, նմա, եւ նենգեաց զնա . չարախօսեաց զաստուծոյ, եւ
,, նախանձու եցոյց զնա առ մարդոյն, զիւրն նմա դնե֊
,, լով կերպարան ॥ . Այսպէս սորա եւ ընդդէմ դաւ֊
թի . եւ զօրս ժողովեաց յանձն իւր՝ խճողեաց զնոյնս յանձն թշնամեաց նորա . եւ ոչ եւս թոյլ ետ նմա դադարել 'ի խորհելոյ զչարիս 'ի մտանել եւ յելանել իւրում . եւ առ այս յաւելու .

Է. **Արտաքս ելանէր և զնոյն խօսէր.** Այլ բայց զնոյն յարաբերէ զերկոսին նախակարգեալ բանսն, այսինքն ըզնենգութիւնն և զանօրէնութիւն. զի յետ դնելոյ զայդոսիկ՝ ի յարևէն զկնի՝ արտաքս ելանէր և զնոյն խօսէր, բայց նոյն՝ ցուցանէ զայնս զորս եդ յառաջն. որով և միտ բանին լինի այս, թէ որպէս ի գալն առ իս՝ նենգութեամբ բանից պատրուակել ջանայր զչարիս սրտի իւրոյ, յորժամ և սնոտիս խօսէր, և ի սրտի իւրում չարիս նիւթէր, նոյնպէս և ի հեռանալն յինէն՝ զնոյն նենգութիւն և զնոյն չարիս խորհէր և խօսէր ընդ թշնամիս իմ. որով և գրգռէր զնոսա շշնջել զինէն. և առ այս յարէ.

Զինէն շշնջէին ամենայն թշնամիք իմ. Այսինքն, որք միաբանեալ թշնամացեալ էին ընդ իս, ամենեքեան նոքա գրգռեալք ի միմեանց և յայլոց՝ շշնջէին զինէն. այսինքն խօսէին զինէն գաղտ՝ թէ զիարդ կորուսցեն զիս. վասն որոյ յարէ.

Ը. **Խորհեցան չար ի վերայ իմ. Բան անօրէնութեան եդին ի վերայ իմ.** Այսինքն խորհեցան չարիս հատուցանել ինձ, և բառնալ զկեանս իմ. և վասն այնորիկ բան անօրէնութեան եդին ի վերայ իմ. Այսինքն սուտ յանցանս բամբասեցին զինէն, կամ վկայեցին զինէն զանօրէն բանս, զի նովին ցուցցեն զիս պարտաւոր մահու.

Այս ամենայն յայտնի նկարագրութիւն է գործոցն փարիսեցւոց և քահանայից նոցա, որք շշնջէին զՔնէ, և յատկապէս գուշակութիւն է մատնութեանն Յուդայի, որ յետ հաստատելոյ զմիտսն մատնել զվարդապետ իւր, և յետ գնալոյ առ քահանայապետսն ի վաճառել զնա նոցա, մտանէր և ելանէր առաջի՝ տեսանել, այսինքն դիտել՝ և գտանել պարապ՝ զի մատնեսցէ զնա ի ձեռս տիրասպանիցն. Իսկ հուսկ յետոյ մեկնեալ ի նոցանէ, և ելեալ արտաքս՝ գնայր առ նոսա, որք ժողովեալ էին, և շշնջէին զնմանէ, և խորհէին չար ի վերայ նորա, և հաստատէին զնմանէ բան անօրէնութեան.

Այս բան թէ *արտաքս ելանէր և զնոյն խօսէր‖. զոր ի հասարակի եդաք, կարէ հայիլ և ի մատնութի յառաջին գնալն Յուդայի՝ յորժամ ել և գնաց առ թշնամեան քոյ, և ասաց. զինչ կամիք տալ ինձ. ևն. բայց բարւոք ևս մեկնի 'ի վերայ վերջին գնալոյ նորա առ նոսա ։

Իսկ շշնջել թշնամեացն քոյ, և խորհել նոցա չար 'ի վերայ նորա՝ ոչ եղև միանգամ, այլ բազում անգամ, և բազում օրինակաւ, որպէս յայտնի տեսանի յաւետարանի. նոյնպէս և դնել նոցա բան անօրէնութեան 'ի վերայ նորա՝ եղև բազում անգամ. բայց առաւել ևս յետ մատնութեն, զորոց կարես տեսանել 'ի վերջին գլուխս չորից աւետարանչաց, որք խօսին ըզգործոց տէրասպան հրէից ։ Նոյն բան կարէ հայիլ և 'ի վճիռ նոցա չար. զի այն ևս էր բան անօրէնութեան. այսինքն վճիռ անօրէն, զոր եդին 'ի վերայ նորա սպանանել զնա ։

Այլ գիտելի է, զի այն բանք որք դնին եզակի զյուդայէ՝ ('ի համարսն 6. և 7.) կարեն հայիլ և 'ի գործս փարիսեցւոց, որք մատչէին կեղծաւորութբ առ տէրն մեր, և չարիս նիւթէին ընդդէմ նորա. (տես մատ. իբ. 24. և ժթ. 3. և յովհ. ը. 3. ևն.) Իսկ յայս միտ 'ի թարգ". ասորւոց, և 'ի բանս ոմանց 'ի նախնի հարց, նախակարգեալ բանքդ յոգնակի դնին այսպէս. * յորժամ գային տեսանել զիս, զնանրութի խօսէին, „ և 'ի սիրտ իւրեանց զանօրէնութի ժողովէին. . . բան „ անօրէնութէ եդին 'ի վերայ իմ ‖.

Գիտելի է ևս, զի 'ի ժամանակս մեր 'ի կարգ այսօր անձանցն՝ այս յետին բան դնի հանդերձ յաւելուածով այսպէս * բան անօրէնութեան եդին 'ի վերայ „ իմ, տէր տէր մի թողուր զիս ‖. այլ այս յաւելուած հայի 'ի բան ժա. համարոյն. ուր ասէ * այլ դու տէր „ ողորմեա ինձ ‖. ևն. Ո յայտնի եղեւ մարգարէին՝ կամելով քաջալերել առ անձին՝ հարցանելով ինքն ասէ ։

Թ. Միթէ որ ննջիցէ, և այլ ո՛չ ևս յաւելուցու յառնել. քանզի և այրն խաղաղութեան իմոյ, յոր և յուսացայ ։

Որչափ ինչ խորհեցան թշնամիք դաւթի (յօրինակ թշնամեացն քոյ) ամենայնն դարձաւ 'ի նախատինս նոցա, և 'ի փառս դաւթի, որ նախանկար լինէր քոյ.

զի 'ի կամիլ նոցա կորուսանել զնա , նոքին կորուսին զանձինս . և եղեն պատճառ բարձրանալոյ նորա առաջի այ և մարդկան . յայս հայելով ասէ .

Մ՞իթէ որ ննջիցէն , և այլ ոչ ևս յաւելուցու յառնել :

Այս բան կրկնակի մեկնի . մի՝ իբր 'ի բերանոյ դաւթի և քսի , և մի ևս՝ 'ի բերանոյ թշնամեացն դաւթի և քսի . ըստ առաջնոյն միտ բանին լինի այս . 'ի խորհել թշնամեացն քսի կամ դաւթի կորուսանել զնա՝ միթէ նա կորուսեալ մնասցէ , և այլ ոչ ևս գտանիցի և կեցցէ . կամ որ նոյն է , 'ի կամիլ թշնամեաց հալածել զքս կամ զդաւիթ , և առնել զնա իբր այնպիսի՝ որ իցէ ննջեալ կամ մեռեալ , միթէ այնպէս մնասցէ , և ոչ ևս երևեսցի զարթուցեալ կամ յարուցեալ .

Այլ թէ ընդէ՞ր ննջել զնէ , և զիա՞րդ յարմարեցուցանէ զննջելն և զյառնելն՝ հալածանաց և դարձի , կամ մահու և յարութեան , (տես 'ի սաղ . Գ . Ե .) որ ասէ * ես ննջեցի և 'ի քուն եղէ . զարթեայ , և տէր „ ընդունող իմ է ‖ . զի այս բան ևս 'ի նոյն հայի , և 'ի նոյն միտս առի ըստ իւրին , և ըստ բառին . այսչափ ինչ է տարբերութիւնն , զի այն է զանցելոյ , իսկ այս իբր զապառնեաց .

Իսկ պատճառ յերրորդ դէմս խօսելոյն դաւթի՝ է գերազանց ցուցանել զասացեալսն և իբր ձեռնարկութեամբ հաստատել , որպէս թէ եղեալ էր . զորօրինակ որ ննջէն՝ յառնէ , նոյնպէս և ես : Կամ դարձեալ տոլքին կամի յայտ առնել , թէ թէպէտ ինքն է որ խօսի , բայց ուղղակի 'ի վերայ քսի խօսի ըստ ննջելոյ նորա և ըստ յառնելոյ : Խօսի միանգամայն և 'ի դիմաց արդարոյ , որ եթէ ննջիցէ փոքր ինչ այսինքն եթէ անկանիցի՝ փութայ յառնել : Յայս հայելով բարսեղ վարդապետ ('ի մեկն . մարկ . գլ . ԺԴ .) ասէ . * ամենեքին անկանին , այլ ոչ ամենեքեան կոր„ ծանին . որպէս և գրեալ է . միթէ որ ննջիցէ՝ և „ այլ ոչ ևս յաւելուցու յառնել . զի անմեղն եթէ „ եօթն անգամ անկանի՝ դարձեալ յարիցէ . իսկ մե„ ղաւորք (կործանին և) տկարանան 'ի նմին ասէ „ սաղմն . այս անկումն և ննջել ոչ է բնաւորական „ կրից ըստ մարմնոյ . այլ ըստ խոտորնակ յարձակ֊

„ մեծ կամացն՝ խլելով և յափշտակելով զչարն‖։ Իսկ երկրորդին առեալ՝ այսինքն իբր 'ի բերանոյ թըշնամեաց՝ յայլ միտս շրջի այս բան, և յայնժամ բառդ զինէ դնի փոխանակ բառին ինէ կամ ընդդէմ, կամ վասն իմ, և կամ իբր զարդ. որպէս թէ ասել թշնամեաց զինէ կամ զդաւթէ, եթէ սպանցուք զնա, ազատիմք 'ի ձեռաց նորա, զի կորնչի խօսս. վասն զի յայտ է թէ որ ննջիցէ, այսինքն որ մեռանիցի, ոչ ևս յաւելու յառնել։ Այս այսպէս խորհեցան թշնամիք տեսան մերոյ. զի եղեալ էին 'ի միտս իւրեանց՝ թէ ոչ կարէ նա յառնել, վասն որոյ զգուշացան գերեզմանին, զի մի աշակերտք նորա եկեալ գողասցեն զնա. որպէս գրէ մատթէոս. (իէ. 62 = 66.) Իսկ եղեալ մարգարէին զխորհուրդ թշնամեաց իւրոց և զթշնամեացն քնի, և զմնալ նոցա զբանանօրէնութն, առաջի առնէ այժմ՝ թէ ով եղև յետին զրգռիչ նոցա 'ի գործել զայն գործ. վասն որոյ ասէ.

Քանզի և այրն խաղաղութեան իմոյ՝ յոր և ես յուսացայ։

Այր խաղաղութեան կարէ առնել երեքին. մի նա՝ որ խաղաղութբ կայ ընդ մարդոյ, կամ ընդ որում լինի կալ խաղաղութբ. երկրորդ նա՝ որ է պատճառ խաղաղութեան, որ և ասի այր խաղաղարար. երրորդ նա՝ որ միայն 'ի ժամանակի խաղաղութե ունի զբարեկամութիւն, և ոչ 'ի ժամանակի խռովութեան. Իսկ որ գլխաւոր բարեկամ էր դաւթի աքիտոփէլ, և կամ աբեսաղոմ, և այլն, կոչի աստ 'ի դաւթայ այր խաղաղութեան իմոյ. զի 'ի սկզբան այնպիսի էր ընդ նմա. որոյ վասն և յուսայր 'ի նա. ըստ որում և ասէ իսկ. յոր և ես յուսացայ. իբր թէ ասէր. այս այր խաղաղութե իմոյ յոր ես յուսացայ՝ յաճախեաց առնել ինձ խաբէութիւն.

Յուդայ ևս եղև առ քս այր խաղաղութեան, զի ինքն քս խաղաղութեամբ կայր ընդ նմա իբրև վարդապետ ընդ սիրելի աշակերտի, իբրև հայր ընդ հարազատ որդւոյ, իբր տէր ընդ հաւատարիմ ծառայի. որոյ վասն և վստահացեալ էր 'ի նա. ըստ որում և ասէ. Յոր և ես յուսացայ։ Այսինքն իբրև 'ի հաւատարիմ բարեկամ վստահացայ 'ի նա կամ հաւատացի նմա. որով և յանձնեցի նմա բազում ինչ, ետու նմա և զպատիւ առաքելութեան, և զիշխանութիւն հալածելոյ զդևս և գործելոյ զզարմանչելիս․ և նա այսու ամենայնիւ անհաւատարիմ գտաւ առ իս․ ոխն իւր յարէ զնա, և ասէ.

Ժ. **Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն.**

Այս բան է մասն նախընթաց համարոյ, որոյ շարագրութիւն կարգի այսպէս․ այրն խաղաղութեան իմոյ յուսացեալն յինէն՝ որ և ուտէր զհաց իմ՝ յաճախեաց առնել ինձ խաբէութիւն. Որչափ զերախտիս եգիտ Յուդայ 'ի Քնէ՝ այնչափ ապերախտ գտաւ առ նա, և որչափ բարիս եցոյց նմա Քս, այնչափ բազմացոյց և նա զչարութիւն իւր, յայս հայելով ասէ.

Որ ուտէր զհաց իմ, յաճախեաց առնել ինձ խաբէութիւն.

Ոչ ասէ արար, այլ յաճախեաց․ զի ընդդէմ բազում երախտեաց նորա բազմացոյց Յուդայ զչարութիւն իւր․ որով և չարաչար անիրաւեցաւ առ նա, և ըստ բազում գլխոց ապերախտ երևեցաւ առ նա՝ իբրև առ արարիչ իւր, իբրև առ տէր իւր, իբրև առ վարդապետ իւր, իբրև առ բարեկամ իւր, իբրև առ բարերար իւր, իբրև առ երախտաւոր իւր, իբրև առ կերակրիչ իւր․ ևն. որով և քան զշուն վատթարագոյն գտաւ․ զի նա ընկալեալ պատառ մի հացի՝ երախտագէտ ցուցանէ զինքն․ իսկ Յուդա ուտելով հանապազ զհաց տեառն իւրոյ ընդ նմա՝ մանաւանդ զհացն յերկնից իջեալ՝ զհացն զայն՝ որ էր մարմին արարչին իւրոյ, զնոյն զայն ճաշակեալ՝ յաճախեաց առնել նմա զխաբէութիւն. Նման որոյ տէրն մեր 'ի վերջին ընթրիսն յետ լուանալոյ զառաքեալսն, գանգատի զնմանէ առաջի նոցա․ և 'ի մէջ բերելով զայս բան, ասէ.
* Ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ․ զի ես գիտեմ
„ զորս ընտրեցի․ այլ զի լցցի գիրն, թէ որ ուտէ
„ ընդ իս հաց՝ արար ինձ խաբէութիւն»․ (յովհ․ ժգ․ 18․) Այս բան յայտնի ցուցանէ տէրն մեր՝ թէ մեծ եղև յոյժ չարութիւնն Յուդայի, և այնչափ մեծ՝ մինչև այնպիսի նախատական բանիւ գուշակել զնմանէ մարգարէին.

Զչարութիւնն Յուդայի կոչէ աստ մարգարէն խաբէութիւն՝ վասն երից. մի՝ վասն ցուցանելոյ զծանրութիւն չարութեանն. և պատճառն է, զի 'ի մէջ սիրելեաց ծանր չար է խաբէութիւնն. զորոյ զփորձն ուսանիմք 'ի մէջ բարեկամաց, որք թէպէտ յո՛ և իցէ իրս տանելին մխիթարանց, բայց 'ի խաբէութիւնս ոչ կարեն հանդարտել. և յայտնի եւս ասեմք, զի զորս ոչ կարաց բաժանել թշնամիք և այլ ո՛ և իցէ յանցանք, խաբէութիւնն բաժանեաց անյօդելի, և չեղև հնար հաշտելոյ. զի այնպիսեաց հաշտութիւնն եւս կարէ համարիլ խաբէութիւն. ապա առ 'ի ցուցանել մարգարէին՝ թէ քանի չար էր յանցանքն յուդայի՝ կոչէ զայն խաբէութիւն որով նշանակի և նենգութիւն, այն է ծածուկ խաբէութիւն. Ուստի իգնատիոս վարդապետ ('ի մեկն. ղուկ. իբ. 2.) նենգութիւն ընթեռնու յասելն. * որ ունէր զհաց նորա իբրև այր խաղաղութեն՝

„ արար նմա նենգութիւն‖.

Երկրորդ՝ վասն գործոյն մատնութեան՝ զոր խաբէութեամբ կատարեաց. արտաքուստ երևեցոյց զինքն բարեկամ, և 'ի ներքուստ նիւթեաց զչարութիւն. և 'ի մատնելն անդ՝ խաբէութեամբ մերձեցաւ առ տէր իւր, և համբուրեաց զնա, ասելով. ողջ եր վարդապետ. որով և զգործին խաղաղութեան այսինքն զհամբոյրն սիրոյ՝ արար գործի խաբէութեան և չարութեան, այսինքն նշան մատնութեան. քանզի զայն նշան տուեալ էր ըմբռնողաց, որպէս գրեն աւետարանիչք.

Երրորդ՝ վասն գոլոյ յինքեան խաբեբայ, որով և եղև նա իբր հայելի խաբէութեան. զի զօրինակ որ ինչ տեսանի 'ի հայելին՝ երևի թէ կայ 'ի նմա, բայց չկայ ինչ, այնպէս և 'ի յուդա եղև. զի ամենայնի զոր արար նմա քս՝ երևեցոյց զինքն ընդունակ, բայց և ոչ զմին ընկալաւ 'ի հոգի իւր. ամենայնի ընդդէմ եկաց, յամենայնի անարժան գտաւ, զամենայնս արհամարհեաց, և հուսկ յետոյ զքն առ ոտն հարեալ, եդ զբարերար իւր 'ի ձեռս թշնամեաց նորին.

Բարոյապէս սոյն այս բան հայի յայտնապէս՝ որք կրկնելով զմեղս յանձինս 'ի խաբէութիւն. Մատչին 'ի խորհուրդ ապաշխարութեան, և խոստանան ոչ ևս մեղանչել. ունեն զհայն անմահութեան, այսինքն զմարմին տեառն և նորոգին. և ապա դառնան յետս 'ի յառաջադրութենէ իւրեանց, և կամովին համբուրեն ըզմեղսն՝ զորս ապաշխարեցին։ Մատչին վերստին յապաշխարութ̃ի, և միւսանգամ յետս կան, որով գրեթէ խաբեն զա̃ծ, և այն յաճախակի։ Եւ ահա զայսպիսեաց տրտմապէս ասէ ք̃ս. որ ուտէր զհաց իմ՝ յաճախեաց առնել ինձ խաբէութիւն։

Յաճախես այո՛ 'ի խոստովանութ̃ի, բայց յաճախելով 'ի մեղս՝ այնու յաճախես խաբել զա̃ծ։ Եթէ ո՛չ կամիս յաճախել՝ փախիր յառթից։ Եթէ հիւանդն ո՛չ զգուշասցի յառթէ հիւանդութ̃ե՝ յաճախէ 'ի նոյն, և որչափ յաճախէ, այնչափ տկարանայ։ Մի՛ և նոյն դեղ յաճախ տուեալ ո՛չ ևս օգտէ. զի ո՛չ միայն սովորի բնութիւնն, այլ և ո՛չ կարէ ձգել յինքն զզօրութիւն նորա. որպէս 'ի սովորիլ մարդոյ ծխել յաճախ զծխանելիս՝ չառնու անտի զօգուտ նոր։

Արդ զորօրինակ հիւանդն ո՛չ զգուշանալով յառթէ անտի հիւանդութեան՝ 'ի յաճախելն առ բժիշկս՝ յաճախէ առնել զխաբէութիւն առ բժիշկսն՝ յորոյ էառ զդեղ, սոյնպէս և նոքա որք ո՛չ զգուշանալով յառթից մեղաց մոլին 'ի նոսին՝ յաճախեն առնել խաբէութիւն ընդդէմ երկնաւոր բժշկին, զորոյ զմարմինն ուտեն ընդ տեսակօք հացի իբրև զդեղ ամենազդու։ Որով և ապերախտ գտեալ առ նա՝ լքանին 'ի խնամոց նորա. * երկիր որ ըմպիցէ զանձրև բազում անգամ եկեալ „ 'ի վերայ նորա . . . որ բերէ զփուշ և զտատասկ, ան„պիտան է, և մերձ է յանէծս և վախճան նորա յայ„րումն ‖. (եբր. զ̃. 7. 8։) Առ որ ասէ ա̃ծ բերանով Երեմիայ. (լ̃. 12.) * սաստկացուցի զբեկումն քո, և „ ցաւագին են հարուածք քո ‖։ Եւ սիրաք վայ տայ այսպիսեացս ասելով. * վա՛յ այնոցիկ որք (յետ ըմպելոյ „ զօրհնութիւն 'ի տ̃նէ) կորուսին զհամբերութ̃ի, և „ որք թողին զճանապարհս ուղիղս, և խոտորեցան 'ի „ ճանապարհս թիւրս ‖. (սիրաք բ̃. 16։) Եւ ապա „ ('ի գլ. ի̃զ. 17.) ասէ. * որ դառնայ յարդարութ̃է „ 'ի մեղս՝ պատրաստէ զնա ա̃ծ 'ի սուր ‖. որպէս արար ընդ իսրայէլացիս. որք այսօր խոստանային ա̃յ ծառայել, և վաղիւ կռոց նուիրէին։

Ծանիր 'ի վերջոյ, զի որչափ յաճախես 'ի մեղս, այնչափ յաճախես առնել խաբէութ̃ի ընդդէմ բարերարիդ, և այնչափ առաւել պարտաւոր գտանիս տանջանացն գժոխոց. և այս՝ մանաւանդ վասն մեծի ապերախտութեանդ, զոր մարգարէն խաբէութիւն կոչէ. որպիսի եղև յուդային և այլոց թշնամեաց տեառն մերոյ, զորոց խօսեցաւ ցարդ մարգարէն 'ի դիմաց Քսի և 'ի դիմաց իւրոց. և այժմ յետ ստգտանելոյ զնոսա դարձուցանէ զբան իւր 'ի մաղթանս. և խնդրէ յԱյ՝ ասելով.

ԺԱ. Այլ դու Տէր ողորմեա ինձ. և կանգնեա զիս. և ես հատուցից նոցա.

Տէրն մեր յայտ է թէ յառաջս չարչարանաց իւրոց մատոյց առ Հայր պաղատանս վասն իւր, խնդրելով 'ի նմանէ ապրեցուցանել զինքն 'ի մահուանէ, այսինքն է յարուցանել, որպէս գրէ առաքեալն (Եբր. Ե. 7.) ոչ զի ինքն ոչ էր կարող յարուցանել զինքն, որ ասէր. ես յարուցանեմ զանձն իմ. (Յովհ. Ժ. 17. 18.) այլ զի որովհետև ճշմարիտ մարդ էր, և 'ի կերպարանս ծառայի խօսէր, 'ի Հօրէ իւրմէ խնդրէր զնոյն, և ողորմութեան նորա տայր զայն՝ ասելով.

Այլ դու Տէր ողորմեա ինձ. Այլ դնելով կամի ասել. ահա թշնամիք իմ չար խորհին 'ի վերայ իմ, և կամին սպանանել զիս, և ոչ ոք է՝ որ ողորմի ինձ, բայց դու միայն. և արդ ողորմեա՛ ինձ, կամ ցոյց առ իս զողորմութիւն քո. այսինքն թէ ողորմութեամբ քով արա՛ զոր խնդրեմ. իսկ թէ զինչ էր այն՝ յայտ առնէ ասելով.

Եւ կանգնեա զիս. Այսինքն յարո զիս, որ է ասել. մի թողուր զիս մնալ 'ի մահու, այլ արա՛ զի յարեայց. կամ 'ի բերանոյ դաւթի խօսելով՝ մի թողուր զիս մնալ հիւանդ կամ տարամերժեալ. այլ կանգնեա՛ զիս, այսինքն առողջացո՛ զիս կամ վերացո՛ զիս յառաջին վիճակ իմ. Իսկ թէ զինչ ունէր ինքն առնել 'ի կանգնիլն, յայտ առնէ ասելով.

Եւ ես հատուցից նոցա. Այս հատուցումս կրկնակի կարէ իմացեալ լինել. մի՛ ըստ բարւոյ մասին, և մի՛ ես՝ ըստ վրէժխնդիրն լինելոյ. Ըստ առաջնոյն՝ կամի ասել. դու կանգնեա զիս, և՝ ես փոխանակ չարեացն՝ զոր հատուցին ինձ թշնամիք իմ՝ հատուցից նոցա զբարիս, դարձուցանելով զնոսա 'ի ճշմարիտ հաւատս, և առնելով զնոսա երկրպագուս քոյ. և ժառանգեցուցանելով զնոսա 'ի փրկութիւն. որպէս և եղեն իսկ առ բազումս.

Բաց երկրորդին կամի ասել. յետ յառնելոյս եթէ ոչ զղջասցին որք զիս կորուսանել կամեցան, մատնեսցիս զնոսա 'ի ձեռս ատելեաց նոցա. որպէս և եղեն իսկ առ անհաւան հրէայս (մատ. իա. և իգ. ղուկ. ժթ. խգ.) մնացուածք 'ի ժամանակս աւերութեան երկրին աւետեաց 'ի զօրացն վեսպասիանոսի և տիտոսի, յորոց ընկալան զհատուցումն գործոց իւրեանց. և որ մեծն է 'ի կամիլն բառնալ յերկրէ զքո, բարձան նոքեանք յերկրէ իւրեանց, և մերժեցան յամենայն բարեաց. որով չկարասցին ուրախանալ ընդ այն՝ զոր կամէին՝ յաւել իւրեանց. * լաւ է մեզ զի այր մի մեռանիցի 'ի վերայ ժողովրդեանս, և մի ամենայն ազգս կորիցէ‖. (յով. ժա. 50.) քանզի 'ի ներհակն դարձաւ՝ 'ի կանգնել այսինքն 'ի յառնել տեառն մերոյ. որով և յամօթ եղեն 'ի խորհուրդս և 'ի բանս իւրեանց. զոր և յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով.

ժբ. Յայս ծանեայ՝ թէ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ.

Որչափ մեծ է ուրախութիւն թշնամեաց 'ի տեսանել նոցա զատելին իւրեանց մատնեալ 'ի չարիս, զոր նիւթեն կամ հնարեն ընդդէմ նորա, այնչափ պակասի այն 'ի նոցանէ և դառնայ 'ի տրտմութիւն, եթէ տեսցեն՝ թէ այն չարիք պատճառ եղեն փառաւորութեան նորին. ուստի և ոչ ուրախանալ թշնամեացն կամ տրտմիլ նոցա՝ է յայտնի ցոյց ձախորդութեան կամաց իւրեանց, և յաջողութեան ատելւոյն. սմին իրի զայն եդեալ 'ի մէջ բերէ մարգարէն՝ իբր արտաքին նշան յաջողութե̃, այսինքն իբր նշան հաճելոյն այ̃ 'ի յարուցանել, յառնելն.

Յայս ծանեայ՝ թէ հաճեցար ընդ իս. զի մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. Որ բառդ յայս՝ յարաբերէ զյաջորդ բանն՝ զայն՝ թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. որպէս թէ ասէր. այսու գիտացից՝ թէ հաճեցար ընդ իս՝ եթէ արասցես՝ զի մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. իսկ այս յայնժամ լինի, յորժամ յարուցանիցես զիս.

Մարթ է եւ աստ՝ թէ բառդ յայսմ՝ յարաբերել զնախընթաց բանն զայն զոր ասաց, կանգնեաս զիս. եւն. որպէս թէ ասէր. Յայսմ, այսինքն 'ի կանգնելդ զիս կամ 'ի յարուցանելդ զիս՝ յայտնի գիտացից, թէ հաճեցար ընդ իս եւ ճշմարիտ երեւեցուցեր զասացեալդ 'ի յորդանան եւ 'ի թափոր, թէ հաճեցայ ընդ քեզ. որովհետեւ սովին փառաւորես զիս, եւ յամօթ առնես զթշնամիս իմ.

Սոքիմեք ոչ ցուցանի թէ տարակուսէր տէրն մեր ընդ հաճիլ կամ ընդ ոչ հաճիլ հօրն, այլ որ անտարակուսելին է՝ զայն 'ի մէջ բերէ. որպէս թէ ասէր. գիտեմ զի հաճիս ընդ իս, գիտեմ զի յարուցանելոց ես զիս, գիտեմ զի յամօթ լինելոց են թշնամիք իմ. արդ զոր գիտեմ թէ առնելոց ես, զնոյն խնդրեմ՝ զի կատարեսցես.

Իսկ բառդ ծանեայ՝ որ դնի 'ի կատարեալ ժամանակն, ունի զզօրութիւն ապառնոյ, այսինքն թէ ծանեայց. բայց քանզի խօսի զանտարակուսելի իրէ, վասն այսորիկ 'ի կատարեալն դնէ. զայն առնէ եւ 'ի յաջորդ համարն, որ բացատրէ զասացեալն յայս համար. եւ գրեթէ զօրութեամբ կրկնելով զբառդ յայսմ, յարէ եւ ասէ.

ժգ. ԱՅԼ ԶԻՍ ՅԱՆՄԵՂՈՒԹԵԱՆ ԻՄՈՅ ԸՆԿԱԼԱՐ. ԵՒ ՀԱՍՏԱՏԵՑԵՐ ԶԻՍ ԱՌԱՋԻ ՔՈ ՅԱՒԻՏԵԱՆ.

Յայտ է՝ թէ տէրն մեր ամենեւին չունէր ինչ բնաւ մեղաց, եւ անհնարին էր նմա իսկ մեղանչել. ուստի եւ ամենեւին անպարտ էր մահու. եւ սակայն որովհետեւ յանձն էառ զմեղս մարդկան, իբրեւ մեղաւոր մատնեցաւ 'ի ձեռս թշնամեաց իւրոց, եւ ընդ անօրէնս համարելով 'ի մէջ անօրինաց խաչեցաւ եւ մեռաւ. արդ որպէս իբր մեղաւոր մատնեցաւ մահու, սոյնպէս եւ իբր անմեղ ել 'ի մահուանէ, կամ այսպէս ասացից. որպէս վասն մեղաց մարդկան մատնեաց զնա հայր 'ի ձեռս թշնամեաց նորին 'ի մահ խաչի, սոյնպէս եւ վասն անմեղութեան նորա ընկալաւ զնա, այսինքն յարոյց զնա եւ բարձրացոյց յերկինս. սմին իրի ասէ.

Այլ զիս յամբծութեան իմում ընկալար ։ Ուր բառդ այս՝ 'ի մէջ բերէ զայն ամենայն՝ զոր ասաց 'ի վերոյ զթշնամեաց իւրոց․ որպէս թէ ասէր․ թշնամիք իմ այսպէս և այսպէս արարին ինձ․ սակայն դու ո՛չ թողեր զիս 'ի ձեռս նոցա իսպառ, այլ տեսեալ զիս յանբծութեան և յանմեղութե՟ն՝ ընկալար, այսինքն յարուցեր զիս և փառաւորեցեր, ո՛չ առժամանակեայ փառօք՝ այլ յաւիտենականաւ․ և առ այս յաւելու ։

Հաստատեցեր զիս առաջի քո յաւիտեան ։ Կամի ասել․ թէպէտ և առաջի թշնամեաց իմոց խոնարհեցուցեր զիս առ ժամանակ մի, սակայն առաջի քո հաստատեցեր զիս յաւիտեան ։ Այս հաստատելս առաջի իւր՝ յերիս կարէ հայիլ․ մի՝ 'ի նոյն ինքն 'ի ք՟ս, ըստ որում համբարձ զնա հայր յերկինս, և կացոյց առաջի իւր՝ այսինքն ընդաջմէ իւր․ որ է ասել, փառաւորեաց զնա յամենամեծ փառս յաւիտեան ։

Երկրորդ՝ 'ի մարմինն ք՟սի՝ այսինքն յեկեղեցի նորա, զոր հաստատեաց առաջի իւր, ըստ որում պահեաց և պահէ առաջի իւր, այսինքն 'ի մասնաւոր խնամս տեսչութեան իւրոյ յաւիտեան ։ Երրորդ՝ 'ի վարդապետութիւնն ք՟սի՝ զոր տարածեաց յաշխարհ ամենայն առաջի իւր, այսինքն ըստ իւրոյ հաճութեան և զօրութե՟․ և այն յաւիտեան, այսինքն մինչև 'ի կատարած աշխարհի ։ Զայս ամենայն եղեալ մարգարէին՝ աւարտէ զբան իւր յօրհնութի՟ ա՟յ և ասէ ։

ԺԴ․ **Օրհնեալ տէր ա՟ծ իսրայէլի յաւիտենից յաւիտենից․ եղիցի եղիցի ։**

Այս բան դնի աստ նախ 'ի բերանոյն ք՟սի, երկրորդ՝ 'ի բերանոյ նորին իսկ դաւթի, և երրորդ՝ 'ի բերանոյ երգեցողաց այսր սաղմոսի․ իբր զի որովհետև զայս ամենայն արար տէր, արժան էր ասել ամենեցուն ։

Օրհնեալ տ՟ր ա՟ծ իսրայէլի յաւիտենից յաւիտենից ։ Այսինքն օրհնեալ է և օրհնեալ եղիցի ա՟ծ յաւիտեանս յաւիտենից, այս է, միշտ և յաւիտեան, կամ՝ 'ի յաւիտենից մինչև 'ի յաւիտեան ։ Իսկ բառդ իսրայէլի՝ որ յարի 'ի բառդ ա՟ծ, դնի իբր որոշիչ ճշմարտին ա՟յ 'ի սուտ ա՟ծոց. զի որովհետեւ ճշմարիտն ա՟ծ յայտնեաց զինքն ազգին իսրայէլի, վասն այնորիկ ասացաւ 'ի նոցանէ ա՟ծ իսրայէլի, որ է ասել, ա՟ծ ճշմարիտ. որպէս թէ եգեալ էր. չէ արժան օրհնել զայնոսիկ՝ զորս հեթանոսք կոչեն ա՟ծս, կամ թէ չէ օրէն պաշտել զա՟ծս հեթանոսաց, զի են սուտ ա՟ծք, այլ զա՟ծն իսրայէլի. զի նա է միայն ճշմարիտ ա՟ծ. և նմա միայնոյ ճշմարտիւ վայել է ճշմարիտ պաշտօն և օրհնութիւն: Եւ զսոյն հաստատէ ասելով:

ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ: Որպէս թէ ասէր. այս օրհնեալ եղիցի. իսկ կրկնումն բայիդ ԵՂԻՑԻ՝ ցուցանէ զառաւելութիւն հաստատութե՟ն. իբր թէ ասել, ըստ ամենայնի և ամենայն հաստատութ՟բ եղիցի օրհնեալ:

Եբր". փոխանակ բառիս ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ՝ դնի ԱՄԷՆ ՎԷ ԱՄԷՆ. այսինքն ամէն և ամէն. և այս ևս զնոյն ցուցանէ: Այլ գիտելի է՝ զի այս բառ եբրայական յորժամ 'ի սկզբան դնի, ցուցանէ զստուգութիւն յաջորդ բանին. յոր միտս բազում անգամ 'ի կիր էարկ տէրն մեր: Երբեմն ևս իբր երդումն. ուստի ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. Ժ.) * ամէնն երդումն է ա՟յ. որպէս թէ ասիցէ, երդմամբ ասեմ ձեզ||: Իսկ յորժամ 'ի վերջոյ դնի առ եբրայեցիս՝ յոչ կրկնիլն՝ 'ի մերումն դնի բառդ ԱՄԷՆ, իսկ 'ի կրկնիլն դնի ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ. և յամենայնի ցուցանէ զհաստատութիւն ասացելոցն: Աստանօր արժան է գիտել, (զի որպէս ասացաք 'ի ներածութեան. գլ. Ե.) առ եբրայեցիս 'ի հինգ կանոնս բաժանի սաղմոսարան նոցին. առաջին կանոն նոցա աւարտի աստ, վասն որոյ և դնի առ նոսա բառդ ԱՄԷՆ Ւ ԱՄԷՆ, որպէս 'ի մերումն ԵՂԻՑԻ ԵՂԻՑԻ: Երկրորդ կանոն նոցա աւարտի 'ի վերջ հա՟ սաղմոսի, որ առ նոսա է՝ հբ՟. և անդ ևս դնի այդ բառ համգոյն այսմ, հանդերձ այլով իմն յաւելուածով, յասելն * օրհնեալ տէր ա՟ծ իէլի՝ որ առնէ զսքանչելիս միայն. եղիցի եղիցի||: Երրորդ կանոն նոցա աւարտի 'ի սաղ". ձը՟. որ առ նոսա է՝ ձթ. և անդ ևս դնի սոյնս յասելն. * օրհնեալ տէր ա՟ծ յաւիտեանս յաւիտենից. եղիցի եղիցի||: Չորրորդ կանոն նոցա աւարտի 'ի սաղ". ճե. որ առ նոսա է՝ ճզ. և դնի նոյնպէս * օրհնեալ տէր ա՟ծ իսրայէլի, յաւիտեանս յաւիտենից. և *ասասցեն ամենայն ժողովուրդն, եղիցի եղիցի‖: Հինգերորդ կանոն նոցա աւարտի 'ի վերջ ամենայն սաղմոսաց. և դնի առ նոսա բառդ* Ալէլուիա. *որպէս և առ քաղդ՛՛. և առ լատինս. ուր 'ի մերումն և յայլս ոչ դնի այդ: Իսկ թէ ով յաւել 'ի վերջ այնց կանոնաց զբառդ* Ամէն և ամէն կամ եղիցի եղիցի, *նոյնպէս և* Ալէլուիա, *ոչ է յայտ: Հաւանական է ասել՝ թէ եզրաս եդ զայն, կամ այլ ոք հանդերձ բառիւքդ՝* օրհնեալ Տէր Ա՟ծ Իսրայէ*լի, առ 'ի տալ նոցա Ա՟յ զփառս յաւիտեան:*

ՍԱՂՄՈՍ. ԽԱ.

Փափաք հոգւոյ առ Ա՟ծ և առ տեսութ՟ն նորա. եւս և բանք թախծութ՟ե սրտի վասն 'ի բացէ տեսանելոյ զանձն յԱ՟յ և 'ի տանէ նորա. միանգամայն և քաջալերութ՟ն թեթեւանալոյ 'ի տրտմութ՟ե անձին:

Ի կատարած. իմաստութեան որդւոցն Կորխայ:

1 Որպէս փափաքէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ Ա՟ծ: 2 Ծարաւի է անձն իմ առ քեզ Ա՟ծ, հզօր և կենդանի. ե՞րբ եկից երեւեցայց երեսաց Ա՟յ: 3 Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի. և այն զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է Ա՟ծ քո: 4 Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. քաջալերէի զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն Ա՟յ: 5 'Ի ձայն ցնծութ՟ե խոստովանութ՟ե. և 'ի ձայն խրախճանութ՟ե: 6 Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Ա՟ծ, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Ա՟ծ է: 7 Անձն իմ յոյժ խռովեցաւ. վասն այսորիկ յիշեցից զքեզ յերկրէն Յորդանանու, 'ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ: 8 Խորք խորոց կարդայցեն առ քեզ, 'ի ձայն սահանաց քոց: 9 Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին 'ի վերայ իմ: 10 'Ի տուէ պատուիրեսցէ Տ՟ր ողորմութ՟ե իւր. 'ի գիշերի զօրհնութիւն նոր. և աղօթք իմ առ Ա՟ծ կենաց իմոց: 11 Ասացի Ա՟յ՝ ընդունելի իմ ես. ընդէ՞ր մոռացեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ: 12 'Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յա-

ասել ցիս զօրհանապաղ, թէ ո՞ւր է ա̅ծ քո։ 13 Արդ՝ ընդէ՞ր
տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա̅ծ,
խոստովանեցա՛յց նմա՝ փրկիչ երեսաց իմոց ա̅ծ է։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. իմաստութ̅ե որդւոյն կորխայ։

ԳՆՍԳՆՍ ՕՐԻՆԱԿԱՒ ԴՆԻ ԱՅՍ վերնագիր 'ի սաղմոսս մեր. յոմանս յաւելեալ լինի և բառդ ձայն. այսպէս * 'ի կատարած վասն իմաստութեան որդւոցն կորխայ ‖. սոյնպէս դնի և 'ի սաղ″. լամբ″։ Յոմանս յարի 'ի վերջոյ և բառդ սաղմոս 'ի դաւիթ, այսպէս * 'ի կատարած, իմաստութիւն որդւոցն կորխայ սաղմոս 'ի դաւիթ ‖. սոյնպէս դնի և 'ի վարդանայն. կամ այսպէս, * 'ի կատարած իմաստութ̅ե որդւոյն կորխայ սաղմոս ,, 'ի դաւիթ ‖. և կի̅մ այսպէս՝ * 'ի կատարած որդւոցն ,, կորխայ, իմաստութիւն 'ի դաւիթ ‖. առեալ զբառդ դաւիթ 'ի վերնագրէ ասորւոց։ Իսկ յոմանս դնի սոսկապէս * իմաստութ̅ի որդւոցն կորխայ ‖։

Այլ յերկս ձեռագիրս գտի եդեալ ըստ նախագրելոյդ. * 'ի կատարած. իմաստութ̅ի որդւոցն կորխայ ‖, համաձայն եբր″. ուր գրի այսպէս. լամնացէախ մասքիլ լիբնէ քօրախ. այս է. * 'ի կատարած իմաստութ̅ի յոր- ,, դւոյն կորխայ ‖։ Սոյնպէս դնի և յայլ թարգ″. ևս և յեօթ″. վասն որոյ զայդ պարտ է ուղղագոյն համարիլ ընդ սակաւ ձեռագրաց՝ քան զայլսն ընդ բազմաց։ Արդ մետասան են սաղմոսք, յորոց 'ի վերնագիրս յիշին որդիք կորխայ, և են սոքին. խա̅. խգ̅. խդ̅. խե̅. խզ̅. խէ̅. խը̅. ձգ̅. ձդ̅. ձզ̅. ձէ̅։ որոց յոմանս թէպէտև յաւելեալ լինի 'ի մեզ բառդ դաւիթ, բայց ոչ գտանի այդ ոչ յեբրայականն և ոչ յայլ թարգ″. այլ միայն յասորւոցն, և ոչ ևս յամենայն ձեռագիրս մեր, այլ յոմանս եւեթ։

Իսկ թէ յինչ միտս յիշէին յայսոսիկ սաղմոսս որդիք կորխայ, պէսպէս բանք են 'ի մատենագիրս։ Ոմանք

՚ի րաբունեացն հրէից ասեն, թէ զայսօրիկ սաղմոս յօրինեալ իցեն երեքին որդիք կորխայ. ասիր, եղկանա, և աբիսափ՝ որք յիշին ՚ի գիրս ելից (Զ. 24.) զորոց ասի ևս ՚ի գիրս թուոց, (ԻԶ. 11.) թէ * ՚ի կորնչիլ կորխայ հօր իւրեանց ոչ մեռան ‖ և մնացին կենդանի. և յօրինեցին զայսօրիկ սաղմոս, զորս յետ ժամանակաց հանդիսացոյց դաւիթ:

Ի սոյն կարծիս վերածի և այն՝ զոր այլք ասեն, թէ ոչ սոքին, այլ սերեալքն ՚ի սոցունց յօրինեցին զայսօրիկ՝ որք և կոչին որդիք կորխայ, և յիշին յառաջին գիրս մնաց". (Թ. 19: և ԻԶ. 12:) զորոց գրի և յերկրորդ գիրս մնացորդաց. (Ի. 12.) թէ սոքա * օրհնէին զտէր ած ձայնիւ մեծաւ ՚ի բարձունս ‖:

Յայս հայի և կարծիք նոցա՝ որք ասեն, թէ աստանօր որդիք կորխայ կոչին այն ղևտացիք սերեալք յորդւոցն կորխայ՝ որք գերեալք եղեն ՚ի բաբելոն. և անդ յօրինեցին զայսօրիկ սաղմոս մանաւանդ զսոյն, յայտ արարեալ զփափաք իսրայելի առ տեսութիւն տաճարի տեառն:

Երևի թէ յայս կարծիս է և բարսեղ վարդապետ. զի գրէ (՚ի մեկն. մարկ. գլ. Ժ.) թէ զայս ասէին երբայեցիք ՚ի բաբելոն. և բանք իւր են այս. * յի-
,, շեցի զքեզ յերկրէն յորդանանու և ՚ի հերմոնէ
,, լեռնէ փոքունէ. զայս՝ ժողովուրդն մինչդեռ ՚ի բա-
,, բելոն էր՝ ասէր ‖: Այսոցիկ կարծեաց չունիմք ինչ ընդդիմանալ:

Իսկ սակայն կարծիքն այն հաւանականագոյն է՝ զոր բազումք հաստատեն՝ ընդ որս և վարդան, թէ այսոքիկ սաղմոսք են դաւթի. իբր զի դաւիթ իցէ յօրինեալ զայսօրիկ սաղմոս ՚ի ժամանակս հալածանաց իւրոց և կամ յայլում ժամանակի, և տուեալ իցէ որդւոցն կորխայ եղանակս դնել կամ երգել ըստ իւրեանց իմաստութեան. որովհետև էին նոքա երևելի ՚ի մէջ սաղմոսանուագացն որք բաժանեալ էին ՚ի դասս դասս. որպէս է տեսանել յառաջին գիրս մնացորդաց. (Զ. 33: և Բ. մնաց". Ի. 19. ևն. տես ՚ի ներծ". գլ. ԺԶ:) Իսկ յայս սակս այսոքիկ սաղմոսք կոչին որդւոցն կորխայ, որպէս և այլք ՚ի սաղմոսաց՝ ասին ասափայ: Այսմ կարծեաց նպաստէ մեկնութին

քաղղեացւոց. յորում այսոքիկ վերնագիրք ուղղակի ոչ ընծայեն որդւոցն կորխայ, այլ թէ երգելի են 'ի նոցանէ. յասելն՝ * սաղմոս երգելի իմաստութեամբ 'ի ձեռն որդւոցն կորխայ‖. որով ցուցանի՝ թէ այսոքիկ սաղմոսք ոչ են յօրինեալ յորդւոցն կորխայ, այլ են միայն երգելի 'ի նոցանէ իմաստութեամբ. իսկ յօրինողն երևի լինել նա ինքն դաւիթ. որպէս յիշէ և դաւիթ անյաղթ 'ի յառաջաբ". սաղ. և մանաւորապէս խօսելով 'ի վերայ այսր խա՟. սաղմոսի՝ ասէ.
* սաղմոսն, որպէս փափաքէ եղջերու, և թէ՝ սիրելի
,, են յարկք քո, և՟ն. որք որդւոցն կորխայ ասին՝ են
,, դաւթի. զի դաւիթ փափաքելով 'ի խորանն տեառն՝
,, յորժամ փախստեայ էր 'ի սաւուղայ յանապատին,
,, առ անձուկ հոգւոյն տենչայր ասելով. երբ եկից երևեցայց
,, երեսացդ այ՟, զի ասէին ցիս զօրհանապազ,
,, թէ ուր է ա՟ծ քո. և դարձեալ՝ յորժամ էր յերկրին
,, այլազգեաց, սոյնպէս ցանկայր ասելով, երանելի են
,, որ բնակեալ են 'ի տան տեառն‖:

Իսկ թէ ընդէ՞ր դնի 'ի վերնագրիդ բառս իմաստութեան, որպէս և յայլ քանի մի սաղմոսս, զորս յիշատակեալ է մեր ('ի սաղ". լա՟.) կամ ը՟ եբրայականին մասքիլ, այսինքն իմաստուն, կամ խոհեմ, կամ իմաստնացուցիչ, ճշմարիտ պատճառն ոչ է յայտ: Երիս մարթ է առաջի դնել, մի՝ թէ աստ բառդ իմաստութե՟ն դնի փոխանակ արհեստի սաղմոսերգութե՟ն կամ փոխանակ գերազանց եղանակի, զոր վարէին որդիքն կորխայ իմաստութ՟բ 'ի սաղմոսելն. և ըստ այսմ մտի բանի վերնագրիդ լինի այս, սաղմոս երգելի 'ի կատարած՝ ըստ բազմարուեստ ձայնի կամ ըստ գերազանց եղանակի որդւոցն կորխայ: Երկրորդ՝ թէ այս սաղմոս յերգելն միանգամայն և մեկնեալ լինէր յորդւոցն կորխայ, որով և իմաստ բանին յայտնեալ լինէր ժողովրդեան, և ըստ այսմ մտի բանի վերնագրիդ բացատրի այսպէս. սաղմոս որոյ իմաստութիւն յայտնեալ լինէր յորդւոցն կորխայ առ ժողովուրդն: Երրորդ՝ որ հաւանականագոյն է՝ բառդ իմաստութեան՝ դնի աստ փոխանակ սաղմոսի, այսինքն փոխանակ այնպիսի հոգևոր նուագի՝ որ լի է իմաստութեամբ. ըստ որում այսոքիկ սաղմոսք իմաստութեամբ են յօրինեալ. և լի են երկնային իմաստութեամբ. յորոց միջի սոյն այս գերազանց իմն փայլէ. և սքանչելի իմն լուսաւորէ զհոգի մարդոյ արհամարհել զերկրաւորս, և 'ի բաց թողուլ զունոտի տրտմութիւնս, և յաւէտ բերիլ 'ի ծայրագոյն բարին ա՟ծ և 'ի փափաք բնակութեան երկնից. զի զայսոսիկ ևեթ աւանդէ այս սաղմոս գերապանծ իմն օրինակաւ. որպէս և տեսցի յառաջիկայդ.

ԻՐՆ

ա. Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ ա՟ծ.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Որք միանգամ քննեցին զհանգամանս բնութ՟ե եղջերուի՝ հաստատութ՟բ գրեցին՝ թէ այս կենդանի փափաք մեծ ունի առ ջուրս. զի ներքին ջերմութիւնն առաւել գոլով 'ի նմա՝ մղէ զնա դիմել 'ի ջուրս առ 'ի զովանալ. Արդ որպէս է յեղջերուն ներքին ջերմութ՟ի, նոյնպէս և 'ի հոգի մարդոյ կայ ներքին իմն ջերմութիւն, այսինքն սէր առ բարին՝ ըստ որում բարի, յորում է բան վերջին վախճանի.

Այս սէր կրկնակի մտածի 'ի մարդն. մի 'ի հասարակի՝ ըստ որում է մղումն ինչ առ ընդհանուր բարին, կամ առ ա՟մ բարի, որ յա՟ծ միայն բովանդակի, և ըստ այսմ այս սէր ոչ է ազատ, այլ հարկաւոր. զի ոչ է ընդ ընտրութ՟բ՝ այլ ընդ հարկաւ, իբր զի հոգին հարկաւ բերի առ այն. և ոչ կարէ ոչ բերիլ.

Երկրորդ՝ 'ի մասնաւորի՝ ըստ որում է մղումն ինչ առ այս և առ այն բարի, և ըստ այսմ այս սէր է ազատ, և ոչ 'ի հարկէ. վասն զի մարդն 'ի մղմանէ անտի ընդհանուր բարւոյն՝ զոր ոչ տեսանէ՝ ընտրութիւն առնէ 'ի վերայ մասնաւոր բարւոյ՝ զոր ըմբռնէ, և նովին ընտրութ՟բ բերի առ այս և առ այն, կարծելով՝ 'ի նմա գտանել զայն ընդհանուր բարին որում փափաքի. և զի ոչ գտանէ՝ դառնայ առ այլ, և անտի առ այլ. և այսպէս հանապազ տատանի 'ի միոյ մասնաւոր բարւոյ առ միւսն. Իսկ եթէ դարձցի առ ա՟ծ՝ 'ի նմա գտանելով զբան ընդհանուր բարւոյ՝ 'ի նա յարի. (տես և 'ի յաջորդ հատուածն. տես և 'ի սաղ. ա՟. 1:) Այս յարումն եթէ լինիցի ըմբռնելով զա՟ծ ըստ ա՟մ բարութեան որ լինի միայն 'ի հանդերձեալն 'ի դէմ յանդիման տեսութե՟ն նորա՝ ըստ ա՟մի կատարի. և է սա յագումն ինչ ամենայնի. զորմէ ասէ մարգարէն. ('ի սաղ. ժզ՟. 15.) * Եւ յագեցայց յերևիլ ,, փառաց քոց ‖, և սոյն այս է լրումն այնր փափագանաց՝ զոր ունի հոգին առ ընդհանուր բարին, և որպէս այն է 'ի հարկէ, սոյնպէս և այս:

Իսկ եթէ այս յարումնս լինիցի ըմբռնելով զա՟ծ արտաքոյ դէմ յանդիման տեսութեան 'ի ձեռն օրինակի կամ 'ի ձեռն հաւատոյ, մնայ անկատար, և ոչ է յագումն, այլ ազատ մղումն և փափագ սաստիկ առ ա՟ծ: Ասացի * 'ի ձեռն օրինակի կամ 'ի ձեռն հաւատոյ ‖. զի եթէ այն ըմբռնումն լինիցի սոսկ 'ի ձեռն օրինակի առանց գերբնական շարժութեան, այս յարումնս կամ փափագ՝ որ հետևի այնմ ըմբռնման, չէ ինչ մեծ, և ոչ իսկ յարգոյ, մանաւանդ թէ և ոչ տևական. որպէս լինի երբեմն 'ի մեղաւորս և յանհաւատս. իսկ եթէ այն ըմբռնումն լինիցի 'ի ձեռն հաւատոյ գերբնական շարժութեամբ՝ յարումն կամ փափագն որ հետևի այնմ՝ է մեծ ինչ և յարգոյ, և այս յաջողի միայն 'ի ձեռն սրբարար շնորհաց հոգւոյն սրբոյ: Արդ բան մարգարէին թէպէտ և կարէ անուղղակի հայիլ առ այն ընդհանրական փափագ, բայց ուղղակի հայի առ մասնաւորն՝ որ բերի առ ա՟ծ գերբնական շարժութ՟բ. զի յայս ակնարկէ ասելն:

Որպէս փափագէ եղջերու յաղբիւրս ջրոց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ ա՟ծ: Այս եղանակ խօսից ցուցանէ այնչափ մեծ լինել փափագանաց սրտի մարգարէին առ ա՟ծ, մինչև չկարելով յայտ առնել զայն՝ 'ի մէջ բերէ զփափագ եղջերուի առ ջուրս. ըստ որոյ ասէ սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. ե՟. 20. Ճառ ժա՟.) * փափագէր յաղբիւրն ա՟յ՝ որպէս եղջերու 'ի ջուրս ‖. Եւ վարդան ասէ ('ի մեկն. ե՟. գրոցն մովսէսի.) * դիմեալ իբրև զեղջերու ծարաւեալ յաղբիւր ջուրց ‖: Իբր զի որպէս եղջերուն 'ի ներքին ջերմութենէ սրտի իւրոյ անզուսպ փափագանօք դիմէ առ ջուրս, սոյն-

պէս ասէ և անձն իմ՝ այսինքն հոգի իմ 'ի բորբոքմանէ սիրոյ՝ անհնարին տարփանօք դիմէ առ ա̃ծ իմ իբր
առ ծայրագոյն և առ մի միայն բարի ։

Զփափաք եղջերուին ոչ դնէ մարգարէն առ ջուրս, այլ առ աղբերս ջրոց . և այս վասն երից . մի՝ զի հասարակօրէն ջուր աղբերն է անսպառ . վասն զի աղբիւր ասի այն՝ որ անհատաբար հոսի . երկրորդ՝ վասն կենդանի և վճիտ լինելոյ ջրոց աղբերն . և երրորդ՝ զի աղբիւրն է առատացեալ 'ի ջուր . ուստի և ջուրն հոսեալ յաղբերէ է իբր մասն այնր առատութեան ջրոյ՝ որ յաղբերն . վասն որոյ առաւել ինչ ցուցանէ փափաքիլ յաղբիւրն քան 'ի ջուրն ։ Ըստ այսմ համեմատութեան յայտ առնէ մարգարէն զառաւելութիւն կամ զկատարելութիւն սիրոյ իւրոյ՝ որով բերիւր առ ա̃ծ՝ իբր առ աղբիւր ամենայն բարութեան, և իբր առ ծայրագոյն բարի ։

Այս մեկնութիւն զոր եդաք՝ երևի լինել սկզբնական և ըստ ձայնին . բայց գիտելի է ևս՝ զի հայելով 'ի յատկութիւս եղջերուին, մարթ է տալ և զայլ յարմարական մեկնութիւնս ։ Արդ աւանդեն երևելի բնազնին մատենագիրք՝ թէ եղջերուն ունի թշնամութիւն ընդ օձի, որպէս կատուն ընդ մկան . և 'ի տեսանելն զայն՝ դիմէ 'ի վերայ և մարտնչի ընդ նմա, և սպանանէ . յորմէ մեծապէս ծարաւեալ դիմէ 'ի ջուրս՝ զովանալ նովաւ ։ Այսպէս և հոգի մարդոյ յորժամ մարտնչի ընդ հնոյ օձին և ընդ ախտս, և սպանանէ զայն, ծարաւի սիրով առ ա̃ծ, և փափաքանօք դիմէ առ նա՝ ըմպել 'ի քաղցրութենէ նորա, և զովանալ 'ի նմանէ ։ Առ այս տարացոյց ծարաւէր սամփսոն յետ մեծի յաղթութեանն՝ զոր արար ։

Ասի ևս, թէ եղջերուն հարեալ 'ի գազանաց և 'ի թիւնաւորաց, ծարաւի և դիմէ 'ի ջուր . սոյնպէս 'ի հարկանիլ մարդոյ յախտից և 'ի թիւնից մեղաց տխրի և տրտմի, և յինքն եկեալ՝ ծարաւի դիմել առ ա̃ծ կենդանի 'ի գտանել զբժշկութիւն . որպէս գրի 'ի վարս հարանց 'ի ճառն հոգետեսից, 'ի վերջն ։ Այս ծարաւ համեմատի այնմ ծարաւոյ՝ որ ասի արտաքոյ կարգի, զի պատճառի 'ի զկծելոյ բերանոյ ստամոքին 'ի գրգռիչ հիւթոյ կամ յաղիութենէ . որպէս 'ի հոգին

՚ի զկծելոյ նորա յաղխութենէ ախտաւորութեանց ։ Աւանդեն դարձեալ բազումք թէ եղջերուն առաւել իմն արագութեամբ փախչի ՚ի ձեռաց որսորդաց , քան զայլ կենդանիս . յորմէ վաստակեալ և սաստկապէս ծարաւեալ՝ դիմէ ՚ի ջուրս . սոյնպէս և այր երկիւղած ՚ի հալածիլն ՚ի պէսպէս փորձութե̃ց՝ որք իբր որսորդ դարանին զհետ նորա , փախուցեալ ՚ի նոցանէ՝ ծարաւի առ ա̃ծ ։

Եւ ըստ այսմ այս բան կարէ ասիլ և ՚ի դիմաց համօրէն մարդկայինս բնութեան ըստ երկուց . մի՝ ըստ այնմ ընդհանրական յօժարութեան՝ զոր ունի առ ընդհանուր բարին . զի յամենայնի՝ յորս հալածի ՚ի պէսպէս կրից և ՚ի փորձութեանց՝ ՚ի ներքուստ առ այն հառաչէ , այսինքն առ ընդհանուր բարին ։ Երկրորդ՝ ըստ այնմ յօժարութեան՝ զոր յառաջն ունէր առ նորոգութիւն իւր . զի յետ ապականելոյ ՚ի ձեռն սկզբնական մեղաց՝ ՚ի տառապիլն իւր ՚ի զանազան ախտից՝ ծարաւեալ դիմէր առ ա̃ծ իբր առ աղբիւրն բժշկութե̃՝ առ ՚ի գտանել զնորոգութի̃ և զովանալ ՚ի տառապանաց իւրոց ։ Աւանդեն մատենագիրք և զայլ յատկութիւնս եղջերուի , այլ քանզի ո՛չ հային նոքին առ առաջիկայ բնաբանդ՝ զանց առնեմք գրել աստ զնոցանէ . (տե՛ս ՚ի սաղ . ժէ . 33 ։ և իը̃ . 9 ։) Արդ մարգարէն նմանեցուցեալ զփափագ իւր փափաքանաց եղջերուի՝ կամելով առաւել ևս սաստիկ ցուցանել զայն՝ յաւելու զկնի , և ասէ ։

Բ̃ . Ծարաւի է անձն իմ առ ա̃ծ , հզօր և կենդանի .
ե՞րբ եկից երևեցայց երեսաց ա̃յ ։

Ծարաւն ըստ կարգի առեալ՝ է շարժումն ինչ ներքին մասանց կենսաւորին առ արբումն ջրոյ վասն նուազելոյ ՚ի խոնաւութենէ՝ պատճառեալ ՚ի ստամոքսն ։ Սոյնպէս և ծարաւ հոգւոյն է ներգործական շարժումն կամ ձկտումն սիրոյ որ առ ընդհանուր բարին և կամ առ մասնաւորն ։ Այս ծարաւ կշռելով զտկարութիւն բնութեանս կարէ պատճառիլ կամ ՚ի պակասութենէ և կամ ՚ի լրութ̃է ։

Ի պակասութենէ պատճառի՝ երբեմն վասն նուազելոյ հոգւոյն ՚ի խոնաւութենէ երկրաւորաց՝ յորժամ հեռի տեսանէ զինքն 'ի բերկրութենէ անցաւորացս. և երբեմն վասն նուազելոյ 'ի խոնաւութենէ երկնաւորաց, յորժամ պակասի յա̃ծային բերկրութեանց. քանզի յայսմանէ ծագի 'ի նմա շարժումն ինչ ներգործութե՟ սիրոյ իբր ծարաւ առ ջուրս, այսինքն առ մխիթարութիւնս. զի որովհետև ոչ կարէ կալ հոգին առանց իրիք բերկրութեան, ընդ պակասել այնր՝ փափաքի գտանել մխիթարութիւն ինչ՝ մղեալ 'ի բնական յօժարութենէ անտի առ ընդհանուր բարին. զորմէ ասացաք 'ի վերոյ: Արդ եթէ այնպիսին իցէ այր մարմնապաշտ կամ երկրասէր՝ դիմէ առ մարմնաւոր բերկրութիւնս, կամ առ երկրաւոր մխիթարութի՟ս: Իսկ եթէ իցէ երկիւղած ա̃յ և փափաքող երկնաւորաց, դիմէ առ ա̃ծ կամ առ ա̃ծայինս:

Ի լրութե̃ ես ասացի պատճառիլ, յորժամ ոչ 'ի նուազութե̃ բերկրութե̃ց ծագի, այլ յառաւելուէ̃ ա̃ծային յորդորիչ շնորհաց, որ և է գերազանց իմն ներգործութե̃ սիրոյ. որով հոգին գրեթէ ոչ ևս մնայ յինքեան, այլ յայն՝ յոր բերի. այսինքն յա̃ծ:

Այս ծարաւ՝ որ 'ի լրութենէ՝ կրկնակի կարէ մտածիլ. մի՝ իբր դադարումն յա̃ծ, կամ իբր հանգիստ սիրոյ առ ա̃ծ, և մի ևս՝ իբր դիմումն առ ա̃ծ կամ իբր բորբոքումն ծարաւոյ առ ա̃ծ. վասն առաջնոյն ասաց տէրն մեր. * որ ըմպէ 'ի ջրոյն՝ զոր ես տաց նմա՝ մի՛ ,, ծարաւեսցի (այլում իմիք) յաւիտեան ‖. (յոհ. դ. 13.) զի որ ինչ արտաքոյ է այնր՝ անհաճոյ է նմա. որպէս որ ըմպէ զախորժելին՝ անհամ թուին նմա անախորժքն. իսկ վասն երկրորդին ասաց դարձեալ 'ի գիրս սիրաքայ (իդ. 29.) * ոյք ըմպեն զիս՝ և ևս ,, ծարաւեսցեն ‖. և որ ուտեն զիս՝ առաւել յօժարեսցեն. որպէս որ ուտէ զմնոյշ, լիզէ և զմատունս: 'Ի հոգևորս 'ի չունելն՝ ոչ ցանկայ, և 'ի գտանելն առաւել ևս ցանկայ. իսկ 'ի մարմնաւորս 'ի չունելն ցանկայ, և յունելն յափրանայ (այսինքն թէ պլխմիշ կըլայ):

Այսոքիկ ծարաւք թէպէտ և ներհակ երևին, բայց ոչ է այնպէս. նախ՝ զի որ բորբոքի 'ի սէրն ա̃յ 'ի ձեռն սրբարար շնորհաց՝ դադարի 'ի ծարաւոյ սնոտեաց, և վառի 'ի ծարաւ ա̃յ. ուստի ըստ միոյն ասի ոչ ծարաւիլ, իսկ ըստ միւսոյն առաւել ևս ծարաւիլ: Երկրորդ՝ զի 'ի ձկտիլն և 'ի բերիլն՝ ծարաւելով ծարաւի 'ի նոյն, իսկ 'ի յարիլն՝ ոչ ևս ծարաւի բերիլ 'ի նոյն, այլ ծարաւի միանալ ընդ նոյն: Զայսր օրինակն ունիմք 'ի կողմնացոյցն (ըստ որում եդաք 'ի սաղ. ա̃. 1.) զի լեզու նորա՝ որ օծեալ է մագնիսիւ, ծարաւեալ բերի առ անշարժ մասն աշխարհի, այսինքն առ բևեռն. եթէ շարժի, յոր կողմն և հայեցի շարժական մասանց աշխարհի՝ ոչ դադարի, այլ տարուբերի՝ գտանել զանշարժ կողմն. և իբրև գտանէ, ձկտի 'ի նա ամենայն զօրութեամբ: Յայնմ ձկտման տեսանի նախ դադարումն 'ի տատանելոյ առ շարժական մասունս աշխարհի. տեսանի երկրորդ և ծարաւ առ 'ի միանալ ընդ անշարժ մասն աշխարհիս: Այնպէս է և յօժարութիւն հոգւոյ մարդոյն, զի օծեալ գոլով 'ի նմանութենէն ա̃յ՝ անդադար 'ի նոյն բերի՝ թէ կամիցի և թէ ոչ. վասն որոյ 'ի պակասիլն 'ի բերկրութէց՝ յոր ինչ և բերիցի արտաքոյ ա̃յ, գոլով այնր ամենայնի շարժական և փոփոխական՝ ոչ գտանէ հանգիստ. ըստ որում ասացաք 'ի նախընթաց համարն. այլ միշտ մնայ 'ի տատանման և 'ի ծարաւման: Իսկ յորժամ նպաստիւք շնորհաց ուղղի առ անշարժ էն ա̃ծ՝ դադարի 'ի տատանմանէ. և ըստ այսմ ասի՝ ոչ ևս ծարաւիլ. բայց քանզի 'ի դադարման անդ ձկտի ժամանել 'ի նա և ժառանգել զնա, ասի և ևս ծարաւիլ: Այս ծարաւ այնչափ առաւել լինի, որչափ առաւելեալ լինի հոգին յօժարութենէ սրբարար շնորհաց: Յայս ծարաւ ահա ըմբռնեալ մարգարէն ասէ:

Ծարաւի է անձն իմ առ քեզ ա̃ծ, հզօր և կենդանի: Ծարաւ հոգւոյն առ ա̃ծ՝ որպէս յայտ է 'ի նախագրելոցդ է սաստիկ իմն ձկտումն ներգործութեան սիրոյ կամ մղումն փափաքանաց առ ա̃ծ. սոյին մղմամբ ասէ ծարաւեալ հոգիս՝ տարփանօք սիրոյ առ քեզ բերի՝ ա̃ծ հզօր և կենդանի:

Ո՛չ դնէ քաղցեալ, այլ ծարաւեալ. զի առաւել է ձկտումն ծարաւոյ քան քաղցու. ուստի ասէ շնորհալին ('ի մեկն. մատ. գլ. Ե.) * ծարաւն առաւել
,, ստիպէ զբնութիւնն 'ի լրումն, քան քաղցն. որպէս
,, դաւիթ փափաքէր առ ա̃ծ. ծարաւի է անձն իմ

„ առ քեզ ա՟ծ հզօր և կենդանի‖ ։

Աստանօր պատշաճագոյն ևս երևէր փոխանակ ասելոյ՝ հզօր և կենդանի, դնել՝ բարի և ցանկալի, որովհետև ներգործութ՟ի սիրոյն առ բարին բերի, և առ ցանկալին յօժարի, բայց ըստ չորից դնէ՝ հզօր և կենդանի. այսինքն ըստ համեմատութ՟ե, ըստ առարկային, ըստ ենթակային և ըստ բնական բերման ։

Ըստ համեմատութ՟ե՝ հայելով յա՟ծս հեթանոսաց, որք են տկար և մեռեալ. ոչ զօրացուցանել կարեն, և ոչ կեցուցանել. իսկ փափաք մարգարէին 'ի կենդանացուցիչն հայի և 'ի զօրացուցիչն ։

Ըստ առարկային, զի ասաց ծարաւի է հոգի իմ առ քեզ. և զի ծարաւեալն ախորժանօք բերի 'ի ջուր կենդանի և հզօր, վասն այսորիկ ասէ՝ կենդանի և հզօր. ուր կենդանի ասելով իմանայ զմշտաբուխն և զշարժունն, որով իմացեալ լինի ամենայն առատութիւն քաղցրութ՟ենն ա՟յ. իսկ հզօր ասելով՝ իմանայ զզօրաւորն և զօգտակարն, որով իմացեալ լինի հզօր ձեռնտուութիւնն ա՟յ և հաստատուն պահելն նորա զյուսացեալս իւր ։

Ըստ ենթակային, զի ծարաւ սիրոյ յո՛ և իցէ կարգի յորժամ առաւելեալ սաստկանայ, պակասեցուցանէ յենթակայն զբնական զօրութիւնս, երբեմն բերէ և զնուազութիւն կենաց, և մերթ զմահ ևս ։ Եւ զի յանհնարինս սաստկացեալ էր 'ի մարգարէն այս ծարաւ սիրոյ՝ վասն այնորիկ կարէր պատճառել 'ի նմա զայսպիսի կիրս. ապա հայելով յառաջինն՝ այսինքն 'ի նուազութիւն բնական զօրութ՟ե ընդդէմ այնր դնէ հզօր, և հայելով յերկրորդն՝ այսինքն 'ի նուազութիւն կենաց ընդդէմ այնր դնէ կենդանի. որպէս թէ ասէր. այնչափ սաստիկ է ծարաւ իմ առ քեզ տէր՝ մինչ զրեթէ պակասիլ զօրութեան իմոյ և մերձիլ 'ի մահ. բայց քանզի դու ես զօրութիւն իմ և կեանք իմ, ա՟ծ հզօր և կենդանի՝ առ քեզ փափաքիմ. ոչ ցանկամ զի մի պակասեցայց 'ի զօրութենէ իմմէ, և ոչ յօժարիմ զի մի նուազեցայց 'ի կենաց, այլ յայս եւեթ հառաչեմ՝ երբ իցէ՝ զի հասից առ քեզ, և ժառանգեցից զքեզ ։

Իսկ ըստ բնական բերմանն այսպէս մեկնէ լամբ".

* եթէ հզօր է (ասէ) 'ի վեր քան զամենայն զօրու-
,, թիւն և կենդանի յաւիտեան, այս ամենայն ինչ՝
,, որ սիրելի է՝ 'ի ստորև է նորա․ զի յայս երկու ևս
,, է մարդկան փափաք․ սակս որոյ և վաստակին՝ զօրա-
,, նալ իշխանութեամբ և փառօք, և կենդանի մնալ
,, և վայելել 'ի նոյն․ իսկ որ զա͞ծ տեսանէ՝ զայս զեր-
,, կուս 'ի նորա տեսանելն սեփականէ․ զոր գիտելով
,, (մարգարէին) թախանձէ ‖․ և յայս իսկ յարէ զկնի
և ասէ։

Ե՞րբ եկից երևեցայց երեսացդ ա͞յ։ Երեսօք ա͞յ բաղում ինչ մերթ է իմանալ․ բայց աստ հայելով յընթացս բանից սաղմոսիս, և 'ի միտս նախընթաց հատուածոյն, իմացեալ լինի էութիւնն ա͞յ դէմ յանդիման ներկայութեամբ, որ լինի յայտնի տեսութ͞բ․ ուստի և յեբրայականն փոխանակ երևելոյ՝ տեսանել դնի՝ յասելն․ * Երբ եկից և տեսից զերեսս ա͞յ ‖․ և ըստ այսմ կամի ասել․ Երբ իցէ՝ զի ժամանելով առ քեզ՝ վայելեցից զերեսս քո․ որ է ասել, երբ իցէ՝ զի դէմ յանդիման տեսից զքեզ, որով ոչ ես ծարաւեցայց առ քեզ, այլ յագեցայց 'ի քեզ։ Զայս բան 'ի բերան առեալ ասէր երանելին արշէն * Ե՞րբ իցէ՝ զի ելից 'ի թանձ-
,, րադանդաղ ձանձրալի մարմնոյս․ Ե՞րբ իցէ զի տե-
,, սից զքեզ տէր ք͞ս․ Ե՞րբ իցէ զի աներկիւղ եղէց 'ի
,, մահուանէ․ Ե՞րբ իցէ զի տգիտութիւնս իմ հասցէ 'ի
,, կատարեալ գիտութիւն ‖․ ('ի գիրս եղիշէի․ գլ․ ͞ը․)

Այսմ տեսութե̃ արժանացաւ գրեթէ նախ քան զամենայն որդիս մարդկան աջակողմեան աւազակն, ըստ խոստանալոյ նմա տեառն, (ղուկ․ ի͞գ․ 43․) թէ * այ-
,, օր ընդ իս իցես 'ի դրախտին ‖․ այսինքն թէ այսօր տեսցես և վայելեսցես զիս յարքայութեան։ Եւ զայս բացատրելով ծործորեցին ('ի մեկն․ մատ․ գլ․ իէ․) գրէ այսպէս․ * յայլում թարգմանութեան գտաք՝ թէ
,, այսօր ընդ իս իցես յարքայութեանն․ քանզի զայս
,, խնդրեաց՝ թէ յիշեա զիս տէր՝ յորժամ գաս ար-
,, քայութ͞բ քով․ և արքայութիւնն ոչ այլ ինչ է քան
,, թէ տեսութիւն փառացն ա͞յ․ որպէս գիրք վկայեն։
,, Անդ յորժամ էր ընդ նմա հոգի նորա՝ եթէ յեր-
,, կինս և եթէ 'ի դժոխս, 'ի տես ա͞յ վայելէր․ որ
,, Ճշմարիտ արքայութիւն է և դրախտ ‖։

Այս տեսութիւն ա̃յ է գերագոյն փառք հոգւոյն, և լիութիւն երանութե̃. և նոյն ինքն էութի̃ արքայութե̃. ուստի ասէ Սարգիս Շնորհալի. ('ի մեկն. ա̃. յովհ. գ̃. 2. Ճառ Ե̃.) * չիք ինչ բարձրագոյն փառք և մեծա- „ գոյն երանութիւն կամիլ ումեք՝ քան զնա իւրական „ փառօքն լի բովանդակ տեսանել. քանզի այն է ար- „ քայութիւնն. այն է վերին քաղաքին և առագաս- „ տին հանգիստն. այն իսկ է անճառ բարիքն, և ան- „ պատում երանութիւնն ||, և այլ. Այժմ՝ ասէ 'ի նմին ճառի * 'ի մարմնի գոլով մեր ընդ հայելի օրինա- „ կաւ տեսանեմք... իսկ յորժամ զապականացուս 'ի „ բաց եդեալ՝ զանապականն զգենումք պատկեր, յայն- „ ժամ դէմ յանդիման որպէս և էն իսկ իւրով ան- „ հասանելի բնութեամբ փառօքն տեսանեմք զնա ||. յայնժամ ոչ ևս ունիմք ասել, երբ եկից, այլ թէ եկի և գտի՝ որում ծարաւէի։

Խորհրդաբար՝ երեսօք իմացեալ լինի բանն ա̃ծ. առ որոյ տեսութիւն փափաքելով փափաքէր մարդկայինս բնութիւն առ 'ի գտանել նովաւ զկեանս, և զզօրութի̃ գործելոյ զգերբնական գործս։

Ոմանք զայս բան ըստ ճառին վերածեն 'ի տեսութիւն խորանին ա̃յ, կամ 'ի ներկայութիւն ա̃յ 'ի տաճարի նորա. բայց այս մեկնութիւն երևի լինել նիւթական. վասն զի այն փափաք և ծարաւ՝ զոր յայտ առնէ աստ մարգարէն, 'ի գերագոյն ինչ ակնարկէ, այսինքն 'ի ժառանգութի̃ ա̃յ, և ոչ սոսկ 'ի ներկայութի̃ տաճարի նորա. զի թէպէտ և այս էր նմա փափաքելի, բայց ոչ իբր նպատակ փափաքանաց և ծարաւոյ իւրոյ, զորպիսի ցուցանէ գիտել աստ. որոյ և յաւելուլն՝ յանհնարին սուգ վարակեալ տխրէր, տեսեալ զինքն հեռի 'ի ժառանգութե̃ նորա։ Եւ զայս սուգ իւր յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով։

Գ. Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի. և մինչդեռ ասէին ցիս զհանապազորդ՝ թէ ուր է Ա̃ծ քո։

Յորժամ սաստկանայ ներգործութիւն սիրոյ առ սիրեցեալն, եթէ հեռի իցէ այն, և կամ եթէ ոչ ժառանգեալ լիցի, պէսպէս կիրս տպաւորէ 'ի սիրտ մարդոյ, երբեմն զհալումն, երբեմն զթալկացումն, երբեմն զհառաչանս, երբեմն և զսուգ վասն զուրկ մնալոյ 'ի սիրեցելոյն. և յայսմանէ սեղմի և ձմլի սիրտն, որով և յորդ գողորշիք ջերաջերմ սփռին 'ի գլուխն, և ցնդին յարտասուս ընդ աչսն և ընդ ռնգունս, որպէս թէ նոքիմբք յինքն ձգել զսիրեցեալսն: Յայսպիսի կիրս ըմբռնեալ և մարգարէն ասէ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր 'ի տուէ և 'ի գիշերի:

Կամի ասել. տեսեալ զիս հեռի 'ի տեսութենէ և 'ի ժառանգութենէ այ իմոյ, առ որ բերի անձն իմ անբերելի սիրով, ոչ կերակուր յիշէի, և ոչ հանգիստ խնդրէի, այլ 'ի սուգ ըմբռնեալ հալէի և մաշէի. յորմէ և անդադար հոսէին արտասուք յաչս իմ 'ի տուէ և 'ի գիշերի, այսինքն յամենայն ժամանակս պանդխտութեան իմոյ, ևս և 'ի տունջեան յաջողութեան, և 'ի գիշերի ձախորդութեան. և ահա այն էր իմ կերակուր: Որով ոչ ցուցանէ թէ կերակուր նորա էր արտասուք նորին, այլ այս է ոճ այնպիսի՝ որով կամի ցուցանել, թէ կերակուր և ըմպելի իւր ոչ էր զեղխիւ յուտել և յըմպել, այլ էր լալ և ողբալ վասն ոչ կարելոյ տեսանել փութով զերեսս այ, և ժառանգել զնա:

Ոմանք՝ ընդ որս և Լամբ". և Վարդ". ասեն թէ մարգարէն կերակուր կոչէ զարտասուս իւր վասն այնորիկ՝ զի նոքիմբք սնանիւր հոգի իւր, և մխիթարիւր. այս մեկնութիւն ևս է գեղեցիկ, բայց ըստ հոգևորին, և ըստ հետևութեան. իսկ ըստ հարազատ մտաց՝ բանն հայի 'ի սուգ վասն հեռի տեսանելոյ մարգարէին զինքն 'ի տեսութենէն այ, կամ վասն ոչ ժառանգելոյ զներկայութիւն նորա: Եւ զայս յայտ առնել կամելով՝ յաւելու ասել:

Եւ այն մէ ասէին ցիս զօրհանապազ՝ ո՞ւր է Ած քո:

Ասացեալ բառդ և՝ հանդերձ բառիւդ այն մէ՝ ոչ ցուցանէ զպատճառ սոսկ սգոյն, այլ զպատճառ առաւելութեան սգոյն. որպէս թէ ասէր. այս սուգ զոր ունէի, առաւելոյր յիս վասն այնորիկ՝ զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է Ած քո:

Իսկ եթէ ոչ դիցի շաղկապդ և, որպիսի է յայլ թարգմանութիւնս, այս բան դնի սոսկ իբր պատճառ սգոյն.

որպէս թէ ասէր. վասն այնորիկ սգայի՝ զի ասէին ցիս զօրհանապազ՝ թէ ո՞ւր է ա՟ծ քո։

Այս ասելս՝ այսինքն է թէ ասէին ցիս, երրակի կարէ 'ի մէջ բերել. մի 'ի վերացեալն՝ առանց հայելոյ՝ թէ ո՞յք էին ասօղքն. և ըստ այսմ ոչ զասօղսն, այլ զասացեալն տայ իմանալ, այսինքն զբերումն սրտոյն առ ա՟ծ. որպէս թէ եդեալ էր. դեռ ևս հեռի եմ յերեսացն ա՟յ, դեռ ևս 'ի բացեայ կամ, դեռ ևս ոչ տեսանեմ զնա, և եմ յայնպիսի վիճակի՝ յորում կարէին ասել ցիս տեսանօղք՝ թէ ո՞ւր է ա՟ծ քո։

Երկրորդ՝ հայելով 'ի խորհուրդս մտաց, իբր թէ 'ի փափաքել հոգւոյն առ ա՟ծ, խորհուրդք սրտի նորին կամ մտածութիւնք նորա ասէին ցնա զօրհանապազ, ո՞ւր է ա՟ծ քո, ո՞ւր ունիս գտանել զնա (զոր մեղօք հեռացուցեր 'ի քէն.) իցէ՞ արդեօք, եղիցի՞ արդեօք, եկեսցէ՞ արդեօք ժամանակ տեսանելոյ զերեսս նորա։ Յայս միտս մեկնէ և լամբ". զի այս ոճ յայսպիսի տեղիս ցուցանէ զփափաք գտանելոյ. որպէս այն՝ զոր ասաց եղիսէ. * ո՞ւր ես տէր ա՟ծ եղիայի‖. (դ. թագ. բ. 14։) Յայս միտս վառեալ երանելին ռայմունդոս՝ բազում անգամ ասէր զայս բան, եղեն ինձ արտասուք իմ կերակուր վասն ոչ տեսանելոյ իմ զա՟ծ։ Սա յերիտասարդութեան մոլեգին սիրէր զկին մի. և ապա անարգեալ զնա՝ սիրեաց միայն զա՟ծ, և այնչափ վառեցաւ 'ի սէր տեսութեան նորա, մինչև ցանկալ նմա մեռանել փութով. և ըստ փափաքանաց իւրոց նահատակեցաւ 'ի սարակինոսաց. և 'ի մեռանելն ել 'ի մարմնոյ նորա սիւն հրեղէն 'ի ցոյց հրալից սրտոյ նորա։ Երրորդ՝ 'ի մէջ բերէ այս՝ հայելով յարտաքին ասօղսն անորոշակի, այսինքն յայնոսիկ՝ որք ասէին ցդաւիթ զօրհանապազ՝ ո՞ւր է ա՟ծ քո, և այս կամ առ 'ի յորդորանս, որպէս թէ ասացեալ էին. դու որ այդչափ սրտիւ բորբոքեալ ես 'ի սէր ա՟յ, գտե՞ր արդեօք, ե՞րբ գտցես, և այլն։ Յայս միտ վարէ և եսայի զայս ոճ՝ յասելն * ո՞ւր է որ եդ 'ի նոսա զհոգին տեառն‖. (եսայ. կգ. 11։) Եւ կամ առ 'ի նախատինս. (ըստ որում դնէ 'ի համարն. 12.) որպէս թէ ասացեալ էին. 'ի զո՞ւր է քեզ ծառայել առ ա՟ծ, ո՞ւր է նա, և ո՞ւր ունիս գտանել զնա, և այլն։ Յայս միտս ասէր ռափ-

սակ *յի՞ յուսացեալ իցես . . . . ո՞ւր է ա̃ծ եմաթայ և
,, արփաթայ || և այլն. (Եսայ. լ̃զ. 4. և 19:)

Իսկ եթէ ըստ ասելոյ ոմանց հայեսցուք 'ի փափաքումն յայն՝ որով ցանկայր մարգարէն ներկայ լինել խորանին ա̃յ, 'ի տեսանելն անդ զինքն հեռացեալ անտի և 'ի հալածանս մաշեալ, յայնժամ բայս առէին դնի 'ի դիմաց թշնամեացն դաւթի, և կամ 'ի բերանոյ նոցա՝ որք էին ընդ նմա, յասել նոցա առ նա. ո՞ւր է ա̃ծ քո. իբր թէ ասել. դու փափաքիս տեսանել զներկայութիւն ա̃յ 'ի տաճարի նորա. և այս քանի՛ ամ է, զի հեռացեալ ես 'ի նմանէ, և տատանիս 'ի լերինս: Զայսպիսիս ասէին և բաբելացիք առ եբրայեցիս գերեալս 'ի բաբելոն: Զնոյն ասէին և դևք առ մարդկայինս բնութ̃ի, մինչչև էր եկեալ որդին ա̃յ: Այսպիսի բանք վշտացուցիչք են տառապեալ անձին, և առաւել ևս հոգւոյն՝ սիրով բորբոքելոյ, որպէս տեսանի 'ի մարգարէն. զոր և յայտ առնէ 'ի յաջորդ բանսդ հանդերձ քաջալերութ̃բ՝ ասելով:

Ե. Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ. փոխերէի՝ զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն ա̃յ:

Վերադարձ տեսութիւն իրին կամ քննութիւն նորին առաւել քան զառաւել ներգործէ 'ի հոգին. որպէս 'ի լսել ուրուք զիր ինչ զիւրմէ կամ զայլմէ՝ թէպէտև ներգործէ ինչ, սակայն եթէ դարձցի և յինքն, և տեսցէ զի է այնպէս, այս վերադարձ տեսութիւն առաւել տպաւորի 'ի հոգին՝ քան թէ առաջինն: Այսպիսի ճանաչումն եթէ իցէ 'ի վերայ վայելուչ իրի կամ 'ի վերայ բերկրական գործոյ, պատճառէ 'ի հոգին զսփոփանս կամ զուրախութիւն. իսկ եթէ իցէ 'ի վերայ տխրական կամ վշտացուցիչ իրի, պատճառէ ըզտաղտկութիւն և երբեմն զձանձրութիւն, երբեմն զտրտմութիւն և երբեմն զանձկութի սրտի և զտառապանս առաւելութ̃բ իմն. որպէս վերադարձ հարուած աողան պատճառէ զառաւելութիւն ցաւոց: Արդ յայտ է 'ի նախադրելոցդ՝ թէ այն զոր լսէր մարգարէն՝ վշտացուցիչ էր. զի էր լուր հեռի գոլոյ 'ի ժառանգութենէ իւրոյ ծայրագոյն բարւոյն. և զի վերադարձ ճանաչմամբ ևս տեսանէր, թէ յիրաւի հեռի է 'ի ժառանգութե՟ անտի, 'ի ճանաչմանէ աստի պատճառիւր 'ի նմա անձկութե՟ սրտի. և այս է՝ զոր ասէ ։

Զայս որպէս յիշէի, տառապէր յիս անձն իմ ։ Ուր բառդ որպէս՝ դնի փոխանակ բառիս մինչ կամ յորժամ ։ Իսկ բառդ զայս յարաբերէ զբանն զայն՝ զոր եդ 'ի վերոյ, այսինքն է ասելն առ նա զօրհանապազ * թէ ուր է ա՟ծ քո ‖ ։ Մարթ է և ես համարիլ թէ բառդ զայս՝ յարաբերէ զայն ամենայն՝ զոր ասաց 'ի նախընթաց համարսն. և կամ զայն զոր զկնի յարէ, այսինքն է մտանել 'ի յարկ սքանչելեաց տանն ա՟յ ։ Զայս ամենայն յորժամ յիշէի ասէ տառապէր յիս անձն իմ ։

Աստանօր բառդ յիշել ոչ դնի ըստ առաջին նշանակութեան իւրում, որով նշանակէ 'ի միտս բերել զմոռացեալն, այլ ըստ երկրորդական նշանակութեան՝ որով նշանակէ զծանուցեալն վերստին ճանաչել՝ կամ վերադարձ ճանաչմամբ ըմբռնել ։ Եւ ըստ այսմ կամի ասել. յորժամ զմտաւ ածէի, և վերադարձ ճանաչմամբ կշռէի զայս բան՝ թէ ուր է ա՟ծ քո. կամ յորժամ խորհէի զհեռի մնալս իմ յերեսացն ա՟յ՝ տառապէր յիս անձն իմ, այսինքն նեղիւր յիս յոյժ հոգի իմ ։ Այսմ տառապանաց ինքնին մխիթարութիւն տայ մարգարէն և ասէ ։

Քաջալերէի՝ զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն ա՟յ ։ Այս յարկ սքանչելեաց տան ա՟յ՝ զոր յիշէ, է խորանն երկնային, կամ արքայութիւնն ա՟յ, որ ասի յարկ սքանչելեաց, կամ յարկ սքանչելի տան, վասն բազում պատճառաց. նախ՝ զի անդ սքանչելի երևի նա ինքն ա՟ծ. երկրորդ՝ զի անդ յայտնին սքանչելի խորհուրդքն ա՟յ. երրորդ՝ զի որք միանգամ ենն անդ՝ են սքանչելի, և որք մտանենն անդ՝ լինին սքանչելի. չորրորդ՝ զի որ ինչ բանք լինին զայնմանէ՝ են սքանչելի. վասն որոյ և կոչի յարկ սքանչելեաց, կամ բնակարան սքանչելի տանն ա՟յ ։

Արդ ասէ 'ի տառապիլ հոգւոյս՝ չկարացեալ իմ այլով իւիք սփոփիլ՝ դառնայի յիս, և հայէի ես 'ի խոստմունս տեառն, և այնու յոյս առեալ մխիթարէի և քաջալերեալ լինէի, թէ եկեսցէ ժամանակ՝ զի մտից 'ի տուն ա՟յ յերկինս, և անդ տեսից զա՟ծ իմ, և հանգեայց 'ի սքանչելի յարկ նորա ։

Այս քաջալերութիւն կարգի և առ այն՝ զոր ասէին ցնա, ո՞ւր է ա՟ծ քո․ առ որս խօսելով քաջալերէր զանձն իւր, և իբրև թէ պատասխանելով ասէր, յարքայութեան երկնից է ա՟ծն իմ․ և ակն ունիմ զի մտից 'ի յարկն յայն, և անդէն տեսից զնա, և ասացից, ահա ա՟ծ իմ։

Այսու յարկաւ ըստ ճառին իմացեալ լինի և նիւթական յարկն կամ ծածկոյթ խորանին ա՟յ, յոր հանապազ փափաքէր մարգարէն ներկայ լինել․ (որպէս յայտ է 'ի սաղ․ ի՟ե․ և ի՟զ․) ուստի և 'ի տառապիլ հոգւոյ նորա վասն հեռի տեսանելոյ զինքն յերեսացն ա՟յ, և վասն լսելոյ՝ թէ ո՞ւր է ա՟ծ քո․ այս մի ինչ գոնէ կարէր մխիթարել և քաջալերել զնա, 'ի խորհիլն՝ թէ մտցէ ընդ յարկաւ խորանի տեառն։ Եւ այս միտ ևս քաջալերէր զնա յուսով գտանելոյ զմուտ անձեռագործ խորանին։

Զայսպիսի քաջալերութիւն հարկ է ունել և նոցա՝ որք 'ի դիմեն 'ի յարկ սքանչելեաց տեառն լքանին, և տքալով գնան․ տեսանեն զարքայութ՟ի երկնից իբրև զլեառն բարձր, և գիտեն՝ զի ունին տանիլ անդ զբեռն ծանր՝ այսինքն զգործս բարեաց․ և 'ի չափեն զկար անձանց իւրեանց թուլանան և հեղգանան, տխրին և նուաղին, չփոթին և խռովին․ և փոխանակ քաջալերելոյ՝ հեծեն և վայեն, և զընթացս իւրեանց նահանջեն․ և կամ զայս գործ թողուն, և յայլս զեղուն․ որով և տկարանան ժամանել։ Ի տեսանել քո զոք՝ որ բարձեալ ունիցի զբեռն, և հեծելով գնայ, աստ անկանի և անդ գլորի, ասես՝ թէ ոչ կարէ դա տանիլ զբեռն զայն․ իսկ եթէ ժիր ընթանայ և ուրախութ՟բ, ասես՝ կարէ դա և զծանրագոյնն ևս տանիլ։ Որ ուրախութ՟բ հոգւոյ ընթանայ յերկինս, այն ուրախութիւն նորա լինի նմա իբրև հողմն յաջողակ․ և ոչ ևս կարօտի անդադար բուռն առնել ինքեան, * միշտ „ թիաքարշ լինելով գնալ ընդդէմ ջրոյ՝ է գործ թիաձիգ „ գերւոյ ||․ (այսինքն բայզանտի։) Այնպէս է և կեանք այնր, որ տառապանօք և տխրութ՟բ բուռն առնէ ինքեան գնալ․ ապա 'ի բաց թօթափելով զայսպիսի կիրս՝ ցնծութեամբ պարտ է ընթանալ, առ 'ի ժամանել 'ի ցնծութիւնն յաւիտենական․ որպէս և յուսայր մարգարէն· զոր և յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

Է· Ի յայն ցնծութեան խոնարհութեան· և 'ի յայն բարեկենդանութեան։

Այր արդար՝ որ փափաքի մերձենալ առ ա՟ծ, երկոքումբք կարէ վստահիլ 'ի նոյն· մի՝ բարերարութե՟ն ա՟յ, և մի ևս՝ բարերարութեամբ իւրով, այսինքն բարի արարովք իւրովք· իբր զի յորժամ գործակից լեալ բարերարութեանն ա՟յ՝ ինքն ևս գործէ զբարիս· յայսմանէ ծագի 'ի հոգին վստահութիւն· և յաւելուլ վստահութեանն՝ զեղանի այն առ արտաքս, նախ առ 'ի յայտարարութիւն բարերարութե՟ն ա՟յ՝ ցնծալից խոստովանութ՟բ՝ և երկրորդ առ 'ի յայտարարութիւն բարերարութե՟ իւրոյ՝ հոգևորական ուրախութ՟բ։

Արդ փափաք մարգարէին՝ զոր ունէր 'ի մտանել 'ի տուն ա՟յ, յեցեալ էր 'ի վստահութիւն հոգւոյ նորա· որ սաստկացեալ 'ի նմա փափաքեցուցանէր զնա՝ յանդիման լինել ա՟յ՝ եթէ յայտարարութ՟բ բարերարութեանց նորա, և եթէ յայտարարութ՟բ բարերարուե՟ց իւրոց, այսինքն բարի արարից իւրոց· կամ այսպէս ասացից, ցուցմամբ բարեաց՝ զոր արար առ նա ա՟ծ, և ցուցմամբ բարեաց զոր նա շնորհօքն ա՟յ արար առ ա՟ծ· վասն առաջնոյն ասէ։

Ի յայն ցնծութե՟ խոնարհութե՟։ Այսինքն է, 'ի մտանելս իմ առաջի ա՟յ՝ յանդիման եղէց նմա ցնծալից դիմօք· և նովին խոստովան եղէց, այսինքն գովելով զբարերարութ՟իս նորա զորս արար ինձ շնորհակալ եղէց զնմանէ։ Այս և վասն երկրորդին ասէ։

Եւ 'ի յայն բարեկենդանութեան։ Բարեկենդանութիւնն ըստ նշանակուե՟ ձայնին ցուցանէ զունելն բարի կեանս, իսկ ըստ գործածութեանն ցուցանէ զխրախճանութիւն կամ զխրախճանական ուրախութիւն վասն ունելոյ ըղբարութիւն ինչ կենաց թէ ստացեալ իցէ զայն, և թէ ստանալոց իցէ· և զի այս խրախճանութ՟ի է իբր ներգործութիւն բարի կենաց, յանուն այնր կոչի բարեկենդանութիւն։ Եւ ըստ այսմ փափաքի մարգարէն՝ զի 'ի մտանելն առաջի ա՟յ երգեսցէ զերգս խրախականս վասն ունելոյ իւրոյ յա՟յ զկեանս բարիս։ Եւ բոլոր միտ բանին է ցուցանել՝ թէ կամի ուրախանալով մտանել 'ի տուն այ՟, և մտանելով ուրախանալ առաջի նորա. և ցնծալ 'ի վերայ այնչափ բարերարութեանց՝ զորս տեսեալ էր 'ի նմանէ, և 'ի վերայ բարեաց գործոյ՝ զորս շնորհիւ նորա էր արարեալ։ Այս մուտ եթէ իմացի վասն արքայութեան, ձայնէ— նշանակի աստ իմանալի զեղումն հոգւոյն 'ի տեսութ՟են այ՟։ Իսկ եթէ իմացի վասն տաճարի տեառն՝ ձայնէ— նշանակի աստ երգ սաղմոսաց։ Արդ յայտ արարեալ մարգարէին զփափաք իւր՝ զոր ունէր 'ի մտանել 'ի տուն տեառն և ցնծալ անդ, սկսանի սփոփել զանձն՝ մի՛ բնաւ երբէք լքանիլ. վասն որոյ ասէ։

Է. Արդ ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Ած՟ խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց Ած՟ է։

Յառաւելուլ տրտմութեան սրտի՝ տեսեալ մարդոյ՝ թէ ոչ ուրեք մխիթարի, սկսանի երբեմն ընդ իւր խօսիլ՝ իբր ընդ այլ ոք, առ 'ի մխիթարելոյ զինքն և քաջալերելոյ։ Եւ յիրաւի այս խօսակցութիւն ընդ անձին որպէս և փորձիւ յայտ է, ոչ սակաւ մխիթարութիւն տայ տրտմեցելոյն։ Արդ քանզի մարգարէն տառապեալ տեսանէր զոգի իւր վասն 'ի բացէ լինելոյ յերեսացն այ՟, և վասն ոչ հասանելոյ այնմ՝ որում փափաքէր, այսինքն է մտանել առաջի այ՟ 'ի ձայն ցնծութեան, ոչ գտանելով զոք մխիթարիչ անձին, ընդ ինքն խօսելով քաջալերիւր ըստ ասելոյ իւրոյ 'ի չորրորդ համարն. իսկ թէ զիա՞րդ, տեսանի յայս բան յասելն։

Արդ՝ ընդէ՞ր տրտմեալ ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս։

Բառս արդ՝ ոչ դնի աստ իբր շաղկապ սկզբնաւորական կամ իբր մակբայ ժամանակական, այլ իբր այնպիսի՝ որ ունի զզօրութ՟ի միջարկութ՟է յայտնել զներքին կիրս հոգւոյն՝ առ 'ի թօթափելոյ զայն 'ի բաց. որպէս թէ եղեալ էր. ո՛վ անձն իմ ցաւագին, ընդէ՞ր տրտում ես, կամ ընդէ՞ր խռովես զիս։

Իսկ տրտմիլ անձին երրակի լինի. մի՝ ըստ այ՟, որ և ասի ըստ հոգևորին. և մի՝ ըստ աշխարհի, որ ասի նաև ըստ մարմնոյ. և մի ևս՝ ըստ խղճի. թո՛ղ զընապէս տրտմին, որ անասնոց ևս դիպի, զորմէ ոչ են բանք մեր ։ Տրտմութի՟ն ըստ հոգեւորականին է 'ի վերայ հոգեւորաց 'ի բարւոյ մասին, այսինքն վասն զրկեալ տեսանելոյ մարդոյ զինքն 'ի հոգեւոր բարւոյ. զորօրինակ վասն կորուսանելոյ զշնորհս ա՟յ, կամ վասն մերժեալ լինելոյ 'ի գթալից այցելութ՟է նորա, կամ վասն հեռի երեւելոյ յերեսաց նորա, կամ վասն 'ի բացեայ լինելոյ 'ի ժառանգութ՟է արքայութ՟ե, ե՟ն ։ Եւ այս տրտմութիւն ոչ վասն այնորիկ է զի ունի առարկայ զհոգեւոր բարին, այլ վասն այսորիկ՝ զի ունի առարկայ զզրկումն 'ի հոգեւորաց. կամ այսպէս ասացից՝ ոչ վասն այնորիկ է՝ զի հայի 'ի հոգեւորս, այլ վասն այսորիկ զի հայի 'ի զրկումն 'ի հոգեւորաց ։

Այս տրտմութիւն է բարի, և է ծնօղ և սնուցիչ հոգեւոր կենաց. ծնօղ՝ հայելով 'ի մեղաւորս, և սնուցիչ՝ հայելով յարդարացեալս. և է միանգամայն մխիթարութ՟ի սրտի, և պատճառ ուրախութեան ։ Եւ յայս միտս ասէ առաքեալն, թէ որ ըստ ա՟յն տրտմութ՟ի է, զայնպիսի ապաշխարութիւն գործէ՝ որով լինի բերկրական փրկութ՟ի. (բ. կոր. է. 10 ։)

Եւ սակայն եթէ այս տրտմութիւն սաստկասցի, և երկարեսցի, և ոչ կանոնաւորեսցի, դառնայ յոչ բարին, և խռովեցուցանէ զանձն և տրամադրէ 'ի յուսահատութիւն. և եթէ ոչ քաջալերեսցի մարդ՝ ընկղմի 'ի վտանգ չարի. զի առաւելութիւն ո՛ և իցէ տրտմութեան ընկղմէ զմարդն. ըստ այնմ. (բ. կոր. բ. 7.) * զի մի՛ յառաւել տրտմութ՟էն ընկղմեսցի այն,, պիսին ‖ ։ Այսպիսիս յաղօթեսն՝ ընդ բեռամբ տրտմութեան հեծէ և տքայ. և 'ի գործելն զբարի ինչ՝ ապականէ զայն տրտմութեամբն. որպէս եթէ ոք կերակուր պատրաստեսցէ, և զնոյն աղտեղութ՟բ իւիք զզուելի արասցէ ։

Տրտմութիւնն ըստ մարմնոյ է 'ի վերայ մարմնաւորաց, այսինքն կա՛մ վասն զրկելոյ 'ի մարմնաւոր բարեաց, և կամ վասն պատահելոյ մարմնաւոր չարի, կամ վասն առարկելոյ ինքեան այնպիսի իրիք՝ որ իցէ ընդդէմ ըղձաւոր մասին՝ թէ՛ մարմնաւոր իցէ այն, և թէ հոգեւոր ։ Եւ այս տրտմութիւն եթէ չիցէ առ բարի ինչ կարգեալ՝ ոչ է բարի, այլ մանաւանդ չար՝

եթէ անցցէ ըստ չափն· զի լինի վնասակար անձին, տաղտկացուցիչ ընկերին, ժամտացուցիչ կենաց, խաւարեցուցիչ մտաց, անկարգացուցիչ բոլոր ընթացից, և այլն։ Եւ յայս միտս ասէ առաքեալն 'ի նախանշանակեալ տեղւոջ· *Աշխարհի տրտմութիւն մահ գործէ‖· (բ· կոր· է· 10։) Վասն որոյ ասէ իմաստունն· *զտրտմութիւն 'ի բաց արա 'ի քէն· զի զբազումս սպան տրտմութիւն· և չիք օգուտ 'ի նմա‖· (սիրաք· լ· 24։) Տրտմութիւնն ըստ խղճի հայի 'ի մեղս՝ յորմէ պատճառի, և կամ հայի 'ի կամաւոր զրկումն առ 'ի բարւոյն, և 'ի կամաւոր ժառանգութիւն չարի· զորօրինակ յորժամ 'ի տեսանել մարդոյ զինքն զրկեալ 'ի շնորհաց և անկեալ 'ի մեղս՝ ո՛չ կամիցի ելանել, այլ տխրեսցի· կամ 'ի տեսանել զինքն յաղագս յանցանաց իւրոց պակասեալ 'ի հոգևոր մխիթարութենէ, և կամ կամօք իւրովք մատնեալ 'ի փորձութիւնս մեղաց՝ ո՛չ արիասցի և ո՛չ զարթնուցու· և կամ 'ի տեսանել զինքն 'ի տարակուսանս 'ի վերայ փրկութեան իւրոյ, կայցէ թուլացեալ, և մաշիցի 'ի հոգս և 'ի վարանմունս մտաց անմխիթար։ Այս տրտմութիւն է դահիճ հոգւոյ, հալիչ և աղարտիչ կենաց· *որպէս ցեց հանդերձի և որդն փայտի (ասէ իմաստունն) նոյնպէս ,, տրտմութիւն վնասակար է սրտի առն‖· (սիրաք· իէ· 20։) Եւ անձն որ ունի զայնպիսի տրտմութիւն՝ է իբրև դժոխք, յորում բնակի սատանայ· զի նա *ընդ ,, հովանեաւ (տրտմութե) ննջէ 'ի ծերպս պրտւոյ‖·

(յոբ· խ· 16։)

Արդ առաջի եդեալ բնաբանդ որովհետև 'ի բերանոյ մարգարէին ասացեալ լինի, և 'ի դիմաց արդարոց, հայի յառաջին տեսակ տրտմութեան· զի յայն ըմբռնեալ մարգարէին՝ քաջալերէր զինքն սփոփիլ, ասելով· զի՞ է քեզ անձն իմ, ընդէ՞ր այդպէս տրտմեալ կաս· ընդէ՞ր 'ի տուէ և 'ի գիշերի մաշիս, և ոչ դադարիս յարտասուաց· ընդէ՞ր վարակեալ տուայտիս ցաւօք 'ի հոգի քո։ Եւ կամ ընդէ՞ր խռովես զիս։ այսինքն ընդէ՞ր այդչափ երկար մնալով 'ի տրտմութե քում պղտորես զխորհուրդս մտաց իմոց, և այլայլես զշարժմունս կամաց իմոց և շփոթես զբերմունս և զգածուածս զգայութեանց իմոց։ Զի՞ է քեզ, զի՞ տաբակուսեալ ես՝ հեռացեալ տեսանելով զքեզ յերեսացն այ՟, և 'ի ժառանգութ՟է նորա, մի՛ տարակուսիր մի՛ լքանիր, մի՛ երկնչիր, այլ դիմեա՛ առ նա. և առ այս յարէ:

Յուսա՛ առ ած՟: Յուսալն է դիմել շարժման հոգւոյն առ ստացումն բարւոյ. ուստի և յուսալն առ ած՟՝ է դիմել առ նա առ 'ի ստանալ զժառանգութ՟ի նորա և զարքայութ՟ի նորին, կամ զշնորհս նորուն: Յայս յորդորէ զինքն մարգարէն ասելով, ո՛վ անձն իմ մի՛ տրտմիր, մի՛ խռովիր. զի թէպէտև այժմ ո՛չ ժառանգես զերեսս այ՟, բայց կայ քեզ յոյս մեծ ժառանգելոյ զնա. վասն որոյ յուսա՛ 'ի նա և սփոփեսցիս 'ի տրտմութենէ քումմէ, զի դեղ տրտմութ՟ե է յոյս. իսկ թէ զինչ պարտ էր առնել 'ի յուսալն, ասէ:

Խոստովանեա՛ նմա, Փրկիչ երեսաց իմոց ած՟ է: Խոստովանիլն դնի աստ փոխանակ յայտ առնելոյ բանիւ՝ թէ ած՟ է միայն իւր փրկիչ երեսաց, ուստի և այս յետին բան՝ Փրկիչ երեսաց իմոց ած՟ է, է խնդիր խոստովանելոյ. որպէս թէ եդեալ էր. 'ի յուսալդ առ նա՝ խոստովանեա՛ նմա զայս ճշմարտութիւն՝ այսինքն թէ փրկիչ երեսաց իմոց ած՟ է:

Եւ զայս յայն սակս յաւելու՝ զի զօրացուսցէ զյոյս իւր և այնու առաւել ևս մխիթարեսցի և քաջալերեսցի. զի 'ի ճանաչել մարդոյ և 'ի խոստովանիլ նորա՝ թէ ած՟ է փրկիչ իւր, սովին զօրանայ 'ի յոյսն, և սփոփի 'ի տրտմութենէ, ակն ունելով՝ թէ նա ինքն ած՟ յետ սակաւու փրկելոց է 'ի տառապանաց պանդխտութեան և ժամանեցուցանելոց է զնա 'ի ժառանգութիւն երեսաց իւրոց: Սովին այսու յուսով ահա մխիթարէր երանելին, և սովին խոստովանութեամբ յինքն ձգէր զփրկութիւն այ՟: Ուստի սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. Ե՟. 29. ճառ ժա՟. յորդ.) յայս բնաբան հայելով ասէ, թէ դաւիթ * յուսովն այ՟ մխի-
„ թարէր զանձն իւր տրտմեալ, և խոստովանութ՟ե
„ զփրկութ՟ի երեսաց իւրոց գտանէր‖:

Մարթ է ևս ասել ըստ լատ՟. թէ այդ բան դնի իբր պատճառ յուսալոյ առ ած՟. որպէս թէ եդեալ էր. յուսա՛ առ ած՟, և խոստովանեա՛ նմա, այսինքն յայտնեա՛ նմա զկարօտ քո զոր ունիս առ նա, նոյնպէս և զտառապիլ քո. և նա մխիթարեսցէ զքեզ, և լցուսցէ զկարօտ քո. զի նա ինքն է փրկիչ երեսաց քոց։

Մարգարէն փոխանակ ասելոյ փրկիչ իմ, դնէ փրկիչ երեսաց իմոց. և այս ևս թէպէտ զնոյն ցուցանէ, բայց հայելով 'ի բառդ երեսաց՝ տայ իմանալ, թէ փրրկութիւն է իբր լուսաւորող երեսաց իւրոց՝ առ 'ի տեսանելոյ զերեսս ա՟յ. (զորմէ տես 'ի սաղ՟. իզ. 9.) յայն բան՝ զոր ասէ. * Եւ խնդրեցին երեսք իմ զերեսս քո տէր խնդրեցից‖. (տես և 'ի սաղ՟. խէ. 7.)

Սոյն այս բան կարէ ասիլ և 'ի դիմաց այնպիսի անձին՝ որ իցէ 'ի տրտմութեան ըստ մարմնոյ, բայց առաւել ևս այնմ անձին, որ ըմբռնեալ իցէ 'ի տրտմութեան ըստ խղճի. մանաւանդ թէ այսպիսումն վայելէ ասել առ ինքն. ո՛վ անձն իմ ընդէ՞ր մաշիս 'ի տրրտմութեան, կամ ընդէ՞ր յերկուս հետս կաղալով խռովես զկեանս իմ. եթէ 'ի տոռունս մեղաց ըմբռնեալ իցես, խղճեա՛ և ե՛լ անտի. եթէ 'ի տարակուսանս վարանեալ իցես՝ թօթափեա՛ 'ի քէն և սթափեա՛։ Ասես, ո՛չ կարեմ. և ընդէ՞ր, (պատասխանես.) զի կաղկանդեալ կամ, և արարիչն իմ թողեալ և լքեալ է զիս յերեսաց, և ես չունիմ զօք ձեռնտու. բայց արդ միթէ որ արարն զքեզ, վասն ա՞յնորիկ արար՝ զի լքցէ զքեզ. միթէ վասն թողլո՞յ զքեզ՝ եկն և փրկեաց զքեզ. միթէ զքեզ խաբե՞լ կամեցաւ՝ զի խոստացաւ քեզ զթողութիւն և զնորոգութիւն կենաց. միթէ վասն մերժելո՞յ զքեզ կոչեաց զքեզ առ ինքն. ո՞չ նա ինքն պատուիրեաց՝ խնդրել յիւրմէ զթողութիւն, և զիա՞րդ ո՛չ տացէ. ո՞չ նա ինքն հրամայեաց դիմել առ ինքն, և զիա՞րդ ո՛չ ընդունիցի. ո՞չ նա ինքն կամեցաւ՝ զի յուսասցիս յինքն, և զիա՞րդ մերժեսցէ. ո՞չ նա ինքն երկայնամիտ լինի և սպասէ դարձի քում. և զիա՞րդ ո՛չ ընկալցի զքեզ. ապա զի՞ խռովիս, և 'ի յուսոյդ անկանիս. յուսա՛ 'ի նա, և խոստովանեա՛ նմա ըզմեղս և զչարիս քո. խոստովանեա՛ նմա զտառապանս և զտարակուսանս քո. խոստովանեա՛ նմա՝ թէ նա ինքն է փրկիչ երեսաց քոց. և նա ինքն փրկեսցէ զքեզ, և ցուցցէ քեզ զողորմութիւն իւր, ցուցցէ և զայցելութիւն խնամոց իւրոց, ցուցցէ հուսկ յետոյ քեզ և զամենացանկալի երեսս իւր։

Արդ թէպէտ և յորդոր եղև ինքեան մարգարէն յուսալ առ ա՟ծ՝ առ 'ի ժամանել առ նա, բայց հայելով յայն՝ զի չէր հասեալ, որչափ մխիթարիւր վասն յուսալոյն, այնչափ տառապիւր վասն չհասանելոյն, մանաւանդ 'ի կասկածիլն՝ թէ գուցէ վրիպիցի. վասն որոյ կրկին յայտ արարեալ զխռովիլ անձին իւրոյ՝ վերստին 'ի յոյսն ապաւինի՝ ասելով։

Է. ԱՆՁՆ ԻՄ ՅՈՅԺ ԽՌՈՎԵՑԱՒ. ՎԱՍՆ ԱՅՍՈՐԻԿ ՅԻՇԵՑԻ ԶՔԵԶ ՅԵՐԿՐԷՆ ՅՈՐԴԱՆԱՆՈՒ. Ի ՀԵՐՄՈՆԷ Ի ԼԵՌՆԷ ՓՈՔՐՈՒԷ։

Խռովիլ անձին՝ եթէ մտածեսցի 'ի կողմանէ առարկայից կամ պատճառաց՝ այսինքն 'ի կողմանէ խռովեցուցչաց՝ 'ի պէսպէս կրից պատճառի, այսինքն յերկիւղէ, 'ի բարկութենէ, 'ի սիրոյ, յատելութենէ, 'ի տրտմութենէ, ե՟ն. ևս և 'ի պէսպէս փորձութ՟եց։ Իսկ եթէ 'ի կողմանէ ենթակային մտածեսցի, այսինքն 'ի կողմանէ խռովեցելոյն, 'ի պէսպէս կարողութիւնս նորա լինի, այսինքն 'ի խորհուրդս մտաց, և 'ի շարժմունս կամաց, և այս ըստ ստորին մասին. և երբեմն ըստ վերնոյն ևս, որ ծանր է յոյժ, և անտանելի, և դիմէ առ չարն։

Դարձեալ՝ այս խռովութիւն լինի և 'ի զգայութիւնս՝ եթէ 'ի ներքինս, այսինքն յերևակայութեան և 'ի յիշողութեան, ե՟ն. և եթէ՛ յարտաքինս, այսինքն 'ի տեսողութեան, ե՟ն. ևս և 'ի զգայական բաղձանս՝ եթէ՛ 'ի ցանկականն, և եթէ՛ 'ի ցասմնականն։ Արդ զոր դնէ աստ մարգարէն՝ է խռովութիւն խորհրդոց մտաց, և շարժման կամաց, ո՛չ ըստ վերին մասին, այլ ըստ ստորնոյն. ըստ որոյ ասէ։

ԱՆՁՆ ԻՄ ՅՈՅԺ ԽՌՈՎԵՑԱՒ։ Կամի ասել. թէպէտ և ասացի ցանձն իմ, ընդէ՞ր տրտում ես, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ. բայց նա տեսեալ զինքն՝ թէ չև է հասեալ յայն՝ յոր փափաքի, ո՛չ դադարեցաւ 'ի խռովութենէ, այլ մանաւանդ յոյժ խռովեցաւ, այսինքն առաւել ևս խռովեցաւ յերկիւղէ կասկածանաց՝ թէ գուցէ զրկեսցի, գուցէ հանապազորդեսցէ բանն այն՝ ո՞ւր է ա՟ծ քո. գուցէ վտանգեսցի և արգելցի. գուցէ անկցի և սահեսցի վասն տկարութ՟ե մարդկային բնութեան։

Զայս խռովութիւն մարթ է իմանալ և ըստ այլոց փորձութեանց խռովեցուցչաց անձին. իբր զի 'ի քաջալերիլ նորա, թերևս և այլ փորձութիւնք հասին 'ի վերայ նորա, և կրկին խռովեցուցին զնա. և զուցէ յայս միտս յաւելու զբառդ յոյժ: Եւ կամ իմանայ զայն տառապանս իւր՝ զոր յիշեաց. ('ի համարն 4.) առ որ հայելով՝ խօսեցաւ ընդ անձին իւրոյ 'ի նախընթաց համարն. և թերևս զոր անդ ընդ անձին խօսելով յիշեաց, աստ ընդ ա̃յ խօսելով յիշէ զնոյն. որպէս և իմացի, կամի սովաւ ցուցանել՝ թէ ըմբռնեալ էր 'ի խռովութիւնս, և չունելով այլուստ մխիթարիլ՝ դիմեալ էր առ ա̃ծ. սմին իրի յարէ. և ասէ:

Վասն այսորիկ յիշեցի զքեզ յերկրէն յորդանանու. 'ի հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ: Յայտնի տեսանի 'ի սուրբ գիրս, թէ զինչ ինչ արար տէր ընդ իսրայէլ յառաջնորդել նոցա յերկիրն աւետեաց. զիա՛րդ նախ առաջին մատնեաց 'ի ձեռս նոցա զերկիրն ամորհացւոց, որ էր յայնկոյս յորդանանու՝ տարածեալ 'ի հեղեղատէն առնոնայ մինչև 'ի յորդանան, և ապա զիա՛րդ մատնեաց զթագաւորութիւն ովգայ, յորոյ մասին էր լեառն հերմոն 'ի ծագ երկրին աւետեաց. և հուսկ յետոյ զիա՛րդ եած յեզր յորդանանու՝ անցանել ընդ այն. (Թուոց. ի̃ա. 14 = 35:)

Զայսոսիկ յիշելով մարգարէին՝ քաջալերէր զանձն իւր, թէ նաև ինքեան առաջնորդեսցէ տէր. և վանեալ զարգելս անձին իւրոյ մուծցէ 'ի ժառանգութիւն իմանալի երկրին աւետեաց, կամ 'ի տեսութիւն տաճարի իւրոյ. սմին իրի ասէ. լսելով զայն ամենայն՝ զոր արարեր ընդ հարս մեր յերկրին յորդանանու և 'ի լերին հերմոնի, յայնմանէ յիշեցի զքեզ, և ծանեայ՝ զի ամենակարող ես, և ունիս առ իս ևս ցուցանել զքանչելիս քո՝ վանելով յինէն զտառապանս իմ և զպատերազմ, ևս և մուծանելով զիս 'ի տաճար սուրբ քո:

Այս ոճ, այսինքն 'ի բացառական հոլովն դնել ըդխնդիր յիշել բային, և ասել. յիշեցի 'ի յորդանանէ և 'ի հերմոնէ, կրկին նշանակութեամբ 'ի գործ ածի. ըստ առաջին նշանակութեան ցուցանէ՝ թէ յիշողն եկելեալ 'ի յորդանան՝ և անտի յիշեալ իցէ, կամ 'ի Հերմոն՝ և անտի 'ի միտս իւր բերեալ իցէ զայն զոր յիշէ : Իսկ ըստ երկրորդ նշանակութեան ցուցանէ, թէ յիշօղն այլուր լեալ՝ անտի յիշեալ իցէ զոք 'ի ձեռն յորդանանու և Հերմոնի, այսինքն թէ յիշմամբ յորդանանու և Հերմոնի յիշեալ իցէ զնա : Արդ յայտ է թէ ըստ այսմ երկրորդ նշանակութեան դնի աստ յիշելն :

Մարթ է ևս ասել, թէ մարգարէն ըստ ոճոյ փոխանունութեան վարի. իբր զի առնու զանուն տեղւոյն փոխանակ գործոյ կատարելոյ 'ի տեղւոջ անդ. որպէս թէ եղեալ էր. յիշեցի զքեզ 'ի գործոց յայնցանէ, զորս արարեր յերկրին յորդանանու 'ի լեառն Հերմոն : Իսկ եթէ ըստ առաջին նշանակութեան դիցի, այլազգ մեկնի այս բան, իբր թէ յիշեալ իցէ զա̃ծ 'ի շրջելն իւր յերկրին յորդանանու և 'ի լեառն Հերմոն :

Այլ վասն Հերմոն լերին՝ որ կոչի աստ փոքր, բազում բանք են առ մեկնիչս, յորս ոչ է մարթ զստոյգ ինչ նշմարել : Այս մի ինչ ստոյգ է՝ զի Հերմոն լեառն է առ բասանու՝ իբր 'ի ծագ թագաւորութեան ովգայ, և է աղխաղխութիւն ինչ լերանց, որ գայ միանայ ընդ լերինս գաղաադու, և նոքիմբք բաժանէ զերկիրն աւետեաց յայլոց սահմանաց 'ի հիւսիսոյ արևելից : Եւ զի համեմատութեամբ լերանցն գաղաադու և այլոց բազմաց փոքր է, վասն այնորիկ փոքր կոչի. և զայս յայտնէ նախդիրդ 'ի, որպէս դնի 'ի ձեռագիրս և յայլ ամենայն թարգմանութիւնս, յասելն. 'ի Հերմոնէ 'ի լեռնէ փոքուէ. որ է ասել 'ի Հերմոնէ՝ որ է լեառն փոքր :

Եւ կամ հաւանականագոյն ևս մարթ է ասել, թէ այս լեառնս որ յիշի աստ՝ իցէ մի 'ի մասանց լերին Հերմոնի, որ կոչի ևս կիոն, կամ սիոն, կամ սեհոն (Բ̃. օրին. Դ̃. 48.) և գոլով փոքր՝ կոչի աստ Հերմոն փոքր : Եւ կամ թերևս այլ լեառն իցէ մօտ 'ի յորդանան :

Յայսմ ամենայնի զայս մի ինչ դիտէ ասել մարգարէն. յիշեցի՝ թէ որպիսի սքանչելեօք անցուցեր ըզհարս մեր առ լերամբ Հերմոնի և ընդ յորդանան, և ածեր յերկկին խոստացեալ. և զայս յիշելով քաջալերէր՝ թէ զիս ես ունիս անցուցանել ընդ կենցաղս անվտանգ, և ժամանեցուցանել 'ի փառս արքայութե՛ քո, որոյ օրինակ էր երկկին խոստացեալ։

Այլաբանօրէն, այս բան հայի 'ի գործս պաշտելեացն քոց, յոր միտս առէ Լամբ". * Երկկին Յորդանանու և
„ մերձ լերինն Հերմոնի մեծամեծ նշանս արար քո . . .
„ զայն յիշէ (մարգարէն) և զխռովեալ անձն մխիթա-
„ րէ . . . զայսօրիկ (պաշտելիս) որ եղև յերկրին Յոր-
„ դանանու գրաւական առի ասէ յոյս փրկութե՛ յիշա-
„ տակելոյն, և մխիթարեցայ »։

Պարզեալ ըստ Վարդանայ, սոյն կամի յիշել մարգարէն զՏէր զմկրտեալն 'ի Յորդանան, որով և յիշէ զՀերմոն, որ ըստ ոմանց թարգմանի ճրագ ճանապարհի, և նշանակի յՈվհաննէս Մկրտիչ, որ էր ճրագն փոքր առաջի մեծութեանն քո։ Երածաբար, սոյն այս բան քաջ ես մեկնի համեմատութեամբ փրկութե՛ երկրաւորաց և մեծութեան երկնաւորաց. իբր թէ հայելով 'ի նուաստութի՛ և յանցաւորութի՛ այսր աշխ՛ որք են 'ի Հերմոնի, այսինքն յաշխարհի՛ շարժի հոգին յիշել զանչափ մեծութիւն և զանձառ երանութի՛ արքայութեան երկնից. զորմէ ասէ Բարուք. * ով Իս-
„ րայէլ, որչափ զի մեծ է տունն այ, և ընդարձակ է
„ տեղի ստացուածոց նորա. մեծ է, և ոչ գոյ բաւ.
„ բարձր և անչափ »։ (Բարուք Գ. 24.)

Բարոյապէս՝ որովհետև Յորդանան թարգմանի ձոր կամ խորք դատաստանի, և Հերմոն անէծք կամ թշուառութիւն, 'ի խորհիլ մարդոյ զխորս նախախնամութե՛ և դատաստանին այ, և 'ի տեսանել զինքն յերկիր անիծից, որ փոքր առի հայելով յերկիր յաւիտենական անիծից՝ այսինքն 'ի դժոխս, եւս և 'ի տարափելի անէծս աւուրն դատաստանի, զարթնու միտս մարդոյ. և յիշելով զարարիչ իւր՝ ողորմելին դառնայ առ նա, և 'ի նա դնէ զյոյս իւր։ Յետ յոյս արարեալ մարգարէին մինչև ցայս զխռովիլ անձին իւրոյ ըստ հեռի լինելոյ յերեսացն այ՝ յայս ասէ. այժմ զինքն՝ ըստ մերձ լինելոյ 'ի մեծամեծ տառապանս յիշատակութե՛ անցից Ջրհեղեղին, ասելով.

Ը․ Խորք խորոց կարդացին առ քեզ, 'ի ձայն սահանաց քոց։

Խորք կոչի ո՛ և իցէ իրի խորութիւն. բայց յատկապէս այն՝ որոյ յատակն աչօք ոչ տեսանի՝ եթէ 'ի ջուրս իցէ, և եթէ 'ի հող. որ 'ի ջուրս է՝ մասնաւոր անուամբ անդունդք կոչի. և որ 'ի հող՝ մասնաւորապէս խորք ասի։ Իսկ սակայն որպէս երբեմն անդունդքն խորք կոչի, սոյնպէս և խորքն անդունդք ասի. Իսկ երբեմն վասն բացատրութեան 'ի միասին դնի՝ փոխանակ խորութեան անդնդոց, որպէս այն՝ զոր ասէ մարգարէն. (սաղ. Հ. 20.) * 'ի խորոց անդնդոց (այսինքն 'ի ,, խորութենէ անդնդոց) երկրի հաներ զիս ‖։ Իսկ զի երբեմն 'ի թանձրամած ամպս եւս երեւի սպառնալի իմն խորութիւն, այն եւս կարէ կոչիլ խորք. ըստ որում աւարտ նորա վասն խորութեան և թանձրութեանն ոչ նշմարի։

Ըստ այսոցիկ մեկնելով՝ բանս խորք կամ անդունդք՝ բերի 'ի նմանութիւն երկուց. մի՝ 'ի նմանութի՛ այնոր՝ որոյ ողորմութիւնն՝ կամ առաւելեալ խորութիւնն ոչ տեսանի. յոր միտս ասէ առաքեալն. * ո՜վ խորք մեծու- ,, թեան և իմաստութեան ‖. եւն. (հռով. ժա. 33.) Երկրորդ՝ 'ի նմանութիւն տառապանաց, և տխրապէս այնպիսի վշտաց, որոյ յատակն ոչ նշմարի. եթէ զի կամ վերջ նորին՝ այսինքն դադարել նորին ոչ տեսանի, և կամ սաստկութիւն և առաւելութիւն նորուն ոչ պարփակի 'ի տկարութենէ մարդոյ։ Զայսոսիկ հայելով ասէ մարգարէն։

Խորք խորոց կարդացին առ քեզ։ Խորք խորոց կարդալ ըստ ձայնին նշանակէ՝ գոչել միոյ խորոյ առ միւս խորն. և այս մասնաւորապէս ակնարկէ 'ի ժամանակ ջրհեղեղին, յորում խորք ծովու նմանութեամբ խօսելով՝ աղաղակէին առ խորս երկրի բղխել զջուրս, յորմէ և * պատառեցան աղբիւրք անդնդոց բազմաց ‖. (Ծնն. Է. 11.) Սոյնպէս և խորք անդնդոց երկրի 'ի միասին ընդ խորս անդնդոց ծովու գոչեցին առ խորս ամպոց երկնից. որով և * սահանք երկնից բացան և եղև անձրև 'ի վե- ,, րայ երկրի ‖. (Ծնն. Է. 11.) Իսկ յայս միտս յաւելու ասել մարգարէն։

Ի ձայն սահանաց քոց։ Սահանօք իմացեալ լինին յորդահոս զեղմունք ջուրց յիջանելն անդ ձայնիւ մեծաւ. կամ ըստ ասելոյ այլոց՝ իմացեալ լինին փականք ջուրց, որպիսի են երկաթապատ դրունք եդեալք ընդդէմ հոսմանց ջուրց. որոց ՚ի բանալն յորդեն ջուրք ահեղ ձայնիւ. և զի ՚ի յորդել անձրևաց ՚ի ժամանակս ջրհեղեղի՝ կարծեալ իմն լինէր, թէ սահանք կամ փականք ջուրց երկնից բացեալք իցեն, զայն կամելով ցուցանել՝ ասաց մովսէս, թէ բացան սահանք երկնից։ Ըստ այսմ և աստ դնէ զբառդ **սահանք**։ Արդ այս սահանք կոչին ՚ի բնաբանի աստ սահանք ա՟յ, ըստ որում ՚ի նորա ձեռին են, և յանձնարկել նորա բանին կամ փակին։

Ի ձայն այսպիսի սահանաց ասէ **խորք խորոց** կարդացին առ քեզ։ Ուր նախդիրդ ՚ի՝ որ դնի ՚ի վերայ ձայնի՝ ունի զնշանակութիւն բառիս **հանդերձ**. կամ ՚ի **ձեռն**. որպէս թէ եդեալ էր. ՚ի հրամայել քո՝ խորք հնազանդելով քեզ՝ կարդացին առ խորս հանդերձ ձայնիւ սահանաց. կամ որ նոյն է, ՚ի հրամայել քո բացան սահանք երկնից. ընդ նոսին և խորք՝ անսալով քեզ՝ ազդ արարին միմեանց, և բղխեցին զջուրս։

Եթէ գործիականապէս առցուք զբառդ ՚ի **ձայն**՝ այդ հայի ՚ի կարդալն, ոչ թէ եդեալ էր. խորք առ խորս կարդացին ձայնիւ մեծաւ հանգոյն ձայնի սահանաց քոց. որով ցուցանի՝ հնչմունք ձայնի գոչել խորոց։

Արժ է զնախդիրդ ՚ի՝ առնուլ աստ և փոխանակ բառիս ՚ի **ձեռն**. որպէս թէ ասացեալ էր, ՚ի ձեռն ձայնի սահանաց քոց խորք կարդացին առ խորս։ Հնար է առնուլ և փոխանակ նախդրիս **զ**. կամ **վասն**. որպէս թէ եդեալ էր. խորք գոչեցին առ խորս զձայնէ կամ վասն ձայնի սահանաց քոց. իբր թէ գոչեցին՝ զի և սահանք երկնից տացեն զձայն անձրևօք։ Այսոքիկ ասացուածք դնին և փոխաբերութեամբ, առ ՚ի յայտ առնել զանտանելի տառապանս զորս ունէր մարգարէն ՚ի սրտի։ Եւ զայսպիսի փոխաբերութիւն ՚ի մէջ բերելով կամի ասել, թէ ՚ի տեսանելն զիս հեռի յերեսաց աստուծոյ՝ կայի յայնպիսի նեղութիս, որպիսի եղև ՚ի ժամանակս ջրհեղեղի, զի և յիս ձայն ետուն այն իմ նեղութիւնք այլոց նեղութենէց . և ընդ մեկնել խորեանց՝ այլք հասին 'ի վերայ 'ի չոյն ամենաներքոյ՝ այսինքն իբրև ձայնիւ սահմանաց հասելոյ 'ի թողտուութ՟է քումմէ .

Եթէ զբառդ խորոց՝ ընթերցցուք 'ի բացառականն այսպէս . *խորք 'ի խորոց կարդացին առ քեզ‖ . որպէս գտի 'ի բազում ձեռագիրս և 'ի վարդանայն, միտ բանին լինի այս . յանցանել որդւոցն իսրայէլի ընդ ծովն կարմիր, խորք ծովուն 'ի խորոց սրտի գոչեցին առ ա՟ծ . պատրաստ եմք հրամանի քում . զայն է ասել և զանցից ջրհեղեղին, և զյորդանանու . և այս՝ ձայնիւ սաստիկ գոչման ջուրց . Եւ այսոքիկ ըստ ասելոյ մեր այժմ՝ բերին օրինակ ներքին տառապանաց հոգւոյն, և անձկութեան սրտի . (տե՛ս և 'ի համեմատութիւնս .)

Իսկ Լամբր . զբառդ խորոց՝ սեռականապէս առեալ՝ մեկնէ ըստ հոգևորին այսպէս . *խորք խորոց կոչէ
,, (մարգարէն) զխոր մտաւորական խոկումն, որ խառ-
,, վեալ իբր զծով՝ ծփի 'ի հողմոց յուսահատութեան .
,, իսկ սահանք՝ զքնի զպէսպէս շնորհս բժշկութեանցն՝
,, որ զեղեալ հեղու 'ի շքեղ նորա յերկիրն յորդա-
,, նանու . այսմ սահանացս ձայնն յորժամ եկն 'ի յի-
,, շատակ մտաց իմոց, և 'ի վերայ խառնեալ խորհր-
,, դոցս հեղու, դարձաւ առ քեզ յաղերս և 'ի կար-
,, դալ՝ պաղատանօք‖ .

Այլաբանօրէն, խորք զաղմնեաց հին օրինաց կարդացին առ խորին խորհուրդս նոր օրինաց՝ ձայնիւ սահմանաց, այսինքն բանիւ ամենառատ ա՟ծային շնորհաց . Ըստ որոյ ասէ բարսեղ վարդապետ . ('ի մեկն . մարկ . գլ . ժա՟ .) *օրէնք զօրէնս կոչեցին‖ . Դարձեալ խորք թշուառութեան մարդկային բնութեան աղաղակեցին առ խորս ա՟յ, եւ և առ խորս խորհրդոյ մարդեղութե՟ ձայնիւ մարգարէից .

Վերածաբար, խորք թշուառութեան ասոր կենաց կարդան այսինքն գոչեն առ խորս երջանկութեան հանդերձեալ կենաց . որոյ իմանալի ձայնն ազդի յականջս հոգւոյ 'ի սահմանաց երկնային խնդութեան, որ է հաղորդութի իմն ա՟ծային ուրախութե՟ .

Բարոյապէս, խորք սրտի 'ի խորոց կարդան զա՟ծ, կամ զխորս իմաստութեանն այ̃՝ որ քննէ զխորս սրտից, և յոր կողմն կամի շրջէ զնա 'ի ձայն սահանաց, այսինքն հրամանաց իւրոց։ Դարձեալ խորք ողորմելութեան մարդոյ կարդան առ խորս ողորմութեանն այ̃ 'ի ձայն սահանաց, իսկ այս ձայն եթէ 'ի կողմանէ մարդոյ մտածեսցի, նշանակէ զձայն յորդ արտասուաց. իսկ եթէ 'ի կողմանէ այ̃ մտածեսցի՝ նշանակէ զձայնել նորա գթութեամբ զմարդն յապաշխարութիւն, կամ 'ի մխիթարութիւն։ Դարձեալ՝ խորք անզգամութե̃ մարդոյ կարդան առ խորս վրէժխնդրութեանն այ̃ 'ի ձայն սահանաց, այսինքն ձայնիւ սպառնալեացն այ̃։ Դարձեալ՝ խորք տանջանաց խղճի մտաց կարդան առ խորս տանջանացն դժոխոց ձայնիւ բարկութեանն այ̃։ Դարձեալ՝ խորք չարութե̃ մեղաց՝ յորժամ ոչ ջնջին՝ կարդան և զիմեն առ խորս չարութեան այլոց մեղաց ընդդէմ ձայնի ա̃ծայնոյն հրամանաց։ Յարմարաբար, խորք միոյ տեղեկութեան առաջնորդեն առ խորս այլոց տեղեկութեանց։ Արդ զոր փոխաբերութեամբ խորոց յայտ արար մարգարէն զստուգապէս իւր՝ զնոյն այլով նմանաբանութբ̃ առաջի դնէ և ասէ։

Թ. Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին 'ի վերայ իմ։

Զայն ասաց և յովնան 'ի փոր կիտին յաղաղակել իւր առ ա̃ծ. * ամենայն զբօսանք քո և ալիք քո ան-
,, ցին 'ի վերայ իմ ||. (յովն. բ. 4.) Իսկ բառդ զբօսանք՝ որ նշանակէ զզբաղումն 'ի զուարճալիս, կամ ըզպարապումն զուարճալի իրաց, երբեմն ամենևին զներհակն ցուցանէ, այսինքն զզբաղումն 'ի տաղտկալից տառապանս, կամ զվարանումն յանհնարին նեղութիւնս. որք այլաբանին 'ի բարձրացեալ ալիս ծովու. զի և նոյն ալիք 'ի բարձրանալն զբօսանք կոչին։ Ասորի և ասա՝ յեբր″. զըի քօլ միշբարէխա. այս է * ամենայն կոհակք
,, քո ||։ Իսկ կոհակք են բարձրացեալ ալիք մեծամեծք. ըստ որոյ յայլ թարգ″. դնի բարձունք, այսինքն բարձր ալիք։ Զայսոսիկ յօրինակ առեալ մարգարէն ասէ.

Ամենայն զբօսանք քո, և ալիք քո անցին 'ի վերայ իմ։ Զայս դնէ հայելով 'ի նախընթաց բանն. որպէս թէ ասացեալ էր, 'ի յորդել ջուրց նեղութեանց՝ ծածկեցին զիս, և 'ի չնչել հողմոց փորձանաց՝ յարուցին զզբօսանս, այսինքն զուռուցեալ կոհակս և զալիս բազումս։ Արդ յայտ է թէ որ ընդ այսպիսի կոհակս և ալիս ծփի, արտաքոյ և 'ի ներքոյ տառապի. արտաքոյ 'ի չարչարիլն յալեաց յալիս, և 'ի ներքոյ յերկիւղէ խեղդելոյ և 'ի բազում վտանգելոյ. սմին նման կրեցի ասէ և ես 'ի հոգի իմ զզբօսանս, այսինքն զտառապանս մեծամեծս ըստ վերին մասին հոգւոյս. և զալիս՝ այսինքն զվիշտս վտանգիցս ըստ ստորին մասին. և այս՝ 'ի թոյլտուութենէն ա̃յ. և առ այս դնէ զբառդ քոյ, և կրկնէ զայն 'ի վերայ բառիցդ զբօսանք և ալիք. զի յա̃յ առաքեալ լինէին նոքին, և վասն ա̃յ կրեալ լինէին 'ի մարգարէէն.

Եւ այսպիսի տառապանք ոչ էին ինչ սակաւ, այլ բազում յոյժ, և զրեթէ ըստ ամենայն տեսակաց. յայտ առնէ յաւելուլ զբառդ ամենայն. որպէս թէ ասէր. այն ամենայն ազգ նեղութեանց որք առաքէին 'ի քէն առ այլս՝ միանգամայն հասին և առ իս անվրէպ. կամ թէ ամենայն զբօսանք և ալիք՝ որք եղեն 'ի ժամանակս ջրհեղեղին 'ի հրամանէ քումմէ, օրինակաւ ինձ ըստ հոգւորին եկին 'ի վերայ իմ։

Բարոյապէս, ալեօք և զբօսանօք նշանակին փորձութիւնք, որք թէպէտ և տանջեն, բայց համբոյն ալեաց յառաջ ևս մղեն զառաքինիսն 'ի հոգևոր կեանս. և ընդ հակառակս զթոյլս նուաճեն. զի զորօրինակ ալիք ձգեն 'ի ցամաք զխոտս և զժաժմունս, սոյնպէս փորձութիւնք 'ի ցամաք երկրաւորութեան արկանեն զտկարս, և զախտաւորս, և վտանգեն զնոսա։ Այլ որ կամի զերծանիլ անվնաս՝ պարտի զօրանալ, և առ ա̃ծ աղաղակել * կեցո՛ զիս ա̃ծ, զի հասին ջուրք յանձն իմ ‖.

(սաղ. կ̃ը. 1։)

Լամբ″. զզբօսանսն վերածէ 'ի դէմս ա̃յ. իբր թէ որպէս որ 'ի զբօսանս իցէ, մոռանայ զկարևորս, այսպէս և ա̃ծ մոռացեալ իցէ զնա. և 'ի կարծել մարդոյ թէ յիրաւի իցէ այս, այսինքն թէ յիրաւի ա̃ծ մոռացեալ իցէ զինքն՝ սոյն այս կարծիք զրեթէ խեղդէ զնա. զի իբրև ալիք անցանէ 'ի վերայ նորա, և ծածկէ զնա մերձ ընկղմել։ Այց այսու ամենայնիւ քազաւերէ մարգարէն գլխոյն և ասէ.

Թ. Ի տուէ պատուիրեաց տէր ողորմութիւն իւր. 'ի գիշերի օրհնութիւն նոր. և աղօթս իմ առ Աստուած կենաց իմոց.

Պաշարեալ մարգարէն 'ի նեղութիւնս, և 'ի միտ առեալ՝ թէ Ած ոչ պակասի 'ի ցուցանելոյ զողորմութիւն իւր, այլ ժամանակ կամի տալ զայն, և պատուիրէ իսկ՝ զի միշտ խնդրեսցուք զնոյն, յայն ապաւինի և ասէ.

Ի տուէ պատուիրեաց տէր ողորմութիւն իւր. 'ի գիշերի օրհնութիւն նոր. Աստանօր բառդ պատուիրեաց՝ նշանակէ նախ կարգել կամ հրամայել. ըստ որում հրամանաւ իւրով կարգ եդեալ է Ած յարարածս՝ ցուցանել նախնիքն զողորմութիւն իւր յորդիս մարդկան, 'ի ծագել զարեգակն 'ի վերայ չարաց և բարեաց. 'ի տալ զբերս բարեաց՝ արդարոց և մեղաւորաց. 'ի խնամել զծառայս իւր, և 'ի խնայել 'ի թշնամիսն, եւն.

Նշանակէ երկրորդ՝ աւանդել ինչ յօրէնս, կամ իբր պատուիրանս ցուցանել. ըստ որում Ած յայտնեալ է յօրէնս իւր զողորմութիւն. Եւ ըստ այսմ՝ ողորմութիւնք խնդրեալ լինի նախ խոստումն Այ ողորմութեամբ արարեալ. խնդրեալ լինի և նոյն իսկ օրէնքն, որ լի է ողորմութեամբ. խնդրեալ լինի երկրորդ՝ տուչութիւն վարձուց, զոր Ած սահմանեաց տալ. խնդրեալ լինի երրորդ՝ գործք ողորմութեան, զոր Ած յամենայնի անպակաս ցուցանէ առ ամենեսին. Եւ զի զայս ամենայն յայտ արար Ած 'ի պատուիրանն, վասն այսորիկ ասէ, պատուիրեաց տէր զողորմութիւն.

Իսկ բառդ օրհնութիւն՝ կրկնակի կարէ նշանակել. առաջին՝ 'ի կողմանէ Այ յորժամ տայ մեզ զօրհնութիւն իւր, և բարի առնէ մեզ նոր իմն ճանապարհաւ. և ըստ այսմ նոյն լինի ընդ ողորմութեան. որով և միտ բանին լինի այս. Ած որ պատուիրեաց 'ի տուէ զողորմութիւն իւր՝ ոչ պակասեցուցանէ զայն և 'ի գիշերի. Երկրորդ՝ 'ի կողմանէ մերմէ, որով նշանակի փառաբանութիւն և գոհութիւն առ Ած. և ըստ այսմ կամի ասել. Ած յայտ արար 'ի պատուիրանին՝ տալ մեզ զողորմութիւն իւր, և առնուլ 'ի մէնջ զօրհնութիւն նոր. Արդ եթէ զայսպիսի եդ սահման, ուրեմն անտարակոյս տայ զողորմութիւն իւր, կամելով միանգամայն ընդունիլ և 'ի մէնջ զօրհնութիւն նոր։

Վասն ողորմութեան դնէ՝ 'ի տուէ. իսկ վասն օրհնութեան դնէ 'ի գիշերէ։ Զայս այլևայլութիւն մարթ է կրկնակի մեկնել, մի՝ ըստ այնմ զի ա͞ծ 'ի տունջեան ետ զօրէնսն՝ յորում յայտնեաց զողորմութիւն իւր. իսկ զօրհնութիւն բարերարութեան իւրոյ ետ և տայ միշտ՝ ևս և 'ի գիշերի. և 'ի մէնջ ևս պահանջէ զօրհնութիւն փառաբանութեան նաև 'ի գիշերի։

Երկրորդ՝ զի տիւն է ժամանակ գործելոյ, յորում բազում իրք պատահին մարդոյ՝ յաջողութեան և ձախորդութեան, և յայսմ ամենայնի ցուցանէ ա͞ծ զողորմութիւն իւր. և վասն այսորիկ ասէ. 'ի տուէ պատուիրեաց տէր զողորմութիւն. իսկ գիշեր վասն հանգստեան է, յորում ընդունի մարդ զօրհնութիւն յա͞յ, և անզբաղութեամբ կարէ տալ ա͞յ զօրհնութիւն նոր՝ այսինքն շնորհակալութիւն վասն ողորմութեանցն, զոր ետես 'ի տունջեան. վասն որոյ ասէ, 'ի գիշերի զօրհնութիւն նոր. այսինքն թէ հաճեցաւ ա͞ծ ընդունիլ 'ի գիշերի զօրհնութիւն նոր։ Այլ զայս ասէ՝ ոչ զի 'ի տունջեան ոչ հաճի ա͞ծ ընդ օրհնութիւն, և կամ 'ի գիշերի ոչ առնէ զողորմութիւն, այլ զի որ առ մեզ երևի, և որ մեզ պատշաճ տեսանի, զայն առաջի դնէ. արդ գործք ողորմութեանն ա͞յ ըստ մեզ խօսելով՝ երևին մեզ 'ի տունջեան, սոյնպէս և օրհնութիւն նոր առաքել առ ա͞ծ պատշաճագոյն յարմարի մեզ 'ի գիշերի։

Մարթ է ևս ասել, թէ այս յետին հատուած, այն է * 'ի գիշերի զօրհնութիւն նոր ‖. ոչ հայի 'ի բայդ պատուիրեաց. այլ յայլ բայ, որ զօրութեամբ իմացեալ լինի. որպէս թէ ասէր. 'ի գիշերի մատուցից նմա զօրհնութիւն նոր. և այս ըստ պատշաճի. զի 'ի նմա հանգիստ գտեալ մարդոյ, և նոր ոյժ առեալ՝ մարթի անզբաղութեամբ նոր օրհնութիւն ընծայել ա͞յ։

Այս բան հայելով 'ի նախընթաց համարն՝ կարէ հայիլ և 'ի ժամանակ ջրհեղեղի, զոր մարգարէն էառ յօրինակ ժամանակի տառապանաց իւրոց. և ըստ այսմ կամի ասել. 'ի տունջեան յայնմիկ՝ յորում դադարեցին խորք 'ի կարդալոյ՝ և սահանք 'ի հոսելոյ, պատ-

ուխտեաց ա՟ծ զողորմութիւն, այսինքն հաստատութիւն և ուխտիւք եցոյց զողորմութիւն, խոստացեալ՝ ոչ եւս ապականել զերկիր ջրհեղեղաւ. և եդ զաղեղն իւր յամպս
՚ի նշան իւրոյ խոստմանն ։

Բայց պատուիրեաց եւ զօրհնութիւն. այսինքն է կամեցաւ ընդունել և զշնորհակալութիւն ։ Իսկ զի զժամանակն ողորմութեան կոչեաց տիւ, ըստ պահանջելոյ կարգի բանին զշնորհակալութիւն դնէ ՚ի գիշերի. որով իմանայ զի և իւր ժամանակ, կամ մանաւանդ զժամանակ ապերախտութեան մարդկան որ նմանի գիշերոյ ։ Յայս միտս առեալ՝ կամի ասել. որպէս արար յայնժամ ա՟ծ. այնպէս արասցէ և այժմ առ իս ։

Հոգեւորապէս, այս բնաբան բազմադիմի օրինակաւ կարէ մեկնել. վերածաբար՝ ՚ի կենդանութեան մերում որ է իբր տիւ, առնէ մեզ ա՟ծ զողորմութիւն իւր. իսկ ՚ի հասանել գիշերի այսինքն մահու՝ եթէ մեռանիցիմք ՚ի շնորհս՝ ընկալցուք ՚ի նմանէ զօրհնութիւն, և մեք եւս մատուսցուք նմա զօրհնութիւն նոր հանդերձ իմաստուն կուսանաց, ՚ի լսել մեր ՚ի գիշերի անդ մահու ըզբարբառ երկնաւոր փեսային. և մտցուք յառագաստ նորա ՚ի ձայն ցնծութեան խոստովանութեան, և ՚ի
ձայն բարեկենդանութեան ։

Այլաբանօրէն, ՚ի տունջեան նոր օրինաց հաճեցաւ ա՟ծ տալ զողորմութիւն փրկութեան, կամ ըստ եօթ՟. արար զողորմութիւն. զոր ՚ի գիշերի հին օրինաց յայտնեաց պէսպէս օրհնութեամբ, այսինքն մարգարէութեամբք ։ Բարոյապէս. յորժամ ՚ի յաջողութեան եմք և յուրախութեան, զողորմութիւնն ա՟յ վայելեմք իբր ՚ի տունջեան. իսկ յորժամ հասանէ ժամանակ նեղութեան իբր գիշեր՝ պարտ է մատուցանել ա՟յ զօրհնութիւն շնորհակալութեան. եւս և վստահանալով ՚ի գթութիւն նորա՝ դիմել առ նա աղօթիւք. որպէս արարին ազարիանք, որք ՚ի գիշերի գերութեան յարկանին ՚ի հնոց հրոյ՝ ետուն ա՟յ զօրհնութիւն նոր ։ Զայսոսիկ եդեալ մարգարէին՝ առաջի մատուցանէ և զաղօթս
իւր, և ասէ ։

Առ իս աղօթք իմ առ ա՟ծ կենաց իմոց ։ Առ շաղկապդ է՝ որ ՚ի մերս միայն դնի՝ ունի զնշանակութիւն բառիս [illegible]. որպէս թէ ասէր. ուստի յիշելով իմ զայս՝ մատուցանեմ զաղօթս առ ա̃ծ վասն կենաց իմոց , այսինքն վասն պահպանութեան կենաց իմոց ։ Իսկ եթէ բառդ Ւ՝ դիցի իբր բաղհիւսական շաղկապ , միտ բանին լինի այս , և աղօթք իմ զոր 'ի տառապելս իմ մատուցանեմ առ ա̃ծ , է վասն կենաց իմոց , այսինքն վասն գտանելոյ սփոփութիւն ինչ կենաց յաշխարհի աստ , և զերծութիւն կենաց 'ի հանդերձելումն ։ Այլ կամ ըստ քաղդ″․ զաղօթս իմ ուղղեմ առ ա̃ծ՝ վասն կենաց իմոց ․ այսինքն վասն այնորիկ զի պահեաց ա̃ծ ըզկեանս իմ ։ Կամ ըստ այլ թարգ″․ զաղօթս իմ մատուցանեմ առ այն՝ որ է ա̃ծ կենաց իմոց ։ Այլ կամ ըստ հոգևորին՝ աղօթք իմ այս է , զի տեսից զօծեալ նորա զք̃ս , որ է կեանք իմ ։

Բարոյապէս , այս բան յայտ առնէ զվախճան աղօթից ․ զի տիրապէս աղօթքն է վասն հոգևոր կենաց , այսինքն վասն ստանալոյ կամ վասն նորոգելոյ և կամ վասն պահելոյ զհոգևորական կեանս , և այնու ժամանելոյ 'ի յաւիտենական երանութիւն ։ Յայս սպառի հայիլ զխառումն աղօթից , և այսու մտօք պարտ է կալ յաղօթս ։ Այլ են ոմանք՝ որք իբր 'ի սովորութենէ և կամ իբր սոսկ 'ի պարտաւորութենէ մատչին յաղօթս ․ վասն որոյ սակաւ օգտին և կամ ոչինչ ․ կան և այլք որք իւիք իւիք պակասաւորութեամբ մատչին ․ (զորոց տես 'ի սաղ․ լէ․ 4 ։) Կան ևս այլք որք փափաքին այն ուղիղ դիտաւորութ̃բ առնել աղօթս , բայց քանզի ոչ քաղցրանան 'ի նմին , վասն որոյ լքանին և տխրութ̃բ մաշին ․ և փոխանակ շահելոյ՝ վնասին , և փոխանակ զարգանալոյ 'ի հոգևոր կեանս՝ յետս մնան ։ Որք ճանապարհորդեն ցռկանաւաւ (այսինքն չէքտիրիւ) եթէ զադարեսցէ հողմն՝ թիաքարշ լինին և յառաջեն , իսկ որք անթի վարին՝ սպասեն հողմոյ՝ և յետս մնան ․ եթէ դու սպասես քաղցրութեան , կամ հողմոյ մխիթարութեան յաղօթել՝ յետս մնաս ․ թի արա՛ զմիտդ և զկամսդ , և վարեա՛ զքեզ յառաջ ․ եթէ հասցէ և մխիթարութիւն՝ բարի ևս է ․ բայց այն չէ քո , այլ հողմոյն ․ նա վարէ զքեզ , և ոչ դու ։ Ի յաղօթելդ մըխիթարութ̃բ՝ տարեալ լինիս 'ի գիրկս իբրև տղայ , իսկ յաղօթելդ առանց մխիթարութ̃ն՝ իբրև հսկայ ընթանաս ընդ քարաժայռս ․ առաջնումն իբր վարձուք աղօ֊

թես. իսկ երկրորդին առանց վարձուց ։ Եթէ առանց մխիթարութե̃ն և քաղցրութե̃ն կարասցես բարւոք աղօթել, որչափ ես 'ի մխիթարութեան և 'ի քաղցրութեան ։

Եթէ ցանկաս մխիթարութ̃բ աղօթել, անարժան համարեա՛ զքեզ մխիթարութե̃ն. եթէ ոչ հրաւիրէ զքեզ ա̃ծ 'ի սեղան՝ շատացիր փշրանօք. բաւական է քեզ այս՝ զի մնասցես այսու 'ի հոգևոր կեանս՝ որ է վախճան աղօթից, զի ևս խնդրես 'ի սեղանն մատչիլ. տայ քեզ ա̃ծ զվախճանն առանց այնր միջնորդի՝ զոր դու կամիս. և այս շատ է քեզ. եթէ և զայն տայր՝ դուցէ վնասէիր՝ յափրանալով, կամ հպարտանալով.

Հայրն տայ տղայոյ զհաց, բայց ինքն հատանէ, և ոչ տայ նմա զդանակ հատանելոյ. զի դուցէ հատանիցէ և զձեռն իւր. այսպէս առնէ և քեզ ա̃ծ, զի մի դուցէ և դու հատանիցես զձեռս հոգևոր կենաց քոց. մեծ իմն է այս՝ զի տայ քեզ ա̃ծ սոսկ զհացն՝ քան թէ տայր զայն դանակաւ ։

Եթէ խստասցի ընդ քեզ ա̃ծ՝ այսինքն թէ թողուցու զքեզ ամենևին 'ի ցամաքութեան, լնու զտեղի նորա մեծամեծ պարգևօք 'ի հոգևորական կեանս քո՞ զոր դու ոչ իմանաս. յետոյ ծանիցես, և այն է վախճանն՝ յոր սակս կաս յաղօթս ։ Յովսէփ նահապետ խստիւ վարեցաւ ընդ եղբարս իւր, բայց ետ լնուլ զքուրձս նոցա. և զանխուլ դնել 'ի նոսին զարծաթսն.
(Ծնն. խբ. 25 ։)

Եթէ յաղօթելդ ելանէիր մխիթարութ̃բ մինչև յերրորդ երկինս՝ զինչ օգուտ լինէր քեզ անտի՝ եթէ չշահէիր զվախճան աղօթիցդ. հայեաց 'ի վախճանն, և մի 'ի խստութ̃ին. հայեաց 'ի նորոգութ̃ի կենացդ, և մի 'ի քաղցրութ̃ի մխիթարութ̃են ։

Այն մխիթարութ̃ի զոր դու խնդրես՝ է զգայական 'ի յախորժման սրտի. և զի զգայութ̃ին 'ի փոփոխման է, եթէ յայն յեցուցես զաղօթսդ, 'ի փոփոխել այնր փոփոխի և դու յաղօթս հանապազ. և տարաբերիս իբրև զնաւ անղեկ. և աղօթք քո ոչ ևս լինի հոգևորական, այլ զգայական ։

Յանմխիթար աղօթելդ տրտնջաս վասն երկուց, մի՝ թէ խաւար տիրեալ է 'ի միտս իմ, և մի ևս՝ թէ խընութեն կոչեալ է զկամս իմ։ Բայց խորհիս՝ զի այն խաւար ոչ է 'ի միտս՝ այլ 'ի զգայութեն՝ այսինքն յերևակայութեն և 'ի յիշողութեան. որք կարեն խաւարիլ և ոչ ինչ տեսանել. բայց միտքդ ազատ է 'ի նոցունց, առանց տեսանելոյ նոցա կարէ ա̃ծային լուսով լուսաւորիլ, և նովին լուսով կարդալ առ ա̃ծ։ Յորժամ լուսաւորեցան միտք պօղոսի 'ի հոգին, և խաւարեցան աչք նորա 'ի մարմնի՝ կարդաց առ ա̃ծ. * տէր զիս զինչ կամիս առնել ‖. (գործ. թ. 6։) Այնպէս և 'ի խաւարիլ զգայութեցդ՝ եթէ դու խոնարհութբ̃ մատիցես յաղօթս՝ միտք քո լուսաւորեսցի. և յայնժամ կարասցես ընդ պօղոսի ասել. տէր զիս զինչ կամիս առնել. պատրաստ եմ հրամանի քում յամենայնի։

Բայց մութն և խաւարութիւնն այն ոչ է 'ի կամս, այլ որպէս ասացաք՝ 'ի զգայական ախորժակդ. դու զկամսդ կայ՛ հաստատուն և այնու կա՛ց յաղօթս. և եթէ չզգաս ինչ բնաւ զախորժ 'ի զգայութենդ՝ այդու ոչ ինչ վնասիս, այլ մանաւանդ օգտիս, և զաղօթս քո հաճոյ առնես ա̃յ։ Որ ի զօրօրինակ առանց զգայական զգածման կամօք հաւանելն մահուչափ մեղաց՝ է չար, և առնէ զմարդն ատելի ա̃յ, նոյնպէս և առանց զգայական զգածման կամօք հաւանելն բարւոյ և կամօք կալն յաղօթս է հաճոյ ա̃յ, և առնէ զմարդն արժանի վարձուց. մանաւանդ զի * ա̃ծ առաւել յօժարի վարձատրել քան ,, պատժել ‖. ուստի և առաւել վարձատրելի լինի կամայական հաւանութիւն աղօթից քոց առանց զգածման զգայութեանդ, քան պատժելի՝ կամայական հաւանութեն չարի առանց այնր զգածման։ Ապա դու 'ի կամայականն հայեաց, և մի 'ի զգայականն. գիտելով ես թէ առաւել հաճոյ է ա̃յ այն՝ քան այս. նաև զի այն հաւաստի առնէ զվախճան աղօթիցդ, իսկ այս տարակուսելի. այն է ճշմարիտ աղօթք վասն կենաց քոց, իսկ այս է երևոյթ աղօթից վասն ախորժման զգայութեցդ։ Արդ յետ ասելոյ մարգարէին. * և աղօթք իմ ,, առ ա̃ծ վասն կենաց իմոց ‖, յայտ առնէ այժմ՝ թէ զինչ աղօթք էր այն զոր մատուցանէր. ուստի ասէ։

ժա. **Ասացի ա̃յ՝ ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի նեղել թշնամւոյ իմոյ.**

Ոչ ՚ի ընդունելի լինել ումեք ա̃յ՝ կրկին պայման պատճառի. մին՝ յորմէ. և միւսն՝ յոր. Ըստ առաջնոյն պարտ է հրաժարիլ սրտիւ յայնմ ամենայնէ՝ որ ոչ ընդունի զնա ըստ բոլորին. որպիսի է այն ամենայն, որ ոչ կարգի առ ա̃ծ. Ըստ երկրորդին պարտ է յարիլ յայն՝ որ ընդունի զնա բոլորովին՝ այսինքն է յարիլ յա̃ծ. ՚Ի գնել այսր՝ կրկին տխրանս գտանէ հոգին. մի՝ ՚ի ճանաչելն. և մի ևս՝ յաւելն, յորժամ ըստ ճանաչելոյն խօսի առ ա̃ծ, և ասէ. ընդունօղ իմ ես. Ըստ այսմ ահա կարգէ աստ մարգարէն զբանն իւր, և ասէ.

Ասացի ա̃յ՝ ընդունելի իմ ես. ընդէ՞ր մերժեցեր զիս. Բառդ ընդունելի՝ դնի աստ փոխանակ բառիս ընդունօղ. ըստ որում աւանդի ՚ի քերականութեան. (ա̃. խդ̃.) Արդ ա̃ծ լինի ընդունօղ մարդոյ բազում օրինակաւ. այսինքն ՚ի պաշտպանելն ՚ի չարէ, ՚ի պահելն ՚ի վտանգէ, ՚ի յօգնելն առ ՚ի գործել զբարիս, յառաջնորդելն առ ՚ի գնալ ըստ ուղղութե, և ևս ՚ի լուսաւորելն, և ՚ի մխիթարելն, ևն. և որ մեծն է՝ ՚ի պահպանելն զնա ընդ մասնաւոր խնամօք իւրովք.

Այլ թէպէտ մեծ իմն է մարդոյ ունել զա̃ծ այսպիսի օրինակաւ ընդունօղ իւր, սակայն այս ոչ մխիթարէ զնա ՚ի նեղութեան ըստ բաւականին, եթէ ոչ ծանիցէ՝ թէ է այսպէս. զի են բազումք՝ որոց թէպէտ և ընդունօղ է ա̃ծ, բայց ՚ի լինել նոցա ՚ի տառապանս՝ ոչ գիտելով զայդ, տրտմին և տխրին. մանաւանդ եթէ ՚ի նշանաց ինչ կասկածեսցին, թէ գուցէ թողեալ իցէ զնոսա ա̃ծ.

Այլ թէպէտ գիտէր մարգարէն, թէ ա̃ծ ընդունօղ իւր է, և ոչ է թողեալ զինքն. յոր միտս ասէ, ասացի ա̃յ, ընդունելի իմ ես դու, բայց տեսեալ զանձն իւր ՚ի տառապանս վտանգաւորս՝ երկնչէր մի՛ արդեօք մերժեսցէ զինքն. սմին իրի յաւելու ասել * ընդէ՞ր ,, մերժեցեր զիս ‖. որպէս թէ ասացեալ էր. ոչ ապաքէն դու ես ընդունօղ իմ. ընդէ՞ր ապա մերժեցեր զիս, այսինքն ընդէ՞ր ապա յայսպիսի անմխիթար տառապանս թողեր զիս. որով ոչ կամի յայտնել զկասկածանս կամ ցուցանել զգանգատանս, այլ առաջի առնել զաղերս աղետից եւս և զզարմացումն իւր. և զայս դնէ 'ի քաջալերութիւն անձին իւրոյ, որով և դիտէ առնել. որովհետև դու ես ընդունող իմ, ոչ է ինձ օրէն կասկածիլ՝ թէ մերժեալ իցես զիս, վասն որոյ և ոչ իսկ արժան է ինձ տրտմիլ. և առ այս յարէ:

Ընդէր տրտում գնամ ես 'ի նեղչել թշնամւոյ իմոյ: Նեղիլ մարգարէին 'ի թշնամեաց կրկին էր. մի՝ գործով 'ի գործել նոցա ընդդէմ նորա. և մի եւս բանիւ՝ յասելն նոցա առ նա, ուր է ա՟ծ քո: Յայսպիսի նեղութե՟ գոլով ոչ լքանի, այլ յա՟ծ ապաւինի ասելով. ես զա՟ծ ունիմ ինձ ընդունող. զի ես տրտմիմ և տխրիմ վասն նեղելոյ զիս թշնամեաց իմոց, միթէ կարէ թշնամին հանել յինէն զա՟ծն իմ: Զայս դնէ դարձեալ առ 'ի մխիթարել զանձն. բայց այսու ա՟միւ՝ ուսանելով թէ ինքն հեռի է 'ի ժառանգութենէ ընդունողին իւրոյ, ընդ այն սգայր. և բանք թշնամեացն՝ զոր ասէին ցնա, ուր է ա՟ծ քո, իբրև սուր մխեալ լինէր 'ի սիրտ նորա. այնր իրի յաւելու ասել:

ԺԲ. Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ. յասել ցիս զօրհանապազ՝ ուր է ա՟ծ քո:

Ոսկերօք ոչ իմացեալ լինին աստ բնական ոսկերք, այլ զօրութիւնք հոգւոյն. (որպէս ասացեալ էր մեր 'ի սաղ. զ. 2: իա. 15: լ. 11: լա. 3: լե. 10: լէ. 4:) Արդ որպէս 'ի փշրել կամ 'ի խորտակել ոսկերաց՝ ոչ կարեն կայուն ունել զմարմինն, և մարմինն ոչ կարէ ուժգին և հանգիստ գնալ, այսպէս եւ 'ի տկարանալ զօրութեանց հոգւոյն տառապանօք կամ մեղօք՝ ոչ կարեն հաստատուն պահել զհոգին 'ի բարին, և ոչ թողուն զնա հանգստեամբ գնալ, և կամ յուրախութեան կեալ, մանաւանդ եթէ արտաքուստ եւս ունիցին ըզվիշտս: Զայն վկայէ մարգարէն զանձնէ իւրմէ՝ յասելն աստ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ: Այսինքն 'ի նուազիլ զօրութեանց իմոց յերեսաց տառապանաց, մանաւանդ 'ի թշուառութենէ պանդխտութեան իմոյ, տեսին զիս 'ի մեծի վտանգի՝ յողդողդելոյ 'ի բարեն. եւ 'ի գոլս իմ յայսպիսի վտանգի՝ յարեան 'ի վերայ եւ Թշնամիք իմ բանիւք նախատանաց, այսինքն այնպիսի բանիւք, որովք կսկծեցուցանէին զսիրտ իմ, եւ կրկին յաւելուին զցաւս իմ. իսկ եթէ զի՞նչ բանք էին նոքին, յայտ առնէ ասելովս.

Յասել ցիս զօրհանապազ՝ Ո՞ւր է Ած քո. Կամի ասել. նախատել Թշնամեաց իմոց ոչ էր Թեթեւ. զի եթէ ասէին ցիս՝ այր մահու ես դու, եւ անարժան կենաց, այր անօրէն, եւ անպիտան յամի, եւն, ոչ համարէի ինչ. եւ սակայն անտանելի է ինձ այն՝ եւ ծանր յոյժ, զի ասեն ցիս զօրհանապազ. ո՞ւր է Ած քո, որով կատակել կամին զիս աստուծով իմով. որպէս Թէ ասէին. ո՞ւր է այն՝ զոր դու կոչես ընդունելի իմ, եւ համարիս քեզ պաշտպան. ո՞ւր է այն որում դու ծառայես, եւ նմա միայնոյ ծառայել փափաքես. ո՞ւր է այն յոր եդեալ ես զյոյս քո, եւ նովին պարծիս:

Այսպիսեօք կամի իմացուցանել մարգարէն եւ զայլ ինչ անձկութի սրտի. որպէս Թէ յաւելեալ էր ասել. միթէ ոչ իցէ ինձ բաւական՝ զի տառապիմ եւ նեղիմ, ընդէ՞ր ապա եւ նոցա այսպիսի բանիւք սաստկացուցանել զվիշտս իմ եւ զցաւ սրտիս: Քանզի յայտ է Թէ այսպիսի բանք կարի դառն են առն բարեպաշտի, զոր եւ գխածելով տխրական հրէից՝ այսպիսեօք նախատէին զանէր փառաց, որպէս գրի յաւետարանի.

Զայսպիսիս ընԹեռնումք եւ առ տոբիԹայ. յասել ցնա կնոջ նորա. * ո՞ւր են արդ ողորմուԹիւնք քո եւ արդարուԹիւնք. զի ահաւասիկ յայտնի եղեն քեզ‖. (տոբ. Բ. 22.) Ըստ այսմ առնէին եւ դահիճք առ մարտիրոսս. զի 'ի չարչարելն զնոսա, եւ 'ի փշրելն զոսկերս նոցա, ասէին. ո՞ւր է Ածն այն՝ յոր դուքն յուսացեալ էք: Իսկ այս բան աւելի տանջէր զնոսա՝ քան զփշրումն ոսկերաց նոցին. եւ սակայն անխախտուԹիւն յուսոյ իւրեանց մխիԹարէր զնոսա: Յարմարական մեկնուԹեամբ այս բան հայի 'ի ժամանակ գերուԹեանն բաբելացւոց, յորում 'ի փշրել եւ 'ի ցրուել ոսկերացն Իսրայէլի՝ այսինքն զօրուԹեանց նոցա, եւս եւ որդւոց նոցին յայլեայլ աշխարհս, եւ յասել նոցա * Հատաւ յոյս մեր եւ մեռաք‖. (Եզեկ. Լէ. 11.) ծաղր առնէին զնոսա գերիչք նոցա, եւ ասէին. ո՞ւր

է ած ձեր, յոր յուսացեալ էք, և ակն ունիք հասանել նովաւ յազատութի · և զայս լուեալ նոցա տրտմէին
և յոգւոց եհանէին ։

Բարոյապէս՝ 'ի փշրել, այսինքն 'ի տկարանալ զօրութեանց հոգւոյն մերոյ կամ ծանր փորձութեք՝ յառնեն զգայական բաղձանք, կամ ըստ առելոյ լամբ" · դևք, և ջանան արկանել 'ի յուսահատութիւն, առ 'ի կործանել 'ի մեղս, կամ առ 'ի կրկնել տալ զմեղսն, և առ 'ի յետս ընկրկել յառաջխաղութէ ։ Այլ յայսպիսի ժամանակի պարտական է մարդն դառնալ յինքն, և քաջալերել զանձն՝ յուսալ յողորմութին այ · որպէս առնէր մարգարէն 'ի փորձութե խորում, կրկին և կըրկին քաջալերելով զանձն · ըստ որում տեսանի և 'ի
յաջորդ բանդ՝ զոր ասէ ։

ժգ. Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս · յուսա առ ած · խոստովանեսցուք նմա ·
փրկիչ երեսաց իմոց ած է ։

Տես զայսմանէ 'ի հատուածն Ե ։ Իսկ կրկնելն սորա զնոյն՝ հայի նախ յառաւելութիւն տրտմութեանն, յորում վշտանայր հոգի մարգարէին · հայի երկրորդ յառաւելութիւն քաջալերութե անձին, որով զօրանայր ։ Իսկ դարձեալ՝ որովհետև կրկնեաց զբանս թշնամեացն զդրդուցիչս անձին, կրկնէ և զբանս քաջալերութե իւրոյ,
և ասէ ։

Ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս · յուսա առ ած · խոստովանեսցուք նմա · փրկիչ երեսաց իմոց ած է ։

Որպէս թէ ասէր · մի՛ ինչ տրտմիր անձն իմ ընդ տառապանս և ընդ փորձանս · և մի՛ խռովիր ընդ նախատինս ընդ գրգռութիւնս թշնամեաց քոց · այլ յուսա՛ առ ած, և յայտնեա՛ նմա զցաւս սրտի քոյ · նա է որ փրկէ զքեզ, և պահէ · նա զօրացուցանէ զոգի քո, և կազդուրէ · նա առաջնորդէ քեզ 'ի բարին և ուղղէ · նա ածէ զքեզ 'ի փառս արքայութե, և փառաւորէ 'ի
յաւիտեան ։

ՍԱՂՄՈՍ. ԽԲ.

Մաղթանք առ Ա̃ծ՝ իրաւունս առնել և փրկել 'ի չարէ. մխիթարել, լուսաւորել, և առաջնորդել 'ի լեառն սուրբ. միանգամայն և քաջալերք անձին առ 'ի սփոփել, և խոստովան լինել առ Ա̃ծ.

Սաղմոս 'ի դաւիթ.

1 Դատ արա ինձ Ա̃ծ. և իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում. 2 Յազգէ որ ո՛չ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս: 3 Դու Ա̃ծ հզօրել իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ: 4 Առաքեա տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ, և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո: 5 Մտից առաջի սեղանոյ ա̃յ քո Ա̃ծ. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ: 6 Խոստովան եղէց քեզ օրհնութբ̃ Ա̃ծ Ա̃ծ իմ: 7 Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Ա̃ծ, խոստովանեա նմա՝ փրկիչ երեսաց իմոց Ա̃ծ է:

ՎԵՐՆԱԳԻՐ

Սաղմոս 'ի դաւիթ.

*ԱՅՍ ՍԱՂՄՈՍ ՉՈՐՍ ՎԵՐՆԱԳԻՐ յեբրայականն և 'ի քաղդէականն. իսկ յայլս՝ այլևայլութ̃ք գնի. 'ի յոյնս և յեթէով". գրի * սաղմոս յիմքն 'ի դաւիթ ||. 'ի լատինս * 'ի կատարած սաղմոս դաւթի. յասոր". այլ բանք գնին, և 'ի դաւիթ վերածին. Իսկ յարաբ". առանց յիշելոյ զդաւիթ. Այլ որք զնախընթաց սաղմոսն տան որդւոցն կորխայ, զսոյն ևս նոցա ընծայեն. և վերածեն 'ի դէմս գերելոցն 'ի բաբելոն, որպէս և զնախընթացն.*

Դաւիթ անյաղթ ('ի յառաջաբան. սաղ.) ընդ այլոց բազմաց գնէ՝ թէ այս սաղմոս է Դաւթի, և գրէ այսպէս. * Անվերնագիր ասին խբ՟ սաղմոսն և ԽԳ՟
,, սաղմոսն, և ասաց զսոսա Դաւիթ. զմինն՝ յորժամ
,, դարձաւ յառաջին հալածմանցն իւրոց. եկն 'ի խո-
,, րան տեառն, և ասաց, մտից առաջի սեղանոյ այ՟, որ
,, ուրախ առնէ զմանկութիւն իմ. և զմիւսն ասաց՝
,, յորժամ կշտամբեցաւ 'ի Նաթանայ. և զղջացեալ
,, ապաշխարեաց ||.

Այս սաղմոս է իբր շարունակութիւն նախընթացին, և է իբր կրկնումն նորա, և նման նմին. վասն զի յոր ինչ հայէին բանք նորա, 'ի նոյն հային և բանք սորա. յայտ առնելով զփափաք սաղմոսերգուին մտանել առաջի այ՟, և կալ յանդիման նորա, և օրհնել զնա, զերծեալ 'ի նեղութենէ չարաց.

Եւ զի զայսպիսի իմաստ ունի յինքեան այս սաղմոս, կարգեաց եկեղեցին քսի՝ ասել քահանայից զսոյն զայս 'ի սկզբան պատարագի նախ քան զմտանելն առաջի սուրբ սեղանոյ. Եւ ըստ այսմ՝ բանք այսր սաղմոսի ըստ նկարագրին տեսլապէս հային 'ի սեղան արքայութեան երկնից, և նիւթապէս 'ի սեղան տաճարին. իսկ ըստ հոգևորին 'ի սեղան խորհրդոյ պատարագին. որպէս տեսցի յառաջիկայդ.

ԻԱՆ

ա. Դատ արա ինձ ած. Եւ իրաւ արա ինձ 'ի դատաստանէ [illegible].

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այս բան ուղղակի հայի յայնոսիկ՝ զորոց խօսեցաւ մարգարէն 'ի նախընթաց սաղմոսն. ('ի համարն 12.) յասելն * 'ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս
,, թշնամիք իմ, յասել ցիս զօրհանապազ թէ ուր է
,, ած՟ քո ||. Կարէ հայիլ և յայնոսիկ՝ որք չարիս խորհէին զնմանէ, և կամ արգել լինէին նմա մտանել առ ած. ընդդէմ սոցա թէպէտ և կարէր բազում

ինչ ասել եւ առնել, բայց յած յանձնէ զդատաստանն. վասն որոյ առ նա բողոքելով ասէ.

Դատ արա ինձ ած. եւ իրաւ արա ինձ 'ի դատաստանի իմում.

Դատաստանն է կարգաւորեալ քննութիւն իրաւանց 'ի մէջ դատախազից առաջի դատաւորի. Իսկ դատ առնելն է լսելով յերկուց կողմանց զփաստս դատախազից՝ վճիռ հատանել 'ի նպաստ զրկելոյն. Այլ իրաւ առնելն, կամ որ նոյն է իրաւունս առնելն է՝ զայնպիսի վճիռ տալ՝ որ իցէ համաձայն իրաւանց, եւ ուղիղ.

Արդ խնդրէ մարգարէն յայ՝ կարգել վասն իւր դատաստան, եւ 'ի դատաստանի անդ դու ինքն ասէ լեր ինձ դատաւոր, զի դու միայն գիտես զկիրս բնութե որ ստեղծօղդ ես բնութեան. եւ ես չունիմ զոք դնել առ նա, այլ միայն զքեզ. դու լուր զբանս իմ, եւ զբանս թշնամեաց իմոց, եւ քննեա, թէ քանի անիրաւ են բանք նոցա զորս խօսին ընդդէմ իմ. եւ ըստ արդարութեան քում դու ինքնին դատ արա ինձ, եւ տուր վճիռ իրաւացի. Զայս դատաստան կոչէ իւր՝ յասելն * 'ի դատաստանի իմում ||. զի վասն իւր խնդրէր կարգել զայն ընդդէմ թշնամեաց իւրոց. Իսկ թէ ովք էին այնոքիկ, եւ որպիսի ոմանք, յայտ առնէ ասելով.

բ. Յազգէ որ ոչ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ. նենգաւորէ փրկեա զիս.

Յերիս տեսակս հնար է բաժանել զայնոսիկ որք չիցեն բարի. առաջին տեսակն է նոցա որք ոչ են սրբեալ եւ կամ չեն սուրբ, որպիսի են հեթանոսք. Երկրորդ տեսակն է նոցա՝ որք թէպէտ եւ իցեն սրբեալ, բայց են չարք՝ ոչ այլում, այլ ինքեանց. որպէս որք մեղանչեն յինքեանս առանց վնասելոյ այլում. Երրորդ տեսակն է նոցա՝ որք են չարք առ այլս, որպէս որք նենգեն եւ չարիս հասուցանեն այլոց՝ բանիւ կամ գործով, թէ սրբեալ իցեն եւ թէ ոչ.

Եւ զի խնդրէր մարգարէն ազատիլ յո եւ իցէ մարդոյ չարէ՝ զերիս զայսոսիկ 'ի մէջ բերելով՝ զամենայնն տայ իմանալ. Եւ թէպէտ չերեւի ինչ 'ի դէպ խնդրելն՝ փրկիլ եւ յայնմանէ՝ որ իցէ յինքեան միայն չար, բայց քանզի կենցաղաւարիլ ընդ այնպիսում՝ կարէ լինել յորդորիչ 'ի գործ չար, նաև զի մարթի տարածիլ և 'ի վնաս այլոց, վասն որոյ զայն ևս ընդ այլս դասէ. և ասէ։

Յազգէ որ ոչ է սուրբ, 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս։ Խնդրեմ ասէ, զի 'ի դատ առնելդ՝ ազատեսցես զիս նախ յազգէ՝ որ ոչ է սուրբ, այսինքն 'ի ձեռաց հեթանոսաց, զի նոքա չունելով յոյս հանդերձեալ կենաց՝ յանյուսութիւն արկանեն զիս. երկրորդ՝ 'ի ձեռաց մեղաւորի, զի այնպիսիք չունելով խիղճ մտաց՝ անխիղճ տան մեղանչել և ինձ. երրորդ՝ 'ի ձեռաց նենգաւորի, զի այնպիսիք չունելով գութ առ այլս՝ գուցէ արկանիցեն զիս յորոգայթ կորստեան, և զրկեսցեն զիս յերեսաց քոց։

Մարթ է այլազգ ևս որոշել զայս բան, վերաբերելով զխնդրուածս մարգարէին յայս միայն, զի փրկեսցէ զնա տէր յոր և իցէ մարդոյ չարէ՝ 'ի կամիլ նոցա վնասել նմա ըստ հոգւոյ կամ ըստ մարմնոյ, զի մի այնու խափանեսցի 'ի մտանելոյ առ ած։

Մեծն Խոսրով ('ի մեկն. ժամագր. երես 368.) բառիւդ ազգէ՝ իմանայ զերամն. և ընթեռնու զբանն այսպէս. * դատ արա ինձ ած՝ փրկելով յազգէ՝ որ ոչ է
„ սուրբ 'ի բանս իւր. զսուրբս ասա, (այսինքն զբառդ
„ ազգէ) իրաւ պարտ է իմանալ ||։

Լամբ. բառիւդ՝ յազգէ որ ոչ է սուրբ՝ իմանայ զազգ դիւաց, ևս և զգլխական խորհուրդս անսուրբս. իսկ յաջորդ բանիւն՝ զչար մարդիկ կամ զմարդկային չարութիւնս և զանկարգութիւնս։ Վարդան անսուրբ ազգաւ իմանայ զքաղդէացիս. իսկ յաջորդաւն զնեռն և զնաբուգոդոնոսոր։

Այս բանք մարգարէին յայտնի ցուցանեն՝ թէ վիշտ մեծ կրէր 'ի նոցանէ, յորոց փրկելն խնդրէր, և կայր յանհնարին տրտմութեան, մինչև պակասիլ նմա 'ի զօրութենէ, և վասն այնր պատճառի դիմի առ ած՝ ոչ միայն իբրև առ դատաւոր, այլ իբրև առ զօրացուցիչ իւր՝ ասելով։

Բ. Դու ա̃ծ հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ:

Այս այն է՝ զոր եդ 'ի վերոյ ('ի նախընթաց սաղ. 'ի համարն 11.) * ասացի ա̃յ, ընդունելի իմ ես, ընդէ՞ր „ մերժեցեր զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել „ թշնամւոյ իմոյ ||. տարբերութի̃ն է 'ի բառդ ընդունելէ, որոյ փոխան դնի աստ հզօրէն, և 'ի բայդ մերժեցեր, որոյ փոխան դնի աստ մոռացար. Թէպէտև յայլ թարգմանութիւնս ընդհակառակն դնի, որպէս և 'ի քանի մի ձեռագիրս մեր: Զիա՛րդ և դիցի, այս բան կարգի 'ի քաջալերել զանձն, և 'ի զօրացուցանել զյոյսն՝ զոր ունէր մարգարէն առ ա̃ծ՝ իբրև առ ընդունելի և առ հզօրիչ իւր. ուստի ասէ:

Դու ա̃ծ հզօրիչ իմ ես. ընդէ՞ր մոռացար զիս: Ա̃ծ ասի հզօրիչ մարդոյ երրակի. մի՝ ըստ բնական կարգի՝ 'ի տալ մարդոյ զզօրեղութիւն, կամ 'ի յաջողել զայնպիսի գործս՝ որք են զօրաւոր: Երկրորդ՝ 'ի բարոյական կարգի՝ 'ի տալ մարդոյ զյօժարամտութիւն առ զօրաւոր գործս բարիս, կամ 'ի յաջողել զմեծամեծ գործս բարոյական առաքինութեանց, թէև գործօղն իցէ հեթանոս ոք. որպէս եղև 'ի փիլիսոփայսն: Երրորդ՝ 'ի գերբնական կարգի՝ 'ի տալ մարդոյ զշնորհս կատարիչս գերազանց առաքինութե̃ց, կամ 'ի յաջողելն զայնպիսի գործս՝ որ 'ի վեր են քան զկար մարդոյ. կամ 'ի մխիթարելն և 'ի սփոփելն զսիրտ մարդոյ՝ զուարթագին լինել 'ի գործս բարեաց:

Արդ որպէս ընթեռնումք յառաջին և յերկրորդ գիրս թագաւորաց, զայս ամենայն երևեցոյց ա̃ծ 'ի դաւիթ, ևս և 'ի ժառանգութի̃ իւր յիսրայէլ. և որպէս յայտ է 'ի սուրբ գրոց և 'ի բնական պատճառաց, ա̃ծ ոչ պակասի միով իւիք յայսցանէ լինել հզօրիչ ո՛ և իցէ մարդոյ: Յայսոսիկ հայելով ասէ. որովհետև դու ա̃ծդ հզօրիչ իմ ես. և դու զօրացուցեր զիս ասելով՝ ոչ մոռացայց զքեզ, ընդէ՞ր մոռացար զիս. * միթէ մոռանայցէ՞ „ հարսն զզարդ իւր ||. (Երեմ. Բ. 32:)

Մոռանալ կոչէ զթողուլ տալն ա̃յ և զանտես առնել նորա զմեօք 'ի զօրացուցանել, և կամ ըստ լամբ". * զամփոփել նորա յինքն զնախախնամութիւն իւր ||:

Արդ ասէ ապաւինեալ ես 'ի քեզ յուսայց 'ի հզօրիդ և 'ի սփոփիչդ իմ, ապա ընդէ՞ր երևեցուցանես զքեզ իբրև մոռացող անձին իմոյ, և թողեալ 'ի խնամոցդ. որով և զօրանան թշնամիք իմ 'ի նեղել զիս. Այս բանք իբր դանդատանք երևին, բայց են խանդաղատականք ելեալք 'ի սաստիկ ցաւոց դառնացեալ անձին. Զայս եդեալ մարգարէին վերստին յոյս առնու. և սփոփելով զինքն՝ ասէ.

Ընդէ՞ր տրտում գնամ ես 'ի նեղել թշնամւոյ իմոյ. Տրտում գնալն է 'ի տրտմութեան ունելով՝ 'ի նմին մաշել. Արդ ասէ ընդէ՞ր է ինձ այսպէս տրտում մնալ և տրտում գնալ 'ի նեղել զիս թշնամւոյ իմոյ. ոչ ապաքէն սովին այսու ուրախ լինի նա. եթէ ես զքեզ ունիմ ինձ ապաւէն, նեղութիւնք թշնամւոյ իմոյ զինչ կարեն առնել ինձ. զոր ինչ և արասցեն, նոքիմբք առաւել օգտեցուցանեն՝ քան թէ վնասեն. (զայսմանէ տես և 'ի վերոյ 'ի սաղ. խա̃. 11.) Այս քաջալերութիւն մարգարէին հայի ոչ միայն յայն՝ զի զա̃ծ ունէր իւր հզօրիչ ընդդէմ նեղչաց իւրոց. այլ և յայն՝ զի ակն ունէր զերծանելով 'ի թշնամեաց ժամանել առ նա, և ժառանգել զնա. զոր և յայտ առնէ 'ի յաջորդ համարն, խնդրելով զօգնութիւն շնորհաց նորա՝ յասելն.

Գ. Առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո.

Աստանօր բառիւդ լոյս՝ իմացեալ լինի շնորհքն այ̃, որ երբեմն և ջուր կոչի. երբեմն իւղ. երբեմն հուր. երբեմն հողմ. ևն. զի ըստ զանազան տարազու, որով տուեալ լինի, զանազան անուամբ յիշի. Յորժամ տուեալ լինի իբրև սրբիչ և զովացուցիչ, կոչի ջուր. յորժամ տուեալ լինի իբրև կակղացուցիչ և փափկացուցիչ, կոչի իւղ. յորժամ տուեալ լինի իբրև ջերմացուցիչ և մաքրիչ, կոչի հուր. յորժամ տուեալ լինի իբրև վանիչ մեղաց և մղիչ 'ի բարին՝ կոչի հողմն. այլ յորժամ տուեալ լինի իբրև լուսաւորիչ մտաց և առաջնորդիչ, կոչի լոյս.

Յայս միտս և յայլ բազում տեղիս լոյս կոչէ մարգարէն զնպաստս շնորհաց. որպէս յասելն. * Ծագեաց 'ի խաւարի լոյս ուղղոց‖. (սաղ. ՃԺա̃. 4.) * լոյս ծա- ,, գեաց արդարոց‖. (Ղզ̃. 11.) * 'ի լոյս երեսաց քոց ,, գնասցեն‖. (Ձը̃. 16.) և յայլս բազում, յորս բառիւդ լոյս՝ իմացեալ լինի շնորհքն այ̃.

Եւ այս ըստ բազմապատիկ յատկութե̃ց լուսոյ. Նախ՝ զի որպէս լոյսն ուր և ծագէ՝ յայտնի տայ տեսանել զորս ենն անդ, այսպէս և շնորհքն այ̃՝ 'ի ծագել 'ի սիրտ մարդոյ՝ յայտնի ցուցանէ նմա զայն ամենայն՝ զորս առանց շնորհաց ոչ կարէր տեսանել. Երկրորդ՝ որպէս լոյսն անցանէ ընդ թափանցիկ մարմինս, և ըստ ամենայնի ներգործաւորէ զնա. իսկ զդիմահարս արտաքուստ ևեթ լուսաւորէ, սոյնպէս և շնորհքն այ̃ ըստ ա̃մի թափանցէ 'ի հոգին, միայն թէ մի ընդդէմ ելցէ հոգին դիմահարութեամբ. ապա թէ ոչ՝ արտաքուստ միայն ներգործէ, և 'ի ներքոյ թողու խաւար. Երրորդ՝ որպէս լոյսն ոչ կարօտի ժամանակի 'ի հասանել, այլ յարձակիլն անդ 'ի վայրկենի հասանէ, սոյնպէս և շնորհքն այ̃՝ առ որս միանգամ ծագէ՝ առանց յապաղելոյ ժամանէ, և ներգործէ. Չորրորդ՝ որպէս լոյսն թէպէտև յապականիլ ենթակային՝ տիրապէս ոչ ապականի, բայց յարգելանիլն իւիք՝ իսկոյն բառնի, այսպէս և շնորհքն այ̃ 'ի հոգին. Հինգերորդ՝ որպէս լոյսն է մխիթարութիւն աչաց մարդոյ՝ մանաւանդ այնպիսումն՝ որ 'ի հիւանդութեան իցէ, սոյնպէս և շնորհքն մխիթարութիւն է հոգւոյ, մանաւանդ հիւանդացելոյ. Վեցերորդ՝ որպէս լոյսն գեղեցկացուցանէ զգոյնս որք են յարարածս այ̃, սոյնպէս և շնորհքն զբարոյական առաքինութիւնս՝ որք են իբր գոյնք 'ի հոգին. Եօթներորդ՝ որպէս լոյսն յորժամ սաստկանայ կամ խստանայ՝ պատճառէ ըղջերմութիւն, երբեմն և վառէ, զորօրինակ տեսանի 'ի բոլորակ ապակին տափնաձև, սոյնպէս և շնորհքն այ̃ յաճելն անդ՝ գործէ զջերմութիւն սիրոյն այ̃ 'ի կամս. Ութերորդ՝ որպէս լոյսն է հարկաւոր առ բազում ինչ՝ այսինքն առ 'ի գործել զգործ զգուշաւոր, առ 'ի գնալ զճանապարհ դժուարին. և այլն. սոյնպէս և շնորհքն առ 'ի գործել զգործ գերբնական, և առ 'ի գնալ զճանապարհ արքայութե̃ն. ևն̃. (տես զայսմանէ եւ 'ի սաղ. լե̃. 10:) Յայսմիկ եւ յայլ բազում յատկութիւս լուսոյ հայելով մարգարէին՝ լոյս կոչէ զշնորհս ա̃յ, եւ խնդրէ զնպաստ նորին եւ զներգործութիւն լուսաւորութե̃ նորուն, ասելով:

Առաքեա տէր զլոյս քո, եւ զճշմարտութի̃ քո: Կամի ասել. դու գիտես տէր՝ զի առանց շնորհաց քոց՝ ոչ միայն 'ի խաւարի մնամ եւ 'ի տրտմութեան գնամ, այլ մոլորեալ 'ի ճանապարհի աստի կենաց՝ թշուառանամ, եւ չկարեմ ժամանել 'ի տաճար սուրբ քո: Առաքեա ուրեմն զայն առ իս աղաչեմ, զի լիցի ինձ լոյս եւ ճշմարտութիւն:

Ուր ճշմարտութիւն ասելով իմանայ զներգործութիւն շնորհացն. զի որովհետեւ եւ այն նպաստ շնորհաց յայտնի ցուցանէ զճշմարտութիւնն, այսինքն յայտ առնէ զիրն՝ ըստ այնմ որ է, եւ ոչ ըստ այնմ որ կարծեալ լինի. յայնմանէ եւ ինքն ճշմարտութի̃ կոչի:

Արդ ոչ ասէ մարգարէն, տո՛ւր զլոյս քո եւ զճշմարտութիւն քո՝ առաջնորդել ինձ յարքայութիւն քո, այլ թէ առաքեա. վասն զի տալն՝ առ մօտակայս հայի, իսկ առաքելն առ հեռակայս. եւ քանզի մարգարէն հեռի տեսանէր զինքն 'ի ժառանգութենէ արքայութեանն երկնից՝ պանդխտացեալ յօտարութեան, վասն այնորիկ առաքեա ասէ: Այլուր երբ 'ի խաւարի տեսանելով զինքն՝ զտալն խնդրէր, ասելով. *լոյս տո՛ւր
„ տէր աչաց իմոց‖. կամ *լոյս արա՛ ինձ 'ի խաւարի‖. իսկ աստ 'ի հեռաւորութե̃ տեսանելով զինքն՝ ասէ.

Առաքեա տէր զլոյս քո եւ զճշմարտութի̃ քո:

Յայս միտս եւ սողոմոն խնդրէր յա̃յ առաքել զշնորհս իմաստութե̃ իբրեւ զլոյս, ասելով. *առաքեա զդա 'ի
„ սրբուե̃ց երկնից եւ յաթոռոյ փառաց քոց արձակեա
„ զդա, զի եկեալ դադարեսցէ առ իս. եւ գիտացից
„ զինչ հաճոյ իցէ առաջի քո... եւ առաջնորդեսցէ
„ ինձ 'ի գործս իմ զգաստութե̃‖. (իմաստ. թ. 10:)

Արդ զոր սողոմոն խնդրէր վասն առաջնորդելոյ 'ի գործս, մարգարէն խնդրէ վասն առաջնորդելոյ յարքայութի̃ երկնից. ամին իրի յաւելու եւ ասէ:

Զի առաջնորդեսցեն ինձ (եւ) հանիցեն զիս 'ի լեառն սբ̃ եւ 'ի յարկս քո: Առաջնորդելն է անմոլար ցուցանել ումեք զճանապարհ անյայտ կամ դժուարին. զի եթէ յայտնի լիցէ մարդոյ այն ճանապարհ և կամ դիւրին, ոչ կարօտի առաջնորդի: Արդ առ մեզ հայելով՝ գրեթէ անյայտ է ճանապարհն արքայութեան և դժուարին, վասն որոյ կարօտիմք մասնաւոր առաջնորդութե՟ շնորհացն այ՟: Եւ ահա յայս միտս աղաչէ մարգարէն, զի շնորհքն այ՟ և ճշմարտութ՟ի նորա ցուցցեն ինքեան զճանապարհ անմոլար գնալոյ 'ի լեառն սբ՟ նորա, այսինքն յարքայութիւն երկնից:

Բայց այսու ևս ոչ շատանայ. այլ խնդրէ և զժամանեցուցանելն անդ. վասն զի շնորհքն այ՟ թէպէտ և բազմաց առաջնորդեցին 'ի լեառն արքայութեան երկնից, բայց յընդդէմ դառնալ նոցա ոչ հասուցին զնոսա անդր: Յայս հայելով մարգարէն, աղաչէ և խնդրէ՝ զի ոչ միայն առաջնորդեսցեն ինքեան շնորհքն այ՟, այլ և հասուսցեն 'ի լեառն յայն. սմին իրի յաւելու և զբառդ ածցեն. և զայս բառ դնէ փոխանակ հասուցանելոյ. զի որովհետև զարքայութիւնն օրինակեաց 'ի լեառն, զհասուցանելն անդր օրինակէ 'ի հանել: Արդ արքայութիւնն այ՟ նմանի լերին վասն անհասանելի բարձրութեան, և ևս վասն զուարճալի գոլոյ, կոչի ևս սուրբ՝ զի ոչ մտցէ անդ պիղծ ինչ: Յաւելու դնել և զյարկսն այ՟. որով իմացեալ լինին տեղիք կամ օթևանք սրբոցն որք կոչին յարկք այ՟, զի 'ի նոսին փառօք երևի ած՟ սրբոց իւրոց իբրև 'ի յարկս իւր որք են նոցա տեղի հանգստեան:

Այս բան նիւթապէս առեալ հայի 'ի լեառն սիոն, և 'ի յարկ խորանին այ՟՝ որ անդ: Զի որ փափաքէր մարգարէն, նոյնպէս և բոլոր ազգն հրէից՝ առաջիկայ գտանիլ, մանաւանդ որոց մերժեալ էր անտի և գերեալ 'ի բաբելոն: Եւ ըստ այսմ բառիւդ լոյս՝ իմացեալ լինի ծագումն ողորմութեանն այ՟, որում կարօտ էին. և բառիւդ ճշմարտութիւն՝ իմացեալ լինի կատարումն անսուտ խոստմանն այ՟. և յայս միտս աղաչէ մարգարէն զած՟ 'ի բերանոյ իւրմէ և 'ի դիմաց ազգին իւրոյ՝ զի ցուցցէ զողորմութ՟ի իւր, լցուսցէ զխոստումնն. և այնու առաջնորդեալ հասուսցէ զժողովուրդ իւր 'ի լեառն յայն 'ի սիոն, և ներկայացուսցէ զնոսա՝ խորանին իւրոյ:

Այլ քանզի լեառն սիոն օրինակ էր արքայութեան երկնից, և յարկք խորանին օրինակք էին օթևանացն արքայութ՟ե, մարգարէն զօրինակն 'ի մէջ բերելով՝ սովին տայ իմանալ վերածաբար զօրինակեալն, այսինքն զարքայութիւնն երկնից և զօթևանս նորին:

Խորհրդաբար յայս բան բառիւդ լոյս՝ ըստ ասելոյ բազմաց, ես և ըստ րաբունեայն հրէից իմացեալ լինի մեսիայն՝ այսինքն որդին ա՟յ, ըստ այնմ * ես լոյս յաշխարհ եկի ||. և բառիւդ ճշմարտութիւն՝ հոգին սուրբ՝ որ կոչի հոգի ճշմարտութ՟ե. իսկ բառիւդ տէր՝ հայրն երկնաւոր. 'ի դնիլ այսր՝ բառդ [illegible] [illegible]՝ հայի 'ի միութիւն ա՟ծութ՟ե 'ի զանազանութեան երից յարկաց՝ այսինքն անձանց: Նաև ըստ այսմ խնդրէ մարգարէն 'ի հօրէ 'ի դիմաց մարդկայինս բնութ՟ե՝ առաքել զորդի և զհոգին սուրբ, առաջնորդիլ նոքօք 'ի ժառանգութիւն ա՟ծութեան յերիս անձինս:

Բարոյաբանօրէն, լուսով իմացեալ լինի աստ սուրբ հաւատն. և ճշմարտութ՟բ աւետարանական վարդապետութ՟ին. իսկ լերամբ ս՟բ եկեղեցին, և յարկօք մասնաւոր եկեղեցիք, ևս և տաճարք շինեալք ընդ ամենայն տեղիս, յորս պաշտի ա՟ծ՝ ճշմարիտ հաւատով:

Բարոյապէս, լերամբ իմացեալ լինի գերազանցութիւն կամ կատարելութիւն կենաց, իսկ յարկօք պէսպէս առաքինութիւնք, կամ մասնաւոր գործք գերազանցք՝ յորս գտանի սեղան երկնային, այսինքն այն ինչ՝ յորում իբր 'ի սեղանի ճաշակեալ լինի քաղցրութիւնն ա՟յ, կամ յորում ցնծայ հոգին՝ զերծեալ 'ի դառնութենէ հոգոց և 'ի տրտմութեանց. յոր միտս առնու և մեծն խօսրով ('ի մեկն. ժամագր. երես. 368.) և զառաջիկայ բնաբանդ մեկնաբար ընթեռնու այսպէս. * առաքեա՛ տէր զլոյս քո, որով զերծայց 'ի տրտմութեանց, և խոստովանեցայց զքեզ փրկիչ ||:

Այնպէս և յովհան իմաստասէր 'ի կարգս պաշտամանց զառաջնորդելն առնու աստ փոխանակ վերածելոյ 'ի գիտութիւն ճշմարտութ՟ե. և գրէ այսպէս. * առաքեա՛ տէր զլոյս քո և զճշմարտութիւնս քո. զի նոքին առաջնորդեսցեն ինձ մոլորելոյս 'ի գիտութիւն ճշմարտութեան. և հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո՝ (զիս ասեմ) զանապատացեալս 'ի գերակայ բնակութ՟էն 'ի ստորին նուաստութ՟իս ||:

Զայս բան որպէս ասացաք 'ի սկզբան սաղմոսիս՝ ասէ քահանայն 'ի մտանել իւրում 'ի պատարագ, զլեառն սուրբ իմանալով 'ի տեղի խորանի, և զյարկն 'ի տեղի այնր՝ որ է առ սեղանով. և զայս ասէ առ 'ի ցոյց փափաքանաց մտանելոյ առ կատարումն ա՟ծայնն խորհրդոյն, յորում ներկայ լինի որդին ա՟յ մարմնաւորապէս. 'ի սոյն յայս (խորհրդաբար իմն խօսելով) յափշտակեալ մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ։

Ե. Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ. որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։

Սեղան տեառն կոչիւր սեղան խնկոցն և սեղան առաջաւորութեան, ևս և սեղան ողջակիզացն. (զորոց խօսեցաք 'ի սաղ. իե. 6։) սեղան խնկոցն և առաջաւորութեան ընդ որս և աշտանակն էին 'ի ներքս 'ի տեղւոջ անդ՝ որ կոչիւր սրբութի՟, յորմէ և անդր էր տեղին սրբութիւն սրբոց կոչեցեալ, յորում էր տապանակն տեառն. և տեղին այն՝ այսինքն սրբութիւն սրբոյն, նոյնպէս և սրբութիւնն ծածկեալ էր քառեակ ծածկութիւնք. (ելից իզ. 1.) և կոչիւր խորան. ևս և յարկ. երբեմն և վրան, և տաղաւար։

Շուրջ զայսու խորանաւ կայր սրահ ընդարձակ առագաստապատ. (ելից իէ. 9։) 'Ի սմին սրահի էր սեղան ողջակիզաց և աւազանն, և սոյն այս տեղի հանդերձ խորանաւն կոչիւր տուն տ՟ն, և տաճար տ՟ն. 'ի սրահ այսր տաճարի ամենեքին մտանէին. իսկ 'ի տեղին կոչեցեալ սրբութիւն՝ միայն քահանայք։ Այլ 'ի սրբութի՟ սրբութե՟ցն միայն քահանայապետն. և այն յամին միանգամ։ (տե՛ս և 'ի սաղ. ժզ. 1։)

Սրահ՝ այսր տաճարի օրինակ էր զինուորեալ եկեղեցւոյ, յորում է լուացարան մկրտութե՟, և սեղան սուրբ խորհրդոյն, ևս և սեղան ողջակիզելոյ զանձն սիրով առ ա՟ծ. խորան տ՟ն յորում էր սրբութիւնն սրբոց, և սրբութի՟ն էր օրինակ յաղթանակող եկեղեցւոյ՝ այսինքն արքայութե՟ն ա՟յ, որ է 'ի լեառն սուրբ յերկինս։ Զի սրբութի՟ սրբութե՟ցն՝ յորում էր տապանակն, օրինակ էր դէմ յանդիման ներկայութե՟ն ա՟յ կ՟մ ժառանգութե՟ նորա։ Իսկ սրբութի՟ն՝ յորում էր սեղան առաջաւորութե՟ և սեղան խնկոցն և աշտանակն, օրինակ էր վիճակի խորախճանութե՟ սրբոց, հայելով յայն զոր ասաց տէրն՝ զի ուտիջիք և ըմպիջիք 'ի սեղան իմ, այսինքն 'ի խրախութեան անդ իմում. դարձեալ էր օրինակ վիճակի երանելոց, որոց հոգիք իբրև սեղան առաջաւորութե՟ լիացեալ են հացիւ երանութե՟, և իբրև սեղան խնկոց լցեալ են անուշութբ՟ սիրոյ, և իբրև աշտանակ փայլեն եօթնարփեան լուսով. 'ի վիճակ այսր սեղանոյ ցանկայր մարգարէն ժամանել, և այնու զա՟ծ ժառանգել. սմին իրի ասէ:

Մտից առաջի սեղանոյ ա՟յ առ ա՟ծ: Նիւթապէս ձևացուցանէ զբանն, զխրախութիւնն արքայութե՟ երկնից ըստ ասելոյ մեր այժմ նմանեցուցանէ սեղանոյ. առաջի այնր սեղանոյ ասէ մտից առ աստուած. որ է ասել՝ 'ի ժամանելս իմ յարքայութիւն՝ լցայց ուրախութեամբ, և եղէց 'ի վիճակի երանելոց 'ի ժառանգել իմում զա՟ծ. որպէս թէ կայի առաջի սեղանոյ նորա. և զի այն ուրախութիւն յա՟յ շնորհիւր, վասն այն յարէ զկնի և ասէ:

Որ ուրախ առնէ զմանկութիւն իմ: Այսինքն նա ինքն՝ որ անսահման ուրախութիւն է՝ իւրով ուրախութբ՟ ուրախ արասցէ զմանկութի՟ իմ. փոխանակ ասելոյ զիս՝ մանկութի՟ դնէ. իսկ բառդ մանկութի՟՝ դնի աստ փոխանակ թանձրացելոյ, այսինքն փոխանակ մանկան, որով նշանակի տկար և տգէտ, անարգ և անպիտան. որպէս թէ եղեալ էր. ուրախ առնէ զիս զտկարս և զտգէտս, զանարժանս և զողորմելիս: Եւ սակայն հայելով յայլ և այլ պատճառս ոչ դնէ այսպէս, այլ զմանկութիւն: Նախ՝ զի հայի 'ի վիճակ այնր հասակի. քանզի 'ի մէջ հասակաց ժամանակն մանկութեան առաւել ընդունակ է ուրախութեան. ըստ որում յուրախանալն զտութբ՟ վայելէ զայն՝ անխառն 'ի տրտմութենէ. և ըստ այսմ մանկութիւն դնելով կամի ասել՝ թէ ա՟ծ իւրով զուտ անճառ ուրախութեամբն ունի ուրախացուցանել զինքն և զայլ սուրբս, զորս սուրբ գիրն կոչէ մանկունս առագաստի. (Ղուկ. Ե. 34:)

Երկրորդ՝ զի հայի 'ի վիճակ մարդկային բնութեան՝ որ 'ի մանկութեան անդ մեղաւ. զի նորոգ ստեղծեալ՝ անկաւ ընդ մեղօք, և մերժեալ յա՟յ մատնեցաւ 'ի տրտմութիւն անբժշկելի: Այնպէս և իւրաքանչիւր մարդ ծնեալ մեղօքն ադամայ, և սրբեալ խորհրդովք, ցորչափ 'ի տղայութեան է՝ կայ յանմեղութե՟. և յաւարտիլ այնր ժամանէ հասակին մանկութե՟. որոյ առաջին վայրկեանն՝ համարի գոլ յանմեղութե՟. իսկ 'ի հասանել երկրորդ վայրկենի՝ 'ի հասարակի խօսելով՝ ժամանէ երբեմն սկիզբն գործոց մեղաց, որով և զրկի հոգին 'ի շնորհացն այ՟. և 'ի ժամէ անտի յայնմանէ սկըսանի մեղաց 'ի մեղս տատանիլ. մերթ սրբի ապաշխարութեամբ, և մերթ անկանի, և դարձեալ սրբի. մինչև հասցէ 'ի վախճան կենաց, յորում եթէ 'ի շնորհս այ՟ մեռանիցի, և արժանասցի ժամանել յարքայութիւն երկնից, զգեցցի զառաջին վիճակն մանկութեան իւրոյ՝ այսինքն զվիճակն անմեղութե՟. և յայնմ անմեղութեան լցցի ուրախութբ՟ երեսացն այ՟. և յայս միտս ասէ՝ ուրախ առնէ զմանկութի՟ իմ:

Երրորդ՝ զի հայի 'ի նորոգութիւն բնութե՟ մարդկան, որ ապականեալ գոլով 'ի մեղս՝ խղխայթեալ և թարախեալ՝ առողջացաւ 'ի ձեռն փրկութեան որդւոյն այ՟. և դարձաւ յառաջին անմեղութին՟՝ զոր ունէր 'ի մանկութե՟՝ այսինքն 'ի ստեղծման 'ի դրախտի անդ. և զի ոչ ոք մտանէ յարքայութիւն 'ի վայելել զուրախութին՟ այ՟՝ եթէ չիցէ այսպէս մանկացեալ, վասն որոյ ասէ՝ ուրախ առնէ զմանկութի՟ իմ:

Չորրորդ՝ զի հայի յանակնունելի ուրախութիւն արքայութե՟ երկնից, զոր ունելոց է հոգին ըստ օրինակի մանկան. զի որպէս տհաս մանուկ՝ որ չիցէ տեսեալ զգեղեցիկ ինչ, և ոչ լուեալ զքաղցրանուագ երգս, և ոչ է կերեալ զանուշահամ կերակուրս, և ոչ ունեալ ինչ, եթէ միանգամայն տեսցէ զքաղում զարմանալի գեղեցկութիւնս, և լուիցէ զպէսպէս զուարճալի եղանակս, և կերիցէ զքաղցրահամ անուշունս, և խմասցի զբուրաւոր գինելիս, հիանայ, և 'ի զուարճութենէ սրտին գրեթէ շուարի. սոյնպէս լինելոց է և հոգւոյն 'ի ժամանելն յարքայութի՟ երկնից, զի ունի անդ տեսանել և լսել զայնպիսիս զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ և 'ի սիրտ մարդոյ ոչ անկաւ: Եւ որպէս մանուկ որ յորովայնի իցէ ոչ գիտէ զոր վայելելոցն է. զի աչք նորա չեն տեսեալ զայնպիսի ինչ. և ունկն նորա ևս ոչ է լուեալ, և ոչ 'ի սիրտ նորա անկեալ.

սոյնպէս է և առ մեզ երանութ՟ին վերին. ուստի ասէ լուսաւորիչն մեր ('ի յաճախապատումն ճառ բ՟.) * որպէս տղայք յորովայնի մարցն ոչ գիտեն՝ թէ յորպիսի ,, հասակ փոխելոց են տեսանել և վայելել զարարածս, ,, սոյնպէս և մեզ վերինն ոչ է իմանալի և գիտելի‖։ Սմին իբր 'ի մտանել մեր անդ՝ ունիմք վայելել զայն իբրև մանուկ յարգանդէ ելեալ. վասն որոյ ասէ. ուրախ առնէ յայնժամ զմանկութիւն իմ։

Հինգերորդ՝ զի հայի 'ի խոնարհութիւն հոգւոյն, որ օրինակի 'ի մանկութիւն. յոր միտս ասաց տէրն մեր * եթէ ոչ դարձջիք և եղիջիք իբրև զմանկտի՝ ոչ ,, մտանիցէք յարքայութիւն երկնից‖. (մատ. ժը՟. 3.) և յայս միտս նոյն էր թէ խոնարհութիւն էր եդեալ, յասելն, բարձրացուսցէ և ուրախ արասցէ զխոնարհութիւն իմ։

Այս բան որպէս ասացաք զնախընթացէն, նիւթապէս հայի և 'ի սեղանն յայն՝ որ էր 'ի տաճարի տեառն, առաջի որոյ մտանել փափաքէր մարգարէն, և յանդիման լինել տապանակի նորա. որոյ ներկայութիւնն ուրախ առնէր զսիրտ իւր։

Խորհրդաբար, այս բան յայտ առնէ զփափաք մարդկայինս բնութեան առ 'ի միանալ ընդ ա՟յ իրապէս. յոր միտս բառդ սեղան՝ յանդիման առնէ զսէրն ա՟յ, յորում որպէս 'ի սեղանի եցոյց ա՟ծ զքաղցրութիւն գթութ՟է իւրոյ. առաջի այսր սիրոյ ասէ՝ այսինքն 'ի ձեռն սիրոյ նորա ցանկամ մտանել առ ա՟ծ իմ, այսինքն ցանկամ միանալ ընդ նմա բնութ՟բ 'ի խորհուրդ մարդեղութեան, որոյ 'ի կատարելն նորոգիմ, և դառնամ յանմեղութիւն մանկութեան իմոյ. որով և ուրախ լինիմ յաւիտեան։

Այլաբանօրէն, սեղանով իմացեալ լինի աստ նոյն ինքն սուրբ սեղանն՝ յորում պատարագի ա՟ծ. յոր միտս ասէ քահանայն զայս բան 'ի մատչելն 'ի սուրբ սեղանն, ուր ճաշակումն մարմնոյ և արեան տեառն ուրախ առնէ զմանկութիւն մեր. այսինքն թէ լնու զանկատարութ՟ի մեր. յայս միտս մեկնելով լամբ՟. ասէ * զմանկութ՟ի ,, մեր և զտհասութիւն 'ի բարեաց գործոց և 'ի յուսոյ՝ ,, ոչ այլ ինչ ուրախ առնէ, և զօրացուցեալ 'ի յու- ,, սահատութենէ տրտմութ՟է՝ մխիթարէ, բայց միայն

,, զնորա մարմինն 'ի վերայ ա՟ծութ՟են սեղանոյ՝ հաւա-
,, տով, յուսով և սիրով ճաշակելն ‖:

Բարոյապէս, սեղանով իմացեալ լինի լրումն կատարելութեան կենաց, յորում ճաշակէ հոգին զքաղցրութիւնն ա՟յ. իմացեալ լինի և հանդարտութիւն կրօնաւորական վիճակի. յորում միանայ հոգին ընդ ա՟յ անանջատելի սիրով:

Յարմարաբար, սեղանով իմացեալ լինի ա՟ծաբանական իմաստութ՟ի, ևս և ա՟ծաշունչ սուրբ գիրն, յորում իբր 'ի սեղանի վայելէ միտքն զքաղցրութ՟ի խորհրդոցն ա՟յ, և զանուշութ՟ի ա՟ծային բանիցն. և յափշտակեալ յուրախութիւն՝ մոռանի համարի զմանկութ՟ի, այսինքն զի՛ և իցէ գիտութիւն երկրաւորաց, ևս և զամենայն բերկրութիւն մարմնաւորաց: Արդ յայտ արարեալ մարգարէին զփափաք մտանելոյ իւրոյ առ ա՟ծ և առ ա՟ծայինս, յայտ առնէ այժմ և զայն՝ թէ յուրախանալն անդ յա՟յ զինչ ունիցի և ինքն մատուցանել նմա. վասն որոյ ասէ:

Զ. Խոստովան եղէց քեզ օրհնութեամբ ա՟ծ ա՟ծ իմ:

Այս այն է՝ զոր ասաց 'ի նախընթաց սաղ. ուր յետ
դնելոյ ('ի համարն 4.) * մտից ընդ յարկաւ սքանչե-
,, լեաց տանն ա՟յ ‖. հետևեցոյց զկնի * 'ի ձայն ցնծու-
,, թեան խոստովանութ՟ե, և 'ի ձայն բարեկենդանու-
,, թեան ‖. ըստ այսմ և աստ յետ ասելոյ * մտից ա-
,, ռաջի սեղանոյ առ ա՟ծ՝ որ ուրախ առնէ զմանկութ՟ի
,, իմ ‖. հետևեցուցանէ, և ասէ:

Խոստովան եղէց քեզ օրհնութ՟ե ա՟ծ ա՟ծ իմ: Խոստովան լինել ա՟յ կամ առ ա՟ծ՝ է յայտնել ինչ առաջի ա՟յ, թէ արդարութիւն իցէ և թէ մեղք, թէ բարերարութիւն իցէ և թէ կարևորութիւն անձին. իսկ խոստովան լինել նմա օրհնութ՟բ՝ է օրհնել զնա, և գոհանալ զնմանէ, յայտ առնելով զբարիս ընկալեալս 'ի նմանէ: Յայս միտս ասէ և աստ. խոստովան եղէց քեզ օրհնութեամբ, այսինքն 'ի ժամանել իմում առ քեզ՝ օրհնեցից զքեզ վասն բազմադիմի բարեացդ՝ զորս ցուցեր առ իս, մանաւանդ վասն այնր մեծի բարութեան՝ զոր ցուցանելոց ես ինձ 'ի ժամանելն իմ առ քեզ և 'ի ժառանգելն իմ զքեզ ։

Արդ որովհետեւ յիշեաց զսեղանն, յիշէ այսու և ըզպատարագ սեղանոյն. իբր զի յետ ասելոյ մտից առաջի սեղանոյ առ ա՟ծ, 'ի յարելն զկնի. խոստովան եղէց քեզ օրհնութբ. ցուցանէ թէ 'ի վերայ այնր իմանալի սեղանոյ ունի մատուցանել ա՟յ պատարագ զխոստովան լինելն օրհնութբ. և նովին փառաւորել զա՟ծ. ըստ որում ասէ այլուր. * պատարագ օրհնութե՟ փառաւոր արասցէ ,, զիս ‖ ։ (սաղ. խթ. 24 ։)

Իսկ զոր կրկնելով յարէ. ա՟ծ ա՟ծ իմ, կամ ըստ եբր՟. էլօհէյ էլօհէ, այս կրկնումն ցուցանէ զառաւելութիւն սիրոյ և փափաքանաց ժառանգելոյ զա՟ծ, և օրհնելոյ զնա. զի կրկնումն բառի ցուցանէ զառաւելութիւն ինչ՝ կամ յայնմ որ կրկնի, և կամ յայնմ՝ որ կրկնէ, որպէս յասելն այո՛ այո՛ տեսին աչք մեր. ցուցանի առաւելութիւն ինչ յայնմ որ կրկնի՝ այսինքն է առաւելութիւն ճշմարտութեան ասացելոյն, որպէս և յասելն սուրբ սուրբ՝ ցուցանի առաւելութիւն սրբութե՟ ։ Իսկ յասելն տէր տէր, հայր հայր, և այլն, ցուցանի առաւելութի՟ ինչ ոչ միայն յայնմ որ կրկնի, այլ և յայնմ՝ որ կրկնէ, այսինքն յասողն. և է առաւելութի՟ հպատակութեան կամ երկիւղի կամ զարմացման առ նա՝ զոր կոչէ տէր կամ հայր ։ Այնպէս և յասելն աստ, խոստովան եղէց քեզ օրհնութբ ա՟ծ ա՟ծ իմ, այս կրկնութիւն ցուցանէ յասողն զառաւելութիւն սիրոյ կամ փափաքանաց առ ա՟ծ իմ առ ժառանգութի՟ նորա, և կամ առ օրհնութի՟ նորին ։ Արժան է ասել թէ ցուցանէ և զառաւելութիւն յայնմ որ կրկնի. 'ի ցուցանել թէ խոստովան լինի առ ճշմարիտն ա՟ծ ։

Այս խոստովանութի՟ օրհնութե՟ նիւթապէս առեալ՝ հայի և 'ի սաղմոսասացութիւն, զորս նուագել փափաքէր մարգարէն ։ Նաև հայի 'ի շնորհակալութի՟ մարդկայինս բնութեան առ ա՟ծ վասն ազատելոյ 'ի բռնութէ՟ մեղաց, և ժառանգելոյ զմիաւորութիւն բանին ընդ մարմնոյն ։ Հայի դարձեալ և 'ի բանս օրհնութե՟ քահանային՝ զոր մատուցանէ 'ի սեղանի սրբութեան առ ա՟ծ ։ Հայի և 'ի գոհութիւնն յայն զոր իւրաքանչիւր մարդ կարէ մատուցանել առ ա՟ծ վասն բազմադիմի բարերարութեանց նորա ։ Յայս ամենայն հայեցեալ մարգարէին՝ դառնալ առ ինքն, և տալ զվերջին քաջալերութ՟ի անձին. ասելով։

Է. Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ա՟ծ, խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։

Ի նախընթաց սաղ. երկիցս կրկնեաց զսոյն. (մի 'ի համարն 6. և մի ևս 'ի համարն 13.) և զի յայս սաղմոս զյառաջընթաց բանսն, (այսինքն զբանս 4 և 5. և 11. համարոց այնր սաղմոսի) 'ի մի բովանդակեաց, վասն այսորիկ և զկրկինս ասացեալսն անդ՝ միանգամ դնէ աստ 'ի վերջոյ, ասելով։

Արդ՝ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս։

Կամի ասել, ահա ո՛վ անձն իմ այսպիսի մեծ յոյս կայ առաջի քոյ՝ այսինքն է մտանել առ ա՟ծ, և ուրախանալ նովաւ. ապա զի՞ ևս տրտում ես. և ընդէ՞ր սնոտի և տարակուսական խորհրդովք խռովես զիս, թէ գուցէ ոչ հասանիցես յայն, կամ գուցէ այլազգ ինչ պատահեսցի. եթէ արդարև 'ի քեզ յուսասցիս, յիրաւի վտանգեսցիս. իսկ եթէ յա՟ծ յուսաս՝ ժամանես որում ցանկաս, վասն որոյ յարէ։

Յուսա՛ առ ա՟ծ. խոստովանեա՛ նմա. փրկիչ երեսաց իմոց ա՟ծ է։

Այսինքն՝ զյոյս քո մի՛ հաստատեր 'ի քեզ կամ յայլ ինչ, այլ յա՟ծ. և խոստովանեա՛ նմա, այսինքն խոստովան լեր՝ թէ յամենայնի կարող է և կամի փրկել զիս և կեցուցանել. քանզի նա է փրկիչ երեսաց իմոց, այսինքն թէ նա է ուրախարարն իմ և պարզերես կացուցանողն իմ։

Սովին քաջալերէր և երջանիկն այն 'ի սուրբս՝ գրիգոր նարեկացի ասելով ('ի բանն խզ.) * Եւ արդ հի՛մ
„ տրտմիս անձն իմ կործանեալ, ոչ մեծուստ հնարա-
„ ւորութեանց, այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտու-
„ թեանց. կամ ընդէ՞ր զիս խռովես՝ յուսահատութե՟
„ սատանայականաւ զմիտս հարեալ, յուսա՛ յա՟ծ, խոս-
„ տովան լեր նմա, և նա հոգայ վասն քո ըստ դաւ-
„ թեան սաղմոսին ||։

Քննել արժան է աստ (որպէս տեսաք և 'ի սաղ. խա. 6.) զի ոչ ասէ մարգարէն, փրկիչ իմ, այլ փրկիչ երեսաց. զի որովհետև տրտմութ՟ին յերեսս երևի՝ յետ ղնելոյ առաջի զտրտմութիւն իւր՝ յասելն, ընդէր տրտում ես անձն իմ, ըստ պատշաճի յարէ ասել՝ փրկիչ երեսաց, այսինքն ազատեցուցիչ տրտում երեսաց 'ի տրտմութենէ սրտի. (զայսմ համարոյ տես և 'ի նախընթաց սաղ. համար 6. և 13.)

Այս բան կարէ հայիլ և յանձն մեղուցեալ, որ անարժան համարելով զինքն մերձենալ յա̃ծ և 'ի խորհուրդ հաղորդութեան՝ մնայ 'ի տրտմութեան, և ոչ յօժարի սրբել զինքն 'ի մեղաց։ Իսկ եթէ դիմեսցէ առ ա̃ծ, և զայս իւր դիցէ 'ի նա՝ սրբեալ 'ի մեղաց արժանանայ խորհրդոյն, և հասանէ 'ի փրկութիւն։

Բարոյապէս, այս տրտմութիւն ակնարկէ 'ի ներգործութիւն խղճի մտաց, որ իբրև որդն ոչ դադարի 'ի կրծելոյ զսիրտ դառն տխրութեամբ. և ոչ մեռանի՝ եթէ ոչ՝ ապաշխարութեամբ։ Պատմի ('ի գիրս սաւոնարոլայի) թէ 'ի մեռանել մանկան միոյ յանկարծակի, բացին բժիշկք զփոր նորա, և յորմնեքին՝ գտին առ սրտի զորդն մի այլատարազ. արկին զայն 'ի ջուր, և ոչ մեռաւ. ընկեցին 'ի գինի և յօղի, և ոչ այնպէս մեռաւ. հուսկ յետոյ արկին զնա 'ի դառն ինչ ջուր համեալ 'ի սոխոյ, և անդէն սատակեցաւ։ Այս է որդն խղճի մտաց, որ կրծէ զսիրտ, արկ զայն 'ի դառն ջուր սոխի այսինքն 'ի դառն արտասուս ապաշխարութեան. ըստ որում սոխն պատճառէ զարտասուս. և անդէն մեռանիցի, և դու կենդանասցիս։ Եթէ դու ոչ կարես, խոստովանեա, այսինքն բաց զսիրտ քո առաջի խոստովանահօր. և զոր միանգամ ասէ նա՝ անսա՛ և արա։

Բայց և նա ինքն խիղճն մտաց իբրև բժիշկ կարէ զայն առնել. զի ոչ դադարի 'ի խրատելոյ և զուղին ցուցանելոյ. եթէ անսաս նմա, զդահիճն բժիշկ առնես, զոսոխն՝ ջատագով, զդատաւորն՝ հայր։ Եթէ ոչ անսաս, նա ևս ոչ անսայ քեզ. զտիւ և զգիշեր տանջէ զքեզ. ուր և լիցիս՝ լլկէ. դու ննջես, և նա հսկէ. իբրև ընտանի շուն 'ի մտանել թշնամեաց այսինքն մեղաց 'ի ներքս՝ հաչէ, և տաղտապեցուցանէ զքեզ. եթէ ոչ վանեսցես 'ի բաց զթշնամին զայն՝ ոչ լռէ 'ի հաչելոյ, և որչափ հաչէ, այնչափ տանջէ և տխրութեամբ մաշէ։

Մ՛ի կարծեր թէ թողու զքեզ՝ թէ և քեզ այնպէս երևեսցի, ոչ թողու զքեզ մինչև դու ոչ թողուցուս զնա: Յամենայնց իմն է կախեալ 'ի հոգիդ. եթէ արտաքուստ անշարժ երևի՝ 'ի ներքս անդադար շարժի, և լեզուական ցուցանէ զոր գործեցեր. և որ ուղիղն է՝ հարկանէ. զի հակուածն ծանրութեան նորա՝ որ առ անհուն ուղղութիւնն, միշտ յուղիղն մղէ. յոչ ուղղելդ տագնապէ, տրտմեցուցանէ, խռովեցուցանէ և յուսահատեցուցանէ: Դու արդ արի և ասա սովին այսու բանիւ մարգարէին. ընդէ՞ր տրտում ես անձն իմ կամ ընդէ՞ր խռովես զիս տագնապաւ խղճի մտացս, յուսա առ ած. խոստովանեա նմա զորս գործեցեր. և նա լիցի քեզ փրկիչ և կեցուցիչ, ես և կեանք յաւիտենական:

ՍԱՂՄՈՍ. ԽԳ.

Յայտարարութիւնք գործոցն այ զորս եցոյց յորդիսն իսրայէլի. և ցոյցք բազում թշուառութեանց զորս կրեցին նոքա յօտար ազգաց. առաջի դնին միանգամայն և բանք քաջալերութե և յուսոյ առ 'ի գտանելոյ զազատութի. և մաղթանք առ ած՝ զի ցուցցէ զօգնականութիւն և զփրկութի իւր:

Ի կատարած. որդւոցն Կորխայ. սաղմոս իմաստութեան:

1 Ած՝ ականջօք մերովք լուաք. զոր հարքն մեր պատմեցին մեզ: 2 Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս: 3 Ձեռն քո խլեաց զհեթանոսս, և զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս, և հաներ զնա: 4 Ո՛չ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. և ոչ բազուկ նոցա թէ փրկեաց զնա: 5 Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս երեսաց քոց. զի հաճեցար դու ընդ նա: 6 Դու ինքն ես՝ թագաւոր իմ և ած իմ, որ հրամայեցեր զփրկութիւնս յակոբայ: 7 Քեւ զթշնամիս մեր հարցուք. և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն 'ի վերայ մեր: 8 Ո՛չ թէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և

ոչ սուր իմ կեցուսցանէ զիս : 9 Այլ դու փրկեցեր զմեզ ՚ի թշնամեաց մերոց. եւ զատելիս մեր յամօթ արարեր : 10 Աստուածով պարծեսցուք զօրհանապազ. եւ անուան քո խոստովան եղիցուք յաւիտեան : 11 Բայց արդ՝ մերժեցեր եւ անարգեցեր զմեզ. եւ ոչ ելեր դու ընդ զօրս մեր : 12 Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր. եւ ատելիք մեր յափշտակեցին զմեզ : 13 Ետուր զմեզ որպէս զոչխար ՚ի զենումն. եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ : 14 Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ. եւ ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ : 15 Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. ծաղր եւ այպն կատականաց այնոցիկ, որ շուրջ են զմեօք : 16 Արարեր զմեզ յառակս հեթանոսաց. ՚ի շարժել գլխոյ ժողովրդոց : 17 Զօր ամենայն նախատինք իմ առաջի իմ են. եւ ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս : 18 Ի ձայնէ նախատողին եւ չարախօսի, յերեսաց թշնամւոյն եւ հալածչի : 19 Այս ամենայն եկն ՚ի վերայ մեր, եւ մեք զքեզ ոչ մոռացաք. եւ ոչ ստեցաք ուխտի քում, եւ ոչ դարձաք յետս սրտիւք մերովք : 20 Դարձուցեր զշաւիղս մեր ՚ի ճանապարհաց քոց, խոնարհ արարեր զմեզ ՚ի տեղի չարչարանաց. եւ ծածկեցին զմեզ ստուերք մահու : 21 Թէ մոռացեալ իցէ մեր զանուն այ մերոյ. համբարձեալ իցէ զձեռս մեր առ աստուածս օտարս : 22 Ապաքէն Ած խնդրէ զայս. զի նա գիտէ զգաղտնիս սրտից մերոց : 23 Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս զոչխար ՚ի զենումն : 24 Զարթի՛ր ընդէ՞ր ննջես տէր. արի՛ եւ մի՛ մերժեր զմեզ իսպառ : 25 Ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո ՚ի մէնջ. մոռանաս զաղքատութիւն եւ զնեղութիւն մեր : 26 Խոնարհ եղեն մինչ ՚ի հող անձինք մեր. եւ յերկիր կցեցան մէջք մեր : 27 Արի՛ տէր օգնեա՛ մեզ. եւ փրկեա՛ զմեզ վասն անուան քո :

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. որդւոցն կորխայ. սաղմոս իմաստութեան :

Ի ՁԵՌԱԳԻՐՍ ՄԵՐ ԱՅԼ ԵՒ այլ օրինակաց գնի այս վերնագիրս. ՚ի միում գնի * ՚ի կատարած. իմաստութեն „ որդւոցն կորխայ՝ սաղմոս ՚ի դաւիթ ‖. այսպէս գնի եւ ՚ի վարդանայն. յայլում՝ գնի առանց բանիս ՚ի կա-

ՓՕՐԱԾ' այսպէս. * իմաստութիւն որդւոցն կորխայ. „ սաղմոս 'ի դաւիթ||. եւ յայլ միում գնի առանց բառիս ԷՅՍՍԻՆԷՍԻՆ' այսպէս * 'ի կատարած որդւոցն „ կորխայ սաղմոս 'ի դաւիթ||. յաւելում եւ այլազգ.

Իսկ յերբեմն ընտիր ձեռագիրս գնի ըստ նախագրելոյդ. այսինքն * 'ի կատարած որդւոցն կորխայ սաղմոս իմաս„ տութեան||. սոյնպէս գնի ամենեւին եւ 'ի Թարգ''. Եօթ''. մասամբ ինչ եւ յայլ Թարգմանութիւնս. Նոյնպէս եւ յեբրայականն, յորում պակասի միայն ՄԻԶՄՕՐ բառդ. այլ զտեղի այնր ունի բառդ ՄԱՍՔԻԼ. յասելն ԼԱՄՆԱՑԷԱՀ ԼԻՎՆԷ ՔՕՐԱԽ ՄԱՍՔԻԼ. այս է * 'ի կատարած որ„ դւոցն կորխայ, մասքիլ||. որոյ փոխան 'ի մեզ գնի ԷՅՍՍԻՆԷՍԻՆ. եւ զի այս բառ ըստ համարելոյ ոմանց' գնի առ 'ի տեղի սաղմոսի, յայն սակս բազումք յաւելլին եւ զբառդ ՄԻԶՄՕՐ.

Իսկ բառդ ԴԱՒԻԹ' որ 'ի քանի մի ձեռագիրս մեր գնի, 'ի հինգ ձեռագիրս պակասի, եւ այս է ուղիղ. զի ոչ գտանի այն յեւթնք Թարգմանութիւն, այլ միայն յասորւոցն, եւ այն խառն'ի խուռն բանիւք. Իսկ թէ 'ի սաղմոսամեկնիչն լամբ''. գնի * սաղմոս դաւթի. անվերնագիր 'ի հեբրայեցւոց||. այս յայլոց երեւի մուծեալ.

Այլ թէ յինչ միտս գնի բառդ ՈՐԴՒՈՑՆ ԿՈՐԽԱՅ, նոյնպէս եւ բառդ ԷՅՍՍԻՆԷՍԻՆ. տես 'ի վերնագրի խա սաղմոսին. Նոյնպէս եւ վասն հեղինակի այնոցիկ սաղմոսաց' որք ունին 'ի վերնագրի զանուն որդւոցն կորխայ, տես անդ.

Իսկ թէ յինչ հայիցի այս սաղմոս, այլ եւ այլ բանք են առ մատենագիրս. ոմանք պնդեն թէ այս սաղմոս, նոյնպէս եւ այնք' որք ունին զվերնագիր անուամբ որդւոցն կորխայ, հային 'ի ժամանակ գերութեանն բաբելացւոց. Ոմանք թէ այս սաղմոս հայի 'ի ժամանակ հալածմանցն անտիոքայ եպիփանու յաւուրս մակաբայեցւոց. Բազումք եւս ըստ մեկնելոյ ոմանց սուրբ հարց' թէ հայի 'ի ժամանակ հալածմանցն' զորս յարուցին կայսերք եւ թագաւորք ընդդէմ քրիստոնէից. յոր միտս առեն յառաջ բերել առաքեալն զբան 23 համարոյն այսր սաղմոսի. յասելն. * վասն քո մեռանիմք զօր հանապազ||. եւն. (հռոմ. ը. 36.) կան եւս որք վերածեն զայս 'ի ժամանակս դատաւորացն իսրայէլի.

Օ՛րն՛ և զիցեա՝ մարթ է ընդունել. զի առ ամենեսին եւս կարէ պատշաճիլ։

Եթէ հեղինակ սաղմոսիս իցէ յորդւոցն կորխայ կամ մի ումն 'ի հոգեկիր անձանց գերելոց 'ի բաբելոն, անտարակոյս հաստատի առաջին կարծիքն։ Իսկ եթէ իցէ դաւիթ, մարթ է ասել, թէ նա մարգարէական գուշակութ͞բ նուագեալ իցէ զայս սաղմոս 'ի բերանոյ իսրայելի, հայելով 'ի ժամանակ նեղութեան նոցա, մանաւանդ 'ի ժամանակ գերութեանն։

Այլ զայս մի ինչ յայտնի տեսանեմք 'ի սմին սաղմոսի. զի հեղինակ սորա զիւրաքանչիւր բան սորին քաղեալ է 'ի բանիցն մովսէսի՝ զորս ասաց նա 'ի գիրս երկրորդ օրինաց, մանաւանդ յայնս՝ զորս խօսեցաւ նա յօրհնութեանն և յանէծսն. (գլ. ԻԸ։) Եւ երեւի թէ յայսմ սաղմոսի սաղմոսերգուն ցուցանէ կատարիլ այնր ամենայնի ըստ երկուց գլխոց եւս, այսինքն ըստ օրհնութեան և ըստ անիծիցն, և զամենայնն առաջի դնելով՝ յաւելու ասել առ ա͞ծ, թէ յայսմ ամենայնի ոչ մոռացաք մեք զքեզ. ապա դու եւս մի մերժեր զմեզ։

Ի դնել այսր՝ այս սաղմոս կարէ հայիլ յայն ամենայն ժամանակս զորս յիշեցաք այժմ, մանաւանդ 'ի ժամանակ գերութեանն բաբելոնի, և հոգևորապէս՝ 'ի ժամանակ մարտիրոսացն։ Իսկ յարմարական մեկնութ͞բ պատշաճագոյն եւս կարէ ընծայիլ ազգին մերոյ ըստ հալածանաց և ըստ տառապանաց, ըստ տարագրութե͞ և ըստ գերութեան. որպէս և յայտնի կարէ տեսանել ամենայն ոք յընթեռնուլն զայս։

ԲԱՆ

ա. Աստուած ականջօք մերովք լուաք զոր հարքն մեր պատմեցին մեզ.

բ. Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Յաջողութի՟ բարեաց որչափ բերկրեցուցանէ զունօղն՝ յորժամ վայելէ, այնչափ դառնացուցանէ զկորուսանօղն՝ յորժամ յիշէ. այլ այսու ամենայնիւ յանկանիլ նորա 'ի թշուառութիւն՝ դառնոյ հայիլ յայն զոր կորոյս բաղդատութեամբ այնր՝ յոր անկաւ. Եւ թէպէտ յառնել նորա զայս՝ լաելեայն գիտէ մխիթարութիւն գտանել, սակայն նոյնն իսկ կրկին վշտանայ. մի՝ 'ի թշուառութենէ անտի՝ զոր ունի, և մի ևս՝ յերջանկութենէ անտի զոր ոչ ունի.

Այլ յորժամ այս յիշատակութի՟ առ այլ լինի՝ այսինքն առ այն, որ կարօղն է զերծուցանել յառաջիկայ թշուառութենէ, և դարձուցանել յինքն զառաջին կորուսեալ վիճակն, սոյն այս յիշատակութիւն հիմնելով 'ի յոյսն՝ 'ի յուսոյ անտի ընծայէ մարդոյ առաւել ևս մխիթարութե՟. Իսկ այն յոյս հայի 'ի բարութի՟ և 'ի կարողութի՟ նորա՝ առ որ լինի յիշումն այն. Եւ ահա ըստ այսմ խորհրդածութե՟ առաջի դնին այս բանք 'ի բերանոյ Իսրայելի. որք 'ի սկզբան վայելեալ 'ի յաջողութեան՝ կորուսին զնոյն, և 'ի յիշելն զայն տրտմին. այլ դարձուցեալ զյոյս իւրեանց առ բարութիւնն այ՟ և առ կարողութիւն նորա՝ փոքր մի մխիթարին և 'ի նա գոչեն. ուստի և մարգարէն 'ի դիմաց նոցա խօսելով ասէ.

ա. Աստուած ականջօք մերովք լուաք զոր հարքն մեր պատմեցին մեզ.
բ. Զգործն՝ զոր գործեցեր յաւուրս նոցա, յաւուրսն առաջինս. Աստանօր զա՟ծ յիշելով գրեթէ վկայ բերէ զնա առ այն՝ զոր ունի ասել. միանգամայն ցուցանէ և

զկարօտութիւնն զոր ունի առ նա. և այսու գիտէ զարթուցանել զնա 'ի գութ առ 'ի լսել բանից իւրոց. Մ՚եք լուաք առէ 'ի հարց մերոց, զինչ ինչ գործեցեր դու ա͞ծ մեր 'ի ժամանակս նոցա. զինչ արարեր ընդ աբրահամ և ընդ որդիս նորա. քանի՛ քանի սքանչելիս հրաշացուցեր յեգիպտոս, և 'ի կարմիր ծովու, և յանապատի անդ ամենակարող զօրութեամբ քով. և զո՛րպիսի մեծամեծ բարիս երևեցուցեր ընդ նոսա յետ այնորիկ. արդ միթէ մոռացա՞ր այժմ, զորս յայնժամ գործեցեր, ընդէ՞ր այս այսպէս մոռանայցեր զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց.

Ո՛չ առէ սակայնս լուաք, այլ յաւելու և զբառդ ականջօք մերովք. առ 'ի ցուցանել զճշմարտութ͞ի և զհաստատութիւն ասացելոյն, որպէս թէ եղեալ էր. թէպէտև ոչ տեսաք աչօք, բայց ստուգութ͞ի լուաք ոչ եթէ օտարի ականջօք, այլ ականջօք մերովք. Իսկ զի մի կարծեսցի թէ յանհաւատարիմ մարդկանէ իցեն լուեալ, ասէ * հարքն մեր պատմեցին մեզ ||. որով իբր բարոյական ապացուցութեամբ հաստատէ, թէ ճշմարիտ է՝ զոր լուաք, և կամ թէ ճշմարիտ է այն ամենայն՝ որ պատմեցաւ մեզ. վասն զի առաջին հարք մեր պատմեցին որդւոց իւրեանց զորս ծնան, և նոքա որդւոց յորդիս՝ որք միմեանց յաջորդեցին, և այսպէս 'ի հարց յորդիս էջ ճշմարտութիւն այնց բանից որք յայտ առնեն զսքանչելի գործս քո՝ զորս արարեր ընդ նոսա յառաջին ժամանակս, այն թէ զիա՛րդ առեր զիսրայէլ քեզ ժողովուրդ, զիա՛րդ առաջնորդեցեր նոցա, և զիա՛րդ ածեր յերկիրն զոր խոստացար.

Այս հայի և 'ի նորս եկեղեցի, յորում և մեք իսկ ականջօք մերովք լուաք 'ի հարց մերոց, և նոքա 'ի հարց իւրեանց, և նոքա յառաքելոց որք աչօք ևս տեսին և բերանով աւանդեցին թէ զինչ ինչ արար ա͞ծ 'ի ժամանակին՝ յորում եկն առ մեզ, և զիա՛րդ փրկեաց զմեզ. Իսկ թէ հարցանիցեն ցմեզ անհաւատք, ուստի գիտէք թէ զայսպիսի գործ գործեալ է ընդ ձեզ ա͞ծ, պատասխանեմք, ահաւասիկ հարք մեր պատմեցին մեզ աւանդութ͞ի որդւոց յորդիս, և ոչ երբէք եղև ժամանակ ինչ՝ յորում միջահատեալ իցէ այս աւանդութ͞ի. ուստի մեք ոչ եթէ 'ի գլխոց մերոց առա-

պէս հնարելով պատմեմք զայս, այլ 'ի սկզբանէ և
այսր անխափան ունիմք, և պահեմք։

Այս յիրաւի եթէ որ ընթեռնուցու զամենայն գիրս ոչ միայն ս͞րց, այլև արտաքնոց, յայտնի տեսանէ՝ թէ զիարդ 'ի հարց յորդիս աւանդեալ եհաս առ մեզ ճշմարտութիւն այնր ամենայնի՝ զոր հաւատովք ունիմք, և
ընթեռնումք 'ի նոր և 'ի հին կտակարանս։

Մանաւանդ զի՝ որք աւանդեցինն մեզ զայսոսիկ, քննեցին և փորձեցին, ստուգեցին և հաստատեցին, մինչև ոչ ես կարօտիլ մեզ հաւատալ զայնս։ Աստի առէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժդ.) *Նոցա երկմտիլն (այսինքն առաքելոց երկբայելն 'ի վե-
„րայ յարութեան տեառն) և փորձելն՝ հաւատոցս մերոց
„ամրութիւն և հաստատութիւն եղև, ոչ ունելով մեզ
„պէտս քննել և ստուգել‖. Նոքա աշխատեցան, և մեք յաշխատանս նոցա վայելեմք. և անտարակոյս գոլով՝ իբր որդիք պարծիմք նոքօք իբրև հարբք. և արտաքոյ աւանդից նոցին ոչ ելանեմք. զա͞ծ նոցա պաշտեմք, և
զհաւատս նոցա պահեմք։

Յայս իսկ բազում անգամ 'ի յիշելն զա͞ծ և զգործս ա͞յ՝ յաւելումք ասել՝ հարցն մերոց. որով ցուցանեմք թէ մեք ոչ ձանձրեմք զայնպիսի ա͞ծ, և զգործս այնպիսի ա͞յ, որ չիցէ ա͞ծ հարցն մերոց։ Այս ահա յայս միտս դնէ և աստ մարգարէն զայս տարազ խօսից՝ յասելն, հարքն մեր պատմեցին մեզ զգործս քոյ։ Իսկ թէ զինչ գործք էին նոքին, զմին յայնցանէ՝ որ երևելին է, 'ի
մէջ բերէ ասելով։

գ. Ձեռն քո սատակեաց զհեթանոսս, և զնոսա տնկեցեր. չարչարեցեր զժողովուրդս, և հաներ զնոսա։

Ձեռամբն այս բազում ինչ իմացեալ լինի 'ի սուրբ գիրս, (որպէս ասացեալ է մեր 'ի սաղ. լա. 4. և սաղ. լէ. 2. ևն.) Բայց մանաւորապէս իմացեալ լինի ամենակալ զօրութիւնն ա͞յ, կամ ամենակարողութիւն նորա մանաւանդ ըստ վանելոյ զընդդիմակաց։ Այս յայս
միտս առէ։

Ձեռն քո սատակեաց զհեթանոսս։ Այսինքն 'ի յառաջնորդել քոյ ժողովրդեան քում յերկիրն աւետեաց՝ 'ի պաղեստին զոր խոստացեալ էիր հարցն մերոց, ամենակալ ձեռն քո վարեաց յերկրէ անտի զհեթանոսս, այսինքն զքանանացիս, և զյեբուսացիս, ևն.

Այլ քննել արժան է՝ զի ոչ ասէ վարեաց կամ եհան՝ որպէս դնէ 'ի սորա, այլ խլեաց. որով երկու ինչ կամի ցուցանել. մի՝ զզօրութիւն ուժոյ ամենակարողութեանն ա̃յ. քանզի այնպէս վարեաց զհեթանոսս յերկրէ անտի, որպէս այր հզօր ձեռամբ խլէ զտունկ 'ի հողոյ. Երկրորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ իբրև զծառս արմատացեալ և հաստատեալ էին անդէն. վասն որոյ խլել դնէ. Երրորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ 'ի վարել հեթանոսաց յերկրէ անտի՝ մնացին և քանի մի յարմատոց նոցա, որպէս 'ի խլել ծառոյ՝ մնան քանի մի մանր արմատք յերկրի. Եւ զի զոցանէ խլել ասաց, տնկել դնէ վասն հարցն, ասելով.

Եւ զնոսա տնկեցեր. Այսինքն փոխանակ հեթանոսաց՝ զորս խլեցեր յերկրէ անտի, տնկեցեր 'ի նմա զնոսա՝ այսինքն զհարս մեր. Փոխանակ ասելոյ զետեղեցեր՝ ասէ տնկեցեր, որով երկու ինչ կամի ցուցանել. մի՝ զհաստատութիւն զետեղելոյ նոցա. իբր զի ա̃ծ 'ի կողմանէ իւրմէ այնպէս հաստատուն զետեղեցոյց զնոսա յերկրին աւետեաց, մինչև դժուարին լինել նոցա վարիլ անտի. որպէս դժուարաւ խլի ծառ որ տնկեալ և արմատացեալ իցէ յերկրի. Երկրորդ՝ առ 'ի ցուցանել զաճումն նորին. զի յայտ է թէ ծառ որ տնկի՝ ոչ միայն հաստատի, այլև աճէ. և եթէ իցէ պտղատու, տայ և զպտուղ իւր. իսկ թէ զիարդ խլեաց զհեթանոսս յերկրէ անտի՝ յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

Չարչարեցեր զժողովուրդս, և հաներ զնոսա. Որպէս յայտ է 'ի գիրս Ելից. (իգ. 28. և երկրորդ օրին. է. 20. և յեսուայ իդ. 12. և իմաստ. ժբ. 2 = 12.) նախ քան զմտանել իսրայէլացւոց յերկիրն աւետեաց՝ առաքեաց ա̃ծ զպիծակս, և չարչարեաց զբնակիչս երկրին. որով և ստիպեցան բազումք 'ի նոցանէ ինքնին մեկնիլ յերկրէ անտի. Եւ ահա այս է զոր ասէ՝ չարչարեցեր զժողովուրդս երկրին քանանու՝ ոչ եթէ մեծամեծ պատուհասիւք, այլ փոքումբք, և այնու 'ի բաց վարեցեր զնոսա. որպէս թէ ասէր. կարող էիր միանգամայն կորուսանել զնոսա, բայց որպէս զի իմաստունն. (Իմաստ. ժբ. 2 = 12.) առ սակաւ սակաւ չարչարեցեր զի զգաստասցին. և 'ի վարել քո զնոսա յերկրէ նոցա 'ի միտ առնուցուն զզօրութիւն քո, և դարձցին 'ի չարեաց. և ժողովուրդ քո եկեալ ժառանգեսցէ զերկիր նոցա զօրութ՟բ քով, և ոչ զօրութեամբ իւրեանց. և զայսմանէ գրէ զկնի ասելով.

Դ. Ո՛չ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. ո՛չ բազուկ նոցա թէ փրկեաց զնոսա.

Որք միանգամ ընթեռնուն զգիրս յեսուայ՝ ինքնին իմանան զասացեալդ. զի թէպէտ և սրով հարին իսրայէլացիք զթշնամիս իւրեանց զբնակեալսն յերկրին աւետեաց և զթագաւորութիւնս նոցա, բայց ա՟ծ էր որ վանէր զթշնամիս նոցա. և նա արար զի ժառանգեսցեն նոքա զերկիրն. վասն այսորիկ ասաց յեսու ցիսրայէլ. * Անցէք ընդ յորդանան և եկիք յերիքով և պատերազմեցան ընդ ձեզ բնակիչք երիքովի... և մատնեաց զնոսա 'ի ձեռս մեր. և առաքեաց յառաջագոյն քան զձեզ զձիաստացն, և մերժեաց զնոսա յերեսաց ձերոց, զերկոտասան թագաւորս ամովրհացւոց, ոչ սրով քով, և ոչ աղեղամբ քով‖. (Յեսու իդ. 12.) Զայս և նոքին իսկ բնակիչք երկրին ծանեան. սմին իրի ասաց ռահաբ. * գիտեմ՝ զի ետ ձեզ տէր զերկիրս. քանզի անկաւ ահ ձեր 'ի վերայ մեր. և զի հալեցան ամենեքեան որ բնակեալ էին յերկրիս յայսմիկ յերեսաց ձերոց. քանզի լուաք թէ ցամաքեցոյց տէր ըզծովն կարմիր յերեսաց ձերոց, յելանելն ձեր յեգիպտոսէ. և զոր ինչ արարէք ընդ երկուս թագաւորսն ամովրհացւոց, որ էին յայնկոյս յորդանանու ընդ սեհոնի և ընդ ովգայ զոր սատակեցէք. Եւ իբրև լուաք մեք՝ զարհուրեցաք սրտիւք մերովք, և ոչ ևս գոյ շունչ յումեք 'ի մէնջ յերեսաց ձերոց. զի տէր ա՟ծ ձեր՝ նա է ա՟ծ յերկինս 'ի վեր, և յերկիր 'ի խոնարհ‖. (Յեսու. բ. 9.) Յայսոսիկ հայելով ասէ.

Ո՛չ թէ սրով իւրեանց ժառանգեցին զերկիր. Սուրն ոչ դնի աստ փոխանակ նոյն իսկ երկաթեղէն թրոյ, այլ փոխանակ գործածութեան այնր՝ ձևով փոխանունութ՟ե.

նոյնպէս և վասն բազկացն է իմանալ՝ զի և այն դնի փոխանակ ուժոյ և արհեստի բազկաց։ Այլ ըստ այսմ կամի ասել. հարք մեր չունէին զայնպիսի գործածութիւն սրոյ, և զայնպիսի ոյժ և արհեստ բազկաց, զի կարող լինէին վանել զայնչափ բազմութիւն ազգաց զօրաւորաց. ուստի և վանել նոցա զնոսա՝ ոչ նոցա էր՝ այլ քո։

Այլ արդարև այնոքիկ ազգք զօրոց խօսի աստ, հզօր էին և սաստիկ, որպէս վկայեցին լրտեսքն յասել իւրեանց. * ազգն սաստիկ էր՝ որ բնակեալ էին 'ի
,, նմա, և քաղաքք ամուրք և պարսպաւորք և մե-
,, ծամեծք յոյժ, և զազգն Ենակայ տեսաք անդ....
,, և զամենայն ազգն զոր տեսաք 'ի նմա՝ արք յաղ-
,, թահասակք են. տեսաք անդ և սկայս, և էաք
,, յաչս նոցա իբրև մարախ‖. (Թուոց ժգ. 29 = 34։)
Այլ զայս մովսէս եւս վկայեաց առ իսրայէլ. (Բ. օրին. Թ. 2։)

Իսկ իսրայէլացիք համեմատութեամբ նոցա էին արք նուազք, և անտեղեակք պատերազմի. և չկարէին ուժով իւրեանց վանել զնոսա, և այնու ժառանգել զերկիր նոցա, և բազուկք նոցա տկարանային զդէմ ունել այնպիսի թշնամեաց, և փրկել զինքեանս 'ի սրոյ նոցա, և յայս սակս յարէ։

Այլ ոչ բազուկ նոցա՝ թէ փրկեաց զնոսա։ Ուր բառդ թէ՝ դնելի է յառաջոյ այսպէս, և ոչ թէ բազուկ նոցա փրկեաց զնոսա. և կամ պարտ է համարել զայն իբր թարմատար. ուստի և 'ի միում հին երկաթագիր սաղմոսի ոչ դնի այդ. որպէս և ոչ յեբր". և ոչ յայլ թարգ". այլ գրի այսպէս. * ոչ բազուկ նոցա փրկեաց
,, զնոսա‖. փրկելն ոչ միայն ցուցանէ աստ զերծուցանել 'ի չարեաց, այլ և հաստուցանել 'ի ժառանգութի երկրին. որպէս թէ ասէր. ոչ կարաց բազուկ նոցա ազատել զնոսա 'ի ձեռաց թշնամեաց, և ժառանգեցուցանել նոցա զերկիրն, այլ բազուկ տեառն. սմին իրի յարէ զկնի և ասէ։

Ե. **Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս երեսաց քոց. զի հաճեցար դու ընդ նոսա։**

ԱՋ ասելով իմանայ զամենայաջող զօրութիւնն իւր, կամ զյատուկ օգնականութիւն նորա. և բազուկ ասելով իմանայ զամենակարողութիւն նորին. իսկ լուսով երեսացն ա̃յ իմանայ զքաղցր հայեցուած նորա, այսինքն զհայրական խնամ նորին։ Այս աջ տ̃ն յայտնի երևեցաւ յանցանել ժողովրդեանն իսրայէլի ընդ յորդանան. զի ջուրք նորա որք լցեալք գային 'ի վերոյ, ընդ մխել ոտից քահանայիցն յեզր գետոյն, անդէն վաղվաղակի զկայ առին, և յետս կային, և ջուրք որ յառաջոյ էին, ընթացան 'ի ծովն աղի. և ժողովուրդն էանց ընդ ցամաք յայնկոյս գետոյն (յեսու գ̃. 15.)

Որպէս և բազուկ նորա այսինքն ամենակարողութ̃ի նորին յայտնի երևեցաւ 'ի կործանմանն երիքովի. զի միայն 'ի հնչիւն փողոյ և 'ի ձայն աղաղակի՝ համանգամայն 'ի հիմանց տապալեցաւ (յեսու զ̃. 20.)

Նմանապէս յայտնի ցուցաւ իսրայէլացւոց և մանաւոր խնամք նորա 'ի պատերազմիլ նոցա ընդդէմ հինգ հզօր թագաւորաց միանգամայն. բստ որում գրի 'ի գիրս յեսուայ. (Ժ. 8 = 12.) * և ասէ տէր ցյեսու „մի երկնչիր . . . և զարհուրեցոյց զնոսա . . . և 'ի „փախչել նոցա յերեսաց որդւոցն իսրայէլի ընդ զառ „'ի վայրն բեթորոնայ, և տէր էարկ 'ի վերայ նոցա „քարինս կարկտի յերկնից մինչև ցազեկայ‖. Նա յայնմ աւուր այնչափ խնամ եցոյց ա̃ծ առ իսրայէլ, մինչև դադարեցուցանել և զընթացս արևու. և թերևս յայս հայի ասելն առ՝ լոյս երեսաց. Զեր վկայէ սուրբ գիրն թէ * ոչ եղև այսպիսի օր, ոչ յառաջ և ոչ յետոյ՝ „լսել ա̃յ ձայնի մարդոյ, զի տէր պատերազմեցաւ „խառն ընդ իսրայէլի‖. (յեսու. Ժ. 14.) այնպէս և յայլ ամենայն գործս՝ որք միանգամ պատմին 'ի գիրս յեսուայ և մովսէսի, յայտնի երևի զօրութիւն և ամենակարողութիւն ա̃յ և մանաւոր խնամք նորա առ իսրայէլ. յայտնապէս հայելով ասէ.

Այլ աջ քո՝ և բազուկ քո՝ և լոյս երեսաց քո. Որ զօրութ̃ք կրկնին նախասացեալ բայքդ ծանուցանել և յերևել. որպէս թէ ասէր. ոչ թէ նոքա, այլ աջ քո և բազուկ քո և լոյս երեսաց քոց փրկեաց զնոսա և ժառանգեցոյց նոցա զերկիր թշնամեաց իւրեանց. իսկ թէ ընդդէր. յայս առնէ ասելով.

ԶԻ ՀԱՃԵՑԱՐ ԴՈՒ ԸՆԴ ՆՈՍԱ. Որպէս թէ ասէր. ոչ վասն արդարութեան նոցա կամ վասն արժանեաց նոցին ժառանգեցուցեր նոցա զերկիրս զայս, այլ զի հաճեցար ընտրել զհարս նոցա, և նոքին հաճեցար ընդ նոսա. և 'ի շնորհս նոցա վանեցեր զազգս բազումս յերեսաց նոցա վասն անօրէնութեանց իւրեանց. Այն է՝ զոր բազում անգամ ասաց Մովսէս առ ժողովուրդն Իսրայէլի. (Բ. օրին. Թ. 5.) * ոչ վասն.... յակոբայ ||.

Այսոքիկ բանք սաղմոսիս հային և 'ի փրկութիւնն յայն զոր արար տէր ազգի մարդկան համօրէն, որք կորուսեալ էին զուղիղ գործածութիւն սոյ բանականութեան, և զոյժ բազկաց անձնիշխանութե՟, և ոչ կարէին գտանել զփրկութիւն. այլ 'ի հաճել տեառն ընդ նոսա, աջ նորա եհաս յօգնութիւն, և բազուկ նորա փրկեաց զնոսա. ուր աջով և բազկաւ իմացեալ լինի որդին ա՟յ. յոր միտս ասաց ա՟ծ բերանով եսայեայ. * փրկեաց զնոսա բազուկ իմ ||. (եսայ. կգ. 5.) Իսկ լուսով իմացեալ լինի հոգին սուրբ. Եւ զի սոքիմբք ցուցաւ առ ամենեսին, եթէ առ Իսրայէլ և եթէ առ այլս իբր Թագաւոր նոցա, և ա՟ծ նոցին, սմին իրի յարէ զկնի ասելով.

Դ. ԴՈՒ ԻՆՔՆ ԵՍ՝ ԹԱԳԱՒՈՐ ԻՄ ԵՒ Ա՟Ծ ԻՄ. ՈՐ ՀՐԱՄԱՅԵՑԵՐ ԶՓՐԿՈՒԹԵԱՆՑՆ ՅԱԿՈԲԱՅ.

Յայն արար 'ի վերոյ զեղեալ փրկութիւնն, այսինքն զայն՝ զոր արար ա՟ծ ընդ ժողովուրդ իւր. իսկ աստ 'ի խնդիր մտաց՝ գտանել և զլինելն 'ի նոյն 'ի տեառնէ՝ որ ցուցաւ նոցա փրկիչ և բարերար, ես և իշխան և պաշտպան, Թագաւոր ամենազօր և ա՟ծ ճշմարիտ. յայս ակնարկելով՝ ասէ.

ԴՈՒ ԻՆՔՆ ԵՍ՝ ԹԱԳԱՒՈՐ ԻՄ ԵՒ Ա՟Ծ ԻՄ. Որպէս թէ ասէր՝ որովհետև Թագաւոր և ա՟ծ ցուցար դու առ հարս մեր, ուրեմն դու ինքն Թագաւոր մեր ես և ա՟ծ մեր. ապա որպէս ցուցեր նոցա զփրկութիւն քո, ցոյց և մեզ, ըստ որում և հաճիս իսկ ցուցանել. և առ 'ի յայս առնել զայս՝ յարէ զկնի և ասէ.

ՈՐ ՀՐԱՄԱՅԵՑԵՐ ԶՓՐԿՈՒԹԵՑՆ ՅԱԿՈԲԱՅ. [illegible] յակոբայ զնի առ 'ի սեռական հոլովն իբր յատկացուցիչ փրկութե՟ց. որպէս թէ եղեալ էր. հոգացար և հոգաս զփրկութենէն յակոբայ, կամ թէ կամիս զփրկութիւնն յակոբայ: Կարէ իմացեալ լինել և 'ի տրական հոլովն, իբր ինդիր փրկութեան, որպէս թէ եղեալ էր. կամիս զփրկութիւնն առ յակոբ: Յոր հոլով և իմասցի, միտ բանին է՝ թէ ա՟ծ կամի զփրկութիւն ազգին յակոբայ: Բայց փոխանակ դնելոյ կամիլ՝ դնէ հրամայել, և այս՝ վասն երից. մի՝ առ 'ի ցուցանել՝ թէ ճշմարտապէս կամի փրկել. վասն զի որ հրամայէ զի՟ն՝ ճշմարտապէս կամի զայն: Երկրորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ սահմանեալ էր՝ զի 'ի վախճան աւուրց եկեսցէ փրկիչ, և կատարեսցէ զփրկութիւնն յակոբայ. վասն որոյ հրամայել դնէ. իբր թէ հաստատուն բանիւ սահմանել. Երրորդ՝ առ 'ի ցուցանել, թէ ա՟ծ հրամայելով միայն կատարէ զփրկութիւնն յակոբայ. որպէս թէ ասէր. դու կամիս տէր փրկել զազգ յակոբայ՝ և փրկես իսկ ոչ եթէ աշխատելով կամ ըստ օրինակի երկրաւոր թագաւորաց պատերազմելով այլ իբրև ա՟ծ հրամայելով, և իբրև ինքնիշխան տէր անհարկելով. զի միայն հաճելդ փրկէ զնոսա: Եւ այսմ կամի հետևեցուցանել զմաղթանս փրկելոյ, ասելով. փրկեա՛ ուրեմն և զմեզ:

Եւ զի այս փրկութիւն՝ բազում օրինակաւ եղև, վասն այնորիկ յոգնակի դնէ յասելն. * հրամայեսցես զփրկու„թեանցն յակոբայ ||. որպէս թէ ասէր՝ հրամայեսցես վասն բազմադիմի փրկութեանց՝ զորս ցուցանելոց էիր առ յակոբ: Իսկ թէ զիարդ՝ յայս առնէ 'ի յաջորդ համարն ասելով.

Է. ՔԵՒ զթշնամիս մեր հարկանիցեմք. և անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն 'ի վերայ մեր:

Որչափ դժուարին է առանց ա՟յ վանել զթշնամիս, այնչափ դիւրին է յաղթել նոցա աստուծով. և առ այս երկու ինչ է հարկաւոր. մի՝ 'ի կողմանէ ա՟յ 'ի ցուցանել նորա զօգնութիւն իւր, և մի ևս՝ 'ի կողմանէ յաղթաղին 'ի յուսալ նորա առ ա՟ծ և 'ի գործակից լինել օգնութե՟ն նորա. ըստ առաջնոյն ասէ.

ՔԵՒ զթշնամիս մեր հարկանիցեմք: Բայց քեւ՝ ոչ ցուցանէ ասա՝ լինել ա̃յ գործիքական պատճառ յաղթելոյ, որպէս յորժամ ասի սրով հարցուք, գրով խօսեսցուք, եւն, այլ ցուցանէ լինել տուօղ գործիքական պատճառի՝ այսինքն տուօղ օգնութեան 'ի յաղթել, որպէս եթէ ոք ասիցէ ցթագաւորն. քեւ սատասցուք զանուն, եւն. Եւ ըստ այսմ կամի ասել, 'ի տալ քոյ մեզ զօգնութիւն, քոյով օգնականութե̃դ հարցուք եւ վանեսցուք զթշնամիս մեր. եւ զի որպէս ասացաք, պիտոյ է առ այս իբր երկրորդ պայման յուսալ առ ա̃ծ, կամ կարդալ զանուն Նորա, եւ գործակից լինել նմա, զայն եւս դնէ առաջի եւ ասէ.

Եւ անուամբ քով արհամարհեսցուք զյարուցեալսն 'ի վերայ մեր. Անուամբ քով ասելով ցուցանէ զգործիքական պատճառն յաղթելոյ, որպէս յորժամ ասի, ջրով շիջուցից զհուր, հրով այրեցից. եւն. Այսպիսի օրինակաւ պատճառ լինի անունն ա̃յ 'ի յաղթել ումեք, յորժամ մարդ յուսալով յա̃ծ՝ կոչէ կամ՝ կարդայ զանուն Նորա. եւ այնու կռուամբ դիմէ 'ի վերայ թշնամեացն. որպէս արարին երբեմն խաչակրացիք, որպէս եւ վարդանանք, եւ վահանեանք. (պատմ". հ. 9. երես 57. եւ 193.) Եւ ըստ այսմ կամի ասել. 'ի քեզ ապաւինելով եւ զանուն քո կարդալով վանեսցուք զթշնամիս մեր, որք յարուցեալ են 'ի վերայ մեր. Ո՛չ ասէ վանեսցուք կամ յաղթեսցուք. այլ արհամարհեսցուք, առ 'ի ցուցանել՝ թէ դիւրին լինի անուամբն ա̃յ վանել զթշնամիս. զի գրեթէ իբր արհամարհելով վճարի.

Զայն առաւելագոյն իմն օրինակաւ մարթին առնել քրիստոնեայք 'ի կարդալն զանունն յի̃ի. յորոյ օրինակ արհամարհեաց դաւիթ եւ վանեաց զգողիաթ հնգեգումբք քարամբք. ը̃ որում անունս յիսուս 'ի բազում լեզուս հինգ տառիւք բաղհիւսի. արհամարհեաց եւ ցըպով որ օրինակէր զխաչն կենարար. Ի տկարանալ զօրութեան մերոյ՝ եթէ դիմեսցուք առ յիսուս, հաստատիմք եւ վանեմք այնու զամենայն ընդդիմութի̃ս. Արդ՝ այն է վայրի խոզ՝ տեսեալ թէ ո՛չ բարւոք հատանեն ատամունք իւր, սրէ զնոսին 'ի վիմի. մեք եւ սրեսցուք զզօրութի̃ս մեր 'ի վէմն յի̃. զի կարասցուք դիւրաւ հատանել զբռնութի̃ փորձութե̃ց եւ ախտից.

Ապա թէ ոչ՝ տկարանամք, և մեր լինի յանցանքն, և ոչ ևս կարեմք տանջել՝ թէ ոչ օգնէ մեզ Ած. Ծանիր աստ, զի մարգարէն զայսոսիկ բանս առաջի դնելով կամի յայտ առնել միանգամայն և զզարմացումն իւր. որպէս թէ կամիցի ասել առ Ած. ապաքէն դու ինքն՝ նոյն տէր ես՝ և մեք նոյն ժողովուրդք. զի՞ է ապա, զի նոյնդ առ նոյն ժողովուրդ՝ այլօրինակ վարիս. զինչ ինչ արարեր յառաջն, և զինչ առնես այժմ. յառաջն զայնչափ սքանչելիս ցուցեր առ հարս մեր. իսկ այժմ 'ի գերութիւն և 'ի թշուառութիւն մատնեցեր զմեզ. եթէ հարքն մեր 'ի քեզ յուսացան, մեք ևս 'ի քեզ եմք յուսացեալ. ապա և մեզ ցոյց զսքանչելիս քո. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

ը. Ո՛չ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ոչ սուր իմ կեցուցանէ զիս.

թ. Այլ դու փրկեցեր զմեզ 'ի թշնամեաց մերոց. և զատելիս մեր յամօթ արարեր.

Աղեղամբ և սրով իմացեալ լինի աստ ո՛ և իցէ գործիք պատերազմելոյ 'ի հեռուստ և 'ի մօտուստ, և զի աղեղն և սուր 'ի հին ժամանակս էին հասարակական գործիք՝ զոսա ևեթ յիշելով՝ զայլս ևս տայ իմանալ. դարձեալ աղեղամբ իմացեալ լինի աստ հնարք յաղթութեան, և սրով զօրութիւն վանիչ և ազատեցուցիչ. Ապա 'ի սոսին հայելով ասէ.

Ո՛չ եթէ յաղեղն իմ յուսացեալ եմ, և ոչ սուր իմ կեցուցանէ զիս. Կամի ասել, ոչ եմ եդեալ 'ի մտի՝ թէ կարեմ աղեղամբ և սրով և այլ զինուք կամ հնարիւք և զօրութեամբ վանել զթշնամիս իմ և փրկիլ. այլ բե. քանզի փորձիւ իսկ գիտեմ, զի սուր իմ և այլ ո՛ և իցէ զօրութիւն ոչ կեցուցանէ զիս, այսինքն ոչ առնէ՝ զի յաղթեցից թշնամւոյ իմում, և ապրեցուցից զանձն իմ.

Այս յայտնի տեսանի յայնոսիկ՝ որք յուսալով 'ի գործիս պատերազմի և 'ի զօրութիւն անձանց իւրեանց, փոխանակ փրկելոյ՝ կորեան. Ապաքէն ընտրեաց Հողոփեռնէս զայս հզօրս. * որք յուսացեալ էին 'ի զօ-

„ րութիւնս իւրեանց‖. որպէս աւանդի 'ի գիրս յուդիթայ. (Է. 5.) Իսկ իսրայէլացիք ոչ 'ի զօրութիւն իւրեանց և ոչ 'ի զէնս, այլ յա͞ծ յուսացան. նոքա վանեցան, և սոքա զերծան. (յուդիթ ԺԵ. 1 = 8.) Քանզի զէնք և զօրութիւնք մարդոյ ոչինչ գործեն, եթէ յա͞յ ոչ լինիցի յաջողութիւն. իսկ եթէ նա յաջողեսցէ, առանց զինու ևս մարթ է լինել յաղթութեան և փրկութ͞ե. վասն որոյ և սաղմոսերգուն նմա ընծայելով զսոյն, ասէ.

Այլ դու փրկեցեր զմեզ 'ի նեղչաց մերոց: Աստանօր բառդ զմեզ՝ հայի յազգն իսրայէլի ընդհանրապէս. զի 'ի բերանոյ նոցին խօսի. որով կամի ասել. խոստովանիմք զի ոչ մերովք զինուք զօրացեալ փրկեցաք. այլ քև. զի դու քոյով պաշտպանութեամբդ ապրեցուցեր զմեզ 'ի ձեռաց թշնամեաց մերոց. զի յոր և իցէ ժամանակի՝ թէ 'ի սկզբան անդ, և թէ յետոյ քանիցս անկաք 'ի ձեռս օտարաց, և քանիցս մատնեցաք 'ի նեղութիւնս, յորժամ ապաւինեցաք առ քեզ, դու ինքն փրկեցեր զմեզ. Եւ զի այս գործ ա͞յ յամօթ արար զթշնամիսն իսրայէլի. վասն այսորիկ յաւելու ասել.

Եւ զատելիս մեր յամօթ արարեր: Այսինքն դու ինքն պաշտպանելով զմեզ՝ արարեր զի որք ատէին զմեզ և յատելութենէ անտի կամէին չարիս հասուցանել մեզ, ոչ կարելով կատարել զկամս իւրեանց՝ ամօթալից եղեն, և մեկնեցան 'ի մէնջ. Զայս եղեալ վստահացուցանէ զյոյս իւր առ ա͞ծ՝ առ 'ի նովաւ միայն զօրանալ, և նովաւ պարծիլ. վասն որոյ ասէ.

Ժ. **Աստուծով պարծեսցուք զօր հանապազ. և անուան նորա խոստովան եղիցուք յաւիտեան:**

Պարծիլ աստուծով կրկնակի կարէ լինել. մի՝ վասն բարութեան կամ կատարելութեանն՝ որ է 'ի յա͞ծ, և յայս միտս ասաց մարգարէն. ('ի սաղ. ԼԳ. 2.) * 'ի „ տէր պարծեսցի անձն իմ‖. և մի ևս՝ վասն բարութեանն, զոր ցուցանէ մեզ ա͞ծ 'ի ձեռն շնորհաց և օգնականութեան, պահպանութեան և պաշտպանութ͞ե, փրկութեան, ևն. Յայս միտս դնէ աստ մարգարէն զպարծիլն յասելն.

ՅԱՍՏՈՒԾՈՎ ՊԱՐԾԵՍՑՈՒՔ ԶՕՐ ՀԱՆԱՊԱԶ։ Որպէս թէ ասէր․ որովհետև ա̃ծ է որ յա̃մի 'ի դիմել մեր առ նա՝ ցուցանէ 'ի մեզ զիւր փրկութիւն և վանէ զթշնամիս մեր, 'ի պարծիլն մեր՝ թէ փրկեցաք՝ մի մեզ տացուք զայն փրկութիւն, այլ ա̃յ․ ուստի և նովաւ պարծեսցուք․ զի թէ նա է՝ որ փրկեաց և փրկէ զմեզ, նա է ապա և հաստատութիւն պարծանաց մերոց, կամ թէ նա է պատճառ պարծելոյ մերոյ․ և զի նա հանապազ պատրաստ է փրկել, արժան է՝ զի և մեք հանապազ նովաւ պարծեսցուք, և ոչ մեօք․ և խոստովան եղիցուք առ նա․ և առ այս յարէ և ասէ․

ԵՒ ԱՆՈՒԱՆ ՔՈ ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԻՑՈՒՔ ՅԱՒԻՏԵԱՆ։ Բառդ անուան՝ առեալ լինի աստ տրականապէս, և դնի փոխանակ բառիս ա̃յ․ ո̃յ թէ ասէր՝ անուանդ քո, որ է անուն ա̃ծ, կամ տ̃ր եբր․ ԵԷՀՕՎԱՀ, խոստովան եղիցուք․ որով միտ բանին լինի այս․ զամենայն յաղթութիւն և զա̃մ բարերարութի̄ տացուք անուանն ա̃յ․ այսինքն թէ 'ի մէջ բերելով զանունն ԵԷՀՕՎԱՀ՝ խոստովան լիցուք, և ասասցուք․ Եէհօվահ փրկեաց զմեզ, Եէհօվահ վանեաց զթըշնամիս մեր, Եէհօվահ արար զայսպիսի մեծ սքանչելիս, ե̃ն․ և այս ոչ եթէ երբեմն, այլ միշտ և յաւիտեան․ ցորչափ կեամք և վայելեմք 'ի խնամս նորա։

Յայս պարծանս ոչ կարեն այժմ պարծիլ հրէայք ասէ վարդան, * թէպէտ և աստուծով փրկեցան․ բայց „ մեք յիրաւի կարեմք պարծիլ․ զի մահուամբ տեառն „ և խաչիւ նորա փրկեցաք․ որպէս ասէ պօղոս․ ինձ մի „ լիցի պարծիլ, բայց միայն 'ի խաչն տեառն||։

Յեբր․ դնի աստանօր ՍԷԼԱ, զոր եբրայեցիք թարգմանեն ԱՄԷՆ․ իսկ 'ի թարգ․ եօթ․ դնի ԴԻԱՓՍԱՂՄԱ, որոյ փոխան յերկուս ձեռագիրս մեր դնի ՀԱՆԳԻՍՏ․ (զորոյ զնշանակութիւնն տես 'ի ներած․ գլ․ թ․) Իսկ աստ երևի եղեալ, վասն փոխելոյ զձայն կամ բարձրացուցանելոյ զնոյն յաղագս փոփոխութեան նիւթոյն․ վասն զի յառաջին համարոց մինչև յայս վայր երգեալ լինէր զուարճալի եղանակաւ կամ մեղմ ձայնիւ, զի նիւթն էր ախորժական․ իսկ աստ փոխիւր յողբալի եղանակ և կամ 'ի ձայն բարձր, զի նիւթն է ողբական։ Քանզի աստ սկսանի պատմել 'ի բերանոյ իսրայելի զթշուառութիւնս որք հասին 'ի վերայ 'ի հրամանացն ա̃յ, զորս մի մի առաջի դնէ ասելով.

ժա̃. Բայց արդ՝ մերժեցեր և ամաչեցուցեր զմեզ. և ոչ ելցես ա̃ծ ընդ զօրս մեր.

Այս բանք նոյնպէս և յաջորդք սոցա որպէս տեսցուք 'ի վերնագրի սաղմոսիս՝ կարեն ուղղակի հայիլ նախ 'ի ժամանակ դատաւորաց, զի ասի 'ի գիրս անդ. (բ̃. 14. 15.) թէ յետ մահուն յեսուայ 'ի թողուլ որդւոցն իսրայելի զա̃ծ հարց իւրեանց՝ * բարկացաւ
„ սրտմտութեամբ տէր իսրայելի, և մատնեաց զնոսա
„ 'ի ձեռս աւարառուացն, և աւերեցին զնոսա. և ետ
„ զնոսա տէր 'ի ձեռս թշնամեաց իւրեանց շուրջանա-
„ կի, և ոչ կարացին կալ ընդդէմ թշնամեաց իւ-
„ րեանց... և ձեռն տեառն էր նոցա 'ի չարութիւն...
„ և նեղեաց զնոսա յոյժ ‖. եւն: Երկրորդ՝ կարէ հայիլ 'ի ժամանակս գերութեանն բաբելացւոց. (զորմէ տե՛ս դ̃. թագ. իե. 1 = 7. ես և 'ի գիրս ողբոց երեմիայ մարգարէի 'ի չորեսին գլուխսն. և 'ի գիրս բարուքայ. բ̃. 4 = 6.) Երրորդ՝ կարէ հայիլ և 'ի ժամանակս մակաբայեցւոց. (տե՛ս 'ի գիրս բ̃. մակ. գլ. ե̃. դ̃. և է̃.) Չորրորդ՝ կարէ յարմարութեամբ իմն հայիլ և 'ի ժամանակս մարտիրոսաց՝ որք ըստ մարմնոյ և արտաքսապէս հալածեալք և չարչարեալք լինէին 'ի հեթանոսաց. իսկ 'ի ներքուստ և ըստ հոգւոյ փառաւորեալ լինէին յա̃յ: Յոր ժամանակ և հայեսցին այս բանք, նմին ըստ պատշաճի յարմարին, և 'ի բերանոյ ամենեցուն կարեն առաջի դնիլ, յասել նոցա առ ա̃ծ.

Բայց արդ՝ մերժեցեր և ամաչեցուցեր զմեզ. Բառդ Բայց արդ՝ աստանօր լռելեայն 'ի մէջ բերէ զայն ամենայն՝ զորս եդ 'ի վերոյ. որպէս թէ ասէր, զայսչափ և զայսպիսի մեծամեծ սքանչելիս արարեր ընդ հարս մեր, և յամենայնի պաշտպան եղեր նոցա, յամենայնի փրկեցեր զնոսա, յամենայնի զօրացուցեր զնոսա, եւն. և այժմ զի է, զի այսպէս մերժեցեր զմեզ, այսինքն հեռացուցեր զմեզ 'ի խնամոցդ, և ամաչեցուցեր զմեզ, այսինքն իբրև զմի յանարգ ազգաց խոտեցեր կամ խոտելի ցուցեր. քանզի նշան խնամոցդ և սիրոյդ պակասեցաւ 'ի մէնջ, և նշան բարկութեանդ յայտնեցաւ մեզ. իսկ թէ յորս, յայտնէ 'ի յաջորդդ. և նախ ասէ.

Եւ ոչ ելեր ած ընդ զօրս մեր. Այսինքն յելանել մեր 'ի պատերազմ ընդդէմ ներհակաց մերոց՝ դու որ էիր ապաւէն մեր, ամենևին ոչ օգնեցեր մեզ, և ոչ պաշտպանեցեր զզօրս մեր. մանաւանդ թէ փոխանակ ընդ այնր զթշնամիս մեր զօրացուցեր, և նոքիմբք վանեցեր զմեզ. և ետուր զմեզ 'ի յափշտակութիւն. Այլ և այս յարէ զկնի.

ժբ. **Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր. և ատելիք մեր յափշտակէին զմեզ.**

Այս բան ակնարկէ յայն՝ զոր ասաց մովսէս. *Այլ եղիցի եթէ ոչ լուիցես ձայնի տեառն այ քո ... տացէ զքեզ տէր 'ի պարտութի առաջի թշնամեաց քոց. ընդ մի ճանապարհ ելցես 'ի վերայ նց, և ընդ եօթն ճանապարհ փախիցես յերեսաց նոցա .... զրկեալ և յափշտակեալ‖. (բ. օրին. իը. 15. 25. 29.) և այլուր թէ *անկանիցիք առաջի թշնամեաց ձերոց. և հալածեսցեն զձեզ ատելիք ձեր‖. ևն. (ղևտ. իզ. 17.) Արդարև հասին այսոքիկ 'ի վերայ իսրայէլի 'ի խոտորել նոցա յայ. վասն որոյ ասէ.

Դարձուցեր զմեզ յետս քան զթշնամիս մեր. Կամի ասել. 'ի ժամանակս հարց մերոց՝ դու ինքն առաջնորդ լինելով նոցա՝ զօրացուցանէիր զնոսա ընդդէմ թշնամեաց նոցին, և զթշնամիս նոցա փախստեայ առնէիր. իսկ այժմ թշնամիք մեր զօրանան և փախուցանեն զմեզ յետս. զի դու տէր փոխանակ նուաճելոյ զթշնամիս մեր՝ նուաճեալս արարեր զմեզ առաւել քան զնոսա. մինչև ոչ ևս կարել մեզ կալ առաջի նոցա, այլ 'ի փախուստ դառնալ.

Մարթ է այլազգ ևս մեկնել զայս բան, զբառդ **յետս քան**՝ իմանալով փոխանակ բառիդ **առնէ**՝ ըստ թարգմանութեն եօթ". և լատ". կամ ըստ լամբ". փոխանակ բառիս **յետին**. որպէս թէ ասէր. դարձուցեր զմեզ յառաջին գոլոյ՝ 'ի յետին. ևս և արարեր՝ զի մեք որք առաջոյ երթայաք թշնամեաց մերոց՝ իբրև տեարք, այժմ գերի լեալ նոցա՝ զկնի նոցա գնամք. Իսկ թէ նոքա զինչ արարին, յայտ առնէ ասելով.

Եւ ատելիք մեր յափշտակէին զմեզ. Ատախս **ատելիք** նշանակլին ատեցողք, որով իմացեալ լինին նոյն թշնամիք, զոր յիշեաց յառաջն, սոքա (ասէ) ոչ միայն հալածեցին և նեղեցին զմեզ, այլև յափշտակեալ և գերեալ զմեզ՝ բաժանեցին յինքեանս. զոմանս սպանին, և զոմանս վաճառեցին։ Եւ զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

ժբ. Ետուր զմեզ որպէս զոչխարս 'ի զենումն. և ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ։

ժգ. Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ. և ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ։

Սոյն այս գուշակեալ եղև 'ի մովսէսէ՝ յասել նորա ցորդիսն իսրայէլի. * Եւ եղիցիս ցրուեալ ընդ ա̃մ թագաւորութիւնս երկրի. և եղիցին մեռեալք ձեր կերակուր թռչնոց երկնից‖. եւն. և դարձեալ թէ * ցրուեսցէ զքեզ տէր ա̃ծ քո ընդ ա̃մ ազգս… և վաճառեսջիք անդ թշնամեաց ձերոց 'ի ծառայս և յաղախնայս. և ոչ ոք իցէ՝ որ գնիցէ‖։ (Բ. օրին. իը. 25. 64. 68։) Զայս գուշակութիւն լրացեալ ցուցանէ սաղմոսերգուն այսու բանիւ. յասելն։

Ետուր զմեզ որպէս զոչխարս 'ի զենումն։ Զայս օրինակ զենմանն բերէ վասն երից. մի՝ վասն ցուցանելոյ՝ թէ դիւրաւ եղև նոցա մատնիլ 'ի մահ. և ըստ այսմ կամի ասել. թողեր զմեզ զի անաշխատ ածցեն զմեզ թշնամիք մեր 'ի մահ, որպէս դիւրաւ ածին ոչխարք պատրաստեալք 'ի զենումն։ Երկրորդ՝ վասն ցուցանելոյ զբազմութիւն իւրեանց. և ըստ այսմ կամի ասել. մատնեցեր զմեզ բազմութեամբ 'ի ձեռս թշնամեաց մերոց՝ որք վարէին զմեզ իբրև զհօտս ոչխարաց ածելոյ 'ի զենումն։ Երրորդ՝ վասն յայտնելոյ զողորմելի լինել իւրեանց, զի 'ի գութ շարժեսցէ զա̃ծ. որպէս թէ ասէր. այո՛ տէր արժանապէս ետուր զմեզ 'ի զենումն վասն մեղաց մերոց, և մեք զինչ ունիմք ասել, բայց եթէ իբրև ոչխար աղաղակել առ քեզ, զի ողորմեսցիս մեզ։

Այլ զայս ոչ է պարտ իմանալ զներգործութեամբ զենմանէն, այլ զվարելոյն առ 'ի զենումն. որպէս թէ ասէր. թողեր՝ զի թշնամիք մեր տարցին զմեզ, և ածցեն առ 'ի զենուլ. և այսու բաժանեցեր զմեզ 'ի մէջ այլևայլ ազգաց, զոմս 'ի մահ, և զոմս 'ի գերութիւն։ Եւ առ 'ի զայս ևս յայտնել, ասէ։

Եւ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ։ Այսինքն՝ ձեռամբ թշնամեաց մերոց՝ ցիր և ցան արարեր զմեզ յայլևայլ աշխարհս հեթանոսաց։ Եւ այս յայտնի տեսանի յորդիսն Իսրայէլի 'ի գերել նոցա յասորեստանեայց և ապա 'ի քաղդէացւոց։ Քանզի նախ առաջին սաղմանասար արքայն ասորեստանեայց եկեալ 'ի վերայ Իսրայէլի, և պաշարեալ զքաղաք նոցա զսամարիա՝ յամին իններորդի ովսեայ արքայի Իսրայէլի, էած 'ի գերութիւն զԻսրայէլացիս 'ի սահմանս ասորեստանեայց, և բնակեցոյց զնոսա 'ի յաղաթ և յաբովր, և զգետովն գովզանայ, և զլերամբք մարաց. (Դ. Թագ. ԺԷ. 3 = 7.) Եւ ապա բազում ամօք և նաբուգոդոնոսոր արքայ բաբելացւոց, և գերեաց զորդիս յուդայ յերուսաղէմէ. (Դ. Թագ. ԻԴ. 11 = 17. և ԻԵ. 1 = 12.) Յորում ժամանակի բազումք յորդւոյն Իսրայէլի ցրուեցան և յեգիպտոս։ 'Ի սոյն ևս կարէ հայիլ այս բան զոր ասէ թէ ընդ հեթանոսս ցրուեցեր զմեզ. Եւ զի բազումք 'ի նոցանէ անարգ գնով վաճառեցան, և բազումք առանց գնոյ, վ̃ա այսորիկ ասէ։

ԺԳ. **Վաճառեցեր զժողովուրդս քո առանց գնոյ։** Բայց **զվաճառել** կրկնակի կարէ իմանալ լինել աստ. մի՝ փոխանակ մատնելոյ. յոր միտս ասի. (ա̃. Թագ. ԻԴ. 7.) * վաճառեաց զնա, (այսինքն զդաւիթ.) ա̃ծ 'ի ձեռս իմ ‖. և ըստ այսմ կամի ասել՝ մատնեցեր ըզմեզ զժողովուրդ քո 'ի ձեռս թշնամեաց մերոց, ո՛չ եթէ առնլով 'ի նոցանէ ինչ 'ի գին, այլ առանց իրիք գնոյ. որ է ասել. իբրև զանարգս և զանպիտանս թողեր զմեզ, և թշնամիք մեր հասեալ 'ի վերայ մեր՝ յափշտակեցին զմեզ, և գերեցին։

Երկրորդ՝ փոխանակ տիրապէս վաճառելոյ, որ է տալ ումեք գնով զիր ինչ. Եւ ըստ այսմ կամի ասել. արարեր՝ զի յափշտակօղք մեր վաճառեսցեն զմեզ 'ի գերութիւն, բայց անարգ և խայտառակ վաճառմամբ. զի վաճառումն լինի գնոյ արծաթոյ, իսկ թշնամիք մեր, վաճառեցին զմեզ առանց գնոյ։

Այլ բառդ **առանց գնոյ**՝ երկու ինչ կարէ ցուցանել.

մի՝ զնուաղութիւն գնոյն . որպէս թէ ասէր , թշնամիք մեր 'ի վաճառելն զմեզ՝ ոչ սպասէին՝ զի գտցի՝ որ տացէ զարժանի գին , և կամ գտցի այլ ոք՝ որ յաւելուցու զգինն , այլ իբրև զանպիտան ինչ առանց բապասելոյ ետուն զմեզ նուաստ գնով ։ Երկրորդ՝ ցուցանէ զպակասութիւն գնողաց . որպէս թէ ասէր . յափըշտակօղք մեր թէպէտև վաճառէին զմեզ , բայց ոչ ոք տայր զգինն ։ Իսկ այս հայի յայն՝ զոր եդաք 'ի վերոյ 'ի բանիցն մովսեսի յասել նորա . * վաճառեօջիք
„ թշնամեաց ձերոց 'ի ծառայս և յաղախնայս՝ և ոչ
„ ոք իցէ որ գնիցէ ‖ . (տես և յեսայ . ծ̃ . 1 , և ծբ̃ . 3 .)
Ասի թէ գին միոյ երբայեցւոյ էր երկու հազար դահեկանի . իսկ 'ի գերութեան՝ ամենևին անարգ գնոյ ։ Ասացի , * երկու հազար դահեկանի ‖ . զի էր միոյ տաղանդի , այսինքն քանքարի , որ առնէ երկու հազար դահեկան . իսկ ըստ կշռոյ՝ հարիւր քսան և չորս լիտր . որպէս գրէ ծործորեցին . ('ի մեկն . մատ . գլ . ժը̃ .) Այլ թէ 'ի վաճառիլ երբայեցւոց զինչ լինէր՝ յայտ առնէ ասելովն ։

Եւ ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ ։ Միութիւն այսր շարադրութեան յայլևայլ ներհական միտս տայ մեզ հայիլ . մի՝ 'ի սաստկութ̃ի աղաղակի , որպէս թէ ասէր . 'ի վաճառիլ մեր՝ սաստկացաւ աղաղակ մեր . իբր զի ամենեքին ահա աղաղակեմք բարձրաձայն . * և ոչ գոյ
„ թիւ աղաղակի մերոյ ‖ . վասն զի ոչ միանգամ է աղաղակել մեր , և ոչ մինս է՝ որ աղաղակէ , այլ առհասարակ յաղաղակ ողբոց գոչեմք և լամք . և այս յիբաւի , զի այսպէս դիպի հասարակօրէն 'ի մտանիլ ժողովրդոց քաղաքի 'ի ձեռս թշնամեաց իւրեանց ։ Յայս միտս տարածէ և լամք″ . զնշանակութիւն այսր բանի , բայց ըստ հոգևորին մեկնելով , առանց գնոյ ասէ վաճառեալ եղաք զիւաց , և անթիւ եղև աղաղակ մարդկան , և այլն ։

Երկրորդ՝ ընդհակառակն՝ այս բան հայի 'ի նուաղութիւն աղաղակի գոչման առ ա̃ծ . որպէս թէ ասէր , 'ի վաճառել քո զմեզ 'ի ձեռս թշնամեաց մերոց՝ ոչ զիմեցաք առ քեզ , որով և ճշմարտիւ կարեմք ասել , թէ ոչ գոյ թիւ աղաղակի մերոյ , այսինքն ոչ գոյ 'ի բերան մեր և ոչ մի աղաղակ աղաչանաց առ քեզ . և

կամ դարձեալ 'ի վաճառիլ մեր՝ ոչ մնաց բարբառ 'ի
բերանս մեր, և ոչ մի․

Երրորդ՝ հայի 'ի պակասութիւն աղաղակի թշնամեացն, և այս՝ եթէ 'ի գերել նոցա, և եթէ յուրախանալ նոցին, և եթէ 'ի վաճառել․ Ըստ գերելոյն կամի ասել․ սակաւ էր աղաղակն՝ որ լինէր վասն մեր 'ի թշնամեաց, կամ թէ սակաւ էր աղաղակ նոցա՝ որք յաղթեցին և գերեցին զմեզ․ որով ցուցանի՝ թէ այնչափ տկարացեալ էին իսրայելացիք, մինչև սակաւ թշնամեաց նոցա անձայն վանել զնոսա, կամ միոյ 'ի թշնամեացն հալածել զհազարս նոցա․ ըստ որում և գուշակեաց մովսէս․ (Բ․ օրին․ լԲ․ 30․) Ըստ ուրախանալոյն կամի ասել․ 'ի վարիլ մեր 'ի գերութիւն՝ այնչափ ուրախացան թշնամիք մեր և այնչափ բարձրացուցին և բազմացուցին զաղաղակ ուրախութեան իւրեանց, մինչև ոչ թուիլ, այսինքն ոչ չափիլ աղաղակի ուրախութեան նոցա վասն մեր։ Կամ ընդհակառակն, 'ի մատնիլ մեր 'ի ձեռս թշնամեաց մերոց, ոչ եղև թիւ աղաղակի նոցա, այսինքն թէ նոքա այնչափ ինչ ոչ աղաղակեցին, կամ ոչ կատարեցին աղաղակաւ զհանդէս ուրախութեան իւրեանց զմէնջ․ զի իբրև անարգ և անպիտան ինչ մատնեցաք 'ի ձեռս նոցա․ և զինչ մարթ էր նոցա 'ի վերայ այսպիսի անարգ գերեաց ուրախանալ։ Ըստ վաճառելոյն կամի ասել․ յորժամ վաճառէին զմեզ թշնամիք մեր, ոչ լինէր 'ի նոցանէ աղաղակ գնոց մերոց, որ է ասել․ ոչ ըստ օրինի համեալ եղաք 'ի վաճառ՝ գոնէ ըստ այնմ վաճառմանն՝ որ լինի 'ի հրապարակի, (այսինքն 'ի մէզաթս,) ուր աղաղակաւ հատանի գին իրիք, և որ յաւելու՝ նա առնու․ ոչ այսպէս եղև ասէ առ մեզ, այլ որ ինչ գին տային մեզ, թշնամիք մեր իսկոյն վաճառէին զմեզ՝ իբրև զվաճառ անպիտան և անարգ․ որով և մեք այնպիսի երևեցաք և առակ նշաւակի եղաք յաչս ամենեցուն․ և զայս յայտ առնէ
յաջորդ բանիւն ասելով․

ԺԴ. **Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց. ծաղր և այպն կատականաց այնոցիկ, որ շուրջ էին զմեօք։**

Դառն է մարդոյ նախատինք լինել առաջի այլոց. բայց առաւել ևս դառն, յորժամ այս պատահի յանկանելոյ նորա 'ի բարձրութենէ փառաց՝ իբր անարժան այնմ. զի այսու ըստ երից գլխոց ծանրանայ նախատինքն, մի՝ ըստ այնմ յորմէ անկաւ, երկրորդ՝ ըստ այնմ որով անկաւ, երրորդ՝ ըստ այնմ յոր անկաւ։ Յորմէ անկաւն՝ էր բարձրութիւն փառաց. որով անկաւն՝ էր անարժանութիւն իւր. իսկ յոր անկաւ՝ է թշուառութիւն։ Ըստ առաջնոյն՝ որչափ փառաւորեալ էր առաջի այլոց, այնչափ անարգ երևի յաչս նոցա։ Ըստ երկրորդին՝ որչափ մեծամեծս խօսէին զնմանէ մարդիկ, այնչափ ծանունս և դժուարալուրս սկսանին խօսել։ Ըստ երրորդին՝ որչափ անփոյթ էին մարդիկ 'ի խօսել չար զնմանէ, այնչափ գրգռին խօսել, մանաւանդ նոքա որք գիտակ էին փառաւորութեան նորա, որպիսի են ազգականք, բարեկամք, և դրացիք։

Արդ թէ քանի փառաւորեալ էին Իսրայէլացիք, և յոր բարձրութիւն 'ի վեր էին առեալ, պատմեաց սաղմոսերգուն յառաջնոյ համարոյ մինչ 'ի տասներորդ համարն. ապա իբրև 'ի մէջ եբեր երկար զանկանել նոցա 'ի բարձրութենէ անտի, դնէ առաջի և զծանրութիւն նախատանացն. և զայս առնէ առ 'ի ցուցանել՝ թէ ոչ միայն արդեամբք չարչարեցան, այլև բանիւք, սմին իրի ասէ։

Արարեր զմեզ նախատինս դրացեաց մերոց։ Այսինքն՝ արարեր զմեզ ենթակայ նախատանաց առ դրացիս մեր, կամ թողեր զմեզ՝ զի լիցուք առարկայ նախատանաց, որով նախատեցին և նախատեն զմեզ դրացիք մեր։ Այս նախատինք յանհնարինս սաստկացուցանէր զցաւ սրտից նոցա, զի լինէր նորոգիչ և գրգռիչ վշտաց ոգւոց նոցա. զի զօրօրինակ աղ արկեալ 'ի սառն՝ սաստկացուցանէ զցաւութիւն նորին, սոյնպէս և նախատինք 'ի սիրտ տառապեալ և ցաւագին։ Նոյն այս ցաւ առաւելու՝ յորժամ 'ի վերայ դառն բանից՝ յաւելեալ լինին և քաղցր բանք այպանօք և կատականօք. զոր և դնէ 'ի յաջորդ հատուածն՝ ասելով։

Ծաղր և այպն կատականաց այնոցիկ, որ շուրջ էին զմեօք.

Բառքդ ծաղր և այպն՝ ըստ նշանակելոյն առեալ՝ դնին աստ փոխանակ ծանակելի և այպանելի լինելոյ, կամ փոխանակ առարկայի ծաղու և այպանաց. Իսկ ըստ նշանակողին առեալ ծաղրն նշանակէ աստ արհամարհական ծիծաղ. Այնպէս և այպն կատականաց նշանակէ արհամարհական բանս 'ի մէջ բերելն զայնպիսի գաւառամտութիւնս որք անարգ և նախատելի ցուցանեն զայպանեալսն.

Իսկ ըստ այսմ կամի ասել. արարեր զմեզ առարկայ ծաղու և կատականաց. այսինքն թողեր, զի որք շուրջ են զմեօք զանազան ազգք, ծաղր արասցեն զմեզ, և այպանելով ասասցեն, ո՛վ թէ զիարդ փառաւորեալ էք 'ի ձեռս թշնամեաց ձերոց և բարձրացեալ 'ի վաճառ անարգ, և այլն. ո՞չ դուք այն ազգ էիք, որք պարծէիք յա̃ծ և զօրացեալ էիք նովաւ 'ի վերայ այլոց ազգաց. և զի եղև, զի մատնեցայք յայդպիսի փառաւորութիւն. եւն. Այսպիսի բանք այպանաց առաւել դառն են մարդոյ քան զնախատինս, զի զվիճակ թշուառութեան նորա զոր ունի՝ դառնացուցանեն վիճակաւ երջանկութեան զոր չունի, ևս և զբարեբաղդութիւն զոր չունի, մինչ 'ի չարաբաղդութիւն զոր ունի.

Այլ աստ գիտելի է՝ զի բանք այպանաց, ընդ նմին և նախատանաց թէպէտ և 'ի բացակայութե̃ կարեն լինել, բայց հասարակօրէն 'ի մօտակայութե̃ անձին լինին. և յայս հայելով եդ սաղմոսերգուն զայդ բան. իսկ 'ի հեռակայութիւն հայելով՝ յաւելու ասել.

ԺԴ. Արարեր զմեզ առակս հեթանոսաց. 'ի շարժել գլուխս ժողովրդոց.

Այս այն է՝ զոր ասաց Մովսէս. (բ. օրին. իը. 31.) * Եղիցես յառակ և 'ի ցոյց և 'ի զրոյց 'ի մէջ ամ̃ ազգաց՝ յորս տանիցի զքեզ տէր անդր ||. (տես և 'ի երեմ. իը. 9. և ողբ. բ. 15. և գ. 45. 46. 61. յորս այլովք բառիւք կրկնի այս բան.) Դ սոսս բառդ առակ դնի փոխանակ այնպիսի խօսից՝ յորում օրինակ բերի իմն առ 'ի ցոյց այլոց իրիք. Արդ քանզի 'ի գերել և 'ի թշուառանալ իսրայէլեայց, հեթանոսք՝

որք գիտէին զորպիսութիւն նոցա՝ յառակ առնուին զանցս աղէտից նոցին, վասն որոյ ասէ.

Արարեր զմեզ յառակս հեթանոսաց. Այսինքն առակեր՝ զի հեթանոսք ՚ի խօսելն զնեղութեանց ազգի իւրեանց, կամ օտար ազգի, կամ զի և իցէ թշուառութեանց, զթշուառութիւն մեր յառաջ բերցեն թշուառութեան իւրեանց ասելով. աւասիկ յոր թշուառութիւն հասին եբրայեցիք, տեսէք թէ յինչ աղէտս մատնեաց զնոսա ա̃ծ նոցա ՚ի հեռանալ նոցա ՚ի նմանէ. ե̃ն.

Մ՛արթ է աստ առակս իմանալ և զնախատելի զոյն, կամ նշաւակ նախատանաց լինելն. իբր զի հեթանոսք խօսէին զիսրայելացւոց զայնպիսի բանս, որով նշաւակեալ և թշուառացեալ ցուցանէին զնոսա. Նաև զոր բերանով խօսէին, զնոյն և շարժմամբ գլխոյ իւրեանց ցուցանէին. ամին իբր յարէ զինի, և ասէ.

Ի շարժել գլխոյ ժողովրդոց (՚ի վերայ մեր.) Այս շարժումն գլխոյ ըստ երից կարէ իմացեալ լինել. մի՝ ըստ սպառնալոյ. յոր միտս ասաց եսայի զթագաւորէն ասորեստանեայց. * գլուխ շարժեաց ՚ի վերայ քո ,, դուստր երուսաղեմի ‖. (դ. թագ. ժթ. 21.) Երկրորդ՝ ըստ ծաղր առնելոյ կամ արհամարհելոյ. յոր միտս ասի. (՚ի սաղ. իա. 7.) * արհամարհէին զինև, ,, խօսէին շրթամբք, և շարժէին զգլուխս իւրեանց ‖. Երրորդ՝ ըստ զարմանալոյ. յոր միտս ասաց երեմիա. * շրջէին՝ շարժէին զգլուխս իւրեանց ՚ի վերայ դստեր ,, սիոնի ‖. (ողբ. 16.) Արդ ըստ երիցս ըստ այսցիկ գլուխ շարժէին ժողովուրդք ՚ի վերայ իսրայէլի. ոմանք սպառնալով, ոմանք ծաղր առնելով, և ոմանք զարմանալով ՚ի վերայ այնպիսի թշուառութեանց, յորս ըմբռնեցան ՚ի զանազան ժամանակս, որով և եղեն նշաւակեալք, և ամօթով պաշարեալք. ըստ որում յայտ առնէ սաղմոսերգուն ՚ի յաջորդ համարն ասելով.

ԺԷ. Զօր ամ նախատինք իմ առաջի իմ են. և ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս։

ԺԸ. Ի ձայնէ նախատողէն և չարախօսէ. յերեսաց թշնամւոյն և հալածչէ։

Ի մասնէ իսրայէլացւոց 'ի հալածանս և 'ի գերութի, յերրեակ նախատինս անկան. մի՝ ըստ նիւթոյն, ըստ որում այն գերութիւն նոցա էր նիւթ նախատանաց, որով եղեն նախատելի. երկրորդ՝ ըստ խօսից, ըստ որում նախատական բանք առեալ լինէին նոցա յայլոց. երրորդ՝ ըստ գործոց, այսինքն ըստ ամօթոյն, ըստ որում 'ի նախատելոյ այլոց՝ զնախատելի գոլ իւրեանց տեսանելով ծնանէր 'ի նոսա գործ նախատանաց, այսինքն ամօթ լինել յինքեանս։ Զերեսին զայսոսիկ ես յիշէ աստ սաղմոսերգուն. բայց այլով կարգաւ. և նախ ըստ առաջնոյն ասէ։

Զօր ամ նախատինք իմ առաջի իմ են։ Նախատինք իմ ասելով իմանայ զնիւթն նախատանաց որ է նախատելի գոլն, զի զայդ ցուցանէ գերանունդ իմ, որպէս թէ ասէր, ցորչափ 'ի թշուառութեան եմ և 'ի գերութեան ոչ երբէք հեռանայ յաչաց իմոց նախատելի գոլս իմ, և տեսանեմ զի արժանապէս նախատիմ, որովհետև անարժանութեամբ իմով մերժեցայ 'ի քաղցր խնամոց քոց. որով և պատեաց զիս ամօթ մեծ. և առ այս յարէ ըստ երրորդին, և ասէ։

Եւ ամօթ երեսաց իմոց ծածկեաց զիս։ Այսինքն այնչափ առաւելաւ ամօթ իմ, մինչև ծածկել զիս. որ է ասել. յոյժ սաստկացաւ ամօթ իմ։ Իսկ ապա և ըստ երկրորդին ասելով.

ԺԸ. Ի ձայնէ նախատողէն և չարախօսէ։ Կամի ասել, զոր մինչդեռ ասացի, այն պատահեաց ինձ 'ի ձայնէ նախատողին, այսինքն 'ի լսելոյ իմ զձայն նախատական բանից զորս ասէին առ իս առաջի այլոց նախատիչք իմ. և կամ 'ի լսելոյ զչարախօսութեան բանս զորս ասէին զինէն առ այլս չարախօսք իմ։ Այս կամելով ցուցանել. թէ յորմէ եղև այս՝ յարէ զինի և ասէ։

Յերեսաց թշնամւոյն և հալածչէ։ Ուր բառդ յերեսաց՝ եւ րակի կարէ խնդիր լինել. մի՝ երբ խնդիր գործոց նախատողին եւ չարախօսին. որպէս թէ ասէր. Նախատէին զիս եւ չարախօսէին զինէն յերեսաց թշնամւոյն եւ հալածչի, այսինքն վասն այսորիկ, զի մատնեցայ ես 'ի ձեռս թշնամւոյ իմոյ եւ հալածչի։ Երկրորդ՝ երբ խնդիր նախընթաց համարոյն. եւ ըստ այսմ զօրութեամբ իմացեալ լինի շաղկապդ եւ. որպէս թէ ասէր, ամօթ ծածկեաց զիս 'ի ձայնէ նախատողաց եւ չարախօսաց. եւս եւ յերեսաց թշնամւոյն եւ հալածչի. որ է ասել. 'ի բռնանալ թշնամւոյն եւ հալածչին 'ի վերայ իմ, եւ 'ի նախատել եւ 'ի չարախօսել նոցա զիս՝ ամօթ ծածկեաց զիս։ Երրորդ՝ երբ խնդիր ամենայնի՝ զոր ասաց. որպէս թէ եղեալ էր. Նախատինք իմ հանապազ առաջի իմ են, եւ ամօթ պաշարեաց զիս վասն բանից՝ զորս խօսէին զինէն նախատողք եւ չարախօսք. եւ այս ամենայն եհաս յիս յերեսաց թշնամւոյ եւ հալածչի իմոյ։

Հոգեւորապէս, այս ամօթ՝ զոր յիշէ աստ մարգարէն կարէ հայիլ եւ 'ի յամօթն յետին. որոյ յիշատակն ահարեկ առնէ զմարդ եւ ընկղմէ 'ի տրտմութիւն։ Աստի եւ 'ի սոյն ակնարկելով սարգիս շնորհալի. ('ի մեկն. ա̄. յովհ. բ̄. 28. Ճառ դ̄.) գրէ այսպէս. յորժամ ասէ. * ծածուկքն յայտնին ('ի դատաստանի
„ ատեանն) եւ գաղտնիքն լուսաւորին, եւ ամենայն ինչ
„ մերկապարանոց կայ առաջի նորա. եւ ոչ միայն նո-
„ րա՝ որ զանյայտսն տեսանէ, այլ եւ ամենայն տիեզե-
„ րաց. որքան ամօթ յայնժամ, որքան պատկառանք
„ ոչ պաշարեն զարժանաւորսն ամօթոյ. թերեւս զայ-
„ սոսիկ տեսեալ սաղմոսերգիչն ասաց. զոր ամենայն
„ նախատինք իմ առաջի իմ են, եւ ամօթ երեսաց ի-
մոց ծածկեաց զիս ‖։

Մարգարէն ցաստ 'ի յոգնակի դէմս խօսեցաւ. սոյնպէս եւ աստի մինչեւ 'ի վերջն, իսկ յերկուսին համարս յայսոսիկ եզակի եդ զբանն. զի այս ասացուածք հային ըստ յարմարութեան եւ 'ի դէմս ք̃սի. եւ ըստ այսմ նախատանօք իմացեալ լինին նախատելի մեղք մարդկան, զորս առաջի իւր ունէր հանապազ. իսկ ամօթով իմացեալ լինի կրել նորա զայնպիսիս, որք ծնանին զամօթ ծանր, եւ զի ոչ ծանր համարեցաւ նա, մի

այսօրիկ ասէ առաքեալն. (եբր. ժբ. 2.) * արհամար-
,, հեաց զամօթ ‖. Որ զարմանալ արժան է, զի թէպէտ և ամենայն տանջանաց տարաւ Քս, բայց առաքեալն միայն զամօթոյն ասէ թէ արհամարհեաց. զի ծանր եղև նմա այս և մեծ. մինչև ծածկել զնա, և գրեթէ ըստ համարման խօսելով՝ վասն մեծութեան ոչ տալ նմա զգալ զայլ տանջանսն. որոյ աղագաւ ասէ. ('ի սաղ. լդ. 15.) * ժողովեցան յիս տանջանք և
,, ես ոչ ծանեայ ‖. այսինքն թէ վասն մեծի ամօթոյ ոչ ծանեայ զմեծութիւն ցաւոցս. (եթէ կամիս տես զայսմանէ 'ի գիրքն կոչեցեալ յաւիտենական Ճշմարտութիւն 'ի վերջն. երես 498. և 499.) Վասնզի այժմ մարգարէն յայտ առնէ՝ թէ զիարդ 'ի մամուլ իսրայելացւոց յայնժամ վիշտս՝ ոչ գտան անհաւատարիմ առ Ած. սմին իրի յարէ զկնի, և ասէ.

ԺԹ. Այս ամենայն եկին 'ի վերայ մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք. և ոչ ստեցաք ուխտի քում. և ոչ դարձաւ յետս սրտիւք մերովք.

Յորժամ յաճախեն վիշտք 'ի վերայ մարդոյ՝ թէպէտ և զգաստացուցանեն զնա, բայց երբեմն ընդ հակառակն վտանգեն ևս. և այս՝ կամ 'ի միտս, կամ 'ի կամս, և կամ 'ի գործս. Իսկ քանզի յանհնարին վիշտս պաշարեցան իսրայելացիք 'ի գերել իւրեանց՝ կարէին յերեսին 'ի սոսա ևս վտանգիլ. բայց ըստ երիցն ևս ցուցանէ մարգարէն անկործան կացեալ նոցա. և նախ հայելով 'ի ճանաչումն մտաց ասէ.

Այս ամենայն եկին 'ի վերայ մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք. Կամի ասել. զոր միանգամ եդի առաջի՝ այն ամենայն վիշտ եկին 'ի վերայ մեր. և մեք 'ի կրել մեր զայն՝ ոչ մոռացաք զքեզ, այսինքն ոչ թողաք զքեզ 'ի մտաց. որ է ասել, ոչ փոխեցաք զճանաչումն մտաց մերոց՝ զոր ունէաք զքէն, և ոչ ասացաք, թէ որովհետև եթող զմեզ Ած, մեք ևս թողցուք զնա՝ և յարեսցուք յածս օտարս. Հայելով ապա և 'ի գործս ասէ.

Եւ ոչ ստեցաք ուխտի քում. Այսինքն ոչ գործեցաք ինչ ընդդէմ ուխտի քոյ, կամ ոչ թողաք զուխտ քոյ՝ զոր եդեր ընդ մեզ 'ի ձեռն մովսէսի՝ յորժամ ետուր մեզ զօրէնս, և ոչ թողլով զայն՝ ոչ ստեցաք ընդդէմ այնմ. իբր զի զոր յանձն առաք և խոստացաք, ոչ հանաք սուտ զայն մեր խոստումն։ Հայելով ասա և ՚ի կամս ասէ։

Եւ ո՛չ դարձաք յետս սրտիւք մերովք։ Սրտիւք ասելով կամի ասել, կամօք մերովք, որպէս թէ ասէր. ոչ դարձուցաք զկամս մեր յետս ՚ի քէն։

Այլ գիտելի է՝ զի այս բանք ասին ՚ի դիմաց նոցա, որք էին արդարք, և ոչ ՚ի դիմաց ամբարշտաց։ Արդ արդարք ՚ի խօսիլն առ ա͞ծ՝ երբեմն յանդիման առնեն զինքեանս կերպարանօք տկար և մեղաւոր անդամոց եկեղեցւոյ. որպէս արար Դանիէլ առ գերութեամբն բաբելացւոց. յասէն. (դան. թ. 5.) * մեղաք անօրինեցաք ‖. ևն. ՝Նոյնպէս և երեք մանկունքն, (դան. գ. 28 = 33.) Եւ մակաբայեցիք. (բ. մակ. է. 18. ևն.) Զսոյն առնէին և սուրբք ՚ի մարտիրոսաց և ՚ի սուրբ հարց, զյանցանս այլոց անդամոց եկեղեցւոյ՝ իբրև զիւրեանց առաջի դնելով. և այս ըստ օրինակի լեզուի, որ ՚ի խոստովանիլն՝ առաջի դնէ զմեղս իբրև զիւր, թէև ինքն չէ գործեալ զայն, այլ այլ անդամք։ Եւ ընդհակառակն երբեմն յանդիման առնեն արդարք զինքեանս կերպարանօք սրբոց և կատարելոց. որպէս աստ։

Եւ դարձեալ՝ այս բանք ասին ՚ի դիմաց իսրայէլի՝ ոչ յանհատսն հայելով, այլ ՚ի հաւաքումն ազգին՝ յորում յանդիման լինէր եկեղեցի ա͞յ։ Զի յայտ է թէ ըստ անհատին բազմութիւնք յոյժ իսրայէլացւոց մոռացան զա͞ծ, և ատեցին ուխտի նորա առ գերութեամբն բաբելացւոց, և յայլ ժամանակս. (որպէս յայտ է ՚ի սաղ. ՀԷ.) յոր միտս ասաց. * բարկացուցին զիս օտարոտւովք . . . զոհեցին դիւաց և ոչ ա͞յ . . . մոռացար զա͞ծ զկերակրիչ քոյ ‖ ևն. (բ. օրին. լբ. 16.)

Բայց ազգն իսրայէլի ըստ որում էր եկեղեցի ա͞յ, ոչ մոռացաւ զա͞ծ, և ոչ եթող զուխտ նորա. և այս յայտնի տեսանի նաև յայն՝ զի յասել եղիայի առ ա͞ծ. * Թողին զուխտ քո որդիքն իսրայէլի, զսեղանս քո
,, քակեցին, և զմարգարէս քո կոտորեցին սրով. ես
,, միայն մնացեալ եմ ‖. ևն. (գ. թագ. ժթ. 14.) պատասխանի ետ ա͞ծ. * Թողի ինձ յիսրայէլէ եօթն

„ հազար արանց, զա՟մ՝ որոց ոչ իցէ կրկնեալ ծունր
„ բահաղու, և զա՟մ բերան՝ որոյ ոչ իցէ պագեալ զնա։ (ժԹ. 18.) Եւ այս՝ յայնպիսի ժամանակի՝ յորում գրեթէ մերժեալ երեւէր ազգն իսրայէլի յողորմութենէն աստուծոյ.

Ըստ այսմ և 'ի գերիլ նոցա 'ի մէջ հեթանոսաց, 'ի տառապիլ և 'ի տուայտիլ նոցա 'ի նեղմունս, և 'ի յորդորիլն 'ի չարն, ազգն ըստ որում յանդիման առնէր զեկեղեցի ա՟յ, ոչ եթող զա՟ծ, թէ և երեւէր թէ ա՟ծ թողեալ իցէ զնոսա. Եւ զայսոսիկ յայտ առնէ սաղմոսերգուն յերկուսին յաջորդ համարսն. և նախ վասն թողեալ երեւելոյն յա՟յ ասէ.

ի. Դարձուցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց քոց. խոնարհ արարեր զմեզ 'ի տեղի չարչարանաց. և ծածկեցին զմեզ ստուերք մահու.

Եռակի պատժէ ա՟ծ զմարդն յաստի կեանս, մի՝ յորժամ մատնէ 'ի նեղութիւնս. և այս՝ հայելով 'ի տկարութիւն մարդոյ առ ծանր. երկրորդ՝ յորժամ 'ի նեղութեան անդ ոչ ցուցանէ զպաշտպանութիւն կամ զողորմութիւն իւր, և այս է ծանրագոյն. երրորդ՝ յորժամ թողու մատնիլ 'ի մահ ըստ հոգւոյ, կամ ըստ մարմնոյ առ 'ի պատիժ յանցանացն, և այս է ամենածանր. Զերեսին զասս նշանակէ մարգարէն 'ի սմին բանի այլով կարգաւ, և նախ զերկրորդն դնէ ասելով.

Դարձուցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց քոց. Որ շաւղօք իմացեալ լինի ընթացք կենաց մարդոյ, կամ նոյն իսկ կեանքն. իսկ ճանապարհօք ա՟յ բազում ինչ մարթ է իմանալ. բայց աստ դնի փոխանակ գործոց պաշտպանութե՟ նորա, կամ փոխանակ խնամոց ողորմութե՟ նորա, և կամ փոխանակ մասնաւոր նախախնամութե՟ և կառավարութեան. և որք կոչին ճանապարհ (փոխանունութեան ձեւով.) ըստ որում ձեռնտու լինին 'ի ճանապարհ փրկութե՟, կամ հորդեն ճանապարհ ազատութեան. կամ զի լինին պատճառ ելանելոյ 'ի նեղութեանց. Եւ ըստ այսմ առեալ կամի ասել. 'ի մատնել քոյ զմեզ 'ի նեղութիւն՝ դարձուցեր կամ յետս կացուցեր կամ հեռացուցեր զշաւիղս մեր. այսինքն զընթացս կենաց մերոց կամ զկեանս մեր 'ի խնամոց ողորմութե՟ քոյ. իբր զի ոչ ցուցեր մեզ զխնամս պաշտպանութե՟ քոյ, կամ զճանապարհս փրկութե՟ քոյ, որով լինէր մեզ ազատիլ 'ի նեղութե՟ց մերոց։

Մարթ է աստանօր շաւղօք իմանալ զգործս. իսկ ճանապարհօք իմանալ զպատուիրանս ա՟յ։ Եւ ըստ այսմ թէպէտև ոչ դարձուցանէ ա՟ծ զշաւիղս մեր 'ի պատուիրանաց անտի, բայց ըստ կրկին մտաց ասի դարձուցանել. մի՝ յորժամ յոչ օգնել նորա մեզ գործել ըստ պատուիրանաց իւրոց վասն չարութե՟ մերոյ՝ պատահի մեզ խստանալ և խոտորիլ անտի. և այսու պատճառաւ կարէ ասիլ՝ թէ դարձուցանէ զշաւիղս մեր 'ի ճանապարհաց իւրոց։ Երկրորդ՝ յորժամ 'ի յաճախել նորա 'ի մեզ զբարիս, և յոչ խրատելն, այսինքն յոչ պատժելն զչար գործս մեր՝ խստանամք 'ի գործել զմեծագոյն չար. և այսու առթիւ ևս ասի դարձուցանել նմա զշաւիղս մեր 'ի կամաց իւրոց. յոր միտս ասի՝ թէ խստացոյց ա՟ծ զսիրտն փարաւոնի։ Աստի ասէ եզնիկ կողբացի. (գլ. խա.) * ասէն ա՟յ՝ թէ
,, Ես խստացուցի (զսիրտն փարաւոնի) այնպիսի ինչ
,, է՝ որպէս թէ ոք յորժամ զընկեր իւր կամ զծառայ
,, մեծարիցէ. և նա հպարտացեալ արհամարհիցէ զմե-
,, ծարիչն. և նա ասիցէ, թէ զի գնեմ նմա մեծս,
,, ես անձամբ արարի ինձ թշնամանս. զի ածի 'ի պա-
,, տիւ զանարժանն. նոյնպէս և զա՟յ իմանալի է, ես նե-
,, րելով իմով եղէ պատճառ խստանալոյ նորա. զի ոչ
,, յառաջնումն սատակեցի զանդրանիկսն նորա..։ Աս-
,, տի յայտ է թէ երկայնմտութիւն ա՟յ եղև պատճառ
,, խստութեան սրտին փարաւոնի, այնու զի զվերջին
,, հարուածսն յառաջնումն ոչ էած 'ի վերայ նորա։
,, Բայց զի չէր քարացուցեալ ա՟յ զսիրտն փարաւոնի,
,, այնու իմանալի է՝ զի մերթ հաւանէր արձակել զժո-
,, ղովուրդն, և մերթ չհաւանէր ‖։ Մասամբ ինչ ըստ սմին պարտ է իմանալ և յառաջիկայդ՝ թէ յինչ միտս ասի դարձուցանել ա՟յ զշաւիղս մեր։

Գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) զբառդ դարձուցեր՝ ընթեռնու խոտորեցուցեր, և համեմատելով ընդ բանիցն եսայեայ՝ գրէ այսպէս. յասելն, * ընդէր մո-
,, լորեցուցեր զմեզ տէր 'ի ճանապարհաց քոց և խս-

,, տացուցեր զսիրտս մեր չերկնչել 'ի քէն. կամ վասն
,, երկայնմտութեանն ասէ զխստացուցերն, զի ոչ վաղ-
,, վաղակի պատժեցեր. ուստի 'ի ծուլութի՟ անհոգու-
,, թեան հասաք. այն է խստացուցերն. կամ վասն
,, պատժոյն զոր ածեր, սարտուցեալ խրատեաք, և ես
,, հեռացաք. որպէս սաղմոսէ դաւիթ թէ խոտորեցու-
,, ցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց քոց. այսինքն
,, մերժեցեր զմեզ յօտար երկիր, ընկեցեր զրկեցեր
,, զմեզ յօրինացն և 'ի հրամանացն օգտից. խոտեցեր
,, զծառայութիւն մեր. և չկամիս առնուլ 'ի մէնջ ըղ-
,, պաշտօն ||: Խօսի ապա մարգարէն և զնեղութեանցն՝ որք հասին 'ի նախակարգեալ առաջին տեսակ պատժոց, և ասէ.

Խոնարհ արարեր զմեզ 'ի տեղի չարչարանաց: Բառդ տեղի՝ եթէ ասցի աստ նիւթապէս փոխանակ իրական տեղւոյ, նշանակէ զտեղին զայն՝ ուր 'ի տառապանս մատնեցան իսրայէլացիք. որով և միտ բանին լինի այս. բազում չարչարանօք նկուն արարեր զմեզ 'ի տեղւոջ անդ՝ ուր գերեցաք. և մանաւանդ ևս երևեցուցեր զմեզ առաջի այլոց ազգաց, յորս ցրուեցաք.

Իսկ եթէ բառդ տեղի ասցի փոխաբերաբար, ցուցանէ զկրումն նեղութեանց կամ զգումարումն չարչարանաց. զի որպէս տեղի վաճառաց կոչեմք զայն, ուր հաւաքին բազում վաճառք. այսպէս և սաղմոսերգուն փոխաբերութեամբ իմն տեղի չարչարանաց կոչէ զայն վիճակ նեղութե՟ յորում հաւաքին բազում չարչարանք: Եւ ըստ այսմ կամի ասել. մատնելով զմեզ 'ի բազում ծանր նեղութիս խոնարհ արարեր զմեզ. այսինքն նուաճեցեր զմեզ, և 'ի խորս յետին նուաստութե՟ և անձկութե՟ իջուցեր զմեզ, և արարեր զմեզ նախատելի ամենայն ազգաց: Եւ զի յայսմ ամի ոչ եցոյց 'ի նոսա զմասնաւոր այցելութիւն իւր, վասն այսորիկ եհաս առ նոսա ամենամեծ թշուառութիւն, որ է երրորդ տեսակ պատժոյն, զոր և առաջի դնէ ասելով.

Եւ ծածկեցին զմեզ ստուերք մահու: Աւր շաղկապս և դնի ըստ հետևութեան. ըստ այնմ՝ զի որ անկանի 'ի գուբ խոր՝ ստուերք ծածկեն զնա, վասն այնորիկ յետ ասելոյ թէ իջուցեր զմեզ 'ի խորս յետին անձկութե՟՝ ըստ պատշաճի հետևի ասել. ծածկեցին զմեզ ըստուերք մահու։ (Այլ վասն նշանակութեան ստուերաց մահու տե՛ս 'ի սաղ. իբ̃. 4։) Իսկ աստ գնի փոխանակ խաւարման հոգւոյ, կամ փոխանակ յետին վտանգի մահուան հոգւոյ և մարմնոյ, որք օրինակին 'ի ստուեր մահու. զի ոչ են մահ, այլ պատկեր մահու, եւս և վտանգ մահու, և կամ օրինակին 'ի վիճակ գերեզմանի, ուր է ստուեր մահու։ Այս ըստ այսմ կամի ասել. 'ի մտանել մեր յանհնարին նեղութիւնս հալածանաց և գերութեան՝ պաշարեցաք 'ի նոսա իբր 'ի գերեզմանս, յորս ծածկեցին զմեզ ստուերք մահու, այսինքն պաշարեցին զմեզ խաւարմունք հոգւոյ, և պատեցին զմեօք վտանգք մեռանելոյ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։

Ստուերս մահու իմացեալ լինի եւս և ո՛ և իցէ ծանր նեղութ̃ի և վիշտ. զի որպէս ստուերն զկնի ընթանայ մարմնոյ, սոյնպէս և 'ի պարտաւորիլ մարդոյ 'ի մահ յանիծիլն անդ թէ * մահու մեռանիցիս ||, զհետ եկին պարտաւորութեան մահու զանազան նեղութիւնք և վիշտք. ուստի և ստուեր մահու ասացան։ Այս ըստ այսմ փոխանակ ասելոյ՝ ծածկեցին զմեզ նեղութիւնք՝ ասէ. * ծածկեցին զմեզ ստուերք մահու ||։

Հնար է զառաջիկայ զայս բնաբան մեկնել նաև ըստ իրական բաղդատութե. որպէս թէ եղեալ էր. մատնելով զմեզ 'ի բաբելոն՝ հեռացուցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց տաճարի քո. որ է ասել. մատնեցեր զմեզ յօտար երկիր. վասն որոյ և ոչ եմք կարող գնալ 'ի տաճար քո. զի փակեալ եմք յերկրի անդ իբր 'ի գերեզմանի, յորում տեսանի ստուեր մահու։

Ոմանք՝ որք զայս սաղմոս 'ի վերայ մարտիրոսաց մեկնեն, բառիւս ստուեր մահու՝ իմանան աստ զմահ մարտիրոսաց. զի այն ոչ էր վասն նոցա մահ, այլ գրեթէ ստուեր մահու, և պատճառ կենաց։

Վարդան եւ զայս միւս առեալ՝ մեկնէ 'ի վերայ առաքելոց. զորոց զշաւիղն ասէ դարձոյց ա̃ծ 'ի հին ճանապարհաց իւրոց այսինքն 'ի հին օրինաց. և ուղղեաց գնալ 'ի տեղի չարչարանաց այսինքն 'ի սահմանս հեթանոսաց՝ քարոզել խոնարհութ̃ի զաւետարանն քն̃ի. և դարձեալ խոնարհ արար զնոսա յերուսաղէմ, որ եղև տեղի չարչարանաց տն̃ի, և հուսկ յետայ ստուերօք մահու, այսինքն չարչարանօք էառ զնոսա։

Լամբ". յայլ իմն միտս վերածէ զբառդ ստուեր մահու. և՝ ասէ թէ անխիղճ մեղանչելն է մահ. իսկ 'ի սադրելոյ չարին տկարութեամբ մեղանչելն է ստուեր մահու. և զի մարդիկ հասարակօրէն այսպէս տկարանան, վասն այնորիկ ասէ, * ծածկեցին զմեզ ստուերք մահու ||։

Այլ ոմանք ընդհակառակն մեկնեն զայս բնաբան հանդերձ բացասական մասնկաւս ոչ. երբ զի զայն մակբայ որ դնի 'ի նախընթաց համարն՝ կրկնեն զօրութեամբ և 'ի սկզբան այսր համարոյ, և ընթեռնուն այսպէս. * ոչ դարձաք սրտիւք մերովք, զի ոչ դար-
" ձուցեր զշաւիղս մեր 'ի ճանապարհաց քոց. խոնարհ
" արարեր զմեզ ||. եւն. որպէս թէ ասէր. ոչ խոտորեցուցեր զընթացս կենաց մերոց յուղիղ ճանապարհաց քոց։ Այդ մեկնութիւն ուղիղ է արդարև, բայց ոչ երևի յարմար։

Որպէս և դիցի՝ դիտաւորութիւն բանին հայի յերկու ինչ, մի 'ի ցուցանել՝ թէ յանհնարին վիշտս էին մատնեալ. և մի ևս՝ 'ի ցուցանել, թէ յայնպիսի վիշտս գոլով՝ յորս երևէին իբր թողեալ յայ, ոչ յետս կացին 'ի պաշտելոյ զնա։ Զերկրորդս զայս յայտնագոյն ևս առաջի դնէ մարգարէն 'ի յաջորդ բանսն, և ասէ։

իա. Եթէ մոռացեալ էաք մեր զանուն այ մերոյ. եւ համբարձաք զձեռս մեր առ աստուածս օտարս։

իբ. Ապաքէն այ խնդրէ զայս. զի նա գիտէ զգաղտնիս սրտից մերոց։

Ի վերոյ ('ի համարն ժը.) ասաց արձակապէս. * Այս ամենայն (նեղութի) եկն 'ի վերայ մեր, և մեք զքեզ ոչ մոռացաք ||. եւն. Իսկ աստ զնոյն կրկնէ պայմանաւ իւիք, այսինքն դնելով, զԵթէն, յաւելն։

Եթէ մոռացեալ էաք մեր զանուն այ մերոյ. եւ համբարձաք զձեռս մեր առ աստուածս օտարս։ Լաւս թէ՝ սաստկացուցանէ աստ զզօրութիւն նշանակութեան բանին, որպէս թէ ասէր. համարձակութբ և վստահութբ ասեմք, թէ յայսչափ նեղութիս մեր ոչ եմք մոռացեալ զանուն այ մերոյ, և ոչ եմք յձեալ զձեռս մեր առ ածս օտարս, այսինքն թէ ոչ եմք տարածեալ զձեռս մեր աղօթիւք առ օտար ածս որպէս դնէ Նարեկացին. ('ի բանն Կ.) կամ մատուցեալ ինչ առ նոսա ձեռօք մերովք, և կամ պաշտեալ զնոսա փոխանակ այն մերոյ ։ Եթէ արարեալ իցէ մեր այսպէս՝ ոչ կարեմք ծածկել յայ. զի նա քննէ և գիտէ զամենայն. և առ այս յարէ ։

իբ. Ոչ ապաքէն ած խնդրէ զայդ ։ Ուր բառդ ապաքէն կամ ըստ եբրա"․ Հարց. զօրութք յարաբերէ ընդ իւր զասացուած ինչ՝ որպէս թէ եղեալ էր, թէ և կարծեսցի թէ չիցէ այնպէս, որպէս ասացի, սակայն ած քննէ՝ խնդրելով, թէ իցէ այս այսպէս, այսինքն իցէ՞ ճշմարիտ այն զոր ասացի թէ ոչ եմք մոռացեալ մեք զնա, և թէ վասն իւր կամք 'ի նեղութեան ։

Կամ՛՛. դնէ թէ խնդրեն այ զայս՝ իցէ պահանջել նորա 'ի մէնջ զուղիղ հաւատս և զմաքուր վարս ։ Բայց դիտումն բանին հայի յայն՝ զոր եդաք. այսինքն է խնդրել, թէ իցէ՞ ճշմարիտ. յոյր սակս և յաւելու իբր պատճառ թէ 'ի խնդրելն՝ գտանէ, զի նա գիտէ զամենայն. վասն զի ասէ ։

Զի նա գիտէ զգաղտնիս սրտից մերոց ։ Այսինքն թէ նա քննէ զամենայն գաղտնի խորհուրդս մտաց, և զամենայն շարժմունս կամաց. զի նա ինքն է տէր ոչ միայն մտաց և կամաց, այլև գաղտնեաց նոցին, այսինքն գաղտնի խորհրդոց և շարժմանց նոցա ։ Աստի և նա ինքն որ գիտէ, վկայէ ասացելոցս ։ Զայս եդեալ յաւելու ասել զառաւելագոյնն, իբր թէ ոչ միայն ոչ եմ մոռացեալ զած, այլև վասն նորա կրեմ զամենայն նեղութիւնս, եւս և զմահ իսկ. սմին իրի յարէ զկնի և ասէ ։

իգ. Վասն քո մեռանիմք զօրհանապազ. համարեցաք որպէս ոչխար 'ի սպանդ ։

Զայս վայր երեք ինչ եդ մարգարէն 'ի դիմաց խուացելացւոց. մի՝ (յառաջնոյ համարոյ մինչև 'ի 10 համարն) այն թէ քանի մեծամեծ սքանչելիս արար ած առ հարս նոցա. որով և ցուցաւ առ նոսա ճշմարիտ ած ։ Երկրորդ՝ ('ի 11 համարոյ մինչ 'ի 18.) թէ որպէս մատնեաց զնոսա ած՝ 'ի նեղութիւնս, եւն ։ Երրորդ՝ ('ի

19 համարոյ մինչև ցաստ) թէ զիա՛րդ յայսմ ա՟մի ոչ թողին նոքա զա՟ծ ։ Յերեսին յայտնիկ հայելով ցուցանէ՝ յայսմ ամենայնի մեռանիլ վասն ա՟յ ․ քան զոր աւելի ինչ չէր կարօղ առնել ՚ի ցոյց հաստատութե՟ ասացելոց իւրոց, մանաւանդ ՚ի ցոյց հաստատութե՟ պաշտելոյ զա՟ծ և սիրելոյ զնա ․ սմին իրի ասէ ։

Վասն քո մեռանիմք զօրհանապազ․ համարեցաք որպէս ոչխար ՚ի զենման ։ Բառդ մեռանել ոչ դնի աստ փոխանակ բնական մահու, այլ փոխանակ յօժարման կամաց ՚ի մահ ․ զի բնականն ոչ լինի զօրհանապազ, այլ միանգամ ․ իսկ յօժարականն կարէ լինել հանապազ ․ կամ դարձեալ՝ մեռանիլ դնի ոչ այնչափ փոխանակ մահուամբ վճարելոյ ՚ի կենաց, որչափ փոխանակ ՚ի վտանգ մահու անկանելոյ, եւ և փոխանակ անտանելի վշտօք տառապելոյ, յոր միտս յառաջ բերէ զայս բան պօղոս առաքեալ առ հռովմայեցիս ․ (Ը․ 36 ․) Յայս միտս առեալ զմեռանիլն՝ կամի ասել ․ մեք որք մտեալ եղաք ՚ի նեղութիւնս, գրեթէ հանապազ մեռանիմք, և այն՝ բազմապատիկ օրինակաւ ։ Մեռանիմք նախատանօք, որով այպն առնեն զմեզ դրկիցք մեր, յասելն, ո՞ւր է ա՟ծ ձեր, զինչ անուն է նորա, զիա՛րդ ոչ կարաց պաշտպանել զձեզ ․ և այլն ։ Մեռանիմք սպառնալեօք՝ որով յոխորտան թշնամիք մեր՝ չարաչար չարչարել զմեզ և մահուամբ կորուսանել ։ Մեռանիմք հարստահարութեամբ՝ որով տառապեցուցանեն զմեզ թշնամիք մեր ՚ի դառն ծառայութիւնս և ՚ի ծանր աշխատութիւնս ։ Մեռանիմք անօրէն հրապուրանօք՝ որով ստիպեն ըզմեզ թշնամիք մեր՝ թողուլ զճշմարիտ ա՟ծդ և պաշտել զկուռս ։ Մեռանիմք և ներքին տխրութեամբ և տաղտութեամբ՝ որով մաշիմք և տոչորիմք ՚ի յիշել մեր, թէ զիա՛րդ մերժեցաք, ուստի՞ մերժեցաք, և ո՞ւր մերժեցաք ։ Մեռանիմք և այսու՝ զի ոչ կարեմք և ոչ իսկ կամիմք առնել ինչ չար ընդդէմ թշնամեաց մերոց, այլ կամք ՚ի ձեռս նոցա, որպէս կայ զենլի ոչխարն ՚ի ձեռս սպանողին ․ նա զի՝ ունիմք ՚ի մէնջ զենման իսկ ՚ի թշնամեաց անտի ։

Եթէ բայց մեռանել՝ առցի աստ փոխանակ բնական մահուամբ մեռանելոյ, զօրհանապազն ցուցանէ՝ թէ բազումք ՚ի նոցանէ հետզհետէ մեռանէին ՚ի կրելն անդ զբազում նեղութիւնս, և 'ի պակասիլն յուժոյ և 'ի կենաց ։

Արդ այսմ ամենայնի տանիմք ասէ վասն քո. որ բառդ ջան հայի յերիս յայտնապէս զորս եդ 'ի վերոյ ըստ նախադասացելոցդ. յառաջինն հայելով՝ բառդ ջան քոյ՝ նշանակէ ասել, վասն փառաց քոյ, կամ 'ի փառս քոյ. որպէս թէ ասէր. որովհետև դու ես Ճշմարիտ ած մեր, որ արարեր զսքանչելիս ընդ հարս մեր, վասն այնորիկ և մեք 'ի փառս քոյ կամ վասն փառաւորելոյ զքեզ կրեմք զայս ամենայն ։ Երկրորդն հայելով՝ բառդ ջան քոյ՝ նշանակէ ասել՝ վասն հնազանդելոյ հաճութեան քում, որպէս թէ ասէր. որովհետև դու վաճառեցեր զմեզ, և ետուր զմեզ որպէս զոչխար 'ի զենումն, մեք ևս հնազանդելով կամաց քոց՝ կրեմք զայս ամենայն իբրև 'ի քէն առաքեալ ։ Երրորդն հայելով՝ բառդ ջան քոյ՝ նշանակէ ասել. առ 'ի ոչ թողուլ զքեզ, կամ վասն ոչ ուրանալոյ զքեզ, որպէս թէ ասէր. որովհետև զքեզ միայն ծանեաք լինել ած մեր և փրկիչ, վասն ոչ թողլոյ զքեզ կրեմք զայս ամենայն. որով կամի ես ասել. եթէ ուրանայաք զքեզ, գուցէ թշնամիք մեր թուլացուցանէին զնեղութիւնս մեր. բայց քանզի ոչ ուրանամք զքեզ, և ոչ թողումք զքեզ, վասն այնորիկ չարչարիմք 'ի նոցանէ. ուստի և այս չարչարանք մեր ոչ է վասն մեր կամ վասն այլոյ, այլ վասն քո, այսինքն վասն փառաւորելոյ զքեզ, վասն հնազանդելոյ քեզ, և վասն ոչ թողլոյ զքեզ ։

Այն այս 'ի բերանոյ առաքելոց ասացեալ՝ 'ի մասնաւորի հայի 'ի մատնիլ նոցա 'ի զենումն յազգէն հրէից. ըստ որում գրէ և ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. իգ.) բանիւ տեառն, յասելն. *ահաւասիկ ես առաքեմ առ ձեզ զմարգարէս և իմաստունս.... և 'ի նոցանէ զոմանս սպանանիցէք, որպէս զյակոբոս և զտն եղբայրն, և զոմանս տանջիցէք (որով լցցի բանն իմ՝ թէ դուք լցուցանելոց էք զչափ հարցն ձերոց)‖ ։

Զայսպիսիս ունելով մեզ օրինակ ասէ մեկնիչն՝ ոչ պարտիմք լքանիլ ոչ 'ի սպառնալեաց և ոչ 'ի տանջանաց, ոչ յարտաքին արկածից և ոչ 'ի ներքին կրից թէև երկարեսցին. այլ զօրանալով 'ի փրկիչ մեր ։

զուարթագին ոգւով տաղասացուք առ Նա. * վասն քո մեռանիմք զօրհանապազ‖. վասն քո կրեմք զայս, վասն քո խոշխիմք: Զբոլնոս մնդգաղէնացն ասացեալ՝ դառնագոյնէր յաւուր մուեալ առաջի խաչելութեանն յիսուսի՝ թէ ընդերկար եղև խաչ իւր. պատասխանի ետ յահայեաց յիմն՝ որ անեաց զամենայն աւուրս կենաց իմոց. և յիմն հայելով զօրացի՛ր, և համբեր. Ամենայն քաջալերեալ՝ սիրով կրեր զխաչ իւր. և 'ի լքանիլն զեմեր առ խաչեալն յիսուս, և զօրանայր 'ի նմանէ. Բայց սմին և մեք 'ի տկարանալ մեր դիմեսցուք առ Նա. եթէ ոչ վաղվաղեսցէ օգնել, մեք վաղվաղեսցուք գոչել. որպէս առնէ մարգարէն 'ի գլխոյ աղօթին կրկնել
և աստ:

իգ. Զարթի՛ր ընդէ՞ր ննջես Տէր. արի՛ և մի՛ մերժեր զմեզ
իսպառ:

Յայտ է թէ որ ննջէ, տիրապէս ոչ տեսանէ և ոչ զգայ զկիրս այլոց, թէ և մօտ առ նմա իցեն. իսկ 'ի զարթնուլն տեսանէ և զգայ: Յայսպիսիս հայելով նմանութի խօսիմք զԱյ. իբր զի յորժամ անտես առնէ զմեզ, կամ բնաւ լսէ՞. յորժամ զնախախնամութի իւր յինէն անփոփէ, կամ յորժամ ոչ փրկէ զմեզ 'ի նեղութեանց, և կամ յորժամ ոչ լսէ զոր խնդրեմք, ննջէ ասեմք. վասն զի զգործ ննջողի առնէ, որպէս թէ ոչ զգայր: Իսկ յորժամ յանկարծակի ցուցանէ զփրկութի իւր՝ զոր անտեսանելի էր ցուցանել, զայս գործ նորա նմանեցուցանեմք զարթնլոյ և յառնելոյ. բայց որում զգործ զարթուցելոյ ցուցանէ: Յայս նմանութի
հայելով խօսի աստ մարգարէն յանձին:

Զարթի՛ր ընդէ՞ր ննջես Տէր: Կամի ասել. ո՞չ արդարեւ վասն սիրոյ քո և վասն փառաց քոց մեռանիմք զօրհանապազ, ո՞չ արդարեւ սակս հնազանդելոյ հրամանաց քոց կրեմք զայսչափ նեղութիւնս, ո՞չ արդարեւ յաղագս ոչ թողլոյ զքեզ մաշիմք և տոչորիմք յայսպիսի տառապանս. ապա զի՞ է՝ զի իբրև ննջեալ ոչ կամիս տեսանել. ընդէ՞ր ննջես տէր, այսինքն ընդէ՞ր հանգոյն ննջողի ցուցանես զքեզ: Զարթի՛ր կամ ո՛ւ երբ՛. [illegible] աղաչեմք, այսինքն ցոյց զքեզ իբրև զարթուցեալ. տես և զոր կրեմք վասն քոյ, և օգն արա մեզ: Իսկ առ-

'ի զօրաւոր ես առնել զբանն , յարէ .

Արի՛ և մի մերժեր զմեզ իսպառ : Բառս ԱՐԻ կամ ըստ եբր''. կումա , դնի աստ փոխանակ 'ի վեր կանգնելոյ . արդ որ յառնէ և կանգնի յոտին՝ վասն պաշտպանելոյ զոք , այնու իսկ ցուցանէ ունել կարողութի փրկելոյ , խնամելոյ , և այլն . ըստ այսմ նմանութե յասել մարգարէին առ ած , արի , խնդրէ 'ի նմանէ զօրաւոր ցուցանել զայցելութի և զպաշտպանութիւն իւր , ևս և փութացուցանել զփրկութին որում սպասէր , որպէս թէ ասէր , աղաչեմ վաղվաղեա փրկել զմեզ , և այսու ցոյց մեզ , թէ ոչ ես անփոյթ զմէնջ , այլ տեսանելով զորս կրեմք վասն քո՝ պատրաստ ես փրկել . կամ ըստ մեզ խօսելով՝ կամի ասել . բաւական է տէր այդչափ ննջելդ , ժամ է արդ զարթնլոյ և յառնելոյ , օգնելոյ և փրկելոյ . միթէ մինչ ննջիցես տէր , միթէ ոչ ևս յարիցես , միթէ մինչև 'ի կատարած այսպէս թողուցուս զմեզ . մի տէր , մի աղաչեմք , և առ այս յարէ .

Ա՛ և մի մերժեր զմեզ իսպառ : Ասաց 'ի վերոյ ('ի Համարն 11.) * մերժեցեր և անարգեցեր զմեզ . . . եդուր ըզ-
,, մեզ որպէս զոչխար 'ի զենումն ‖ . և այլն . Իսկ աստ աղաչէ՝ զի այն մերժումն մի լիցի իսպառ . ուր բառդ իսպառ՝ դնի ըստ երից , մի՝ ըստ տևողութեան . որպէս թէ ասէր . մի մերժեր զմեզ մինչև 'ի կատարած . երկրորդ՝ ըստ սաստկութեան . որպէս թէ ասէր . մի մերժեր զմեզ ըստ ամենայնի և յամենայն կողմանէ . երրորդ՝ ըստ եղանակին , որպէս թէ ասէր . մի մերժեր զմեզ բարկութեամբ կամ անարգութբ կամ տաղտկանալով , և այլն .

Այս գոչումն և այս աղաղակ էր զոր աղաղակէին հարք մեր առաջինք նահապետք և մարգարէք զամս հինգհազար երկերիւր , կամ չորսհազար . զի տեսեալ նոցա՝ թէ ննջէ տէր՝ զարթուցանէին զնա և փութացուցանէին , ասելով . արի տէր և փրկեա զմեզ , զի կորնչիմք աւասիկ . (մատ . ը . 27 .) Յորոյ վերայ գեղեցիկ իմն գրելով իգնատիոս վարդապետ ('ի մեկն . ղուկ . ը . 22 .) ասէ . աղաղակէին և զարթուցանէին զտէր որք 'ի նաւի էին . * և նա յարուցեալ դադարե-
,, ցոյց զյուզեալ ալիսն . (որով և) նկարեցաւ աստ
,, ժամանակ մարգարէիցն . որ 'ի խաղաղանալն ոյ

„ (իբր քնով) ամբարձան 'ի ծուլու աշխարհիս մրկեալ
„ սատանայական ալիքն. վասն որոյ մարգարէիցն մա-
„ տուցեալ մաղթէին ա̃յ. զարթիր, ընդէ՞ր ննջես տէր.
„ և արի տէր օգնեա մեզ, և փրկեա զմեզ ‖. Զսոյն գոչէին առ նա և հօրքն նախահարց՝ որք էին 'ի գոգն աբրահամու, յորժամ ննջէր նա 'ի գերեզմանի. զարթիր տէր՝ ընդէ՞ր ննջես. արի 'ի մեռելոց. և մի թողուր զմեզ 'ի մահու. (տես և 'ի համարն 27.) Զայս այսպէս եղեալ մարգարէին՝ կամելով ապա առաւել ևս թախանձել զա̃ծ՝ այլով իմն փոխաբերութեամբ խօսի առ նա, և ասէ.

իե. Ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ. մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւն մեր.

Նախ ասաց առ ա̃ծ, ընդէ՞ր ննջես. և սկսաւ զարթուցանել՝ յասելն զարթիր. իսկ աստ թէպէտև համարի զնա զարթուցեալ, բայց դարձուցանելով զերեսս՝ որ առաւել իմն ցուցանէ քան զննջելն. այլ թէ զինչ՝ ծանիր. զի դարձուցանել զերեսս յումեքէ՝ վասն պէսպէս պատճառաց կարէ լինել. մի՝ վասն զզուելոյ կամ վասն չհանդուրժելոյ 'ի տեսանել. երկրորդ՝ վասն նեղասրտելոյ, կամ վասն ատելոյ, և այլն. երրորդ՝ վասն ոչ կամելոյ առնել նմա բարի ինչ. չորրորդ՝ վասն յայլ ինչ նայելոյ, կամ վասն 'ի բաց մեկնելոյ. ևն. Ըստ այսոյիկ նմանութեանցս փոխաբերութեամբ ասի զա̃յ դարձուցանել զերեսս յումեքէ, յորժամ ոչ ցուցանէ նմա զայցելութիւն կամ զփրկութիւն իւր. առ որս հայելով ասէ.

Ընդէ՞ր դարձուցանես զերեսս քո 'ի մէնջ. Այսինքն ընդէ՞ր ոչ կամիս ցուցանել առ մեզ զփրկութիւն քո. մինթէ տաղտկացեա՞լ ես 'ի մէնջ տէր, մինթէ տակաւին բարկացեա՞լ կաս 'ի վերայ մեր, մինթէ միշտ ունիս ատել զմեզ, մինթէ բնաւ ո՞չ կամիցիս երևեցուցանել առ մեզ զողորմութիւն քո. Այս առ 'ի շարժել 'ի գութ՝ յարէ զինի.

Մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր. Այս բան զօրութեամբ կրկնի այն հարցական մակբայ, զոր եդ 'ի սկզբան այսր համարոյ. որպէս թէ ասէր, զմէ՞ մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւն մեր. Արդ մոռանալ ասի զնոյ, ոչ ըստ այնմ՝ զի ունի մոռացութիւն, այլ ըստ այնմ զի ցուցանէ զգործ մոռացողի. յորժամ ոչ օգնէ կարօտելոյն կամ վշտացելոյն. որպիսի էին յայնժամ իսրայէլացիք գերեալք ՚ի բաբելոնի. զի զրկեալ լինելով ՚ի բարեաց՝ կարօտ եղեն և աղքատ, և մատնելով ՚ի ձեռս հեթանոսաց անկան ՚ի մեծամեծ վիշտս. ապա զայսոսիկ առաջի տարածելով՝ զարմացմամբ իմն ասէ, ո՞չ ապաքէն քո ակնարկութե՞դ մատնեցաք մեք յայսպիսի աղքատութի՟ և յայսչափ նեղութի՟ս. ապա զիա՞րդ մոռացար տէր՝ զոր դու արարեր. և եթէ չես մոռացեալ, ընդէ՞ր ոչ տեսանես զայս մեր աղէտալի վիճակ. և եթէ տեսանես ընդէ՞ր ոչ ցուցանես զօգնութ՟ի քո ՚ի մեզ։ Այլ աւ ՚ի յայտ առնել զմեծութի՟ այնր աղէտալի վիճակի, յարէ զկնի և ասէ.

ԽԳ. **Խոնարհ եղեն մինչև ՚ի հող անձինք մեր, և յերկիր կցեցաւ փորն մեր.**

Խոնարհ լինելն կամ խոնարհիլն չորեքկին կարէ իմացեալ լինել, մի՝ ըստ հոգւոյ միայն, որով որ համարի զանձն անարգ քան զամենայն։ Երկրորդ՝ ըստ մարմնոյ միայն, որով որ ձևով մարմնոյն կորանայ ՚ի խոնարհ, կամ հակէ ՚ի վայր զգլուխ իւր, կամ դնէ զերեսս իւր յերկիր. և այլն։ Երրորդ՝ ըստ արտաքին իրաց, որով որ խոնարհ ցուցանէ զինքն արտաքուստ, ՚ի խօսս կամ ՚ի զգեստս կամ ՚ի տեղիս կամ ՚ի գործս. և կամ նշան ինչ խոնարհութե՟ երևեցուցանէ, որպէս՝ սևազգեստ լինելով, հող և մոխիր ցանելով ՚ի վերայ գլխոյն, և այլն, զորօրինակ առնէին իսրայէլացիք։ Չորրորդ՝ ըստ տառապելոյ և չարչարելոյ ՚ի պէսպէս նեղութիւնս եթէ արտաքինս իցեն, և եթէ ներքինս. որով անարգ երևի որ, և յինքեան եւս զիջանի և խոնարհի. Արդ երևի թէ սա յայսոսիկ ամենեսին ակնարկելով ասէ.

Խոնարհ եղեն մինչև ՚ի հող անձինք մեր. Այս բան ըստ չորից նախակարգեալ տեսակաց խոնարհելոյ չորեքկին առաջի դնի. ըստ առաջնայն կամի ասել. խոնարհեցաք յոյժ ՚ի ներքս ՚ի հոգիս մեր մինչև ՚ի հող, այսինքն մինչև համարիլ զմեզ հող և մոխիր. կամ թէ խոնարհեցաք մինչև իսպառ. զի ոտնահարեալ հողն է ՚ի ներքոյ ամենայնի, և 'ի խոնարհ քան զայլս, խոնարհիլն մինչև 'ի հող՝ ցուցանէ խոնարհիլ առաւել քան զամենայն, այսինքն խոնարհիլ մինչև իսպառ. Ըստ երկրորդին կամի ասել, խոնարհեցաք ևս և մարմնով, յորոյ նշան զերեսս մեր եդեալ 'ի վերայ հողոյ՝ խնդրեմք 'ի քէն զողորմութի. Ըստ երրորդին կամի ասել. խոնարհ և անարգ ցուցաք առաջի ամենեցուն, և եղաք իբր հաւասար հողոյ, մինչև կոխել նոցա 'ի վերայ մեր, այսինքն անարգ համարիլ զմեզ քան զամենայն. Եւ կամ դարձեալ, հող 'ի գլուխ լինելով և մոխիր ցանելով 'ի վերայ մեր՝ աղաղակեցաք, և աղաղակեմք առ քեզ. Ըստ չորրորդին կամի ասել. ծանրացան 'ի վերայ մեր նեղութիւնք յոյժ յոյժ, մինչ գրեթէ իջուցանել զմեզ 'ի հող, մանաւանդ թէ 'ի գերեզման. Զայս չորրորդ տեսակ խոնարհելոյ առաւել ևս մեծ ցուցանել կամելով յարէ զկնի և ասէ.

Եւ յերկիր կցեցաւ որովայն մեր. Ծանր նախատինք է ըմբշամարտի, եթէ 'ի զօրութենէ մարտակցին իւրոյ յերկիր գլորեսցին մէջք իւր. Զայս նախատինս ասէ հասոյց զմեզ նեղութիւն մեր, և առաւել ևս. զի մէջք մեր ոչ եթէ հակեցան կամ գլորեցան յերկիր, այլ կցեցան 'ի նմին. և այս է այնպիսի իմն նմանութիւն, որով ցուցանի, թէ յոյժ ծանրացան նեղութիւնք 'ի վերայ նոցա, և երկար ժամանակս յեցեալ մնացին 'ի նոսա, մինչև չկարել նոցա ոգի առնուլ, և այսու եղեն 'ի նախատինս առաջի թշնամեաց իւրեանց. Եւ և զի ոմանք 'ի նոցանէ իրօք իսկ կրեցին զայս տառապանս. զի 'ի ձիոց և 'ի փղաց կոխան եղեն, որով և մէջք նոցա իսկապէս կցեցան 'ի հող, և խայտառակեցան առաջի բազմաց.

Այլով իմն նմանաբանութբ կարէ մեկնիլ այս բան, այսինքն նմանութեամբ հիւանդութեան. իբր զի նեղութիւնք նոցա համզոյն ծանր հիւանդութեան յանհնարինս տկարացուցին զնոսա, մինչև յերկիր կցեցան մէջք նոցա. և այս ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց եթէ յոյժ տառապիլ նոցին.

Բարոյապէս սոյն այս ակնարկէ յայտնի՝ որք նեղին և վտանգին 'ի բռնութենէ ախտից և դիւաց. մինչև աղաղակել նոցա, 'ի հող խոնարհեցան հոգիք մեր, և մէջք մեր այսինքն զօրութիւնք մեր յերկիր կցեան ։ Ի յորդորել դիւաց զմարդիկ ՚ի հաւանութի̄ մեղաց՝ ոչ տխրեն, այլ ասեն. * խոնարհեաց, թո՛ղ անցցուք ‖. (Եսայ. ծա. 23.) զանկանիլն ոչ յիշեն, այլ զխոնարհիլն. զի անկելոյն դժուարին լինի կանգնիլ, իսկ խոնարհելոյն դիւրաւ. եթէ խոնարհիս ՚ի կամս նոցա՝ անկանիս. և նոքա հաւասար երկրի գնեն զմէջ քո ՚ի ներքոյ ոտից անցաւորաց, որպէս յիշի ՚ի վերոգրեալ տեղիդ ։ Յայսպիսի տագնապս պարտ է առ ա̄ծ դիմել. որպէս եղև իսրայելացւոց, ՚ի դիմաց որոց աղաղակէ մարգարէն ասելով ։

ԻԷ. Արի՛ Տէր օգնեա մեզ. և փրկեա զմեզ վասն անուան քո.

Յորժամ որ նստեալն է՝ յանկարծակի յառնէ, այսինքն կանգնի յոտին՝ նշան է թէ ունի առնել ինչ, զոր նստելովն ոչ էր մարթ առնել ։ Յայս նմանութի̄ հայելով՝ յորժամ տեսանեմք թէ ա̄ծ անտես առնէ, և ոչ օգնէ մեզ ՚ի նեղութեան մերում, զայս անտես առնել նորա նմանեցուցանեմք նստելոյ. իսկ զոչ օգնել նորին նմանեցուցանեմք ամփոփելոյ զձեռն, կամ հեռանալոյ, և այլն ։ Այլ յորժամ յանկարծակի այց արարեալ օգնէ մեզ, զայս այց առնել նորա նմանեցուցանեմք յառնելոյ կամ յոտին կալոյ, և զօգնելն նմանեցուցանեմք ձեռն մատուցանելոյ, կամ մերձենալոյ, և այլն ։

Ըստ այսմ նմանութե̄ խօսելով ասէ ։

Արի՛ Տէր օգնեա մեզ ։ Կամի ասել, յայսչափ նեղութիւս մեր՝ ՚ի վերջին խոնարհութիւնս իջեալ ՚ի վտանգի մեծի տագնապիմք. և գիտեմք եւս զի տեսանես զայս դու տէր. ընդէ՞ր ապա զոր տեսանես՝ անտես առնես. ե՞ր վասն թողուս զմեզ կալ յայսպիսի թշուառութեան. ե՞րբ ցուցցես զայցելութիւն քո ։ Այլ արդ արի՛ կամ ըստ եբր''. փոխ. Տէր օգնեա մեզ, այսինքն այց արա՛ մեզ, և յայց առնելդ՝ տո՛ւր զօգնութիւն քո, զի կարասցուք անվտանգ անցուցանել զայսպիսի վիճակ թշուառութե̄ մերոյ. զի քև փրկելով՝ քեզ տացուք փառս յաւիտեան ։ Եւ առ այս յարէ ։

Եւ փրկեա զմեզ վասն անուան քո ։ Այսինքն՝ զերծո՛ ըզմեզ ՚ի նեղութենէ աստի մերմէ. իսկ ասելն վասն անուան քոյ՝ հայի 'ի չորս. մի՝ 'ի ջատագովութիւն անուան, որպէս թէ ասէր. փրկեա զմեզ 'ի ձեռաց թշնամեաց մերոց, գոնէ վասն խնայելոյ յանուն քոյ, զի մի հայհոյեսցի 'ի նոցանէ: Երկրորդ 'ի փառաւորութիւն անուան. որպէս թէ ասէր. փրկեա զմեզ, որպէս զի փառաւորեսցի անուն քոյ 'ի մէնջ և 'ի թշնամեաց մերոց: Երրորդ՝ 'ի զօրութիւն անուան. որպէս թէ ասէր. որովհետև զանուն քոյ կարդամք, փրկեա զմեզ, և այնու ցոյց զզօրութիւն անուան քոյ: Չորրորդ՝ 'ի հաղորդութիւն կամ 'ի կցորդութի̃ անուան. որպէս թէ ասէր. որովհետև անուն քո կոչեցեալ է 'ի վերայ մեր, զի կոչիմք իսրայէլ՝ այսինքն ա̃ծատես, և ժողովուրդ ա̃յ, գոնէ վասն այսր անուանակոչութեան փրկեա զմեզ. զի այսու ոչ եթէ զարժանիս պատժոց փրկես, այլ զունօղս անուան քոյ. վասն զի սովին ազատես զմեզ՝ ոչ զի եմք, այլ զի կրօղ եմք անուան քոյ:

Արժան է ասել, թէ այս բառ վասն անուան քոյ՝ հայի առ և 'ի զանազանութիւն անուանն ա̃յ՝ ըստ որում պէսպէս անուամբ կոչի ա̃ծ ըստ այլևայլ նշանակութե̃: Եւ ըստ այսմ կամի ասել. փրկեա զմեզ վասն անուան քոյ, որով կոչիս անոխակալ, և բազումողորմ, բարերար, և մարդասէր. և այլն: Այսոքիւք ամենեքումբք զորս եդաք, դիտէ ասել մարգարէն, թէ զորօրինակ առանց գնոյ վաճառեցեր զմեզ, սոյնպէս և այժմ առանց գնոյ ազատեա զմեզ միայն վասն անուան քոյ. զի որչափ անարժան եմք մեք գնոյ, այնչափ արժանի է անուն քո փառաւորելոյ և մեծանալոյ:

Այս սաղմոս՝ որ ասի 'ի դիմաց ազգին իսրայէլի, ասի և 'ի դիմաց ո՛ և իցէ տառապեալ ազգի, որ ըստ վիճակի իսրայէլացւոց 'ի վշտագին աղէտս մտցէ: Ասի և 'ի դիմաց իւրաքանչիւր նեղեալ անձին, մանաւանդ այնպիսում̃ն, որ մատնեալ իցէ 'ի գերութիւն ծառայութե̃ ախտից, կամ 'ի չար սովորութի̃ ինչ մեղաց, և յելս հնարիցն տկարանայ: Այսպիսիս եթէ ըստ առաջադրութեան բանից սաղմոսիս առ ա̃ծ գոչեսցէ, և յողորմութի̃ նորա ապաւինեսցի, և ձեռնտուութե̃ նորա ընդդէմ ոչ դարձցի, 'ի գերութենէ անտի իւրմէ ազատութիւն գտեալ՝ ընդ թեւօք պաշտպանութե̃ն ա̃յ անդորրասցի. և ըստ հաճոյս կամաց նորա վարելով ըզկեանս իւր՝ անսայթաք առաջնորդեսցի. որով և լիցի նմա ժամանել յազատութիւն որդւոյն ա̃յ և 'ի ժառանգութիւն թագաւորութե̃ն երկնից յաւիտեանս յաւիտենից ։

Զսոյն զայս բան, (որպէս և զորս գրի 'ի համարն 24.) երգեմք 'ի պաշտաման խաչաբերից. զորոյ զխորհըրդաւոր միտսն առաջի առնէ յովհան իմաստասէր 'ի բանն որ վասն միաշաբաթու պաշտամանն. և գրէ համդերձ յաւելուածով այսպէս. * մինչև զաւետարանն
„ կարդացեալ ('ի ժամ խաչաբերից) դեռևս 'ի թաղ-
„ ման վարկանելով զտէրն, արտաքուստ 'ի ներքս 'ի
„ գերեզմանն աղաղակեն ողբերգական ձայնիւ, եթէ
„ արի տէր, օգնեա՛ մեզ և փրկեա՛ զմեզ վասն անուան
„ քո. զի խոնարհ եղեն մինչև 'ի հող անձինք մեր. և
„ յերկիր կցեցան մէջք մեր. և լսեն պատասխանի ա-
„ ւետեաց 'ի մարգարէէն, եթէ թագաւորեսցէ տէր
„ յաւիտեան՝ ա̃ծ քո սիոն յազգէ մինչև յազգ... Իսկ
„ յաւետարանին (այսինքն յընթեռնուլ զաւետարանն)
„ յարուցեալ 'ի մեռելոց՝ կատարէ զխոստումունս աւե-
„ տեաց մարգարէին ։ Իսկ անդէն աւետարանական բա-
„ նիցն ընդդէմ բերեն (այսինքն զհետ յարեն յետ
„ փառս տալոյն) թէ 'ի գիշերի համբարձէք զձեռս ձեր
„ 'ի սրբութիւն, և օրհնեցէք զտէր, որ լուաւ աղօ-
„ թից մերոց. և յարուցեալ 'ի մեռելոց փրկեաց ըզ-
„ մեզ, թագաւորելով համաշխարհական 'ի վերայ ա-
„ մենայն տիեզերաց ‖. և թագաւորութիւն նորա տիրէ յաւիտեան ։

ՍԱՂՄՈՍ ԽԴ.

Բանք գովութեան 'ի դէմս Քրիստոսի և եկեղեցւոյ իւր 'ի դէմս փեսայի և հարսին, նկարագրութիւն վայելչութեան և զօրութեան, արդարութեան և ճշմարտութեան, հեզութեան և քաղցրութեան փեսային, ևս և գեղեցկութեան և փառաւորութեան և զարդու հարսինն' որ եղև մայր բազմութեան յամենայն ազգս:

Ի կատարած. վասն այլայլելոց ժամանակաց, որդւոցն Կորխայ իմաստութիւն. սաղմոս օրհնութիւն վասն սիրելւոյն:

1 Բղխեաց սիրտ իմ զբան բարի. և ասեմ զգործս իմ թագաւորի: 2 Լեզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի. գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան: 3 Սփռեցան շնորհք 'ի շրթունս քո. վասն այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան: 4 Ած զսուր ընդ մէջ քո հզօր, վայելչութեամբ և գեղով քով: 5 Լարեա՛ աղեղն՛ և թագաւորեա՛ վասն ճշմարտութեան հեզութեան և արդարութեան, և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո: 6 Նետք քո սրեալ են հզօր. ժողովուրդք 'ի ներքոյ քո անկցին, 'ի սիրտս թշնամեաց թագաւորի: 7 Աթոռ քո Աստուած յաւիտեանս յաւիտենից, գաւազան ուղղութեան՝ գաւազան արքայութեան քո: 8 Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն: 9 Վասն այսորիկ օծ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո: 10 Զմուռս և ստաշխն և կասիայ 'ի զգեստս քումմէ, 'ի տաճարաց փղոսկրեաց, ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց 'ի պատիւ: 11 Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ' 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ: 12 Լուր դուստր և տես' խոնարհեցո զունկն քո. մոռա՛ զժողովուրդ քո, և զտունն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո: 13 Սա ինքն է տէր քո' երկիր պագցես նմա. և դուստր Ծուրայ երկիր պագցէ նմա. և պատարագօք զերեսս քո աղաչեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց: 14 Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի ներքոյ. 'ի ծոպաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ: 15 Տարցին թագաւո-

րէ կուսանք զհետ նորա . եւ ընկերք նորա տարցեն նմա ։
16 Ածցեն ցնծութեամբ եւ ուրախութեամբ . եւ տարցեն 'ի
տաճար թագաւորի . եւ փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո ։
17 Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր . եւ յիշեսցեն
անուան քո ընդ ամենայն ազգս ազգաց ։ 18 Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան, եւ յաւիտեանս յաւիտենից ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած . վասն այլայլելոց ժամանակաց, որդւոցն Կորխայ իմաստութեան . սաղմոս օրհնութեան վասն սիրելւոյն ։

ՆԱԽ ՔԱՆ ԶԲԱՑԱՏՐԵԼ ԶԻմացուած վերնագրիդ արժան է 'ի մէջ բերել զհասարակաց կարծիս 'ի վերայ մտաց սաղմոսիս . իբր զի համօրէն մեկնիչք եթէ հինք եւ եթէ նորք, եթէ հրէայք եւ եթէ քրիստոնեայք զայս սաղմոս վերածեն 'ի դէմս Մեսիայի այսինքն Քրիստոսի իբրեւ 'ի դէմս փեսայի, եւս եւ 'ի դէմս եկեղեցւոյ նորա իբրեւ 'ի դէմս հարսին . գրեթէ նովին օրինակաւ՝ որով մեկնեն զգիրս երգոց երգոյն սողոմոնի ։

Երեւելի ռաբբիք հրէից՝ նոյնպէս եւ ոմանք 'ի նորոց համարին՝ թէ սողոմոնի իցէ ասացեալ զայս՝ այնու աւթիւ, որով ասաց զերգս երգոց . ոմանք թէ այլ ոք 'ի ժամանակս նորա իցէ ասացեալ 'ի փեսայութեան նորին՝ յորժամ էառ զդուստրն փարաւոնի 'ի հարսնութիւն, բայց վերածելով զմիտս բանին 'ի Քրիստոս եւ յեկեղեցի ։

Ուստի բազումք զայս սաղմոս ըստ պատմականին եւ ըստ օրինակ լինելոյն մեկնեն 'ի վերայ սողոմոնի, իսկ ըստ նշանակեցելոյն եւ ըստ օրինակեցելոյն 'ի վերայ Քրիստոսի ։ Այլ սակայն բանք սաղմոսիս ուղղակի 'ի Քրիստոս հային . եւ ուրեք ուրեք այնպիսի օրինակաւ առաջի դնեն, որ ոչինչ իւիք կարեն յարմարիլ սողոմոնի, այլ միայն Քրիստոսի . զի ('ի համարն 7.) ասի լինել Աստուած . եւ ('ի համարն 9.) օծեալ ա̃ծ. որք ոչ կարեն պատշաճիլ ոչ սողոմոնի և ոչ այլում. (որպէս և բանք 4. և 5. համարոյն։) Նոյնպէս և որ ասի 'ի համարն 17. կացուցանել որդւոց հարսինն իշխան ընդ ամենայն երկիր, և այլն. այս ոչ պատշաճի որդւոց սողոմոնի, որպէս և յայտ է։ Զայս այսպէս եղեալ ընդ համօրէն մեկնիչս, 'ի վերայ ք̃նի և եկեղեցւոյ ունիմք մեկնել զիւրաքանչիւր բան սաղմոսիս, 'ի վերջոյ դնելով և զհամառօտութիւն մեկնութե̃ ըստ ձայնին 'ի վերայ սողոմոնի։

Բայց մատիցուք 'ի քննութիւն վերնագրիդ, որոյ շարադրութիւնն ոչ ինչ ցուցանէ՝ մնացուածոյ 'ի մերումն, որ ամենեւին այլափոխեալ է, և 'ի յետին մթութիւն կորեալ. որոյ աղագաւ յա̃մ սաղմոս մեր այլեայլ օրինակաւ գրի. 'ի չորեքտասան ձեռագիրս չորեքտասան փոփոխութիւն տեսանի։ Առաջին հատուածն որ է * 'ի կատարած զառանցելոց ժամանակաց որդւոցն կոր„ խայ ‖. յերիս օրինակս տեսանի այլայլութիւն ինչ բառից. 'ի միումն դնի * 'ի կատարած, զառանցելոց „ կանանց որդւոցն կորխայ ‖. այլ բառդ կանանց յայտնի սխալ է. որպէս երեւի յայլոց ձեռագրաց, և յայլոց թարգմանութեանց։ Ի միումն ևս դնի * 'ի կատարած անցելոց ժամանակաց որդւոցն կորխայ ‖. և 'ի միումն ոչ դնի բառդ զառանցելոց ժամանակաց. այլ այսպէս. * 'ի „ կատարած սաղմոս օրհնութե̃ ‖, և այլն։

Իսկ երկրորդ հատուածն յամենայնի այլօրինակ դնի, 'ի միումն * իմաստութիւն օրհնութե̃ 'ի վերայ սիրել„ ւոյն ‖. կամ ըստ այլում * իմաստութիւն օրհնու„ թիւն վասն սիրելւոյն ‖. յայլում * իմաստութե̃ սաղ„ մոս օրհնութե̃ վասն սիրելւոյն ‖. յայլում * իմաս„ տութեանց, սաղմոս օրհնութե̃ ‖. յայլում առանց „ բառիս իմաստութեան սոսկապէս. * օրհնութե̃ վասն „ սիրելւոյն ‖։ Յայլում և 'ի վարդանայն ըստ եդելոյդ „ 'ի վերոյ. * 'ի կատարած զառանցելոց ժամանակաց. „ որդւոցն կորխայ. իմաստութիւն. սաղմոս օրհնութե̃ „ վասն սիրելւոյն ‖։

Բայց յայս ամենայն տարբերութիս, որք են յերկրորդ հատուածի՝ չիք ինչ տաժանելի. զի ա̃մենեքին 'ի նոյն հային։ Յառաջնում հատուածի է դժուարին մեծ, նախ՝ 'ի վերայ բառից զառանցելոց, եւ երկրորդ՝ 'ի վերայ բառից ժամանակաց, որ այլուր ո՛չ գտանի ո՛չ 'ի բնագիրս եբր". եւ ո՛չ 'ի թարգմանութիւնս այլոց ազգաց։ Այլ սակայն 'ի մեկնիլ բառից զառանցելոց՝ մեկնի եւ բառդ ժամանակաց։

Արդ զառանցանելն կամ առանցանելն է անդր անցանել, կամ յորպիսութ՟է յորպիսութ՟ի անցանելով փոխիլ. եւ ըստ այսմ երբեմն փոխաբերութ՟բ վարի այս բառ՝ այսինքն՝ փոխանակ անցանելոյ 'ի վիճակէ 'ի վիճակ. զո՛ր օրինակ 'ի զգաստութ՟է 'ի յիմարութ՟ի, յուղղութ՟է 'ի մոլորութիւն. եւ այլն. յոր միտս զառանցեալ կոչին ցնորեալք եւ մոլորեալք. եւ կամ ընդհակառակն 'ի տկարութ՟է 'ի զօրութիւն, 'ի նուաստութ՟է 'ի բարձրութ՟ի, 'ի պարզ բանից 'ի խորին բանս. եւ այլն։ Ըստ այսմ փոխաբերութեան պարտ է առնուլ աստ զբառդ զառանցելոց՝ 'ի նշանակել զայնոսիկ՝ որք անցանելոց էին 'ի վիճակէ դատապարտութ՟ե 'ի վիճակ փրկութ՟ե. որպիսի եղեն համօրէն որդիք մարդկան, որք՝ մինչեւ էր երեւեալ փրկիչն՝ կային 'ի վիճակի դատապարտութ՟ե. եւ ապա 'ի ժամանակի յորում երեւեցաւ փրկիչն՝ անցին 'ի վիճակ փրկութ՟ե։

Եւ ըստ այսմ շարադրութիւն վերնագրի սաղմոսիս բացատրի այսպէս. օրհնութ՟ի դաւթի տուեալ որդւոցն կորխայ՝ երգել իմաստութ՟բ 'ի կատարած. իսկ բանք սորա են 'ի վերայ զառանցելոց այսինքն 'ի վերայ անցանողաց 'ի վիճակ փրկութ՟ե 'ի ժամանակի գալստեան մեսիային կամ փրկչին. 'ի դէմս որոյ երգի այս սաղմոս՝ իբրեւ 'ի դէմս սիրելի փեսային, եւ 'ի դէմս եկեղեցւոյ իբրեւ 'ի դէմս հարսին։

Եբրայականն փոխանակ բառիս զառանցելոց դնի ըստ նոցա բառս ալ սօսաննիմ. եւ փոխանակ բառիս իմաստութե դնի մասխիլ. եւ փոխանակ բառիցս օրհնութեան վասն սիրելւոյն՝ դնի շիր եդիդօթ, այս է երգ սիրելւոյ, կամ երգ սիրոյ կամ երգ տարփանաց. եւ բոլոր բանն գրի այսպէս. * 'ի կատարած առ սօսաննիմ. որդւոյն կոր„խայ. իմաստութ՟ի երգ սիրելւոյ ‖։ Եւ զի եբրայական բառդ սօսաննիմ է համանուն, ակիւղաս, Թէոդիտոն եւ այլք ոմանք թարգմանեցին շուշան. եւ սիւմաքոս ծաղկեայ. իսկ եօթանասունք թարգմանեցին փոփոխենէմ. և եդին այսպէս. * 'ի կատարած. վասն նոցա որք „ փոփոխեալ լինին՝ (տուեալ) առ որդիս կորխայ. յիմաստութի. երգ վասն սիրեցելոյն ‖.

Նաև առեալ և այլոց թարգմանչաց՝ ըստ սմին եդին. որոց փոխան 'ի մերս եդեալ է՝ զառանցելոց ժամանակաց։ Եւ քանզի որք փոխեցան 'ի վիճակ նորոգութե՝ կարեն նոքին կոչիլ և շուշան, կամ ծաղկեայ, վասն որոյ մարթ է դնել և զայն, այսինքն է շուշան. յոր միտս ասի յերգս երգոց (Բ. 16.) * եղբօրորդին իմ... հովուէ 'ի մէջ շուշանաց ‖.

Իսկ ոմանք 'ի նորոց բառիւդ սօսաննէմ՝ իմանան նուագարան շուշանաձև վեցաղեայ. և թարգմանեն զվերնագիր երգ՝. այսպէս. * երգ սիրելեաց եղանակելի „ յորդւոցն կորխայ վեցաղեայ նուագարանաւ ‖ որ կոչի սօսաննէմ. Այս կարծիք ինձ արդեօք ընդունելի, ոչ համարձակիմք հաստատել. քանզի և առ ռաբբիս երկբայական է. Այլ որպէս և ինձ՝ ոչ իւիք ընդդիմանայ այս մեկնութե բանից սաղմոսիս.

Իսկ 'ի վերնագիրս քաղդէացւոց և ասորւոց այս սաղմոս վերածի 'ի ժամանակս մեսիայի, որպէս թէ երեքին որդիք կորխայ որք ապրեցանն՝ երգեալ իցեն 'ի պատիւ մեսիայի և եօթանասուն ծերոցն. Այս կարծիք թէպէտ և չունի ինչ հաւանականութիւն, բայց քանզի և այս հայի 'ի գուշակութի մեսիային, ըստ որում դնի 'ի վերնագիրս նոցա՝ ոչ է մերժելի.

Այս սաղմոս անտարակոյս երևի լինել դաւթի և ոչ այլոյ ուրուք. զորոյ և զսկզբնաւորութեան զօրինակն գտանեմք յայլ բանս նորա. այն է. * հոգի տեառն խօսեցաւ յիս, և բան նորա 'ի լեզուի իմում ‖ ևն. (Բ. Թագ. ԻԳ. 2.)

Իսկ բանք սաղմոսիս դասաւորին այսպէս. յառաջինն և յերկրորդ համարն ըստ առաջնին հատուածոյն կարգի յառաջաբանութի հեղինակին. ապա 'ի յետին հատուածոյ երկրորդ համարոյն մինչև 'ի 10 համարն դնին բանք գովութեան առ փեսայն 'ի բերանոյ փեսաւէրացն կամ փեսայածուացն. Իսկ 'ի 11 համարոյ, մինչև 'ի 16 համարն, առ հարսն, նա և առ հարսնածուս. և անտի մինչև 'ի վերջն՝ դարձեալ առ փեսայն.

ԻԱՆ

ա. Բղխեսցէ սիրտ իմ զբան բարի. և ասեմ զգործս իմ թագաւորի. (կամ ըստ ձեռագիր սաղմոսաց. * Բղխեսցէ սիրտ իմ զպատգամս գս բարիս. և ասասցէ ըզգործս իմ թագաւորի.)

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Բղխելն թէպէտ և պէսպէս մտօք 'ի գործ ածի 'ի գիրս, բայց տիրապէս առեալ նշանակէ զայնպիսի առնելութիւն՝ որով իրն կենդանի շարժմամբ ինքնին յառաջ բերէ զայն՝ զորոյ զլիութիւնն ունի յինքեան. ուր երեք ինչ է տեսանելի. մի՝ զի այն յառաջբերութիւն ինքնին լինիցի, այսինքն անբռնադատ, կամ առանց բուռն առնելոյ ինքեան, և կամ բնականաբար անկախ յընտրութենէ. որպէս է տեսանել 'ի բղխումն ջուրց աղբեր. ապա թէ ոչ՝ տիրապէս ոչ ասի բղխել, այլ հոսել, կամ այլ ինչ: Երկրորդ՝ զի լինիցի կենդանի շարժմամբ, որպէս է շարժումն ջուրց աղբերն. ապա թէ ոչ՝ թորել ասի կամ ծորել: Երրորդ՝ զի բղխողն 'ի բղխելն անդ ունիցի զլիութիւն բղխեցելոյն, և այն՝ յինքեան և ոչ յայլում, որպէս աղբիւրն. ապա թէ ոչ՝ վայթել ասի կամ հեղուլ, և այլն: Արդ այսպիսի բղխումն թէպէտ և 'ի հեղանիւթս է, բայց փոխաբերութբ̃ նաև 'ի հոգևոր իրս ասի լինել: Եւ յայտ է թէ յայս միտս առնու աստ մարգարէն յասելն:

Բղխեսցէ սիրտ իմ զբան բարի (կամ զպատգամս գս բարիս.)

Սիրտն 'ի սուրբ գիրս երբեմն 'ի տեղի կամաց 'ի գործ ածի, և երբեմն 'ի տեղի բոլոր հոգւոյն. բայց աստ որպէս և յայլ ոչ սակաւ տեղիս դնի փոխանակ մտաց, վասն զի ելուզանելն զբան կամ զպատգամ՝ մտաց պատշաճի: Իսկ թէ ընդէր փոխանակ մտաց ասելոյ սիրտ ասէ, բազում են պատճառք. մի՝ առ 'ի ցուցանել՝ թէ 'ի բղխել մտաց զբան բարի՝ ունի ընդ իւր միանգամայն և զբորբոք սիրոյ 'ի սիրտն: Երկրորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ ինքնին բերի յայն բղխումն, որպէս սիրտն 'ի շարժիլ: Երրորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ բոլրովին յափշտակեալ է յայն՝ ոչ միայն մտօք, այլև կամօք և ամենայն մասամբ հոգւոյն՝ եւ և ըստ զգայական մասին։

Եւ զի եբր. դնէ՝ այնմ յարմարեցուցանել կամելով՝ առաջի առնէ զբառդ ԲՂԽԷԼ. որով ըստ ասելոյ մեր այժմ՝ ցուցանէ նախ՝ թէ առանց բռնադատութեան կրից, առանց նախահանճման կամաց, և առանց մտայոյզ քննութեան խորհրդոյ ինքնին յառաջ բերէ զբան բարի։ Ցուցանէ երկրորդ՝ թէ կենդանի շարժմամբ՝ կամ ասացից ծայրագոյն ցնծութեամբ 'ի դուրս երևեցուցանէ զբան բարի։ Ցուցանէ երրորդ՝ թէ լի է բարի բանիւք, և 'ի լիութենէ անտի բղխէ. որովհետև բըղխումն իրք նշան է լիութեան յորդ բղխի. և այսու կամի ցուցանել մարգարէն, թէ 'ի յառաջ բերելն ըզբան բարի՝ ոչ կարէ զամենայն միանգամայն զեղուլ արտաքս, այլ զատկաւ, որպէս և յոյլ մարգարէութիւ լինէր. վասն զի մարգարէք յորժամ լցեալ լինէին յո̃յ լուսաւորութ̃ք, ոչ կարէին զամ̃ն յայտնել. Նա զի և ոչ բառ ունէին յայտնիչ այնր՝ զոր կրէին. վասն որոյ և բազում անգամ այլաբանութ̃բ խօսէին. և զոր լիութ̃բ ունէին՝ նուազութ̃բ յայտնէին։ Բայց այս նուազութիւն իմացեալ լինի համեմատութ̃բ լիութ̃ե նոցա որք բղխէին, և ոչ համեմատութ̃բ ընդունականութ̃ե մերոյ. զի առ մեզ առաւել է, և ոչ նուազ։

Բարի կոչէ մարգարէն զբանն բղխեալ 'ի սրտէ, մանաւանդ զբան սաղմոսին՝ ըստ երից. մի՝ 'ի կողմանէ նիւթոյն. զի որ ինչ աւանդի 'ի սաղմոսի աստ՝ է զուարճալի, վայելուչ, զօրաւոր, նուրբ, բազմիմաստ, գերազանց, և այլն. Թող զայն զի ոչ գտանի 'ի սմա յիշատակութիւն թշուառութ̃ե կամ նեղութ̃ե կամ մեղաց. և ոչ բան ինչ տրտմութ̃ե կամ մեղադրանաց։ Երկրորդ՝ 'ի կողմանէ լսողաց, զի ամենեցուն որոց լըսեն, ցուցանէ զբարին, և առնէ զնոսա բարի՝ 'ի յորդորելն զնոսա՝ զարգարիլ առաքինութ̃բք իբրև զհարսն քնի։ Երրորդ՝ 'ի կողմանէ այնր՝ զորմէ են բանք սաղմոսիս, այսինքն 'ի կողմանէ փեսային և հարսին. զի միայն զկատարելութ̃ի նոցա և զշնորհալիութիւն նոցին և զբարութ̃ի նոցուն 'ի մէջ բերէ։

Սուրբ հարք զայս բան վերածեն նաև 'ի ծնունդ բանին, այ 'ի Հօրէ. ըստ որում՝ Հայրն յաւիտենական 'ի սրտէ իւրմէ՝ այսինքն 'ի գոյացութենէ կամ յէութենէ իւրմէ, կամ 'ի լիութենէ ածութե իւրոյ՝ բղխեաց այսինքն ծնաւ զբանն ած հաւասարակից իւր առ 'ի ներքս յինքեան. և նովին բանիւ բղխեաց՝ այսինքն էացոյց առ արտաքս զամենայն արարածս: Իսկ ասելն՝ յէութենէ իւրմէ՝ ոչ ցուցանէ զզանազանութի էութե, այլ նոյնութի. իբր զի Հայրն 'ի ծնանիլն զբանն ած հաղորդեաց նմա զանբաժանելի էութի իւր. և զի այն էր ինքնին ծնանիլ՝ վասն որոյ բղխել կոչէ:

Եւ յայս միտս ծնունդ բանին 'ի Հօրէ կարէ կոչիլ և բղխումն. ըստ որում և եկեղեցի սուրբ յառաջ բերեալ զայս՝ մաղթէ 'ի նոյն բանէն այ՝ բղխեցուցանել և 'ի Հոգւոյ իւրմէ զբան բարի՝ յասելն յերգս առաւօտլուսոյն. * բղխումն 'ի Հօրէ, բղխեա 'ի Հոգւոյս բան ,, քեզ 'ի Հաճոյս ||. որով կամի ասել. ով բանդ ած բղխեալդ 'ի Հօրէ, արա զի և Հոգի իմ բղխեսցէ զբան բարի՝ որ իցէ քեզ Հաճոյ:

Այլ աստ գիտելի է, զի 'ի ձեռագիրս մեր յայս Համար փոխանակ բանի՝ պատգամ դնի՝ յասելն. * բղ- ,, խեսցէ սիրտ իմ զպատգամս քո բարիս. և ասա- ,, ցէ զգործս իմ՝՝ թագաւորի ||. բայց այս չէ ինչ. զի բառդ պատգամ՝ վարի կրկին նշանակութեամբ. ըստ առաջնոյն նշանակէ զբան Հրամայողական 'ի վերնագունէ ասացեալ. ըստ այնմ. (Դ. Թագ. ԺԸ. 28:) * լուարուք զպատգամս արքային մեծի ||: Ըստ երկրորդին նշանակէ զբան ընտիր և գերազանց. ըստ այնմ. (առակ. Ա. 23.) * ահաւասիկ առաջի առ- ,, նեմ ձեզ զՀոգւոյ իմոյ պատգամս ||. այսինքն զբան վայելուչ և զարմանալի. և ըստ այսմ երկրորդ նշանակութեանն՝ այս բառ իբր անեզական վարի, որպէս բառդ Խօսք: Եւ աՀա յայս միտս դնի աստ բառդ պատգամ՝ իբր անեզական, և առ 'ի ցոյց անեզականութե 'ի բազում սաղմոս ածական սորին, որ է բառդ Բանիս, եդեալ է եզակի այսինքն է Բանի: 'Ի դնել այսր նոյն լինի ասել. բղխեաց սիրտ իմ զբան բարի, և ասեմ՝ զպատգամս քո բարիս: (Տես զպայմանէ 'ի Համեմատութիւն:) Արդ զոր կոչեայն բան կամ պատգամ ըստ ներքին նշանակութեան, զնոյն և գործ կոչէ ըստ արտաքին յայտարարութե՛, ասելով.

Ես ասեմ (կամ ասացից) զգործս իմ թագաւորի. Գործ ասելով իմանայ զշարահիւսութիւն բանից այսր սաղմոսի, զոր ոչ կարելով յայտնել այլով բանիւ՝ հասարակ անուամբ գործ կոչէ։ Զայս իմ գործ ասէ՝ **ասեմ կամ ասացից թագաւորի**. այսինքն թէ զայս իմ երգ օրհնութեան ուղղեցից առ թագաւորն, կամ առ նա ուղղելով երգեցից, կամ առ նա խօսելով յօրինեցից. կամ նմա նուիրեցից և նմա ձօնեցից. զի զնմանէ և առ նա բղխէ սիրտ իմ զբան բարի. իսկ թէ ով է այն թագաւոր՝ յայտ առնէ ՚ի վերջին համառօտ յաջորդ համարոյն։ Երեւի թէ զայս ասէ ըստ սովորութեան երեւելի երգարանից, որք ՚ի ճակատ երգասացութե՛ իւրեանց նշանակեն՝ թէ որո՞յ ընծայեն զայն իւրեանց երգ, կամ առ ո՞ կարգեն զնոյն։

Ոմանք աստանօր յայլ միտս մեկնեն զայս բան, այսինքն փոխանակ պատմելոյ առաջի թագաւորին զգործս յանցաւածոյ, առ ՚ի գտանել զթողութիւն. բայց յայտ է թէ բանք սաղմոսիս ոչինչ ունին հայիլ յայս։ Իսկ ոմանք մեկնեն ընդ հակառակն՝ փոխանակ խոստովան լինելոյ. որպէս թէ եղեալ էր. ՚ի բղխել սրտի իմոյ զբան բարի՝ խոստովանեցայց՝ թէ ներգործութիւն այսր բղխման կամ այս բղխումն է ո՞յ և ոչ իմ։ Այս մեկնութի՛ ոչ երեւի հաւանական. քանզի դիտումն մարգարէին ոչ է ցուցանել՝ թէ որո՞յ է այն գործ. այլ թէ առ ո՞ կարգի։

Յաւելու Վարդան և զայլ իմն տեսութիւն յաւելն. Հայրն երկնաւոր զգործս իւր տայց լինել թագաւորի որդւոյ իւրոյ. և որդին զգործ իւր տայց լինել հօր իւրոյ. ըստ այնմ. * Հայրն՝ որ յիս բնակեալ է՝ նա գործէ զգործսն ‖. (յովհ. ժդ. 10.) Յաւելու դարձեալ Վարդան հայելով յանձն Դաւթի, թէ ունի ասել զգործեցեալսն կամ զյայտնեալսն ՚ի հոգի իւր զմարգարէութի՛ս որ վասն թագաւորին Քի՛։

Յարմարական մեկնութե՛, բառդ **գործ**՝ կարէ վերաբերիլ առ թագաւորն. և ըստ այսմ բառդ **թագաւորի**՝ առեալ լինի ՚ի սեռական հոլովի իբր յատկացուցիչ գործոյն, որպէս թէ ասէր. ասացից զայնոսիկ սքանչելի գործս, զորս արար թագաւորն իմ. որպիսի է

և փրկագործութիւն նորա. յայս միտս մեկնէ լամբ".
զայս բան. ըստ այսմ դնի և 'ի ժամագիրս մեր 'ի գի-
շերային պաշտաման, յասելն. * Բղխեսցեն սիրտք մեր
,, զբան բարի, և լեզուք մեր պատմեսցեն զգործս երկ-
,, նաւոր Թագաւորիդ ||. Ասացի * այսինքն յարմարա-
,, կան մեկնութե̃ ||. զի բառդ Ռագաշուէ՛ յեբր". և յայս
ո՛չ դնի 'ի սեռական հոլովն այլ 'ի տրականն. յասելն
արքայի, այսինքն առ թագաւորն. Այլ թէ զիարդ էր
այս բղխել և ասել, և ուստի, և որով օրինակաւ, յայտ
առնէ 'ի յաջորդ համարն, ասելով.

բ̃. Լեզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի. գեղեցիկ տեսանելով քան զորդիս մարդկան.

Ասաց 'ի վերոյ, Բղխեաց սիրտ իմ զբան բարի. որով ծանոյց թէ ոչ յօտարաց յորդորեալ, ոչ 'ի բանից այլոց ստիպեալ, և ոչ 'ի նպաստելոյ արտաքին իրաց լուսաւորեալ, այլ յիւրմէ բղխեաց զայն արտաքս լեզուաւ իւրով. Այլ զի մի կարծեսցի, թէ այն բղխումն էր 'ի սեփական տրամաբանութենէ միայն իւրոց, և կամ յընտրութենէ հաճոյից կամաց, այլ յԱ̃յ, գեղեցիկ իմն օրինակաւ կամելով յայտ առնել զայս՝ ասէ.

Լեզու իմ որպէս գրիչ արագագիր դպրի. Յայտ է թէ լեզու՝ մարդոյ է գործի խօսելոյ, ո̃պ գրիչն է գործի գրելոյ. բայց չորեքումբք տարբերի. մի՝ զի լեզուն է գործի յարակցեալ. իսկ գրիչն գործի անջատեալ. Երկրորդ՝ զի լեզուն հաղորդի ոչ միայն շարժման, այլև կենդանութեան. իսկ գրիչն միայն շարժման. Երրորդ՝ զի գործ լեզուին գրեթէ իբրև ձևանայ յօդս՝ իբր անցանող. իսկ գործ գրչին ձեռօք ձևանայ 'ի գիրս՝ իբր մնացող. Չորրորդ՝ զի կատարելութիւն կամ անկատարութիւն խօսից ըստ ինքեան մտածեալ՝ ըստ որում է խօսք՝ առաւել ընծայի լեզուին՝ քան մարդոյն. իսկ կատարելութ̃ի կամ անկատարելութ̃ի գրոյն առաւել ընծայի գրողին քան գրչին.

Արդ թէպէտ մարդս կամ լեզու մարդոյ հայելով 'ի հոգին սուրբ՝ իբր յարագագիր դպիր՝ համարի անջատեալ գործի հանգոյն գրչի, բայց հայելով 'ի նոյն սուրբ հոգի իբր 'ի բուն հեղինակ՝ համարի յարակցեալ.

գործի հանգոյն լեզուի. ըստ առաջնոյն նոյն բան՝ որ գրեալ լինի առ հոգւոյն սրբոյ և գրողին. յոր միտս առեալք, բանք մարգարէին յայտ առնեն, կամ թէ մարգարէն ազդ առնէ, և այլն. Իսկ ըստ երկրորդին համօրէն լինել միայն հոգւոյն սրբոյ. յոր միտս առեալք. բանք տեառն յայտ առնեն. կամ թէ հոգին՛ք ազդ առնէ. ե՟ն. Որպէս և համարիցի կամելով մարգարէին ցուցանել՝ թէ 'ի խօսելն զսաղմոսս ամենեւին չունէր ինչ յիւրմէ, այլ խօսէր միայն 'ի շարժութ՟էն ա՟յ՝ իբր գործի, զլեզու իւր նմանեցուցանէ գրչի. որպէս թէ ասէր. յարտասանել լեզուի իմոյ զբանս բարի, կամ զբանն օրհնութեան այսր սաղմոսի՝ ոչ եղև այն իբրև իմ լեզու, կամ իբրև այնպիսի գործի խօսելոյ՝ որ ըստ հրամայելոյ մտացս և ըստ հաճելոյ կամացս շարժիցի, այլ իբրև գործի հոգւոյն սրբոյ՝ որ բնակելով յիս՝ էառ զլեզու իմ 'ի ձեռս իբրև զգրիչ. և թացեալ զայն 'ի խորհուրդս հօր իբրև 'ի մելան՝ հանգոյն արագագիր դպրի գրեաց նովաւ զսաղմոս. Եւ միտ բանին է ցուցանել, թէ լեզու իւր եւս և ինքն 'ի յօրինել զայս երգ՝ ոչ ինչ արար յիւրմէ, այլ թէ էր իբր գրիչ 'ի ձեռս հոգւոյն սրբոյ. ըստ որոյ ասէ գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ. գլ. ա՟.) 'ի բերանոյ դաւթի. *լեզու իմ որպէս գրիչ ճարտարագրողի. զի ա՟ծ է՝ որ գրէր‖. Եւ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա՟. պետ. դ՟. 10. ճառ թ՟.) ասէ. * այնպէս զբանն ձևացուցանէին (մարգարէք և առաքեալք) 'ի խօսելն, որպէս զի զմիտս լսողացն առ տուօղ բանիցն առաքիցեն. որպէս յորժամ դաւիթ զիւր լեզուն գրիչ երագագիր դպրի անուանէր‖, և այլն. Գիտէին՝ թէ գրէին. այլ զոր գրէին՝ նա գիտէր՝ որ տայր գրել. Փող էին. այլ շունչն ա՟յ էր. որոյ վասն գրութիւնք նոցա ա՟ծաշունչք ասին. Քնար էին. զշարժութիւն հոգւոյն ոչ տեսանէին, այլ հընչէին. Ծառայք էին, և գործէին. այլ ոչ գիտէին՝ զինչ գործէր 'ի նոսա որ ազդէր. Զայս և ծործորեցին օրինակ բերեալ ('ի մեկն. մատ. գլ. դ՟.) ասէ. * որպէս և ոչ քնար (գիտէ) զշարժումն մատանց երաժշտականին. ըստ այնմ՝ ոչ գիտէ ծառայն՝ զինչ գործէ տէրն նորա‖. զի բազում ինչ գործէ ա՟ծ 'ի մարդն՝ զոր ոչ գործէ մարդ. և բազում ինչ ևս գործէ 'ի մարդն, զոր գործէ մարդն, և ոչ գիտէ ։ Բայց քանզի բանաւորք էին, և բան էր՝ զոր գրէին, հոգին սուրբ իմացուցանելով տայր գրել. և զոր գրէին, այն էր ա̃ծաշունչ. և ոչ թէ այն՝ զոր իմանային ։ Աստի և ըստ որում իմանային՝ ոչ էին գրիչ. իսկ ըստ որում գրէին՝ գրիչ էին հոգւոյն սրբոյ ։

Արդ որպէս 'ի գրուածս կարգ բանին և իմացուած նորին բոլոր ընծայի գրողին և ոչ գրչին՝ բայց եթէ իբր գործւոյ, սոյնպէս և 'ի սաղմոսս և յայլ սուրբ գիրս՝ ամենայն իմաստ և կարգ ընծային հոգւոյն սրբոյ, և ոչ գրողացն, բայց եթէ իբր գործեաց ։

Այլ գիտելի է ևս, զի նաև գործին ունի ինչ 'ի գործն՝ զոր կոչեմք եղանակաւորութիւն. վասն զի յայտ է թէ այլազգ եղանակաւորէ զգիրն՝ բոլորաձև գրիչն քան տափակագիրն. այլազգ լայնաձեն, և այլազգ բարակագիրն, և ևս այլազգ եղանակաւորէ զխօսս լեզու նուրբ քան լեզու թանձր ։ Նաև եթէ բնաւ եղանակաւորութիւն ինչ ոչ դնէր գործին 'ի գործն, ոչ ասիւր գործի, այլ միջնորդ միայն ։

Սոյնպէս և որ լինի գործի հոգւոյն սրբոյ 'ի խօսել կամ 'ի գրել, ինքն ևս ունի ինչ եղանակաւորութիւն 'ի գործն, որպէս յայտնի տեսանի 'ի գրուածս իւրաքանչիւր մարգարէից և առաքելոց. որոց բանք ըստ տրամադրութեան նոցին եղանակաւորին. զի այլազգ եղանակաւորեալ են բանք եսայեայ, և այլազգ բանք երեմիայ. այլազգ բանք պօղոսի, և այլազգ բանք յոհաննու. այլազգ աւետարանն մատթէոսի և այլազգ ղուկասու. ըստ որոյ ասեմք աւետարան ըստ մատթէոսի, աւետարան ըստ ղուկասու, և այլն ։

Իսկ թէ ընդէր նմանութեամբ արագագիր դպրի խօսի ըզհոգւոյն սրբոյ՝ գիտելի է, զի եթէ 'ի կողմանէ նորին իսկ հոգւոյն սրբոյ մտածեսցի, սովին ցուցանի կարողութիւն կամ անկարօտութիւն նորին. իբր զի նա ոչ կարօտի ժամանակի 'ի քննել, թէ զինչ ունիցի տալ յօրինել, կամ թէ զիարդ տացէ գրել, կամ թէ այլազգ ինչ տալով գրել՝ յետոյ կամիցի ուղղագրել. զի այսմ չէ հնար լինել. վասն զի ինքն է իմաստութիւն անսահման, և աղբիւր ճշմարտութեան. և զոր տանէ ինչ որոշ, միանգամայն առնէ ամենայն արդարութի̃. Թէպէտ և ենթակայն այսինքն մարդն կամ գործիքն, որով առնէ, վասն իւրոյ չափաւորութե̃ և տկարութե̃ ոչ կարէ միանգամայն գործել.

Իսկ եթէ մտածեսցի 'ի կողմանէ ներգործութեանն, որով վարի հոգին սուրբ 'ի յօրինելն զբան ձեռամբ մարգարէից, այս նմանութի̃ գեղեցիկ իմն միտս ընծայեցուցանէ. վասն զի արագագիր դպիրն յաղագս սաստիկ ճեպելոյն, բազմապատիկ օրինակաւ վարի. մի՝ զի ոչ հայի՝ թէ գեղեցիկ բանն՝ գեղեցիկ և որոշ գրեսցի, այլ զի 'ի գիր տպաւորեսցի. Երկրորդ՝ զի ուրեք ուրեք այնպէս ձևացուցանէ զգիրսն, զոր կամ ինքն միայն, և կամ սակաւք կարեն ընթեռնուլ: Երրորդ՝ զի բազում ուրեք զբառսն պատուով գրէ. Չորրորդ՝ զի զմասն 'ի բառից նշանագրով զրոշմէ. Հինգերորդ յառաւել արագելն՝ զբառսն կիսատ դնէ. զորօրինակ * ժող". որ երան". զձեզ խաբ". զ". ‖. և ապա ժամանակ զըտեալ՝ բանայ զբառսն. և գրէ այսպէս * Ժողովուրդ ,, իմ՝ որք երանեն զձեզ՝ խաբեն զձեզ‖. և 'ի սաստիկ արագելն ուրեք ուրեք սոսկ գիր դնէ. զորօրինակ՝ փ. ա. ծ, են. և ապա ժամ գտեալ ընթեռնու * փառք ,, ա̃յ ծածկեն զբանս‖.

Բայց այսոցիկ նմանութե̃ցս տեսանեմք զգրեալսն 'ի հոգւոյն սրբոյ բերանով մարգարէից, մանաւանդ ընդգրեալսն 'ի սաղմոսի. մի՝ զի ուրեք ուրեք յամենագեղեցիկ բանսն առ մեզ ոչ երևի գեղեցկութիւն մարդկային կամ արհեստաբանութիւն ճարտասանից, և բազում բանք կան՝ որք ոչ տեսանին մեզ որոշ գրեալ, այլ խառն.

Երկրորդ՝ զի ուրեք ուրեք այնպիսի ձևով են գրեալ, այսինքն այնպիսի մտօք, մինչև ոչ կարել ումեք ընթեռնուլ, այսինքն տիրապէս իմանալ, այլ միայն կարծեօք.

Երրորդ՝ զի բազում բանք գրեթէ պատուով են գրեալ. վասն զի պարունակին 'ի նոսա և այլ բազում բանք, որպէս 'ի պատուով գրեալսն բազում տառք.

Չորրորդ՝ զի բազում բանք են իբրև նշանագիրք. զի այլ ինչ են, և այլ ինչ ցուցանեն.

Հինգերորդ՝ զի բազում բանք գրեթէ սկզբնաւորութիւնք են կամ ծայրք խորին բանից, զորս եթէ ոք կամիցի երկար քննութ̃ բանալ, ոչ կարէ 'ի ծագն հասանել՝ ըստ երկուց. մի՝ ըստ ընդարձակութեան, և մի ևս՝ ըստ պէսպիսութեան. զի որպէս այս գրուած ծո″. ընդարձակի 'ի բազում գիրս՝ մինչև լրասցի բառդ ծաղկազարդ, սոյնպէս գրուած ինչ հոգւոյն սրբոյ՝ թէպէտև սակաւ ինչ երևի, բայց 'ի քննելն ընդարձակի յոյժ. յոր միտս ասէ մարգարէն ('ի սաղ. ճժը̃. 96.) * յոյժ անդորր էին ինձ պատուիրանք քո‖: այսինքն ընդարձակ:

Եւ դարձեալ որպէս 'ի դնել միոյ գրի, զորօրինակ փ. տառի՝ պէսպէս կարէ ընթերցեալ լինել, այսինքն է փառք, փափաք, փոփոխութիւն, փականք, ևն, սոյնպէս են և բազում բանք սուրբ գրոց որք պէսպէս կարեն խմբեալ լինել և մեկնիլ. զի են յառաջ եկեալ յայնպիսի մտաց՝ որ է անսահման, և անպարագիր:

Եւ յայսպիսի լինի երևի լեալ 'ի գիրս բաղտասարայ որ երևեցաւ գրեալ Մ. Թ. Փ. զոր ոչ կարացին մոգք պարզել. այլ միայն լցեալն հոգւով դանիէլ, ընթեռնուլ զայն, մանէ, թեկեղ, փարէս. (դան. Ե. 25.)

Յայս ո̃մ հայելով 'ի մէջ բերէ մարգարէն զնմանութիւն գրութեան արագագիր դպրի. և խոստովան լինի, թէ ինքն և լեզու իւր լեալ է գրիչ հոգւոյն սբ̃յ՝ ոչ սոսկ իբր դպրի, այլ՝ իբր արագագիր դպրի:

Ըստ այսմ մեկնութե̃՝ զոր եդաք, բառդ գրիչ կրկնակի կարէ առեալ լինել աստ, մի՝ խելամտութե̃ ձևով՝ փոխանակ բոլոր անձին, ըստ որում սովորակ է սուրբ գրոց զմասն դնել փոխանակ բոլորին. և յայս միտս նոյն էր թէ ասէր. ես եմ որպէս գրիչ հոգւոյն սրբոյ՝ իբր 'ի ձեռս արագագիր դպրի: Իսկ պատճառ լեզուդնելոյն՝ է յարմարութիւն բանին. որովհետև առաւել լեզուին պատշաճի լինել գործի խօսելոյ՝ քան անձին:

Երկրորդ փոխանակ պարզ լեզուի. և յայս միտս ցուցանէ, թէ հոգին սուրբ բնակեալ 'ի սիրտ մարգարէին լեալ էր իբր արագագիր դպիր, և լեզուաւ մարգարէին բղխէր զբանն 'ի սրտէ նորա:

Փոքր մի այլազգ կարէ մեկնիլ այս բան, եթէ բառդ արագագիր դպիր՝ վերաբերցի յանձն մարգարէին. և ը̃ այսմ հոգի նորա հանգոյն արագագիր դպրի զլսեալն 'ի հոգւոյն սրբոյ բղխէր լեզուաւ. որով իբր գրչաւ գրէր։ Զի զօրինակ դիւանադպրի թագաւորի կացեալ առաջի նորա 'ի խօսիլ նորին՝ զոր լսէ 'ի նմանէ՝ գրէ արագութեամբ առանց քննելոյ, առանց տրամաբանելոյ, և առանց ընտրութիւն առնելոյ, սոյնպէս և հոգի մարգարէին կացեալ առաջի հոգւոյն սրբոյ՝ 'ի խօսիլ նորա 'ի նա, այսինքն 'ի յորդել նորա 'ի նա զլիութիւն լուսաւորութեան, բղխէր նա զնոյն լեզուաւ, որով որպէս թէ գրչաւ գրէր՝ զոր բղխէր՝ առանց տրամաբանելոյ։ Եւ ըստ այսմ կամի ասել՝ լեզու իմ յարտասանելն զբանս բղխեալս 'ի սրտէ՝ այնպիսի գործի է հոգւոյս, որպիսի գործի է գրիչն 'ի ձեռս արագագիր դպրի. ոչ զհոգւոյս ինչ զբանն գրելով, այլ զհոգւոյն սրբոյ՝ որ խօսի 'ի հոգի իմ։ Եւ այս ըստ հնգապատիկ եղանակացն՝ զոր եդաք 'ի վերոյ։

Այս մեկնութ̃ի ևս յիրս հայեցեալ՝ է ամենեւին նոյն. զի երկոքեան ևս զայս մի ինչ ևեթ ցուցանեն՝ թէ բանք սաղմոսիս՝ են 'ի հոգւոյն սրբոյ՝ գերազանց իմն օրինակաւ. և ոչ 'ի մտաց մարդոյ. և թէ բանք սորա կարգեալ ցուցանել զգերագոյն ինչ, այսինքն զկատարելութիւնս երկնաւոր թագաւորին, և ամենացանկալի փեսային։ Սոյնպէս էին և բանք այլոց մարգարէից. ուստի ասէ սարգիս վարդապետ. ('ի մեկն. ա̃. պետ. ա̃. 11. Ճառ բ̃.) * որքան ինչ միանգամ վկայութ̃իս
,, գրեցին նոքա զմարդանալոյն քսի և զանպարտ չար-
,, չարանաց նորա, հոգին էր՝ որ թելադրէր 'ի շըր-
,, թունս նոցա... և զայս դաւիթ տիրապէս խոստո-
,, վանի. լեզու իմ ասէ՝ որպէս գրիչ երագագիր գըր-
,, չի. սակաւ գրել զգործս իմ թագաւորին ‖։ զսոյն
գրէ և 'ի բանն պետրոսի՝ թէ մարդիկ 'ի հոգւոյն կրեալ խօսեցան 'ի դիմաց ա̃յ. (բ̃. պետ. ա̃. 20.)

Յարմարական մեկնութ̃ի՝ եթէ այս բան մտածեսցի ասացեալ 'ի դիմաց հօր՝ գրչաւ իմացեալ լինի բանն ա̃ծ, զորմէ ասաց, բղխեաց սիրտ իմ զբան բարի. այս գրիչ ասէ ամենեւին արագ է 'ի գրել. զի զոր գրէր, ա̃յ զոր ասէր՝ առ ժամայն կատարէր. զօրինակ յասելն ղազարէ, եկ արտաքս, իսկոյն յարեաւ մեռեալն. զայս մեկնութիւն յիշէ և վարդան այլով իմն կարգաւ։

Զայս ամենայն եղեւ մարգարէին իւր կանխաբանութիւն, և ցուցեալ՝ թէ զոր ունի խօսել՝ ոչ է յիւրմէ, այլ 'ի Հոգւոյն սրբոյ, սկսանի զյօրինուածս երգարանութե՟ն իւրոյ, և ասէ.

Գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան. Գեղեցիկ ասի ոք արտաքսապէս և ըստ մարմնոյն, յորժամ մասունք մարմնոյ են համեմատ, և իւրաքանչիւր մասունք պատշաճապէս ունին զգոյն իւրեանց. որպիսի եղև աբեսաղոմ։ Իսկ ներքսապէս և ըստ հոգւոյ ասի ոք գեղեցիկ եռակի. մի՝ 'ի բնական կարգի՝ յորժամ մասունք հոգւոյն՝ միտք, կամք, և ներքին զգայութիւնք իցեն կատարեալ, համեմատ միմեանց, և գործողութիւնք նոցա յաջող՝ իբրև զփայլմունս գունոյ. որպիսի եղև սողոմոն։ Երկրորդ՝ 'ի բարոյական կարգի, յորժամ կարգաւորեալ իցեն ամենայն զօրութիւնք հոգւոյն 'ի ձեռն պէսպէս առաքինութեանց իբր 'ի ձեռն գունոց. որպիսի եղեն այլք առաքինիք։ Երրորդ՝ 'ի գերբնական կարգի, յորժամ հոգին և կարողութիւնք նորա յա՟ծային շնորհաց կարգաւորեալ վայելչանան, ունելով զհաղորդութիւն ինչ ա՟ծային բնութեան, այսինքն զգենլով զա՟ծային իմն նմանութիւն. որպիսի եղեն հոգիք սրբոց։

Այս ամենայն միանգամայն առեալ լիապէս գտաւ 'ի մարդն առաջին, յորժամ 'ի սկզբնական արդարութե՟ էր։ Իսկ յայլս՝ ըստ մասին, այսինքն կամ սոսկ ըստ մարմնոյն, կամ սոսկ ըստ բնական կարգի, կամ ըստ բարոյական կարգի, կամ ըստ գերբնական կարգի, կամ խառն, որպէս եղև յայլեայլ անձինս։ Իսկ ըստ բոլորին առեալ միանգամայն 'ի կատարեալ աստիճանի՝ որպէս ասացաք միայն յադամ տեսաւ։ Այլ սակայն այն բոլորական գեղեցկութիւն հնոյն ադամայ, և այլ ո՛ և իցէ գեղեցկութիւն որդւոց նորա, եթէ համեմատեսցի գեղեցկութեան նորոյն ադամայ՝ այսինքն ք՟սի՝ ըստ որում էր մարդ, իբրև ստուեր նշմարի, սմին իրի ասէ.

Գեղեցիկ տեսանելով քան զամենայն որդիս մարդկան։ Բառդ՝ Գեղեցիկ՝ դնի աստ 'ի կոչական հոլովն՝ իբր առարկայ զարմացման. որպէս թէ ասէր. ո՛վ գեղեցիկդ և մի միայն գեղեցիկ փեսայդ երկնաւոր՝ որդի աստուծոյ, որով բանիւ՝ կողմացից գովաբանել զքեզ. Այս սկզբնաւորութիւն բանի ցուցանէ՝ թէ խօսողն ըմբռնեալ 'ի գեղեցկութեն փեսայիս՝ այսինքն քի՝ 'ի նոյն յափշտակեալ է բորբոքիլն. և յոր ըմբռնեալն է՝ զնոյն 'ի սկզբան օրհներգութեն առաջի դնէ.

Արդ քս գեղեցիկ ասի ոչ ըստ այսմ և ոչ ըստ այնմ կարգի, այլ ըստ ամի և յամի, և յամ կարգի. գեղեցիկ յածութեան, գեղեցիկ և 'ի մարդկութե. գեղեցիկ 'ի ծոց հօր, գեղեցիկ և 'ի ծոց մօր. գեղեցիկ 'ի հրեշտակս, գեղեցիկ և 'ի մարդիկ. գեղեցիկ յերկինս, գեղեցիկ և յերկիր. գեղեցիկ 'ի գոլն, գեղեցիկ և 'ի գործելն. գեղեցիկ 'ի խորհուրդս, գեղեցիկ և 'ի խօսս. գեղեցիկ 'ի կեանս, գեղեցիկ և 'ի մահու. գեղեցիկ 'ի սքանչելիս, գեղեցիկ և 'ի չարչարանս. գեղեցիկ 'ի խաչի, գեղեցիկ և 'ի գերեզմանի. գեղեցիկ 'ի յարութեան, գեղեցիկ և 'ի համբարձման. գեղեցիկ 'ի վարդապետելն, գեղեցիկ և 'ի դատելն. յամենայնի և ըստ ամենայնի մի միայն գեղեցիկ, քան զոր չէ հնար լինել 'ի մէջ որդւոց մարդկան։ Այլ թէպէտ (Եսայ. ծգ. 3.) ասի անարգ տեսլեամբ, բայց այդ մտածելի է համեմատութեամբ ածութե՝ եւս և վասն չարչարանաց խաչին. յոր սակս՝ յաւելու անդ եսայի ըղբառդ նուաղեալ յասելն. * տեսիլ նորա անարգ նուազեալ քան զամենայն որդւոց մարդկան ||.

Գեղեցկութիւնն քի ըստ որում մարդ՝ որոշակի առեալ՝ է հնգապատիկ. մի՝ գոյացական, որ է գեղեցկութիւն անսահման և անչափ, և այն՝ 'ի ձեռն անձնաւորական միաւորութե, որով մարդկային բնութիւն որպէս միաւորեցաւ ընդ ածային բնութեան, սոյնպէս միաւորեցաւ և ընդ ածային էական գեղեցկութեան. սմին իրի նա ինքն քս՝ յորում եղև այս անձնա միաւորութիւն, ասի և է գեղեցիկ ածային անսահման գեղեցկութբ. և զի ոչ ոք 'ի մարդկանէ եղև այսպիսի, վասն որոյ ասի գեղեցիկ քան զամ որդիս մարդկան. Երկրորդն է շնորհական և երանական, ըստ որում բանական հոգին քի գեղեցկացեալ էր լիութբ ամ շնորհաց և առաքինութեց, եւս և երանութբ ածային տեսութե ոչ ստացականապէս եւեթ, այլ սեփականօրէն իբր բնական ժառանգութի ունելով զայն, և այս՝ 'ի

զօրութենէ անձնաւորական միաւորութե՛ն. 'ի սոյն՛ վերածի և գեղեցկութիւն փառաց նորա, զոր ըստ տանելոյ աչաց առաքելոյն եցոյց 'ի Թաբոր։ Այլ զի ոչ ոք 'ի ստեղծուածոց կարաց ունել զայնօրինակ գեղեցկութիւն, վասն որոյ առէ, գեղեցիկ քան զամենայն որդիս
մարդկան։

Երրորդն է հոգևորական, այսինքն բնական գեղեցկութիւն հոգւոյն, վասն զի հոգին ք՟ի, նոյնպէս և զօրութիւնք հոգւոյ նորա թէ ըստ բանական մասին, և թէ ըստ զգայականին՝ ամենևին ամենայն իրօք կատարեալ էին յայնպիսի աստիճանի՝ քան զոր գերագոյն չէր հնար լինել և ոչ իսկ հաւատալ 'ի մէջ մարդկան. վասն որոյ և ըստ այսմ ասի գեղեցիկ քան զամենայն
որդիս մարդկան։

Չորրորդն է բանաւորական, այսինքն է գեղեցկութիւն խօսից կամ պատգամաց (զորմէ գրէ 'ի յաջորդ համարն.) յորում գերագոյն գտաւ քան զամենայն մարգարէս, և քան զառաջինն 'ի մարգարէս, այսինքն քան զՄովսէս. զի ամենեցուն սոցա բանք սուտեր էին բանիցն ք՟ի, և կամ իբր անհոգի մարմին. իսկ բանք ք՟ի հոգի էին և կեանք, (յովհ. զ. 64.) բերկրեցուցիչ և կենդանացուցիչ։ Բանք մարգարէից սոսկ յորդորիչք էին. և բանքն Մովսէսի՝ հնութե՛ն օրէնք. իսկ բանքն ք՟ի բովանդակիչք և լրացուցիչք. * օրէնքն 'ի
„ձեռն Մովսէսի տուան, շնորհք և ճշմարտութիւն 'ի
„ձեռն յ՟ի ք՟ի եղեն‖. (յով. ա. 17.) նոքին տուան, սոքին եղեն. որովք և սքանչելի ցուցաւ տէրն մեր քան զամենայն որդիս մարդկան, և մի միայն գեղեցիկ քան
զամենայն։

Հինգերորդն է մարմնաւոր, այսինքն է գեղեցկութիւն ըստ մարմնոյ։ Այլ այս գեղեցկութիւն զանազանելի է. վասն զի կայ գեղեցկութիւն մարմնոյ ըստ չքնաղութեան, և կայ գեղեցկութ՟ի մարմնոյ ըստ վայելչութե՛ն, որ է գեղեցկութիւն պատկառեցուցիչ։ Արդ գեղեցկութիւնն ք՟ի ոչ էր ըստ չքնաղութե՛ն, որպիսի էր աբեսաղոմայ. (բ. թագ. ժդ. 15.) այլ ըստ վայելչութեան։ Զի ըստ աւանդելոյ ճծաբանից՝ վայել էր ունել ք՟ի զայնպիսի գեղեցկութիւն մարմնոյ, որ իցէ յարմար այնմ՝ որոյ վասն եկեալ էր յաշխարհ, այսինքն 'ի փրկել զմարդիկ, և 'ի ցուցանել նոցա զճանապարհ փրկութեան. իսկ առ այս յարմար էր ունել ոչ զգեղեցկութիւն չքնաղութեան, այլ զգեղեցկութիւն վայելչութե̃ առ 'ի պատկառեցուցանելոյ զտեսօղսն՝ և հաւանեցուցանելոյ զլսօղսն. արդ զայս ունէր քս̃ յայնպիսի աստիճանի՝ յորպիսում ոչ գտաւ ոք յորդիս մարդկան. վասն որոյ ըստ սմին մասին ևս ասէ գեղեցիկ քան զա̃մ որդիս մարդկան.

Զայսմ գեղեցկութե̃ տեառն մերոյ խօսելով Իգնատիոս վարդապետ. ('ի մեկն. ղուկ. ժա̃. 27.) գրէ այսպէս. * ա̃միւ գեղեցիկ և զարմանալի էր տեսիլ նորա. զի ունէր մարմին չափահասակ. և մասունք անդամոցն պատշաճ. ոչ կարի երկայն մարմնով՝ որ թուի անհեթեթ տեսողացն. և ոչ փոքր՝ որ է արհամարհելի. այլ չափով ընտրութե̃ որոշեալ. և դիմացն պատկեր կարի զուարթ և հեշտալի տեսողացն. և զինչ ևս աւելի է զնորա առաւելութիւն զարմանալի գեղոյն, և յօժարիլ բանիւ գրել զայն, ուր և դաւիթ յայս հայեցեալ հոգւովն ասէ. գեղեցիկ տեսանելով քան զա̃մ որդիս մարդկան ‖. Զայս գեղեցկութիւն նորա, ասէ. * տեսեալ կնոջն՝ (որ յիշի յաւետարանի ղուկ. ժա̃. 27.) և զքաղցր և զհեշտալի բարբառն լուեալ՝ ասաց. երանի որովայնին՝ որ կրեացն զքեզ ‖.

Եւ արդ քանզի զայս ասէ մարգարէն զքս̃է ըստ որում փեսայացեալ. այսինքն ըստ որում մարմնացեալ և մարդացեալ. կամ ըստ որում որդի մարդոյ և 'ի կերպարանս մարդոյ, յայն սակս դնէ լինել ըստ տեսանելոյ. զի գեղեցկութիւնն է առարկայ տեսութեան. յոր միտս սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. ա̃. 18. ճառ է̃.) զայս գեղեցկութիւն ըստ մարմնոյն և ըստ մարդկութեան եդեալ՝ զա̃ծութե̃ն պատիւ յանուշահոտութիւն առակէ յասելն. * գեղեցիկ է տեսանելով քան զորդիս մարդկան (ըստ մարդկութե̃ն,) և անուշահոտ իւրով ա̃ծութե̃ն ‖.

Իսկ բառդ տեսանելով՝ դնի փոխանակ բառիս տեսլեամբ. զի այս բառ՝ այսինքն է բառդ տեսանել՝ յորժամ հոլովմամբ վարի, 'ի գործ ածի իբր գոյական. և դնի 'ի տեղի բառիս տեսիլ, որոյ գործիականն լինի տե-

չեամբ. որպէս և այն՝ որ ասի զՈնեայ քաՀանայապետէ. (Բ. մակ. ժե. 12.) * գեղեցիկ Հայելով, չքեղ տե-
,, սանելով. Հեզ բարուք ||. որ է ասել. չքեղ էր 'ի տեսանելն. Աստ այժմ և աստ ասի. գեղեցիկ տեսանելով, այսինքն գեղեցիկ տեսլեամբ, կամ գեղեցիկ կերպարանօք, որ է ասել՝ գեղեցիկ 'ի տեսեալ գոլն. Եւ պատճառ այսպէս ընելոյն է, զի որովՀետև այս գեղեցկութիւն՝ (զորմէ խօսի աստ մարգարէն՝ որպէս ասացաք) Հայի 'ի քն ըստ որում տեսեալ եղև 'ի կերպարանս մարդոյ. վասն որոյ բառիս տեսանելով դնի առաջի. կամ բառիս 'ի տեսանել ըստ գրելոյ Նարեկացւոյն. ('ի մեկն. երգ. Ե.) ուր ասէ. * գեղեցիկ էր 'ի տեսանելն քան զամենայն որդիս մարդկան ||. Ոմանք աստանօր զբառդ գեղեցիկ՝ վերածեն 'ի լեզուն իւր ածական նորին. իբրև թէ ասել. լեզու իմ... գեղեցիկ է քան զլեզուս ամենայն որդւոց մարդկան. Այլ այս մեկնութիւն չյարմարի մտաց բնաբանիս. Ոմանք ևս Համարին ածական արագագիր դպրի. յայս միտս և գէորգ վարդապետ 'ի ձեռն արագագիր դպրի իմանալով զսյն ասէ. ('ի մեկն. եսայ.) թէ * դաւիթ զլե-
,, զուն իւր գրիչ գիտէ Ճարտար դպրին (Յսի) որ գե-
,, ղեցիկ է տեսլեամբ քան զամենայն մարդիկ. որոյ ան-
,, սկիզբն 'ի Հօրէ ծնունդ անծանօթն 'ի բնաւից ոչ
,, գրեցաւ գրչաւ մարդոյ, զի զազգատոՀմ նորա ո՞ պատ-
,, մեսցէ, իսկ վասն 'ի կուսէ ծննդեան գրեաց մարդա-
,, րէն՝ թէ աՀա կոյս յղասցի ||.

Կայ աստ և այլ ինչ քննելի. զի յասել մարգարէին, գեղեցիկ քան զամենայն որդիս մարդկան, ոչ յաւելու դնել՝ և քան զամենայն Հրեշտակս, ևն, և պատճառն է զի որովՀետև խօսի աստ զքնէ՝ ըստ որում մարդացեալ, Համեմատութեամբ որդւոց մարդկան միայն առաջի առնէ զգեղեցկութի նորա ըստ տեսանելոյն. Ապա 'ի մէջ բերելով և զգեղեցկութիւն նորին ըստ խօսելոյն՝ ասէ.

Գ. Սփռեցան շնորհք 'ի շրթունս քո. վն այսորիկ օրհնեաց զքեզ ած յաւիտեան.

Բառս շնորհք՝ ընդՀանրապէս մտածեալ չորեքկին առեալ լինի. մի՝ փոխանակ ձրիաբաշխ իրի. յոր միտս ասի. * անզեղջք են շնորհք այ ||. (հռովմ. ժա. 29.) ըստ այսմ առման նշանակէ նաև զածային նպաստս. յայս միտս և ածային պարգևք՝ որք հեղեալ լինին 'ի հոգին՝ շնորհք կոչին. և մասնաւորապէս այն պարգև՝ որ կոչի սրբարար շնորհք. և սա է՝ զորմէ տիրապէս ասի, թէ սփռեցան շնորհք 'ի շրթանցն քսի. Այս շնորհք է հաղորդութիւն ածեղէն բնութե ըստ վկայելոյ առաքելոյն. (բ. պետ. ա. 4.) և է այնպիսի ինչ, որով նկարի 'ի հոգին երկնային նմանութիւն ինչ այ. և մարդս լինի որդեգիր այ. եղբայր քսի, և ժառանգ ածային գանձուց: Այս շնորհք է լոյս յանստուեր լուսոյ և ճառագայթ յաննուաղ փառաց, գլուխ յաւիտենական փրկութեան և սերմն արքայութե. լնութիւն օրհնութեան, և զեղումն առաքինութեան, նորոգութեան կենաց, և սրբութիւն հոգւոց: Այս գանձ է՝ որ սփռի 'ի քսէ իբրև 'ի հեղինակէ նորին. ունելով յինքն զօրհնութի 'ի հօրէն լուսոյ. զորմէ խօսի մարգարէն 'ի յեսայայ:

Երկրորդ՝ առեալ լինի շնորհքն փոխանակ շնորհալութեան, այսինքն փոխանակ սքանչելի փառաւորութեան. յոր միտս ասաց եսթեր առ արտաշէս արքայ. * սքանչելի ես տէր իմ, և երեսք քո լի են շնորհօք ||. այսինքն չքեղակերպ և փառաւոր. (եսթեր ժե. 17.) և ըստ այսմ առման՝ նշանակէ նաև զազնուութիւն, զվայելչութիւն, զախրժելութիւն, զհաճոյութի, և այլն. յոր միտս ասի, շնորհս գտանել առաջի այլոյ: Երրորդ՝ առեալ լինի փոխանակ շահու կամ օգտի կամ ազդուութեան, յոր միտս ասաց պօղոս (եփես. դ. 29.) թէ բան ձեր այնպիսի լինիցի՝ զի * տացէ շնորհս ա-
,, նոցիկ՝ որք լսենն ||. այսինքն տացէ շահ՝ կամ օգտեսցէ և կամ ազդեսցէ: Չորրորդ՝ փոխանակ շնորհակալութե, կամ փոխանակ այնպիսի բանից, որք յայտ առնեն զընկալեալ շնորհս, յոր միտս ասի. * շնորհս
,, ունել ումեք ||, այսինքն է շնորհակալ լինել բանիւք վասն ընկալեալ շնորհացն: Արդ քանզի այս ամենայն (թող զչորրորդն) յայտնի փայլէր 'ի բանսն քսի, վասն որոյ ասէ:

Սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց: Ուր բառդ շնորհք դնի 'ի թանձրացեալն՝ փոխանակ բանիցն քսի. ըստ որում ունէին զերրեակ կատարելութիւնս շնորհաց ըստ նախագրելոյդ. մի՝ զի էին ձրի, առատ, անզեղջ, սուրբ, և այլն։ Երկրորդ՝ զի էին փառաւոր և սքանչելի. մինչև ըստ ասելոյ աւետարանին, * ամենեքին վկայէին „ նմա, և զարմանային ընդ բանս շնորհաց, որք ելանէին 'ի բերանոյ նորա ‖. (ղուկ. դ. 22.) Երրորդ՝ զի էին փրկարար 'ի շահ և յօգուտ լսողաց. ըստ որում վկայեցին և թշնամիք նորա յասելն. * ոչ երբեք այն„ պէս խօսեցաւ մարդ, որպէս այրն այն ‖ (յովհ. է. 46.) մինչև պատճառել զզարմանալիս թէ 'ի հոգիս, և թէ 'ի մարմինս, որպէս յայտնի տեսանի յաւետարանի. զի յասելն ցմաքսաւորն. Եկ զկնի իմ, լցաւ նա շնորհօք. և թողեալ զամենայն յարեցաւ 'ի նա։ Յասելն ցչորեքօրեայ մեռեալն, Եկ արտաքս, յարեաւ 'ի կեանս։ Յասելն ցծով և ցհողմ, կարկեա՛. եղև հանդարտութիւն։ Այլ որ քան զամենայն հրաշալին է, յասելն զհացէ՝ այս է մարմին իմ, 'ի նոյն փոխեցաւ։

Արդ այսոքիկ ազդուութ̃իք բանիցն ք̃ի էին զեղմունք շնորհաց զորս բղխէր նա 'ի լիութենէ անտի զոր ունէր, որոյ վասն ոչ ասէ մարգարէն, ելին շնորհք 'ի շրթանց քոց. այլ հեղեցաւ, որ է ծաւալմամբ տարածիլ. որով նշանակի նախ՝ թէ բանն որ ելանէր 'ի բերանոյն ք̃ի՝ իբրև յականէ աղբեր ծաւալէր 'ի լսելիս այլոց, որպէս լոյսն յարեգակնէ. Նշանակի երկրորդ՝ թէ շնորհք բանի կամ շնորհք խօսելոյ սեփական էր նմա, և բնական, և ոչ ուսմամբ կամ գործածութ̃ե ստացեալ. Նշանակի երրորդ՝ թէ բանն ք̃ի որ ելանէր 'ի շրթանց նորա, հանդերձեալ էր տարածիլ յաշխարհ ամենայն, որպէս և եղև իսկ, զի 'ի սակաւ ժամանակի ընդ ա̃մ երկիր սփռեցաւ։

Քննելի է և այն՝ զի ոչ ասէ սփռեցան 'ի բերանոյ քումմէ, այլ 'ի շրթանց քոց. որով նշանակի ունել ք̃ի զլիութիւն կատարելութ̃ե խօսելոյ. յորմէ զեղեալ լինէր բանն ընդ շրթունս նորա, որպէս իւղ առատ լցեալ յանօթ՝ զեղեալ լինի ընդ շրթունս նորուն։

Այր շնորհալի զեղման բանի մերձաւոր և անմիջական պատճառք բազում էին. մի՝ ամենակատար կազմութիւն մարդկային բնութ̃ե, և ամենակատար դերազանցութիւն իւրաքանչիւր կարողութեանց հոգւոյն, եւս և զգայարանացն. երկրորդ՝ լիութիւն շնորհաց և պարգևաց հոգւոյն սրբոյ. երրորդ՝ լիութիւն իմաստութեան և գիտութեան. չորրորդ՝ լիութիւն երանութեան և փառաւորութեան հոգւոյն։ Իսկ սկզբնական և արմատական պատճառն էր միաւորութիւն անձնաւորական, որով հոգին քո անփականեալ ունէր ինքեան զամենայն կարելի և մտածելի կատարելութիւն խորհրդոց, բանից և գործոց։

Երկրորդական մեկնութիւն՝ բառս շնորհ կարէ առեալ լինել ըստ 'ի վերայեալն փոխանակ նոյն իսկ շնորհաց. և ըստ այսմ յարելն, սփռեցան շնորհք 'ի շրթանց քոց՝ ցուցանի թէ ամենայն շնորհք 'ի քէն զեղանին 'ի մեզ. ըստ որում նա է սկզբնական պատճառ ա՛ և իցէ շնորհաց և ճշմարտութեան. ըստ այնմ (յովհ. ա. 17.) * շնորհք և ճշմարտութիւն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի ե„ղեն‖. քանզի ինքն էր * լի շնորհօք և ճշմարտու„թեամբ‖. (յովհ. ա. 14.) և * 'ի լրութենէ նորա „մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնոր„հաց‖. (յովհ. ա. 16.) Իսկ քանզի այս է 'ի լրութենէ օրհնութեան հօրն լուսոյ, սմին իրի յարէ զկնի մարգարէն, և ասէ.

Վասն այսորիկ օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան։ Բառս վասն այսորիկ՝ կրկնակի յարէ զայս բան ընդ նախընթացին, այսինքն իբր պատճառ և իբր հետևութիւն. իբր պատճառ յարելով՝ դնի փոխանակ բառիս վասն այսորիկ զի. և ըստ այսմ այս բան լինի պատճառ նախընթացին. որպէս թէ ասէր. գեղեցիկ ես քան զամենայն որդիս մարդկան և շրթունք քո սփռեն զշնորհս վասն այսորիկ՝ զի օրհնեաց զքեզ Աստուած յաւիտեան. իբր զի այն օրհնութիւն եղև պատճառ գեղեցկութեան քոյ և բղխելոյ քոյ զշնորհս, և այլն։ Նոյն շաղկապութիւն երևի ուղղագոյն, և ըստ իմիք համաձայն եբրայականին. այլ զայսմ օրհնութենէ ասասցուք այժմ և եւս։

Իսկ իբր հետևութիւն յարելով՝ այս բան առաջի դնի այսպէս. որովհետև գեղեցիկ ես, և շնորհս սփռեն շրթունք քո. վասն այսր պատճառի հայրն երկնաւոր սիրեաց զքեզ առաւել քան զամենայն, և օրհնեաց զքեզ. որով ոչ ցուցանի՝ թէ յառաջ քան զերևելի գեղեցկութեանն քոյ, և շնորհաց բերանոյ նորա, ոչ էր նա սիրեցեալ և օրհնեալ, այլ թէ այն ներգործական երևումն էր նոր խնամ առիթ օրհնութեան և սիրոյ. յոր միտս նա ինքն ասաց զայն բան՝ թէ * վասն այնորիկ „ սիրէ զիս Հայր, զի ես դնեմ զանձն իմ ‖. (յովհ. Ժ.) Ըստ որոյ բացայայտութ՟ի գիտելի է, զի օրհնութ՟ին ք՟ի և փառք նորա և ամենայն որ ինչ առ օրհնութ՟ի և առ փառս նր՟ հայլին, մտածին կրկնակի. մի՝ 'ի գիտման յորդիլ և 'ի սահմանիլ խորհրդոյ մարդեղութ՟ե 'ի միտս այ՟ 'ի յաւիտենից. և մի ևս 'ի գործադրութ՟ե. 'ի գիտման՝ այնպէս սեփական էր ինքեան այն օրհնութիւն և փառք և այլ ամենայն կատարելութ՟իք, մինչև ոչ ևս իւիք արդիւնաւորիլ զնոյնս կամ շահիլ. զի արդէն իւր էին, որպէս լոյսն է արեւու, և առաւել ևս. և այս վասն անձնաւորական միաւորութ՟ե, որով սահմանեցաւ որդի այ՟. (Հռովմ. ա. 4.)

Իսկ 'ի գործադրութեան, կամեցաւ արդեամբք ևս ունել զնոյնս. ոչ զլինելն որդի այ՟, զի արդէն էր, այլ զհետևանս այնր, իբր զի զայն կատարելութիւնս՝ որք վասն որդի այ՟ լինելոյ ինքեան սեփականեալ լինէին, արդեամբք ևս արար իւր. և յայս միտս ասաց նա ինքն * ո՞չ զնոյնս պարտ էր չարչարիլ ք՟ի, „ և մտանել 'ի փառս իւր ‖ (ղուկ. իդ. 26.) իբր զի թէպէտև իւր էր այն փառք, բայց կամեցաւ՝ զի կրեսցէ և զչարչարանս, և այնու չարչարանօք ևս ստասցի զնոյն, և մտցէ յայն՝ ոչ իբր յայլոյ փառս, այլ իբր յիւր. Ըստ այսմ իմացեալ լինի և աստ ասելն. վասն այսորիկ օրհնեաց զքեզ ա՟ծ յաւիտեան. այսինքն, ա՟ծ որ օրհնեալ էր զքեզ յաւիտենից, և տուեալ էր քեզ զամենայն փառս, 'ի լրանալ խորհրդոյն տեսեալ զգեղեցկութիւն քոյ և զշնորհս քո, վասն այդր ևս ետ քեզ զնոյն օրհնութիւն ոչ իբր զօտարի, այլ իբր զքոյ. և այն մնայ յաւիտեան.

Եւ արդ քանզի այս խորհուրդ կատարեցաւ վասն փրկութեան մարդկան, զայն օրհնութիւն զոր էառ որդին իբրև գլուխ փրկելոց, եհեղ և 'ի փրկեալսն իբրև յանդամս իւր. որով որպէս ինքն օրհնեցաւ 'ի հօրէ իրաւամբք որդիութեան, այսպէս ևս օրհնեաց զանդամս իւր ոչ իրաւամբ որդիութեան, այլ շնորհօք որդեգրութեան. Այլ թէ զինչ պարտ էր նմա առնել յայս փրկագործութիւն, կամ թէ զխօրդ համեցաւ փրկել, յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով։

Դ. Ա՛ծ սուր ընդ մէջ քո հզօր. վայելչութեամբ եւ գեղով քով։

Մարգարէն ըստ կարգի թուելով զկատարելութիւնս երկնաւոր փեսային, նախ 'ի մէջ եբեր զգովութիւն գեղեցկութեան նորա յինքեան. ապա 'ի մէջ եբեր զգովութիւն գեղեցկութե̃ նորա 'ի բանս. այժմ 'ի մէջ բերէ զգովութիւն գեղեցկութե̃ նորա 'ի զօրութեան 'ի գործսն. վասն որոյ ասէ.

Ա՛ծ սուր ընդ մէջ քո հզօր։ Այս բան հայի յայն սովորութիւն՝ զոր ունէին եւ ունեն արեւելեան ազգք, իբր զի որ թագաւորէր՝ սուր ածէր ընդ մէջ, եւ առանց այսր զրեթէ ոչ հաստանէր, այսինքն ոչ զօրէր թագաւորութիւն նորա. ըստ սմին եւ որ փեսայանայր՝ սուր ածէր ընդ մէջ իւր, առ 'ի թագաւորակերպ զարդարիլ նովաւ, եւ երեւիլ վայելուչ եւ գեղեցիկ՝ հզօր եւ յաղթող, եւ այս առ 'ի նշան պատերազմելոյ ընդ ապստամբութիւն մարմնոյ, եւ թագաւորելոյ 'ի վերայ բռնութեան ցանկութեան։ Յայս սովորութիւն հայելով մարգարէին՝ նկարագրէ զզօրութիւն եւ զիշխանութիւն երկնաւոր փեսային. եւ առաջի ընծայէ նմա ածել զայն ընդ մէջ իբրեւ զսուր, որով ցուցանի նախ փառաւորիլ զօրութեամբ. որպէս թէ եղեալ էր. դու որ միայն հզօրդ ես՝ ցոյց զզօրութիւն քո եւ զիշխանութիւն քո. եւ փառաւորեսջիր նովաւ։ Ցուցանի երկրորդ՝ փառաւորիլ բանիւ. յոր միտս կամի ասել. ած եւ ըզբան աւետարանի քո իբրեւ զսուր 'ի հատանել յաշխարհէ զգործս մեղաց եւ 'ի վանել զատս վարդապետութիւնս մարդկան, եւ զպատիր թելադրութիւնս դիւաց։ Այլ աստ գիտել արժան է, զի զբառդ հզօր՝ զոր մեք կարդեցաք 'ի դէմս յոն իբր կոչականապէս, յասելն ած հզօր, ոմանք յարեն 'ի բառդ սուր իբր ածական. որպէս թէ եղեալ էր, ած զհզօրագոյն սուր քո ընդ մէջ. այս եւս 'ի դէպ է, եւ յարմար մտաց բանին, եւ դիտաւորութեան մարգարէին 'ի յանդիման ածել զընդմէջածութիւն հզօրագոյն սրոյ. (տե՛ս 'ի համեմատութիւնս։) Յաւելու ապա ասել.

Վայելչութեամբ և գեղով քո ։ Ըստ ասացուած հնգապատիկ՝ յարի յայն զոր ասաց . * ած զսուր ընդ մէջ քո „ հզօր ‖ . մի՝ առ ՚ի ցուցանել զեղանակ ընդմիջածութեան սրոյ . և ըստ այսմ բառքդ վայելչութիւն և գեղ՝ դնին աստ իբր մակբայապէս, որպէս թէ ասէր . ած զսուր ընդ մէջ քո վայելչապէս և գեղեցկապէս, կամ թէ ած զսուր քո որպէս վայել է ածել, և որպէս պատշաճ է վարել ։

Երկրորդ՝ առ ՚ի ցուցանել զվախճան ընդմիջածութեն . և ըստ այսմ բառքդ վայելչութիւն և գեղեցկութիւն նշանակեն ՚ի թանձրացեալն փոխանակ վայելուչ գործոյ և գեղեցիկ վարդապետութեան . որպէս թէ եղեալ էր . ած ընդ մէջ զզօրութիւն քո ՚ի գործել զգործս վայելուչս փրկագործութեան քո, և ՚ի քարոզել զգեղեցիկ բանս աւետարանութեան քոյ ։ Իսկ եթէ զօրութեամբ իմացեալ լիցի աստ և բառդ հզօր, բառքդ վայելչութեան և գեղոյ ՚ի թանձրացեալն առեալ՝ խորհրդաբար հայլին ՚ի հարսն քոյ յեկեղեցի սուրբ . որպէս թէ եղեալ էր . զարդարեա զանձն քո վասն եկեղեցւոյ, որ է հարսն քո վայելուչ և գեղեցիկ ։

Երրորդ՝ ՚ի ցուցանել զօրպիսութի սրոյն՝ զոր եդ . և ըստ այսմ բառքդ վայելչութեան և գեղոյ դնին իբր յատկացուցիչ սրոյն . որպէս թէ ասէր . ած ընդ մէջ քո զսուր վայելչութեան և գեղոյ քոյ . որով կամի ասել, թէ այն սուր է վայելուչ և գեղեցիկ՝ քոյին վայելչութեամբ և գեղեցկութբ ։

Չորրորդ՝ ՚ի ցուցանել զներգործ յատկութիս սրոյն՝ զոր եած ընդ մէջ . և ըստ այսմ բառքդ վայելչութեան և գեղոյ դնին իբր բացայայտիչ զօրութեան սրոյն . որպէս թէ եղեալ էր . ած ընդ մէջ զսուր քո այսինքն զվայելչութիւն և զգեղեցկութիւն քոյ . որ է ասել . ած ընդ մէջ քոյ զայն սուր քո որ է վայելչութիւն և գեղեցկութիւն քոյ, կամ վայելչութիւն գեղեցկութե քոյ . և գուցէ յայս միտս ՚ի քանի մի ձեռագիրս մեր, և ՚ի մեկն". լամբ". դնի . ած զսուր ընդ մէջ քոյ հզօր՝ զվայելչութի գեղոյ քո ։

Ըստ այսմ առեալ զայս բան՝ բառիւդ վայելչութեան նշանակի զօրութի իմաստութեն քոյ, և բառիւդ գեղ այսինքն գեղեցկութիւն՝ նշանակի զօրութիւն արդարութ՟ե նորա. վասն զի վայելչութիւնն է յայտ յանդիմանութիւն կամ պայծառ երեւումն յարմար գեղեցկութեան, որով կարէ բերել 'ի նմանութիւն իմաստութեան՝ որ է յայտյանդիմանութիւն ամենագեղ ճշմարտութեան. սոյնպէս և գեղեցկութ՟ին է համեմատութիւն մասանց հանդերձ պատշաճողութ՟ք գունոյն. որով բերի յօրինակ արդարութ՟ե, որ է համեմատութ՟ի ինչ հաւասարութեան։ Արդ որ ունի զիմաստութիւն 'ի միտս և զարդարութ՟ի 'ի կամս, ունի սուր երկսայրի ընդդէմ թշնամւոյն։

Սոքիմբք ահա քո զինեալ՝ եւ ընդդէմ սատանայի. ոչ զինեցաւ իւրով ամենակարողութեամբ. զի մի ասիցէ, հզօր էիր՝ բռնացար, այլ իմաստութ՟ք և արդարութ՟ք, իմաստութ՟քն յաղթեաց խորամանկութ՟ե նորա. և արդարութ՟քն յաղթեաց չարութ՟ե նորին։ Ուր յաւել մեր իմաստութ՟ք՝ փակի այն ամենայն՝ զոր արար քո իմաստութ՟ք. նոյնպէս և յաւել մեր արդարութեամբ՝ փակի այն ա՟մ՝ զոր արար նա արդարութ՟ք։

Հինգերորդ՝ առ 'ի ցուցանել՝ թէ այն ընդմիջածութ՟ի որոյ եղև ըստ վայելուչ իմաստութեանն. և ըստ գեղեցիկ արդարութեան։ Իսկ ըստ այսմ բառքդ "Վայելչութիւն և գեղ՝ ոչ են իբր խնդիր, ըստ որում է տեսանել յերբ". որպէս թէ եղեալ էր. ած ընդ մէջ քո զսուր՝ վայելչութ՟ք և գեղեցկութ՟ք քով, որպէս դնէ և գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) յաւելն. * ած „ զսուր քո ընդ մէջ հզօրդ՝ վայելչութեամբ և գեղով „ քով"։ կամ ըստ վայելչութ՟ե քո, այսինքն ըստ իմաստութեան քոյ, և ըստ գեղեցկութ՟ե քոյ, այսինքն ըստ արդարութ՟ե քոյ։

Օ այսմանէ արժան է գիտել՝ զի արդարութիւնն ա՟յ որ մեղօք մարդկան աղաւաղեցաւ, պահանջէր՝ զի կամ հատուցումն լիցի այնմ, և կամ որ աղաւաղեացն՝ դատապարտեսցի, որպէս զի անարատ ցուցցի այն արդարութիւն. բայց քանզի ողորմութիւնն ա՟յ ոչ թոյլ տայր դատապարտել մարդկան, կամէր ա՟ծ՝ զի գտցի որ գոնէ իւիք կարիցէ հատուցանել։ Այլ այս եւս էր անկարելի որպէս ասացաք այլուր. վասն զի պիտոյ էր հատուցանողին ունել զարժանաւորութիւն անսահման.

որովհետև անարգանքն այն՝ որով աղաւաղեցաւ արդարութիւնն ա̃յ՝ փակեր յինքեան զբարոյական պարտաւորութիւն անսահման ։

Իսկ պատճառ այսպէս անսահման լինելոյ պարտաւորութեան անարգանաց այս է, զի այնքան մեծանայ անարգանքն՝ որքան մեծ է անարգեալն. և զի յանսահմանս մեծ է ա̃ծ, և յանսահմանս չնչին իմն է մարդս, ըստ որում է յոչնչէ. անարգանքն՝ զոր հասոյց մարդ արդարութե̃ն ա̃յ մեղօք, յանսահմանս եղև մեծ. ուստի և առ հատուցումն այնր պիտոյ էր վճարումն լինել այնպիսեաւ՝ որ ունիցի զանսահման յարգ որպիսի լինէր այնր անձին, որ ունէր զանսահման արժանապատուութիւն. և զի ոչ էր ումեք հնար ունիլ զայսպիսի արժանաւորութիւն, ոչ ևս լինէր հնար մարդկան հատուցանել։

Այս անհնարին գործ հնարեցաւ իմաստութիւնն ա̃յ առնել այնպիսի ինչ, որ իցէ 'ի վեր քան զհասողութիւն ո՛ և իցէ մտաց, այսինքն է՝ միոյ յերից անձանց ամենասուրբ երրորդութե̃ մարմին զգենուլ և մարդանալ, և որ ա̃ծն էր՝ լինել մարդ, և այնու իբրև մարդ 'ի գլխոյ մարդկութեան հատուցանել արդարութե̃ն ա̃յ։ Այս խորհուրդ ասաց հայրն ա̃ծ և հոգին սուրբ առ որդին միածին, ա՛ծ զսուր ընդ մէջ քո հզօր՝ վայելչութեան և գեղոյ քո։ Ած յայնժամ և որդին զայն սուր ըստ վայելչութեան ՙանսահման իմաստութե̃ իւրոյ, և ըստ գեղեցկութեան ամենակատար արդարութեան։ Եւ ըստ այսմ 'ի ձեռն որոյ իմացեալ լինի աստ մարմնոյ խոնարհութե̃, կամ մարդկայինս բնութիւն, կամ իսկութիւն ծառայական կերպի, զոր եած ընդ մէջ, այսինքն զոր զգեցաւ որդին ա̃յ և եհատ զպարտաւորութիւն մարդկան. և լեալ մարդ ճշմարիտ, ըստ որում մարդ՝ հատոյց զոր մարդիկ ունէին հատուցանել, որով և ազատեաց զնոսա 'ի դատապարտութե̃, և վերածեաց 'ի կեանս, թագաւորեալ 'ի վերայ ամենայնի։ Մ՛արթ է յաւելուլ 'ի վերջոյ, թէ բառքս վայելչութե̃ և գեղ հային 'ի հզօրն. որպէս թէ եղեալ էր. որ հզօրդ ես վայելչութե̃ և գեղեցկութե̃. կամ թէ որովհետև հզօր է սուր քո վայելչութե̃ և գեղեցկութե̃, ած զայն ընդ մէջ քո. լարեա՛ ասա և զաղեղն քո, և թագաւորեա. և զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն՝ ասելով.

Ե. Լարեա՛ յաջողեա՛ և թագաւորեա՛ վասն ճշմարտութեան, հեզութե̃ և արդարութե̃. և առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո։

Երկու ինչ արար տէրն մեր 'ի մարդանալն. առաջինն է փրկել զմարդիկ, ազատելով 'ի ձեռաց սատանայի. և հաշտեցուցանելով ընդ հօր։ Երկրորդն է ցուցանել նոցա ճանապարհ փրկութեան 'ի ձեռն բանից, և գործոց, և փրկարար խորհրդոց։ Յետ կատարելոյ զայսոսիկ՝ կատարեցաւ և 'ի փառս. զի վերացեալ յերկինս փառօք՝ թագաւորեաց 'ի վերայ ամենայնի. և այս թագաւորելս մտածի իբր երրորդումն, այսինքն իբր լրութիւն կամ իբր լրացուցումն ամենայնի։ Յաղագս առաջնոյն դնէ լարել. յաղագս երկրորդին՝ յաջողել. և յաղագս երրորդին՝ թագաւորել։ Նայելով 'ի լարելն ասէ՝ վասն արդարութե̃. Նայելով յաջողելն՝ ասէ՝ վասն հեզութեան։ Նայելով 'ի թագաւորելն՝ ասէ վասն ճշմարտութեան։ Ըստ այսմ կարգի խօսելով՝ ըստ առաջնոյն ասէ.

Լարեա . . . . . . վասն . . . արդարութեան։ 'Ի նախընթաց համարն ասաց. ած զսուր ընդ մէջ քո հզօր. և զոր անդ սուր կոչեաց, զնոյն նետ կոչէ 'ի յաջորդ համարն՝ ըստ այլ իմն հանգամանաց, ասելով նետք քո սրեալ են հզօր, և դարձեալ՝ զոր անդ վասն սրոյն ասաց ած, աստ վասն նետից ասէ լարեա՛ զաղեղն. երկոքին եւս 'ի նոյն միտս դնին, և նշանակեն զայն ամենայն՝ զոր եդաք 'ի նախընթաց համարն. վասն սրոյն տես անդ։

Իսկ վասն նետից գիտելի է. զի եթէ բառդ նետ՝ հայեսցի 'ի հանգամանս մարմնոյն, զոր էառ որդին ա̃յ, սոյնն կամի ասել, լարեա՛ այսինքն տարածեա՛ զբազուկս քոյ 'ի վերայ խաչին, և մարմնովդ իբր նետիւ հար զթշնամին ազգի մարդկան, և ազատեա զնոսա։ Իսկ եթէ նետիւք նշանակեսցին կատարելութիւնք ըստ առաքինութե̃ց, կամի ասել. լարեա՛ ընդդէմ թշնամեաց մերոց զխոնարհութիւն քո, զհնազանդութիւն քոյ, ե̃ն. իբրեւ զնետս. և նովիմբք հար զնա որ է ասել խորտակեա՛ զբռնութ՟ի նորա. հա՛ն զազգ մարդկան ՚ի ձեռաց նորա. սրբեա՛ ՚ի մեղաց. մաքրեա՛ յաղտեղութ՟է, և հաշտեցո՛ ընդ հօր քում:

Այլ զի այսմ գործոյ համեմատի բան արդարութեան, վասն այսորիկ որպէս զլարելն եդ ՚ի սկզբան, նոյնպէս և զայն՝ այսինքն զարդարութիւնն դնէ ՚ի վերջոյ, յասելն. վասն ճշմարտութ՟ե, հեզութ՟ե և արդարութ՟ե. ուր ասելն վասն արդարութեան՝ հայի յայս առաջին հատուած. որպէս թէ եղեալ էր. լարեա՛ վասն ցուցանելոյ զարդարութիւն քո. կամ լարեա՛, վասն զի արդար ես և զարդարութ՟ի սիրես: Խօսի ապա և յաղագս երկրորդին՝ ասելով.

Ուղղեա՛ . . . . . վասն . . . հեզութեան: Ուղղելն կրկնակի կարէ լինել. մի՝ վերածելով զթիւրեալն յուղղութիւն. և երկրորդ՝ կարգելով զիրն ըստ կանոնի: Զերկոսին զայսոսիկ արար ք՟ս սքանչելի իմն օրինակաւ՝ եթէ ըստ բանի վարդապետութեան, եթէ ըստ կարգի իշխանութեան, և եթէ ըստ սրբարար խորհրդոց: Զբան վարդապետութ՟ե զոր թիւրեալ էին մարդիկ, մ՟նաւանդ փարիսեցիք՝ յուղղութիւն վերածելով՝ յաւել և ինքն ըստ անստերիւր ճշմարտութեան վարդապետութիւն երկնային: Զկարգ հոգևոր իշխանութ՟ե սքանչելի օրինակաւ ուղղեաց. զի փոփոխեալ զառաջինն՝ եդ զմի ՚ի մարդկանէ՝ իւր երեսփոխան, և զայլս յառաջնորդութիւն իւրաքանչիւր եկեղեցեաց, և ընդ նոքօք զբազում պաշտօնեայս ըստ քահանայութեան, և ըստ կղերիկոսութեան: Զխորհուրդս սըրբարարս, որոց ստուերք կային ՚ի հին օրէնս, ըստ այլ և այլ բանի կարգաւորեաց ՚ի մկրտութիւն, ՚ի դրոշմ, յապաշխարութ՟ի, և՟ն:

Ի յորքիւք ամենեքումբք ուղղեաց զկեանս մեր, և զգնացս ՚ի սրբութիւն, և ՚ի կեանս յաւիտենականս: Այլ զայս ամենայն արար քաղցրութեամբ և հեզութ՟բ, որպէս տեսանի յաւետարանի. վասն որոյ ասէ: Ուղղեա՛ վասն հեզութեան: Ուր **վասնդ** ՚ի մէջ բերէ զբան պատճառելութեան ուղղողին. որպէս թէ ասէր. վասն զի հեզ ես, վասն հեզութ՟եդ հեզութ՟բ ուղղեա՛ զամենայն: Զայս եղեալ խօսի ապա և յաղագս երրորդին ասելով.

ԹԱԳԱՒՈՐԵԱ ՎԱՍՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ. Թագաւորելն քան երրակի է. մի՝ յերկինս փառօք 'ի ներս իւր, երկրորդ՝ յեկեղեցւոջ շնորհօք 'ի հոգիս հաւատացելոց, և երրորդ՝ 'ի վերայ ամենայն իմացական արարածոց՝ իրաւամբք։ Բայց առ բարւոք իմանալոյ զայս՝ արժան է գիտել, զի քս̃ բազում իշխանական անուանս ունի, իբր զի է տէր, թագաւոր, դատաւոր, գլուխ, զօրագլուխ, հովիւ, քահանայապետ, են. տէր կոչի ամենայն արարածոց՝ թէ՛ բանաւորք իցեն, և թէ անբանք և անզգայք. զի զօրութ̃բ անձնաւորական միաւորութե̃ նոյն անձն՝ որ է ա̃ծ և մարդ, ըստ որում մարդ՝ ունի գլխաւորութիւն տէրութե̃ 'ի վերայ ամենայնի՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Թագաւոր կոչի՝ հայելով յր̃ և իցէ իմացական արարածս յերկնաւորս և յերկրաւորս, ես և 'ի սանդարամետականս. Դատաւոր կոչի՝ հայելով 'ի մարդիկ զորս դատէ, և ունի դատել։ Գլուխ կոչի՝ հայելով յայնսիկ՝ որք իբր անդամք միաւորեալ են ընդ նմա յօդիւ հաւատոյ, որպիսի են նոքա, որք ունին զճշմարիտ հաւատս, կամ յօդիւ սիրոյ. որպիսի են բարեպաշտ անձինք, ես և հրեշտակք։ Զօրագլուխ կոչի՝ հայելով 'ի զինուորեալ եկեղեցի։ Հովիւ կոչի՝ հայելով յոչխարս իւր։ Քահանայապետ կոչի՝ հայելով 'ի փրկեալսն։

Արդ երևի թէ յայսմ բանի թագաւորելն զնի փոխանակ ամենայնի, յասելն. ԹԱԳԱՒՈՐԵԱ ՎԱՍՆ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ. Ուր բառդ ՎԱՍՆ՝ ըստ այլեայլ բանի առ իմանալ զբառդ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ. մի՝ ըստ ճշմարտութեան 'ի գոլն. որպէս թէ ասէր. որովհետև դու միայն ես ճշմարիտ թագաւոր բնութ̃բ՝ և ոչ սոսկ անուամբ, ապա իրաւամբ թագաւորեա վասն ճշմարտութե̃ այսինքն վասն լինելոյդ ճշմարիտ թագաւոր։ Երկրորդ՝ ըստ ճշմարտութե̃ 'ի գործելն. որպէս թէ ասէր. որովհետև կատարեցեր զամենայն ճշմարտութ̃ի, արժան է՝ զի թագաւորեսցես վասն ճշմարտութե̃ն, այսինքն վասն կատարելոյ քո զամենայն ճշմարտութ̃ի (յայտ. Ե. 12։) Երրորդ՝ ըստ ճշմարտութե̃ 'ի խոստմանսն կամ ըստ հաւատարմութե̃ խոստմանցն. որպէս թէ ասէր. դու եկիր, և կատարեցեր զամենայն, և խոստացար վերածել ընդ քեզ յերկինս զյուսացեալսն 'ի քեզ, ասելով՝ որ են իմ, անդ և պաշտօնեայքն իմ եղիցին. և թէ * ուխտեմ ձեզ որպէս և հայր իմ ուխտեաց ինձ զարքայութի՟‖. ևն. (ղուկ. իբ. 29.) Եւ արդ թագաւորեա՛ վասն ճշմարտութե՟, այսինքն վասն ճշմարտելոյ ըզբանս քո, կ՟մ ո՟պ զի երևեսցիս ճշմարիտ 'ի բանս քո, և հաւատարիմ 'ի խոստմունս։ Այլ այս եղանակ խօսից ոչ ցուցանէ թէ երկբայելի էր թ՟գրելն ք՟սի, այլ որ աներկբայելին է, զնոյն այլ և այլ կերպարանօք բանից ձևացուցանէ, առ 'ի յայտնել զաներկբայելի լինել նորին։

Այլ զոր մեք բաժանաբար եդաք՝ բաշխելով զբառսդ արդարութիւն, հեզութե՟, և ճշմարտութե՟ 'ի բայսդ՝ լարել, ուղղել և թագաւորել, մարթ է առանց բաշխելոյ տարածել 'ի վերայ իւրաքանչիւրոց այսպէս. լարեա՛ վասն ճշմարտութեան, հեզութե՟ և արդարութե՟. ուղղեա՛ վասն ճշմարտութե՟, հեզութե՟ և արդարութե՟. և թագաւորեա՛ վասն ճշմարտութեան, հեզութե՟ և արդարութե՟. վասն զի յամենայնի զոր արար ք՟ս, թէ 'ի լարելն, թէ 'ի յուղղելն, և թէ 'ի թագաւորելն՝ երևեցաւ ճշմարտութի՟, հեզութի՟ և արդարութի՟։ Եւ սակայն 'ի միտս բանին հայելով՝ ուղղագոյն համարեալ լինի այն կարգ՝ զոր եդաք։

Իսկ 'ի հիւսուած շարադրութե՟ն հայելով՝ բառքդ ճշմարտութե՟, հեզութեան և արդարութեան՝ հային միայն 'ի թագաւորելն. և այս՝ ըստ ամենայն պատշաճողութե՟. վասն զի երեք կատարելութի՟ք հարկաւոր են թագաւորի. այսինքն է արդարութի՟ 'ի գործելն զգործ թագաւորութեան. հեզութի՟ 'ի կրելն զբեռն թագաւորութե՟. և ճշմարտութի՟ 'ի բանս և 'ի հրամանս թագաւորութեան։ Դարձեալ՝ արդարութիւն 'ի դատելն և 'ի կառավարելն. հեզութիւն՝ 'ի պատուհասելն. և ճշմարտութիւն այսինքն հաւատարմութիւն 'ի խոստանալն և 'ի դաշնադրելն, ևն։

Եւ ըստ այսմ թագաւորելն՝ որ գնի աստ վասն ք՟սի՝ տիրապէս հայի 'ի հոգևորական իշխանութիւն նորա. յոր միտս եթէ բառդ վասն՝ դիցի պատճառաբար, կամի ասել. որովհետև ունիս ճշմարտութիւն, հեզութիւն և արդարութի՟, ուրեմն վասն ունելոյ քո զայդսին՝ թագաւորեա արժանապէս ։ Իսկ եթէ բառդ վասն՝ ցուցցէ զվախճանն, կամի ասել. թագաւորեա վասն ցուցանելոյ զճշմարտութիւն, զհեզութի̃, և զարդարութիւն. այսինքն է 'ի թագաւորելդ ցոյց զճշմարտութի̃ փոխանակ ստութե̃ն, որով խաբեաց զմեզ սատանայ, ցոյց և զհեզութի̃ փոխանակ բարկութե̃ն՝ որ պահեալ է մեզ. ցոյց և զարդարութիւն արդարացուցանելով զմեզ և հատուցանելով վասն մեր փոխանակ պարտուցն՝ զոր ունէաք վճարել։

Վարդան զլարեն և զուղղեն և զթագաւորեն այլով իմ̀ն կարգաւ դասաւորէ յասելն. լարեա զառաքեալսն. ,, և ուղղեա (զնոսա) 'ի քարոզութիւն. և թագաւո- ,, րեա 'ի վերայ հեթանոսաց բանիւ (քարոզութե̃) ,, նոցա ։

Լամբրոնացին զայս հատուած բանի ընթեռնու այսպէս. լարեա. ուղղեա, թագաւորեա, և բարձրացո̀ զճշմարտութիւնդ, զհեզութիւնդ և զարդարութի̃դ. և 'ի գործ ածելով զայսոսիկ՝ ընծայեա հօր զսոսա, և փրկեա զմեզ, ե̃ն. կամ դարձեալ ըստ Վարդանայ ցոյց արդեամբ զանուանսդ, որովք կոչեցար ճշմարտութիւն յառաջնորդելդ. հեզ 'ի համբերելդ. և արդար 'ի դատելդ։

Աստանօր եթէ բառիդ ճշմարտութեան՝ իմացեալ լիցի իմաստութիւն, հայի յայն՝ զոր 'ի նախընթաց հատուածն կոչեաց վայելչութի̃. և բառդ արդարութեան՝ հայի յայն՝ զոր անդ կոչեաց գեղ. ըստ որոյ և միտ բանին լինի այս. ած ընդ մէջ զզօրութիւն իմաստութե̃ և արդարութե̃ քո. և նոքիմբք լարեա, ուղղեա և թագաւորեա։ Եւ ըստ այսմ հեզութիւնն 'ի մէջ բերի իբր գործակից արդարութե̃, ըստ որում արժան էր ցուցանել յարդարութեան զհեզութի̃, և 'ի հեզութե̃ զարդարութի̃. յոր միտս հեզութիւնն իբր նոյն գնի աստ ընդ արդարութե̃. որպէս թէ ասէր. թագաւորեա վասն ճշմարտութե̃ և վասն հեզահամբոյր արդարութեան։ Այլ թէ քանի դիւրին էր քեզ կատարել զայս ամենայն, յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

Եւ առաջնորդեսցէ քեզ սքանչելապէս աջ քո։ Կամի ասել. 'ի կատարելդ զայս ամենայն, 'ի լարելդ, և յուղղելդ, և 'ի թագաւորելդ՝ ոչ կարօտիս օգնութեան խնդք, ոչ ձեռնտուութեան այլոց, ոչ խորհրդոց օտարաց. և ոչ ունիս հոգալ՝ թէ զինչ լինիցի. վասն զի աջ քոյ, այսինքն ինքնիշխան զօրութ̃ի քո, կամ ըստ Լամբ″. ա̃ծութիւն քո՝ կամ ըստ ոմանց հոգին սուրբ ոչ միայն լիցի բաւական առ ամենայն, այլև սքանչելի օրինակաւ առաջնորդեսցէ քեզ 'ի լարել, 'ի յուղղել, և 'ի թագաւորել:

Բառդ սքանչելապէս կարէ աստ հայիլ ոչ միայն յեղանակ առաջնորդելոյն ք̃ի ըստ որում և եղաք, այլ և յեղանակ ներգործելոյ այնր առաջնորդութեան յայլ և այլ այլայլ օրինակս, յոմանս 'ի կանգնումն և յոմանս 'ի գլորումն, յոմանս 'ի փրկութիւն և յոմանս 'ի դատապարտութիւն. ընդ որ սքանչանայ և առաքեալն (Հռովմ. Թ. և ԺԱ.) Պարձեալ սքանչելի՝ ըստ այլ իմն փոխս և ներհական կարգի. զորմէ օրինակաւ և խրթնաբանութեամբ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն, և ասէ:

Զ. Նետք քո սրեալ են հզօր, ժողովուրդք 'ի ներքոյ քո անկցին, 'ի սիրտս թշնամեաց թագաւորի:

'Ի տնօրէնութեանն ք̃ի կրկին ինչ տեսանի՝ հակակայ միմեանց. մին հայի 'ի վայելումն բարւոյ, և միւսն 'ի վանումն չարի: Յառաջինն վերածի փրկութիւն ազգի մարդկան, և հաշտութիւն նոցա ընդ հօր, տուչութ̃ի շնորհաց, և ժառանգութիւն յաւիտենական կենաց, և այլն: Իսկ յերկրորդն վերաբերի վանումն արգելչաց, և նուաճութիւն հակառակողաց. յաղթութիւն մահու, և խորտակումն բռնութեան սատանայի: Վասն առաջնոյն ասաց 'ի նախընթաց համարն, առաջնորդեսցէ քեզ աջ քոյ: Իսկ վասն երկրորդին մասամբ իմն խօսեցաւ 'ի համարն 4, և մասամբ իմն խօսի աստ նմանութ̃բ նետից սրելոց:

Եւ այս նետ այն է՝ զոր 'ի չորրորդ համարն սրոյ նըմանեցոյց ըստ այլում գործոյ: Երկոքեան ևս թէպէտ յիրում զնոյն նշանակեն, բայց քանզի նետն 'ի հեռակայս ներգործէ, իսկ սուրն 'ի մօտակայս, աստ նետիւք տիրապէս նշանակի այն՝ որ 'ի հեռաւորս ազդէ, որպիսի է զօրութիւն և ուժգնութ̃ի բանիցն ք̃ի՝ որ իբրև նետ արձակեալ վիրաւորեաց և վիրաւորէ՝

որոց պատահէ։ Յայս ակնարկելով ասէ.

Նետք քո սրեալ են հզօր։ Այս բան եթէ 'ի հասարակի ասցի, մեկնի այսպէս. բանք քո ով հզօր Թագաւոր, զորս իբրև զնետս արձակեցեր 'ի բերանոյ քումմէ՝ և 'ի բերանոյ աշակերտաց քոց, սրեալ են ամենազօր աջով քով, և հոգւովդ սրբով. և որոց միանգամ պատահին՝ անվրէպ ներգործեն և վիրաւորեն, զոմանս 'ի սէր, և զոմանս յապաշխարութիւն, զոմանս 'ի նուաճութիւն, և զոմանս 'ի կորուստ. յոր միտս ասաց առաքեալն (Եբր″. Դ. 12.) * կենդանի է բանն ա̃յ‖. և այլն։ Իսկ եթէ 'ի մասնաւորի ասցի հայելով 'ի թշնամիս, մեկնի այսպէս. բանք քոյ կամ հրամանք քոյ կամ ուժգնութիւնք բանից քոց սրեալ են 'ի նուաճել զթշնամիս քոյ 'ի կորուստ կամ 'ի փրկութիւն։ Իսկ թէ զիարդ, յայտ առնէ յաջորդ բանին ասելով.

Ժողովուրդք 'ի ներքոյ քո անկցին, 'ի սիրտ թշնամեաց Թագաւորի։ Յայս բան յետին հատուածն զնելի է յառաջ, և առաջին հատուածն զետեղելի է զկնի. զի է իբր փակագծիւ միջանկեալ բան. որով և շարադրութիւնն պարզի այսպէս. նետք քո սրեալ են ընդդէմ սրտից թշնամեաց. որոց 'ի վիրաւորելն և 'ի վանելն՝ ժողովուրդք 'ի ներքոյ քո անկցին։

Արդ բազում էին և բազում են թշնամիք քո, այսինքն են դևք, հրէայք, հեթանոսք, հերետիկոսք, և անպարկեշտ քրիստոնեայք։ 'Ի սոսին հայելով ցուցանի թէ բանքն քո իբրև զսրեալ նետս հարին նախ զսիրտ դիւաց, այսինքն զզօրութիւն նոցա 'ի կորուստ նոցին։ Հարին երկրորդ զսիրտս հրէից և հեթանոսաց. որոց զոմանս կորուսին վասն ընդդիմութեան նոցին, և զոմանս կեցուցին պատառելով զվէրս սրտից նոցա, և քամելով զթարախ մեղացն, և առողջացուցանելով 'ի ձեռն սպեղանեաց և դեղոց, այսինքն 'ի ձեռն խորհրդոց և շնորհաց։ Հարին երրորդ զսիրտս անպարկեշտաց և վիրաւորեցին, զոմանց՝ յապաշխարութիւն կենաց, և զոմանց 'ի դատապարտութիւն. որպիսի եղեն եւ և սիրտք հերետիկոսաց։

Արդ 'ի հարկանել նետիցն քո այսպիսի օրինակաւ, * ժողովուրդք 'ի ներքոյ նորա անկան‖. զի 'ի վանել սատանայի, և բռնութեան մահու՝ ազգք մարդկան, որք անկեալ էին ընդ իշխանութբ նոցա, անկան 'ի ներքոյ թագաւորութեն քոյ. և որք միանգամ հաւատացին 'ի նա, եղեն նորա ժողովուրդ սեփական։ Այս դարձեալ 'ի հարկանիլ հրէից և հեթանոսաց 'ի նետոյն քոյ՝ նոքին իսկ հեթանոսք եւս և բազում հրէայք անկան 'ի ներքոյ իշխանութեան նորա, և եղեն նոր ժողովուրդ՝ զոր սեփականեաց ինքեան. ըստ այնմ *նոր ,, ժողովուրդ ինքեան առեալ զեկեղեցի սեփականեաց ,, զհաւատացեալս 'ի քեզ‖։

Իսկ բառիւդ ԹԱԳԱՒՈՐ իմանայ զնոյն զայն՝ առ որ խօսեցաւ, յասելն. Նետք քոյ սրեալ են. և այս պարզի եթէ դիցի զխորոշական տառդ դ. ասելով, ԹՇՆԱՄԵԱՑ ԹԱԳԱՒՈՐԻԴ. որպէս թէ ասէր. 'ի յարձակել զնետդ ընդդէմ այնոցիկ, որք ոչն կամէին զթագաւորելդ 'ի վերայ իւրեանց, նոյն նետ քո նուաճեսցէ և հնազանդեցուսցէ զնոսա քեզ։

Ամբ″. փոքր մի այլազգ մեկնէ զայս բան. իբր թէ քս լարեալ զաղեղն իւր՝ այսինքն զհեզութի, զարդարութիւն և զճշմարտութի, ձգեաց զնետս դատապարտութեան 'ի սատանայ. և զժողովուրդ իւր 'ի ներքոյ արդարութեան և շնորհաց պատսպարեաց։ Այս մեկնութիւն եւս է գեղեցիկ, և մասամբ իմն վերածի 'ի նախակարգեալդ։ Արդ մարգարէն յետ խօսելոյ զթագաւորելոյն քոյ և զվանելոյ նորա սրով զթշնամիսն՝ սկսանի խօսիլ զբարձրութենէ փառաց նորա, և զաթոռոյ նորին, և զիշխանութեն, ասելով։

է. ԱԹՈՌ ՔՈ ԱԾ ՅԱՒԻՏԵԱՆՍ ՅԱՒԻՏԵՆԻՑ. ԳԱՒԱԶԱՆ ՈՒՂՂՈՒԹԵ ԳԱՒԱԶԱՆ ԱՐՔԱՅՈՒԹԵ ՔՈ։

Զոր միանգամ ասաց մարգարէն 'ի սաղմոսի՝ յառաջնոյ համարոյ մինչև ցաստ՝ հնար էր իւիք վերածել 'ի դէմս սողոմոնի կամ դաւթի. այլ զայս բան անհնարին է 'ի նոյն վերածել, մանաւանդ թէ յանդգնութի եւս է. վասն զի յայտնապէս Ած կոչի աստ նա 'ի դէմս որոյ ասացան նախագրեալ բանքդ, և զիարդ հնար իցէ զայն սողոմոնի ընծայել։ Զայս նոքին եւս խոստովանին՝ որք 'ի նոյն ջանան վերածել. վասն որոյ և ոչ պահեն զկարգ շարագրութեն,

այլ պէսպէս փոփոխեն. բայց 'ի զուր և յանդէպս. 'ի զուր, զի յո՛ր կարգ և փոփոխեսցես, բանն ոչ փոխի. զի առ որ ասէ, աթոռ քո ա՟ծ՝ առ նոյնն ասէ զկնի եօծ զքեզ ա՟ծ՝ ա՟ծ քո։ Յանդէպս, զի որովհետև նաև նոքին իսկ ռաբբիք հրէից խոստովան լինին, թէ այս սաղմոս 'ի դէմս մեսիային ասի, զինչ հարկ կայցէ բռնադատելով զմիտս բանին՝ 'ի դէմս սողոմոնի վերածել, ուր ա՟ծութիւն մեսիային յայտնի քարոզի. ըստ որում և առաքեալն 'ի թուղթն առ եբրայեցիս զայս բան բերէ 'ի ցոյց ա՟ծութե՟ն ք՟ի յաւետն. * իսկ ցորդին ասէ, աթոռ քո ա՟ծ յաւիտեանս յաւիտենից ‖.
(եբր. ա. 8։)

Այլ թէպէտ յեբրայականն ոչ գնի եէհօվա, այլ էլօհիմ, բայց սոյնս ևս միշտ 'ի տեղի ա՟յ 'ի գործ ածի առ նոսա 'ի սուրբ գիրս. վասն զի անխտիր 'ի գործ ածեն զայսոսիկ անուանս առ ա՟ծ, և երկոքումբք ևս իմանան զա՟ծ. որպէս յայտ է 'ի համարն 9. ուր 'ի մեզ և յայլս գնի * եօծ զքեզ ա՟ծ՝ ա՟ծ քո ‖. և յեբր″. նոյն բառ գնի. այսինքն էլօհիմ էլօհէխա. և զի անդ այդու բառիւ իմացեալ լինի ա՟ծ, այս և աստ։

Իսկ աթոռով նշանակի աստանօր իրաւունք թագաւորութեանն ք՟ի. և այս՝ ըստ ոճոյ ճարտասանից՝ որ կոչի փոխանունութի՟, որով անուն տեղւոյն կամ պարունակողին գնի փոխանակ անուան պարունակելոյն. և զի աթոռն համարեալ լինի իբր պարունակօղ այնր որ նստի 'ի նմա, այսինքն իշխանի կամ թագաւորի, և կամ դատողութե՟ կամ հանդիսութեան թագաւորի, վասն այսորիկ գնի 'ի տեղի իշխանութեան կամ իրաւանց թագաւորի. և այս՝ առ 'ի ցուցանել զհաստատութիւն իրաւանցն։ Յայս միտս ասաց և հրեշտակն վասն ք՟ի, յաթոռն դաւթի նստցի. որ է ասել. զիրաւունս թագաւորութե՟ դաւթի ժառանգեսցէ։

Արդ իշխանութի՟ թագաւորութե՟ն ք՟ի և կամ իրաւունք դատաւորութե՟ նորա ոչ եղև ըստ իշխանութե՟ն դաւթի սոսկ յաւիտեան մի, կամ դար մի, այլ յաւիտեանս յաւիտենից. և յայս իսկ յաւել հրեշտակն ասել, թէ * թագաւորութե՟ նորա վախճան մի՛ լիցի ‖. և դանիէլ ասաց. * Նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութի՟... իշխանութի՟ նորա իշխանու-

,, թիւն յաւիտենական՝ որ ոչ անցանէ, և Թագաւորութիւն
,, նորա ոչ եղծանիցի ‖. (դան. Է. 14.) Այս իրաւունք յաւիտեանս յաւիտենից Թագաւորելոյն քսի, որպէս յայտ է 'ի նախադրելոցդ՝ ոչ էր ստացական, այլ բնական. ոչ ըստ որում ած՝ զի յայդմ չիք տարակոյս, այլ ըստ որում մարդ. իբր զի նոյն՝ որ էր ած և մարդ, ըստ որում մարդ՝ իւր սեփական ունէր զյաւիտենական Թագաւորութիւնն, կամ որ նոյն է, ունէր բնական իրաւունս Թագաւորելոյ յաւիտեանս յաւիտենից. և այս վասն անձնաւորական միաւորութեն. 'ի սոյն իսկ և մարգարէն՝ ած անուանելով զնա խօսի աստ առ նա յասելն։

Աթոռ քո ած յաւիտեանս յաւիտենից։ Որպէս թէ ասէր. ով որդի իմ՝ ած ճշմարիտ. որ մարմնացար վասն մեր, և մարմնովդ Թագաւորեցեր 'ի վերայ ամենայնի, խոստովանիմք զի այդ Թագաւորութի քոյ ոչ է առժամանակեայ, այլ յաւիտենական, որով տիրես 'ի վերայ ամենայնի, և կառավարես զամենայն՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի։ Իսկ թէ որպիսի էր յատկութիւն այս Թագաւորութեան 'ի կառավարելն, յայտ առնէ ասելով։

Գաւազան ուղղութեան գաւազան արքայութեն քո։ Գաւազանաւ իմացեալ լինի աստ իշխանութի Թագաւորութեն 'ի կառավարել, (զորմէ տես 'ի սաղ. բ. 9.) ըստ որում ասէ և գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) * ամենայն ուրեք գիրք զԹագաւորական պատիւն գաւազան
,, ասեն ‖. և դարձեալ ասէ անդ. * զամենայն
,, փառս Թագաւորութեն նշանակէ գաւազանն, (ուստի
,, գաւազան ոսկի կրեն Թագաւորք 'ի ձեռին)...
,, այնր վասն և 'ի գաւազանն մովսեսի նկարեցաւ Թագաւորութին,
,, և 'ի գաւազանն ահարոնի քահանայութիւն
,, քսի, առ որ ասաց դաւիթ. աթոռ քո ած յաւիտեանս
,, յաւիտենից. գաւազան ուղղութեան գաւազան
,, արքայութե քո ‖։

Այս իշխանութիւն կոչի գաւազան ըստ ոճոյ փոխանունութեան, որպէս ասացաք զաթոռոյ. իբր զի գաւազանն որ է նշան իշխանութեան, և գործի հովուելոյ, այսինքն կառավարելոյ և գանելոյ, դնի փոխանակ նոյն իսկ իշխանութեան 'ի կառավարել և 'ի պատժել ։ Եւ յայս միտս կամի ասել․ այդ գաւազան արքայութեան քո՝ այսինքն այդ իշխանութ̃ի թագաւորութ̃ե քոյ՝ ոչ է ըստ գաւազանի երկրաւոր թագաւորաց՝ գաւազան թիւր և խոտորնակ, այլ գաւազան ուղղութեան․ այսինքն իշխանութ̃ի՝ ուղիղ կառավարելոյ, և արդարութ̃բ պատժելոյ ։

Խորհրդաբար, աթոռով նշանակի աստ որ կոյս ա̃ծածինն․ յոր նստաւ հաստիչն ամենայնի․ ըստ որում ետես Եսայի․ (Զ․ 1։) Առաջի այսր աթոռոյ արկանէին քսան և չորս երիցունքն զթագս իւրեանց և երկրպագանէին, որպէս ետես յոհաննէս․ (՚ի յայտ․ Է․ 12։)

Դարձեալ՝ աթոռով նշանակի աստ երկինք երկնից․ ևս և եկեղեցի սուրբ ընդհանրապէս, որ ՚ինայ յաւիտեան ։ Իսկ գաւազանաւ նշանակի խաչն կենարար․ որ եղև գաւազան ուղղութ̃ե ՚ի թագաւորութեանն ք̃ի ։ Ըստ վարդանայ նշանակի և աւետարանն, որով ասէ * ուղղի հաւատն յարօտ, և ՚ի ջուր, և ՚ի „փարախ ‖․ զի է կանոն ուղղութ̃ե հաւատոյ և բարի վարուց․ ընդ որս հաճէր տէր, և զհակառակն ատէր․ և զայս ցուցանէ ՚ի յաջորդ համարն ասելով ։

Ը․ **Սիրեցեր զարդարութիւն, և ատեցեր զանօրէնութիւն ։**

Սիրել զարդարութիւն և ատել զանօրէնութ̃ի ըստ երկուց կարէ լինել․ մի՝ առարկապէս, որ է սիրել յայլս զարդարութիւն, և ատել յայլս զանօրէնութիւն․ կ̃մ սիրել զմին, և ատել զմիւսն՝ ըստ ինքեան խորհելով ։ Երկրորդ պատճառաբար, որ է սիրել առնել զարդարութիւն, և մերժել յիւրմէ զբան անօրէնութեան ։ Ըստ երկուցս ըստ այսոցիկ խօսի աստ մարգարէն՝ ասելով ։

Սիրեցեր զարդարութիւն և ատեցեր զանօրէնութիւն ։ Սէր արդարութեամբ թէպէտ կարէ իմացեալ լինել կատարելութիւն ո̃ և իցէ առաքինութեան, բայց յատկապէս իմացեալ լինի նոյն ինքն առաքինութիւնն արդարութեան, որոյ է հատուցանել իւրաքանչիւրոց զիւրն՝ թէ՛ ստացուած իցէ և թէ համբաւ, թէ՛ վարձք իցէ և թէ պատիժ ։

Արդ քս՟ ոչ միայն արար և առնէ զայս, այլև կամեցաւ և կամի զնոյն տեսանել յայլս ևս. վասն որոյ ասէ, սիրեցեր զարդարութիւն. որպէս թէ ասէր. զամենայն ինչ արդարութեամբ գործեցեր և գործես. վասն զի զարդարութիւն սիրես և զնոյն յամենայնի տեսանել ախորժես։ Նաև ընդ հակառակն ատեցեր և ատես զանօրէնութիւն։ Այսինքն թէ ատելի է քեզ, մանաւանդ թէ անհնարին է քեզ առնել զանօրէնութի՟, այսինքն զայնպիսի ինչ՝ որ իցէ ընդդէմ օրինաց կամ ընդդէմ արդարութեան. և ատելի ևս է քեզ տեսանել նաև յայլս զայդպիսի ինչ։ Նաև զի զայս սէր և զատելութիւն 'ի սկզբանէ անտի ունէր քս՟, վասն այսորիկ ասէ Եսայի. (Է՟. 16.) * մինչչև ծանուցեալ իցէ ման-
,, կանն զբարի կամ զչար, անարգեսցէ զչարն և ընտ-
,, րեսցէ զբարին ||. Այն այս 'ի թանձրացեալն առեալ՝ ցուցանէ զատելն քս՟ի զհրէայս, և զսիրել նորա զհեթանոս։

Այս բան ըստ ներքին յատուկ նշանակութեանն հայի յայն արդարութիւն՝ զոր արար քս՟, հատուցանելով վասն մեր ըստ արդարութե՟, և ջնջելով զանօրէնութիւնս մեր։ Նաև յայս միտս կամի ասել. տեսեալ զմեզ յանօրէնութեան, ատեցեր զանօրէնութիւն մեր, և կամեցար արդարացուցանել զմեզ. վասն որոյ եկեալ առ մեզ՝ բարձեր 'ի մէնջ զանօրէնութիւնս և արդար հատուցումն հատուցանելով հօր քում փոխանակ մեր՝ արդարացուցեր զմեզ։ Զայս եդեալ հետևեցուցանէ, և ասէ։

Թ. Վասն այսորիկ օծ զքեզ ա՟ծ ա՟ծ քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո։

Օծանելն քս՟ի է երրակի, մի՝ գոյացական. որով մարդկութիւն նորա օծաւ յա՟ծութենէ. որպէս ասեն ա՟ծաբանք. ըստ որում գրէ և սարգիս շնորհալի ('ի մեկն. յակ. ա՟. 1. Ճառ ա՟.) * և արդ ասէ վասն զի օծաւ
,, մարդկութիւնն յա՟ծութ՟է անտի, նախն իւրի զվայել-
,, չականս զայս անուն ընկալաւ (այսինքն է քս՟)||։
Այս միտս ասաց պետրոս (գործ. բ՟. 36.) * Ճշ-
,, մարտիւ գիտասցէ ամենայն տունն իսրայէլի, զի և
,, տէր զնա և օծեալ ա՟ծ արար ||. Նաև այս օծանիլս էր

միաւորել մարդկութե՟ն նորա ընդ ա՟ծութե՟ն յանձն բանին. որով և ինքն կոչեցաւ ք՟ս, այսինքն օծեալ. և զայս օծութիւն կոչեն ա՟ծաբանք գոյացական սրբութի՟, այն է գոյացական միաւորութիւն. ըստ որոյ ասէ կիւրակոս վարդապետ. ('ի մեկն. հարիւր. եւագրի դ՟. 16.) թէ
* օծումն զմիաւորութի՟ն ցուցանէ ‖։

Երկրորդն է պատահական՝ որով հոգին ք՟ի օծաւ 'ի լիութենէ իւղոյ շնորհաց հոգւոյն սրբոյ. այսինքն թէ լցաւ հոգւով ս՟բվ. յոր միտս ասաց պետրոս. (գործ. ժ. 38.) * զյ՟ս՝ որ 'ի նազարեթէ՝ զոր օծն ա՟ծ հոգւով սրբով և զօրութ՟բ ‖։ Ուստի ասէ իգնատիոս վարդապետ ('ի մեկն. ղուկ. դ՟. 17.) * (մարգարէք) կոչեցին „ զնա օծեալ . . . ոչ իւղով, այլ հոգւով սրբով ‖։ Ըստ որում և ինքն վկայեաց յասելն. * հոգի տեառն 'ի վերայ իմ. վասն որոյ և օծ իսկ զիս ‖. (ղուկ. դ՟. 18.) իսկ հոգւով օծանիլն է 'ի շնորհաց. և զայս օծութիւն
կոչեն ա՟ծաբանք սրբութի՟ պատահական։

Բայց պարտ է զգուշանալ, զի 'ի մարդիկ սրբութիւն շնորհաց առնէ որդեգիր. իսկ 'ի ք՟ս այս ոչ կարէր լինել՝ զի ինքն էր բնական որդի, և դարձեալ՝ զի առ որդեգրութի՟ պահանջի զանազանութի՟ անձանց. իսկ 'ի ք՟ս էր մի անձն. ուրեմն ոչ էր հնար օծութ՟բ շնորհաց լինել նմա որդեգիր, այլ որդեգրիչ զորդիս մարդկան՝ հօրն երկնաւորի։

Երրորդն է յարգական կամ իշխանական. որով օծաւ ք՟ս քահանայապետ, թագաւոր, դատաւոր, և այլն. և ծանուցաւ տէր փառաց յերկինս և յերկրի։ Արդ մարգարէն տիրապէս և սկզբնաբար յառաջինն հայելով ասէ։

Վասն այսորիկ եօծ զքեզ ա՟ծ ա՟ծ քո իւղով ուրախութե՟ն։

Յայս բան բառդ վասն այսորիկ կրկնակի կարէ առեալ լինել. մի՝ պատճառաբար, և մի եւս՝ հետեւաբար. (զորմէ տես 'ի վերոյ 'ի համարն 3։) Եթէ առցի պատճառաբար, բացատրի բառիս վասն այսորիկ զի. ըստ որում գնի 'ի քաղդէականն. և ըստ այսմ կամի ասել. սիրեցեր զարդարութի՟ յամենայնի, և ատեցեր զանօրէնութի՟ ըստ ամենայնի, վասն այսորիկ՝ զի ա՟ծ քո եօծ զքեզ ա՟ծ՝ իւղով ուրախութեան առաւել քան զամենայն։

Իսկ եթէ առցի հետեւաբար, միտ բանին լինի այս· վասն այսորիկ էօծ զքեզ ա՟ծ առաւել քան զամենեսին, վասն զի սիրեցեր զարդարութիւն, եւ ատեցեր զանօրէնութի՟։

Այլ ըստ այսմ բառք վասն այսորիկ՝ տիրապէս 'ի մէջ բերէ զբան վախճանական պատճառի, եւ ոչ զբան արդիւնականի· զի ք՟ն ոչ եթէ նախ սիրեաց զարդարութիւն, եւ ատեաց զանօրէնութիւն, եւ այնու արդիւնաւորեցաւ օծանիլ 'ի հօրէ ա՟ծ· քանզի այս օծութիւն ք՟նի յառաջ մտածի· (ապա թէ ո՛չ երկու անձն լինէր 'ի ք՟ն ըստ Նեստորի), այլ թէ հայրն երկնաւոր հաճեցաւ՝ զի որդի իւր սիրեսցէ զարդարութի՟, այսինքն թէ արդարացուսցէ զազգ մարդկան եւ դատապարտեսցէ զանօրէնութի՟· եւ 'ի յաւիտենից տեսանելով 'ի նմա զկատարումն այսր գործոյ՝ 'ի սոյն վախճան էօծ զնա, կամ արար զնա օծեալ իւր միաւորութե՟ մարդկութե՟ ընդ ա՟ծութե՟ 'ի մի անձն։

Ըստ այսմ մեկնութեան բառիւս իւղով՝ իմացեալ լինի ա՟ծութիւնն· որով իբրեւ իւղով օծաւ մարդկութի՟ն ք՟նի որպէս եդաք այժմ· ըստ որոյ ասէ Նարեկացին 'ի Ճառ մեռոնին· (դդ՟·) * զոր սաղմոսին ձայն կան-
„ խաւ պատմէ հզօրիդ փառաց զայս պատիւ առ 'ի
„ զառեալդ ձեռնադրելոյ՝ էօծ զքեզ ա՟ծ՝ ա՟ծ քո իւ-
„ ղով ուրախութե՟ ‖։ Այլ եթէ ուղիղ միտք իմասցի, հնար է եւս ասել, թէ մարդկութիւնն ք՟նի էր իբր ջուր, եւ ա՟ծութիւն իբր իւղ, երկաքանչիւր անշփոթ միաւորեալ ընդ միմեանս 'ի մի անձն՝ որ ասի ք՟ն՝ ա՟ծ եւ մարդ կատարեալ· ա՟ծ ըստ իւղոյն, այսինքն ըստ ա՟ծութեան, եւ մարդ ըստ ջրոյն, այսինքն ըստ մարդկութեան։ Ըսացի՝ * եթէ ուղիղ միտք իմասցի ‖· զի այս նմանութիւն բերի միայն ըստ գերազանցութեան ա՟ծութեանն, եւ ըստ անշփոթութե՟ 'ի միաւորութե՟ն· ապա թէ ո՛չ ուղղակի ոչ յարմարի։ Վասն զի ջուր եւ իւղ յատկապէս ոչ միաւորին ընդ միմեանս, այլ ընդ միմեամբ· իսկ մարդկութի՟ եւ ա՟ծութի՟ ճշմարտապէս միաւորեցան ընդ միմեանս յանձն բանին ըստ օրինակի լուսոյ եւ օդոյ, կամ մանաւանդ հոգւոյ եւ մարմնոյ, եւ գերազանց եւս։

Արդ թէ դարձեալ իւղով ուրախութե՟ իմանալ ասա զնոյն զայն անձնաւորական միաւորութիւն. որով նա ինքն որդին ա̄յ իբր իւղով օծաւ. զի որպէս իւղով օծանի որ քահանայ կամ թագաւոր էն. և այն օծութիւն իւղոյ առնէ զի նոյն անձն որ է մարդ, լիցէ և քահանայ կամ թագաւոր, այսպէս ևս անձնաւորական միաւորութին արար՝ զի նոյն անձն որ է ա̄ծ, լիցէ և որդի մարդոյ, կամ ա̄ծ և մարդ.

Այլ գիտելի է, զի յօծութեանն ք̄սի, կամ յանձնաւորական միաւորութե անդ՝ մտածի բան ենթակայի օծութե՝ իբր որ՝ և իբր որով. նոյնպէս և բան եզեր օծութեան՝ իբր որ և իբր որով: Ենթակայն որ՝ այսինքն նա որ օծանի՝ է ք̄ս՝ ըստ որում այս ոք անձն ունօղ մարդկութեան: Ենթակայն որով՝ է մարդկութին ք̄սի: Եզրն որ՝ այսինքն նա որ եզերէ զօծութիւնն՝ է նոյն ք̄ս ըստ որում այս ոք անձն ունօղ ա̄ծութեան, կամ ըստ որում որդի ա̄յ: Իսկ եզրն որով՝ է ա̄ծային որդիութիւնն:

Արդ թէպէտ 'ի ք̄ս ենթակայն որով, և եզրն որով այսինքն մարդկութիւն և ա̄ծութի՝ են իմն և իմն, բայց ենթակայն որ, և եզրն որ՝ ոչ են այսպիսի. զի ոչինչ իւիք զանազանին, վասն զի է մի և նոյն անձն: Եւ սակայն հնար է զանազան բանիւ ըմբռնել զնոյն իբր ենթակայ և իբր եզր. և ըստ այսմ մի և նոյն ք̄ս ըստ այլևայլ ըմբռնման կարէ առնուլ ենթակայ օծութեան բանիւ մարդկութեան, և եզր օծութե բանիւ ա̄ծութեան կամ ա̄ծային որդիութե:

Ուստի հայելով 'ի մի և 'ի նոյն անձն՝ ըստ որում է ենթակայ և եզր օծութեան, ասեմք՝ թէ ք̄ս օծաւ որդի ա̄յ՝ կամ ա̄ծ. ուր բառդ ք̄ս 'ի մէջ բերէ զնոյն անձն հանդերձ մարդկութեամբ իբր ենթակայ օծութեան. նոյնպէս և բառդ որդի ա̄յ կամ ա̄ծ 'ի մէջ բերէ զնոյն անձն հանդերձ ա̄ծութե իբր եզր օծութեան: Այս վարդապետութի թէպէտ և նուրբ է, բայց յիրում մտածեալ պարզի յայս համառօտ բան այսպէս. այսինքն թէ՝ մի և նոյն անձն 'ի ձեռն օծութեան, այսինքն 'ի ձեռն անձնաւորական միաւորութեան՝ առի և է ա̄ծ և մարդ: Եւ զի յայսմ միաւորութե զեղաւ 'ի հոգին ք̄սի անձառելի ուրախութի յաւիտենական երանութե՝ վասն այսորիկ զայս միաւորութիւն իւղ ուրախութեան կոչէ մարգարէն, իբր թէ այս միաւորութիւն իցէ իբր իւղ պատճառօղ անչափ ուրախութեան.

Եւ որովհետեւ ոչ ոք 'ի մարդկանէ վիճակեցաւ յայնպիսի միաւորութ՟ի կամ օծութիւն, այլ միայն նա ինքն ք՟ս, սմին իրի յաւելու ասել մարգարէն. Առաւել քան զընկերս քո. Ուր ընկերօք իմացեալ լինին ն. եւ իցէ որդիք մարդկան՝ որք իւիք բանիւ օծան. Սոքա կոչին ընկերք ք՟սի բանիւ մարդկութեան. ըստ որում եւ ք՟ս է մարդ, եւ որդի մարդոյ.

Եւ ըստ այսմ 'ի յաւելուն՝ առաւել քան զընկերս քո. կամի ասել. թէպէտեւ ա՟ծ էօծ զբազումս 'ի մարդկանէ, զոմանս 'ի մարգարէութ՟ի, զոմանս 'ի քահանայութիւն, զոմանս 'ի թագաւորութ՟ի, եւն. բայց ոչ ամենեւին տարբեր եւ գերազանց օրինակաւ. զի դու օծար գոյացապէս ա՟ծ ճշմարիտ, որպէս ոչ ոք եղեւ, եւ ոչ ոք կարաց լինել.

Ասացի 'ի վերոյ՝ թէ *մարգարէն 'ի գոյացական օծութիւն հայելով սկզբնաբար՝ ասէ զայս‖. բայց սակայն սոյն այս բան երկրորդաբար կարէ հայիլ յայլեայլ օծութիւնս եւս. նախ 'ի պատահականն, զոր յիշեցաք. այն է օծութիւն շնորհաց հոգւոյն. եւ ըստ այսմ կամի ասել. ա՟ծ լցոյց զքեզ իւղով ուրախութեան. Ուր իւղով իմացեալ լինի հոգին սուրբ, կամ շնորհք հոգւոյն սրբոյ, ըստ որում 'ի սուրբ գիրս իւղն բերի յօրինակ շնորհաց հոգւոյն. Արդ յայտ է թէ ք՟ս տէրն մեր ըստ որում մարդ՝ լցեալ էր հոգւով սրբով. որպէս եւ գրէ ղուկաս (դ. 1.) *Եւ յ՟ս լի հոգւով սրբով դարձաւ 'ի յորդանանէ‖.

Եւ զի այս լիութիւն շնորհաց գերազոյն իմն եղանակաւ եղեւ 'ի ք՟ս, վասն այսորիկ ասէ Առաւել քան զընկերս քո. Վասն զի այլք չափով առին զհոգին. իսկ ք՟ս առանց չափու. ըստ այնմ, *զի ոչ եթէ չափով տայ ա՟ծ զհոգին (որդւոյ իւրում)‖. (յովհ. գ. 34.) յորոյ անչափութենէն առնուն այլք զշնորհս իբր 'ի գլխոյ. որպէս վկայէ յովհ. (ա. 16.) որ եւ յաւելու թէ ամենայն շնորհք եւ ճշմարտութիւն 'ի ձեռն նորա եղեն. (յովհ. ա. 17.) Յայս վերածէ եւ գէորգ վարդապետ զայն. ('ի մեկն. եսայ.) եւ գրէ բանիւ եսայեայ այսպէս. *վասն որոյ եւ էօծ ասէ իսկ զիս.

„ զոր և պետրոս ասէ թէ օծ զնա ա՟ծ հոգւով սրբով
„ և զօրութ՟բ. զի թէ հոգւով և ՚ի մարդկանէ օծեալ
„ էր, զինչ աւելի էր քան զայլ օծեալս. զի ասէ, օծ
„ զքեզ ա՟ծ առաւել քան զընկերս քո‖.

Երկրորդ՝ կարէ հայիլ ՚ի յարգականն կամ յիշխանականն. որ եւ վերածի յօծութ՟ի շնորհաց. որով օծաւ ք՟ս քահանայ ՚ի վեր քան զամենայն քահանայս. թագաւոր ՚ի վեր քան զամենայն թագաւորս. ե՟ն.

Երրորդ՝ կարէ հայիլ յարտաքին օծութիւնն ք՟ի կամ յարտաքին փայլումն այսինքն ՚ի փառաւորութիւն նորա, կամ ՚ի յայտնութիւն փառաց ա՟ծութե՟ն նորա. որով և միտ բանին լինի այս. որովհետև կատարեցեր զամենայն արդարութիւն, վասն այսորիկ ա՟ծ քո էօծ զքեզ ա՟ծ՝ այսինքն փառօք բարձրացոյց զքեզ և նստոյց ընդ աջմէ իւրմէ հաւասար հօր. և ետ քեզ զանուն՝ որ ՚ի վեր է քան զամենայն, կամ առաւել քան զամենայն. (փիլիպ. բ. 8.) Եւ այս վասն այսորիկ առաջի դնի նմանութ՟բ իւղոյ. զի սովորութ՟ի էր ՚ի մեծամեծ հանդէսս և ՚ի հարսանիս իւղով օծանել վասն փառաւորութ՟ե և պատուոյ. ուստի և այն օծումն իւղոյ կարէր բերել յօրինակ փառաւորութ՟ե.

Չորրորդ ըստ լատ″. կարէ հայիլ յայն՝ զոր ասաց հայր ՚ի մկրտութե՟ն ք՟ի. զի որովհետև սիրեաց ք՟ս զարդարութիւն, և ասաց ՚ի մկրտութ՟ե անդ, պարտ է մեզ լնուլ զամենայն արդարութ՟ի, վասն այնորիկ վկայեաց հայր ՚ի վերայ նորա, դա է որդի իմ սիրելի. սակս որոյ օծի զգա հոգւոյն իջմամբ, ե՟ն.

Հինգերորդ՝ ըստ վարդանայ կարէ հայիլ յայն օծումն, որով նշանակի անապականութ՟ի մարմնոյն ՚ի գերեզմանի. զի այլք՝ որք օծան թէ ըստ իշխանութ՟ե, որպիսի եղեն թագաւորք, քահանայապետք, մարգարէք, և այլն. և թէ ըստ մարմնոյ, որպէս լինէր ընդ մարմինս իշխանաց յօծանելն զայնս իւղով և այլովք իրօք, յապականութ՟ի պահպանէին. իսկ տէրն մեր ամենեւին անապական մնաց ՚ի թաղման. մանաւանդ թէ յաղթեաց ապականութ՟ե և մահու՝ յարեաւ ինքնիշխան զօրութեամբ.

Այժմ առաջի կայ մեզ քննել զբան կրկնութեան բառից ա՟ծ, յասելն. վասն այսորիկ էօծ զքեզ ա՟ծ՝ ա՟ծ քո

ևն. որ նաև յերբ". ամենևին նման գնի. այսինքն է [illegible]. այս է * վասն այսորիկ եօծ գքեզ ա՟ծ ա՟ծ քո իւղով
ուրախութ՟ն առաւել քան զընկերս քո||.

Ի սմին բանի բառդ ա՟ծ յերկրորդումն գնի իբր անուն բայի, և ցուցանէ զտէր գործողութեան օծելոյն, այսինքն զօծօղն. որպէս և յայտ է. Իսկ յառաջնումն երրակի կարէ գնիլ. մի՝ իբր խնդիր բնութեան յուղղական հոլովն. յոր միտս կամի ասել. ա՟ծ քո եօծ գքեզ ա՟ծ, այսու՝ զի օծաւ մարդկութ՟ի քո յա՟ծութ՟է անտի.

Երկրորդ՝ իբր խնդիր սեռի բացայայտչաբար. որպէս առնու և լամբ". յոր միտս կամի ասել. գքեզ զա՟ծդ
եօծ ա՟ծ քո իւղով ուրախութ՟ն.

Երրորդ՝ իբր կոչական. յոր միտս կամի ասել. ով ա՟ծ մեր յ՟ս ք՟ս՝ ա՟ծ քո եօծ գքեզ իւղով ուրախութ՟ն, ևն. այսմ նպաստէ և թարգմանութիւնն ակիւղասայ, և ըստ օրինակաց ինչ նաև թարգմանութ՟ին սիւմաքոսի.

Այսոքիկ երեքին մեկնութիւնք մի քան զմի ընտիր երևին, մանաւանդ առաջինն. բայց ոմանք զբառդ ա՟ծ՝ նաև յառաջնումն գնեն լինել անուն բայի. իբր թէ ասացեալ էր. ա՟ծ ա՟ծ քո եօծ գքեզ. յոր միտս կրրկնումն անուանս ա՟ծ՝ ցուցանէ ըստ նոցա զփառաւորութիւն և զմեծութիւն նորին ըստ այնմ սովոր գրոց, որ բազում անգամ 'ի յիշել զանունն ա՟յ՝ վասն փառաւորութ՟ն կրկնէ. որպէս յասելն * այսպէս ասէ տէր տէր||. կամ թէ * տէր տէր առաքեաց զիս||. կամ թէ * ա՟ծ ա՟ծ իմ||. ևն. Այլ այս մեկնութ՟ի չունի ինչ յարգ, և ոչ իսկ երևի ընդունելի. զի նուաստացուցանէ ըզմիտս բանին. վասն որոյ պարտ է յառաջինսն յենուլ.
և այնմ հետևեցուցանել զկարգ բանի.

Արդ հայեցեալ մարգարէին հոգւով սրբով յօծեալն ք՟ս, և իբրև թէ առեալ զանուշահոտութիւն օծութ՟ն պէսպէս կատարելութեանց, որք պատճառեալ եղեն յօծութ՟է անտի, գրեթէ զմայլի նոքիմբք, և չկարելով խելք բացատրել զայնս, ազգի ազգի նմանութ՟ք 'ի
գովասանութ՟ի առնու զնոսին, և ասէ.

Ժ. Զմուռս և ստաշխն և կասիայ 'ի հանդերձից քոց. 'ի տաճարաց փղոսկրեաց. ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց 'ի պատիւ.

Զմուռս կոչի խէժ զմռնենւոյ, որ է ծառ բուսեալ յարաբիա ոչ այնչափ հեռի յեգիպտոսէ. զբուն սորա՝ որ է փշոտ, հերձուն, և 'ի պատառուածոյ անտի նորա հոսէ խէժ նման խնկոյ, (կամ նման զամխի.) և այն կոչի զմուռս, և ունի զօրս մասնաւոր յատկութիւնս, զի է դառն, հոտաւէտ, թմրեցուցիչ, և պահպանիչ յապականութենէ. որպէս աղն 'ի հոտելոյ և յորդնահարելոյ։ Եբրայեցիք, առ որս գրի Մոռ, այսինքն զմուռս, սովլին խմմաան փեշկ մշկոյ, (որ յայլազգեաց կոչի՝ միսկ։)

Այնպէս և ստաշխն է խէժ հալուէի, որ է ծառ խժայլին բուսեալ 'ի սահմանս արաբիոյ, յորմէ ծորի ստաշխն ըստ օրինակի խեժի, (այսինքն զամխի), և յանուն ծառոյն երբեմն հալուէ ևս կոչի. յոր միտս յեբր". աստ ահալօթ դնի, այս է հալուէ. զորմէ ոմանք ասեն լինել ծառն կոչեցեալ ամփալ։ Որպէս բարսեղ վարդապետ. (մարկ. ժե.) դնէ ասել ոմանց՝ թէ * հալուէն ,, ստապան իցէ ||։ Այս խէժ ևս ունի զյատկութիւնս զմռոյ ըստ ամենայնի, բայց ազնուագոյն քան զայն, և հոտն ոչ իբր զնորայն ծանր, այլ անոյշ։

Իսկ կասիայն է անուշահոտ կեղև դարխենի ծառոյն (որ է տարչին). որոյ համն և հոտն է քաղցրատտիկ, և ինքն ջերմ բնութ̃ և համեմիչ կերակրոց. այլ աստ բառս կասիայ առեալ լինի փոխանակ հիւթոյ մղելոյ յայնմ ծառոյ. որոյ փոխան յեբր". գրի քեցիօթ, որ 'ի մեզ տառադարձի կասիայ. զորմէ ասեն եբրայեցիք նշանակել աղանդանոյն, (այսինքն լաւէն). այլ այս չերևի ինչ ստոյգ։

Արդ երեքին այսոքիկ յորժամ լուեալ խառնին ընդ միմեանս՝ զհոտս միմեանց բարեխառնեն, միանգամայն և զօրացուցանեն։ Եւ յորժամ դնին յարկեղս զգեստուց կամ 'ի սենեակս ազնիւ զարդուց՝ տոգորեն 'ի հոտ իւրեանց զզգեստսն և զզարդսն. ըստ որում և սովոր են առնել բազումք, մանաւանդ արևելեայք։ Յայսպիսիս հայելով մարգարէին՝ 'ի սոցունց օրինակ բերէ հանգամանաց զգեստու երկնաւոր Թագաւորին և ասէ .

Զմուռս և ստաշխն և կասիայ 'ի զգեստուց քոց . Բարքդ զմուռս և ստաշխն և կասիայ, զորս աստ ձեւով փոխանունութեան փոխանակ գործոց իւրեանց, այսինքն փոխանակ անուշահոտութե՟ն զոր բուրեն . Եւ ըստ այսմ շարագրութիւն բանիս պարզի այսպէս . 'ի զգեստս քումմէ բուրէ հոտ զմռսոյ, և ստաշխի և կասիայի . Զգեստիւ 'ի քո նշանակի մարմին նորա կամ մարդկութի՟ նորա, կամ կերպարան մարդկային, յոր միտ առեալ * մարմին զգեցար 'ի սրբոյ կուսէն ‖ . և թէ * ըզ„ գեցար ծառայի կերպարան ‖, և թէ * զգեցար ըզպատկեր հողեղինին՝ պատկերդ հօր անփոփոխելի ‖ . Արով ցուցանի թէ որդին աստուծոյ իբրև զգեստ էառ զմարմինն կամ զմարդկութիւնն . ապա թէ ոչ՝ ոչ առնէր զգենուլ . և զայս ոչ է պարտ իմանալ ըստ ագանելոյ, այլ ըստ միաւորելոյ . զորմէ ծանիր, զի զգեստն յագանելն անդ՝ ոչ միաւորի ընդ մարմնոյ, այլ յարի . իսկ մարմինն ք՟ի ճշմարտապէս միաւորեցաւ ընդ ա՟ծութեանն . և զի որ զգենու ինչ՝ երևի զգեստաւորեալ, նոյնպէս և բանն ա՟ծ որովհետեւ առնլով զմարմին և միաւորելով զնա ընդ ա՟ծութե՟ իւրում երևեցաւ մարմնացեալ, նմանութ՟բ իմն ասի՝ մարմին զգեցեալ : Եւ այս այն է՝ ըստ որոյ ասացաք՝ թէ մարդկութիւնն ք՟ի օծաւ յա՟ծութենէ :

Յայսմ միաւորութե՟ կամ յայսմ զգեստաւորման նախ լցաւ հոգին ք՟ի անուշահոտութեամբ զմռսոյ, ստաշխի և կասիայի, այսինքն անուշահոտութ՟բ շնորհաց, փառաց, և ամենայն առաքինութե՟ցն ըստ ամենայն կատարելութեան : Երկրորդ՝ 'ի լիութե՟ անտի բուրեաց առ ազգս մարդկան զանուշահոտութիւն ստաշխի, զըմռսոյ, և կասիայի, այսինքն զանուշահոտութիւն բանից գործոց և խորհրդոց : Երրորդ՝ ըստ սմին բուրեաց յիւրմէ զանուշահոտութիւն երից գերազանց առաքինութեանց առ հայր՝ մանաւանդ 'ի ժամանակի չարչարանաց իւրոց : Առաջինն է խոնարհ հնազանդութիւն նորա՝ որ օրինակի 'ի ստաշխն : Երկրորդն է առաքինութիւն ամենատար համբերութե՟՝ որ օրինակի 'ի զմուռս դառնահամ, որով մատոյց զանձն պատաբատ 'ի հաշտեցուցանել զՀայր ընդ մեզ ։ Երրորդն է ծայրագոյն սէր նորա, որ օրինակի 'ի կասիա, որ է ջերմ և անուշահոտ ։

Խորհրդաբար, զգեստիւ նշանակի աստ և եկեղեցի սուրբ, զոր նմանութբ իմն առ զգենուլ փեսայն քսի. յոր մասն ասաց ած զնոր եկեղեցւոյ առ հինն՝ խօսելով 'ի դէմս քսի. (Եսայ. խԹ. 18.) * կենդանի եմ ,, ես ասէ տէր. զի զամենեսին զնոսա իբրև զպատմու- ,, ճան զգեցցիս և արկցես զնոսա իբրև զզարդ հար- ,, սին ||. Յայսմ զգեստէ եղին և եղանեն անուշահոտ ներգործութիւնք հաւատոյ, յուսոյ և սիրոյ, իբր յանփուտ փղոսկրեայ տաճարէ. յորմէ ուրախ արարին զնա, և պատուեցին զփեսայ նորա զորդին այ դըստերք Թագաւորաց, այսինքն հետևօղք առաքելոց ։

Բարոյապէս, այսու զգեստիւ նշանակի պարկեշտութիւն, որ է զարդ զգայութեց, այսինքն առաքինութի կանոնաւորիչ զգայարանաց, մանաւանդ աչաց, և բերանոյ և շարժման իւրաքանչիւր անդամոց ։ Այս առաքինութիւն Թէպէտև արտաքին երևի, բայց է գեղ զարդու հարսին քսի, և է իբր հայելի ներքին մարդոյն. զի նովաւ տեսանի հանդամանք նորին ։ Լեզուակն ժամացուցի նշան է կարգաւորութեան անուոյն. այնպէս և շարժմունք զգայարանաց՝ եթէ աչաց և եթէ լեզուի, եթէ ձեռաց և եթէ այլոց անդամոց՝ նշան են ներքին կարգաւորութեան. զի եթէ իցեն պարկեշտութեամբ կանոնաւորեալ՝ նշան են բարեկարգութեան հոգւոյն. ապա թէ մերկ իցեն 'ի պարկեշտութէ՝ նշան են յոռութե ։ (Սիրաք ժԹ. 26.)

Առողջութիւն և հիւանդութի մարդոյ յիրաւի 'ի ներքս է. բայց յորժամ տեսանեմք զոք արտաքուստ դեղնեալ, կամ զաչսն կախեալ են, ասեմք թէ հիւանդ է. այսպէս է իմանալ և յանպարկեշտ շարժմունս. որպէս արտաքին շարժումն յուլիանոսի եցոյց գրիգորի ածաբանի զանկարգութիւն հոգւոյ նորա ։ Եւ զորօրինակ ներքին առողջութիւն բարեգոյն ցուցանէ զմարդն արտաքուստ, սոյնպէս և արտաքին պարկեշտ շարժուած՝ բարեկարգ ցուցանէ զմարդ 'ի ներքս ։ Լոյս ճրագի արտաքուստ լուսաւորէ, և 'ի ներքս՝ խաւար իմն է 'ի պատրոյկն. իսկ պարկեշտութիւն 'ի ներքոյ եւ լուսաւորէ, և պահպանէ։ Կեղև է ծառոյ, անօթ է իւղոյ, ցանկ է պարտիզի, դուռն է տան. առանց կեղևոյ ծառն չորանայ. առանց անօթոյ հեղանիւթն ոչ մնայ. առանց ցանկոյ պարտէզն ոտնակոխի. առանց դրան տունն վտանգի։

Զայսոսիկ գիտելով՝ յորդորէ իմաստունն (առակ. դ. 23.) ասելով. * ամենայն պահպանութեամբ պահեա՛ զսիրտ քո. զի 'ի սոցանէ են ելք կենաց ‖. կամի ասել. պահեա՛ 'ի պարկեշտութեան զզգայարանս քո. և այնու պահեսցի սիրտ քո. եթէ պահեսցես՝ պահեացիս 'ի կեանս. իսկ եթէ ոչ պահեսցես՝ մտեալ ելցէ առ 'ի քէն կեանք հոգւոյդ. զի * դրունք մահու ‖ են զգայարանք. (յոբ. լը. 17։) ուստի ասաց երեմիա. (թ. 21.) * ել մահ ընդ պատուհանս ձեր ‖. այսինքն ել 'ի վեր և եմուտ մահ հոգւոյ ընդ զգայարանս ձեր իբր ընդ պատուհանս. և որպէս մահն ընդ սոսա մտանէ, սոյնպէս և բարելաւութիւն կենաց ընդ սոսա ելանէ։

Պարտ է ապա պարկեշտութեամբ փակել և պահել զսոսա, այսինքն զզգայարանս մեր. ապա թէ ոչ՝ յոչ փակիցեն և յոչ պահիցեն, ելանէ ընդ այնս արտաքոյ որ պահելին էր։ Յորժամ փակեալ է դուռն տան, և ամրացեալ են պատուհանք՝ յապահովի են եղեալքն 'ի նմա, և հանգիստ յերթևեկութէ օտարաց. սոյնպէս է և 'ի զգայարանս ամրացեալս պարկեշտութ՟բ։ Այն բարեբարոյ վանդակապատ առնէ զպատուհանս (խաֆէս դնէ) և ոչ յաճախէ յայնս. սոյնպէս և պարկեշտն պահէ զզգայարանս, և ոչ ցնդի 'ի նոսին։

Այսպիսիս ոչ միայն յինքեան ազնուանայ, այլև զայլս շահի։ Եւ այս՝ ոչ միայն 'ի քրիստոնեայս այլև 'ի հեթանոսս։ Փոլեմոն երիտասարդ՝ լիրբ ոմն էր. և տեսեալ զպարկեշտութիւն քսենոկրատէս փիլիսոփայի՝ զգաստացաւ և առաքինացաւ. և այնքան պարկեշտացաւ, մինչև յետ մահու նորա արձան և պատկեր նորին պատճառէր յայլս զպարկեշտութիւն. և որպէս ասի՝ կին մի պոռնիկ տեսեալ զպատկեր նորա՝ պարկեշտացաւ։

Այս առաքինութիւն առաւել յանկագոյն է պատանեկաց և աղջկանց. եթէ պակասեսցի 'ի սոսա պարկեշտութիւն, պակասի և յոյս զարգանալոյ 'ի լաւումն. Իսկ եթէ ծաղկեսցի՝ բուրէ 'ի պարկեշտութենէ նոցա իբր 'ի զգեստէ անուշահոտութիւն զմռոյ անօթխածութեան, անուշահոտութի՟ ստաշխին լռութե՟, և անուշահոտութիւն կասիայի համեստութե՟.

Իսկ համեստութիւնն է առաքինութիւն կանոնաւորիչ զգեստուց. զի որպէս պարկեշտութիւնն հայի 'ի կառավարութիւն զգայարանաց, նոյնպէս և համեստութիւնն հայի 'ի բարեկարգութիւն զգեստուց, 'ի զգուշանալն զի մի երևեսցի խենեշութիւն ինչ 'ի զգեստս, և մի տեսցի չափազանցութիւն կամ անկարգութի՟ 'ի զարդարանս իբր 'ի հրապուրանս. որպէս առնեն ոմանք առ 'ի որսալ զայլս 'ի ցանկութիւն չար. առ որ 'ի դէպ է ասել. եթէ ոչ կամիս որսալ՝ ընդէ՞ր զխայծ զարդուցդ սփռես. եթէ ոչ կամիս սիրել չարաչար, ընդէ՞ր զարդարիս խենեշաբար. եթէ ոչ կամիս ընդունել զհիւր, ընդէ՞ր կախես զնշան հիւրանոցի. Այլ գիտելի է՝ զի համեստութիւն զգեստուց և զարդուց յերիս է. մի՝ 'ի նիւթն՝ զի իցէ յարմար, ոչ առաւել, և ոչ գծծի. երկրորդ՝ 'ի ձևն, զի իցէ ըստ հասարակաց, և ոչ իւրահնար 'ի շարժել զտեսօղս. երրորդ՝ 'ի մաքրութե՟, զի իցէ պատկանաւոր, և չիցէ աղտեղի. և յամենայնի բարեչափութիւն ըստ իւրաքանչիւր վիճակի իբր վայելչական յարմարութիւն փղոսկրեայ տաճարի. զորմէ խօսի մարգարէն 'ի հատուածդ՝ որ զկնի, յասելն.

Ի **տաճարաց փղոսկրէից**. Այս բան ըստ ձայնին կրկնակի յարի 'ի նախընթացդ. մի՝ հայելով 'ի հոտ զմռոյ, ստաշխի և կասիայի, որպէս թէ ասէր. 'ի զգեստէ քումմէ բուրէ հոտ զմռոյ, ստաշխի և կասիայի, իբրև 'ի տաճարաց փղոսկրէից. Երկրորդ՝ հայելով 'ի բառդ **ուստի**. յոր միտս կամի ասել. 'ի զգեստէ քումմէ՝ որ հանեալ և բերեալ եղև քեզ 'ի տաճարաց փղոսկրէից՝ բուրէ հոտ անուշից, ևն.

Ուր տաճարօք իմացեալ լինին թագաւորական ապարանք կամ յաւէտ զգեստատունք կամ սենեակք պատեալք 'ի ներքոյ զարդուք, որք իցեն յոսկերաց փղաց. որպէս և այժմ իսկ կան բազում այսպիսի սենեակք 'ի պալատս թագաւորաց և մեծամեծաց, յորս պահին զգեստք և զարդք նոցա համդերձ անուշահոտ իւղօք ։ Մարթ է ևս ասել մանաւանդ թէ հաւանականագոյն իսկ է դնել, թէ տաճարովք իմացեալ լինին աստ տապանակք կամ արկեղք փղոսկրապատք, զորպիսիս տեսանեմք ՚ի բազում տեղիս ։

Յոր միտս և առեալ լիցի՝ դժուարութիւն մեկնութ՟են յայտ է, զի յոգնակի դնի յասելն ՚ի տաճարոց փղոսկրէից ։ Եւ զայս երրակի հնար է մեկնել ՚ի վերայ փեսային, այսինքն ք՟ի, մի՝ զյոգնակին եզականապէս առնլով, որպէս առնու և լամբ՟. և այլ մեկնիչք ։ Իսկ պատճառ յոգնակի դնելոյն է ցոյց փառաւորութեան տաճարին. որպէս յորժամ զգեստն եզակի դնի՝ ցուցանէ զառաւելութիւն ազնուութ՟ե նորա ։

Ըստ այսմ մտաց տաճարաւ իմացեալ լինի աստ մարմինն ք՟ի, զոր և ինքն տաճար կոչեաց. (յովհ. ՟բ. 21.) զի որպէս նոյն մարմինն զգեստ կոչի վասն զգենլոյ զայն, նոյնպէս և տաճար կոչի՝ վասն բնակելոյ ՚ի նմա, որով և միտ բանին յերկոսին ևս նոյն լինի, որպէս թէ եղեալ էր. հոտ անուշ բուրեաց ՚ի մարմնոյ քումմէ՝ իբր ՚ի զգեստէ, և իբր ՚ի փղոսկրեայ տաճարէ ։ Ուր փղոսկրեայ ասելով ցուցանէ զազնուութիւն նորին և զամրութ՟ի, կամ ըստ լամբ՟. զկատարելութ՟ի անապական գոլոյ յախտից ։

Իսկ թէ զիարդ ՚ի մի և ՚ի նոյն բանի՝ երկու այս նմանութիւնք ընծային մարմնոյն ք՟ի՝ այդ չէ ինչ. զի և պօղոս զերկոսին զայսոսիկ ՚ի նմին բանի բերէ ՚ի նմանութիւն մարմնոյ մերոյ յասելն. * զբնակութիւներկ„նից փափաքեմք զգենուլ ‖ ևն, (՟բ. կոր. ՟ե. 1 = 4.) Ուր նախ բնակարանի նմանեցուցանէ զմարմինն երկնաւոր, և ապա զգեստու. ըստ որում զգենուլ դնէ ։

Բայց ըստ յարմարական մեկնութեան փղոսկրեայ տաճարաւ յեզակի առնուլն՝ իմացեալ լինի աստ անապական կոյսն մարիամ, յորում իբր ՚ի տաճարի սրբութ՟ե բնակեցաւ ք՟ս զգեստիւ մարդկութեան. և ՚ի նմանէ ընծայեցաւ անապական ծննդեամբ ։

Երկրորդ՝ հնար է պահմամբ յոգնականութ՟ե բանիդ՝ մեկնել ՚ի վերայ հոգւոյն և մարմնոյն ք՟ի, ոչ զի երկոքին ևս են զանազան տաճարք, այլ զի յերկուց անտի կազմեցաւ մարդկութիւնն ք՟ի իբր տաճար ա՟ծուե բանին և բուրեաց անուշահոտութիւն ստաշխի, զմռսոյ և կասիայի։

Այլ աստ պարտ է զգուշանալ. զի յասել մեր տաճար, նոյնպէս և յասել մեր զգեստ՝ ոչ է պարտ ճիշդ առնուլ, ըստ որում յիշեցաք 'ի վերոյ. ապա թէ ոչ՝ պարտ էր զմարդկութ՟ին ք՟ի համարել իբր բաժանեալ յա՟ծութ՟է նորա, որ է նեստորի հայհոյութիւն, այլ միայն բանիւ նմանութ՟ե զգենլոյ և բնակելոյ։

Երրորդ՝ հնար է տաճարօք իմանալ աստ զնախնի նահապետս, և զմարգարէս, յորոց գուշակեցաւ մարմնանալ բանին. և ըստ այսմ կամի ասել. հոտ անուշ բուրեաց 'ի մարմնոյ քումմէ՝ ըստ որում գուշակեալ եղև 'ի տաճարաց փղոսկրեաց՝ այսինքն 'ի մարգարէից՝ որք էին տաճար քոյ հոգևոր. նոյնպէս հնար է իմանալ և զառաքեալս՝ յորոց քարոզեցաւ մարդեղութիւն բանին յա՟մ ազգս։ Պարզեալ մարթ է իմանալ զհաւատացեալս 'ի ք՟ս, զորս առաքեալն կոչէ տաճարս ա՟յ. (բ. կոր. զ. 16.) յորոց բուրէ անուշահոտութ՟ի ճշմարտութեան. յոր միտս ասէ նոյն առաքեալն * Հոտ „ անոյշ եմք ք՟ի առ ա՟ծ ‖. (բ. կոր. բ. 15.) Արդ քանզի ամենեքին՝ որք միանգամ առին զանուշահոտութիւնն ք՟ի, և հաւատացին 'ի նա, ուրախ արարին զնա, յայս յարէ զինի և ասէ։

Ուստի ուրախ արարին զքեզ դստերք թագաւորաց 'ի պատիւ։

Դստերք թագաւորաց իմացեալ լինին ժողովուրդք այլևայլ թագաւորութ՟եց. քանզի սուրբ գիրք սովոր են զայսպիսիս կոչել դուստր թագաւորութեանց, ըստ այնմ. * դուստր մովաբացւոց ‖. (եսայ. ժզ. 2.) * դուստր բաբելացւոց.... դուստր քաղդէացւոց ‖. (եսայ. խէ. 1.) * դուստր եգիպտացւոց ‖. (երեմ. խզ. 19.) * դուստր եգիբոնայ ‖. (երեմ. խը. 18.) * դըստերք ազգաց ‖. (եզեկ. լբ. 16.) և այլն. որովք նշանակին քաղաքութիւնք կամ ժողովուրդք ազգաց և թագաւորութ՟եց. կամ ըստ լամբ″. մասնաւոր եկեղեցիք առաքելոց՝ որք հոգևորապէս թագաւորք կոչին։ Այսոքիկ դստերք ազգաց՝ ուրախ արարին զք՟ս հաւատալով 'ի նա և պաշտելով զնա. վասն այսորիկ ասէ՝ ուստի ուրախ արարին, ե՟ն։

Աստանօր բառդ ուստի՝ չորեքկին կարէ առեալ լինել.

մի՝ տիրապէս առեալ, փոխանակ բառիս յայնմանէ՝ կամ փոխանակ բառիս՝ որով. որպէս թէ ասէր. 'ի բուրել անուշահոտութեան զմայլեցան յայնմանէ դստերք Թագաւորաց, և դիմեցին 'ի հոտ իւղոց քոց հաւատալով 'ի քեզ, և հետևելով քեզ, որով և ուրախ արարին զքեզ։ Լամբ՟. Եւ յայս միտ առնու. բայց զբայդ արարին ընթեռնու յերկրորդ դէմս՝ այսինքն արարեր. և մեկնէ այսպէս. 'ի պատարագելդ քում բուրեցեր զանուշահոտութիւն քո, որով ուրախ արարեր զՀայր, և զամ արարածս. ևն։

Երկրորդ՝ փոխանակ բառիս յայսցանէ, և ըստ այսմ կամի ասել. դստերք Թագաւորաց բերին քեզ ընծայ յայսցանէ, այսինքն 'ի զմռսոյ, 'ի ստաշխէ և 'ի կասիայէ։ Զի առեալ նոցա 'ի քէն զհոտ այսոցիկ, և գիտացեալ թէ այսոքիկ հաճոյ են քեզ՝ զսոսին մատուցին քեզ, որով և ուրախ արարին զքեզ։

Երրորդ՝ փոխանակ բառիս յինէն կամ յորմէ. յոր միտս այս բան ասի 'ի բերանոյ եկեղեցւոյն հեթանոսաց, որոց դստերք ուրախ արարին զՔս։

Չորրորդ՝ փոխանակ բառիս որք, որպէս թէ եղեալ էր. յայսպիսի նիւթոց էին, այսինքն 'ի զմռսոյ, 'ի ստաշխէ և 'ի կասիայէ, որք ուրախ արարին զքեզ անուշահոտութեամբ իւրեանց։

Իսկ բառդ 'ի պատիւ՝ երրակի կարէ նշանակել աստ. մի՝ ներգործաբար. որպէս թէ ասէր. դստերք Թագաւորաց ընծայաբեր եղեն քեզ առ 'ի պատուել զքեզ. կամ ուրախ արարին զքեզ՝ պատիւ ընծայելով քեզ։ Երկրորդ՝ կրաւորաբար. որպէս թէ ասէր. դստերք Թագաւորաց ընծայաբեր լինելով՝ ուրախ արարին զքեզ. որոյ վասն և պատուեցան 'ի քէն։ Երրորդ՝ չէզոքականապէս. որպէս թէ ասէր. ուրախ արարին զքեզ դստերք Թագաւորաց՝ որք էին 'ի պատուի, որ է ասել. պատուաւոր դստերք ընծայս բերելով քեզ՝ ուրախ արարին զքեզ։ Մինչև ցաստ խօսեցաւ մարգարէն զփեսայէն. իսկ աստի և անդր (մինչև 'ի 17. համարն) խօսի զհարսնէ և զընկերաց հարսին։ Այլ որպէս զի գեղագոյն ցուցցէ զհարսն Քի զընկերս նորին, զընկերաց նորա ասէ՝ 'ի պատիւ. իսկ զհարսնէ՝ ընդ աջմէ փեսային. ըստ որոյ ասէ։

ժա. Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ, 'ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ:

Կալ ընդ աջմէ, նոյնպէս և նստիլ ընդ աջմէ՝ ըստ վարելոյ սուրբ գրոց ցուցանէ զերագոյն ինչ այսու զանազանութեամբ, զի կալն ընդ աջմէ ցուցանէ ըզգերազանցութիւն ինչ պատուոյ. իսկ նստիլն ընդ աջմէ ցուցանէ նաև զհաւասարութիւն պատուոյ: Եւ յայս մտս ասի զքրիստոսէ կալ և նստիլ ընդ աջմէ Հօր. կալն ըստ գերազանցութեան պատուոյ, և նստիլն ըստ հաւասարութեան: Եւ զի հարսն քսի եկեղեցի սուրբ՝ ոչ 'ի հաւասարութիւն այլ 'ի գերազանցութիւն պատուոյ 'ի վեր առեալ եղև, վասն որոյ ասէ զնմանէ:

Կայցէ դշխոյ ընդ աջմէ քումմէ: Այսինքն եկեղեցի քո՝ որ հարսնացաւ քեզ, և եղև դշխոյ, այսինքն թագուհի՝ անկ է՝ զի կայցէ ընդ աջմէ քումմէ. այսինքն վերասցի 'ի տեղի գերագոյն փառաց, կամ 'ի բարձրագոյն փառս. որ է ասել՝ բարձրասցի և փառաւորեսցի:

Այլ գիտելի է՝ զի եկեղեցի սուրբ թէպէտև 'ի սկըզբանէ աշխարհի յադամայ անտի սկսաւ, բայց ոչ ասէր եկեղեցի քսի, զի չև էր մարդացեալ որդին այ. այլ եկեղեցի այ, յորում դստերք թագաւորաց՝ այսինքն բազմութիւնք այլ և այլ ազգաց՝ էին 'ի պատուի սոսկ ըստ լինելոյ անդամ եկեղեցւոյ 'ի ձեռն հաւատոց՝ որ առ ած. սմին իրի 'ի վերոյ ասաց՝ Դստերք թագաւորաց 'ի պատիւ. որք և 'ի մարդանալ որդւոյն այ եղեն հարսնացուք նոր եկեղեցւոյ՝ այսինքն եկեղեցւոյն քսի՝ որ գումարեցաւ 'ի մի յամ ազգաց՝ մանաւանդ 'ի հեթանոսաց, և բարձրացեալ 'ի փառս կարգեցաւ լինել հարսն քսի, և դշխոյ փառաց, ուստի սմա միայն եղև կալ ընդ աջմէ քսի:

Լամբ″. փոքր մի այլազգ մեկնէ զայս բան. իբր թէ մասնաւոր եկեղեցիք քսի. որք են դստերք առաքելոց՝ լինիցին դշխոյ ընդ աջմէ քսի: Այլ այս ևս 'ի նոյն հայի. զի եկեղեցին ոչ է արտաքոյ մասնաւորաց, այլ է 'ի նոցունց և 'ի նոսին՝ ուստի և իբրև մի դըշխոյ կայ ընդ աջմէ քսի: Յասելն ասա՝ կայցէ ընդ աջմէ ոչ ցուցանի թէ եկեղեցին կալով ընդ աջմէ քսի՝ քն լինիցի 'ի ձախմէ, այլ մանաւանդ յայտնի առաւելութ̃ի նորին. վասն զի ք̃ս է 'ի ծագ փառաց՝ այսինքն յայնպիսի փառս՝ քան զոր վերագոյն ոչ կարէ լինել, զի է 'ի փառս ա̃յ հօր. արդ այն որ է ծագ՝ ոչ կարէ լինել յաջ կամ յահեակ, այլ նա միայն՝ որ կարէ առեալ լինել յայն. և զի եկեղեցի առեալ եղև յաջ՝ վասն այսորիկ ասի կալ ընդ աջմէ. իսկ 'ի ձախմէ կացցեն նոքա որք ոչն կամեցան միանալ 'ի նոյն եկեղեցի. Մարթ է ևս ասել՝ թէ սովաւ նշանակի առաւելութ̃ի պատուոյ նոր եկեղեցւոյ քան զհրեշտակաց. մինչև ասել, թէ եկեղեցի ք̃սի կայ իբր դշխոյ ընդ աջմէ նորա. իսկ հրեշտակք առաջի ք̃սի իբր պաշտօնեայք նորա:

Զի թէպէտ յերկինս հրեշտակք և մարդիկ կացուցանեն զմի եկեղեցի կամ զմի քաղաք երկնային, բայց քանզի գլուխ ա̃մի նոցա է ք̃ս՝ որ է ա̃ծ և մարդ, և ոչ ա̃ծ և հրեշտակ. ըստ այսմ բանի եկեղեցին ք̃սի երևեցուցանէ զառաւելութ̃ի ինչ քան զհրեշտակաց, ոչ ըստ բնութ̃ե այլ ըստ բարձրացեալ լինելոյ 'ի փառս. յոր միտս միայն զեկեղեցւոյ ասի հարսն ք̃սի, և դշխոյ փառաց, և կալ ընդ աջմէ ք̃սի.

Այս ընդ աջմէ կալս եկեղեցւոյ ոչ միայն ըստ հանդերձեալ փառացն ասի, այլև ըստ աստի կենաց. զի և աստ թէպէտ և յանհաւատից անարգի, բայց 'ի փեսայէ իւրմէ 'ի ք̃սէ 'ի ներքուստ պատուի իբրև հարսն նորա: Այլ սակայն ըստ լրացեալ փառացն խօսելով՝ վասն հանդերձելոցն ասի կալ ընդ աջմէ քրիստոսի. իսկ ըստ փառաց այսր վիճակի խօսելով՝ ասի կալ յանդիման ք̃սի՝ իբրև զհարսն նորա. յոր միտս ասէ առաքեալն. (եփես. Ե. 25.) *սիրեաց զեկեղեցի և զանձն
,, իւր մատնեաց վասն նորա. զի զնա սրբեսցէ սրբու-
,, թեամբ աւազանին բանիւ. զի կացուսցէ ինքն իւր
,, յանդիման փառաւոր զեկեղեցի, զի մի ունիցի ինչ
,, արատ կամ աղտեղութիւն‖. այլ փոխանակ արատոյ ունիցի զարդս զարմանալիս, զորոց այլաբանութ̃ե իմն խօսի մարգարէն յասելն:

Ի հանդերձս ոսկեհուռս զարդարեալ պաճուճեալ: Զներքին զարդուց ինչ ոչ խօսի աստ, որպիսի է եական փառք հոգւոյն, և սրբարար շնորհքն, ևն̃. զի են անպատմելի. այլ զարտաքնոյն, յոր միտս հանդերձս ոսկեհուռս կոչէ զայնս որք նշանակեն զարտաքին քող հարսին, որ պատէ բոլոր զանձն, և սփռեալ ունի 'ի վերայ իւր զխուռն զարդս ոսկւոյ, և զբազմութիւն ոսկեզօծ պղպջակաց։

Այսոքիւք ոսկեհուռն հանդերձիւք իմացեալ լինին ըստ վիճակի հանդերձեալ կենաց արտաքին փառք յաղթանակօղ եկեղեցւոյ. իսկ ըստ աստի կենաց իմացեալ լինին նախ՝ խորհուրդք եկեղեցւոյ և խորհրդական իրք, և սրբազան ծէսք։ Երկրորդ՝ անմոլար վարդապետութիւնք 'ի բանս հաւատոյ և վարուց. և քարոզութիւնք և ա̃ծաբանական ուսմունք, և որք միանգամ 'ի սոսին վերաբերին։ Երրորդ՝ բարեկարգութիւնք եկեղեցեաց ըստ զանազան իրաց, եւս և կարգաւորութիւնք դասուց եկեղեցականաց, և իւրաքանչիւր անդամոց։ Չորրորդ՝ իբր պսակ ամենայն զարդուց խաչն կենարար. յոր միտս ասի 'ի շարակ. (ճէ.) * կայ „ դշխոյ ընդ աջմէ սուրբ եկեղեցի՝ յոսկեհուռն պսակեալ, նշանաւ խաչի քո‖։ Սոքիմբք եկեղեցին ասի զարդարեալ, եւս և պաճուճեալ, որ է աւել առաւել քան զաւել զարդարեալ։

Զօրինակ այսր եցոյց յինքեան նախ ռախաբ. որպէս գրէ սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. բ. 24. ճառ է.) քանզի * և եկեղեցի իբրև լուաւ (ըստ ռախաբայ) „ զսքանչելիսն ա̃յ և զանունն յսի որդւոյն ա̃յ՝ մերկացաւ զաղտեղութիւն իւր, և մերժեաց զնաստակերս „ իւր, և զարդարեցաւ արփիափայլ զարդուք, զի „ ցանկասցի թագաւոր գեղոյ նորա. ըստ այնմ՝ լուր „ դուստր‖, և այլն։ Երկրորդ՝ զայն եցոյց դուստրն փարաւոնի 'ի զարդարելն անդ և յընծայելն 'ի հարսնութիւն սողոմոնի. յոր իբր 'ի ստուեր հայեցեալ յօրինեցաւ այս սաղմոս 'ի դէմս սուրբ եկեղեցւոյ ըստ բազում կատարելութեանց. որովք զարդարեալ ասի 'ի յառաջիկայ բնաբանիդ, կոչելով զայնս ոսկեհուռն ըստ երից յատկութեանց ոսկւոյ, այսինքն ըստ անապականութեան, ըստ փայլողութեան և ըստ գերազանցութեան։ Բառք այսր համարոյ վերածին ուղղակի և 'ի դէմս սուրբ ա̃ծածնի, որ իբրև դշխոյ մարդկան և հրեշտակաց կայ ընդ աջմէ ք̃ի փառօք փառաւորեալ իբրև

մայր ա՟յ. ոչ ասի նստեալ՝ զի դատողին է նստել՝ և բարեխօսին է կալ. արդ նա ոչ նստի 'ի դատել. այլ կայ 'ի բարեխօսել վասն մեր անդադար առ որդին իւր միածին ։ Եւ ոչ ոք կարէ տարակուսիլ թէ 'ի բարեխօսել այսպիսի մօր, ոչ լիցի լսելի յայնպիսի որդւոյ. ապաքէն 'ի մտանել բերսաբեայ առ որդի իւր սողոմոն, յոտն եկաց նա, և նստոյց ընդ աջմէ իւրմէ, և յասել ցնա բերսաբեայ, * խնդիր մի խնդրեմ 'ի
,, քէն ‖, պատասխանի ետ սողոմոն. * խնդրեա՛ մայր իմ. զի ոչ դարձուցից զերեսս իմ 'ի քէն ‖. (գ. Թագ. բ. 19. 20.) Ապա քանի ևս քո, որ առաւել է քան զսողոմոն ։ Այս դշխոյ ասի զարդարեալ 'ի հանդերձս ոսկեհուռս, այսինքն 'ի բազմադիմի առաքինութիւնս, և 'ի նոյին պաճուճեալ. զոր 'ի գովեստ առեալ նարեկացւոյն գոչէ առ նա. * խրախուսցիր անբաւ բերկրա-
,, նօք հարսն լուսոյ ոսկեզարդ զգեստուք պաճուճեալ ‖.

('ի գով. կուս.)

Յարմարական մեկնութեամբ այս բան ընծայի և այլոց կուսանաց, որք իբր դշխոյ կան ընդ աջմէ ք՟ի յերկինս զարդարեալ փառօք. յոր միտս ասեմք զայս սաղմոս 'ի տօնս նոցա ։ Յարմարի և այլոց կանանց, որք կան յեկեղեցւոջ իբր ընդ աջմէ՝ զարդարեալ առաքինութեամբք, և ոչ սնոտի զարդուք. զորոց բազում ինչ գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. Ճ. 'ի յորդորակի իւրում.) Եւ գէորգ վարդապետ. ('ի մեկն. եսայ. գլ. գ.) Արդ տեսեալ մարգարէին զեկեղեցի սուրբ 'ի փառս վերառեալ, առ նա ինքն եկեղեցին ուղղէ զբան իւր իբր առ այն՝ որ հասեալ իցէ 'ի բարձրագոյն վիճակ փառաց, և ցուցանէ՝ թէ որպիսի ունելոց իցէ զինքն առ փեսայն. վասն որոյ ասէ ։

ժա. Լուր դուստր եւ տես, խոնարհեցո զունկն քո . մոռա զժողովուրդ քո, եւ զտուն հօր քո . զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո :

ժբ. Սա ինքն է տէր քո՝ երկիրպագեսցես նմա . եւ դուստր Ծուրայ երկիր պագցէ նմա . եւ պատարագօք զերեսս քո պաղատեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց :

Զեկեղեցին ք̅ս̅ի զոր 'ի նախընթաց համարն դշխոյ կոչեաց՝ աստ դուստր անուանէ, եւ յորդորէ 'ի լուր : Իսկ թէ յորոյ բերանոյ ասէ զայս՝ ոչ ցուցանէ . եւ յայտ է թէ ոչ է 'ի բերանոյն ք̅ս̅ի . զի որ խօսի զայս՝ ասէ զքեզ թէ նա ցանկայ գեղոյ քոյ . ուրեմն այս բան ոչ է 'ի բերանոյ նորա . այլ կամ 'ի բերանոյ հօր ա̅յ, եւ կամ 'ի բերանոյ հարսնածուաց, այսինքն 'ի բերանոյ նահապետաց եւ մարգարէից եւ առաքելոց եւ այլոց սրբ̅ց . եւս եւ 'ի բերանոյ դաւթի կամ այլոյ ուրուք յօրինողի զայս սաղմոս : Մ՝արթ է եւս ասել, թէ այս բան ասի 'ի բերանոյ եկեղեցւոյն հրէից առ եկեղեցի՝ որ 'ի հեթանոսաց . եւ կամ 'ի բերանոյ ամենեցուն միանգամայն . որպէս եւ դիցի՝ յամենեցունց ըստ պատշաճի ասի առ նորս եկեղեցի :

Լուր դուստր եւ տես, խոնարհեցո զունկն քո : Այսինքն լուր ով դուստր՝ եկեղեցի սուրբ՝ զձայն փեսային քո, եւ տես . այսինքն զգուշութեամբ 'ի միտ առ զբանսն զոր լսես 'ի նմանէ : Նոյն եւ խոնարհեցո զունկն քո : Այսինքն խոնարհութ̅բ անսա եւ հնազանդեաւ հրամանաց նորա, զի նորա ես՝ եւ ոչ քոյայնոցդ . կամ այլազգ եւս . լուր զոր ունիմ ասել քեզ . եւ ունկն մատո բանից իմոց . անսա ինձ, եւ 'ի բաց թող զքոյինսդ , եւ ընկալ քեզ զփեսայ քո : Նոյն առ այս յարէ :

Մ՝ոռա զժողովուրդ քո, եւ զտուն հօր քո : Որպէս թէ ասէր . այնպէս պարտ է քեզ յափշտակիլ 'ի սէր փեսային քոյ, մինչ գրեթէ ոչ յիշել բաց 'ի նմանէ՝ ոչ զազգականս, եւ ոչ զայլ ինչ մատի : Մ՝ոռա ուրեմն զազգ քո եւ զազգայինս քոյ, եւ զգործս նոցա . զի 'ի հեթանոսութեան կային եւ անա̅ծ էին, եւ բարի ինչ ոչ ունէին : Մ՝ոռա եւ զտուն կուոցն զորս պաշտեցին հարք քոյ, եւ հարք կոչէին ինքեանց զնոսա, եւ 'ի նոսին յա-

մօթ եղէն . Ո՛րում և զաշխարհ որ եղև տուն անխծից հօր քո նախնոյն ադամայ . և թէպէտ յաշխարհի ես , բայց ո՛չ ես ես յաշխարհէ , զի 'ի բաց էառ զքեզ անտի՝ որ սիրեացն զքեզ : Ո՛րում և զսատանայ , որ 'ի սկզբան մինչդեռ 'ի կռապաշտութեան էիր և յանհաւատութեան , կամեցաւ լինել հայր քո , որպէս այժմ եղև հրէից . առ որս ասաց քս . * դուք 'ի հօրէ 'ի սա-
,, տանայէ էք և զցանկութիւնս հօրն ձերոյ կամիք առ-
,, նել ։ (յովհ . ը . 4 .) Իսկ թէ ընդէր պարտ իցէ նմա մոռանալ զայս ամ՟՝ յայտ առնէ ասելովն .

Զի ցանկացաւ Թագաւոր գեղոյ քո . Այս բան բառդ ցանկացաւ՝ կրկնակի հայի 'ի բառդ գեղ . ըստ պատճառելոյ զայն , և ըստ յարելոյ 'ի նոյն . որպէս թէ ասէր . ցանկացաւ գեղեցիկ առնել զքեզ . և յետ գեղեցիկ առնելոյն ցանկացաւ գեղեցկութեան քում . որով և միտ բանին լինի այս . փեսայն երկնաւոր՝ որ է թագաւոր թագաւորաց , եկն առ քեզ . և տեսեալ զքեզ 'ի գերութեան սատանայի , և 'ի ծառայութեան մեղաց՝ և յաղտեղութեան ախտից , ցանկացաւ գեղեցկացուցանել զքեզ . վասն որոյ և եհան զքեզ 'ի գերութ՟է , ազատեաց 'ի ծառայութ՟է , սրբեաց յաղտեղութ՟է , և գեղեցկացոյց շնորհօք և պարգևօք , որով և զարդարեաց զքեզ ոսկեհուռն և անուշահոտ զգեստուք , և եղեր դու սքանչելի . մինչև նա ինքն՝ որ գեղեցկացոյցն զքեզ՝ ցանկացաւ այդմ գեղոյ քո . և որ վայրենի իմն էիր՝ արար զքեզ իւր հարսն սիրելի .

Եթէ օտար ոք դուստր հարսնանայր իսրայէլացւոց պարտ էր մերկացուցանել զհանդերձ գերութեան նորա , հատանել զեղնգունսն , գերծուլ զհերսն , և որպէս թէ նորափետուր զարդարել . Զայն արար և քս օտարացելոյ բնութեանս . մերկացոյց մկրտութ՟բ զհանդերձ գերութեանն սատանայի , եհատ զեղնգունս սկզբնական մեղաց , գերծեաց և զհերս բռնութ՟ե ախտից , և շնորհօք զարդարեաց , և ցանկանալով գեղեցկութեան նորա՝ հարսնացոյց ինքեան .

Արդ ասէ . որովհետև այսպէս արար քեզ քս , որով և ցանկացաւ գեղոյ քո , ուրեմն դու ևս ցանկեա՛ նմա . թողջիր զմնատիս , և յարեսջիր 'ի նա . սիրեսջիր զնա . և նմա միայնոյ ծառայեսջիր . զնա պաշտեսջիր , և նմա միայնոյ հնազանդեսջիր. մի ցանկար՝ զի ցանկասցին այլք քեզ, այլ ցանկա՛, զի ցանկասցի քեզ Թագաւորն երկնաւոր. որով և դու ցանկասցիս նմա, և վառեսցիս սիրով նորա։ Սրբուհին լուտկարտէ կամեցաւ սիրել յասպետէ ումեքէ. և մինչ հաստատեալ կայր յայն կամս, երևեցաւ նմա քս՟, և եցոյց զվէրս իւր. յորմէ պատկառեալ սրբուհւոյն փոխեաց զկամսն և ցանկացաւ սիրել 'ի քս՟է. և այնչափ վառեցաւ 'ի սէր նորա, մինչև միայն զնմանէ խորհիլ և զնմանէ խօսիլ։ Յաւուր միում յաղօթել նորա առաջի պատուական խաչելութեան՝ ձգեաց առ նա քս՟ զբազուկ իւր, որպէս թէ ցանկացեալ իցէ գեղոյ նորա. և նորա համբուրեալ զձեռն նորա՝ լցաւ ուրախութեամբ, և եկաց ուրախ մինչև 'ի մահ։

Այլ գիտելի է՝ զի յասելն աստ առ եկեղեցի սուրբ՝ մոռա՛ զժողովուրդ քո ևն. այսու ո՛չ ցուցանի, թէ եկեղեցին քս՟ի ո՛չ իցէ դեռևս մոռացեալ զկռապաշտութիւն, և յորդորի մոռանալ, կամ թէ ո՛չ իցէ թողեալ զմոլար կրօնս, և խրատի թողուլ. և կամ թէ չիցէ հարեալ 'ի փեսայն իւր 'ի քս՟, և խրախուսի յարել 'ի նա. այլ են այնպիսի բանք՝ որք առաջի դնեն զիրն ըստ յայտարարութեան, և ըստ զգուշաւորութե՟. իբր զի հայելով յընդհանուր եկեղեցին քս՟ի, յայտ առնեն զլինել եկեղեցւոյն այնպիսի, այսինքն մաքրեալ յարտաքոյ, և միացեալ ընդ քս՟ի իբր ընդ փեսայի իւրում։ Իսկ հայելով 'ի մասնաւոր անձինս եկեղեցւոյ՝ այս բանք կարգին 'ի զգուշութիւն նոցա առ 'ի մոռանալ զծառայութիւն կռոց և մեղաց, և պաշտել զԹագաւորն երկնաւոր. նմա միայնոյ երկիր պագանել և զհրամանս նորա կատարել։

Լամբ". ընդ որս և այլք ոմանք՝ զայս բան ուղղեն առ հին եկեղեցին՝ որ 'ի հրէից. որպէս թէ ասէր առ նա. լո՛ւր զորս գուշակեմ, և տե՛ս զնոյն աչօք 'ի կատարելն արդեամբք. խոնարհեցո՛ զունկն քո քարոզութեան առաքելոց. մոռա՛ զաւանդութ՟ս ծերոց, և զզոհս տաճարի քո. զի թէ զայսոսիկ մոռասցիս, ցանկասցի Թագաւոր գեղոյ քոյ։ Այս մեկնութիւն ևս է ընտիր. բայց առաջինն երևի ընդարձակագոյն և հարազատ. զի մարգարէին դիտումն հայի 'ի նոր եկեղեցի.

և զնէ թէ թագաւորն երկնաւոր արդէն ցանկացաւ նմա, և ոչ մնայ նմա այլ ինչ առնել. բայց եթէ՝ պաշտել զթագաւոր իւր, և նմա միայնոյ երկիր պագանել. առ որ և յորդոր լինի 'ի յաջորդ համարն.

Շնորհալին մեր. ('ի մեկն. մատ. գլ. ա̃.) զայս բան յարմարեցուցանէ ռեբեկայ՝ խօսելով առ նա 'ի դիմաց ազգի մարդկան. *լուր դուստր ռեբեկայ, և տես՝ մոռա զժողովուրդ քո. (և լեր կին իսահակայ‖.) ըստ սմին հնար է և այլոց բազմաց յարմարեցուցանել զսա. ապա թողեալ զայն՝ մատիցուք 'ի բանդ՝ զոր ասէ.

ժդ. Սա ինքն է տէր քո՝ երկիր պագցես նմա. և դուստր Տիւրոսի երկիրպագցէ նմա. և պատարագօք զերեսս նորա պաղատեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց. Աստանօր բառդ տէր՝ անեղակ և անպայման առաջի եդեալ՝ ցուցանէ զինքնիշխան տէրութիւն երկնաւոր փեսային. Իսկ այս չորեքկին. մի՝ ստեղծմամբ. երկրորդ՝ պահպանութեամբ. երրորդ՝ փրկութեամբ. և չորրորդ՝ հարսնախօսութ̃բ. Ապա վասն այսպիսեօք տէր գոլոյ երկնաւոր թագաւորին՝ ազդ առնէ մարգարէն եկեղեցւոյ ըստ ամենայնի նորա լինել, և զնա միայն պաշտել. վասն որոյ ասէ.

Սա ինքն է տէր քո, երկիր պագցես նմա. Այսինքն որովհետև սոյն այս երկնաւոր թագաւոր՝ և փեսայ քո՝ է ինքնիշխան տէր քո ըստ ամենայնի, ուրեմն դու ոչ ունիս զքեզ տէր՝ առ 'ի պաշտել զնոյն, այլ զսա միայն. կուռքն, որոց երկիրպագանէիր՝ ոչ էին տէր քո, այլ անարգ քան զծառայ քո. տէր քո սա է. Ուստի ասէ միայն երկիր պագցես. այսինքն սմա իբրև ճշմարիտ ա̃յ երկիրպագանիցես, և սմա իբրև ամենիշխան տեառն հնազանդեսցիս և մի ես կռոց. մինչև քոյին օրինակաւ ևս այնոքիկ ազգք որք ամենևին օտար էին 'ի նմանէ՝ եկեսցեն առ նա և երկիրպագցեն նմա. և առ այս յարէ զկնի և ասէ.

Եւ դուստր Տիւրոսի երկիր պագցէ նմա. Բառդ ծուր՝ փոփոխութ̃բ սաստից ընթերցեալ լինի Տիւրոս, որ ըստ եբր'. գրի ծօռ կամ ցօռ, որ է ծուր, այսինքն սուր. որով նշանակի հաստ կամ ուժեղ կամ ուժգնութին. Այն այս ծուր էր մայրաքաղաք փիւնիկեցւոց. և սորա այսինքն փիւնիկեցիք էին զօրաւորք յոյժ և աշխատաւորք. և որպէս մարթ է իմանալ 'ի բանիցն ամովսայ. (ա. 9.) 'ի ժամանակս սողոմոնի ուխտ եդին ծառայել նմա, և չգերել զոք յիսրայելացւոց. թէպէտ և յետոյ 'ի ժամանակս ոզիայ արքայի հրէաստանի ստեցին ուխտին.

Արդ որովհետև ծուր էր մայրաքաղաք փիւնիկեցւոց՝ յիշատակութեամբ նորա յիշատակին և բոլոր փիւնիկեցիք. 'Ի սոսա յառաջ քան զամենայն եղ կռապաշտութիւն 'ի ծովեզերեայս պաղեստինոյ. վասն զի սոքա 'ի սկզբան վասն վաճառականութեան յաճախելով յեգիպտոս, տեսեալ անդ զպէսպէս քանդուածս և արձանս, զորս նոքա յաղագս պէսպէս իրաց նշանակ կանգնէին՝ այսինքն 'ի ցուցանել զաճիլ ջուրց կամ զնուազիլ նոցին, 'ի ցուցանել զժամանակ սերմանելոյ կամ հնձելոյ են. զնոյն նմանութիւնս առին յինքեանս. և սկսան առ սակաւ սակաւ պաշտօն մատուցանել նոցա. որպէս արարին յետոյ և նոքին իսկ եգիպտացիք.

Արդ որովհետև գրեթէ սոքա եղեն առաջին կռապաշտք յայնոսիկ կողմանս, զսոսա 'ի մէջ բերելով, սոքիմբք կամի առաջի դնել զայլ ն և ևս մոլեգին կռապաշտս. որով կամի ցուցանել, թէ նաև այսպիսի կռապաշտք, որք քան զամենայն մոլի էին, թողեալ զզարշպաշտամունս իւրեանց՝ յարեցան յեկեղեցի հեթանոսաց և եղեն երկրպագու քո.

Իսկ յայս միտս առեալ՝ այս բան, զոր ասէ, դուստր ծուրայ [illegible] ոչ է բաժանելի յայնմանէ՝ առ որ ասաց [illegible], այլ ընդ նմա միաւորելի է այսպէս. ով եկեղեցի սուրբ՝ երկիրպագցես փեսային քում և ընդ քեզ երկիրպագցէ նմա նաև ժողովուրդ ծուրայ, զի նոքա ևս միասին ընդ քեզ. կամ որ 'ի նոյն գլուխ, երկիրպագցես քո ով եկեղեցի՝ որ ընտրեցար 'ի հեթանոսաց այսինքն 'ի ժողովրդենէ փիւնիկեցւոց և այլոց ազգաց, զի նոքա ևս ընդ քեզ լիցին մի եկեղեցի, և երկիրպագանիցեն քո.

Այս բան ըստ յարմարութեան յայտնի տեսանի 'ի կինն փիւնիկեցի որ ըստ պատմելոյ աւետարանին երկիր եպագ քո, և հաւատալով գովեցաւ 'ի քէն և ընկալաւ զբժշկութիւն դստեր իւրոյ, և եղև օրինակ հեթանոսաց. (մատ. ԺԵ. 25։) Այլ արդ քանզի յեկեղեցի քս̃ի յարեցան և իշխանք, որով պատուեցին զնոյն զայն եկեղեցի, զնոսա ևս յիշէ 'ի մասնաւորի ասելով։

Ի՛— պատարագօք զերեսս քո պաղատեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց։ Երեսս քո՝ դնի աստ փոխանակ եկեղեցւոյ, որպէս է տեսանել յայլ ամենայն Թարգ". ևս և 'ի բնա". եբր". յորս դնի * զերեսս քո‖։ Իսկ մեծամեծք իմացեալ լինին նախ իշխանք ժողովրդոց, այսինքն թագաւորք, և տեարք են, ևս և իմաստունք և խորհրդականք. իմացեալ լինին երկրորդ և մեծամեծ ժողովուրդք ըստ ազգս իւրեանց։ Սոքա ամենեքին պաշտեցին զերեսս եկեղեցւոյ արտաքին և ներքին պատարագօք. արտաքնովք 'ի պատուելն զնա պէսպէս արտաքին իրօք. ներքնովք 'ի պատուելն զնա իւրեանց ներքին հաւատովք և բարի գործովք։

Իսկ երեսօք իմացեալ լինի փառքն եկեղեցւոյ ըստ երևելի գոլոյ։ Այս զի 'ի պաշտել և 'ի պատուել մարդոյ զոք 'ի ձեռն պատարագաց՝ յերեսն ակնարկէ, և յորպիսութէ̃ երեսացն իմանայ ընդունելի կամ ոչ ընդունելի լինելն, վասն այսորիկ փոխանակ ասելոյ պաշտեսցեն զնա, ասէ. պաշտեսցեն զերեսս քո։

Մարթ է երեսօք եկեղեցւոյ իմանալ աստ և զգլուխն եկեղեցւոյ զքս̃, զոր մեծամեծք ամենայն ազգաց պաշտեցին և պաշտեն հանապազ։ Իսկ պաշտելն հայելով յեկեղեցի՝ ոչ ցուցանէ աստ ծառայել, կամ պաշտօն ծառայութէ̃ մատուցանել, այլ պատուել, և յարգել. որպէս թէ եղեալ էր, մեծապատիւ անձինք պատուեսցեն զեկեղեցի։ Իսկ հայելով 'ի քս̃ պաշտելն դնի փոխանակ երկրպագանելոյ և պաշտօն ծառայութէ̃ մատուցանելոյ։

Կամ". և այլք ոմանք զբառդ քո՝ զոր մեք ըստ եբր". և ըստ այլոց Թարգ". վերածաք 'ի դէմս եկեղեցւոյ, վերածեն 'ի դէմս քս̃ի. վասն զի համարին զայս բան ասացեալ առ ժողովուրդն հրէից. որպէս թէ եղեալ էր. ով իսրայէլ 'ի տեսանելդ զա̃ծ մարմնով՝ մի գայթակղեալ յետս կացցես 'ի պաշտելոյ զնա. նա է տէր քո, նա է՝ որ խօսեցաւ ընդ մովսէսի, նա է՝ որ ընտրեացն զքեզ. նմա երկիրպագեա. մի յետնեալ գտանիցիս քան զդուստր Ծուրայ, յոր օրինակին հեթանոսք, զի և նոքա և իշխանք նոցա հանդերձեալ են երկիրպագանել նմա, և պաշտել զնա, և լինել նորա ժողովուրդ.

Յայս միտս առեալ և վարդանայ, երեսօքն քո ի խնանայ զամենասուրբ մարմին նորա. խնամոյ և զեկեղեցի սուրբ. զի ՚ի սոսա իբր յերեսս երևի քո. ՚ի միումն իբր յիրական մարմնի իւրում, և ՚ի միւսումն իբր ՚ի բարոյական մարմնի.

Իսկ արդ որովհետև երկոքին այսոքիկ տունք սաղմոսիս ուղղակի վերածին և ՚ի դէմս սուրբ ածածնի, արժան է մեզ առանձին մեկնութեամբ վերստին առաջի դնել զսոսա աստ.

ԺԱ. Լուր դուստր և տե՛ս՝ խոնարհեցո՛ ունկն քո. մոռաց զժողովուրդ քո, և զտուն հօր քո. զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո.

ԺԲ. Սա է Տէր քո՝ երկիրպագեսցես նմա. և դուստր Ծուրայ երկիրպագէ նմա. և պատարագօք զերեսս քո պաղատեսցեն մեծամեծք ՚ի ժողովրդոց.

Իսկ բանք առին առ սուրբ կոյսն նախ ՚ի բերանոյ սաղմոսերգուին, այսինքն Դաւթի. երկրորդ՝ ՚ի բերանոյ հին եկեղեցւոյ. և երրորդ՝ ՚ի բերանոյ հօր այ. այլ յորմէ և առացեալ լիցին, միապէս մեկնին. Արդ ՚ի յաւիտենական վճիռն յայն՝ որով սահմանեցաւ մարդանալ երկնաւոր Թագաւորին ՚ի փրկութիւն ազգի մարդկան, սահմանեցաւ միանգամայն և ծնանիլ ՚ի սրբոյ կուսէն մարիամայ. որով և որոշեցաւ նա լինել մայր այ. իսկ այս արժանապատուութիւն ածամայրութե փակէ յինքեան զանսահման յարգ. և քանզի առ ՚ի վերանալ յայսպիսի աստիճան արժան էր նմա յարմարիլ ՚ի նոյն, վասն զի ած զամենայն ինչ յարմարելով գործէ, վասն այսորիկ սահմանեցաւ վասն նորա լիութիւն այնչափ շնորհաց՝ որ իցէ բաւական առ տրամադրելոյ զնա յայնպիսի գերագոյն վիճակ.

Ի դնել այսր հետևի՝ թէ այն շնորհք՝ որք սահմանեալ եղեն պարգևիլ նմա, առաւել էին և գերագոյն քան զամենայն շնորհս ո՛ և իցէ ստեղծուածոց միանգամայն առեալ՝ թէև առաւել քան զչափն լինէր նոցա բազմանալ. և սորա պատճառն է. զի շնորհք որք տուեալ լինին այլոց առեղծուածոց՝ ոչ կարգին առ այնպիսի գերազանց վիճակ, այսինքն առ իրական ազգականութիւն ա̅յ, կամ առ մայրութիւն նորա, այլ առ սրբութիւն անձին և առ ժառանգութիւն փառաց արքայութեան. Իսկ շնորհք որք տուեալ եղեն սրբոյ կուսին՝ կարգեալ եղեն առ ճշմարիտ և առ իրական ազգականութիւն ա̅յ, այսինքն առ 'ի լինել ճշմարիտ մայր ա̅յ. և զի իրական ազգականութի առ ա̅ծ՝ ունի զյարգ անսահման, շնորհքն՝ որք տուեալ եղեն սրբոյ կուսին առ 'ի տրամադրել առ այն՝ եղեն վերաբերութեամբ իւրն իբր անսահման. (տե՛ս 'ի գիրքն կոչեցեալ պատկեր տօնից տիրամօրն. ճառ Ե.) Իսկ զի այսպիսի շնորհ և արժանապատուութի պատրաստեալ էր ամենօրհնեալ կուսին, ազդ առնէ նմա սոյն այս առաջի եղեալ բանս՝ յասելն.

Լուր դուստր և տե՛ս. Այսինքն լո՛ւր զոր ունիմ ասել, և տե՛ս թէ զինչ պատրաստեալ կայ քեզ, և զինչ լինելոց է քեզ. Իսկ զի զոր կամէր ասել՝ երևէր լինել անհաւատալի, սմին իրի յարէ.

Խոնարհեցո՛ զունկն քո. Որպէս թէ ասէր. զոր ասելոց եմ քեզ՝ հաւատա և ընկալ. և մի ասեր, թէ զիարդ լինիցի ինձ վերանալ յայդպիսի փառս, որ եմ դուստր եւայի, և տուն հօր իմոյ ես աղքատ. Մի՛ ասէ խորհիր զայդ. զի թէպէտ և դու ես 'ի դստերաց եւայի, բայց սահմանեալ ես լինել ծնող ոչ որդւոց եւայի, այլ որդւոյն ա̅յ. վասն որոյ հետևեցուցանէ.

Մոռա՛ զժողովուրդ քո, և զտուն հօր քո. Որպէս թէ ասէր. մի մտածեր՝ թէ յորմէ իցես, կամ յորմէ ժողովրդենէ, կամ յորպիսի տանէ, մոռացիր զայդպիսիս. Իսկ կամ որ 'ի նոյն հայի, դու որ ես դուստր եւայի և 'ի ժողովրդենէ անտի իսրայէլի, 'ի տանէ ամինադաբայ, գիտասջիր զի մոռանալոց ես զնոսա. Իբր զի ոչ ես լինելոց մայր ըստ նոցա 'ի մէջ նոցա, այլ 'ի վեր առեալ 'ի կարգ գերագոյն՝ լինելոց ես մայր ա̅յ. և որ ազգական էիր մարդկան՝ լինելոց ես ճշմարտապէս ազգական ա̅յ, անմիջապէս որդւոյն և միջնորդաբար հօր և հոգւոյն. վասն որոյ մոռա զժողովուրդ քո և զտուն հօր քո. և եթէ ասիցես, միթէ ես միայն գտայ 'ի ժողովրդեան իմում. այլ դու միայն գտար, և այս է զոր յարէ զկնի.

Զի ցանկացաւ թագաւոր գեղոյ քո. Այս գեղ ըստ երկուց մտածի. Մի՝ բացասաբար կամ ըստ ամբծութեան. ըստ որում սուրբ կոյսն ամբիծ և անարատ գտաւ յամենայնի. վասն որոյ ասաց ցնա փեսայն. * ,,ամենեւին գեղեցիկ ես մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ ,,գոյ 'ի քեզ ॥. (Երգ. Դ. 7.) Երեք արատք տիրեն որդւոց մարդկան. ընդ որս և երեք վայք. վայն սկզբնական մեղաց. վայն մահացու մեղաց, և վայն ներելեաց. և ահա յերից աստի ես ազատ գտաւ սուրբ կոյսն։ Եւայ՝ որ էր գրով լինելոց էր մայր երանութեան՝ և մայր ամենայն կենդանեաց, 'ի մեղանչելն՝ զգիրդ էր փոխարկեալ 'ի է, և ստորագրեցաւ է վայ, և եղև ժառանգ վայի, և արմատ վայից. միայն սուրբ կոյսն եղև և մնաց առանց վայի. ուստի լատինացիք յողջունելն զնա ասեն՝ ավէ, այսինքն ողջ լեր. որ յընթեռնուլն տրոհմամբ ա-վէ, նշանակէ առել առանց վայի. զի վայ ինչ ոչ եհաս 'ի նա.

Երկրորդ՝ այս գեղ մտածի ստորասաբար, կամ ըստ կատարելութե. որով նշանակի լիութի ամենայն շնորհաց և առաքինութեց հանդերձ լրութբ բնական կատարելութեց, բովանդակելով յինքեան զամենայն կատարելութիւնս ո՛ և իցէ ստեղծուածոյ։ Պատկերահան ոմն քսեւքսիս անուն կամելով գերագանց ցուցանել զգեղեցկութիւն իւնոնեայ այսինքն յոլայ կուսի՝ նկարեաց նախ զպատկերս գեղեցիկ կուսանաց յունաստանի. նկարեաց ապա զպատկեր նորին՝ բովանդակելով 'ի նմա զգեղեցկութիւն ամենեցուն նոցա. սոյնպէս ներգոյացաւ և գեղեցկութիւն սրբոյ կուսին. զի զգեղեցկութիւն ամենայն սրբոց եւս և զհրեշտակաց բովանդակեաց 'ի նմա հոգին սուրբ. որով և այնչափ յարգոյ ընծայեցաւ նա առաջի երկնաւոր Թագաւորին՝ այսինքն որդւոյն այ, մինչև ցանկացաւ նա գեղեցկութեան նորա, և հաճեցաւ ծնանիլ 'ի նմանէ, և ունել զնա իւր ճշմարիտ մայր. և ըստ այսմ սուրբ կոյսն 'ի գործադրութեան մարդեղութե մտածեալ՝ արժանաւորեցաւ՝ զի 'ի նմանէ առցէ բանն այ զմարմին. յոր միտս ասաց առ նա բանն. (Երգ. Դ. 1.) * գարձ

,, զաչս քո առաջի իմ. վասն զի դոքա ընդոստուցին ,, զիս ||. այսինքն դադարեցո զաչս քո 'ի խնդրելոյ յինէն գալ առ քեզ. զի դոքա արդէն ընդոստուցին զիս 'ի ծոցոյ հօր իջանել առ քեզ և մարմնանալ 'ի քէն:

Ասացի * 'ի գործադրութեան ||, զի 'ի դիտման 'ի միտս ա՟յ մտածեալ՝ առանց արդիւնաւորելոյ վճարեալ էր՝ զի բանն ա՟ծ 'ի նմանէ առնուցու զմարմին. և սակայն 'ի գործադրութեան, որպէս առաջին շնորհիւ արդիւնաւորեցաւ զանձումն շնորհաց, այնպէս և լրութ՟ե շնորհաց արդիւնաւորեցաւ՝ զի յանկացի նմա որդին ա՟յ, ըստ որում և ասէ, յանկացաւ թագաւոր գեղոյ քոյ: Այն յանկացաւ և էջ յարգանդ նորա, և բնակեցաւ 'ի նմա. ուր և եհաս սուրբ կոյսն 'ի լրումն ամենայն շնորհաց և կատարելութեանց:

Աննա կին Եղկանայ 'ի յղանալն զՍամուէլ՝ լցաւ ցնծութեամբ, և հաղորդ գտաւ շնորհաց մարգարէութ՟ե նորա. ուստի և մտեալ 'ի տաճարն երգեաց զհրաշաւոր զերգն զայն. * հաստատեցաւ սիրտ իմ 'ի ,, տէր ||. (ա՟. թագ. բ. 1:) Զինչ ապա պարտ իցէ ասել զսուրբ կուսէն. որ յղացաւ և կրեաց յինքեան զտէրն մարգարէից զլրութիւնն սրբոց. որ և տիրապէսն հաղորդ գտեալ ա՟ծային բարձրութեան, և ելեալ 'ի լեռնակողմն ա՟ծամայրութեան, և մտեալ 'ի տունն զաքարիայ՝ այսինքն 'ի լրումն փափաքանաց մարգարէութեան՝ երգեաց. * մեծացուսցէ անձն իմ զտէր ||. զոր և հանապազ երգէ եկեղեցի սուրբ ընդ նմա 'ի գոհութիւն հօր: Արդ 'ի ցուցանել մարգարէին՝ թէ որ յանկացաւ գեղոյ նորա, և որ հանդերձեալն է ծնանիլ 'ի նմանէ՝ է նոյն տէրն որ արար զնա՝ յարէ զինի և ասէ:

ՍԱ ԻՆՔՆ Է ՏԷՐ ՔՈ, ԵՐԿԻՐՊԱԳԷՍ ՆՄԱ: Այս բան ոչ ցուցանէ, թէ կոյսն ոչ գիտելով թէ որդի իւր իցէ ա՟ծ՝ յորդորի գիտել. այլ զգիտել նորա յայտնէ նմա՝ առ 'ի ցուցանել զճշմարտութիւն ա՟ծամայր լինելոյ նորա. որպէս թէ ասէր. որ ծնանելոյն է 'ի քէն՝ ոչ է ըստեղծուած ոք, որպիսի են հրեշտակք կամ արքայազունք, այլ ա՟ծ ճշմարիտ, և նա ինքն է տէր քո. և դու՝ որ ընտրեցար 'ի մայրութիւն նորա, երկիրպագցես նմա. այսինքն թէ դու ես անտարակոյս գիտելով թէ զոր ծնար է ճշմարիտ ա՛ծ քո, իբրև ճշմարտի ա՛յ երկրպագցես նմա։ Եւ 'ի վերայ այսր ամենայնի աչօք ես տեսցես, թէ զիարդ նաև ազգք հեթանոսաց երկրպագցեն նմա։ Եւ առ այս յարէ։

Եւ դուստր Տիւրոսի երկիրպագեսցէ նմա. և պատարագօք զերեսս նորա աղաչեսցեն մեծամեծք 'ի ժողովրդոց։ Այսինքն ժողովուրդք Ծուրայ՝ որով նշանակին ն և իցէ հեթանոսք՝ երկրպագցեն այնմ՝ զոր ծնանելոց ես. և մեծամեծ իշխանք՝ որպիսի եղեն 'ի սկզբան երեք թագաւորքն՝ պատուեսցեն և փառաւորեսցեն զերեսս նորա, այսինքն զվայելչութիւն փառաց նորա, ես և զերեսս քոյ, այսինքն զվայելչութիւն փառաց քոց, որով և երանեսցեն քեզ ամենայն ազգք և ազինք մինչև յաւիտեան։

Արժան էր աստանօր երկարել զբանս մեր 'ի գովութիւն փառաց ա՛ծայնին մեծի գլխոյն. բայց քանզի զայն այլուր վճարեցաք յառաջնին տասն ճառս 'ի գիրքն կոչեցեալ * պատկեր տօնից տիրամօրն ‖. այսչափս առ բաւական համարեցի 'ի մեկնութիւն առաջիկայ բանիցդ։ Եւ այժմ 'ի կարգ նախընթաց մեկնութեան դառնալով 'ի նոյն ուղղեսցուք զբանս մեր, հայելով 'ի զարդս հոգևոր հարսին. զորոց 'ի մասնաւորի խօսելով մարգարէին՝ ասէ։

ԺԴ. Ամենայն փառք դստեր թագաւորի 'ի ներքոյ. 'ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։

Ի համարն 11. որպէս ասացաք անդ՝ խօսեցաւ մարգարէն զարտաքին զարդուց հարսին. այլ զի արտաքին զարդք չեն ինչ այնչափ յարգի, զի բազումք արտաքոյ զարդարեալ՝ ոչ գտան հաճոյ յաչս փեսային իւրեանց, վասն որոյ սկսանի խօսիլ աստ զներքնոյն. և զայս ձեւացուցանէ հայելով 'ի սովորութիւն զգեստուց հարսանց, կամ 'ի սովորութի՛ զգեստուց կանանց. վասն զի սովորութիւն էր, որպէս և է այժմ յարևելս 'ի բազում տեղիս՝ քօղով պատել զհարսն 'ի գլխոյ մինչև 'ի վայր 'ի ստորոտն. որով որչափ ինչ վայելուչ զարդք կան 'ի հարսն առ 'ի ներքս, ես և գեղեցկութիւն նորա, և փառաւորութի՛ նորին՝ 'ի ներքոյ քօղոյ ծածկեալ լինելով՝ ոչ երեւին արտաքուստ. սոյնպէս է և յայտնաբիկ՝ որք ծածկին սուամնաւ, ըստ որում նոլագոյն ներքին զարդք նոցա։ Ըստ այսմ նմանութեան խօսելով մարգարէն զեկեղեցւոյ՝ ասէ.

Ամենայն փառք դստեր թագաւորի ՚ի ներքոյ։ Գիտելի է՝ զի յիւրաքանչիւր հոգեւորական իրս սուրբ եկեղեցւոյ է ինչ ինչ երեւելի, և ինչ ինչ աներեւոյթ, եթէ ՚ի բարոյականս և եթէ ՚ի խորհրդականս. ՚ի բարոյականս՝ զորօրինակ յաղօթս, ՚ի պահս, և այլն. աղօթելն, պահելն, և այլն, երեւելի համարին, կամ զգալի. իսկ ներքին զգաստութիւն մտաց, ուղիղ դիտաւորութիւն կամաց, և այլն, են աներեւոյթք. ՚Ի խորհրդականս, զորօրինակ ՚ի մկրտութեան, ՚ի դրոշմի, և այլն, երեւելի համարին արարողութիւնքն, կամ զգալի. իսկ սրբարար շնորհքն, և պարգեւք հոգւոյն սրբոյ, որք ընդ արարողութեամբք ծածկին՝ են աներեւոյթք։ Որք երեւելիքն են կամ զգալի, ասին զարդք եկեղեցւոյ, և զի են սուրբ և վայելուչ՝ կոչին ոսկեհուռն. իսկ որք աներեւոյթքն են՝ կամ անզգալի՝ ասին փառք եկեղեցւոյ. և թէպէտ փառքն զերեւելիութիւն փաղանշանէ, բայց քանզի սոքին են ՚ի ներքս ՚ի հոգին՝ համարեալ լինին աներեւոյթ, Եւ վասն այսորիկ ասի թէ ամենայն փառք եկեղեցւոյ ՚ի ներքոյ են։

Ի սոյն հայի և ներկայութիւն հոգւոյն սրբոյ ՚ի կառավարել զեկեղեցին. եւս և անսխալութիւն եկեղեցւոյ յիւր հաւատոյ և ՚ի վարդապետութիւնս վարուց, նաև ՚ի տեղեկութիւն աստուածային գաղտնեաց, և այլն. որք են յեկեղեցւոջն Քրիստոսի, և են փառք նորա, բայց ՚ի ներքոյ. զի հաւատով միայն տեսանին, և ոչ զգայութեամբք. վասն որոյ ըստ այսմ եւս ասի ամենայն փառք նորա ՚ի ներքոյ. Այլ թէ զիարդ. յարէ.

Ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ և պաճուճեալ։ Բառս վերջաւոր՝ կարէ նշանակել այնպիսի զգեստ՝ որ պատէ զանձն մինչև ՚ի սրունս, և անտի ՚ի վայր մինչև յոտս. որպիսի է ներքին պարեգօտն, կամ երկայն պատմուճանն, ունելով ՚ի ստորոտս զժապաւէնս զարդարեալս. բայց աստ վերջաւոր ասելով տիրապէս իմանայ զծայրս քղանցից, կամ զփնջաւոր ժապաւէնս քղանցից (այսինքն է փէշերուն փիւսկիւլլիւ չէրիթները)։

Արդ մարգարէն՝ որ ասաց, ամենայն փառք եկեղեցւոյ ՚ի ներքոյ կան ծածկեալ, ոչ կարացեալ խօսիլ ինչ զայնցանէ, ՚ի մէջ բերէ միայն զփառազարդութիւն վերջաւորացն. իսկ այսոքիկ վերջաւորք են արտաքին հոգևորական զարդքն, զորս յիշեցաք այժմ. ընդ սոսին իմա և զչորեսին պայմանսն ճշմարտութեան եկեղեցւոյ, այսինքն է լինել մի, սուրբ, կաթուղիկէ, և առաքելական. Սոքա են յիրաւի գեղեցիկ վերջաւորք՝ (ֆր՟ շէրիտք) ՚ի ծայրս ներքին զարդուց եկեղեցւոյ՝ երևեալք առ արտաքս, ոչ անպաճոյճք, այլ ոսկեհուռն զարդարեալք և պաճուճեալք. այսինքն առաւել քան զառաւել շքեղացեալք.

Այլ արդ եթէ վերջք կամ ծայրք ներքին հանդերձից եկեղեցւոյ այսպէս զարդարեալ են և պաճուճեալ, քանի՞ ևս նոքին իսկ ներքին հանդերձքն, կամ ասացից ներքին փառքն. իսկ թէ որպիսի իցեն, լռէ, և ոչ կամի պատմել. Յայս միտս և յերգս երգոց ՚ի թուել հեղինակին զամենայն առաքինութիւնս հարսին, իբրև ժամանէ ՚ի ներքինն յայն փառս՝ լռութիւն կոչէ, յասելն * բաց ՚ի լռութենէ քումմէ ‖. որով ցուցանէ անճառ լինել. և լռութիւն անուանիլ.

Իսկ զի ոսկեհուռն կոչէ զծայրս այսր ներքին զարդուց, սովին նշանակի՝ թէ զարդք եկեղեցւոյ փայլին ոսկւով այսինքն սիրովն այ՟, որ է ծայր ամենայն հոգևոր զարդուց. զի հոգևոր զարդք ՚ի սիրոյ սկսանին իբր յոսկւոյ, և ՚ի սէր բովանդակին. սիրով զարդարին և սիրով կատարին, ըստ որում լրումն օրի՟ սէր է.

Հոգևորապէս, ներքին զարդու իմացեալ լինի տեսական կեանք հոգւոյն, որ արտաքոյ ոչ երևի, այլ գաղեալ կայ ՚ի ներքս ՚ի հոգին. և մանաւորապէս նշանակի սովաւ նոյն իսկ տեսական կենաց ներքին ոգին՝ որ է ՚ի խորհուրդս մտաց ՚ի մտաւորական աղօթսն, և ՚ի դիտաւորութիւս ուղիղս. և սա այնպէս բաղդատի առ հոգևոր կեանս, որպէս հոգին առ մարմինն, որպէս արմատն առ ծառն, որպէս ներքին հիմն առ շինուածն, որպէս ղեկն առ նաւն, և այլն.

Արդ որպէս հոգին ոչ երևի, և որպէս արմատն՝ որ ՚ի հողն՝ ոչ տեսանի, և որպէս հիմն՝ որ ընդ երկրաւ ոչ նշմարի, սոյնպէս է և մտաւորական աղօթք, որ ոչ երևելով գոյաւորէ զՀոգևոր կեանս, և տայ Հոգւոյն ուղիղ կառավարել զընթացս կենաց ։

Նաև այս գեղեցիկ ևս բացատրի օրինակաւ ղեկին. վասն զի թէպէտ և ղեկն է՝ որով նաւուղիղն կառավարէ զընթացս նաւուն, բայց որով կառավարէ՝ ոչ է այն մասն ղեկին՝ որ երևի, այլ այն մասն որ ոչն երևի, և է քաղեալ ՚ի ներքս ՚ի մէջ ջրոյ ։ Այն որ երևի է իբր նիւթական ինչ և իբր գործիքական մասն, իսկ որ ոչն երևի՝ է իբր տեսական ինչ առ կառավարութիւն նաւուն ։ Ըստ այսմ է և մտածութիւն յաղօթս, կամ մտաւորական աղօթք ՚ի Հոգևոր կեանս ։ Նաև սա միայն է՝ որ ուղղէ զընթացս Հոգևոր կենաց, և բարեկարգէ զամենայն շարժմունս Հոգւոյն, և առնէ զմարդն բարի, և զգործ նորա բարի ։

Այս ակնարկէ թերևս և այն՝ որ գրի ՚ի ծնն. ա̃. որ վասն ամենայնի զոր արար ա̃ծ՝ առանձինն առանձինն ասի, * Ետես ա̃ծ՝ զի բարի են ‖. իսկ վասն մարդոյ ՚ի մասնաւորի այդպիսի ինչ առանձինն ոչ ասի, այլ ՚ի հասարակի. վասն զի այլոց ամենեցուն բարութիւնք երևելի էին, իսկ մարդոյս բարութ̃ի և ամենայն փառք ՚ի ներքոյ, և միայն ՚ի նշանաց երևին իբրև ՚ի վերջաւորաց ոսկեփայլ զարդարելոց ։ Ուստի որ ՚ի ներքս է ՚ի մարդն և ոչ երևի՝ այն միայն (որպէս ասացաք) կացուցանէ զմարդն բարի, և տայ գործոց նորա լինել բարի ։ Նմանիք կան, որք արտաքոյ երևին բարի. այլ պակասեալ ՚ի ներքին կատարելութ̃է, նմանին այնպիսի արձանաց՝ որք պատուական ականք իցեն զարդարեալ. այլ ՚ի ներքոյ փայտ կամ քար ։ Պատրոյկ են սոքա՝ արտաքոյ լոյս, և ՚ի ներքոյ խաւար ։

Եթէ անտեսանելին այն ներքին գիտութ̃ի կամ մտաւորական աղօթք, կամ խոկումն և կամ դիտաւորութիւն կայցէ ՚ի Հոգին, ամենայն գործք նորա ուղիղ լինին, և յարմար ընթացից կենաց ։ Կարկին յաներևոյթ ծայր իւր յեցեալ կայ. և ՚ի պտոյտքին նովաւ՝ շրջանակին ձևանայ զնովաւ. սոյնպէս և Հոգին յաներևոյթ կատարելութիւն գիտութ̃ե յեցեալ կայ. և ՚ի գործելն նովաւ՝ կերպարանին կատարեալ գործք. * ամենայն ինչ ուղիղ է իմաստնոց, և յարմարեալ է „ այնոցիկ՝ որք գտանեն զգիտութ̃ի ‖. (առակ. ը. 9.)

Արդարև որ ունի զներքին զայս խնամութիւն՝ ամենայն ինչ նորա ուղղութեամբ կատարի. և որք գտեալ են զայս գիտութի՝ յարմար Ճշմարտութեան ելանեն գործք նոցա ։

Զոր ինչ և գործեսցես, եթէ չկայցէ զօրութիւն այսր ներքին կառավարութեան, ունայն է. եթէ յաղօթս կայցես, եթէ ողորմութի տայցես, եթէ պահս պահիցես, եթէ գետնախշտի լինիցիս, եթէ քարոզիցես, եթէ գիրս շարադրիցես, արտաքին խեչերանք են առանց ներքին ուղիղ կառավարութեան և դիտաւորութեան ։ Աշխատիս 'ի վերայ կեղևոյ ընկուզի 'ի բեկանելդ և 'ի զատանելդ. իսկ զոր ուտես՝ է ներքինն ։ Աշխատիս և 'ի գործս բարիս, բայց ներքին ուղիղ կառավարութիւն է՝ որ առնէ զգործս քո ըստ ներքնոյն ընդունելի, և կացուցանէ ներքսապէս բարի ։ Եւ այս յաջողի մարդոյ յա̄ծային շնորհաց ։

Նարեկացին ('ի մեկն. երգոց երգոյն գլ. Դ. 3.) զայս ներքին կատարելութիւն վերածէ 'ի Հաւատ 'ի յոյս և 'ի սէր. և եդեալ առաջի զբնաբանն՝ գրէ այսպէս. * իբրև զկեղև նռան այտք քո բաց 'ի լռութենէ
,, քումմէ. երկու բնութիւնք են (ասէ) նռան. զի ե-
,, րևելիքն դաժանք են, և աներևոյթքն ախորժականք
,, և բազում առողջութե առիթք. արդ Հարսն քո,
,, այսինքն եկեղեցի 'ի վերայ սքօղեալ է զերեսս առա-
,, քինական վարուք, և խոշորած գնացք և տաժանե-
,, լիք. այսոքիկ արտաքոյ նռան կերպիւ. իսկ որ 'ի ներքս
,, 'ի նա ամփոփեալ է՝ յոյսն է և սէրն և Հաւատն՝ որ
,, առ ա̄ծ. որով յուսալ այնմ ամենայնի Համբերէ.
,, զի որպէս նռան 'ի ներքս Համբարեալքն կարի յոյժ
,, ցանկալի է 'ի կերակուր, նոյնպէս և վարք առաքի-
,, նութեանց քրտնալից է և մեծ աշխատութե̄ ա-
,, ցեալ. իսկ պտուղ նորին ամենայն փառօք է և փա-
,, ռաւորեալ. յաղագս որոյ մարգարէն ասէ, ամենայն
,, փառք դստեր թագաւորի 'ի ներքոյ ‖. Եւ ապա մեկ-
նելով զյաջորդ բանն գրէ այսպէս. * բաց 'ի լռութե̄
,, քումմէ. այսինքն թէ որչափ ես գեղեցիկ՝ ընդ բնու-
,, թեամբ է և ոչ յայտնի առ այժմ որչափ 'ի սկզբնու-
,, թեան մարմնով պատեալ ես ‖ ։

Յայսպիսի ներքին կատարելութենէ ուսեն Հաւանն վայլեն վերջաւորք մարդոյ, այսինքն գործնական կեանք նորա, և այլ ամենայն գործք նորին. եթէ յընդունելութիւնս խորհրդոց եկեղեցւոյ և եթէ ՚ի յանձնառութիւնս վշտաց, եթէ յաղօթս և եթէ յողորմութիւնս, և որ ՚ի կարգի։

Նա այնուհետև իւրաքանչիւր զգայարանք նորա զարդարին պարկեշտութեամբ. ձեռք նորա կաթեցուցանեն զմուռս՝ զսպելոյ յանարժան շօշափմանց. աչքն իբրև աղաւնոյ ամբիծ՝ յայլաստ հայեցուածոյ. շրթունքն իբրև զլար կարմիր՝ զգոյշ յանկարգ խօսից. ականջքն ունկնդիր՝ ամփոփ ՚ի գարշ լրոյ. ռունգն իբրև աշտարակ լիբանանու՝ անմերձենալի պակշոտութեանց. Նմանապէս և ՚ի զգեստն համեստ. և ոչ զորպիսիս ստորագրէ եսայի. (Գ. 16 = 24.) զորս * անառակութեան նշան ‖ կոչէ գէորգ վարդապետ (՚ի մեկն. եսայ.) Արդ ՚ի խօսիլ մարգարէին փոխաբերութեամբ բանից զպանծալի զարդուց հոգևոր հարսին, նովին իսկ երանէ զնա. որով երանէ նաև զայնոսիկ՝ որք են ընդ նմա, այսինքն որք հաղորդ գտանին նմա, և վայելեն ՚ի փառս նորա. վասն որոյ և առ նոսա հայելով յառաջ բերէ զնոցա վիճակիլն յայսպիսի բարի վիճակ՝ ասելով։

ԺԵ. Տարցին թագաւորի կուսանս զհետ նորա. և զընկերս նորա տարցին նմա։

ԺԶ. Ածցեն ցնծութեամբ և ուրախութեամբ. և տարցին ՚ի տաճար թագաւորի. և փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։

Ըստ սովորութեան թագաւորական հարսանեաց ձևացուցանէ զբանն. իբր զի ՚ի հարսանիս թագաւորաց յածիլ հարսինն՝ հարսնածու լինէին նմա կուսանք. և զկնի նորա տանէին զայլ ևս կուսանս յընկերութիւն նորին, և ուրախութեամբ մուծանէին զնոսա ՚ի տուն թագաւորի. և զի մի տրտմեսցի հարսն վասն հեռանալոյ ՚ի ծնողաց և յազգականաց իւրոց, սփոփէին զնա այսպիսի իմն բանիւք. մոռա զժողովուրդ քո, և զտուն հօր քո. տացէ տէր՝ զի փոխանակ հարց քոց ծնցիս բազում որդիս թագաւորազունս՝ որք տիրեսցեն զկնի, իշխելով ընդ ամենայն երկիր, որով և անուն քո ոչ եթէ յազգի քում եւեթ, այլև յամենայն ազգս յիշեսցի. Յայսմ նկարագրութե՟ն կամելով յայտնել մարգարէին զհանգամանս եկեղեցւոյ, և զերևելի անձանց եղելոց յեկեղեցւոջ, ասէ.

Տարցին թագաւորի կուսանք զհետ նորա. և զընկերս նորա տարցին նմա. Առ բարւոք իմանալոյ զայս բան և զյաջորդ սորա՝ գիտելի է. զի որպէս ընդհանուր եկեղեցին նմանութե՟ հարսին նկարագրի յայս սաղմոս, սոյնպէս և մասնաւոր եկեղեցիք, և նոցին հիմնիչք նմանութե՟ կուսանաց առաջի դնին յասելն. տարցին այսինքն տարեալ լիցին թագաւորի կուսանք զհետ հարսին. նոյնպէս և իւրաքանչիւր հաւատացեալք, մանաւանդ որք նուիրեալ են զանձինս սրբութեամբ երկնաւոր փեսային, անուամբ կուսի կամ անուամբ ընկերաց հարսին յիշին՝ յասելն. և զընկերս հարսին տարցին թագաւորին, կամ նմին իսկ հարսին.

Եւ զայս պարտ է իմանալ ոչ անջատաբար, այլ միասնապէս. իբր զի այսպիսիքս մասնաւոր անուամբ կուսանք կոչելով՝ ոչ եթէ արտաքոյ մարմնին եկեղեցւոյ իբր անջատեալք 'ի նմանէ, կամ իբր արտաքոյ, այլ իբր 'ի նոյն ածեալք. սոյնպէս և եկեղեցին՝ որ 'ի հարսին օրինակի՝ ոչ եթէ ուրոյն 'ի սոցանէ մարմնի, այլ 'ի միասին, և ա՟մքն միանգամայն. վասն զի որպէս սոքա են յեկեղեցւոջ, նոյնպէս և եկեղեցին 'ի սոսա. Արդ 'ի հարմանալ ընդհանուր եկեղեցւոյ ընդ ք՟ի, և 'ի նուիրել նորա 'ի ք՟ս, նուիրեցան ք՟ի և մասնաւոր եկեղեցիք զհետ ընդհանուր եկեղեցւոյ. և այս է զոր ասէ. *տարցին թագաւորի կուսանք զհետ նորա‖. ուր բառդ զհետ կամ զկնի՝ ոչ ցուցանէ զյետնութիւն իբրև, այլ կարգի. իբր զի նախ մարմնի ընդհանուր եկեղեցի, և ապա մարմնին 'ի նմա մասնաւոր եկեղեցիք և նոցին հիմնիչք և հովիւք, այսինքն սուրբ առաքեալք, և սուրբ հայրապետք, որք զընկերս նորա այսինքն զընկերս եկեղեցւոյ՝ զզանազան անձինս նուիրեալս՝ տարան ընդ նմա առ փեսայն երկնաւոր, և այս է՝ զոր ասէ *և „ զընկերս նորա տարցին նմա‖.

Մարթ է առաւել կուսանօք իմանալ զհեթանոսս՝ որք միանալով ընդ եկեղեցւոյ՝ ընծայեցան ք՟ի. իսկ

ընկերօք մարթ է իմանալ զհրեշտակս՝ որք ընկերանին յեկեղեցւոջ՝ ըստ որում յառաջագոյն 'ի նոսա երևէր եկեղեցին . և 'ի նոցանէ ևս բազումք ածան 'ի հաւատս քսի ։ Այլ ամենեքին միանգամայն կացուցին զեկեղեցի սուրբ իբրև զհարսն քսի . իսկ հարսնածուք տիրապետ եղեն առաքեալքն և հետևողք նոցա . և փեսաւերն յովհաննէս, ընդ նմին և զօրք երկնից . յոր միտս ասէ լուսաւորիչն մեր ('ի յաճախս . ժա .) * դասք վե-
„ րին զօրացն եղեն փեսաւերք որդւոյն այ ‖ . Այլ զի այն մեծ կուսանացն էր ցնծալի և ուրախալի, վասն որոյ ասէ ։

Ածցեն ցնծութեամբ եւ ուրախութեամբ . եւ տարցեն (զնոսա) 'ի տաճար թագաւորին ։ Այլ տաճարաւ իմացեալ լինի նախ նոյն իսկ ընդհանուր եկեղեցի, որ միայն տայ ճար փրկութեան . և երկրորդ՝ արքայութիւն երկնից . որ տայ ճար երանութեան, այսինքն զծայրագոյն ցնծութիւն յաւիտենական ։ Յայս և 'ի սոյն տաճար ածին և ածեն եկեղեցիք քսի և առաջնորդք նոցա զկուսանս, որովք ըստ ասելոյ մեր այժմ, իմացեալ լինին անձինք նուիրեալք հաւատով, յուսով, և սիրով, որք վասն սրբութեամբ ընծայելոյ 'ի հարսնութեան երկնաւոր թագաւորին՝ կուսանք կոչին ։

Իմացեալ լինին մասնաւորապէս և հարազատ կուսանք՝ որք ուխտիւ կուսութեան հարսնացան ընդ քսի ։ Որքս առանձին իմն փառօք ունին ածել առ քս, և մանաւանդ իմն ցնծութեամբ ուրախանալ ընդ քսի յերկինս, և նորահրաշ երգովք բերկրել ընդ նմա . ըստ որում վկայէ յովհաննէս ('ի յայտն . ժդ . 3 = 5 .) յասելն, թէ * երգէին (սոքա) զերգ նոր առաջի աթո-
„ ռոյն այ . . . . (իսկ թէ ո՛յք էին՝ ասէ) սոքա են՝ որք
„ ընդ կանայս ոչ խառնակեցան, (որով իմացեալ լինին
„ և այն օրէնորդք՝ որք ընդ արս ոչ խառնակեցան), և են կուսանք ‖ ։

Այլ զի յայսպիսի կուսանս հային բանք այսր սաղմոսի ըստ բառիցն, վասն այսորիկ զսոյն զայս նուագեմք 'ի տօնի կուսանաց ։ Մարգարէն որ հայելով յեկեղեցին՝ զայսոսիկ խօսեցաւ յերրորդ դէմս, այժմ առ նոյն եկեղեցին ուղղելով զբան իւր խօսի յերկրորդ դէմս, և ասէ ։

Ընդ— փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո։ Այս բան ասի եթէ ՚ի բերանոյ կուսանացն, և եթէ ՚ի բերանոյ սաղմոսերգուին, և եթէ ՚ի բերանոյ այլոց. յորո՛ց և ասիցէ՝ իբր քաջալերք դնի. ըստ որոյ ('ի Համարն 12.) խրախուսեաց ասելով, մոռա՛ զժողովուրդ քո և զտուն հօր քո. և իբրև սփոփելով եդ առաջի, թէ յանկացաւ Թագաւոր գեղոյ քոյ. որպէս թէ ասէր. այս բաւական է քեզ առ ՚ի մոռանալ զհայրս քոյ՝ որք ՚ի հեթանոսութեան էին. բայց ՚ի վերայ այսր ամենայնի ունիցիս և զայլ երջանիկ բարեմասնութիւն, զի ծնցիս փոխանակ զբազում որդիս։ Սովաւ կամի կրկին խրախուսել զնա, և որպէս թէ ասել. ուրախ լեր և բերկրեա՛ եկեղեցի քսի. զի դու որ ընտրեցար ՚ի հեթանոսութէ, և հարսնացար քսի, փոխանակ հեթանոս հարցդ ունիցիս քեզ զբազմութիւն ազգաց և ազանց, թագաւորաց և իշխանաց՝ յորդիս հաւատացելոց, և նուիրեալս ՚ի քս և ածեալս ՚ի տաճար արքայութե երկնից։

Զայս միտս և սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետ ('ի ճառն. ԺԳ.) մասամբ իմն հարքս իմանայ զորդիս մարդկան. յորոց ժողովեալ եղև եկեղեցին՝ որ. * Հա՛րս կոչեաց աստ զորդիս մարդկան՝ ասելով ցժողովուրդն. փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո‖։ Այլազգ և ս մեկնի այս բան (առանց հայելոյ ՚ի համարն 12.) վերաբերելով ՚ի յաջորդութիւն հարց ընդհանուր եկեղեցւոյ ՚ի սկզբանէ և այսր՝ միանգամայն առեալ. և ըստ այսմ հարքս իմացեալ լինին աստ նախ՝ նահապետք և մարգարէք և այլ նախահարք. երկրորդ՝ առաքեալք և աշակերտք քսի և այլ նախնի հաւատացեալք. երրորդ՝ հայրապետք, վարդապետք մարտիրոսք, խոստովանողք, ճգնաւորք, կուսանք, և այլն։ Իսկ յայս միտս կամի ասել. փոխանակ նախահարց քոց լիցին քեզ որդիք զարմանալիք առաքեալքն և աշակերտքն՝ որք զբովանդակ տիեզերս ժողովեցին ՚ի քեզ իբրև ՚ի մայր. և փոխանակ առաքելոց՝ եղիցին քեզ որդիք՝ նոցին յաջորդք հայրապետք և այլ հովիւք, և ապա փոխանակ նոցա յաջորդք նոցին. ընդ որս և ամենայն հաւատացեալք։

Զայս բան ոմանք համարին առ փեսայն ասացեալ, իբր զի յէր". տրական սեռիւ դնի բառդ քո կամ քեզ. և սակայն բազում մեկնիչք յիգականն ընթեռնուն՝ փոփոխութ̃ կիտի, զի յայն հայի բանն. Ի վերայ այոր ամենայնի եթէ բանադատելով զմիտս բանին՝ 'ի դէմս փեսային ևս առիցի, ըստ Նախադրելոցդ մեկնի. իբր թէ փոխանակ Նախահարցդ՝ որք կարեն կոչիլ հարք քի̃ ըստ մարմնոյ՝ որդիք եղեն Նորա սուրբ առաքեալք և աշակերտք, և այլն.

Յարմարական մեկնութեանն՝ սոյն այս հայի առ այնպիսիս, որոց որդիք իբր բարեպտուղք յաջորդեն 'ի տեղի Նոցա. որպէս Ներսէս Շնորհալին ('ի թուղթն առ ուրուկան) յարմարէ զայս խրատն եղբօր՝ ասելով. զԳրիգոր վկայասէր, և զկնի Նորա բարսեղ՝ զորդիացեալն ինքեանց զԳրիգոր զիմ հարազատ * հաստատեցին 'ի „Նախնական խրեանց տէրական աթոռ ըստ գրեցելումն. փոխանակ հարց քոց եղիցին որդիք քո ‖. Զսոյն առնէ և եզնկացին ('ի գով. թոռ.) յասելն. * վրթանէս մեծ քահանայապետ՝ մեծափառ հօրն փոխանորդ ըստ գրեցելումն. փոխանակ հարց եղիցին „որդիք ‖. Եւ զի զայնոսիկ որդիս այսինքն զառաքեալս և զաշակերտս, և զայլսն զորս յիշեաց մարգարէն՝ կացոյց իշխանս հոգևորս յաշխարհ ամենայն թագաւորն երկնաւոր, սմին իրի յաւելու ասել.

ԺԷ. Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր. և յիշեցից զանուն քո ընդ ամենայն ազգս ազգաց.

Մարգարէն մինչև ցայժմ խօսեցաւ զեկեղեցւոյն քի̃ Նմանութ̃ հարսին. այժմ խօսի զայնցանէ՝ որք եղեն տիրապէս հարսնածու, այսինքն են առաքեալք որք հաստեցին զեկեղեցին իբրև զկոյս մի սուրբ յանդիման քի̃ 'ի ձեռն առաքելական իշխանութե̃ զոր առին 'ի քէ̃. Այս իշխանութիւն առաքելոց 'ի հոգևորս այնպիսի եղև, մինչև յաղթութիւն ածել զբովանդակ տիեզերս՝, և զարհուրեցուցանել զանդարամետական իշխանութիւնս.

Այս իշխանութիւն սոցա ըստ որում առաքեալք քի̃՝ յութ իրս էր. ա̃. 'ի հրաշագործելն զերագոյն օրինակաւ քան զոր հնար էր այլոց առնել. բ̃. 'ի քարոզելն անտխալ և անմոլար. գ̃. յօրէնադրելն անկախ.

Դ. 'ի ձեռնադրելն ինքնիշխան. Ե. 'ի բաշխելն զհոգին սուրբ զգալապէս. Զ. 'ի կարգելն զխորհուրդս սահմանեալս 'ի քնէ. Է. յաւանդելն զսուրբ գիրս. Ը. 'ի հաստատելն զեկեղեցիս։ Այս ութ պաշտամունս առաքելոց հինգք առաջին գործք՝ յատուկ էին նոցա՝ միայն ըստ եղանակին. իսկ յետին երեք գործք՝ յատուկ էին նոցա ըստ ինքեան. իբր զի զառաջին գործսն թէպէտ և այլք կարէին գործել, բայց ոչ նովին եղանակաւ՝ որով գործէին առաքեալքն. իսկ զյետին գործսն ոչ կարէին գործել այլք՝ բայց եթէ հաստատութեամբ նոցին։ Այսպիսի սքանչելի պաշտամունս իշխանութեան առաքելոց ակնարկէ առաջիկայ բանդ յաւէն։

Կացուսցես զնոսա իշխանս ընդ ամենայն երկիր։ Կացուսցես ասելով ցուցանէ զհաստատութիւն իշխանութե՟ նոցա. իսկ ընդ ամենայն երկիր ասելով ցուցանէ զտարածութե՟ իշխանութեան նոցին։ Նոյնպէս և առանց որոշման իշխանս ասելով ցուցանէ զառաւելութիւն և զզօրութիւն իշխանութե՟ն. որպէս թէ ասէր, արասցես զնոսա իշխանս զօրաւորս յաշխարհ, և գործ իշխանութե՟ նոցա մնասցէ հաստատուն։ Այս բանք թէպէտև տիրապէս առ առաքեալսն հային, բայց կարեն հայիլ և առ աշակերտսն. զի 'ի խոնարհ քան զառաքեալսն նոքա կարգեցան այսպիսի իշխանք. և յետ նոցա յաջորդք նոցին։ Իսկ թէ առ ինչ, յայտ առնէ ասելով.

Յիշեցից զանուն քո ընդ ամենայն ազգս ազգաց։ Այսինքն հռչակեսցի անուն քո 'ի մէջ ամենայն ազգաց, և մնասցէ յիշատակ քո 'ի մէջ նոցա՝ որք յաջորդութեամբ իջանեն յայն ամենայն ազգս. զի այս ոճ ընդ ամենայն ազգս ազգաց. ցուցանէ նաև զյաջորդութե՟ ազգաց զկնի միմեանց։ Այս յիշատակութիւն անուան է ճանաչումն կամ ծանօթութե՟ անուանն քո, ոմանց 'ի փրկութե՟ և ոմանց 'ի դատապարտութե՟. 'ի փրկութե՟ այնոցիկ՝ որք հաւատան 'ի նա, և սիրեն զնա. 'ի դատապարտութիւն այնոցիկ՝ որք ոչն հաւատան. քանզի այսպէս ասաց ինքն 'ի կացուցանելն անդ զառաքեալսն իբր իշխանս ընդ ամենայն երկիր. * Երթայք յաշխարհ
,, ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն ա-
,, րարածոց (այսինքն ամենայն ազգաց). որ հաւատայ

„ և մկրտեսցի, կեցցէ. և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի„. (մարկ. ժզ. 13: զորմէ տես և 'ի յովհ. գ. 13=21: և բ. կոր. բ. 14=19: և հռովմ. ժ. 11. 18:) Զայսպիսի եղեալ հետեւեցուցանէ, և ասէ։

ԺԸ. Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։

Զընդհանուր եկեղեցին քո կոչեաց մարգարէն 'ի վերոյ՝ դշխոյ, և դուստր. իսկ զմասնաւոր եկեղեցիս որք են յընդհանուր եկեղեցւոջ՝ կոչեաց կուսանս, և ընկերս, և յայլ և այլ դէմս փոփոխելով զբանն իջոյց յառաքեալսն, որք սփռեալ յաշխարհ ամենայն՝ հրաւիրեցին զայլեւայլ ազգս 'ի հարսանիս երկնաւոր Թագաւորին, և հաստատելով զեկեղեցիս՝ իբրեւ թէ հարսնացուցին զնոսա քեզ. որով և իւրաքանչիւր ազգք լեալ հարսն և ժողովուրդ քո՝ փառաւորեն զքեզ. Յայս հայելով ասէ։

Վասն այսորիկ ժողովուրդք խոստովան եղիցին առ քեզ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից։ Վասն այսորիկ ասելով կամի ասել, վասն ճանաչելոյ այլեւայլ ազգաց զանուն քո, և վասն հաւատալոյ նոցա 'ի քեզ, և վասն լինելոյ քո ժողովուրդ՝ խոստովան եղիցին առ քեզ. այսինքն խոստովանս լիցին, թէ դու ես ճշմարիտ ա̄ծ. և զքեզ միայն պաշտեսցեն, 'ի քեզ յարեսցին, և զքեզ փառաւորեսցեն. և այս ոչ եթէ առ ժամանակ մի, այլ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից. ուր երկիցս յիշատակութիւն յաւիտենից ցուցանէ զերրեակ տեւողութիւն, այսինքն զանցեալն, զներկայն և զապառնին. որով կամի յայտնել, թէ ժողովուրդք խոստովան լիցին՝ ոչ միայն յանցեալ և յայժմու յաւիտենին, այլ և յապագայն յանվախճան յաւիտեանս։

Ի վախճան մեկնութեան այսր սաղմոսի յաւելլից և զայն. որով ռաբբիք հրէից և այլք ոմանք մեկնեն զսա ըստ ճառելն 'ի վերայ սաղմոսին՝ այսպիսի իմն օրինակաւ 'ի բերանոյ սաղմոսերգուին խօսելով առ սողոմոն. (ա̄) Բղխեսցէ սիրտ իմ զերգս վայելուչս՝ ուղերձել նորապսակ թագաւորիդ սողոմոնի։ Յայս երգ լեզու իմ խօսեսցի զբանս զարմանալիս. որում սկիզբն առարից այսպէս։

(բ) Գեղեցիկդ տեսլեամբ արքայդ սաղմոսին՝ զիարդ զարմանալի եղեր քան զամենայն որդիս մարդկան ։ (գ) Ահա և ՚ի շրթանց քոց բղխեն բանք շնորհաւորք ․ զինչ ապա և այն՝ զի որ արարն զքեզ՝ օրհնեաց զքեզ ․ (տես զայցացանել գ․ Թագ․ դ․ 29․ 30 ։ Եւ Ժողով․ ա․ 16 ։ և բ․ 4․ 5․ և այլն ։ Եւ Իմաստ․ ը․ 20 ։ Եւ Առակ․ լա․ 1․ 2 ։ Եւ բ․ Թագ․ ժբ․ 24․ 25 ։ յորս զարմանալի բանք գրին զսողոմոնէ ։)

Պարծեցեալ ապա զբան իւր ՚ի խօսիլ զզօրութէ թագաւորութեան նորին ասէ ։ (դ) Եւ արդ դու որ գոլով ՚ի մէջ թագաւորաց փառաւոր , ցոյց զքեզ առ նոսա և զօրաւոր , ածելով զսուր ընդ մէջ քո ըստ վայելչութէ և ըստ գեղեցկութեան քո ․ զի այդ միայն բաւական է վանել զթշնամիս քոյ ․ քանզի լուեալ նոցա , թէ ամենայն ինչ քո պատրաստ է՝ եթէ լսիցեն եւս և զածելդ զսուր ընդ մէջ՝ ընկճին ․ (տես գ․ Թագ․ ժ․ 23 ։ և բ․ Մնաց․ ը․ 3 = 8 ։ և այլն ։) Այլ թէ դու որ գեղեցկացար ՚ի փեսայութեանդ , ած և զսուր փեսայութէ քո ընդ մէջ՝ առ ՚ի առնուլ եւ վայելուչ զարդարիլ և գեղեցիկ երեւիլ ։

(ե) Եւ որ կարգեցար լինել թագաւոր իսրայելի , կարգեա և ուղղեա զամենայն ․ և թագաւորեա խաղաղութեամբ , զի արասցես զամենայն որ ինչ ճշմարտութէ է՝ որ ինչ արդարութէ և որ ինչ հեզութէ ․ և ոչ ոք ընդդէմ դարձցի զօրութէ աջոյ քոյ ։ (զ) Մանաւանդ զի և զէնք քոյ՝ նետք և սուսերք՝ պատրաստ են յահ և երկիւղ թշնամեաց քոց , և որք ոչն հնազանդեսցին քեզ ո՛ և իցէ ժողովուրդք ազգաց բազմաց , անկցին ՚ի ներքոյ իշխանութէ քոյ , և զնոսին կառավարեսցես ուղղութեամբ ․ (է) զի Ած քո՝ որոյ աթոռ է յաւիտեանս յաւիտենից , ընտրեաց զքեզ , և ետ քեզ զաթոռ հօր քոյ և զգաւազան իշխանութէ՝ ուղղութէ խնամել և հովուել ։ (ը) Եւ դու որ սիրեցեր զարդարութիւն , և ատեցեր զանօրէնութիւն՝ այդու իսկ փառաւորեցար (թ) ․ քանզի յայդ իսկ եօծ զքեզ տէր Ած քո՝ թաղեալ ՚ի բաց զեղեալդ ։

Խօսի ապա մասնաւորապէս և զազնուութէ զգեստուց փեսայութէ՝ ասելով ։ (ժ) Ի փեսայական քում հոտ անուշութեան բուրեաց ՚ի զգեստուց քոց , զորս ածին առ քեզ այլ և այլ ժողովուրդք այլ և այլ ազգաց յընծայ 'ի տաճարաց իւրեանց փղոսկրէից · որովք զարդարեցար և փառաւորեցար · ոչ միայն իբրև Թագաւոր իսրայէլի, այլ և իբրև փեսայ Թագաւորին եգիպտոսի, զորոյ զդուստրն ածեր քեզ 'ի հարսնութ̃ի, (ժա) Այս նա լեալ դշխոյ՝ կացցէ ընդ աջմէ քումմէ զարդարեալ փառօք ·

(ժբ) Այլ դու դուստր փարաւոնի լուր զոր ասեմ · մոռա՛ զժողովուրդ ազգի քում, և զտուն հօր քոյ · զի մեծի փառաց վիճակեցար · քանզի սողոմոն՝ որ սքանչելի գտաւ 'ի Թագաւորս՝ ցանկացաւ քեզ, և կամեցաւ ածել զքեզ 'ի հարսնութ̃ի · (ժգ) Այսուհետև զդա ծանիր քեզ տէր · նոյնպէս և ժողովուրդ ծուրայ և այլոց ազգաց մօտաւորաց և հեռաւորաց ծանիցեն զդա լինել Թագաւոր հզօր · վասն որոյ և 'ի պատիւ երեսաց նորա և 'ի պատիւ քոյ բերցեն զընծայս ·

(ժդ) Այս քանզի դուստրն փարաւոնի շրջանակ կառօք ածեալ եղև յեգիպտոսէ յերուսաղէմ, որով և փառաւորու̃ի զարդուց նորա ոչ երևէր արտաքոյ, մանաւանդ զի 'ի հարսնութ̃ե անդ քող ունէր զիւրև, վասն որոյ յարէ՝ Թէ փառք նորա 'ի ներքոյ է · (ժե) Իսկ հարսնածուք նորա եղեն դստերք մեծամեծաց՝ որք ածին և զայլ կուսանս յընկերութ̃ի հարսին · (ժզ) Այս մուծին զնոսա ուրախութ̃բ 'ի տուն Թագաւորին · և առ 'ի քաջալերել զհարսն, յորդորէին զնա՝ չտրտմիլ վասն Թողլոյ զհայրենիս և զազգայինս · փոխանակ նոցա ասեն՝ ծնցին քեզ բազում որդիք, (ժէ) որք իշխեսցեն ընդ ամենայն տեղիս, (ժը) և ժողովուրդք ազգաց պատմեսցեն զանուն քո յաւիտեան · Այս բանք ոչ դնին իբր մեկնութ̃ի, այլ իբր նիւթական պատմութ̃ի փեսայանալոյն սողոմոնի ընդ դստերն փարաւոնի · և զի այն էր օրինակ փեսայութեանն ք̃ի ընդ եկեղեցւոյ, ըստ այսմ այս մեկնութիւն առաջի դնի նիւթականապէս · որպիսի են և այլ բազում պատմութ̃իք աւանդեալք 'ի սուրբ գիրս · որք իբր օրինակ նիւթապէս 'ի մէջ բերին՝ առ 'ի ցոյց բազում գործոց կատարելոց 'ի նորս եկեղեցի, և բազում իրաց որք հային 'ի վիճակ կենացն յաւիտենից ·

ՍԱՂՄՈՍ ԽԵ.

Յաստատութիւն աներկեւանութեան Իսրայէլի, և Նորոյ եկեղեցւոյ յամենայն և իցէ վտանգից և 'ի խռովութեան ազգաց՝ պաշտպանութիւն և օգնականութիւն այ։

Ի կատարած. որդւոցն Կորխայ 'ի վերայ գաղտնեաց։

1 Ած մեր ապաւէն և զօրութիւն. օգնական 'ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ։ 2 Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի. 'ի փոփոխել լերանց 'ի սիրտ ծովու։ 3 Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա. խռովեցան լերինք 'ի զօրութենէ նորա։ 4 Գնացք գետոյ ուրախ առնեն զքաղաքն այ. և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն։ 5 Ած 'ի մէջ նորա, և նա ոչ սասանեսցի. օգնեսցէ նմա Ած՝ 'ի վաղորդայնէ մինչև 'ի վաղորդայն։ 6 Խռովեցան հեթանոսք, և խոնարհեցան թագաւորութիւնք. ետ ձայն իւր Բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր։ 7 Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ած յակոբայ։ 8 Եկայք և տեսէք զգործս այ, որ արար զնշանս և զարմանս 'ի վերայ երկրի։ 9 Եբարձ պատերազմս 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի. զաղեղունս փշրեսցէ, զզէնս խորտակեսցէ, և զասպարս այրեսցէ հրով։ 10 Անկեցէք և ծանիջիք, զի ես եմ Ած. բարձր եղէց 'ի հեթանոսս, և բարձրացայց 'ի վերայ երկրի։ 11 Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ած յակոբայ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. որդւոցն կորխայ գաղտնեաց։

ՅՈՒԹ ՁԵՌԱԳԻՐ ՍԱՂՄՈՍՍ մեր յաւելեալ լինին 'ի վերջոյ վերնագրիդ և բառքդ * սաղմոս 'ի դաւիթ ‖. բայց յեօթն ձեռագիրս պակասի, համաձայն եբր". և եօթ". և այլոց. ուստի և մեք ըստ այնց եօթն ձեռագրաց եդաք. իսկ վասն բառիցդ՝ որդւոցն կորխայ՝ տես 'ի վերնագրի խթ սաղմոսի։

Բայց յաղագս գաղտնեաց ծանիր, զի այս բառ յեբրայականն գնի ալ ալամօթ. զոր ոմանք թարգմանեն [illegible] [illegible]. և կէսք թարգմանեն 'ի վերայ կուսանաց կամ [illegible]. իսկ այլք ընթերցեալ ալ օլամօթ, թարգմանեն, 'ի վերայ աշխարհաց. և զի այս բառ կարէ նշանակել և զգաղտնիս, վասն որոյ թարգմանիչք եղին 'ի վերայ գաղտնեաց. (տես զայսմանէ 'ի ներած. գլ. Ժ. և 'ի սաղ. Թ.)

Բայց թէ յումմէ իցէ ասացեալ այս սաղմոս, և յի՞նչ առթէ, և առ ի՞նչ, բազում են կարծիք. ոմանք 'ի բաբելոնեացն հրեից, ընդ որս և թարգ". քաղդ". համարին, թէ որդիքն կորխայ 'ի զերծանիլ իւրեանց սքանչելեօք 'ի վտանգէ անտի՝ որում կորեան հարք նոցա, (Թուոց իզ. 11.) յօրինեցին զայս սաղմոս. յոր հայի ասեն երկրորդ համար այսր սաղմոսի յասելն. * վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռո-
,, վիլ երկրի. 'ի փոփոխիլ լերանց 'ի սիրտս ծո-
,, վու ‖։ Ոմանք ևս՝ թէ զայս յօրինեցին ժողովուրդք յուդայ 'ի զերծանիլ նոցա 'ի ձեռաց փակէի թագաւորին սամարիոյ, և ռասինայ թագաւորին ասորւոց յաւուրս աքազու թագաւորին յուդայ. (դ. թագ. ժզ. 5.) Յայս հայի ասեն երրորդ և չորրորդ համար այսր սաղմոսի։ Ոմանք թէ զայս ասաց եզեկիա արքայ 'ի զերծանիլ նորա 'ի սպառնալեաց սենեքերիմայ արքային ասորեստանեայց. (դ. թագ. ժը. 13.

և ժթ. 16. և 35.)

Ոմանք թէ զայս ասացին դարձեալքն 'ի գերութենէ բաբելոնի 'ի շնորհակալութիւն առ ա̃ծ վասն ազատութեան իւրեանց, և վասն աներկեան զերծանելոյ 'ի խռովութ̃է երկրի և 'ի փոփոխելոյ լերանց 'ի սիրտս ծովու, այսինքն վասն զերծանելոյ 'ի մեծամեծ խռովութեանց և պատերազմաց, զորս մղեաց գոգ, այսինքն կամբիւս որդի կիւրոսի ընդ եգիպտացիս, և յետ նորա մագոգ, այսինքն մոգք՝ որք խռովեցուցին զտէրութիւնն պարսից. որոց զկնի եղև խաղաղութիւն մեծ յաւուրս դարեհի վշտասպեայ: Զայսմանէ տես 'ի մարգարէութեան եզեկիելի. ('ի գլ. լը. և լթ.) և զբանս նորա համեմատեա́ ընդ սաղմոսիս. զի բանք սորա և նորա երևին 'ի նոյն հայիլ. բայց որպէս հաւանական թուի ասել, ոչ ըստ նկարագրին, այլ միայն ըստ յարմարութ̃ե: Զայն պարտ է ասել և զնախակարգեալ կարծեացդ:

Ապա ըստ հաւանականագոյնս համարելոյ բազմաց՝ ճշմարիտ թուի ասել, թէ զայս սաղմոս ասացեալ իցէ դաւիթ ըստ ճառին 'ի գլխոց ժողովրդեանն իսրայէլի. և յաւէտ 'ի գլխոց պահապանաց տաճարին կամ զանձապահից նորա. իսկ ըստ խորհրդոյն՝ 'ի գլխոց եկեղեցւոյն ք̃ի, յայտ առնելով, թէ որովհետև ա̃ծ է պաշտպան և օգնական իսրայէլի և եկեղեցւոյ, ոչ վտանգ կայ սասանելոյ, և ոչ երկիւղ կործանելոյ:

Ըստ այսմ կարծեաց բառդ գաղտնեաց՝ որ դնի 'ի վերնագրիդ, հզօրապէս և ըստ յարմարութ̃ե առեալ՝ ցուցանէ թէ բանք այսր սաղմոսի ասին 'ի բերանոյ իսրայէլի 'ի վերայ գաղտնեաց: Իսկ այս գաղտնութիւն կրկնակի մտածի. մի՝ հայելով յիսրայէլ ըստ լինելոյ նորա եկեղեցի ա̃յ, զի միայն ըստ այսմ մտածեալ՝ ճշմարտին բանք սաղմոսիս 'ի վերայ իսրայէլի. նա զի 'ի նոյն սակս ա̃ծ յամենայնի գաղտնի զօրութեամբ պահէր զիսրայէլ, և զգաղտնիս իւր ցուցանէր նոցա. և զորս գործէր 'ի նոսա փակեալ գաղտնի խորհուրդք 'ի նոսին, որպէս է տեսանել և 'ի սաղմոսի աստ. վասն այնորիկ ասէ, 'ի վերայ գաղտնեաց: Երկրորդ՝ հայելով յեկեղեցի ք̃ի, որոյ ա̃մ ներքին փառք գաղտնի են ըստ վկայելոյ սաղմոսերգուին 'ի նախընթաց սաղմոսն. (համար 14.) Յայսմիկ հայելով ունիմք մեկնել զայս սաղմոս.

ԲԱՆ

ա̃. Աստուած մեր ապաւէն և զօրութիւն. օգնական 'ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ.

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Նեղութիւնն կրկնակի առեալ լինի. մի՝ կրաւորաբար, կամ փոխանակ վշտի. և մի ևս՝ ներգործաբար, կամ փոխանակ պատճառի վշտաց. կրաւորաբար առեալ նշանակի նոյն իսկ կիրքն նեղութեան, կամ տառապիլն յիմեքէ ընդդէմ եղելոյ, կամ կրումն իրիք տառապեցուցչի, կամ կիրք ցաւեցուցիչ անձին. և այս՝ կամ ըստ մարմնոյ, որպէս 'ի հիւանդանալն, 'ի վաստակիլն, 'ի քաղցնուլն, 'ի գանիլն, և այլն. և կամ ըստ հոգւոյ, որպէս 'ի տրտմիլն, յերկնչիլն, 'ի զայրագնիլն. ևն. Իսկ ներգործաբար առեալ նշանակէ զայն ինչ՝ որ պատճառէ զվիշտ, կամ զայն ինչ՝ յորմէ լինի տառապիլ, և կամ զայն ինչ՝ որ 'ի հասանելն տառապեցուցանէ. Արդ որպէս յայտնի տեսանի՝ աստանօր բառդ նեղութիւն թէպէտ և կրաւորաբար կարէ առեալ լինել, բայց դնի ներգործաբար փոխանակ պատճառաց նեղութեան, (զորս և թուէ 'ի համարն 2. 3. 6. և 9.)

Այլ գիտել արժան է, զի 'ի հասանել այսպիսի նեղութեանց՝ երկու ինչ կարէ առնել մարդ 'ի կողմանէ իւրմէ. այսինքն կամ փախչիլ յայնցանէ՝ եթէ այն իցէ արժանն. և կամ համբերել, եթէ այնպէս պահանջիցէ հարկ իրացն. Հայելով 'ի փախուստն՝ ա̃ծ ասի ապաւէն, այսինքն ապահովապէս պատսպարիչ յերեսաց նեղութե̃. իսկ հայելով 'ի համբերութ̃ին՝ ա̃ծ ասի զօրութ̃ի, այսինքն զօրացուցիչ.

Ասացի * 'ի կողմանէ իւրմէ ‖. զի այսուքիկ, այսինքն փախչիլ և համբերել՝ մտածին 'ի կողմանէ մարդոյ.

իսկ 'ի կողմանէ ա̄յ է օգնական լինել՝ թէ 'ի փախչելն, և թէ 'ի համբերելն. 'ի փախչելն ապաւէն գոլով. 'ի համբերելն զօրութիւն տալով։ Յայտնի հայեցեալ ասէ ։

Ա̄ծ մեր ապաւէն և զօրութ̄ի. օգնական 'ի վերայ նեղութեանց, որ գտին զմեզ յոյժ ։ Կամի ասել, թէպէտ և բազում նեղութիւնք հասին 'ի մեզ, և այն յոյժ՝ այսինքն յա̄մ կողմանց՝ և ա̄մ ուժգնութ̄բ, բայց ոչինչ կարացին առնել. զի յայնմ ա̄մի զքեզ զա̄ծդ մեր ունէաք մեզ օգնական. վասն զի դու էիր մեզ ապաւէն 'ի փախչելն, և զօրացուցիչ 'ի համբերելն ։

Իսկ ասելն 'ի վերայ նեղութեանց՝ բառդ 'ի վերայ՝ ունի զզօրութիւն նախադրութեանդ 'ի. որպէս թէ ասէր՝ օգնական 'ի նեղութիւնս ։ Բայց կամելով գերագոյն ցուցանել զօգնականութիւնն ա̄յ, դնէ՝ օգնական 'ի վերայ նեղութեանց ։ Արժան է աստ 'ի միտ առնուլ և զայս, զի մարգարէն փոխանակ ասելոյ նեղութիւնք հասին 'ի վերայ մեր, կամ թէ անկաք 'ի նեղութիւնս, և կամ թէ գտաք զնեղութիւն. ասէ գտին զմեզ, որպէս թէ ասացեալ էր. այն նեղութիւնք գտին զմեզ, բայց մեք ոչ գտաք զնոսա. որ է ասել՝ ոչ թշուառացաք 'ի նոսա. վասն զի 'ի նեղութիւնս մեր այնպէս կայաք՝ որպէս թէ ոչինչ կրէաք. զի կամ առ քեզ ապաւինեալ աղաչէաք, և կամ 'ի քէն զօրացեալ ուրախութեամբ տանէաք ։

Այս է արդարև չափ կատարեալ առաքինւոյ. իսկ յայլ անկատար զօրէն հակառակն է տեսանել. որովհետև նեղութիւնք ոչ որսեն զնա առ 'ի գտանել, զի նա առանց որսելոյ նոցին՝ 'ի նոսին մաշի ։ Ուրանօր նեղութիւնք են՝ փախչի՝ ոչ 'ի նեղութեանց, այլ 'ի նեղութիւնս. իբր զի ոչ տանելով զնոսա, նոքա տանին զնա. զի ոչ բառնայ զնոսա, այլ մտանէ 'ի նոսին, և ընկղմի 'ի նոսա, և խեղդի ։ Իսկ ուր ոչ են նեղութիւնք, տանի զնոսա յերևակայութեան, և բառնայ 'ի վերայ հոգւոյ իւրոյ, և ընկճի ընդ նոքօք ։

Ուստի առ այսպիսիս Ջիմարտի ասել. * մեծ է զոր
,, կրէ յոչ ունիլն, քան զոր ունի 'ի կրելն ‖. զի զայն զոր կրէ՝ ոչ ունի յինքեան իրօք. այլ յերևակայութ̄ե. իսկ զոր 'ի կրելն ունի՝ ոչ է այնչափ մեծ՝ որչափ մեծ

երևակայէր՝ և երևակայելով կրէր․ զորօրինակ եթէ ոք տառապեալ 'ի բռնաւորէ ումեքէ՝ 'ի հեռանալ նորա սկսանիցի երևակայել՝ թէ յետ տարւոյ միոյ դարձեալ անկանելոց է 'ի ձեռս նորա, և այսու երևակայութեամբ տառապիցի յանձն իւր․ յայս գործ յայտ է թէ առաւել է զոր կրէ յոչ ունիլն, քան զոր ունէր 'ի կրելն․ զի այս երևակայական կիրք առաւելու ըստ երից․ այսինքն ըստ սաստկութեան ըմբռնման, ըստ երկարութեան, և ըստ երկիւղի տագնապելոյ։ Իսկ որք կատարեալքն են յառաքինութեան՝ աներկեան տանին նեղութեանց, և անդորր կրեն զամենայն առանց երկընչելոյ 'ի նոցունց․ որպիսի էին նոքա, զորոց գրէ մարգարէն 'ի յաջորդ համարն, և 'ի բերանոյ նոցա խօսելով ասէ։

Ե․ Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի․ 'ի փոփոխել լերանց 'ի սիրտս ծովու։

Զ․ Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա․ խռովեցան լերինք 'ի զօրութենէ նորա։

Երկիւղն է խռովագին ընկճումն սրտի 'ի վերայ հասեալ վտանգէ՝ յորմէ դժուարին է զերծանիլ․ և այս ծագի գլխաւորաբար յերկուց․ մի՝ 'ի կողմանէ վտանգին՝ յորժամ ծանր ըմբռնի և մերձ է հասանել, բայց այնպէս զի հնար իցէ զերծանիլ․ զի թէ չգուցէ զերծումն՝ ոչ լինի երկնչիլ՝ այլ յուսահատիլ։ Երկրորդ՝ 'ի կողմանէ երկնչողին․ իբր զի տեսեալ նորա զվտանգն մեծ որ առաջի կայ, և ոչ տեսեալ յինքեան բաւական զօրութիւն վանիչ վտանգին՝ կծկի, որով և շարժմունք զգայական յօժարութեանց, նոյնպէս և կենդանական ոգիք խուռն դիմեալ 'ի ներքս յերեսաց չարի թօշնին․ միանգամայն և զօգնութիւն որոնեն 'ի վանել զչարն․ յորմէ և արտաքին զգայութիւնք, և մարմինն բոլոր արտաքուստ պակասեալ 'ի կենդանական ջերմ ոգեաց՝ սկսանի պաղիլ, և 'ի պաղելոյն դողալ, և հերաց ցցիլ։ Իսկ եթէ տեսցէ մարդ յինքեան բաւական զօրութիւն վանելոյ զվտանգն, կամ տեսցէ զայնպիսի ինչ՝ յոր նուաղ և անգործ երևի վտանգն, փոխանակ երկնչելոյ վստահանայ, կամ աներկիւղ անփոյթ մնայ ։ Արդ քանզի եցոյց մարգարէն ունել օգնական ինքեանց զա՟ծ ամենակալ առ 'ի լինել ապաւէն և զօրութիւն յո՛ և իցէ վտանգս և 'ի նեղութիւնս՝ թէև մեծ իցեն, 'ի նոյն վստահանայ, և ասէ ։

Վասն այսորիկ ոչ երկիցուք մեք 'ի խռովել երկրի ․ 'ի փոփոխել լերանց 'ի սիրտս ծովու ։ Կամի ասել․ վասն ունելոյ զա՟ծ ապաւէն և զօրութիւն, օգնական և պաշտպան, բնաւին ոչ երկնչիմք յո՛ և իցէ վտանգէ, և ոչ իսկ յայնպիսւոյ՝ որ 'ի վեր է քան զզօրութիւն մեր, և կ՟մ յայնպիսւոյ՝ որում ոչ կարէ զդէմ ունել ո՛ և իցէ մարդկային զօրութիւն, որպիսի է խռովիլ երկրի, և փոփոխիլ լերանց 'ի սիրտս ծովու ։

Իսկ խռովութեամբ երկրի ըստ ճառին նշանակի աստ գետնաշարժութիւն, որով խռովին՝ այսինքն սասանմամբ դողայ երկիր ։ Այնպէս և փոփոխմամբ լերանց 'ի սիրտս ծովու նշանակի գործ լեռնահանգոյն ամպոց, որք կայծակնահար գոռմամբ յորդեն 'ի ծով զորս ունին․ և կամ դարձեալ նշանակի սովաւ շարժիլ լերանց 'ի սաստկութ՟է գետնաշարժութ՟ե, մինչև պատառիլ նոցա, և կործանիլ 'ի ծով․ որպէս ընթերցեալ լինի ուրեք ուրեք 'ի հին պատմութ՟իս ։

Իսկ դնելով 'ի սիրտս ծովու՝ կամի ասել՝ 'ի խորս ծովու կամ 'ի ծով․ զի որպէս ասելն 'ի սիրտ երկրի՝ նշանակի ասել 'ի խորս երկրի, կամ 'ի մէջ երկրի․ նոյնպէս և յասելն 'ի սիրտ ծովու՝ նշանակէ 'ի խորս ծովու ։ Արդ մարգարէն զսոսա յառաջ բերելով աստ՝ սոքիմբք տայ իմանալ զամենայն երկիւղալի վտանգս․ բայց պատճառ զսոսա յառաջ բերելոյն է ցուցանել, թէ ոչ գոյ ինչ որ կարիցէ երկեցուցանել զայնոսիկ՝ որք ունին զա՟ծ ապաւէն․ զի եթէ ոչ երկնչին յայսպիսեաց որոց ոչ կարեն զդէմ ունել մարդիկ, քանի ևս յայնպիսեաց՝ զորս կարեն վանել․ մանաւանդ զի այսպիսիք ոչ կարեն զլինիլ՝ բայց եթէ յակնարկութ՟է նորա՝ որ է ինքեանց ապաւէն ։ Եւ զայս կամելով ցուցանել՝ յարէ զկնի և ասէ ։

Գոչեցին և խռովեցան ջուրք նոցա․ խռովեցան լերինք 'ի զօրութենէ նորա ։ Ջուրք նոցա ասելով՝ իմանայ և զջուրս ոտից ծովու, այսինքն խորոց ծովու ։ Սոքա ասէ գոչեցին և խռովեցան. վասն զի 'ի սաստիկ գետնաշարժութենէ պատառին երբեմն յատակք խորոց ծովու՝ յորոց իբրև հողմունք արձակին օդք խտացեալք, և երբեմն ևս ցոլմունք հրոյ՝ որք յանհնարինս յուզեն զջուրս ծովու, և տան գոչել, այսինքն ձայն ահեղ հնչել, որպէս պատահեցաւ բազում անգամ, ևս և յաւուրս մեր.

Այնպէս և լերինք յանհնարին սաստկութ՟է գետնաշարժութ՟է երբեմն պատառին, և սարսափելի ցուցանին, որպէս պատահեցաւ բազում անգամ. որպիսի եղև և այն որ պատահեցաւ յաշխարհին սիւնեաց. ըստ գրելոյ առաքել պատմագրի.

Նմանապէս և լեռնաձև ամպք երբեմն այնպէս խռովին, և զայնչափ հողմունս հնչեն, և զայնպիսի կայծակունս թօթափեն, մինչև կարծել թէ հանդերձեալ են կործանել զտիեզերս. որպէս պատմեն ականատեսք. ըստ որում և տեսաք իսկ.

Արդ ասէ՝ սոցա ամ՟ի այսպէս լինելն է 'ի զօրութենէ նորա, այսինքն 'ի հրամանէն այ՟, որով կամի առնել, թէ երկիր մեծութ՟բ իւրով, և ջուր ընդարձակութ՟բ իւրով, ևս և լերինք և բարձունք՝ կան 'ի ներքոյ հրամանացն այ՟, և սպասեն ակնարկութեան նորա. Ի հրամայելն կալ՝ մնան 'ի հաստատութեան, և 'ի հրամայելն շարժիլ՝ խռովին և գոչեն. Իսկ արդ եթէ ասէ սոքա ամենևին կախեալ կան զզօրութ՟էն այ՟, և առանց ակնարկութեան նորա ոչինչ կարեն առնել, զինչ կարասցեն վնասել մեզ՝ որք ունիմք մեզ զօրութ՟ի և ապաւէն զնա ինքն զիշխօղ նոցա զած՟.

Աստանօր յասելն յանցեալ ժամանակի գոչեցին և խռովեցան. ոչ ցուցանէ զեղեալն, այլ զայն՝ որ լինի. ըստ որում է տեսանել յեբր″. որպէս թէ ասէր. եթէ տեսցուք, թէ գոչեն ջուրք ծովու, և խռովին լերինք, մեք ոչ երկիցուք. զի նա, որոյ հրամանաւ լինին սոքա՝ ապաւէն մեր է.

Այսոքիկ ասացան աստ ըստ Տառին. իսկ ըստ փոխաբերական մտաց 'ի ձեռն երկրի նշանակին տէրութիւնք և իշխանութիւնք եթէ՛ գոգայ, եթէ մագոգայ. իսկ լերամբք նշանակին մեծամեծ իշխանք և թագաւորք եթէ՛ մարաց և եթէ պարսից և եթէ այլոց ազգաց ընդ ծով և ընդ ցամաք եկեղեց. և ջուրք նշանակեն ժողովուրդք. և ըստ այսմ կամի ասել, 'ի խռովիլ ծ և իցէ իշխանութե և տէրութե, և 'ի փոփոխիլ իշխանաց և թագաւորաց, եւ և 'ի խռովիլ ժողովրդոց՝ ոչ երկիցուք մեք. և այս՝ վասն այնորիկ զի ունիմք զա՟ծ մեզ ապաւէն և զօրութիւն ։

Այլաբանութ՟բ, այս բան հայի 'ի ժողովուրդ ա՟յ, զի յեկեղեցի ն՟ր՝ որ 'ի խռովիլ ա՟մ երկրի 'ի ձեռն այլևայլ աղանդից, և 'ի փոփոխիլ լերանց՝ այսինքն 'ի կործանիլ մեծամեծ արանց 'ի խորս ծովու մոլորութեան, և 'ի մոլիլ ջուրց, այսինքն ժողովրդոց 'ի բազում անօրէնութիս, յայսմ ա՟մի մնայ աներկիւղ ։

Իսկ ըստ այսմ բառդ 'է ղօրա—բէնէ նօրա, դնի փոխանակ սրտմտութեան կամ բարկութե, որպէս թէ ասէր. զօրութ՟բ բարկութեն ա՟յ արհամարհեալ լիցին և կործանեսցին, են ։ Իսկ եթէ բառդ 'է ղօրա—բէնէ՝ պահեսցէ զյատուկ նշանակութի իւր, ոչ ցուցանէ՝ թէ յա՟յ զօրութենէ մոլորեալ եղեն այնոքիկ, այլ թէ 'ի խստանալ նոցա ընդդէմ ա՟յ, ա՟ծ եւ մերժէ զնոսա յիւրմէ օգնականութէ, և թողու զնոսա առանց իւրոյ զօրութեան. յորմէ խռովին և ապականին ։

Յայս միտս մարթ է առել՝ թէ նախդիրդ 'է ունի աստ զյարմարութիւն կամ զհանգիտութի զատական կամ բացառողական նախադրութե. որպէս թէ եղեալ էր. առանց զօրութեն ա՟յ ։ Իսկ այս ոճ չէ ինչ հեռի 'ի սովորութենէ սուրբ գրոց. որպէս այն որ ասի 'ի գիրս յոբայ. (Ը. 16.) * խոնաւութիւն յարեգակնէ է‖. ուր նախդիրդ 'է՝ դնի փոխանակ նախադրութեանդ առանց. որպէս թէ ասէր. առանց արեգական լինի խոնաւութիւն՝ իբր զի յոչ ծագել արևու տիրէ խոնաւութի. Ըստ այսմ եւ յամփոփել ա՟յ զզօրութիւն իւր՝ խռովի մարդ ։

Ործորեցին ('ի մեկն. մատ. գլ. ժէ.) լերամբք իմանայ զիշխանս խաւարի, այսինքն զդևս. սոքա ասէ խռովեցան իբրև զլերինս 'ի զօրութենէն ք՟ի, և 'ի քարոզութենէ և 'ի հրաշագործութէ առաքելոց, որք զօրացան ընդդէմ նոցա զօրութ՟ն ք՟ի, և վանեցին զբռնութի նոցա ։

Յարմարական մեկնութ՟բ այս բանք հային 'ի ժամանակ խաչելութ̃ն քոյ և դարձեալ 'ի ժամանակ բարօղութեան առաքելոց. զի յորժամ ապաւէնն մեր 'ի խաչին էր՝ խռովեցաւ երկիր և սասանեցան լերինք, պատառեցան վէմք և յուզեցան ջուրք ծովու, այսինքն ժողովք հրէից և հեթանոսաց. Ըստ սմին և 'ի քարոզել առաքելոց զաւետարանն քո՝ տիեզերք փոխեցան յանա̃ծութենէ յա̃ծածանօթութիւն, և իշխանք և փիլիսոփայք անկան 'ի ծոց եկեղեցւոյ, և եկեղեցի մնաց անսասան.

Վերածաբար, այս բանք հային 'ի ժամանակ վերջին դատաստանի, յորում ժամանակի 'ի շարժիլ երկրի և 'ի խռովիլ ծովու և 'ի լինել մեծամեծ փոփոխութ̃ց՝ ոչ երկիցեն ժողովուրդք ա̃յ, որք յուսացան 'ի նա, այլ ամբարձցեն զգլուխս իւրեանց, զի մերձ է փրկութիւն նոցա. (ղուկ. իա̃. 9 = 32.) Իսկ երկրաւորք և ագահք, որք նշանակին երկրաւ. նոյնպէս և հպարտք և փառամոլք, նախանձոտք և բարկացողք, որք նշանակին լերամբք. սոցին նման և մարմնապաշտք, որկրամոլք, և ծոյլք, որք նշանակին ջուրբք, ոչ միայն երկիցեն, այլև կոծեսցին և խռովեսցին, գոչեսցեն և աղաղակեսցեն, և անկցին 'ի սիրտս ծովու, այսինքն 'ի խորս դժոխոց. և յայնժամ՝ յայտնի երևեսցի զօրութիւնն ա̃յ, զոր արհամարհեցին.

Բարոյապէս, երկրաւ նշանակի մարմին մեր կամ զգայական մասն, լերամբք մեծամեծ փորձութիւնք. իսկ ալեաւք ծովու նշանակին խորհուրդք մտաց և յօժարմունք կամաց ըստ սորին մասին. զի 'ի խռովիլ երկրիս, այսինքն մարմնոյ՝ փորձութիւնք հանդոյն լերանց անկանին 'ի նոսին. բայց 'ի զօրութ̃ն ա̃յ բառնին և ջնջին, և փոխանակ վնասելոյ յօգուտ ընծային.

Արդ յայտ արարեալ մարգարէին, թէ զիարդ որք ունին զա̃ծ ապաւէն՝ ոչ երկնչին 'ի վտանգից, այլ փրկին անվնաս, կամելով զնոյն հաստատել, 'ի մէջ բերէ պատճառ զօրաւոր. ('ի համարն 5.) և նախ քան զայն պատճառ 'ի մէջ բերել, առաջի դնէ զգործ նորին՝ իբրև զնշան երևելի, ասելով.

ե. **Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Ա̃յ. և սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն.**

Սովին բանիւ ցուցանէ մարգարէն, թէ իրաւամբ ասաց՝ ոչ երկիցուք մեք 'ի խռովիլ երկրի, 'ի փոփոխիլ լերանց, 'ի գոչել ջուրց, և 'ի կործանիլ աշխարհաց. զի ահա ասէ 'ի լինել այսր ա̃մի՝ ոչ միայն մեք անսասան մնամք, և երկիր մեր 'ի խաղաղութեան, այլ և քաղաք մեր յատուկ խնամոցն ա̃յ ի զուարճութեան ցնծայ. խոկ թէ զիարդ, ասէ.

Գնացք գետոց ուրախ առնեն զքաղաքն Ա̃յ. Այսու քաղաքաւ յայտ է թէ ըստ ճառին իմացեալ լինի Երուսաղէմ. և սա կոչի քաղաք ա̃յ՝ ըստ որում Նա ինքն ա̃ծ ընտրեաց զայն իբրև յիւր տեղի սրբութեան, և հրամայեաց անդ կանգնել զխորան իւր. Ըստ այսմ առեալ՝ գնացիւք գետոց նշանակին նախ գնացք ջուրց որք գտանէին և գտանին զԵրուսաղէմաւ, որպիսի էր ջուր հեղեղատին Կեդրոնի, ջուր աւազանին Սելովմայ, և ջուրք հոսեալք 'ի լերանց ըստ ժամանակի, որք իւրեանց գնացիւք ուրախ առնէին զԵրուսաղէմ. Բայց որպէս տեսանի, այս ջուրք չէին այնպիսի, զորմէ մարթ իցէ ասել՝ թէ ուրախ առնեն զայն քաղաք. վասն որոյ ասելի է՝ թէ գուցէ յայլ ինչ ակնարկիցէ այս, կամ թերևս 'ի վիճակ զրախտին իբրև յօրինակ Երուսաղէմի և եկեղեցւոյ.

Երկրորդ՝ նշանակին ժողովուրդք ա̃յ, որք ամի ամի երիցս իբրև զգնացս գետոց յորդեալ յԵրուսաղէմ ուրախ առնէին զայն.

Երրորդ՝ նշանակին պէսպէս իրք ուրախարարք, որպիսի էին տօնք, պաշտամունք, սաղմոսերգութիւնք, դպրութիւնք, և այլն, որք ուրախ առնէին զբոլոր քաղաքն.

Եւ որ մեծն է քան զամենայն՝ յատուկ խնամք պաշտպանութե̃ն ա̃յ, որով ուրախ առնէր նա զքաղաքն զայն վասն ընտրելոյ իւրոյ զնոյն, և զանուն իւր կոչելոյ 'ի վերայ նորա, զոր և սրբեաց ինքեան. յոր միտս յարէ զկնի, և ասէ.

Եւ սուրբ արար զյարկս իւր Բարձրեալն. Յարկք իմացեալ լինի աստ խորանն յորում էին գրեթէ երկու յարկք, այսինքն սրբութ̃ին, և սրբութ̃ին ս̃րց, յորում էր տապանակն, յոյր սակս Թերեւս 'ի մերումս յոգնակի դնի, (զորմէ տես 'ի սաղ. ի̃զ. 6. և հ̃. 22. 23.) Ասացի * 'ի մերումս ‖. զի յեբր''. և յայլս եզակի դնի, և զրի խորան, որ զնոյն նշանակէ. որպէս յայտ է յելից. (խ̃. 2.) ուր ասի. * կանգնեսցես զխորանն զյարկ ,, վկայութեանն ‖.

Զայս յարկս ասէ սուրբ արար Ա̃ծ. այսինքն ինքեան սեփականելովն՝ արար զի իցէ տեղի սուրբ ըստ բազում գլխոց. մի՝ ըստ սրբեալ լինելոյ ինքեան. երկրորդ՝ ըստ սուրբ երեւելոյ արտաքոյ ինքեան. երրորդ՝ ըստ սուրբ իրաց՝ որք անդ էին. չորրորդ՝ ըստ սուրբ պաշտամանց՝ որք 'ի նմին կատարէին. հինգերորդ՝ ըստ սուրբ առնելոյ զմատուցեալս նուէրս առ Ա̃ծ.

Բայց Թուի Թէ աստ սուրբ առնելն նշանակէ պահելն Ա̃յ անարատ և անվնաս զխորան իւր. զի երեւի Թէ յայս կարգի զիտումն բանից մարգարէին. որովք և ըստ ասելոյ մեր 'ի վերոյ՝ մարգարէն կամի հաստատել զայն՝ զոր ասաց, ոչ երկիցուք. որպէս Թէ ասէր. 'ի տատանիլ երկրի, և 'ի կործանիլ լերանց, և 'ի յառնել ալեաց ծովու՝ ոչ երկիցուք մեք՝ որք եմք յերուսաղէմ. զի ոչինչ յայնցանէ եկեսցէ 'ի վերայ մեր. վասն զի Ա̃ծ է պաշտպան քաղաքիս մերոյ. նա ընտրեաց զսա, և սուրբ արար, և հանապազ ոռոգէ զսա զուարճալի գնացիւք գետոց.

Այլաբանօրէն, այսու քաղաքաւ իմացեալ լինի եկեղեցի, զոր իբրեւ զխորանն վկայութեան սուրբ արար աւազանաւ և շնորհօք որդին Ա̃յ բարձրեալն, այսինքն բարձրացեալն յերկինս, յոր հայի այն՝ զոր գրէ յովհաննէս. ('ի յայտ. իա̃. 2. 3.) * Եւ զքաղաքն սուրբ ,, զնորն երուսաղէմ տեսի՝ զի իջանէր յԱ̃յ՝ և յերկ- ,, նից, զարդարեալ և պատրաստեալ որպէս հարսն ,, առն իւրոյ. Եւ լուայ ձայն յերկնից որ ասէր. ահա- ,, ւասիկ խորանն Ա̃յ 'ի մէջ մարդկան, և բնակեսցէ ,, ընդ նոսա. և նոքա ժողովուրդ նմա, և սա աստուած ,, նոցա ‖.

Ի սմին քաղաքի սրբազան խորհուրդք, բազմապատիկ շնորհք հոգւոյն, աստուածաբուղխ վտակք իմաստից, քարոզութիւնք աւետարանին, և այլ ազգի ազգի բարեգործութիւնք, են իբրեւ գնացք գետոց, յորս ուրախ

լինի եկեղեցի. յոր միտս առի 'ի շարակնոցի. * ուրա-
„ խացաւ գնացիւք գետոյ՝ քաղաք 'ի քէն շինեալ յո՛,
„ յորմէ վտակք շնորհաց հոսեն՝ զոգիս մարդկան ոռո-
„ գանեն‖.

Դարձեալ և սուրբ գիրք կոչին գետք, որոց գնացք,
այսինքն բանք ուրախ առնեն զեկեղեցի. զի ո՞ր հոգի
ոչ ուրախանայ ասէ լամբ". յորժամ լսէ 'ի գրոց զբան
փրկութեան, եւն.

Եւ դարձեալ առաքեալք և աշակերտք քսի 'ի սկզբան
անդ եղեն իբրև զգետս՝ որք իւրեանց գնացիւք, այ-
սինքն գործովք և վարդապետութեամբք ոռոգեցին զե-
կեղեցի. յոր միտս առի 'ի շար". * գետոցս այս գնա-
„ ցիւք ցնծայ քաղաքն այ սուրբ մայր եկեղեցի‖. Ըստ
որոյ Նարեկացին կոչէ զնոսա ('ի գով. առաք.) * գետք
„ հանդարտահետք, գերածաւալք, և գեղածի-
„ ծաղք‖.

Իսկ Շնորհալին ('ի մեկն. մատ. 'ի յառաջաբ.) մաս-
նաւորէ զայս բան 'ի չորս աւետարանիչս ըստ չորից
գետոցն եդեմայ, և գրէ այսպէս. չորեքին սոքա
ասէ * ուրախ արարին 'ի գնացս գետոյ զքաղաքն
„ այ եկեղեցի, որ փոխանակ դրախտին տուաւ մեզ...
„ 'ի խորհուրդս սոցա են և անուանք գետոցն և ըն-
„ թացք. քանզի առաջինն կոչի փիսոն՝ որ թարգմա-
„ նի բերան հրոյ, ըստ որում մատթէոս հրեղէն լե-
„ զուաւն զոր ընկալաւ՝ լուսաւորեաց զարևելեանս...
„ և երկրորդն գեհոն, որ թարգմանի լանջք. որպէս
„ և մարկոս բղխեալ զաւետարանն յաղէքսանդր ե-
„ գիպտոսի, ուր և նոյն գետ ընթանայ, մաքրեաց
„ զբոլոր կողմն հարաւոյ մինչև ցգադիրոն... եր-
„ րորդն տիգրիս, որ բղխէ 'ի միջագետս... ըստ
„ որում ղուկաս բղխեալ 'ի հռոմ և յիտալիա և
„ յամենայն արևմուտս զաւետարանն. չորրորդն եւ-
„ փրատէս... որպէս և յովհաննէս բղխեալ յասիա
„ զբանն՝ ոռոգեաց հոգւոյն վտակօք զծագս տիեզե-
„ րաց‖.

Սերածաբար, այսու քաղաքաւ իմացեալ լինի ար-
քայութիւնն երկնից, զոր ուրախ առնեն գնացք բազ-
մադիմի գետոյ, այսինքն զուարճութեանց հոսելոց 'ի
ժառանգութէն այ, և յամենազուարճ խրախուն՝ զոր

ունիցին սուրբք. (զորմէ տե՛ս 'ի սաղմոսն լէ. 9. 20.) Բարոյապէս, այսու քաղաքաւ նշանակի իւրաքանչիւր հաւատացեալ անձն՝ որ նուիրեալ լիցի զինքն բոլոր ա̃յ, որով և լեալ է յարկ բնակութե̃ նորա. զի յայսպիսի անձն յորդեն գնացք գետոց շնորհաց, և երկնային լուսաւորութեանց, և իմանալի քաղցրութե̃ց, և այլ ազգի ազգի հոգևորական զեղմանց, որք ուրախ առնեն զհոգի նորա.

Վերհական մեկնութբ̃՝ գնացիւք գետոյ նշանակին վիշտք և տառապանք, որք փոխանակ տրտմեցուցանելոյ ուրախ առնեն զհոգի առաքինւոյն. որպիսի եղեն հոգիք առաքելոց, և մարտիրոսաց և խոստովանողաց. որոց մին, այն է սուրբն փրանկիսկոս քսավերեան, այնքան բերկրիւր յա̃ծ 'ի մէջ նեղութե̃ց, մինչև ասել. * բաւական է տէր, բաւական է ||. զայն բարբառէր և սուրբն փիլիպպոս ների. Այսպիսի ուրախութի̃ ունելով սրբոց 'ի նեղութիս՝ ա̃ծ ևս 'ի սրբութեան պահէր զյարկս սոցա. այսինքն զհոգիս և զմարմինս սոցա.

Յարմարական մեկնութբ̃, քաղաքաւ նշանակի աստ կրօնաստան կամ մենաստան, այսինքն է վանք, յորում որք բնակեինն՝ իբրև յարկք բարձրելոյ սրբեալ են ուխտիւք. իսկ պահպանութի̃ կանոնաց նոցա է իբրև զգընացս գետոց՝ որով ցնծան և ուրախանան 'ի տէր, և նա ինքն տէր ըստ խոստանալոյ իւրոյ գոլով 'ի միջի նոցա՝ ուրախ առնէ զնոսա. զորմէ խօսի մարգարէն մասնաւորապէս 'ի յաջորդ համարն. զի գրեթէ յայսպիսիս հայելով, ևս և յայն ա̃մ՝ զոր եդաք 'ի վերոյ, այսինքն յիսրայելացիս, և յայլս, յաւելու ասել.

Ե. Ա̃ծ 'ի մէջ նորա, և նա մի̃ սասանեսցի. օգնեսցէ նմա ա̃ծ՝ 'ի վաղորդայնէ մինչև 'ի վաղորդայն.

Այս բան է իբր բացատրութի̃ այնր զոր ասաց յառաջին համարն. ա̃ծ մեր ապաւէն և զօրութի̃ օգնական 'ի վերայ նեղութե̃ց, և է իբրև կրկնել զպատճառն, թէ ընդէր է նոցա չերկնչիլ, վասն զի ասէ.

Ա̃ծ 'ի մէջ նորա. Ա̃ծ թէպէտև յա̃մ է էութեամբ, զօրութբ̃, և հայեցողութբ̃, բայց յատուկ իմն շնորհօք և նախախնամութբ̃ է 'ի մէջ այնոցիկ՝ որք ունին զնա իւրեանց ապաւէն և օգնական. ապաւէն՝ առ 'ի պահել զնոսա 'ի չարէ, և օգնական առ 'ի առաջնորդել նոցա 'ի բարին, և առ 'ի մխիթարել զնոսա. և մանաւորապէս՝ առ 'ի ոչ թողուլ տալ սասանման նոցա. որոյ վասն յարէ:

Եւ–նոքա ոչ սասանեսցին: Սասանումն է շարժումն այնպիսի՝ որով որ յոտին կայ՝ խախտի և երերայ ըստ իրանացն՝ մերձ 'ի գլորիլ. ասացի * ըստ իրանացն ‖, զի եթէ ըստ ոտից լինիցի այն խախտումն, ասի սահիլ. իսկ եթէ ըստ բոլորին լինիցի՝ ասի գայթակղիլ. և եթէ առ 'ի կործանումն լինիցի՝ ասի գլորիլ, ևս և կործանիլ. ըստ որում գլորիլն է ընդ մէջ սասանման և կործանման:

Ընդ որք պատսպարին աստուծով, և ունին զա՟ծ 'ի մէջ իւրեանց, նոքա ոչ միայն պահին 'ի գլորելոյ և 'ի կործանելոյ 'ի չարն, այլև 'ի սասանելոյ 'ի բարւոյն ըստ իրանացն, այսինքն ըստ անդորր կենաց. (զորմէ տե՛ս և 'ի սաղ. ճի. 3.) Եւ պատճառ անսասան մնալոյ նոցա է, զի ա՟ծ որ է 'ի նոսա, յա՟մի ձեռնտու է նոցա, որպէս և վկայէ մարգարէն ասելով.

Օգնեսցէ նոցա ա՟ծ 'ի վաղորդայնէ մինչև 'ի վաղորդայն: Կամ որպէս դնի յայլ տպագրս մեր, 'ի վաղորդենէ մինչև 'ի վաղորդեան: (Սոյն նշանակութեամբ օգնել բայն տե՛ս 'ի սաղ. լէ. 38. ևս և իէ. 11.) Իսկ վաղորդայն է այն մասն առաւօտու՝ որ անկանի ընդ մէջ այգաժամու և ծագման արևու. զի յառաջ սկսանի արշալոյսն, որում յաջորդէ այգն, և այնմ յաջորդէ վաղորդայն, որում անմիջապէս յաջորդէ ծագումն արևու. և զի ամենեքին սոքա են մասն առաւօտու, երբեմն փոխանակ առաւօտ ասելոյ ասի վաղորդայն, և երբեմն այգ. և անդրադարձեալ, այսինքն փոխանակ վաղորդայնի՝ առաւօտ, ե՟ն.

Ընդ այս եղանակ խօսից, այսինքն է օգնել ա՟յ 'ի վաղորդայնէ մինչև 'ի վաղորդայն, ըստ նկարագրին առեալ՝ զերկս ցուցանէ. մի՝ օգնել ա՟յ 'ի տունջեան և 'ի գիշերի, ըստ որում այն ժամանակ որ է 'ի վաղորդենէ մինչև 'ի վաղորդեան, փակէ յինքեան ողջոյն զտիւ և զգիշեր. Երկրորդ՝ ցուցանէ զօգնելն ա՟յ միշտ և յա՟մ ժամու 'ի հասարակի՝ բանիցս և յաջորդեսցեն վաղորդեանք մի զհետ միոյ. Երրորդ՝ ցուցա-

նէ փոյթ ունիլ ա̃յ յօգնել 'ի մերձենալոյ անտի ծագման արեւու մինչեւ 'ի մուտս ծագումն ։ Ասացի * ըստ նկարագրին ‖ ․ զի խորհրդաբար առեալ՝ զայլեայլ մտս ընծայեցուցանէ այս բան ․ որպէս տեսցի յառա-
ջիկայդ ։

Այլաբանօրէն, 'ի վաղորդայնէ անտի՝ այսինքն 'ի հնոյ անտի որում յաջորդելոց էր ծագումն արեգական արդարութեան՝ օգնեաց աստուած եկեղեցւոյ իւրում պէսպէս օրինակաւ, երբեմն ինքնին խօսելով, եւ երբեմն զմարգարէս առաքելով, երբեմն տուչութ̃ օրինաց եւ յայտնութ̃ բազմապատիկ խորհրդոց, եւ երբեմն ներքին ազդարարութ̃ եւ ազգի ազգի խնամածութ̃ ։ Նաեւ այսոքիւք օգնութ̃ք ոչ եթող սասանիլ եկեղեցւոյ իւրում, որ սկսաւ յադամայ անտի ։ Նաեւ յետ ծագմանն մինչեւ 'ի վաղորդայն յայն՝ որում յաջորդելոց է երկրորդ ծագումն, այսինքն երկրորդ գալուստ նորա, օգնեսցէ միշտ, եւ ոչ երբէք թողցէ սասանիլ, թէ եւ դրունք դժոխոց յարիցեն 'ի վերայ նորա, ինքնին իսկ կացեալ 'ի մէջ նոյն եկեղեցւոյ նաեւ մարմնով իւրով
'ի խորհուրդ հաղորդութե̃ ։

Վերածաբար, առաջին վաղորդայնով իմացեալ լինի վայրկեանն այն, յորում ընդ ժամանել հոգւոյն ա̃ծ՝ ծագէ 'ի նմա տիւն ա̃ծային պայծառ տեսութե̃ իբր զհետ վաղորդայնի ։ Համեմատութ̃ այսր առաջնոյ վաղորդայնի վիճակ հաւատացելոց յաստի կենս է իբր արշալոյս, իսկ վիճակ մեղաւորաց եւ անհաւատից է իբր խոր գիշեր, յոր մտս ասէ առաքեալն ․ * յորժամ հաւատացաքն, գիշերն մերժեցաւ, եւ տիւն „ մերձեցաւ ‖ ․ (հռով․ ժ̃գ․ 11․) որպէս թէ ասէր․ 'ի հաւատալն ձեր՝ գիշերն անհաւատութե̃ եւ մեղաց մերժեցաւ, եւ դուք գտայք յարշալուսի․ որում մերձ է վաղորդայն եւ տիւն յաւիտենական երանութեան ։ Սոյնպէս եւ պետրոս առաքեալ այլով իմն կարգաւ ըղվիճակ անհաւատութե̃ն բաղդատէ խաւարչտին տեղւոյ, եւ զվիճակ ընդունելութեան հաւատոյ համեմատէ նսեմ արշալուսի կամ ճրագի, իսկ զտեսութիւնն ա̃յ կոչէ տիւ ․ (բ̃ ․ պետ ․ ա̃ ․ 19 ։) Նաեւ ըստ այսմ օգնելն ա̃յ է հասուցանել կամ արժանացուցանել զհոգին ընսով փառաց յայն վիճակ ։

Իսկ երկրորդ վաղորդայնով իմացեալ լինի վայրկեանն այն՝ յորում լինիցի առաւօտ յարութե̃ն, որով մարմինք սրբոց՝ որք կային 'ի ստուեր մահու, այսինքն 'ի գերեզմանի, և կամ ցրուեալ յայլևայլ տեղիս, յարուցեալ պայծառասցին առաւել քան զարեգակն, և զուարճասցին յանապականութեան իւրեանց՝ ասելով, ահա ձմեռն էանց, անձրևք անցին, եկն տիւ, և շարժեցան ստուերք. (երգ. բ̃. 11 = 17.) Եւ ըստ այսմ օգնելն այ̃՝ է պահպանել զնոսա ցայն ժամանակ, և յարուցանել 'ի կեանս. և յայնժամ ճշմարտեսցի ասելն, 'ի վաղորդայնէ տեսութեան այ̃ մինչև 'ի վաղորդայն յարութեան եղիցի ած̃ ընդ սուրբս իւր. Դարձեալ 'ի վաղորդայնէ յարութեանն քո̃ի մինչև 'ի վաղորդայն յարութեան սրբոց.

Բարոյապէս, վաղորդայնով նշանակի անզբաղ խոկումն առ ած̃, յորում ծագէ առաւօտ լուսաւորութե̃ն հոգւոյն. և թէպէտ հասանեն յետոյ և խաւարմունք և գիշերք պէսպէս փորձութեանց, բայց ած̃ որ բնակի 'ի սիրտ այնպիսումն, պահէ զնա, և օգնէ մինչև 'ի վաղորդայն՝ այսինքն մինչև 'ի միւսանգամ անզբաղ խոկումն, կամ յանխռով խաղաղութիւն, որ է իբրև լոյս առաւօտու. Իսկ որք անփոյթքն են 'ի խոկման, 'ի խաւարի մնան, և 'ի խռովութիւնս հոգւոյ դեգերին. Զայս եդեալ մարգարէին, 'ի մէջ բերէ ապա և ըզթշուառութի̃ հեթանոսաց 'ի խռովիլ նոցա և յապականիլ, յասելն.

Է. Խռովեցան հեթանոսք. և խոնարհեցան թագաւորութիւնք. ետ զձայն իւր բարձրեալն՝ և խռովեցաւ երկիր.

Խռովիլն է 'ի վիճակէ հանդարտութեան փոխիլ 'ի վիճակ անհանդարտութեան՝ որով օրինակաւ և իցէ. իսկ խոնարհիլն ըստ նիւթական նշանակութեան իւրում՝ ցուցանէ 'ի բարձրութենէ 'ի վայր իջանել. Արդ հեթանոսք 'ի կալն 'ի հանդարտութեան, և թագաւորութիւնք 'ի կալ իւրեանց 'ի բարձրութեան, ըստ երկուց խռովեցան և խոնարհեցան հայելով յած̃. մի՝ յորժամ ոչ ունէին ինքեանց զած̃ օգնական և պաշտպան. և մի ևս՝ յորժամ ունէին զած̃ ինքեանց վրէժխնդիր և խրատիչ այսինքն պատժիչ · ըստ այսոցիկ նշանակութեանցս դնէ աստ մարգարէն զայս բան՝ յասելն ։

Խռովեցան հեթանոսք և խոնարհեցան թագաւորութիւնք ։

Այս խռովումն հեթանոսաց և խոնարհումն թագաւորութեանց հայի նախ ՚ի ժամանակ մտիցն իսրայելացւոց յերկիրն աւետեաց · հայի երկրորդ և յայլ ժամանակս, յորս այլևայլ ազգք հեթանոսաց՝ խռովեցան և թշուառացան, իբր զի ոչ մնացին ՚ի հանդարտութեան՝ զոր ունէին, այլ փոխեցան ՚ի վիճակ թշուառութեան · նոյնպէս և մեծամեծ թագաւորութիւնք իջին ՚ի բարձրութենէ իւրեանց և նուաստացան հեռացեալք յա՟յ ։

Եւ այսմ լռելեայն իմն կամի հետևեցուցանել մարգարէն, թէ մեք ունելով ՚ի մեզ զա՟ծ՝ մնացաք և մնամք ՚ի խաղաղութեան մերում և ՚ի բարձրութե՟ · և ոչ կրեմք ինչ երկիւղ ՚ի հեթանոսաց անտի և ՚ի թագաւորութեանց · և եթէ այլք յարիցեն ՚ի վերայ մեր, ա՟ծ մեր պաշտպանեսցէ զմեզ · որպէս և արար յաւուրս հարց մերոց ։ Իսկ թէ զիարդ՝ յայտ առնէ ասելով ։

Ետ զձայն իւր Բարձրեալն և խռովեցաւ երկիր ։

Ձայն տալն ա՟յ ըստ նկարագրին նշանակէ նախ՝ բարբառ արձակել ՚ի ձեռն որոտման ամպոց, և ճայթման կայծականց, մինչև խռովել երկրի՝ այսինքն թնդալ, ըստ որում սովորութիւն է սուրբ գրոց զորոտալն երկնից այսպէս կոչել · որպէս այն որ ասի · (՚ի ա՟ · թագ · ժբ՟ · 16 ·) * կարդացից առ տէր և տացէ ձայնս և անձրևս . . . . և ետ տէր ձայնս և անձրևս յաւուր յայնմիկ · և երկեաւ ամենայն ժողովուրդն յոյժ ՚ի տեառնէ ‖ և այլն ։ Զայսպիսի ձայն ետ տէր և ընդդէմ հնգից թագաւորաց՝ որք պատերազմեցան ընդ իսրայելի յաւուրս յեսուայ, և խռովեցոյց զնոսա յերկնից ·
(յեսու · ժ՟ · 11 ։)

Երկրորդ նշանակէ ձայն տալ ՚ի ձեռն գործեաց, որպիսի էին ձայնք փողոց, զորս հնչեցուցանէին իսրայելացիք, յորոց խռովիւր երկիր, ըստ որում եղև ՚ի կործանմանն երիքովի · զի ՚ի հնչեցուցանել ըզփողսն խռովեցաւ, այսինքն թնդաց երկիր և կործանեցաւ երիքով․ (յեսու․ զ̃․ 20։) Նոյնպէս եղեւ և յաւուրս գեդէոնի ընդդէմ մադիանացւոց․ (դատ․ է̃․ 22։) Եւ զի յայն ձայնսն զօրութիւնն ա̃յ էր որ գործէր, վասն այնորիկ ասի ձայն ա̃յ։ Արդ երևի թէ յայսպիսիս հայելով՝ ասէ, ետ զձայն իւր բարձրեալն և խռովեցաւ երկիր․ այսինքն 'ի հնչել աստուծոյ ըզձայն իւր, շարժեցաւ երկիր, և տագնապեցան բնակիչք երկրի։

Այս բանք թէպէտև 'ի բերանոյ իսրայէլացւոց ասին, բայց հայելով 'ի պէսպէս անցս՝ որք անցին ընդ նոսա, պակասին 'ի յարմարելոյ առ նոսա։ Եւ որչափ յայսմ պակասին, այնչափ առաւել ևս յարմարին եկեղեցւոյն քրիստոսի, մանաւանդ 'ի սկզբան անդ․ քանզի նախ 'ի ծննդեանն ք̃նի յորժամ ձայն ետ տէր յերկնից 'ի ձեռն աստեղ՝ շարժեցան թագաւորք արաբայ և սաբայ և կղզեաց․ այլ և խռովեցան հերովդէս, և ապա պիղատոս, և խոնարհեցան 'ի հաճոյս հրէից ընդդէմ տեառն։

Երկրորդ՝ յորժամ ձայն ետ բարձրացեալն 'ի խաչի և գոչեաց զինն ժամուն՝ շարժեցաւ երկիր, և 'ի խոնարհեցուցանել զգլուխ իւր՝ խոնարհեցաւ և բարձաւ թագաւորութիւն սատանայի, ևս և անարգ ցուցան փառք թագաւորութ̃եց աշխարհի։

Երրորդ՝ յորժամ ետ բարձրեալն զձայն աւետարանին իւրոյ բերանովք առաքելոց իբր որոտմամբք և իբր փողովք, խռովեցաւ բովանդակ աշխարհ․ խռովեցան և հեթանոսք, և ասէին * զի՞նչ է նոր վարդապետու-
,, թիւնդ ‖․ (գործ․ ժէ․ 19։)

Ի խռովիլ սոցա՝ բազումք զգաստացան և ընկալան զճշմարիտ հաւատս։ Եւ մեծամեծ թագաւորութիւնք խոնարհեցան ընդ թագաւորութեամբն ք̃նի ըստ գուշակելոյն դանիէլի․ յասելն * յարուսցէ ա̃ծ երկնից
,, զթագաւորութիւն, որ յաւիտեան ոչ եղծանիցի, և
,, թագաւորութիւն նորա ազգի այլում ոչ տացի․ (և
,, նա խոնարհեցուսցէ) մանրեսցէ և հոսեսցէ զամե-
,, նայն թագաւորութ̃իս, և ինքն կացցէ յաւիտեան ‖․
(դան․ բ̃․ 44։) Յոր միտս յառաջ բերելով պօղոսի զայս բան (ա̃․ կոր․ ժե̃․ 24․) ցուցանէ թէ քրիստոս թագաւորելով տիրելոց է 'ի վերայ թագաւորութեանց, և

խորտակելոց է զիշխանութիւն Թագաւորութեանն սատանայի ։

Արդ յայտ թէ 'ի խռովել անդ հեթանոսաց, և 'ի խոնարհել Թագաւորութեանց ընդ ձայն քոյ՝ Թէպէտև արտաքուստ կրեաց եկեղեցի զբազում նեղութիւնս, բայց որչափ կրեաց, այնչափ զօրացաւ և պայծառացաւ. զի ձեռն ամենակալին յամենայնի հովանի էր և հովանի է 'ի վերայ նորա. և ինքն իւրով յատուկ ներկայութբ 'ի նմա բնակելով՝ պահէ և պաշտպանէ զորդիս նորա՝ իբր զօրացուցիչ և իբր պատսպարիչ. յոր միտս յարէ զկնի, և ասէ ։

Ը. Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր ած յակոբայ ։

Չորեքկին ասի ած տէր զօրութեանց. մի՝ ըստ այնմ, զի ինքն է անսահման զօրութիւն, յոր միտս ասելն տէր զօրութեանց՝ նշանակէ տէր ամենազօր ։ Երկրորդ՝ ըստ այնմ, զի ինքն գոլով աղբիւր ամենայն զօրութեց՝ տայ ամենեցուն զզօրութիւն՝ իւրաքանչիւր ըստ իւրում կարգի, մարմնաւորաց զմարմնաւորս, հոգևորաց զհոգևորս ըստ բնական կամ ըստ գերբնական վիճակի. նոյնպէս և այլոց՝ այլազգ ։ Երրորդ՝ ըստ այնմ զի իշխէ 'ի վերայ ամենայն զօրութեանց, ըստ որում առանց ակնարկութեան նորա ոչինչ կարեն գործել ծ և իցէ զօրութիւնք ։ Չորրորդ՝ ըստ այնմ զի է տէր երկնային զօրութեանց այսինքն զօրաց. իբր զի որպէս Թագաւորք ասին տէր երկրաւոր զօրաց, նոյնպէս և Թագաւորն երկնաւոր ասի տէր երկնային զօրաց, այսինքն հրեշտակաց, որք կոչին զօրութիւնք. և յայս միտս յոլովակի 'ի գործ ածի 'ի սուրբ գիրս բառդ տէր զօրութեց. որպէս յայտ է յեբրայականէն, և յայլոց Թարգմանութեանց ։ Ըստ այսոցիկ նշանակութեց խօսի աստ մարգարէն յասելն ։

Տէր զօրութեց ընդ մեզ. ընդունելի է մեր ած յակոբայ ։ Այս բան այնչափ ասի 'ի դիմաց իսրայէլացւոց, որչափ 'ի դիմաց եկեղեցւոյն քոյ՝ հայելով յայն ամենայն, զոր եդաք 'ի վերոյ. որով կամի ասել, թէ 'ի խռովել և 'ի փոփոխել ամենայնի՝ մեք ոչ երկիցուք. վասն զի ընդ մեզ է տէր զօրութեանց. որպէս և խոս տացուն իսկ, թէ * ես ընդ ձեզ եմ զամենայն ա„ ւուրս մինչեւ 'ի կատարած աշխարհի ‖. (մատ. իը. Ի.) եթէ յարիցեն 'ի վերայ մեր խռովիչք, նա ընդ մեզ պատերազմի ընդդէմ նոցա, եւ վանէ զնոսա. եւ եթէ մեք ստիպիցիմք փախչիլ յերեսաց նոցա, ընդունող մեր լինի, այսինքն առնու զմեզ ընդ թեւօք խնամոց իւրոց, եւ ծածկէ յաներկեւան տեսչութեան իւրում.

Ի վերոյ եդ՝ Ա̃ծ 'ի մէջ նորա. իսկ աստ դնէ ընդ մեզ. երկոքեան ես զնոյն նշանակեն, միայն դէմք բանիցն փոփոխին. եւ թէպէտ ըստ այսմ նշանակութեան պատշաճ երեւէր յաւէտ դնել 'ի մեզ՝ քան ընդ մեզ, բայց ընդ մեզ դնելով ցուցանէ՝ թէ ոչ միայն 'ի նոսա է ա̃ծ, այլ եւ ընդ նոսա. 'ի նոսա է՝ 'ի կալ նոցա 'ի հանդարտութեան կամ 'ի խաղաղութեան. իսկ ընդ նոսա է՝ 'ի յառնել այլոց 'ի վերայ նոցա. իբր զի ընդ նոսա 'ի միասին վանէ զյարուցեալսն 'ի վերայ նոցա:

Իսկ այն զոր յաւելու Ա̃ծ զօրութեանց, ցուցանէ թէ ա̃ծ՝ որ ընդ իւրեամս է, ոչ է սուտ ա̃ծ, կամ օտար ա̃ծ, այլ ճշմարիտ ա̃ծ, զոր պաշտեցին հարք նոցա՝ աբրահամ, իսահակ եւ յակոբ. որով եւ կոչեցաւ նա ա̃ծ աբրահամու, ա̃ծ իսահակայ եւ ա̃ծ յակոբայ. եւ թէպէտ զյակոբ միայն յիշէ աստ, բայց այնու տայ եւ զայլս իմանալ. եւ դարձեալ՝ զի ա̃ծ մասնաւորապէս կոչեցաւ՝ ա̃ծ յակոբայ, ըստ որում եդ նմա անուն իսրայէլ, այսինքն ա̃ծատես, յորմէ եւ ազգն ժառանգեաց զայն անուն:

Իսկ քանզի այսու մասնաւորապէս եղեւ ա̃ծ իսրայէլի, կամ ա̃ծ յակոբայ, վասն որոյ եւ մասնաւորապէս խնամ ցուցանէր ա̃ծ իսրայէլացւոց, եւ յաղագս այսր մասնաւոր խնամոցն դնէ աստ զանուանդ յակոբայ, առ 'ի ցուցանել թէ իրաւամբք ասաց՝ ոչ երկիցուք, եւ այսմ զօրութեամբ իմն պատճառս տայ՝ ասելով. զի ա̃ծ մեր յատուկ պաշտպանութեամբ եւ առանձին օգնականութեամբ յամենայնի եցոյց մեզ զհայրական խնամս իւր, եւ զա̃ծային զօրութիւն իւր եւ զքաջութիւն 'ի բազում իրս: Իսկ զայսմանէ խօսի 'ի յաջորդ համարն ասելով:

Ը․ Եկայք և տեսէք զգործս ա̄յ․ որ արար նշանս և զարուեստս 'ի վերայ երկրի։

Նշանք և արուեստք կոչին երևելի հրաշագործութիւնք ըստ այլ և այլ հանդամանաց և գործոց, իբր զի յորժամ այսպիսիքս լինին առ 'ի նշան և առ 'ի ցոյց այնպիսի իրի՝ որ իցէ 'ի վեր քան զհասողութիւն ըզգայութեանց՝ ասին նշանք․ իսկ յորժամ լինին արհեստական իմն տարազու, և այնպիսի իմն եղանակաւ որ վերաբերի յարհեստս, որպիսի է բժշկութիւն հիւանդութեանց, յարութիւն մեռելոց, ապահպանութի 'ի վնասուց, կերպարանումն իրաց, գոյաւորումն երևութից են, ասին արուեստք։ Նա և զի այսպիսիքս պատճառակեն զզարմացումն՝ եւս և զսքանչացումն, այսինքն զմեծ զարմացումն, կոչին և զարմանալիք, և սքանչելիք, և հասարակ անուամբ հրաշք։

Արդ յայտ է թէ մեծամեծ հրաշս գործեաց տէր առ իսրայէլացիս 'ի ժամանակս մովսէսի, և յետոյ առ յեսուաւ, և այլ առ մարգարէիւք․ որովք եցոյց թէ ինքն է տէր նոցա և պաշտպան նոցին, և ինքն է փրկիչ նոցա, և թէ կամի պաշտիլ 'ի նոցանէ։ Այնպէս և 'ի սկզբան եկեղեցւոյ մեծամեծ հրաշս գործեաց 'ի ձեռն առաքելոց և նոցին հետևողաց․ և այս 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի, որ և է այլ իմն սքանչելիք․ որով դարձոյց զհեթանոսս առ ինքն, և ժողովեաց 'ի մի եկեղեցի․ 'ի սոյն հայելով ասէ։

Եկայք և տեսէք զգործս ա̄յ, որ արար նշանս և զարուեստս 'ի վերայ երկրի։ Նման ասել, զոր ասացի՝ թէ ա̄ծ յակոբայ 'ի միջի մերում է, և ընդ մեզ է, և ընդունօղ է մեր, և մեք ոչ երկիցուք 'ի խռովել և 'ի յառնել ազգաց 'ի վերայ մեր, եթէ ոչ հաւատայք՝ եկայք և տեսէք զգործս նորա, զորս արար նա վասն մեր․ իսկ թէ զինչ և որպիսի էին այն գործք զորս արար՝ ցուցանէ թէ ոչ էին փոքունք կամ հասարակ գործք, այլ մեծամեծք․ զի արար ասէ նշանս և զարուեստս․ ոչ եթէ 'ի ծածուկ տեղւոջ կամ յաներևոյթ բնակութիւնս երկնից, այլ 'ի վերայ երկրի յանդիման ամենեցուն։ Նա զայսոսիկ արար վասն պաշտպանելոյ զմեզ, և վասն պահելոյ զմեզ ընդ հովանեաւ իւրով. զի ապաւինեալ կամեցաւ առնել զմեզ իւր ժառանգութիւն և իւր ժողովուրդ, կամեցաւ ևս առնել զայս ամենայն վասն մեր: Եւ ոչ այսչափ միայն, այլ և ինքնին ել ընդդէմ թշնամեաց մերոց, և ետ պատերազմ ընդ նոսա վասն մեր. և զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով:

Թ. Նա հար զպատերազմն 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի. զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զվահանս այրեաց հրով:

Այսոքիկ՝ հայելով յիւրայն՝ յայտնի տեսանին 'ի գիրս յեսուայ, և 'ի գիրս դատաւորաց, և թագաւորաց, և յայլ գիրս ևս. (տես և զորս ասացաք 'ի սաղ. խդ. 3. և 4.) յորս՝ որք միանգամ պատմին, ոչ այնչափ պատերազմ կոչելի են՝ որչափ նշանք և արուեստք. վասն որոյ իբր զայսպիսեաց խօսելով ասէ:

Նա հար զպատերազմն 'ի ծագաց մինչ 'ի ծագս երկրի: Յայս բան ըստ նկարագրին՝ երկրաւ նշանակի պաղեստին կամ երկիրն աւետեաց, յոր 'ի մտանել որդւոցն իսրայելի ետուն պատերազմ ընդ եօթն ազգս՝ ծագաց 'ի ծագս, կամ 'ի միոջ ծայրէ մինչև 'ի միւս ծայր, այսինքն 'ի գաղաադէ մինչև 'ի ծով, և 'ի դանայ մինչև 'ի բերսաբէէ:

Յայսոսիկ պատերազմունս երրակի օգնեաց նոցա աստուած. մի՝ զօրացուցանելով զնոսա ընդդէմ թշնամեաց. երկրորդ՝ խռովեցուցանելով և տկարացուցանելով զթշնամիս նոցա. և երրորդ՝ յայտնի հարկանելով զթշնամիսն, երբեմն կարկտիւ, երբեմն հողմով, երբեմն շարժմամբ, երբեմն առաքելով 'ի վերայ նոցա զանազգ կենդանիս, ևն: Եւ վասն այսորիկ ասէ թէ նա ինքն եհար զպատերազմ. այսինքն թէ 'ի պատերազմիլ որդւոցն իսրայելի 'ի սահմանս երկրին աւետեաց՝ ինքնին տէր օգնական եղև նոցա, և խորտակեաց զթշնամիս նոցա: Եւ յորս յուսացեալ էին թշնամիք նոցա, յապականութիւն դարձոյց զայնս: Եւ առ այս յարէ:

Զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զվահանս այ-

րեաց հրով։ 'Ի պատերազմունս երկու տեսակք զինուց հարկաւոր են. մի՝ 'ի պաշտպանել զանձն, որպիսի է վահանն, կամ ասպարն, որ է մեծ վահան. սոյնպէս և պատնէշն, և պարիսպն, կամ կառք պատսպարիչ անձին, են. երկրորդն է 'ի վանել զթշնամին, և այս կամ 'ի հեռուստ, որպիսի է աղեղն, պարսատիկն, են. կամ 'ի մօտուստ, որպիսի է գեղարդն, նիզակն, սուրն են. որք երբեմն հասարակ անուամբ զէնք կոչին. որպէս կոչի աստ, սուր յեբր". դնի խանիթ, այսինքն գեղարդ. (զայսցանէ տե՛ս և 'ի սաղ. լ՟դ. 2։) Եւ թէ այսոքիկ երկու տեսակք զինուց թշնամեաց եղծցին 'ի պատերազմի, յայտ է թէ եղծանին և նոքեանք, այսինքն յաղթին և նուաճին.

Արդ առ 'ի ցուցանել մարգարէին, թէ ա͞ծ խաղաղ նուաճեաց զթշնամիս իւրեանց 'ի պատերազմի, զաղարտիլ այսոցիկ զինուց 'ի մէջ բերէ. որով ոչ կամի ցուցանել՝ թէ ա͞ծ իրօք փշրեաց զամենայն աղեղունս նոցա, և խորտակեաց զամենայն սուր և զնիզակ նոցա, և այրեաց զամենայն ասպարս և զկառս նոցա, այլ թէ խաղաղ վանեաց զնոսա. և այնպէս արար, մինչև ոչ կարել նոցա՝ ոչ աղեղամբք հարկանել, և ոչ սրով վիրաւորել, ոչ ասպարաւ զինքեանս պաշտպանել, և ոչ այլով իւիք զանձինս իւրեանց պատսպարել։ Բացի * և զկառս ‖, զի յեբրայականն դնի ռէքէբ. այսինքն կառք. այլ զօրութիւն բանին 'ի նոյն հայի. որպէս յայտ է 'ի գրելոյդ։

Այլաբանօրէն, այս բան հայի յայն պատերազմ, զոր արար ք͞ս ընդդէմ թշնամեաց իւրոց։ Քանզի 'ի սկըզբան անդ 'ի սփռել քարոզութե͞ աւետարանին 'ի ձեռն առաքելոց 'ի ծագաց մինչև 'ի ծագս աշխարհի՝ յորժամ դևք խափանել ջանացան զայն, և լարեցին զաղեղունս հնարից իւրեանց, վանեաց զնոսա անուամբ իւրով, և փշրեաց զհնարս նոցա։

Սոյնպէս յորժամ հրէայք յարեան 'ի վերայ սրով բանից, մերժեաց զնոսա աւետարանութե͞ յարութեան իւրոյ, և խորտակեալ զուսերս նոցա՝ գերեաց զբազում 'ի նոցանէ, այսինքն էառ յինքն։ Ըստ այսմ ևս յորժամ հեթանոսք ընդդէմ դարձան՝ և պէսպէս զինուք պատերազմեցան, նուաճեաց զնոսա ընքանչելեօք, որովք զգլխոյ նոցա բեկեալ՝ զանհաւանս 'ի նոցանէ; աւար էառ, և էած յիւր թագաւորութիւն այսինքն է յեկեղեցի սուրբ։ Նոյնպէս արար յետոյ և ընդ այլս 'ի ձեռն հետևողացն առաքելոց. և այս 'ի յաղթել հերետիկոսաց՝ այրեաց հրով ուղղափառ վարդապետութեան զմոլար աղանդ նոցա, զորս նոքա իբր զասպարս 'ի կիր առնուին առ 'ի պատսպարել զինքեանս։

Յուսկ յետոյ 'ի հասանել յետին աւուրց՝ պատերազմեսցի և ընդ Նեռին, զի գրէ առաքեալն. (Բ. Թեսաղ. Բ. 6 = 10.) թէ յորժամ յայտնեսցի նա նշանօք և արուեստիւք սուտ, սատակեսցէ զնա տէր յս հոգւով բերանոյ իւրոյ, և խափանեսցէ յայտնութ՟բ գալստեան իւրոյ։ Եւ յայնժամ ըստ ամենայնի և յամենայնի խորտակեսցին ամենայն պատերազմունք, և տիրեսցէ խաղաղութիւն յաւիտենական։

Բարոյապէս, այս պատերազմ կատարի ընդդէմ փորձութեանց՝ որք յառնեն յամենայն կողմանց 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի շնչաւոր մարդոյ։ Ոմանք յայսոցիկ փորձութեանց վասն 'ի հեռուստ յարձակելոյ նմանին նետից աղեղանց, և ոմանք վասն 'ի մօտուստ ներգործելոյ նմանին սուսերաց. և ոմանք վասն ծածկեալ պահելոյ ընդ խրեամբք զչարն՝ նմանին ասպարաց. այլ որք յուսացեալ են 'ի Տէր, զերծցին անվնաս. զի նա ինքն Տէր վանեսցէ զամենայն։ Զայս ամենայն եդեալ մարգարէին՝ 'ի յորդոր մատչի այժմ 'ի բերանոյն ա՟յ, և ասէ։

Ժ. Մնացէ՛ք և ծաներո՛ւք, զի ես եմ ա՟ծ. բարձր եղէց 'ի հեթանոսս. և բարձրացայց 'ի վերայ երկրի։

Ի վերոյ ('ի համարն 8.) ասաց. *եկայք և տեսէք զգործս‖. տ՟ն։ Իսկ այս բան ցուցանէ զդժուարութիւն ինչ ըստ երկուց, մի՝ հայելով յայն՝ առ որ մերձենալի էր, և երկրորդ՝ հայելով յայն՝ որով մերձենալի էր. յառաջնումն երկիւղ մերձենալոյ առ ա՟ծ նահանջէր. և յերկրորդումն անգիտութիւն եղանակի մերձենալոյ առ նա ծանրացուցանէր։ Այս առ բառնալոյ զերկիւղն և տալոյ զվստահութ՟ի խօսի 'ի դիմաց ա՟յ, և առ բառնալոյ զանգիտութիւն եղանակին՝ առա-

Զի դնէ զօրինակ մերձենալոյն, և ասէ ։

Մանկտեղէք և ծանիջիք, զի ես եմ ա՟ծ ։ Մանկանալն՝ երեք ինչ ցուցանէ աստ . մի՝ մատչել յառաջ քան զամենայն 'ի քննութ՟ի ա՟ծային սքանչելի գործոց . երկրորդ՝ փութալ և մի դանդաղել յայս կամ յայն առ 'ի մատչել առ ա՟ծ . երրորդ՝ պարապել 'ի սնոտեաց՝ կամ թողուլ զայս և զայն՝ որք են սնոտի, և այնպէս մատչել առ ա՟ծ հանդերձ խոնարհութ՟բ և հանդարտութ՟բ . զի որ այսպէս կանխելով մերձենայ առ ա՟ծ, ծանիցէ ստուգապէս թէ նա է ա՟ծ, որ առնէ զմեծամեծս և նա վանէ զամենայն ընդդիմութիւնս, և թէ նա միայն է, որ վասն այսր փառաւորի յա՟մ ազգս և ընդ ա՟մ տեղիս ։ Եւ առ այս յարէ զկնի և ասէ ։

Բարձր եղէց 'ի հեթանոսս ։ Կամի ասել . որովհետև ես եմ՝ որ առնեմ զայսպիսի զարմանալի գործս, սոքիմբք և այլովք գործովք իմովք Բարձր եղէց, այսինքն սքանչելի և ամենազօր երևեցայց 'ի մէջ հեթանոսաց ընդ ամենայն տեղիս . սմին իրի յաւելու ։

Եւ բարձրացայց 'ի վերայ երկրի ։ Որպէս թէ ասէր, ես միայն եղէց բարձրացեալ և փառաւորեալ ընդ ամենայն երկիր ։ Կատարումն այսր փառաւորութեան համդիսացի յաւուրն յետնում, յորում 'ի կանխել՝ այսինքն 'ի յառնել ամենայն մարդոյ, ծանիցեն ամենեքին զա՟ծ ա՟մի տէր, և նա ինքն ա՟ծ միայն առաջի ամենեցուն ցուցցի ամենակարող ։

Այլաբանօրէն՝ այս բարձրացումն հայի 'ի բարձրանալն ք՟ի 'ի խաչ, յորմէ կոչեաց առ ինքն զազգս ադամեան՝ ճանաչել՝ թէ ինքն է ա՟ծ ճշմարիտ, և թէ վասն փրկելոյ զնոսա բարձրացեալ է 'ի խաչ . և զի հեթանոսք կանխեցին առ նա, բարձր եղև և փառաւորեցաւ առ նոսա և 'ի մէջ նոցա ։ Արդ քանզի 'ի բարձրանալ և 'ի փառաւորել ք՟ս 'ի մէջ այնպիսեաց՝ յայնպիսեաց պաշտի, և 'ի նոսա պաշտպան ցուցանի, և յամենայն գործս նոցա օգնական, սմին իրի 'ի բերանոյ այսպիսեաց խօսելով ասէ մարգարէն ։

Ժա՟. Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ա՟ծ Յակոբայ։

Քանի՛ մեծ է մարդոյ ունել ընդ ինքեան զԱ՟ծ իբր տէր և իբր խնամակալ, և քանի բարւոյ առիթ. զի թէ անբան կենդանիք՝ յորժամ ընդ ինքեանս ունին զտէր իւրեանց՝ զուարթ կան, աներկիւղ մնան, և վստահ գնան, համարելով՝ թէ ընդունող է ինքեանց տէր իւրեանց, զի՛նչ ապա եթէ բանաւոր մարդ ունիցի ընդ ինքեան զԱ՟ծ՝ գիտելով միանգամայն թէ ընդունող է նա ինքեան. քանի՛ ուրախ և բերկրեալ կայցէ. զիա՛րդ աներկիւղ և աներկեան մնասցէ. որպէս վստահութեամբ և համարձակութեամբ ընթանայցէ 'ի գործս բարեաց, 'ի վանումն փորձութեանց, և 'ի համբերութիւն նեղութեանց։ Այսպիսիս ահա վայելեալ մարգարէն, և ամենեցուն որոց միանգամ Ա՟ծ է ընդունող նոցա, մանաւանդ մանկանց եկեղեցւոյ՝ ցնծալից երգեն ասելով.

Տէր զօրութեանց ընդ մեզ. ընդունելի է մեր Ա՟ծ Յակոբայ։ Այսինքն թէ նա՝ որ է տէր զօրութեանց և տէր հրաշագործութեանց, ընդ մեզ է. և յամենայն նեղութիւնս՝ յորս լինի մեզ վտանգիլ, ընդունող է մեր. զի գրեթէ կալեալ զձեռանէ մերմէ՝ առնու զմեզ առ ինքն և պահէ, խնամէ և սփոփէ. և 'ի հասանել մեր 'ի վախճան կենաց, նա ինքն ընդունի զմեզ 'ի կեանս յաւիտենից։

ՍԱՂՄՈՍ. ԽԶ.

Յորդոր առ հեթանոս՝ ցնծալ առ ած և գովել ըզնա վասն ամենակալ զօրութեան նորա, և թագաւորութեան, ևս և վասն բարձրութե՛ և բարերարութե՛ նորին, և վասն ժողովելոյ նոցա առ նա, և լինելոյ եկեղեցի նորա. յիշելով միանգամայն 'ի մասնաւորի և զհամբարձումն տեառն ։

Ի կատարած. վասն որդւոցն կորխայ. սաղմոս 'ի դաւիթ ։

1 Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ ած 'ի ձայն ցնծութեան ։ 2 Տէր բարձրեալ և ահաւոր. թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ։ 3 Հնազանդ արար զժողովուրդս մեզ. և զհեթանոսս 'ի ներքոյ ոտից մերոց ։ 4 Ընտրեաց զմեզ նա իւր 'ի ժառանգութիւն. զգեղեցկութեանցն յակոբայ՝ զոր և սիրեաց ։ 5 Համբարձաւ ած օրհնութեամբ. և տէր մեր ձայնիւ փողոյ ։ 6 Սաղմոս ասացէք այ մերում, սաղմոս ասացէք թագաւորին մերում. սաղմոս ասացէք ։ 7 Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ած է, սաղմոս ասացէք իմաստութեամբ ։ 8 Թագաւորեաց ած 'ի վերայ հեթանոսաց. ած նստի յաթոռ սրբութեան իւրոյ ։ 9 Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ ած աբրահամու, զի այ զօրութիւնք երկրի յոյժ համբարձան ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած․ վասն որդւոցն կորխայ․ սաղմոս ՚ի դաւիթ։

ՅԵԲՐ՛․ ԵՒ ՅԱՅԼ ԹԱՐԳ՛․ ՊԱկասի յայսմ վերնագրի բառդ դաւիթ․ ՚ի թարգ՛․ եօթ՛․ յօրինակս ինչ դնի, և յօրինակս ինչ ոչ։ Իսկ ՚ի սաղմոսս մեր առհասարակ եդեալ տեսանի այդ․ ՚ի միում եւեթ ոչ գտի։ (Այլ թէ յինչ միտս դնի աստ և յայլ քանի մի սաղմոսս որդւոցն կորխայ․ տե՛ս ՚ի սաղ․ խա։) Իսկ բառդ վասն՝ որ յաւելեալ լինի աստ, առաւելութիւն ինչ ոչ ցուցանէ՝ քան զոր եդեալ է մեր ՚ի նախայիշեալ սաղմոսդ, յասել մեր անդ, թէ այն սաղմոսք որք յանձնեալ էին դասու որդւոցն կորխայ, կոչէին վասն որդւոցն կորխայ, կամ սոսկապէս որդւոցն կորխայ․ զի վասն երգեալ լինելոյ ՚ի նոցանէ՝ ասիւր եւս լինել վասն նոցա․ և ըստ այսմ վերնագիր սաղմոսիդ բացատրի այսպէս․ սաղմոս ազդեալ յա̃յ ՚ի դաւիթ՝ տուեալ որդւոցն կորխայ՝ վասն երգելոյ ՚ի կատարած․ (զորմէ տե՛ս ՚ի ներածութեան գլ․ Թ։)

Բայց են բազումք՝ որք ասեն՝ թէ զայս սաղմոս յօրինեցին երեքին հարազատ որդիքն կորխայ ՚ի գոհութիւն ա̃յ վասն յաղթութեան, զոր արար յետ ընդդէմ քանանացւոց։ Այն եւս որք ասեն՝ թէ զայս յօրինեաց մի ոմն ՚ի հոգեկիր արանց յազգէ կորխայ ՚ի ժամանակս մակաբայեցւոց վասն յաղթութեան զոր արարին ընդդէմ անտիոքայ եպիփանու։ Ոմանք վերածեն զսա ՚ի ժամանակ եզեկիայ արքայի։ Բազումք եւս դաւթի տուեալ զսոյն՝ պնդեն ցուցանել՝ թէ զայս ասացեալ իցէ նորա յածելն անդ զտապանակն տեառն ՚ի կարիաթարիմայ յերուսաղէմ, կամ ՚ի տանէ աբեդդարայ ՚ի խորանն՝ զոր ինքն էր կանգնեալ։ Այլ ոմանք տան զսա սողոմոնի և ասեն, թէ զայս ասացեալ իցէ նորա ՚ի փոխադրելն զտապանակն ՚ի սիոնէ ՚ի տաճարն զոր շինեաց․ (Գ․ թագաւորաց Ը․ 1։)

Բազումք ևս կան՝ որք վերածեն զիմաստ սաղմոսիս ՚ի ժամանակս կատարման երկրորդ տաճարին յաւուրս դարեհի վշտասպեայ. այն՝ որ էառ զեսթեր ՚ի կնութիւն. և եցոյց բազում բարերարութ՟ի ազգին հրէից. և ետ հրաման կատարել զշինութ՟ի տաճարին որ խափանեալն էր յայլոց. ընթերցիր զառաջին գիրս եզրասայ. (գլ. Ը. 1. և 27 = 32.) յորում ժամանակի բազում հեթանոսք որք հակառակն կային հրէից, միաբանեցան ընդ նոսա. ոմանք վասն երկիւղի, զի մի՛ վնաս ինչ հասցէ նոցա ՚ի հրամանէն դարեհի ձեռամբ մուրթքէի. և ոմանք վասն բարեկամութ՟ե ՚ի գործ կատարման տաճարին։

Այս կարծիք, նոյնպէս և նախագրեալքդ, որպէս և գիցեն, նկարագրեն յինքեանս զդարձն հեթանոսաց, յորոց կանգնեցաւ հոգևորական տաճար, այսինքն է նորա եկեղեցի։ Քանզի և կարգ սաղմոսիս ՚ի սոյն ակնարկէ, զի յետ խրախուսելոյ մարգարէին զհեթանոսս (՚ի համարն 1.) ցնծալ վասն ապագայ փրկութեան իւրեանց՝ առաջի դնէ (՚ի համարն 2. և 3.) թէ զիարդ յառաջն ընկճեցան հեթանոսք յերեսաց իսրայելացւոց, և եղեն ՚ի վայր քան զնոսա առաջի ա՟յ. և ապա յայտ առնէ (՚ի համարն 4.) թէ զիարդ ՚ի հաճիլ ա՟յ գալ առ իսրայէլ, ընտրեաց զհեթանոսս. և (՚ի համարն 5.) թէ զիարդ յետ կատարելոյ զօրհնութիւնս իւր համբարձաւ յերկինս. որոյ վասն յորդորէ (՚ի համարն 6. և 7.) սաղմոսել և օրհնել զնա. և ապա (՚ի համարն 8. և 9.) դարձեալ ՚ի մէջ բերէ զթագաւորելն ա՟յ ՚ի վերայ հեթանոսաց, և զփառաւորել նորա ՚ի նոսա։ Յայսոսիկ հայելով ոմանք մեկնել զայս սաղմոս ՚ի մէջ բերելով միանգամայն ըստ նկարագրին ՚ի հասարակի և զայն յոր հիմնին բանք սորա։

ԲԱՆ

ա. Ծափս հարէք ամենայն հեթանոսք. աղաղակեցէք առ ա՟ծ 'ի ձայն ցնծութեան։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այս հրամայումն ըստ առարկային հայի յապագայն. իսկ ըստ ենթակային հայի յայն ժամանակս. առարկայն է դարձն հեթանոսաց կամ փրկութիւն նոցա, որ լինելոց էր ք՟սիւ. իսկ ենթակայն է նոյն իսկ ազգն հեթանոսաց. և զի ամենայն ազգք հեթանոսաց կարէին լինել ենթակայ և ընդունակ այնր փրկութեան՝ զամենեսին հրաւիրէ ուրախ լինել 'ի վերայ փրկութեանն՝ որ ծագելոց էր նոցա։ Իսկ հեթանոսք իմացեալ լինին ըստ այն ա՟մ ազգք՝ որք չէին իսրայելացիք, եթէ հեռաւորք և եթէ մօտաւորք, եթէ որք ճանաչէին զա՟ծ, և եթէ որք ոչ ճանաչելով պաշտէին զկուռս. Եւ կամ ըստ Լամբ". ա՟մ մարդիկ առ հասարակ. որպէս գրէ և սուրբն Յակոբ Մծբնայ հայրապետ. ('ի Ճառն ԺԵ։) Առ սոսա ամենեսին խօսելով ասէ։

Ծափս հարէք ամենայն հեթանոսք։ Ծափս հարկանելն հասարակօրէն է նշան ուրախութեան ըստ բազում իրաց. և զի ըստ ճարտասանից նշանն դնի երբեմն փոխանակ նշանակելոյն՝ փոխանունութեան ձևով, ըստ այսմ ոճոյ վարելով մարգարէին՝ փոխանակ ասելոյ, ուրախ լերուք, ասէ ծափս հարէք. և այս՝ առ 'ի չքնաղ ձևացուցանելոյ զբանն։

Բայց ընդ միոյ խորհրդոյն հայելով՝ բազում ինչ գիտէ տալու մարգարէն, նախ՝ թէ արժան է նոցա մեծապէս ուրախանալ՝ մինչև արտաքուստ ևս ցուցանել զնշան ուրախութեան՝ ծափս հարկանելով։ Երկրորդ՝ թէ արժան է միաբանութ՟բ կամ 'ի միասին ուրախանալ. զի ծափս հարկանելով ուրախանալ՝ ոչ լինի առանձինն. այլ 'ի միաբանութեան բազմաց։ Երրորդ՝ թէ արժան է հայելով յառարկայն՝ ուրախանալ. իսկ առարկայ այսր ուրախութ՟ն որպէս ասացաք, էր դարձ նոցա, և միանալ նոցին ընդ իսրայէլի և լինել մի եկեղեցի. և զի ծափս հարկանելն է արտաքին նշան այսպիսի միացման, ըստ որում լինի մածմանք երկուց ափից՝ 'ի մի գալով, վասն այսորիկ դնէ ծափս հարէք: Չորրորդ՝ թէ արժան է ուրախանալ նոցա իբր անդամք միոյ գլխոյ փրկչի իւրեանց՝ իբր ձեռք նորա. զի որովհետև ամենայն անդամք հաղորդ գտանին ազդութեան գլխոյն, նոքա ևս իբր անդամք հաղորդ գտեալ փրկութեանն ք̃ի՝ ուրախ լիցին: Արդ առաջին և պատուական անդամք էին իսրայէլացիք՝ իբր աջ ձեռն, որոց և պատրաստ էր այնպէս մնալ. իսկ երկրորդ անդամք լինելոց էին հեթանոսք իբր ձախ ձեռն. և զի 'ի հարկանել զծափս՝ աջն զձախու գայ, իսրայէլացիք հրաւիրելով զհեթանոսս՝ զնոքօք գային, որով և լինէր սոցա և նոցա խորհրդաբար ծափս հարկանել: Հինգերորդ՝ թէ արժան է ուրախանալ՝ ո՛չ ըստ ունայնութեան գնացից հեթանոսութե̃, այլ ըստ բարի գործոց՝ որ նշանակի ձեռօք. և զի հարկանել զծափս՝ ձեռօք լինի, կամելով մարգարէին զուրախանալն հեթանոսաց ցուցանել և ըստ գործոց բարեաց, դնէ ծափս հարկանել, և կամ դարձեալ՝ ուրախանալ հաւատով և գործով՝ իբր երկու ձեռամբք, ըստ համաձայնեցուցանելոյ զնոսա 'ի մի ծափ: Եւ առ 'ի ցուցանել ևս՝ թէ այս ուրախութիւն նոցա լինելոց է առ ա̃ծ, յարէ զկնի և ասէ:

Աղաղակեցէք առ ա̃ծ 'ի ձայն ցնծութեան: Ասաց աղաղակեցէք ո՛չ ցուցանէ աստ սոսկ զաղաղակ բառնալն, զի այս չէ ինչ. այլ ցուցանէ զաղաղակ օրհնութեան և գոհութեան. որպէս թէ ասէր. բարձրաձայն օրհնութեամբ աղաղակեցէք առ ա̃ծ, կամ թէ հնչմամբ և գոչմամբ գոհութիւն մատուցէք առ ա̃ծ, ո՛չ 'ի ձայն երկիւղի և ցաւոց, որպէս լինի ումանց, այլ 'ի ձայն ցնծութեան, այսինքն ուրախալիր և բերկրալից ձայնիւ. որ է ասել. ուրախութբ̃ ձայն բարձրեալ օրհնեցէք զա̃ծ: Եւ առ ինչ այս. վասն զի մերձեալ էր փրկութիւնն ա̃յ առ նոսա: Եւ զի մի կարծեսցեն հեթանոսք թէ ըստ իւրեանց չաստուածոցն իցէ ա̃ծն իսրայէլի առ որ ունին աղաղակել, յարէ զկնի և ասէ:

բ̄ · Տէր բարձրեալ և ահաւոր · Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի ։

Զոր ՚ի նախընթաց համարն՝ ա̃ծ ասաց, զնոյն աստ տէր կոչէ · առ ՚ի ցուցանել, թէ ա̃ծ գոլով տէր ամենայնի՝ եթէ հրէից և եթէ հեթանոսաց, կամի զամենեցուն փրկութիւն · և խնամէ զամենեսին, որով և գիտէ յորդորել զհեթանոսս՝ դիմել առ նա, և ուրախ լինել ՚ի փրկութեան նորա ։ Եւ զի մի երկիցեն մատչիլ առ նա, ինքն կանխէ ցուցանել զերկիւղալի լինել նորա, ասելով ։

Տէր բարձրեալ և ահաւոր ։ Աստուած ասի բարձրեալ առ ՚ի ներքս և առ արտաքս · առ ՚ի ներքս՝ վասն անհասութեան իւրոյ և վասն գերազանցութե̃ն, զի է յա̃մի անհաս, և յանսահմանս գերազանց · ըստ որում զորինչ և ըմբռնեմք մեք զնմանէ՝ յայնմ ա̃մի յանքաւս բարձր է յինքեան, և անհուպ ՚ի ստեղծական մտաց · այսինքն յըմբռնել մեր զնա իմաստուն, հզօր, արդար, սուրբ, բարի, ևն · յայսոսիկ անքաւ բարձրութբ̃ գերազանց գտանի՝ անհաս ՚ի մտաց մերոց ։

Բարձրեալ ասի և առ արտաքս ըստ բազում իրաց · մի՝ ըստ բարձրութեան ուրաւորութեան, զի ոչ պարագրի ուրեք, այլ զամենայն ինքն պարագրէ ։ Երկրորդ՝ ըստ բարձրութե̃ եղանակի գործոց, զի ամենայն գործք նորա բարձր եղանակաւ կատարին · երկիրս ևեթ որ կայ յօդս՝ աղաղակէ թէ քանի բարձրեալ է որ բարձեալ ունի զինքն ՚ի ձեռին ։ Երրորդ՝ ըստ բարձրութեան իշխանութե̃՝ որով կառավարէ զարարածս անհասանելի օրինակաւ ։ Չորրորդ՝ ըստ բարձրութե̃ հրամանաց իւրոց, ընդ որով պարտին անկանիլ ամենայն հրամանք այլոց, և ամենայն հրամանատուք ։ Հինգերորդ՝ ըստ բարձրութեան նախախնամութե̃, յորում զայնպիսիս տեսանեմք, որ ամենայն իրօք բարձր է քան զհասողութիւն մեր ։

Սոյնպէս և **ահաւոր** ասի ա̃ծ՝ նախ առ ՚ի ներքս, որով ցուցանի լինելն նորա յամենայնի մեծ ՚ի զօրութեան, մեծ յարդարութեան, մեծ ՚ի սրբութե̃, ևն ։ Երկրորդ առ արտաքս · որով ցուցանի լինելն նորա հզօր ՚ի մեծութեան գործոց իւրոց, ՚ի սքանչելագործելն, և ՚ի կառավարեն, 'ի վրէժխնդրեն, և 'ի հատուցանեն, և այլն։

Ի սոսին ահա հայելով մարգարէին կոչէ զա̃ծ Բարձրեալ և ահաւոր։ Որով կամի երեք ինչ ազդ առնել. մին հայի 'ի սպառնալիս. որպէս թէ ասէր. երկերո՛ւք յա̃յ մերմէ ազգք հեթանոսաց, զի է ահաւոր և բարձրեալ։ Երկրորդն՝ հայի ընդ հակառակն 'ի քաջալերութիւն հեթանոսաց. որպէս թէ ասէր. թէպէտ և այսպիսի ահաւոր է տէր, բայց ո՛չ է արժան վասն այսր երկնչելով յետս կալ 'ի նմանէ, այլ մանաւանդ խնդրելով գտանել զնա, աղաչել և ցնծալ 'ի նա։ Երրորդն հայի 'ի պաշտպանութիւն ազգին իսրայէլի. որպէս թէ ասէր, զայսպիսի ա̃ծ ունելով մեր կամք 'ի յանդորրու. մանաւանդ զի նա ինքն հաճեցաւ ընդ մեզ՝ և արար զմեզ իւր ժառանգութիւն. առ որ ունի կոչել և զհեթանոսս, և թագաւորել 'ի վերայ նոցա և 'ի վերայ ա̃մի։ Եւ յայս միտս յարէ զկնի, և ասէ։

Թագաւոր մեծ 'ի վերայ ա̃մ երկրի։ Բառդ Թագաւոր կրկնակի ակնարկէ աստ յա̃ծ. նախ՝ ըստ որում է նորոգիչ և փրկիչ, այն է որդին ա̃յ՝ որ եկեալ յաշխարհ 'ի փրկութիւն արարածոց՝ թագաւորեաց 'ի վերայ ա̃մի. և մասնաւորապէս 'ի վերայ զինուորեալ եկեղեցւոյ՝ որ է 'ի վերայ ամենայն երկրի ընդ ամենայն տեղիս և յամենայն ազգս. և զի այս թագաւորութիւն նորա տիրէ 'ի վերայ ամենայն թագաւորութե̃ց՝ վասն այսորիկ մեծ կոչի։ Եւ դարձեալ այս թագաւորութիւն ո՛չ է իբրև այլոց թագաւորաց ստացական, այլ 'ի բնէ, ուստի և մեծ։ Եւ դարձեալ որովհետև այս թագաւորութիւն է 'ի հոգևոր կարգի՝ որ է մեծ քան զմարմնոյն՝ վասն այնորիկ ևս մեծ ասի։

Երկրորդ՝ ակնարկէ յա̃ծ՝ ըստ որում արարիչ և կառավար ա̃մի, և մասնաւորապէս՝ ըստ որում թագաւոր բանականաց եղելոց 'ի վերայ ամենայն երկրի. յոր միտս կամի ասել, նա որ թագաւորն է ամենայնի և 'ի վերայ ամենայն երկրի, նա ինքն է յատուկ թագաւոր իսրայէլի. և այնչափ խնամ ունի 'ի վերայ ազգին իսրայէլի, և այնչափ փառաւորել կամի զայն, մինչև նըկուն առնել ընդ նոքօք զայլ ազգս։ Եւ յայս հայելով յարէ զկնի, և ասէ։

Գ. Հնազանդեաց զժողովուրդս մեզ. և զհեթանոսս ՚ի
ներքոյ ոտից մերոց.

Հնազանդ առնել զոք ումեք չորեքկին լինի. մի՝ ըստ ծառայելոյ յամենայնի, որպէս են ստրուկք և ծառայք, նաև որդիք, եւն. երկրորդ՝ ըստ հպատակելոյ յիրս ինչ, որպէս են ազատորդիք, և կնիք՝ հայելով յայր իւր. երրորդ՝ ըստ հարկելոյ, այսինքն ըստ հարկատու լինելոյ, որպէս եղեն ժամանակաւ հայք ընդ հռովմայեցւովք և ընդ այլովք. չորրորդ՝ միայն ըստ յաղթելոյ, որպէս են քանի մի տէրութիւնք ընդ այլովք տէրութ̃ք. Արդ յայտ է թէ ա̃ծ զբազում ժողովուրդս հնազանդեցոյց իսրայէլացւոց ըստ այսոցիկ չորից օրինակաց յայլևայլ ժամանակս, զոմանս ըստ միումն և զոմանս ըստ այլում. ՚Ի սոսին ակնարկելով ասէ մարգարէն զայս բան. Դարձեալ՝ ըստ այլ իմն ծառայութեան՝ հնազանդ առնելն կրկնակի կարէ լինել. մի՝ հասարակ ծառայութ̃բ, և մի ևս՝ իսպառ ընկճմամբ.
յառաջինն հայելով ասէ.

Հնազանդեաց զժողովուրդս մեզ. Ժողովրդովք իմացեալ լինին աստ՝ նախ քանանացիք ՚ի ժամանակս մովսէսի և յեսուայ. և երկրորդ՝ այլ օտար ազգք որք էին ՚ի ժամանակս դաւթի և սողոմոնի. զորս զբազումս հնազանդեցոյց ա̃ծ ՚ի ներքոյ իսրայէլացւոց. և զի այսպիսիք ժողովուրդք էին հեթանոսք, որոց զոմանս իսպառ նուաճեաց տէր, վասն այսորիկ յաւելու ասել ըստ
երկրորդին.

Եւ զհեթանոսս ՚ի ներքոյ ոտից մերոց. ՚Ի ներքոյ ոտից մերոց ասելով՝ կամի ասել իսպառ՝ քան զոր աւելի չէ հնար հնազանդել. զի ՚ի վայր քան ՚ի ներքոյ ոտից լինել ոչ է կարելի. ուստի ցուցանի այսու ըստ ամենայնի նուաճիլ և հնազանդիլ նոցա. Սոքիմբք կամի մարգարէն առաւել ևս ուրախացուցանել զհեթանոսս, քան թէ անարգ երևեցուցանել զնոսա. զի կամի ասել, թէ արժան է ցնծալ հեթանոսաց առ ա̃ծ, զի որք յառաջին ընդ ոտիւք մերովք էին, հանդերձեալ են լինել իբրև զմեզ ժողովուրդք ա̃յ, և ՚ի վերոյ քան
զմեզ.

Այլաբանօրէն այս բան ասի ՚ի դիմաց եկեղեցւոյ բերանով առաքելոց, ըստ որում աւետարանութ͞ն նոցա հնազանդ արար տէր եկեղեցւոյ իւրում զժողովուրդս բազումս և զազգս հեթանոսաց, զորմէ և Եսայի մարգարէացեալ էր. (Կ. 14. և ԺԴ. 2: սոյնպէս և Եզեկ. ԼԹ. 10. և այլք:) և զսոյն զայս մանաւորապէս 'ի մէջ բերէ մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով:

Դ. Ընտրեաց զմեզ իւր 'ի ժառանգութիւն գեղեցկութեան յակոբայ, զոր և սիրեաց:

Ընտրելն է 'ի մէջ բազմաց որոշել զոմանս յիւր ինչ, որպէս յորոշել զօրապետին զոմանս 'ի բազմութենէ զօրաց գալ ընդ ինքեան՝ կամ գնալ յայլ ինչ տեղի, այս որոշելս ասի ընտրել: Արդ յայտ է թէ 'ի մէջ բազմութեան ա͞մ ազգաց որոշեաց ա͞ծ զիսրայէլացիս նախ առաջին 'ի քաղդէացւոց անտի, և ապա յայլոց ազգաց: Այս որոշումն կամ ընտրութիւն նոցա ոչ էր վասն նոցա, այլ վասն հանդերձելոյ զաւակին, այսինքն վասն ծնանելոյ յազգէ անտի՝ որդւոյն ա͞յ. որոյ աղագաւ զբազմադիմի խորհուրդս նկարագրեաց ա͞ծ 'ի նոսա՝ իբրև զստուերս այնր ա͞մի, որք լինելոց էին 'ի լրման խորհրդոյ հանդերձելոյն: Նաև արդ քանզի մեծ իմն էր այս ընտրութ͞ի և առ մեծ ինչ կարգեալ, սմին իբրև պարծելով յընտրողն ասէ:

Ընտրեաց զմեզ իւր: Կամի ասել. մեծ եղև մեզ այս. զի որ տէրն է ա͞մի՝ հայեցեալ յա͞մ որդիս մարդկան՝ զմեզ միայն որոշեաց 'ի նոցանէ: Այսմ որոշման կամ ընտրութեան զերկու ինչ դնէ յանդիման, կամ թէ զայս ընտրութ͞ի ըստ երկուց ասէ լեալ: Առաջինն է այս՝ զի ընտրեաց ինքեան, և առ այս դնէ զբառդ իւր. որպէս թէ ասէր. արար՝ զի մեք լիցուք նորա՝ վայելելով զնա, և նա լիցի մեր՝ ունելով զմեզ իւր ժողովուրդ. երկրորդ է այս՝ զի ընտրեաց առ 'ի ժառանգել զբարութիւնսն իսրայէլի, և առ այս յարէ:

Ի ժառանգութիւն գեղեցկութեան յակոբայ: Որպէս թէ ասէր, ընտրեաց զմեզ՝ և արար իւր, որպէս զի ժառանգեսցուք զգեղեցկութ͞ին յակոբայ. իսկ այս գեղեցկութիւնք յակոբայ էին նախ՝ ներկայութ͞ին ա͞յ 'ի ձեռն տապանակին, և նոյն իսկ տապանակն, (որ 'ի սաղ. Հէ. 61. գեղ կոչի.) որ և էր օրինակ իրական ներկայութեանն ք̅ի 'ի խորհուրդ հաղորդութե̅ն։ Երկրորդ՝ ազգի ազգի գեղեցիկ հանդէսք արարողութեանց, որք էին օրինակ պաշտամանց եղելոց 'ի նորս եկեղեցի։ Երրորդ՝ օրէնք և խրատունք և դատաստանք, և այլն, որք էին իբր ստուեր աւետարանին ք̅ի։ Չորրորդ՝ բազմապատիկ սքանչելիք՝ որք կատարէին յազգն յակոբայ, և էին յարացոյց մեծամեծ սքանչելեաց՝ որք կատարեցան յեկեղեցւոջն ք̅ի։ Հինգերորդ՝ յատուկ խնամողութիւնքն ա̅յ, որք էին նշան խնամելոյ նորա զփրկութիւն մարդկան 'ի ձեռն ք̅ի։ Վեցերորդ՝ մարգարէութի̅ք և գուշակութիւնք և լուսաւորութիւնք և խորհուրդք՝ որք էին ցոյցք քարոզութեանց և վարդապետութե̅ց նորոյս եկեղեցւոյ։ Եօթներորդ՝ անուանիլ նոյա ժողովուրդ ա̅յ, որ և էր ապացոյց անուանելոյ եկեղեցւոյն ժողովուրդ ք̅ի, և̅ն։ Այսոքիկ կոչին գեղեցկութիւն յակոբայ. զի սքինեք գեղեցկացաւ և վայելուչ երևեցաւ ազգն յակոբայ. որովք և հաճեցաւ ընդ նա ա̅ծ. որոյ վասն ասէ։

Զոր և սիրեաց։ Իբր դերանունդ զոր՝ կրկնակի կարէ առեալ լինել. մի՝ ըստ յարաբերելոյն զյակոբ. և ըստ այսմ կամի ասել. ա̅ծ սիրեաց զյակոբ վասն գեղեցկութեանց նորա. և վասն այնորիկ ընտրեաց զնա իւր իբր զժառանգ այնց գեղեցկութեանց։ Երկրորդ՝ ըստ յարաբերելոյն զգեղեցկութիւնն. և ըստ այսմ կամի ասել. սիրեաց ա̅ծ զգեղեցկութիւնն զայնոսիկ, և վ̅ն այնորիկ ընտրեաց զազգն յակոբայ, զի ժառանգեսցեն զայնս։

Այլաբանօրէն՝ որովհետև որպէս ասացաք, այն ամենայն գեղեցկութի̅ք իսրայէլի էին օրինակ գեղեցկութե̅ց նորոյս իսրայէլի, զոր և սիրեաց ա̅ծ, հեթանոսք՝ որք քարոզութ̅բ առաքելոց ընտրեցան և որոշեցան լինել ք̅ի՝ ժառանգեցին զն̅մ. վասն որոյ և իրաւամբք կարեն ասել, և ասեն իսկ. ընտրեաց զմեզ լինել իւր ժողովուրդ՝ առ 'ի ժառանգելոյ զգեղեցկութիւնս յակոբայ՝ այսինքն նորոյս իսրայէլի։

Դարձեալ՝ ա̅ծ որ նախ ընտրեաց զիսրայէլ, և արար զնա իւր ժառանգութիւն, և գեղեցկացոյց զնա պէսպէս իրօք. յոչ ընդունիլ նոցա զնա յորժամ եկն առ նոսա, և 'ի մերժել նորա զնոսա, 'ի տեղի նոցա ընտրեաց զհեթանոսս՝ լինել իւր ժողովուրդ, և ժառանգել զայն ա̃մ գեղեցկութիւնս՝ որոց անարժան գտան իսրայէլացիք։ Կամ ընտրեաց 'ի ժառանգել զգեղեցիկ գուշակութիւնն յակոբայ նահապետի, որ ասաց. մի պակասեսցի իշխան 'ի յուդայ մինչև եկեսցէ; մեսիայ և նա է ակնկալութիւն հեթանոսաց. (Ծնն. խթ. 10։)

Ոմանք յակոբաւ իմանան աստ զք̃ս. և ըստ այսմ կամի ասել. հայրն ետ որդւոյ իւրում զհեթանոսս. և որդին ընտրեաց զնոսա, այսինքն հաճեցաւ ընդ նոսա. և նոքա ժառանգեցին զգեղեցկութիւն նորա այսինքն զք̃սի. և վկայեցին զլինել նորա գեղեցիկ տեսլեամբ քան զամենայն որդիս մարդկան։

Սոքիմբք ոչ ցուցանի՝ թէ եկեղեցին ա̃յ որ էր 'ի սկըզբանէ յադամայ անտի՝ եղծաւ, և նորոգ շինեցաւ, կամ թէ խլեցաւ՝ և այլ տնկեցաւ. այլ թէ յայլ վիճակ փոխեցաւ, կամ նոյն մնալով յինքեան՝ իբրև զծառ 'ի կոճղել ոստոց՝ այսինքն հրէից՝ յինքն ընկալաւ զհեթանոսս ըստ առաքելոյն, որ բազմօք խօսի զայսմանէ (տե̃ս 'ի հռոմ. զերեսին գլուխն թ. ժ. և ժա̃. 16։)

Այս բան կարէ այլազգ ևս մեկնիլ, եթէ դերանունդ **իւր՝** դիցի 'ի վերայ ժառանգութեան. որպէս է յայլ ա̃մ թարգմանութիւնս. և ըստ այսմ բառդ **ժառանգութիւն՝** նշանակէ ժողովուրդ սեփականեալ ա̃յ, այսինքն ժողովուրդ ժառանգեալ յա̃յ և ժառանգող ա̃յ։ Այս միտս և բառդ **գեղեցկութեան՝** ոչ դնի իբր խնդիր ժառանգութե̃՝ որպէս 'ի վերոյ, այլ իբր յատկացուցիչ, որով և միտ բանին լինի այս. ա̃ծ ընտրեաց զմեզ առնել ինքեան ժողովուրդ գեղեցկութե̃ց՝ այսինքն ժողովուրդ գեղեցիկ, և այնու արար զի մեք լիցուք ժառանգող ա̃յ, և ա̃ծ լիցի ժառանգող մեր. և նա ինքն բարձրացեալ և փառաւորեալ ճշմարիտ պաշտամամբ իբրև ա̃ծ ճշմարիտ. և զայսմանէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն այլաբանութ̃բ իմն ասելով։

Է. ամբարձաւ ա̃ծ օրհնութ̃բ. և տէր ձայնիւ փողոյ։

Բառդ համբառնալ՝ երկակի 'ի մէջ բերի, նիւթապէս՝

տիրապէս և փոխաբերաբար․ նիւթապէս առեալ՝ բաղադրի 'ի բայէս՝ բառնալ, և 'ի մասնկանէս համ, որով նշանակի համ բառնիլ, այսինքն համդերձ իւիք բառնիլ․ տիրապէս առեալ՝ նշանակէ 'ի վեր բառնիլ, այսինքն բարձրանալ․ փոխաբերաբար առեալ՝ նշանակէ փառաւորիլ․ ըստ այսոցիկ նշանակութեանցս դնի աստ բառս համբարձաւ․ զի ըստ առաջնոյն ա՟ծ բարձրեալ լինէր 'ի մէջ իսրայէլի տապանակաւ ուխտին, և այլովք սրբազան իրօք․ և համ ընդ այնս երևէր բարձրեալ․ ըստ երկրորդին՝ բարձրացեալ լինէր ա՟ծ 'ի մէջ իսրայէլի 'ի ձեռն ճշմարիտ հաւատոյ, և ուղիղ պաշտամանց։ Այլ ըստ երրորդին՝ փառաւորեալ լինէր ա՟ծ 'ի ձեռն պէսպէս սքանչելեաց և յաղթութ՟եց՝ զորս կատարէր․ և զի զայսոսիկ հանդիսացուցանէին իսրայէլացիք 'ի ձեռն օրհնութեանց և 'ի ձայն փողոյ, 'ի սոսին հայելով ասէ։

Համբարձաւ ա՟ծ օրհնութ՟բ․ և տէր մեր ձայնիւ փողոյ։ Այսմի ասել․ ա՟ծ՝ որ է տէր մեր՝ համբարձեալ տեսաւ 'ի մեզ․ ըստ որում բազմեալ և բարձրացեալ կայ 'ի միջի մերում ներկայութ՟բ տապանակի իւրոյ՝ 'ի տաճարի աստ, ուր և հանապազ համբարձեալ լինի, այսինքն պաշտի և փառաւորի 'ի մէնջ օրհնութ՟բ, և ձայնիւ փողոյ իբրև տէր ա՟մի, և ա՟ծ ամենեցուն։

Ի սոյն տեսութ՟ի վերառեալ և Նարեկացւոյն զայս բան՝ դնէ համբառնալ և փառաւորիլ ա՟յ 'ի ձեռն ձայնի երջանիկ փայտին, յասելն․ ('ի բանն ղ՟է․) * հարաւ ա-
,, հա փող աւագախող․ համբարձաւ սուլաւ ա՟ծ օրհ-
,, նութ՟բ․ պատմեցաւ սուլին ա՟մ երկրի ‖։

Բայց որպէս և յայտնի տեսանի, այս բան է կանխագուշակ մարգարէութ՟ի համբարձման տեառն մերոյ յ՟սի ք՟սի զորմէ գրի․ ('ի մարկ․ ժ՟զ․ 19․ և 'ի ղուկ․ ի՟դ․ 50 = 52․ և 'ի գործ․ ա՟․ 9․) Որպէս և ինքն իսկ յառաջագոյն գուշակեաց առակաւ առն ազնուականի՝ թէ գնաց յաշխարհ հեռի առնուլ զթագաւորութիւն իւրե՟ն․ (ղուկ․ ժթ․ 12․)

Արդ ոչ ասէ մարգարէն վերացաւ ա՟ծ, կամ բարձրացաւ, այլ համբարձաւ․ զի ոչ առանձինն վերացաւ, այլ համ ընդ այլս․ վասն զի 'ի բարձրանալ նորա՝ հրեշտակք առհասարակ և հոգիք սրբոց համօրէն ընդ նմա էին ։ Յակոբ նահապետ միով ցպով էանց ընդ յորդանան՝ գնալ 'ի միջագետս. և դարձաւ երկու բանակօք առ հայր իւր. (ծնն. իը. 19. լբ. 10։) սոյնպէս և տէրն մեր ցպով խաչի անցեալ ընդ կենցաղս՝ դարձաւ առ հայր երկու բանակօք 'ի հրեշտակաց և 'ի մարդկանէ ։ Սրովք իբր արտաքին թեւովք սլացաւ յերկինս հանգոյն արծուոյ ։ Յորոյ 'ի խորհուրդ տեսիլ երեւեցաւ եզեկիելի 'ի չորեսին կենդանիս, 'ի կերպարանս մարդոյ, եզին, առիւծու և արծուոյ. ըստ որում տէրն մեր նախ մարդ եղեւ, և իբր զեզն պարարակ զենեալ 'ի խաչին, և իբրև առիւծ յաղթեալ սատանայի՝ յետ ամենայնի իբրև արծուի ինքնին սլացաւ յերկինս. (եզեկ. ա. 10։) Ասացի * ինքնին ‖. զի թէպէտ և ըստ նախագրեալ բանիցդ ընդ նմա էին և անհամար հրեշտակք, բայց ոչ իբրև բարձօղք, այլ իբրև սպասաւորք. կամ որպէս ասի՝ ոչ իբրև ներքին թեւք, այլ իբրև արտաքինք, կամ իբրև յուղարկաւորիչք գնացից նորա. ըստ որում գրէ իգնատիոս վարդապետ. (մեկն. ղուկ. իդ. 50.) 'ի համբառնալ ասէ տեառն մերոյ * թէ և երեւեցան հրեշտակք, սակայն յուղարկաւորք ,, եղեն և ոչ բարձօղք. ըստ այնմ. համբարձաւ (ինք- ,, նին) ած օրհնութբ և տր մեր ձայնիւ փողոյ. և դար- ,, ձեալ՝ սպասաւորութի հարկանելով առաջի մտանե- ,, լոյ նորա յերկինս, աղաղակէին առ գերակայսն, համ- ,, բարձէք իշխանք զդրունս ձեր 'ի վեր ‖, ևն ։

Այս համբարձումն օրհնութեամբ եղև ասէ ։ Իսկ այսու օրհնութբ նշանակի օրհնիլ և օրհնել տեառն մերոյ ։ Օրհնիլ նորա այն էր, զի 'ի վերանալ նորա յերկինս՝ օրհնէին և գովէին զնա զօրք հրեշտակաց ։ Այլ օրհնել նորա այն էր, զի 'ի վերանալն օրհնեաց զաշակերտսն. քանզի որպէս գրէ ղուկաս, առեալ ընդ իւր զնոսա եհան 'ի բեթանիա 'ի լեառն ձիթենեաց. * և ,, ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա. և եղև ,, յօրհնելն նորա զնոսա՝ մեկնեցաւ 'ի նոցանէ, և ,, վերանայր յերկինս ‖. (ղուկ. իդ. 50.) Եւ որպէս աւանդեն բազում երեւելի վարդապետք, խաչանշելով օրհնեաց զնոսա. զի զայս ցուցանէ ասելն. * և ,, ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա ‖ ։ Յակոբ նահապետ 'ի մեկնիլն յաշխարհէ՝ խաչաձև ձեռամբք օրհնեաց զորդիսն յովսեփայ. (Ծնն. խը̃. 14.) սոյնպէս և տէրն մեր. որով իբր զրաւ ետ մեզ զձև խաչին. Նաև վերացուցանելով զձեռս իւր՝ կամեցաւ ցուցանել մեզ զվէրսն, առ 'ի յիշել մեզ՝ թէ վիրօք նորա ազատեցաք 'ի դատապարտութ̃է անիծից, և ժառանգեցաք յօրհնութիւնն այ̃.

Ի վերանալ եղիայի օրհնեաց զեղիսէ, և եթող նմա զմաշկեակն. (Դ̃. Թագ. Բ̃. 12.) սոյնպէս օրհնեաց զմեզ և տէրն մեր. և եթող մեզ ոչ եթէ զմաշկեակն, այլ զզանազան խորհուրդս եկեղեցւոյ, մանաւանդ ըզխորհուրդն հաղորդութեան, նա՝ զինքն իսկ՝ ասելով. * ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ,, 'ի կատարած աշխարհի ‖. (Մատ. իը̃. 20.) և զինչ քան զայս օրհնութիւն մեծ.

Դարձեալ՝ 'ի վերանալն անդ եհեղ 'ի մեզ զօրհնութիւնս մեծամեծս, այսինքն զազգի ազգի շնորհս, եւ և զաղբիւրն շնորհաց զհոգին սուրբ. Զամս երիս և զամիսս վեց զրկեալ էին իսրայելացիք յանձրևոյ. եւ ամպ մի 'ի ծովէ, և տեղաց յերկիր անձրև առատ. (Գ̃. Թագ. ժը̃. 44.) Իսկ ազգ մարդկան զամս հազարաւորս զրկեալ էին 'ի շնորհաց հոգւոյն սրբոյ. եւ յերկինս որդին այ̃ 'ի ծովէ աշխարհիս, և էջ հոգին սուրբ, և տեղաց անձրև շնորհաց 'ի մեզ. վասն որոյ ասէր առ առաքեալսն. * լաւ է ձեզ՝ եթէ ես երթամ. զի եթէ ,, ես ոչ երթայց՝ մխիթարիչն ոչ եկեսցէ առ ձեզ. ապա ,, եթէ երթամ՝ առաքեցից զնա առ ձեզ ‖. (Յովհ. ժզ̃. 7.) Զայս ամենայն հայելով մարգարէին՝ ասէ, համբարձաւ այ̃ծ օրհնութ̃բ.

Եւ յաւելու ևս ասել. և տէր մեր ձայնիւ փողոյ. Այս ձայն փողոյ է նմանալի ձայն հրեշտակաց. որովք վերանայր տէրն մեր յերկինս. Ադամ սրով հրեշտակաց արտաքսեցաւ 'ի փառաց դրախտէն. իսկ տէրն մեր փողով հրեշտակաց եմուտ 'ի փառս.

Այսու նշանակի և այն ձայն հրեշտակաց՝ զոր յաւուրն համբարձման հնչեցին առ առաքեալսն. քանզի 'ի պշնուլ նոցա ապշութ̃բ ընդ երկինս՝ փողեցին առ նոսա հրեշտակք. * արք գալիլեացիք զի կայք հայե-,, ցեալ ընդ երկինս ‖. եւն̃. (գործ. ա̃. 11.) որով և ցուցաւ նախ՝ թէ որք զհետ համբարձելոյն յերկինս յաւլին, յերկնից անտի ուսանելն զխորհուրդ գալըստեան նորին՝ եթէ զառաջնոյն և եթէ զերկրորդին ։ Երկրորդ՝ թէ սոսկ յառելով յերկինս՝ ոչ լինի գնալ անդ, այլ պիտոյ է և գալիլեացի գոլ. այսինքն աշխատասէր 'ի գործս առաքինութեան ։ Պետրոս առաքեալ կամեցաւ նախ քան զաշխատելն զմայլել միշտ 'ի Թաբոր լերին, և ոչ իմացաւ, թէ անդ բանքն էին զելիցն յոհի, այսինքն զչարչարանաց նորա. վասն որոյ ոչ գիտէր զինչ կամէր. (մարկ. Թ. 5։)

Այսու ձայնիւ փողոյ նշանակի և սքանչելին այն ձայն տեառն՝ զոր 'ի համբառնալն բարբառեցաւ առ հրեշտակս. հնձան հարի միայն 'ի խաչին, և 'ի հեթանոսաց ոչ ոք էր ընդ իս. (եսայ. կգ. 1։) Եւս և յաւետարանելն առ նոսա, թէ ուրախ եղերուք ընդ իս, զի ես իջեալ յերկնից գտի զոչխարն իմ զկորուսեալ, և զդրամն իմ՝ զոր խնդրէի. (ղուկ. ԺԵ. 6։) Եւս և յաւետել դարձեալ, թէ կատարեցի զամենայն զոր միանգամ գրեալ էին վասն իմ մարգարէք, և ահա գամ և մտանեմ 'ի փառս Թագաւորութեան իմոյ ։ Յովսէփ նահապետ նախանձու վաճառեալ անարգ գընոյ՝ մատնեցաւ և կապեցաւ. և մեկնեալ զտեսիլն՝ ամբարձաւ 'ի փառս, (ծնն. խա. 41.) և եղև օրինակ տեառն մերոյ. որ նախանձու մատնեալ և գործովք իւրովք զտեսիլս մարգարէութեանց մեկնեալ՝ համբարձաւ յերկինս ։

Եւ որպէս երեւի յաւետարանէ՝ յորում ժամու խաչեցաւ տէրն մեր, 'ի նմին ժամու համբարձաւ, այսինքն 'ի վեցերորդ ժամու 'ի հասարակ աւուր. զի յայտնի երևեցի համբարձումն նորա. և որպէս առաւ՝ յորում ժամու արտաքսեցաւ ադամ յերկրաւոր Թագաւորութենէ իւրմէ, 'ի նմին ժամու՝ այսինքն 'ի հասարակ աւուր եմուտ քս 'ի Թագաւորութն երկնաւոր ։ Ասացի * 'ի հասարակ աւուր ‖. այսինքն 'ի միջօրէի, զի կերեալ զճաշ ընդ աշակերտսն այնպէս ել 'ի լեառն ։ Նաև զի աշակերտքն յետ համբառնալոյ տն իջին 'ի լեռնէ անտի ձիթենեաց և գնացին 'ի նմին աւուր յերուսաղէմ որ մերձ էր ըստ շաբաթու ճանապարհի, այսինքն է երեք մղոն. (զի որովհետև յաւուրս շաբաթուց զերիս մղոնս միայն ճանապարհորդէլն Հրէայք,) յայտնանէ երեք մղոն ճանապարհ աւուր ճանապարհ ըստ շաբաթու :

Իսկ պատճառ 'ի լեռնէ Ձիթենեաց համբառնալոյ տն այս երևի լինել, զի էր տեղի ապահովագոյն և անկակած. յոյր սակս իսկ հրամայեաց աշակերտաց իւրոց անդր ժողովիլ մօտ 'ի տեղին կոչեցեալ գալիլեա, որիշ 'ի գալիլէէ անտի՝ յորում էր Նազարէթ. որպէս գրէ ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. ԻԸ.) յասելն. * գալիլեա աստանօր (ուր գնացին առաքեալքն՝) ոչ եթէ
„ զգաւառէն ասէ, յորում Նազարէթ էր, այլ և էր տե-
„ ղի ինչ 'ի լերինն Ձիթենեաց՝ մերձ 'ի տեղին՝ ուր վե-
„ րացաւ յերկինս ‖ :

Իսկ ըստ խորհրդոյն ասելի է՝ թէ որովհետև 'ի ստորոտ լերինն Ձիթենեաց սկիզբն արար քս չարչարելոյ 'ի պարտիզին գեթսեմանի՝ 'ի լեռնէ անտի համբարձաւ փառօք : Եթող անդ ըստ աւանդելոյ բազմաց և զոտից իւրոց զհետս 'ի վիմի, զի լիցի նշան գալոյ նորա առ մեզ, և գնալոյ. ես և լիցի իբր յորդոր հետևելոյ մեր հետոց նորա. ըստ այնմ. (ա. պետ. բ. 21.) * քս
„ վասն ձեր մեռաւ, և ձեզ եթող օրինակ, զի զհետ
„ երթայցէք հետոց նորա ‖ : Այլ թէ 'ի մտանել քի յերկինս, ո՛րպիսի տօն ցնծութեան եղև անդ՝ մեզ անհաս է և անճառելի. այսչափ ինչ ունիմք յաւանդութենէ՝ թէ ինն դասք հրեշտակաց զաւուրս ինն տօն ուրախութեան կատարեցին, որպէս յայտնեցաւ լուսաւորչին մերոյ 'ի հրեշտակէ իւրմէ. ('ի շարականսն. կանոն կդ :)

Ի մտանել դաւթի յերուսաղէմ ժողովուրդք ընդ առաջ նորա ելեալ՝ ցնծային և պարս պարէին, նուագէին և աղաղակէին վասն յաղթութեանն՝ զոր արար նա ընդդէմ գողիաթու (ա. թագ. ժը. 7 :) Թողում պատմել զհանդիսից զորս առնէին հռովմայեցիք 'ի մտանել յաղթանակողի 'ի քաղաք անդր : Օ ինչ ապա պա՛րտ իցէ ասել՝ թէ ո՛րպիսի խնդալի հանդէսք կատարեցան յերկնաւորաց 'ի համբառնալ և 'ի մտանել տեառն յերկինս 'ի թագաւորութի յաւիտենական յետ ամենազօր մեծի յաղթութէն՝ զոր արար ընդդէմ սատանայի և դիւաց, մահու և դժոխոց, ախտից և մեղաց : Ի հրաշալի հանդէս սոյն հայելով մարգարելն, և իբր 'ի հեռուստ լսելով զձայն օրհնութեան սոցա՝ աղաղակէ առ ամենեսեան կցորդիլ այնոցիկ օրհնութեանց 'ի ձեռն սաղմոսաց· և յայս խորհուրդ յարէ զկնի և ասէ։

Է· **Սաղմոս ասացէք այ՟ մերում· սաղմոս ասացէք թագաւորին մերում· սաղմոս ասացէք։**

Սաղմոս ասելն ըստ որում աստ դնի՝ նշանակէ երգել զերգս հոգևորս· և այս՝ ըստ երից· մի՝ ըստ օրհնութեան, որ հայի 'ի բարութիւնն աստուծոյ յինքեան· երկրորդ՝ ըստ շնորհակալութեան կամ գոհութեան՝ որ հայի 'ի բարութիւնն այ՟ առ արտաքս, որով նշանակի բարերարութի՟ն նորա· երրորդ՝ ըստ աղաչանաց, որ հայի 'ի խնդիր բարեաց, այսինքն յընդունիլ յայ՟ զբարիս, և պաշտպանեալ լինել նովաւ 'ի չարէ· ըստ առաջնոյն ասէ։

Սաղմոս ասացէք այ՟ մերում։ Այսինքն մատուցէք այ՟ զերգս օրհնութեան՝ ցնծալով ընդ փառս նորա, ընդ վայելչութիւն նորա, և ընդ ամենայն կատարելութ՟իս նորա։ Զայս բան որպէս և տեսանես՝ ոչ ուղղէ մարգարէն սոսկ առ իսրայէլացիս, այլ անորոշակի առ ամենայն ազգս· և զի բազումք յազգաց պաշտէին զա՟ծս օտարս, և նոցա մատուցանէին զա՟ծավայել օրհնութիւնս, յորդոր լինի՝ մի այսպիսի ա՟ծոց տալ զօրհնութիւն, այլ այ՟ իսրայէլի, որ է ա՟ծ ճշմարիտ։

Իսկ յայն սակս յաւելու դնել զբառդ մերում, որպէս թէ ասէր, միայն այ՟ մերում վայել է օրհնութիւն, ուստի նմա միայնոյ ասէ մատուցէք զայն, և ոչ ա՟ծոց ձերոց· զի նոքա չեն ինչ, այլ և ոչ առնեն ումեք բարի ինչ· իսկ ա՟ծ մեր բարի գոլով՝ բարի առնէ ամենեցուն· որով տիրէ և թագաւորէ 'ի վերայ ամենեցուն· և առ այս կրկնէ յորդոր լինի սաղմոսել գոհութ՟բ ըստ երկրորդ եղանակի յասելն։

Սաղմոս ասացէք թագաւորին մերում։ Կամի ասել պարտ է սաղմոս ասել այ՟ մերում ոչ միայն վասն այնորիկ՝ զի է ա՟ծ ճշմարիտ յանսահմանս բարի, այլ և վասն այսորիկ՝ զի է թագաւոր մեր· վասն զի նա ազատելով զմեզ 'ի թշնամեաց մերոց՝ արար զմեզ իւր ժողովուրդ, և թագաւորեաց 'ի վերայ մեր, և իբրև թագաւոր մեր ուղղէ և կառավարէ զմեզ. և զամենայն ինչ՝ որ է բարի՝ ցուցանէ առ մեզ, և 'ի նոյն առաջնորդէ. վասն որոյ և արժան է մատուցանել նմա զերգս գոհութեան, այսինքն գոհանալ զնմանէ, և շնորհս մատուցանել բարերարութեանց նորա։

Իսկ յաւելլով զբառդ մերում՝ կամի ցուցանել, թէ թէպէտ և հեթանոսք ունէին իւրեանց թագաւոր, բայց նոքին էին համգոյն ինքեանց մարդիկ տկարք և անարգք, և թագաւորութիւն նոցա ոչ է յինքեանց, այլ տուեալ յազգաց իւրեանց. իսկ թագաւոր մեր՝ է Ա̃ծ ամենաբարի. և այնչափ մեծ, մինչլի այլ ամենայն թագաւորութիւնք և իշխանութիւնք կախեալ կան զհաճութենէ նորա. և ոչ կարեն առնել ինչ առանց ակնարկութե̃ նորա. և ոչ ևս կարեն յամենայնի օգնել՝ որոց միանգամ դիմեն առ նոսա, զի կամ ոչ կամին, և կամ զոր կամին՝ ոչ կարեն. իսկ թագաւոր մեր կամի յամենայնի զբարին, և զամենայն զոր կամի կարէ. սմին իրի յայս ևս յորդոր լինելով յաւելու զերրորդ եղանակ սաղմոսելոյ և ասէ։

Սաղմոս ասացէք։ Կամի ասել. որովհետև բարի է Ա̃ծ, և յամենայնի բարի կամի և բարի առնէ, ապա արժան է սաղմոսիւք պաղատանաց խնդրել 'ի նմանէ զբարիս ըստ ամենայն իրաց, այսինքն ըստ օգնականութեան և ըստ պաշտպանութեան, ըստ զօրացուցանելոյ և ըստ խնամելոյ, և այլն։

Նաև զոր մեք այսու տրոհմամբ եդաք զեղանակ սաղմոսելոյն, հնար է առանց տրոհելոյ ևս դնել, և ըստ այսմ երիցս կրկնելն աստ զբառդ սաղմոս ասացէք, ցուցանէ զառաւելութիւն սաղմոս ասելոյն ըստ երից. մի՝ ըստ սաղմոսելոյն, այսինքն ըստ գերազանցութեան այնր՝ առ որ ասելի է սաղմոսն, և ըստ այսմ կամի ասել. արժան է օրհնել զԱ̃ծ սաղմոսիւք, զի նմա միայնոյ վայելեն սաղմոսք, օրհնութիւնք, ալէլուք, և այլն։ Երկրորդ՝ ըստ սաղմոսողին, և ըստ այսմ կամի ասել. արժան է յամենայն սրտէ ցնծալից ուրախութե̃՝ հոգւով և մտօք սաղմոսել առ Ա̃ծ։ Երրորդ՝ ըստ սաղմոսին, և ըստ այսմ կամի ասել. յամենայնի և միշտ զամենայն կարելի օրհնութիւն արժան է մատուցանել Ա̃յ։ Իսկ եթէ հայեսցուք 'ի հեղինակ սաղմոսիս, այս

երիցս կրկնումն ցուցանէ զբորբոք ախորժմանց նորա, որով ոչ յագի միանգամ ասել, սաղմոս ասացէք այլ երիցս ։ Եւ կամ ըստ գրելոյ լամբ"․ այս * կրկնաբա-
„ նութիւն հրամանատարութեն զատուել զեղումն ու-
„ րախութեանն նշանակէ ․ որով արքեալն էր (սաղմոս-
„ երգուն) ․ ․ ․ ․ զի այս է բնական կիրք մեր, յինչ որ
„ վարակի միտքս հաւատով եւ սիրով՝ ոչ յագի 'ի կրկ-
„ նաբանելն ‖ ։

Այլ եթէ հայեսցուք 'ի խորհուրդն՝ առաջինն սաղմոս ասելն հայի 'ի հայր, երկրորդն յորդի, եւ երրորդն 'ի հոգին սուրբ, որ է օրհնեալ 'ի միութեան ա̄ծութե̃ ։ Բարոյապէս առեալ՝ այս երրեակ կրկնութ̃ի ցուցանէ թէ արժան է սաղմոս ասել մտօք, կամօք, եւ վայելուչ բանիւք ․ կամ միով բանիւ ասացից, արժան է սաղմոս ասել առ ա̄ծ իմաստութ̃բ ․ եւ զայսմանէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն, 'ի մէջ բերելով նախ զմեծութիւն այնր, առ որ լինի սաղմոսել, յասելն ։

է․ Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ա̄ծ է, սաղմոս ասացէք նմա իմաստութ̃բ ։

Բառդ Թագաւոր՝ նշանակէ թագ ունօղ, եւ զի թագն է նշան իշխանութեան, թագաւորն նշանակէ ունօղ իշխանութեան ։ Այլ սակայն այսպիսիս յայնժամ ասի տիրապէս թագաւոր, յորժամ ոչ է ընդ իշխանութ̃բ այլոց, այլ իշխօղ 'ի վերայ այլոց, որպէս թագն ոչ է ընդ այլովք, այլ 'ի վերայ այլոց՝ դրեալ 'ի վերայ գլխոյ ․ իսկ եթէ չիցէ այսպէս, անուամբ միայն եւ ըստ նիւթոյն այսինքն ըստ ունելոյն զթագ՝ ասի թագաւոր ։ Եւ քանզի չէք 'ի վերայ երկրի թագաւոր ոք՝ որ չիցէ ընդ իշխանութեամբ այլոց՝ գոնէ ընդ իշխանութ̃բն ա̄յ, գրեթէ անուամբ միայն են թագաւոր, եւ ըստ ունելոյ զիշխանութիւն ինչ 'ի վերայ սակաւուց եւեթ, եւ ոչ 'ի վերայ բոլոր տիեզերիս, եւ այն եւս առ փոքր մի ժամանակ ․ վասն որոյ տիրապէս խօսելով պարտին կոչիլ թագաւորիկք կամ թագաւորականք, եւ կամ առաւելն՝ թագաւորք փոքունք, եւ փոքունց ։ Միայն ա̄ծ է 'ի վերոյ քան զամենայն ամենիշխան ինքնազօր թագաւոր յաւիտենական ․ ուստի եւ ինքն միայն է թագաւոր մեծ ․ ամին իրի ասէ ։

Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ա՟ծ է։ Կամի ասել. ա՟ծ է միայն Ճշմարիտ Թագաւոր. զի նա է միայն Թագաւոր մեծ։ Իսկ այս մեծութ՟ի Թագաւորութ՟են ա՟յ մնամբի ըստ բազում իրաց. մի՝ զի ինքն է տուող և պահօղ, կացուցիչ և գոյացուցիչ ամենայն Թագաւորութ՟եց, և ոչ ընդունօղ յայլմէ զայն։ Երկրորդ՝ զի ամենայն Թագաւորութ՟իք յա՟մի կախին զնմանէ, և ինքն ոչ կախի զայլմէ։ Երրորդ՝ զի զամենայն միով բանիւ կառավարէ ըստ ա՟մի և յամենայնի՝ որպէս և կամի, ոչ միայն առ արտաքին գործս նոցա, այլ և առ ներքինսն՝ ըստ խորհրդոց մտաց և ըստ շարժման անձնիշխան կամաց։ Չորրորդ՝ զի է Թագաւոր ըստ ամենայնի և յամենայնի կատարեալ, ամենևին արդար, և յամենայնի ուղիղ, և ոչ ոք ունի իրաւունս մտածելոյ կամ ասելոյ՝ թէ այս ինչ այսպէս պարտ էր լինել քան զոր նա ինքն իւրով անսահման իմաստութ՟բ կարգէ և տնօրինէ. Թէպէտև անհաս գոլով մեզ՝ ոչ կարեմք զա՟մ ուղղութ՟ն ըմբռնել. վասն որոյ Թիւրիմք երբեմն 'ի մտածման մերում։ Հինգերորդ՝ զի զամենայն էս յոչընչութ՟ն պահելով՝ զա՟մն ունի 'ի ձեռին իբրև զմի ինչ ըստ գոլոյ և ըստ գործելոյ նոցա։ Արդ ա՟ծ Թէպէտև յերկինս և յերկրի և յա՟մի է այսպիսի ինքնիշխան Թ՟գր, բայց մարգարէն առ մարդիկ խօսելով՝ զերկիր միայն 'ի մէջ բերէ, որովհետև մարդիկ յերկրի գոլով՝ զերկրաւոր Թագաւորս ևեթ տեսանեն, սմին իրի ասէ, **Թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ա՟ծ է.** որպէս թէ ասէր. որպիսի Թագաւոր և գտցի 'ի վերայ երկրի, փոքր է և չնչին, միայն ա՟ծ է Թագաւոր մեծ։ Իսկ այսմ կամի հետևեցուցանել, թէ որովհետև նա այսպիսի Թագաւոր է, իրաւամբք ասացի, սաղմոս ասացէք նմա. իսկ թէ որպէս պարտ իցէ սաղմոս ասել այնպիսի Թագաւորի, յայտ առնէ ասելով։

Սաղմոս ասացէք նմա իմաստութեամբ։ Իմաստութեամբ սաղմոսել մարդոյ առ ա՟ծ ըստ երից լինի. մի՝ ըստ ներգործութեան մտաց, այսինքն Ճանաչելով՝ թէ ով է նա՝ որում սաղմոսէ, և ով է ինքն՝ որ սաղմոսէ. զինչ է այն՝ զոր սաղմոսէ, և զինչ այն, որով սաղմոսէ, այսինքն թէ զիարդ սաղմոսէ. զի ոչ ոք առնէ ինչ իմաստութ՟ի, եթէ ոչ ծանիցէ՝ զոր առնէ ։ Երկրորդ՝ ըստ ներգործութեան կամաց, որ և առ ի սաղմոսել հոգւով, և այս լինի՝ յարելով յա՟ծ՝ սիրով, ախորժանօք և ուրախութ՟ի, միանգամայն և պատկառանօք. յոր միտս ասէ առաքեալն. * սաղմոս ասացից հոգւով (ըստ ներ„ գործութ՟ն կամաց.) սաղմոս ասացից և մտօք‖. (ա՟. կոր. ժ՟դ. 15 ։) Երրորդ՝ ըստ արտաքին ներգործութ՟ց. իբր զի լիցի և առ արտաքս պարկեշտութ՟ի և ըստ կարգի, թէ՛ 'ի կողմանէ սաղմոսողին, և թէ 'ի կողմանէ տարազուն և եղանակին ։

Յաւե՛լ 'ի սոսա և զայն՝ թէ յայնժամ իմաստութ՟ի սաղմոսէ մարդ, յորժամ 'ի սրտէ իւրմէ և իբր յինքենէ բղխէ զբանն 'ի սաղմոսէն, և ոչ իբր յայլմէ. յայս միտս գրէ գրիգոր արշարունի ('ի մեկն. ընթերց. 'ի կոչ. ընծայ. երես 26.) * յորժամ (ասէ) կայ մարդ „ յաղօթս սաղմոսելով՝ մի՛ ասիցէ 'ի սրտի իւրում՝ „ թէ դաւթի են սաղմոսքս. այլ այնպէս համարեսցի, „ թէ ինքն յինքենէ ասէ զսաղմոսն‖ ։ Իսկ եթէ դու 'ի սաղմոսելդ և յաղօթելդ տեսցես զքեզ թոյլ և յոյլ, ցնդեալ կամ պղտորեալ, զմտաւ ած, թէ քանի՛ք յայնմ ժամու արտասուօք սաղմոսեն, և եռանդագին աղօթեն. և զնոցայն մատո՛ ա՟յ. տէ՛ր զոր նոքա ասեն և առնեն, ես ևս զնոյն ասեմ, զնոյն կամիմ. ընկա՛լ զնոցայն ընդ իմ ։ Օ մտաւ ած ես, թէ երբեմն զիա՛րդ բարւոք և իմաստութ՟ի սաղմոսէիր. և ասա՛, զոր երբեմն արարի բարեպէս՝ զայն մատուցանեմ քեզ ա՟ծ իմ. և զոր լաւով պաղատէի՝ զնոյն ընծայեմ ։ Յուսկ յետոյ՝ միաւորեա՛ զաղօթս և զսաղմոսս քո ընդ արդիւնս ք՟սի, և զայն մատո՛, ասելով, հայեա՛ց յերեսս օծելոյ քո, յերեսս անսահման իմաստութ՟ն. և ընկա՛լ զորս մատուցանեմ առանց իմաստութեան ։

Ըստ հաստատելոյ ոմանց և ըստ վարդանայ, յերկոսին համարոտ երկիցս յիշելով մարգարէին զթագաւորն, և դարձեալ յերրորդումն զա՟ծ, լռելեայն տայ իմանալ զհայր և զորդի և զս՟բ հոգի. զհայր՝ յասելն ա՟յ մերում. զորդի՝ յասելն՝ թագաւորին մերում. և զսուրբ հոգին՝ յասելն՝ թագաւոր մեծ. և սովաւ յորդորէ յերեսին անձինս միոյ ա՟ծութեանն սաղմոս ասել իմաստութ՟ի ։ Արդ յայտ արարեալ մարգարէին զմեծութիւն թագաւորութե՟ն ա՟յ՝ ըստ այնմ՝ որ էր, յայտ առնէ այժմ և զմեծութ՟ի թագաւորութ՟ե նորա՝ ըստ այնմ որ եղև, այսինքն ըստ այնմ որ ցուցաւ։ Սմին իւր յարէ զկնի և ասէ։

Ը. Թագաւորեաց ա՟ծ 'ի վերայ հեթանոսաց. ա՟ծ նստաւ յաթոռ սրբութե՟ իւրոյ։

Թէպէտև 'ի վերայ ամենայն ազգաց թագաւորէր ա՟ծ, և թագաւորէ միշտ, բայց այլ և այլ օրինակաւ. 'ի վերայ իսրայելացւոց թագաւորէր յայտնելով զինքն 'ի ձեռն պէսպէս իրաց, ևս և ընտանեբար առաջնորդելով նոցա, և հայրաբար խնամելով զնոսա, օգնելով և պաշտպանելով։

Իսկ 'ի վերայ հեթանոսաց թագաւորէր՝ ըստ հասարակ ևեթ տեսչութեան կառավարելով. ուստի հեթանոսք ըստ որում էին այնպիսի, ո՛չ ունէին ո՛չ մասնաւոր յայտնութ՟ի յա՟յ, և ո՛չ ընտանի առաջնորդութ՟ի, ո՛չ յատուկ պաշտպանութիւն, և ո՛չ հայրական խնամք։ Ո՛չ զի ա՟ծ մերժեալ էր զնոսա, այլ զի ո՛չ այնու օրինակաւ կառավարէր զնոսա, և ո՛չ նովին տարազու պաշտեալ լինէր 'ի նոցանէ, որով օրինակաւ կառավարէր զիսրայէլ, և պաշտիւր 'ի նոցունց. վասն այսորիկ ըստ օրինակի կառավարելոյն, և ըստ տարազու պաշտեալ լինելոյն խօսելով՝ մարթ է ասել՝ թէ անյայտաբար թագաւորէր ա՟ծ 'ի վերայ հեթանոսաց, և յայտնապէս 'ի վերայ իսրայելացւոց։

Իսկ 'ի վախճան աւուրց՝ իբրև եկն նա առ իսրայէլ, 'ի մերժել նոցա զնա և յաղաղակել, չէք մեր թագաւոր բաց 'ի հեթանոս կայսերէ, փոխեաց ա՟ծ ըստ նահապետին յակոբայ զձեռն իւր (Ծնն. խ՟ը. 4.) և ընտրեալ յիսրայելէ զառաքեալս և զաշակերտս առաքեաց զնոսա 'ի հեթանոսս՝ իբրև զոստիկանս, և նոքիմբք դարձուցեալ զնոսա առ ինքն՝ տիրապէս թագաւորեաց 'ի վերայ նոցա. (զորմէ տես 'ի թուղթսն պօղոսի առ հռովմ. գլուխ Թ. և Ժ. մանաւանդ գլուխ ԺԱ։) Յայս օրինակ թագաւորելոյն ա՟յ հայելով՝ ասէ մարգարէն։

Թագաւորեաց ա՟ծ 'ի վ՟ր հեթանոսաց։ Սովին կամի հայեցուցանել զմեզ յայն՝ զոր ասաց ('ի համարն 1.) ծափս հարկէք ամենայն հեթանոսք, և այլն. որպէս թէ ասէր. արժան է հեթանոսաց ցնծալ. իսկ թէ ընդէ՞ր. պատասխանէ. վասն զի ասէ թագաւորեաց ա՟ծ 'ի վերայ նոցա բազում առաւելութեամբ քան 'ի վերայ իսրայէլացւոց. մի՛ ըստ զեղլոյ 'ի նոսա զամենայն շնորհս, և ըստ ազատ կացուցանելոյ զնոսա յաւելորդ պաշտամանց. մինչև ասել նոցա, ոչ եմք ընդ օրինօք այլ ընդ շնորհօք: Երկրորդ՝ ըստ ներկայ լինելոյ առ նոսա յամենայնի պէսպէս օրինակաւ, մանաւանդ թէ կալով ընդ նոսա իբրև փեսայ ընդ հարսին. մինչև ասել նոցա զնմանէ. * սիրելին 'ի սենեակ մեր... բարձրասցի թագաւոր մեր յըշտեմարանս և 'ի դահոյս մեր||. (երգ ը՟. 15. և այլն:) Երրորդ՝ ըստ հանապազորդելոյ թագաւորութեան նորա 'ի մէջ նոցա մինչև 'ի կատարած աշխարհի. ըստ այնմ. * զի թագաւորութեան նորա (որ 'ի վերայ հեթանոսաց) վախճան մի՛ լիցի||: Զ՟այս եղեալ՝ խօսի ապա և զաթոռոյ թագաւորութեանն ասելով:

Ա՟ծ նստի յաթոռ սրբութեան իւրոյ: Այս բան հայի 'ի համարն 5. ուր ասաց. * համբարձաւ ա՟ծ օրհնութ՟բ||: Հայի միանգամայն և 'ի նախընթաց հատուածդ. այն է. * թագաւորեաց ա՟ծ 'ի վերայ հեթանոսաց||: 'Ի սոսա հայելով՝ միտ բանին լինի այս. որդին ա՟յ յետ կատարելոյ զամենայն՝ համբարձաւ յերկինս, և նստաւ յաթոռ սրբութ՟ե ընդ աջմէ հօր, և անդ նստելով՝ թագաւորեաց 'ի վերայ հեթանոսաց, և անտի վարէ զթագաւորութիւն իւր:

Այսու աթոռով նշանակի բարձրութիւն փառացն ք՟ի, և իշխանութիւն նորա 'ի վերայ ամենայնի՝ որ ինչ յերկինս և որ ինչ յերկրի. և այս ամենայն՝ փոխաբերութ՟բ այլաբանի յաթոռ. զի աթոռն է արտաքին ինչ նշան փառաց և իշխանութ՟ե. և զի նշանն դնի երբեմն փոխանակ այնր՝ որոյ է նշան, սմին իրի զնշանն միայն դնէ, կամելով ցուցանել թէ ք՟ս նստաւ 'ի բարձրութ՟ե փառաց և իշխանութ՟ե, որ նոյն է թէ ասէր. բարձրացաւ 'ի փառս և յիշխանութիւն, ոչ իբր յօտարի՝ այլ իբր յիւր. որոյ վասն ասէ, սրբութ՟ե իւրոյ:

Իսկ ասելովն նստի՝ կամի իմացուցանել զանփոփոխութիւնն և զանշարժութ՟ին. զի նստիլն է իբր հանգչիլ, ա-

քով օրինակի անշարժութ՟ի կամ անփոփոխու՟ի իւրն. և ըստ որում գրէ գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ. գլ. Է.) * Նշանակէ նստելն և զհաստատութ՟ին, զան-
,, եղծութիւնն, զմիշտ կենդանութ՟ին ըստ երեմիայի,
,, (յասելն առ ա՟ծ) թէ մեք կորնչիմք, և դու նստիս
,, յաւիտեան‖. ապա և մարգարէն առ 'ի ցուցանել զանփոփոխութ՟ի և զհաստատութ՟ի թագաւորութ՟են ք՟ի՝ դնէ նստիլ յաթոռ սրբութ՟ե:

Իսկ ՍՐԲՈՒԹ՟Ե դնելով՝ կամի ասել՟ը. որպէս թէ ասէր. նստաւ յաթոռ իւր սուրբ, կամ նստաւ 'ի սուրբ աթոռ իւր: Այս սրբութիւն երրակի մտածի. մի՝ ըստ ինքեան, զի է ամենևին սուրբ. երկրորդ՝ ըստ զեղլյ զսրբութիւն առ ամենեսին. երրորդ՝ ըստ թագաւորելոյն սրբութ՟ե. որպէս թէ եղեալ էր. ա՟ծ՝ որ կայ 'ի սրբութ՟ե, և զեղու զսրբութիւն, թագաւորէ սրբութ՟ե 'ի վերայ հեթանոսաց:

Եւ ըստ այսմ թէպէտ պատշաճագոյն ևս երևէր դնել՝ արդարութիւն քան թէ սրբութ՟ի, բայց հայելով յիրն՝ առաւել ևս պատշաճագոյն էր դնել սրբութիւն՝ քան արդարութիւն. զի աստ ո՛չ խօսի զդատելոյն, այլ զհոգևորապէս կառավարելոյն, և զի այս հոգևորական կառավարութիւն կատարի պէսպէս սրբութ՟եք, վասն որոյ յաւէտ արժան էր սրբութ՟ի դնել քան արդարութիւն: Դարձեալ այս աթոռ կոչի սուրբ՝ հայելով և առ նոսա, յորս նստի ա՟ծ, այսինքն են սերովբէք, և քերովբէք, և աթոռք, յորս փոխաբերութ՟ե ասի նըստիլ ա՟յ. ևս և հոգիք սրբոց, յորս բնակի ա՟ծ:

Այս առաջնիկայ բնաբան, որ է յայտնի մարգարէութ՟ի թագաւորելոյն ք՟ի, կարէ ըստ ձայնին հայիլ և յայն ա՟մ գործս՝ զորս եցոյց ա՟ծ 'ի մէջ իսրայէլի՝ հայելով առ հեթանոսս. իբր զի ինքն նստեալ 'ի տապանակի իբր յաթոռ սուրբ՝ թագաւորէր և 'ի վերայ հեթանոսաց՝ ո՛չ ըստ օրինի թագաւորութեան, այլ ըստ օրինի տէրութ՟ե. կամ ո՛չ հայրաբար, այլ տիրաբար. և կամ ո՛չ իբրև թագաւոր նոցա, այլ իբրև տէր նոցին. զի գոլով թագաւոր իսրայէլի՝ տիրէր և 'ի վերայ հեթանոսաց պէսպէս օրինակաւ, երբեմն նուաճելով և երբեմն վանելով, երբեմն պատժելով և երբեմն զարհուրեցուցանելով, և այլն: Այլ այս ամենայն էր իբր նախապատրաստութիւն դառնալոյ նոցա առ ա͞ծ, և լինելոյ ժողովուրդ նոր՝ հանդերձ իւրեանց իշխանօք, և թագաւորօք, զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով:

Ժ. **Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ ա͞ծ աբրահամու. զի ա͞յ զօրաւորք երկրի յոյժ համբարձան:**

Յայտ է ամենեցուն ուխտն այն՝ զոր եդ ա͞ծ ընդ աբրահամու, յասելն նմա. * իմ ահաւասիկ ուխտ ընդ „ քեզ, և եղիցիս հայր բազմութեան ազգաց... և ե„ դից զքեզ յազգս, և թագաւորք 'ի քէն ելցեն‖. (Ծնն. ԺԷ. 4 = 7:) Նաև այլուր թէ * օրհնեսցին 'ի „ քեզ ամենայն ազգք երկրի‖. (Ծնն. ԺԲ. 3.) զոր պարտ է իմանալ ըստ հոգևորին. զի որպէս գրէ առաքեալն՝ * որք 'ի հաւատոց անտի (աբրահամու) են՝ „ նոքա են որդիք աբրահամու... և օրհնին ընդ հա„ ւատացելոյն աբրահամու‖. (գաղ. Գ. 7 = 9:) Որ և յաւելու առաքեալն ('ի համարն 14.) թէ այս յայնժամ կատարեսցի՝ յորժամ * 'ի հեթանոսս օրհնու„ թիւն աբրահամու եղիցի 'ի ք͞ս յ͞ս‖. այսինքն յորժամ օրհնեսցին և հեթանոսք հանդերձ ժողովրդովք և իշխանօք իւրեանց: Որպէս գրէ և իգնատիոս վարդապետ ('ի մեկն. ղուկ. գլ. ԻԴ. 46: Նաև 'ի գլ. ԺԳ. 29. ասէ) թէ * զայս մարգարէութիւն և անդ առաջի „ եդ՝ եթէ ամենայն հեթանոսք 'ի չորից ծագաց երկ„ րի ժողովելոց են առ ա͞ծ աբրահամու. և լինելոց են „ հաւատովք որդիք աբրահամու‖: Զայս ակնարկելով մարգարէն՝ ասէ:

Իշխանք ժողովրդոց ժողովեցան առ ա͞ծ աբրահամու: Որ իշխանք ասելով՝ իմանայ ո՛չ միայն զհասարակ իշխանս, այլ և զթագաւորս զանազան ազգաց և ժողովրդոց: Այսոքիկ թագաւորք և իշխանք ազգաց ասէ հաղորդ գտանելով հաւատոյն աբրահամու, հաղորդ գտան և ուխտին՝ զոր եդ ա͞ծ ընդ աբրահամու. ուստի և 'ի քարոզիլ հաւատոյ 'ի ձեռն առաքելոց՝ հաւատացին յա͞ծն աբրահամու՝ 'ի ք͞ս յ͞ս, և ժողովեցան առ նա, և եղեն եկեղեցի նորա սուրբ. և այս յաւէտ յետ համբառնալոյ նորա, և յետ քարոզութ͞ե առաքելոց. և զայս յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով:

Զի այ՟ զօրութիւնք յերկրէ յոյժ համբարձան : Մթին է յոյժ այս քան զոր չորեքկին հնար է մեկնել. մի՝ հայելով 'ի հանդէս համբարձմանն քի՟ (զոր եդ 'ի համարն 5.) և ըստ այսմ կամի ասել. 'ի համբառնալն այ՟ օրհնութեամբ յերկրէ՝ համբարձան ընդ նմա հանդիսիւ յոյժ և զօրութիք նորա՝ այսինքն փառք նորա, սքանչելիք նորա, հրեշտակք նորա, սբք՟ նորա, ևն. և նոյն էր թէ ասէր. ած՟ համբարձաւ յերկրէ՝ բազում զօրութբք. այսինքն բազում զօրօք, բազում փառօք, ևն. և կամ թէ համբարձաւ ած՟ յերկրէ յոյժ քան զամենայն զօրութիս և քան զամենայն զիշխանութիս. և 'ի լինել այսր կամ յետ այսր՝ իշխանք ազգաց ժողովեցան առ նա, այսինքն հաւատացին 'ի նա՝ և եղեն նորա :

Երկրորդ մեկնի՝ հայելով 'ի գործս այ՟, որք կոչին զօրութիք այ՟. ըստ որում կատարեն զօրութբն այ՟, և ցուցանեն զզօրութիւնն այ՟. և ըստ այսմ կամի ասել. գործք այ՟ կամ զօրութիւնք գործոյն այ՟ բարձրացան յոյժ՝ այսինքն փառաւորեցան յերկրէ՝ և յերկրաւորաց : Կամ զօրութիք գործոցն յի՟ գերազանց ցուցան յոյժ քան զո՟ և իցէ զօրութիս և զգործս՝ որք լինին յերկրէ և յերկրի յո՟ և իցէ ստեղծուածոց : Եւ վասն այսորիկ՝ այսինքն վասն այսպիսի լինելոյ զօրութեցն այ՟՝ թագաւորք և իշխանք հաւատացին 'ի նա, և ազգաց ամի՟ տեսեալ զայս՝ ժողովեցան առ նա :

Երրորդ մեկնի՝ հայելով 'ի թագաւորս և յիշխանս՝ որք կոչին զօրութիք կամ զօրաւորք այ՟, ըստ որում են զօրացեալք յայ՟՝ իշխանութբ և զօրութբ, կամ զի են կատարողք զօրութեցն այ՟, և կամ զի նոքիմբք ցուցանին զօրութիք այ՟. սոքա ասէ ժողովելով առ ած՟ աբրահամու՝ յոյժ համբարձան յերկրէ՝ այսինքն գեր 'ի վերոյ գտան. և այնու նաև զօրութին այ՟ համբարձաւ 'ի նոսա՝ այսինքն գերագոյն ցուցաւ : Եւ այս կարէ ասիլ նաև վասն հոգւոյ սբյ՟, որք հանեալք յերկրէ՝ այսինքն 'ի դժոխոց համբարձան ընդ քի՟ :

Չորրորդ մեկնի՝ հայելով յառաքեալս, որք լցեալք հոգւով սրբով՝ այնչափ զօրացան, մինչև գերազանցել քան զամենայն զօրութիւնս և իբրև թէ ամբարձեալ լինել յերկրէ յոյժ, և գործել զերկնայինս, և *կոչիլ իսկ զօրութիւնք այ, և զօրութե մեծաւ ժողովել առ ած զիշխանս երկրի. զի հնազանդելով նոցա նմա, և պաշտելով զնա յուղիղ հաւատս և 'ի բարի վարս՝ արժանասցին ժառանգել զփառս նորա:*

Եւ առ անտարակոյս ցուցանելոյ մարգարէին զայսոսիկ գուշակութիւնս՝ ո՛չ դնէ յապառնին, այլ յանցեալն. որպէս թէ եղեալ էր, այս խորհուրդ այնպէս է, որպէս թէ արդէն կատարեալ իցէ, զի 'ի վախճան աւուրց աներկբայ լինիցի այս, և տեւեսցէ յաւիտեան:

ՍԱՂՄՈՍ ԽԷ.

Գովութիւն մեծութեանն այ բնակելոյ 'ի տաճարն, և պաշտեալ լինելոյ նորա անդ յԵրուսաղէմ. միանգամայն և ցոյց պաշտպանելոյ նորա զայն քաղաք ընդդէմ թագաւորութեց երկրի. եւս և յայտարարութի փառաւորելոյ նորին ընդ ամենայն տիեզերս:

Սաղմոս օրհնութե որդւոյն Կորխայ. Երկրորդ շաբաթու:

1 Մեծ է տէր, և օրհնեալ է յոյժ 'ի քաղաք այ մերոյ, 'ի լերան սրբէ նր: 2 Հաստարմատ ցնծացէ ցնծութե ամենայն երկիր. լերինք սիոնի, կողմանք հիւսիսոյ՝ քաղաք թագաւորի մեծի: 3 Ած 'ի տաճարս իւրում յայտնի. 'ի ժամանակի որպէս օգնական լինէր նոցա: 4 Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան, և անցին 'ի միասին. 5 Ինքեանք տեսին այսպէս՝ և զարմացան. խռովեցան սասանեցան, և դողումն կալաւ զնոսա: 6 Անդ երկունք որպէս 'ի ծննդեան. 'ի հողմ սաստիկ փշրեսցէ զնաւս 'ի Թարսիս: 7 Որպէս լուաք, այնպէս և տեսաք 'ի քաղաք Տն զօրութեանց՝ 'ի քաղաք այ մերոյ: 8 Ած հիմունս արկ նմա յաւիտեան. ընկալաք ած ողորմութիւն քո 'ի մէջ ժողովրդեան քոյ: 9 Ըստ անուան քում, այնպէս և օրհնութե քո ընդ ամենայն տիեզերս. և արդարութե լի է աջ քո: 10 Ուրախ եղիցի լեառն սիոն. և ցնծացեն դստերք յուդայ, վասն իրաւանց քոց տէր: 11 Շրջեցարուք զսիոնիւ, պաշարեցէք զնա. և պատմեցէք զաշտարակս նո-

րա ։ 12 Դնէք զսիրտս ձեր 'ի վերայ զօրութեան նորա. բաժանեցէք զաշտարակս նորա, զի պատմել կարասջիք յազգ յազգ ։ 13 Սա է ա̅ծ, ա̅ծ մեր յաւիտեանս յաւիտենից. և սա հովուեսցէ զմեզ՝ մինչև յաւիտեան ։

ՎԵՐ՛ՆԱԳԻՐ

Սաղմոս օրհնութեան որդւոցն կորխայ. երկրորդ շաբաթու ։

ԻՎԵՐ՛ՆԱԳԻՐՍ ԵԲՐ″. ՓՈԽԱՆԱԿ բառիցս սաղմոս օրհնութեան գրի շիր մզմոր. այս է * երգ սաղմոսաց ‖. իսկ յեօթ″. դնի * գովութիւն երգոյ ‖. 'ի լատինն դնի * սաղմոս երգոյ ‖. յայլս * երգ սաղմոսաց ‖, և այլն. ամենեքին սոքա 'ի նոյն միտս հային, այսինքն 'ի սաղմոս օրհնութեան. (ըստ որում եդաք 'ի նախընթաց սաղմոս 6 ։ Իսկ վասն բառիդ որդւոցն կորխայ տե՛ս 'ի սաղմոս խա̅ ։)

ԲԱՅՑ յաղագս բառիդ երկրորդ շաբաթու՝ գիտելի է. զի այս ոչ գտանի 'ի բնագիրս եբր″. և ոչ 'ի գիրս ոմանց 'ի նախնի թարգմանչաց ։ Երևի թէ եօթանասունքն յաւելլին զայս՝ կամ այլք. զի առ ժամանակօք նոցա յաւուր երկուշաբաթի երգեալ լինէր այս սաղմոս, նաև այժմ ևս, որպէս արարչական երգն առ մեզ. կամ թէ ըստ ասելոյ ոմանց երգեալ լինէր այնու եղանակաւ՝ որ էր պատշաճեալ աւուր երկուշաբաթի ։ Իսկ թէ ո՛վ իցէ յօրինեալ զայս սաղմոս, և առ ի՛ն՝ բազում են կարծիք. ոմանք պնդեն՝ թէ դաւիթ ասաց զայս յազատիլն իւր 'ի ձեռաց ամենայն թշնամեաց, և 'ի խաղաղիլ յիւրումն իշխանութեան. և այլք թէ զկնի առնլոյ նորա զյեբուս քաղաք. որ յետոյ եղև քաղաք ա̅յ և քաղաք թագաւորի, և կոչեցաւ երուսաղէմ, և սիոն, և լեառն սուրբ ։ Ոմանք թէ զայս իցէ ասացեալ ոզիէլի որդւոյ զաքարիայ, կամ այլոյ ուրուք 'ի հոգեկիր արանց 'ի ժամանակս յովսափատայ արքային յուդայ, 'ի գալ 'ի վերայ նորա որդւոցն ամոնայ և մովաբու և սեիրիոյ. ուր 'ի սկսանիլ զօրհնութիւնն այ՟՝ աստուած ինքնին խորտակեաց զնոսա, և հանգոյց զժողովուրդ իւր. (զորմէ տե՛ս բ՟. Մնաց. ի՟. 1 = 31:) Ոմանք՝ թէ այս իցէ ասացեալ յեսայեայ յազատիլ աքազու 'ի ձեռաց ռասոնայ արքային ասորւոց, և փակիայ արքային իսրայէլի (դ՟. Թագ. 5 = 10:) Այլ այս կարծիք չունի ինչ տեղի: Ոմանք ևս 'ի ժամանակս եզեկիայ՝ յազատիլ նորա 'ի սպառնալեաց սենեքերիմայ արքային ասորեստանեայց (դ՟. Թագ. գլ. ժը՟. և ժթ: և բ՟. Մնաց. լբ՟. և այլն:) Բազումք ևս վերածեն զսա 'ի ժամանակս դարձի գերութեանն բաբելոնի՝ յորում ժամանակի բազմապատիկ օրինակաւ սքանչելի ցուցաւ մեծութիւնն այ՟ և փառք տան նորա ընդ ամենայն տիեզերս՝ սկսեալ յաւուրց անտի կիւրոսի մինչև յաւարտումն տաճարին:

Որպէս և դիցի, այս սաղմոս ասի իբրև գովութիւն երուսաղէմի և իբրև օրհնութիւն մեծութեանն այ՟ և պաշտպանութեան նորա՝ զոր ցուցանէր 'ի վերայ երուսաղէմի և 'ի վերայ ժողովրդեան իւրոյ. և զի այն ամենայն՝ որ գրի յայս սաղմոս, հայի 'ի վիճակ նոր եկեղեցւոյ, սուրբ հարք 'ի վերայ այնր մեկնեն զսա. և քանզի եկեղեցին նմանի հաստատութե՟ երկնից՝ որ ըստ նոցին սբ՟ հարց ասի արարեալ յաւուրն երկրորդի (ծնն. ա՟. 7.) զբառդ Երկուշաբաթի՝ որ դնի 'ի վերնագրեդ, յայն վերածեն:

Յայս հայելով՝ և զնախընթաց սաղմոսն՝ զոր մեկնեն 'ի վերայ քի՟, վերածեն յօր կիւրակէի, յորում աւուր ստեղծաւ լոյս, որ յանդիման առնէր զերևելի անստեղծ լուսոյն յաշխարհ, և զլուսաւորել նորա զտիեզերս: Այս մեկնուի՟ դնի խորհրդաբար զոր և մեք յընթացս մեկնութե՟ ունիմք յիշատակել. իսկ հարազատ մեկնութիւն մեր նկարագրաբար հայի յերուսաղէմ և 'ի տաճարն առանց որոշելոյ զժամանակն:

ԲԱՆ

ա̅. Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ 'ի քաղաքի ա̅յ մերոյ, 'ի լեառն սուրբ նորա:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Մեծ ասի իմն՝ որ առաւելեալն է յորքանութեան. և զի ա̅ծ ո՛չ ունի որքանութիւն, և ո՛չ իսկ կարէ ասիլ առաւելեալ, փոխաբերութ̃բ իմն ասի զնմանէ բառդ մեծ. ըստ որում յանբաւս է գերազանց և անհաս, ըստ երից. մի՝ ըստ կատարելութ̃ն գոլոյ, և երկրորդ՝ ըստ զօրութ̃ն գործելոյ, երրորդ՝ ըստ անփոփոխութեան տևելոյ. (Հռոմ. ա̅. 20:) Նաև այս՝ ո՛չ եթէ համեմատութ̃բ ուրուք, այլ անչափութեամբ: Աստի ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա̅. յովհ. դ̅. 4. Ճառ դ̅.)
* զմեծն ասել՝ ո՛չ ըստ համեմատութեան ասէ, քա՛ւ
„ լիցի. որպէս թէ այնպիսի միայն մեծ որպէս երկինք
„ առ երկիրս . . . այլ ըստ մերում տկարութեանս զի-
„ ջանի. մեծ է ասէ այն՝ որ 'ի ձեզ է, այսինքն ան-
„ բովանդակելի և անկշռելի մեծ. ուր ո՛չ միտք հա-
„ սանեն և ո՛չ բանք ձայնեն զանպատում մեծութ̃ն ‖:

Նաև զի մեծութ̃ին ա̅յ տիրապէս հռչակիւր 'ի քաղաքն երուսաղէմ յազգէն իսրայելի, յորոց և գովաբանիւր միշտ օրհնութ̃բ, սմին իրի ասէ:

Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ 'ի քաղաքի ա̅յ մերոյ, 'ի լեառն սուրբ նորա: Այսինքն ա̅ծ զոր մեծացուցանեմք 'ի քաղաքի մերում 'ի սիոն լերին, և օրհնեմք զնա, ճշմարտապէս մեծ է յամենայնի, և օրհնեալ. ուր յաւելլով զբառդ յոյժ՝ ցուցանէ՝ թէ ո՛չ այնչափ և եթ՝ որչափ ասեմք, այլ 'ի վեր քան զոր ասեմք, և քան զոր ըմբռնեմք, մեծ է և օրհնեալ 'ի քաղաքի աստ:

Նաև յաւելլով զբառդ ա̅յ մերոյ՝ ցուցանէ, թէ նա զորմէ ասաց լինել մեծ և օրհնեալ յոյժ՝ նա ինքն է ա̅ծ մեր. և քաղաքն յորում բնակիմք է քաղաք ա̅յ մերոյ, յորում է լեառն սուրբ, այն է սիոն. (զօրմէ տես 'ի սաղմոս բ̅. 6:) Աստանօր քաղաք ասելով՝ ընդ նմին մարթ է իմանալ և զտաճարն ըստ եզեկիելի. (խ. 2:)

Աստի նոյն էր թէ ասէր. օրհնեալ է յոյժ ա̃ծ 'ի տաճարի իւրում որ է 'ի քաղաք սիոն, և այլն:

Վերածաբար, տողաւ նշանակի իմանալի քաղաք վերին սիոնի այսինքն արքայութեան, ուր ո՛չ եթէ հռչակի, այլ յայտնի երևի մեծութի̃ն ա̃յ, և ճշմարտապէս օրհնի և գովի:

Այլաբանօրէն՝ նշանակի այսու եկեղեցի սուրբ շինեալ 'ի լերինն սուրբ, այսինքն 'ի բարձրութեան սրբութեան ըստ այնմ (Եսայ. բ̃. 2.) * եղիցի յաւուրս յետինս ,, յայտնի լեառն տեառն, և տուն ա̃յ 'ի վերայ գլխոց ,, լերանց, և բարձրասցի 'ի վերայ բլրոց ‖. և յայս միտս տէրն մեր կոչեաց զեկեղեցի իւր՝ քաղաք կացեալ 'ի վերայ լերին, (Մատ. ե̃. 14:) Իսկ զի այս քաղաք այսինքն եկեղեցի սուրբ սփռեալ է յաշխարհ ամենայն, 'ի սմա ճշմարտիւ մեծ ցուցանի ա̃ծ: Յառաջ քան զբարձրանալ նոր եկեղեցւոյ ո՛չ այնչափ մեծ երևէր ա̃ծ, մի՝ զի 'ի պաղեստին ևեթ էր սահմանեալ տեղի տան նորա. երկրորդ՝ զի սակաւ ազգք ճանաչէին զմեծութիւն նորա. երրորդ՝ զի ցուցանիւր միայն արարիչ և նախախնամիչ. իսկ 'ի բարձրանալ նորոյ եկեղեցւոյ, ընդ ամենայն տեղիս մեծ ցուցաւ, և առ ամենայն ազգս մեծ երևեցաւ, և ամենայնիւ մեծ հռչակեցաւ, ո՛չ միայն իբրև արարիչ և խնամօղ, և այլն, այլ և իբրև փրկիչ, իբրև փեսայ, իբրև երանութիւն, և այլն:

Բարոյապէս՝ տողաւ նշանակի հոգի մարդոյ նուիրելոյ ա̃յ, յորում 'ի ձեռն հաւատոյ, յուսոյ և սիրոյ փառաւորի ա̃ծ, և գործովք բարեաց ցուցանի թէ մեծ է որ փառաւորի 'ի նմա: Արդ որովհետև այս քաղաք եթէ ըստ նկարագրին և եթէ ըստ հոգևորին է ա̃յ, և ա̃ծ 'ի սմա, յայտ առնէ մարգարէն՝ թէ վասն այսր արժան է նմա ցնծալ անպակաս ուրախութեամբ. սմին իրի յարէ զկնի, և ասէ:

բ̃. ՀԱՍՏԱՏԱՐՄԱՏ ՑՆԾԱՑՈՒՑԷ ՑՆԾՈՒ̃Է ԱՄԵՆԱՅՆ ԵՐԿՐԻ. ԼԵՐԻՆՔ ՍԻՈՆԻ, ԿՈՂՄԱՆՔ ՀԻՒՍԻՍՈՅ՝ ՔԱՂԱՔ ԹԱԳԱՒՈՐԻ ՄԵԾԻ:

Հաստատարմատ ասի նա՝ որ ունի հաստատուն արմատս, կամ որ արձակէ զհաստատուն արմատս: Արդ ճշմարիտ ցնծութիւնն՝ որ լինի ըստ ա̃յ և առ ա̃ծ՝ ունի զեբոլս հաստատուն արմատս՝ որք պատճառեն և սնուցանեն զայն ցնծութիւն: Առաջինն է 'ի կողմանէ այ̃ ըստ այլևայլ իրաց. ըստ ներկայութեան, ըստ յայտնութե̃, ըստ լուսաւորութեան, ըստ մխիթարութեան, ըստ ձեռնտուութեան, ըստ պաշտպանութե̃, և այլն: Երկրորդն է 'ի կողմանէ մարդոյ՝ ըստ վիճակելոյ մեծամեծ բարեաց, և ըստ ժառանգելոյ զայնոսիկ բարիս: Երրորդն է 'ի կողմանէ այլոց՝ ըստ հաղորդելոյ 'ի նոսա այնր ցնծութե̃: Եւ զի այսմ արժանի գտան իսրայելացիք 'ի սկզբան անդ 'ի բնակիլ իւրեանց յերկրին աւետեաց, յայն հայելով ասէ մարգարէն:

◆

Հաստատարմատ ցնծացէ ցնծութեամբ ամենայն երկիր. լերինք սիովնի, կողմանք հիւսիսոյ՝ քաղաք թագաւորի մեծի: Յայս բան բառիդ երկիր, նոյնպէս և բառիդ լերինք և կողմանք և քաղաք՝ ոչ իմացեալ լինին նիւթական երկիր կամ լերինք, այլ բնակեալքն 'ի նոսա. և այս ոճ իմն է ճարտասանից՝ որ կոչի փոխանունութիւն. որով անուն բնակութեանն դնի փոխանակ անուան բնակեցելոյն, որպէս ասացեալ է մեր բազում անգամ. և այսու կամի իմացուցանել մարգարէն թէ ունին ցնծալ ամենայն բնակիչք երկրի, և բնակիչք լերանցն սիոնի, նոյնպէս և բնակիչք կողմանցն հիւսիսոյ և բնակիչք քաղաքին մեծի:

Ի դնիլ այսր սոյն այս բան չորեքկին կարէ մեկնիլ ըստ ճառին. մի՝ վերածութեամբ առ նոյն իր. և ըստ այսմ բառիդ ամենայն երկիր՝ նշանակի այն ամենայն երկիր, որ է շուրջ զերուսաղէմաւ. իսկ բառքդ լերինք սիովնի և կողմանք հիւսիսոյ և քաղաք թագաւորի՝ լինին իբր բացայայտիչ բառիդ ամենայն երկիր, որպէս թէ ասէր. ցնծացէ ամենայն երկիր, այսինքն է նա ինքն սիոն քաղաքն թագաւորին մեծի, և լերինք սիոնի, որք են կողմանք հիւսիսոյ, զի են 'ի հիւսիսակողմն. կամ դարձեալ՝ ցնծացէ ամենայն երկիր հանդերձ լերամբք սիոնի և կողմամբք հիւսիսոյ: Իսկ 'ի յաւելուլն * քաղաք „ թագաւորի մեծի ‖. կամի ծանուցանել, թէ սիոն ասելով զայն իմանայ՝ որ է քաղաք թագաւորին մեծի, այսինքն թագաւորին յուդայ կամ թէ այ̃. այն է երուսաղէմ քաղաք ըստ բոլորին. զի այս քաղաք, բազում ուրեք 'ի սուրբ գիրս սիոն կոչի. ըստ այնմ (եսայ. լԳ.

20 .) * ահաւասիկ սիոն քաղաք փրկութե՟ մերոյ․ աչք
„ ձեր տեսցեն զերուսաղէմ քաղաք մեծացեալ ‖ ։ Եւ ըստ այսմ բառդ հասարակաց՝ դնի իբր ածական ցնծութե՟․ որպէս թէ ասէր, հաստատուն ցնծութե՟. ցնծասցէ, կամ այնպիսի ցնծութբ՟ որ իցէ ունօղ հաստատուն արմատոյ, կամ որ իցէ անշարժ, և արձակեսցէ ևս հաստատուն արմատս ընդ ամենայն երկիր ։

Երկրորդ՝ մեկնի վերածութեամբ առ այլևայլս․ և ըստ այսմ բառիւդ ամենայն երկիր՝ նշանակին ամենայն բնակիչք տիեզերիս․ իսկ լերամբք սիոնի՝ նշանակին այն ամենայն լերինք և ամուրք լերանց, որք էին ընդ իշխանութեամբ լերին սիոնի, ուր էր քաղաքն այ՟, և քաղաք թագաւորին յուդայ ։ Այլ կողմամբք հիւսիսոյ նշանակին բազմութիւնք ազգաց․ վասն զի եբրայեցիք յարևելից հիւսիսոյ ունելով զազգս բազումս, իսկ յարևմտից հարաւոյ զծով, զբազմութիւն ազգաց՝ համարէին լինել հիւսիսայինս ։ Եւ ըստ այսմ կամի ասել․ որովհետև մեծ է տէր և օրհնեալ է յոյժ 'ի քաղաքի իւրում 'ի լերինն սիոնի, արժան է զի ամենայն երկիր ուրախ լիցին 'ի նա, առաւել ևս լերինք և քաղաքք՝ որք են ընդ սահմանաւ սիոնի, ևս և կողմանք հիւսիսոյ՝ յորս բնակին բազմութիւնք ազգաց․ և եթէ արժան է սոցա ուրախանալ, ապա քանի՜ ևս արժան է՝ զի ցնծասցէ նոյն իսկ քաղաք թագաւորին մեծի, և հաստատուն մնասցէ յուրախութեան՝ ունելով զարմատս հաստատութեան իւրոյ 'ի խնամս այ՟ ։ Եւ ըստ այսմ՝ բառդ հասարակաց դնի իբր մակբայ, փոխանակ բառիս հաստատապէս ։

Երրորդ՝ մեկնի վերածութբ՟ 'ի փառաւորութի՟ սիովնի, և ըստ այսմ՝ բառդ քաղաք թագաւորի՝ դնելի է նախդրիւս 'ի․ որպէս դնի յերիս ձեռագիրս, ևս և յալելուս ժամագրքին, յորս գրի այսպէս․ * հաստարմատ
„ ցնծութեամբ ցնծասցէ ամենայն երկիր, լերինք սիո-
„ նի, կողմանք հիւսիսոյ 'ի քաղաք թագաւորի մեծի ‖ ։ Այսինքն ընդ քաղաք թագաւորի մեծի․ յայս միտ առեալ կամի ասել․ այնչափ սքանչելի է քաղաքն այ՟, մինչև արժան է՝ զի ամենայն երկիր նաև նոյն իսկ լերինք սիոնի և կողմանք հիւսիսոյ՝ հաստատութեամբ կամ հաստատապէս ցնծասցեն ընդ փառս նորա,

կամ թէ ժողովեսցին անդր և ցնծասցեն 'ի նմա առ ա̃ծ՝ ուրախութ̃բ մեծաւ:

Չորրորդ՝ մեկնի փոփոխութեամբ կարգի շարադրութեան. և ըստ այսմ բառդ հաստարմատ՝ լինի ածական քաղաքին ա̃յ. յոր միտս առնու և Լամբ". ըստ հոգևորին, և բառքդ ամենայն երկիր և այլն, որք դնին յուղղական հոլովս, զօրութ̃բ իմացեալ լինին 'ի ներգոյականն. որպէս թէ ասէր. հաստարմատ քաղաքն թագաւորի մեծի՝ ցնծութ̃բ ցնծասցէ և արձակելով զարմատ ուրախութեան իւրոյ յամենեսին՝ փառաւորեսցի ընդ ամենայն երկիր, և ընդ լերինս սիոնի և ընդ կողմանս հիւսիսոյ:

Յայսմ ամենայնի որպէս և տեսանի, նպատակ բանից մարգարէին է ցուցանել, թէ սիոն քաղաք է ցնծութ̃ի և փառք քաղաքաց և աշխարհաց, և ամենեցուն՝ որոց յայտնի անուն նորա:

Այս բան առաջի դնի և իբր մարգարէութիւն՝ հաստատուն և անդրդուելի ուրախութ̃ե նորոյս եկեղեցւոյ ընդ ամենայն երկիր. որոյ առաջին սկզբնաւորութիւն եղև յերուսաղէմ 'ի քաղաք թագաւորին մեծի. և այսմ ուրախութեան նորա ոչ մի լեառն՝ որպէս յառաջն, այլ անհամար լերինք մասնակից եղեն, ևս և ոչ միայն լերինքն սիոնի, այլ և մեք կողմանքս հիւսիսոյ գտաք հաղորդք, և խնդալից ցնծամբ շինեալք և հաստատեալք 'ի վերայ անշարժ վիմի իբր քաղաք անշարժ՝ որոյ ճարտարապետ եղև հոգին սուրբ: Այլ քանզի առ հաստատութիւն իւրեք պահանջի օգնականութիւն և պաշտպանութիւն, զայն ևս 'ի մէջ բերէ մարգարէն ասելով:

Դ. Ա̃ծ 'ի տաճարս նորա յայտնի. 'ի ժամանակի որպէս օգնական լինէր նոցա:

Այս տաճար, զորմէ խօսի աստ, ոչ երևի լինել սողոմոնին՝ որ շինեցաւ 'ի լերինն ամորհացւոց՝ որ կոչի ամորիա 'ի կալն ոռնայ. այլ՝ որ էր 'ի սիոն լեառն՝ (զորմէ տես 'ի սաղ. Ե. 6:) Եթէ սողոմոնին ևս իմացեալ լիցի՝ չէ ինչ: Արդ քանզի ա̃ծ 'ի տաճարի անդ գոլով յայտնեալ լինէր, սմին իրի ասէ:

Ա̃ծ 'ի տաճարս նորա յայտնի է: Այսինքն, ա̃ծ բնակելով 'ի տաճարի իւրում յերուսաղէմ, անդ յայտնի այսինքն յայտնեալ լինի, որ է ասել. ա̃ծ յայտնապէս ծանուցեալ կամ ճանաչեցեալ և պատուեալ լինի 'ի տաճարի իւրում. և անդ ցուցանի զօրութիւն և օգնութիւն նորա. և առ այս յարէ:

Ի ժամանակի որում օգնական լինէր նոցա: Աստանօր բառդ որում' դնի փոխանակ բառիս յորժամ, կամ մինչ. ըստ որոյ կամի ասել. ա̃ծ թէպէտև միշտ յայտնիւր 'ի տաճարի, բայց այս յայտնութիւն յայնժամ առաւել տեսանիւր ժողովրդեան իւրում և իբր զգալապէս շօշափիւր, յորժամ օգնական լինէր նոցա:

Այլաբանօրէն քս̃ ա̃ծ մեր' որ հաստատեաց զնորս եկեղեցի' յայտնի լինի 'ի նմա և յանդամս նորա, որք են տաճար ա̃յ կենդանւոյ. ևս և հանապազ ցուցանէ զօգնութիւն իւր' 'ի պահելն զնոսա անսասան, մանաւանդ 'ի յաղթել հալածանաց. և 'ի բռնանալ թագաւորութեց 'ի վերայ նոցա. զորոց որոշակի ևս խօսի մարգարէն յերեսուն յաջորդ համարսն ասելով:

դ. Ահաւասիկ թագաւորութ̃ք երկրի ժողովեցան, և անցին 'ի միասին:

ե. Նոքա տեսին այնպէս' և զարմացան. խռովեցան սասանեցան, և դողումն կալաւ զնոսա:

զ. Անդ երկունք որպէս 'ի ծննդեան. 'ի հողմ սաստիկ ճմլեսցէ զնաւս 'ի Թարսիս:

Այս բանք են իբր ձեռնարկութիւնք 'ի ցուցանել զայն' զոր ասաց 'ի համարն 2, զհաստատութենէ քաղաքին ա̃յ, և զուրախութենէ նորին. իբր զի ոչինչ բռնութիւն կարաց սասանեցուցանել զնա. իսկ թէ զիա՛րդ. ասէ:

Ահաւասիկ թագաւորութիւնք երկրի ժողովեցան. և անցին 'ի միասին: Այսինքն, տեսէ՛ք աւասիկ' զի բազում թագաւորք հանդերձ զօրօք իւրեանց ժողովեցան ընդդէմ երուսաղէմի, բայց ոչինչ կարացին առնել. այլ անցին 'ի միասին. այսինքն խորտակեցան համանգամայն, և կամ փախուցեալ հալածական եղեն. (զորոց տե՛ս ե̃. թագ. գլ. ե. մինչ 'ի գլ. ժա̃ : և դ. թագ. ժթ.

35. ևն։ տես և 'ի մարգա. եզեկ. լը. 2 = 13. ևն։) յորս յայտնի աւանդի՝ թէ զիարդ այնչափ հզօր թագաւորութիւնք փոխանակ վանելոյ զիսրայելացիս՝ վանեցան, մինչև զարմանալ նոցա ընդ նոսա, և զարհուրիլ 'ի նոցանէ. և առ այս յարէ։

Ե. Ինքեանք տեսին այսպէս՝ և զարմացան. խռովեցան սասանեցան, և դողումն կալաւ զնոսա։ Կամի ասել. այսոքիկ թագաւորութիւնք՝ որք ժողովեցան ընդդէմ իսրայելի, աչօք իւրեանց տեսին՝ թէ այսպէս պաշտպան լինի Ա̃ծ 'ի վերայ իսրայելի. որով և զարմացան՝ վասն անակնկալ տեսանելոյ զայն ինչ, զորմէ չունէին տեղեկութիւն. վասն զի որպէս գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժե.) * զարմանալն է կախումն մտաց „ յանկարծ հայեցողի յիրն ոչ ունելով զգացումն ինչ „ իրացն ‖։ Ի զարմանալ այսոցիկ թագաւորութեանց՝ 'ի զօրութենէ ձեռին Ա̃յ և սոքա խռովեցան և սասանեցան. և այնչափ մեծ եղև երկիւղ նոցա, մինչև դողումն կալաւ զնոսա. և ոչ այսչափ միայն, այլև յապագայ չարեաց սարսափեալ՝ յերկունս ցաւոց ըմբռնեալ լինէին, յոր միտս յարէ զկնի և ասէ։

Զ. Անդ երկունք որպէս 'ի ծննդեան։ Երկունքն է ցաւ սաստիկ 'ի ծնանիլ. և փոխաբերութ̃բ իմն նշանակէ զանհնարին տագնապ մարդոյ։ Այսպիսի տագնապ ասէ հասցէ նոցա անդ։ Որ բառս անդ 'ի մէջ բերէ զնշանակութիւն արագութ̃ե և սաստկութեան չարեացն. կարէ ևս նշանակել զտեղին յոր ժողովեցան թագաւորք ընդդէմ իսրայելի։ Արդ սոքա 'ի կամիլն ծնանել զյաղթութիւն ընդդէմ իսրայելի՝ ըմբռնեցան յերկունս սարսափման 'ի ծնանել զկորուստ իւրեանց. իսկ թէ զիարդ, յայտ առնէ այլով իմն փոխաբերութեամբ ասելով։

Ի հողմ սաստիկ փշրեսցէ զնաւս 'ի Թարսիս։ Կամի ասել. տագնապ նոցա այնչափ անհնարին լինիցի, որչափ անհնարին լինի բռնութիւն 'ի հողմն սաստիկ՝ որ փշրեսցէ զպնդակազմ նաւս գնացօղս 'ի Թարսիս։ Կամ թէ Ա̃ծ փշրեսցէ զնոսա սաստիկ հողմով բարկութեան իւրոյ. որպէս փշրէ բռնութիւն հողմոյ զնաւս՝ որք գնան 'ի Թարսիս. որպիսի էր այն հողմն արևելեան, որ լինէր երբեմն յայնսիկ կողմանս. ըստ որում գնի յեբր″. և 'ի քաղդ″։

Իսկ թարսիւ ոմանք իմանան զհնդկաստան, ոմանք զկիւլիկիա՝ ուր է տարսոն, ոմանք զկարթագինէ, և ոմանք պարզապէս զծով՝ ըստ ստուգաբանութ՟են. բայց հաւանականագոյն ևս է իմանալ զծովեզերեայ քաղաք լիբէացւոց, յոր ածէին ոմանք 'ի ներքին կողմանց ափրիկոյ ոսկի և արծաթ, ևս և ժանիս փղաց, և սիրամարգս. (տե՛ս զայսմանէ 'ի. գ՟. թագ. ժ՟. 22։) Իսկ զի գրի անդ թէ յերիս ամս միանգամ գայր նաւն 'ի թարսսէ. սովաւ ցուցանի, թէ կամ հեռի էր տեղին, և կամ նաւն սպասէր անդ բազում ժամանակս՝ մինչև ժողովեսցին այն ամենայն իրք։

Որպէս և իցէ, այսպիսի նաւք՝ որովհետև զայսպիսի ազնիւ իրս բառնային, և 'ի հեռաւոր տեղիս չուէին, ամրակազմ էին յոյժ և մեծ։ Իսկ յայս իսկ զոսա 'ի մէջ բերէ աստ մարգարէն՝ առ 'ի ցուցանելոյ ըզսաստկութիւն հողմոյն՝ որ զայնպիսի նաւս փշրէր, և այսու կամի ցուցանել զմեծութիւն այնր տագնապի՝ զոր կրեցին նախայիշեալ թագաւորութիւնք, որք վանեալ 'ի բարկութենէն ա՟յ փշրեցան։ Իսկ այս յայտնի երևեցաւ 'ի բազում թագաւորս, զորոց տե՛ս 'ի վերոյգրեալ տեղիս։ Սոյն այս երևեցաւ և յանձս կամբիւսեայ ըստ աւանդելոյ հին պատմաբանից, զոր ընդ անուամբ գոգայ յիշատակէ եզեկիել. (տե՛ս անդ գլ. լը՟. և լթ՟.։)

Այս ամենայն հայի 'ի վիճակ նորոյս եկեղեցւոյ, ընդդէմ որոյ յարեան բազում թագաւորք գրեթէ ամենայն աշխարհաց՝ մանաւանդ հռովմայեցւոց, դեկոս և դիոկղետիանոս, և մաքսիմիանոս, ե՟ն. ևս և դեռ. և չկարացին առնել ինչ. մանաւանդ թէ յայտնի տեսեալ զզօրութիւնն ա՟յ 'ի վերայ եկեղեցւոյ և 'ի վերայ իւրաքանչիւր նահատակաց և խոստովանողաց, զարմացան, խռովեցան և երկեան, և ըմբռնեցան յերկունս այսինքն 'ի տագնապս՝ ոմանք 'ի տագնապ բարկութեան և վրէժխնդրութ՟են, և ոմանք 'ի տագնապ ցաւոց և երկիւղի, ևս և զգաստութ՟են։

Իսկ թէպէտ սոքա լցեալ գոռոզ իմն հպարտութեամբ՝ համարէին զինքեանս լինել հզօրս և անփշրելիս, բայց նուաճեցան և փշրեցան 'ի զօրութենէ հողմոյ, այսինքն

՚ի զօրութենէ հոգւոյն սրբոյ, որպէս նաւք թարսիսի ՚ի սաստիկ հողմոյ. որով և բարձրացաւ եկեղեցի սուրբ, և յայտնի ցուցաւ ՚ի նմա զօրութիւն ա͞յ ՚ի պահելն զնա, և յօգնելն նմա. և այս ոչ եթէ հիւսուած ինչ է բանի, այլ ճշմարտութիւն, զոր և աչօք իսկ տեսանեմք: Յայս միտս յարէ մարգարէն զկնի, և ասէ:

Է͞. Որպէս լուաք, նոյնպէս և տեսաք ՚ի քաղաքի տեառն զօրութեանց՝ ՚ի քաղաքի ա͞յ մերոյ:

Ը͞. Ա͞ծ հիմնաւոր արկ նմա յաւիտեան. ընկալաք ա͞ծ ողորմութե͞ քո ՚ի մէջ ժողովրդեան քոյ:

Քաղաք տեառն ասելով, նոյնպէս և քաղաք ա͞յ մերոյ ասելով՝ ըստ նկարագրին իմանայ զերուսաղէմ ըստ ամենայն տարածութեան իւրոյ, յորում պարունակի և լեառն սիոն, ուր էած դաւիթ զտապանակն. ևս և տափականիստ լեառն ամորացւոց, այն է մորիա, յորում էր կալն ոռնայ. ուր որպէս և ասացաք շինեցաւ տաճարն սողոմոնի, Եւ որպէս յայտ է ՚ի նախագրելոցդ, բազումք բազում անգամ ժողովեալ ՚ի վերայ այսր քաղաքի, և ՚ի վերայ ազգին իսրայելացւոց՝ չկարացին առնել ինչ. զի զօրութիւնն ա͞յ պաշտպան լինէր նոցա: Եւ թէ ճշմարտիւ այնպէս էր, վկայէ մարգարէն այսու բանիւ, թէ զայս տեսաք աչօք մերովք ՚ի բնակիլ մեր ՚ի քաղաքի աստ յերուսաղէմ. ուստի ասէ:

Որպէս լուաք, նոյնպէս և տեսաք ՚ի քաղաքի տեառն զօրութեանց՝ ՚ի քաղաքի ա͞յ մերոյ: Այսինքն, զոր պատմէին մեզ հարքն մեր, թէ ա͞ծ օգնական եղև իսրայելացւոց, և միշտ պաշտպան լինի նոցա, զայն աչօք ևս տեսաք, մանաւանդ ՚ի սմին քաղաքի, այնպէս՝ որպէս լուաք. (տե՛ս եսայ. ի͞զ. 1: և խ͞դ. 26. ևն:) Ասացի * մանաւանդ ‖ զի ա͞ծ առաւելապէս եցոյց զօգնութիւն և զպաշտպանութիւն իւր առ իսրայէլ ՚ի քաղաքն երուսաղէմ քան յայլ տեղիս: Եւ այսմ այսպէս լինելոյ տայ զպատճառն ասելով:

Ը͞. Ա͞ծ հիմնաւոր արկ նմա յաւիտեան: Զհաստատուն մնալ քաղաքին երուսաղէմի՝ յայտ առնէ նմանութե͞ հիմն արկանելոյ. զի ուղղեաւ ըստ հաստատութեան հիման հաստատուն մնայ շինուածն, որչափ ճարտարութեամբ արկցէ ոք զհիմն, այնչափ հաստատուն առնէ զայն ըստ հիմանն. ապա եթէ ա՟ծ էարկ զհիմն երուսաղէմի իւրով ճարտարութ՟բ, այն լինէր ամենեւին հաստատ.

Այս նմանութեամբ ցուցանի, թէ ա՟ծ կամեցաւ, զի հաստատուն մնասցէ քաղաքն այն յաւիտեան, և վասն այնորիկ իսկ ոչ պակասեցաւ յառնելոյ նմա զոր ինչ արժան էր առնել. մինչև ասել իսկ զնմանէ ընդ նմանութ՟բ այգւոյ. * զինչ ինչ առնել էր այգւոյ իմոյ, և ,, ես ոչ արարի նմա ‖. (Եսայ. Ե. 4.)

Արդ թէպէտև ա՟ծ այսպէս կամեցաւ, բայց քանզի իսրայէլացիք ոչ կացին յուխտի նորա, թոյլ ետ կործանիլ այնմ. այլ 'ի դառնալ նոցա և յաղաղակել առ նա՝ վերստին ետ նորոգել, և անդրէն կանգնել զտաճարն. Նա թերևս յայս հայելով յարէ զկնի, և զուշակութ՟բ ինն ասէ.

Ընկալաք ա՟ծ զողորմութիւն քո 'ի մէջ ժողովրդեան քո. Այս բան եթէ 'ի մասնաւորի ասցի, հայի յերկրորդ շինութիւն երուսաղէմի և տաճարի. զի յայտ է թէ իսրայէլացիք՝ որք գերեալն էին, 'ի դառնալ իւրեանց՝ տեսին և ընկալան 'ի մէջ մնացեալ ժողովրդոց զողորմութիւն ա՟յ. (տես. Գ. եզր. գլ. Բ. մինչև Է. և առաջին եզր. գլ. Բ. 1 = 9. և Բ. եզր. գլ. Ե. և Զ.)

Իսկ եթէ այս բան 'ի հասարակի ասցի՝ հայի յայն, զոր ասաց 'ի վերոյ, այսինքն յօգնութիւն և 'ի պաշտպանութիւն ա՟յ. զորմէ վկայեաց՝ թէ տեսաք. և ըստ այսմ կամի ասել. յիրաւի զոր լուաքն, աչօք ևս տեսաք. քանզի և ընկալաք զողորմութիւն քո, և վայելեցաք զնոյն 'ի մէջ ժողովրդեան քոյ. կամ թէ ըստ լսելոյ և ըստ տեսանելոյ մեր, ընկալաք ընդունիլ զողորմութ՟ի քոյ 'ի ժողովրդեան քում.

Այլ այս բանք գեղեցիկ ևս մեկնին 'ի վերայ եկեղեցւոյ. որոյ որդիք ցնծալից երգեն. որպէս լուաք 'ի մարգարէից և յառաքելոց, սոյնպէս և տեսաք 'ի քաղաքի աստ՝ յեկեղեցւոջն ք՟սի, որ այն ինքն է տէր զօրութեանց և ա՟ծ մեր. ես և տեսաք ըստ լսելոյ մեր, թէ ա՟ծ զհիմունս էարկ նմա յաւիտեան, շինեալ 'ի

վերայ վիմին հաստատութեան, և ոչ որպէս զերուսաղէմ, որոյ ոչ մնաց քար 'ի քարի վերայ՝ քանդեալ 'ի տիտոսէ. որոյ և ժողովուրդք մերժեցան յնմ, և մեք որք 'ի հեթանոսութեան էաք՝ փոխան նոցա ընկալաք զողորմութիւն. զոր և յայտնի խոստովանիմք 'ի տաճարս մեր, եւս և 'ի մէջ բազմութե ժողովրդեան տեառն. և բերկրիմք 'ի նոյն. յոր միտս առեալ և նարեկացւոյն զայս բան 'ի ճառս մեռոնին, (դհ.) ասէ. * լուեալ քե
,, բարի զօրութիւն ծածուկ խորհրդոյս, զգութիւն
,, խառնեալ ընդ աղերս, առեալ ընդ գութի. ընկալաք
,, ած զողորմութիւն քո‖.

Վերածաբար, այս բանք հային տիրապէս 'ի քաղաք արքայութե, զոր յաւիտեան հաստատեաց տէր. հիմունք և շինուածք նորա կամ ժողովուրդք նորա 'ի սկզբան եղեն հրեշտակք. մտին առաջ անդր և որք հաւատացին 'ի նա, և սրբեցինն զնա. և 'ի վայելել նոցա զքանչելի երանութիւն նորա՝ ասացին. ընկալաք ած զողորմութիւն քո 'ի մէջ հրեշտակաց քոց. նա զի որպէս լուաք, սոյնպէս և տեսաք 'ի քաղաք տեառն զօրութեց 'ի քաղաք այ մերոյ։ Օոյն աւեն և նմջեցեալքն 'ի քո յազատիլ անդ իւրեանց 'ի տառապանաց և 'ի ժամանել 'ի քաղաքն յայն, աղ մեկնէ լամբ''։

Յարմարական մեկնութիւ մարթ է առնել զայսպիսիս և զնմլոց. զորօրինակ 'ի լսել զումեքէ՝ թէ այսպիսի անձն սուրբ իցէ, յորժամ տեսանեմք՝ թէ յիրաւի այնպիսի է, ասեմք. որպէս լուաք, սոյնպէս և տեսաք. ըստ այսմ տեսեալ բազմաց զքանչելիսն արիստակեայ՝ 'ի դանալ նորա 'ի ժողովոյն նիկիոյ, փառս տուեալ աստուծոյ ասէին, որպէս լուաք, սոյնպէս և տեսաք. ըստ որում գրէ եզնկացին՝ 'ի գովեստի նորա։

Ի ձեռագիրս ինչ մեր դնի աստ հանդէպ, և յանձն 'ի վերջ յաջորդ համարոյն. Իսկ յեբր''. և 'ի յեօթ''. և յասոր'', դնի զկնի այնր բանի՝ թէ ած հիմունս արկ նմա յաւիտեան. և աստ յարի՝ ընկալաք ած զողորմութիւն քոյ, ևն. որով գուցէ նշանակի փոփոխութիւն եղանակի, կամ զիջումն ձայնի, ևն. որպէս ասացեալ է մեր այլուր. զի և կարգ բանին փոքր մի պղտորի աստ. վասն զի մարգարէն յետ ասելոյ ընկալաք զողորմութիւն քոյ՝ զայնպիսի ինչ յարէ զկնի, որ տայ հայիլ 'ի բանն յայն՝ զոր եդ 'ի սկզբան, 'ի ցուցանելն՝ թէ մեծ է Ած, և մեծ է անուն նորա, և օրհնեալ է յոյժ. 'ի սոյն համեմատութիւն վերացուցանելով մարգարէին զընթացս բանին՝ նորոգ իմն սկսանի ասել:

Ժ. Ըստ անուան քում, այնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս. արդարութեամբ լի է աջ քո:

Անուամբն Այ իմացեալ լինի բառդ Ած, որոյ նշանակեալն է ինքնագոյ էն անսահման, ամենայնի արարիչ և նախախնամող. արդ յայտ է թէ այս անուն փառաւորեալ է ընդ ամենայն տիեզերս՝ յոմանս գիտութեամբ և ուղղութեամբ, որպէս 'ի նոսա որք ճանաչեն և պաշտեն զճշմարիտն Ած, և յոմանս տգիտութեամբ և մոլորութեամբ, որպէս 'ի նոսա որք ոչ ճանաչեն զնա, այլ փոխանակ նորա պաշտեն զկուռս. բայց քանզի սոքա ևս 'ի պաշտելն զկուռս՝ ընդ անուամբ Այ պաշտեն, զի Ած կոչեն զնոսա, և վասն Ած կամ Ածային ինչ համարելոյ զնոսա՝ պաշտեն զնոսա, այսու իսկ անունն Ած՝ իբրև անուն ինքնաբաւ զօրութեան փառաւորի նաև 'ի մէջ նոցա. և օրհնի յամենեցունց իբր այնպիսի: Յայս հայելով ասէ:

Ըստ անուան քում, այնպէս և օրհնութիւն քո ընդ ամենայն տիեզերս: Որ բառդ ըստ՝ լռելեայն տայ իմացուցանել զայն ամենայն, որ կարէ ընծայիլ անուանն Այ, որպէս թէ ասէր. ըստ մեծութե անուան քոյ՝ մեծ է և օրհնութիւն քոյ ընդ ամենայն տիեզերս. կամ թէ ըստ փառաւորելոյ անուան քոյ՝ փառաւորիս և դու օրհնութբ ընդ ամենայն տիեզերս, կամ թէ որպէս անուն քոյ սքանչելի է ընդ ամենայն տիեզերս, այնպէս ևս օրհնութի քոյ. որ է ասել, որովհետև ընդ ամենայն տիեզերս մեծ է անուն քոյ, սոյն իսկ օրհնութիւն մեծ մատուցանի քեզ յամենեցունց ընդ ամենայն տեղիս:

Այս այն է՝ զոր ասէ նա ինքն Ած բերանով մաղաքեայ. (ա. 11.) * յարևելից մինչև 'ի մուտս արևու
,, փառաւորեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց. և յամե-
,, նայն տեղիս մատչին խունկք անուան իմոյ, և պա-
,, տարագք սուրբք. զի մեծ է անուն իմ 'ի հեթանոսս ||:

Մարթ է աստ օրհնութիւն իմանալ զբարերարութիւնս ա՟յ, որով օրհնէ այսինքն լիացուցանէ ա՟ծ զամենայն ընդ ամենայն տիեզերս. և ըստ այսմ ևս ասի առ նա, թէ որպէս սքանչելի է անուն քո, սոյնպէս և բարերարութիւն քո ընդ ամենայն աշխարհ յորս փայլի և արդարութիւն քո. զոր և 'ի մէջ բերէ ասելով.

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ ԼԻ Է ԱՋ ՔՈ. Կամի ասել. զոր ինչ առնես աջով քով ընդ տիեզերս՝ լի է արդարութ՟բ, մանաւանդ 'ի վարձատրելդ զարդարս, և 'ի պատուհասել զամպարիշտս.

Իսկ աջովն ա՟յ իմացեալ լինի աստ զօրութիւն տեսչութեան և կառավարութե՟ նորա. կամ ըստ վմնական վարդապետի ('ի մեկն. յոբ. գլ. ի՟դ.) իմաստքն ա՟յ, և ձեռնտուութիւն նորա. այս աջ տեառն ասէ լի է արդարութ՟բ. որով ոչ ցուցանէ՝ թէ չիցէ լի և ողորմութ՟բ, այլ թէ ամենևին արդար է, և չիք 'ի նմա ինչ՝ որ իցէ ընդդէմ արդարութե՟.

Դարձեալ աջովն աստուծոյ իմացեալ լինի որդին աստուծոյ որ զգեցեալ զմարմին՝ եցոյց զլիութիւն արդարութեան իւրոյ յերկիր. մի՝ 'ի վճարելն արդարութ՟բ զամենայն պարտս, զորս մեք ինքնին պարտական էաք վճարել ա՟յ, և ոչ կարէաք. Երկրորդ՝ 'ի դատապարտելն անդ արդարութեամբ զսատանայ. Երրորդ՝ յարդարացուցանելն զմեզ. Յայսպիսի գործս արդարութե՟ն ա՟յ վայելեալ եկեղեցի՝ ցնծայ հանդերձ որդւովք իւրովք. Եւ զայսմանէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն և ասէ.

Ժ. ՈՒՐԱԽ ԵՂԻՑԻ ԼԵԱՌՆ ՍԻՈՎՆ. և ՑՆԾԱՍՑԵՆ ԴՍՏԵՐՔ ՅՈՒԴԱՅ, ՎԱՍՆ ԻՐԱՒԱՆՑ ՔՈՑ ՏԷՐ.

Յայտ է թէ 'ի կատարել մեծի իրիք հանդիսի ուրախութեան յազգի միում առ հասարակ, սկսանի այն՝ հռչակիլ 'ի մայրաքաղաքէ, և ապա յայլոց քաղաքաց, և 'ի գիւղից. և քանզի մայրաքաղաք իսրայէլացւոց էր սիոն, վասն որոյ նախ դնէ զուրախանալ այնր քաղաքի, և ապա զցնծալ դստերացն յուդայ. իսկ դստերօք յուդայ նշանակին աստ այլևայլ քաղաքք ազգին իսրայէլի եղեալք ընդ իշխանութ՟բ սիոնի. զի 'ի սուրբ գիրս բառս դրաւոր , որպէս երբեմն գնի փոխանակ ժողովրդեան , սոյնպէս և երբեմն 'ի գործ ածի փոխանակ քաղաքի կամ գիւղի եղելոյ ընդ իշխանութե՟ մեծի քաղաքի : Ըստ այսմ առնու և աստ մարգարէն յասելն :

Ուրախ եղիցի լեառն սիօնի . և ցնծասցեն դստերք յուդայ , վասն իրաւանց քոց տէր : Այսինքն , լեառն սիոն որ յանդիման առնէ զազգն իսրայէլի , տեսեալ զիրաւունս արդարութե՟ քո՝ ուրախ լիցի 'ի քեզ վասն այնր իրաւանց . սոյնպէս և դստերք յուդայ , այսինքն այլևայլ քաղաքք որք յանդիման առնեն զժողովուրդ ազգին յուդայ , ցնծասցեն 'ի նոյն :

Այս կատարեցաւ 'ի նորս եկեղեցի , որոյ տեսեալ զարդարութիւն՝ զոր արար որդին այ̃ , ուրախ եղև և ուրախ լինի հանապազ 'ի նա՝ վասն իրաւանց նորա , այսինքն վասն առնելոյ նորա զիրաւունս արդարութեան . նոյնպէս և դստերք նորա մասնաւոր եկեղեցիք 'ի նոյն ցնծան ընդ ամենայն տեղիս :

Կամ՛՛. սիոնիւ իմանայ աստ զարքայութիւնն երկնից , ուր սուրբք ուրախ լինին ասէ վասն իրաւանցն այ̃՝ որով զերծան անդր . ցնծան ասէ և դստերք յուդայ , որովք նշանակին որդիք եկեղեցւոյ , ըստ որում յուդայ թարգմանի խոստովանօղ՝ որ սպառազինի եկեղեցւոյն քրիստոսի :

Բարոյապէս , լերամբ սիոնի իմացեալ լինի վերին մասն բանական հոգւոյն , որ ուրախ լինի վասն իրաւանց տեառն , այսինքն յորժամ 'ի տառապելն իւր՝ տեսանէ՝ զի իրաւունս առնէ նմա այ̃ . ցնծան և ստորին կարողութիւնք հոգւոյն իբրև դստերք նորա՝ ընդ նովին իրաւամբք : Զայս ամենայն եդեալ մարգարէին վասն սիոնի՝ ապա 'ի յորդոր մտցի քննութե՟ նորա և հրատարակութե՟ փառաց նորին , ասելով :

ժա . Շրջեցարուք զսիօնիւ , պաշարեցէք զնա . և պատմեցէք զաշտարակս նորա :

ժբ . Դիք զսիրտս ձեր 'ի վերայ զօրութեան նորա . բաժանեցէք զապարանս նը̃ , զի պատմեսջիք յազգ յազգ :

Դիտումն այսոցիկ բանից ոչ այլ ինչ է , բայց եթէ ցուցանել զգերազանցութիւն վայելչութեանն սիոնի , և յայտ առնել՝ թէ առ 'ի ըստ արժանւոյն պատմել զնմանէ կամ աւանդել զճառ գովութեան նորա ազգաց՝ որք գալոցն են , պիտոյ է նախ շրջիլ զնովաւ . երկրորդ՝ զննել զնա արտաքուստ . երրորդ՝ տեսանել և հարցանել զաշտարակաց նորա . չորրորդ՝ տեղեկանալ զօրութեանց նորա . և հինգերորդ՝ իմանալ թէ քանի՞ ամուր աղաքօք պաշտպանեալ կայցէ . Վասն առաջնոյն ասէ .

Շրջեցարո՛ւք զՍիոնիւ . Որպէս թէ ասէր . եթէ կամիք իմանալ՝ թէ քանի սքանչելի է սիոն քաղաք , և արժանի փառաւորելոյ , **Շրջեցարո՛ւք զնովաւ .** այսինքն շուրջ եկեալ զնովաւ՝ տեսէ՛ք զգեղեցկութիւն նորա յամենայն կողմանց . և վասն երկրորդին ասէ .

Պաշարեցէ՛ք զնա . Պաշարելն է պատելով զինն՝ շուրջ փակել զայն . և այս այլաբանութ՟ք իմն նշանակէ տեսութեամբ կամ ճանաչմամբ պարագրել զամենայն որ կայցէ շուրջ զիւիք , կամ վերահասու լինել որինչ իցէ նորա . Յայսպիսի փոխաբերական միտս դնէ աստ զբառդ **պաշարել** . և կամի ասել , թէ 'ի շրջիլն ձեր զսիոնիւ , պաշարեցէ՛ք տեսութեամբ , այսինքն ծանի՛ք բարւոք զամենայն որինչ է շուրջ զնովաւ , այսինքն որինչ ունի ըստ արտաքին տեսութե . Խօսի ապա և վասն երրորդին ասելով .

Պատմեցէ՛ք զաշտարակս նորա (և կամ յաշտարակս նորա .) Այսինքն , խօսեցէ՛ք զաշտարակաց նորա , և զերևելի շինուածոց նորուն աշտարականման բարձրացելոց . և տեղեկացեալ 'ի միտ առջի՛ք զհանգամանս նոցին . Իսկ վասն չորրորդին ասէ .

ԺԲ . **Դի՛ք զսիրտս ձեր 'ի վերայ զօրութեանց նորա .** Զսիրտս ասելով իմանայ զխորհուրդս ուշի մտաց . որով կամի ասել . ուշ դի՛ք և քննեցէ՛ք , և 'ի միտ առէ՛ք , թէ զինչ և զորպիսի զօրութիւս ունիցի սիոն՝ 'ի պահել զինքն և 'ի վանել զթշնամիս իւր . Իսկ եթէ սրտիւք իմացեալ լիցի յօժարութիւն կամաց , միտ բանին լինի այս . կապեսջի՛ք զսիրտ ձեր 'ի սիոն 'ի սիրել և 'ի պաշտպանել զզօրութիւնս նորա . Մարթ է աստ բառիւս **զօրութեանց**՝ իմանալ զզօրս քաղաքի , եւ և զբերդս քաղաքին . Յարէ ապա և վասն հինգերորդին ասելով.

Բաժանեցէք զամուրս նորա։ Այսինքն, որոշ որոշ թուելով տեսէք թէ քանի ամուրս ունի, քանի բերդից և քաղաքաց տիրէ, քանի բարձր լերամբք պատսպարեալ կայ, են։ Զայսոսիկ եդեալ՝ հետևեցուցանէ և ասէ։

Զի պատմել կարասջիք յազգ յայլ։ Որպէս թէ ասէր, եթէ զայս ամենայն արասջիք, յայնժամ կարասջիք պատմել գովութ՟ք զսիոնէ, և աւանդել զպատմութ՟ի և զգովութ՟ի նորա յետագայ ազգի։

Այսքիկ բանք կարեն նովին մտօք և նովին դիտաւորութեամբ ներհակաբար և մեկնիլ, որպէս թէ ասէր. եթէ կամիք իմանալ թէ քանի զօրաւոր և սքանչելի իցէ սիոն, շուրջ պաշարեալ պատերազմեցարուք ընդ նմա, աղաղակեցէք և առ բնակիչս աշտարակաց նորա, որպէս արար ռաբսակ. ելէք և 'ի վերայ զօրութեանց նորա քաջութեամբ. ուրոյն ուրոյն և պատերազմեցէք ընդ ամուրս նորա. և տեսեալ թէ ոչ ինչ կարէք առնել, յայնժամ 'ի միտ առեալ զզօրաւոր լինել նորին՝ կարէք պատմել այլոց զորպիսութենէ նորա։

Մարթ է այլազգ և մեկնել զայս բան՝ հայելով 'ի շինութիւն կամ 'ի նորոգութ՟ի սիոնի. և ըստ այսմ կամի ասել. շուրջ գալով զսիոնիւ՝ տեսէք շուրջանակի յամենայն կողմանց, կայցէ՞ ինչ նորոգելի. և ելեալ յաշտարակս նորա պատմեցէք՝ զոր տեսիք. և դիք զսիրտս ձեր զօրացուցանել զնա, և իւրաքանչիւր 'ի ձեռն պահեսցէ զամուրս նորա. զայսոսիկ արարեալ և այսպիսեօք ամրացուցեալ զսիոն և որ ընդ նոքօք քաղաքք՝ կարէք յայնժամ պատմել այլոց ազգաց զնըմանէ թէ այսպիսի իցէ։ Այլ այս մեկնութիւն է երկբորդական։

Յարմարական մեկնութ՟ք այս բանք կարեն առեալ լինել և իբր գուշակութիւնք կործանմանն երուսաղեմի և ազգին բոլոր ըստ գուշակութեան տեառն մերոյ, (ղուկ. ժթ. 41 = 44.) ըստ որում շրջեցան և պաշարեցին զնովաւ հռովմայեցիք. եդին զսիրտս իւրեանց 'ի վերայ տաճարին և 'ի վերայ վայելչութեանց նորա. բաժանեցին զամուրս նորա, այսինքն զքանդանայապետս և զգլխս զամրացեալսն 'ի չարիս, և վաճառեցին 'ի գերութիւն. և պատմեցին բանիւք և գրովք, թէ զի՞նչ ինչ պատահեաց քաղաքիս այսմիկ, և ազգին համայն.

Այլաբանօրէն, որպէս յայտ է 'ի նախագրելոցդ՝ այսօրիկ ասացուածք հային յեկեղեցի սուրբ. յոր մարգարէական հոգւով ակնարկելով սաղմոսերգուին ասէ. Շրջեցարո՛ւք զՍիովնիւ, պատեցէ՛ք զնա. այսինքն շուրջանակի հայեցարո՛ւք յեկեղեցի սուրբ, և տեսէ՛ք զգեղեցկութիւն նորա ըստ երևելոյ նորա արտաքուստ. իսկ արտաքին երևոյթ նր. եկեղեցւոյ 'ի բազում իրս նշմարի. մի՝ 'ի նշանսն որք են չորք, այսինքն լինել սուրբ, մի, առաքելական, և ընդհանուր. ընդ որս է և անշարժութիւնն. Երկրորդ՝ 'ի խորհուրդս՝ որք են եօթն. Երրորդ՝ 'ի սուրբ պաշտամունս և 'ի ծէսս. Չորրորդ՝ 'ի հոգևորական իշխանութիւնս. Հինգերորդ՝ 'ի վարդապետութիւնս. Վեցերորդ՝ 'ի նշանագործութիւնս, ե̃ն. Յայտնիկ ասէ հայեցէք.

Իսկ ապա ասէ. Պատմեցէ՛ք զաշտարակս նորա. Իսկ աշտարակօք իմացեալ լինին ասա նախ՝ մարգարէք, և առաքեալք, և վարդապետք, և իւրաքանչիւր հովիւք. Երկրորդ՝ որք բարեխօսք եկեղեցւոյ. Երրորդ՝ հրեշտակք պահապանք, և պաշտպանք. զորս ասէ յառաջ մատուցէք՝ ասելով, թէ եկեղեցի սուրբ զայսպիսիս ունի իւր աշտարակ. Իսկ կամ մարթ է աշտարակօք իմանալ զբարձր խորհուրդս հաւատոյ՝ զորս ունի եկեղեցի. Իսկ եթէ բառդ աշտարակ՝ դիցի 'ի ներգոյական հոլովն, այսինքն է յաշտարակս, այսու ցուցանի հրապարակական յայտնի քարոզութիւն վայելչութե̃ն եկեղեցւոյ և վարդապետութե̃ հաւատոյ.

Իսկ 'ի յարելն զկնի Դի՛ք զսիրտս ձեր 'ի զօրութեանց նորա. կամի ասել՝ ուշ դիք, և 'ի միտ առէք հաւատով զներքին զօրութիւնս այնր ամենայնի որք կան յեկեղեցւոջ. կամ թէ զգուշացարո՛ւք՝ զի մի ինչ զինեսցի ընդդէմ զօրութե̃ց նորա.

Իսկ ապա 'ի մասնաւորս իջանելով՝ յորդորէ զառաջնորդս և ասէ. Բաժանեցէ՛ք զամուրս նորա. այսինքն ըզգուշութ̃բ պահեսջիք զիւրաքանչիւր մասնաւոր եկեղեցիս՝ որք են իբր մասնաւոր ամուրք 'ի մէջ ընդհանուր եկեղեցւոյ. կամ կացուցէք տեսուչս իւրաքանչիւր ամրոցաց այսինքն եկեղեցեաց. Զայս ամենայն արարեալ՝ ապա կարէք ասել պատմել յազգս յայլ, թէ որպիսի լիցի այն քաղաք այսինքն եկեղեցի սուրբ. Իսկ թէ ո՞յր լիցի այն, և ո՞վ է նա որ շինեաց զնոյն յիւր անուն, և խնամէ զնա, յայտ առնէ 'ի յաջորդ համարն՝ ասելով.

ժզ. Սա է ած, ած մեր յաւիտեանս յաւիտենից. և նա հովուեսցէ զմեզ՝ մինչև յաւիտեան.

Աստանօր բառդ սա՝ յարաբերէ զայն՝ զորմէ խօսեցաւ 'ի վերոյ յասելն * մեծ է տէր ||, և այլն. արդ ասէ.

Սա է ած, ած մեր յաւիտեանս յաւիտենից. Այսինքն սա՝ զորմէ ասացի՝ թէ հիմունս էարկ սիոնի, և կանգնեաց զնա, և պահէ զնա ևն, սա ինքն է ճշմարիտ ած. և սա՝ որ է ճշմարիտ ած՝ է ած մեր՝ ոչ այժմ միայն՝ այլ յաւիտեանս յաւիտենից. Կամ թէ սա՝ զորմէ ասացի թէ է ած, և իբրև ած յայտնի երևի 'ի տաճարի իւրում, ևն. սա ինքն է ած մեր. որով կամի ցուցանել՝ թէ ած մեր ոչ է իբրև զածս հեթանոսաց, ժամանակեայ և սուտ, այլ է ած յաւիտենական. զի է ճշմարիտ ած. և այսպիսի գոլով՝ միշտ խնամէ զմեզ, և առ այս յարէ.

Եւ նա հովուեսցէ զմեզ՝ մինչև յաւիտեան. Այսինքն, սա՝ որ է ճշմարիտ ած՝ գոլով ած մեր՝ հովուեսցէ զմեզ, ոչ մի օր, այլ մինչև յաւիտեան, որ է ասել՝ միշտ. (Այլ վասն հովուելոյն տն, տես 'ի սաղ. իէ. 11.)

Իսկ եթէ 'ի դիմաց եկեղեցւոյ իմացեալ լիցի այս բանս՝ բառդ սա՝ յարաբերէ զքն. և ըստ այսմ կամի ասել, սա՝ զոր մարդ տեսանէք և որդի մարդոյ՝ 'ի յաւիտենից էր ած. և մարդանալով ևս է ած ճշմարիտ, ած մեր յաւիտեանս յաւիտենից. և սա ինքն հովուէ ըզմեզ՝ ոչ առ ժամանակ մի՝ որպէս զիսրայէլացիս, այլ միշտ մինչև 'ի յաւիտեան.

ՍԱՂՄՈՍ. ԽԸ.

Յորդոր համդերձ առակախօսութեամբ՝ առ ամենեսին, հայիլ ՚ի վախճան մահու այնոցիկ՝ որք յուսացեալ են ՚ի մնտոխս. եւս և ցոյցք յանդիմանութեան մարդոյ որ ՚ի պատուի գոլով ոչ իմացաւ, այլ հաւասարեցաւ անասնոց անբանից։

Ի կատարած. սաղմոս որդւոցն Կորխայ։

1 Լուարո՛ւք զայս ամենայն ազգք, ունկնդի՛ր լերուք ամենեքեան, որք բնակեալ էք յաշխարհի։ 2 Ծնունդք երկրի և որդիք մարդկան, ՚ի միասին մեծամեծք և տնանկք։ 3 Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և խորհուրդք սրտի իմոյ զհանճար։ 4 Խոնարհեցուցից յառակս զունկն իմ. բացից զառակս օրհնութեամբ ՚ի սաղմոսի։ 5 Ընդէ՞ր բնաւ երկնչիցիմ ես յաւուր չարի. զի անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ եղեն զինև։ 6 Յուսացեալք ՚ի զօրութիւն իւրեանց, ՚ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեցան։ 7 Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ, և ոչ տայ Այ զփրկանս իւր. և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ։ 8 Աշխատեա՛ յաւիտեան, և կեցցես մինչ իսպառ. և ոչ տեսցես զապականութիւն։ 9 Յորժամ տեսցես՝ թէ իմաստունք մեռանին, ՚ի միասին անզգամք և անմիտք կորիցեն. և թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց։ 10 Գերեզմանք (նոցա) տունք նոցա եղիցին յաւիտեան, և յարկք նոցա ազգէ մինչև յազգ. և կարդացին անուանք նոցա ՚ի հողս իւրեանց։ 11 Մարդ ՚ի պատուի էր՝ և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և նմանեցաւ նոցա։ 12 Այս ճանապարհ է գայթագղութիւն նոցա նոցին. յետ այսորիկ բերանովք իւրեանց հաճեսցին։ 13 Որպէս խաշն ՚ի դժոխս մատնեցին, և մահ հովուեսցէ զնոսա. և տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս։ 14 Օգնութիւնք նոցա մաշեսցին ՚ի դժոխս. և ՚ի փառաց իւրեանց անկցին։ 15 Բայց աստուածն՝ Ած փրկեսցէ զանձն իմ ՚ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցի զիս։ 16 Մի՛ երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ, և յորժամ բազում լինին փառք տան նորա։ 17 Զի ոչ թէ ՚ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամ. և ոչ թէ իջցեն փառք

տան նորա ընդ նմա : 18 Այլ անձն նորա 'ի կեանս իւրում օրհնեսցի. խոստովան եղիցի քեզ՝ յորժամ բարի առնիցես դու նմա : 19 Մտցէ նա մինչև յազգս հարց իւրոց մինչև յաւիտեանս լոյս մի՛ տեսցէ : 20 Մարդ 'ի պատուի էր՝ և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և նմանեցաւ նոցա :

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. սաղմոս որդւոցն կորխայ :

Ի ԲԱԶՈՒՄ ՁԵՌԱԳԻՐՍ ՄԵՐ յաւելեալ լինի և բառդ 'ի դաւիթ, և յոմանս նաև բառդ օրհնութիւն : Յերկուս ևեթ ոչ գնի բառդ դաւիթ, նոյնպէս և ոչ 'ի սաղ″. վարդանայ 'ի ձեռագիրսն. և զի այս է համաձայն եբր″. և ամենայն թարգմանութեանց՝ բաց յեթով″. վասն որոյ և մեք ըստ սակաւ ձեռագրաց մերոց այսպէս եդաք : Ասացի * բաց յեթով″. զի միայն առ նոսա գնի բառդ դաւիթ. բայց նոցա թարգմանութ̄ի չունի ինչ հեղինակութ̄ի յայսպիսիս :

Իսկ վասն որդւոցն կորխայ տե՛ս 'ի սաղ. խ̄ա. ուր ասացաք, թէ այսպիսի սաղմոսք, յորս գնին որդիք կորխայ՝ ըստ ոմանց ասելոյ՝ են արարեալ 'ի նոցանէ. իսկ ըստ այլոց՝ արարեալ են 'ի դաւթայ, և տուեալ նոցա, զի նոքա երգեսցեն. յոր միտս 'ի քաղդ″. գնի. երգ նուագելի ձեռամբ որդւոցն կորխայ :

Իսկ բանք սաղմոսիս կարգին 'ի ցուցանել զունայնութիւն մեծութ̄եց աշխարհի, և զանցաւորութիւն կենաց մարդկան առ հասարակ մահուամբ. ևս և 'ի յորդորել զմարդիկ 'ի բարին :

Այլ այս յորդորանք, որք աւանդին 'ի սաղմոսիս, խտացեալ կան ընդ ամպովք դժուարալոյծ խօսից ըստ առանձին իմն սովորութեան, որ էր առ նախնիս՝ ծածկել զիմաստս ճառից ընդ առակօք և ընդ ձևովք խրթնաբանութեան : Նաև որպէս յայտնի տեսանի, այնոքիկ սաղմոսք՝ որք ասին որդւոցն կորխայ, գրեթէ ունին ամենեքին զայսպիսի մթութիւն, միանգամայն և զգերազանց եղանակ խօսից: Զայսուիկ եղեալ՝ մատուցուք 'ի մեկնութիւն:

ԲԱՆ

ա. Լուարո՛ւք զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքեան, որք բնակեալ էք յաշխարհի:

բ. Ծնունդք երկրի և որդիք մարդկան, 'ի միասին մեծամեծք և տնանկք:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այս բանք ցուցանեն նախ՝ զգերազանցութիւն այնր ամենայնի զորս ունի խօսիլ մարգարէն 'ի սաղմոսի աստ, երկրորդ՝ զճշմարտութիւն ասացելոցն: Ըստ առաջնոյն՝ յորդորէ լսել և ունկն դնել զի առ 'ի հասու լինել գերազանց բանից՝ պիտոյ է ուշադիր լինել. իսկ ըստ երկրորդին՝ առ ամենեսին կարգէ զբանն, և զամենեսին յառաջ կոչէ. քանզի զայնպիսիս ունի խօսիլ, զոր ոչ եթէ ազգն իսրայելի միայն, այլ և ամենայն ազգ և ազինք այնպիսի լինել ճանաչեն յորմէ երկրէ և իցեն, յորում վիճակի և գտցին, յինչ աստիճան և կարգեալ իցեն: Ապա սկիզբն արարեալ բանից իւրոց, ասէ:

Լուարո՛ւք զայս ամ՟ ազգք: Այսինքն զոր ունիմ ասել աստ, ուշադիր լինելով լուարո՛ւք ազգք ամենայն, եթէ հրէայք իցէք և եթէ հեթանոսք, եթէ քաղդէացիք իցէք, և եթէ լիբէացիք: Եւ զի մի՛ արտաքուստ եւեթ լուիցեն, յաւելու:

Ունկնդիր լերուք ամենեքեան, որք բնակեալ էք յաշխարհի: Այսինքն 'ի լսել ձեր զբանս իմ՝ մի՛ արկջիք զնոսա զականջովք ձերովք՝ իբր զցնդական ձայն, այլ տպաւորեսջի՛ք զայս 'ի ներքին յականջս ձեր. և զայս ասէ՝ ասեմ առ ամենեսեանսդ, որ բնակեալ էք յաշխարհի՝ եթէ 'ի հնդիկս և եթէ յեթէովպիա. եթէ 'ի սկիւթ և եթէ յելլադա. եթէ 'ի բաբելոն և եթէ 'ի հրէաստան: Եւ առ առաւել շարժել զնոսա՝ յաւելու:

Ծնունդք երկրի և որդիք մարդկան: Բառս ծնունդք՝ որ նշանակէ զծնանումն՝ բազում անգամ 'ի գործ ածի փոխանակ ծնելոց, և այս՝ ըստ ոճոյ Ճարտասանից, որով անուն առնելութեան դնի փոխանակ անուան արարեցելոյն, կամ որ նոյն է՝ անուն ծնելութեան փոխանակ անուան ծնիցելոյն: Յայս միտս առեալ լինի և աստ. որով կամի ասել մարգարէն. իմացարո՛ւք զբանս իմ որդիք մարդկան՝ յորմէ ազգէ և ծնեալ իցէք, յորո՛ւմ ժամանակի և ծնեալ իցէք, և յոր դարս ծնանելոց իցէք:

Իսկ բառդ երկրի ոչ այլ ինչ յայտ առնէ աստ, բայց եթէ զլինել որդւոց մարդկան յերկրէ. զի երկիրս իբր մայր հայի 'ի գործ ծննդեան ո՛ և իցէ մարդկան, թէ՛ թագաւոր իցէ և թէ բահաւոր, թէ՛ խորհրդական իցէ և թէ սոսկական, թէ՛ փարթամ իցէ և թէ աղքատ. զորս և 'ի մասնաւորի յիշէ, ասելով:

Ի միասին մեծամեծք և տնանկք: Մեծամեծօք իմանայ զիշխանս և զփարթամս, զհզօրս և զիմաստունս, և զայնոսիկ զամենեսեան՝ որք ուրք ճոխացեալք իցեն: Իսկ տնանկօք իմանայ զաղքատս և զանարգս, զտկարս և զթշուառս, զստրուկս և զգերիս, և զայնոսիկ զամենեսեան, որք կարօտ իցեն իմիք, և կամ անկեալ իցեն 'ի մեծութենէ իմեքէ:

Բարոյապէս, ծննդովք երկրի իմացեալ լինին նոքա որք յարեալ են յերկրաւորս և յանցաւորս. իսկ որդւովք մարդկան նոքա՝ որք վարին մարդկօրէն ըստ կանոնի բանականութեան: Սոյնպէս մեծամեծօք իմացեալ լինին մեծացեալքն առաքինութ՟ք և իմաստութեամբք. իսկ տնանկօք անկեալքն 'ի մեծութենէ շնորհաց և օտարացեալքն յառաքինութ՟ենց:

Սոքա ամենեքին ասէ ունկն դիցեն բանից իմոց 'ի միասին, այսինքն առ հասարակ, զի զորս ունի ասել՝ միօրինակ պատշաճի ա՟մ մարդոյ, և յամենեցունց պահանջի ուշադրութ՟ի առ այն՝ վասն զի են բանք իմաստութ՟ե և հանճարոյ, և առակ խրթնածածուկ: Եւ զայս յայտ առնէ յերկուսին յաջորդ համարսն ասելով:

Դ. Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և խորհուրդք սրտի իմոյ զհանճար։

Ե. Խոնարհեցուցից յառակս զունկն իմ. բացից զառակս օրհնութ՟բ ՚ի սաղմոսն։

Մարդիկ հասարակօրէն աւելի յօժար են ՚ի խօսիլ՝ քան ՚ի լսել. զի որպէս տեսանեմք՝ ո՛ և իցէ նիւթ բանից բաւական է յօժարեցուցանել զմարդ ՚ի խօսիլ. բայց ո՛չ է բաւական ո՛ և իցէ բան յօժարեցուցանել ՚ի լսել, այլ այն ինչ՝ որ կամ նորալուր իցէ, և կամ իմաստալից, կամ առակ խորհմաց, և կամ զրոյցք զուարճալիք։ Ապա քանզի մարգարէն յորդոր եղև ամենեցուն լսել՝ զոր ունի ասել, կամելով յօժարեցուցանել զնոսա յայն՝ խոստանայ, թէ հանդերձեալ է զարմանալիս խօսիլ, այսինքն զիմաստութիւն և զհանճար, և զայն՝ առակօք. վասն որոյ ասէ։

Բերան իմ խօսեսցի զիմաստութիւն, և խորհուրդք սրտի իմոյ զհանճար։ Իմաստութիւնն է տեղեկութիւն ճշմարտութեան ՚ի ձեռն գերագոյն սկզբանց։ Իսկ հանճարն է տեղեկութ՟ի առաջին սկզբանց։ Այլ ըստ որում առեալ լինի աստ՝ իմաստութ՟ին ակնարկէ ՚ի տեսականս, և հանճարն ՚ի գործնականս. մին պարզապէս հայի առ ներգործութ՟ի մտաց. իսկ միւսն առ ներգործութիւն մտաց կապակցութ՟բ ներգործութեան կամաց։ Ըստ այսմ զանազանութեան առեալ՝ կամի ասել, բերան իմ ըստ ճանաչման մտացս խօսեսցի զիմաստութիւն, այսինքն զայնպիսի իմաստալից բան, կամ զայնպիսի ինչ որ առնէ զմարդն իմաստուն, այսինքն վերահասու ճշմարտութեան ՚ի ձեռն բարձրագոյն սկզբանց տեսական կենաց։ Այնպէս և խորհուրդ սրտի իմոյ յառաջ բերցէ ընդ բերան իմ զհանճար, այսինքն զայնպիսի հանճարալից բան կամ զայնպիսի ինչ՝ որ առնէ զմարդն հանճարեղ, այսինքն խելամուտ առաջին սկզբանց գործնական կենաց։

Կամ". իմաստութեամբ իմանայ զիմացումն մտաց տարածեալ առ անցեալսն և առ ներկայս, առ խորինս և առ բարձունս. իսկ հանճարով իմանայ զկարծիս կապեալ ընդ ուղիղ տեսութիւն, այսինքն ընդ ճանաչումն անսխալ, որպիսի է ճանաչումն մահու · զայսպիսի իմաստութիւն և զհանճար ասէ ունի առակել մարգարէն ։ Եւ առ յարգոյ ընծայելոյ զբանն յաւելու ասել ։

Խոնարհեցուցից յառակս զունկն իմ ։ Առակումն նշանակէ աստ զառակաւոր բանախօսութիւն, այսինքն խօսիլ զայնպիսի բան՝ որ յինքեան այլ ինչ երևի, և յիրում զայլ ինչ երևեցուցանէ վասն նմանութեանն զոր ունի ընդ այնմ · և կամ այնպիսի բան՝ որ իցէ միանգամայն յայտնի և ծածկեալ ։ Յայսպիսի առակաբանութիւն ասէ խոնարհեցուցից զունկն իմ · որով կամի ասել, թէ ես որ ունիմ խօսիլ՝ ոչ յինէն խօսիմ, այլ առեալ յայլմէ, այսինքն ՚ի հոգւոյն սրբոյ · զի զայս ցուցանէ ասելն, խոնարհեցուցից զունկն իմ յառակս · իբր թէ ասէր · խոնարհութ̅ք ունկն մատուցից այնմ առակաբանութ̅ե, զոր խօսիցի յիս հոգին սուրբ · և ես զոր լուայց ՚ի նմանէ՝ զայն խօսեցայց ։ Եւս և ունկն մատուցից առակաց՝ զորս խօսեցեալ են նախահարք մեր ՚ի սկզբանէ, և առեալ զայնս՝ առաջի եդից ձեզ ։ Եւ առ այս յարէ ։

Բացից զառակս օրհնութ̅բ ՚ի սաղմոսէ ։ Այսինքն զայն առակսն՝ զորս լուայց ՚ի հոգւոյն սրբոյ՝ ևս և ՚ի նախահարց՝ բացից առաջի ձեր ։ Ուր բացից դնելով ոչ կամի ասել՝ մեկնեցից, այլ թէ զոր ՚ի յիս ՚ի գաղտնութեան սրտիս ընդունիմ, զայն արտաքուստ խօսեցայց օրհնութեամբ ։

Առակօք մարթ է իմանալ աստ զբանս օրինաց և մարգարէութեանց, որք վասն անյայտութ̅ե առակք կոչին · մանաւանդ զի առակօք և օրինակօք աւանդին · ըստ որոյ ասէ գէորգ վարդապետ · (՚ի մեկն · եսայ · ՚ի յառաջաբան ·) * ծածուկք միշտ և անյայտք են բանք „ օրինացն և մարգարէից · վասն զի առակօք և օրինա- „ կօք ծրարեալ ունին յինքեանս զխորհուրդն քսի ‖ ։ (Այլ զայսմ բնաբանէ տես և ՚ի սաղ · հէ · 2 · ևս և ՚ի սաղ · խդ · 1 ։)

Իսկ բառդ ՚ի սաղմոսէ՝ յերկու ինչ ակնարկէ · մի՝ յանցեալ տևողութիւն գաղտնութեան իրացն, որպէս թէ ասէր · բացից զառակս զանյայտս և զծածկեալս ՚ի յաւիտենից՝ զորս յայտնեաց ինձ հոգին · երկրորդ՝ յաւանդութիւն նախնեացն , որպէս թէ ասէր · բացից զառակս մթինս զաւանդեալս մեզ 'ի նախահարց մերոց , որոց ունկն խոնարհեցուցի , կամ թէ յայտնեցից զիրս զաւանդեալս իբր առակ 'ի հարց մերոց 'ի սկզբանէ անտի ։

Կամելով ապա զոյն ախորժալուր ընծայել լողաց , յաւելու դնել՝ օրհնութ՟բ · որով կամի ասել · զայսոսիկ առակաբանութիւնս ունիմ բովանդակել յերգս օրհնութեան · կամ որ նոյն է , կամիմ սաղմոսելով 'ի մէջ բերել զոսին ։ Եւ սակայն այսու ոչ իմանայ զսաղմոս օրհնութեան կամ գոհութ՟ե և կամ մաղթանաց , այլ զսաղմոս յայտարարութ՟ե · ըստ որում յայտ առնէ զայն՝ զոր կրեն և ունին կրել մարդիկ ։

Այս բանք ասին և 'ի դիմաց ք՟ի , որ եբաց առակօք զբերան իւր · և յայտնեաց զխորս իմաստութ՟ն ա՟յ , զորս ետես և տեսանէր · ըստ որոյ ասաց · * զոր տեսաք վկայեմք ∥ · (յովհ · գ · 13 · տես և 'ի սաղ · հէ · 1 · և 2 ·) զորոյ զբանն յառաջ բերէ մատթէոս · (ժգ · 35 · յաւելն ·) * զի լցցի ասացեալն 'ի մարգարէէն · բացից
,, առակօք զբերան իմ · բղխեցից զծածկեալսն 'ի սկզբ-
,, բանէ աշխարհի ∥ ։

Արդ թէպէտև բազում բանք կային իմաստութեան , և բազում առակք ա՟ծային խորհրդոց , բայց մարգարէն զմի եւեթ բարոյական առակ առաջի դնէ · և սկիզբն արարեալ բանից իւրոց ասէ ։

Է · Ընդէ՞ր բնաւ երկնչիմ ես յաւուր չարի · զի անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ եղեն զինև ։

Առաջին հատուած այսր բանի է իբր հիմն առակաբանութեան մարգարէին , կամ մանաւանդ թէ այն է առաջադրութիւն բովանդակութեան առակին , զոր ունէր 'ի մէջ մատուցանել · բայց կամելով զօրագոյն առնել՝ հարցանելով առաջի դնէ իբրև առեղծուած կամ իբրև խրթնաբանութիւն · (այսինքն իբրև հանելուք կամ պիլմէճէ ·) Իսկ երկրորդ հատուածն , նոյնպէս և զորս խօսի զկնի՝ է պատասխանի այսր հարցման ։

Այլ թէ զիարդ այս բան համարիցի իբրև խրթնաբանութիւն , ծանիր , զի մարգարէն հայի 'ի կիրս ն՟ և իցէ մարդոյ. և տեսանէ՝ զի ամենեքին յորում վիճակի և իցեն, եթէ արդարք և եթէ մեղաւորք, եթէ մեծատունք և եթէ աղքատք, եթէ իմաստունք և եթէ տգէտք՝ տագնապին 'ի սիրտս իւրեանց յաւուր չարի, և ոչ իմանան ։

Իսկ յաւուր չարի ասելով իմանայ նախ զո՛ և իցէ օր՝ յորում պատահին ձախորդութիւնք և փորձութիւնք. երկրորդ՝ որ գլխաւորն է՝ իմանայ զօր մահուն և զօր դատաստանի ։ Ապա բարբառելով առ ամենեան ասէ ։

Ընդէ՞ր բնաւ երկնչիցեմ ես յաւուր չարի ։ Այսինքն թէ ընդէ՞ր տագնապիմ ես յայնպիսի աւուր, յորում չարիք պատահին ինձ, կամ ընդէ՞ր սոսկամ յօրէ մահու. զի՞նչ իցէ պատճառ այսր ։ Ուր արժան է քննել, զի մարգարէն փոխանակ յերրորդ դէմն խօսելոյ և ասելոյ ընդէ՞ր երկնչին մարդիկ յաւուր չարի, յառաջին դէմն խօսի. որով գիտէ դիւրալուր առնել զասացեալսն, և զարթուցանել զլսօղսն, թէ զի՞նչ իցէ այն՝ զի ինքն գոլով թագաւոր հզօր զօրութեամբ և մեծութեամբ ես և մարգարէ և այր ըստ սրտին ա̃յ՝ երկնչի այսպէս յաւուր չարի ։

Այսմ հարցման՝ մանաւանդ հայելով յօր մահու, պատասխանի տան փիլիսոփայք, թէ վասն զի բնութիւնն խորշի 'ի չարէ և 'ի բաժանմանէ ։ Տգէտք պատասխանեն, թէ վասն զի դժուարին է կրել զչարիս կամ մեռանիլ ։ Մեծատունք պատասխանեն. վասն զի զրկումն է յամենայնէ կամ վնաս յինչս ։ Փառամոլք պատասխանեն, վասն զի պակասութիւն է փառաց ։ Աշխարհասէրք պատասխանեն, վասն զի ոչ ևս լինի վայելել զաշխարհ կամ հանգստանալ 'ի նմա ։ Մարմնապաշտք պատասխանեն. վասն զի անմասն մնամք 'ի բերկրութ̃է մարմնոյ, ևն ։ Իսկ մարգարէն պատասխանէ 'ի դիմաց իւրաքանչիւր մարդոյ, և լուծանէ զառակ իւր ասելով ։

Ու անօրէնութիւնք գնացից իմոց շուրջ եղեն զինեւ ։ Այս բան կրկնակի յարի 'ի նախընթացն. մի՝ հայելով յո՛ և իցէ օր չար. և ըստ այսմ կամի ասել. Ճշմարիտ պատճառ երկնչելոյ յօրէ չարէ ոչ այս է և ոչ այն, այլ անօրէնութիւնք գնացից իմոց, այսինքն գործոց իմոց, որք շուրջ եղեն զինեւ. զի 'ի ձեռն խղճի մտացս զրեթէ շուրջանակի յա̃մ կողմանց յանդիմանեն զիս· որով և երկեցուցանեն զոգի իմ։

Երկրորդ՝ մեկնի հայելով յօր մահու և դատաստանի· և ըստ այսմ բառիդ գնացք՝ իմացեալ լինի աստ աւարտ գնացից, այսինքն աւարտումն գործոց· իբր զի անօրէնութ̃իք մարդոյ՝ յորս գնայ նա, եթէ հասցեն յօր մահու և դատաստանի, այսինքն եթէ մինչև ցայն օր մնացեալ իցեն, և ոչ թողեալ, շուրջ լինին զնովաւ, և դատապարտելի առնեն զնա ըստ գրելոյն պօղոսի· (հռովմ. բ̃. 5.) վասն այնորիկ և պատճառեն զերկիւղ անհնարին։

Այսմ մեկնուէ̃ համաձայնի ընագիրն եբր″. և թարգ. եօթ″. և լատ″. զի 'ի նոսա փոխանակ բառիդ գնացք՝ դնի գարշապար, յասելն. * ընդէ՞ր երկնչիմ յաւուր „ չարի· անօրէնութիւն գարշապարի իմոյ շուրջ պա„ տեսցէ զիս ‖. ուր յեբր″. դնի աքեպայ այս է գարշապարաց իմոց։

Արդ գարշապարն գոլով յետին ծայր ոտից՝ բերի յօրինակ յետին աւուր կենաց· որով և ցուցանի՝ թէ անօրէնութիւն մարդոյ 'ի յետին աւուր շուրջ պատեալ զնովաւ՝ դատապարտէ զնա· և այս կասկած է, որ երկեցուցանէ զմարդ, զոր և իւրաքանչիւր ոք կարէ յանձն իւր յայտնի զգալ· զի երկնչիմ ես յօրէ մահու, վասն զի կասկածիմ՝ թէ անօրէնութիւնք իմ յայնմ աւուր պաշարեսցեն զիս և դատապարտեսցեն· ապա թէ գիտէի զիս զերծ լինել անտի, ընդէ՞ր ընաւ երկնչէի յօրէ յայնմանէ, ուր պարտ էր ինձ ուրախ լինել վասն ազատելոյ 'ի թշուառութենէ կենցաղոյս, և 'ի ծանրաբեռնութ̃է մարմնոյս։

Այսոքիւք բանիւք ըսելեայն իմն ցուցանէ մարգարէն և զայս, թէ ոչ յիմեքէ ինչ այնչափ պարտ է երկնչել՝ որչափ 'ի մեղաց և յանօրէնութ̃էց· և դարձեալ թէ պարտ է զհետ լինել արդարութեան և սրբութ̃ե· զի որպէս մեղք և անօրէնութիւնք պատճառ լինին երկիւղի, նոյնպէս և գործք արդարութեան և սրբութ̃ե պատճառ լինին ուրախութեան և վստահութ̃ե։ Ծառայ՝ որ բարւոք պաշտէ զտէր իւր, վստահ կայ· տնտես՝ որ պատրաստ ունի զամենայն ըստ կարգի, և գրեալ զամենայն ը̃ օրինի՝ ցանկայ տալ զհամար վստահութ̃բ. իսկ որ խառնափնդորն իցէ՝ երկնչի յաւուր չարի, այսինքն յաւուր՝ յորում պարտաւորի համարս տալ։ Զայս թէպէտ և ամենեքին կարեն իմանալ, բայց ոչ կամին անսալ, այլ ընկղմեալ 'ի մնոտիս՝ 'ի նոսին հաճին մնալ և զուարճանալ. զորոց և 'ի մասնաւորի խօսի մարգարէն 'ի յաջորդ համարն ասելով։

Է. Յուսացեալք 'ի զօրութիւն իւրեանց. 'ի բազմութիւն մեծութե̄ իւրեանց պարծեսցին։

Զօրութիւն ասելով աստ՝ իմանայ զայն ամենայն, որով զօրանայ մարդ, այսինքն որով կարող լինի առնել զոր կամի, որպիսի է իշխանութիւն, հնարագիտութիւն, ուժեղութիւն, ևն. և տիրապէս փարթամութիւնն. զի սա՝ որպէս փորձն ցուցանէ՝ առաւել քան զամենայն զօրաւոր գտանի յաշխարհի. մինչև բազմաց յայն եւեթ դնել զյոյս իւրեանց, և 'ի նոյն պարծիլ անկարգ իմն ուրախութեամբ. որպէս յայտ է 'ի մեծատունն յայն՝ որ ասէր առ ինքն. * անձն՝ ունիս ,, բազում բարութիւնս ||. ևն. (ղուկ. ժբ. 19.) յայսպիսիս հայելով ասէ։

Յուսացեալք 'ի զօրութիւն իւրեանց. 'ի բազմութիւն մեծութեան իւրեանց պարծեսցին։ Կամի ասել. վայ այնոցիկ՝ որք յուսացեալ իցեն 'ի զօրութիւն իւրեանց. վասն զի փոխանակ զգործս բարիս պատրաստելոյ, առ 'ի աներկիւղ մնալ յաւուր չարի, մանաւանդ յաւուր մահու և դատաստանի, 'ի մեծութիւնս իւրեանց յուսան և 'ի նոսին պարծին, յաղթել նոքօք ամենայնի և փառաւորիլ յամենայնի։ Զայս բան յառաջ բերեալ սուրբ գիս շնորհալի ('ի մեկն. յակ. դ. 16. ճառ Ժ.) գրէ այսպէս. * յուսացեալք 'ի զօրութիւնս իւրեանց և 'ի ,, բազում մեծութիս, պարծին. (որպէս թէ ինքնատէրք իցեն, և անձին քաջութ̃բ զամ̃ իմն վճարել ,, և շահել կարիցեն.) և ոչ ակն ածեն 'ի գլոց դատաստանաց, որ դատապարտեն զայնոսիկ՝ որք 'ի զօ ,, րութիւնս իւրեանց պարծին ||։ Նա զի 'ի պարծանս իւրեանց խաբին. զի յաւուր մահու և դատաստանի ոչ գտցին և ոչ երևեսցին այն մեծութիւնք նոցա. և եթէ գտցին ևս, ոչ կարասցեն օգնել նոցա. զի յայնմ աւուր չիք ուստեք օգնութիւն՝ ոչ 'ի մեծութեց և ոչ յիշխանութեանց, ոչ 'ի բազմութեան բարեկամաց և ոչ 'ի գթութեան եղբօր. Ուստի առ այս յարէ.

Է. Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ. և ոչ տայ այ զփրկանս իւր. և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ։ Այս բան նկարագրէ զաններելի հանգամանս մահու և դատաստանի այն. զի որովք հնար էր ներումն գտանել՝ անդ զնոսին ևս 'ի բաց առնու՝ որպիսի են եղբարք, և բարեկամք, ստացուածք և ինչք. և նախ հայելով յեղբարս և 'ի բարեկամս՝ ասէ.

Եղբայր ոչ փրկէ՝ և ոչ փրկէ մարդ։ Այսինքն 'ի հասանել աւուր մահու կամ դատաստանի՝ հարազատ եղբայր քո՝ յոր յուսացեալ էիր, ոչ փրկէ զքեզ, կամ թէ եղբայր քո որ պարծիս 'ի մեծութեան՝ 'ի հասանել քո յօր մահու՝ կամ դատաստանի՝ ոչ կարէ այնու մեծութեամբ փրկել զքեզ. և եթէ եղբայր քո ոչ կարէ փրկել զքեզ, ապա և ոչ ո և իցէ մարդ՝ թէ՛ բարեկամ իցէ և թէ մերձաւոր, թէ՛ ծնօղ իցէ և թէ կողակից։ Յաշխարհի աստ կարէ եղբայր յեղբօրէ օգնիլ. (առակ. ԺԸ. 19.) և անսասան պահիլ իբրև զքաղաք ամուր. (սաղ. ՃԻԴ. 1.) իսկ յօր մահու և դատաստանի ոչ ոք օգնէ, և ոչ որք սուրբքն են. ոչ յոբ և ոչ դանիէլ ըստ ասելոյ եզեկիելի. (ԺԴ. 14.) Հայելով ապա և 'ի ստացուածս, և յինչս ասէ.

Եւ ոչ տայ այ զփրկանս իւր։ Փրկանք է այնպիսի ինչ տուրք կամ գինք՝ որով փրկի ոք. որպէս յորժամ տայ ոք ումեք դրամ՝ առ 'ի փրկել զորդի իւր 'ի ձեռաց նորա, այն դրամք ասին փրկանք. Արդ զինչ ունի առէ մարդ տալ այ առ 'ի փրկել զինքն. ըստ այնմ. * զինչ տացէ մարդ փրկանս ընդ անձին իւրոյ ‖. (մատ. ԺԶ. 26.) ոչ ինչ. զի թէ՛ փարթամութիւնք իցեն և թէ իշխանութիւնք, չարժեն ինչ առաջի այ. և թէև արժեսցեն, յաւուր մահու ոչ մնան նոքին, և յաւուրն դատաստանի ոչ երևին. * անդ 'ի դատաստանի (ասէ
„ գէորգ վարդապետ 'ի մեկն. եսայ.) մի միայն բան
„ պատուի, (այսինքն) թէ ահա մարդ և գործք իւր.
„ զի ոչ տէր և ոչ ծառայ խնդրի, այլ ոգւոց առաքի-
„ նութիւն ‖. Եւ արդ եթէ մարդ չունի վասն անձին իւրոյ ինչ տալ փրկանս յաւուր մահու և դատաստա-

նի, վասն այլոց զիա՞րդ կարիցէ տալ. (Նարեկ. բան ծա̄.) Իսկ առ առաւել հաստատելոյ զայս յաւելու ասել.

Եւ ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ.

Այսինքն ոչ միայն ոչ կարէ տալ իւիք զփրկանս անձին իւրոյ, այսինքն հոգւոյ իւրոյ, այլ և ոչ իսկ ունի զայնպիսի ինչ՝ որ իցէ համասար գին հոգւոյ առ 'ի ստանալ զնա. վասն զի արժողութիւն հոգւոյ մարդոյ է բարձր և առաւել քան զյարգ ա̄ և իցէ բարեաց աշխարհի, նաև նոյն իսկ համօրէն աշխարհ ոչ կարէ լինել գին միոյ հոգւոյ.

Այլ ծանիր, զի ա՛յլ է գինն և այլ փրկանքն. յոր միտս ասէ սարգիս Շնորհալի. ('ի մեկն. ա̄. պետ. ա̄. 12. Ճառ ը̄.) * զիա՞րդ 'ի փրկանսն գինք, և որ- ,, պէս 'ի գինսն փրկանք‖. Գինն լոկ ինքեան կարգի 'ի ստանալ և ոչ 'ի փրկել. և փրկանքն կարգի յազատել՝ թէև առանց գնոյ. Բայց քանզի որ տայ ինչ առ 'ի փրկել, նոյն տուեալն համարեալ լինի իբր գին փրկութեան, նմին իրի փրկանքն ևս կարէ ասիլ գին. յոր միտս բազումք զփրկանսն սահմանեն. * գին ,, փրկելոյ‖. յայս իսկ և մարգարէն 'ի միասին դնէ յասելն. * և ոչ զգինս փրկանաց անձին իւրոյ‖. որպէս թէ ասէր. ոչ կարէ մարդ տալ ինչ 'ի ստանալ զոգին և 'ի փրկել. որովհետև չունի ինչ՝ որ լիցի համասար գին այնմ.

Միայն արժանաւորութիւն գործոց որդւոյն այ̄ ունելով զանբաւ արժողութիւն, կարէ լինել գին ամի̄. վասն որոյ որք միանգամ այնմ արժանաւորութե̄ հաղորդ գտան և գտանին 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի կատարած, նոքա ևեթ ունին 'ի նմա զփրկանս հոգւոց իւրեանց. Իսկ զի զայս պարտ է ստանալ ոչ եթէ յայնմ բոպէի՝ յորում բաժանի հոգին 'ի մարմնոյ, այլ յորժամ կենդանի է մարդ, 'ի սոյն կամելով յորդորել մարգարէին՝ յարէ զկնի, և ասէ.

Ը̄. Վաստակեսցէ յաւիտեան և կեցցէ մինչ իսպառ. և ոչ տեսցէ զապականութիւն.

Վաստակել և աշխատել թէպէտ և 'ի նոյն միտս 'ի գործ ածեն, բայց վաստակելն 'ի մէջ բերէ և զաաւելութիւն ինչ յաշխատանան հանդերձ շահու. և զի առաւելութիւն աշխատանաց է պիտոյ առ փրկութիւն, վասն որոյ ասէ.

Վաստակեսցէ յաւիտեան և կեցցէ մինչ իսպառ, եւն. Այս բան՝ երրակի առաջի դնի. ըստ միոյն՝ բառդ յաւիտեան՝ նշանակէ միշտ, և բառդ մինչ իսպառ՝ նշանակէ մինչև յաւարտումն կենաց. և ըստ այսմ բայդ կեցցէ՝ դնի իբր հրամայական. նոյնպէս և բայդ ոչ տեսցէ. որպէս թէ ասէր. վաստակեա միշտ 'ի գործս բարիս, և կեա՛ց յայն գործս մինչև ցայն ժամանակ՝ յորում սպառին աշխատանք քո. և մի ընդու տեսանէր զապականութի. այսինքն մի գործեր զայնպիսի գործ, որ ապականի և ունայն ելանէ.

Ըստ երկրորդին՝ բառդ յաւիտեան՝ նշանակէ զգործս արժանիս յաւիտենական կենաց. և բառդ մինչ իսպառ՝ նշանակէ միշտ կամ 'ի յաւիտեան. և ըստ այսմ բայդ կեցցէ՝ դնի իբր սահմանական կամ իբր ստորադասական, նոյնպէս և բայդ ոչ տեսցէ. որպէս թէ ասէր. վաստակեա 'ի գործս արժանիս յաւիտենական կենաց. որպէս զի 'ի հասանել մահու կեցցես 'ի յաւիտեան և ոչ տեսցես զգործս քո ապականեալ կամ ունայն, այլ լի պտղովք՝ որ է ասել, ոչ ապականեսցին, կամ ոչ ունայն լիցին աշխատանք քո, այլ արդիւնաւոր. Եւ կամ դարձեալ, 'ի մեռանել քո ոչ տեսցես զթշուառութիւնն, այլ զերանութիւն. Յոր միտս յառաջ բերեալ մեծն Խոսրով զայս բան. ('ի մեկն. ժամագ. երես 295.) գրէ այսպէս * վաստա-
,, կեա յաւիտեան և կեցցես, եւն. և որ իցեն (ասէ)
,, յաւիտենականացն վաստակք, միթէ երկրիս հաս-
,, տատութիւնք և համբարք. քա՛ւ լիցի. այլ՝ առ ա̃ծ
,, սէրն, և պատուիրանացն պահպանութիւնք, որոյ
,, փոխարէն կեցցես ասէ իսպառ. և ոչ տեսցես զա-
,, պականութիւն. ապականութիւնն է տանջանքն ան-
,, հատ . . . որ անմահ ապականութեամբ ապականեն,
,, և ոչ սպառեն||.

Ըստ երրորդին՝ բառդ յաւիտեան՝ նշանակէ զմի և նոյն ժամանակ. զի որպէս ասէ Ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. Դ.) * զանցեալն և զներկայն և զապառ-
,, նին գիրք գիտեն յաւիտեան կոչել||. Եւ ըստ այսմ

կամի առնել · վաստակեա՛ յամ ժամանակի, մի՛ հայիր յանցեալն, և մի՛ տագնապիր յապագայէն, այլ միայն աշխատեա՛ ՚ի ներկայն, և գանձեսցես վարձս և ոչ զապականութիւն · մի՛ ջանար ժողովել, այլ ջանա՛ աշխատիլ՝ զի ժողովեսցես · վաճառականն ոչ ջանայ գանձել, այլ աշխատի՝ զի գանձեսցէ · երկրագործն ոչ ջանայ շտեմարանել, այլ աշխատի՝ զի շտեմարանեսցէ · աշխատեա՛ և դու, զի շահեսցիս ։

Մի՛ թող տար անցանել աւուրդ ունայն · այլ զօրացիր գործել զգործ քո ։ Ապեղէս անուանի պատկերահան ոչ թողոյր զօր մի՝ յորում ոչ աշխատէր յարհեստի իւրում · եթէ պատահէր նմա անաշխատ մնալ՝ ասէր · գիծ մի այսօր ոչ գծեցի ։ Եթէ և քեզ դիպեսցի պակասիլ յաւուր միում ՚ի գործելոյ զգործ փրկութե̃ հոգւոյդ, ասա՛ · զի եղև՝ զի գիծ մի այսօր ոչ գծեցի · զայս ասելով մի՛ թուլանար ։ Աղեղն լարելով խիստ՝ խորտակի · իսկ հոգին ընդ հակառակն թուլանալով վատնի ։ Եթէ անհոգ կայցես, կործանեսցիս · * ՚ի վատութենէ ,, խոնարհեսցին հեծանաձգութիւնք ∥ · (Ժող · Ժ · 18 ·) Իսկ եթէ աշխատեսցիս, տասն քանքարաւ տասն ես շահեսցիս · և որ վարձահատոյցն է՝ տացէ քեզ իշխել ՚ի վերայ տասն քաղաքաց, զի առատ է ։

Այս քան կարէ հայիլ և ՚ի հասարակի յո՛ և իցէ աշխատանս, և դնի իբր յորդոր պարապելոյ գործոց, և չմնալոյ անգործ և դատարկ · զի դատարկութիւնն է մայր չարեաց և նաւատակ (այսինքն օճնթինա) ախտից և մոլութեանց ։ Բայց կան ոմանք որք ոչ կամելով աշխատիլ՝ առաւել հաճին հիւանդ մնալ, կամ կուրաթեամբ կեալ, կամ կաղ գնալ, և անաշխատ մուրալով կեալ՝ քան յաշխատութեան զուարճանալ · լաւ էր նոցա ոչ ծնանիլ քան այսպիսի կենօք սնանիլ ։ Բեռն են նոքա աշխարհի, բեռն են այլոց, բեռն են և ինքեանց · նաև խօսելն իսկ զայսպիսեաց բեռն է լսողին և ծանր խօսողին · վասն որոյ թողեալ զնոսա տեսցուք զոր ասէ մարգարէն ։

Ժ. Յորժամ տեսցես՝ թէ իմաստունք մեռանին. 'ի միասին անզգամք և անմիտք կորիցեն. և թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց.

*Նախս իմաստունք՝ իմանայ աստ մարգարէն մանաւանդ զայնոսիկ՝ որք յուսացեալ են յիմաստութիւն իւրեանց, և առաջի մարդկան երևին լինել այնպիսի. իսկ անզգամս ասելով իմանայ զայնպիսիս որք զուրկ են յամենայնի իմաստութենէ, կամ որք ոչ կամին զգալ ինչ զամենայնոց. և անմիտս իմանայ զայնպիսիս՝ որք զուրկ են 'ի մարդկայնի իմաստութենէ և են յիմար. զի որպէս գրէ Ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. Ն.) * յիմարն՝ անմիտ լսի կամ անբան կամ անզգայ||. զերից զայսմանէ խօսելով՝ զայլս ևս տայ ըստ սոսին իմանալ՝ յասելն.*

Յորժամ տեսցես՝ թէ իմաստունք մեռանին. 'ի միասին անզգամք և անմիտք կորիցեն. և թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց. *Ըստ բարւոք իմանալոյ զայս, պարտ է զնախընթաց հատուածն միացուցանել 'ի սոյն այսպէս. ոչ տեսցես զապականութիւն՝ յորժամ տեսցես թէ իմաստունք մեռանին, ևն. որպէս թէ ասէր. ամենեքին առ հասարակ ունին զմահ ճաշակել, եթէ իմաստունք և եթէ տգէտք, եթէ բարիք և եթէ չարք. ոչ իմաստութիւն կարէ զդէմ ունել մահու, և ոչ քաջութիւն իշխէ վանել զնա. ուստի ոչ ինչ իր կարէ օգնել մարդոյ յայնժամ, բայց միայն գործք բարիք. ուրեմն դու յայն և եթ ջանա, զի 'ի մեռանել քոյ՝ վաստակ քոյ մնասցէ.*

Իսկ 'ի մեռանել անձնապաստ իմաստնոց՝ իմաստութ̃ի նոցա ապականեսցի, նոյնպէս և 'ի կորնչել անզգամաց և անմտաց, զոր ինչ նոցա գնասցեն ընդունայն, և եթէ ունիցին զմեծութ̃ի, թողցեն զայն օտարաց, այսինքն այնպիսեաց՝ յորոց ինքեանք օտարանան՝ և նոքա յինքեանց, թէ բարեկամք իցեն և թէ թշնամիք, թէ որդիք իցեն և թէ այլազգիք. փոխանակ զի չեղեն հաւատարիմ յօտարին.

Ընդ հակառակն ևս կարէ մեկնիլ այս բան. իբր թէ ասէ՝ ամպարիշտն վայելելով յաստի կեանս՝ յորժամ տեսանէ թէ մեռանին իմաստունք և բարեպաշտք, փոխանակ զգաստանալոյ զայթակղի և վատթարա-

նայ՝ ասելով, զինչ առաւելութիւն իցէ իմաստութե՟ և ա՟ծապաշտութե՟. բայց եկեսցէ ժամանակ՝ զի զղջասցի. վասն զի անզգամք և անմիտք առ հասարակ կորիցեն, և զմեծութիւն նոցա այլք ժառանգեսցեն. իսկ ինքեանք փոխանակ մեծութեան ունիցին զյաւիտենական աղքատութիւն, և փոխանակ հեշտութեան և բերկրութեան՝ նեղութի՟ և տրտմութի՟, և փոխանակ ապարանից և յարկաց՝ զգերեզմանս։ Յաւել առ մարգարէին, յորժամ մեռցես, և այլն, տողին յորդոր լինի միանգամայն և 'ի տեսութիւն այնր որ մեռանի. մանաւանդ որ անզգամն իցէ և յիմար, զի այնու ըզգաստասցի և վաստակեսցի. հայեաց ասէ՝ թէ զիարդ մեռանի անզգամն և յիմարն. 'ի հասանել մահու տեսանէ՝ զի վայելչութիւնք աշխարհիս վերջանան վասն իւր. տեսանէ՝ զի ա՟մ զարդք տան իւրոյ աստ մնան, և զրամքն զորս հաւաքեաց՝ ոչ ևս են իւրեան. տեսանէ՝ զի որպէս տարան թաղեցին զայլս, նոյնպէս տանելոց են և զինքն. տեսանէ՝ զի որպէս մոռացաւ ինքն զայլս, նոյնպէս և այլք մոռանալոց են զինքն. և որպէս ինքն զարշէր յայլոց, նոյնպէս և այլք յիւրմէ. տեսանէ՝ զի հանեն զինքն 'ի տանէ անտի զոր շինեաց, և ածեն 'ի տունն յայն՝ զոր ոչ շինեաց. տեսանէ՝ զի ոչ ևս ունի խօսել, ոչ ուտել, և ոչ զգալ, այլ յա՟մէ զուրկ մնալ. տեսանէ՝ զի զոր արժան էր ոչ արար, և զոր չէր արժան՝ արար. զոր վայելեացն գնայ, և զոր ոչն վայելեաց՝ ոչ գայ. զոր կամի՝ ոչ կարէ, և զոր ոչն կամի՝ կրէ. պահանջողն ամենազգաստ, և ինքն անպատրաստ։

Յելս հոգւոյն 'ի մարմնոյն՝ տիրէ տագնապ յանդամսն 'ի յաչսն, յականջսն, յունչսն, յեղնգունսն, յատամունսն և յակերսն. զի բաժանին յայնմանէ՝ յորմէ ունէին զկեալ։ Ոչինչ ապա յետ ելիցն. տուն կործանեալ. նաւ ընկղմեալ. աղեղն խորտակեալ. գիրք աղաւաղեալ. բոլոր տգեղ, համայն զարշելի, ամենևին քամահելի. բաց զաչսն՝ ոչինչ տեսանէ. գոչեա յականջսն՝ ոչինչ լսէ. տանջեա զմարմինն՝ ոչինչ ըզգայ։ Բա՛ց և զգերեզմանն յետ քանի մի աւուրց. և գտցես զնա 'ի գարշանս։ Եւ յուսով նորա անդ յորդանց՝ ազգականք նորա 'ի բաժանումն ստացուածոց

նորա զբաղին և կռուին, և զորս եթող ուտեն. և ոմանք փոխանակ օգնելոյ հոգւոյ նորա՝ անէծս արձակեն
զկնի նորա.

Օ՜ սոյս հանապազ տեսանեմք, և ոչ զգաստանամք. և թէպէտ 'ի նախին պահու զգածիմք, այլ ոչ մտաբերեմք, և ոչ ինչ օգտիմք. և պատճառն է, զի այն զգածումն զգայական գոլով՝ 'ի զբաղիլ զգայութեանց ցնդի, և զոր տեսաքն 'ի մոռացօնս անկանի. Նա այսմ օրինակ է տեսութիւն դիմաց 'ի հայելւոջ. զի 'ի հայիլ մեր յայն՝ թէպէտև զդէմ յանդիման յատակ տեսանեմք զդէմ մեր. բայց իսկոյն մոռանամք զհանգամանս դիմաց մերոց. սոյն այս գրեթէ պատահի մեզ և 'ի տեսութեան մեռելոյն. Նա դարձեալ՝ 'ի տեսանել մեր զմեռեալս՝ համարիմք և գնեմք 'ի միտս մեր՝ թէ մեք այնպէս ոչ մեռանիմք, և ոչ յայնմ հասակի, և այլն. Նա այսու համարմամբ խաբեմք զմեզ. զի ոչ գիտեմք՝ թէ զիարդ իցեմք մեռանելոց, ո՞ւր, և ե՞րբ. զի որչափ ստոյգ է թէ մեռանելոց իցեմք, այնչափ անստոյգ է զիարդն, և ուրն և երբն. ոմանք 'ի ծովու հեղձան, և ոմանք յուտելն զեղծան. ոմանք 'ի քուն, և ոմանք 'ի հարսանիս. և սոքա ամենեքին ոչ գիտէին թէ այսպէս իցեն մեռանելոց, մանաւանդ երիտասարդք. բայց եմուտ արեգակն վաղն նոցա 'ի միջօրէի. (ամովս Ը. 9.) որոց վաղն 'ի յորդորել տեառն մերոյ՝ արթուն մնալ, առ ամենեսին ուղղեաց զբանն ասելով. * բայց զոր „ձեզդ ասեմ՝ ամենեցուն ասեմ արթուն կացէք‖. (մարկ. ժգ. 37.) Ո՛վ հաւատար հասակիդ, մի հաւատար առողջութեանդ, մի հաւատար և հանգամանաց անձինդ. Մահ ոչ փորձի. մի միայն է, և միանգամ. յիմար է՝ որ կամի փորձել զայն՝ որ ոչ կրկնի. Որք մեռանին՝ մեռան, այո՛ մեռան, և ըստ աստի կենացս կորեան. և ոչ եւս տեսանին 'ի միջի մերում. և ոչ մնաց նոցա ինչ յերկրի աստ, այլ միայն գերեզմանք նոցա առ ժամանակ մի, զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ
համարն, և ասէ.

Ժ. Գերեզմանք (նոցա) տունք նոցա եղիցին յաւիտեան. և յարկք նոցա ազգէ մինչև յազգ. և կարդասցեն անուանք նոցա 'ի հողս իւրեանց.

Նշաւիկ քեզ, զոր մարդիկ ժառանգեն 'ի վերայ երկրի յետ մահու.

Գերեզմանք (նոցա,) ասէ տունք նոցա եղիցին յաւիտեան. Ոմանք ունէին զտունս լցեալս բարեօք, և զարդարեալս պէսպէս իրօք. և յորժամ մեռանին, այն ամենայն եղև վասն նոցա իբրև չեղեալ, իսկ 'ի թաղել նոցա 'ի գերեզմանի՝ այն գերեզմանք նոցա եղեն նոցա 'ի տեղի տան յաւիտեան. (ժող. ժբ. 5.) յորում փոխանակ լիութեան բարեաց՝ տիրեսցէ բազմութիւն որդանց, և փոխանակ զարդուց՝ ծանրութիւն հողոյ.

Իսկ բառդ յաւիտեան՝ եթէ հայեսցի 'ի գործս, դնի ըստ յատուկ նշանակութեան իւրում՝ փոխանակ անվախճան տևողութեան. ըստ որում 'ի մեռանիլ մարդոյ՝ գործ նորա եթէ բարի իցէ, և եթէ չար՝ մնայ յաւիտեան, ոչ յինքեան՝ այլ յարդիւնս. Իսկ եթէ հայեսցի 'ի տունս և 'ի գերեզմանս, դնի աստ փոխանակ երկար դարու. և ոչ թէ ընդ ամենայն յաւիտեանս. զի ոչ ինչ գերեզման կարէ մնալ յաւիտեան. իսկ պատճառ յաւիտեան դնելոյ է ցուցանել զառաւելութի նշանակութե՟ն ըստ սովորութե՟ սուրբ գրոց. զոր առաւել ես կամելով բացատրել յարէ զկնի և ասէ.

Եւ յարկք նոցա ազգէ մինչև յազգ. Զգերեզմանս՝ զորս տունս կոչեաց, աստ կոչէ յարկս. և զոր 'ի վերայ յաւիտեան ասաց՝ աստ ազգէ յազգ դնէ. որով կամի ասել, թէ գերեզմանք նոցա եղիցին նոցա ոչ միայն տունք, այլ և յարկք բնակութե՟ նոցա. զի 'ի նոսա բնակեսցեն յազգէ յազգ. որպէս թէ ասէր. կացցեն ոսկերք նոցա 'ի գերեզմանս նոցա ընդ եր՟ ժամանակս. ազգք գայցեն և ազգք գնայցեն. և նոքա 'ի գերեզմանս անդ իբրև 'ի յարկս մնայցեն, և 'ի նոսին 'ի հող դառնայցեն.

Պատճառ յարկս կոչելոյ մարգարէին զգերեզմանս, թուի թէ այն է՝ զի հայի յայնոսիկ՝ որք կանգնեն ինքեանց զփառաւոր շիրիմս. որպէս զի յետ մեռանեեղ յիշեսցին նոքօք. բայց այն ոչինչ օգնեսցէ նոցա. զի ՚ի նոսին ևս կան մնան հողացեալք. և միայն անուանք նոցա առ ժամանակ մի լսին. ամէն իրի յարէ զնի տանելով:

Եւ կարդասցեն անուանս նոցա ՚ի հողս իւրեանց: Կամի ասել, ՚ի թաղիլ նոցա ՚ի գերեզմանի, և ՚ի լուծանիլ իւրեանց ՚ի հող, անուանք նոցա կարդացեալ լինին ՚ի հողս իւրեանց. ուր հողովք խնայեալ լինին նախ հաղալից գերեզմանք նոցա. զի ՚ի նոսին ընթերցեալ լինին անուանք նոցա. կամ որպէս գրէ Իգնատիոս վարդապետ. (՚ի մեկն. ղուկ. ԺԶ. 23.) Նոքօք յիշեն անուանք նոցա յասելն անդ. այս է թագաւորն այն՝ որ տիրեաց երկոտասան քաղաքաց. այս է բանաւորն այն, որ չարչարեաց զաղքատս. այս է բժիշկն այն, կամ իմաստունն այն, ևն. որովք միայն անուանք նոցա և գործք կարդացեալ լինին զժամանակ ինչ. իսկ ինքեանք ՚ի հող անդր կան անզգայ, և անշունչ. ոչ զօրութիւն զուարճանաց, և ոչ պարտաւորք դժուարանաց. մարմնով փտեն, և հոգւով ՚ի դժոխս տանջին. * յիշին՝ ուր ոչ են. տանջին՝ ուր են ||:

Երկրորդ՝ խնայեալ լինին հայրենիք նոցա. իբր զի յետ մեռանելոյ և թաղելոյ նոցա, յանցանել ժամանակաց և ՚ի կործանիլ և ՚ի ջնջիլ գերեզմանաց նոցա՝ կարդասցին, այսինքն յիշատակեսցին անուանք նոցա՝ ոչ յիւմ տեղիս, այլ ՚ի հողս իւրեանց, այսինքն ՚ի հայրենիս, կամ յայն տեղիս յորս թաղեցան, կամ յորս եղեն նոքա: Եւ այս ևս ոչ ամենեցուն պատահի այսպէս, այլ ոմանց միայն. զի բազմաց անուանք ոչ յիշին, և եթէ յիշեսցին ևս՝ ոչ զգան ինչ. վասն զի ինքեանք ոչ գոն. հոգին գնաց առ այն՝ որ ետ զնա. և հողն, այսինքն մարմինն դարձաւ յերկիր, որպէս և էրն. (Ժողով. ԺԲ. 7.) Իսկ անունն է ցնդական ինչ բառ, և զինչ շահ ընծայեսցին նոցա ՚ի յիշատակութենէ այնր:

Զայս բան երկրորդական մեկնութիւն մարթ է վերածել յայն սովորութիւն, զոր ունէին ոմանք առ գերեզմանս մեռելոց. զի ՚ի թաղման անդ գիրս նոցա՝ կարդան ՚ի հողն յայն զանուն նոցա, որպէս է տեսանել առ հեթանոսս, ևս և առ այնպիսի ազինս, յորս չէք ուղիղ ծանօթութի̃ հանդերձեալ կենաց. զի յետ թաղելոյ նոցա զմեռեալս իւրեանց՝ կացեալ առ հողով նոցա, կոչեն զանուն նոցա, և շնջեն պէսպէս բանս առ նոսա. այլ այս մեկնութի̃ արտաքոյ տեսանի դիտման բանից սաղմոսիս.

Ոմանք ընդ որս և Վարդան՝ տանիք և յարկօք իմանան զյատուկ տունս և զյարկս. ըստ որոյ միտ բանին լինի այս. 'ի մեռանիլ ամպարշտաց՝ տունք նոցա թէև լի իցեն գանձուք՝ մնան թափուր իբրև զգերեզմանս, և յաւիտեան այնպէս համարեսցին վասն նոցա. նոյնպէս և մեծամեծ ապարանք նց̃ թէև տեսցեն ազգէ յազգ, վասն նոցա համարեալ լինին իբրև զգերեզմանս, և միայն անուանք նոցա յիշին յերկրի իւրեանց, կամ յայնոսիկ տեղիս՝ յորս հասեալ իցէ համբաւ գործոց նոցա.

Բարոյապէս տունք ամպարշտաց, այսինքն չար գործք նոցա լինին իբր գերեզմանք նոցա, յորս թաղին հոգիք նոցին 'ի թաղել մարմնոց նոցա 'ի հող. նոյնպէս և յարկք նոցա, այսինքն բարձրացեալ խորհուրդք նոցա կործանեսցին յազգէ առ ի յազգ ընկերութեան դիւաց, և միայն անուն նոցա մնասցէ, եթէ և այն յաջողեսցի. Արդ յայտ արարեալ մարգարէին զյիմարութիւն մարդկան յուսացելոց յերկրաւոր մեծութիւնս և յանցաւոր փառս և 'ի զգայական բերկրութիս և 'ի գարշելի հեշտութի̃ս, յայտ առնէ այժմ և զպատճառն այնր ասելով.

ժա̃. Մարդ 'ի պատուի էր՝ և ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից և նմանեցաւ նոցա.

Պատուին կրկնակի առեալ լինի, ներգործաբար և կրաւորաբար. ներգործաբար առեալ նշանակէ զընծայութիւն յարգութե̃, այսինքն զայն ներգործութի̃, որով ոք պատուէ կամ յարգէ զմարդն. կրաւորաբար առեալ՝ նշանակէ զկատարելութի̃ արժանի պատուելոյ, կամ զայնպիսի ինչ, որոյ վասն արժան է պատուել, կամ յարգութի̃ մատուցանել. Ըստ այսմ կրաւորական նշանակութե̃ առեալ լինի աստ բառդ պատուի.

Արդ պատիւ մարդոյ 'ի հասարակի մտածեալ յերիս տեսանի, մի՝ ըստ բանական գոլոյ իւրոյ, յորում զոխայեալն է անմահութ՟ի հոգւոյ, խնդակամութեամբ մտաց, անձնիշխանութ՟ի կամաց. և որ մեծն է՝ նմանութ՟ի ա՟յ՝ գոլով ստեղծեալ 'ի պատկեր նորա։ Երկրորդ՝ ըստ գերբնական գոլոյ, որով գտանի ընդունակ ա՟ծային շնորհաց և պարգևաց, և կարգի 'ի ժառանգութիւն ա՟ծութ՟ե 'ի յաւիտենական կեանս։ Երրորդ՝ ըստ արտաքին կերպարանաց, որով գերազանց տեսանի քան զա՟մ կենդանիս և վայելուչ 'ի կալն ուղղորդ յոտին. և զգայարանք նորա յարմար գործի բանական մտաւին, մանաւանդ լեզուն, որ յօդէ արտաքոյ զներտրամադրեալ բանսն, ընդ նմին և ականջք, որք ընդունին յինքեանս ընդ ձայնին և զբանսն։

Առան այսպիսի գերազանցութ՟ե մարդոյ՝ ա՟ծ զայլ իմն պատիւ յաւել 'ի նա, այսինքն է իշխել 'ի վերայ ամենայն կենդանեաց, և այս՝ կամ հրամայելով նոցա, որպիսի եղև յադամ, և կամ հնարիւք վարելով, որպէս յայլս. Թող զպատիւն զայն՝ զոր արար ա՟ծ՝ տալով իւրաքանչիւր մարդոյ զմի մի հրեշտակ 'ի պահպանութիւն։ Թող և զայն ամենամեծ պատիւ, զոր առնելոց էր, որպէս և արարն իսկ համօրէն մարդկայինս բնութ՟ե, միանալով ընդ այն, և լինելով մարդ։ Այսպիսի և յայսպիսի պատիւ վերաւեալ եղև մարդ, այլ ոչ գիտաց, և ոչ գիտէ վայելել, վ՟ա որոյ ասէ։

Մարդ 'ի պատուի էր. և ոչ իմացաւ։ Այս բան ասի նախ զմարդկային բնութ՟է կամ զմարդոյ եղելոյ 'ի վիճակ անմեղութեան. որպիսի եղև ադամ, որ 'ի պատուի սկզբնական արդարութ՟ե գոլով՝ ոչ իմացաւ, այսինքն ոչ գիտաց զյարգ այնր պատուոյ (կամ ռամկօրէն ասացից, խըզմէթը չգիտցաւ կամ խադրը չիմացաւ). որ է ասել. ոչ կամեցաւ իմանալ, և ըստ այնմ զգուշանալ 'ի պահել զայն պատիւ. այլ անսալով թելադրութ՟ե օձին՝ կորոյս զնոյն։

Որով և հաւասարեցաւ անասնոց անբանից՝ և նմանեցաւ նոցա։ Այս հաւասարութիւն և նմանութ՟ի հայելով 'ի կարգ բնութ՟ե՝ մտածի ըստ չորից. մի՝ ըստ նուաստանալոյ հանգոյն անասնոց. որով փոխանակ պտղոյ դրախտին, որով նշանակին ճաշակք հրեշտակային կենաց՝ էջ մարդն 'ի նուաստութիւն ճաշակման խոտոյ, այսինքն անասնական գործոյ։ Երկրորդ՝ ըստ ծառայելոյ ըղգայութեանց, որ յատուկ է անասնոց, 'ի յուտելն, 'ի ննջելն, և այլն. զի այսպիսի թէպէտ մարդոյ ևս էին, բայց հպատակելով բանին, և ոչ ապստամբելով 'ի նըմանէ. որպէս է այժմ: Երրորդ՝ ըստ նկուն լինելոյ յանասնոց. զի որ իշխէր նոցա՝ այժմ կրէ 'ի նոցունց. զարհուրի 'ի նոցանէ, և զգուշանայ 'ի դաժանութ̃է նոցա, և նոքա 'ի մարդոյ: Չորրորդ՝ ըստ անկանելոյ ընդ մահուամբ որպէս զանասունս:

Նուազի * հայելով 'ի կարգ բնութեան‖. իսկ եթէ հայեսցուք 'ի գերբնական վիճակ, այս հաւասարելս և նմանիլս անասնոց՝ մտածի ըստ երից, մի՝ ըստ զրկման շնորհաց. երկրորդ՝ ըստ պակասելոյ երկնային իմաստութեան. երրորդ՝ ըստ եղծման անարատ վարուց. զի որ զուրկ է յա̃ծային շնորհաց, և պակասեալ է յերկնային իմաստութ̃է, և եղծեալ է 'ի վարս, այնպիսին հաւասար համարի անասնոց անբանից և նման նոցա:

Ոչ դնէ մարգարէն սոսկ հաւասարիլ, այլև նմանիլ, հաւասարեցաւ ասէ անասնոց անբանից, և նմանեցաւ նոցա. զի հաւասարիլն կարէ լինել առանց նմանութ̃ե բնութ̃ե, և հայի 'ի չափակցութիւն և 'ի համեմատութիւն. իսկ նմանիլն հայի և յորպիսութ̃ի բնութ̃ե: Արդ մարդն հաւասարեցաւ անասնոց կորուսանելով զչափակցութ̃ի կամ զբարեկարգութիւն չորից մասանց, այսինքն մտաց, կամաց, ցանկականին և ցասմնականին. զի 'ի միտս՝ տիրեաց կուրութ̃ի, 'ի կամս՝ չարութ̃ի, 'ի ցանկականն՝ անկարգութ̃ի, և 'ի ցասմնականն՝ տկարութիւն: Նմանեցաւ ևս անբանից, զի կորոյս զգոլն մարդ հոգևոր. և եղև մարդ շնչաւոր:

Ա̃ծ յետ ստեղծանելոյ զադամ էած առաջի նորա զամենայն կենդանիս իբրև առաջի թագաւորի նոցա. և ցուցմամբ նոցին գրեթէ ասէր ցնա. տեսանես, զի յայսչափ կենդանիս ոչ ոք նմանի քեզ ըստ բանական գոլոյ, և ոչ մին հաւասարի քեզ ըստ չափակից լինելոյ. վասն որոյ ասէ գիրն. (Ծնն. Բ̃. 20.) * բայց ա„դամայ ոչ գտաւ օգնական նման նմա‖. և յետ տեսանելոյ նորա զամենայն կենդանիս՝ ստեղծ ա̃ծ զեւա զնմանն նմին, բայց ստորև քան զնա: Նա սակայն ոչ իմացաւ ադամ զայս պատիւ իւր. այլ դարձաւ հաւասարեցաւ այնոցիկ անբան կենդանեաց. յորոյ վերայ լայ մեծն խոսրով ('ի մեկն. ժամագր. երես 71.) յասելն. * քանզի էր և ադամ պատուալից, այլ անիմաց եղեալ՝ հաւասար անասնոց և նման նոցա գտաւ ||.

Զի որպէս նոքա ոչ ճանաչէին զա՟ծ, և ոչ գիտէին՝ թէ պարտ է հնազանդիլ ա՟յ, սոյնպէս և ադամ ընդ նմին և եւայ որպէս արժանն էր՝ ոչ ծանեան զայս, ապա թէ ո՛չ՝ ոչ համարձակէին զհրաման նորա եղծանել. և զի 'ի նոյն յանդգնեցան, վասն այսորիկ անասնոց նմանեցան.

Իսկական պատճառ այսր ոչ այլ ինչ թուի լինել, բայց եթէ սկզբնաւորութիւն հպարտութեան ադամայ. վասն զի յետ տեսանելոյ նորա զինքն յայնպիսի շնորհս վերացեալ և յայնպիսի իմաստութիւնս փայլեալ, ես և յետ տեսանելոյ զարարածս, և զայնքան կենդանիս ածեալս առաջի իւր իբր առաջի տեառն, ոչ ետ փառս արարչին՝ այլ իբր անկարօտ եկաց, և իբր ինքնարար. (ակէնխոնինչէնսոի). Իսկ ա՟ծ առ 'ի զգուշացուցանել զնա՝ հրամայեաց նմա՝ զի մի կերիցէ 'ի ծառոյ միոջէ՝ որ էր 'ի միջին տեղւոջ դրախտին. զի սովին ծանիցէ թէ ոչ է ինքնատէր, այլ ընդ հրամանաւ արարչին. Իսկ սակայն յոչ խոնարհիլ նորա ըստ արժանւոյն՝ եթող զնա ա՟ծ. և նա թողեալ զա՟ծ՝ հանգոյն անասնոց ոչ իմացաւ՝ թէ պարտ է հնազանդիլ հրամանի նորա. և 'ի համարձակիլն ընդդէմ այնր՝ կորոյս զգերագոյն գոլ իւր, և նմանեցաւ այնոցիկ՝ որք ամենայն մասամբք ստորին էին քան զնա, այսինքն անասնոց անբանից: Զայս միտս երեւի լինել և սարգիս շնորհալի ('ի մեկն. ա՟. պետ. ա՟. 3. ճառ բ՟.) յասելն. * փոխանակ զի ադամ ոչ գոհացաւ 'ի վայելս փափ„ կութեան դրախտին, և ոչ փառաւորեաց զպարգեւա„ տուն, այլ (իբր ինքնարար) զլացաւ զշնորհն, նո„ րին աղագաւ մերկացաւ 'ի փառացն և կորոյս ըզ„ պարգեւսն ||. և եղեւ նման անասնոց, ես և գազանաց անմտից. ըստ որում ասէ և բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժզ.) * 'ի յանցանելն մարդոյ զօ„ րէնօք՝ հաւասար գտաւ անասնոց անբանից և գազա„ նաց անմտից ||.

Սովին այսու ցուցաւ՝ թէ ոչ դիւրին է մարդոյ 'ի

բարձրութեան և 'ի փառաւորութե՟ կալով մնալ խոնարհ, և 'ի հանգստեան տեւել երկար. զի որպէս գրէ նոյն բարսեղ ('ի գլ. ժդ.) * դժուարին է' պատուոյ ,, տանիլ քան թշնամանաց ||. Ուստի և հասարակաց կարծիք է թէ ադամ սակաւ եկաց 'ի վիճակի անմեղութեան և 'ի դրախտի. մանաւանդ թէ որպէս ասէ նա ինքն բարսեղ ('ի գլ. թ.) * թերևս և ոչ մի օր ող-
,, ջոյն եկաց 'ի դրախտն ||.

Ի հաւասարիլ ադամայ և եւայի անասնոց' ծնունդք նոցա ըստ նոցին մոլորեցան. ուստի և * անասնոց ան-
,, բանից նմանեցան և գազանաց վայրենեաց (ըստ ո-
,, րում գրէ սարգիս շնորհալի 'ի մեկն. ա. պետ. գ.
,, 20. յառ. ը.) պէսպէս խայտաբղէտութեամբ մե-
,, ղացն, և նենգութ՟բ, և գազանական յափշտակու-
,, թ՟բ, և թունաւորութ՟բ ||.

Տեսեալ ապա արարչին ամենայնի' թէ մարդիկ և անասունք հաւասարեալ են' գրեթէ ոչ կարաց որոշել զնոսա, զի նման եւս միմեանց. վասն որոյ և 'ի միասին ջնջեաց զնոսա ջրհեղեղաւ. զի որոց վասն արար զանասունս' չերևէին լինել այնպիսի. ուստի եթէ զնոսա և եթէ զոսա եբարձ 'ի միջոյ. զնոսա' զի անասնացեալ էին. զոսա' զի գրեթէ ոչ ևս էին պիտոյ. քանզի ինքեանք եղեն վասն պատկերին այ՟ և ոչ վասն անասնացելոց. ապա յանասնանալ այնր, սոքա դադարեցան 'ի լինելոյ վասն նոցա ։

Բայց զի մի իսպառ ունայնասցի գործառնութիւնն այ՟' կամեցաւ նորոգ ընձիւղեցուցանել զմարդիկ 'ի նոյայ իբր յարմատոյ. այլ նոքա ևս այսինքն սերեալքն 'ի նոյայ' խոտորեցան, և 'ի միասին անպիտանացան' եթէ որք թողանն' այսինքն են հեթանոսք, և եթէ որք առանն' այսինքն են հրեայք. Իսկ առ 'ի դարձեալ նորոգել զա՟մն զնոսա' եկն առ նոսա, և 'ի նշան նորոգութեան' որով կամեցաւ յանասնութե՟ 'ի բանաւորութիւն վերածել զնոսա' նստաւ 'ի վերայ իշոյ և յաւանակի. Զայս յառաջ բերեալ բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա.) գրէ այսպէս. * էշն նշա-
,, նակէ զհրեայս, և յաւանակն զհեթանոսս. զի երկո-
,, քին ևս յանցաւոր գտան օրինաց, հրեայք գրաւո-
,, րականին, և հեթանոսք բնաւորականին. ըստ այնմ

„ Թէ ամենեքեան խոտորեցան և հաւասարեցան ա-
„ նասնոց անմտից. այսինքն իշոյ. զի սա կոչի անմիտ
„ յանասունս‖. զի որպէս ասէ Շնորհալին ('ի մեկն.
„ մատ. գլ. Ի.) * ողեք ըմբռնեալք 'ի չարէն, 'ի մտաց
„ և անկանելն‖.

Այս բնաբան երկրորդաբար ասէ զայնոսիկ 'ի հասարակի, զորս յիշեաց մարգարէն 'ի վերոյ. որպիսի է և նա՛ որ յուսայ յերկրաւորս ևեթ, և 'ի նոյն եդեալ է զերկրաւորութիւն իւր, և չունելով յոյս զհանդերձեալ կենաց, ցանկայ յերևելիս վայելել. եթէ համեմատեցաւ ընդ անասնոց անբանից, հաւասար գտանի նոցունն. վասն զի նմանեցաւ նոցա. իբր զի որպէս անբան անասունք առանց բանականութեան գործեն, և միայն 'ի զգայական իրս յարին, այնպէս և մարդ առանց ուղիղ կանոնի բանականութեան գործելով, և ըստ բարուց անասնոց 'ի զգայականս յարելով, և 'ի նոսին բերկրելով և ոչ 'ի յաւիտենական և յանանց բարիս, այսու նման գտանի նոցա, և լինի իբրև զանբան անասունս 'ի խելթկել, և իբրև զգազան 'ի խածանել նախատանօք և բամբասանօք. Ըստ որ թաղձագինս խօսի տարգիս Շնորհալի ('ի մեկն. ա. պետ. կ. 22. Ծնն. Ը. յոդ.) ասելով. * դու բանիւ և իմաստութեամբ զարդա-
„ րեցար. և զպատիւն քո տիրապէս ոչ իմացար. այլ
„ անասնոց նմանեցար անբանից, կորուսանելով զբա-
„ նական պատիւն քո, և զվեհ իմաստութիւնն. հնա-
„ ցար մեղօք, ծերացար անօրէնութեամբ, դարձեալ լու-
„ ծեալ 'ի հող դարձար‖.

Զայսպիսիս ոչ համարէր մարդ դիոգինէս փիլիսոփայ. վասն որոյ և լապտեր 'ի ձեռին շրջէր 'ի ցերեկի՝ գտանել զմարդ. և 'ի հարցանել ոմանց՝ թէ զի՞ է զի 'ի տունջեան լապտերով շրջիս, պատասխանէր, մարդ որոնեմ. և յասել նոցա, թէ զորս տեսանես՝ ոչ են մարդիկ, պատասխանէր, ոչ. զի նման են անբանից.

Յարմարական մեկնութիւն այս բան պատկանի այնոցիկ՝ որք 'ի մէջ եկեղեցւոյ 'ի պատիւ առաջնորդութեան վերանան. և իւրեանց անկարգութեամբ՝ աշխարհականաց հաւասարին, որով և արժանի լինին զրկելոյ 'ի պատուոյ անտի, զոր ոչ իմացան. Ուստի ասէ Իգնատիոս վարդապետս ('ի մեկն. ղուկ. ժդ՟. 34.) * որ զառաջնորդութիւն ստացաւ, և իւրով հեղգութե՟ն անպիտան գտաւ, չէ յայլ ինչ պիտանացու յեկեղեցւոջ ա՟յ. այլ ընկենուլ արտաքս՝ զի կոխեսցի յամենեցունց իբրև զաղ անհամեալ. զի մարդ 'ի պատուի էր, և ոչ իմացաւ ‖ ։ Օ՜ սոյն խմն և զպատուոյ իշխանութեան և մեծութե՟ն. զոր բազումք մոլեգին ստանան, և ոչ իմանալով զկարգ նորին՝ նովին գազանանան. և այսու ամենայնիւ հետամուտ լինին մեծանալ 'ի նմին. վասն որոյ և արժանի լինին ստգտանաց և անարգանաց. զի որպէս հետևումն առաքինութե՟ն սկսանի առնել զմարդն առաքինի, սոյնպէս հետևումն սնոտի պատուոյ սկսանի առնել զմարդն ստգտանելի ։ Պատիւ իշխանութե՟ն 'ի հեռուստ է նշմարելի, այսինքն թէ հրաժարմամբ է ընդունելի ։ Մանրագորն 'ի հեռաստանէ անոյշ բուրէ. եթէ մերձենաս՝ հոտ ժանտ առնուս, զուցէ և հիւանդասցիս. սոյնպէս պատիւ իշխանութեան և մեծութե՟ն 'ի հեռաստանէ են հաւանելի, և ոչ յարելով յայնս. ապա թէ ոչ՝ վտանգի մարդ. և ոչ կարելով ըստ արժանւոյն վարել զայն՝ անմտանայ 'ի նոսին և անբանանայ ։

Նարցյապէս՝ այս բան հայի յայնոսիկ որք ապաշխարութեամբ սրբեն 'ի մեղաց, և նորոգեն 'ի հոգիս, և ընդունին յա՟յ զպարգևս, և լինին 'ի պատուի առաջի սրբոց. բայց յետ սակաւու ոչ իմանալով զայսպիսի պատիւ մեծ՝ շլանան մեղօք, որով և հաւասարին անասնոց. և նման խոզից գիրկս արկանեն ախտից իւրեանց. զորս ողբայ երեմիա, ասելով. * զիարդ շլացաւ ոսկին (նորոգ սրբեալ 'ի մեղաց խոստովանութեամբ), և այլագունեաց արծաթն (ապխտակացեալ շնորհօք). որք 'ի գիրկս գգուեալ էին՝ գիրկս արկին աղբեաց ‖. (ողբ. դ. 1. 5.) Օ՜ այսպիսի գրնացս սոյս անարգ իմն ցուցանելով մարգարէին, եպերէ, և ասէ ։

ժբ. Այս ճանապարհ է գայթագղութե՟ն նոցա նոցին. յետ այսորիկ բերանովք իւրեանց հաճեսցին ։

Աստանօր ճանապարհ ասելով իմանայ նախ՝ զայն գործս, զորս ըստ անասնոց գործեն ամպարիշտք. երկրորդ՝ զայն սովորութիւնս, զորս ըստ անբանից վարեն. երրորդ՝ զայն օրէնս, զորս ըստ զգայութեան իւրեանց հնարեն. և չորրորդ՝ զայն ամենայն վարմունս, որովք կեան ըստ բարուց անասնոց անբանից, կամ ըստ գազանաց չարաց։ Յայսպիսի ձեռնարկս հայելով ասէ։

Այս ձեռագործն է փոխատուութն նոցա նոյն։ Այս բան ըստ երկուց գնի առաջի. մի՝ ըստ պատճառի. յոր միտս կամի ասել. այս անաստուածական վարումն նոցա՝ է պատճառ գայթակղելոյ նոցին, այսինքն անկանելոյ ՚ի մարդկութենէ ՚ի նմանութիւն անասնոյ, և կործանելոյ նոցա մեղաց ՚ի մեղս, և ապա ՚ի դժոխս. զորմէ խօսի ՚ի յաջորդ համարն։

Երկրորդ՝ ըստ յանդիման կացուցանելոյ զկեանս ամպարշտաց. յոր միտս կամի ասել. ահա այսպիսի գայթակղութիւն է նոցա. այսինքն թէ այսպիսի խեղաթիւր ձեռնարկս է նոցա, որք ոչ խնամելով զպատիւ մարդկութեա՛ն իւրեանց հաւասարեցան անասնոց անբանից, և ըստ նոցա գնացին։ Եւ քանզի այսպիսիքս հաճեալ են ընդ ձեռնարկս իւրեանց, ՚ի գործելն ըստ այսոցիկ ձեռնարկաց՝ ոչինչ ցաւին, և ոչ ևս խղճեն, այլ մանաւանդ թէ ուրախ երևեցուցանեն զինքեանս. և առ այս յարէ։

Յետ այսորիկ բերանովք իւրեանց հաճեսցեն։ Այսինքն յետ գործելոյ անաստուածաբար, կամ ՚ի գործելն ըստ անասնական գնացից, և ՚ի գայթակղելն նոքօք ՚ի մեղս, թէև խիղճ նոցա հարկանիցէ, նոքա բերանոք իւրեանց հաճեալ ցուցանեն զինքեանս ընդ գործս իւրեանց, և ջատագովեն զայնս։ Եւ այս տրտմէս հայի յայնպիսիս՝ որք իսպառ ընկղմեալ են յանասնական գործս, մանաւանդ՝ եթէ պակասեալ ևս իցեն ՚ի ճշմարիտ ա̅ծածանօթութենէ. զորոց ասէ առաքեալն. (փիլ. գ. 19.)

* որոց կատարածն կորուստ է . . . և փառք ամօթն իւրեանց, որք զերկրաւորս ևեթ խորհին ‖։

Համբ″. այլազգ մեկնէ զայս բան. իբր թէ յետ գայթակղելոյ՝ մատնեսցին ՚ի ձեռս ա̃յ, և բերանոք իւրեանց հաճեսցին, այսինքն խոստովան լիցին, թէ արդարութեամբ պատժին. կամ ըստ վարդանայ՝ վկայեսցեն՝ թէ ինքեանք են պատճառ գայթակղութեան և դատապարտութեան իւրեանց, և ոչ ա՟ծ, և ոչ այլ ոք։

Զայս միտս մեկնէ և Ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. իե.) ասելով. վկայութեամբ բերանոյ իւրեանց պարտաւորեսցին մեղաւորք, և նոցին բերանով կնքեսցի վճիռ դատապարտութե՟ նոցա։ Եւ ('ի գլ. ժբ. 37.) զոյն զայս բան մարգարէին 'ի մէջ բերեալ գրէ այսպէս. * Թէպէտ և բազում սուտ վկայք զքէն վկայեն, „ ոչինչ վնասեն քեզ, այլ որովք դու տայցես վճիռ՝ „ դատաւորն զայն վճարէ. ըստ այնմ թէ որպէս լսեմն „ դատեմ. և թէ 'ի բերանոյ քումմէ դատեցայց ըզ„ քեզ. և դարձեալ թէ յետ այսորիկ՝ բերանովք իւ„ րեանց հաւանեսցին. վասն այնորիկ ոչ է պարտ երկնչիլ „ չարախօսեցելոցն (եթէ խիղճ իւրեանց մաքուր իցէ) „ այլ չարախօսացն. զի ոչ բռնադատեն տալ պատաս„ խանի որք չարաչարն լսեն, այլ նոքա որք չարաչարն „ խօսեցան ||։ Եւ քանզի զայսպիսիս իբրև զանասունս անբանս համարեցաւ մարգարէն, զկորուստ նոցա ևս ըստ անասնոց դնէ լինել, ասելով։

ԺԴ. Որպէս խաշն 'ի դժոխս մատնեցան. և մահ հովուեսցէ զն՟ս. և տիրեսցեն նոցա ուղիղք ընդ առաւօտս։

Ի վարել խաշանց այսինքն ոչխարաց և այծից 'ի սպանդ կամ յայլ ինչ, եթէ ամենեքին 'ի միասին ընթասցին, աշխատութիւն ինչ չէ այնոց 'ի հովուէն, և ոչ վնաս 'ի խաշն. զի յանկանիլ իւրեանց 'ի ճանապարհ, ինքնին գնան առանց գիտելոյ, առանց տրտմելոյ, և առանց զգալոյ ինչ զպատահութենէ իւրեանց. այսպէս լինի դրեթէ և անասնաբարոյ մարդկան 'ի վարելն 'ի դժոխս. վասն որոյ ասէ։

Որպէս խաշն 'ի դժոխս մատնեցան։ Կամի ասել. որպէս խաշինք ինքնին անաշխատ գնան 'ի մահ, այսպէս և որք ըստ խաշանց վարին՝ այսինքն ըստ անասնոց անբանից, նոքա ինքնին մտանեն 'ի դժոխս. ոչ ինքեանք աշխատին 'ի գնալ, և ոչ՝ որ մատնէն զնոսա 'ի դժոխս. աշխատութիւն է այնոց յաղաւիլ, (որ է անհնարին,) և ոչ 'ի յանկանիլ. քանզի և քարինք անաշխատ գլորին 'ի վայր։

Եւ զի բառս խաշն՝ է հաւաքական անուն որ 'ի մէջ բերէ զբազմութիւն, մարգարէն խաշն դնելով կամի յայտ առնել սովաւ՝ թէ բազում են այսպիսիք որք գրեթէ խմբովին դիմեն 'ի դժոխս ։ Իսկ ա̃ծ որ դատապարտելոյն է զբազմութիւն նոցա 'ի մահն յաւիտենական, ոչ այնչափ աշխատեսցի 'ի դատապարտելն՝ որչափ աշխատի հովիւ 'ի վարելն զանկաւ խաշն 'ի մահ. զի միով բանիւ ունի վճարել, յասելն երթայք յինէն անիծեալք 'ի հուրն յաւիտենական ։

Այս դժոխք ոչ էր վասն մարդկան՝ այլ վասն սատանայի, և արբանեկաց նորա. բայց մարդիկ հետևելով նոցա՝ պարտաւոր գտան գնալ ընդ նոսա անդր. որպէս գրէ լուսաւորիչն մեր ('ի ճառն ի̃. 'ի յաճախապատում գիրսն.) * դժոխքն (ասէ) 'ի տեառնէ վասն նո-
,, րա պատրաստեցան, և վասն նորա արբանեկացն, և
,, ոչ վասն մարդկան. այլ որք ախորժեն զնոյն խորհիլ,
,, և գործել զչար, ընդ նոսա պարտաւորեալ ամենքին
,, զանմահ մահն ‖։ Իսկ թէ արդարև այս այսպէս իցէ, ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա̃. պետ. գ̃. 14. ճառ է̃. յորդ.) * մի գայթակղութե̃ շաւղօք շրջես-
,, ցուք. զի մի իբրև խաշն 'ի դժոխս՝ մահու մատնես-
,, ցուք. զի մի մահ հովուեսցէ զմեզ. և մի օգնութի̃
,, մեր մաշեսցի 'ի դժոխս. զի մի փառք մեր կործա-
,, նեսցին. և մի վաստակքն մեր աստանօր մնասցեն. և
,, մի օրհնութի̃ մեր աստի կենօքս չափեսցի ‖։

Մարթ է սոյն բանիւս դժոխս իմանալ և զգերեզմանս. և ըստ այսմ կամի ասել. որպէս խաշինք ժողովեալ լինին 'ի փարախ, այսպէս և անասնաբարոյ մարդիկ 'ի մահ և 'ի գերեզման, որ է ասել. որովհետև իբրև զխաշն կեցին՝ իբրև զխաշն մեռանին և թաղին 'ի գերեզմանս ։

Նմանապէս՝ ըստ գրելոյն վարդանայ. որպէս խաշինք 'ի տեսանել զգայլն զարհուրին, և յետ տեսութեան անհոգանան. սոյնպէս և մարդիկ մանաւանդ անխորհուրդք 'ի տեսանել զմեռեալս զարհուրին, և ապա մոռանան. և հուսկ յետոյ իբրև զխաշինս մեռանին և մտանին 'ի գերեզման, և մնան 'ի մահու անդ. և հագէք նոցա 'ի մահն յաւիտենական. յոր միտս յարէ զկնի, և ասէ ։

Եւ մահ հովուեսցէ զնոսա ։ Որովհետև խաշանց նմանեցոյց զնոսա կամ անասնոց անբանից, օրինակաւ հովուելոյ խօսի զնմանութենէ նոցա. որով ոչ այլ ինչ կամի ցուցանել, բայց եթէ ասել. մեռցին յաւիտենական մահուամբ, կամ թէ տիրեսցէ նոցա յաւիտենական մահ. զի որ հովուէ՝ տիրէ. և զի դնէ՝ թէ մահն 'ի դժոխս անդ հովուէ զնոսա, ապա տիրէ նոցա. և զի մահն միշտ մահ է, միշտ տիրեսցէ նոցա. միշտ կալցի զնոսա յիւրեան, և ոչ թողցէ 'ի չիք դառնալ. ուստի որք դատապարտին 'ի դժոխս՝ այնպէս մատնին 'ի ձեռս մահու մինչ զի 'ի մահու անդ հովուին, այսինքն մնան կենդանի՝ մեռեալ կենօք, կամ այնպիսի կենդանի, զոր մահն սնուցանէ. Այլ զօրօրինակ որ հովուէ զխաշինս՝ դարմանէ զնոսա խոտովք և ջրովք, երբեմն ևս վարէ, և հարկանէ զնոսա. սոյնպէս և յաւիտենական մահն վասն դարմանելոյ զդատապարտեալս ցաււօք և վշտօք, և վասն հարկանելոյ զնոսա անհնարին թշուառութեամբ և ողորմելի խայտառակութ͞բ, ասի հովուել զնոսա. Այլ դարձեալ որպէս 'ի հովուիլ և յարածիլ խաշանց, և յուտել նոցին զխոտն՝ թողուն զարմատս նոցա, յորոց նորոգ ընձիւղին խոտք, սոյնպէս և 'ի հովուիլ դատապարտելոց 'ի տանջանս դժոխոց, միշտ ընձիւղին 'ի յաւիտենական մահուանէ անտի յաճախութիւնք տանջանաց. որպէս զի ճարակեսցին նոքօք. Այլ որպէս խոտք ոչ միատեսակք են այլ զանազանք, յորս ճարակին խաշինք. սոյնպէս և խստութիւնք տանջանացն դժոխոց. ոմանց սաստիկ յոյժ, և ոմանց ոչ նոյնպիսի. Զի ցաւ ականջաց, ցաւ աչաց, ցաւ ատամանց, ցաւ որովայնի և այլն, ոչ են նոյն, այլ մի քան զմի խիստ, սոյնպէս և տանջանքն յաւիտենական մահուան. որպէս գրէ Ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. իե.)

Իսկ յաւիտենական մահուամբ իմացեալ լինի նախ յաւիտենական տագնապն զրկելոյ յերեսացն այ͞. վասն զի որք դատապարտինն՝ զրկելով յայ͞ իբր 'ի հոգւոյ, մեռանին ըստ յաւիտենական կենաց. և ասին մտանիլ 'ի յաւիտենական մահն, այսինքն 'ի յաւիտենական զրկումն 'ի կենաց իւրեանց՝ այսինքն յայ͞, որով տիրէ նոցա տագնապ տարափելի. Երկրորդ իմացեալ լինի նոյն իսկ տանջանքն դժոխոց. զի այն գոլով խիստ քան զամենայն՝ համարի մահ այսինքն մահացուցիչ հոգւոյ. և զի հոգին է անմահ, յանմահութեան անդ միշտ մահացուցանէ զնա, յորմէ և ասի յաւիտենական մահ հոգւոյ.

Մտածութիւն այսր շուարեցուցանէ զմիտս մարդոյ. զոր նարեկացին ահեղ անդնդոյ նմանեցուցանէ յասելն. ('ի բանն Է.) * ահեղ լըթագոյն ահագնատեսիլ կրկին
,, տեղացմանց, մին նետս, և միւսն քարինս‖. մին հայի 'ի պատիժ վնասու. որով զրկի հոգին 'ի տեսութենէն այ յաւիտեան. և միւսն 'ի պատիժ զգայութեանց, որով մատնի մարդն 'ի յաւիտենական տանջանս. և այս կրկին պատիժ յայտնի լինի 'ի նախայիշեալ բան տեառն՝ զոր ասէ. * երթայք յինէն անիծեալք 'ի հուրն
,, յաւիտենական‖. (մատ. իե. 41.)

Այս սարսափելի յաւիտենական մահ վարէ մահ մեղաւորին 'ի յաւիտենական դատապարտութեան անդ. որպէս վարէ հովիւ զխաշն. զի ցորչափ մահ նորա մահ է՝ յամենայն վայրկենի 'ի նոյն վարէ և մղէ զնոսա յափըշտակէ. Մարթ է աստանօր մահուամբ իմանալ զսատանայ, որ եղև պատճառ մահու. և զի ըստ ճարտարանից անուն գործոյն երբեմն դնի փոխանակ անուան պատճառին, մահն գոլով գործ սատանայի՝ անուանի նա՝ դնի աստ փոխանակ սատանայի. և ըստ այսմ կամի ասել. սատանայ հովուեսցէ զմեղաւորս չարաչար տանջանօք 'ի հուրն դժոխոց 'ի յաւիտեան. փոխանակ զի ոչ լուան նոքա ձայնի քաջ հովուին՝ որ 'ի մահ մատնեաց զանձն իւր վասն ազատելոյ զնոսա 'ի ձեռաց սատանայի և դիւաց նորա. Արդ եթէ դառն է մատնիլ 'ի ձեռս հասարակ դահճի, ապա քանի դառն իցէ մատնիլ 'ի ձեռս այսպիսի դահճաց. Ո՛ր տագնապ ոչ ըմբռնէ զնա՝ որ մատնեալ իցէ 'ի ձեռս կատաղի արջու կամ վիշապի. ապա ո՛ր սարսափ հասանելոց իցէ մատնեցելոյն 'ի ձեռս ամենակատաղի և ամենաչար դիւաց. զինչ արդեօք ունին նոքա առնել նմա. և նա զինչ ունիցի ասել. Տանէին երբեմն դևք զհոգի մի հրաւէից դագաղաւ (որպէս ցուցաւ ումեմն 'ի տեսլեան). և ստիպէին զնա տանջելով՝ զի երգեսցէ զերգս. և նա անճարացեալ՝ երգեաց զայսպիսի ինչ. անիծեալ լիցի օրն՝ յորում ես ծնայ. անիծեալ լիցին ծնօղք իմ որք ուրախացան 'ի տեսանելն զիս. յայնժամ և դևք ծիծաղելով 'ի վերայ նորա՝ կատականաց առնէին զնա, գանէին, կափէին, և հայհոյէին.

Այս չարաչար հոլովութիւն մահու եթէ մեռանէր, չէր այնչափ ծանր, զի վերջ լինէր տառապանաց. բայց այժմ չէ հնար, զի արդէն մահ է. իսկ մահ ոչ մեռանի որպէս յիշեցաք այժմ, այլ միշտ է մահ. Եթէ դատապարտեալքն կարէին սպանանել զինքեանս, առաւելք իսկ գործէին զայս. որպէս առնեն երբեմն գազանք. կարիճ՛ն պաշարեալ 'ի հրոյ հարկանէ զինքն տատամբն, և մեռանի. Զքանիս տեսաք՝ որք հարեալ 'ի ցից՝ ջանային խեղդել զինքեանս չուանաւ՝ զոր մատուցանէին նոցա. բայց յուժոյ թափեալ՝ ոչ կարէին. ամենք 'ի քաղցէ ստոկեալ կերեին զմարմինս իւրեանց. որպէս պատմի և վասն Զենոնի կայսեր թէ 'ի թաղելն 'ի դամբարանի՝ եբրև դարձաւ յոգի իւր՝ առ քաղցուն եկեր զբազուկն, և ձգեաց զարիւնն. Այսպիսի ինչ չիք 'ի դժոխս, այլ անմահ մահ, և հոլովութիւն մահու յաւիտեան.

Այսմ ոչ կարացեալ տանել անպարշտաց՝ ասեն. Չէ՞ր վասն ժամանակաւոր մեղաց տացի յաւիտենական պատիժ, և որ 'ի միում վայրկենի գործի՝ յաւիտեան պատժեսցի.

Այն 'ի ժամանակի գործի մեղքն, սակայն եթէ ապաշխարութեամբ ոչ մեռցի, միշտ մնայ մեղք, և միշտ պատժելի. ուստի առած է՝ * եթէ մեղքն ոչ մեռցի, „ անմահանայ պատիժն‖. Բազում ինչ 'ի միում վայրկենի կատարի, բայց զկնի հետևի այն ինչ որ տևէ երկար և յաւիտեան. փորել զաչս՝ 'ի միում վայրկենի լինի, բայց կուրութիւնն՝ որ հետևի այնմ՝ միշտ է. Այսմ բազում օրինակս տայ Ծործորեցին ('ի Մեկն. Մատթ. գլ. իե.) * վաճառել զինչս ասէ ժամանակաւոր „ է. իսկ որ ստացաւ՝ յաւիտեան ստացաւ. դարձեալ „ հարուած վիրի ժամանակաւոր է, իսկ ախտն յաւի- „ տենական է. դարձեալ անկանել 'ի վիհ 'ի միում „ ժամանակի լինի, իսկ մնալ անդր յաւիտենական է. „ ըմպել զթոյնս լոտ ժամու է, այլ մահն յաւիտենա- „ կան գործ է. վասն այնորիկ ասէ տէր. երթիցեն նո- „ քա 'ի տանջանս յաւիտենականս‖.

Եթէ արդար է վճիռ արդար դատաւորի ուրուք, անդառնալի է այն. ապա և վճիռն Ած, որ է արդարութիւն յաւիտենական. և դատաստան նորա անդառնալի. * յաւիտեան են ամենայն իրաւունք արդարութե ,, քո‖. (սաղ. ՃԺԸ. 6.) Դու մի երկբայիր ընդ այս, այլ՝ հաւատա. զի մի զոր ինչ հաւատասցիր՝ 'ի փորձոյ ծանիցես. և կրկին փորձել ոչ կարասցես. * ծանր է ,, փորձն՝ որ ոչ կրկնի‖. Եթէ հաւատաս, զգաստանաս. եթէ ոչ զգաստանաս, ապա ոչ հաւատաս. զի որ հաւատայ՝ թէ վասն միոյ մեղաց ունի տանջիլ յաւիտեան, և ոչ կայ յետս 'ի մեղաց, այնպիսին կամ խելագար է և կամ հերետիկոս. եթէ խելագար է, տարցի 'ի տուն խելագարաց. իսկ եթէ քրիստոնեայ գոլով ոչ հաւատայ՝ տարցի 'ի տուն հոգևոր դատաւորաց՝ իբրև հերետիկոս. Բարոյապէս, մեղք և սատանայ իբրև մահ հոլովեն զանկարծելս 'ի կեանս յայս, և վարեն յազգի ազգի չարիս. որպիսի էր և վիճակ յանցուցեալ բնութե յառաջ քան զՔս. ըստ որում ասէ մեծն Խոսրով ('ի մեկն. ժամագր.) * որքան ընդ մա- ,, հու ստուերաւ նուաճեալ նուաղէին մարդիկ, 'ի խաւ- ,, արի անաստուածութեան էին. և ընդ մահու գրաւ- ,, եալ իշխանութեամբ և չարին վիճակեալ. ըստ այնմ՝ ,, մահ հոլովեսցէ զնոսա, այսինքն 'ի չարաչար ծառայ- ,, ութիւնս (վարեսցէ) և 'ի վիշտս‖. Արդ յետ խօսելոյ մարգարէին զայսպիսի թշուառութենէ ամպարշտաց, խօսի այժմ զփրկելոյ արդարոց, և ասէ.

Եւ— ՏԻՐԵՍՑԵՆ ՆՈՑԱ ՈՒՂԻՂՔ ԸՆԴ ԱՌԱՒՕՏՍ. Ուղղոք խնամցեալ լինին նորա, որք ոչ ըստ անուանց անուանեալ, այլ ըստ ուղիղ կանոնի բարոյական կենաց վարեն զկեանս իւրեանց. որք և ասին արդարք. Սոքա ասէ տիրեսցեն անասնաբարոյից ընդ առաւօտս. Եւ զայս մարթ է մեկնել՝ ըստ կրկին մտաց. մի՝ հայելով յառաւօտ աստի կենաց. և մի ևս՝ հայելով յառաւօտ հանդերձելոյն.

Ըստ առաջնոյն գիտելի է՝ զի որպէս առաւօտն է՝ սկիզբն աւուր, բերէ յօրինակ սկսանելոյ երջանիկ և խաղաղական կենաց, և այս դէպ լինի ուղղոց 'ի մեռանել և 'ի բառնալ յաշխարհէ անասնաբարոյ մարդկան. իբր զի ուղիղք՝ որք նեղէին յայնպիսեաց, ազատեալ 'ի նոցանէ. խաղաղման յինքեանս ըստ հոգւոյ և ըստ մարմնաւոր կենաց, և այսու գրեթէ տէրն նոցա, այսինքն է տէրն փոխանակ նոցա. իբր զի այնուհետև ինքեանք են՝ որք տէրն ինքեանց և գործոց իւրեանց, և ոչ նոքա.

Դարձեալ՝ արդարք՝ որք հարստահարին յամպարշտաց՝ ընդ առաւօտս տիրեսցեն նոցա. այսինքն փութով տիրեսցեն նոցա. ըստ որում առաւօտն օրինակի 'ի վաղվաղումն. և այս տիրելս է փառաւոր երևիլ նոցա քան զամպարիշտս. Եւ դարձեալ՝ արդարք մտանելով երբեմն 'ի խաւար, այսինքն անկանելով 'ի տառապանս աղքատութեան, 'ի վիշտս հիւանդութեան, և 'ի հոգս հալածանաց և այլն. (որք օրինակին 'ի խաւար և 'ի գիշեր.) անարգին և հարստահարին յամբարշտաց. բայց 'ի փարատիլ այնր խաւարի, և 'ի յաջորդել առաւօտու հանգստեան, նկուն լինին ամբարիշտք. և յայնժամ արդարք՝ որք տիրեալ լինէին 'ի նոցանէ՝ տիրեն նոցա. որպէս եղև յոբայ. Եւ կամ դարձեալ ամբարիշտք՝ որք ճոխացեալք էին, ընդ առաւօտն՝ այսինքն 'ի սկիզբն ճոխութեան իւրեանց երբեմն յանկարծակի փոխին. և 'ի բարձրանալ արդարոց՝ ընդ նոքօք նուաճին, այսինքն թէ ընդ ձեռամբ արդարոց անկանին.

Ըստ երկրորդին՝ այս բան ուղղագոյն և բացայայտագոյն մեկնի, հայելով 'ի յառաւօտ հանդերձեալ կենաց. իբր զի ուղիղք որք յաստի կեանս տիրին յամբարշտաց, և տառապին 'ի նոցանէ, 'ի հանդերձեալն յայլ վիճակ փոխին. զի յայնժամ այլայլի այս կարգ. վասն զի որպէս է տեսանել 'ի գիրս իմաստութեան. (Է. 1 = 5.) յայնժամ՝ 'ի յարութեան՝ ուղիղք տիրեսցեն անուղղից. Իսկ այս տիրելս է բարձրանալ նոցա, և անարգիլ սոցա. որպէս եղև ընդ ղազար և ընդ խորտիկաճաշ մեծատունն. և զի յայնժամ ոչ գտցեն սոքա ինչ օգնութիւն. վասն այսորիկ յարէ զկնի մարգարէն, և ասէ.

ժդ. Օգնութիւնք նոցա մաշեսցին 'ի դժոխս. և 'ի փառաց իւրեանց անկցին.

Դժոխօք իմացեալ լինի աստ նախ՝ գեհեանն, և երկրորդ՝ գերեզմանն ըստ Թարգ''. առոր''. Իսկ օգնութիւնք իմացեալ լինի աստ այն ամենայն, որովք կարէին ամպարիշտք օգնութիւն գտանել իւրեանց. Արդ յայտ է թէ սոքին բարձեալ լինին, և ոչ գտանին 'ի դժոխս. սմին իրի ասէ.

Օգնութիւնք նոցա մաշեսցին 'ի դժոխս. Այսինքն 'ի գնալ նոցա 'ի գերեզման և 'ի գեհեան՝ օգնութիւնք նոցա մաշեսցին, այսինքն ունայնասցին. և նոքեանք ամենևին առանց օգնութեան մնասցեն. ուստի և 'ի դատելն 'ի յուղղոց յաւուրն յետնում՝ ոչ կարասցեն օգնութեամբ իւիք զերծանել, որովհետև մաշեալ են այն օգնութիւնք. Ոչ աղաչանք նոցա օգնէ նոցին, և ոչ արտասուք նոցա. ոչ ինչք նոցա և ոչ փառք նոցին. ոչ իշխանութիւնք նոցա և ոչ զօրութիւնք նոցին. ոչ բարեկամութիւն և ոչ միջնորդութիւն. զի ամենեքեան ևս մաշեալ լինիցին, այսինքն անպիտանացեալ և բարձեալ լիցին վասն նոքեանց. Եւ 'ի լինել այսր՝ պաշարեսցին խայտառակութեամբ, և մերժեսցին խոտան. Յայս միտս յարէ զկնի, և ասէ.

Եւ 'ի փառաց իւրեանց անկցին. Այսինքն ոչ ևս երևեսցին 'ի պատկեր Աստուծոյ, այլ 'ի պատկեր սատանայի. ոչ ևս գտցին 'ի փառս արդարոց, այլ յանարգանս դիւաց. և ոչ ևս տեսցին փառաւորեալ, որպէս երևէին 'ի կենդանութեան, այլ մերժեալ 'ի փառաց՝ ոչ միայն յանցաւորաց, այլ և որ մեծն է՝ յանանցից. Իսկ արդարք անվնաս զերծցին. և զայս յայտ առնէ մարգարէն յանձն իւր նկարելով յասելն.

ժե. Բայց աստուած՝ նա փրկեսցէ զանձն իմ 'ի ձեռաց դժոխոց. յորժամ ընդունիցի զիս.

Ձեռամբ դժոխոց իմացեալ լինի փոխաբերութիւն իմն զօրութիւնն դժոխոց. այսինքն այն ըմբռնումն՝ որով գնացեալն 'ի գերեզման՝ ըմբռնեալ մնայ միշտ 'ի գերեզմանի, և գնացեալն 'ի գեհեան՝ ըմբռնեալ մնայ միշտ 'ի գեհենի. և զի ըմբռնելն է ձեռաց՝ զայս ըմբռնումն դժոխոց ձեռք կոչէ ասելով.

Բայց սակայն՝ ած փրկեսցէ զանձն իմ ’ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցի զիս. Զայս բան յայտ է թէ ասէ մարգարէն ’ի բերանոյ արդարոյն. որպէս թէ եղեալ էր. որք ըստ անասնոց անբանից գնան, մտանեն նոքա ’ի դժոխս, և մնան անդ. բայց քանզի ես ոչ գնացի ըստ նոցա, ած փրկեսցէ զիս ’ի ձեռաց դժոխոց, յորժամ ընդունիցի զիս. այսինքն յորժամ ’ի հասանել մահու ընդունել կամիցին զիս դժոխք. որ է ասել. ’ի մեռանելս իմ ոչ մնասցէ հոգի իմ ’ի գեհեան, և ոչ մարմինս իմ մնասցէ ’ի գերեզմանի յաւիտեան, այլ հոգի իմ առ ած գնասցէ, և մարմին իմ փառօք յարիցէ. և ոչ որպէս համդերձեալ է լինել անասնաբարոյից. որոց հոգիք մտանեն ’ի գեհեան, և մարմինք նոցա մնան ’ի գերեզմանս, և յառնեն յանարգութիւն յաւիտենական.

Այս բանք ասին և ’ի բերանոյ համօրէն ազգի մարդկան՝ հայելով ’ի փրկութիւնն յայն, զոր արար որդին այ. և ըստ այսմ ձեռք դժոխոց կոչին նաև դևք. զի նոքօք իբր ձեռօք առ ինքն ձգէր դժոխք զազգ մարդկան. Իսկ յայս միտս կամի ասել. զօրութիւնք դիւաց այսուհետև մաշեսցին, և ածն իմ եկեալ առ իս փրկեսցէ զիս ’ի նոցանէ, եւ և ’ի բռնութէ մահու՝ ’ի կամել նոցա ձգել և առնուլ զիս առ ինքեանս.

Վարդան զընդունիլն վերածէ առ ած, և ոմանք առ հրեշտակս. ըստ որոյ միտ բանիցն լինի այս. փրկեսցէ տէր զհոգի իմ ’ի դժոխոց՝ և ընկալցի ’ի կեանս յաւիտենականս. կամ որ նոյն է, փրկեսցէ զիս տէր ’ի ձեռաց դժոխոց յորժամ ընդունիցին զիս հրեշտակք յերկինս. Արդ յայտ արարեալ մարգարէին զհանդերձեալ թշուառութի ամբարշտաց, և զփրկիլ արդարոց, հաստատէ զբան իւր, և հետևեցուցանելով ասէ.

ժզ. Մի երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ. և յորժամ բազում լինին փառք տան նորա.

ժէ. Զի ոչ եթէ ’ի մեռանելն իւրում առնուցէ ընդ իւր զամենայն. և ոչ եթէ իջցեն փառք տան նր ընդ նմա.

Զայս բան խօսի մարգարէն իբր քաջալերս ինչ առ այնպիսի ոք, որ իցէ մանաւանդ յաղքատութեան՝ քան 'ի փարթամութեան, կամ որ իցէ 'ի խոնարհ վիճակի քան 'ի բարձրութե՛. զի այսպիսի անձինք են իբր մանր ձկունք ըստ ամբակումայ (ա̃. 13 = 15.) զորս կլանել կամին մեծամեծք, այսինքն մեծատունք և իշխանք, 'ի զօրանալ իւրեանց ընդդէմ նոցին յախորժանօք, և 'ի կեղեքել զնոսա, և 'ի զկծեցուցանել և 'ի զարհուրեցուցանել. որոյ վասն երկիւղ կրեն 'ի նոցանէ. և առայն յորդոր լինի մարգարէն, մի ինչ հոգ առնել և մի երկնչիլ յայնցանէ. ուստի ասէ.

Մ՛ի երկնչիր՝ յորժամ մեծանայ մարդ. և յորժամ բազում լինին փառք տան նորա. Այսինքն թէ, յորժամ լսես կամ տեսանես՝ թէ այս ոք մարդ փարթամութե՛ կամ իշխանութե՛ մեծանայ, և տուն նորա բազում զարդուք և զինուք պայծառանայ, և բազմութեամբ բարեկամաց և ծառայից փառաւորի և ճոխանայ, Մի՛ երկնչիր 'ի նմանէ. կամ մի ինչ ընաւ առնիցես հոգ երկիւղի զիշխանութե՛ և զմեծութե՛ նորա, մինչև թողուլ զհաճոյսն քո, և առնել զհաճոյս նորին. Եւ կամ մի զչարիր ընդ մեծութիւն նորա և ընդ փառս նորին. (որպէս ասաց 'ի սաղ. լզ̃. 1. մի նախանձիր ընդ չարս, և այլն. տես անդ.) Տայ ապա և զպատճառն ասելով.

Զ՛ի ոչ եթէ 'ի մեռանել իւրում առցէ ընդ իւր զամենայն. և ոչ եթէ իջցեն փառք տան նորա ընդ նմա. Կամի ասել. զոր ինչ ունի մեծատունն ստացուածս հողոյս իւրոյ, 'ի մեռանելն իւր՝ զամ̃ն ըստ ամենայնի թողցէ յաշխարհի, և ոչ կարիցէ առնուլ ընդ իւր՝ և ոչ դրամ մի՝ որով մեծանայր, և ոչ մասն ինչ 'ի փառաց տան իւրոյ, որով ճոխանայր. ինքն ելցէ յաշխարհէ, և ստացուածք իւր մնասցեն 'ի ձեռս այլոց. ինքն երթիցէ 'ի գերեզմանն, և փառք իւրոյ տանն ցրուեսցին. իսկ ծառայք և բարեկամք իւր յուղարկաւորեսցեն զնա մինչև 'ի տեղի թաղման միայն, և անդ թողցեն զնա. ինքն իջցէ 'ի դժոխս, և փառք իւր՝ այսինքն այն ամենայն որովք փառաւորիւր, ցնդեսցին իբրև զծուխ, և ոչ իջցեն ընդ նմա անդ՝ ուր էջ ինքն.

Այսմ անարգութեան և անցաւորութե՛ օրինակ տայ Իգնատիոս վարդապետ զխորտակումն մեծատունն ('ի մեկն. ղուկ. ժբ. 23.) * կանց ասէ և տարա հեշտա-

„ լի փափկութիւնն. և զոր ունէր յերկրէ՝ յերկրի
„ մնաց. և որ չարաչար ստացաւ՝ մերկ գտաւ ... զի այն-
„ չափ էր սահման մեծութեան նորա. ըստ այնմ, ոչ
„ թէ ՚ի մեռանելն իւրում առցէ ընդ իւր զամենայն.
„ և ոչ էն փառք նորա ընդ նմա. այլ անձն նորա ՚ի
„ կենդանութեանն իւրում (միայն) պատուեցի‖. Աւ
անուն նորա միայն յիշեսցի որպէս և այլոց ամբարշտաց.
ըստ որում գրեալ է աստ. * տունք նոցա են գերեզ-
„ մանք նոցա. և անուանք նոցա յիշեն միայն նոքօք‖.
Այս է ահա հանդերձանք փառաց մեծատան. վասն զի փառքն ընդ եղանողին եղանէ, և ընդ իջանողին ոչ իջանէ. որպէս ընդհակառակն՝ նախատինքն ընդ իջանողին իջանէ, և ընդ եղանողին ոչ եղանէ. որովք ցուցանի թէ զոր ինչ ունի մեծատունն՝ աստ միայն ունի սակաւօրեայ ժամանակաւ. յելանելն յաշխարհէ՝ եղանէ և այն ՚ի ձեռաց իւրոց. և յիջանելն ՚ի դժոխս՝ ոչ գնայ ընդ նմա։ Այլ որ արդարն է՝ յիջանելն ՚ի գերեզման՝ տառապանք և նախատինք նորա եւս իջանեն ՚ի գերեզման, այսինքն թէ ոչ եւս մնան. իսկ յելանել նորա յերկրէս՝ այն նախատինք նորա ոչ ելանեն ընդ նմա յերկրէս. սա կայ փառաւորիլ յերկրէս. իսկ նմա յերկրի միայն. զի աստ միայն չափեցաւ նմա. և զայս բացայայտագոյնս եւս դնէ մարգարէն ՚ի յաջորդ համարն ասելով։

ԺԸ. Այլ անձն նորա ՚ի կեանս իւրում օրհնեսցի. խոստովան եղիցի քեզ՝ յորժամ բարի արասցես դու նմա։

Մեկնութիւն այսր բանի կախեալ է զնշանակութենէ բառիդ օրհնել։ Արդ օրհնիլն թէպէտ այլևայլ նշանակութ̅ս կարէ առեալ լինել, բայց աստ հայելով ՚ի նախընթաց բանս՝ դնի փոխանակ լիանալոյ բարեօք. քանզի որ օրհնի՝ ոչինչ օգտի՝ եթէ բարեաւ ինքն ոչ լիասցի, զի յայս իսկ օրհնի՝ որպէս զի ինքեան բարի լինիցի. ըստ այսմ նշանակութ̅ե իմացեալ լինի աստ բառդ օրհնել՝ յասելն։

Այլ անձն նորա ՚ի կեանս իւրում օրհնեսցի։ Կամի ասել. մեծատունն յաստի կեանս միայն՝ զոր վարէ, օրհնեսցի յայ̃, այսինքն լիասցի ժամանակաւոր բարեօք, զորս տայ նմա ա̅ծ. զի որովհետև այնպիսին ոչ խնդրէ զյավախճանական կեանն, այլ զժամանակաւորն և եթ, և յատուկ միայն կամի երջանկանալ ըստ հաճոյս անձին իւրոյ վարելով, վասն այսորիկ և ած զժամանակաւոր բարիս միայն տայ նմա. և այն՝ կամ իբրև վարձք փոքու իրիք բարեգործութեն նորա, և կամ իբրև յորդորել 'ի դիմել առ ած. բայց նա որչափ բարեօք մեծանայ, այնչափ յոյժ հեռանայ. Եւ թէպէտ դիմէ ես երբեմն առ նա, բայց ոչ առ 'ի գտանել զնա և կատարել զհաճոյս նորա, այլ առ 'ի գտանել զհաճոյս իւր. և առ այս յարէ զկնի և ասէ.

Խոստովան եղիցի քեզ՝ յորժամ բարի արասցես դու նմա.

Այսինքն յայնժամ միայն խոստովան լինի քեզ, և շնորհակալ լինի զքէն, յորժամ տաս նմա զանցաւոր բարիս, յորս ինքն հաճի. զի զայն միայն կամի, և վասն ընդունելոյ զայն գոհանայ. իսկ զհոգևոր բարեաց ոչինչ հոգայ, կամ վեր 'ի վերոյ հոգայ, և ընդ կարծեօք ունի.

Այլազգ ես մեկնի այս բնաբան, եթէ բազում օրհնեսցէ՝ առեալ լիցի փոխանակ գովեալ լինելոյ, կամ փառաւորելոյ, որպէս ասեն լատք". և վարդան. Եւ յայս միտս դերանունդ քեզ՝ հայի յընկեր կամ 'ի բարեկամ գովեցելոյն. որպէս թէ ասէր. ամբարիշտն յատուկ կեանս միայն գովի և փառաւորի 'ի մարդկանէ. և եթէ դու որ բարեկամ ես նորա, բարի ինչ արասցես նմա ըստ հաճոյս նորա գնալով կամ ծառայելով նմա, յայնժամ ոչ թէ գովէ զքեզ, այլ միայն քաղաքավարութեն աղագաւ խոստովան լինի քեզ, այսինքն շնորհակալ լինի զքէն. որպէս ասեն հասարակօրէն՝ եթէ չարք և եթէ բարիք. զի յայս շնորհակալութիւն նաև բնութիւնն յորդորէ. Իսկ թէ զինչ լինիցի 'ի կատարածի այսպիսի ամպարշտաց, զայն թէպէտ և եդ 'ի վերոյ, բայց կամելով կրկին ես հաստատել զնոյն՝ յաւելու ասել.

ժթ. **Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց. մինչև յաւիտեան լոյս մի տեսցէ.**

Այս ոճ բանի հայի յայն՝ զոր վարէ սուրբ գիրն. այն է. * յաւելաւ յազգ իւր ‖. կամ * յաւելաւ 'ի ժո„ ղովուրդ իւր ‖. կամ * ննջեաց ընդ հարս իւր ‖.

և այլն. որով նշանակի մեռանիլ և թաղիլ և գնալ ընդ այն ճանապարհ, ընդ որ գնացին առաջինք. յայս միտս առէ և աստ.

Մտցէ նա մինչև յազգ հարց իւրոց. Այսինքն ամբարիշտն թէպէտ և պայծառացեալ և փառաւորեալ երևի յաստի կեանս, բայց յետ սակաւ ունայնասցի. զի մտցէ յազգ հարց իւրոց. այսինքն մտցէ 'ի չարս մեռելոց. որպէս մտին և ազգ հարց իւրոց.

Բայց ծանիր, զի որպէս յասելն զարդարոց՝ յաւելուլ ընդ հարս իւրեանց՝ իմանամք զհարց բարեաց, նմանապէս յասելն զամպարշտաց՝ յաւելուլ ընդ հարս իւրեանց, կամ մտանել յազգ հարց իւրեանց, իմանալի է զհարց չարաց. ուստի առէ գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) * որպէս զվախճան արդոյն՝ ,, որ երբև զաբրահամ՝ յաւելուլ առէ առ հարս՝ ,, գիրն, այսպէս զմեղօք մեռեալսն՝ 'ի գեհեան հարց ,, իւրեանց երթալ առեմք, հարս զնմանապէս չարսն ,, առելով ‖. Իսկ թէ զինչ այսպիսեաց պատահելոց իցէ՝ զայն յայտ առնէ յաջորդ բանիւն՝ առելով.

Մինչև յաւիտեան ոչ տեսցէ զլոյս. Այսինքն յաւիտեանս յաւիտենից մնասցէ 'ի խաւարի. զի յիջանել նորա 'ի դժոխս՝ ոչ ծագեսցէ առ նա՝ ոչ լոյս հոգևոր առ յոյ, և ոչ լոյս զգալի յայլմէ իմեքէ. զի որովհետև ոչ խնդրեաց զլոյսն՝ ոչ ևս գտցէ. զատեալս միայն զներկայ բարիս խնդրեաց, 'ի զրկիլն աստի՝ յերկնուց ևս զրկեցաւ. ոչ պատրաստեաց իւղ լապտերի՝ շիջաւ, և ոչ վառեսցի յաւիտեան. տեղին՝ յոր մտանէ՝ դժոխքն, և վիճակն՝ զոր եգիտ՝ անհնարին. Ուստի գէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) խօսելով 'ի վերայ այսր բնաբանի՝ առէ. * զինչ է դժոխք, տեղի դժուա- ,, րին, թշուառական ազգ տխուր կերպարան. լոյս ո- ,, րում վասն մեղաւորաց առէ. թէ մտցէ մինչև յազգ ,, հարց իւրոց, և յաւիտեան զլոյս մի տեսցէ ‖. Յաւիտեան առէ, և ոչ թէ առ վայր մի.

Այս տևողութիւն սարսափելի առնէ զտանջանս դժոխոց. զի տանջանք՝ որչափ տևեն՝ այնչափ սաստիկ տանջեն, ապա եթէ յաւիտեան տևեսցեն՝ զինչ առնիցեն. Սաստկութի և երկարութի ոչ միանան. ուստի առակ էր առ ստոյիկեանս, * եթէ սաստիկ՝ կարճ. „ եթէ երկար՝ թեթև‖. միայն 'ի դժոխս միանան սոքա, այսինքն սաստկութն տանջանաց և երկարութիւն յաւիտենականութե. որ գոլով անհուն տևողութիւն՝ անըմբռնելի է մեզ։ Եթէ հարցանես ցյուդայ, խնացո՞ր արդեօք զյաւիտենականութիւնն. պատասխանէ. այո, 1819 ամք են՝ զի տանջիմ, և ոչ հատանիմ. զայս միայն գիտեմ՝ զի միշտ սկսանիմ տանջիլ։ Եթէ և ցայլ դատապարտեալս հարցցես, զնոյն պատասխանեն, „ և ասեն. * անցին հունձք, եանց ամառն. և մեք ոչ „ փրկեցաք‖. (Երեմ. Ը. 20։)

Այս յիշատակ յաւիտենականութեան է, որ հաղորդէ զանհնութիւն ինչ տանջանացն դժոխոց. որով դատապարտեալքն յամենայն վայրկենի՝ յորս տանջին՝ կրեն զծանրութիւն յաւիտենականութե տանջանաց։ Գընդակ բոլորակ եդեալ 'ի վերայ մակարդակի՝ միով կէտիւ շօշափէ, բայց զամենայն ծանրութի իւր 'ի կէտ անդր հաղորդէ. սոյնպէս և ծանրութի յաւիտենականութե հաղորդի 'ի կէտն յայն՝ յորում տանջին դատապարտեալքն. զի 'ի յիշելն անգ՝ թէ յաւիտեան ունին մնալ 'ի տանջանս, այն յիշատակութիւն տպաւորէ 'ի տանջանսն զներկայութի անհնութե յաւիտենականութե։ Որ 'ի բանտի կայ՝ յիշելով թէ ունի մնալ երկար, առաւելու 'ի նեղութեան։ Յերկարել գիշերոյ պաշարէ անձկութիւն սրտի. յերկարել քարոզի՝ հասանէ ձանձրութիւն. յերկարել երգոց և նուագաց՝ սկսի տաղտկութիւն. զինչ ապա յերկարել տանջանաց յանչափ տևողութիւնս։ Եթէ թեթև էին տանջանքն դժոխոց, միայն յաւիտենականութի նոցա անէր ամենածանր. զինչ ապա՝ մինչ յանհնարինս սաստիկ են և սարսափելի. զորս անհնարին է մեզ իմանալ և կամ գրով իւիք բացատրել. * եթէ չիք կարողու- „ թիւն զայն գրելոյ, ոչ կարողութի կայցէ կրելոյ‖։ Եթէ երկբայիս ընդ յաւիտենականութիւն տանջանացն, եկ 'ի լեառն գողգոթայ, յորում իբր 'ի հրապարակի տեսցես՝ քանոյ վաճառի ազատութիւն նորա. * եթէ արդարև ոչ էր յաւիտենական, զին ազա- „ տութե նորա ոչ լինէր անհուն արժողութեամբ ար- „ եանն այ‖։ Եթէ յաւիտենական լինել տանջանոյն կարծիք էր արիստոտէլի , պղատոնի , և պիւթագորայ՝ երկնչելի էր , քանի եւ երկնչելի և սարսափելի է՝ զի է կարծիք համօրէն ազգաց , և վճիռ ամենակալին , յասելն . * և երթիցեն նոքա 'ի տան- ,, ջանս յաւիտենականս ‖ . (մատ . իե . 46 .) Մի՛ ասեր թէ ա̃ծ ողորմած է , ոչ պատժէ յաւիտեան . զի որչափ ողորմած է , այնչափ եւ արդար է , և յաւիտեան արդար . * արդարութիւն քո արդարութիւն ,, յաւիտենից ‖ . (սաղ . ՃԺԸ . 142 .) Յաւիտեան գոլով առա արդարութեան նորա՝ միշտ վրէժս պահանջէ մեղաց . և զի մեղք դատապարտելոց մնայ միշտ , առա և վրէժխնդրութիւն նորա մնայ միշտ : Մարդիկ առաւել կամին ողորմած ճանաչել զա̃ծ քան արդար . որոյ վասն որչափ յողորմութիւն նորա ապաւինելով մեղանչեն , այնչափ յարդարութէ նորա ունին պատժիլ : Յայս ակնարկելով տեառն մերոյ՝ ասաց . * հայր արդար , և ,, աշխարհ զքեզ ոչ ծանեաւ ‖ . (յով . ԺԷ . 25 .) որպէս թէ ասէր . աշխարհ զքեզ ոչ կամի ճանաչել արդար , այլ ողորմած . զի մի պարտաւոր երևեսցին յաւիտենական դատապարտութե .

Մի ասիցես , թէ մարդս տկար գոլով՝ աստուած խնայէ 'ի նա . արդարև տկար է . բայց անձնիշխան եւ է , և կամօք զնէ զինքն 'ի վտանգի դատապարտութեանն . Կամ հաւատայ յաւիտենական տանջանաց , և կամ ոչ . եթէ հաւատայ , ընդէ՞ր ոչ զգուշանայ . եթէ ոչ հաւատայ , հարցանէ զնա ա̃ծ . ընդէ՞ր ոչ հաւատաս . բայց տեսցէ և հաւատասցէ . աստուած ոչ կախի զհաւանութենէ մարդոյ . ոչ հաւատալով մարդոյ՝ վճիռն ա̃յ ոչ փոխի , և արդարութիւն նորա ոչ այլայլի : Յաւիտեան կեայ , և արդարութի նորա մնայ յաւիտեան . Զարթիր և զգաստացիր . * ահ մեծ է անկանել 'ի ,, ձեռս ա̃յ կենդանւոյ ‖ . (եբր . Ժ . 31 .) ոչ ասէ ա̃յ հզօրի , կամ բարերարի , այլ կենդանւոյ . զի միշտ կեայ , և ցորչափ կեայ՝ խնդրէ վրէժս 'ի մեղաւորաց . մատնելով զնոսա՝ ոչ 'ի կեանս՝ այլ 'ի մահ , ոչ 'ի լոյս՝ այլ 'ի խաւար . ոչ 'ի հանգիստ՝ այլ 'ի տանջանս : Տեսանես՝ զի ա̃ծ արար զմարդն՝ առ 'ի փառաւորել յաւիտեանս , այլ մարդն կամովին տայ զինքն 'ի մշտնջենաւոր անարգանս : Իսկ արմատական պատճառ այսպէս յիմարելոյ մարդոյն այն է՝ զոր դնէ մարգարէն՝ ասելով ։

Ի. Մարդ 'ի պատուի էր՝ եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից՝ եւ նմանեցաւ նոցա ։

Որով կարգաւ խօսեցաւ 'ի վերոյ, նովին կարգաւ աւարտէ զբանս իւր. զի 'ի վերոյ ('ի համարն 9. եւ 10.) ասաց. անզգամք եւ անմիտք 'ի միասին կորիցեն, եւ թողցեն օտարաց զմեծութիւն իւրեանց. թաղեսցին 'ի գերեզմանս, եւ գերեզմանք նոցա լինիցին տունք նոցա յաւիտեան, որովհետեւ յերկրի միայն կամեցան լինել անուանի եւ փառաւորիլ. զայսոսիկ եդեալ 'ի մէջ բերէ անդ զպատճառն ասելով * մարդ 'ի պատուի էր ||, եւն ։ Այնպէս եւ աստ յետ առաջի դնելոյ զմեծանալ ամբարշտաց եւ զփառաւորիլ նոցա, եւս եւ զիջանել նոցա 'ի գերեզման եւ 'ի դժոխս, եւ զմնալ նոցին անդ 'ի խաւարն յաւիտեան, աստ 'ի մէջ բերէ զնոյն զայն պատճառ, եւ ասէ ։

Մարդ 'ի պատուի էր՝ եւ ոչ իմացաւ, հաւասարեցաւ անասնոց անբանից՝ եւ նմանեցաւ նոցա ։ Կամի ասել. տեսանես թէ քանի յիմար է մարդ. զի 'ի պատուի էր, եւ կարգեալ էր առ յաւիտենական պատիւ. բայց նա անարգեալ զայն՝ յարեցաւ յանցաւոր բարիս. եւ ոչ կամելով վարել ըստ լուսոյ բանին, այլ ըստ զգայութե̃, նմանեցաւ անասնոց. եւ ըստ անասնոց զաստ կեանս միայն կամեցաւ ժառանգել. վասն որոյ եւ զրկեալ յանճառելի եւ յանանց լուսոյ՝ մատնեցաւ 'ի խաւարն յաւիտենական ։ Յորմէ յայտնապէս ցանկալով զերծ մնալ երանելոյն այնմիկ՝ աղաղակէ առ յիսուս. * յայտնեա՛ց
„ վերստին եւ արդ . . . առ հաւասարեալս անզգայու-
„ թեանց, առ օտարացեալս յընտանութէ̃ իմաստից,
„ առ անմնմնս հանգունակից բանաւորութեանց, (եւ
„ առ նմանեալս անբանից) ||. (Նարեկ. բան. ԺԷ.)
Եւ զի չիք ակնկալութիւն յանասնոց անբանից՝ բանաւորութեամբ վարիլ, այնր իրի յաւելու ասել ('ի բանն. ԻԴ.) * ակնկալութիւն բարեացն բնաւին բարձեալ, եւ
„ 'ի բանականութեանն ընդ անասունս դասակար-
„ գեալ ||. Զանիր 'ի վերջոյ՝ զի 'ի հասանել մարդոյ յայսպիսի վիճակ՝ եղեւ անօթ մոլութեանց եւ մոլորու-

թեանց, և սկսաւ սորել զախտս գարշահոտս. և որքան մաքուր էր 'ի սկզբնական արդարութեան, այնքան աղտեղի գտաւ 'ի զրկիլն յայնպիսի շնորհաց. որով և ցուցաւ, թէ ոչ 'ի բնութենէ ունէր զանախտն լինել, այլ 'ի շնորհաց անտի. զի ըստ բնութեան սոսկապէս մտածեալ՝ անկար տեսանի 'ի բարիս, և յօժար 'ի չարիս, յոր միտս ասաց Ած. (Ծնն. Ը. 21.) * միտք մարդոյ „ հաստատեալ են 'ի խնամս չարին 'ի մանկութենէ „ իւրմէ ‖. Նաև * զի մարմին եղծանելի ծանրացուցանէ զոգի ‖. (Իմաստ. Թ. 15.) Յայս հայելով ասէ ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. Է.) թէ ախտաւոր շարժմունք մրուր են բանական բնութեանս. ուստի 'ի մեզ են ասէ և ոչ 'ի հրեշտակս. զի նոքա զերծեալ գոյացութիւնք են. 'ի մոլորիլ իւրեանց դիւանան և չա̃ծանան. իսկ մարդս հաւասարի անասնոց անբանից, և նմանի նոցա.

Աստանօր կրկնումն այսր բնաբանի յայլ ինչ ևս կարէ ակնարկել. այսինքն 'ի ցոյց մթութեան այնր առակի՝ զոր եդ 'ի վերոյ, որպէս թէ ասէր. սակաւք 'ի մարդկանէ իմանան զայս իմ ասացեալ առակ. զի ոչ վարին ուղիղ բանիւ ըստ պատուոյ իւրեանց, այլ անիմաստ մտօք և զգայութ̃ք. որով և հաւասար գտանին անբանից. և ըստ գործոց նոցա գործելով նմանին նոցա. Իսկ եթէ իմաստութ̃բ կային ըստ պատուոյ իւրեանց, ոչ միայն 'ի միտ առնուին՝ զոր ասեմ, այլև գտանէին զանդորրութիւն յաստիս, և հասանէին յերանութիւն յաւիտենական.

ՍԱՂՄՈՍ. ԽԹ.

Հանդէս կոչմանն ամ՛ որով կոչեաց և կոչէ զժողովուրդ իւր՛ ընդ որս և զամենայն ազգս 'ի դատաստան. դարձեալ և յայտարարութիւն, և ընդ հակառակն՛ ցոյց ընդունելութեան պատարագի օրհնութեան. եւ ունայնութե̄ յասայ զոհից, և յանդիմանութե̄ գործոց ամբարշտի։

Սաղմոս յԱսափ.

1 Ած աստուածոց տէր խօսեցաւ, կոչեաց զերկիր՝ յարեւելից մինչեւ 'ի մուտս արեւու։ 2 Ի Սիոնէ Ած վայելչութե̄ երեւութե̄ գեղոյ նորա։ 3 Ած մեր յայտնապէս եկեսցէ. եւ Ած մեր մի դադարեսցէ։ 4 Հուր առաջի նր̄ բորբոքեսցի, եւ շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։ 5 Կոչեսցէ զերկինս 'ի վերուստ՝ եւ զերկիր, 'ի դատել զժողովուրդ իւր, ժողովել առ ինքն ընտրեալս իւր, եւ ոյք դնեն զպատարագս ուխտից 'ի վերայ սեղանոյ նորա։ 6 Պատմեսցեն երկինք զարդարութե̄ նորա, զի Ած դատաւոր է։ 7 Լո՛ւր ժողովուրդ իմ, եւ խօսեցայց ընդ քեզ. եւ Իսրայէլ՝ քեզ վկայեցից. զի Ած Ած քո ես եմ։ 8 Ո՛չ թէ վասն պատարագաց քոց կշտամբեմ զքեզ. զի ողջակէզք քո առաջի իմ են յամենայն ժամ։ 9 Ո՛չ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուարակս. եւ ո՛չ 'ի հօտից քոց նոխազս։ 10 Իմ է ամենայն գազան անտառի, երէ լերանց եւ ամենայն անասուն։ 11 Գիտեմ ես զամենայն թռչունս երկնից. գեղեցկութե̄ վայրի ընդ իս է։ 12 Թէ քաղցեայց, քեզ ինչ ո՛չ ասացից. զի իմ է աշխարհ լրիւ իւրովք։ 13 Ո՛չ ուտեմ ես զմիս զուարակաց քոց. եւ ո՛չ զարիւն նոխազաց քոց ըմպեմ։ 14 Զոհեա՛ Ածոյ պատարագ օրհնութե̄. կատարեա՛ բարձրելոյն զուխտս քո։ 15 Կարդասցես առ իս յաւուր նեղութե̄ քո. ես փրկեցից զքեզ՝ եւ դու փառաւոր արասցես զիս։ 16 Այլ մեղաւորին ասէ Ած. իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութե̄ իմ, կամ առնուս զուխտ իմ 'ի բերան քո։ 17 Զի դու ատեցեր զխրատ իմ. մերժեցեր, եւ յետս ընկեցեր զամենայն բանս բերանոյ իմոյ։ 18 Թէ տեսանէիր զգող՝ ընթանայիր ընդ նմա. եւ ընդ շնացս դնէիր

զբաժին քո։ 19 Բերան քո յաճախէր զչարութիւն, և լեզու քո նիւթէր զնենգութիւն։ 20 Նստեալ զեղբօրէ քումմէ չարախօսէիր. և 'ի վերայ որդւոյ մօր քո դնէիր զգայթագղութիւն։ 21 Զայս ամենայն արարեր, և լռեցի քեզ. կարծեցեր անօրէնդ 'ի մտի քում, թէ և ես քե՛զ նմանեցայց։ 22 Յանդիմանեցից և կացուցից զայս ամենայն առաջի քո. իմացարո՛ւք ամենեքեան՝ որոց մոռացեալ իցէ զա͞ծ։ 23 Գուցէ երբէք յափշտակեսցէ, և ոչ ո՛ք իցէ՝ որ փրկեսցէ։ 24 Պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս. և անդ է ճանապարհ, ուր ցուցից նմա զփրկութիւն ա͞յ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Սաղմոս յասափ։

Ի ԲԱԶՄՈՒՄ ՍԱՂՄՈՍՍ ՄԵՐ փոխանակ բառիս ասափ դնի դաւիթ. և յոմանս երկաքանչիւրն եւ՝ այսպէս. * սաղմոս յասափ 'ի դաւիթ ||։ Իսկ 'ի չորս ձեռագիրս, նոյնպէս և 'ի վարդանայն ըստ ձեռագրին, և 'ի լամբ''. գրի ըստ դնելոյ մեր * սաղմոս յասափ ||։ Այսպէս դնի և յեբր''. յասէնն միզ մօռ լէ ասաֆ. այս է. * սաղմոս յասափ ||. սոյնպէս է և 'ի յեօթ''. և յայլ ամենայն թարգ''. միայն յեթեով''. փոխանակ ասափայ՝ դնի որդւոցն կորխայ՝ որ է յայտնի վրիպակ, իբր զի գրօղն հայելով 'ի նախընթացն, ըստ նմին եդեալ է՝ կորխայ, որ ո՛չ գտանի յիմիք թարգ''. և ո՛չ ուրեք 'ի մեկնութիւնս նախնեաց, կամ վերջնոց։ Արդ երկոտասան սաղմոսք են՝ որոց 'ի վերնագիրս դնի բառդ ասափ. այսոքիկ են. խթ. (որ է առաջիկայդ.) հ͞բ. հ͞գ. հ͞դ. հ͞ե. հ͞զ. հ͞է. հ͞ը. հ͞թ. ձ. ձ͞ա. ձ͞բ։

Զայս ասափ սուրբ գիրն բազում ուրեք յիշատակէ իբրև դասապետ սաղմոսանուագաց. (ա͞. մնաց. զ͞. 39։ և ժե͞. 17. և 20։ և իե͞. 2։ Նոյն 'ի գլ. ժզ͞. 4 = 38։) Որ ասի թէ յորժամ տարաւ դաւիթ զտապանակն 'ի ներքս 'ի խորանն՝ զոր պատրաստեաց * կարգեաց... 'ի ղևտացւոցն պաշտօնեայս երգել ձայ-

„ նիւ. և խոստովան լինել զտէր ա̃ծ իսրայէլի. զասափ
„ առաջնորդ, և երկրորդ նմա զզաքարիաս... նուագարանօք
„ տաւղաց և քնարաց.... յայնժամ կարգեաց
„ դաւիթ 'ի սկզբանն օրհնել զտէր 'ի ձեռն ասափայ
„ և եղբարցն նորա. խոստովան եղերուք տ̃ն...
„ (և) եթող անդ առաջի տապանակի կտակարանացն
„ տեառն զասափ և զեղբարս նորա՝ պաշտել առաջի
„ տապանակին յամենայն ժամ օր ըստ օրէ ||: Ի սոյին և յայլ տեղիս յայտնի աւանդի՝ լինել ասափայ դասապետ և իշխան յառաջնում կարգի սաղմոսանուագ ղևտացւոյն. և այս յայտնի ևս աւանդի. բ̃. եզրաս. (ժբ̃. 45:) զի ասի * յաւուրս դաւթի ասափ էր իշխան
„ և առաջնորդ երգոց սաղմոսացն ||. (տե՛ս 'ի ներածութեան. գլ. ժդ̃:)

Իսկ թէ ասափ իցէ ասացեալ զայնոսիկ սաղմոսս՝ որք գրին յանուն նորա, ո՛չ է յայտ. ոմանք դաւթի տան, և ասեն՝ թէ նա յասափ յանձնեալ իցէ զայնս եղանակել իմաստութբ̃. յայս միտս բան այսր սաղմոսի՝ դաւթի ընծայի 'ի շարականի. (դ̃. կիւր. աղց:)

Բազումք ևս պնդեն՝ թէ նորին իսկ ասափայ իցէ ասացեալ. և զայս ցուցանեն յերից. մի՛ 'ի վերնագրէ իւրաքանչիւրոցն՝ յորս այնոքիկ սաղմոսք ընծային ասափայ: Երկրորդ՝ զի ասափ իբր հեղինակ սաղմոսաց յիշի հաւասար դաւթի 'ի յերկրորդ գիրս մ̃նաց. (իթ̃. 30.) քանզի գրի անդ այսպէս. * ասաց արքայ եզեկիաս և իշխանք ղևտացիսն՝ օրհնել զտէր բանիւքն
„ դաւթի և ասափայ մարգարէի ||: Երրորդ՝ զի ոճ սաղմոսացն՝ որք ընծային ասափայ, տարբերին յոճոյ ասիցն դաւթի, զի դաւթին են ատտիկեցի ճախարակեայ, ճարտար, պերճ, և վայելչահիւս. իսկ ասափայն լակոնական, հզօր՝ ահեղ, ոլորտ և մթին, որպէս և որդւոցն կորխայ. և եթէ անպատշաճ ո՛չ երևեսցի յօրինակ բերել, մարթ է ասել՝ թէ որպէս է 'ի շարականս մեր երգ շնորհալւոյն, և երգ սիւնեցւոյն, այսպէս է և 'ի սոյին:

Այլ գիտելի է. զի որք ասափայ տան զայսպիսի սաղմոսս, ոմանք 'ի նոցանէ համարին թէ ո՛չ մի է ասափ, այլ՝ այլևայլ 'ի նոյն ցեղէ. վասն զի ասեն, կան քանի մի 'ի սաղմոսաց անտի՝ որք հային 'ի յետին ժա֊

մանակս յաւուրս գերութե՟ն բաբելացւոց · իսկ առաջինն ասափ՝ էր յաւուրս դաւթի ։ Յայսոսիկ կարծիս ո՞րն իցէ ստոյգ՝ անհնարին երևի որոշել · վասն որոյ և մեք անորոշ թողումք, և յընթացս մեկնութեան սաղմոսիս 'ի տալ զանուն հեղինակի սորա և այլոց՝ ոչ յիշեմք ինչ զանուանէ · այլ առաջի առնեմք անուամբս մարգարէ · նա զի և ասափ ըստ նախակարգեալ վըկայութեանցդ մարգարէ էր, և լցեալ հոգւով սբ՟վ ։ Արդ որպէս չէ հնար որոշել զայս, նոյնպէս և չէ հնար յայտնել՝ թէ յորում ժամանակի, և յինչ առթէ իցէ ասացեալ այս սաղմոս ։ Իսկ թէ առ ինչ հայիցի, չիք այնչափ ինչ տարբերութիւն կարծեաց, զի ըստ վկայելոյ ամենեցուն՝ այս սաղմոս ըստ բոլորին առեալ՝ հայի յերկրորդ գալուստ տեառն · իսկ ըստ մասին ինչ յառաջին գալուստ նորա, որպէս ունիս տեսանել 'ի մեկնութեան ։

Այլ յառաջ քան զմտանել մեր 'ի մեկնութի՟՝ արժան է ծանուցանել, թէ 'ի հնումն անդ յառաջին գալուստ տեառն հայէին երևմունքն այ՟ առ իսրայէլ պէսպէս կերպարանօք՝ իբրև ձևք և օրինակք · իսկ յերկրորդն հայէին՝ իբր տարացոյցք այլ և այլ գործք վրէժխնդրութեան նորա՝ զորս եցոյց առ իսրայէլ յայլ և այլ ժամանակս, մանաւանդ 'ի ժամանակի կործանմանն երուսաղէմի · և վասն այսորիկ զառաջին գալուստն ցուցանէ աստ մարգարէն լինել գաղտ և խոնարհ · իսկ զերկրորդն յայտնի և հզօր ։ Նա և՝ զառաջինն դնէ 'ի ժողովել զմարդիկ 'ի հաւատս · իսկ զերկրորդն դնէ 'ի ժողովել զնոսա 'ի դատաստան · յոր միտս կարէ և 'ի քրիստոս վերածիլ բառդ ա՟ծ, որ աստուածաբանի ժողովող ։

Գիտելի է ևս, զի մարգարէն զառաջին գալստենէ հարևանցիկ խօսի աստ իբր յիշատակութ՟ ինչ, իսկ զերկրորդէն ըստ բազում հանգամանաց ։ Աստի և բանք սաղմոսիս, որպէս ասացաք այժմ՝ տիրապէս հային յերկրորդ գալուստն, և մասամբ իմն յառաջինն ։

ԲԱՆ

ա. Աստուած աստուածոց Տէր խօսեցաւ. կոչեաց զերկիր՝ յարեւելից մինչեւ 'ի մուտս արեւու։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Անունս աստուած՝ եօթնպատիկ բացատրի. մի՝ ըստ ծագման բառին. երկրորդ՝ ըստ ստուգաբանութեանն. երրորդ՝ ըստ վերծանութեանն. չորրորդ՝ ըստ փաղանշանութեանն. հինգերորդ՝ ըստ նշանակութ՟են. վեցերորդ՝ ըստ ենթադրութ՟են. եօթներորդ՝ ըստ հաղորդութեան իրիք նմանութ՟ե։

Ըստ ծագման առեալ՝ անունդ ա՟ծ՝ ծագի 'ի բայէդ աստէ՛ որ տիրապէս նշանակէ առնել զիմն զի իցէ. և յայս սակս աստել կամ հաստել ասի կացուցանելն զիր ինչ կայուն կամ հաստատուն. և քանզի որ ստեղծն զամենայն, արար զի իցեն, յայսմանէ կոչեմք զնա ա՟ծ՝ որ նշանակէ աստող, կամ հաստող. ըստ որոյ այս բառ ընծայի արարչին յեղանակէ գործելոյ։

Ըստ ստուգաբանութեանն անունս ա՟ծ՝ նշանակէ աստ էած. ուստի ասէ մովսէս վարդապետ ('ի մեկն. ժամագր. երես 165.) * ա՟ծ անունն... առ մեզ ստուգա-
„ բանի աստ էած զմեզ‖. զի որ արար զամենայն՝ մատ 'ի գոյութ՟ի էած։

Ըստ վերծանութեանն՝ բառս աստուած նշանակէ ազդուած. այսինքն ազդեալ և ազդող։ Ազդեալ, զի գոյութիւնն ա՟յ ազդեալ լինի յամենեսին, կամ թէ ազդեալ և տպաւորեալ է յամենեսին թէ գոյ ա՟ծ յամենայնի պաշտեալ և պաշտելի. ըստ որոյ առ արաբացիս ասի մաբուդ, այսինքն պաշտեալ կամ երկրպագելի. ասի և ելահ՝ որ զնոյն նշանակէ, կամ ազդեալ։ Ազդող՝ զի յամենայնի ազդէ զգոլ և զգործել։

Ըստ փաղանշանութեանն՝ այս բառ 'ի մէջ բերէ զբան նախախնամութեան, և 'ի նախախնամելոյ է առեալ. ուստի ասէ մովսէս վարդապետ ('ի վերոյիշեալ տե-

գլդ)· * տէր անունն արքունական անուն է, որ զտիրելն
„ և զարդարապէս դատելն նշանակէ · ըստ այնմ ·
„ տէր թագաւոր մեծ 'ի վերայ ամենայն երկրի ։ Իսկ
[illegible] անունն արարչական է, որ զնախախնամելն
„ յայտ առնէ ըստ փիլոնի ‖ ։

Ըստ նշանակութեանն ցուցանէ զգոլն ստեղծօղ · յոր
միտս ասէ բարսեղ վարդապետ ('ի մեկն · մարկ · գլ ·
ժբ ·) * ա̄ծ անունն ստեղծագործութեան և էացուցանելոյ
„ է անուն ‖ ։ Յայտ առնէ դարձեալ ըստ այժմու
ասելոյդ զգոլն խնամօղ, և տեսուչ ամենայնի · ըստ որոյ
ասէ վարդան ('ի սաղ · ժդ · 3 ·) թէ * ա̄ծ ամենատես
„ թարգմանի ‖ ։ Յայս միտս են և այլ վարդապետք,
և մեկնիչք ։

Ըստ ենթադրութեան, այսինքն ըստ հասարակ առման
բառիդ ա̄ծ՝ ցուցանի ինքնագոյ աննիւթ էութի̄ անբաւ՝
էացուցիչ ամենայնի՝ և նախախնամիչ · այն ինքն է Ճշմարիտ
ա̄ծ ։

Ըստ հաղորդութե̄ բառդ ա̄ծ նշանակէ զայն որ իւիք
հաղորդ գտեալ լիցէ գերազանցութեանն ա̄յ · և այս՝
ըստ այլ և այլ բանի, մի՝ ըստ անուան · ըստ այնմ ·
* թէպէտև իցեն անուանեալ ա̄ծք եթէ յերկինս, և
„ եթէ յերկրի, որպէս և են ա̄ծք բազումք և տեարք
„ բազումք ‖ · (ա̄ · կոր · ը · 6 ։) Ըստ այսմ և հեթանոսք
զկուռս իւրեանց ա̄ծս կոչեն, ըստ այնմ · * ընդէ՞ր
„ զողացար զաստուածս իմ ‖ · (ծնն · լա · 30 ։) և յայս
միտս ասի զա̄յ · * մեծ է տէր քան զամենայն ա̄ծս ‖ ·
(ելից՝ · ժը · 11 ։) Նաև թէպէտ այսպիսիքս ըստ ասելոյ
սաղմոսերգուին · (ղե · 5 ·) * դևք են ‖ · բայց հեթանոսք
կարծելով բնակիլ 'ի նոսա ա̄ծութեան՝ զանուն
ա̄յ տային նոցա ։

Երկրորդ՝ ըստ բանի իմաստութեան և գիտութեան,
որպէս երևեցոյց սատանայ առաջի եւայի յասելն · * լինիցիք
իբրև զա̄ծս ճանաչել զբարի և զչար ‖ · (ծնն ·
գ · 5 ։)

Երրորդ՝ ըստ սրբութե̄ կամ ըստ շնորհի որդեգրութեան,
կամ ըստ հոգևորական իրիք չքնաղութե̄ · որպիսի
են արդարք · զորոց ասէ մարգարէն * ես ասացի
„ թէ ա̄ծք իցէք ‖ · (սաղ · ձա · 6 ։)

Չորրորդ՝ ըստ հոգւոյ մարգարէութեան · ըստ այնմ ·

* պատմեցէ՛ք մեզ՝ որ ինչ 'ի վախճանի լինիցի, և գի-
,, տասցուք եթէ ա՟ծք իցէք ‖. (եսայ. խա՟. 23.) յայս
միտս ասաց քս՟ * եթէ զնոսա ա՟ծս ասէ, առ որս բանն
,, ա՟յ եղև ‖. (յոհ. ժ՟. 35:)

Հինգերորդ՝ ըստ իշխանութե՟. ըստ այնմ. * զա՟ծս քո (այսինքն զիշխանս քո) մի՛ բամբասեսցես ‖. (ելից. իբ՟. 28:) յոր միտս մովսէս կոչի * ա՟ծ փարաւոնի ‖. (ելից. է՟. 1:)

Վեցերորդ՝ ըստ դատողութեան, և ըստ այլում ինչ մեծութեան. ըստ այնմ. * ա՟ծ եկաց 'ի ժողովս ա՟ծոց ‖. (սաղ. ձա՟. 1:)

Եօթներորդ՝ ըստ գերազանցութեան բնութեան կամ ըստ կատարելութե՟ փառաց կամ ըստ առաւելութե՟ յարգանաց. յոր միտս հրեշտակք, և երանեալք, ևս և այլք երևելիք կոչին ա՟ծք. ըստ այնմ. * ոչ ոք է նը-
,, ման քեզ յա՟ծս տէր ‖. (սաղ. ձե՟. 7:)

Իսկ սովին հայելով ասէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. թ՟.) * աստ թագաւորք թէպէտև կարի սի-
,, րեն զոք՝ ոչ կարեն տալ նմա զթագաւորական ա-
,, նուն. զի եթէ տան, ինքեանք զրկեալ գտանին. իսկ
,, առ ա՟ծ ոչ այնպէս. զի նա առնէ զամենեսին ա՟ծս.
,, մնալով ինքն ա՟ծ ‖:

Իսկ դնել այսր ամենայնի՝ յորժամ ասի ա՟ծ աստուծոց, կարգ շարադրութեանն բնականաբար ցուցանէ, թէ բառդ ա՟ծ՝ յառաջնումն նշանակէ զայն որ է ճշմարիտ ա՟ծ. իսկ յերկրորդումն նշանակէ զնոսա՝ որք ասին ըստ հաղորդութեան իմիք ա՟ծ. և զի արձակաբար ասէ ա՟ծ ա՟ծոց՝ սովին ցուցանէ թէ է ա՟ծ ամենայն ա՟ծոց. որով և յայտ առնէ, թէ մի միայն է ճշմարիտն ա՟ծ. զի եթէ ամենայն ա՟ծոց է ա՟ծ, ուրեմն ոչ գոյ այլ ա՟ծ ճշմարիտ՝ հաւասար ճշմարտին ա՟յ. ապա թէ ոչ՝ ոչ լինէր նա ա՟ծ ամենայն ա՟ծոց, այլ ոմանց միայն, և առ հաստատութիւն այսր կոչէ զնա տէր՝ կամ ըստ եբր՟. էէհօհա. այս է որ էն: Արդ քանզի մարգարէն զմեծամեծս և զահագինս ունէր խօսիլ զա՟յ, զմեծութիւն և զճշմարտութիւն ա՟ծութե՟ նորա միանգամայն 'ի մէջ բերելով, և զօրինակ խօսիցն սաստկացուցանելով, կամի յորդոյ առնել զբան իւր. սմին իրի ահեղութե՟ իմն սկիզբն առնելով սաղմոսիս ասէ:

Ա͞ծ աստուածոց՝ Տէր խօսեցաւ։ Աստանօր բառդ խօսեցաւ նախ նշանակէ յայտնելն ա͞յ զինքն, որպէս արար առ Ադամ, առ Նոյ, առ Աբրահամ և͞ն. երկրորդ նշանակէ խօսելն բերանով մարգարէից առ այլս. երրորդ նշանակէ խօսելն ինքնին բերանով իւրով։ Ըստ այսոցիկ առեալ աստ մարգարէին զխօսելն ա͞յ՝ կամի ասել. Աստուած՝ որ է 'ի վերոյ քան զամենայն աստուածս՝ յետ ստեղծանելոյ զազգ մարդկան՝ ոչ եթող զնոսա անխնամ. այլ որպէս խնամ տանէր և կառավարէր զամենայն էս ըստ իւրեանց բնութեան, սոյնպէս խնամ էած և մարդկան, 'ի կառավարել զնոսա ըստ նոցին բնութե͞. և զի բանական բնութիւնն բանիւք կամ խօսիւք կառավարի, ըստ նմին սկսաւ կառավարել զնոսա, յայտնելով զինքն նոցա, և խօսելով ընդ նոսա. և այս՝ կամ ինքնին, և կամ 'ի ձեռն այնոցիկ՝ զորս ինքն ընտրեաց և առաքեաց։ Եւ 'ի վախճան աւուրցս նաև ինքն եկն առ նոսա, և լեալ իբրև զնոսա մարդ՝ բերանով իւրով ևս խօսեցաւ ընդ նոսա։ Եւ զորս միանգամ ետես հեռացեալս յիւրմէ՝ կոչեաց զնոսա առ ինքն. ըստ որում դնէ զկնի, յասելն։

Կոչեաց զերկիր։ Ուր երկրաւ նշանակին բնակիչք երկրի. զի որպէս բազում անգամ ասացաք, ըստ ոճոյ ճարտասանից երբեմն անուն բնակարանին դնի 'ի տեղի բնակողին. և զի երկիրս է բնակարան մարդկան, դնի փոխանակ բնակողացն 'ի նմա։ Արդ Ա͞ծ 'ի խօսելն կոչեաց ասէ առ ինքն զբնակիչս երկրի, նախ՝ զորս էինն յադամայ, և տիրապէս զիսրայէլացիս 'ի ձեռն մարգարէից, և ապա զայլս 'ի ձեռն առաքելոց։ Այս կոչումն ըստ կրկին մտաց կարէ իմացեալ լինել. մի՝ ըստ կոչելոյ յընդունելութ͞ի հաւատոյ և 'ի զգաստութիւն վարուց. և երկրորդ 'ի դատողութիւն գործոց։ Եւ ըստ այսմ բայդ կոչել՝ 'ի մէջ բերէ աստ ոչ միայն զանցեալն, այլև զապագայն. որպէս թէ ասէր, կոչեաց առ հաւատս և առ բարի գործս, կոչեսցէ և առ 'ի դատել՝ թէ զիա՞րդ պահեցին զհաւատսն, և զինչ գործեցին. իսկ թէ ուստի, այսինքն յորոց վայրաց կոչեաց զնոսա, յայտ առնէ ասելով։

Յարեւելից մինչ 'ի մուտս արեւու. կամ որպէս դնի 'ի մետեղիս · յելիցն արեգական մինչ 'ի մուտս : Զայս բան ոչ է պարտ առնուլ ըստ երկրաչափական գծի ընդ երկայն տարածելով յարևելից յարևմուտս , այլ ըստ ամենայն տարածութեան ընդ ամենայն երկիր · վասն զի 'ի բաժանել զկիսագունդս երկրի յերկուս 'ի հիւսիսոյ 'ի հարաւ , որովհետև մին լինի 'ի կողմն արևելից , և միւսն 'ի կողմն արևմտից , կոչելն յարևելից մինչև յարևմուտս՝ լինի կոչել ընդ ամենայն տեղիս արևելից , և ընդ ամենայն տեղիս արևմտից · կամ կոչել յամենայն տեղեաց եղելոց յարևելակողմն երկրի մինչև յծ և իցէ սահմանս եղեալս յարևմտակողմն երկրի :

Սոքիմբք ցուցանի՝ թէ ա̃ծ զա̃մ մարդ կոչեաց և կոչէ պէսպէս օրինակաւ , զոմանս քարոզութ̃բ , և զոմանս ներքին լուսաւորութ̃բ : Նաև հանդերձեալ է նա կոչել զամենեսին առ հասարակ 'ի դատաստան՝ զոմանս 'ի դատապարտել , և զոմանս 'ի փառաւորել :

Նաև յայս միտս ըստ ասելոյն վարդանայ , երկրաւ իմացեալ լինին աստ ըստ հոգևորին՝ երկրասէրք կամ ախտաւորք՝ զորս կոչէ տէր առ 'ի դատապարտել · կոչէ և զարդարս 'ի փառաւորել , և կոչումն սոցա է յարևելից , ըստ որում իբր արև ելանեն առաջի ա̃յ՝ լուսով բարի գործոց · ըստ այնմ · * արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն ‖ · (մատ · ժգ̃ · 43 ·) իսկ յորս չիք բարի ինչ , կամ չար ինչ՝ դատելի երևին իբր արևմուտք , կամ ասացից իբր մուտք ամենայնի · որպիսի մուտք ա̃մի՝ են տղայք ոչ սրբեալք · յորս դադարի կոչումն 'ի դատաստան · զի չունին դատելի գործս :

Ըստ յարմարական մեկնութ̃ե բայիւս կոչեաց նշանակի հաստել · յոր միտս այս բան առաջի դնի 'ի դիմաց մարգարէին այսպէս · զոր ինչ խօսիմ՝ պատգամք ա̃յ են · զի ոչ եթէ ես եմ որ խօսիմ , այլ Ճշմարիտն ա̃ծ , որ է ա̃ծ ա̃ծոց · որոյ հրամանն կոչեաց զերկիր , այսինքն հաստատեաց զերկիր , և զոր ինչ կան յերկրի յարևելից մինչև 'ի մուտս արևու ընդ ա̃մ տեղիս : Իսկ թէ ուր յայտնեցաւ վայելչութ̃ի ա̃ծութ̃ե նորա , զայն ևս 'ի մէջ բերէ մարգարէն՝ ասելով :

Է. Ի ՍԻՈՎՆԷ ՄԵԾ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ ԵՐԵՒՈՒԹԵԱՆ ԳԵՂՈՅ ՆՈՐԱ։

Վայելչութիւնն է փառաւորութիւն կատարելութե՟ն, կամ փառաւոր տեսք իրիք ըստ գեղեցկութեան կամ ըստ շքեղութեան։ Եւ այս վայելչութիւն յայնժամ ասի մեծ, յորժամ ըստ ամենամեծ կատարելութեան մտածի, կամ յորժամ ոչ միայն ըստ միոյ, այլ ըստ բազում և ըստ մեծամեծ կատարելութե՟ց կշռի։ Արդ այսպիսի մեծ վայելչութի ք՟յ թէպէտև յա՟մ արարածոց նշմարի և քարոզի, բայց առաւելապէս և տիրապէս 'ի սիովնէ՝ ըստ չորից. մի՝ զի անդ էր յատուկ ներկայութիւնն ք՟յ, ըստ որում անդ էր տապանակն, որով յանդիման լինէր նա. (զորմէ տե՟ս 'ի սաղ. իե՟. 8։) Երկրորդ՝ զի անդ էր գրեթէ շտեմարան օրինացն ք՟յ, և անտի սփռիւր պատգամ նորա. ըստ այնմ. * 'ի սիոնէ ելցեն օրէնք, և բան տեառն յերուսաղէմէ ‖. (եսայ. բ. 3։) Երրորդ՝ զի անդ փառաւորիւր ա՟ծ՝ ճշմարիտ պաշտամամբք։ Չորրորդ՝ զի անդ ցուցանէր ա՟ծ զփրկութիւն ժողովրդեան։

Եւս և նոյն ինքն փրկիչն անդր եկն՝ 'ի փրկել զազգ մարդկան, և անտի սփռեաց զբան աւետարանին. և վասն այնորիկ ինքն իսկ վկայեաց՝ թէ անտի սկսանելոց է քարոզութիւն փրկութե՟, յասելն. * քարոզել յանուն նորա ապաշխարութե՟ և թողութե՟ մեղաց յա՟մ ազգս՝ սկսեալ յերուսաղէմէ ‖. (ղուկ. իդ՟. 47։)

Յայս ա՟մ հայելով ասէ։

Ի ՍԻՈՎՆԷ ՄԵԾ ՎԱՅԵԼՉՈՒԹԻ՟ ԵՐԵՒՈՒԹԷ՟ ԳԵՂՈՅ ՆՈՐԱ։ Շարադրութիւն այսր համարոյ երրակի կարգի. մի՝ յինքեան մտածեալ. և ըստ այսմ կամի ասել. մեծ վայելչութի՟ գեղեցկութեանն ք՟յ երևի և հռչակի 'ի սիովնէ, և անտի քարոզի առ ա՟մ ազգս 'ի փրկութիւն նոցա։ Աստի և բառդ ԵՐԵՒՈՒԹԵԱՆ դնի աստ իբր նշանակօղ գործոց վայելչութեանն ք՟յ. որպէս թէ եղեալ էր. 'ի սիոն քաղաքէ քարոզեսցի ա՟ծային գեղեցկութիւն և մեծ վայելչութիւնն գործօղ փրկութեան. որ է ասել. 'ի քարոզել վայելչութեան գեղոյ նորա՝ լիցի փրկութիւն յարեւելից մինչև 'ի մուտս արևու, յորոց նա ինքն կոչեաց զմարդիկ։

Երկրորդ՝ այս բան կարգի հայելով 'ի նախընթաց համարն, և ըստ այսմ բառդ 'ի սիոնէ լինի խնդիր բայիցդ խօսել և կոչել զորս եդ 'ի վերոյ․ որպէս թէ ասէր․ ա՟ծ խօսեցաւ 'ի սիոնէ, և կոչեաց զերկիր 'ի նոյն սիոնէ, ուր է մեծվայելչութիւն գեղոյ նորա ։ Յոր միտս բառդ փրկութեան՝ դնի իբր 'ի թանձրացեալն՝ փոխանակ բառիդ փրկելոյ․ ըստ որում մեծվայելչութ՟ի գեղեցկութեանն ա՟յ յայտնի լինի փրկելոց, որպէս թէ եդեալ էր․ կոչեաց 'ի սիոնէ՝ ուր է վայելչութիւն գեղեցկութեան նորա, և այն վայելչութ՟ի նորին յայտնի լինի առ փրկեալս իւր․ ըստ այսմ մեկնու՟ե հնար է զբառդ մեծվայելչութեան՝ ընծայել սիոնի, որպէս թէ եդեալ էր․ կոչեաց ա՟ծ 'ի սիոնէ ունողէ զվայելչութ՟ի գեղոյ․ որ է ասել․ որովհետև սիոն քաղաք վայելուչ է և գեղեցիկ ըստ բազում իրաց, և անդ է տեղի փրկութ՟ե, վասն այնորիկ անտի կոչեաց ա՟ծ զմարդիկ 'ի փրկութ՟ի․ ըստ որում անտի ելանէն պատգամք նորա, և անդ է տեղի նորա․ անդր եկն և անդ շրջեցաւ, և անտի առաքեաց զաշակերտս իւր կոչել զամենեսեան առ յաւիտենական փրկութիւն ։

Երրորդ՝ այս բան կարգի հայելով 'ի յաջորդ համարն, որպէս երևի յեբրայականն ։ Յոր միտս կամի ասել․ ա՟ծ մեր յայտնապէս եկեսցէ 'ի սիոնէ՝ ուր է մեծվայելչութիւն գեղոյ նորա․ և 'ի գալն երևեսցի փրկութիւնն այն, զոր արար ազգի մարդկան ։ Ըստ այսմ մեկնութ՟ե մարթ է զբառդ մեծվայելչութեան գեղոյ առնուլ գործիականաբար, որպէս թէ եդեալ էր, ա՟ծ եկեսցէ 'ի սիոնէ մեծվայելչութ՟բ փառաց ։

Այլաբանօրէն, այս բանք հային յեկեղեցի սուրբ․ ուր է մեծվայելչութ՟ի գեղեցկութ՟ե շնորհացն ա՟յ, յորմէ և քարոզի փրկութ՟ի մարդկան․ վերածաբար, այս բանք հային 'ի վերինն սիոն, ուր դէմ յանդիման տեսանի փրկելոց մեծվայելչութ՟ի փառացն ա՟յ ։ Յայսմ ա՟մէ զոր ասացաք՝ երևի թէ բանք այսոցիկ երկաքանչիւր տանց թէպէտև կարեն հայիլ յառաջին և յերկրորդ գալուստ տեառն մերոյ, բայց առաւելապէս յառաջինն․ իսկ յաջորդ բանքդ յերկրորդ գալուստ նորա․ զոր և բացայայտ առաջի դնէ ասելով ։

Գ. Աստուած մեր յայտնապէս եկեսցէ. և ա̃ծ մեր մի դադարեսցէ։

Դ. Հուր առաջի նորա բորբոքեսցի, և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ։

Այս բանք են յայտնի քարոզութիւնք միւսանգամ գալստեան որդւոյն ա̃յ. և ցուցանեն՝ թէ քանի ահեղ լինելոց է այն։ Առաջին գալուստ նորա եղև հեզութբ̃ և խոնարհութեամբ, և որպէս թէ ՚ի ծածուկ՝ իբրև ցօղ ՚ի վերայ գեղմանն. (դատ. զ̃. 37։) Այլ ո՛չ այսպէս և երկրորդ գալուստ նորա՝ քանզի յայնժամ յայտնապէս գայցէ։

Իսկ այս յայտնի գալս բազում օրինակաւ իմացեալ լինի. մի՝ զի լինիցի յանակնկալ ժամու. * զի յորում „ժամու (ասէ) ո՛չ ակն ունիցիք գայ որդի մարդոյ ‖. (մատ. իդ̃. 36։) Երկրորդ՝ զի յանկարծակի լինիցի իբրև զփայլակն. ըստ այնմ. * յանկարծակի՝ յական թօթափել ‖. (ա̃. կոր. ժե̃. 52։) Երրորդ՝ ձայնիւ փողոյ. ըստ այնմ. * առաքեսցէ զհրեշտակս իւր փո„ղով մեծաւ ‖. (մատ. իդ̃. 31։ և ա̃. թեսաղ. դ̃. 15։ և ա̃. կոր. ժե̃. 52։) Չորրորդ՝ ահեղութբ̃ և փառօք. ըստ այնմ. (մատ. իդ̃. 30։) * և տեսցեն զորդի մար„դոյ եկեալ ՚ի վերայ ամպոց երկնից զօրութբ̃ և փա„ռօք բազմօք ‖։ Հինգերորդ՝ դէմ յանդիման ամենեցուն. ըստ այնմ, (մատ. իդ̃. 31 = 34.) * յորժամ ե„կեսցէ որդի մարդոյ . . . յայնժամ նստցի յաթոռ „փառաց իւրոց. և ժողովեսցին առաջի նորա ամե„նայն ազգք ‖. և̃ն։ Վեցերորդ՝ յայտնի քննութբ̃՝ առանց իրիք ծածկութի̀. * քանզի ամենեցուն մեզ „յանդիման լինել կայ առաջի ատենին ք̃ի. զի ըն„կալցի իւրաքանչիւր ‖. և̃ն. (բ̃. կոր. ե̃. 10։) Եօթներորդ՝ ամենևին առանց ակնառութե̃. ըստ այնմ. * չիք ակնառութի̃ առաջի տեառն ‖. (կողոս. գ̃. 25։)

Յայս տ̃մ հայեցեալ ասէ։

Ա̃ծ մեր յայտնապէս եկեսցէ. և ա̃ծ մեր մի դադարեսցէ։ Այսինքն, ա̃ծ որ այսչափ ժամանակ համբերեալ դադարէ, և ո՛չ յայտնի երևեցուցանէ զվրէժխնդրութիւն իւր առ չարս և զգութ իւր առ բարիս, մի իսպառ այսպէս դադարեսցէ և լռեսցէ, կամ մի՛ իսպառ յամեցուսցէ, այլ 'ի լրման ժամանակին յայտնապէս եկեսցէ և կարգեսցէ հրապարակական դատաստան առաջի ամենեցուն, և դատեսցէ արդարութ՟բ զամենայն. եթէ որ ըստ հաճոյս նորա գնացեալ իցէ, փառաւորեսցէ զնա. և եթէ որ ընդդէմ հաճոյից նորա արարեալ ինչ իցէ, մերժեսցէ զնա յիւրմէ:

Յայս բան մարթ է զբառդ մ՛ դադարէ՝ վերածել ոչ 'ի գալուստ տեառն 'ի դատաստան, այլ յեղանակ դատաստանին. իբր թէ ասել. 'ի գալ տեառն յայտնապէս՝ մի՛ սպասեսցէ լռել զխաստս դատելեաց, և մի՛ ըստ դատաւորաց աշխարհիս հանդարտութ՟բ զմտաւ ածցէ, թէ զինչ պարտ իցէ առնել. այլ զա՟մ առաջի ամենեցուն ինքնին 'ի յայտ բերեալ, իսկոյն դատեսցէ, զփառաւորելիսն բարձացուսցէ, և զմերժելիսն մատնեսցէ 'ի հուրն յաւիտենական. իսկ թէ զինչ պատրաստութիւն լինելոց իցէ 'ի գալստեան նորա, յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով:

Հուր առաջի նորա բորբոքեսցի, և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ:

Այսու հրով և մրրկաւ երկու ինչ նշանակի, նախ տարրեղէն հուրն, և ըստ այսմ բառդ առաջի՝ հայի 'ի ժամանակն՝ որ յառաջէ, և բառդ շուրջ՝ հայի 'ի ժամանակն որ իցէ շուրջ զգալստեամբ նորա. որպէս թէ ասէր. 'ի գալստեան տեառն հուր սաստիկ յառաջընթաց լիցի նմա, և շուրջ զնովաւ մրրիկ յոյժ, այսինքն շուրջ զայնու ժամաւ գալստեան նորա նոյն հուրն իբրև զմրրիկ յական թօթափել այրեսցէ զա՟մ և մաքրեսցէ, նորոգեսցէ և պատրաստեսցէ զտիեզերս:

Զայսմ հրոյ յաճախ խօսին մարգարէք. 'ի մէջ որոց
գրէ մաղաքիա այսպէս. * զի ահա եկեսցէ օր տեառն
,, բորբոքեալ իբրև զհնոց, և այրեսցէ զնոսա ‖. եւ՟ն:
(մաղաք. դ̃. 1:) Յայս միտս ասէ և պետրոս. յերկրորդ թղթին. (գ̃. 7 = 14.) * և այժմ երկինք և եր-
,, կիր նովին բանիւ գանձեալ են՝ հրոյ պահեալք յօրն
,, դատաստանի ‖: Որում համաձայնի և պօղոս. ('ի
բ̃. թես. ա̃. 8:) 'Ի սոյն սակս ասաց տէրն մեր * ա՟մ
,, ինչ հրով յաղեսցի ‖. (մարկ. թ̃. 48:) Յորոյ վերայ
ասէ մեծն խոսրով. ('ի մեկն. ժամագր. երես 404.)
և զի ա՟մ հրով փորձելոց է՝ դաւիթ վկայէ. ա՟ծ մեր

„ ասէ յայտնապէս գայցէ և հուր առաջի նորա գնաս-
„ ցէ, առ 'ի փորձել զիւրաքանչիւրսն և 'ի հատուցա-
„ նել ըստ արժանեաց. և պօղոս ասէ. որ շինէ 'ի
„ վերայ հիմանս այսորիկ ‖. և այլն: Որովք երևի թէ
զորօրինակ ա͞ծ 'ի ստեղծման աշխարհի հիմունս էարկ
նմա 'ի վերայ ջրոց, սոյնպէս և կատարումն նորին
հրով լինիցի. և որք մուծին յաշխարհ զապականու-
թիւն մեղաց՝ 'ի հուր մաշեսցին. ուստի 'ի խօսիլ 'ի վե-
րայ այսր սարգսի շնորհալւոյ ասէ. ('ի մեկն. յուդ.
համար. 6. ձառ ա͞.) * հուր առաջի նորա գնասցէ, և
„ կերիցէ շուրջ զթշնամիս նորա, այսինքն զբանսար-
„ կուն, և զորսացեալսն 'ի նմանէ 'ի նորին կամս ‖:
Ի սոյն հայելով ոմանց համարեցան՝ թէ այս հուր
իցէ հուր գեհենոյն, որ արդէն իսկ յառաջ քան ըղ-
գալ տեառն բորբոքեալն է անդ 'ի գեհենի, և հան-
դերձեալ է գալ իբրև մրրիկ հրոյ առ 'ի կլանել յինքն
զթշնամիսն ա͞յ:

Երկրորդ՝ նշանակի փոխաբերական հուրն, այսինքն
ահեղութիւն բարկութեանն ա͞յ, որով ունի խնդրել
զվրէժ ատելեաց իւրոց: Եւ կամ նշանակի ահաւորու-
թիւն մեծութե͞ և կարողութե͞ նորա, որ վասն անպատ-
մելի լինելոյ՝ օրինակի 'ի հուր և 'ի մրրիկ հրոյ. և
առ 'ի ցոյց այսր՝ աթոռ նորա իբրև զբոց հրոյ երևե-
ցաւ դանիելի, և անիւք աթոռոյ նորա իբրև հուր
բորբոքեալ. և գետ հրոյ յորդեալ ելանէր առաջի նո-
րա. (դան. է. 9. 10.) որովք նշանակի ահեղութիւն
նորին: Եւ ըստ այսմ կամի ասել. ահեղ լիցի յոյժ
գալուստ նորա, և անաչառ դատաստան նորին: Յեր-
կոսին նշանակութիւնս յայսոսիկ հայելով ասի 'ի շա-
րականի. ('ի կանոնն խա͞.) * զահեղ փառաց քոց ե-
„ րևումն՝ որ լինելոց է յերկրորդումն՝ ետես դաւիթ
„ յառաջագոյն՝ ծանոյց կանխաւ ազդմամբ հոգւոյն՝
„ թէ յայտնապէս ա͞ծ գայցէ, հուր առաջի իւր բոր-
„ բոքէ ‖: Դարձեալ մարթ է ըստ այլ իմն փոխաբե-
րութեան իմանալ այսու հրով զյառաջընթացութիւն
հրեղէն զուարթնոց՝ որք գան ընդ ք͞սի, շրջապատեալ
զնովաւ. զորոց զարագութի͞ն և զգործողութի͞ն նմանե-
ցուցանէ շարժման մրրկի:

Այս բանք որք գրին յերկոսին համարսդ, կարեն ըստ նկարագրին այլով իմն փոխաբերութ՟բ մեկնիլ 'ի վերայ գործոցն ա՟յ, զորս եցոյց առ իսրայէլ. և այս՝ ըստ կրկին տեսութ՟ե. մի՝ հայելով 'ի ժամանակն յայն՝ յորում եկն և երևեցաւ նոցա 'ի սինա լեառն, և ոչ դադարեցաւ. իբր զի ոչ դադարմամբ կամ հանգստեամբ եկն անդ, այլ ահեղութ՟բ. վասն զի հուր բորբոքիւր առաջի նորա, և տեսանիւր մրրիկ զնովաւ. (տես 'ի գիրս ելից. ժթ. 16 = 19:)

Երկրորդ՝ մեկնի վերածելով յայլ իմն փոխաբերական միտս, 'ի ցուցանել զբարկութիւն նորա ընդդէմ իսրայէլի, զի դիմեաց 'ի վերայ նոցա յայտնի բարկութեամբ, և ոչ դադարեցաւ մինչև մատնեաց զնոսա 'ի ձեռս գերչաց իւրեանց. և մրրիկ բարկութեան նորա ցրուեաց զնոսա, և հուսկ յետոյ իսպառ հալեցոյց զնոսա. և հանդերձեալ է առնել նոցա դատաստան ահեղ:

Արժ է զայս բան վերածել և 'ի քառասնօրեայ գալուստ տեառն 'ի տաճարն. ըստ որում գալ նորա անդր յայտնապէս եղև, ոչ դադարեցաւ յայնժամ և ինքն 'ի նոյն զօրէնս. որոյ յառաջընթաց եղեն հրեղէն զուարթունք, և շուրջ զնովաւ քերովբէքն փառաց: Եւ որպէս ասի՝ յընծայել նորա մատուցին և քահանայք հուր 'ի տաճար անդր 'ի վկայութիւն ա՟ծութ՟ե նորա. զոր տեսեալ սիմէոնի կոչեաց զյայտնութիւն նորա լոյս հեթանոսաց. որոյ 'ի նշան հուր վառեմք և մեք 'ի տօնի ընծայման տեառն: Այս կարծիս երևի լինել և ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. իա.) տես զայսմանէ և 'ի գիրքն կոչեցեալ պատկեր տօնից տիրամօր. ('ի ճառն ը:)

Սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. ա. 17. ճառ դ.) զայս բան վերածէ 'ի գալուստ հոգւոյն սրբոյ, յասելն. * Առաքեաց և զհոգին սուրբ՝ մերկ ա՟ծութեամբն առանց
,, մարմնոյ, զցրուեալսն ժողովել 'ի մի, և ըզբաժանեալ
,, լեզուսն յաշտարակէն՝ ժողովել. իսկ նա
,, եկեալ յայտնի ա՟ծութեամբն 'ի դասս առաքելոցն
,, 'ի սուրբ վերնատանն ըստ դաւթայ երգոյն. ա՟ծ մեր
,, ասէ յայտնապէս եկեսցէ. և մի՛ լռեալ դադարեսցէ,
,, այլ հուր առաջի նորա գնասցէ ‖: (Զսոյն գրէ և 'ի մեկն. ա. պետ. ա. 12. ճառ է.) * իսկ սոցա,

„ (այսինքն առաքելոց) յերկնից (ասէ) առաքեցաւ 'ի
„ ձայն ուժգին հողմոյ և 'ի փայլումն հրաշալի լուսոյ.
„ և ահն յայտնի տեսողացն 'ի հրեղէն լեզուս բաժանեալ՝
„ նստաւ յիւրաքանչիւրոցն վերայ … և այս
„ ըստ մարգարէութեանն՝ ա՟ծ մեր յայտնապէս եկեսցէ
„ ասէ և ոչ լռեալ դադարեսցէ. քանզի հուր առաջի
„ նորա գնասցէ ‖: Զսոյն յառաջագոյն զեկոյց
առաքելոց տէրն մեր թէ *նա եկեալ (իբր հուր) յանդիմանեսցէ
„ զաշխարհ վասն մեղաց, վասն արդարութեան,
„ և վասն դատաստանի ‖. (յովհ. ժզ. 8.)
վասն մեղաց՝ զոր ծածկել կամի աշխարհ. վասն արդարութ՟ե՝
զոր աղաւաղէ աշխարհ. և վասն դատաստանի՝
զոր յափշտակէ աշխարհ: Արդ քանզի խօսեցաւ մարգարէն
'ի վերոյ զպատրաստութենէ դատաստանի տ՟ն,
խօսի այժմ և զեղանակէն՝ ասելով:

Է. Կոչեսցէ զերկինս 'ի վերուստ՝ և զերկիր, 'ի դատել զժողովուրդ
իւր. ժողովել առ ինքն զսուրբս իւր, և որք
դնեն զպատարագս ուխտից 'ի վերայ սեղանոյ նորա:

Որպէս նախընթաց բանքդ, սոյնպէս և սոքին ցուցանեն
զմեծութ՟ի և զճշմարտութիւն՝ ևս և զահեղութ՟ի
դատաստանին տ՟յ հայելով յեղանակն. ըստ որում
սովորութիւն է սուրբ գրոց 'ի ցուցմունս զայսոսիկ 'ի
մէջ բերել զերկինս և զերկիր. ըստ այնմ. (բ. օրին.
լբ. 1.) *Նայեցարուք երկինք և խօսեցայց (զմեծամեծս.)
„ և լուիցէ երկիր զպատգամս բերանոյ իմոյ ‖:
Եւ դարձեալ թէ *ունիմ ձեզ վկայս այսօր զերկինս
„ և զերկիր՝ զի կորստեամբ կորնչիցէք յերկրէն ‖, ևն.
(բ. օրին. դ. 26:) Զայս միտս ասէ և երեմիա. (բ.
12.) *յիմարեցան երկինք և սոսկացան յոյժ ասէ
„ տէր. զի զերկուս չարիս գործեաց ժողովուրդ իմ ‖:
(Եւ իբ. 29.) *Երկիր երկիր երկիր լուր զպատգամ
տեառն ‖: Ըստ սմին խօսի ա՟ծ և բերանով եսայեայ
յասելն. (ա. 2.) *լուր երկին և ունկնդիր երկիր,
„ զի տէր խօսեցաւ ‖. յորոյ վերայ ասէ գէորգ վարդապետ.
*Թողեալ զմարդիկ իբրև զանարժանս՝ ընդ
„ անբան տարերս խօսի. զի բանականք գոլով՝ քան
„ զանզգայսն անզգայագոյնք եղեն. զայս և այլ մարգարէքն
„ առնեն. որպէս մարգարէն որ առ յերոբովամ

,, առաքեցաւ՝ թողեալ զթագաւորն՝ ընդ սեղանն խօսէր.
,, և երեմիա, թէ երկիր երկիր գրեա զայրդ
,, զայդ տարագիր. քանզի առաջի երկնի և երկրի ա-
,, րար իսրայէլի մեծ բարութիւնս փրկելով յեգիպ-
,, տացւոցն. յորոց պատուհասն մարտակիցք եղեն եր-
,, կին՝ կարկուտ, և երկիր՝ գորտ և արիւն բղխելով,
,, որ ցուցանէ զչարիս փրկելոցն՝ թէ 'ի զուր աշխատե-
,, ցան վասն նոցա տարերքս... (ուստի և ա՟ծ) յեր-
,, կինս՝ հրեշտակաց, և յերկրի՝ մարդկան վկայէ զչա-
,, րիս նոցա..... թէ որպէս հռչակաւոր արար զըն-
,, դունելն զնոսա, այսպէս առնէ և զմերժումն || նոցին,
'ի դատել զնոսա կոչմամբ երկնի և երկրի. սմին իրի և
մարգարէս ասէ:

Կոչեսցէ զերկինս 'ի վերուստ՝ և զերկիր, 'ի դատել զժողովուրդ իւր: Յայս բան բառիւս երկինս՝ իմացեալ լինի նախ բուն հաստատութիւն երկնից, և բառիւս երկիր՝ բուն զանգուած երկրի: Եւ զի սոքա կան հաստատուն և մնան յաւիտեան, և են մեծ և երևելի՝ կոչելն զսոսա է ցուցանել զհաստատութիւն ճշմարտութե՟ և ըզմեծութիւն ահեղութեան այնր՝ 'ի պատճառս որոյ կոչէին. և ըստ այսմ կամի ասել. հանդերձեալ է ա՟ծ դատաստան առնել ժողովրդեան իւրում իսրայէլի. և վասն այսր ձայն տուեալ երկնի և երկրի՝ կոչեսցէ զնոսա յայն դատաստան, զերկինս 'ի վերին կողմանց աշխարհի, և զերկիր 'ի ստորին կողմանց, ոչ զի լիցին վկայ, այլ զի երևեսցին դատել զժողովուրդն զայն. որ է ասել. առաջի երկնի և երկրի յանդիման ամենեցուն ա՟մ ճշմարտութեամբ և արդարութ՟բ հանդերձեալ է ա՟ծ դատել զնոսա. ուր եթէ կարէին և նոքին իսկ երկինք և երկիր բարբառիլ, ինքեանք ևս աղաղակելով՝ զնոյն դատաստան արդարացուցանէին: Դարձեալ՝ սովին այսու պարզապէս նշանակի ասել, թէ յերկնից յերկիր իջանելոց է տէր հանդերձ արդարովք՝ առնել զդատաստան: 'Ի սոյն միտս առնու և ծործորեցին. ('ի մեկն. մատ. ժդ.) ասելով. * իջեալ
,, յերկնից յերկիր տէրն բեմ կազմէ, և տայ
,, զվճիռ մեղաւորացն. ըստ այնմ. կոչեսցէ զերկինս
,, 'ի վերուստ, և զերկիր 'ի դատել զժողովուրդ իւր ||:

Երկրորդ՝ բառիւս երկինս իմացեալ լինին բնակիչք

երկնից, հրեշտակք, և սուրբք. իսկ բառիս երկիր բնակիչք երկրի՝ ոյք և իցեն, և զամենեսին զոսա կոչեսցէ տէր, զի ինքեանք դատաստան արասցեն ժողովրդեան իւրոյ, տեսանելով թէ զինչ արար նոցա աստուած, և զինչ արարին նոքա ա̃յ. Այլ արդ եթէ զայս հանդերձեալ է ա̃ծ առնել ժողովրդեան իւրոյ, զինչ ապա ունիցի առնել այլոց. ըստ որում ասէ առաքեալն, * զի
,, ժամանակ է սկիզբն լինելոյ դատաստանին 'ի տանէն
,, ա̃յ. զի եթէ նախ 'ի մէնջ, իսկ զինչ կատարած այնոցիկ
,, իցէ՝ որ ոչ հնազանդեցան ա̃յ աւետարանին.
,, Եւ եթէ արդարն հազիւ կեցցէ՝ իսկ ամպարիշտն և
,, մեղաւորն ո՞ւր գտանիցի ॥. (ա̃. պետ. դ. 17. 18.)

Զայս եղեւ՝ յաւելու.

Ժողովեցէք առ ինքն զսուրբս իւր, և որք դնեն զպատարագս ուխտից 'ի վերայ սեղանոյ նորա. Սրբովք մանաւորապէս իմացեալ լինին աստ նախ իսրայէլացիք, զորս ընտրեաց ա̃ծ՝ լինել ինքեան ժողովուրդ. (ըստ որում գրի 'ի գիրս ելից. ժթ. 5. 6.) որք և 'ի բազում տեղիս կոչին ժողովուրդ սուրբ. (բ̃. օրին. է. 6. ժդ. 2. և 21. իզ. 19. և Թուոց ժզ. 3.) Եւ ահա զոսա ունի ա̃ծ կոչել 'ի դատաստան. Եւ յայս միտ յետագայ շաղկապդ Եւ՝ դնի փոխանակ մեկնողական շաղկապիս այսինքն, որպէս թէ ասէր. ժողովեսցէ ա̃ծ 'ի դատաստան զժողովուրդս իւր, այսինքն զայնոսիկ որք դնեն զպատարագս ուխտից 'ի վերայ սեղանոյ նորա. այսինքն որք դնեն ուխտս ընդ նմա 'ի ձեռն պատարագաց՝ զորս մատուցանեն 'ի վերայ սեղանոյն ա̃յ. Եւ դատաստան սոցա լինիցի մեծ.

Երկրորդ՝ 'ի հասարակի իմացեալ լինին այնոքիկ, որք հաւատացին յա̃ծ՝ եթէ 'ի հնումն և եթէ 'ի նորումն, որով և կոչին սուրբք, այսինքն նուիրեալք ա̃յ. զի այսպիսիքս իւիք սրբեցան, այսինքն նուիրեցան ա̃յ, 'ի հնումն թլփատութեամբ կամ այլով արարողութե̃բք. իսկ 'ի նորումն մկրտութեամբ և այլովք խորհրդովք, և կամ մասնաւոր իմն գործովք. սոքա ամենեքին եդին զպատարագս ուխտից 'ի վերայ սեղանոյն ա̃յ, այսինքն ուխտ եդին ա̃յ իւիք պատարագաւ՝ զոր մատուցին ա̃յ. Զոսա ունի ժողովել առ ինքն՝ զի դատեսցէ, արդեօք ըստ ուխտին կամ ըստ հաւատոյ իւրեանց գործեցին՝ թէ ոչ. եթէ գտցէ այնպիսի՝ փառաւորեսցէ, իսկ թէ ոչ՝ դատապարտեսցէ։

Երրորդ՝ իմացեալ լինին առաքեալք և մարգարէք, ընդ որս խմ՛ 'ի մասնաւորի և զմովսէս և զահարոն որք եդին զպատարագս 'ի վերայ սեղանոյ զուխտեալսն 'ի ժողովրդենէ։ Զոսա ունի ա՟ծ ժողովել առ ինքն յաւուրն դատաստանի՝ ոչ զի դատեսցէ, այլ զի դատեսցեն նոքա զայլս։

Չորրորդ՝ ընդհանրապէս իմացեալ լինին այնոքիկ, որք պահեցին զօրէնս ա՟յ, և ըստ հաճոյս նորա կացեալ՝ փոխեցան աստի։ Եւ ըստ այսմ կամի ասել. 'ի դատաստանի անդ՝ ա՟ծ ժողովելոց է դէմ յանդիման ամենեցուն զսուրբս իւր՝ և փառաւորելոց է զնոսա. Ը՟ նոյնն ժողովելոց է առ ինքն և զայնոսիկ [illegible] են. որպիսի են ապաշխարօղք, կամ այնոքիկ՝ որք սրբութ՟ մատուցին պատարագ ա՟յ, և նովին գտին զքաւութիւն, եթէ 'ի հնումն և եթէ 'ի նորումս։ Կամ որք ըստ լմբ՟. մատուցին զողորմութի առ կարօտեալս, որք նմանութ՟ իմն սեղան են ա՟յ, և որ նոցա լինի՝ ա՟ծ իւր համարի։ Կամ որք յամենայն սրտէ ներելով թշնամեաց՝ և հաշտելով ընդ խիթացօղս իւրեանց՝ մատուցին պատարագ ըստ ուխտին ք՟ի, թէ 'ի մատուցանել քո զպատարագ՝ եթէ * յիշեսցես, եթէ եղբայր քո ունի ինչ խէթ „ զքէն, թող զպատարագն քո առաջի սեղանոյն. և „ երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում և ապա ե„կեալ մատուսջիր զպատարագն քո ‖. (մատ. Ե. 23։) Զի այսպիսի պատարագ ընդունելի է ա՟յ. և հաշտեցուցիչ մարդոյ ընդ նմա՝ և զօրէ 'ի դատաստանի. զի որ այսպէս մատուցանէ զպատարագն, 'ի դատին անդ 'ի դատաստանի՝ կարէ ասել առ դատաւորն. դու ասացեր տէր՝ թողէք և թողցի ձեզ. և թէ * ո„րով դատաստանաւ դատէք դատելոց էք ‖. (մատ. Է. 2.) թող ապա և ինձ, զի և ես թողի, և հաշտեցայ ընդ եղբօր իմում։ Նոյն օրինակ ետ նա ինքն ք՟ս. զի 'ի պատարագին անդ՝ եթող թշնամեաց իւրոց. և հաշտութիւն խնդրեալ վասն նոցա մատոյց ըզպատարագն 'ի վերայ խաչին։ Ուստի ասէ ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. Ե.) թէ * տէր նախ քան „ զմատուցանել պատարագի մարմնոյն 'ի վերայ սե-

„ զանոյ խաչին հաշտեցաւ ընդ խխթայող ազգն հր-
„ րէից, ասելով. Հայր թող սոցա զմեղս, զի ոչ գի-
„ տեն՝ զինչ գործեն. եւ ապա մատոյց զանձն իւր պա-
„ տարագ 'ի հոտ անուշից ‖.

Յայսմ ամենայնի՝ զոր ասացաք, բառդ տնէն՝ որ է 'ի ներկայն, ոչ ցուցանէ զներկայ ժամանակ բայի, այլ զներկայ ժամանակ կենցաղոյս, յորում եղին, դնեն եւ դնելոց են մարդիկ զուխտ ընդ ա̃յ. եւ ա̃ծ համբերեալ է դատել զոսա այնպիսի արդարութ̃բ, մինչեւ ամենեցուն վկայել՝ թէ արդար է դատաստան նորա։ Եւ այսմ վկայ կոչէ զերկինս 'ի յաջորդ համարն ասելով.

Զ. Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա. զի ա̃ծ դատաւոր է.

Բառիւդ երկինք՝ իմացեալ լինի այն՝ զոր եդ 'ի նախընթաց համարն ասելով. * կոչեսցէ զերկինս 'ի վերուստ ‖. (զորմէ տես 'ի վերոյ.) իսկ թէ առ ինչ էր կոչումն նորա, յայտ առնէ այսու բանիւ՝ զոր ասէ.

Պատմեսցեն երկինք զարդարութիւն նորա։ Կամի ասել. 'ի դատել տեառն զազգն իսրայէլի եւ զամենայն ազգս, եթէ 'ի փառաւորելն եւ եթէ յանարգելն, երկինք վկայեսցեն, թէ զոր առնէ՝ արդարութիւն է, եւ յարդարութենէ է, եւ արդարութ̃բ է։ Արդարութիւն է՝ զի իւրաքանչիւրոց տայ զայն որում արժանաւորին. յարդարութենէ է՝ զի յուղիղ կամաց եւ յանաչառ մտաց տայ. արդարութ̃բ է՝ զի եթէ այլազգ առնէր՝ ընդդէմ լինէր արդարութ̃ե։ Եւ ահա զայն զայս պատմեսցեն ասէ, այսինքն յայտնեսցեն երկինք, ըստ այնմ մեկնութ̃ե՝ զոր եդաք 'ի վերոյ։

Այս ոճ բանի ցուցանէ եւ զայն՝ թէ այնպիսի արդարութեամբ ունի դատել ա̃ծ, մինչ զի երկինք եթէ ունէին բարբառ, աղաղակէին 'ի վերուստ, եւ իբր մունետիկ գոչէին, թէ արդար է՝ զոր առնէ ա̃ծ 'ի դատելն։ Մարթ է ասել, թէ երկինք այլով իմն օրինակաւ եւս պատմեն զարդարութիւնն ա̃յ. ըստ որում լինին աթոռ դատաստանի նորա, եւ նա 'ի բարձրութեան անդ երկնից նստելով դատէ արդարութեամբ։ Տայ մարգարէն եւ զպատճառ արդարութ̃բ դատելոյն՝

ասելով.

Զի ա՟ծ դատաւոր է. Այս բան կամ 'ի գլխոց երկնից ասի, և կամ 'ի գլխոց մարգարէին. յոր գլխոց և ասիցի, ցուցանէ՝ թէ վասն այնորիկ արդարութ՟ի պատմէ ա՟ծ, վասն զի ինքն է դատաւոր արդար յամենայնի.

Մինչև ցայս խօսեցաւ մարգարէն զա՟յ՝ գիտելով զայն, թէ հանդերձեալ է դատաստան առնել. այժմ սկսանի և ատեան կարգել, և զդատաստանն ա՟յ առաջի դնել, ոչ զայն որ հանդերձեալ է, այլ զայն՝ որ վասն հանդերձելոյն է. խօսելով ապա 'ի գլխոց ա՟յ ասէ.

է. Լուր ժողովուրդ իմ, և խօսեցայց ընդ քեզ. և Իսրայէլ՝ քեզ վկայեցից. զի ա՟ծ ա՟ծ քո եմ ես.

Երբեմն բարի և բարեգութ դատաւոր սկսանի խօսիլ. զոր ունիմ ասէ հարցանել քեզ՝ դու քեզէն վկայեա ըստ յանդիմանելոյ սրտի քոյ. բայց առ 'ի խնամաւ զոր ասելոց եմ, պարտ է քեզ լսել. վասն որոյ ասէ.

Լուր ժողովուրդ իմ, և խօսեցայց ընդ քեզ. Այս լսելու՟ի, զոր խնդրէ՝ է ներքին, զորմէ ասաց տէրն, * որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ ||. (մատ. ժգ. 15.) զի և խուլք ունին ականջս, բայց ոչ լսեն, սոյնպէս և ամենեքին ունին զականջս հոգւոյ՝ այլ ոչ ամենեքին առնուն 'ի միտ. վասն որոյ յորդորէ լսել, որպէս թէ ասէր. եթէ լսես, խօսեցայց ընդ քեզ. ապա թէ ոչ՝ խօսեցայց ընդ այլս. բայց որովհետև դու ես ժողովուրդ իմ, դու ինքն լուր ինձ յառաջ քան զդատելս իմ ընդ քեզ. և ես խօսեցայց ընդ քեզ իբրև ընդ այնմ՝ զոր ընտրեցի ինձ, և եդի 'ի վերայ քոյ զանուն իմ. զոր և յայտ առնէ յաջորդ բանիւն՝ ասելով.

Իսրայէլ՝ քեզ վկայեցից. Այսինքն՝ դու ժողովուրդ իմ զոր Իսրայէլ կոչեցի, այսինքն ա՟ծատես, լուր զոր ինչ վկայութիւն տամ քեզ. որ է ասել. 'ի միտ առ զայն ամենայն, զոր ես իմով վկայութ՟բս ցուցանելոց եմ քեզ. զի զճշմարիտն վկայեմ, և զօգուտն քոյ յայտնեմ. վասն զի եմ ճշմարիտ ա՟ծ քո. և առ այս յարէ զկնի և ասէ.

Զի ա՟ծ ա՟ծ քո եմ ես. Աստանօր շաղկապդ է՝ երկնակի կարէ առեալ լինել · մի՝ իբր պատճառական · և ըստ այսմ կամի ասել · վասն այնր զճշմարիտն վկայեմ, վասն զի ա՟ծ եմ, և վասն այնորիկ զօգուտն քո վկայեմ, վասն զի աստուած քո եմ ։ Երկրորդ՝ իբր Թարգմատար, և ըստ այսմ այս բան յարի 'ի նախընթացն իբրև խնդիր վկայել բային · որպէս թէ եղեալ էր · վկայեմ, թէ ես որ եմ ա՟ծ՝ եմ յատուկ ա՟ծ քո · կամ վկայեմ թէ ես եմ ա՟ծ քո · որով կամի խելամուտ առնել և հաստատութեամբ ցուցանել՝ թէ ինքն է ա՟ծ նոցա, արարիչ և նախախնամիչ նոցին, և տուիչ ամենայն բարեաց · և եթէ այսպէս է, ապա իրաւամբ ունի քննել և տեսանել ըստ ժամանակին՝ թէ ո՛րպէս պաշտեցին նոքա զինքն, զի՛արդ ծառայեցին ինքեան, յո՛րս 'ի կիր արկին զպարգևս նորա, յի՞նչ կարգեցին զգործս իւրեանց · զի՞նչ բարի արարին և զի՞նչ չար, ոչ ըստ արտաքնոյն միայն, այլև ներքնոյն · զի որ ըստ արտաքնոյն բարի երևի, կարէ ըստ ներքնոյն չար լինել · և որ ըստ ներքնոյն բարի իցէ՝ կարէ ըստ արտաքնոյն չար տեսանիլ · իսկ ա՟ծ 'ի դատելն՝ զա՟մն ցուցցէ՝ որպէս և է ։

Այս բանք և որ զհետ սոցա թէպէտև հային յայն ամենայն՝ զոր ա՟ծ առաջի դնելոց է 'ի դատաստանի, բայց աստ դնին 'ի բերանոյ ա՟յ իբր նախազգուշութիւնք առ հանդերձեալ դատաստանն · որպէս զի սոքիմբք ըզգաստացեալ լսողաց՝ նախապատրաստեսցեն զանձինս · և ըստ վկայութեանն ա՟յ՝ վարեսցեն զկեանս · և մի՛ յարտաքին բարիս ապաւինելով՝ նոքիմբք կարծեսցեն արդարանալ · որպիսի էին իսրայէլացիք, որք ըստ ա՟մի ապաւինեալ էին 'ի զոհս և յայլ արարողութ՟իս, որք թէպէտ և բարի էին և սուրբ, բայց ո՛չ առնէին ըզմարդն բարի և սուրբ, եթէ մարդն ո՛չ առնէր զինքն այնպիսի ։ Եւ զայսոսիկ առաջի դնէ մարգարէն յեօթանեսին յաջորդ համարսն, և նախ ասէ ։

Ը · Ո՛չ թէ վասն պատարագաց քոց յանդիմանեմ զքեզ · զի ողջակէզք քո առաջի իմ են յամենայն ժամ ։

Պատարագօք իմացեալ լինին աստ այն նուէրք՝ զորս ա՟յ մատուցանէր ժողովուրդն իսրայէլի յորո՛ց և իցէ, և մանաւանդ յանդէոց և 'ի խաշանց ։ Իսկ ողջակէզք էին, որք 'ի մատուցմունսն՝ բոլոր այրէին ։ Այսպիսի պատարագք և ողջակէզք համապազ մատուցեալ լինէին առ ա՟ծ, և ընդունելի էին ա՟յ ըստ երից․ մի՝ զի իբրև սուրբ ինչ սահմանեալ էին յա՟յ վասն խորայէլի․ երկրորդ՝ զի էին օրինակ պատարագին զոր մատուցանելոց էր որդին ա՟յ․ և երրորդ՝ զի նոքիմբք լինէր հաշտութիւն 'ի մէջ ա՟յ և մարդոյ՝ վասն այնպէս կարգեալ լինելոյն առ յա՟յ ։

Եւ սակայն նոքա որոց վասն մատչէին, յայնժամ լինէին ընդունելի և հաճոյ ա՟յ, յորժամ 'ի մատչել պատարագացն՝ ինքեանք ևս հոգւով մատչէին առ աստուած․ ապա թէ ոչ՝ թէև ընդունելի լինէին ա՟յ մատուցեալ պատարագքն, նոքին որոց վասն մատչէին պատարագքն, անընդունելի մնային, մանաւանդ թէ և մերժելի իսկ ։

Զի ա՟ծ որ 'ի փառս իւր սահմանեաց զպատարագն՝ յօգուտ մատուցողացն կարգեաց․ իսկ փառաւորիլ իւր՝ ոչ էր յայնմանէ՝ որ մատուցմունսն, այլ յայնմանէ՝ որ մատուցանէր․ ուստի առաւել կամէր ա՟ծ՝ զի մատուցօղն հայելով 'ի փառս իւր՝ կատարեսցէ զայն զոր ինքն կամի, քան թէ մատուցեալն իցէ այսպիսի կամ այնպիսի․ յայս հայելով ասաց սամուէլ․ (ա՟․ թագ․ գլ․ ժԵ․ 22 ։) * Եթէ հաճոյ իցէ տեառն ող-
,, ջակէզ և զոհ իբրև լսել ձայնի տեառն․ ահա լա՛ւ
,, է ունկնդրութիւն քան զզոհ ընտիր, և հնազանդու-
,, թիւն քան զճարպ խոյոց ‖․ Արդ ոչ թէ զզոհս արհամարհէ․ այլ թէ ինքն զպատարագօղսն խնդրէ և ոչ թէ զպատարագսն ։ * Զի՞ կայ իմ և յաճախելոյ զո-
,, հից ձերոց ասէ տէր․ յագեալ եմ ողջակիզօք խոյոց
,, ձերոց․ և զճարպ գառանց և զարիւն ցլուց և նո-
,, խազաց ոչ կամիմ․ ո՞ խնդրեաց զայդ 'ի ձեռաց ձե-
,, րոց․․․ եթէ մատուցանիցէք ինձ նաշիհ զո՛ւր է․
,, խունկք ձեր պիղծ են ինձ ‖․ (եսայ․ ա՟․ 11 = 18 ։)

Եւ բերանով երեմիայ ասէ․ * զողջակէզս ձեր ժո-
,, ղովեցէ՛ք համդերձ զոհիւք ձերովք և կերայք միս․
,, (այսինքն դուք կերէ՛ք և մի տայք ինձ) զի ոչ խօ-
,, սեցայ ընդ հարսն ձեր․ և ոչ պատուէր ետու նո-
,, ցա յաւուրն յորում հանի զնոսա յերկրէն եգիպ-
,, տացւոց վասն բանի ողջակիզաց և զոհից․ այլ զայս

„ քան պատուիրեցի նոցա, և ասեմ. լուարո՛ւք ձայնի
„ իմում և եղէց ձեզ ա՟ծ. և դուք եղիջիք ինձ ժո-
„ ղովուրդք. և գնասջի՛ք յա՟մ ճանապարհս իմ զոր
„ պատուիրեցի ձեզ. զի բարի լինիցի ձեզ ‖. (Երեմ.
է. 21 = 24.)

Սոքիմբք (որպէս ասացաք) ցուցանի՝ թէ զոր խնդրէ ա՟ծ 'ի մարդոյ՝ ոչ են պատարագք և նուէրք և այլ այսպիսի արարողութիւնք, զի սոքա արտաքին են. այլ զներքինսն խնդրէ, որպիսի են ներքին նուիրմունք անձին, խոնարհութիւն հոգւոյ, սրբութիւն սրտի, մաքրութիւն վարուց, ևն. Աստի ասէ Նարեկացին. ('ի մեկն. երգ. է. 8.) * ոչ եթէ ճենճերոց հոտն ա-
„ նուշահոտութիւն էր ա՟յ, այլ մատուցողացն մաքրութիւն
„ հաճոյացուցանէր և հոտ անոյշ լինէր ա՟յ, որպէս հա-
„ բելին ‖. (տես և 'ի սաղ. Ծ. 18. և 19.) Ի սոյն
հայելով ասէ.

Ո՛չ եթէ վասն պատարագաց քոց յանդիմանեցից զքեզ. զի ողջակէզք քո առաջի իմ են յամենայն ժամ. Ահա այս է այն՝ զորմէ ասաց 'ի նախընթաց համարն, թէ վկայեցից. և զինչ է այն, ոչ յանդիմանեցից ասէ և ոչ դատապարտեցից զքեզ 'ի դատաստանի վասն այնր թէ սակս պատարագս կամ ողջակէզս մատուցեր ինձ. զի ողջակէզք քո առաջի իմ են յա՟մ ժամ. իբր զի միշտ մատչին 'ի ձէնջ առաջի իմ զոհք ձեր և ողջակէզք և մինչև իսկ մատուցեալ իցեն՝ տեսանեմ զայնս առաջի իմ. բայց զինչ օգուտ ասէ՝ անտի. ես զձեզ կամիմ և ոչ զողջակէզս ձեր. զի զորս մատուցանէք, իմ են, և ոչ թէ ձեր. վասն որոյ և ոչ հարկ է ինձ զայնպիսիս խնդրել 'ի ձէնջ. Եւ առ այս յարէ.

Թ. Ո՛չ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուարակս. և ոչ 'ի հօտից քոց նոխազս.

Զուարակն է մեծ հորթ արու. իսկ նոխազն է արու այծ. Զերկոսին զայսոսիկ յընտանի կենդանեաց յառաջ բերելով իբր զազնիւս և զօրաւորս՝ զայլս ևս կամի իմացուցանել. և վկայէ թէ զայսպիսիս ոչ ընդունի յասենէն.

Ո՛չ ընդունիմ 'ի տանէ քումմէ զուարակս. և ոչ 'ի հօտից քոց նոխազս. Կամի ասել. որպէս եթէ ա՟մ ինչ իմ է՝ եթէ զուարակ և եթէ նոխազ, և եթէ այլ կենդանիք, ոչ վայել է ինձ խնդրել զայն 'ի ձէնջ իբր զայնպիսի՝ որք իցեն 'ի տանէ ձերմէ՝ և 'ի հօտից ձերոց, այսինքն իբր յատուկ ինչ ձեր. զորմէ և ոչ իսկ կարէք երախտել. և եթէ ընդունիցիմ, ոչ եթէ 'ի տանէ ձերմէ համաբերեալ ընդունիմ, այլ 'ի պարգևաց իմոց: Եւ յատուկ ինչ, որպէս և հաճիմ՝ առնում, զի իմ են. և առ այս յաւելու ասել:

Ժ. Իմ է ամ գազան անտառի. երէ լերանց և ամ անասուն:

Գազանք իմացեալ լինին պատառօղ կենդանիք. որպիսի են առիւծ, արջ, գայլ, ևն. որք հասարակօրէն յանտառս բնակեն. այնպէս թիւնաւոր կենդանիք, որպէս վիշապ, օձ, ևն: Իսկ երէիւք իմացեալ լինին խոտաճարակ վայրի կենդանիք, որպէս եղն, եղջերու, այծեամն, ևն. որք հասարակօրէն 'ի վերայ լերանց ունին զբնակութիւն: Իսկ անասունք իմացեալ լինին ընտանի անասունք, որպիսի են եզն և ոչխար, ևն: Զայս ամէ խօսելով ասէ:

Իմ է ամ գազան անտառի, երէ լերանց և ամ անասուն: Որպէս թէ ասէր. ոչ կարօտիմ պատարագաց քոց՝ զոր մատուցանես ինձ յընտանի անասնոց. զի իմ են նոքա, և ոչ միայն նոքա, այլև ո՛ և իցէ վայրի անասունք ևս և գազանք. եթէ կամիցիմ ընդունիլ զնոսա, ոչ ստիպիմ ասել՝ քեզ. մատո ինձ 'ի նոցանէ: Եւ զի մի կարծեսցեն անմիտք, թէ որք յօդս թռչին՝ գուցէ նոքա այլազգ ինչ իցեն, վասն որոյ ասէ:

ԺԱ. Գիտեմ ես զամ թռչունս երկնից. գեղեցկութիւն վայրի ընդ իս է:

Այս գիտելս ոչ միայն ցուցանէ զճանաչելն այ զամ, այլ և զտէրութիւն նորա և զխնամս նորին 'ի վերայ այնոցիկ, զորոց ասէ գիտել. որպէս յասելն ցսենեքերիմ. (եսայ. լէ. 28.) * զկայս հանգստեան քո, և „ զել և զմուտ ճանապարհաց քոց ես ինձէն գիտեմ ∥. կամի ասել, 'ի ձեռին իմում ունիմ, և յայտնի տեսանեմ, ևն. զի որպէս յասելն այ ընդ հակառակն, ոչ գիտեմ զքեզ՝ ցուցանէ մերժել 'ի խնամոց, այնպէս և յաւելն գիտեմ՝ ցուցանէ զտիրելն կամ զխնամելն ։ Յայս միտս և աստ փոխանակ 'ի մէջ բերելոյ զտիրելն՝ գիտել դնէ՝ ասելով ։

ԳԻՏԵՄ ԵՍ ԶԱ̃Մ ԹՌՉՈՒՆՍ ԵՐԿՆԻՑ ։ Որպէս թէ ասէր . իմ են և ա̃մ թռչունք որք թռչին յերկինս, այսինքն յօդս, և նստին 'ի լերինս և ըստ հրամանի իմում գնան և շրջին . և ոչ են արտաքոյ իշխանութեան և խնամոց իմոց . վասն որոյ և գիտեմ՝ թէ ո՛ւր իջեն և ո՛ւր դադարիցեն, ուստի ելանեն և ո՛ւր գնան . եթէ պիտոյ լիցին ինձ՝ առնում 'ի նոցանէ, և ոչ կարօտիմ քեզ ։ Այնպէս և զխոտոց խօսելով ասէ ։

ԳԵՂԵՑԿՈՒԹԻ̃ ՎԱՅՐԻ ԸՆԴ ԻՍ Է ։ Գեղեցկութի̃ վայրի կոչէ զամենայն բոյս և զպտուղս նոցա . զի խոտք և ծաղիկք և ծառք՝ գեղեցկութի̃ք են վայրացն՝ և արտարէից, յորս բուսանին . իբր զի գեղեցկացուցանեն զայնս . այնպէս և պտուղք ծառոց են գեղեցկութի̃ք նոցա, և տեղեացն՝ յորս լինին ։ Այս ա̃մ ասէ ընդ իս է ։ Իւր բառդ ԸՆԴ ԻՍ՝ ըստ կրկին միոյ առեալ լինի . մի՝ իբր ներգործական, և ըստ այսմ կամի ասել . գեղեցկութի̃ք ո՛ և իցէ իրաց, և գեղեցկացուցիչք նոցա ըստ կատարելութե̃ իւրեանց յիս են, և այս՝ ոչ եթէ նիւթապէս, այլ գերազանցապէս . ըստ որում 'ի յա̃ծ է անսահման գեղեցկութի̃ պարագրիչ ա̃մ գեղեցկութե̃ց ։ Երկրորդ՝ իմացեալ լինի իբր 'ի ներքոյ . և ըստ այսմ կամի ասել . ա̃մ գեղեցկութի̃ք և ա̃մ իրք գեղեցկացուցիչք այլոց՝ են ընդ իշխանութե̃ իմով և 'ի ներքոյ խնամոց իմոց . իմ են ա̃մ և առաջի իմ կան, գիտեմ և տեսանեմ զա̃մ, զիարդ իցեն, և զիարդ գոյանայցեն . 'ի կամիլս իմ կան, և յոչ կամիլս իմ չքանան . ապա զինչ կարօտութի̃ ունիցիմ ես ընդունելոյ ինչ յայնցանէ ձեռամբ ձերով . եթէ պիտոյ ես լիցին ինձ ես ինքնին առնում ։ Եւ առ այս յարէ ։

ժբ̄ . ԵԹԷ ՔԱՂՑԵԱՅՑ, ՈՉ ԱՍԱՑԻՑ ՔԵԶ . ԶԻ ԻՄ Է ԱՇԽԱՐՀ ԼՐԻՒ ԻՒՐՈՎ ։

Քաղցնուլն դնի աստ փոխանակ կամելոյ, բայց առ սաստկացուցանելոյ զբան կամեցողութեանն, և առ յարմարեցուցանելոյ զայն ասացելոցն, քաղցնուլ դնէ՝ ասելով ։

Թէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից. զի իմ է աշխարհ լրիւ իւրով։ Որպէս թէ ասէր. եթէ անկարելի դրութիւն քաղցեայց՝ քեզ ոչ կարօտացայց. և ոչ ասացից՝ թէ պատրաստեա ինձ զուարակս կամ պտուղս. զի իմ են ա՟մ զուարակք և պտուղք և բոլոր աշխարհս լրիւ իւրով, այսինքն հանդերձ այնու ա՟միւ որով լցեալ է։ Բայց զի մի կարծեսցէ յիմար ոք, թէ յիրաւի աստուած

քաղցնուցու, յարէ զկնի, և ասէ։

ժգ. Մի՛ ուտիցեմ ես զմիս զուարակաց. և ոչ զարիւն

նոխազաց ըմպիցեմ։

Հեթանոսաց կարծիք էր, թէ ա՟ծ ուտէ և ըմպէ. (որպէս յայտ է դան. ժդ. 5 = 11.) Իսկ այս է մոլորութիւն անհնարին. զի ա՟ծ է էակ անմարմին և անփոփոխելի. իսկ ուտելն պատշաճի մարմնաւորաց, և պատճառէ զփոփոխութիւն։ Եւ զի զայս յայտնի գիտէին իսրայէլացիք, զայն զայս զոր գիտէին, յերեսս նոցա

հարկանէ ասելով.

Մի՛ ուտիցեմ ես զմիս զուարակաց. և ոչ զարիւն նոխազաց ըմպիցեմ։ Որպէս թէ ասէր. դուք իսկ գիտէք, զի ես ոչ ուտեմ և ոչ ըմպեմ. ապա զինչ կարօտութիւն ունիցիմ մսոյ զուարակաց ձերոց, և արեան նոխազաց՝

զոր մատուցանէք զսեղանով իմով.

Արժան է աստանօր կշռել, զի 'ի յիշատակել ա՟յ զցամաքային և զօդային կենդանիս, ես և զպտուղս երկրի, զձկանց ոչինչ յիշէ. և պատճառն է այս՝ զի 'ի ձկանց ոչ մատչիւր զոհ ա՟յ, այլ 'ի ցամաքայնոց և 'ի թռչնոց

և 'ի պտղոց երկրի յերեխայրեացն.

Այլ թէ ընդէր 'ի ձկանց ոչ մատչիւր զոհ, այս միայն զհաճութենէ կամացն ա՟յ կախեալ կայ. իսկ ըստ մեզ խորհելով՝ մարթ է ասել նախ թէ վ՟ա զի նոքա կենդանեայն ոչ կարէին մատչիլ պատարագ. զի արտաքոյ ջրոյ չունէին տիրապէս կեալ։ Երկրորդ՝ զի համր են ձկունք և ծանրալուր. իսկ աստուած ոչ հաճի ընդունել պատարագ յայնպիսեաց։ Երրորդ՝ զի այլակենցաղ են նոքա ընդ բանաւորս, և ոչ լինէին կենցաղակից ընդ նոսա. և են ծածկեալ յաչաց նոցա ընդ ջրով։ Չորրորդ՝ զի չունէին զարիւն կատարեալ կենդանւոյ, այլ զնմանն.

Ուր արժան է գիտել. զի յերկս ազգս բաժանին կենդանիք. ոմանք չունին զարիւն, որպիսի են ժժմունք, զեռունք, և սողունք։ Ոմանք ունին զկատարեալ արիւն. որպիսի են չորքոտանիք, և թռչունք։ Ոմանք ունին զանկատար արիւն՝ կամ որ նման է արեան, և չէ ճշմարիտ արիւն. որպիսի են ձկունք. որոյ վասն ոչ հրամայեցաւ առ եբրայեցիս հեղուլ զարիւն ձկանց և այնպէս ուտել. որպէս հրամայեցաւ վասն այլոց կենդանեաց. ուստի և առանց զենլոյ ուտէն զայնս եբրայեցիք։ Եւ թէ յիրաւի չէ այն յատուկ արիւն՝ յայտ անտի է, զի 'ի հեղանիլ այնր 'ի վերայ երկիր՝ ոչ տպաւորէ զգոյն արեան մնայուն։ Աստի յայտնանէ ձկունք ոչ համարին արիւնակիցք մարդկան՝ և ոչ կենակից նոցա որպէս համարեալ լինին այլ կենդանիք. սմին իրի և յաւուրս Ջրհեղեղի 'ի կորնչիլ կենդանեաց առ հասարակ ընդ մարդկան՝ ոչ կորեան ձկունք։

Վասն այսր ամենայնի զանց արարեալ զձկամբք, խօսեցաւ մարգարէն 'ի դիմաց ա̃յ զայլոց կենդանեաց յութերորդ համարոյ մինչև ցաստ ցերեքտասան համարն. յորս և յայտ արար՝ թէ այս ամենայն խափանելոց են, ըստ որում գրէ աստ լամբ″. ասելով։

* Ահաւասիկ խառնեալ անարգէ զամենայն հրէական
,, սովորութիւն անդէն 'ի սկզբանն՝ զի մովսէս էր մար-
,, գարէ որ գիրս գրեաց՝ այսպիսի աւանդիցն. և յետ
,, նորա դաւիթ. որոյ երեւի թէ ունայն էր նոցա յետ
,, անարգելոյն ա̃յ այլ 'ի նոյն սովորութիւնն յամել.
,, Նաև ցուցանի թէ ետ զայն օրէնս ոչ առաջին կա-
,, մաւ, այլ բնութիւն հեթանոսական սովորութե̃ն
,, ունելոյ զոչխարազենութիւնն. այնքան բուռն՝ մինչ
,, զի զոր ոչ պահանջեաց ա̃ծ՝ արարին կռոցն. զոհե-
,, լով զուստերս և զդստերս իւրեանց դիւաց։ Արդ
,, զի խափանեսցէ զնոսա 'ի մարգարէութեանցն՝ պա-
,, հանջեաց անասունս. ապա թէ ոչ՝ ա̃յ և այս է ան-
,, պիտան, ըստ որում եցոյց ճշգրիտ, և պահանջէ
,, զօրհնութիւն″։

Յայսմ ամենայնի դիտաւորութիւն մարգարէին է ցուցանել, թէ ոչ է պարտ մարդոյ յայսպիսի արտաքին իրս դնել զբոլոր յոյս իւր. զի այս ամենայն ոչինչ օգտեն մարդոյ, և ոչ իսկ հաճոյ են ա̃յ՝ եթէ մարդս ոչ ջանասցէ զհաճոյսն ա՟յ առնել բանաւորապէս, այսինքն մտօք եւ կամօք · իսկ թէ ո՞ք իցեն այն հաճոյք ա՟յ, յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով ·

ժդ · Զոհեա՛ ա՟յ պատարագ օրհնութե՟ · հատուցե՛ Բարձրելոյն զուխտս քո ·

Այս բանք հային 'ի ներգործութի՟ այնր առաքինութեան՝ որ կոչի կրօն, որով մատուցանի ա՟յ պարտապատշաճ պաշտօն · Եւ այս մատուցումն յայնժամ լինի հաճոյ ա՟յ, յորժամ հիմնի 'ի կենդանի հաւատ, 'ի կատարեալ սէր, եւ 'ի յանշարժ յոյս · Ըստ առաջնոյն այսինքն ըստ կենդանի հաւատոյն ասէ ·

Զոհեա՛ ա՟յ պատարագ օրհնութե՟ · Օրհնութիւն է բան գովութե՟ մատուցեալ ա՟յ՝ 'ի մեծացուցանել զնա · եւ այս է առաջին ներգործութի՟ առաքինութե՟ կրօնի · եւ որպէսզի այս օրհնութիւն ասիցի պատարագ, կամ պատարագ օրհնութե՟ պիտոյ է զի հիմնեսցի 'ի ներգործութիւն կենդանի հաւատոյ՝ 'ի ճանաչել մարդոյ զարարիչ իւր՝ իբրեւ ծայրագոյն բարի եւ իբրեւ ծայրագոյն սիրելի, իբրեւ ծայրագոյն երանութիւն եւ իբրեւ ծայրագոյն ճշմարտութի՟, եւ այլն · Եւ ըստ հաւատոյն յարիլ 'ի նա, եւ նուիրել նմա զանձն · որով եւ լինի մատուցանել նմա պատարագ օրհնութե՟ ըստ ճշմարտութեան՝ ոչ միայն 'ի փառաւորել զնա, այլեւ 'ի գոհանալ վասն բազմապատիկ բարերարութեանց նորա · * ոչ „խնդրէ ինչ մեծ 'ի քէն ա՟ծ մարդ (ասէ սարգիս շնոր„հալի 'ի մեկն · ա՟ · պետ · դ · 11 · ճառ թ · յորդ ·) „փոխարէն անեզրական բարեացն զոր պարգեւեաց „մեզ, այլ միայն զբանիցն փառաւորութիւն (մատո՛ „ասէ ա՟յ պատարագ օրհնութե՟ց) ‖ ·

Սուրբ յակոբ մծբնայ հայրապետ ('ի ճառն դ ·) այսու պատարագաւ՝ իմանայ զաղօթս · զոր եւ գերագոյն դասելով քան զամենայն պատարագս, ասէ · * իսկ „զինչ իցէ պատարագ (օրհնութե՟), բայց եթէ աղօթք · „որպէս 'ի վերոյ գրեցի քեզ · դաւիթ ասէ · մատո՛ „ա՟յ պատարագ օրհնութե՟ · եւ կատարեա՛ բարձրելոյն „զուխտս քո · քան զամենայն պատարագս լաւ իցեն „աղօթք · այսուհետեւ յօժարեսցիս սիրել առ ա„ղօթս · զի նոքա խօսին ընդ ա՟յ փոխանակ քո ‖ · Եւ

'ի ձեռն մգ. գրէ այսպէս.) * և դաւիթ ասէ. ոչ ու-
,, տեմ ես զմիս զուարակաց քոց. և ոչ զարիւն նոխա-
,, զաց քոց ըմպեմ. այլ փոխանակ այսր ամենայնի մա-
,, տո՛ այ պատարագ օրհնութեան. և կատարեա բարձ-
,, րելոյն զուխտ քո. և յորժամ արասցես զայս՝ կար-
,, դասցես առ իս յաւուր նեղութե քո, և լուայց քեզ.
,, փառաւորեցից զքեզ. և օրհնեսցես զիս‖.

Իսկ որ համրանայ մատուցանել այ զայսպիսի պատարագս օրհնութե՝ չէ նա հաճոյ առաջի այ. յորոյ ապացոյց որպէս ասացաք այժմ, ոչ հաճեցաւ ած ընդունիլ պատարագ 'ի համր կենդանեաց այսինքն 'ի ձկանց. որք համր են և ծանրալուրք. այլ որք համր են 'ի փառաւորել զած՝ ծանրալուր լինին առ բանս այ և առներքին ազդարարութիս նորա. ուստի և անհաճոյ նմա.

Այսպիսիքս և ոչ իսկ ունին ըստ ձկանց զկենդանի արիւն, այսինքն զկենդանի հաւատս. վասն որոյ և ոչ յօժարին յօրհնութիս այ և յաղօթս, որք պատարագ օրհնութե կոչին.

Այլ թէ քանի հաճոյ իցէ այ մատուցումն այսպիսի պատարագի, այսինքն օրհնութեան և նուիրման աղօթից, կարէ ցուցանել 'ի տեսլենէ անտի յովհաննու (յայտ. ը. 3.) և յայլ տեղեաց սուրբ գրոց. ըստ որոյ 'ի սկսանել մարդոյ յօրհնութիս այ կամ յաղօթս՝ նախ բանի եօթներորդ կնիքն յերկինս. և լինի լռութիւն. որպէս և ասի անդ (յայտ. ը. 1.) * եղև լռութիւն
,, յերկինս իբրև կէս ժամու‖. որպէս թէ ասացեալ էր այ. լռեա լերուք՝ զի լուայց. Երկրորդ՝ հասանէ 'ի վերայ օրհնողին ձեռն այ. ըստ այնմ. (դ. թագ. գ. 15.) * իբրև նուագեաց սաղմոսասացն՝ եկն 'ի վե-
,, րայ եղիսէի ձեռն տեառն‖. Երրորդ՝ մատչին հրեշտակք առնուլ և մատուցանել այ՝ զոր մատուցանէ աղօթօղն. (որպէս գրի 'ի յայտ. ը. 4.) Չորրորդ՝ իջանէ հուր սիրոյն այ որպէս 'ի պատարագ աբէլին. (ծնն. դ. 4.) Հինգերորդ հասանէ և հոգին սուրբ. որպէս եղև յաղօթել առաքելոցն. (գործ. դ. 31.) Վեցերորդ՝ ծածկէ անդ անձառելի խորհրդածութեց 'ի միտս, և լնու փառք տեառն զտունն այսինքն զհոգին. (բ. մնաց. է. 1.) Եօթներորդ՝ պայծառանայ հոգին և այլակերպի. որպէս յաղօթել տեառն 'ի բարձր լերին՝

պայծառացաւ (մարկ. Թ. 2.) 'ի սարին և յայլ օգտութիս հայելով ասէ 'ի ստորև. * պատարագ օրհնութեան
„ փառաւոր արասցէ զիս. և անդ է ճանապարհ, ուր
„ ցուցից նմա զփրկութիւն իմ ‖. Խօսելով ապա մարգարէին ըստ երկրորդ պայմանին, այսինքն ըստ ներգործութեան սիրոյ 'ի գործս կրօնի՝ ասէ.

Հատուցեա՛ Բարձրելոյն զուխտս քո. Յայտ է թէ Ած ուխտ եդ ընդ Աբրահամու և ընդ զաւակի նորա, այսինքն ընդ ազգի նորուն. (Ծնն. ԺԷ. 7.) Նա յայս իսկ հրամայեաց առնել զթլփատութիւն. ուր ասէ Ած, թէ այս թլփատութիւն * եղիցի նշանակ ուխտին ընդ իս և ընդ
„ ձեզ... և եղիցի ուխտ իմ 'ի վերայ մարմնոյ ձերոյ
„ յուխտ յաւիտենական ‖. (Ծնն. ԺԷ. 10 = 14.) Նա այս ուխտ ցուցանէր՝ թէ ազգք Աբրահամու՝ զնա միայն ունին պաշտել, և զհաճոյս նորա առնել, որպէս յայտ է ('ի նոյն գլ. համար 1. և մանաւանդ որպէս 'ի գլ. ԺԸ. 19.) յասէն. * քանզի գիտէի եթէ պատուիրեսցէ
„ որդւոց իւրոց և տան իւրոյ յետ իւր պահել զճանապարհս տեառն ‖.

Այսպէս և 'ի նոր օրէնս եդ որդին Այ ուխտ նոր՝ հեղմամբ արեան իւրոյ՝ հաւատալ 'ի նա միայն, և պահել զհրամանս նորա. և զայս ուխտ՝ զոր ինքն եդ, իւրաքանչիւր հաւատացեալ ես առնէ յաւուր մկրտութեան իւրոյ, խոստանալով՝ նորա լինել և ըստ նորա հաճոյից կեալ.

Նա արդ ասէ եթէ կամիս պատարագ մատուցանել ինձ՝ կատարեա՛ զուխտ քո զոր եդեր ընդ իս. Նա այս կատարումն ուխտի՝ որ լինի 'ի գործելն զհաճոյս Այ՝ որպէս խօսելով՝ ոչ է արտաքին ինչ, այլ ներքին. և ոչ կարէ այլազգ լինել՝ բայց եթէ սիրով. իսկ արտաքին կատարումն՝ իբր նիւթապէս մտածի. Այն այս հայի և 'ի կատարումն ուխտի ամենասուրբ պատարագի անարատ գառինն՝ ոչ ըստ այլևայլ նուիրանաց, այլ՝ ըստ միոյ միայնոյ յամենայն ժամանակի ընդ ամենայն տեղիս. վասն զի որպէս ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. Ա. պետ. Բ. 4. ճառ Դ.) 'ի հնումն * այսօր այլ ոչխար պատարագէր, և վաղիւն այլ, և
„ որ յետ այնորիկ՝ այլք բազումք. իսկ մեք յընդհան-
„ րական եկեղեցիս զմի (ամենասուրբ) ոչխարն պատա-

,, բազեմք . և 'ի միոյ անտի գառինն միոյ վայելեմք . և
,, ոչ առին բազում պատարագ՝ բազումքն , այլ մի հո-
,, գևորական պատարագ ||. Խօսի ապա մարգարէն և ըստ երրորդին՝ այսինքն ըստ ներգործութե̃ անշարժ յուսոյ , և ասէ ։

ԺԵ. Կարդասջիր առ իս յաւուր նեղութեան քո . և փրկեցից զքեզ՝ և դու փառաւորեսցես զիս ։

Որք միանգամ 'ի սնոտիս ունին զյոյս իւրեանց , այսինքն 'ի մարդ , 'ի մեծութի̃ , յիշխանութի̃ , յարուեստ , և այլն . տեսանեմք՝ զի յաւուր նեղութե̃ երևին 'ի նոսին յուսալ , և նոքիմբք ջանալ ազատիլ . իսկ որք զյոյս իւրեանց ունին յա̃ծ , առ նա դիմեն . յայս յորդոր լինելով ասէ ։

Կարդասջիր առ իս յաւուր նեղութեան քո ։ Որպէս թէ ասէր . ինձ հաճոյ պատարագ է՝ եթէ յանկանիցիս 'ի նեղութի̃՝ ճանաչելով զիս քեզ տէր և խնամօղ՝ առ իս դիմեսցես յուսով , և զիս աղաչեսցես ։

Եւ մեղաւորս ևս կարգի այս յորդոր , յաւուր նեղութե̃ մեղաց կարդալ առ ա̃ծ յուսով . զի * Թէպէտ և
,, (որպէս գրէ մեծն խոսրով 'ի մեկն . ժամագր . ե-
,, րես 367 .) մեղաւորին ասէ ա̃ծ՝ ընդէ՞ր բնաւ պատ-
,, մես զարդարութիւն իմ , այլ այս վասն զարհուրեցու-
,, ցանելոյ է և յապաշխարութիւն կոչելոյ ||. իբր զի ավաւ զարթիցէ , և առ ա̃ծ դիմեսցէ . ըստ որում գրէ անդ սուրբն . * զի թէ ասէ որ յորժամ առողջ իցէ
,, հոգւով՝ վստահութե̃ կարդայ , ապա և 'ի մեղանչելն
,, չէ պարտ յուսահատիլ և կասիլ յաղօթից , այլ միշտ
,, պաղատիլ առ տէր՝ զի թողութե̃ հասցէ ||. և փրկութի̃ գտեալ 'ի նմանէ՝ փառաւորեսցէ զնա . զորմէ խօսի մարգարէն 'ի յաջորդ համարածի՝ ասելով ։

Եւ փրկեցից զքեզ՝ և դու փառաւորեսցես զիս ։ Այսինքն 'ի կարդալդ առ իս՝ փրկեցից զքեզ 'ի չարէ , և դու ընկալեալ յինէն զայս բարերարութիւն՝ մի ապերախտ գտցիս , այլ մատուցես ինձ պատարագ՝ ոչ սոսկ զարտաքին ինչ , այլ զհոգևորականն . իբր զի խորհրդով , բանիւ և գործով փառաւորեսցես զիս . և կամ գոնէ շնորհս մատուցանելով ինձ՝ յիս հաստատեսցես զյոյս քո ։

Զայս խնդրէ ա՛ծ՝ ոչ զի կարօտ է փառաւորելոյ 'ի մէնջ. այլ զի մեք կարօտիմք փառաց նորա. նա և զի փառք է մեզ փառաւորել զնա. և եթէ անկարելի դրութեամբ կարօտ ևս լինէր փառաց՝ մերումս ոչ կարօտէր. զի անարգ իմն է փառք մեր. ըստ որում գեղեցիկ իմն խօսի բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. Ժ.) ասելով. * մեք որ կարօտ եմք փառաց՝ չկամիմք 'ի մեծեղաց պատիւ ընդունել, որչափ ևս ա՛ծ ,, որ անկարօտ բնութիւն է՝ չխնդրէ 'ի մէնջ պատիւ ||. Ի ձեռագիրս մեր աստ դնի հանգիստ, որպէս և յեբր". և յեօթ". զի աստանօր այս կարգ բանի դադարի. վասն զի մարգարէն մինչև ցայս վայր խօսեցաւ 'ի բերանոյն ա՛յ առ ժողովուրդ իւր, կամ առ այր արդար. իսկ աստի և անդր խօսի առ մեղաւորս այլով կարգաւ. և նախ ասէ.

Ժզ. Սակայն մեղաւորին ասէ ա՛ծ. իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւնս իմ, կամ առնուս զուխտս իմ 'ի բերան քո.

Այս բան տիրապէս առ նա հայի՝ որ ըստ փարիսեցւոց պատմէ զարդարութիւնս ա՛յ, և ինքն անիրաւութեան ծառայէ. վասն որոյ և տիրապէս մեղաւոր կոչի, այսինքն ունօղ մեղաց, և չունօղ այնր՝ զոր պատմէ. առ որ բազում ինչ խօսի երանելին պօղոս, յասելն. * դու ,, հրեայ անուանեալ ես, և յեցեալ ես յօրէնս, և ,, պարծիս յա՛ծ ||. և այլն. (հռովմ. բ. 17 = 25.) Զայսպիսեաց ասէ դարձեալ նոյն պօղոս. (տիտ. ա. 16.) * խոստանան գիտել զա՛ծ, և գործովք իւրեանց ,, ուրանան ||. Զորոց և դանդատէ ա՛ծ բերանովն ե- ,, սայեայ յասելն. * մերձ է առ իս || (եսայ. իթ. 13.) Եւ ապա վայ տայ նոցա ('ի համարն 15.) Յայսպիսի մարդ ակնարկելով մարգարէն ասէ 'ի դիմաց աստուծոյ.

Սակայն մեղաւորին ասէ ա՛ծ. իսկ դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւնս իմ, կամ առնուս զուխտս իմ 'ի բերան քո. Այս բառդ սակայն՝ հայի յայն ամենայն, զոր ասաց 'ի վերոյ. որպէս թէ եղեալ էր. ահա որպէս և տեսեր՝ զայսպիսի խօսի ա՛ծ առ ժողովուրդ իւր. իսկ առ մեղաւորն ասէ, դու ընդէ՞ր պատմես զարդարութիւնս իմ.

որպէս թէ ասէր. որովհետեւ դու արհամարհես զարդարութիւնս իմ, այսինքն զարդար օրէնս իմ, ընդէ՞ր ապա բանիւդ խոստովանիս ճանաչել զայնս, եւ քարոզես այլոց թէ պարտական էք պահել զնոսին. եւ երկնչիլ 'ի դատաստանաց ա՟յ: Եւ գարշեալ՝ զխրատ զուխտ իմ զոր եդեալ է իմ ընդ քեզ, եւ քո ընդ իս՝ գործով անարգես, եւ բերանով գովես. ընդէ՞ր բարի խօսելով զայնմանէ՝ ցուցանես զքեզ եւ զբան քո բարի. իսկ ընդդէմ այնմ գործելով առնես զքեզ չար. * ձայնդ ձայն յակոբայ եւ ձեռքդ ձեռք եսաւայ ‖. (Ծնն. իէ. 22.) Եթէ ճանաչես զարդարութիւն իմ, եւ քարոզես զուխտ իմ, եւ գիտես թէ ճշմարիտ է, ընդէ՞ր ոչ պահես զայն. իսկ եթէ ոչ ճանաչես այնպէս, եւ ոչ կամիս պահել, ապա ընդէ՞ր առնուս 'ի բերան, եւ գովես զայն:

Զայս թէպէտ եւ 'ի բերանոյն ա՟յ խօսի դաւիթ, բայց յիւրմէ եւս բարբառի, եւ գրեթէ նախանձելով զնախանձ օրինաց տեառն՝ ոչ կամի թէ անպարկեշտք 'ի բերան առնուցուն զայն: Եւ առ այս ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախապատում գիրսն. (Ճառ. Ժ.) * դաւիթ „ ոչ թողլ տայ մեղաւորին պատմել զօրէնս տեառն՝ որ „ ատեաց զխրատ, եւ յետս ընկեց զիրաւունս՝ որ յա՟յ „ եղան ‖: Ուստի եւ սիրաք յայսպիսիս հայելով ասէ. * ոչ է վայել 'ի բերան մեղաւորի գովութ՟ի (օրինացն „ ա՟յ եւ բանից նորին) ‖. (սիրաք ժե՟. 9:) Սմին իրի եւ նարեկացին ('ի բանն ծա՟.) դնէ թէ չէր անկ մանասէի որդւոյ եզեկեայ նուագել զդաւթեանն երգ. (Ճ՟դ. 1. եւ Ճլ՟դ. 14.) զի * կշտամբիչ էր նորին ‖:

Այլ քանզի դատանին, որք հաստատեալ զկամս իւրեանց 'ի մեղս՝ քարոզեն եւ պատմեն զբանս ա՟յ, դեգերին երբեմն եւ 'ի գործս բարիս, 'ի լուր քարոզութեան, 'ի տեսութ՟ի պատարագի, 'ի տուրս ողորմութ՟ե եւ այլն: Կարկինն են սոքա. զի որպէս կարկինն միով ոտամբ 'ի կէտն հաստատեալ՝ միւսովն շուրջ տարուբերի, սոյնպէս եւ այսպիսիքս միով ոտամբ այսինքն կամօք հաստատեալ 'ի մեղս՝ շրջաբերին 'ի բանս բարիս. * շուրջանակի ամպարիշտք շրջին ‖. (սաղ. ժա՟. 9:) Ըստ լամբրոնացւոյն այս բան հայի եւ առ այնպիսի մեղաւորս՝ որք կարծեն հաւատով միայն արդարանալ, ոչ կամելով գործել զբարին. որպէս եղեն նիկողայոսեանք, սիմոնեանք, և բասիլիդեանք, որք ապաւինելով 'ի շնորհս մահուան քսի՝ անխտիր էին 'ի չարիս. առ այսպիսիս ասէ ա̃ծ, ընդէր է քեզ յոյս տալ անձին քում, և պատմել ոչ այլոց՝ այլ քեզ զարդարութիւն իմ, երբ թէ ունիցիս արդարանալ միայն շնորհօք իմովք. և զայս այսպէս համոզելով քեզ, արհամարհես զօրէնս իմ, և գործես զա̃մ չարիս։ Զայս եդեալ մարգարէին սկսանի ապա մի առ մի թուել զչարիս մեղաւորին՝ ասելով։

ԺԷ. Զի դու ատեցեր զխրատ իմ. մերժեցեր և յետս ընկեցեր զամենայն բանս բերանոյ իմոյ։

Զբազմապատիկ չարիս մեղաւորին յերիս բովանդակէ, այսինքն յայնս որք լինին խորհրդով. յայնս՝ որք լինին բանիւ, և յայնս՝ որք լինին գործով. վասն առաջնոյն խօսի յայս համար. և վասն երկրորդին 'ի համարն 19. և 20. և վասն երրորդին 'ի յետագայ համարն։ Արդ 'ի խօսիլն զառաջնոյն՝ կամելով ցուցանել զնախատացեալն՝ առաջի դնէ զարհամարհութիւն խրատու. ուր խրատով իմանայ զպատուիրանսն՝ զորս ետ ա̃ծ. և սոքա կոչին խրատք, զի խրատեն զմարդն խոտորիլ 'ի չարէ և առնել զբարին։

Զայսուիկ խրատս ասէ լինել և բան բերանոյն ա̃յ, որով ոչ ցուցանէ թէ ա̃ծ ունի զբերան, այլ թէ ա̃ծ յայտնեալ է զայնս արտաքուստ ես. զի որովհետև բերանով ասացեալն՝ արտաքուստ յայտնի լինի, զայն յայտնութիւն կամելով հաստատել՝ 'ի մէջ բերէ զբերանն, և ասէ լինել բան բերանոյ. որով և ափիբերան առնէ զմեղաւորն, քանզի ոչ ևս կարէ ասել՝ թէ ես չէի լուեալ զայնս. զի պատասխանի տայ ա̃ծ ասելով. ոչ այդպէս, այլ լուար զոր խօսեցայ, և 'ի միտ առեր՝ զոր յայտնեցի. բայց ոչ պահեցեր, այլ մերժեցեր. սմին իրի ասէ։

Զի դու ատեցեր զխրատ իմ. մերժեցեր և յետս ընկեցեր զամենայն բանս բերանոյ իմոյ։ Այսինքն թէ դու լուեալ զխրատս իմ և զա̃մ զբանս իմ՝ կշռեցեր խորհրդով քով. և տեսեալ թէ չեն քեզ հաճոյ՝ ատեցեր, և ոչ կամեցար յանձն առնուլ զնոսա. և ոչ այսչափ միայն, այլ իբր անարգ ինչ մերժեցեր զայնս 'ի քէն, և 'ի վերայ այսր ամենայնի նախամեծար առնելով զհաճոյս քոյ՝ յետս ընկեցեր զամենայն պատգամս իմ, և 'ի մոռացութե՟ քում թաղեցեր զնոսին ,

Երկրորդական մեկնութե՟ այս բան հայի յայնոսիկ՝ որք ոչ կամին լսել զբանս այ՟, և որ չարն է՝ արհամարհեն զայնս . որոյ վասն և ա՟ծ ոչ լսէ բանից և աղօթից սոցա, և ոչ այնոցիկ՝ որք աղօթեն վասն սոցա ։ Գրի 'ի պատմութ՟իս՝ թէ այր ոմն ոչ կամէր երբէք մատչել 'ի լուր բանիցն այ՟, և զայլս ևս ջանայր խափանել . 'ի մեռանիլ նորա տարան զմարմին նորուն յեկեղեցին, և յաղօթել վասն հոգւոյ նորա և յասել, * եղիցին ականջք
,, քո 'ի լսել ձայն աղօթից իմոց ||. (սաղ . ճի՟թ . 2 .)
արձան խաչելութեանն յոր՝ որ կայր անդ՝ արձակեաւ զբազուկս իւր՝ եխից ձեռօք իւրովք զերկոսին ականջս իւր՝ 'ի սոսկումն ժողովրդեան, յիմանալ անդ նոցա թէ որպէս այրն այն ոչ կամէր լսել զբանն այ՟, սոյնպէս և ա՟ծ ոչ կամեցաւ լսել զաղօթս՝ որ մատուցանիւր վասն նորա ։ Իսկ քանզի այսպիսիք զուրկ գոլով յա՟ծայնոց՝ զհետ լինին չարեաց՝ զայնմանէ ևս խօսելով մարգարէին ըստ երրորդ տարազուն՝ զոր եդաք՝ այսինքն ըստ գործով կատարելոյ զչարն՝ յարէ զկնի, և ասէ ։

ժը . Թէ տեսանէիր զգողս՝ ընթանայիր ընդ նմա . և ընդ շնացողս դնէիր զբաժին քո ։

Երեք ինչ են, որք մղեն զմարդն 'ի գործս չարութե՟, հպարտութ՟ի, ագահութ՟ի և հեշտասիրութիւն . ըստ այնմ . (ա՟ . յով՟հ . բ՟ . 16 .) * որ ինչ յաշխարհի է ցան-
,, կութ՟ի է մարմնոյ . և ցանկութ՟ի է աչաց և ամբար-
,, տաւանութ՟ի աստի կենաց ||։

Ի հպարտութե՟ բազում չարիք յառաջ գան՝ բայց առաւել ևս նախանձ 'ի ներքս, և բամբասանք առ արտաքս, զորոց խօսի 'ի յաջորդ համարսն . յագահութ՟է՝ գողութ՟ի, յափշտակութ՟ի . և այլն . 'ի հեշտասիրութ՟է՝ շնութ՟ի, պոռնկութ՟ի, որկրամոլութ՟ի և այլն ։ Յայտ է ևս՝ թէ այսպիսի չարիք որք կատարին գործով, կամ 'ի ձեռս ընկերին լինին և կամ 'ի ձեռս անձին ։ Զերկոսին զայսոսիկ ևս 'ի մէջ բերէ մարգարէն՝ յառաջ դնելով զայն՝ որ ձեռաւ ընկերին յագահութենէ , յասելն.

Թէ տեսանէիր զգող՝ ընթանայիր ընդ նմա։ Այսինքն թէ 'ի տեսանելդ զգողն՝ դու եւս ըղձեաս լինելոյ գործոյ նորա, այսինքն գողութեան. բայց զի ցուցցէ զառաւելութիւն չարութեանն, ասէ ընթանայիր ընդ նոսա. որ ընթանալն ցուցանէ նախ զկամակար միտք ըղձեալ լինելն գողութեան, յոր միտս ընդ նոսա ասելով ցուցանէ եւ զյարաշարակութիւն կամ զյայտնի եւ զաւառակօրէն գողութիւնն, որոյ ըղձեալ գայ եւ սպանութիւն եւ այլ բազում չարիք. Ցուցանէ երկրորդ՝ զկամակից լինել նոցին, կամ զպատճառ լինել. Զայս եղեւ խօսի եւ զգործոց հեշտասիրութե, մանաւանդ վաւաշոտութեան՝ ասելով.

Եւ ընդ շնացողս դնէիր զբաժին քո։ Որ է ասել, յայտնի շնայիր եւ պոռնկէիր, մանաւանդ թէ իբր մասն եւ բաժին ընտրեալ էիր քեզ զշնալն եւ զպոռնկելն. եւ որ տեսանէիր զայնպիսիս, ընդ նոսա ընկերանայիր. զի նոքիմբք յաջողեսցի քեզ դիւրաւ եւս մուտ գտանել յայնպիսի եղեռն. Հայեցեալ ապա եւ 'ի չարիս՝ որք կատարին բանիւք ասէ.

ԺԹ. Բերան քո յաճախէր չարութեամբ. եւ լեզու քո նիւթէր զնենգութիւն։

Կրկնակի մեղանչէ մարդ բանիւ առանց հայելոյ 'ի բան բարւոյ. մի՝ 'ի խօսելն զչար յայտնի եւ առանց պատրուակելոյ. եւ մի եւս՝ 'ի խօսելն նենգութբ. իբր զի զայնպիսի ինչ խօսի, որ թէպէտ եւ ոչ երեւի թէ իցէ չար, բայց յինքեան է չար. զի կամ սուտ է, եւ կամ թաքուցեալ կայ ընդ նովաւ անիրաւութի. Հայելով յառաջինն ասէ.

Բերան քո յաճախէր չարութեամբ. Կամի ասել. յառաւելութենէ չարութե սրտի քո առաւելոյր եւ բերան քո խօսել յայտնապէս զչարութիւն 'ի նախատել, 'ի հայհոյել, 'ի բամբասել, 'ի խայթել, եւ այլն. Հայելով եւ յերկրորդն ասէ.

Եւ լեզու քո նիւթէր զնենգութիւն. Կամի ասել. զխաբէութիւն կամ զմեծութի չարութե բանիւք ոչ կամելով երեւեցուցանել՝ նենգութբ բարբառէիր, այսինքն երկդիմի կամ ստայօդ բանիւք, կի՛ պատրուակեալ ձեւով.

Եւ զի այսպիսիս բազում անգամ արձակէ զլեզու իւր 'ի դառնագոյնս, այսինքն 'ի բամբասել զընկերն չարաչար, յայն հայելով 'ի մասնաւորի՝ յորէ զկնի և ասէ ։

Ի. Նստեալ՝ զեղբօրէ քումմէ չարախօսէիր. եւ 'ի վերայ որդւոյ մօր քո դնէիր գայթագղութիւն ։

Այս է ահա այն անիծեալ խրախճան բամբասանաց, յոր երբեմն նաև բարեպաշտք ախորժեն նստել. զի յոյժ քաղցրացեալ է 'ի քիմս մարդկան չարիս խօսել զայլոց՝ ոչ միայն զօտարաց, այլև զեղբարց իւրեանց. և զայն ախորժանօք և զբօսանօք ։ Զայս կամելով յայտնել մարգարէին՝ հանդիմանօք առաջի դնէ զխնջոյս այսր դժոխային մեծի չարի, ասելով ։

Նստեալ՝ զեղբօրէ քումմէ չարախօսէիր ։ Նստեալ ասելով կամի ցուցանել՝ թէ ոչ վեր 'ի վերոյ բանիւք և հարևանցի, և կամ յանկարծակի յափշտակեալ 'ի բարկութենէ չարախօսէ զընկերէ, այլ՝ մտածութբ, հանգըստեամբ, երկար բանիւք, և պէսպէս պարագայիւք. և երբեմն ևս ցուցմամբ պատճառաց ։

Իսկ զեղբօրէ ասելով մարթ է իմանալ նախ զո՛ և իցէ մարդ, որ 'ի հասարակի եղբայր անուանի. եղբայր քո է ասէ նա. և զիա՛րդ ոչ խնայես 'ի նա. մարթ է երկրորդ հաւանականագոյն ևս իմանալ զեղբայր հարազատ. և այսու կամի ցուցանել զառաւելութիւն չարութեանն. որպէս թէ ասէր, ախորժանօք և երկարելով զբանադ բամբասէիր զայն որ էր հարազատ եղբայր քո. ապա զո՞ր չարիս ոչ խօսեսցիս զայնմանէ՝ որ ոչ է հարազատ եղբայր քո ։ Եւ ոչ այսչափ միայն, այլև յաւելուիր 'ի նոյն և զայլ չարիս, և առ այս յարէ ։

Եւ 'ի վերայ որդւոյ մօր քո դնէիր գայթագղութիւն ։ Մօր քո ասելով կամի յայտ առնել՝ թէ յեղբայրն ասել աստ պարտ է իմանալ զհարազատն 'ի նոյն հօրէ՝ թէ և իցէ յայլոյ մօրէ, կամ զհարազատն 'ի նոյն մօրէ՝ թէ և իցէ յայլոյ հօրէ ։ Մարթ է ևս իմանալ այսու զամենեսեան՝ որք են յեւայէ յառաջնոյ մօրէ ։ Բառիւս գայթագղութեան՝ իմացեալ լինի աստ նախ գործք գայթակղութեան, այսինքն մեղք եղբօրն կամ խայտառակ գործք նորա. և յայս միտս կամի ասել. զեղբայր քո բամբասէիր, դնելով 'ի վերայ նորա զայնպիսի մեղս, յորս երբեմն նա գայթակղեալ էր, այսինքն անկեալ էր. որով և վնասէիր՝ ոչ միայն ընկերիդ այլև հոգւոյ քոյ.

Երկրորդ՝ իմացեալ լինի վնաս եղբօրն բամբասեցելոյ, և ըստ այսմ կամի ասել, բամբասէիր զեղբայր քո՝ 'ի մէջ բերելով զայնպիսի չարիս, որով վնասիւր բամբասեալ եղբայրդ՝ զի լսօղք գայթակղէին 'ի նա. վասն զի նոքա յառաջն հաստատուն կային 'ի բարի կարծիս, իսկ 'ի լսելն 'ի բերանոյ քումմէ զչարիս զնմանէ՝ գայթակղէին, այսինքն սասանէին 'ի բարի կարծեաց անտի, և կործանէին 'ի չար կարծիս.

Երրորդ՝ իմացեալ լինի վնաս լսողաց, և ըստ այսմ կամի ասել. բամբասելով քո զեղբայրդ՝ առիթ առնուին լսօղք գայթակղելոյ՝ այսինքն անկանելոյ 'ի նոյն չարիս.

Այսպիսի գայթակղութիւն բամբասանաց ոչ սակաւ յաշխարհի, բայց վայ այնմ, որ լինի պատճառ այսր գայթակղութեան. և բիւրապատիկ վայ այնմ, որ լինի սկզբնապատճառ. * վայ աշխարհի 'ի գայթակղութեց ,, (տես աւետ. մատ. ժը. 7.) բայց վայ մարդոյն ,, այնմիկ՝ յորոյ ձեռն գայցէ գայթակղութի ||. Որով ցուցանէ, թէ իբր անհարելի իմն է այսպիսեացս թողութիւն գտանել, այլ ամենայն արդար դատաստանաւ անկանիլ 'ի ծանր դժոխս.

Եթէ կամիս զերծ մնալ յայսպիսի դժուարաթողլի մեղաց, ա՛ռ քեզ զայսոսիկ երիս կանոնս. առաջինն է այս, զի 'ի կամիլդ չարիս խօսիլ զընկերէ քումմէ՝ ասա՛, ես ոչ կամիմ թէ այլք զինէն խօսեսցին զայսպիսի ինչ. ապա և ոչ ես խօսեցայց զայլոց. Երկրորդն է այս. զի 'ի խօսիլդ՝ այնպէս խօսեա՛ զբացակայ ընկերէդ՝ որպէս թէ ներկայ իցէ. Երրորդն և մեծն է այս, դի՛ր 'ի մտի, մի՛ երբէք չարիս խօսիլ զայլոց. Ի պահել քո զայսոսիկ կանոնս ոչ միայն ազատիս 'ի չար գայթակղութենէ անտի, այլև հասանես մեծի բարութեան և ամենայն օրհնութե.

Ամբրոնացին զայս իմանայ զգայթակղութի մանկանց եկեղեցւոյ 'ի վարդապետութեան հաւատոյ. ըստ որում բազումք կան՝ որ նստեալ յաթոռ հոգևորական իշ-

խանութ՟ն, կամ նստել 'ի մէջ բազմութ՟ն, 'ի բերան ամենուն զանդամս այլոց եկեղեցեաց, որք են որդիք միոյ մօր, և սկսանին առէ՝ չարախօսել զնոցանէ, հայն զհոռոմ եղբօրէ, և հոռոմն զհայէ, բարդեալ և կուտեալ զպէսպէս յիմարական չարախօսութ՟իս, թէ նոքա այսպէս վարդապետեն, սոքա այնպէս, և այլն. որովք գայթակղեցուցանեն զլսօղսն 'ի սիրոյ, և 'ի միութ՟է եկեղեցւոյ. որոց ամենայնի դատաստանն մնայ ահեղ ատենին այ՟, որ ունի խստութ՟ի պահանջել համարս 'ի նոցանէ։ Առ այսոսիկ ամենեսին հայելով մարգարէին՝
հետևեցուցանէ և ասէ 'ի դիմաց այ՟։

իա. Զայս ամենայն արարեր, և լռեցի քեզ. համարեցեր
զանօրէնութ 'ի սրտի քում, թէ և ես քեզ նմանեցայ.

Ամբարիշտք 'ի մեղանչելն՝ յորժամ տեսանեն թէ ոչ պատուհասին, յոլինչ գլեն՝ զչար գործեն. երբեմն և մոռանան, մանաւանդ զմեղս բամբասանաց. և եթէ երբեմն խիղճ մտաց նոցա հարկանիցէ, տեղի ոչ տան, և կամ յապաղեն տեղի տալոյ և դառնալոյ. և ընկղմեալ գոլով 'ի չարիս կամ 'ի զբաղմունս՝ 'ի վրէժխնդրութ՟են այ՟ ոչ հային. ուստի և ոչ համարին զայն մեծ ինչ. և զերկայնմտութ՟ի նորա՝ որով սպասէ նա դարձի նոցա, առնուն ինքեանց առիթ յամելոյ 'ի չարիս։ Առ այսպիսիս խօսելով սիրաքայ ասէ. * Մի՛ ասեր
,, թէ չար գործելով մեղայ, արդ զինչ եղև ինձ,
,, զի տէր երկայնամիտ է վասն դարձի քո և քաւու-
,, թեան, զի ողորմութ՟ի և բարկութ՟ի 'ի ձեռին նորա
,, է, և 'ի մեղաւորս յագեցուցանէ զսրտմտութ՟ի իւր։
,, Ո՛րդեակ մի յապաղիցես դառնալ 'ի մեղաց առ տէր,
,, զի մի առ մեղս քո սատակիցիս։ Մի՛ յանիրաւ գանձս
,, յուսար, զի ոչ օգնեսցեն քեզ յաւուր բարկու՟ն‖։
(սիրաք Ե. 4 = 10.) Զի գրէ պօղոս, * եթէ զմեծու-
,, թեամբ քաղցրութեան նորա, և զներելովն և զեր-
,, կայնմտութեամբն արհամարհիցես, չգիտիցես զի
,, քաղցրութ՟ին այ՟ զքեզ յապաշխարութ՟ի ածէ. այլ
,, ըստ խստութեան քում և ըստ անզեղջ սրտի՝ գան-
,, ձես անձին քում բարկութ՟ի յաւուր բարկութեան
,, և յայտնութեան արդար դատաստանացն այ՟‖.
(հռովմ. բ. 4. և 5.) Ըստ բանիցս ըստ այսոցիկ խօ-

սի և աստ մարգարէն 'ի բերանոյ տեառն առ ամբարիշտն, ասելով.

Զայս ամենայն արարեր, և լռեցի քեզ. Այսինքն զայս ամենայն չարիս՝ զորս թուեցի, աներկիւղ գործեցեր, որպէս և խիղճ քոյ վկայէ. ես ևս տեսի, և եմ վկայ ամենայնի այդորիկ. բայց երկայնամտեալ առ ժամանակ մի լռեցի, այսինքն ցուցի զիս իբր ոչ տեսող և ոչ լսող. կամ թէ վասն երկայնամիտ լինելոյս վաղվաղակի ոչ պատուհասեցի զքեզ, սպասելով՝ թէ դարձցիս 'ի չարեացդ. Իսկ դու թշուառականդ ոչ զգաստացար, և ոչ առեր 'ի միտ, թէ սպասեմ քեզ. զայս եղեալ յանդիմանէ և ասէ.

Կարծեցեր անօրէնդ 'ի միտս քում, թէ և ես քեզ նմանիցեմ. Կամի ասել. ով անօրէն դու՝ միթէ վասն երկայնամիտ լինելոյ իմ առ քեզ՝ զիս ևս իբրև զքեզ անօրէն կարծեցեր, որպէս թէ չունիցիմ խնդրել զվրէժ օրինաց իմոց. և միթէ վասն ոչ պատժելոյ իմ զքեզ՝ համարեցար թէ հաճեա՛լ իցեմ ընդ անօրէնութիւն քո. Իսկ թէ զինչ ունէր առնել, ցուցանէ յաջորդ բանիւն ասելով.

ԻԱ. Արդ յանդիմանեցից և հաստատեցից զայս ամենայն առաջի քո. Իմացարուք ամենեքեան՝ որք մոռացեալ էք զԱստուած.

Բառս արդ՝ նշանակէ աստ ասել այժմ. և ակնարկէ յայժմն յայն՝ յորում դատելոց է ա՟ծ զամբարիշտն. ուր ունի դնել առաջի նորա զչարիս նորին, վասն որոյ ասէ.

Արդ յանդիմանեցից և հաստատեցից զայս ամենայն առաջի քո. Կամի ասել. այժմ ահա լցան ժամանակք չարեաց քոց, և ժամանակք երկայնմտութեան իմոյ. որչափ չարիս գործեցեր դու, և որչափ երկայնամիտ եղէ ես առ քեզ, ահա այժմ զամենայնն յանդիմանեցից, այսինքն յանդիմանս ցուցից քեզ. և եթէ դու ոչ ճանաչես, ես զա՟մն կացուցից առաջի քո որոշ որոշ ըստ ամենայն հանգամանաց, զի և դու տեսցես զմեծութիւն և զբազմութիւն չարեաց քոց, և 'ի միտ ացցես՝ թէ զինչ փոխարէն հատուցեր այնչափ բարեաց իմոց, և զխորդ յամառ գոլոյ ընդդէմ իմոյ երկայնմտութեան. Իսկ զայս ամենայն իմանալով քո՝ ոչ կարասցես անիրաւ համարել զվճիռն զոր տալոց եմ ընդդէմ քո. այլ իրաւ արասցես, և դու ինքնին ես վճիռ հատանիցես 'ի վերայ դատապարտութե̃ն քո։

Աստի զայս բան յառաջ բերեալ սուրբն Շնորհալի ('ի մեկն. բ̃. պետ. դ̃. 11. Ճառ. դ̃.) խօսի 'ի դիմաց ա̃յ այսպէս. * զայդ ամենայն՝ ասէ, յանդիմանե-
,, ցից և կացուցից առաջի քո 'ի դատաստանին. որ-
,, պէս զի անձամբ անձին վճիռ տացես զդատապար-
,, տութեանդ ||. և ('ի մեկն. յուդ. համար. 15. Ճառ
բ̃.) բացատրելով զզօրութիւն յանդիմանելոյն ասէ.
* յանդիմանելն՝ զիրաւաբանելն դատաւորին 'ի դա-
,, տաստանի նշանակէ. յորժամ 'ի դէմս նոցա ածիցէ
,, զիւր աներկրական մարդասիրութիւնն որ առ նոսա,
,, և զնոցա զանհամար և զանթիւ սխալագործութիւնս
,, 'ի պատուիրանս նորա, և զամբարշտութեանցն կա-
,, տաղութիւնս ||։

Իսկ եթէ քանի ծանր իցէ այս յանդիմանութիւն, և որչափ սարսափելի, անհնարին է մարդոյ ըմբռնել. եթէ հնար էր 'ի մահ դիմել այսպիսեաց՝ կամակար 'ի նոյն արկանէին զանձինս, և կամ սկսանէին * ա-
,, սել լերանց՝ թէ անկերո՛ւք 'ի վերայ մեր՝ և բլրոց թէ
,, ծածկեցէ՛ք զմեզ || (ղուկ. ի̃գ. 30. և եսայ. բ̃. 21.)

Զայս ամենայն եդեալ մարգարէին, ապա 'ի յորդոր մատչի ասելով։

Իմացարուք ամենեքեան՝ որոց հաւատացեալ իցէ զա̃ծ։ Այս բան կրկնակի դնի առաջի. մի՝ ըստ վկայ կոչելոյ, և մի ևս՝ ըստ զգուշացուցանելոյ. ըստ վկայ կոչելոյն կամի ասել. զոր ասացի՝ վկայեսցեն և հաստատեսցեն զնոյն և նոքա՝ որք մոռացեալ են զա̃ծ։ Եւ այս եղանակ բանից նման է այնմ՝ որ լինի ասել 'ի մէջ բազմութեան զայնպիսի գործոյ՝ որ հաստատելի իցէ վկայիւք՝ յասել խօսողին, լուարո՛ւք և վկայ լերո՛ւք. (կամ ըստ այլազգական ոճոյ ասացից. իշիտինիզ՝ շահիտ օլունուզ։)

Ըստ զգուշացուցանելոյն կամի ասել. որք միանգամ 'ի մեղս անկեալ կայք, և 'ի մտաց զբաղելով մոռացեալ էք զա̃ծ, այսինքն ոչ կամիք յիշել, կամ ոչ յիշէք ըստ արժանւոյն թէ ա̃ծ է վրէժխնդիր, իմացարուք զորս ասացի, այսինքն 'ի միտ առէք, թէ զիարդ նա ինքն ա̃ծ՝ որ երկայնամիտ լինի, 'ի լրման չափու՝ առնու 'ի ձէնջ զվրէժ. Այլ զայս գիտացեալ՝ դարձարուք 'ի չարեաց ձերոց. ապա թէ ոչ՝ հանդերձեալ էք մատնիլ 'ի ձեռս նորա. և առ այս յարէ.

իբ. Գուցէ երբէք յափշտակիցէ. և ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ.

Այս բան՝ որպէս և այն զոր ասաց * իմացարուք ա„մենեքեան‖. և այլն, յայտնի ոչ որոշի՝ թէ 'ի բերանոյ որո՞յ ասի, 'ի բերանո՞յ ա̃յ, թէ 'ի բերանոյ մարգարէին. Յեբր". 'ի դիմաց ա̃յ ասի. որովհետև յառաջին դէմս դնի, այսինքն է * զի մի յափշտակիցեմ, „ և ոչ ոք կարիցէ ազատել զքեզ‖. Իսկ յեօթ". և 'ի լատ". և այլն, և 'ի քանի մի ձեռագիրս մեր՝ 'ի դիմաց մարգարէին ասի. որովհետև յերրորդ դէմս դնի, այսինքն է՝ * զի մի յորժամ յափշտակիցէ, և ոչ ոք ի„ցէ որ զերծուսցէ‖. բայց քանզի 'ի մերումս ըստ բազում ձեռագրաց յերկրորդ դէմս դնի, մեք ևս այնպէս եդաք. որպէս և դիցի, միտ բանին 'ի նոյն հայի յասելն.

Գուցէ երբէք յափշտակիցէ, և ոչ ոք իցէ՝ որ փրկիցէ.

Այսինքն գուցէ 'ի հասանել մահու, մինչև իցէ ձեր դարձեալ 'ի չարեաց, յափշտակիցիք, որ է առնել. յանկարծակի անկանիցիք 'ի ձեռս ամենակալին ա̃յ, և ոչ գտցի ոք՝ որ ազատեսցէ զձեզ, ոչ բարեկամ և ոչ ազգական, ոչ մեծութիւն և ոչ իշխանութի̃, ոչ աղաչանք և ոչ արտասուք. Իսկ թէ քանի սարսափելի իցէ այս, վկայէ առաքեալն ասելով. * ահ մեծ է անկանիլ 'ի „ ձեռս ա̃յ կենդանւոյ‖. (եբր. Ժ. 31.)

Յետ այսչափ ազդարարութեանց և սպառնալեաց՝ կամելով մարգարէին իբր թէ քաջալերս տալ մարդկան և հորդել նոցա ճանապարհ բարի՝ առաջի մատուցանէ՝ թէ յորում է հաճութի̃ն ա̃յ, և յորում ցուցանէ մարդոյ զփրկութի̃ իւր. որով և կնքէ զաղմոսս զայս 'ի բանից անտի՝ զոր ասաց 'ի համարն 14. և զայս առնէ՝ խօսելով 'ի դիմաց ա̃յ՝ և ասէ.

իդ. **Պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս. և անդ է ճանապարհ, ուր ցուցից նմա զփրկութիւն ա՟յ:**

Պատարագ օրհնութե՟ն այն է՝ զոր եդաք 'ի համարն 14. այսինքն է ճանաչմամբ մտաց 'ի ձեռն հաւատոյ, և հաճութե՟ք կամաց 'ի ձեռն սիրոյ և յուսոյ օրհնել զա՟ծ եթէ խորհրդով, եթէ բանիւ, և եթէ գործով: Այս օրհնութի՟ն է՝ ընդ որ իբր ընդ պատարագ հաճի ա՟ծ. և սովաւ փառաւորի, ուստի և ասէ:

Պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս: Կամի ասել. զայս ամենայն ահա ցուցի քեզ ով մարդ, և 'ի քէն զայլ ինչ ոչ պահանջեմ, բայց միայն պատարագ օրհնութեան. զի նա միայն փառաւորէ զիս, այն միայն է ինձ ընդունելի, և այն միայն է, որով հաճոյանայ ինձ մարդ: Այս որպէս յորդորէ մեծն խոսրով ('ի մեկն. ժամագր. 'ի կանխաբանութե՟ն,) * Ջանասցուք ըստ
„ կարի մերում զպաշտօնս մեր (այսինքն զաղօթս և
„ զօրհնութիւնս) 'ի սուրբ սրտէ և 'ի մտաց բարեաց
„ և յանկեղծաւոր հաւատոյ ընծայել ա՟յ. քանզի և
„ զայն 'ի պօղոսէ աղաչիմք գթութե՟ն ա՟յ պաղատել.
„ զի պատարագ կենդանի, սուրբ, և հաճոյ ա՟յ զխօսուն
„ պաշտօնս պատրաստեսցուք: 'Ի սոյն և սաղմոսանուագն
„ յորդորէ, երբեմն որպէս յինքենէ, և երբեմն
„ որպէս 'ի դիմաց ա՟յ. Յինքենէ՝ յասելն՝ մատո
„ ա՟յ պատարագ օրհնութե՟ն ('ի վերոյ 'ի համարն. 14.)
„ և կատարեա՛ բարձրելոյն զուխտս քո. և դարձեալ
„ թէ հատեր զկապանս իմ, քեզ մատուցից պատարագ
„ օրհնութե՟ն, և զանուն տեառն կարդացից. (սաղ.
„ ՃԺԵ. 7:) Եւ որպէս յերեսաց ա՟յ, յորժամ ասէ՝
„ պատարագ օրհնութեան փառաւոր արասցէ զիս ‖:

Զայս պատարագս օրհնութեան կենդանի կոչէ առաքեալն. (ա՟. պետ. բ՟. 5.) յորոյ վերայ զարմանալով գրէ սարգիս շնորհալի ('ի ճառն դ՟.) * տեսանես
„ (ասէ) եթէ որքան հիացման է արժանաւոր, և պատարագ
„ և կենդանի. զորս զայսոսիկ ըստ բնութ՟ես
„ ոչ ոք տեսցէ երբէք. զի որ կենդանի է՝ չև է պատարագեալ.
„ իսկ որ պատարագեալն է՝ չև ևս է
„ կենդանի ‖: Եւ զայս ըստ երից լուծանէ. մի՝ ըստ պատարագելոյն քնի. ուստի գրէ 'ի ճառի անդ. * ըստ

,, Ճշմարիտ պատարագին՝ որ 'ի խաչին պատարագեցաւ՝ թուի թէ ասէ զայս. վասն զի պատարագեալ ,, մեռեալ էր մարմնովն, և կենդանի էր ա՟ծութ՟բն... ,, և էր 'ի մահուն կեանք և 'ի կենդանութ՟ենն մահ ‖ ։ Երկրորդ՝ ըստ հոգևորական նուիրման անձին. ուստի յարէ անդ. *Նոյն նմանութ՟ի (ասէ) և յառաքինի ան,, ձինս տեսանի, զհին մարդն մեռուցեալ կենդանա,, խարուկելով զմարմինն պէսպէս առաքինութեամբք, ,, և կենդանի է հոգւով. որպէս պօղոս Ճշմարիտ մե,, ռեալն և կենդանին ‖. և այս պատարագ է ասէ՝ որ փառաւոր առնէ զա՟ծ. վասն որոյ ('ի գլ. ը՟. 14. Ճառ է. յորդ.) ասէ. *յայնժամ փառաւոր առնիցեմք ,, (զա՟ծ)... յորժամ զմեզ ինքեանս պատարագ ա՟յ ,, բոլորապտուղ ընծայիցեմք ‖ ։ Երրորդ՝ ըստ բանաւոր պաշտաման. յորժամ զկենդանի աղօթս և զգովութիւնս փոխանակ պատարագի մատուցանեմք ա՟յ՝ յաւէտ հոգւով քան մարմնով։ Իսկ այս մատուցումն այնչափ հաճոյ է ա՟յ, մինչև հաճիլ նմա ցուցանել անդ զճանապարհն փրկութեան. և առ այս յարէ մարգարէն, և ասէ։

Եւ անդ է ճանապարհ, ուր ցուցից նմա զփրկութիւն ա՟յ։

Բառդ փրկութիւն՝ երրակի առեալ լինի աստ. մի՝ փոխանակ եզեր փրկութ՟ն՝ որ է երանութ՟ին յաւիտենական. երկրորդ՝ փոխանակ ճանապարհի փրկութ՟ն, և ը՟ այսմ բառդ փրկութիւն՝ դնի աստ իբր մեկնութ՟ի բառին ճանապարհ. և երրորդ՝ փոխանակ փրկեալ գոլոյ, այսինքն ազատելոյ 'ի չարեաց և հասանելոյ 'ի բարին։

Ըստ առաջնոյն կամի ասել. 'ի պատարագս օրհնութ՟ն գտանէ մարդ ճանապարհ գնալոյ 'ի տեղին յայն, ուր ցուցցէ նմա ա՟ծ զփրկութ՟ի իւր, այսինքն զփրկութիւն ա՟ծային, որ է լի և կատարեալ երանութ՟ի։

Ըստ երկրորդին կամի ասել. որ միանգամ մատուցանէ ա՟յ պատարագ օրհնութ՟ն՝ յայնմ մատուցման լուսաւորէ ա՟ծ զմիտս նորա, և բորբոքէ զկամս. և ճանապարհացոյց լինի նմա, թէ ընդ ո՞ր իցէ գնալի առ 'ի հասանել 'ի կեանս յաւիտենականս։

Ըստ երրորդին կամի ասել. յօրհնութ՟ն անդ կայ ճանապարհ փրկութ՟ն. և զի ա՟ծ անդ առնէ մարդոյ զայնպիսի ինչ, որով ազատի 'ի չարէ, և գտանէ զբարին։

Այսչափ օգտակար գոլով օրհնութեան աղօթից՝ դըժուարի սատանայ և նախանձի. և կամելով ապականել զայն՝ երբեմն ձանձրոյթ արկանէ յաղօթօղն, և երբեմն զայլևայլ անկարգ խորհուրդս սերմանէ։ Սոյնպէս և մարմինն զանպատեհս և զանդէպս բուսուցանէ. և որ արտաքոյ աղօթից ոչ երևէր՝ յաղօթսն առաջի առնէ. և այս ոչ եթէ ՚ի չարութ̃է որպէս սատանայն, այլ նախ՝ ՚ի տկարու̃է. զի մարմինն գոլով տկար՝ յամփոփելն անդ յաղօթսն՝ վաստակի և ձանձրանայ։ Երկրորդ՝ յանյարմարութ̃է. զի ոչ կարելով հաւատարիլ հոգւոյն և ըմբռնել՝ լքանի, և առ ազատ մնալոյ՝ զիւր յարմար պատկերս նկարէ։ Երրորդ՝ յախտաւորութ̃է զգայութեան. որ ՚ի զբաղելն յարտաքինն իւրս՝ ՚ի նոյն միայն պատաղի. իսկ ՚ի ձգելն ՚ի ցամաք՝ ոչ ունելով զջուրս զբաղմանց՝ յայլևայլ շարժմունս տապալի. և զօրօրինակ երկիր կոխոտեալ լինելով ոչ բերէ զխոտ, և յանկոխ մնալն զազգի ազգի խոտս երևեցուցանէ, սոյնպէս և բնութ̃ի մարդոյ կամ ախտաւորութ̃ի նորա ասացից՝ ՚ի կոխոտիլն ՚ի զբաղմանց՝ թէպէտ և յարմատս ախտիցն հաստատապնդի, բայց ոչ այնչափ բուսուցանէ զանպիտան խորհուրդս զայլովք գործառնութ̃ք. իսկ յորժամ անկոխ մնայ ՚ի զբաղմանց յաղօթելն՝ զազգի ազգի խորհուրդս ՚ի դուրս արտադրէ։ Զայսոսիկ գիտելով մարդոյ պարտի նուաճել զխորհուրդս իւր յաղօթելն, և առաւել ևս յառաջ քան զաղօթելն. զի որ արտաքոյ աղօթից ընկղմի ՚ի մնոտի խորհուրդս, յաղօթելն անդ խուռն ընթանան նոքա ՚ի ներքս հանդերձ այլովք անկարգ խորհրդովք. որպէս յերազել մարդոյ՝ նկարին յերևակայութ̃է նորա զորս տեսեալն է կամ գործեալ հանդերձ այլովք, զորս չէ տեսեալ և գործեալ։ Նաև զի ա̃ծ ևս տեսեալ զմարդն արտաքոյ աղօթից տարացնդեալ յոյժ՝ յաղօթել նորա՝ դարձուցանէ ՚ի նմանէ զերեսս. և տիրեն նմա յայնժամ խաւարային մտածութ̃իք։ Վասն որոյ պիտոյ է զգաստութեամբ կեալ, և անզբաղութ̃բ յաղօթսն մերձենալ. և այնու շահիլ ՚ի հոգիս, և գտանել զճանապարհն փրկութեան, որով և լինի ժամանել ՚ի փրկութ̃ի յաւիտենական։

ՍԱՂՄՈՍ· Ծ·

Աղերս քաւութեան և լուացման մեղաց ընծայեալ առ Ած 'ի խոնարհ սրտէ առն զղջացելոյ հանդերձ խոստովանութեամբ անօրէնութեան անձին և ողորմութեան բարերար տեառն. միանգամայն և յայտարարութիւն ընդունելութեան խոնարհութեն հոգւոյ առաւել քան զնուիրումն պատարագաց. որոց մատուցումն ունէր հաճոյանալ 'ի շինել պարսպացն երուսաղէմի:

Ի կատարած. սաղմոս 'ի դաւիթ. 'ի ժամանակի զի եկն առ
նա նաթան մարգարէ. իբրեւ զի մտեալ էր նա առ բերսաբէէ:

1 Ողորմեա ինձ Ած ըստ մեծի ողորմութե քում ըստ բազում
գթութեան քում ջնջեա զանօրէնութիս իմ: 2 Առաւել
լուա զիս յանօրէնութե իմմէ. եւ 'ի մեղաց իմոց սուրբ արա
զիս: 3 Զանօրէնութիս իմ ես ինքեն գիտեմ. եւ մեղք իմ
առաջի իմ են յամ ժամ: 4 Քեզ միայն մեղայ տէր. եւ չար առաջի
քո արարի: 5 Որպէս արդար եղիցես 'ի բանս քո. եւ
յաղթող 'ի դատել քում: 6 Անօրէնութե յղացայ, եւ 'ի մեղս
ծնաւ զիս մայր իմ: 7 Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր.
զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ քով յայտնեցեր ինձ:
8 Ցօղեա զիս մզովպա, եւ սբ եղէց. լուա, եւ քան զձիւն սպիտակ
եղէց: 9 Լսելի արա ինձ զցնծութի եւ զուրախութի,
եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք: 10 Դարձո զերեսս քո
'ի մեղաց իմոց. եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:
11 Սիրտ սբ հաստատեա յիս Ած, եւ հոգի ուղիղ նորոգեա 'ի
փորի իմում: 12 Մի ընկենուր զիս տէր յերեսաց քոց, եւ զհոգի
սբ քո մի հաներ յինէն: 13 Տուր ինձ ցնծութի փրկութեան.
եւ հոգւով պետութեան քո հաստատեա զիս: 14 Ուսուցից
անօրինաց զճանապարհս քո. եւ ամպարիշտք առ քեզ
դարձցին: 15 Փրկեա զիս յարենէ Ած Ած փրկութեան իմոյ.
ցնծասցէ լեզու իմ յարդարութեան քում: 16 Տէր եթէ զշրթունս
իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիս քո: 17 Թէ
կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս
ոչ հաճեցար: 18 Պատարագ այ հոգի խոնարհ.

զսիրտ սբ և զհոգի խոնարհ ած ո՛չ արհամարհէ ։ 19 Բարի՛ արա տէր կամօք քովք սիոնի · և շինեսցին պարիսպք երուսաղէմի ։ 20 Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̅ · ողջակէզ պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած · սաղմոս 'ի դաւիթ · 'ի ժամանակի զի եկն առ նա նաթան մարգարէ · յորժամ մտեալ էր նա առ բերսաբէէ ։

ՉԻՔ ԻՆՉ Ի ՎԵՐՆԱԳՐԻԴ դժուարին 'ի մեկնել, բաց 'ի բառէդ 'ի կատարած, զորմէ տես 'ի ներած · գլ · Թ ։ Իսկ աստ կարէ ցուցանել բարոյապէս և զայս ինչ ևս, եթէ 'ի կատարած ազդարարութե̃ն նաթանայ՝ ստացեալ իցէ դաւիթ զայս սաղմոս · նա զի բոլոր բան վերնագրիդ յայդ բովանդակի · (Իսկ թէ զիա՛րդ եղև այն, տես 'ի բ̄ · թագ · գլ · ժբ̄ · 1 = 20 · որոյ համառօտութիւն է այս ։)

Ի գրգռել պատերազմի ընդդէմ ամմոնացւոց՝ դաւիթ առաքեաց զյովաբ և զբ̃մ զօրս ընդդէմ նոցա երկիցս · (որպէս գրի բ̄ · թագ · ժ · 6 = 14 · և ժա̄ ։) Իսկ ինքն դաւիթ նստէր յերուսաղէմ, և յաւուր միում զարթուցեալ 'ի քնոյ հասարակ աւուր յորժամ զգնայր 'ի վերայ տանեաց իւրոց, ետես անտի զբերսաբէէ զկինն ուրիայ զետացւոյ՝ զի լուանայր · և յափշտակեալ 'ի գեղ նորա՝ հրաւիրեաց գալ առ ինքն, և շնացաւ ընդ նմա · և իբրև գիտաց թէ յղացաւ կինն՝ անկաւ 'ի տագնապ · զի այնու յայտնի հրատարակիւր շնութիւն նորա · ամին իրի ետ կոչել զուրիա զետացի 'ի պատերազմէ · բայց ոչ կատարեցաւ դիտումն դաւթի · զի ուրիա եկեալ առ դաւիթ՝ ոչ եմուտ 'ի տուն իւր · որով և յայտնի լինէր՝ թէ յղացումն այն ոչ եղև յուրիայէ ։

Դարձոյց դաւիթ զուրիա 'ի բանակն, և յղեաց պատուէր առ յովաբ՝ զի մատուսցէ զուրիա զօրօք նորին 'ի կողմն սաստկացեալ պատերազմի, և 'ի զօրանալ մարտին դարձուցէ զզօրաւորսն ընդ կրունկն, որպէս զի մեռցի ուրիա ։ Եւ յովաբ արար ըստ հրամանի արքային, որով մեռաւ ուրիա. ընդ նմին և բազումք 'ի զօրացն դաւթի ։ Զայն իբրև լուաւ դաւիթ՝ յայտնի և համարձակ էառ իւր կին զբերսաբէէ. (բ. թագ. ժա. 27.) Այլ թէ քանի մեծ եղև այս անօրէնութիւն դաւթի (տես 'ի սաղ. լէ. 5.)

Իսկ ա՟ծ որ լռեաց մինչև ցամիս ինն, առաքեաց ապա առ նա զնաթան մարգարէ. որոյ եկեալ առ դաւիթ եդ առաջի նորա զառակս զայս. երկու արք էին ասէ 'ի քաղաքի միում. մինն մեծատուն որ ունէր հօտս և անդեայս բազումս յոյժ. իսկ միւսն աղքատ, և ունէր որոջ մի միայն փոքր, զոր իբրև որդի սնուցանէր ։ Եկն հիւր առ մեծատունն, և նա խնայելով տալ նմա կերակուր 'ի հօտից իւրոց, էառ բռնութեամբ զորոջ աղքատին ։

Զայս իբրև լուաւ դաւիթ ոչ գիտելով թէ առակ իցէ, բարկացաւ սրտմտութեամբ յոյժ 'ի վերայ անողորմութեան մեծատանն, և ասէ * կենդանի է տէր ,, զի որդի մահու է այրն՝ որ արար զայն ‖ ։ Ասէ ցնա նաթան. * դու ես այրն՝ որ արարեր զայն ‖. և յաւել ես յանդիմանել զնա 'ի դիմաց ա՟յ. (բ. թագ. ժբ. 1 = 12.)

Ի լսել դաւթի զբանն նաթանայ բեկաւ սիրտ նորա ոչ եթէ 'ի յուսոյ անկանելով, այլ ծայրագոյն խոնարհելով, որով ճմլեցաւ և գրեթէ հալեցաւ յինքեան, և չմնաց 'ի նմա այլ ինչ՝ բայց եթէ զղջումն ցաւոց, յորմէ զեղաւ ընդ բերան նորա բանս այս * մեղայ ,, տեառն ‖. և զի այս ներգործութիւն զղջման ունէր յինքեան զա՟մ հանգամանս 'ի գտանել զթողութիւն մեղաց՝ անդէն եթող նմա ա՟ծ զմեղս նորա. վասն որոյ ասաց ցնա նաթան ։ * Եւ տէր անցոյց զքև զմեղս քո ‖ ։ (բ. թագ. ժբ. 13.)

Բայց 'ի պատիժ մեղաց նորա սպառնացաւ նմա ածել զբազում չարիս 'ի վերայ նորա. զի որովհետև մեղք նորա հրապարակեցան, յայտնի պատժովք ցուցցի՝ թէ ա՟ծ վրէժխնդիր է այնպիսի մեղաց, որք գործին 'ի ծառայից իւրոց ։ Եւ 'ի ցոյց այսր ետ նշան թէ մեռցի մանուկն ծնեալ 'ի բերսաբէէ ։

Զայս ա̃մ լուեալ դաւթի՝ եմուտ 'ի սենեակ իւր, և զգեցաւ զհանդերձ սգոյ. և ցանեալ զմոխիր 'ի գետնի, անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց զաւուրս եօթն. և ոչ եկեր և ոչ էարբ յայնոսիկ աւուրսն, այլ միայն քամէր զարտասուսն, և գոչէր սրտիւ առ ա̃ծ զբան սաղմոսին այսորիկ։

Յետ եօթն աւուրց իբրև մեռաւ մանուկն, ել և լուացաւ և օծաւ, և փոխեալ զհանդերձս սգոյն՝ եմուտ 'ի տունն աստուծոյ, և երկիր եպագ նմա. և եկեալ 'ի տուն իւր՝ եկեր զկերակուր։ Եւ զոր յեօթն աւուրսն յայնոսիկ գոչէր 'ի սրտի իւրում առ ա̃ծ ասելով ողորմեա՛ ինձ աստուած, և այլն, զայն անցոյց 'ի գիր, և եդ ընդ սաղմոսս 'ի յիշատակ մինչև 'ի կատարած աշխարհի։

Ի պատմութեան աստ զոր եդաք կան բազում ինչ արժանի խորհելոյ. ըստ որում է տեսանել առ մեկնիչս՝ առ 'ի խրատ և զգուշութիւն անձին. զորս և 'ի դէպ վարկանիմ յառաջ քան զմտանել 'ի մեկնութիւն 'ի մէջ բերել համառօտ։ Առաջին խորհելին է այն՝ թէ քանի՛ վտանգ է մարդոյ անզգոյշ պահել զզգայարանս իւր, մանաւանդ զաչս. զի ահա միով հայեցուածով կործանեցաւ հզօրն, խաւարեցաւ լուսաւորեալն, և յիմարեցաւ իմաստունն։

Երկրորդն է՝ թէ քանի՛ վնասակար է գեղեցկութիւնն յանզգաստ անձին, որպիսի եղև 'ի բերսաբէէ, որ ընդդէմ զգաստ խոհեմութեան յայնպիսի տեղւոջ լուացաւ՝ ուր մարթ էր հայիլ այլոց 'ի նա և գայթակղիլ։ Ոմանց թուեցաւ ասել, թէ բերսաբէէ դիտմամբ արար զայս. որպէս զի առեալ լիցի 'ի դաւթայ. քանզի տեսեալ նորա՝ թէ օրհնութի̃ն ա̃յ հանդերձեալ է կատարիլ 'ի զաւակն դաւթի՝ ցանկացաւ լինել նմա՝ առ 'ի ժառանգել զօրհնութիւն զաւակի նորա, զոր յուսայր ընծայեցուցանել յիւրմէ։ Զայս կարծիս հայի և համարումն շնորհալւոյն. զի գրէ. ('ի մեկն. մատ. գլ. ա̃.) այսպէս. * ուրիա 'ի հե-
„թանոսաց եկամուտ էր. և բերսաբէ գիտէր զօրհ-
„նութիւնն յակոբայ, որ 'ի յուդայէ 'ի դաւիթ հաս-
„տատեցաւ, և փափաքէր գողանալ 'ի նմանէ զօրհ-
„նեալ ծնունդ. որպէս թամար 'ի յուդայէ. և թէ-

„ պէտ դաւիթ ոչ այնպիսի մտօք մերձենայր 'ի նա, և
„ յայտ անտի է՝ զի պատժեցաւ, այլ նա ընկալաւ յո̃յ՝
„ որում ցանկացաւ ‖:

Երրորդն է այն՝ թէ զիա՛րդ այն ինչ՝ որ փոքր առիթ համարեալ լինի, առ մեծամեծ չարիս առաջնորդէ, զի աւասիկ մի միայն լուացումն՝ արեամբ զանգեաց զբազմութիւն մարդկան, և զաշխարհ մի. և եղև պատճառ անլսելի խայտառակութե̃ց, և կորստեան որդւոց, հալածման թագաւորի, և մեծամեծ պատերազմաց և կոտորածոց. զի այս ա̃մ չարիք՝ որք եղեն զկնի այնր մեղաց, սկիզբն առին 'ի միոյ անտի, որ և ոչ իսկ մեղք համարիւր:

Չորրորդն է երկնչել յանձնէ, զի թէ դաւիթ ճոխացեալն շնորհօք, և լցեալն ա̃ծային իմաստութեամբ և մարգարէութեամբ, այնպիսի սիրելի ա̃յ, մինչև նա ինքն վկայէ, թէ գտի զդաւիթ այր ըստ սրտի իմոյ, ե̃ն. և այնչափ հզօր մինչև զարջ և զառիւծ սպանանէր, և զգողիաթ միով քարիւ կործանէր, այսպիսի այր սքանչելի միով ևեթ անզգուշութ̃բ չարաչար կործանեցաւ. զինչ ապա լինիցի նոցա, որք հեռի են յայսպիսի պարգևաց, և համարձակին մերձենալ 'ի մեծամեծ առիթս:

Հինգերորդն է հեռի կալ 'ի դատարկութենէ և 'ի հանգստենէ մարմնոյ. զի ահա դաւիթ յորժամ 'ի պատերազմունս և յայլ գործս զբաղէր, անարատ պահեաց զանձն, իսկ յորժամ 'ի բաց եկաց 'ի գործոց, և մնաց 'ի դատարկութե̃՝ ժողովեցան առ նա չարիք, զի սիրտ դատարկ յատակատակ է նաւու, (այսինքն սինդինա՝) յոր ժողովին զարշութիւնք:

Վեցերորդն է առնուլ օրինակ անսալոյ ազդարարութե̃ այլոց՝ զոր զարմանալի եցոյց դաւիթ յանձն իւր. զի 'ի խօսիլ նաթանայ՝ ամենևին ինչ ոչ դժուարացաւ, այլ ամենայն իրօք անսաց նմա, և խոնարհեցաւ 'ի լուր բանից նորա. թէպէտ և գերագոյն էր քան զնա ոչ միայն իշխանութ̃բ թագաւորութե̃ն, այլև հոգւով մարգարէութեան: Յորմէ արժան է ուսանիլ մեծամեծաց և իշխանաց՝ անսալ բանաւոր ազդարարութեան եւս և քարոզութեան, թէև 'ի տկար և յանարգ և 'ի տգէտ անձնէ մատուցի այն:

Եօթներորդն է առնուլ մեղաւորաց օրինակ ապաշխարութե̃, ոչ միայն զի դարձցին, այլև այնու օրինակաւ դարձցին, որով դարձաւ դաւիթ. (տե՛ս վասն ապաշխարութե̃ 'ի գիրս սարգսի շնորհալւոյ 'ի մեկն. բ. պետ. ա. 11. ճառ ա. 'ի յորդորակն։)

Ութերորդն է առնուլ յոյս ապաշխարութեան, զի թէ այնպիսի և այնչափ ծանր մեղաց դաւթի թողութիւն ետ ա̃ծ միով մեղայիւ, զիարդ ոչ թողուցու այլոց, գուցէ դիւրաւ ևս, զի մեղքն դաւթի հայելով 'ի հանգամանս և 'ի պարագայս՝ մեծագոյն էր յոյժ քան զբազմաց. և եթէ նա այնչափ դիւրաւ եգիտ զթողութիւն, այլք ո՞չ գտանիցեն. այո՛ գտանեն, միայն թէ ըստ նմին զղջասցին, և ըստ նմին ապաշխարեսցեն։

Զորոյ զպարագայս ունիս տեսանել 'ի սաղմոսի աստ (մինչև 'ի 18. համարն.) յոր զարմանալի կարգաւ առաջի դնէ մարգարէն զցաւս անձին իւրոյ 'ի վերայ մեղացն զորս գործեաց. երբեմն պաղատելով և երբեմն ափշելով. երբեմն զիջանելով, երբեմն ելանելով. երբեմն զանձնէ դատախազելով և երբեմն յանձնէ հրաժարելով. և միով բանիւ ասացից, այնպիսի տարազու խօսի, քան զոր գերագոյն չէր հնար խօսիլ, և սակայն առ 'ի հասկանալ զխօսս սորա՝ ոչ այնչափ ունկնդրութիւն պահանջի, որչափ խոնարհութիւն. և զոր անկարելի թուի՝ ասացից, ոչ այնչափ մտօք՝ որչափ կամօք իմացեալ լինին բանք սաղմոսիս. կամիմ ասել՝ թէ յայս սաղմոս ոչ ինչ օգնէ նուրբ տեսութ̃ի, այլ նպաստէ միայն խոնարհեալ սրտի եռանդագին յօժարութ̃ի։

Ասացի 'ի վերոյ. * մինչև 'ի 18 համարն ‖. զի որք զկնի դնին վերջին երկու համարք, թուին լինել մարգարէական գուշակութիւնք, յորս մաղթի շինութիւն պարսպացն երուսաղէմի, և կանգնումն սեղանոյ ողջակիզաց 'ի կանգնիլ տաճարին։ Ուր ասեն ոմանք ընդ որս և վարդան, թէ այն երկու համարք, ասին 'ի դիմաց գերելոց 'ի բաբելոն, և այլք կարծեն, թէ այնք ոչ են դաւթի, այլ այլոյ ուրուք հոգեկիր անձին՝ յաւելեալք զկնի 'ի ժամանակի գերութեան. բայց երևի թէ նոքին ևս դաւթի են, և հայլին մարգարէակամ գուշակութեամբ յերկու շինութիւնս. մի՝ 'ի շինութիւն տաճարին և պարսպին երուսաղէմի նախ քան զգերութիւնն առ սողոմոնիւ. և երկրորդն՝ 'ի շինութիւն նոյն տաճարին և պարսպին յետ գերութեան, որք և հայլին 'ի շինութ̃ի նորոյս եկեղեցւոյ, և 'ի կանգնումն նորոյ սեղանոյ. ուր զենեալ լինի պատարագն երկնաւոր։

Այս սաղմոս որ յօրինեալ է 'ի դաւթայ, ասի 'ի բերանոյ իւրաքանչիւր մարդոյ. ուստի թէպէտ և 'ի դէմս դաւթի մեկնի, բայց այն ա̃մ մեկնութիւնք հայլին 'ի դէմս իւրաքանչիւր մարդոյ։ Այլ և 'ի բերանոյ մարդկայինս բնութեան առ հասարակ՝ ընծայեալ առ հայրն երկնաւոր հայելով 'ի փրկութ̃ին յայն՝ զոր ունէր կատարել որդւովն. ուստի յայս և հայլին բանք մեկնութեան յառաջ բերեալք 'ի դէմս դաւթի։ Զայսոսիկ եդեալ մատիցուք 'ի մեկնութ̃ի։

Բ Ռ Ն

ա. Ողորմեա ինձ Ա̃Ծ. ըստ մեծի ողորմութեան քում. ըստ բազում գթութեան քում քաւեա զանօրէնութիւնս իմ։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Քանզի զօրաւոր իցէ շնորհքն ա̃յ, և զինչ գործէ 'ի մարդն, յայտնի երևի 'ի դաւիթ. զի 'ի հեռանալ շնորհաց 'ի նմանէ՝ զամիսս իմն եկաց մնաց 'ի մեղսն իւր. և զրեթէ ոչ զգայր զչարն յորում կայր. խիղճ մտաց իւրոց արդարև 'ի նմա էր, բայց այն էր իբրև պատրոյկ անլոյս, կամ իբրև ուրուական նկար անհոգի, և կամ իբրև լար քնարի առանց հնչողի. միայն շնորհացն ա̃յ էր իբրև հուր լուցանել և իբրև հոգի կենդանացուցանել և իբրև գործի ազդու հնչեցուցանել։ Այլ իբրև ժամանեաց առ նա այն շնորհք, փոխեաց զնա յայր յայլ, 'ի կուրութ̃է 'ի լուսաւորութիւն, 'ի խլութ̃է 'ի լսողութիւն, և 'ի մեռելութենէ 'ի կենդանութիւն. ետես, լուաւ, և ափշեցաւ, ո՞ր էր և ուր էջ. հայեցաւ և սոսկացաւ, որով հալեցաւ և խոնարհեցաւ ։

Հայեցաւ յինքն, հայեցաւ և յաստուած, հայեցաւ և 'ի մեղսն. հայելով յինքն՝ զոր ոչն տեսանէր՝ ետես. հայելով յա̃ծ, զոր իբր փոքր համարէր՝ մեծ ետես. հայելով 'ի մեղսն՝ զոր սակաւ կարծէր՝ բազում ետես ։ Ապա ըստ այնմ զոր ետես՝ դիմեաց յողորմութիւնն ա̃յ. ըստ այնմ զոր մեծն ետես՝ յուսացաւ 'ի մեծութիւն ողորմութե̃ նորա. ըստ այնմ զոր բազում ետես՝ ապաւինեցաւ 'ի բազմապատկութի̃ ողորմութե̃ նորին ։ Ըստ առաջնոյն ասէ ։

Ողորմեա ինձ Ած ։ Ողորմին կրկնակի հայի յողորմելի վիճակ. մի՝ ըստ ներքին յօժարութեան, որով յօժարի ոք բառնալ զողորմելի գոյն այլոյ. և մի ևս՝ ըստ նըպաստիցն, որով ոք առնէ ումեք այնպիսի ինչ, որով բառնի այն ողորմելի պայման նորա ։ Իսկ զայս մարթ է դիւրաւ իմանալ այնու յարացուցիւ՝ զոր տայ լամբ''. Իբր զի տեսեալ իմ զոք խեղդիլ 'ի ծովու՝ և աղաղակել առ իս, և ասել, ողորմեա́ ինձ. շարժի յիս յօժարութիւն բառնալոյ զայն ողորմելի վիճակ նորա. այսինքն է ազատել զնա՝ թէև չկարիցեմ. և այս թէպէտ և ասի ողորմիլ, բայց ըստ յօժարութեան, և ոչ ըստ նպաստելոյն. զի այսու իմիք յօժարութեամբ ոչինչ նպաստի ողորմելին այն. իսկ եթէ ըստ այնմ յօժարութեան ձեռն կարկառեալ ազատեցից զնա, այս իմ գործ ասի և լինի ճշմարտապէս ողորմիլ ըստ նպաստից ։

Արդ յա̃ծ՝ ողորմիլն թէպէտև ոչ է սոսկ ըստ յօժարութեան այլ ըստ նպաստելոյ ևս, բայց երբեմն մանաւանդ թէ բազում անգամ հայելով յանհասանելի տեսչութի̃ կառավարութեան նորա ասի լինել ըստ յօժարութեան միայն. իբր զի տեսեալ ա̃յ զոմանս 'ի խաւար մոլորութեան, և զոմանս 'ի գործս անօրէնութեան, և զայլս յայլ ողորմելի կեանս թէպէտ և ողորմի նոցա, այսինքն յօժարի նպաստել նոցա, բայց անարժանութիւն նոցա խափան լինի ողորմելոյ, և յայս իսկ ըստ ասելոյ առաքելոյն թէպէտ և կամի ա̃ծ զի ա̃մ մարդիկ կեցցեն. (ա̃. տիմ. բ̃. 4.) բայց անընդունակութի̃ կամ անարժանութի̃ ն̃ցա արգել լինի ։

Արդ տեսեալ դաւթի յինքեան զանարժանութի՟ մեծ ՚ի խնդրել յա՟յ ինչ, և զանընդունակութի՟ ծանր առ նպաստ ողորմութեանն ա՟յ, ոչ իշխէ յայն հայիլ, այլ զուտ յողորմութիւն նորա ապաւինի. վասն որոյ ոչ ասէ՝ աղաչեմ, ոչ ասէ՝ նայեա՛ յողորմութիւն քո, ոչ ասէ՝ յիշեա՛ զուխտ քո, ե՟ն. այլ արձակապէս գոչէ ողորմեա՛ ինձ, ոչ առաջի անեմ ասէ, թէ անարժան եմ, զի և զայս ասել ամաչեմ. ոչ առաջի անեմ՝ թէ զայս ինչ և զայն ինչ արարի ընդդէմ քո, զի մեծ են և բազում. ոչ առաջի անեմ զբարերարութիւնս քո, զի չարաչար աղաւաղեցի զնոսին. այլ միայն գոչեմ առաջի քո և առ քեզ. ողորմեա՛ ինձ. ողորմեա՛ ոչ ըստ այսմ զի կամիս միայն, այլ ըստ այնմ. զոր կամիս և առնես ։

Այս բանք ոչ ցուցանեն՝ թէ դաւիթ յասելն զայս ոչ գիտէր զթողեալ լինելն մեղաց իւրոց, զի ինքն վկայութեամբ նաթանայ յայտնի գիտաց՝ թէ ա՟ծ եթող նմա զմեղս իւր. և սակայն ցաւ սրտի նորա ոչ հայէր յայն՝ թէ եթող նմա ա՟ծ, այլ յայն թէ զիա՛րդ ինքն եթող զա՟ծ. ոչ յայն թէ ա՟ծ գթացաւ ինքեան, այլ յայն՝ թէ զիա՛րդ ինքն համարձակեցաւ արհամարհել զբան նորա, և մեղանչել ընդդէմ այնպիսի բարերարի ։

Այսմ օրինակ տայ այսպիսի. եթէ ոք ընդդէմ բարեկամի իւրում անիրաւեալ իցէ, ՚ի հաշտելն ընդ նմա՝ թէև գիտէ և տեսանէ ևս՝ թէ ամենևին ներեալ է ինքեան բարեկամ իւր, այսու ամ՟իւ ակնածէ ՚ի նմանէ՝ ցորքան յիշէ զանիրաւիլ իւր առ նա. և որչափ սէր տեսանէ ՚ի նմանէ՝ այնչափ պատկառի, ՚ի խորհիլն ՚ի միտ՝ թէ ընդէ՞ր և զիա՛րդ անիրաւեցաւ առ այնպիսի բարեկամ իւր ։

Սոյնպիսի իմն տեսանիւր ՚ի դաւիթ, որ ՚ի խորհելն անդ զանիրաւիլ իւր առ ա՟ծ, այս խորհուրդ կամ այս ըմբռնումն նորա այնչափ պատկառեցուցանէր ըզնա առաջի ա՟յ՝ մինչև ունայնացուցանել զինքն իսպառ յաչս իւր, և ոչ ևս տեսանել զինքն թէ իցէ դաւիթ, այլ՝ այլ ինչ. վասն որոյ միայն զինքն դնէ ասելով. ողորմեա՛ ինձ, ոչ դաւթի ասեմ և ոչ մարգարէի, ոչ քումդ ծառայի և ոչ քոյդ կամարարի, այլ ինձ մեզաւուրս, ինձ որ ապերախտ գտայ առ երախտաւորդ իմ. ինձ՝ որ այսպէս յիմարեցայ առաջի քոյ. ինձ որ այսչափ ժամանակ հեռացայ 'ի քէն և մերժեցի զքեզ չլինել ինձ ա̃ծ ։

Յայս հայելով ոչ համարձակի ասել ա̃ծ իմ. այլ միայն ողորմեա՛ ինձ ա̃ծ. որպէս թէ ասէր. զիարդ իշխեցից ասել ա̃ծ իմ, որ այսչափ ժամանակ ընդդէմ քոյ զինելով, ոչ ունէի զքեզ ինձ ա̃ծ, և ոչ պաշտէի զքեզ, այլ զչար կամս իմ, զոր փոխանակ քո ինձ ա̃ծացուցի. որով առաւել քան զառաւել մեծացուցի զանօրէնութիւնս իմ։ Իսկ զի մեծի անօրէնութ̃ե մեծ ողորմութիւն է պիտոյ, յայն ապաւինի ըստ երկրորդ հայեցուածոյն, և ասէ ։

Ըստ մեծի ողորմութեան քում։ Ողորմութիւնն ա̃յ յինքեան մտածեալ՝ ոչ մեծ է և ոչ փոքր, այլ անսահման և անբաւ. բայց հայելով յողորմելի վիճակն՝ զոր բառնայ, ըստ մեծութ̃ե այնր վիճակի ասի մեծ ։ Իսկ ըստ այսմ ա̃ծ 'ի թողուլն ումեք զմեղս՝ ասի առնել ողորմութ̃ի մեծ ըստ որում մեծ է թշուառութ̃ի մեղացն. և զի դաւթին ըստ բազում հանդամանաց էր մեծ յոյժ, վասն այնորիկ խնդրէ ըստ մեծի ողորմութեան իւրոյ ողորմիլ ինքեան, և թողուլ զմեղսն, որպէս թէ ասէր. ողորմեա՛ ինձ ա̃ծ ոչ այնու ողորմութ̃բ՝ որով ողորմիս այլոց, զի իմ թշուառութիւն ոչ է հաւասար թշուառութեան նոցա, և ոչ հաւասար ողորմութեան քում. զի իմս քան զնոցայն մեծ է յոյժ. և քոյդ ողորմութիւն յանբաւս մեծ. և ես այժմ կարօտիմ ողորմութ̃ե. քանզի ըստ մեծութեան վիրաց պահանջի սպեղանի մեծ, և ըստ սաստկութեան ցաւոց՝ դեղ սաստիկ ։ Իսկ արդ քանզի նոյն այն մեղք դաւթի ոչ միայն մեծ էին, այլև բազում, սմին իրի ապաւինի և 'ի բազում ողորմութիւնն ա̃յ ըստ երրորդ հայեցուածոյն, և ասէ ։

Ըստ բազում գթութեան քում. (ջնջեա զանօրէնութիւնս իմ։) Գթութիւնն թէպէտև ըստ յատուկ նշանակութեան իւրում հայի 'ի ներքին գորով, և վերածի առ հայրական խնամողութիւն, (զորմէ տես 'ի սաղ. ի̃գ. 5. և 'ի սաղ. ի̃թ. 14.) բայց աստ որպէս երևի՝ դնի փոխանակ պէսպէս ներգործութ̃եց կամ գործոց ա̃ծային ողորմութեան, և քանզի բազում են այսպիսի ներգործութիւնք ողորմութե՟ն ա՟յ, և բազում օրինակաւ տըւեալ լինին, սմին իրի ասէ ըստ բազում գթութեան քում. որպէս թէ ասէր. գործք ողորմութե՟ քո ոչ սպառին, և դու ինքն որչափ ողորմիս՝ այնչափ առաւել ՚ի նոյն յօժարիս. վասն որոյ թէպէտև գիտեմ զի բազում են անօրէնութիւնք իմ, բայց ոչ այնչափ որչափ գթութիւն քո. եթէ անօրէնութիւնք իմ իբրև աւազ բազում իցեն՝ քոյդ գթութիւնք անբաւ են և անթիւ. ապա ՚ի բազմաց անտի զսակաւն ցոյց ինձ. Արժան է աստ զբառդ **գթութեան**՝ առնուլ ըստ յատուկ նշանակութեան իւրում, նոյնպէս և զբառդ **ողորմութե**. և ըստ այսմ իբր անարժան որդի խնդրէ զգթութիւն, և իբր ապստամբ ծառայ՝ զողորմութի. և ըստ երկաքանչիւրոցն ևս աղաչէ քաւութիւն գտանել. վասն որոյ յարէ զկնի, և ասէ.

***Ջնջեա՛ զանօրէնութիւնս իմ.** *Ջնջել զանօրէնութիւնն է ըստ ա՟մի թողուլ. որպիսի է ՚ի մարմնաւոր իրս ջնջումն աղտեց. յոր միտս յաճախ ՚ի սաղմոսաց մերոց դնի **Ջնջեա՛**. Իսկ զայս պարտ է իմանալ հայելով ՚ի հոգին, յորժամ ա՟ծ ոչ միայն թողու զպարտս մեղաց, այսինքն զմեղսն, այլև զմնացուածս մեղաց, այսինքն զտրամադրութիւնն ապականեալ ՚ի հոգին. իսկ հայելով առ արտաքս, այսինքն առ պատիժս և առ գայթակղութի՟ս, առ ի ներել.

Արդ որպէս և յայտ է՝ ա՟ծ թէպէտ և եթող դաւթի զմեղս, ևս և քաւեաց զայն, բայց քանզի լիապէս ոչ ներեաց, այսինքն թէ ոչ թողացոյց զպատիժսն, և զորս հետևեին այնց, ՚ի նոսին հայելով իբրև ՚ի վկայօղս անօրէնութե՟ց իւրոց խնդրեր ոչ զի բարձցին այն պատիժք, այլ զի անօրէնութիւնք իւր ջնջեսցին առաջի աչացն ա՟յ. այսինքն թէ անյիշատակ լինիցին. զորմէ ունիմք խօսիլ ՚ի յաջորդ համարն.

Իսկ զի որպէս ասացաք՝ բազում էին այն անօրէնութիւնք նորա ըստ թուելոյ մեր, (՚ի սաղ. լէ. 5.) աղաչէ զբազմութիւն նոցին զա՟մ քաւել. զա՟մ ասէ քաւեա. մի հայիր, բազում իցեն արդեօք՝ թէ սակաւ. զի առաջի բազում գթութե՟ քո եթէ բազում իցեն և եթէ սակաւ՝ ա՟մն միանգամայն ջնջին. ջնջեա ապա զա՟մ եթէ՛ զբազումսն և եթէ զսակաւն ըստ քում բազմապատիկ գթութե՟ ։

Մարթ է աստ գթութ՟ք իմանալ և զա՟ծային հայրական գորովն՝ զոր ունի 'ի վերայ իւրոց բանական ըստեղծուածոց· և ըստ այսմ բառդ բազում՝ դնի փոխանակ բառիս սաստիկ· որպէս թէ ասէր· թէպէտ և սաստիկ են անօրէնութիւնք իմ, բայց հայրական գութ քո ևս սաստիկ գոլով՝ նովին գթովդ քաւեա՛ զանօրէնութ՟իս իմ ։

Քննել արժան է աստ, զի մարգարէն ո՛չ երբէք յիշէ 'ի սաղմոսի աստ զբառդ սրբեա՛· այլ քաւեա՛· և 'ի յաջորդ համարն, սուրբ արա (որպէս և 'ի սաղ. իդ՟. 9։ կդ՟. 3։ հէ՟. 38։ հը՟. 9։ ձբ՟. 3։ փոխանակ որոյ 'ի սաղ. իդ՟. 15։ լա՟. 6։ ձդ՟. 2։) թողուլ դնէ ։ Զի որովհետև սրբելն գերազանց է քան զքաւելն և քան զթողուլն, այնմ անարժան համարելով զինքն՝ ապաւինի 'ի քաւելն և 'ի թողուլն ։ Ասացի *գերազանց||· զի սրբելն ո՛չ միայն հայի 'ի ջնջել, այլև կատարելութիւն ինչ 'ի վերայ յաւելուլ· յոր միտս ասէր եսայի· (ա՟. 16. 'ի բարոյական միտս.) *լուացարուք, սրբե-
„ ցարուք||։ Ուստի ասէ սարգիս շնորհալի· ('ի մեկն. ա՟. յովհ. ա՟. 9. ճառ բ՟.) *ա՛յլ է թողուլ զմեղս,
„ և այլ է սրբելն· որպէս այլ է զմահապարտութեան
„ պատճառն թողուլ ումեք, և ա՛յլ է յետ այնորիկ
„ յիշխանութիւնս աւագութեան հանել զնա և 'ի պե-
„ տութիւնս||։ Եւ քանզի այնմ կատարելութեան ևս ցանկայր մարգարէն՝ նաև զնոյն մաղթէ նման իմն բառիւ յասելն ։

դ՟. Առաւել լուա՛ զիս յանօրէնութենէ իմմէ· և 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս ։

Յազդ առնել նաթանայ և յասել ցդաւիթ· *և տէր անցոյց զքև զմեղս քո· և մի՛ մեռցիս||· (բ՟. թագ. ժբ՟. 13.) թէպէտև որպէս ասացաք յայտնի ետես դաւիթ՝ թէ եթող ա՟ծ ինքեան զմեղս իւր, բայց և ևս պաղատէր՝ ո՛չ սոսկ 'ի թողուլ, այլ առաւել թողուլ ըստ չորից ։

Մի ըստ հարկանելոյ խղճի մտացն, և ըստ ծայրագոյն պատկառանացն՝ 'ի խորհելն թէ զիա՛րդ յանզղջնեցաւ արհամարհել զբանն այ՟ . զի զայս յորժամ յիշէր՝ հալէր և մաշէր, և արտասուելով ջնջել մաղթէր :

Երկրորդ՝ ըստ յիշատակութե՟ չարութե՟ մեղաց, իբր զի փափաքէր դաւիթ զի այնպէս ջնջեսցի մեղք իւր՝ մինչև ոչ ևս յիշել այ՟ զայն . և թէպէտ ա՟ծ յորժամ թողու՝ ոչ ևս յիշէ . որպէս յայտ է . (եզեկ . լգ . 16 .) ուր ասի 'ի դառնալ մեղաւորին . *ա՟մ մեղք իւր՝ զոր „ մեղաւ՝ մի՛ յիշեսցին ‖ . բայց այս ոչ յիշելս մտածի ըստ թողլոյ զմեղսն 'ի ներքուստ, և ոչ ըստ յանդիմանելոյ արտաքուստ . որպէս յանդիմանեցաւ դաւթին՝ նաև յետ թողութե՟ն :

Երրորդ՝ ըստ պատժոյն . ըստ որոյ պաղատէր՝ ոչ զի ոչ պատժեսցի, այլ զի այնպէս ջնջեսցի մեղք իւր՝ զի և պատիժ նորա բարձցի . (զայսմանէ տես 'ի սաղ . լէ . 1 = 5 . և 19 . և՟ն :)

Չորրորդ՝ ըստ բառնալոյ տրամադրութեան մեղացն, ըստ որում յետ մեղաց մնայ 'ի մարդն տրամադրութի՟ ինչ կամ ունակութի մեղաց, որ առնէ զմարդն տկար 'ի հակել 'ի նոյն մեղս կամ 'ի նմանիս . և 'ի բառնիլ մեղաց 'ի ձեռն շնորհաց՝ մնայ այն տրամադրութիւն 'ի մարդն . որպէս 'ի բառնիլ հիւանդութեան մնայ տըկարութիւն յոսկերս . և 'ի լուանալ աղտեղեալ զգեստու՝ մնայ նշանն : Եւ զօրօրինակ այն տկարութիւն գործածութ՟բ կարողութեանց, ևս և սննդեամբ բառնի, և նշանն այն զգեստու սաստկութ՟բ օճառաց, և յաճախութ՟բ լուացմանց ջնջի, այսպէս և այն տրամադրութիւն մարդոյ՝ ներգործութ՟բ առաքինութե՟ց և աճմամբ շնորհաց բառնի և բժշկի . յոր միտս ասէ սա ինքն դաւիթ . ('ի սաղ . ճբ . 3 .) *ո քաւէ զմեղս քո, բժշկէ զա՟մ հիւանդութի՟ս քո ‖ :

Եւ թէպէտ որպէս երևի՝ յապաշխարել անդ դաւթի այս տրամադրութիւն ևս քաւեցաւ 'ի նմա . ըստ որոյ ասացաք 'ի նախընթաց համարն թէ ա՟ծ քաւեաց զմեղս նորա, բայց քանզի արմատն կայր՝ այն է լուցկիքն մեղաց, յայնմանէ կարէր կասկածիլ դաւիթ :

Արդ զերկուս մեծամեծ չարիս գործեաց դաւիթ . մի՝ անօրինելով յուրիա ընդդէմ այնր պատուիրանի, զոր վասն կարի մեծութե՟՝ երկինք աղաղակէր 'ի լեռնէն սինայ, մի սպանանէր. և մի ես՝ մեղանչելով յանձն իւր բերաբեաւ ընդդէմ այնր պատուիրանի, զոր ա՟յ ձեռամբ իւրով գրեաց. մի շնար։ Վասն երկոցունցս այսոցիկ որոշ որոշ քաւութիւն մաղթէ աստ դաւիթ ըստ վերոյիշեալ հանգամանացդ. և նախ յառաջինն հայելով ասէ։

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ։ Այս լուանալս է սկզբնական գործ շնորհացն ա՟յ՝ որ 'ի սուրբ գիրս նմանի ջրոյ. (զորմէ լիագոյնս ունիս տեսանել 'ի սաղ. իը. 2.) Այսու ջրով ասէ լուա զիս յանօրէնութ՟է իմմէ. որպէս թէ ասէր. արտաքուստ իմ չեն բաւական 'ի լուանալ զմեղս արեանհեղութեան. կարօտիմ շնորհաց քոց և առաւելութեան շնորհաց. հեղ ուրեմն յիս զայն աղաչեմ. և նովաւ լուա զիս՝ ոչ այնու հասարակ լուացմամբ՝ որով թողու զմեղս, այլ առաւելութեամբ իւն։ Եւ յայտ է թէ հայի 'ի ներքին լուացումն հոգւոյն. զի անօթ արտաքուստ լուացեալ չօգտի ինչ, այլ ներքին լուացմամբ մաքրի և սրբի. որոյ վասն յարէ զկնի մարգարէն հայելով յերկրորդ հանգամանսն, և ասէ։

Եւ 'ի մեղաց իմոց սուրբ արա զիս։ Արաս սուրբ՝ երրակի առեալ լինի. մի՝ բացասաբար. որով նշանակի այն՝ որ չունի բնաւ զաղտ ինչ։ Երկրորդ՝ դրականապէս. որով նշանակի այն՝ որ ոչ միայն ոչ ունի զաղտ, այլ և փոխանակ այնր ունի զսրբութ՟ի, այսինքն զկատարելութ՟ի գեղեցկացուցիչ հոգւոյն։ Երրորդ՝ յարանուանաբար. որով նշանակի այն՝ որ նուիրի ա՟յ, և ասի սուրբ՝ այսինքն նուիրեալ առ 'ի վարել 'ի սրբութեան։ Զերեսին զայսոսիկ ես խնդրէ աստ դաւիթ այսու բանիւ, որպէս թէ ասէր. աղտ մեղացս եթէ դոյզն ինչ էր՝ միայն լուացմամբ ջնջեալ լինէր յինէն. բայց աս քանզի մեծ է, ոչ միայն կարօտի լուացման, այլ և առաւել լուացման՝ լուա ուրեմն այնպիսի առաւելութ՟բ, մինչև ըստ ա՟մի սրբեսցի անձն իմ յաղտոյ անտի գարշելի մեղաց, և 'ի զզուելի հոտոյ նորին, և զգեցցի զկատարելութիւն սրբութեան. զի որպէս մեք յետ սեղանոյ լուանամք զձեռս և զբերանս մեր, ոչ միայն 'ի սրբել յաղտոյ, այլ և 'ի մաքրել 'ի հոտոյ և 'ի համոյ կերակրոյն, և փոխանակ այնց ունել զկատարելութիւն մաքրութե, այնպէս և հոգին 'ի լուացեալ լինելն շնորհօք՝ ոչ միայն կամի սրբել յաղտոյ մեղաց, այլ և 'ի հոտոյ նոցին, և փոխանակ գարշութեան նոցա ստանալ զկատարելութիւս։ Օ այսոսիկ կամելով խնդրել՝ զնէ զբաագ --րէ --րա։

Այլ աստ արժան է գիտել, զի թէպէտ և գիտէր Դաւիթ՝ թէ 'ի հոգին է աղտ մեղացն, յոր միտս պարտ էր առել, սրբեա զհոգի իմ. այլ զի և մարմինն էր գործակից մեղաց՝ մանաւանդ 'ի մարմնական մեղս, վասն այսորիկ 'ի միասին ընդ մարմնոյն խնդրէ զլուացումն. ուստի և բոլոր զանձն առաջի եդեալ ասէ. Լուա զիս և սուրբ արա զիս։

Եւ դարձեալ՝ որպէս ասացաք՝ որովհետև նաև յետ թողութեան մեղաց մնայ 'ի մարմնի անկարգութի ինչ մեղաց, այսինքն տրամադրութիւն առ սովորեալ մեղս, և ապստամբութիւն ինչ զգայութեց ընդդէմ բանի, ըստ այսմ մասին՝ առաւել մարմինն, այսինքն շնչաւոր մարդն կարօտի լուացման քան թէ հոգին. վասն որոյ որք միանգամ ապաշխարեալ 'ի վերայ մեղաց, մանաւանդ մարմնականաց գտանեն զթողութիւն, պարտին զհետ լինել լուանալոյ զապաւորութիւն անկարգութե նորին. ապա թէ ոչ՝ անտարակոյս վերստին 'ի նոյն սահին։

Այլաբանօրէն, այս բանք հային 'ի խորհուրդ մկրտութեան, որում կարօտէր մարդկայինս բնութի. վասն որոյ յետ խնդրելոյ յայ զողորմութի և զթողութիւն մեղաց՝ խնդրէ և զհետևանս թողութեան, և զայն ----էլ. զի առաւել էր և մեծութի մեղացն՝ ոչ միայն ըստ տարածութեն յամ որդիս մարդկան, այլ ըստ սաստկութե չարութեն, որոյ վասն հանապազ բերանով մարգարէից առաջի այ սփռէր զայն ասելով. * յոտից մինչև ցգլուխ չիք առողջութի ||. (Եսայ. ա. 6։)

Այսպիսի յայտարարութք կամ խոստովանութք՝ կամէին մարգարէք 'ի գութ շարժել զած, և փութացուցանել զբժշկութի կամ զլուացումն այսր ախտի։ Զայսպիսի խոստովանութի զիմ և մարգարէս դաւիթ. և նովին մատուցեալ առաջի այ՝ ասէ։

Գ. Զանօրէնութիւն իմ ես ինքնին գիտեմ. և մեղք իմ
առաջի իմ են յա̃մ ժամ։

Անօրէնութիւն և մեղք թէպէտև 'ի հասարակի իբրև նոյն մտածին և վարին, և 'ի տեղի միմեանց 'ի գործ ածին 'ի գիրս, (որպէս համարի և սարգիս շնորհալի 'ի մեկն. ա̃. յովհ. գ. 4.) բայց առանձին նշանակութ̃ առեալ՝ երիւք տարբերին. մի՝ զի անօրէնութիւնն ուղղակի լինի ընդդէմ արդարութե̃ ըստ որում արդարութիւն. որպէս անիրաւութիւն ընդդէմ իրաւանց, իսկ մեղքն յորում կարգի և իցէ՝ ընդդէմ լինի 'ի նմին կարգի՝ եթէ արդարութիւն իցէ և եթէ զգաստութ̃ի, ևն։ Երկրորդ՝ զի անօրէնութիւն հայի 'ի վնաս այլոց, իսկ մեղքն 'ի վնաս ինքեան. երբեմն միանգամայն ինքեան և այլոց. Երրորդ՝ զի անօրէնութիւնն փակէ յիւրում չարութե̃ զառաւելութ̃ի ինչ ըստ մեծութե̃, կամ ըստ սաստկութեան չարին. իբր զի է ընդդէմ ծանր պատուիրանի, կամ զի ծանր հանգամանօք կատարի. իսկ մեղքն փակէ յինքեան զչարութիւն 'ի հասարակի։ Ոմանք յաւելուն և զայս՝ թէ անօրէնութիւնն համարի իբր ունակութիւն. իսկ մեղքն իբր գործողութիւն։ Ըստ այսոցիկ մասնաւորութե̃ց՝ զոր առանձինն ունի անօրէնութ̃ին, մտածի իբր մասնաւոր ինչ չար մեծ, իսկ մեղքն իբր ընդհանուր։

Բայց քանզի բառս անօրէնութե̃ ըստ հնչման իւրում նշանակէ զայն ինչ՝ որ է ընդդէմ օրինաց կամ արտաքոյ օրինաց, ըստ այսմ նշանակութեան՝ դնի իբր բացատրութիւն մեղաց կամ իբր համառօտ սահման մեղաց. ըստ որում մեղքն է գործ ընդդէմ օրինաց. և յայս միտս՝ ա̃մ մեղք ասի անօրէնութիւն. և վասն այսորիկ ասի. (ա̃. յովհ. գ. 4.) * ա̃մ որ զմեղս գործէ, նաև զանօրէնութ̃իս առնէ. և ինքն իսկ մեղքն անօրէնութ̃ի է ||։

Սմին իրի որպէս ասացաք, բազում ուրեք 'ի սուրբ գիրս և յայլ մատեանս՝ փոխանակ միմեանց վարին երկոքին այսուքիկ բառք. որպէս և 'ի սաղմոսի աստ։ Բայց երբ երկաքանչիւրքն 'ի միասին դնին 'ի միում բանի, մեղքն ըստ յատուկ բանի իւրում առեալ լինի, և անօրէնութիւնն ըստ մասնաւոր չարութեանն, այսինքն ըստ լինելոյ ընդդէմ արդարութե՟, կամ ըստ լինելոյ 'ի վնաս ընկերին, և կամ ըստ առաւելութե՟ 'ի մեծութեան և 'ի սաստկութեան.

Արդ 'ի սաղմոսի աստ, ուր բազում անգամ կրկնին այսօրինակ բառք, յառաջնում տան անօրէնութիւն դնի ըստ առաւելութեան սաստկութե՟ և մեծութե՟. սոյնպէս և 'ի վեցերորդ համարն. բայց 'ի պատճառի իւրում մտածելով, 'ի տասներորդ տան՝ ըստ ա՟մ մասնաւորութե՟. իսկ յերկրորդ տան՝ ըստ լինելոյ ընդդէմ արդարութե՟, և ըստ լինելոյ 'ի վնաս ընկերին. որպէս և յայսմ տան՝ յասելն.

Զանօրէնութիւնս իմ ես ինքն գիտեմ. Զայս ասելով մարգարէն և յաւելլով զբառս **ինքն**՝ կամի 'ի գութ շարժել զա՟ծ ըստ հինգ գլխոց. մի՝ ըստ ինքնայօժար խոստովանութե՟, յոր միտս կամի ասել. խոստովանիմ զանօրէնութիւնս իմ ոչ 'ի յորդորելոյ այլոց, այլ ես ինձէն. քանզի **ես ինքն գիտեմ**, զի անիրաւեցայ առ քեզ բազմապատիկ անօրէնութ՟ք. և արդ որպէս ես ինձէն գիտեմ, և ինձէն խոստովանիմ զայսոսիկ, նոյնպէս և դու ինքնին քաւեա և լուա. Զսոյն զայս՝ նիւթ առեալ ինքեան երանելին 'ի պաղատաւորս՝ աղաղակէ առ ա՟ծ ասելով. ('ի բանն խէ.) * մեղայ տէր ,, մեղայ, և անօրէնութե՟ց իմոց ինձէն վկայեմ. հասեալ ընդ սմին զբանս յիններորդի սաղմոսին՝ անթիւս գրեմ զպարտուցս սակ անձինս մեղանաց քան ,, զհող երկրի հողմահար փոշւոյ ընդ օդս ամենայն տարածելոյ ‖.

Երկրորդ ըստ դատախազելոյ զանձնէ. յոր միտս առեալ և յիշատակեալ պաղատողի. ('ի բանն լ՟ը.) աշխարելով գրէ. * աւաղ ընդ աղէտս մահու յարելով ըստ մարգարէին. (յովէլ. ա՟. 15.) յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ ըստ սաղմոսղին ‖: Եւ յայս միտս կամի ասել. ոչ ուրանամ զոր գործեցի. գիտեմ զի անօրինեցայ, գիտեմ՝ զի ոչ միով՝ այլ բազում իրօք ընդդէմ քո զինեցայ. զի գիտելով անկայ, գիտելով մեղայ, գիտելով արհամարհեցի զբանս քո. և ահա զոր գիտեմ՝ ոչ թագուցանեմ, այլ յայտնի առաջի քո տարածանեմ, և քաւութի՟ խնդրեմ. եթէ պատուհասես, ինչ ոչ խուսափեմ. եթէ մահու մատնես, ահա պատրաստ եմ. արա՛ ընդ իս՝ որպէս և հաճիս, միայն թէ քաւեա՛ ընդ որ ոչ հաճիս ։

Երրորդ՝ ըստ 'ի բաց առնլոյ զայլս, յոր միտս կամի ասել. ես անօրինեցայ, ես վատթարացայ, ես չարացայ. ոչ կարեմ այլում մեղադիր լինել, և ոչ զայլս պատճառ բերել (որպէս զնախահայրն իմ.) քանզի գիտեմ զի ես արարի ։

Չորրորդ՝ ըստ համեմատութեան յանցանաց օտարի. յոր միտս կամի ասել. ոչ կարեմ ոչ գիտել՝ թէ զինչ է՝ զոր արարի, և ոչ յայլոց ուսանիլ՝ զոր գործեցի. եթէ այլք ոչ գիտասցեն՝ զոր արարին՝ չէ ինչ, զի կա՛մ տգէտ էին, և կամ տկար. իսկ ես զամենայն գիտէի՝ զի ունէի առ 'ի քէն հոգի մարգարէութեան. և քան զամենեսին զօրաւոր էի, զի քև զամենայն կարէի. և ահա գիտեմ զի չար է զոր գործեցի, այ՛ տէր, գիտեմ տէր ։

Հինգերորդ՝ ըստ դիւրացուցանելոյ զլուացումն մեղաց. զի որովհետև խնդրեաց լուանալ զայնս, իբրև զդիւրալուանալի առաջի մատուցանէ զնոսին. որով կամի ասել. մի՛ աշխատիր տէր՝ ահա ես ինձէն գիտելով զայնոսիկ՝ ինձէն մատուցանեմ զնոսին առաջի քո. հե՛ղ միայն զառաւելութի՟ շնորհացդ. և ահա իսկոյն լուանիմ և սրբիմ ։

Յասացելոցս աստի երևի թէ աստանօր բառդ ինձէն հայի ոչ միայն 'ի գիտելն յայն՝ որ եղև զկնի ազդարարութեան նաթանայ, այլև 'ի գիտելն յայն՝ որ կայր 'ի նմա յառաջագոյն. վասն զի և նախ քան զազդ առնել նաթանայ գիտէր դաւիթ թէ չար է զոր գործէ. բայց այնպիսի գիտութե՟՝ որ ոչինչ ազդէր առ 'ի ըմբռնել զչարութիւն մեղացն, (որպէս ասացաք 'ի համարն 1 ։) Իսկ յետ ազդարարութե՟ն՝ այն գիտութիւն զօրացեալ յ՟ծային լուսոյ՝ այնպէս ազդէր 'ի հոգի նորա, մինչև զմ՟ ծանրութիւն չարութե՟ մեղացն իբրև 'ի հայելւոջ առաջի իւր տեսանէր. և 'ի զարհուրելու թենէ նոցա տաղտկայր և տագնապէր, սարսէր և հալէր. քանզի չարութիւն մեղացն և աղտեղութի՟ նորա ահաւոր իմն գոլով և քստմնելի, 'ի յանդիման լինել

աչաց՝ յանհնարինս տաղտապեցուցանէ։ Ծանեաւ ադամ զչարութ՟ի մեղացն և զգաղրութ՟ի նորա, յորժամ յանդիմանն ետես զայն 'ի մեռեալն հաբէլ. և որպէս ասի, * զսարսափելի տաղտկութ՟ի մեղացն ընթերցաւ
,, յերեսս աբէլի, 'ի յաչսն, յականջսն, յըռնգունսըն, 'ի բերանն, և 'ի մարմինն ողջոյն ‖. ընթերցաւ և սոսկացաւ։ Զինչ ապա եթէ տեսանէր զնոյն 'ի հոգւոյն կայենի. ոչ հաւատամ թէ ապրէր։ Սրբուհին սանչիա խնդրեաց յայ՟ տեսանել զհոգի իւր. ետես զնա 'ի ներելի մեղս այնչափ զարհուրելի և զազրալի, մինչև նուաղիլ նմա. վասն որոյ յայնմհետէ եկաց խստամբեր վարուք. մինչև ծակոտեցաւ մարմին նորա. զինչ ապա եթէ տեսանէր զնա 'ի մահուչափ մեղս։ Դաւիթ արդարև ոչ ետես այսու տարազու. սակայն գիտացեալ զչարութ՟ի մեղացն զոր գործեաց՝ տաղտապէր, և զբեթէ նուաղէր. մանաւանդ զի առաջի աչաց իւրոց ունէր զայն հանապազ. ըստ որում և վկայէ ասելով։

Եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։ Գիտելի է՝ զի կրկնակի մարթ է ունել մարդոյ զմեղս առաջի իւր. մի՝ սոսկապէս ըստ նիւթական առարկայի, կամ պարզապէս ըստ գործողութ՟են միայն. որպէս յորժամ ոք խորհի զգործս և զեղանակ բարկանալոյն իւրոյ, բամբասելոյն, ատելոյն, գողանալոյն, վավաշելոյն, և այլն. այս յիշատակու՟ն եթէ լինիցի հայելով սոսկ 'ի գործն, ոչ է գովելի, այլ պարսաւելի՝ մանաւանդ 'ի նիւթ վավաշոտութ՟ե. զի կարէ լինել առիթ միւսանգամ մեղանչելոյ. իսկ եթէ լինիցի հայելով 'ի խոստովանութիւն կամ 'ի զղջումն՝ է գովելի. բայց այսու ամի՟՝ 'ի նիւթ վավաշոտութ՟ե զգուշութ՟բ նշմարելի։

Երկրորդ՝ լինի ըստ տեսական առարկայի, կամ ըստ առարկելոյ չարութ՟ե մեղաց. որպէս յորժամ ոք խորհի թէ քանի չար եղև ինքեան մեղանչել, և զիարդ անօրինեցաւ այնու առ ա՟ծ. և 'ի խորհելն զայս՝ դնէ առաջի զմեղս իւր՝ ոչ ըստ եղանակի գործելոյն, այլ ըստ չարութ՟ե գործոյն. և լայ 'ի վերայ նոցա, թէև թողեալ իցեն նոքին. զի ոչ հայի 'ի նոսա իբրև յայնպիսիս՝ որք թողեալ են յա՟յ, այլ իբրև յայնպիսիս՝ որք անարգանք եղեն ա՟յ։ Եւ ահա ըստ այսմ մտաց ասէ աստ Դաւիթ, թէ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ։

Չարք և անխիղճ մարդիկ զմեղս այլոց ունին առաջի աչաց իւրեանց, բազում անգամ ունին ևս 'ի բերանի և հեղուն յականջս այլոց․ իսկ երանելին Դաւիթ ոչ զմեղս այլոց ունիմ ասէ առաջի իմ, այլ զիմ մեղս, զիմս յիշեմ, և զիմս լամ առաջի ա̃յ և առաջի իմ, յիս և 'ի հոգի իմ, ոչ ժամ մի յաւուրն և ոչ ժամ մի յերեկոյն, այլ յամենայն ժամ, 'ի տունջեան և 'ի գիշերի, 'ի սեղանի և յանկողնի, յաշխատութեան և 'ի հանգստեան։

Այլ արդ եթէ Դաւիթ յետ ստուգութե̃ գիտելոյ՝ թէ թողան մեղք իւր, այսչափ և այնպիսի հոգ ունի 'ի վերայ նոցին, քանի՜ ևս պարտ է հոգ ունել նոցա՝ որոց չէ յայտ, թողեա՞լ իցեն արդեօք մեղք իւրեանց։ Եւ արդարև եթէ սոքա հոգ ինչ ոչ ունին՝ կասկածելի է՝ թէ գուցէ սուտ յուսով խաբիցին․ քանզի նշան է՝ թէ չեն ատեցեալ զմեղսն զոր թողեալ կարծեն, զի թէ ատէին՝ յետ թողութե̃ն ևս զնոյն ատելութ̃ի ունելով 'ի վերայ նոցին՝ ցաւէին, որպէս յայտնի տեսանի այս 'ի ճշմարիտ ապաշխարօղս։

Քանզի տեսանելով նոցա՝ թէ ընդդէմ որո՛յ մեղան, զո՛ արհամարհեցին, և զիա՛րդ զբան նորա առ ոտն հարին՝ ոչ կարեն հանդարտիլ, այլ միշտ ցաւին 'ի վերայ այնր զոր գործեցին, և որչափ ցաւին, այնչափ 'ի յոյս իւրեանց հաստատին․ և նովին յուսով դիմեն առ այն՝ ընդդէմ որոյ գործեցին․ ոչ զի նորոգ գտցեն զթողութիւն՝ զոր արդէն առին, այլ զի յա̃մի հաշտ տեսցեն զերեսս նորա՝ զոր դառնացուցին։

Օ ի՜նչ ասասցուք ապա զնոցանէ, որք 'ի մեղս ծանունս գոլով՝ յանհոգս կան․ հոգովք մեղաց տանջին, և յանհոգս մնալ ախորժեն։ Ունին և սոքա զմեղս իւրեանց առաջի իւրեանց՝ ոչ իբրև զնիւթ ապաշխարութեան, այլ իբրև զտապ տանջողական․ զի խիղճն միտաց երկիւղիւ դատապարտութեան տագնապէ զնոսա․ ըստ որում ասէ իմաստունն․ * զի երկչոտին առանձինն „ ի̃ն կանխէ զանհնարինս նեղեալ 'ի խղճէ մտաց‖․ (իմաստ․ ժէ․ 10․) * քանզի ոչ ինչ է երկիւղ, (այսինքն „ տագնապ հոգւոյն) եթէ ոչ՝ մատնութիւն

,, (խղճի) մտացն օգնականութեան ||. (իմաստ. ժէ. 11.) Զի յամենայն ժամու, և յամ տեղիս ոչ դադարի 'ի յանդիմանելոյ, թէ ընդէ՞ր արարեր, զինչ արարեր, ևն։ Եւ թէպէտ իբրև ստուեր իմն երևի նմա մեղքն, բայց չարութի մեղացն սարսափելի կացուցանէ զայն. որպէս սարսափելի երևին զարհուրեցուցիչ ըստուերք 'ի գիշերի. և որ տեսանէ զայն՝ գրեթէ զիւր տեսանելով պակուցեալ սասանի։

Պատմի (ըստ լոլբետիոսի) թէ այր ոմն սպանեալ ըզվաճառական մի, և կողոպտեալ զնա՝ գնաց 'ի տուն իւր. այլ հանապազ լսէր 'ի ներքս 'ի խղճէ մտացն զայս ձայն. սպաներ, սպաներ, սպաներ։ Յաւուր միում 'ի ճաշել նորա եբեր կին նորին 'ի սեղան ըզգլուխ որթու, և եդ սկտեղբ առաջի նորա։ Զարհուրեցաւ այրն. և բոլորովին 'ի դողի լեալ՝ աղաղակեաց, բա՛րձ զդա. զի դա է գլուխ մարդոյ սպանելոյ։ Խաբեցաւ սա, զի ոչ եթէ գլուխ մարդոյ էր, այլ ներքին դատախազն յանհնարինս տագնապելով այնպէս ցուցանէր նմա։ Ապաքէն Հենրիկոս Թագաւոր անգղիոյ (ըստ սանտերեայ) 'ի ժամ մահուն զարհուրեալ դողայր, թուելով նմա յայտնի տեսանել զկրօնաւորսն՝ զորս անիրաւութբ ետ սպանանել։ Կոստանդին կայսր՝ որ սպան զեղբայր իւր, 'ի ժամուն յորում մեռանէր՝ 'ի պակուցմանէ խղճի մտացն տեսանէր, զի եղբայր իւր մատուցանէր նմա զբաժակ մի լի արեամբ իւրով, և ասէր. ա՛րբ ա՛րբ եղբայր։ Աւասիկ մեղք սոցա ևս էին առաջի իւրեանց. մինչև կարել իւրաքանչիւր 'ի սոցանէ ասել. և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ. բայց ոչ ըստ խոստովանութեան դաւթի, այլ ըստ դատախազութ մտացն խղճի։ Խոստովանութիւն զմեղսն փարատէ, և զերկիւղն հալածէ. իսկ ամբաստանութի խղճի մտաց զմեղսն խըճողէ, և զերկիւղն սաստկացուցանէ, մինչև 'ի ցնորս ևս արկանել, որպէս տեսանի 'ի վերոյգրեալսդ. ոչ եթէ սատանայն էր՝ որ գործէր 'ի նոսա զայս, և ոչ իսկ հրեշտակք, այլ սոսկ խղճի մտաց. զի թէև չկային այլք, խիղճն կայր, և ինքեամբ դատախազէր։ Մ՛ի ասեր՝ թէ ոչ ոք գիտէ զմեղս իմ, ոչ ոք ամբաստանէ, ոչ ոք դատէ. դու գիտես, 'ի քէն ամբաստանիս, 'ի քէն դատիս. 'ի քէն և 'ի քեզ ։ Զինչ օգուտ իցէ քեզ՝ թէ ոչ ունիս քեզ գիտակից, ուր գիտակցութեան քո (այսինքն խղճի մտաց քոց) դատաստան՝ դատապարտէ զքեզ ։ Մի՛ խաբիր թէ յանհոգս մնալով յանցանել աւուրց մոռանաս և հանգչիս ։ Քսան և երեք ամք անցին յետ մատնութեան յովսեփայ. և խիղճ մտաց եղբարց նորա յանդիմանէր զնոսա, մինչև խոստովանիլ նոցա և ասել. * յիրաւի կրեմք զայս, զի „ մեղաք յեղբայր մեր. և ահա արիւն նորա խնդրի ‖. (Ծնն. խբ. 21 ։) Արդ հնարք ազատելոյ յայսպիսի ոսոխէ և դահճէ՝ է բառնալ ոչ զոսոխն՝ զի այն ոչ բառնի, այլ զնիւթ նորին, այսինքն զմեղս, ոչ եթէ խղճելով՝ այլ լալով. զի սոսկ խղճելն դատափետէ, իսկ լալն հանդարտեցուցանէ. խղճելն ևս 'ի վերայ մեղաց բարի է՝ եթէ լալով տարածեսցես զայն առաջի նորա՝ առ որ մեղար. որպէս առնէր դաւիթ. ըստ որում և ասէ իսկ ։

Է. Քեզ միայն մեղայ տէր. և չար առաջի քո արարի ։

Չարութիւն մեղացն մտածի յանարգանսն, որ լինի ընդդէմ այ. և զի անարգանքն այնչափ մեծանայ՝ որչափ մեծ է անարգեալն, և որքան փոքր անարգողն. մեղքն լինելով անարգանք ընդդէմ այ՝ որ է անսահման բարի, փակէ յինքեան բարոյապէս զանսահման իմն չարութիւն ։ Զայս ըմբռնելով դաւթի՝ քստմնէր յինքեան, և դողայր. բայց տեսանելով ևս զանսահման ողորմութիւնն այ, որչափ սոսկայր 'ի մեղաց՝ այնչափ ևս յուսայր յած, ոչ զի նա միայն կարէր թողուլ, զի գուցէ ոչ կամէր. այլ զի կամէր թողուլ՝ զոր միայն կարէր. վասն որոյ յայս ապաւինելով պաղատի և ասէ ։

Քեզ միայն մեղայ տէր ։ Այս բառդ քեզ՝ հայի յած ըստ ամենայն ստորոգութեանց և կատարելութեց. որպէս թէ ասէր. քեզ ամենակալ արարչիդ մեղայ, քեզ ամենաբարի տեառնդ մեղայ, քեզ ամենազօր թագաւորիդ մեղայ, քեզ ամենարդար դատաւորիդ մեղայ, այո տէր՝ քեզ միայն մեղայ ։

Իսկ բառդ միայն՝ ըստ երկուց տեսութեց կարէ վերածիլ ասա յա՟ծ. մի՛ ըստ անսահման մեծութե՟ նորա, որով և մեծանայ չարութիւն մեղացն. յոր միտս կամի ասել. ծանրացաւ յոյժ մեղք իմ և յանչափս մեծացաւ. զի ոչ մարդոյ մեղայ, այլ քեզ միայնոյ, որոյ մեծութե՟ ոչ գոյ չափ. եթէ մարդոյ մեղուցեալ էի, հաճէի իւիք զկամս նորա. զի հաւասար ինձ գոլով՝ կարէի հաւասար հատուցումն առնել. բայց ես կարացից հաճել զկամս քո, և զինչ ունիցիմ հատուցանել քեզ վասն մեղաց իմոց. դու միայն կարող ես հնարս գտանել թողութե՟. զի միայնոյ քեզ մեղայ: Իսկ այս հնարք ակնարկէ յարդիւնս ք՟սի. որով միայն եղև հատուցումն մեղաց մերոց:

Երկրորդ՝ վերածի յա՟ծ ըստ իշխանութե՟ նորա թողլոյ զմեղս դիւրաւ. և ըստ այսմ կամի ասել. որովհետև քեզ միայն մեղայ տէր, որչափ մեծացաւ մեղք իմ, այնչափ դիւրանայ թողութի՟ իմ. որչափ տիրեաց յիս ցաւ, այնչափ զօրացաւ 'ի սիրտ իմ յոյս քաւութեան մեղաց. որչափ պատկառիմ 'ի մեղացս, այնչափ վստահիմ 'ի քեզ. վասն զի գիտեմ՝ զի կամիս թողուլ, հաճիս ներել, բերկրիս 'ի խնայել. և որ զարմանալին է՝ հրամայես՝ զի դիմելով առ քեզ՝ խնդրեցից 'ի քէն զթողութիւն անթողլի մեղաց իմոց: Եթէ մարդկան մեղուցեալ էի, ոչ վստահէի՝ զի անողորմ են նոքա. այլ զի քեզ միայն մեղայ, գիտելով զի ողորմած ես՝ 'ի քեզ դիմեմ, առ քեզ պաղատիմ, և 'ի քէն խնդրեմ. առ այլ ոք դիմել ոչ կարօտիմ, այլում պաղատիլ ոչ կամիմ՝ յայլմէ խնդրել ոչ կարեմ, այլ առ քեզ և 'ի քէն է իմ կարօտութիւն: Եթէ դու կամիցիս, ահա գտանեմ զոր խնդրեմ. զի եթէ քեզ միայն եմ մեղուցեալ՝ եթէ դու միայն թողուցուս, զինչ ունիցին այլք պահանջել. եթէ դու կամիցիս ներել, զինչ կարիցեն օտարք առնել. եթէ դու արասցես առ իս զողորմութի՟, զինչ մնայ նոցա ասել. զի ես ոչ եթէ նոցա, այլ քեզ միայնոյ մեղայ. ընդ իս և ընդ քեզ է դատաստան իմ: Նա զի և ոչ իսկ վկայութեան այլոց կարօտիմ, զի ոչ եթէ ծածուկ 'ի քէն մեղայ քեզ, այլ յանդիման քոյ. և առ այս յարէ:

Եւ չար առաջի քո արարի: Ուր բառիւդ չար՝ իմացեալ լինի մեղքն՝ որ պարզապէս և ըստ ամենայնի չար կոչի.

վասն զի չունի ինչ մասն բարւոյ ։ Զայսպիսի չար ասէ առաջի քո արարի ։ Այսու բանիւ եւ ես սաստկացուցանէ զչարութիւն մեղացն , եւ ցուցանէ զինքն պարտաւորեալ առաւելութեան անօրէնութե՛ն ․ որպէս թէ ասէր ․ պատկառեցայ գործել առաջի այլոց , զոր անպատկառ գործեցի առաջի մեծվայելչութեան քո ․ այլք ստորին էին քան զիս , եւ ’ի նոցունց երկեայ ․ իսկ առ ’ի քէն ամենեւին ոչ երկեայ , որ միայնդ ես բարձրեալ յամենայնի ։ Հնարեցայ՝ զի մի գիտացեալ այլոց զչարիս իմ՝ տաղտկասցին յինէն ․ իսկ առաջի աչաց քոց տաղտկալի երեւիլ բնաւին ինչ ոչ համարեցայ ․ որով արժանի գտայ մերժիլ յերեսաց քոց , եւ անարգանօք արհամարհիլ իսպառ ։

Ողբեմք որչափ առաւել պարտաւոր եւ յանցաւոր ցուցանէ զինքն դաւիթ , այնչափ առաւել վստահի թողութեան պատահիլ ․ իբր զի զամենայն սաստկութիւն մեղացն առաջի դնելով ըստ ամենայն սաստկութեան նոցին ակն ունի ներումն գտանել ․ եւ որչափ մեծացուցանէ զմեղս իւր , այնչափ դիւրին ցուցանէ զթողուլն ․ քանզի որչափ սաստիկ եւ ծանր տեսանէր զայնս՝ այնչափ առատ եւ մեծ գտանէր զողորմութիւն այնր՝ ընդդէմ որոյ մեղաւ ․ եւ յայս իսկ ասաց , քեզ միայն մեղայ , քո առաջի մեղայ , եւ յանդիման քո անիրաւեցայ ։

Այլ ասա կայ քննել մեծ ինչ ․ զի յայտ է թէ դաւիթ ոչ միայն յա՟ծ մեղաւ , այլ եւ յուրիա եւ ’ի բերսաբէէ , մեղաւ եւ ’ի ժողովուրդ իւր՝ գայթակղեցուցանելով զնոսա , եւ պատճառ լինելով մեղաց նոցա , եւ կոտորածի նոցին ․ ապա զիարդ ասէ՝ քեզ միայն մեղայ տէր ։ Ո՞չ ապաքէն կարէր ուրիա աղաղակել , ինձ ես մեղար , նոյնպէս եւ բերսաբէէ , եւ ժողովուրդք ամենայն ։

Առ լուծումն այսր տարակուսանաց՝ պարտ է գիտել ․ զի ’ի գործողութեան անդ՝ որով մեղաւ դաւիթ յուրիա , ’ի բերսաբէէ , եւ ’ի ժողովուրդն , զանազանելի է բան վնասու եւ բան չարութեան ․ երկոքին ես թէպէտ նոյն մեղք են , զի այն գործողութիւն որ էր վնաս՝ էր եւ մեղք , եւ անդրադարձեալ՝ այսինքն թէ այն գործողութիւն որ էր մեղք՝ էր եւ վնաս , բայց սա-

կայն նոյնն հայելով յայլեւայլ՝ զգենու զայլեւայլ բան . հայելով սոսկապէս յայս՝ զի էր ընդդէմ օրինացն ա՟յ կամ ընդդէմ ա՟յ , զգենու զտեսականութիւն չարութե՟ մեղաց . և յայսմ է էութիւնն մեղաց՝ այսինքն է լինելն ընդդէմ օրինացն ա՟յ ։ Իսկ հայելով սոսկապէս յայն՝ զի է բարձող կենաց այլոց կամ բարձող պատուոյ ուրուք , և այլն . զգենու զբան վնասու , և ասի վնաս . և յայսմ է մտածելի ոչ էութիւնն՝ այլ գոյութիւնն մեղաց՝ այսինքն է լինելն իրօք վնաս ընկերին
ընդդէմ օրինացն ա՟յ ։

Ըստ սմին զանազանութե՟ մարթ է 'ի կողմանէ վնասուն առնուլ զայն թէ * և զչար առաջի քո արարի ‖ . որպէս թէ ասէր . առաջի աչաց քոց արարի զչար յուրիա և 'ի բերսաբէ , և 'ի ժողովուրդն . և այսու որպէս նոցա չար արարի , սոյնպէս և քեզ միայն մեղայ ։

Այլ՝ են բազումք որք ասեն , թէ աստ բառդ միայն՝ հայի 'ի գերագոյն դատաւորութիւնն ա՟յ . իբր զի դաւիթ որ մեղաւ՝ միայն զա՟ծ ունէր դատաւոր և վրէժխնդիր մեղաց իւրոց . զի ինքն դաւիթ գոլով թագաւոր ինքնիշխան՝ չունէր զայլ ոք գերագոյն դատաւոր քան զինքն՝ բայց միայն զա՟ծ . և նա միայն կարէր պատժել զնա և առնուլ վրէժ 'ի նմանէ . և ըստ այսմ նմա միայն ասէ մեղայ . որպէս թէ եղեալ էր . քեզ միայնոյ վրէժխնդրողի անձինս մեղայ տէր . և ոչ գոյ այլ ոք՝ որ կարիցէ վրէժ խնդրել յինէն կամ թողուլ
ինձ՝ բայց միայն դու տէր ։

Իսկ այլք ասեն , թէ միայնն հայի աստ 'ի տեսութիւնն ա՟յ . զի նա միայն ըստ ամենայնի տեսանէր զամենայն գաղտնիս մեղացն դաւթի . և ըստ այսմ կամի ասել ըստ գրելոյն վարդանայ 'ի ձեռագրի . * քեզ միայնոյ
„ յայտնի է չարութիւն մեղաց իմոց . եթէ յայլոց
„ ծածկեմ՝ 'ի քէն չէ՛ հնար ‖ . եթէ խնդրեսցես զվրէժ իմ , արդարութե՟ գործես . իսկ եթէ թողուս , ողորմութե՟ առնես . զիարդ և արասցես , յամենայնի արդար ես , և յաղթօղ ։

Իսկ ըստ''. զմիայնն ոչ առ ա՟ծ , այլ առ նա ինքն դաւիթ վերածէ , որով և միտ բանին լինի այս . յամենայն որդւոց մարդկան միջի ես միայն մեղայ քեզ . զի այլք ագիտութե՟ մեղանչեն , իսկ ես գիտութե՟ և ունելով յիս զոգի մարգարէութե՟ մեղայ, ե՟ն. որպէս թէ եղեալ էր. ես եմ գլուխն մեղաւորաց, ըստ որում ասէր և պօղոս զանձնէ.

Որպէս և գիտի, այսպիսի բանք ցուցանեն զառաւելութիւն զղջման, առ ՚ի արդարացուցանել զա՟ծ, և պարտաւոր ցուցանել զանձն. և ընդ դատաստանաւն ա՟յ արկանելով զամենայն՝ դիւրաւ հաշտեցուցանել զերեսս նորա, և գտանել զողորմութի՟. ըստ որում է տեսանել և ՚ի յաջորդ բանսն, յորս յայտ առնէ դաւիթ զայն զայս զիւր զխոստովանութի՟ յասելն.

Է. Որպէս արդար եղիցիս ՚ի բանս քո. և յաղթեսցես ՚ի դատել քեզ. (կամ ՚ի դատելն քո.)

Դիւրին ճանապարհ արդարացուցանելոյ զանձն առաջի իշխանի՝ է արդարացուցանել զիշխանն ՚ի բանս իւր, և զինքն ցուցանել պարտաւոր յանցանաց. զորօրինակ եթէ դաւիթ կոչէր զաբեսաղոմ առաջի իւր, և յանդիմանելով զնա ասէր. որդի անօրէն, որդի չար, զիարդ իշխեցեր սպանանել զեղբայր քո զամնոն զանդրանիկ որդի իմ, զիարդ ոչ խնայեցեր ՚ի նա, զիարդ ոչ յիշեցեր՝ թէ ես ունիմ վրէժ խնդրել արեան նորա, ե՟ն. Յայսպիսի յանդիմանութեան եթէ աբեսաղոմ անկեալ առաջի դաւթի խոստովան լինէր և ասէր. այո՛ հայր՝ ես սպանի, ես գործեցի զչարդ զայդ, ես անօրինեցայ, արդար ես դու ՚ի բանս քո, արա ընդ իս որպէս և կամիս. այսու խոստովանութե՟ աբեսաղոմ ներելի լինէր ողորմութեան, և դաւիթ արդար լինէր ՚ի բանս իւր. զի բանք նորա արդարանային, այսինքն այնպիսի լինէին և երևէին, որպէս ասացան. զի զոր ինչ ասաց նա՝ աբեսաղոմ արդարացոյց. իբր զի արդար եցոյց՝ ոչ զինքն՝ այլ զբանս դաւթի.

Իսկ եթէ աբեսաղոմ ժխտէր և ասէր, անպարտ եմ ես ՚ի սպանութենէ այդի, չէ իմ գործեալ զայդպիսի ինչ, և այլն. յայնժամ դաւիթ ՚ի դատելն զնա յաղթող գտանիւր. զի ՚ի մէջ բերէր զվկայս, ՚ի մէջ բերէր զծառայս, ՚ի մէջ բերէր և զայլ բազում ինչ, և [illegible] յաղթէր ՚ի դատելն. վասն զի բանք իւր գտանէին ճշմարիտ, և բանք աբեսաղոմայ սուտ, որով և գտանիւր դաւիթ յաղթող աբեսաղոմայ, և աբեսաղոմ յաղթեալ 'ի դաւթէ. Յայտնի լինի օրինակ դատողութեան հայելով աստ.

Որպէս (այսինքն որպէս զի) արդար եղիցիս 'ի բանս քո. և յաղթեսցես 'ի դատել քո. Առաջին և հարազատ մեկնութիւն այսր բանի յայտնի տեսանի 'ի նախակարգեալ օրինակդ. յոր միտս կամի ասել. խոստովան եղէ, թէ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և թէ քեզ միայն մեղայ, որպէս զի՝ այսու իմով խոստովանութեամբս դու արդար եղիցիս 'ի բանս քո յայնոսիկ՝ որովք ազդ արարեր ինձ զմեղս իմ բերանով Նաթանայ՝ յասելդ առ իս. զիարդ իշխեցեր քարշել զբերսաբէէ յառնէ իւրմէ, զիարդ ոչ խնայեցեր յայր նորա, այլ չարաչար մահու սպաներ, զիարդ ոչ պատկառեցար յայնչափ բարերարութեանց իմոց, ևն. Օ այդ ամենայն (ասէ) խոստովանիմ տէր. Ճշմարիտ է ամենայն զոր ասացեր, զի զայդ ամենայն գործեցի ես. այո՛ տէր արդար են բանք քո, և ես ոչ կարեմ ուրանալ. ապա թէ ոչ՝ 'ի դատաստան մտանես ընդ իս, և յայնժամ յաղթեսցես 'ի դատել քո. զի եթէ կամիցիմ ես ջատագովել զիս՝ բերելով զայլևայլ փաստս՝ թէ չէ իմ գործեալ զայդպիսի ինչ, կամ թէ այն գործ չիցէ մեղք, ևն. դու ունայնացուցանես զփաստս իմ, և յաղթես պատճառաց իմոց, որով և գտանիս յաղթօղ 'ի դատելդ քո զիս. զի * արդար ես յիրաւունս քո, և յաղթօղ 'ի դատաստան||. (Նար. ժԹ.)

Օ այս բան թուի թէ յայս միտս 'ի մէջ բերէ պօղոս առաքեալ 'ի դիմաց մարդկայնոյ բնութեան, 'ի ցուցանել՝ թէ ամենեքին անկեալ են ընդ պարտաւորութեամբ. և թէ արդար է աստուած 'ի բանս իւր, և ոչ ոք կարէ ուրանալ զայս, ապա թէ ոչ՝ նա յաղթօղ գտանի 'ի դատելն՝ ցուցանելով թէ իրաւամբ և արդարութեամբ առնէ զամենայն. (Հռովմ. Գ. 4 = 10.) զի * ամենայն ուրեք արդարանայ 'ի բանս և յաղթէ „ 'ի դատելն||. ըստ որում գրէ իգնատիոս վարդապետ. (Ղուկ. Ի. 27.)

Երկրորդ մեկնութիւն այսր բնաբանի հայի 'ի խոստմունս այ, որով խոստացեալ էր առնել ողորմութիւն մեղուցելոց 'ի դառնալ նոցա առ ած. և ըստ այսմ շաղկապդ որպէս զի յարի նախ՝ յառաջին երկու համարմն և տապ 'ի հեռաւեալ երկրում. և միտ բանին բացատրի այսպէս. ողորմեա՛ ինձ ած̃, և քաւեա՛ զանօրէնութիւնս իմ, որպէս զի այսու արդար եղիցիս 'ի բանս քո, այսինքն ցուցցես՝ թէ զոր խոստացար՝ կատարես. տապ թէ ոչ թողուցուս՝ ոչ անիրաւիս, այլ յաղթօղ գտանիս 'ի դատելն և 'ի խնդրելն զվրէժ մեղաց իմոց ։

Երրորդ մեկնութիւնն Հայր յանարատ ծնալ պատուիրանացն է̃. յոր միտս կամի ասել. խնդրեցի թողութիւն մեղաց իմոց և զառաւել մաքրութիւնն, և ակն ունիմ թէ արասցես. որպէս զի 'ի բառնիլ ամենայն մեղաց իմոց և ամենայն արատոյ և յիշատակի նոցին՝ պատուիրանք քո երևեսցին արդար՝ այսինքն ոչ անիրաւեալ լինէին, այլ յարդարութեան ծնացեալ. և յայնժամ 'ի դատել քո զիս՝ ողորմութեամբ յաղթեսցես ինձ, կամ յաղթօղ երևեսցիս իմում անողորմութեան. իբր զի ցուցցի յայնժամ՝ թէ որչափ ես անողորմ եղէ, այնչափ դու ողորմած եղեր առ իս, մինչև չյիշել բնաւ զոր արարի ։

Չորրորդ մեկնութիւնն Հայր 'ի բարերարութիւնն է̃. յոր միտս կամի ասել. եթէ զչարիս իմ համեմատեսցես ընդ այնմ ամենայնի՝ զորս արարեր ընդ իս, և ասիցես. տե՛ս զինչ արարի ես քեզ, և դու զինչ հատուցեր ինձ, արդար եղիցիս 'ի բանսդ յայդոսիկ և յաղթօղ գտանիս. և ահա զայդ գիտելով՝ ես ինձէն առաջի մատուցանեմ զանօրէնութիւնս իմ՝ և գոչեմ. ողորմեա՛ ինձ, և մի՛ համեմատեր զչարիս իմ ընդ բարիսն՝ զորս ցուցեր առ իս, այլ ջնջեա՛ և լուա՛, և առաւել ես լուա՛ զիս ։

Հինգերորդ մեկնութիւնն Հայր 'ի բանսն յայն՝ զորս ասացեալ էր ած̃ դաւթի՝ բարի առնել նմա, և որդւոց նորա, են. և յայս միտս կամի ասել. բարձ զթշնամութիւնն զայն՝ զոր ես արժանացուցի 'ի միջի, որպէս զի վերստին ընդունելով զիս 'ի բարեկամութիւն քո՝ կատարեսցես յիս զայն ամենայն՝ զոր խոստացար, և այսու 'ի բանս քո արդարասցիս, և յաղթեսցես ամենայնի, որք եղեն ընդդէմ այնց խոստմանց քոց. իբր զի մի՛ երևեսցի՝ թէ իմով անօրէնութեամբս խոստումն քո տկարացաւ և յաղթեցաւ. այլ արա՛ զի ոչ

անօրէնութ՟ի իմ՝ այլ խոստումն քո երեւեսցի յաղթօղ,
որ է ասել, կատարեսցի խոստումն քո։

Վեցերորդ մեկնութ՟ին հայի 'ի ճշմարտութի բանիցն ա՟յ, իբր զի այն բանք՝ զորս ասացեալ է՝ մի չնար, մի սպառնաներ, ե՟ն. են ճշմարիտ. եւ եթէ ոք յանցուցեալ իցէ յայդոսիկ, 'ի խոստովանիլն եւ յառելն մեղաց ընդդէմ այդոցիկ բանից, այսու ցուցանէ թէ ոչ են անիրաւ եւ սուտ այն բանք, այլ արդար են եւ ճշմարիտ. ուստի եւ ա՟ծ արդարանայ 'ի նոսին, եւ իրաւամբ դատէ զգործօղսն ընդդէմ այնոցիկ. եւ 'ի դատելն յաղթէ, եւ անպարտ գտանի. յոր միտս թերեւս յեբր". դնի՝ * անմեղ (գտանիս) 'ի դատելն ‖. կամ * անարատ ելցես ‖, կամ * սուրբ գտցիս ‖։

Իամբ". զայսոսիկ զամենեսին 'ի մի բան համառօտելով՝ խօսի առ ա՟ծ այսպէս։ Եթէ մտանես ընդ իս 'ի դատաստան, եւ արասցես բանիւ վիճումն՝ յաղթես. ես պարտաւորիմ վասն մեծամեղութեանն, եւ դու արդարանաս վասն բազում որ առ իս երախտեացդ. զի ամենք կարեն բերել ընդդէմ քեզ 'ի դատելն՝ զօգտութ՟ի օրինացն, այլք զգնութ՟ես հեշտասիրութիւնն, այլք զոչ գիտելն զվարձ փոխարէնսն. իսկ ես յայսմ ամենայնի անպատասխանի եմ. զի տեղեակ էի օրինացն, եւ հեշտասիրութ՟ես յագուրդ տուաւ սէր քո եւ քումդ փառաց. հաւատ եղէ եւ անճառիցդ վերջնում հանգըստեանդ. եւ 'ի վերայ այսր ամենայնի դարձեալ կործանեալ մեղայ. * քեզ արդարութի հանդերձեալ, եւ
,, ինձ ամօթ եւ պատկառանս յաւիտենից ‖. Զայս ամենայն խոստովանելով դաւթի փափաքի քաղցրացուցանել զբարկութի ա՟յ առ 'ի դիւրաւ գտանելոյ զթողութիւն. եւ առ առաւել եւս դիւրացուցանելոյ՝ առաջի առնէ զայնպիսի ինչ՝ որ 'ի գութ շարժէ զարարիչն յառելն։

Է. Անօրէնութ՟բ յղացայ, եւ 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ։

Այս բանք յայտնաբարբառ վկայեն, թէ ամենայն մարդ 'ի ծնանելն՝ մեղաւոր ծնանի ընդ անիծիւք սկզբնական մեղացն ադամայ. զի թէ դաւիթ 'ի բարեպաշտ ծնողաց յղացեալ եւ ծնեալ՝ խոստովանի առաջի ոչ՝ թէ յղացեալ եղև անօրէնութբ, և ծնաւ մեղօք, այլ այն իցէ՝ որ չիցէ ըմբռնեալ 'ի նոյն, այսինքն չիցէ յղացեալ անօրէնութբ և ծնեալ 'ի մեղս։ Ամենեքեան 'ի նոյն յղաման և 'ի նմին ծնանին. և ամենեքին ասէ * ծնունդ մեղաց. և որդի մահացու երկանց ||. (Նար. ժԸ.)

Այս անօրէնութիւն և մեղք՝ զորս յիշէ աստ, յայտ է թէ ոչ են ծնողաց, այլ ծնեցելոյն. զի դաւիթ ոչ էր յղացեալ և ծնեալ պոռնկութբ կամ շնութեամբ ծնողաց, այլ ըստ կարգի ամուսնութեան. իսկ այս կարգ ոչ է մեղք, այլ յոյժ սահմանեալ և պարծանք ծնողաց։ Ապա եթէ արդարև մեղք լինէր այն, արգելոյր այն. որով և դադարէր ամուսնութիւն, և վերջանայր աշխարհս։ Ուրեմն այս անօրէնութիւն և մեղք որպէս ասացի դնին աստ հայելով 'ի ծնեալն և ոչ 'ի ծնօղսն։ Ապա դարձեալ եթէ 'ի ծնօղսն հայէին, պարտ էր սոսկ ըստ յղանալոյն համարել մեղք. զի այն է սկզբնական պատճառելութի նոցա, որով ասին նոքա ծնօղք. բայց աստ ոչ միայն յղանալն, այլև ծնանելն դնի մեղօք, որով ցուցանի դարձեալ թէ այն մեղք 'ի ծնեալն հայի, և ոչ 'ի ծնօղսն։

Այս է մեղքն այն հանրական՝ զոր կոչեմք սկզբնական՝ իջեալ յադամայ. ոչ սոսկ համարմամբ, որպէս ասէին հրէայք զանձանց. * հարք աղոխ կերան. և „ որդւոց ատամունք առան ||. (Եզեկ. ժԸ. 2.) այլ սերնդեամբ և որդւոց յորդիս անցմամբ։ Զոր օրինակ որդիք եթէովպացւոց, այսինքն սեաւ ծնողաց ոչ եթէ համարմամբ ասին սեաւք, այլ իրօք. 'ի սեաւ ծնողաց սեաւ ծնունդք։ Այնպէս և մարդիկ յանիծեալ ծնողաց անիծեալ ծնեալք. 'ի պարտաւորաց պարտաւորք. 'ի մահկանացուաց մահկանացուք. յապստամբելոց ապստամբք. 'ի դատապարտելոց դատապարտեալք, և այլն. ոչ եթէ ոմանք միայն, այլ ամենեքեան յաշխարհ ամենայն։ Յայս հայելով առաքեալն * 'ի միջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին... „ որով ամենեքին մեղան... միոյն յանցանօք յամենայն „ մարդիկ դատապարտութի ||. (Հռոմ. Ե. 12 = 21.) Զի որովհետև ադամ էր բարոյական գլուխ ամենայն մարդկան, և իբր երաշխաւոր նոցա, յորժամ մեղաւ և զրկեցաւ 'ի սկզբնական արդարութենէ, և 'ի սրբարար շնորհաց, և անկաւ ընդ անիծիւք, այնու իսկ պատճառաւ եղև՝ զի և որդիք նորա զրկեսցին 'ի շնորհաց անտի, և անկանիցին ընդ անիծիւք, և 'ի ծնանիլն՝ ընդ այնու անիծիւք ծնանիցին. և որպէս ինքն ապստամբ գտաւ, սոյնպէս և որդիք նորա ընդ վրէժու ապստամբութեան գտանիցին. զի զօրինակ յապստամբել կամաց ապստամբեն և զգայութիւնք, և յանզգայանալ գլխոյ՝ անզգայանան և այլ ամենայն անդամք, սոյնպէս է և 'ի մեղանս ադամայ. որով և ամենեքեան մեղաւոր յղանան, և մեղաւոր ծնանին։ Յայտնիկ հայելով՝ աստ։

Անօրէնութեամբ յղացայ (և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ.)

Զսկզբնական մեղս կոչէ անօրէնութիւն՝ վասն բազում պատճառաց. նախ՝ զի եղև առաջին օրինազանցութիւն. երկրորդ՝ զի եղև ընդդէմ առաջին օրինադրութեանն այ̃. երրորդ՝ զի եղև մեծ ըստ սաստկութեան և ըստ տարածութեան. չորրորդ՝ զի յայնմանէ, բղխեցին ամենայն անօրէնութիւնք և չարութիւնք։ Յայսպիսի անօրէնութն ասէ յղացաւ զիս մայր իմ՝ որպէս թէ ասէր. յորժամ յարգանդի մօր իմոյ կերպաւորեցաւ մարմին իմ, և միացաւ ընդ հոգւոյս, որով կատարեցաւ յղութիւն իմ, և ես եղէ մարդ յարգանդի անդ. գտաւ յիս անօրէնութիւն սկզբնական մեղաց. զի ես որ եղէ, յեղանիլս՝ անօրէն գտայ ոչ իմով գործողութեամբ, այլ նախաստեղծիցն։ Իսկ զի մի կարծեսցի՝ թէ յարգանդի անդ անօրէնութեամբ յղացեալ՝ յելանելն յարգանդէ՝ ոչ ել այնու անօրէնութեամբ, յարէ զկնի և ասէ։

Եւ 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ. Այսինքն, յելանելս իմ յարգանդէ մօր իմոյ ծննդեամբ՝ 'ի սկզբնական մեղսն յայն գոլով ծնայ, և մեղաւոր ծնայ. զի այն մեղք կամ անօրէնութիւն՝ որ 'ի յղանալս յիս էր, նոյնն միշտ մնաց յիս՝ ես և 'ի ծնանիլն և յետ ծնանելոյն՝ մինչև 'ի բառնիլ այնր 'ի ձեռն ուխտին՝ զոր եդեր ընդ հարս մեր։

Այլ աստ արժան է գիտել, զի 'ի սկզբնական մեղս երկու ինչ է մտածելի. մի՝ չարութիւնն մեղաց. և մի ևս՝ հետևանք կամ գործք այնր մեղաց ըստ հոգւոյ, ըստ մարմնոյ և ըստ բոլորին բաղկացելոյ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ. ըստ հոգւոյ՝ զրկումն 'ի շնորհաց, միանգամայն և տարամերժումն 'ի ժառանգութ՟է փառաց. ըստ մարմնոյ՝ մահ, ապականութիւն, հիւանդութիւն, քաղց, վաստակ, և՟ն. ըստ բաղադրեալ գոլոյ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ՝ տգիտութ՟ի 'ի միտս, չարութ՟ի 'ի կամս, ապականութ՟ի 'ի ցասմնականն, և անկարգութ՟ի 'ի ցանկականն. ևս և յօժարութ՟ի առ այնս՝ որք են ընդդէմ ուղիղ բանի, և դժուարութիւն ընդդիմանալոյ այնմ յօժարութ՟ե, և այլ ևս սոցին նման բազմադիմի թըշուառութ՟իք իբր ժանտ պտուղք 'ի ժանտութ՟ե այնր մեղաց։ Ասի թէ կայ տեսակ ինչ թունոյ՝ որ եղեալ յարմատ ծառոյ՝ թունաւորէ զպտուղս նորա. սոյնպէս և սկզբնական մեղքն եղեալ յարմատ բնութ՟ե մարդոյ այսինքն է յադամ, թունաւորեաց զամենայն պտուղս նորա, յինքեան և յորդիս իւր։

Այս սկզբնական մեղք ըստ չարութ՟են, և ըստ առաջին հետևանաց որ ըստ հոգւոյ՝ ջնջեալ լինելն ըստ որում յիշեցաք 'ի ձեռն ուխտին՝ զոր եդ ա՟ծ ընդ նախահարս, որպէս ջնջին այժմ 'ի ձեռն մկրտութ՟ե։ Իսկ ըստ հետևանաց որ ըստ մարմնոյ, և որ ըստ բաղկացելոյ բոլորին ոչ ջնջեցան, և հասարակօրէն ոչ ջնջին, այլ կան յամենայն որդիս մարդկան. և հանապազ խռովեն զնոսա, և հրապուրեն առ չարն։ Ուստի և 'ի սոսին մնալով սկզբնական մեղաց՝ նոյն մեղքն սկզբնական ժողովել փութայ յինքն զազգի ազգի ներգործական մեղս. զի որպէս մագնիսն յինքն ձգէ զերկաթս, սոյնպէս և սկզբնական մեղքն քարշէ յինքն զներգործականս, երբեմն զթեթևս, և երբեմն զծանունս։ Մագնիսն նաև 'ի յատակս ծովու գոլով քարշէ զերկաթագամ նաւս. և որպէս ասի՝ քարշեաց երբեմն 'ի սահմանս գաղղիոյ զպարառազէն հեծեալ մի. սոյնպէս առնէն և սկզբնական մեղք։ Նաւ բարեօք լի էր դաւիթ, և սպառազինեալ շնորհօք. այլ սկզբնական մեղքն 'ի ձեռն ներգործական մեղաց ձգեաց զնա. զի 'ի ձգել զայնս՝ ձգեաց և զանձն նորա։

Զայսոսիկ ահա ընդ սովին բանիւ կամի յայտնել մարգարէն, յասելն. * անօրէնութեամբ յղացայ, և 'ի

„ մեղս ծնաւ զիս մայր իմ ‖: որով զթշուառութիւն բնութեանս առաջի ա̃յ տարածելով՝ 'ի գութ կամի շարժել զնա. որպէս թէ ասէր. Տե՛ս տէր թէ յորպիսի վիճակի կամ, ողորմելի և դիւրահիւծ բնութեան ժառանգ լեալ. և եթէ եղև ինձ երբեք կալ հաստատուն, միայն շնորհք քո պահէր զիս, միայն շնորհք քո օգնէր ինձ, միայն շնորհք քո առնէր՝ զի մի անկայց: Իսկ թշուառութիւն բնութե̃ա՝ վասն ծնանելոյ 'ի մեղս՝ յամփոփիլ ձեռնտուութե̃ն շնորհաց քոյ՝ հրապոյր եղև ինձ. և ես յիմարեալ՝ փոխանակ առ քեզ դիմելոյ՝ բնութեանս բերման հետևեցայ. փոխանակ զբան քո պահելոյ՝ թելադրութեան յօժարութեանս անսացի. փոխանակ 'ի քէն օգնութիւն խնդրելոյ՝ առ 'ի ծածկել զմեղս իմ՝ զմահ ընկերիս նիւթեցի: Այլ դու տէր մի հայիր յայն՝ զոր գործեցի, այլ յայն՝ յորմէ պատրեալ գործեցի:

Երկրորդական մեկնութեամբ հնար է բառիդ մայր՝ իմանալ աստ զեւայ, որպէս դնէ լամբ″. և վարդան, և այլք բազումք. քանզի յայտ է թէ եւայ նախ քան զծնանիլն զորդի՝ մեղաւ, և զկնի մեղացն յղացաւ, և ծնաւ զմարդ մեղաւոր. ըստ նմին և ծնեալն 'ի նմանէ ծնաւ զայլ մարդ մեղաւոր յորդւոց յորդիս և յազգաց մինչև յազգս:

Բարոյապէս, բառիս մայր՝ նշանակի աստ սիրտ մարդոյ՝ որ հեռացեալ յա̃յ՝ անօրինի, և յանօրէնութեան անդ յղանայ զունող իւր, և 'ի նմին անօրէնութեան ծնանի զնա. ըստ որում տայ նմա անօրինել և մեղանչել, և առնէ զնա մեղաւոր և անօրէն առաջի ա̃յ: Այլ արդ եթէ աստուած ոչ խնայեաց յայն առաջին արարած իւր՝ զիարդ խնայեսցէ 'ի յետնորդսն: Փիլիպպոս արքայ սպանիոյ բ̃. ետ վճիռ պատժոյ մեծի 'ի վերայ անդրանկի իւրոյ կարոլոսի. որով և հատաւ յոյս այլոց պատժապարտից. ապա զի՞նչ յոյս կայցէ մեզ, եթէ և մեք գտցուք պատժապարտ ըստ անդրանկի նորա. զի եթէ պատժոյ մեծի մատնեաց զնա, մեզ զի՞նչ արասցէ: Ապա 'ի պատժոյ նորա զարհուրեալ զգաստասցուք: Գրի ուրեք թէ 'ի սահմանս ինչ ափրիկոյ 'ի յաճախել առիւծուց՝ կալեալ բնակչաց տեղւոյն զառիւծ մի՝ կապեցին ընդ ծառ. զայն տեսեալ այլոց առիւծուց զարհուրեցան և մեկնեցան անտի ։ Ած եւս կալեաց 'ի պատիժս զմարդն առաջին ․ ապա 'ի տեսանել մեր զայն պարտիք զարհուրիլ և մեկնիլ 'ի չարեաց ։

Ի բերել մարգարէին զայս բան առաջի այ՝ ոչ եթէ կամի ջատագովել զանձն , այլ դիտէ յայտնել զողորմելի վիճակ իւր , առ 'ի դիւրաւ գտանելոյ զողորմութիւն յաստուծոյ ։ Եւ զի ցուցցէ , թէ այն թշուառութիւն ծագեալ 'ի սկզբնական մեղաց՝ ոչ արդարացուցանէ զինքն , որովհետև կարէր ըստ պահանջելոյն այ պահել զանձն 'ի մեղաց , 'ի մէջ բերէ զճշմարտասիրութիւնն այ , և զհաստատութիւն պարտաւորելոյն իւրոյ և ասէ ։

Է ․ Դու տէր ճշմարտութիւն սիրեցեր ․ զանյայտս և զծածկեալս իմաստութեան քո՝ յայտնեցեր ինձ ։

Բառիդ ճշմարտութիւն՝ 'ի վերացեալն առեալ՝ իմացեալ լինի աստ համաձայնութիւն իրին ընդ անսխալ ճանաչմանն այ ․ իսկ 'ի թանձրացեալն առեալ այսինքն փոխանակ ճշմարտի՝ իմացեալ լինի այն՝ որ է համաձայն ածային ճանաչման , եթէ խօսք իցէ և եթէ գործք , եթէ մտածութիւն իցէ և եթէ յօժարութին ։ Եւ որպէս երևի՝ բառդ ճշմարտութիւն՝ որ դնի աստ 'ի վերացեալն , առեալ լինի 'ի թանձրացեալն փոխանակ ճշմարտի ։

Զայսպիսի ճշմարտութիւն սիրէ ած յամենայնի՝ թէ 'ի խօսիլ նորա ընդ մեզ՝ և թէ 'ի խօսիլ մեր առ նա , թէ 'ի գործել նորա , և թէ 'ի գործել մեր ․ զի 'ի խօսիլն ընդ մեզ՝ զճշմարիտն խօսի ․ և 'ի խօսիլ մեր առ նա՝ այսինքն 'ի դաւանիլ մեր զնա և 'ի գովել խորհրդով կամ բանիւ՝ զճշմարիտն խնդրէ ․ սոյնպէս և 'ի գործել նորա ինչ 'ի մեզ՝ զայն առնէ՝ որ է ճշմարիտ , այսինքն համաձայն ճանաչման իւրոյ ․ և 'ի գործել մեր , ընդ այն միայն հաճի՝ որ է ճշմարիտ ․ ուստի յամենայնի զայն և եթ սիրէ՝ որ է ճշմարիտ ․ սմին իրի ասէ ։

Դու տէր ճշմարտութիւն սիրեցեր ։ Զայս բան յինքեան մտածեալ՝ դիտէ նախ մարգարէն յայտ առնել՝ թէ ամենևին անպարտ է ած մեղաց մերոց , իբր զի 'ի ծնանիլ մեր 'ի մեղս, և կամ 'ի մեղանչել մեր, մեք եմք պատճառն. իսկ նա ամենևին չունի պատճառելութ̃ի ինչ առ չարն մեղաց. զի ինքն զճշմարտութիւն սիրէ, ճշմարտութիւն առնէ, և զճշմարտութիւնս յայտնէ: Գիտէ երկրորդ յայտ առնել թէ յինչ բերիմք մեք, և յինչ բերի ա̃ծ. մեք 'ի չարիս ծնեալ՝ 'ի չարիս և 'ի ստութիւնս բերիմք. իսկ ա̃ծ անսահման բարի գոլով և ճշմարտութ̃ի անբաւ՝ զճշմարտութ̃ի սիրէ և զճշմարտութիւն խօսի:

Այլ եթէ այս բան բաղդատութ̃բ առեալ լիցի, երրակի շարայարի. մի՝ ընդ նախընթաց համարոյ. և ըստ այսմ կամի ասել. դու տէր միշտ զճշմարտութիւն սիրեցեր և սիրես, զնոյն և յիս կամիս տեսանել. իսկ ես գոլով յանօրէնութեան յղացեալ և 'ի մեղս ծնեալ, փոխանակ ճշմարտութեան ցուցի քեզ ստութիւնս, այսինքն զայնպիսի գործս՝ որք են անհամաձայն քոյին ճանաչման, մանաւանդ թէ հակառակ ճանաչման և հաճութեան քոյ. և զի միշտ նոյն եմ ես, միշտ զնոյն ցուցանեմ. միայն քո է օգնել ինձ առ 'ի կարող լինելոյ առնել զճշմարտութիւն:

Երկրորդ շարայարի ընդ յաջորդին. և ըստ այսմ կամի ասել. դու տէր որպէսև սիրես տեսանել յիս զճշմարտութիւն, սրբեա զիս յայնմանէ՝ որ ընդդէմ է ճշմարտութեան, և ցօղեա յիս մշտկաւ, զի սրբեցայց, և այլն:

Երրորդ շարայարի ընդ բոլոր նախակարգեալ բանս սաղմոսիս, և ըստ այսմ կամի ասել. աւասիկ ես ճշմարտութեամբ և յայտնի խոստովանութեամբ եդի առաջի քո զամենայն զմեղս իմ՝ ոչ զայն միայն զոր ես անձամբ անձին գործեցի, այլ և զայն՝ զոր 'ի ծնողաց յիս ձգեցի. և զայս արարի գիտելով՝ թէ դու զճշմարտութ̃ի սիրես, և որք ճշմարտութ̃բ խոստովանին՝ քաւես և սրբես զմեղս նոցա: Եւ զի ցուցցէ թէ ինքն պարտական էր այսպէս առնել՝ յարէ զկնի զհաստատութ̃ի պարտաւորելոյն իւրոյ և ասէ:

Զանյայտս և զծածկեալս իմաստութե̃ քո յայտնեցեր ինձ:

Այս բան այնպէս յարի 'ի նախընթաց հատուածն, որպէս նախընթաց հատուածն ընդ այլս ըստ երրեակ շարայարութե̃: Ըստ առաջնոյն կամի ասել. դու տէր՝

որ ճշմարտութիւն սիրես, տեսանելով թէ ես վասն ծննանելոյ 'ի մեղս՝ ոչ կարեմ զճշմարիտն ուղիղ ճանաչել, յայտնեցեր ինձ զանյայտս և զծածկեալս՝ զորս իմաստութ՟ք քով սահմանեալ էիր · և 'ի կամիլդ տեսանել յիս զճշմարտութիւն՝ այսինքն զգործս համաձայնս այնմ զորս յայտնեցեր, զներհակն տեսեր · զի իմ առեալ զայսպիսի յայտնութ՟իս առ 'ի քէն՝ փոխարէն հատուցի չարիս ։

Ըստ երկրորդին կամի ասել · դու տէր ընտրեցեր զիս քեզ ծառայ, և հեղեր յիս հոգի մարգարէութեան, և յայտնեցեր ինձ զանյայտ իրս և զխորին խորհուրդս՝ զորս սահմանեալ էիր իմաստութեամբ քով · բայց ես մեղանչելով՝ գտայ անընդունակ այդմ ամենայնի՝ իբրև անօթ աղտեղի՝ անյարմար այդպիսի յայտնութ՟եց · այլ դու՝ որ յամենայնի զճշմարտութիւն սիրես, և ոչ կամիս թէ այնպիսի խորին իրաց յայտնութ՟իք զետեղեսցին յայսպիսի անօթ, սրբեա՛ զիս, վասն որոյ ցօղեա՛ յիս և լուա՛ զիս ։

Ըստ երրորդին կամի ասել · դու տէր որովհետև սիրելով զճշմարտութ՟ ճշմարտութեամբ յայտնեցեր ինձ զանյայտս և զծածկեալս զգանձեալս 'ի քեզ իմաստութեամբ, սմին իրի և ես ճշմարտութ՟ք յայտնեցի քեզ զամենայն զծածուկս իմ զմթերեալս յիս անօրէնութեամբ ։

Երկրորդական մեկնութեամբ յայս առաջիկայ բնաբան բառդ ճշմարտութիւն՝ դնի փոխանակ պարզմտութեան կամ ճշմարտասիրութ՟ե դաւթի · յոր միտս կամի ասել · որովհետև ես պարզամիտ էի, և ճշմարտութ՟ գնայի առաջի քո, դու որ զայսպիսի պարզամտութիւն սիրես՝ հաճելով ընդ այս՝ յայտնեցեր ինձ զանյայտս և զծածկեալս զորս ունիս 'ի քեզ պահեալ իմաստութ՟ք քով, այլ ես զպարզամտութիւն իմ դարձուցի 'ի չարամտութ՟ի, և անօրինեցայ առաջի քո ։

Իսկ վասն բառիցդ զանյայտս և զծածկեալս՝ գիտելի է՝ զի 'ի ձեռն անյայտից իմացեալ լինին նախ այնք՝ զորս ա՟ծ չէր տակաւին գրովք յայտնեալ · սոյնպէս և 'ի ձեռն ծածկելոց իմացեալ լինին այնք՝ որք թէպէտև յայտնեալ էին յա՟յ 'ի գիրս, բայց իմաստք նոցա ծածկեալ էին ։ Զսոսա ասէ յայտնեցեր ինձ, այսինքն յայտնի ցուցեր, կամ խելամուտ արարեր զիս այսոցիկ։

Երկրորդ՝ 'ի ձեռն անյայտից իմացեալ լինին այն աբարողութիւնք, յորս թէպէտ և կայր՝ բայց ոչ երևէր խորհուրդ համդերձեալ իրացն կատարելոց 'ի մարդեղութեան բանին։ Այնպէս և 'ի ձեռն ծածկելոց իմացեալ լինին այնք, որք ծածկեալ կային 'ի բուն իսկ խորհրդեան. և զայս ամենայն յայտնեաց ա̃ծ դաւթի, մինչև պայծառ տեսանել նմա զմարդեղութիւն բանին, ընդ նմին և զխորհուրդ ամենասուրբ երրորդութե̃, ըստ որում տեսանի յայն բան տեառն զոր ասաց՝ թէ * դաւիթ հոգւովն կոչէ զնա (այսինքն զք̃ս) ,, տէր, ևն. (մատ. իբ̃. 43.)

Երրորդ՝ 'ի ձեռն անյայտից իմացեալ լինի թողութի̃ն մեղաց՝ և պարագայք թողութեանն, զի այս անյայտ իմն է մեղուցելոյն՝ բայց ա̃ծ յայտնեաց դաւթի բերանով նաթանայ՝ յասելն. * և տէր անցոյց զքև զմեղս քո ||. (բ̃. թագ. ժբ̃. 13.) Այնպէս և 'ի ձեռն ծածկելոց իմացեալ լինի գթութիւնն ա̃յ և գործք գթութեան նորա, զորս յայտնեաց դաւթի 'ի թողուլն զմեղս նորա։

Իսկ վասն բառից τῆς σοφίας σου գիտելի է՝ զի այդ բառ յայլ ամենայն թարգմանութիւնս դնի 'ի սեռական հոլովն իբր յատկացուցիչ բառիցդ ἄδηλα καὶ κρύφια. յոր միտս 'ի միում սաղմոսի մերում եդեալ է. * զանյայտս և զծածկեալս իմաստութեան քո ցուցեր ,, ինձ ||. որպէս դնէ և ոսկան յա̃ծաշնչի. նաև բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. թ.) յասելն. * զանյայտսն և զծածկեալսն իմաստութեան նորա ,, ծանեաք ||։ Բայց միտ բանին ամենևին 'ի նոյն հայի. վասն զի 'ի մերումս բառդ τῆς σοφίας՝ ոչ դնի 'ի վերայ բայիդ ἐδήλωσας՝ իբր մակբայաբար, որպէս թէ եդեալ էր. զանյայտս և զծածկեալս իմաստնաբար յայտնեցեր ինձ. այլ դնի 'ի վերայ բառիցդ ἄδηλα καὶ κρύφια՝ իբր խնդիր սոցա. որպէս թէ եդեալ էր 'ի ներգոյական հոլովն այսպէս. զանյայտս և զծածկեալս յիմաստութեան քո՝ յայտնեցեր ինձ, որ է ասել. յայտնեցեր ինձ զանյայտս և զծածկեալս՝ զորս գիտես իմաստութե̃ քով՝ կամ զորս համդերձեալ ես առնել ըստ իմաստութեան քոյ ։

Իսկ լամբ″ ․ և վարդան զբառդ յիմաստութեամբ՝ վերածեն 'ի յայտնելն իբր մակբայ ․ և ըստ այսմ զբառսդ զանյայտս և զծածկեալս վերածեն առ գործս դաւթի ․ որպէս թէ ասել կամիցի ․ զմեղսն իմ՝ զորս ես կարծէի լինել անյայտս յօտարաց և ծածուկս յընտանեաց , իմաստուն բանիւ կամ իմաստութեամբ յայտնեցեր ինձ 'ի ձեռն նաթանայ , և կամ Ճանապարհաւ իմաստութե̃ ցուցեր ինձ զայնս ։

Ո՛չ այս մեկնութի̃ է ըստ յարմարութեան բառին , և ո՛չ ըստ նկարագիր Ճառին ։ Իսկ նարեկացին անորոշ իմն զնէ յասելն ('ի բանն զ̃․ Գ․ 'ի Ճառ մեռոնին ․) * զծածուկս գաղտնեացդ անտեսից իմաստութե̃ քոյ ,, յայտնի արարեր ‖ ։ Իսկ քանզի առ արժանաւորութի̃ յայտնութե̃ ա̃ծային իմաստութե̃ պահանջի ընդունակութի̃ ենթակայի ․ այսինքն է սրբութիւն և մաքրութիւն , որպէս ասացաք 'ի վերոյ , 'ի սոյն փափաքելով մարգարէին , պաղատի , և ասէ ։

Ը̃ ․ Ցօղեա՛ յիս զոպայիւ և սուրբ եղէց ․ լուա՛ և քան զձիւն սպիտակ եղէց ։

Ուշոփն է գործի սրսկելոյ զջուր կամ զայլ հեղանիւթ , զոր 'ի հնումն ըստ հրամայելոյն ա̃յ կազմէին 'ի զոպայէ (որ է օշուլ օթու , կամ ծայլթրին ․) ըստ որոյ ասէ բարսեղ վարդապետ ․ ('ի մեկն ․ մարկ ․ գլ․ ժե ․) * մշտիկ զոպայն է տրցակ ծայլթրինի ‖ ։ քանզի զբազում զոպայս 'ի միասին կապէին կարմրով իբրև զփունջ 'ի վերայ եղևնեայ փայտի , որ լինէր իբր մեղեխ (կամ իբր կոթ) այնր փնջոյ ։ Այս սովաւ սրսկէին քահանայք զջուր սրսկման 'ի վերայ այնոցիկ՝ որք իւիք պղծեալ համարէին , եւս և 'ի վերայ բորոտելոց ։

Իսկ ջուր սրսկման կոչիւր այն՝ յոր խառնեալ լինէր մոխիր երնջոյն այրեցելոյ ․ և այս ջուր պահիւր առ նոսա պատրաստական ․ զի յո՛ և իցէ դիպուածս առ ձեռին ունիցին 'ի սրսկել և 'ի սրբել ․ (զորմէ տե՛ս 'ի գիրս թւոց ժԹ ․ 1 = 10 ։)

Իսկ 'ի բորոտս այլազգ լինէր , զի բորոտն որ սրբիւր , բերէր զերկուս հաւս ․ զորոց զմին սպանանէին 'ի խեցեղէն անօթ՝ ուր կայր ջուր կենդանի. և քահանայն թացեալ յայն զմիւս հաւն՝ արձակէր 'ի դաշտ. և մշտկաւն 'ի ջրոյ անտի սրսկէր 'ի վերայ սրբեցելոյն եօթն անգամ. և յետ այսորիկ երկիցս լուացեալ լինէր սրբեալն. (զորմէ տես 'ի գիրս ղևտաց. ժդ. 1 = 8.) Զայսպիսի սրսկումն օրինակ առեալ մարգարէին՝ ասէ առ ա̃ծ.

Ցօղեա յիս մշտկաւ և սուրբ եղէց։ Բառդ ցօղել՝ դնի աստ փոխանակ սրսկելոյ. ուստի և գէորգ վարդապետ. ('ի մեկն. եսայ.) սրսկել ընթեռնու յասելն. *սրսկեա ,, յիս զոպայիւ, և սուրբ եղէց‖. բայց զի փոխաբերական մտօք խօսի՝ վասն որոյ ցօղել դնէ. և այսու ոչ խնդրէ աստ մարգարէն՝ սրսկել իրական մշտկաւ. այս թէ ոչ՝ պարտ էր ասել. արա զի սրսկեսցէ յիս քահանայն մշտկաւ, կամ թէ տուր ինձ սրսկիլ մշտկաւ 'ի քահանայից, այլ է նմանաբանութ̃ի ինչ՝ որով խնդրէ յա̃յ զսրբել հոգւոյ իւրոյ 'ի ձեռն շնորհաց. որպէս թէ ասէր. զօրօրինակ 'ի սրսկել քահանային մշտկաւ սրսկման 'ի պղծեալսն և 'ի բորոտեալսն՝ սրբէին նոքա, սոյնպէս և 'ի սրսկել քո յիս զջուր շնորհաց քոց՝ սրբեսցայց և ես.

Իսկ պատճառ 'ի մէջ բերելոյ զայս արարողութիւն այն է՝ զի յիշատակութեամբ սորին զառաւելն խնդրեսցէ յա̃յ. իբր զի եթէ ա̃ծ հաճեցաւ ընդ մարմնական սրբութիւն մարմնոյ, և առ այն սահմանեաց զսրսկումն մշտկաւ, քանի ևս հաճեսցի ընդ իրական ներքին սրբութիւն հոգւոյ. մանաւանդ զի այն արտաքին սրբութ̃ի օրինակ էր ներքին սրբութեան. ուրեմն ասէ եթէ ընդ այն հաճեցար, աղաչեմ զքեզ հաճեաց և ընդ այս. որ է ասել. սրբեա զիս առ 'ի ներքս 'ի հոգիս, ցօղելով յիս զջուր շնորհաց քոց.

Նաև զի 'ի հնումն ոչ միայն սրսկմամբ լինէր սրբութ̃ի մարմնոյ այլև լուացմամբ, մանաւանդ զի և բորոտք յետ սրբելոյ՝ երկիցս լուացեալ լինէին առ 'ի ցոյց առաւել մաքրութ̃ե, (որպէս յայտ է ղևտ. ժդ. 8 = 10. և թւոց ժթ. 7 = 19.) Վասն որոյ զայն ևս 'ի մէջ բերէ ասելով.

Լուա և քան զձիւն սպիտակ եղէց։ Այս լուացումն է առաւելութիւն սրբութ̃ե հոգւոյն 'ի ձեռն աճման շնոր-

հաց. որով այնպէս մաքուր փայլէ հոգին՝ որպէս մաքուր է ձիւնն 'ի սպիտակութեան. բայց քանզի սպիտակութիւն ձեան կարէ մթագնութիւն ինչ առնուլ յայլմէ՝ զառաւելն խնդրէ մարգարէն, ուստի ոչ ասէ՝ իբրև զձիւն սպիտակ եղէց, այլ քան զձիւն. որով ցուցանի ամենևին և յամենայնի սուրբ լինելն. Եւ զոր-օրինակ որ ամենևին սպիտակն է՝ դժուարահայելի է, զի աչք խորշին 'ի հայելոյ յայն համարձակ, սոյնպէս և որ ամենևին սուրբ է 'ի հոգին 'ի ձեան շնորհաց, դըժուարահայելի լինի սատանայի և ախտից. (Իսկ թէ զիարդ գործէ ջուր շնորհացն այս զայս սրբութիւն 'ի ձեան լուացման՝ տե՛ս 'ի սաղ. իէ̅. 2. յառաջին նմանութեան.) Այլաբանօրէն. այսու բանիւ նկարագրի խորհուրդ փրկութեան մերոյ 'ի ձեան արեանն ք̅ի և 'ի ձեան մկրտութե̅. Ուստի զայս բան 'ի դէմս ք̅ի վերաբերելով բարբառեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժե̅.) ասէ. * ցօղեա՛ յիս մշտկաւ և սուրբ եղէց յարե-
,,նէդ և 'ի ջրոյդ՝ որ 'ի կողիցդ քո, և ոչ անբանիցն
,, ըստ օրինացն ‖.

Այս փրկութիւն որ կատարի 'ի ձեան արեանն ք̅ի և մկրտութե̅, օրինակեալ եղև յայնոսիկ արարողութիւնս, զորս եդաք 'ի վերոյ 'ի գրոցն ղևտացւոց. (ժդ̅. 1 = 10. և Թւոց. ժթ. 1 = 10.) յորս յիշի նախ զենումն հաւուն, և հեղումն արեան նորա 'ի վերայ կենդանի ջրոյ 'ի խեցեղէն անօթ. և այս նշանակէ զզենումն ք̅ի 'ի վերայ խաչին և զհեղումն արեան նորա 'ի վերայ մարդկան՝ որք օրինակին 'ի ջուր և 'ի խեցեղէն անօթ. Սոյնպէս և մոխիր երնջոյն ողջակիզելոյ նշանակէ զարդիւնս մահուն ք̅ի ողջակիզելոյ վ̅ն մեր.

Յիշի երկրորդ 'ի նոյին ջուրն սրսկման խառնեալ ընդ արեան հաւուն զենլոյ, կամ ընդ մոխրոյն երնջոյ. և այս նշանակէ զմկրտութիւն, որոյ ջուրն ունի զզօրութիւն սրբելոյ ոչ յիւրմէ՝ այլ 'ի զօրութենէ արեանն ք̅ի, և 'ի մոխրոյ նորա, այսինքն յարդեանց նորին. Յիշի երրորդ՝ մշտիկն. և այդ նշանակէ զսրբիչ շնորհն, որ հեղանի 'ի մկրտութեան կապակցեալ ընդ հաւատոյ, յուսոյ և սիրոյ, որք օրինակին 'ի զոպայն, և 'ի փայտն եղևնեայ, և 'ի կարմիրն մանեալ. զի զոպայն որ է խոտ առատահոտ, և ձգէ զարմատս 'ի վերայ վիմի, նշանակէ զհաւատս, որ հաստատեալ 'ի վերայ վիմին ք՟ի բուրէ զանուշահոտութ՟ի վարդապետութ՟ե։ Փայտն եղևնեայ՝ որ է անփուտ, և պահէ անապական՝ նշանակէ զյոյսն, որոյ առարկայն է անփուտ, և յոյս է՝ պահէ անապական։ Կարմիրն՝ որ կապիւր 'ի զոպայն ընդ եղևնեայ փայտի՝ նշանակէ զսէրն, որ միաւորէ 'ի մի։ Դարձեալ միջնաւ զոպայի նշանակի նշան կենարար խաչին. որով ցօղին 'ի մեզ շնորհք, և պարգևք

և այլ բարիք։

Սարգիս շնորհալի ('ի մեկն. ա. յոհ. Ե. 6. Հառ Է.) զայս բան վերածելով 'ի խորհուրդ մկրտութեան, և 'ի չարչարանս տեառն մերոյ գրէ այսպէս. *ընդէ՞ր
,, զոպայիւ (խնդրէ ցօղիլ.) վասն զի ջերմին է բոյսն
,, այն. և դարձեալ՝ զի խիտ է և ուռուցիկ. և ջուրն
,, զինչ յայտ առնէ՝ եթէ ոչ զսրբութ՟ի ջուրց աւազա-
,, նին. վասն էր և բուրդն կարմիր, քանզի և նա զա-
,, րիւն քաջ ժողովէ. և այսու յայտ առնէ զնոյն ջուր
,, և զնոյն արիւն, որ նշանակէն զմկրտութիւն նորա և
,, զչարչարանս. (ըստ որում ասէ)... սա է՝ որ եկն
,, ջրով և հոգւով և արեամբ ‖։

Զայս ամենայն հայելով դաւթի՝ աղաչէ և ասէ. ցօղեա՛ յիս միջնաւ զոպայի, և սուրբ եղէց. լուա՛ և քան զձիւն սպիտակացայց։ Զայս հայի և այն՝ զոր ասաց ա՟ծ բերանով եզեկիելի (լԶ. 25.) 'ի կամին սրբել զժողովուրդ իւր. *ցանեցից (ասէ) 'ի վերայ ձեր ջուր
,, սուրբ, և սրբեսջիք յամենայն պղծութեանց ձերոց ‖.

(զայսմանէ տես և 'ի համարն 11։)

Բայց աստ գիտելի է՝ զի ցօղումն որ լինէր 'ի հնումն միջնաւ զոպայի, ունէր զզօրութ՟ի մինչև 'ի ք՟ս. և յետ համբառնալոյն ք՟սի չօգտէր ինչ՝ բայց եթէ առ որս դեռ ևս չէր տարածեալ քարոզութիւն աւետարանին. և այս մինչև 'ի բարձումն տաճարի։ Իսկ 'ի բառնիլ այնր և 'ի կործանիլ 'ի տիտոսէ, որ եղև իբր 'ի 4780. ամ մեծի շրջանի աշխարհիս, ամենայն իրօք բարձաւ ևս և զօրութ՟ի այնր, և դարձաւ յարարողութ՟ի մոլար։ Նա զի և տառք ճշժէէ բառի 'ի մի գումարեալ առնեն 4780, որով ցուցանի, թէ այն արարողութ՟ի 'ի լրանալ այսչափ ամաց մեծի շրջանին ոչ ևս զօրէ. և 'ի տեղի այնր ունի զօրել միայն մկրտութ՟ին 'ի զօրութ՟է արեամն Քի. որոյ ցօղմանն փափաքէր դաւիթ, առ 'ի սրբիլ հոգւով. և զի սրբութեան հոգւոյն զհետ գայ և խաղաղութիւն խղճի մտաց, և այնր զհետ գայ ուրախութիւն սրտի, յայն հայելով դաւթի՝ պաղատի և ասէ։

Թ. Լսելի արա ինձ ցնծութիւն և ուրախութիւն. և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք։

Ուրախութի հոգւոյն թէպէտև զհետ գայ սրբութե, և է իբր նշան այնր, բայց կարէ լինել և պատրանք. որպէս պատահի երբեմն ոմանց՝ որք կարծելով՝ թէ սրբեալ իցեն 'ի մեղաց՝ սկսանին ուրախանալ և ցնծալ՝ պատրեալք 'ի մոլար ճանաչմանէ կամ 'ի գործոց ինչ. և այսպիսեաց նշան այն է՝ զի յայնպիսի ուրախութե պակասեալ գտանին 'ի ճշմարիտ խոնարհութե և 'ի կատարեալ սիրոյն այ, և ուրախութի նոցա ոչ է յայ, այլ յինքեանց. և ոչ հաստատի 'ի ճշմարիտ սրբութե, այլ յերևակայական մաքրութե։ Զայս գիտելով մարգարէին աղաչէ զած, զի նա հաղորդեսցէ ինքեան զճշմարիտն ուրախութի. վասն որոյ ասէ։

Լսելի արա ինձ ցնծութե և ուրախութիւն։ Այս լսելի առնելս է վկայել հոգւոյն սրբոյ 'ի ներքս 'ի սիրտ մարդոյ՝ թէ քաւեալ են մեղք իւր. և ինքն լեալ է որդեգրեալ այ շնորհօք՝ ըստ առաքելոյն պօղոսի (հռովմ. Ը. 16։) Զայսպիսի վկայութիւն հոգւոյն սրբոյ խնդրէ լսել՝ ոչ արտաքուստ, այլ 'ի ներքուստ. և այնու վկայութեամբ ցանկայ ժառանգել զցնծութի և զուրախութի 'ի հոգի իւր. սմին իրի ոչ ասէ տուր ինձ, այլ լսելի արա ինձ տէր. որպէս թէ ասէր. յետ լուանալոյ քո զիս 'ի մեղաց իմոց՝ ազդեա 'ի լսելիս հոգւոյ իմոյ զայնպիսի իմանալի ձայն՝ որ 'ի ներքս անդ յայտնելով զարթիլս իմ ծնանիցի յիս զցնծութի և զուրախութի։ Ուր քննել արժան է և զայս, զի փոխանակ ասելոյ լսելի արա ինձ զձայն ցնծութեան և ուրախութե, ասէ զցնծութի և զուրախութիւն. իսկ պատճառ այսպէս ասելոյն է այն զի ազդուութիւն ուրախութեն՝ զոր աստ խնդրէ, է նոյն իսկ ուրախ առնելն զհոգին, և ոչ թէ սոսկ լսելի առնելն կամ լսելն։ Եւ դարձեալ ինքն արդէն լուեալ էր զձայն ուրախութե բերանով նաթանայ. որով և խիղճ նորա ցուցանէր թէ թողան մեղք իւր ։ Ուստի ոչ զայն ձայն խնդրէ այժմ, այլ զուրախութիւն՝ որ զհետ գայր այնր ձայնի ։

Եւ թէպէտ այն ուրախութիւն հայելով 'ի վկայութիւնն ա̄յ՝ ինքնին հեռանէր, բայց ցաւ սրտի նորա զօր ունէր վասն արհամարհելոյ զա̄ծ՝ ոչ թողոյր ժառանգել ըզնոյն. վասն որոյ խնդրէ ունել զնոյն ուրախս, ոչ զի ինքն նովաւ զմայլեսցի, այլ զի նովին խրախ հաշտեսցէ ընդ իւր զա̄ծ ։ Եւ զի դեռ ևս զայն ոչ զգայր՝ որպէս ցանկայր, զտիւ և զգիշեր տառապէր և մաշէր, և զզովացումն այսպիսի տառապանաց գտանել խնդրէր. և այնմ ակն ունելով 'ի նոյն պաղատէր. սմին իրի յաւելու ևս ասել.

Եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք ։ Ոսկերք իմացեալ լինին աստ ներքին զօրութիւնք հոգւոյն. զի որպէս մարմինն 'ի ձեռն ոսկերաց հաստատեալ գործէ, սոյնպէս և հոգին 'ի ձեռն զօրութեանց իւրոց. (տես զայսմանէ 'ի սաղ. զ̄. 2, և իա̄. 14, և լ̄. 11, և լա̄. 3. տես և լէ̄. 4.)

Որդ 'ի բազում ցաւոց և 'ի սաստիկ տրտմութենէ ներքին զօրութիւնք հոգւոյն դաւթի տառապեալ էին, և խռովեալ. զի միտքն հոգւովք վարանէր, կամքն տարտափմամբ դողայր, երևակայութիւնն զարհուրելիս նկարէր, յիշողութիւնն դառնիս առաջի առնէր. սոյնպէս և այլ զօրութիւնք հոգւոյն, եթէ ճանաչողականք և եթէ բաղձողականք. և այս ներգործիւր 'ի նմա 'ի զօրութենէ երկիւղին ա̄յ ։

Եւ զի դաւիթ չէր բաւական ինքնին հանդարտացուցանել զցաւսն և սփոփել, սմին իրի խնդրէ յա̄յ՝ հաղորդել ինքեան զուրախութիւն և զցնծութիւն. զի 'ի գտանել նորա զայս՝ յայնժամ հնար լինէր անդորրանալ և այնոցիկ ներքին զօրութեանց ։ Զայս անդորրանալս կոչէ ցնծալ. զի ցնծութիւն է իւրաքանչիւր իրի գտանել զիւր լիալիր բարին, մանաւանդ զբարին իւրոյ խաղաղութեան. ուրեմն և 'ի գտանել ներքին զօրութեանց հոգւոյն զխաղաղութիւն իւրեանց՝ այնու իսկ համարեալ լինէին ցնծալ ։

Մարթ է աստ ոսկերօք իմանալ և զբուն ոսկերս մարմնոյ. զի նաև սոքին տկարացեալ էին 'ի դաւիթ. վասն զի 'ի տառապիլ ներքին զօրութեանց՝ տառապի և մարմինն, և թուլանան յօդուածք ոսկերաց. որպէս և փորձիւ իսկ տեսանեմք 'ի մեզ։ Իսկ 'ի ցնծալ հոգւոյն՝ սոքա ևս ցնծան, այսինքն զօրանան։

Արդ դաւիթ ոչ եթէ տիրապէս զզօրանալ ոսկերացն խնդրէ, այլ 'ի խնդրելն զզօրանալ նոցին՝ զտկարանալ նոցա առաջի դնելով՝ ցանկայ գտանել զայն յոր սրտի մտօք փափաքէր, 'ի բազում ցաւոց սրտի իմոյ ասէ թուլացան և տկարացան ոսկերք իմ. և ես կամ 'ի տուայտանս տագնապի. իցէ՞ արդեօք՝ զի այս ցաւս իմ փոխարկեսցի յուրախութիւն. իցէ՞ թէ փոխանակ մաշելոյ 'ի վարանմունս հոգոց, ցնծասցեն 'ի փրկութե՟ քում. իցէ՞ թէ իսպառ հաշտ տեսանելով զերեսս քո՝ խաղաղասցին ոսկերք իմ տառապեալք, և բերկրեսցին 'ի քեզ։

Սրբիմք փափաքէր դաւիթ հասանել և այնմ ցնծութեան ոսկերաց, որ լինելոց է 'ի յարութե՟. ըստ տեսլեանն եզեկիէլի. (Լէ. 1 = 10.) զի այս ցնծութի՟ն լրապէս եղիցի յայնժամ յոսկերս մեր փափկութե՟ հանդերձ. եթէ ներքին ոսկերք մեր ցնծացեալ իցեն աստ յա՟ծ 'ի ձեռն թողութե՟ մեղաց, կամ 'ի ձեռն հաշտութեան երեսացն ա՟յ։ Բայց քանզի յայլեայլ նշանաց տեսանէր դաւիթ՝ թէ ա՟ծ ոչ հաշտ ցուցանէ զերեսս իւր, այլ դեռ ևս հայի 'ի վերայ մեղաց նորա՝ ըստ որում վասն մեղաց նորին սպառնացեալ լինէին պատիժք և գուշակեալ լինէին չարիք հետ զհետէ հասանել, խանդաղատելով պաղատի առ նա և ասէ։

Ժ. Դարձո՛ զերեսս քո 'ի մեղաց իմոց. և զամենայն անօրէնութիւնս իմ ջնջեա՛ յինէն։

Երեսօք իմացեալ լինի աստ վրէժխնդրութիւնն ա՟յ, կամ բարկութի՟ն նորա. յոր միտս ոմանք զեբրայականն թարգմանեն բառիս ցասումն. յասելն. * դարձո՛ ըզ„ ցասումն քո 'ի մեղաց իմոց ‖։ Եւ ըստ այսմ դարձուցանելն ա՟յ զերեսս 'ի մեղաց՝ է դադարեցուցանել զբարկութի՟ իւր, և ոչ ևս պատժել զմեղս, որպէս թէ ոչ տեսանէր զայն, և կամ թէ մոռացեալ էր զնոյն։ Եւ զայս նմանութիւն դնէ հայելով յայն՝ զոր առնեն մարդիկ. վասն զի յորժամ դարձուցանէ մարդ զերեսս իւր յիմեքէ՝ ոչ տեսանէ զայն, և յորժամ ոչ յիշէ զիրն՝ համարի որպէս մոռացեալ. հանգոյն այսմ եւ յորժամ ած թողու զմեղս, և ոչ եւս պատժէ զնոյն, ասի դարձուցանել զերեսս ՚ի մեղաց. և յորժամ ոչ յիշէ այսինքն ոչ յանդիմանէ բարկութբ զմեղս ուրուք՝ համարի թէ մոռացեալ իցէ զնոյն. զայս ահա խնդրէ մարգարէն յասելն ։

Դարձո՛ զերեսս քո ՚ի մեղաց իմոց ։ Որպէս թէ ասէր. ես զրգռեցի զբարկութին քո ՚ի վերայ իմ. ես արարի՝ զի բարկութեամբ հայեսցիս յիս, ես եղէ պատճառ՝ զի որ քաղցր դէմս ցուցանէիր առ իս, այժմ զայրագին դէմս ցուցցես ինձ վասն մեղաց իմոց. այլ աղաչեմ դարձո՛ և դադարեցո՛ զբարկութին քո ՚ի խնդրելոյ զվրէժ մեղաց իմոց. մի հայիր ՚ի նոսա, մի տեսաներ զնոսա, մի յիշեր զնոսա. մի թուեր զնոսա՝ թէ որքան իցեն, մի քններ թէ որպիսի իցեն. մի կշռեր թէ որչափ ծանր իցեն. այլ մոռա՛ զնոսին ։

Մարթ է աստ երեսօք իմանալ և զքաղցրութին խնամոցն այ, կամ զգութ մարդասիրութե նորա. և ըստ այսմ կամի ասել. դարձո՛ զքաղցր հայեցուածս քո՝ մի յինէն, այլ ՚ի մեղաց իմոց. հայեա՛ց յիս, և մի ՚ի գարշութիւն մեղաց իմոց. զի մի ՚ի նոցունց տաղտկացեալ՝ յինէն եւս տաղտկասցիս ։

Այլ գիտելի է՝ զի որ դարձուցանէ զերեսս իւր յիրէ իմեքէ՝ թէպէտ և ոչ տեսանէ զիրն, բայց այնու ոչ բառնի իրն, այլ մնայ՝ որպէս և էրն. ուստի եթէ վերստին հայեսցի՝ դարձեալ զնոյն տեսանէ. և սակայն յորժամ զաստուծոյ ասի դարձուցանել զերեսս իւր ՚ի մեղաց՝ այնու դարձուցմամբ ըստ այսմ օրինակի խօսելով՝ բառնի և այն մեղք ։ Բայց քանզի այս նմանութիւն ըստ ինքեան առեալ՝ ոչ յայտնէ զայս բարձումն մեղաց, սմին իրի բացայայտակի զնոյն եւս պաղատի՝ ասելով ։

Եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա՛ յինէն ։ Այս այն է՝ զոր աստ յառաջնումն համարի. բայց աստ յաւելու և զբառդ ամենայն, առ ՚ի զառաւելն խնդրել. որպէս թէ ասէր. ՚ի դարձուցանել զերեսս քո ՚ի մեղաց և յանօրէնութեանց իմոց՝ մի թողուցուս յիս զնշխարանս ինչ նոցին. այլ զամենայն ըստ ամենայնի՝ քաւեսցես և ջնջեսցես, որ ըստ հոգւոյ, և որ ըստ մարմնոյ։ Եւ զի ած 'ի քաւելն զանօրէնութիւնս՝ հեղու զշնորհս սրբացուցիչս և նորոգուցիչս հոգւոյն, զայն ևս պաղատելով խնդրէ յաջորդ բանին ասելով։

ԺԱ. Սիրտ սուրբ հաստատեա յիս ած. և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։

Ի մեղանչել մարդոյ մահուչափ մեղօք երկու արատ յարին 'ի նա. մին է արատ չարութեան մեղաց 'ի հոգին, որով զրկի մարդն 'ի սրբարար շնորհաց, և մերժի յորդեգրութենէն այ և 'ի ժառանգութենէ արքայութեան, և 'ի հաղորդակցութենէ սրբոց և այլն, և անկանի ընդ իշխանութեամբ սկզբնաչարին, և պարտաւոր գտանի յաւիտենական պատժոց։ Երկրորդն է արատ տրամադրութեան. (որպէս ասացաք 'ի համարն 2.) վասն զի 'ի ներգործութենէ մեղաց՝ տպաւորի անկարգ տրամադրութիւն ինչ 'ի ներքին և յարտաքին կարողութիւնս, երբեմն սաստիկ և երբեմն նուազ. յիմացական մասին մթութիւն. 'ի բաղձողական մասին ցրտութիւն առ բարին. յանձնիշխանութեան թուլութիւն. 'ի զգայութեան ապստամբութիւն և պատրաստութիւն ինչ դիւրաւ յօժարելոյ առ նոյն մեղս. և եթէ կրկնեսցին մեղք, մանաւանդ մարմնականք, սաստկանայ այն պատրաստութիւն կամ այն դիւրութիւն, և դառնայ 'ի սովորութիւն, և սովորութիւնն դառնայ յերկրորդ բնութիւն, և 'ի բռնադատիչ հարկաւորութիւն։

Բայց 'ի քաւիլ մահուչափ մեղաց թէպէտ և բառնի առաջին արատն, բայց մնայ երկրորդն, ընդ նմին մնայ և պարտաւորութիւն ժամանակաւոր պատժոյ. իբր զի պարտաւորութիւնն յաւիտենական պատժոյն փոխի 'ի պարտաւորութիւն ժամանակաւոր պատժոյ. որպէս յայտնի տեսանի այս յապաշխարողս։ Յայսոսիկ հայելով մարգարէին ասաց 'ի վերոյ վասն առաջնոյն. * ցօղեա ,, յիս մշտկաւ, և սուրբ եղէց ||. և վասն երկրորդին. * լուա և քան զձիւն սպիտակ եղէց ||։ Իսկ աստ զառաջինն թողու և զերկրորդէն վերստին խօսի այլով իմն օրինակաւ յասելն։

Սիրտ սուրբ հաստատեա յիս ած. և հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում։ Յայս հայի և այն՝ զոր ասաց ած բերա-

նով եզեկիէլի. *Եւ տաց նոցա սիրտ այլ, և զոգի նոր
„ պարգևեցից նոցա. և հանից զսիրտն քարեղէն 'ի
„ մարմնոյ նոցա, և տաց նոցա զսիրտ մարմնեղէն ‖.
(Եզեկ. ժա̄. 19.) զոր և կրկնէ ('ի գլ. լզ̄. 25.) յաւելն. *տաց ձեզ զսիրտ նոր, և զոգի նոր նորոգեցից
„ 'ի ձեզ. և հանից զսիրտն քարեղէն 'ի մարմնոյ ձե-
„ րոց, և տաց ձեզ զսիրտ մարմնեղէն, և զոգի իմ տաց
„ ձեզ, և արարից՝ զի յարդարութիւնս իմ գնայցէք և
„ զիրաւունս իմ պահիցէք ‖:

Յայտնի բանս դաւթի և եզեկիէլի բառքդ սիրտ և հոգի կրկին հայեցուածս ունին. մի յայն՝ որ խնդրի. երկրորդ յայն՝ որոյ վասն խնդրի: Հայելով յայն որ խնդրի՝ սիրտն և հոգին ոչ գնին աստ նիւթապէս, կամ ըստ գոյացութեան փոխանակ գոյութեան սրտի և հոգւոյ, այլ տեսականապէս կամ ըստ հանգամանաց սրբութեան սրտի և ուղղութեան հոգւոյ. վասն զի 'ի մեղանչել մարդոյ ոչ բառնի գոյացութիւն սրտին և հոգւոյն, այլ սրբութիւն նոցա, և ուղղութիւն. վասն որոյ ոչ եթէ նոր գոյացութիւն սրտի և հոգւոյ խնդրէ, այլ նորոգութիւն սրբութեան սրտի և ուղղութեան հոգւոյ. և փոխանակ ասելոյ, հաստատեա 'ի սրտի իմում զսրբութիւն, և նորոգեա 'ի հոգի իմ զուղղութիւն, ասէ. *սիրտ
„ սուրբ հաստատեա յիս աստուած. և հոգի ուղիղ նորոգեա
„ 'ի փորի իմում ‖. և այս է ձև Ճարտասանական, որով անուն ընդունողին գնի փոխանակ անուան ընդունելոյն: Եւ զայս ձև 'ի գործ ածէ աստ մարգարէն առ 'ի սաստկացուցանել զնշանակութիւն բանից իւրոց, այսինքն առ 'ի ցուցանել՝ թէ ամենևին աղաւաղեալ իցէ սիրտն և կարօտի մեծի սրբութեան. սոյնպէս և թէ ամենևին թիւրեալ իցէ հոգին, և մեծի ուղղութեան կարօտի, որպէս թէ նորոգ ստեղծագործել պիտոյ զսիրտն և զհոգին:

Իսկ հայելով յայն՝ որոյ վասն խնդրի սրբութիւն և ուղղութիւն՝ բառքդ սիրտ և հոգի երրակի կարեն նշանակել յայս բան. մի՝ ըստ որոշ բանի իւրեանց. երկրորդ՝ ըստ փոխաբերական մտաց. և երրորդ՝ ըստ նմանութեան. զորոց հարկ է մեզ խօսիլ աստ փոքր մի երկար:

Ըստ առաջնոյն՝ սրտիւ նշանակի բուն սիրտն, այսինքն մարմնական կազմուածն այն, որ կայ 'ի ներքս ընդ

կրծողք, և է սկիզբն և աղբիւր ամենայն կենսական և կենդանական շարժմանց, և կայարան զգայական բաղձմանց՝ եթէ ցանկականին և եթէ ցասմնականին: Արդ 'ի մեղանչել մարդոյ թէպէտ և արատ չարութե մեղացն ոչ յարի 'ի սիրտն՝ այլ 'ի հոգին, բայց արատ տրամադրութեանն յարի յայն ըստ որում է կայարան բաղձմանց. և 'ի թողանիլ մեղաց որպէս ասացաք 'ի վերոյ՝ մնայ 'ի նմա այն տրամադրութիւն. և սակայն թէ սրբարար շնորհքն աճեսցէ 'ի հոգին, և կամ եթէ հեղցի 'ի նա ընդ սրբարար շնորհաց և առատութի պարգևաց հոգւոյն սրբոյ, և յատուկ նպաստ սրբութե որոյ, այն տրամադրութի ևս բառնի. յայս հայի ասելն: * Սիրտ սուրբ հաստատեա՛ յիս Ած ‖. որպէս թէ ասէր. արա զի 'ի ձեռն շնորհաց քոց սրբեսցի սիրտ իմ յարատոյ անտի անկարգ տրամադրութեան: Թուի թէ յայս միտս իմանայ և բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. ժզ.) յասելն. * դաւիթ հայցէ՝
„ թէ սիրտ սուրբ ստացի՛ր յիս Ած, որով զիւր գոյա-
„ ցեալ սիրտն յայլ իմն գեղեցկութի ստանալ խնդրէ յԱյ ‖. Իսկ հոգւով նշանակի բանական հոգին՝ որ է առաջին գոյացական և ներգործական սկիզբն մարդոյ. յոր և յարի արատ չարութե մեղաց, ընդ նմին և արատ տրամադրութեանն 'ի միտս և 'ի կամս ըստ ասելոյ մեր 'ի վերոյ, մինչև թիւրիլ նմա 'ի խորհիլն և 'ի կամիլն. և թէպէտ 'ի քաւել մեղացն այս տրամադրութի մասամբ իմն բառնի, բայց մասամբ իմն մնայ ըստ նշմարանաց ինչ. և սակայն որպէս զսրտէ ասացաք, սոյնպէս և զհոգւոյն է ասել՝ թէ 'ի յաճախել շնորհաց, և մանաւանդ 'ի հեղանիլ առատութե պարգևաց հոգւոյն սրբոյ՝ այն ևս բառնի. յայս հայի ասելն: Եւ հոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում: Այսինքն նորոգեա՛ յիս զայն ուղղութի՝ զոր մեղօք կորուսի 'ի հոգւոյս՝ որպէս թէ ամենևին ուղիղ հոգի ստեղծանէիր 'ի փորի իմում, այսինքն 'ի մարմնի իմում, կամ 'ի ներքս 'ի յիս. որպէս գնի յեբր", և 'ի քաղդ", և յասոր":

Ըստ երկրորդին՝ սրտիւ նշանակի կամքն ըստ ստորին մասին՝ որ հետևի յօժարութե զգայական բաղձմանց. Արդ 'ի մեղանչել մարդոյ՝ այս կամք ստանայ զայնպիսի տրամադրութիւն, որով յօժարի առ գարշութի մեղաց, և յետս կայ յայնմ ամէ՝ որ է ընդդէմ զգայութեն, և 'ի քաւիլ մեղացն այս տրամադրութի որպէս յայտ է 'ի նախադրելոցդ՝ ոչ սրբի՝ բայց եթէ յառաւելուլ շնորհաց և 'ի հեղանիլ յառուկ պարգևաց հոգւոյն ՚սբոյ։ Եւ ըստ այսմ 'ի դնել մարգարէին * սիրտ ,, սուրբ հաստատեա յիս Ած ‖. կամի ասել. սրբեա ըղկամս իմ յայնպիսի գարշ տրամադրութէ,

Իսկ հոգւով խնդացեալ լինի միտքն ըստ գործնականին կամ ըստ խղճի մտաց, որ 'ի մեղանչել մարդոյ տխրանայ և թմրի, մինչև թեթև չար համարիլ զայն՝ զոր յառաջն ծանր տեսանէր. ուստի և խնդրէ մարգարէն ուղղել զնոյն ասելով. * Եւ հոգի ուղիղ նո- ,, րոգեա 'ի փորի իմում ‖։ Կամի ասել. աղաչեմ նորոգեա 'ի ներքս 'ի յիս զգործնական ճանաչումն մտաց. զի ուղիղ ծանիցէ. կամ արա յիս զայս բարեբարութիւն՝ զի խիղճ մտաց իմոց՝ որպէս յառաջ քան զմեղանչելն ուղիղ տեսանէր, այնպէս և այժմ ուղիղ տեսցէ։

Ըստ երրորդին՝ բառքդ սիրտ և հոգի նշանակեն զբոլոր անձն մարդոյ ըստ զանազանութեան շնչաւորութեն և հոգևորութեան, այսինքն ըստ շնչաւոր և ըստ հոգևոր գործոց մարդոյ. ըստ շնչաւորին խնդրէ զսրբութիւն՝ յասելն. սիրտ սուրբ հաստատեա յիս Ած. որպէս թէ ասէր. զգոյ շնչաւոր մարդոյս և զգործս նորա սրբեա. և այնպէս արա որպէս թէ վերստին հաստէիր, այսինքն թէ միւսանգամ ստեղծէիր զնոյն յիս՝ սուրբ և անարատ։ Իսկ ըստ հոգևորին ասէ. Եւ հոգի ուղիղ նորոգեա 'ի փորի իմում. որպէս թէ ասէր. աղտեղեցի մեղօք իմովք զգոյ հոգևոր մարդոյս, և ապականեցի զգործս նորա. այլ դու շնորհօք քո նորոգեա զնոյն, և արա զի ուղիղ լիցի, որպէս յառաջն. և այն ուղղութի տպաւորեսցի 'ի խիղճ մտաց իմոց իբրև 'ի փորի։ Յայսմ իսկ ակնարկելով ասէ լուսաւորիչն մեր ('ի յաճախ. ճառ ի.) * է խնամով և 'ի փորին սրբութի ըստ ամենայնի. ,, որով ներքին մարդն նորոգի ‖. և դարձեալ ասէ անդ. * խնդութեամբ յուսոյն վերստեղծու (այսինքն ,, վերստեղծեալ լինի) մարդ 'ի զգաստութի առաքի- ,, նասէր վարուք. և շարժէ զամենայն անդամսն 'ի ,, վատթարացն 'ի լաւագոյնսն բարի խորհրդով ‖։

Յոր միտս ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. բ. պետ. գ. 11. Ճառ ղ.) պարտ է մեզ * սիրտ սուրբ ունել, ,, և վարս պարկեշտ, և հոգի ուղիղ նորոգել 'ի փորին ‖: Յայսպիսի սիրտ ախտք փտին. իսկ 'ի սիրտ աղտեղի բուսին: 'Ի ջուր յստակ որդնահարի փայտ, և փտի. իսկ 'ի ջուր պղտոր անփուտ մնայ և պնդի. զի 'ի յստակ ջուրս որդունք համարձակ տեղի գտանեն 'ի փայտն, և փայտն չունի պատսպարան, կամ ասացից՝ արտաքին կեղև, որ լինի 'ի պղտորութենէ. իսկ եթէ պղտոր իցէ ջուրն՝ պղտորութիւնն լինի իբր կեղև. որպէս և տեսանեմք, մանաւանդ 'ի զննելն ձեռօք: Ուրեմն և ախտն եթէ իցէ 'ի պղտորեալ սրտի՝ 'ի պղտորութենէ անտի պնդանայ, և որդունք խղճի մտաց չաղդեն 'ի նա. իսկ եթէ գտցի 'ի յստակ սրտի՝ բառնի և ջնջի:

Նայեցուք 'ի վերոյ՝ թէ զառաջինն թողու՝ և զերկրորդին խօսի. վասն զի այս բան՝ որպէս և 'ի նախագրելոցդ տեսանի՝ ոչ հայի 'ի քաւութիւն մեղաց, այլ 'ի ջնջումն այնց՝ որք մնան յետ քաւութեան մեղաց. կամ այսպէս ասացից, ոչ հայի 'ի բարձումն արատոյ չարութեան մեղաց, այլ 'ի ջնջումն տրամադրութեան մնացելոյ 'ի մեղաց ըստ նախակարգեալ մեկնութեանդ:

Եւ սակայն մարթ է երկրորդական մեկնութեամբ վերածել և 'ի ջնջումն չարութեան և ապականութեան մեղաց: Եւ եթէ այսպէս առցի, յայտ է 'ի դիմաց մարդկային բնութեան ասի այս բան՝ քան 'ի դիմաց դաւթի: Յոր միտս սոյն այս կարէ հայիլ և յայն, զոր ասաց դաւիթ ('ի Ծ. համարն) * անօրէնութեամբ յղացայ, և 'ի ,, մեղս ծնաւ զիս մայր իմ ‖: Եւ ըստ այսմ կամի ասել. անօրէնութեամբ յղանալով և 'ի մեղս ծնանելով, տեսանեմ զսիրտ իմ ապականեալ, և զհոգի իմ տգեղացեալ. մանաւանդ զի առաւել ես ես ինձէն իմովս յանցանօք կրկին աղտեղեցի. այլ դու որ հաստեցեր՝ այսինքն ստեղծեր զսիրտ իմ և զհոգի իմ, ցօղեա յիս զշնորհս քո, և լուա զիս, և արա զսիրտ իմ և զհոգի իմ իբրև զնորոգ հաստեալ և ստեղծեալ:

Եւ քանզի այսպիսի նորոգութիւն սրտի և հոգւոյ լինի հոգւով սրբով՝ այսինքն 'ի շնորհաց հոգւոյն սրբոյ, և 'ի բնակութենէ նորա 'ի հոգին, այնր իրի պաղատի մարզօրէն 'ի յաջորդ համարն առ հայր՝ չզրկել զինքն 'ի շնորհաց նորա եւ 'ի բնակութ՟է նորին՝ ասելով.

ԺԲ. Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. եւ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն.

Ի համարն 10. զբառդ երես՝ եդ փոխանակ բարկութեան կամ վրէժխնդրութեանն ա՟յ. իսկ աստ դնէ փոխանակ գթութ՟ե նորա կամ փոխանակ մանաւոր խնամոց նորին. եւս եւ փոխանակ ինքեան ա՟յ. յոր միտս ընկենուլն ա՟յ զոք յերեսաց իւրոց՝ նշանակէ բարկութեամբ 'ի բաց մերժել զնա յիւրմէ եւ 'ի խնամոց իւրոց. ըստ այնմ՝ զոր ասէ սուրբ գիրն վասն ազգին յուդայ * զի սրտմտութ՟ի տեառն էր 'ի վերայ երուսաղէմի „ եւ յուդայ, մինչեւ ընկեց զնոսա յերեսաց իւրոց ‖.
(Դ. Թագ. ԻԴ. 20.)

Արդ դաւիթ միանգամ հեռացեալ յա՟յ մեղօք, եւ վերստին մերձեալ առ նա ապաշխարութ՟բ, երկնչէր՝ թէ գուցէ վերստին հեռասցի. զի հայէր 'ի տկարութիւն բնութեան իւրոյ՝ զոր յայտ արար ('ի համարն 6.) եւ յայնմանէ կասկածէր՝ մի՛ արդեօք միւսանգամ գլորեսցի, եւ այնու մերժեսցի յա՟յ, եւ թողեալ 'ի նմանէ՝ անարժան գտցի գթութեան նորա. վասն որոյ աղերսելով խնդրէ, եւ ասէ.

Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց. Այսինքն մի՛ թողուցուս զիս միւսանգամ կործանիլ 'ի մեղս, եւ մի՛ վասն այնր մերժեսցես զիս 'ի խնամոց քոց եւ 'ի շնորհաց հոգւոյդ սբ՟յ, եւ 'ի տեսութ՟է երեսացդ. ապա թէ ոչ՝ զինչ օգուտ լինէր ինձ ցօղիլ 'ի շնորհացդ, եւ լուանիլ առաւել քան զձիւն, եւ կամ ունել հոգի ուղիղ, եւ՟ն. Այլ զի կործանումն մարդոյ 'ի մեղս՝ լինի 'ի հեռանալ շնորհաց հոգւոյն սրբոյ, աղաչէ մարգարէն՝ զի մի՛ հեռասցէ զայն յիւրմէ. սմին իբր ասէ.

Եւ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն. Կամ ո՟պ զնի այլուր. * Այլ զհոգի քո սուրբ մի՛ հաներ յինէն ‖. Հոգին սբ՟ բնակի 'ի հոգիս 'ի ձեռն սրբարար շնորհաց. որով լինի հոգին տաճար ա՟յ. զի ո՟պ 'ի ձեռն թափանցկութ՟է օդն լինի ընդունակ կամ բնակարան լուսոյ, սոյնպէս եւ 'ի ձեռն սրբարար շնորհաց հոգին լինի բնակարան կամ տաճար ա՟յ. բայց այսու տարբերութեամբ. զի 'ի ձեռն թափանցկուն օդն իբր յառաջնում ներգործութ՟ն լինի ընդունակ լուսոյ. իսկ 'ի ձեռն շնորհաց հոգին լինի ընդունակ ա՟յ յերկրորդում ներգործութ՟ն. իբր զի ընդ հեղանիլ սրբարար շնորհաց 'ի հոգին՝ 'ի նմին վայրկենի լինի անդ և հոգին սուրբ. և ընդ հեռանալ այնր շնորհաց՝ 'ի նմին վայրկենի հեռանայ և հոգին ս՟բ՝ ոչ ըստ բանի ներկայութեան, որով է յամենայնի, այլ ըստ բանի բնակութ՟ն։ Աստի և խնդրելն յա՟յ զի մի հանցէ զհոգին սուրբ 'ի մէնջ՝ է խնդրել զի մի հեռացուցէ զշնորհս իւր, և այնու նաև զհոգին սուրբ. և ահա այս է զոր ասէ. * Եւ զհոգի սուրբ քո մի հա„ներ յինէն ‖. որպէս թէ ասէր. աղաչեմ զքեզ մի հեռի առներ յինէն զշնորհս հոգւոյդ սրբոյ, ապա թէ ոչ՝ հեռի առնես և զհոգի քո ս՟բ։

Զայս խնդրէ դաւիթ, զի մի որպէս ասացաք, ըստ առաջնումն միւսանգամ զրկեսցի. վասն զի յորժամ ոչ էր ընդ նմա հոգին սուրբ՝ մեղաւ չարաչար. ապա խնդրէ՝ զի միշտ ընդ իւր իցէ զի մի ևս մեղիցէ։ Աստի ասէ յակոբ մծբնայ հայրապետ ('ի ճառն Է.) * եթէ հանապազ ընդ նմա էր (հոգին սուրբ) ոչ տայր „ նմա մեղանչել ընդ կնոջ ուրիայ. և (վասն այնորիկ) „ յորժամ կայր նա յաղօթս վասն մեղաց իւրոց, և „ խոստովան լինէր զյանցանս իւր առաջի ա՟յ, ասէ. „ զհոգի սուրբ քո մի հաներ յինէն ‖։

Այլ գիտելի է՝ զի ա՟ծ ոչ հեռի առնէ 'ի մարդոյ զհոգի իւր կամ զշնորհս հոգւոյն սրբոյ, եթէ ոչ մարդն հեռի արասցէ յիւրմէ զայն. կամ այսպէս ասացից. ոչ հեռանայ շնորհք հոգւոյն սրբոյ 'ի մարդոյ՝ եթէ ոչ հեռասցի մարդն 'ի շնորհաց։ Եւ թէպէտ մարդս ոչ հեռանայ 'ի շնորհաց՝ եթէ ոչ հեռասցի և շնորհքն 'ի մարդոյ, բայց պատճառ հեռանալոյ շնորհաց 'ի մարդոյն է նոյն ինքն մարդն. իսկ պատճառ հեռանալոյ մարդոյն 'ի շնորհաց ոչ է շնորհքն. զի շնորհքն ոչ զոք մերժէ յիւրմէ՝ եթէ ոչ մերժեսցի. ուստի և մերժել մարդոյ զշնորհս յառաջէ քան զմերժել շնորհաց ըզմարդն։ Սմին իրի պարտ է մեզ աղաչել զա՟ծ, զի մի թողլ տացէ մեզ մերժել զշնորհս իւր. որով և ինքն անարժան տեսեալ զմեզ այնմ՝ 'ի բաց առնուցու 'ի մէնջ զայն, և այնու հեռասցի 'ի մէնջ նաև բնակու-

թիւն հոգւոյն սրբոյ։ Որպէս եղեւ ադամայ, որ 'ի մերժել յիւրմէ զշնորհսն՝ մեկնեցաւ 'ի նմանէ նա ինքն հոգին սբ. և ոչ միայն 'ի նմանէ, այլև 'ի ծննդոց նորա. և որք ընկալանն զայն՝ յապագայ արդեանցն քի արժանացան այնմ. յորոյ ապացոյց նա ինքն քն յետ յարութեն փչմամբ ետ զնոյն. և տայ ամենայն մկրտելոց և ապաշխարողաց։ Յայս հայելով ասէ սարգիս շնորհալի ('ի մեկն. ա. պետ. դ. 14. Ճառ Ժ.) * ընկալան
„ նոքին (մկրտեալքն) դարձեալ զնոյն հոգի, որ հեռա-
„ ցեալ էր 'ի մեղաւորաց. նմին իրի 'ի յարութեան իւ-
„ րում փչեաց յառաքեալսն և ասաց, առէք զհոգին
„ սուրբ՝ զոր յանցաւորութն կորուսիք ||։

Ոմանք աստանօր հոգւով իմանան զհոգի մարգարէութեան՝ իբրև թէ սովաւ կամիցի խնդրել մարգարէն՝ զի մի 'ի պատիժ մեղաց իւրոց հանցէ ած զհոգին մարգարէութեան. և որք զայս ասեն, հաստատեն՝ թէ դաւիթ մեղօք իւրովք ոչ էր կորուսեալ զհոգի մարգարէութեանն. զի այս գոլով ձրիատուր շնորհք՝ կարէր լինել 'ի նմա, թէ և նա 'ի մեղս լինէր և զուրկ 'ի սըրբարար շնորհաց. վասն զի ձրիատուր շնորհք կարեն կալ 'ի մեղաւոր հոգիս եւս, որպիսի են շնորհք բժըշկութե, շնորհք մարգարէութե և այլն. որպէս յայտ է 'ի բաղաամ բէովրեանց. (թուոց իբ. 22. և 32. և բ. պետ. բ. 15։)

Արդ թէպէտ և ճշմարիտ է՝ թէ շնորհք մարգարէութեան կարէ կալ և 'ի մեղաւորս, բայց թէ արդեօք կայր և 'ի դաւիթ 'ի ժամանակի անդ մեղաց իւրոց՝ ոչ է յայտ. սակայն եղեալ եւս թէ կայր, ոչ երեւի հաւանական թէ նա աստ այսու բանիւ տխրապէս խնդրիցէ յայ՝ մի 'ի բաց հանել յիւրմէ զայն. զի բառդ [illegible]՝ զոր յաւելու 'ի վերայ հոգւոյն, նոյնպէս և բառդ քոյ՝ յաւէտ տան իմանալ զսրբարար շնորհս հոգւոյն ընդ նմին և զնոյն ինքն զհոգին սբ՝ քան զձրիատուր շնորհս, զի թէպէտ և ձրիատուր շնորհքն է այ և սբ, բայց ոչ սրբարար. իսկ դիտումն մարգարէին որպէս երեւի յընթացս սաղմոսիս՝ հայի 'ի պահպանութե այնր շնորհաց՝ որ է սրբարար. զի զայն խնդրէ ունել, և յայն վայելել, 'ի նոյն հաստատիլ, և նովին ցնծալ. և զայս յայտ առնէ 'ի յաջորդ համարն։

Յարմարական մեկնութի̃ այս քան հայի և 'ի բազմակեցութիւն մարդոյ յերեսացն ա̃յ 'ի յաւիտեան, յորում է էութի տանջանացն դժոխոց, քան զոր դառնագոյն ցաւ ոչ կարէ լինել և ոչ խոկ խոհնիլ. զայս մի ինչ կարեմ ասել. որչափ քաղցր է ա̃ծ, այնչափ դառն է այս բացամերժումն։ Յայսմանէ ես ապահովանաւ խնդրէ մարգարէն, և յապահովութե̃ անդ ցնծալ, որոյ իբր նախապարգև ձիր էր ցնծութի ազատուե̃ մեղացն. զոր 'ի մասնաւորի պաղատելով խնդրէ, և ասէ։

ԺԴ. Տուր ինձ ցնծութիւն փրկութեան. և հոգւով իշխանական քո հաստատեա́ զիս։

Այս այն է՝ զոր եդ 'ի վերոյ. զի որպէս անդ յետ ասելոյ ('ի համարն 8.) * ցօղեա́ յիս մշտակաւ. և սուրբ
„ եղէց. լուա́ և քան զձիւն սպիտակ եղէց ‖. հետևեցոյց. ('ի համարն 9.) * լսելի արա́ ինձ զցնծութիւն և
„ զուրախութի, և ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք ‖, սոյնպէս և աստ յետ ասելոյ * մի ընկենուր զիս տէր
„ յերեսաց քոց, և զհոգի քո ս̃բ մի հաներ յինէն ‖.
հետևեցուցանէ և ասէ։

Տուր ինձ ցնծութիւն փրկութեան։ Ցնծութի փրկութե̃ է ուրախութի հոգւոյն վասն գտանելոյ զփրկութի՝ այսինքն զազատութիւն 'ի մեղաց, կամ վասն փրկեալ լինելոյ շնորհօքն ա̃յ 'ի գարշութենէ մեղաց, և 'ի տանջանաց խղճի մտաց. որով պաշարեալ կայր դաւիթ 'ի սուգ մեծ։ Զայս ուրախութիւն ասէ տուր ինձ. որպէս թէ ասէր. փրկելով զիս 'ի դառնութե̃ մեղաց՝ ուրախացո́ զհոգի իմ. կամ քաւելով զիս 'ի յանցանաց՝ շնորհեա́ ինձ զցնծութի̃ն զայն՝ զոր ունէի նախ քան զմեղանչելս։ Այս կարէ հայիլ և 'ի փրկութիւնն յայն զոր արդէն եգիտ. և ըստ այսմ 'ի յորէնն զկնի զայս բան՝ տուր ինձ ցնծութի փրկութե̃, ասել կամի. որպէս ետուր ինձ փրկութիւն մեղաց, սոյնպէս տուր և զհետևեալն փրկութեանն՝ զցնծութի հոգւոյ։ Բայց կասկածելով ես՝ թէ գուցէ վրիպակ ինչ պատահեալ կորուսցէ զայն փրկութիւն, ընդ նմին և զցնծութիւն սրտին՝ աղաչէ և ասէ։

Եւ հոգւով իշխանական քո հաստատեա́ զիս։ Ի համարն 11. խնդրեաց նորոգել յիմքեան հոգի ուղիղ. և 'ի համարն 12. խնդրեաց մի հանել յուրմէ զհոգի սուրբ. (զորոց տես 'ի վերոյ)։ Իսկ աստ խնդրէ հաստատել զինքն հոգւով պետութեան. որով իմանայ զհոգին սուրբ, և զայն կոչէ հոգի պետութեան կամ տէրութեան. զի է ամենազօր հոգի տիրող ամենայնի ինքնիշխան պետութեամբ. Նոյն հոգւովդ ասէ հաստատեա զիս 'ի բարին, այսինքն արա զի մի հեռասցի երբէք յինէն հոգիդ սուրբ, այլ միշտ մնասցէ ընդ իս, և իշխանութիւն պետութեան իւրոյ հաստատուն պահեսցէ զիս 'ի շնորհս իւր. կամ թէ արա զի հոգի քոյ 'ոք բնակելով յիս՝ նա ինքն որ է տիրող ամենայնի՝ տիրեսցէ ամենայն շարժմանց հոգւոյ իմոյ, և ինքն իւրով շնորհօք լիցի պետ հոգւոյս՝ այսինքն տիրապետող ըստ ամենայն զօրութեանց և ըստ ամենայն շարժութեանց հոգւոյ և մարմնոյ իմոյ. որով և մնասցից միշտ հաստատուն 'ի բարին։

Մարթ է աստ բառիւդ հոգի՝ իմանալ զզօրութիւն տէրութեանն Աստուծոյ. ըստ որում բառդ հոգի՝ բազում ուրեք 'ի սուրբ գիրս դնի փոխանակ զօրութեան. որպէս յասելն, հոգի երկիւղի, կամ հոգի մարգարէութեան և այլն. և այսպիսի զօրութիւնք կոչին հոգի՝ ըստ որում 'ի հոգւոյն սրբոյ են, և իբր ողի հաղորդին. յայս միտս առեալ զբառդ հոգի՝ կամի ասել. զօրութեամբ տէրութեան քոյ՝ որով 'ի ձեռին ունիս զամենայն, ամրացո զիս, և պահեա 'ի շնորհս քոյ, և հաստատեա 'ի բարին։ Ուստի թէ յայս միտս առեալ լինի 'ի շարականի այս բան յասելն * և հոգ-
,, ւով տէրութեանդ քո հաստատեա զիս ||. որպէս դնի և 'ի մեկն". լամբ։

Երկրորդական մեկնութիւն. հնար է հոգւով պետութեան իմանալ աստ զհոգի իշխողական, կամ զհոգի թագաւորական իշխանութեան, յոր օծաւ դաւիթ։ Յայս միտս իմանան ոմանք 'ի հարց զայս բան. ընդ որս և դաւիթ անյաղթ. որ ('ի յառաջաբ. սաղ.) յառաջ բերեալ զայն՝ այլով իմն շարադրութեամբ ընթեռնու. և գրէ այսպէս. * հատո ինձ ցնծութիւն փրկութեան քով, և
,, հոգւով պետութեամբ քով հաստատեա զիս. որով ու-
,, սուցից անօրինաց զճանապարհս քո։ Պետութեան հոգի
,, յայտնապէս զթագաւորութեան կոչէ ||։ Ծայր պետութեան նորոգութիւն խնդրէ աստ՝ առ համարձակ կառավարելոյ զժողովուրդ իւր՝ ըստ որում 'ի մեղաց ան-

տի՛ զոր մեղաւ, նուաճեալ տեսանէր զինքն և իբր ամօթապարտեալ առաջի ժողովրդեան. և ոչ երևէր 'ի նմա այն վեհանձնական հոգի. և ոչ իսկ համարձակէր ըստ իւրումն սովորութե̃ տիրաբար առ բարին յորդորել զժողովուրդ իւր և 'ի չարէն խոտորեցուցանել. զի կարէր յանդիմանեալ լինել 'ի նոյանէ վասն մեղաց իւրոց. իսկ 'ի գտանել յա̃յ զհոգի այնր թագաւորական վեհանձնութեան և զօրութե̃, կարէր ուղիղ կառավարել և աներկիւղ պատմել զբան տեառն՝ և ճանապարհ փրկութեան ցուցանել մեղուցելոց՝ օրինակաւ անձին իւրոյ։ Այս մեկնութիւն թէպէտև երկրորդական համարի, բայց որպէս տեսանի 'ի բանն դաւթի անյաղթելին հայելով 'ի յաջորդ համարն, համեմատութ̃բ առաջնոյն՝ ըստ պատշաճի առաջի դնի. քանզի յայսպիսի հոգի ապաւինելով վստահի ասել։

ժդ. Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին։

Աւասիկ սովին այսու առաջի դնէ մարգարէն զպտուղ ապաշխարութե̃ իւրոյ, որով և ցուցանէ զճշմարտութի̃ նորին. 'ի վերոյ եդ զներքին պտուղն, իսկ աստ զարտաքինն 'ի մէջ մատուցանէ։ Առ որոյ տեղեկութիւն ծանիր, զի պտուղ ապաշխարութե̃ է կրկին. մի՛ հայելով յանձն ապաշխարողին, և մի ևս՝ հայելով առ այլս. ըստ առաջնոյն պտուղ ապաշխարութե̃ է հանապազորդութի̃ ապաշխարութե̃՝ այսինքն է հանապազ լալ ըզգործեալ մեղս, և խնդրել զթողութի̃ յա̃յ. հանապազ զգուշանալ յո՛ և իցէ առթից մեղաց, և 'ի խոնարհութե̃ ունել զանձն, և այլն. ևս և ճնշմամբ և տքնութ̃բ նուաճել զմարմինն, հեռանալ յաւելորդ բերկրութե̃ց և փափկութե̃ց, համբերել ո՛ և իցէ ձախորդութե̃ց՝ արժանի համարելով զինքն այլ ևս մեծագոյն պատժոց. զայսցանէ ըստ մասին խօսեցաւ դաւիթ 'ի վերոյ, և ըստ մասին յայլ սաղմոս։

Ըստ երկրորդին պտուղ ապաշխարութե̃ է՝ ցուցանել առ այլս զգործս բարիս ըստ հոգևորին և ըստ մարմնաւորին, զորս և եցոյց դաւիթ 'ի բազումս. բայց քանզի 'ի մէջ այսպիսի բարի գործոց գերագոյն է դարձուցանելն զմեղաւորս առ ա̃ծ, և է զրեթէ իբր յատուկ պտուղ այնր, որպէս երևի 'ի վերս երևելի ապաշխարողաց. զոյն զայս առաջի դնէ աստ, և ասէ։

Ուսուցից անօրինաց զճանապարհս քո. և ամբարիշտք առ քեզ դարձցին։ Ճանապարհաւ այ խնդրեալ լինի աստ ողորմութիւն նորա և արդարութիւն նորին, զորս և ետես դաւիթ յանձին իւրում. զի զմին ետես 'ի քաւելն այ խնկոյն զայնպիսի մեծագոյն մեղս իւր. զմիւսն ևս ետես 'ի պատժելն այ ծանր ծանր պատուհասիւք ըղմեղան զայնոսիկ. (զորս և թուեցաք 'ի սաղ. լա. և լէ.) Զայնոսիկ ճանապարհս ողորմութեան և արդարութեան քո ասէ՝ զորս տեսի՝ ուսուցից անօրինաց, որ է ասել. պատմեցից և յայտնեցից անօրինաց, թէ քանի ողորմած ես 'ի թողուլ մարդկան զմեղս նոցա, և քանի արդար ես 'ի պատժել զմեղս նոցին. և 'ի յայտնելս իմ զայսոսիկ՝ լուեալ յինէն ամբարշտաց, ևս և տեսեալ յիս զսոսին՝ յուսասցին յողորմութիւն քո, և երկիցեն յարդարութենէ քումմէ. և այնու դարձցին առ քեզ։

Այլ գիտելի է՝ զի աստանօր բառդ ամբարիշտք՝ դնի 'ի տեղի այնր բառի՝ որոյ փոխան եդ յառաջնում հատուածի զբառդ անօրէնք. զի երկոքեան ևս աստ զնոյն նշանակեն. և վասն ոտանաւոր գոլոյ բանին՝ կրկնին։ Նայց հնար է ևս ասել, թէ անօրէնօք իմանայ զօրինազանցսն՝ որք էին յիսրայէլէ. իսկ ամբարշտօք զկռապաշտս. ըստ որոյ ասէ սարգիս շնորհալի. ('ի մեկն. յուդ. համար 15. Ճառ. բ.) * ամբարիշտս թէպէտ և զամե-
,, նայն մեղաւորս ասէ, սակայն ևս առաւել զկռապաշտ-
,, ըսն՝ ամբարիշտս կոչէ. որ 'ի տէր ած իւրեանց ամ-
,, բարշտեցան, և զպատիւ նորա և զպաշտօն՝ պղծոց
,, դիւացն մատուցին. որ արդարև ամբարիշտք են ||։

Հաւանականագոյն ևս է ասել ըստ բարոյական տեսութեան, թէ անօրէնօք իմանայ զայնպիսի մեղաւորս՝ որք անկեալ են 'ի մեծամեծ անօրէնութիւնս, և գոլով 'ի տարակուսի՝ թէ գտանիցեն արդեօք յայ զողորմութիւն՝ ոչ յօժարին դառնալ։ Իսկ ամբարշտօք իմանայ զայնպիսի մեղաւորս, որք հաստատեալ գոլով 'ի չարիս՝ թէ և գիտեն թէ ած դիւրաւ թողու զմեղս, աստ ինքեանք ախորժելով կալ 'ի նոսին՝ ոչ կամին դառնալ ։ Ըստ այսմ զանազանութե՟ ուսուցանել դաւթի զճանապարհ ողորմութե՟ն ա՟յ հայի առ առաջինսն . իսկ ուսուցանել նորա զճանապարհ արդարութե՟ն ա՟յ հայի առ յետինսն . զի նոքա յողորմութենէն ա՟յ քաջալերեալ, և սոքա յարդարութենէն նորա զարհուրեալ՝ դարձցին առ նա ։

Մարթ է աստ ճանապարհաւ ա՟յ իմանալ զօրէնս նորա, ընդ նմին և զխոստմունս նորին, և զգործս խնամոցն զորս ցուցանէ առ արդարս և առ մեղաւորս ։ Զայս ամենայն ասէ ուսուցից այնոցիկ՝ որք ոչ բարւոք գիտելով զսոսին՝ զհետ լեալ են անօրէնութե՟ . և կամ կամովին 'ի բաց թողլով զսոսին՝ յամբարշտութե՟ կեան . այլ ես յուսուցանել իմ ասէ զայսոսիկ՝ ակն ունիմ թէ դարձցին նոքա առ քեզ ։ Եւ որպէս ես 'ի դառնալ իմում առ քեզ գտի զքեզ, նոյնպէս և նոքա գտցեն և օրհնեսցեն զքեզ ։

Սոքիմք խոստանայ ես մարգարէն յընդունելն յա՟յ զողորմութի՟՝ ոչ գտանիլ ապերախտ առ նա՝ և մոռացօղ, այլ շնորհակալու լինելով այնմ առ ամենեսին հռչակել զնոյն, ոչ միայն առ 'ի շահիլ զնոսա, այլ և առ 'ի փառաւորել նոքօք զբարերարութիւն ա՟յ ։ Զայս խոստումն իւր կատարեաց մարգարէն նաև 'ի սաղմոսս իւր և առաւել ևս 'ի սմին . զի զորս ուսոյց բերանով, զնոյն և 'ի ձեռն սաղմոսաց իւրոց ուսուցանէ և հռչակէ առ ամենեսին մինչև 'ի կատարած աշխարհի, մեծացուցանելով զողորմութիւնն ա՟յ և զարդարութիւն նորա . որով և լինի բազմաց պատճառ և յորդորիչ դառնալոյ առ ա՟ծ ։

Լամբ''. 'ի հրամայականն դնէ զբայդ ուսուցանել, յասէն, * ուս՛ անօրինաց զճանապարհ քո‖. և մեկնէ այսպէս . * երկուցեալ (դաւթի) զի մի յուսուցանելն
„ իւր խոտեսցի ինչ յոչ հաճոյից ա՟յ, ասէ՝ թէ դու
„ ուս՛ 'ի ձեռն իմ զանօրէնսն բանիւ վարդապետու-
„ թեան‖, ե՟ն ։ Այլ այս բացատրութիւն կողմնակի հայի 'ի բանդ . որովհետև յայլս ամենեսին յառաջին դէմն և յապառնին դնի ըստ մերումս ։

Յայս վայր խնդրեաց մարգարէն յա՟յ զթողութի՟ մեղաց իւրոց, և զայն ես՝ որ զհետ գայ թողութե՟ մեղաց ։ Ասաց ես 'ի վերոյ ('ի համարն Ե.) թէ * մեղք իմ

„ առաջի իմ են յամենայն ժամ||. բայց ոչ եցոյց 'ի մանաւորի՝ թէ որ էր այն մեղք իւր, այլ 'ի հասարակի եդ. ապա այժմ 'ի մանաւորի առաջի դնէ զայն միայն՝ որ ծանրագոյն էր. և խնդրէ զքաւութի՟ այնր՝ ասելով.

ԺԵ. **Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ, ա՟ծ փրկութեան իմոյ. ցնծասցէ լեզու իմ յարդարութիւն քո.**

Որպէս բազում անգամ ասացաք, թէպէտ և գիտէր դաւիթ, թէ եթող նմա ա՟ծ ողորմութբ՟ իւրով զմեղս շնութեան և մարդասպանութե՟. բայց գիտէր ևս զի հեղումն ո՛ և իցէ անպարտ արեան բողոքէ յերկինս առ արդարութիւնն ա՟յ, որպիսի էր և արիւնն ուրիայ՝ որ գրեթէ աղաղակէր առ ա՟ծ՝ ասելով. լուր տէր, և դատ արա ընդ իս և ընդ դաւիթ, զի յափշտակեաց դա ընկինն իմ, և առ 'ի խոր ունիլ զնա՝ անողորմութեամբ եհեղ զարիւն իմ. այլ եթէ դու տէր համբերեսցես թողուլ դմա ողորմութեամբ քով, բողոքեմ, արդարութի՟ խնդրել 'ի դմանէ զվրէժ արեան իմոյ. Զայս ձայն աղաղակի հանապազ լսէր դաւիթ 'ի ներքս 'ի հոգի իւր. քանզի գիտէր զոր գործեաց. լսէր և զգոչումն արեան հաբէլի ըստ վկայելոյն ա՟յ՝ յասելն ցկայէն * գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ||. (ծնն. դ. 10.) Զայս գոչումն արեանն հաբէլի ընդ գոչման արեանն ուրիայ 'ի միասին լսելով դաւիթ՝ սարսափէր յանձն իւր. և չէր նմա հանգիստ 'ի քուն լինել յայսմ ձայնէ. և զի ոչ գտանէր զայլ հնարս ազատելոյ աստի, դիմէր բողոքովն առ ա՟ծ իբր առ տէր ուրիայ և իբր առ տէր փրկութե՟ իւրոյ՝ ասելով.

Փրկեա՛ զիս յարենէ ա՟ծ, ա՟ծ փրկութեան իմոյ. Արեամբ իմացեալ լինի աստ պարտաւորութի՟ն արեան կամ վրէժխնդրութի՟ նորին. որպէս յասել պիղատոսի * քաւեալ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ||. (մատ. իէ. 24.) Իմացեալ լինի ասել՝ քաւեալ եմ ես 'ի պարտաւորութե՟ արեան դորա. Այնպէս և յասելն ա՟յ * արիւն հա-
„ լածեսցէ զքեզ||. (եզեկ. լե. 6.) Կամի ասել. վրէժխնդրութիւն արեան լիցի պատճառ հալածելոյ զքեզ. և յասելն դարձեալ. * խնդրեսցից զարիւն նոցա, և
„ ոչ արդարիցի անպարտ||. (յովել. դ. 21.) Կամի ասել.

հատուցից զվրէժ արեան նոցա ։

Ըստ այսմ մնաց գնի և ըստ բառդ **արեան**՝ յասելն․ փրկեա զիս յարենէ․ որպէս թէ ասէր․ ազատեա զիս ՚ի պարտաւորութենէ արեանն ուրիշ․ յոր միտս ՚ի քաղդ"․ գնի *ազատեա զիս ՚ի դատաստանէ մարդասպանութ՟ե‖ ։ Եւ զի ցուցցէ թէ իրաւամբ կարէ առնել զայս ա՟ծ՝ յաւելու զբառդ **ա՟ծ, ա՟ծ փրկութ՟ե իմոյ**․ ուր յառաջնումն ա՟ծ ասելով՝ իմանայ զա՟ծ իբր տէր ուրիշ և տէր ամենայնի ։ Իսկ յերկրորդումն զնոյն կրկնելով, այսինքն դարձեալ ա՟ծ ասելով՝ իմանայ իբր տէր փրկելոյ զինքն, ըստ որում գնէ ա՟ծ փրկութ՟ե իմոյ, որպէս թէ ասէր․ կարող ես փրկել զիս ՚ի պարտաւորութ՟է արեանն ուրիշ՝ ոչ միայն ողորմութ՟բ, այլ և արդարութ՟բ․ վասն զի դու գոլով ա՟ծ նորա և ա՟ծ իմ, ՚ի ձեռին ունիս զիրաւունս նորա, և զիրաւունս փրկելոյ զիս․ ուրեմն առանց եղծման իրաւանց նորա, և առանց վնասու արդարութ՟ե կարես փրկել և ազատել զիս ՚ի պարտաւորութ՟է արեան նորա ։

Այլ այս որոշումն զոր եդաք վասն բառիդ **ա՟ծ**՝ մտածի ըստ յարմարութեան․ իսկ ըստ ինքեան առեալ հայի յինքնիշխան տէրութիւն ա՟յ ՚ի փրկել ՚ի պարտաւորութ՟է վրիժու արեան․ յոր միտս կամի ասել, դու ինքն որ տիրես ամենայնի, և ՚ի ձեռին ունիս զիրաւունս ամենեցուն՝ նախկին ամենազօր իշխանութեամբդ բարձ յինէն զվրէժխնդրութիւն արեանն ուրիշ, կամ դադարեցո զբողոքումն արեան նորա ։

Ոմանք աստանօր զայս մաղթանս դաւթի վերածեն յազատութ՟ի ՚ի բազում արիւնհեղութ՟եց, զորս գուշակեաց նաթան․ զի յասել նորա ցդաւիթ *մի հեռասցի սուր ՚ի տանէ քումմէ մինչև յաւիտեան‖․ (բ՟․ թագ․ ժբ՟․ 10․) այսու գիտաց դաւիթ թէ պատճառաւ մեղաց իւրոց բազում հեղմունք արեանց լինելոց են․ վասն որոյ այսու բանիւ խնդրէ ասեն փրկել զինքն յայնցանէ ։ Այս մեկնութիւն ևս է ընտիր․ բայց առաջինն երևի լինել հարազատագոյն ։ Ոմանք բառիւս **արեան** իմանան ըստ սոսկ զմեղս․ որպէս թէ եղեալ էր․ փրկեա զիս ա՟ծ ՚ի բազում մեղաց իմոց․ այլ այս մեկնութ՟ի հեռի ՚ի ձև փոխանունութ՟ե ։

Իամբ"․ արեամբ իմանայ ըստ զկորուստ հոգւոյ՝ հայե-

լով 'ի նախընթաց համարն. իբր թէ յոչ ուսուցանել նոցա անօրինաց ըստ արժանւոյն զճանապարհն ա՟յ՝ կորիցեն նոքա, և զարիւն նոցա 'ի ձեռաց դաւթի խնդրեսցէ ա՟ծ՝ ըստ ասելոյ նորա առ եզեկիել. (լգ. 7.)
* դէտ ետու զքեզ տանդ իսրայելի . . . զարիւն նորա 'ի
ձեռաց քոց խնդրեցից‖.

Այլք յայլ իմն խորհրդական միտս վերածեն զայս բան. իբրզի որովհետև ամենայն որ մեղանչէ պարտապան լինի արեան քի՟ իբրև զմի 'ի խաչահանուաց, աղաչէ մարգարէն՝ զի փրկեսցի 'ի պարտապանութ՟է անտի. Այսոքիկ մեկնութիւնք չեն խոտելի. բայց դիտումն մարգարէին յայն հայի՝ զի ազատեսցի 'ի պարտաւորութ՟է բողոքման արեանն ուրիայ. և կամի ևս ցուցանել՝ թէ զայս ազատութիւն կարէր առնել ա՟ծ արդարութ՟բ, այսինքն առանց վնասու արդարութեան կամ առանց վնասելոյ իրաւանցն ուրիայ. և 'ի լինել այսր՝ ունէր յայնժամ դաւիթ մխիթարիլ, և այնու ցնծալ առ ա՟ծ՝ ոչ միայն իբրև առ այն՝ որ արար զողորմութիւն, այլ և իբրև առ այն՝ որ արդարացոյց զինքն 'ի պարտաւորութ՟է այնր արեան. սմին իրի յարէ զկնի
և ասէ.

Ցնծասցէ լեզու իմ յարդարութիւն քում. Ցնծալ լեզուի է զեղուլ նորա զբանս ցնծալիս 'ի լիութ՟է ցնծութեան հոգւոյն. իսկ բառդ արդարութիւն՝ դնի աստ ներգործաբար փոխանակ արդարացուցանելոյ. յոր միտս կամի ասել. եթէ արդարացուսցես զիս 'ի պարտաւորութ՟է անտի արեանն ուրիայ և այլոց, ցնծասցէ սիրտ իմ, և 'ի ցնծութենէ անտի խօսեսցի լեզու իմ զբանս ցնծութեան, օրհնութ՟ե և գոհութ՟ե. կամ թէ ցնծութ՟բ խօսեսցի զայնպիսի բանս, որք ցուցցեն և յայտնեսցեն զարդարութ՟ի քո և զգաղտնիս խորհրդոց քոց, որպիսի են բանք մարգարէութ՟ե.

Արդարութ՟բ իմանան ոմանք աստ զողորմութիւնն ա՟յ. ըստ որում 'ի սուրբ գիրս ուրեք ուրեք բառդ արդարութիւն դնի փոխանակ ողորմութ՟ե. Այս մեկնութ՟ի ևս թէպէտ ուղիղ է, բայց ոչ այնչափ համաձայն ներքին մտաց
բանին ըստ նախակարգեալ մեկնութ՟եդ.

Արժան է արդարութեամբ իմանալ աստ և զարդարացուցանելն քի՟ փրկչին մերոյ զազգ մարդկան 'ի դատապարտութենէ անիծիցն , մանաւանդ զի յայնմ արդարութենէ նորա լինէր արդարանալ 'ի հնումն յն և իցէ մեղաց . և ըստ այսմ բառդ փրկութեան՝ որ դնի 'ի նախընթաց հատուածն , առեալ լինի իբր 'ի թարգմանչաց փոխանակ բառիդ փրկիչ , որպէս թէ ասէր . փրկեա և արդարացո զիս ա͞ծ ա͞ծ փրկիչ իմ . և ես ցնծացայց յայդմ փրկութե͞ն և արդարութե͞ն . և լեզու իմ օրհնեսցէ զքեզ , կամ ըստ եբրայականին՝ երգեսցէ զարդարութի͞ն քո և հռչակեսցէ զնոյն . Եւ զայս պայմանաւ իմն ես խնդրէ . և ասէ .

ժԴ. Տէր եթէ զշրթունս իմ բանաս՝ բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո .

Վարանմունք և տարակուսանք 'ի միտս , երկիւղ և տրտմութիւն 'ի կամս՝ փակեն զշրթունս մարդոյ , և ոչ թողուն զուրախալիս բարբառել , կամ վայելուչ նուագել . Արդ որպէս յայտ է 'ի վերագոյն գրելոցդ , և 'ի բանից լէ սաղմոսին , թէպէտ և գիտաց դաւիթ թէ եթող նմա ա͞ծ , բայց վարանմունք մնաց նորա և երկիւղ տրտմախառն պաշարեալ էին զնա , և գրեթէ կապեալ ունէին զսիրտ նորա , և փակէին զբերան նորին յերգս օրհնութե͞ն .

Վարանմունք մնաց նորա պարունակիւր յայս բան , զիարդ , 'ի խորհիլ նորա 'ի միտս և յասել , զիարդ եղև՝ զի այսպէս ապերախտ գտայ իմում այնպիսի բարերարի . զիարդ այսպէս յիմարեցայ և զայնչափ քաղցրութիւն նորա դառնացուցի . զիարդ այսպէս տմարդի երևեցայ առ այնչափ մարդասիրութիւն նորա . զիարդ իբրև գազան պատառօղ՝ անողորմ գտայ առ ընկերն իմ , և չարաչար 'ի մահ մատնեցի զնա . Իցէ արդեօք զի ջնջեսցի առաջի ա͞յ յիշատակ այսր ամենայնի . իցէ թէ լինիցի ինձ երևիլ առաջի ա͞յ իբր այնպիսի՝ որպիսի յառաջն էի . իցէ թէ տեսից զիս ամենևին ազատ յայսմ ամենայնէ .

Տրտմութիւն միանգամայն և երկիւղ յայսպիսի վարանմանց տպաւորիւր 'ի կամս նորա . տրտմութի͞ն վասն լինելոյն , և երկիւղ վասն լինելեաց . Եւ յայսմանէ բառնիւր 'ի նմանէ վստահութի͞ն համարձակելոյ յերգս օրհնութեան առաջի ա͞յ . զի որչափ յոյս նորա մեծ էր և հաստատուն, այնչափ մեծ էր ընդ հակառակն՝ և կիրք նորա՝ որով տառապէր, այսինքն է կիրք երկիւղի և տրտմութեան, յորմէ և տիրէր նմա այնպիսի պատկառանք՝ որ գրեթէ որպէս սասացաք՝ փակէր զշրթունս նորա. ամէն իբր չկարացեալ ասել զոր կամէր, ասէ զոր կարէ.

Տէր եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո ։ Որպէս թէ ասէր. մեղք իմ փակեցին զբերան իմ. վարանմունք մտացս աղխեցին զշրթունս իմ, տրտմութիւն և երկիւղ կալան զլեզու իմ. և ահա կամ առաջի քո պատկառեալ և պապանձեալ ։ Եթէ դու ինքն բանաս զաղխեալ շրթունս իմ, բղխեսցէ բերան իմ զօրհնութիւնս քո. այսինքն եթէ տացես ինձ վստահութ՟ի կատարելապէս թողլով զամենայն զմեղս իմ, և ըստ ամենայնի քաւելով զամենայն զոր արարի, ամենեւին հաշտ ցուցանելով զդէմս քո՝ զոր դառնացուցի, յայնժամ ինքնին բացցին շրթունք իմ, և արձակեսցի լեզու իմ. որով և սկսանիցի բերան իմ երգել զօրհնութ՟իս քոյ՝ ՚ի գովել զողորմութ՟իս քո, և ՚ի փառաբանել զարդարութ՟իս քո, և ծնծալ ընդ փառս մեծի վայելչութ՟ե քոյ.

Ոչ խնդրէ մարգարէն արձակ բանիւ զբացումն շրթանց իւրոց, այլ ընդ պայմանաւ. եթէ ասէ բանաս. որով ցուցանէ զառաւելութիւն պատկառանաց իւրոց, որպէս թէ ասէր. ոչ համարձակիմ ասել, բա՛ց զշրթունս իմ, զի անարժան եմ. այլ զայս եւեթ ասեմ. եթէ բանաս, ահա օրհնեսցէ զքեզ բերան իմ. ապա թէ ոչ՝ համրանամ իսպառ ՚ի յանդիմանելոյ զիս՝ թէ * դու ընդէ՞ր բնաւ պատմես զարդարութիւն իմ, կամ առնուս զուխտս իմ ՚ի բերան քո ‖. (սաղ. խթ. 16 ։)

Այս բան եթէ ըստ ինքեան մտածեսցի առանց հայելոյ ՚ի նախադրեալսդ, առաջի դնի իբր մաղթանք բանալոյ շրթանց տկարացելո՛ց յօրհնութիւնս ա՟յ. յոր միտս կամի ասել. չիք յիս կատարեալ զօրութի զշրթունս բանալոյ և ոչ կենդանի փափաք բերանով օրհնելոյ. դու զօրացո՛, դու կարողացո՛, դու արա՛ զի բացցին շրթունք իմ, և օրհնեսցէ զքեզ բերան իմ ։

Յասացելոցս երեւի թէ աստ բառքդ Շրթունք և Բերան ոչ գնին նիւթապէս, այլ տեսականապէս, այսինքն թէ ոչ գնին սոսկ իբր շրթունք և իբր բերան, այլ իբր գործիք օրհնութեանն ա̃յ. վասն զի իբր շրթունք և իբր բերան՝ ոչ անկանին ընդ խնդրով բանալոյ և փակելոյ. զի եթէ չիցեն խանգարեալ կամ արգելեալ՝ երբ և իցէ՝ կարէ մարդ բանալ կամ փակել: Եւ սակայն իբրև գործիք օրհնութեան՝ անկանին ընդ խնդրով բանալոյ՝ ոչ յինքեան մտածեալ՝ այլ ՚ի պատճառս իւրեանց՝ այսինքն ՚ի զգաստութեան մտաց, և ՚ի վստահութեան կամաց. մանաւանդ զի և սոքին իսկ են իբր ներքին շրթունք հոգւոյն. միտքն իբր շուրթն վերին, և կամքն իբր ստորին: Եւ յայս միտս խնդրէն յա̃յ բանալ զշրթունս մեր՝ է խնդրել՝ զի լուսաւորեսցէ զմիտս, և վստահացուսցէ զկամս յօրհնութիւնս իւր. զի այսու բանին և արտաքին շրթունք մեր յօրհնել զնա:

Այս բացումն շրթանց կարէ հայիլ և ՚ի մարմնաւոր արգելս, որպէս ՚ի քուն, ՚ի թմրութիւն զգայութե̃ց, ՚ի տկարութիւն բարբառելոյ բերանոյն, ՚ի հիւանդութիւն մարմնոյ և այլն. և ըստ այսմ խնդրէն յա̃յ բանալ զշրթունս յօրհնութիւն նորա՝ է խնդրել զփարատումն արգելչաց օրհնութ̃ե, և զառողջութ̃ի զօրութ̃ե առ ՚ի կարող լինելոյ մատուցանել նմա զարժանաւոր օրհնութիւնս:

Եւ յայս միտս առեալ զսոյն զայս բան ՚ի սկիզբն գիշերային ժամերգութեան՝ հայելով միանգամայն և յայն՝ զոր ասացաք ՚ի վերոյ, այսինքն ՚ի զգաստութ̃ի մտաց և ՚ի վստահութիւն կամաց, յարելով զնի և զաղմոս յազատութիւն ՚ի դաւաճանութենէ նեղչաց: Ուստի ստեփաննոս սիւնեցի խօսելով ՚ի վերայ այսր ՚ի կարգ պաշտամանց եկեղեցւոյ. (երես 424.) գրէ այսպէս. * Յնծայինն ժամանեալ խաղաղութ̃ե խոր-
,, հուրդ ՚ի չարին վրդովմանց (գիշերայնոց) ժողո-
,, վուրդ ոք եկեղեցւոյ, որպէս յանդիման կալով ա-
,, ռաջի մեծի թագաւորի՝ նախ համարձակութ̃ի հայ-
,, ցէ ՚ի բանալ բերանոյն, յասելն, տէր եթէ զշըր-
,, թունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնու-
,, թիւնս քո: Եւ յետ այսորիկ համարձակեալ պատ-
,, մէ զնեղչացն դաւաճանութիւն և զազգի ազգի աղէ-

„ կոծութիւն՝ յաւէլն · տէր զի բազում եղեն նեղիչք իմ ||.

Լամբ″. զայս բացումն շրթանց վերածէ 'ի քարոզութ̃ի բանին ա̃յ · և օրհնութե̃ իմանայ զուղիղ վարդապետութիւնս · և մեկնէ այսպէս · եթէ դու 'ի քում շնորհաց ազդմանէ հրամայես և բանաս զշրթունս, բերան իմ ուղիղ վարդապետեսցէ ։ Այս մեկնութիւն ըստ յարմարութե̃ դնի և 'ի բարոյական միտս, հայելով 'ի համարն 14 ։ Իսկ հարազատ միտ բանին հայի 'ի նախագրեալսդ ։

Այլ աստանօր արժան է հայիլ և 'ի կարգ բանին · զի մարգարէն պէսպէս օրինակաւ իբր առևտրութեամբ վարի առ ա̃ծ յայս սաղմոս · զի տայ և առնուլ ցանկայ · երբեմն ընծայէ ա̃յ զմաղթանս, և խնդրէ զքաւութիւն · երբեմն տայ զխոստովանութ̃ի մեղաց իւրոց, և խնդրէ զկատարեալ սրբութիւն, երբեմն անդրադարձեալ խնդրէ յա̃յ զհաստատութիւն սրբութե̃ սրտի · և խոստանայ դարձուցանել զայլս առ նա, երբեմն խնդրէ զցնծութիւն և զուրախութ̃ի, և խոստանայ օրհնել զնա · որովք յայտնի ցուցանէ՝ թէ պատրաստ է զամենայն ինչ առնել՝ միայն թէ տեսցէ ամենեւին հաշտ զերեսս ա̃յ, և գիտասցէ՝ թէ իսպառ ջնջեալ է յիշատակութ̃ի մեղաց իւրոց ։

Եթէ գիտէր դաւիթ թէ թողլով զթագաւորութիւն իւր՝ կատարիւր այս իւր տարփումն, ամենայն յօժարութե̃ յանձն առնոյր զայս ։ Եւ եթէ գիտէր՝ թէ զամենայն ինչս իւր բաշխելով այլոց՝ հասանէր փափաքանաց իւրոց, անարգել 'ի գործ դնէր զայն · և միով բանիւ ասացից, ինքնայօժար ինքնակամ բերիւր առ այն ամենայն՝ որով հնար լինէր նմա տեսանել զա̃ծ հաճոյացեալ ։ Եւ զի 'ի մէջ այլ ամենայն իրաց մեծ իմն էր մատուցանել ա̃յ պատարագս և ողջակէզս, եթէ գիտէր՝ թէ այնու մատուցմամբ կատարի փափաք իւր՝ զամենայն զոր կարէր՝ պատարագէր նմա, մանաւանդ թէ չափազանցօրէն խօսելով՝ եթէ կարէր՝ զամենայն անասունս ողջակէզ մատուցանէր նմա · բայց ոչինչ օգնէր նմա այն 'ի լրումն տենչմանց իւրոց · զոր և յայտ առնէ 'ի յաջորդ համարն ասելով ։

ԺԷ. Թէ կամեցեալ էիր պատարագս մատուցանէաք. բայց
դու ընդ ողջակէզս խոյ ոչ հաճեցար։

Պատարագօք իմացեալ լինին աստ ազգի ազգի նուէրք՝ զորս մատուցանէին այ՟ 'ի հնումն 'ի կենդանեաց, 'ի պտղոց, 'ի նաշհոյ և այլն։ Իսկ ողջակիզօք իմացեալ լինին այն զոհք՝ որք յանասնոց մատուցեալ բոլոր այրէին։ Արդ յայտ է թէ ած՟ կամէր ընդունել զսոսա ըստ երից. մի՝ զի յիւրմէ սահմանեալ էին սոքին 'ի նշան խոստովանելոյ զինքն ած՟ ճշմարիտ. երկրորդ՝ զի էին ցոյց միանգամայն և յորդոր մատուցման սրտից նոցա՝ որք նուիրէին. և երրորդ՝ զի էին օրինակք պատարագին քսի՟ մատուցելոյ հօրն երկնաւորի իբրև երկրպագելի գործովք արդարութեան, և կամաւոր հեղմամբ արեան և մահուամբ խաչելութեան, եւս և խորհրդով հաղորդութե՟։

Այսպիսի նշանս և օրինակս հայելով ընդունելի լինէին այ՟ 'ի հնումն ողջակէզք և պատարագք. իսկ եթէ վրիպէին 'ի գոլոյ նշան այսպիսեաց, ոչ հաճէր ած՟ ընդ այնս՝ ոչ վասն լինելոյ նոցա պատարագք, այլ վասն ոչ լինելոյ մատուցողին այնպիսի՝ որպիսի պահանջէին պատարագքն. և պատճառն է, զի 'ի հրամայել այ՟ զմատուցումն պատարագաց՝ ոչ կարգեաց ըզմատուցողն վասն մատուցելոյն, այլ զմատուցեալն վասն մատուցողին. ուստի եթէ մատուցողն ոչ ընծայէր զանձն հաճոյ աստուծոյ, և ոչ մատուցեալն լինէր հաճոյ նմա 'ի կողմանէ մատուցողին. (զայսմանէ տես և 'ի սաղ. լթ. 8 = 10։ և 'ի սաղ. խթ. 8 = 14։) Նաև ոչ միայն պատարագք, այլ և ո՛ և իցէ գործք կամ ո՛ և իցէ իր, թէ՛ մեծ իցէ և թէ բազում, ոչ ընծայի հաճոյ այ՟, եթէ չկայցէ 'ի յընծայողն արժանաւոր տրամադրութիւն, այն է յօժարութի՟ և պատրաստութի՟ կամաց. վասն զի որպէս ասէ ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. իե.) * ած՟ ոչ եթէ 'ի բազմութի՟ գործոցն և
„ կամ 'ի մեծութի՟ ընչիցն, այլ 'ի յօժարութիւն կամացն և 'ի ջերմութի՟ բաղձանացն հայի ‖։ Զայսօրինակ գիտելով մարգարէին ասէ։

Թէ կամեցեալ էիր, պատարագս մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս խոյ ոչ հաճեցար։ Որպէս թէ ասէր. եթէ գիտէի՛ թէ պատարագս մատուցանելով հաշտեցուցանէի զերեսս քո, և գտանէի այնու զկատարեալ թողութի՟, անհամար պատարագս մատուցանէի. բայց դու ոչ միայն ընդ հասարակ պատարագս ոչ հաճիս, այլ և ոչ ընդ ողջակէզս՝ յորժամ ոչ մատուցանեն խոնարհութբ՟ և սրբութբ՟. որ է ասել. սոսկ պատարագօք և ողջակիզօք ոչ հաշտիս և ոչ թողուս զմեղս, այլ պիտոյ է խոնարհութի՟ հոգւոյ և սրբութի՟ սրտի։

Վասն զի հաճիլն ա՟յ ընդ պատարագս կամ ընդ ողջակէզս մատուցեալս վասն քաւութեան մեղաց՝ է հաճիլ ընդ մատուցօղն վասն մատուցելոյն. ուստի եթէ չգտցէ 'ի մատուցօղն հաճելի ինչ ա՟յ. ոչ հաճի ա՟ծ և ընդ մատուցեալն 'ի նմանէ. (այլ զայսմանէ տե՛ս և 'ի համարն 20. և 'ի նախայիշեալ սաղ. խթ. 8. և՟ն։) Այս 'ի մէջ բերեալ մարգարէին զհանգամանս անձին մատուցօղի զպատարագս, և զկարևորութիւն այնոցիկ հանգամանաց՝ ասէ։

ԺԸ. Պատարագ ա՟յ հոգի խոնարհ. զսիրտ ս՟բ և զհոգի խոնարհ ա՟ծ ոչ արհամարհէ։

Ի նախընթաց սաղ՟. (համար 8 = 14.) եցոյց մարգարէն՝ թէ ա՟ծ խնդրէ պատարագս օրհնութեան և ընդ այն հաճի. *մատո՛ (ասէ) ա՟յ պատարագ օրհնութեան‖. և՟ն. և ոչ թէ ողջակէզս 'ի խոյոց և 'ի զուարակաց. իսկ աստ փոխանակ այնր դնէ խոնարհութիւն և սրբութիւն սրտի. որով ցուցանէ թէ յայնժամ հաճոյ լինի ա՟յ պատարագն այն օրհնութե՟ն, յորժամ պատարագի հոգլին և սիրտն խոնարհութբ՟ և սրբութբ՟. սմին վասն ասէ։

Պատարագ ա՟յ հոգի խոնարհ։ Այս բան երրակի առաջի դնի. մի՝ հայելով 'ի մատուցեալ պատարագն. յոր միտս կամի ասել. պատարագն՝ զոր մատուցանէ մարդ՝ հաճոյ և ընդունելի լինի ա՟յ, եթէ պատարագօղն մատուցանէ զայն խոնարհութբ՟ և սրբութբ՟։

Երկրորդ՝ հայելով 'ի խոնարհութիւն և 'ի սրբութիւն սրտի. յոր միտս կամի ասել. հաճոյ և ընդունելի պատարագ է ա՟յ խոնարհութիւն հոգւոյ և սրբութիւն սրտի։

Երրորդ՝ հայելով յանձն պատարագօղին. ըստ որոյ հոգի ասելով ոչ իմանայ սոսկ զհոգի մարդոյ, այլ զմարդն ըստ հոգւոյն, յոր միտս կամի ասել. մարդ յայնժամ հաճոյ լինի ա̃յ իբրև պատարագ՝ յորժամ ճշմարտիւ խոնարհի ոչ մարմնով՝ այլ հոգւով, այսինքն յորժամ ճանաչելով զողորմելութիւն իւր և զողորմութիւն ա̃յ՝ խոնարհի ընդ հզօր ձեռամբն ա̃յ, նմա ընծայելով զփառս և զպատիւ, և ինքեան զամօթ և զանարգանս. խնդրելով միանգամայն և զողորմութիւն նորա. որպէս առնէր դանիէլ յասելն. * քոյ տէր արդարութիւն, և մեր ամօթ երեսաց‖ (դան. թ. 7=9.) Այսպիսի անձն է ասէ հաճոյ աստուծոյ իբրև պատարագ ընդունելի. ուստի գրէ բարսեղ վարդապետ. ('ի մեկն. մարկ. գլ. թ.) * պատարագ աստուծոյ հոգի „ խոնարհ. զի թէ մարդկան այնքան ցանկալի է խո- „ նարհն, ո՜րչափ ևս ա̃յ‖: Եւ սարգիս շնորհալի գրէ ('ի մեկն. ա̃. պետ. բ̃. 4. ճառ դ̃.) * այս իշխանու- „ թիւն (ասէ) թուի թէ ամենայն առաքինի անձին „ պարգևեցաւ՝ ինքն լինել տաճար հոգևոր, և ինք- „ նին անարատ քահանայ՝ զհոգևորն մատուցանել „ պատարագ, ոչ զայլ ինչ, այլ զիւրն ոգի և զմիտս „ մարմնոյն հանդերձ, ողջակիզեալ ա̃ծային հրոյն 'ի „ վերայ սրբութեան սեղանոյ սրտոյն ա̃յ, պատարագ „ բանական և կենդանի ըստ ձայնի մարգարէին. պա- „ տարագ ա̃յ ասէ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի „ բեկեալ ա̃ծ ոչ առնէ անտես. և դարձեալ. պատա- „ րագ օրհնութե̃ ասէ փառաւորեսցէ զիս‖: Եւ զի ըստ գրելոյդ՝ զայսպիսիս ոչ երբէք լքանէ ա̃ծ, սմին իրի յարէ զկնի և ասէ:

Սիրտ սուրբ, և զհոգի խոնարհ ա̃ծ ոչ արհամարհէ:

Սրտիւ նշանակէ այնպիսի հոգի որ կորանայ՝ այսինքն խոնարհի թօթափել յիւրմէ զաղտեղութիւն մեղաց, և զչփոթութիւն պղտորիչ խորհրդոց. կամ որ սրբեալ է յամբարտաւանութե̃ ներքին բեկմամբ. յոր միտս 'ի սաղմոսս ինչ մեր ըստ եբրայականին և ըստ այլոց թարգ". գնի սիրտ բեկեալ. զի բեկելոյն է խոնարհիլ. որպէս զաւազան բեկեալ ընդ մէջ՝ յերկուց ծայրիցն 'ի վայր խոնարհի. ըստ այսմ և սիրտ որ բեկեալ է՝ խոնարհի ըստ երկուց ծայրիցն, այսինքն ըստ ճանաչման մտաց և ըստ յօժարութեան կամաց. վասն այսր պատճառի զայնպիսի սիրտ՝ հոգի խոնարհ եւ կոչէ, և վկայէ թէ ա̄ծ ոչ արհամարհէ զայնպիսին. և զայս ոչ է պարտ իմանալ իբր բացատրեալ, այլ դրականապէս. իբր զի այսու ոչ կամի ցուցանել սոսկապէս զոչ արհամարհելն ա̄յ, այլ զհաճելն ա̄յ ընդ այնպիսին, և զլցուցանել նորա զնա շնորհօք իբր զանօթ ընդունակ շնորհաց.

Բեկեալ սրտիւք իմանան սուրբ հարք և զսիրտ զղջացեալ համանդերձ խոնարհութեամբ. յայս միտս իմանայ և Բարսեղ վարդապետ յաւելն. ('ի մեկն. մարկ. գլ. ժա̄.) * պատարագ ա̄յ է հոգի խոնարհ մաշեալ. ըզսիրտ բեկեալ զղջմամբ՝ ա̄ծ ոչ արհամարհէ ||. Որ բառդ ճշգրիտ հայի յայնպիսի սիրտ, որ 'ի խոնարհութենէ պատկառեալ առաջի ա̄յ՝ մաշի, և իբրև թէ հալի. և զոր օրինակ 'ի հալել մոմոյ առաջի հրոյ՝ մաշի և աղտն որ կայ 'ի վերայ նորա, սորի և գնայ, սոյնպէս 'ի հալել սրտի առաջի աստուծոյ՝ մաշի յաւելորդաց՝ մանաւանդ 'ի հպարտ խորհրդոց, և սրբի. որով և հաճոյ ընծայի ա̄յ.

Իսկ որ յետ զղջանալոյ և ապաշխարելոյ իսկոյն դառնայ և մեղանչէ, զայնպիսւոյն չէ մարթ ասել, թէ ունիցի հոգի կամ սիրտ բեկեալ. զի բեկեալ դաւաղան 'ի բեկման անդ ոչ հարկանէ. ապա եթէ սիրտն բեկեալ էր 'ի զղջմանն՝ ոչ վաղվաղակի հարկանէր զանձն մեղօք. Թող զայն զի որ ունի զսիրտ բեկեալ՝ այնպիսին բեկեալ է և զմեղսն, և զմոլութիւնս, նա զնոյն ինքն զհին մարդն. և զիա՛րդ մարթի փութանակի կենդանացուցանել 'ի հոգի իւր զայնպիսիս.

Ամբ″. այլով իմն կարգաւ որոշումն դնէ աստ. որովհետև ասէ մարդ ունի յինքեան զբանական մասն, զցանկականն և զցասմնականն, ըստ բանականին 'ի վերայ եդ զօրհնութիւն բանիւ. ըստ ցանկականին սիրտ սուրբ, և ըստ ցասմնականին հոգի խոնարհ. սոքին են ասէ ա̄յ ընդունելի պատարագ. զոր մարդս 'ի կողմանէ իւրմէ մատուցանէ նմա, և նովին հաճեցուցանէ զնա ընդ ինքն. և որչափ բեկանի և խոնարհի յինքեան՝ այնչափ խոնարհեցուցանէ զա̄ծ առ ինքն. մինչև գալ նմա և բնակել յայնպիսումն հանգստեամբ. ըստ որում ինքն իսկ վկայէ ասելով. * Ես յո՛ հանգեայց եթէ ոչ 'ի հեզս և 'ի խոնարհս և որ դողայ 'ի բանից իմոց ||: (Եսայ. կզ̃. 2.) ուր հանգչեայց ասելով ցուցանէ՝ թէ ա̃ծ իբր յիւրում պալատի անդորր բնակի յայնպիսի հոգի. որպէս թէ արտաքոյ կալով չանիցի հանգիստ:

Իսկ արդ եթէ տապանակն ա̃յ ամօրեայ ժամանակաւ կալով 'ի տան աբեդդարայ՝ լցոյց զայն բարեօք, զինչ լինիցի ապա հոգւոյ մարդոյ, եթէ ա̃ծ հանգիցէ 'ի նմա, քանի՜ բարիս ցուցցէ նմա, և քանի՜ բարեօք լիացուսցէ: Սովին յայտնի ցուցանի թէ քանի՜ ազնիւ և յարգոյ իցէ այս առաքինութիւն խոնարհութեան: Եթէ սա պակասեսցի՝ այլ առաքինութի̃ք ոչ ընծային պատարագ ա̃յ. և արտաքոյ սորա եթէ՛ սքանչելագործութի̃ իցէ և եթէ այլ ինչ մեծագործութիւն, եթէ՛ փառք իցէ և եթէ մեծութիւն, կեղծիք են համարելի. ապա եթէ այս ամենայն զգեցցին զխոնարհութի̃, կամ ասացից, իջցեն 'ի խոնարհութիւն՝ ազնուանան: Բալասամ արկեալ 'ի ջուր՝ եթէ իջանիցէ 'ի յատակ ջրոյ՝ համարի ազնիւ. սոյնպէս և կեանք մարդոյ և գործք նորա, և առաքինութի̃ք նորին, ևս և մեծութիւն և իշխանութիւն եթէ իջանիցեն 'ի յատակ խոնարհութե̃՝ համարին ազնիւ: Եւ եթէ ընդ հեզութե̃ ևս միասցին՝ սքանչելի երևին, և սրբազնանան: Մեռոն բաղադրի 'ի բալասամէ և 'ի ձիթոյ, բալասամն որպէս ասացի՝ իջանէ 'ի խորս ջուրց. իսկ ձէթն յերես մնայ: Խոնարհութի̃ առաջի ա̃յ 'ի խորս իջանէ. և հեզութիւնն որպէս և քաղցրութի̃ն առ ընկերն՝ յերես փայլէ. որով և կեանք մարդոյ վերածեալ լինի 'ի նմանութիւն մեռոնի. յայս սակս կենդանի մեռոնն յս̃ յորդորեաց զամենեսին * ուսարուք յինէն՝ (ասելով) զի հեզ եմ, և խոնարհ սրտիւ ||. (մատ. ժա̃. 29:) Արդ յետ առաջի գնելոյ մարգարէին զհաճոյանալ խոնարհին, և զայն ամենայն՝ զորս ասաց 'ի սաղմոսս, յայլ ինչ մաղթանս մատչի, և ասէ:

ժթ. Բարի արա տէր կամօք քով սիոնի. և շինեսցին պարիսպք երուսաղէմի:

Այսու է թէ յաւուրս դաւթի ունէր երուսաղէմ զամրոց, (որպէս գրի բ̃. թագ. ե̃. 6.) բայց չունէր շուրջանակի պարիսպ, զի զայն շինեաց սողոմոն 'ի շինելն զտուն իւր և զտունն տեառն. որպէս գրի (Գ. Թագ. Գ. 1.) յասելն. * կատարեաց (սողոմոն) շինել զտուն „ իւր և զտունն տեառն, և զպարիսպն երուսաղէմի „ շուրջանակի ‖. և ('ի գլ. Թ. 15.) դնի թէ սողոմոն ժողովեաց նիւթ վասն շինելոյ զտունն տեառն * և զպարիսպն երուսաղէմի ‖։

Արդ 'ի մեղանչել դաւթի՝ տեսեալ թէ ա͞ծ սկսաւ պատժել զինքն ըստ գուշակելոյն նաթանայ՝ կասկածէր՝ թէ թոյլ տացէ թշնամեաց իւրոց՝ մանաւանդ ամմոնացւոց յարձակել 'ի վերայ երուսաղէմի, և կոտորել զժողովուրդն ա͞յ վասն մեղաց իւրոց գէթ զկնի մահուն իւրոյ. և այս մեծ ցաւ էր նմա. սմին իրի փափաքէր՝ զի շինեսցի պարիսպ հզօր՝ որ պատեսցէ զամենայն ըղքաղաքն, որով և բարի լինէր սիոնի ուր զետեղեալ էր զտապանակն տեառն. զի այն ևս պատեալ լինէր այնու պարսպաւ։ Եւ այս բարութիւն լինէր նշան ինչ դադարելոյ այնր պատժոյ. և այն դադարումն ևս լինէր նշան իսպառ հաշտելոյն ա͞յ ընդ իւր. վասն որոյ աղաչէ ասելով։

Բարի՛ արա տէր կամօք քովք սիոնի. և շինեսցին պարիսպք երուսաղէմի։ Կամի ասել. մի վասն մեղաց իմոց պատուհասեսցես զսիոն և զբնակիչս նորա, այլ բարի արա այնմ, զի դու ընտրեցեր զնա կամօք քովք, և արդ մի առներ ինչ ընդհակառակն այնր՝ զոր կամեցար. այլ նովին բարի կամօքդ ցոյց զայն՝ որ բարի է նմա, պահելով զնա 'ի թշնամեաց. և 'ի կամիլդ զայս՝ շինին և պարիսպք երուսաղէմի. որով և ամրափակեալ մնան բնակիչք սիոնի և երուսաղէմի՝ և այսու յայտնի լինիցի թէ ոչ ևս ունիս պատժել զժողովուրդ քո վասն մեղաց իմոց։

Զայս բան հնար է նաև իբր առակաբանութիւն առնուլ, և մեկնել 'ի վերայ անձին դաւթի ըստ նկարագրին. յոր միտս կամի ասել. հայեա՛ց տէր 'ի սիոն քաղաք զոր ընտրեցեր, և վասն սիոնի քո թո՛ղ զամենայն զմեղս իմ, և անցո՛ յինէն զպատիժս մեղաց իմոց, և այսու բարի արա սիոնի. զի ինձ առնելով զայս բարութիւն՝ ոչ եթէ ինձ՝ այլ սիոնի քում առնես, որովհետև զիս կացուցեր զլուխ և թագաւոր բնակչաց

սիոնի․ և 'ի լինել այր՝ շինեսցին պարիսպք երուսաղէմի․ այսինքն յապահովս պահպանեսցի հին երուսաղէմ իբր պարսպաւ․ իսկ եթէ ոչ խնայելով յիս՝ տուաքեսցես պատիժս առ իս, ոչ լինի բարի բնակչաց սիոնի․ զի և նոցա հասանէ այն պատիժ․ և բնակիչք երուսաղէմի իբր անպարիսպ և անպատսպար վըտանգին ։ Խնայեա՛ ուրեմն 'ի ժողովուրդ քո, և փոխանակ կործանելոյ զիս պատժովք՝ արա՛ զիս իբր պարիսպ նոցա ։ Յայս միտս և երեմիա տուեալ եղև ժողովրրդեանն իբր պարիսպ, յասել ցնա տեառն․ * տաց ըզ-„քեզ ժողովրդեանդ այդմիկ 'ի պարիսպ պղնձի ամուր ‖․
(երեմ․ ժե․ 20։)

Կան բազումք որք ասեն թէ զայս բան ասաց դաւիթ հայելով 'ի ժամանակս գերութ՟են բաբելացւոց․ յորում ժամանակի կործանեցին բաբելացիք զպարիսպն երուսաղէմի, և այրեցին զտաճարն ե՟ն․ զոր մարգարէն հոգւովն տեսեալ՝ աղաչէ զա՟ծ յիշել զսիոն և ցուցանել նմա զբարութիւն իւր ըստ բարեհաճութ՟ե կամաց իւրոց․ ժողովել անդր զգերութ՟ի ժողովրդեան իւրոյ, և տալ շինել զպարիսպն երուսաղէմի 'ի զգուշութիւն պահպանութեան քաղաքին ։

Իսկ թէ զինչ համեմատութիւն կայցէ այսր խնդրուածոյ ընդ նախընթաց բանին՝ ծանիր, զի եթէ ըստ թողութեան մեղաց մտածեսցի, այս խնդրուածք իբր հետևութիւն դնի, ըստ դնելոյ մեր 'ի վերոյ․ իսկ եթէ ըստ ինքեան մտածեսցի՝ դնի իբր բարեմաղթութիւն․ քանզի դաւիթ մարգարէ սովոր է բազում ուրեք 'ի սաղմոս իւր յետ խնդրուածոց իւրոց՝ դարձուցանել երբեմն զբան իւր 'ի բարեմաղթութ՟ի ժողովրդեան կամ 'ի գովասանութ՟ի այնր․ (որպէս յայտ է 'ի վերջ իէ․ սաղմոսին, նոյնպէս և 'ի վերջ իը․ սաղմոսին․ տե՛ս և 'ի սաղ․ խդ․ խէ․ ծբ․ կէ․ կը․ ճա․ ևս և ճլ․ ճլբ․ ճլդ․ ճխդ․ ճխե․ ճխը։) Նոյնպէս և աստ յետ խնդրելոյ անձին զթողութիւն մեղաց և զազատութիւն 'ի պատժոց՝ խնդրէ բարի առնել և ժողովրդեան․ և զի նոքա վասն մեղաց վարեցան 'ի գերութիւն, զմեղս նոցա ևս ընդ մեղաց իւրոց խառնեալ խնդրէ միանգամայն վասն ամենայնի զներումն ։

Բ․ Այլաբանօրէն, գուշակի սովաւ վիճակ նորոյս եկեղեցայ. և խնդրի 'ի հօրէն երկնաւորէ բարի առնել այնմ, առաքելով զմիածին իւր կամօք իւրովք և հաճութ՟ հօրն, և շինել զպարիսպս շուրջանակի 'ի բանաւոր քարանց որբելոց 'ի ձեռն քարոզութեան աւետարանին, 'ի ձեռն պէսպէս խորհրդոց։ Եւ կամ թէ խնդրի բարի առնել սիոնի այսինքն մարդկային բնութեան՝ 'ի ձեռն փրկութե՟ միածնի որդւոյն ա՟յ, և կանգնել շուրջ զերուսաղէմաւ, այսինքն զեկեղեցեաւ՝ նոր պարիսպս, այսինքն նոր խորհուրդս, և նորահրաշ վարդապետութիւս, և ընդարձակել զնոյն բազմութ՟ հաւատացելոց։

Սերածաբար, բարի արար տէր վերինն սիոնի 'ի լնուլ զտեղի անկելոց հրեշտակաց յորդւոց մարդկան. որով և շինեցան պարիսպք վերինն երուսաղէմի 'ի քարանց աստի 'ի մարդկանէ. զոր աստ կոփեալ կոկեցան ազգի ազգի վշտօք, և աշխատութ՟ք։

Կարգապէս, խնդրի սովաւ յա՟յ բարի առնել հոգւոյն իւր սիոնի, և շինել պարիսպս զգուշութեան մարմնոյ շուրջ զգայութեամբք՝ զարտաքինովք և զներքինովք։

Զսոյն զայս կարէ յարմարեցուցանել ինքեան և այնպիսի մարդ՝ որ անկեալ իցէ 'ի ծանր փորձութիւնս, կամ յայնպիսի գործս, որով պաշարեալ իցէ յամօթ անհնարին 'ի մէջ մարդկան, յաղաչել նորա զա՟ծ և յասել. չարի մեծի պատահեցայ. և կեանք իմ իբր պարիսպ կործանեցաւ. և արդ բարի արա տէր կամօք քո սիոնի, այսինքն ցոյց ինձ իբր սիոնի զբարութ՟ի քո ոչ իբր արժանոյ՝ այլ բարերար կամօք քո. և նորոգեսցի կեանք իմ իբրև պարիսպ երուսաղէմի. և յայնժամ մատուցից քեզ պատարագս ընդունելի. առ որ լռելեայն ին՟ն ակնարկելով մարգարէին խօսի և զընդունելութէ արժանաւոր պատարագաց, և ասէ.

ի. Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութե՟. ուխտից պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս։

Պատարագաւ արդարութեան իմացեալ լինին գործք արդարք նուիրեալք ա՟յ. յոր միտս ասի ('ի սաղ. դ. 6. * մատուցէք պատարագ արդարութեան, և յուսացարուք 'ի տէր ‖. և յայս միտս երանելին պօղոս զբարերարութիւնս և զհաղորդելն ումեք զբարիս՝ կոչէ պատարագ հաճոյ ա̃յ․ (եբր․ ժգ․ 16։) ՝Նմանապէս և պետրոս առաքեալ զառաքինութիւնսն կոչէ հոգևոր պատարագ հաճոյ ա̃յ․ (ա̃․ պետ․ բ̃․ 5։)

Իսկ պատարագօք ուխտից իմացեալ լինին նախ՝ գործք կամ պատարագք ուխտեալք, և 'ի ձեռն ուխտի նուիրեալք ա̃յ․ յոյր սակս լամբ"․ դնէ ուխտեալ պատարագ․ յոր միտս առաց մարգարէն ('ի նախընթաց սաղ․ համար 14։) * մատո՛ ա̃յ պատարագ զօրհնութիւն, կատարեա՛ բարձրելոյն զուխտ քո‖։ Երկրորդ՝ իմացեալ լինին նուէրք կամ ողջակէզք նուիրեալք ուխտիւք՝ այսինքն ջերմեռանդն փափաքանօք, և խոնարհութե̃ սրտի են։ Երրորդ՝ իմացեալ լինին պատարագք և նուէրք ըստ ուխտիցն, զորս արար ա̃ծ առ նախահարս, առ աբրահամ, առ իսահակ են․ և յետոյ ուխտիւք եդ զայնս 'ի ձեռն մովսէսի։

Արդ որպէս յայտ է 'ի նախադրելոյդ ('ի համարն 17․ և 18․) ա̃ծ յայնժամ հաճէր ընդ զոհս և ընդ պատարագս՝ յորժամ մատուցօղն ունէր յինքեան զուղղութիւն կամ զարդարութի̃ և զխոնարհութի̃․ ուստի 'ի մատչիլ պատարագաց՝ հաճութիւնն ա̃յ յաւէտ յարդարութիւն և 'ի խոնարհութի̃ մատուցողին հայէր քան յարարողութի̃ մատուցելոյն, իսկ առանց խոնարհութեան և արդարութեան մատուցողին ոչ քաղցրանային ա̃յ ո՛ և իւր պատարագք։ Ուստի սուրբն յակոբ մծբնայ հայրապետ խօսելով զզոհից և զպատարագաց ասէ ('ի ճառն բ̃․) * ոչ եթէ միայն 'ի ժամանակէ „ անտի գալստեան տեառն մերոյ անարգեցան զոհք և „ պատարագք նոցա, այլ և յառաջ քան զայն ժամանակ „ ոչ քաղցրացան նմա զոհք նոցա․ որպէս և գրեալ „ է․ ոչ ուտեմ ես զմիս զուարակաց քոց, են․ „ այլ մատո՛ ա̃յ զպատարագս օրհնութեան, և կատարեա՛ „ բարձրելոյն զուխտս քո․ և դարձեալ ասէ․ ըղսիրտ „ սուրբ խնդրէ ա̃ծ․ և դարձեալ ասէ․ ոչ հաճեցայ „ ես ընդ զոհս․ և զողջակէզս պատարագաց ես ոչ „ կամիմ․ պատարագ ա̃յ հոգի խոնարհ‖։ Այսպիսի հանգամանս պատարագաց հայելով մարգարէին՝ ասէ զայս բան։

Եւ զի ասաց 'ի վերոյ * բարի արա՛ տէր կամօք քովք „ սիոնի․ և շինեսցին պարիսպք երուսաղէմի‖․ 'ի յաբերն զկնի, **յայնժամ հաճեսցիս եւն.** բառդ **յայնժամ**՝ զառաջին հատուած այսր հանգոյց յարէ ընդ նախընթացոյ հատուածոյ այդր բանի. ըստ այնմ՝ զոր ասէ. * բարի արա տէր կամօք քովք սիոնի ||. և զերկրորդ հատուածն ընդ երկրորդ հատուածոյն, ըստ այնմ զոր ասէ * շինեսցին պարիսպք երուսաղէմի ||. Ըստ առաջնոյն ասէ.

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան. Որպէս թէ ասէր. եթէ բարի արասցես սիոնի, սրբելով և օրհնելով զժողովուրդս քո, նոքա մատուցեն քեզ զպատարագս արդարութեան և զպատարագս ուխտից. և զի դու զայնպիսի պատարագս խնդրես, 'ի մատուցանել նոցա քեզ յայնժամ զայնոսիկ՝ հաճեսցիս և դու ընդ այնս, և ընկալցես զնոսին. Իսկ ըստ երկրորդին ասէ.

Ողջակէզս պատարագս հանցեն 'ի սեղան քո զուարակս. Այսինքն 'ի շինել պարսպացն երուսաղէմի, և 'ի կանգնել 'ի նմա տաճարի և նորոյ սեղանոյ՝ յաճախեսցեն ժողովուրդք քո մատուցանել քեզ ուրախութեամբ զողջակէզս 'ի զուարակաց իբրև զպատարագս ուխտից. Այլ աստ արժան է գիտել, զի բառդ **ողջակէզ պատարագ**՝ միապէս կարէ վերաբերիլ յառաջին և 'ի յերկրորդ հատուած այսր հանգոյց. Եթէ յառաջինն վերաբերիցի, բացատրի ըստ նախադրեալ մեկնութեանդ յաւելմամբ շաղկապիս **և**՝ այսպէս. հաճեսցիս յայնժամ ընդ պատարագս արդարութեան, և ընդ պատարագս ուխտից. Իսկ ըստ այսմ բացատրութեան պարտ է աստ կէտ դնել, և ապա սկսանիլ զերկրորդ հատուածն և ընթեռնուլ այսպէս. * յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան և ընդ ուխտից պատարագս. յայնժամ հանցեն 'ի սեղան քո զուարակս ||. և այս է համեմայն եբր՛. և այլոց.

Եթէ յերկրորդն վերաբերիցի, որպէս է 'ի հասարակ տպագրոս մեր, շարադրութիւն բանին առաջի դնի այսպէս. հանցեն 'ի սեղան քո զզուարակս իբրև զպատարագ ուխտից. ուր բառդ **զուարակս** դնի իբր խնդիր սեռի՝ և բառքդ **պատարագս ողջակէզ**՝ դնի իբր խնդիր բնութեան. որով և միտ բանին լինի այս. մատուցեն 'ի սեղանի քում զողջակէզս 'ի զուարակաց իբրև զպատարագս ուխտիւք նուիրեալս ։ Իսկ թէ ումեք զայս բան ընթեռնուն բառիս յորժամ, զայնմանէ տես 'ի համեմատութիւնն ։

Այլաբանօրէն, համանմանք զուարակի 'ի սեղանն ա̃յ 'ի պատարագ՝ նշանակի եղանելն ք̃ի 'ի սեղան խաչին. ուր պատարագեցաւ վասն մեր հօրն երկնաւորի. որպէս զի այնու հաճեսցի հայր ընդ պատարագս արդարութե̃ մերոյ՝ այսինքն ընդ գործս մեր բարիս ։ Յոր միտս առեալ սարգիս շնորհալին՝ գրէ ('ի մեկն. ա̃. պետ. բ̃. 5. ճառ դ̃.) * յայնժամ (ասէ) հաճեսցիս ընդ պատարագս արդարութե̃, յորժամ ուխտեալ զուարակն ելցէ 'ի սեղան քո պատարագ ‖ ։

Դարձեալ նշանակի նուիրել անարիւն պատարագին 'ի վերայ սուրբ սեղանոյ. զոր ուխտ նոր անուանեաց տէրն մեր (մարկ. ժդ̃. 24 ։ ղուկ. իբ̃. 20.) ընդ որ հաճեալ հօրն երկնաւորի՝ նովին հաճի ընդ գործս մեր՝ իբր ընդ պատարագս արդարութեան ։ Այլ յընծայել մեր զայս ամենասուրբ պատարագս՝ պարտիմք թողուլ արտաքոյ տաճարին զանկարգ ախորժմունս մեր, նա և զարտաքին անօթ ցոյցս, որպիսի են պաճուճանք զարդուց, և շքեղութիւն զգեստուց ։ Աբրահամ 'ի մատուցանելն զիսահակ պատարագ՝ եթող զէշն և զպատանեակսն առ ստորոտով լերին. (ծնն. իբ̃. 5 ։) Էշն նշանակէ զմարմինն, այսինքն զմարմնական չար յօժարմունս, և պատանեակքն զարտաքին ցոյցս. թող զոսա արտաքոյ եկեղեցւոյ. և մտիր 'ի մատուցումն սուրբ պատարագին ։ Յակոբ նահապետ 'ի մատուցանելն ա̃յ պատարագ՝ հրամայեաց իւրայոցն 'ի բաց թողուլ զօտարոտի աստուածս (ծնն. լե̃. 4.) նոյնպէս և մեք պարտիմք հրամայել զգայութեանց մերոց 'ի բաց թօթափել զաստուածս ախտից և խաւարային գործոց. և այնպէս մատչել 'ի սուրբ պատարագն, առանց խռովութեան սրտի, և առանց երկբայութե̃ ։ Ի պատարագել տեառն մերոյ 'ի վերնատան՝ կամեցաւ՝ զի գտցին անդ երկու սուսերք. (ղուկ. իբ̃. 38.) միով հատանել զերկբայութիւն մտաց, և միւսովն զխռովութիւն կամաց ։ Զի 'ի մատչել մեր այսպէս 'ի տեսութի̃ սրբոյ պատարագին՝ նովին այսու մատուցանեմք ա̃յ պատարագ ուխտից 'ի սեղան նորա. որով և *զանձինս մեր հաճոյ ընծայեսցուք սրբութեան նորա ։ Զայս պատարագս մատուցանեմք և վասն մեղուցելոց. որով մերժի խաւար նոցա, և շիջանի հուր նոցին. և ինքեանք ուրախանան. զի սովաւ թողութիւն լինի պատժոյ մեղաց նոցա. որպէս գնի 'ի շարականի յահեղ խորհուրդն ։ Զայսմանէ և զայլ յիշատակաց՝ երկար խօսի լուսաւորիչն մեր 'ի յաճախապատում գիրս իւր. (Ճառ ժԴ. երես 166 = 172 ։)*

Վերածաբար, զուարակօք պատարագեցելովք իմացեալ լինին անձինք սրբոց՝ որք մտանեն յարքայութիւն երկնից՝ և ողջակիզեալ հրով սիրոյն ա՟յ նուիրին առաջի նորա ։ Ուր և մատուցին ոչ եւս պատարագք վասն մեղաց, այլ պատարագք արդարութեան, այսինքն օրհնութեան և գոհութեան ։

Բարոյապէս, պատարագօք արդարութեան իմացեալ լինին նուիրմունք բարի գործոց, իսկ պատարագօք զուարակաց և ողջակիզաց իմացեալ լինին նուիրմունք անձանց. զի ա՟ծ յայնժամ հաճի ընդ նուիրմունս բարի գործոց՝ յորժամ նուիրին նմա անձինք մեր 'ի ձեռն խոնարհութեան և ճնշման իբրև պատարագք, կամ իբրև ողջակէզք զուարակաց յաստի կեանս, մինչև լիցի մեզ հասանել ուխտին աւետեաց 'ի կեանսն յաւիտենականս ։

* * *

ՍԱՂՄՈՍ. ԾԱ։

Յանդիմանութիւն գործոց ամպարշտի 'ի դէմս Դովեկայ. և ցոյց բարելաւութեան արդարոց 'ի դէմս մարգարէին ։

Ի կատարած. իմաստութե՟ 'ի Դաւիթ. 'ի ժամանակին զի եկն Դովեկ Եդովմայ. պատմեաց Սաւուղայ՝ թէ ահաւասիկ Դաւիթ 'ի տուն Աբիմելիքայ է ։

1 Զի՞ պարծիս 'ի չարութե՟ն հզօր անօրէնութե՟. զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ 'ի լեզուի իւրում ։
■
2 Որպէս ածելի սուր՝ արարեր զնենգութե՟. սիրեցեր զչարութե

քան զբարութ՟․ զանօրէնութ՟ քան զխօսս արդարութե՟։ 3 Սիրեցեր դու զամենայն խօսս խորտակման, և զլեզու նենգաւոր։ 4 Վասն այսորիկ Ա՟ծ քակեսցէ զնա ՚ի սպառ․ խլեսցէ և հանցէ զնա յարկաց իւրոց, և զարմատս նորա յերկրէ կենդանեաց։ 5 Տեսցեն արդարք և երկիցեն․ զնովաւ ծիծաղեսցին, և ասասցեն։ 6 Ահա այր է, որ ո՛չ արար զԱ՟ծ իւր օգնական․ այլ յուսացաւ ՚ի բազում մեծութ՟ իւր, և զօրացաւ ՚ի նանրութեան իւրում։ 7 Այլ ես որպէս ձիթենի պտղալից ՚ի տան Ա՟յ․ յուսացայ յողորմութ՟ Ա՟յ յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։ 8 Խոստովան եղէց քեզ յաւիտեան, զի արարեր․ և համբերեցից անուան քում, զի քաղցր ես առաջի սրբոց քոց։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած․ Իմաստութեան ՚ի Դաւիթ․ ՚ի ժամանակի զի եկն Դոյեկ Եդովմայ (*այսինքն եդովմայեցի, կամ ըստ այլոց ասորի*), պատմեաց Սաւուղայ թէ ահաւասիկ Դաւիթ ՚ի տան Աքիմելեքայ է։

ԳՐԵԹԷ ՅԱՄԵՆԱՅՆ ՍԱՂմոսս մեր կայ ինչ ինչ տարբերութիւն ՚ի վերնագրիդ, կամ ըստ կարգի բանին, կմ՟ ըստ պակասութե՟ բառից, և կամ ըստ յաւելլոյ ինչ․ իբր զի յոմանս յետսյառաջութ՟ դնին, և յոմանս բառք ինչ պակասեն․ որպէս բառդ՝ ահաւասիկ, *և բառդ՝* եկեալ․ *և յոմանս յաւելեալ լինին․ որպէս բառդ* Սաղմոս։ *Յոմանս փոփոխութ՟ շարադրութեան գրի․ զի փոխանակ դնելոյ՝ եկն և պատմեաց, դնի եկն պատմել, կամ եկեալ պատմեաց․ և այլ ևս սոցին նման այլևայլութ՟իք՝ որք ոչինչ վնասեն մտաց բանին․ մեք յերկու ընտիր ձեռագիրս գտաք ըստ վերոյեդելոյդ․ և զի այն էր համաձայն եբրայականին, ըստ այնմ եդաք։*

Բայց փոփոխութի՟ մեծ կայ ՚ի բառդ Աքիմելեք․ *զի բաց ՚ի չորից ձեռագրաց և բաց ՚ի վարդանայն՝ յամենեսին դնի* Աբիմելեք, *նոյնպէս դնի և ՚ի հասարակ օրինակս եօթանասնից, և յեթէովպացիս, և ՚ի մեկնաբանու-*

թիւնս նախնի հարց անանց. բայց յայտ է թէ զորմէ պատմի աստ՝ էր աքիմելէք քահանայապետ. և ոչ աբիմելէք. վասն որոյ առելի է թէ վրիպակաւ փոխեալ է տառդ Ք 'ի Բ. և փոխանակ գրելոյ ԱՔԻՄԵԼԷՔ՝ եղեալ է ԱԲԻՄԵԼԷՔ, որպէս տեսանի այս և 'ի բնագ". եբր". և 'ի քաղդ". և յարաբ"., և 'ի լատ".։ Իսկ վ̅ բառիցդ ԷԴՈՎՄԱՅԵՑԻ. և ԴՈՎԷԿ՝ ասասցուք 'ի ստորև։

Արդ որպէս պատմի ('ի ա̅. գիրս թագ. գլ. ի̅ա̅. և ի̅բ̅.) գիտացեալ դաւթի թէ սաւուղ եղեալ է 'ի մտի սպանանել զինքն՝ փախեաւ, և եկն 'ի Նոմբայ քաղաք քահանայից. ուր էր յայնժամ խորանն վկայութե̃. և աքիմելէք քահանայապետ ետ դաւթի 'ի խնդրոյ նորա զսուրն գողիադու. և ետ ևս զհացն զառաջաւորութե̃։ Առեալ դաւթի զայսոսիկ մեկնեցաւ անտի. և եկն առ անքուս արքայ գեթայ. և 'ի ճանաչել զնա ծառայիցն անքուսայ՝ երկեաւ, և ձևացոյց զինքն իբր խելագար. և 'ի մերժել զնա անքուսայ՝ ել և գնաց առ արքայն մովաբայ. և յաղգ առնել գադայ մարգարէին, ել և անտի և եկն յերկիրն յուդայ և բնակեցաւ 'ի քաղաքն սարեթ։

Այլ յորժամ եկն դաւիթ 'ի Նոմբայ քաղաք առ աքիմելէք, և էառ զհացն և զսուր՝ անդ գտաւ և դովէկ՝ մի յիշխանացն սաւուղայ, որ իբրև դարձաւ 'ի տուն իւր՝ եկն առ սաւուղ՝ 'ի ժամանակին յորժամ էր նա 'ի հռամայ քաղաք. ուր և լուեալ նորա, թէ դաւիթ եկեալ է յերկիրն յուդայ, սկսաւ մեղադրել զծառայս իւր՝ որ շուրջն կային, թէ ընդէ՞ր ոչ ծանուցիք ինձ ըղմիակամ լինել դաւթի ընդ որդւոյ իմոյ, և այլն։ Յայնժամ նա ինքն դովէկ՝ որ մերձ կայր, եցոյց՝ թէ նաև աքիմելէք քահանայ միաբան է ընդ նմա. զի ետ նմա սուր և հաց, և եհարց վասն նորա զտէր 'ի Նոմբայ 'ի խորանի տեառն։

Իբրև լուաւ զայս սաւուղ, կատաղեցաւ 'ի վերայ աքիմելէքայ և 'ի վերայ որդւոց նորա և 'ի վերայ ամենայն քահանայից՝ որք ընդ նմա. և ետ կոչել զնոսա առ ինքն. և հրամայեաց սպանանել զնոսա. և իբրև ոչ ոք իշխեաց ձեռն արկանել 'ի նոսա, նա ինքն դովէկ կոտորեաց զամենեսին որք էին ոգիք երեքհարիւր և հինգ, կամ ըստ այլոց ութսուն և հինգ։ Կոտորեաց

և զորս միանգամ գտան 'ի Նոմբայ քաղաք յառնէ; մինչև ցկին, 'ի տղայոց մինչև ցստնդեայ, յարջառոյ և յիշոյ մինչև ցոչխար. և ապրեցաւ միայն աբիաթար որդի աքիմելէքայ. որ փախուցեալ եկն առ դաւիթ. և պատմեաց նմա զամենայն (ա̅. Թագ. ի̅բ̅. 18=23.) Զայսպիսի աղետալի անցս և զայսպիսի անողորմ գործս դովէկայ լուեալ դաւթի՝ տրտմեցաւ յոյժ. և յանդիմանեալ հոգւով՝ սկսաւ երգել զաղմոս զայս: Եւ ահա այս է՝ որ դնի 'ի վերնագրիդ. * իմաստու-
,, թիւն 'ի դաւիթ ‖, և այլն. այսինքն է թէ, այս սաղմոս որ ասացեալ է իմաստութեամբ՝ ազդեալ իցէ 'ի դաւիթ 'ի ժամանակի՝ յորում լուաւ թէ զայսպիսի ինչ արար դովէկ:

Իսկ թէ ով էր այս դովէկ, ա̅ծաշունչ գիրն այսչափ ինչ միայն ասէ թէ էր * 'ի ծառայիցն սաւուղայ . . .
,, և արածէր զջորիս սաւուղայ ‖. (ա̅. Թագ. ի̅ա̅. 7.) ոչ թէ ինքնին արածող էր, այլ իշխան արածողաց, ըստ որում ('ի գլ. ի̅բ̅. 9.) ասէ սուրբ գիրն. * կայր 'ի
,, վերայ ջորւոց սաւուղայ ‖, որով երևի թէ էր ախոռապետ նորա (այսինքն է իմրահօր): Սա (որպէս դնի 'ի նոյն գլ. ի̅ա̅. 7.) նեղեալ 'ի հիւանդութենէ՝ գնացեալ էր 'ի Նոմբա քաղաք վասն գտանելոյ զառողջութիւն. և յայնմ ժամանակի եղև գալն դաւթի անդ: Զոր և տեսեալ նորա՝ յետ առողջանալոյ իւրոյ դարձաւ առ սաւուղ. և պատմեաց զոր ետեսն:

Անուն այսր դովէկայ բաց 'ի վերնագրէ աստի սաղմոսիս 'ի չորս տեղիս միայն սուրբ գրոց յիշատակի. (այսինքն ա̅. Թագ. ի̅ա̅. 7: ի̅բ̅. 9. 18. և 22.) և յամենայնի 'ի սոսա յեբր″. և յայլ ամենայն թարգմանութիւնս 'ի պատմութե̃ անդ դնի դովէկ եդովմայեցի կ̃մ եդոմ, իսկ յեօթանասնից թարգ″, և 'ի մերումս դնի դովէկ ասորի: Այլ 'ի վերնագրի աստ յայլս դնի եդոմայեցի. նաև 'ի թարգ″. եօթանասնից ևս և 'ի ձեռագիրս մեր. մի ձեռագիր միայն գտաք՝ յորում դնի ասորի: Սոյնպէս 'ի բազում նախնի մեկնիչս տեսանեմք եդեալ ասորի. և յովսեպոս (բ̅. 13.) դնէ լինել նաև ծննդեամբ ասորի:

Այլ թէ զիա՞րդ լինիցի այս, զի իցէ սա ասորի միանգամայն և եդովմայեցի, դիւրին է մեկնել. բայց դժուարին է ստուգել. զի երկոքին սոքա ոչ համաձայնին միմեանց. վասն զի ասորիք և եդովմայեցիք կան հեռի 'ի միմեանց՝ 'ի միջի ունելով զպաղեստին. ասորիք են 'ի հիւսիսոյ, և եդովմայեցիք 'ի հարաւոյ. Ի բազում կարծեաց զերկուս և եթ բերցուք 'ի մէջ. առաջինն է թէ նա էր ասորի ազգաւ, և բնակելով 'ի մէջ եդովմայեցւոց՝ կոչեցաւ եդովմայեցի. կամ ընդ հակառակն, նա էր եդովմայեցի, և բնակելով 'ի մէջ ասորւոց, կոչեցաւ ասորի.

Երկրորդ հաւանականագոյն կարծիքն է թէ աստ վրիպակ կայ յեբրայականն, փոփոխութբ տառից דלת և רש՝ որք են նման միմեանց. որպէս 'ի մերս դ. ր. կամ ղ. ղ. Եթէ տալեթիւ ընթերցցի אדום՝ նշանակէ եդովմայեցի. եթէ ռէշիւ ארם՝ նշանակէ արամի, այսինքն ասորի. վասն զի ասորիք՝ արամք ես կոչին յարամայ որդւոյ սեմայ. յոր միտս արքայն ասորւոց կոչի արքայ արամայ. ըստ այնմ (Եսայ. է. 7.) * Եւ հասին արքայ արամայ (այսինքն ասորեաց) և փակէ „ որդի ռոմելեայ‖ և այլն. Այս կարծիք երևի ճշմարիտ, և ըստ այսմ պարտ է ասել՝ թէ ասորի էր դովէկ, և եկեալ յարեցաւ 'ի սաւուղ, և երևելի ումն գոլով՝ եղև նորա ախոռապետ.

Այն այս դովէկ վասն մատնելոյ զդաւիթ և զքահանայապետն աքիմելէք՝ օրինակեաց յինքն զյուդայ. ուստի և բանք սաղմոսիս որք առ դովէկ ասին, առ յուդայ կարգին 'ի բերանոյն քրի. և երբեմն 'ի բերանոյ մարգարէին, և 'ի բերանոյ ամենայն արարածոց, անիծանելով զյիմարութն նորա, և զանողորմութիւն նորին. կարգին և 'ի դէմս այնպիսի մարդոյ՝ որ վասն շահասիրութե կամ վասն փառաց մատնիչ և չարախօս լինի զընկերէ իւրմէ. որպէս տեսցի 'ի մեկնութե.

ԻԱՆ

ա. Զի՞ պարծի 'ի չարութենէ հզօր զանօրէնութենէ. (կամ ըստ այլ օրինակաց՝ հզօրն յանօրէնութեան.) զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ 'ի լեզուի իւրում։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Այս բանք որպէս յայտ է 'ի նախագրելոցդ՝ ուղղակի հայեն 'ի դովեկ ասորի, եւս և առ այնպիսի անօրէնս՝ որք գաժանացեալ պարծին 'ի վերայ չարեացն զոր գործեն, և զոր գործեցին. ընդ որս պժգալով մարգարէին՝ զայրագինս խօսի և ասէ։

Զի՞ պարծի 'ի չարութենէ՝ հզօր զանօրէնութենէ։ Այս բան եթէ բառդ 'ի չարութենէ՝ լիցի խնդիր պարծելոյն, բառդ զանօրէնութենէ՝ լինի խնդիր հզօրին. և մեկնի այսպէս. զիա՞րդ որ հզօրն է 'ի գործել զանօրէնութիւն՝ պարծեսցի 'ի վերայ չարութեան իւրոյ՝ զոր իբրև զէն 'ի կիր առեալ իցէ որպէս պարծէր չարին դովեկ՝ ասելով. ո՞վ կարող էր հաւասարել ինձ, և զայսչափ քահանայս այ̃ կենդանւոյ 'ի միում ժամու 'ի սուր սուսերի կոտորել. ո՞վ կարող էր իբրև զիս զքաղաք մի ողջոյն յառնէ մինչև ցկին, և յերէց մինչև ցոչխար զամենայն միանգամայն ջնջել. ո՞վ կարող էր որպէս ես կարացի յետ զայսչափ չարիս գործելոյ ընդդէմ այնչափ անմեղ անձանց՝ աներկիւղ անահ մնալ՝ յայ̃ և 'ի մարդկանէ։ Ո՞վ անօրէն դու՝ ասէ մարգարէն, զի՞ պարծիս 'ի վերայ այդպիսի չարութեան։

Իսկ եթէ բառդ 'ի չարութենէ լիցի խնդիր հզօրին՝ բառդ զանօրէնութենէ՝ լինի խնդիր պարծելոյն. և մեկնի այսպէս. զի՞ պարծի զանօրէնութեամբ զօրացեալն 'ի չարութեան։

Այս հարցական եղանակ նախ ցուցանէ զսաստկութիւն ցաւոց մարգարէին և զառաւելութիւն զարմացման նորա։ Երկրորդ ցուցանէ զանհնարին մեծութիւն չարութեանն դովեկայ, մանաւանդ եթէ յերկրորդ դէմս դիցի ըստ որում դնի և յեբր". և յայլ թարգ". և 'ի լամբ"․ յասելն․ զի պարծիս 'ի չարութեան ով անօրէն․ Երրորդ ցուցանէ զյիմարութիւն պարծողին․ զի որ պարծի 'ի վերայ չարութեան՝ այն պարծանք նորա դառնայ նմա 'ի նախատինս, որովհետև պարծելովն ցուցանէ զինքն գործօղ չարի․ Թող զայն՝ զի զոր արտաքուստ պարծի՝ նովաւ 'ի ներքուստ տանջի․ զի խիղճ մտաց նորա այրէ զնա 'ի ներքս․ և նա թէպէտ պարծելովն կամի շիջուցանել, սակայն առաւել ևս բորբոքէ․ որպէս որ փչէ 'ի հուր․ նա զի ըստ առակին այնպիսին * մխէ մախր 'ի խախ ||․ Այլ կամելով մարգարէին առաւել ևս մեծացուցանել զչարութիւն դովեկայ՝ յայտ առնէ թէ ոչ ըստ դիպուածոյ եղև նմա գործել զայնպիսիս, այլ կամակար չարութեամբ․ վասն որոյ յաւելու ասել․

Զօրհանապազ զանիրաւութիւն խորհեցաւ 'ի լեզուի իւրում․

Կամի ասել, նա որ զայսպիսի չարիս գործեաց, յառաջագոյն իսկ 'ի նոյն չարիս սովորեալ էր, և 'ի նոյն հաստատեալ էր զչար կամս իւր, և 'ի նոյնպիսի գործս չարութեան պատրաստեալ ունէր զանձն․ զի հանապազ զանիրաւութիւն խորհէր, որով և միշտ յղանայր 'ի սրտի իւրում զայնպիսիս․ ուստի և 'ի դիպել առիթին՝ երկնեաց 'ի բերան իւր՝ 'ի մանկունս բանիւք․ և ապա ծնաւ արտաքս գործով․ Իսկ յետ գործելոյն փոխանակ զղջանալոյ խորհէր 'ի միտս թէ այն անիրաւութիւն զոր արար, իցէ գործ առն հզօրի․ և զայսպիսիս զօրս 'ի միտս խորհէր, լեզուաւ ևս խօսէր․

Յասելն ասա՝ 'ի լեզուի իւրում՝ է ոճ ճարտասանական․ որով գործն արարեալ առաջին գործեօք, ընծայի երկրորդին՝ 'ի կատարելն նովաւ, կամ յորժամ հաղորդի նմա․ Արդ մարդ 'ի խորհելն՝ առաջին գործի ունի զմիտս, զի 'ի նմա խորհի․ և զի այն հաղորդի լեզուին, ըստ որում լեզուն լինի գործի 'ի խօսիլ զխորհեալսն, վասն այնորիկ փոխանակ դնելոյ խորհեցաւ զանիրաւութիւն 'ի միտս և խօսեցաւ զայն լեզուաւ, ասէ խորհեցաւ զանիրաւութիւն 'ի լեզուի իւրում․ ևն․

Լամբ"․ զայս բան և զյաջորդ սորա բոլոր 'ի վերայ սատանայի մեկնէ օրինակելով 'ի դովեկ, և զի 'ի մեկնել մեր 'ի վերայ դովեկայ՝ այն մեկնութիւնք կարեն մասամբ իւր պատշաճիլ և սատանայի, որպէս և յուդայի, զանց առնեմք 'ի մասնաւորի հպեցուցանել և 'ի սատանայ. զի զայս ընթերցողք իսկ կարեն առնել : Զայս անօրէնութիւն դովեկայ առաւել սաստիկ ցուցանէ մարգարէն 'ի յաջորդ այլով իւր նմանութեամբ յասելն :

Դ. Որպէս ածելի սուր՝ սրեաց զնենգութիւն. սիրեաց զչարութիւն քան զբարութիւն. զանօրէնութիւն քան զխօսս արդարութեան :

Ածելին է գործի քերծելոյ, այսինքն հատանելոյ և սրբելոյ զմազս 'ի գլխոյ, 'ի մօրուաց, և այլն : Սակայն որ չարաչար կամիցի վարել զայն, փոխանակ ըզհերսն հատանելոյ՝ հատանէ զմիսն, կամ վիրաւորէ, և սպանանէ իսկ : Արդ բանք նենգութեամբ ասացեալք, կամ գործք նենգաւորք՝ թէպէտև արտաքուստ երևին իբրև սրբիչ արատոյ և արդարացուցիչ յանցանաց, բայց են հատիչ և վիրաւորիչ, և պատճառ բազում չարի՝ եւս և մահու : Եւ զի այսպիսի եղեն բանք դովեկայ, ընդ նմին և բանք յուդայի, սմին իրի ասէ :

Որպէս ածելի սուր՝ սրեաց զնենգութիւն : Նենգութիւն դովեկայ յերիս եղեւ . մի 'ի խորհուրդս, զի կամելով հաճոյ ընծայիլ յաչս սաւուղայ, սրեաց զչար խորհուրդս իւր ըստ սրտի նորա : Երկրորդ 'ի բանսն, զի այնպիսի օրինակաւ խօսեցաւ՝ որ արտաքուստ չերևէր չար, որպէս և յայտ է . բայց 'ի ներքուստ էր հատու սուսեր : Երրորդ 'ի գործս՝ զի իբրև թէ հնազանդիլ կամելով հրամանին սաւուղայ՝ զայնպիսի կոտորած արար, որպէս առնէ ածելին մազից 'ի գերծուլն :

Զայսպիսի նենգութիւնս ասէ սրեաց իբրև զածելի . որպէս թէ սրութիւն նորին չէր բաւական՝ ասէ յաւել և ինքն զօրացուցանել զայն . սոյնն կամի ցուցանել, թէ այնպիսի իւր օրինակաւ ձևացոյց դովէկ զբանն, որով փոխանակ դադարեցուցանելոյ զբարկութիւնն սաւուղայ, և փոխանակ սրբելոյ զյանցանս քահանայից զրգռեաց զբարկութիւն նորա . և որպէս ածելի սուր դիւրաւ հատանէ զհերս, այսպէս և այն նենգութիւն նորա դիւրաւ եհաս զգթութիւն սաւուղայ։

Եթէ աստանօր բառդ ՆԵՆԳՈՒԹԻՒՆ՝ ցուցէ զմտադրոյն չարութիւնն սաւուղայ, առաւել մեծ ցուցանէ զանօրէնութիւնն դովեկայ. զի ոչ շատացեալ իւրով նենգութեամբ՝ սրեաց և զնենգութիւնն սաւուղայ 'ի կոտորել զքահանայս տեառն և զայնչափ անմեղ անձինս, եւս և զանբան կենդանիս։

Կարէր դովեկ միով բանիւ արդարացուցանել առաջի սաւուղայ զաքիմելէք և զդաւիթ. բայց քանզի ոչ կարէ տեղի աղտաղտին՝ ջուր քաղցր տանել. (Յակ. Գ. 12.) սոյնպէս և ոչ աղտաղտամիտ սիրտ նորա. որովհետև ընկղմեալ էր 'ի չարութեան. ըստ որում յայտ առնէ մարգարէն 'ի յաջորդ բանին աւելով։

ՍԻՐԵՑԵՐ ԶՉԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՆ ԶԲԱՐՈՒԹԻՒՆ. ԶԱՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՔԱՆ ԶԽՕՍԵԼ ԶԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ։ Որ սիրէ ինչ բարոյապէս 'ի նոյն փոխարկի. զոր օրինակ որ սիրէ զարդարութիւն՝ 'ի նոյն կերպարանի, զի լինի արդար։ Որ սիրէ զաղքատս՝ յերանութիւն աղքատացելոց վիճակի. և առաջի Աստուծոյ աղքատացեալ երևելով՝ որպէս ինքն 'ի գութ աղքատաց բերի, սոյնպէս և Աստուած ցուցանէ նմա զգթութիւն իւր։ Որ սիրէ զիմաստունս՝ իմաստնանայ։ Իսկ այն որ սիրէ զչարութիւն 'ի չարութիւն փոխակերպի. և զոր խօսի և գործէ՝ չարութիւն խօսի և գործէ. և զի ասէ սիրեաց դովեկ զչարութիւն քան զբարութիւն եւս, զոր ինչ խօսեցաւ և արար, ոչ եթէ տգիտութեամբ, կամ դիպուածով ինչ խօսեցաւ և արար, այլ 'ի չարութենէ կամաց. որով առաւել սիրէր չար առնել՝ քան բարիս ցուցանել. և առաւել զուարճանայր խօսիլ զայնպիսի նենգաւոր բանս՝ յորմէ ծնանի անօրէնութիւն, քան զայնպիսիս՝ որ լիցի ցուցանող արդարութեան կամ ճշմարտութեան։ Եւ դարձեալ՝ առաւել սիրեաց անօրէնութեամբ չարախօսել քան իրաւամբք ունկն դնել բանիցն աքիմելէքայ, որով անմեղ եցոյց նա զգործ իւր։

Այսպիսի են ամենեքին նոքա՝ որք առաւել յօժարին 'ի չարն քան 'ի բարին. որով և առաւել հաճին չար խօսիլ զայլոց՝ քան բարի. և են նոքա կարիճ չար 'ի խայթել. այլ որպէս ասէ եզնիկ կողբացի 'ի խրատսն. * անգործ մեղու լաւ է քան զժիր կարիճս ‖. ամին

իրի ատելի են այսպիսիքս եթէ այ̃, և եթէ մարդկան. և եթէ բարի ինչ խօսեսցին, նենգութիւն է 'ի ներքոյ լեզուի նոցա. և եթէ զմծայինս բարբառեսցին՝ սուտ է, և բանք նոցա ընդունայն. զի որպէս ասէ սարգիս շնորհալի. ('ի մեկն. յակ. գ̃. 12. ճառ ը̃.) *Բերան որ անիծիւք և դառնութեամբ լի է, և
,, սուր ունիցի զլեզուն՝ որպէս ածելի սրեալ, և սիրէ
,, համակ զխօսս կործանման՝ անմարթ է նմա օրհնու-
,, թիւնս աստուծոյ բարբառել‖. այլ մանաւանդ փոխանակ օրհնութեան զանէծս, և զդաւաճանական բանս. որպիսի եղև դովէկ. որ յարելով 'ի չարութիւն քան 'ի բարութիւն՝ խօսեցաւ և գործեաց զայնպիսիս. և զայս կամելով մարգարէին առաւել ևս հաստատել՝ յարէ զկնի և ասէ.

գ̃. Սիրեաց նա զամենայն խօսս կործանման, և զլեզու նենգաւոր:

Խօսք կործանման ասի բանն այն՝ որոյ զհետ գայ կործանումն բազմաց, կամ կոտորած բազմութեան, կամ կորուստ մեծամեծաց, եւն. որպիսի եղև խօսքն դովէկայ. ըստ որում ասացաք 'ի սկզբան սաղմոսիս. և զի զայն խօսեցաւ դովէկ ախորժելով ընդ այն, վասն որոյ ասէ.

Սիրեաց նա զամենայն խօսս կործանման. զլեզու նենգաւոր: Այսինքն սիրեաց խօսիլ յամենայնի զայնպիսիս, որ իցէ պատճառ կործանման, և այն նենգութբ̃ լեզուի. վասն որոյ և 'ի հարցանել սաւուղայ զդաւթէ՝ նա ոչ միայն զկործանումն դաւթի եդ առաջի, այլ և զկորուստ քահանայապետին նենգութբ̃ լեզուի, և զկոտորած այնչափ բազմութե̃ քահանայից, և զաւերումն քաղաքին նոմբայ.

Եւ զի ինքն նենգաւոր էր, և սիրէր զլեզուս նենգաւորս, այսինքն խօսիլ նենգաւոր լեզուօք, վասն որոյ և զբան կործանմանն նենգութբ̃ մատոյց, իսկ թէ որպիսի կործանումն և կորուստ զհետ եկն այսր բանի, (տես 'ի ա̃. թագ. իբ̃. 9 = 21.)

Մարթ է ասել 'ի ձեռն լեզուաց նենգաւորաց իմանալ զայնոսիկ՝ որք նենգութբ̃ խօսէին. որպիսի էին զիփացիք և նմանիք նոցին. զորս սիրէր դովէկ վասն տեսանելոյ զնոսա՝ նմանս ինքեան, և միախորհուրդս․ որով և ըստ նենգութեան նոցա խօսէր և վարէր ընդ սաւուղայ առ հաճոյանալոյ նմա։

Արժան է աստ 'ի միտ առնուլ՝ թէ քանի զգուշութի՟ պիտոյ է նոցա՝ որք կան առաջի իշխանաց և մեծամեծաց, զի կամելով հաճոյանալ նոցա՝ բազում անգամ նենգաւոր լեզուաւ վարին առ նոսա․ և երբեմն գործով ևս 'ի մեծամեծ չարիս բերին․ բայց որպէս և աչօք տեսանեմք, նենգութիւն այսպիսեաց բազում անգամ լինի ինքեանց որոգայթ կորստեան․ և ինքն տէր լինի վրէժխնդիր, ըստ որում վկայէ և մարգարէն ասելով։

Է. Վասն այսորիկ ա՟ծ կործանեսցէ զքեզ իսպառ․ խլեսցէ և հանցէ զքեզ յարկաց քոց, և զարմատս քո յերկրէ կենդանեաց։

Ով ինչ պատահեալ իցէ դովեկայ յետ չարեացն զոր գործեաց՝ ոչ ինչ յիշէն սուրբ գիրք։ Իսկ սակայն պատմեն հրէայք՝ թէ չարաչար մահուամբ կորեաւ․ զի ասեն, յորժամ էր սաւուղ 'ի լերինն գեղբուայ, ընդ նմա էր և դովեկ․ որ և ընդ սաւուղայ չոքաւ զիւրովի, այսինքն անձամբ անձին սպան զանձն, և էջ 'ի դժոխս․ և յետ այնորիկ զվլեց արմատս նորին, այսինքն զվլեց որդիս նորա սպանին արք դաւթի, կամ ըստ ասելոյ այլոց՝ նա ինքն դաւիթ։ Իսկ զի այս կործանումն նորա եղև 'ի բարկութենէն այ, սմին իրի ասէ։

Վասն այսորիկ ա՟ծ կործանեսցէ զքեզ իսպառ։ Այսինքն վասն այսպիսի չարեաց իւրոց՝ որով կործանեաց նա, այսինքն կորոյս զայնչափ անմեղ անձինս, և այրեաց իսպառ զքաղաքն նոմբայ, ա՟ծ ևս իսպառ կործանեսցէ զնա։ Փոխաբերութի՟ խօսի․ զի փոխանակ ասելոյ՝ կորուսցէ՝ ասէ կործանեսցէ․ զի որովհետև կամեցաւ նա բարձրանալ առաջի սաւուղայ և մեծանալ քան զայլս, կործանիլ նորա կործանումն եղև նորին։

Իսկ դարձեալ՝ եթէ ճշմարիտ է զոր ասեն հրէայք՝ թէ նա չոքաւ զիւրովի, պատշաճագոյն ևս եղև դնել կործանումն․ զի որովհետև զայն արար յանձն կալով․ 'ի հարկանել զսուրն 'ի սիրտ իւր՝ կործանեցաւ 'ի վայր: Եւ այն կործանումն ասի իսպառ՝ ըստ երից, մի՝ զի ասի լեալ անձնասպանութեամբ և յօտարութեան. երկրորդ՝ զի և արմատք նորա չարաչար կորեան, և երրորդ՝ զի այնու կործանմամբ էջ 'ի դժոխս. ուր ունի մնալ իսպառ, այսինքն 'ի յաւիտեան: 'Ի սոսին ևս ակնարկելով մարգարէին յարէ զկնի և ասէ:

Խլեսցէ և հանցէ զնա յարկաց իւրոց: Զոր շինուածոյ նմանութբ̃ խօսելով՝ կործանեսցէ ասաց, զնոյն տընկոյ նմանեցուցանելով՝ խլեսցէ ասէ առ 'ի ցուցանել զսաստկութիւն կորստեան ամբարշտին դովեկայ և նմանեաց նորա. զի 'ի կործանիլ շինուածոյ՝ երևին մնացորդք նորա. իսկ 'ի խլիլ և 'ի հանիլ տնկոյ՝ հասարակօրէն ոչ երևին մնացորդքն: Իսկ 'ի յարկաց ասելով՝ իմանայ ո՛չ միայն զտունս, այլ և զքաղաքս. որպէս թէ ասէր. կորուսցէ զնա արտաքոյ տան և արտաքոյ քաղաքի. և ո՛չ յիշեսցի անուն նորա՝ ոչ 'ի յարկս նորին և ո՛չ 'ի քաղաքս, զի որովհետև զայնչափ տունս կործանեաց, և զայնպիսի քաղաք քահանայից աւերեաց, տուն նորա ևս մի՛ լիցի նորա. և մի՛ ասիցի բնաւ՝ թէ սա էր տուն դովեկայ, և սա էր քաղաքն՝ յորում նա բնակէր: Եւ զի մի՛ կարծիցես, թէ 'ի խլիլ նորա իբրև տունկ, կամ իբրև ծառ՝ յարմատոյ անտի նորա մնացեալ իցէ ինչ, յարէ զկնի և ասէ:

Եւ զարմատս նորա (հանցէ) յերկրէն կենդանեաց: Արմատովք իմացեալ լինին նախ որդիք, զի թէպէտ որդիք ոստոց և պտղոց նմանին, բայց արմատոց ևս հանդիտանան. ըստ որում յորդւոց ստեղին այլ որդիք. նաև զի ծնօղք որդւովք արմատանան. երկրորդ՝ իմացեալ լինին յիշատակք նոցա, զորս թողուն մարդիկ, զի նոքօք արմատասցին, այսինքն թէ նոքիմբք մնասցեն անուանք նոցա: Զսոսա զամենեսեան ասէ՝ այսինքն զորդիս և զյիշատակս դովեկայ ջնջեսցէ տէր յերկրէն կենդանեաց, որով իմացեալ լինի երկիրն աւետեաց, ևս և երկիրն վերին, այսինքն է երկինքն, (զորմէ տե՛ս 'ի սաղ. իզ. 16:)

Այս ամենայն բանք որպէս ասացաք 'ի վերոյ՝ մարգարէութբ̃ իմն հայէին 'ի յուդայ, որ խորհեցաւ համապաղ զանիրաւութիւն ընդդէմ քահանայապետին իւրոյ, այսինքն ընդդէմ քն̄ի․ և սրեաց զնենգութիւն քահանայապետաց․ սիրեաց և զչարութիւն հանգոյն սատանայի․ որով և մատնեաց զա̄ծ իւր․ վասն այսորիկ և ա̄ծ ջնջեաց զնա 'ի յարկաց նորա, և 'ի յարկաց իւրոց, և իջոյց 'ի դժոխս։

Զայս արար տէրն մեր և ընդ սատանայ, կործանելով զնա իսպառ և խլելով զնա 'ի տիրելոյ յարկաց իւրոց, այսինքն յայնմ մասնէ դժոխոց, ուր էր գոգն աբրահամու, և վարելով զհնարս նորա յերկրէն կենդանեաց, այսինքն յեկեղեցւոյ։

Բարոյապէս, սոյն այս և 'ի վերայ մեղաց կատարի․ զի 'ի գալ շնորհաց հոգւոյն սրբոյ 'ի հոգի մարդոյ, նա ինքն հոգին սուրբ կործանէ զմեղսն իսպառ, և խլէ զնա 'ի խղճէ մտաց, և զարմատս նորա հանէ յերկրէն կենդանեաց՝ այսինքն 'ի հոգւոյն։ Հակառակն այսր պատահի նոցա, որք առանց հոգւոյն սրբոյ մատչին 'ի սուրբ խորհուրդս․ որպիսի են նոքա՝ որք ոչ ճշմարիտ զղջմամբ և ոչ ուղիղ դիտաւորութ̄բ մերձին 'ի խոստովանութիւն և 'ի հաղորդութ̄ի, այլ վասն սովորութեան կամ վասն ամաչելոյ․ որով թէպէտ և կարծեն կործանել զմեղս և ջնջել զայնս, բայց արտաքին իմ̄ն երևոյթ է այն․ զի մեղքն արմատացեալ կայ 'ի սիրտս նոցա, և վաղվաղակի 'ի դուրս երևեցուցանէ զինքն։ Տատասկն 'ի կոխոտելն ոչ երևի փշալից, և յորժամ ոչ կոխոտի՝ երևեցուցանէ զփուշս իւր զի կայ արմատն։ Սոյնպէս և մեղքն յորժամ արտաքուստ կոխոտի սուտ զղջմամբ և անվաւեր խոստովանութեամբ՝ իբրև թէ ոչ երևի․ իսկ յորժամ դադարի կոխոտու̄մն, այսինքն յորժամ անցանէ ժա̄մն սպատիր զղջման և խոստովանութեան, երևեցուցանէ զինքն եթէ՛ 'ի բանս և եթէ 'ի գործս․ զի յարմատոյ անտի բղխէ զփուշս իւր։ Զարմատս նորա պարտ է խլել 'ի հոգւոյն և վարել արտաքս։

Ի ձեռագիրս մեր, որպէս և յեբր", և յեօթ", և յասորիս, դնի աստ հանգիստ, որովհետև աստանօր փոխին դէմք բանից․ զի մինչև ցայսվայր խօսեցաւ մարգարէն զդովեկայ և զյուդայէ․ իսկ այժմ խօսի զարդարոց, թէ 'ի տեսանել նոցա զանցս այնպիսի մարդոյ զինչ ունիցին առնել, և զինչ խորհեսցին ասել, սմին իրի ասէ։

Է. Տեսցեն արդարք և երկիցեն. զնովաւ ծիծաղեսցեն, և ասասցեն։

Ը. Այս այր է, որ ոչ արար զա̅ծ իւր օգնական. այլ յուսացաւ սա 'ի բազում մեծութե̅ իւր, և զօրացաւ 'ի նանրութե̅ իւրում։

Որպէս մարդ բարի՝ օրինակ լինի այլոց՝ դիմելոյ 'ի բարին, նոյնպէս և մարդ չար 'ի լինելն տարացոյց չարի՝ լինի երբեմն և առիթ բարւոյ. անզգամաց և անխրատից լինի տարացոյց դիմելոյ 'ի չարն. իսկ անմեղաց և արդարոց օրինակ խոտորելոյ 'ի չարէ և զգաստանալոյ և խորագէտ լինելոյ. զի ըստ իմաստնոյն. *'ի չարչարել անզգամին խորագիտագոյն ևս „ լինի անմեղն‖. (առակ. ժԹ. 25.) և թէ *'Ի „ տուժել անխրատի՝ խորագիտագոյն ևս լիցի ան„ մեղն. և իմաստութե̅՝ հանճարեղն ընդունի զգի„ տութիւն‖. (առակ. իա̅. 11։) Ըստ սմին մտաց ասէ։

Տեսցեն արդարք և երկիցեն։ Այսինքն տեսեալ արդարոց թէ ա̅ծ ոչ խնայէ պատուհասել զամպարիշտն՝ երկիցեն 'ի գործելոյ զչար, երկիցեն և 'ի նմանելոյ այնպիսւոյն, երկիցեն և 'ի բարկութենէն ա̅յ. և ըստ այսմ որչափ մեծ լինի արդարոց երկնչիլ 'ի չարէ մեղաց, այնչափ ևս արհամարհելի լինի նոցա հետևողութիւն ամպարշտաց. և զայս կամելով յայտնել՝ յարէ զկնի և ասէ։

Զնովաւ ծիծաղեսցեն, և ասասցեն։ Այս ծիծաղիլ ոչ է վասն ուրախանալոյ 'ի վերայ կորստեան ամպարշտին, այլ է վասն զարմանալոյ նոցա 'ի վերայ յիմարութե̅ նորին. մինչև արհամարհել և ասել 'ի զարմացմանէ անտի։

Ը. Այս այր է, որ ոչ արար զա̅ծ իւր օգնական. այլ յուսացաւ սա 'ի բազում մեծութե̅ իւր։ Որպէս թէ ասէր, ո՜վ քանի յիմար է այրս այս, զի ոչ եդ զյոյս իւր յայն՝ որ միայն է հզօր, այլ յայն՝ որ է տկար և սնոտի. ոչ արար իւր օգնական զարարիչ իւր, որ է ամենակարող. և ոչ յուսացաւ 'ի նա. այլ յուսալով 'ի բապում ինչս, կամ 'ի պատիւ մեծութե̃, նովիմբ կամեցաւ յառաջ տանիլ զկամս իւր, և զօրանալ սնոտեօք. վասն որոյ յաւելու ասել։

Եւ զօրացաւ 'ի նանրութեան իւրում։ Այսինքն կամեցաւ զօրանալ սնոտի նանրութե̃ իւրով, այս է մեծութե̃ իւրով. և կամ զօրացաւ արդարև իւրով մեծութե̃, բայց նանիր է այդ մեծութիւն, և անցցէ փութով. որով և զօրանալ նորա նանրասցի, և ոչի՛նչ օգտեսցէ նմա, մանաւանդ յաւուրն յետնում։ Սոյն այս դիպաւ և սատանայի, զորով ծիծաղեցան հրեշտակք 'ի զօրանալ նորա 'ի նանիր խորհուրդս իւր ամբարտաւանութեամբ, և յոյժ հպատակիլ նորա ա̄յ։ Զայս ամենայն եդեալ մարգարէին, առաջի առնէ և զվիճակ կենաց արդարոյն յանձն իւր նկարելով՝ յասելն։

Է. Բայց ես որպէս ձիթենի պտղալից 'ի տան Ա̄յ. յուսացայ յողորմութիւն Ա̄յ յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտենից։

Ը. Խոստովանեցայց քեզ յաւիտեան. զի արարեր. և համբերեցից անուան քում, զի քաղցր ես առաջի սբ̄ց քոց։

Զայս ասէ Դաւիթ հայելով ո՛չ 'ի վիճակն յայն՝ յորում էր, այլ՝ յորում հանդերձեալ էր լինել. զի վիճակն յորում էր, վշտալից էր և տառապագին, գոլով վտարեալ և տատանեալ յերեսաց Սաւուղայ. իսկ վիճակն՝ յորում հանդերձեալ էր լինել՝ անդորրական էր և բերկրալի, յորում ունէր հաստարմատ ծաղկիլ իբրև ձիթենի, և պտղաւորիլ։ Ապա յայն վիճակ հայելով ասէ։

Բայց ես որպէս ձիթենի պտղալից 'ի տան Ա̄յ։ Ուր բառդ 'ի մէջ բերէ զայն ամենայն՝ զոր ասաց 'ի վերոյ զդովեկայ. որպէս թէ ասէր. ահա այսպէս և այսպէս լինիցի դովեկս. իբր զի ինքն խլեսցի, և արմատ նորա քնջեսցի. իսկ ես մնացից 'ի հայրենիս իմ և 'ի թագաւորութեան. և եղէց իբրև ձիթենի, մշտադալար խորհրդովք, և հաստատուն՝ արմատովք հաւատոյ, և պարարտութեամբ իւղոյ, այսինքն յուսոյ, սիրոյ և ողորմութեան. և տաց զպտուղ գործոց բարեաց 'ի տանն ա̄յ։

Բարսեղ վարդապետ ('ի մեկն. մարկ. գլ. ժա.) յայլ իմն տեսութիւն փոխաբերեալ զնշանակութիւն ձիթենւոյն գրէ այսպէս. * ձիթենին (ասէ) ունի երկու յատկութիւն. մի՝ զի ո՛չ թողու զտերեւն՝ որ է „ նշանակ սիրոյ, ուստի ողորմութիւնն ծնանի. և միւս „ ևս՝ զի 'ի պտղոյ իւրմէ մզի եղանէ իւղն զուարթացուցիչ, որ է յօրինակ հոգւոյն սրբոյ. զոր և դաւիթ զնոյն իւղ և ձէթ կոչէ. օծեր իւղով ասէ „ զգլուխ իմ, և թէ ծերութիւն իմ 'ի ձէթ պարարտութեան ‖: Յայս միտս ևս արդարն նմանի ձիթենւոյ: Այնպէս և Նարեկացին 'ի խորհուրդ իւղոյ մեռոնին 'ի վեր առեալ գրէ ('ի բանն ղդ.) այսպէս. * այս իւղոյ փափաքեալ դաւիթ իբր ձիթենի պտղալից 'ի տանն այ յուսով յարակայի՝ լքեալ զթըլփատութիւնն անդստին՝ զմկրտութեանս շնորհ գուշակէ ‖. ըստ որում 'ի մկրտութե՛ 'ի գործ ածի իւղ երեխայից, ևս և իւղ մեռոնին 'ի խորհուրդ դրոշմին. որոյ աղագաւ յաւելու ասել. * ձիթենի մշտատև (խորհրդոյ) 'ի տանն այ, յորմէ մեռոնն ‖:

Հոգևորապէս ձիթենին նշանակէ զսուրբ կոյսն, զորմէ խօսեցաք 'ի Ճառս նորա 'ի գիրսն կոչեցեալ պատկեր տօնից:

Այլ այսոքիկ բանք յաւէտ ըստ յարմարութեան դնին քան ըստ նշանակութեան: Իսկ հայելով յանձն դաւթի ևս և յանձն արդարոյ՝ սոյն այս առաջիկայ բնաբանս ցուցանէ զբարեվիճակ կեանս 'ի բեղմնաւորութեան բարի գործոց. և այս՝ վասն յուսալոյ նորա հանապազ յողորմութիւնն այ. սմին իրի յարէ զկնի և ասէ:

Յուսացայ յողորմութիւնն այ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից: Որպէս թէ ասէր. ես ո՛չ ապաւինեցայ 'ի մեծութիւն անցաւոր, և 'ի զօրութիւն մնոտի (որպէս ըզդովեկ, և որպէս զայլ ամպարիշտս), այլ յուսացայ յողորմութիւնն այ. որ մնայ յաւիտեան և յաւիտեանս յաւիտենից:

Այս երիցս կրկնումն բառիս **յաւիտեան**՝ ցուցանէ զհաստատութիւն յաւիտենականութեան ողորմութեն այ. որպէս թէ ասէր. Ճշմարտիւ միշտ և յաւիտեան անփոփոխ մնաց ողորմութիւն քո: Կամ թերևս զայս ասէ․ վասն յուսալոյն, որպէս թէ ասէր․ ոչ եթէ առ ժամանակ մի յուսացայ յողորմութիւնն ա՟յ․ այլ միշտ յուսացայ, և միշտ յուսացայց, և 'ի յուսալն իմ միշտ օրհնեցից զնա, և միշտ գոհացայց զնմանէ․ և առ այս յարէ։

Ը․ ԽՈՍՏՈՎԱՆ ԵՂԷՑ ՔԵԶ ՅԱՒԻՏԵԱՆ, ԶԻ ԱՐԱՐԵՐ։ Այսինքն որովհետև զայս այսպէս արարեր՝ իբր զի որ յուսացաւ 'ի նանրութիւն՝ կորուսեր․ իսկ որ յուսացաւ յողորմութե՟ն քո՝ լիացուցեր, որպէս հանդերձեալ ես լիացուցանել և զիս․ ես և հաստատել, վասն այսորիկ գոհացայ, զքէն և օրհնեցից զքեզ յաւիտեան։

Այլ գիտելի է՝ զի այս ոճ՝ յասելն պարզապէս ԶԻ ԱՐԱՐԵՐ՝ առանց այլոյ բառի՝ ցուցանէ առնել զայն ամենայն՝ զոր ասէ․ որպէս և ('ի սաղ․ ԼԸ․ 10․) յասելն․ ԴՈՒ ԱՐԱՐԵՐ․ ցուցանէ առնել զայն ամենայն՝ զոր ասաց, և զոր ունէր ասել։ Ըստ այսմ է և աստ յասելն ԶԻ ԱՐԱՐԵՐ։ Յայս ապաւինեալ մարգարէին՝ կրկին առաջի դնէ զյոյս իւր առ ա՟ծ, և ասէ։

ԵՒ ՀԱՄԲԵՐԵՑԻՑ ԱՆՈՒԱՆ ՔՈՒՄ։ Այսինքն 'ի պաշարիլ իմում 'ի նեղութե՟ համբերից անուան քում․ զի զյոյս իմ 'ի քեզ եդեալ՝ համբերութե՟բ տարայց ամենայնի․ (տես 'ի սաղ․ ԻԴ․ 2․ 4․) Ոչ ասէ համբերից քեզ, այլ անուան քում․ զի անունն ա՟յ՝ որով կոչի երկայնամիտ՝ տայ մեզ երկայնամտել և համբերել, և քաղցրանալ ևս՝ 'ի յիշելն զայն, և առ այս յարէ։

ԶԻ ՔԱՂՑՐ ԵՍ ԱՌԱՋԻ ՍՐԲՈՑ ՔՈՑ։ Այսինքն քաղցր ես առ սուրբս քո․ կամ թէ քաղցր է յիշատակութիւն քո՝ որ լինի առաջի սրբոց․ զի յայն եդեալ են նոքա զյոյս իւրեանց․ յայն քաղցրանան, և յայն ունին բերկրիլ յաւիտեան։

ՍԱՂՄՈՍ. ԾԲ.

Յանդիմանութիւն ապականութեան ամպարշտաց. եւ ցոյցք երկիւղի եւ ամօթոյ նոցա. եւ փափաք փրկութեան եւ դարձի ժողովրդեանն այ։

Ի կատարած. վասն մաղաղեթայ, իմաստութիւն ՚ի դաւիթ։

1 Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Ած. ապականեցան
եւ պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց: եւ ոչ
ոք է որ առնէ զքաղցրութիւն։ 2 Տէր յերկնից նայեցաւ յամենայն
որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ
զԱծ։ 3 Ամենեքեան խոտորեցան ՚ի միասին, եւ անպիտանացան։
4 Ոչ ոք է որ առնէ զբարի, եւ ոչ՛ ոք մինչեւ ՚ի մի։ 5 Որպէս
ոչ ծանիցեն ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն։ 6 Որք ուտէին
զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. եւ զԱծ ոչ
կարդացին։ 7 Անդ երկիցեն երկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ. զի
Ած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից։ 8 Ամաչեսցեն եւ յամօթ
լիցին, զի Ած անարգեաց զնոսա։ 9 Ո՞ տացէ ՚ի Սիոնէ
զփրկութիւն Իսրայէլի. ՚ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան
իւրոյ, ցնծասցէ Յակոբ, եւ ուրախ եղիցի Իսրայէլ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. վասն մաղաղեթայ, իմաստութիւն ՚ի դաւիթ։

ՅԱՅՍՄ ՎԵՐՆԱԳՐԻ ԴԺՈՒԱ*րութիւնն է ՚ի վերայ բառին* մաղաղեթ, *կամ ըստ այլոց ձեռագրաց՝* մեղեղեթ, *կամ ըստ եբրայականին* ալ մախալաթ. *այս է՝* վասն մախալաթայ։ *Զայս բառ ակիւղաս թարգմանէ* վայր, *թէոդոտիոն* գաւառ, *եւ սիւմաքոս* գիւղ, *իսկ Հերոնիմոս* դաս, *կամ* պար, *կամ* գունդ։ Այլ *ըստ ասելոյ ոմանց* տողս նշանակի նուագարան՝ որ 'ի գործ ածիւր 'ի դասի 'ի մէջ տաճարի ։

Եւ ըստ այսմ միտ բանի վերնագրիդ ըստ բացատրելոյ ոմանց լինի այս ։ Սաղմոս լի իմաստութեամբ ազդեալ 'ի դաւիթ վասն երգելոյ այնու գործեաւ՝ որ ասի մաղաղէթ կամ մախալաթ (այն է թերևս մխալ.) և կամ թէ սաղմոս երգելի բազմութեամբ 'ի մէջ դասու և պարու ։ Իսկ ոմանք ասեն՝ թէ այսու բառիւ նշանակի եղանակ ինչ նուագելոյ . և ոմանք ևս յաւելուն ասել զայլ ինչ . այլ առաջին կարծիքն երևի հաւանական . (տես 'ի ներած . գլ. Ժ ։) Այս սաղմոս ըստ ամենայնի է նոյն ընդ երեքտասաներորդ սաղմոսի, ուստի զոր ինչ ասացաք 'ի վերնագրի նորա վասն առթին և վասն դիտաւորութե՟ն նոյնք հային և յայս . տես անդ ։ Սոյնպէս և զոր միանգամ եդաք անդ 'ի մեկնութեան իւրաքանչիւր բանից՝ այն ամենայն հային և 'ի բանս սորա . զի ամենեքին նոյն են ։

Իսկ թէ ընդէ՞ր աստ ևս կրկնի այս սաղմոս՝ ոչ կարեմք ճշմարիտ ինչ ասել . որովհետև չգտանեմք ինչ տարբերութիւն ընդ սա և ընդ նա, բայց եթէ 'ի քանի մի բառս՝ ('ի համարն 7. և 8 ։) Մարթ է ասել, թէ զայս սաղմոս որ էր դաւթի, 'ի ժամանակս գերութե՟ն կամ առ ժամանակօք եզեկիայ նոր իմն եղանակաւ և կամ նորոգելով ինչ երգեցին . և յետոյ 'ի ժամանակս եզրի կամ այլոյ ուրուք, զերկոսին ևս ուրոյն եդին 'ի միմեանց ։ Որպէս և իցէ, որովհետև երկոքին ևս նոյն են, ազդ առնեմք ընթերցողաց՝ տեսանել զմեկնութ՟ի սորա 'ի մեկնութեան անդ ԺԳ . սաղմոսին ։ Բայց այսու ամենայնիւ համառօտիւ իմն կամելով մեկնել և զսա՝ ասասցուք ինչ և աստ ։

ԲԱՆ

ա՟. Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Ա՟ծ. ապականեցան և պղծեցան յանօրէնութեան իւրեանց. և ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն։

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Բառդ անզգամ՝ բազում օրինակաւ կարէ առեալ լինել, բայց աստ ըստ կրկին մտաց դնի. մի՝ փոխանակ կամաւորապէս չզգացողի. կամ փոխանակ այնր՝ որ կամօք ոչ կամի իմանալ, և մնայ անմիտ ՚ի բարին և մտադիր ՚ի չարն։ Երկրորդ՝ փոխանակ այնպիսումն որ գիտելով գործէ զչարն՝ այնպիսի օրինակաւ՝ որպէս թէ ոչ գիտէր. և եթէ ասիցես նմա, թէ չար է զոր առնես, նա արհամարհէ և ծիծաղելով գործէ, և զոր գիտէ՝ ժխտելով ախորժէ։ Յայսպիսիս հայի այս բան՝ զոր առաջի դնէ մարգարէն յասելն։

Ասաց անզգամն ՚ի սրտի իւրում թէ ոչ գոյ Ա՟ծ։ Այր անզգամ ըստ առաջին նշանակութեանն զոր եդաք, ոչ կարէ ասել ՚ի միտս իւր, թէ ոչ գոյ Ա՟ծ, զի ոչ կարէ ուրանալ զնա. այլ ասէ զայն ՚ի սրտի իւրում, որովհետև, ոչ գոյ Ա՟ծ ՚ի սրտի նորա, այսինքն ՚ի յօժարութեան սրտի նորա։ Իսկ ըստ երկրորդին առեալ՝ երբեմն այնպիսին՝ նաև ՚ի միտս իւր կարէ ասել, թէ ոչ գոյ Ա՟ծ. և ամենայն ինչ ըստ դիպուածոյ լինի։ Եւ զայս յայն սակս ասէ այնպիսին, զի մի ունիցի ՚ի վերայ իւր իշխան և դատաւոր՝ քննիչ գործոց իւրոց, և վրէժխնդիր չարեացն՝ զորս գործէ։ Եւ թէպէտ անհնարին երևի մարդոյ՝ խսպառ ուրանալ զգոյութ՟ին Ա՟յ, բայց ՚ի կուրանալ մտաց խսպառ ՚ի թիւրութեան, և ՚ի խստանալ կամաց ՚ի չարութեան, յայս ևս համարձակի։

Այլ այսու ամենայնիւ բռնադատի ընդունիլ և ասել, թէ գոյ Ա՟ծ. զի թէ ոչ գոյր Ա՟ծ, ինքն ուստի եղև. եթէ ասիցէ ՚ի ծնողացս, ծնողքն ուստի եղեն. նոքա ևս ասէ յայլոց, այն այլք ևս յայլոց, մինչև ցանբաւս ։ Եթէ զայս ընդունի այնպիսին, արժան է հարցանել զնա, արդեօք արտաքոյ ամենայնի այսոցիկ կա՞յ ինչ՝ յորմէ իցեն, թէ չկայ · եթէ չկայ՝ զիա՞րդ յոչ գոլոյ՝ այսպիսի և այսչափ գոլ եղեն · իսկ եթէ կայ, նա յայլմէ՞ է՝ թէ յիւրմէ կամ ինքնին · յայլմէ ոչ կարէ ասել՝ զի ոչ գոյ այլ, ուրեմն յիւրմէ է կամ ինքնին ։

Օ այս եղեալ հարցանեմ, կարելի՞ էր արդեօք այնմ լինել կամ ոչ լինել · եթէ կարելի էր ոչ լինել, ոչ լինէր · զի ուստի՞ լինէր · քանզի ոչ գոյ այլ յորմէ լիցի ։ Իսկ եթէ կարէր լինել, ուստի՞ եղև, միթէ յոչնչէ՞ · և զիա՞րդ ոչինչն կարիցէ առնել ինչ ։ Ուրեմն այն այլ՝ ոչ եթէ էր կարելի, կամ ոչ կարելի, այլ հարկաւոր · այսինքն այնպիսի՝ որում անհնարին էր ոչ լինել ինքնին 'ի գոյն ։ Արդ եթէ անհնարին էր նմա ոչ լինել ինքնին 'ի գոյն, ուրեմն այնչափ էր 'ի գոյն, որչափ կարէ մտածիլ գոյն · ապա թէ ոչ, ոչ լինէր ինքնին գոյող ։

Եւ այսմ հետևի՝ թէ ոչ էր նմա կարելի այսչափ ինչ լինել կամ այնչափ 'ի գոյն, այլ որչափ ըմբռնի բան գոլոյ յամբաւս ցամբաւս, որով ապացուցանի՝ թէ այն էակ է ամենայն էութե՟ և գոյութեան պարագրիչ · և ամենայն էութեանց և գոյութեանց էացուցիչ և գոյացուցիչ, որովհետև 'ի նմանէ եղեն · և ինքն անփոփոխ և յաւիտենական, ամենակատար, և ամենազօր է՟ն ։

Եւ դարձեալ եթէ ոչ գոյր ա՟ծ, ո՞վ է ապա այն որ զայսպիսի կարգ եդ յարարածս, ո՞վ առնէ՝ զի այսպիսի շարժմամբ լիցի տիւ և գիշեր, ո՞վ առնէ՝ զի այսչափ կենդանիք և բոյսք այսպիսի հիանալի կարգաւ կատարեսցեն զգործս բնութեան առանց ճանաչման իւրեանց · ապաքէն ուր ուրեք տեսանեմք կարգ ինչ, իսկոյն 'ի կարգաւորիչն հայիմք, և անհնարին է ասել՝ թէ առանց կարգիչ լինելոյ ուրուք՝ լինիցի ուրեք անշարժ միատարր կարգ · ապա զիա՞րդ այսպիսի հիանալի կարգ գտանիցի յաշխարհի՝ յամենայնի միօրինակ, եթէ չգուցէ կարգադիր ամենայնի սորա ։

Արդ եթէ անզգամն կարէ ըմբռնել և ըմբռնէ իսկ զկարգ աշխարհի, և տեսանէ 'ի նմա բազմազիմի կատարելութիւնս, զիա՞րդ կարիցէ ասել՝ 'ի միտս իւր՝

թէ այս ամենայն ինքնին ըստ դիպուածոյ լինին. և ոչ գոյ արարիչ և կարգիչ սոցա. զի եթէ տուն անրգգամին առանց կարգադրողի ոչ կարէ կարգաւորիլ, ապա զիարդ կարէ կարծել նա, թէ բովանդակ աշխարհս կարգաւորի առանց գերագոյն կարգաւորողի: Ուրեմն կամ ոչ կարէ ասել՝ թէ ոչ գոյ ա͞ծ, և կամ անզգամութեամբ ասէ զայս, այսինքն թէպէտ և գիտէ թէ գոյ ա͞ծ. բայց 'ի չարութէ սրտին ասէ 'ի սրտի՝ թէ ոչ գոյ. և կամ կարծէ, թէ նա ոչ կառավարէ զաշխարհս, կամ թէ ոչ այնպէս կառավարէ՝ որպէս ասի. և այսպէս ասելով և կարծելով՝ կամի համոզել զինքն՝ զի աներկիւղ կատարեսցէ զկամս հաճոյից իւրոց: Յարմարական մեկնութեամբ այս բան յարմարի հրէից. որք ուրացան զք͞ս ա͞ծ. որով և ապականեցան յինքեանս, և պղծեցան յարարողութիւնս իւրեանց, ըստ սոյն և այլք 'ի վարս. զորոց 'ի հասարակի խօսի մարգարէն՝ ասելով.

Ապականեցան և պղծեցան յանօրէնութիւնս իւրեանց. և ոչ ոք է որ առնէ զքաղցրութիւն: Այսինքն՝ որ միանգամ 'ի բաց կացին 'ի ծանօթութենէն ա͞յ, նոքա զհետ եղեն անօրէնութեան. որով ապականեցան և պղծեցան առ հասարակ. մինչև ոչ զոք գտանել 'ի նոցանէ՝ որ առնիցէ զքաղցրութիւն, այսինքն զայնպիսի բարի՝ որ իցէ հաճոյ ա͞յ: Եւ զի 'ի լինել նոցա յայնպիսի վիճակի՝ արարիչ նոցա նայեցաւ 'ի նոսա, վասն որոյ ասէ:

բ. **Ա͞ծ յերկնից նայեցաւ յորդիս մարդկան, տեսանել թէ իցէ ոք իմաստուն՝ որ խնդրիցէ զա͞ծ:**

գ. **Ամենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան:**

դ. **Ո՛չ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի:**

Ի սաղ. ժ͞գ. 2. գնի * տէր յերկնից նայեցաւ ‖. ըստ որում յեբր". գնի անդ եէօվա. այսինքն տէր, կամ որ էն: Իսկ աստ գնի * ա͞ծ յերկնից նայեցաւ ‖. ըստ որում յեբր". գնի աստ էլօհիմ, այսինքն ա͞ծ: Երկոքեան եւս ըստ նոյն մտաց գնին. ըստ որոյ ասէ:

Ած յերկնից նայեցաւ յամենայն որդիս մարդկան, տեսանել թէ իցէ՞ ոք իմաստուն․ որ խնդրիցէ զԱծ ։ *Նայելն այ՟ յորդիս մարդկան ըստ կրկին մտաց կարէ իմացեալ լինել աստ․ մի՝ ըստ խնամելոյ՝ միանգամայն և ըստ խնդրելոյ զնոսա, զի և նոքա խնդրեսցեն զինքն և գտցեն․ յոր միտս կամի ասել․ յետ մեղանչելոյն ադամայ՝ իբրև ապականեցան մարդիկ 'ի գործս անօրէնութեան, ոչ անտես արար զնոսա աստուած, այլ խնդրեաց զնոսա, և զամենայն ինչ եդ առաջի նոցա․ զի գոնէ 'ի միտ առեալ զգաստասցին և խնդրեսցեն զաստուած․ բայց ետես՝ զի թիւրեալ էին ամենեքին ։ Երկրորդ՝ կարէ իմացեալ լինել ըստ զննելոյ․ յոր միտս կամի ասել․ յապականիլ որդւոց մարդկան՝ արարիչ նոցա նայեցաւ 'ի բարձանց՝ զննել թէ արդեօք ամենեքին եւս ապականեալ իցեն, թէ կայցէ ոք 'ի նոսա իմաստուն, կամ այնպիսի անձն՝ որ խնդրիցէ զինքն․ և սակայն ոչ զոք եգիտ․ զի առ հասարակ ապականեալ էին ։ Եւ առ այս յարէ զինի, և ասէ ։*

դ․ Ամենեքեան խոտորեցան 'ի միասին և անպիտանացան ։ *Այսինքն ամենեքին միանգամայն խոտորեցան յուղղութենէ, և առաջի այ՟ անպիտան գտան մինչև չմնալոյ և ոչ միումն, և առ այս կրկին յարէ ։*

դ․ Ոչ ոք է որ առնէ զբարի, և չէ ոք մինչև 'ի մի ։ *Այսինքն ոչ ոք գտաւ որ առնիցէ զկատարեալ բարի ինչ գործ հաճոյ այ՟ ։ Այս էր ահա վիճակ մարդկային բնութե՟ յետ յանցաւորութեանն ադամայ․ որպէս գրէ և առաքեալն ('ի հռոմ․ գ․ 9 = 12 ։) Միայն քսիւ և 'ի ձեռն փրկութե՟ քսի՝ կարացին մարդիկ առնել զքաղցրութիւն, և հասանել յարդարութի՟․ * քանզի „ ամենեքեան մեղան (ասէ) և նուազեալ են 'ի փառաց „ անտի այ՟․ և արդարանան ձրի նորին շնորհօք 'ի ձեռն „ փրկութեն որ 'ի քս՟ յս՟ ‖․ (տես հռոմ․ գ․ 22 = 28 ։) Թերևս ասիցէ ոք․ եթէ այդպէս է, ուրեմն ապականիլ մարդկան 'ի վարս, և ոչ ճանաչել նոցա զա՟ծ, և ոչ խնդրել զնա՝ չէր համարելի նոցա 'ի մեղս ։ Ո՛չ այդպէս է․ զի թէպէտ և յանցաւորութեամբն ադամայ զրկեցան մարդիկ 'ի շնորհաց, բայց ոչ եղծան 'ի բանականութե՟․ ուստի գտնէ ըստ կանոնի այնր բանա-*

կամութեան պարտական էին ճանաչել զա՟ծ, կամ գոնէ ոչ խստանալ ընդդէմ նորա. այլ խնդրել զնա, որովհետեւ ա՟ծ ինքնին խնդրէր զնոսա եւ 'ի պատրաստի ունէր զշնորհս իւր յարդեանցն ք՟ի՝ տալ նոցա։ Յայս հայելով յարէ զկնի եւ ասէ։

Ե. Ո՞րպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն։

Զոր յանբանս տեսանեմք՝ զնոյն զայն աստ 'ի բանաւորս յանդիմանէ մարգարէն, ապաքէն շունք եւ կատուք, եւն, յորժամ վնաս ինչ գործեն ընդդէմ տեառն իւրեանց, զգայութ՟բ իսկ ճանաչեն զոր գործենն. եւ ըմբռնելով՝ թէ ընդդէմ է այն տեառն իւրեանց՝ կքին եւ կծկին, երբեմն եւ ծածկին, կամ փախչին։ Արդ զոր անբանք ըմբռնեն ասէ, բանաւորք ոչ կարիցեն ըմբռնել, վասն որոյ զարմանալով հարցանէ։

Ո՞րպէս ոչ ծանիցեն ամենեքեան, որ գործեն զանօրէնութիւն։ Այսինքն, զիա՞րդ ոչ կարիցեն ճանաչել՝ թէ գոյ վրէժխնդրութիւն անօրէնութեան իւրեանց՝ զորս գործեն. միթէ քան զանբանս անբանագո՞յնք իցեն։ Եթէ այլք անիրաւին առ նոսա՝ ինքեանք լինին վրէժխնդիր նոցա՝ եւ երբեմն նաեւ զաստուած՝ թէ՛ եւ ոչ ճանաչեն, կոչեն վրէժ առնուլ 'ի նոցանէ. ապա զիա՞րդ ինքեանք 'ի գործելն զանօրէնութ՟ի ոչ ճանաչեն ինքեանց վրէժխնդիր զա՟ծ։ Եւ ո՞չ զի ըստ ո՟մի ափիբերան արասցէ զն՟ս մարգարէն՝ մասնաւորէ զբան իւր ասելով։

Զ. Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի, եւ զա՟ծ ոչ կարդացին։

Այս բան եթէ 'ի բերանոյ ա՟յ ասիցի, ժողովրդովք իմացեալ լինին արդարք, կամ նոքա՝ որք ճանաչելով զա՟ծ՝ պաշտեն զնա։ Իսկ եթէ 'ի բերանոյ մարգարէին ասիցի՝ ժողովրդեամբ իմացեալ լինի իսրայէլ, եւ բանն հայի 'ի գերիչս իսրայէլի։ Զերկոցունց եւս մարթ է իմանալ զոր ասէ, մանաւանդ զառաջինն։

Որք ուտէին զժողովուրդ իմ որպէս կերակուր հացի. եւ զա՟ծ ոչ կարդացին։ Որպէս թէ ասէր. գիտեն նոքա չարչարել զժողովուրդ իմ, եւ կեղեքել զնոսա, եւ իբրեւ թէ ուտել. եւ զիա՞րդ ոչ գիտեն՝ թէ կայ վրէժխնդգիր այսմ ամենայնի ։ Եւ սակայն առաւել կամելով յայլս անիրաւիլ՝ քան յորոց ցանկանն զրկել, ոչ կամին խորհիլ զայս. ուստի և ոչ կամին յետս կալ յանիրաւութէ, և վասն այսորիկ անկարանան կարդալ առ իս, և յինէն ողորմութ̃ի գտանել ։

Այլազգ ևս կարէ մեկնիլ այս բան. որպէս թէ եդեալ էր. 'ի տեսանել անզգամաց՝ թէ ժողովուրդ ա̃յ՝ առ ա̃ծ կարդան, ծաղր առնէին զնոսա, և փոխանակ օրինակ առնլոյ 'ի նոցանէ, և ըստ նոցա առ ա̃ծ դիմելոյ՝ զա̃ծ արհամարհէին, և տեսեալ՝ թէ ա̃ծ ոչ խնդրէ վրէժ յանցանաց իւրեանց՝ յառնէին 'ի վերայ նոցա, և յափշտակէին զինչս նոցա, ե̃ն ։

Ի վերոյ եդ մարգարէն, թէ ամենեքին խոտորեցան, ե̃ն, և թէ ընաւ ամենևին ոչ գոյ ոք որ առնէ զբարի. իսկ աստ ողջոյն զժողովուրդ մի առաջի դնէ՝ իբրև սուրբ և բարի. զի թէ չէր այսպիսի՝ ոչ ասէր ժողովուրդ իմ. այլ ժողովք չարեաց, կամ սոսկ ժողովուրդ՝ և ոչ իմ, զիարդ ապա եդ ոչ զոքն ։ Բայց գիտելի է՝ զի մարգարէն յառաջին բանսն անդ՝ հայէր 'ի մարդիկ ըստ որում թողեալ յինքեանս. և ըստ այսմ ամենեքին խոտորեցան, և ոչ գտանիւր ոք, որ յիւրմէ գործէր զկատարեալ ինչ գործ բարի. իսկ աստ հայի յայնոսիկ՝ զորս ա̃ծ ընտրեաց, և 'ի ձեռն յատուկ շնորհաց իւրոց արար իւր, հայելով 'ի շնորհս և յարժանաւորութիւն գործոցն ք̃ի. զի վասն այնր տայր զշընորհս, և վասն նորա հաճէր ընդ նոսա, և զնա ունելով միջնորդ՝ ունէր զայնոսիկ իւր ժողովուրդ ։ Սոսա ասէ կեղեքէին խոտորեալքն յա̃յ, և ոչ խղճէին յանձինս, և ոչ կամէին զգաստանալ 'ի չարեաց և դառնալ առ ա̃ծ. մանաւանդ թէ երկնչէին դիմել առ նա ։ Եւ յայս միտս յարէ զկնի և ասէ ։

Է. Անդ երկեան երկիւղ՝ ուր ոչ էին երկիւղ. զի ա̃ծ ցրուեաց զոսկերս մարդահաճոյից ։

Ը. Ամաչեցին և յամօթ եղեն, զի ա̃ծ անարգեաց զնոսա ։

Երկնչիլ երկիւղ՝ նշանակէ սաստիկ երկնչիլ, արդ եթէ երկնչիլն անդ՝ ուր ոչ իցէ երկիւղ՝ յիմարութիւն է, քանի եւս մեծ յիմարութիւն է սաստիկ երկնչիլ ուր չիք բնաւ տեղի երկիւղի. այսինքն ուր չիցէ այնպիսի ինչ՝ յորմէ պարտ իցէ երկնչիլ։ Յայսպիսիս հայելով ասէ։

Անդ երկիցեն երկիւղ՝ ուր ոչ իցէ երկիւղ։ Կամի ասել. որք միանգամ խոտորեալ են յուղղութենէ, երկնչին անդ՝ ուր ոչ գոյ երկնչելի ինչ. և ընդհակառակն՝ ոչ երկնչին անդ՝ ուր պարտ է երկնչիլ. զի երկնչին յայնմ՝ որք աւանդին նոցա 'ի մարդկանէ, կամ զորս ինքեանք մեծ համարին, իսկ յորս պարտ էր երկնչիլ՝ ոչ երկնչին։ Երկնչին պաշտել զած՝ զի մի զկարս իւրեանց կանոնաւորեսցեն. և ոչ երկնչին պաշտել զախտս՝ յորոց չարաչար տանջին։

Երկնչին ուտել զայս ինչ՝ որ ոչ է երկնչելի՝ այլ մանաւանդ ախորժելի և բարի, և ոչ երկնչին ծամել զմիս եղբօրն, եւս և կեղեքել զայլս, և ուտել զստացուածս այլոց։ Երկնչին ասել զճշմարիտն՝ զի մի երևեսցին պարզամիտ կամ յիմար, և ոչ երկնչին սութեամբ չարախօսել, որպէս զի ինքեանք լաւ երևեսցին։ Երկնչին կորուսանել զայս ինչ սնոտի, և ոչ երկնչին կորուսանել զայլս յանիրաւի. որպէս արարին տիրապանքն ասելով, բարձցուք զքս, զի մի կորուսցուք զազգ մեր և զտեղի. սոյնպէս արար և պիղատոս և այլք բազումք։ Բայց հասցէ ժամ՝ զի երկիցեն երկիւղ մեծ 'ի տուժելն անդ պատժոյք և 'ի տուգանելն դատապարտութեամբ։ (տես և 'ի սաղ. ժդ. 7։) Համառօտիւ ասացից, բազումք երկնչին 'ի հաճոյ լինելոյ այ, որպէս զի հաճոյ լիցին մարդկան որպէս արար դովէկ. և սակայն երկիցեն երկիւղ՝ յորժամ մատնեսցին 'ի ձեռս այ կենդանւոյ։ Վասն այսր ամենայնի յարէ զկնի. և ասէ։

Զի ած ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից։ Բառիդ ոսկերս՝ իմացեալ լինին նախ կեանք մարդոյ՝ յորում կայ մարդն իբր յոսկերս. երկրորդ զօրութիւնք մարդոյ ներքինք և արտաքինք. երրորդ այն ամենայն՝ որով հաստատուն մնայ մարդ 'ի կամս իւր առնել զայս կամ զայն. Թուի թէ աստ դնի ըստ երկրորդին, այսինքն ըստ նշանակելոյ զզօրութիւնս։ Եւ ըստ այսմ, բառդ զի՝ կրկնակի յարէ զայս բան ընդ նախընթացին. մի՝

ըստ հեռուութե՛, և մի ևս՝ ըստ պատճառի։

Ըստ հեռուութեան առեալ կամի ասել, որպէսև ամբարիշտք առաւել կամին հաճոյ լինել մարդոյ քան ա՟յ, վասն այնորիկ և ա՟ծ ցրուեսցէ զոսկերս նոցա՝ այսինքն զզօրութիւնս նոցին, ուր ասելովն ցրուեսցէ՝ ցուցանէ, թէ զամենայն զօրութիւնս նոցա անպիտան արասցէ, և ոչ զմին թողցէ 'ի պիտանութեան. մինչև ոչ կարել նոցա՝ և ոչ գործ մի արժանաւոր գործել։ * Զոր է մարդահաճութիւն (ասէ սարգիս շնորհալի 'ի մեկն. յակ. ե՟. 1. ճառ դ՟.) չար և կորուսիչ հոգ-
„ ւոյ. չար է և աչառելն ումեք յանիրաւի. և ստգը-
„ տեալ են յաստուածային գրոց. մանաւանդ թէ ընդ
„ մեծամեծ դատաստանօք անկեալ. ըստ այսմ՝ ա՟ծ
„ ցրուեսցէ զոսկերս մարդահաճոյից. և եթէ տակա-
„ ւին մարդկան հաճոյ լինէի, ապա քրիստոսի ծառայ
„ ոչ էի. տեսանե՞ս զմեծութիւն չարին, որ և 'ի ք՟ի
„ ծառայութենէն գիտէ տարագիր առնել զանձն
„ իւր‖։

Ըստ պատճառի առեալ՝ կամի ասել. վասն այնորիկ երկիցեն ամբարիշտք ուր ոչ իցէ երկիւղ, վասն զի ցրուեալ է աստուած զզօրութիւնս նոցա, զի որպէսև նոքա ջանան մարդկան հաճոյանալ և ոչ ա՟յ, ա՟ծ ևս ոչ միայն ոչ տայ նոցա զզօրութիւն աներկիւղ գիմելոյ 'ի բարին, այլ և վասն անարժանութեան նոցա ցրուէ և զայնս՝ զորս տուեալ է նոցա. ուստի և նոքա զուրկ գոլով 'ի զօրութենէ, անտի՝ լինին երկչոտ 'ի գործել զբարիս, և աներկիւղ՝ 'ի գործել զչար. որով և ունին յամօթ լինել և խայտառ մերժիլ յա՟յ. և առ այս յարէ զկնի, և ասէ։

ե՟. Ամաչեսցեն և յամօթ լիցին, զի ա՟ծ անարգեաց զնոսա։

Ի ժդ՟ սաղմ. այլազգ դնի այս բան, այսինքն է. * Զխորհուրդ աղքատին յամօթ արարին, զի տէր է
„ յոյս նորա‖։ Երկոքին այս բանք միանգամայն առեալ մեկնին նախ այսպէս. որպէսև ամբարիշտք զխորհուրդ աղքատին յամօթ արարին՝ առ 'ի հաճոյանալ անձանց և այլոց, 'ի յուսալ աղքատին առ ա՟ծ՝ նոքա ամաչեսցեն և յամօթ լիցին, զի ա՟ծ պաշտպան լիցի աղքատին. իսկ զամբարիշտս անարգեսցէ. այսինքն արասցէ՝ զի փոխանակ փառաւորեալ լինելոյ՝ անար-

գեսցին աստ և 'ի հանդերձեալն ։ Ըստ հոգևորին հրէայք ամօթ համարեցան զխորհուրդ աղքատացելոյն ք͞ի · մանաւանդ թէ զնա ինքն ևս յամօթ արարին, վասն որոյ և անարգեցան յ͞ոյ ։ Եւ դարձեալ 'ի դիմել աղքատաց այսինքն հեթանոսաց առ ա͞ծ, գարշեցան 'ի նոյանէ հրէայք, որով գրեթէ յամօթ արարին զխորհուրդս նոցա · այլ ինքեանք ամաչեցին · և ա͞ծ անարգս կացոյց զնոսա քան զամենայն ազգս ընդ ամենայն տեղիս մինչև ցայսօր ։

Երկրորդ այս բանք մեկնին այսպէս · ամբարիշտք թէպէտև զբարի խորհուրդս աղքատին անարգեցին, բայց ունին մեծապէս ամաչել · վասն զի ա͞ծ ընկալցի զաղքատն, և զնոսա անարգեսցէ · զի որպէսև աղքատքըն յուսացան յա͞ծ, իսկ ամբարիշտք յուսացան 'ի զօրութիւն իւրեանց, վասն այնորիկ զնոսա զօրացուսցէ և փառաւորեսցէ · իսկ զսոսա տկարացուսցէ և անարգեսցէ ։

Այս անարգութիւն հայի և յայլ ամենայն մեղաւորս · 'ի հպարտս, յագահս, 'ի վաւաշոտս, ևն · զի սոքա անարգելով զխորհուրդ ք͞ի՝ որ աղքատացաւ վասն նոցա՝ արժանի լինին անարգեալ լինելոյ 'ի ք͞է ։ Եւ թէպէտ զայս ոչ կամին իմանալ մանաւանդ վաւաշոտք, բայց 'ի վերջոյ իմասցին և զղջասցին ։ Անչափ ատելի և տաղտկալի են այսպիսիքս առաջի ք͞ի, մինչև զզուիլ նմա 'ի սոցանէ ։ 'Ի մեռանիլ Թայիսայ պոռնկի՝ եղին զսուրբ խաչն 'ի ձեռս նորա · և առ ժամայն թռեաւ խաչն 'ի ձեռաց նորա · և եղև աներևոյթ · զի գարշեցաւ 'ի պիղծ մարմնոյ նորա, թէև մեռեալ էր ։ Այսպիսի դիպուած թէպէտև միշտ ոչ պատահի, բայց ցուցանէ ևս թէ գարշի ք͞ս 'ի մեղաւորաց և 'ի մարմնոց նոցա · և անարգս համարելով զնոսա՝ մերժէ յիւրմէ յաւիտեան · և յայնժամ * ամաչեսցեն և յամօթ լի-
„ ցին · զի ա͞ծ անարգեաց զնոսա ‖ ։ Զայս ամենայն յիշեցուցեալ մարգարէին փափաքմամբ իմն կնքէ զբան իւր, և ասէ ։

Թ. Ո՞ տայցէ ՚ի Սիովնէ զփրկութիւն Իսրայէլի . ՚ի դարձուցանել Տեառն զգերութիւն ժողովրդեան իւրոյ , ցնծասցէ Յակովբ , և ուրախ եղիցի Իսրայէլ։

Այս բան յայտ առնէ զմեծ փափաք և զանհնարին անձուկ կարօտութեան առ փրկութիւն իսրայէլի ՚ի գերութենէ և յայլոց թշուառութեանց . որում յառաջածանօթ լեալ մարգարէին հառաչէր . որպէս և ոմանք ՚ի մերոց յառաջագոյն տեսեալ զգերութիւն և զթշուառութիւն ազգիս՝ յոգւոց ելանելով ասէին . իցէ՞ թէ ողորմեսցի՝ որ եհարն զմեզ , և ցուցցէ զփրկութիւն իւր , և դարձուսցէ զգերութիւն մեր . եւն . Ըստ այսմ խօսի և աստ մարգարէն ասելով։

Ո՞ տայցէ ՚ի Սիովնէ զփրկութիւն Իսրայէլի . ՚ի դարձուցանել Տն զգերութիւն ժողովրդեան իւրոյ , ցնծասցէ Յակովբ , և ուրախ եղիցի Իսրայէլ։ Բառդ գերութեան՝ առեալ լինի աստ ՚ի թանձրացեալն՝ փոխանակ գերեալ ժողովրդեան . քանզի այս սովորութիւն է սուրբ գրոց , բազում ուրեք դնել զվերացեալն փոխանակ թանձրացելոյ , որպէս ասացեալ է մեր այլուր ։

Յայս միտս առեալ և աստ զբառդ գերութեան , կամի ասել . իցէ՞ արդեօք , զի յարիցէ ոք ՚ի Սիոնէ՝ որ կարիցէ զօրութեամբ տեառն դարձուցանել զգերեալ ժողովուրդն իսրայէլի ՚ի գերութենէ իւրեանց ։ Եւ յայնժամ ցնծասցէ ասէ յակոբ և ուրախ եղիցի իսրայէլ ։ Որ յակոբաւ նշանակին երկու ցեղքն՝ որք էին յիշխանութեանն երուսաղէմի . իսկ իսրայէլիւ նշանակին մնացեալ տասն ցեղքն որք էին յիշխանութեանն սամարեայ ։

Ըստ հոգևորին առեալ՝ կամի ասել . առաքեսցէ՞ արդեօք Ած յերկնից զորդի իւր , որ փրկեսցէ զազգ մարդկան . որով և գերութիւն նոցա դարձցի ՚ի փրկութիւն , և տրտմութիւն նոցա յուրախութիւն . և պանդխտութիւն նոցա փոխեսցի յանեղծական փառս յաւիտենականս ։

ՍԱՂՄՈՍ ԾԳ.

Մաղթանք փրկելոյ ՚ի ձեռաց թշնամեաց ընդունելութեամբն ա̄յ. միանգամայն և խոստովանութիւն գոհութե̄ առ ա̄ծ՝ հանդերձ կամաւոր պատարագաւ՝ վասն գտանելոյ առ ՚ի նմանէ զպաշտպանութի̄։

Ի կատարած. ընդ օրհնութե̄ս, իմաստութիւն ՚ի դաւիթ. ՚ի ժամանակի՝ զի եկին զիփացիքն և ասեն ցսաւուղ. ահաւասիկ դաւիթ թաքուցեալ կայ առ մեզ։

1 Ա̄ծ յանուն քում կեցո՛ զիս, և ՚ի զօրութե̄ քում իրաւ արա ինձ։ 2 Ա̄ծ լո՛ւր աղօթից իմոց. ա՛ւնկն դիր բանից բերանոյ իմոյ։ 3 Օտարք յարեան ՚ի վ̄ր իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ, և ո՛չ համարեցան զա̄ծ առաջի իւրեանց։ 4 Ահա՛ ա̄ծ օգնական իմ. և տ̄ր ընդունելի հոգւոյ իմոյ։ 5 Դարձուսցէ զչարն ՚ի թշնամիս իմ, ճշմարտութե̄ քով սատակեա՛ զնոսա։ 6 Կամաւ կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. խոստովան եղէց անուան քում, զի բարի է։ 7 Զի յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ։

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած. ընդ օրհնութիւս, իմաստութե̄ ՚ի դաւիթ. ՚ի ժամանակի՝ զի եկին զիփացիքն, և ասեն ցսաւուղ. ահաւասիկ դաւիթ թաքուցեալ կայ առ մեզ։ (Ա̄. Թագ. ԻԳ. 19.)

ԵՐԿԻՑՍ ԵԿԻՆ ԶԻՓԱՑԻՔ ԱՌ *սաւուղ, և եղեն մատնիչ դաւթի. մին պատմի (ա̄ Թագ. իգ. 19. և միւսն ա̄ Թագ. իզ. 1.) Ըստ բանն հայի յառաջինն. ուր գրի, թէ յորժամ նստէր դաւիթ ՚ի լերին յանապատին զիփայ, ՚ի սահմանս ցեղին յուդայ, ՚ի տեղւոջն՝ որ կոչիւր Նոր, կամ ըստ այլոց կենօս, որ նշանակէ նոր,* իմացեալ զայն զԻփացւոյ՝ եկին առ Սաւուղ՝ որ նստէր ՚ի քաղաքի իւրում ՚ի գաբաա, որ թարգմանի բլուր, ՚ի սահմանս ցեղին բենիամենի, և ասեն ցնա. ո՞չ աւանիկ դաւիթ թաքուցեալ է առ մեզ յանձուկ տեղւոջ իբր յապահովի, զոր և դիւրին է փակել անդ, և կորուսանել: Զայն լուեալ Սաւուղայ՝ ուրախ եղև, և դարձոյց զնոսա՝ զի դիտեսցեն և տեսցեն, և վերստին ազդ արասցեն ինքեան.

Ի գնալ զԻփացւոցն՝ զգաց դաւիթ, և գիտացեալ թէ գայ Սաւուղ, ել ՚ի տեղւոջէ անտի, և չոքաւ ՚ի տեղին կոչեցեալ վէմ, ուր հասեալ Սաւուղայ և զօրաց նորա բազմութեամբ պատեցին զնա շուրջանակի. և յորժամ մերձ էին ձերբակալ առնել զնա, եհաս գուժկան առ Սաւուղ և ասէ, փութա՛ էկ, զի արշաւեցին այլազգիք յերկիր քո:

Իբրև լուաւ Սաւուղ զայսպիսի բօթ, եթող զպաշարումն դաւթի, և դարձաւ յետս. որով և զերծաւ դաւիթ ՚ի ձեռաց նորա, և ՚ի ձեռաց ծառայից նորին (ա̄. թագ. իգ̄. 14 = 28.) Իսկ ելեալ անտի բնակեցաւ ՚ի սահմանս գադդայ առ աղի ծովուն: (ա̄. թագ. իդ̄. 1.)

Իսկ տեսեալ զինքն ազատ յայնպիսի մեծէ վտանգէ՝ մատոյց ա̄յ շնորհակալութի̄, և ասաց զսաղմոս զայս, զկնի որոյ ասաց վասն այսր ազատութեան և զսաղմոսն ի̄ր: Իսկ զի մեծ էր վտանգն՝ յորում էր, մեծ համարելով և զփրկութիւն իւր, ըստ այնմ յօրինէ զբան սաղմոսիս:

Յասացելոցս աստի ինքնին մեկնի վերնագիր սորա: Իսկ բառս Իմաստութեան՝ որ դնի ՚ի վերնագրիդ, բարոյապէս առեալ ցուցանէ զիմաստութիւն բանից սաղմոսիս, որպէս թէ եղեալ էր, սաղմոս ազդեալ ՚ի դաւիթ ՚ի իմաստութեամբ, և դասեալ ընդ օրհնութիւնս, այսինքն ընդ շարս սաղմոսերգութե̄ց ՚ի կատարած. (զորմէ տես ՚ի ներած. գլ. թ.) Զայսպիսի եղեալ մատուցուք ՚ի մեկնութի̄:

Ր. Ռ. Ն

ա̅. Ա̅ծ յանուան քում կեցո՛ զիս. և 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Դեռևս իբրև 'ի վտանգի գոլով խօսի Դաւիթ. զի թէպէտև յետ ազատելոյ 'ի վտանգէ ասաց զայս, բայց քանզի 'ի վտանգի անդ ևս զայսպիսիս խօսէր 'ի սրտի, սմին իրի և 'ի յօրինելն զսաղմոսս զայս վասն այնր՝ ըզնոյն առաջի նկարելով խօսի, որպէս թէ տակաւին 'ի նմին իցէ. և զի յայնժամ վտանգի չունէր զայլ իւր ապաւէն, այլ միայն զա̅ծ, կոչմամբ անուանն ա̅յ սկսանի ըզբան իւր և ասէ:

Ա̅ծ յանուան քում կեցո՛ զիս: Անուանն ա̅յ յայտ է թէ նշանակէ զնոյն զայն՝ որ է ա̅ծ. ուստի և յասելն՝ ա̅ծ յանուան քում կեցո՛ զիս, կամ անուամբ քով կեցո՛ զիս՝ նշանակի ասել, քև կեցո՛ զիս, կամ թէ դու որ ես ա̅ծ՝ կեցո՛ զիս: Եւ թէպէտ կարէր այսպէս ևս ասել, որպէս և ասէ իսկ այլուր. * կեցո՛ զիս ա̅ծ ‖ (սաղ. կ̅ը. 1.) բայց զանունն 'ի մէջ բերելով՝ չորս ինչ դիտէ:

Մի՝ 'ի խոստովանիլ թէ միայն անունն ա̅յ բաւական է կեցուցանել. զի ոչ է լոկ ձայն ինչ, այլ այնպիսի ձայն՝ որ է նշանակիչ ամենակարող տեառն. և ըստ այսմ բառդ յանուան՝ որ դնի 'ի ներգոյական հոլովն, ունի միանգամայն և զզօրութիւն գործիականի, և տայ նշանակել թէ ա̅ծ անուամբ իւրով իբրև պարսպաւ շուրջ պատեալ պահէր զնա. և յանուան անդ իւրում իբր 'ի շրջապատ ապաստանի անաշխատ կեցուցանէր: Եւ ըստ այսմ կամի ասել. 'ի մեծի նեղութեանս՝ փոքու իմն կարող ես կեցուցանել զիս. զի միայն 'ի յիշելս իմ զանունն քո՝ նովիմն անուամբ փրկիմ, կամ թէ նոյն իսկ անունդ լինի ինձ իբր աշտարակ հզօր, և իբր պարիսպ ամուր, յորում դու ինքն կեցուցանես զիս. զի ոչ զինուց կարօտիս, և ոչ իւիք աշխատ լինիս, այլ ինքնազօր հրամանաւդ անաշխատ յաղթես մահու և կենաց, ուրե՟մն կեցո՛ զիս աղաչեմ։

Երկրորդ՝ գիտէ ստիպել զա՟ծ 'ի կեցուցանել զինքն փութով. զի այս եղանակ խօսից է թախանձական, և ունի իւիք զզօրութիւն բռնադատելոյ, որպիսի են բանք երդմնեցուցանելոյ, որով գրեթէ կամի հարկել զանհարկելին ա՟ծ, և որպէս թէ ասէ. եթէ ոչ խնայես յիս՝ խնայեա՛ յանուն քո, և փութա՛ փրկել զիս. վասն զի թշնամիք իմ որք պաշարեալ են զիս, գիտեն թէ ես 'ի քեզ եմ յուսացեալ. ապա եթէ ըմբռնեսցեն զիս, և կորուսցեն, գուցէ մեծաբանեսցեն ասելով. ո՞ւր է ա՟ծ քո առ որ յուսայիր, զիա՞րդ ոչ կարաց նա փրկել զքեզ. և այսու անուն քոյ հայհոյեսցի 'ի նոցանէ. յիշեա՛ ուրե՟մն զանուն քո. և 'ի յանուան քում արա՛ անդորր կեցուցանելով զիս.

Երրորդ՝ գիտէ փառաւոր ցուցանել զանունն ա՟յ, և ըստ այսմ առեալ ներգոյական հոլովդ յանուան քում դնի փոխանակ բառիս վասն անուան քո. յոր միտս կամի ասել. աղաչեմ զքեզ տէր կեցո՛ զիս ոչ վասն իմոյ օգտի, այլ վասն փառաց անուան քո, ոչ զի ես յաղթօղ գտայց, այլ զի անուն քոյ բարձրասցի և մեծասցի. վասն որոյ կեցո՛ զիս աղաչեմ, զի տեսցեն թշնամիք իմ զզօրութիւն քո, և զարմասցին. որով և յայտնի լիցի անուն քո առ նոսա՝ թէ քանի հզօր է։ Յայս միտս ասի ('ի գիրս առակ. ժը. 10.) *'ի մեծութենէ զօրութե՟ց յայտնի է անուն տեառն‖.

Չորրորդ՝ գիտէ 'ի գութ շարժել զա՟ծ. որպէս թէ ասէր՝ ըստ գրելոյ լամբ''. ոչինչ ունիմ յինէն նուիրել քեզ, որով համարձակեցայց խնդրել զփրկութի՟ անձին իմոյ, և շարժել զքեզ 'ի գթութիւն. զի թափուր եմ յամենայնէ, և ամենևին կարօտ օգնութեան քոյ. արդ եթէ վասն անուան քոյ ցուցցես ինձ զշնորհս մարդասիրութեան, ահա հասանիմ փրկութե՟, ապա թէ յանարժանութի՟ իմ հայիցես, մատնիմ ահա 'ի գուբ կորստեան.

Բայց գիտելի է, զի 'ի սուրբ գիրս մանաւանդ 'ի բանս մարգարէից, և առաւել ևս 'ի սաղմոսի՝ անուամբն աստուծոյ նշանակի և զօրութի՟ն ա՟յ. որպէս յասելն անդ դաւթի ցգողիաթ. * ես գամ 'ի վերայ քո անուամբ տ՟ն‖. (ա՟ թագ. ժէ. 45.) յայս բան անունն ա՟յ դնի փոխանակ զօրութեան ա՟յ. որպէս թէ ասէր. գամ 'ի վերայ քո զօրութ՟բ տեառն՝ որ է տէր զօրութ՟ենց։ Մանաւանդ յայնպիսի տեղիս տեսանի այս, յորս լինի յիշատակութիւն փրկելոյ կամ յաղթելոյ, եւն. եւ զի յայս բան սաղմոսիս առաջի դնի յիշատակութ՟ն փըրկութ՟ե, 'ի սմա եւս անուամբն ա՟յ կարէ նշանակել զօրութիւնն ա՟յ. եւ ըստ այսմ բառդ անուն՝ որ դնի աստ 'ի Ներգոյական հոլովն՝ ըստ ասելոյ մեր 'ի վերոյ՝ առեալ լինի փոխանակ գործիականի, որպէս թէ ասէր, կեցո զիս ա՟ծ զօրութ՟բ քով՝ որոյ 'ի ներքոյ անկեալ կան ամենայն զօրութիւնք եւ բռնութիւնք։

Իսկ կեցուցանելն է ապրեցուցանել յայնպիսի վտանգէ՝ որ բառնայ զկեանս, զի է փրկել 'ի վտանգէ մահու. արդ որպէս յայտ է 'ի պատմութենէ անտի՝ զոր աւանդէ սուրբ գիրն, վտանգ մահու կայր 'ի վերայ դաւթի, եւ այնպիսի մեծ՝ յորպիսի ոչ էր անկեալ դաւիթ, զի թէպէտ եւ յայլում նուագի անկաւ 'ի մեծագոյն վտանգ, (որպէս գրի Բ. Թագ. իա. 16.) բայց օգնեաց նմա աբեսսա որդի շարուհեայ, եւ եհար զաբիսա զայլազգի, եւ զերծոյց զդաւիթ։ Բայց 'ի պաշարման անդ 'ի վիմին՝ զորմէ խօսեցաք 'ի սկզբան, ոչ ոք էր որ կարէր ազատել զնա. ուստի ոչ կարաց յայլ ինչ ապաւինել՝ ոչ 'ի փախուստ եւ ոչ 'ի թաքուստ, այլ միայն յա՟ծ, եւ կամ յանուն ա՟յ՝ ասելով. ահաւասիկ 'ի յետին յայս վտանգ մահու ոչ ոք է՝ որ ապրեցուցանէ զիս, բայց միայն դու տէր աստուած իմ, զի դու միայն կարօղ ես յայսպիսի վտանգէ զերծուցանել։ Եւ զի զայս խնդրէր առնել ոչ արտաքոյ իրաւանց, այլ ըստ իրաւանց, սմին իրի յարէ զկնի եւ ասէ։

Եւ 'ի զօրութեան քում իրաւ արա ինձ։ Իրաւ առնելն է լսելով զխօսս յերկուց կողմանց՝ որոշել զիրաւն, այսինքն զայն որ է ճշմարիտ եւ արդար։ Արդ քանզի որպէս ասացաք, դաւիթ յայնմ անիրաւ պաշարման ոչ ունէր զոք իւր պաշտպան, դիմեաց առ աստուած, ոչ միայն իբր առ ազատեցուցիչ, այլ եւ իբր առ դատաւոր արդար լսել զբանս իւր, եւ առնել զիրաւունս. ուստի՝ ասէ. աղաչեմ զքեզ՝ դու արա դատաստան ընդ իս եւ ընդ սաւուղ, լուր զբանս նորա եւ զբանս իմ, տե՛ս զգործս նորա և զգործս իմ, և իրաւ արա՛ ինձ՝ ոչ 'ի խորհրդեան կամ 'ի հրամանատուութեան, այլ

'ի զօրութեան քում:

Որպէս թէ ասէր, ոչ ես դու իբր զայլ դատաւորս, որք յորոշելն ինչ՝ ոչ ինքեանք՝ այլ այլք կատարեն զայն. զի ինքեանք չունին զօրութիւն կատարելոյ, այլ միայն իշխանութիւն դատելոյ, իսկ դու ոչ այդպէս, այլ զոր որոշես իշխանութեամբ, առնես զօրութեամբ. արա՛ ուրեմն և առ իս աղաչեմ. ցոյց զզօրութիւն քո 'ի դատաստանի քում. և այնու ազատեա՛ զիս: Եւ աստանօր բառդ 'ի զօրութեն՝ որ դնի 'ի ներգոյական հոլովն՝ իմացեալ լինի փոխանակ գործիականի ըստ հասարակ ոճոյ ս՛բ գրոց, որպէս թէ ասէր. ցոյց առ իս զիրաւունս

փրկութ͞ե ամենակարող զօրութ͞բ քով:

Այս բան ասի և 'ի դիմաց մարդկային բնութեան 'ի խնդրելն անդ յ͞այ իրաւ առնել ինքեան յոսոխէ իւրմէ սատանայէ, և կեցուցանել անուամբն Յ͞ի: Զայն աղաչէ և եկեղեցի. 'ի սոյն իսկ և մեք վստահացեալ կոչեմք զանուանն Յ͞ի, և զանուն ամենասուրբ երրորդութ͞ե, յասելն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, որոց զօրութ͞բն գտանեմք զիրաւունս փրկութ͞ե: Զայսպիսիս պաղատելով և մարգարէին՝ աղաչէ զա͞ծ և խնդրէ 'ի նմանէ լսել պաղատանաց իւրոց՝ ասելով:

Դ. Ա͞ծ լուր աղօթից իմոց. ունկն դիր բանից բերանոյ իմոյ:

Զասելն 'ի վերոյ * Ա͞ծ յանուն քում կեցո զիս || ե՛ն. ամլին իսկ եցոյց զզօրութիւն անուանն ա͞յ, և զկարողութ͞ի նորա. իբր զի կարող է փրկել և կեցուցանել. բայց քանզի ոչ ամենայն որ կարէ՝ կամի, ամեն իրի յորդոր լինի ա͞յ՝ զի կամիցի եւս՝ զոր կարէ. և քանզի իբրև առ դատաւոր խօսեցաւ առ ա͞ծ, զյորդորումն կամելոյն այլաբանութ͞բ լսելոյ և ունկն դնելոյ առաջի մատուցանէ, և ասէ:

Ա͞ծ լուր աղօթից իմոց: Զաղաչանս իւր աղօթք կոչէ. զի աղօթքն եւս է աղաչանք առ ա͞ծ յընդունելութիւն կարեւորաց. կամ հեղումն մաղթանաց առաջի ա͞յ վասն ընդունելոյ ինչ 'ի նմանէ: Եւ քանզի զայս մատոյց առաջի 'ի նախընթաց համարն հանդերձ խոստովնութեամբ կարողութեանն այ՟, աստ խնդրէ՝ զի հաճեսցի ընդ այն աղօթս. և զայս հաճութ՟ի նմանեցուցանէ լրոյ. ըստ որում սովորութ՟ի է զհաճիլն և զանսալն լուր կոչել, յոր միտս յորժամ ասեմք, լուաւ իշխանն հայցուածոց ծառային իւրոյ, այսու ոչ իմանամք՝ թէ սոսկ ականջօք լուաւ, այլ թէ անսաց նմա, և հաճեցաւ կատարել զհայցուածս նորա, ըստ այսմ մտաց խօսի աստ մարգարէն. որպէս թէ ասէր. առ քեզ դիմեցի 'ի նեղութ՟ե իմում, առ քեզ պաղատեցայ, զքեզ աղաչեցի. և յաղաչելս իմ ասացի՝ ած՟ յանուան քում կեցո՛ զիս, և արդ աղաչեմ լո՛ւր և դու զբանս իմ, այսինքն հաճեա՛ց կատարել զխնդրուածս իմ։

Ուր յաւելլով զդերանունդ **իմոյ**՝ լուելեայն իմն յայտ առնէ և զայն, զոր յանդիման դնել ոչ համարձակի. որպէս թէ ասացեալ էր. չունիմ զոք՝ որ վասն իմ աղաչեսցէ զքեզ. ես միայն մնացի, ես միայն աղաչեմ. ես միայն գոլով յայսպիսի վտանգի առ քեզ դիմեմ. եթէ զայլ ոք ունէի՝ զնորա աղօթմն միջնորդ կացուցանէի, և համարձակէի ասել, գո՛նէ վասն աղօթից նորա ողորմեա՛ ինձ. և զի չունիմ զայսպիսիս, իմոյս լսել խնդրեմ, իմում անսալ, զիմս ընդունիլ և կատարել. ընկա՛լ արդ և կատարեա՛ աղաչեմ, զի ոչ նենգութեամբ խնդրեմ, և ոչ առ վրէժ խնդրելոյ 'ի թշնամեաց իմոց թախանձեմ։ Նաև առ զօրաւոր առնելոյ զբանն իւր՝ յաւելու ասել։

Ունկն դի՛ր բանից բերանոյ իմոյ. Այս բան նոյն է ընդ վերնոյն, և միայն ըստ յառաջադրութ՟ե և ըստ շարադրութ՟են տարբեր. իբր զի որովհետև անդ եդ զաղօթս, այնմ համաձայն եդ զլսելն. իսկ աստ որովհետև եդ բան բերանոյ՝ որ լինի ձայնիւ, այսմ համեմատ խնդրէ ունկնդիր լինել, որ է ասել. ընկա՛լ զաղօթս իմ՝ զոր սրտիւ և բերանով մատուցանեմ քեզ։

Արթ է ևս ասել, թէ մարգարէն այսու բանիւ խնդրէ յայ՟ և զնշան ինչ ընդունելոյն այ՟ զաղօթս իւր, և կամելոյ նորա հաճիլ ընդ աղաչանսն, և առ այս 'ի մէջ բերէ զնմանութիւն ունկնդրութ՟ե. վասն զի յայտ է՝ թէ որ ունկն դնէ բանից այլոյ՝ կամի լսել. որով և այն ունկնդրութիւն լինի իբրև նշան կամելոյ։ Նաև ըստ այսմ 'ի խնդրել մարգարէին յայ՟՝ ունկնդիր լինել բանից բերանոյ իւրոյ , Թուի թէ սոյին խնդրէ զնշան հաճելոյն ա՟յ . որպէս թէ ասէր , աղաչեմ զքեզ տէր , զի որպէս ես բանիւք բերանոյ իմոյ իբր նշանօք յայտնեմ զոր խնդրեմ , սոյնպէս և դու քոյին պաշտպանութեամբ՝ իբր նշանաւ իւիք յայտնեա զոր հաճիս , որ է ասել . ցո՛յց թէ հաճիս փրկել զիս ։

Երկոքին այս բանք՝ որք դնին յայս համար , կարեն տրոհիլ յինքեանս ևս և ըստ երկուց բանից՝ զորս եդ յառաջնում համարի . իբր զի զոր ասաց անդ , * ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս ‖ . յայս հայելով իբր յաղօթս՝ ասէ աստ , * ա՟ծ լո՛ւր աղօթից իմոց ‖ . և զոր ասաց անդ , * 'ի զօրութեան քում իրաւ արա՛ ինձ ‖ . յայս հայելով իբր 'ի բանս բերանոյ՝ ասէ աստ . * ունկն դիր բանից բերանոյ իմոյ ‖ . որպէս թէ ասէր . աղաչեմ զքեզ լո՛ւր զիմ զայս աղօթս՝ զոր աղօթեմ ասելով՝ ա՟ծ յանուան քում կեցո՛ զիս ։ Ունկն դիր և այսմ բանի զոր խօսիմ ասելով՝ 'ի զօրութե՟ քում իրաւ արա՛ ինձ ։ Եւ թէ զինչ էին 'ի բանսն յայնոսիկ՝ որոց վասն ա՟ծ ունկնդիր լինելով զիրաւունս ունէր առնել և ազատել զնա , առաջի դնէ և ասէ ։

Ե . Օտարք յարեան 'ի վերայ իմ . և հզօրք խնդրեցին զանձն իմ . և ոչ համարեցան զքեզ ա՟ծ առաջի իւրեանց ։

Օտարօք իմացեալ լինին աստ զիփացիք , որք էին 'ի բաժնին յուդայ . և 'ի դիմել դաւթի և 'ի կալ 'ի մէջ նոցա , նոքա արտաքուստ իբրև զդրացի ցուցին զինքեանս առ նա . բայց 'ի ներքուստ օտարացեալ 'ի նմանէ՝ իբրև թշնամի յարեան 'ի վերայ նորա , և մատնեցին զնա սաւուղայ՝ առ 'ի շնորհս գտանել առաջի նորա . և ահա վասն այսր գործոյ նոցա՝ կոչէ զնոսա օտարս , այսինքն օտարացեալս և թշնամացեալս ։ Օ 'ի բառս օտարք 'ի սուրբ գիրս ուրեք ուրեք դնի փոխանակ այնպիսեաց՝ որք իբրև զթշնամի յառնեն և վնասեն . ըստ այնմ . (սաղ . ՃԸ .) ‖ . * յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա ‖ . և (եզեկ . Է . 21 .) * մատնեցին զձեզ 'ի ձեռս օտարաց ‖ . յորս օտարօք իմացեալ լինին թշնամիք ։ Յայս միտս և աստ օտարս կոչէ զզիփացիս , և ըստ հոգևորին զդևս օտարացեալս 'ի մէնջ . զորս ('ի սաղ . ՁԵ . 14 .) անուանէ անօրէնս , յառնել

* ա̃ծ անօրէնք յարեան 'ի վերայ իմ ‖. ե̃ն։

Իսկ հզօրօք իմացեալ լինին աստ սաւուղ և զօրք նորա, ըստ որում սաւուղ էր թագաւոր հզօր, և զօրք նորա որդիք զօրութե̃, որք բանիւք զիփացւոց խնդրէին ըմբռնել զդաւիթ՝ որպէս չարք խորհրդովք դիւաց զխոնարհս երկրի։ 'Ի սոսա հայելով ասէ։

Օտարք յարեան 'ի վերայ իմ. և հզօրք խնդրեցին զանձն իմ։

Կամի ասել. առ որս ես ապաւինեալն էի իբր առ դրացիս և իբր առ ազգայինս, նոքա իբր օտարք մատնիչ եղեն ինձ։ Եւ զայս մատնիչ լինելս յայտ առնէ բանիւս. յարեան 'ի վերայ իմ։ Իսկ պատճառ յարեան դնելոյն է այն, զի յորժամ գնաց դաւիթ 'ի սահմանս նոցա՝ նոքա որպէս ասացաք 'ի սկզբան անդ՝ կացին համդարտ, մինչև զետեղեսցի դաւիթ. և իբրև գիտացին անհոգանալ նորա, ահա այժմ է ժամ մատնելոյ զնա ասելով՝ յարուցեալ գնացին առ սաւուղ, և մատնեցին զնա նմա։

Եւ զի սաւուղ այսպիսի լրոյ սպասէր, իբրև լուաւ զայս, եկն զօրօք բազմօք 'ի վերայ դաւթի, և յամենայն կողմանց պաշարեաց զնա, զի ըմբռնեսցէ որպէս ասացաք 'ի վերոյ. վասն որոյ ասէ՝ հզօրք խնդրեցին զանձն իմ. այսինքն սաւուղ և զօրք նորա խնդրեցին, ոչ 'ի պատուել զիս, զի 'ի պաշարելն անդ արդէն պատեալ էին, այլ 'ի կորուսանել։ (Զայսմանէ տես 'ի սաղ. ժէ. 45։ և 'ի սաղ. իզ̃. 7։)

Իսկ թէ զիարդ իշխեցին զիփացիք մատնել սաւուղայ զդաւիթ, և կամ ընդէ՞ր սաւուղ և արք նորա այսպէս ջանալով կամէին կորուսանել զնա, այսմ տայ մարգարէն զպատասխանն, թէ վասն զի բարձեալ էր 'ի նոցանէ երկիւղն ա̃յ. սմին իրի ասէ։

Եւ ոչ համարեցան զքեզ ա̃ծ առաջի իւրեանց։

Երրակի մեկնի այս բան. հայելով նախ 'ի ներկայութիւնն ա̃յ. երկրորդ՝ 'ի մեծվայելչութիւն նորա, և երրորդ՝ 'ի գոլ նորա ա̃ծ։ Ըստ առաջնոյն կամի ասել. զքեզ զա̃ծդ ամենայնի ոչ ունէին առաջի իւրեանց. կամ որ նոյն է՝ ոչ համարեցան թէ դու ա̃ծդ՝ իցես ներկայ նոցա, և տեսանելով զչարիս նոցին՝ վրէժխնդիր լինիս նոցա. ուստի և աներկիւղ չարախօս եղեն զինէն, և աներկիւղ յարձակեցան 'ի վերայ իմ. յայս հայի և այն՝

զոր ասաց ('ի սաղ. լե. 1.) * ասէ անօրէնն մեղանչել, (զի) չիք երկիւղ ա՟յ առաջի աչաց նորա ‖ ։

Ըստ երկրորդին կամի ասել. ոչի՛նչ համարեցան զքեզ առաջի իւրեանց. կամ ըստ լամբ''. արհամարհեցին զմեծութիւն քո առաջի իւրեանց՝ այսինքն յաչս իւրեանց, և ոչ իւիք պատկառեցան 'ի քէն ։

Ըստ երրորդին կամի ասել. ո՛չ համարեցան զքեզ առաջի իւրեանց լինել ա՟ծ. որ է ասել. ո՛չ կամեցան գիտել՝ թէ դու ես ա՟ծ նոցա ։ Այլ ըստ այսմ բառզ առաջի իւրեանց դնի փոխանակ բառիս առ ինքեանս, կամ հառ ինքեանց ։

Այս բանք ասին և 'ի դիմաց տեառն մերոյ՝ հայելով 'ի տէրասպան հրէայս. և ս և 'ի դիմաց իւրաքանչիւր հաւատացելոյ՝ հայելով 'ի թշնամիսն հոգւոյ, և 'ի պաշարմունս ազգի ազգի փորձութեանց ։

Աստանօր 'ի ձեռագիրս մեր դնի հանգիստ, և յեբր''. սելա, և յեօթ'' դիափսաղմա, այսինքն ընդ սաղմոսումն. զոր մերքս թարգմանեն հանգիստ. զի աստ զկայ առնու եղանակն. նաև դէմք բանիցն փոխի. զի մինչև ցաստ 'ի ձև մաղթանաց էին բանքն. իսկ աստի և անդր 'ի ձև խոստովանութեան. որով յանդիման առնէ մարգարէն, թէ զիարդ օգնեաց նմա ա՟ծ, և թէ զինչ պարտի ինքն առնել. և նախ վասն օգնելոյն խօսելով ասէ ։

Զ. Ահա ա՟ծ օգնական է ինձ. և տ՟ր ընդունելի հոգւոյ իմոյ ։

Աստանօր բառզ ահա՝ հայի յայն դիպուած՝ զոր եգաք 'ի սկզբան, զի 'ի պաշարել սաւուղայ զդաւիթ՝ յորժամ մերձ էր ըմբռնել զնա, այնպէս արար նախախնամութիւնն ա՟յ՝ զի յանկարծ եհաս անդ գուժկան, և դարձոյց զնա յետս ։ Այլ զայս խնամս ա՟յ իբր մատամբ ցուցանել կամելով՝ դնէ ահա. ըստ որում որպէս ասէ դէորգ վարդապետ ('ի մեկն. եսայ.) * ահա բառզ ասացութեան և մատնացոյց լինելոյ (նշանակ է) ‖ ։ Կարէ հայիլ այս բառ նաև յայնպիսի դիպուած՝ յորժամ յոչ ակն ունելն ուստեք օգնականութեան, ա՟ծ ինքնին հասանէ յօգնութիւն, և փրկէ ։ Յայսոսիկ ակնարկելով ասէ ։

Ահա ա՟ծ օգնական է ինձ ։ Այսինքն՝ աւասիկ ուր առաջի կայր ինձ անյոյս կորնչիլ՝ օգնական եղև ինձ արարիչն իմ, գտանել զազատութիւն 'ի կորստենէ անտի ։ Այլ գիտելի է՝ զի օգնական լինելն կրկնակի առեալ լինի. մի հայելով յայն՝ որ օգնի, յորժամ տուեալ լինի նմա բաւականութիւն գործելոյ զայս ինչ կամ զայն առ 'ի հասանել իմիք, կամ առ 'ի գտանել զազատութ̃ի ևն̃. (զորմէ տե՛ս 'ի սաղ. իզ. 11 ։) Երկրորդ՝ հայելով յայն՝ որ օգնէ, յորժամ ինքնին 'ի կիր առնու զայն բաւականութիւն, այսինքն յորժամ ինքնին առնէ զայն ինչ՝ որով օգնեալն հասանէ առ որ հասանելոց է, և կամ գտանէ զազատութիւնն՝ որում կարօտ էր. ըստ այսմ առեալ լինի աստ օգնական լինելն, ըստ որում ա̃ծ զայնպիսի ինչ արար, որով եգիտ դաւիթ զազատութիւն. և զայս արարեալ՝ ընկալաւ զնա առ ինքն գթութ̃բ. վասն որոյ յաւելու ասել։

Եւ Տէր ընդունելի հոգւոյ իմոյ։ Կամի ասել որպէս մայր յազատելն զորդի իւր 'ի վտանգէ՝ 'ի գիրկս իւր ընդունի զնա գորովանօք, սոյնպէս և ա̃ծ յազատելն զիս 'ի վտանգէ անտի՝ գրեթէ 'ի գիրկս իւր ընկալաւ և պատսպարեաց զիս. որով և եղև ընդունելի հոգւոյ իմոյ. այսինքն ընդունող հոգւոյ իմոյ. ուր հոգւով ոչ իմացեալ լինի սոսկ բանական հոգին՝ որ է մասն մարդոյ. այլ բոլոր անձն. և այս ըստ ձևոյ Ճարտասանից՝ որ կոչի խելամտութիւն, որով մասն դնի փոխանակ բոլորին. և զի հոգին է գլխաւոր մասն մարդոյ, փոխանակ բոլոր մարդոյ դնի աստ. որպէս և յայլ բազում տեղիս։

Իսկ պատճառ հոգի դնելոյն է այս, զի յայնմ վտանգի՝ յորում էր դաւիթ, յամենայն կողմանց տագնապաւ պաշարեալ էր հոգի նորա. սմին իրի զհոգին միայն 'ի մէջ բերէ. և այնու զբոլոր իւրոյ անձին զընկալեալ լինելն յո̃յ յայտ առնէ։ Եւ դարձեալ՝ զի ա̃ծ միայն է որ կարէ ընդունել զհոգին մահուամբ։

Մարթ է աստանօր բառիւս ընդունող իմանալ ազատեցուցիչ. յոր միտս կամի ասել. յորժամ վտանգեցաւ հոգի իմ ելանել 'ի մարմնոյս՝ ոչ եթող տէր, այլ ազատեաց և ապրեցոյց ։ Զայս առաջի եդեալ՝ հայի ՛ապա և 'ի թշնամիս իւր 'ի սաւուղ և 'ի զօրս նորա, և զներհակն տեսեալ 'ի նոսա՝ ասէ ։

Է . Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ, ճշմարտութբ̄ քով սատակեա զնոսա :

Այս բանք ոչ են վրէժխնդրականք, այլ յայտարարականք, որպէս 'ի բազում տեղիս ասացեալ է մեր (և 'ի ներած . գլ. Է . 'ի վերջն .) եթէ զի տեսեալ դաւթի զայն ինչ որ պատահելոցն էր թշնամեաց իւրոց, զնոյն զայն առաջի դնէ . որով ոչ խնդրէ՝ զի այնպէս լինիցի, այլ ցուցանէ՝ թէ այնպէս լինելոց է : Զի զորօրինակ յասելն ('ի սաղ . Թ . 38 .) * կորիցեն հեթանոսք յերկրէ ‖ . և յասելն ('ի սաղ . ՃԼԴ . 17 .) * Նման նոցա եղիցին՝ ոյք արարին զնոսա ‖ . և յայլ սոյնպիսիս ոչ մաղթէ՝ զի կորիցեն, կամ նման նոցա լինիցին, այլ յայտ առնէ որ լինելին է : Սոյնպէս և յասելն աստ և յայլ բազում տեղիս սատակեա զնոսա . կամ թէ կորո զնոսա յերկրէ . ('ի սաղ . ԺԶ . 13 .) ոչ 'ի սատակումն նոցա յօժարամտի, այլ զսատակիլ նոցին գուշակէ, և 'ի պահել անձին իւրոյ փափաքի . Այլ թէ զիարդ՝ ծանիր . զի 'ի հալածել սաւուղեանց զդաւիթ՝ այն հալածումն նմանութեամբ իմն խօսելով՝ գրեթէ արձանացեալ 'ի մէջ երկաքանչիւրոց նոցա՝ այնչափ բարձրացաւ, մինչև ոչ ևս հնար էր այնմ կալ այնպէս, այլ հարկ էր՝ փլուզանիլ և կործանիլ կամ 'ի վերայ դաւթի և կամ 'ի վերայ սաւուղեանց . և յոր կողմն թոյլ տուեալ լինէր հակիլ, յայն կողմն լինէր կործանիլ . և զի ա̅ծ ոչ թոյլ տայր 'ի կողմն դաւթի հակիլ, հակեցոյց և դարձոյց 'ի կողմն սաւուղեանց . և 'ի դարձուցանելն անդ՝ 'ի վերայ նոցա կործանեցաւ :

Զայս կամելով յայտնել՝ ասէ :

Ի դարձուցանել զչարն 'ի թշնամիս իմ ճշմարտութբ̄ քով սատակեա զնոսա : Որպէս թէ ասէր . աւասիկ թշնամիք իմ չարիս խորհին 'ի վերայ իմ, որոյ վասն և պնդեալ են զհետ իմ՝ կորուսանել զիս . բայց դու տէր որ յամենայնի պաշտպան եղեր ինձ՝ հանդերձեալ ես դարձուցանել 'ի գլուխս նոցա զայն չարիս . և 'ի դարձուցանելն անդ՝ զերծուսցես զիս 'ի նոցանէ պաշտպանութբ̄ . և կորուսցես զնոսա ճշմարտութեամբ, և առ այս յարէ :

Ճշմարտութբ̄ քով սատակեա զնոսա : Այսինքն թէ հայելով 'ի ճշմարտութիւն քոյ՝ ըստ պահանջելոյ ճշմարտութեանդ սաստկեա՛ զնոսա․ որպէս և եղեն իսկ․ զի դարձոյց ա̄ծ 'ի վերայ նոցա զչարիսն՝ զորս նիւթեցին նոքա ընդդէմ դաւթի․ որով և սաստկեցան նոքա 'ի պատերազմի անդ, զոր արարին ընդ փղշտացիսն․ յորում ոմանք անձնասպան կորեան 'ի լերինն գեղբուայ, որպէս սաւուղ և որք ընդ նմա, և ոմանք սրով այլոց 'ի մարտի անդ անկան, որպէս զօրք նորա։ Նաև այս եղև առ ճշմարտութեամբ քով․ որով իմացեալ լինի ճշմարտութեամբ իրաւ առնելն աստուծոյ՝ զոր խնդրեաց 'ի վերոյ, որպէս թէ ասէր․ որովհետև իրաւ արարեր ինձ ճշմարտութեամբ, նոյնն ճշմարիտ իրաւամբ ունիս սաստկել զթշնամիս իմ (ա̄․ թագ․ լա̄․ 1 = 7․)

Զայս բան մարթ է մեկնել նաև իբրև զմասն ինչ նախընթաց համարոյն, որպէս թէ եդեալ էր․ օգնական և ընդունող եղև ինձ ա̄ծ, և փրկեաց զիս 'ի չարէ անտի՝ զոր կամէին հասուցանել ինձ թշնամիքն իմ․ և այս եղև 'ի դարձուցանելն նորա զայն չար 'ի վերայ նոցա․ որ և կատարեցաւ ճշմարտութեամբ․ զի 'ի յարշաւել նոցա 'ի վերայ դաւթի՝ թոյլ ետ ա̄ծ՝ զի այլք արշաւեսցեն 'ի վերայ նոցա․ որով և ազատեցաւ դաւիթ․ և նոքա յետ ժամանակաց կորեան յօրինակ կորստեան թշնամեացն ք̄ի․ որք չարաչար սաստկեցան առ վեսպասիանոսիւ և առ տիտոսիւ։

Այս բանք՝ զորս ասաց դաւիթ 'ի սկզբանէ և այսր, յորդոր լինին իւրաքանչիւր մարդոյ՝ դիմել առ ա̄ծ յո՛ և իցէ նեղութեան, յինչ և իցէ վտանգի, յորպիսի և իցէ փորձանս, տեսեալ յայտնապէս զօգնութիւնն ա̄յ և զպաշտպանութիւն նորա յանձն դաւթի յայն դիպուած։ Նաև մի կարծեր՝ թէ նա վասն դաւիթ գոլոյն 'ի դիմելն առ ա̄ծ՝ եգիտ 'ի նմանէ զպաշտպանութիւն, զի ա̄ծ ոչ վասն այնորիկ պաշտպանեաց զնա՝ վ̄ն զի էր դաւիթ, այլ վասն զի սրտի մտօք դիմեաց նա առ ինքն։ Եթէ դու ես դիմեսցես առ նա ըստ դաւթի, դու ես գտցես զպաշտպանն դաւթի, և տեսցես փորձիւ թէ զիարդ օգնական և պաշտպան լինի ա̄ծ առ այնոսիկ՝ որք դիմեն առ ինքն․ և 'ի տեսանելդ խոստովան լինիցիս նմա, և օրհնեսցես զնա․ ըստ որում արար և դաւիթ 'ի գտանելն զօգնութիւն յա̃յ. զոր և առաջի դնէ 'ի յաջորդ համարն ասելով.

Ը. **Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. խոստովան եղէց անուան քում. զի բարի է.**

Պատարագօք իմացեալ լինի նախ ո́ և իցէ նուէր մատուցեալ առ ա̃ծ. որպէս 'ի հնումն զոհք և դահամունք (ղևտ. ա̃. 1. և այլն.) և 'ի նորումս կենդանաբար պատարագն, եւ և նուէրք եկեղեցւոյ. Երկրորդ՝ իմացեալ լինի օրհնութիւն և գովութիւն. (զորմէ տե՛ս 'ի սաղ. խ̃թ. 13.) Երրորդ՝ նուիրումն անձին, որպէս առնեն քահանայք և կրօնաւորք, որք ուխտիւք նուիրեն զանձինս 'ի պաշտօն ա̃յ. եւ և այք սիրով նուիրեն զինքեանս ա̃յ. յոր միտս ասէ առաքեալն * պատրաստել զմարմինս ձեր պատարագ կենդանի ‖. (հռովմ. ժ̃բ. 1.)

Արդ որպէս երեք յիշեցաք սաղմոսիս, մարգարէն ըստ երկրորդին առնու աստ զպատարագն՝ փոխանակ օրհնութեան և գոհութե̃. և այս յայնժամ լինի հաճոյ ա̃յ, յորժամ բանաւորապէս մատուցանի նմա, այինքն ներգործութ̃բ մտաց և կամաց. ներգործութ̃բ մտաց՝ 'ի ճանաչելն զա̃յ մեծվայելչութիւնն և զանձին նուաստութիւն. ներգործութեամբ կամաց՝ 'ի սիրելն զբարութիւնն ա̃յ և 'ի հպատակիլն տէրութեան նորա ըստ ամենայնի, յուսալով միանգամայն և 'ի հայրական գութ նորին. Այսպիսի պատարագ օրհնութե̃ է՝ որ փառաւոր առնէ զա̃ծ. ըստ որում ասաց ('ի սաղ. խ̃թ. 23.) * պատարագ օրհնութե̃ փառաւոր արասցէ զիս ‖. Զայսպիսի պատարագաց խօսելով աստ մարգարէն ասէ.

Կամօք իմովք պատարագս մատուցից քեզ. Որ կամօք ասելով՝ ո́չ 'ի բաց առնու զայն որ լինի մտօք. այլ համդերձ նովաւ. զի անհնարին է առնել ինչ կամօք՝ եթէ չիցէ առաջնորդ և այն՝ որ է մտօք. այսինքն է ներգործութիւն մտաց. Բայց յայն սակս միայն զկամս յիշէ աստ մարգարէն, զի ցուցցէ զկամաւորն լինել այնր բանաւոր պատարագի՝ եւ և եռանդագին և լի բերկրութ̃բ, որպէս թէ եղեալ էր. յամենայն սրտէ իմմէ և յամենայն յօժարութենէ կամացս մատուցից քեզ պատարագս օրհնութեան և գոհութեան ։

Լամբ″. պատարագաւ խնկոյ զնուիրումն անձին՝ խոստովանելով զտէրութ̄ին ա̄յ 'ի վերայ մեր և զզօրութ̄ի անուան նորա. և զայս խոստովանութիւն առաջի դնէ մարգարէն 'ի յաջորդ բանն ասելով։

Խոստովան եղէց անուան քում։ Խոստովան լինել անուանն աստուծոյ՝ է գովել զանուն նորա, յայտ առնելով՝ թէ քանի՛ սքանչելի է, քանի՛ հզօր է, քանի՛ քաղցր է։ Եւ զի անուամբն ա̄յ նշանակեալ լինի ա̄ծ՝ խոստովան լինել անուանն ա̄յ՝ նշանակէ ես խոստովան լինել առ ա̄ծ, այսինքն օրհնել և գովել զնա, հայելով 'ի բարերարութ̄ին նորին։ Արդ որովհետև տեսի ա̄ծ զբարերարութիւն քո առ իս, մատուցից քեզ պատարագս օրհնութեան հանդերձ խոստովանութ̄բ. և տայ զպատճառն ասելով։

Զի բարի է։ Այս բան կարէ հայիլ նախ 'ի բառդ **խոստովան լինել**. և ըստ այսմ կամի ասել. բարի է ինձ խոստովան լինել անուան քում. զի նովաւ մխիթարիմ, նովաւ քաղցրանայ հոգի իմ, և նովաւ նորոգին կեանք իմ։ Երկրորդ՝ կարէ հայիլ յանունն ա̄յ, մանաւանդ թէ յայն հայելով ասէ զայս, որպէս թէ եղեալ էր. խոստովան եղէց անուան քում, զի ցանկալի է ինձ անուն քոյ և զուարճալի, ես և արգահատութիւն հոգւոյս. և հաստատութ̄ի ամենայնի՝ զոր ունիմ 'ի քէն. զի է զօրացուցիչ իմ, օգնական իմ, պահապան իմ, և ապաւէն յամենայնի։

Եւ զի որպէս ասացաք՝ անուամբն ա̄յ նշանակեալ լինի նա ինքն ա̄ծ, սոյնն ցուցանէ մարգարէն և զա̄յ բարութիւնն՝ եթէ յինքեան, և եթէ 'ի բարերարութեան. ըստ որում դնի 'ի քանի մի սաղմոս, և 'ի Լամբ″. որպէս թէ ասէր. օրհնեցից զքեզ, զի բարի ես. և գոհացայց զքէն՝ զի ցուցեր զքեզ ինձ բարի 'ի ձեռն բազմադիմի բարերարութեանցդ՝ զորս արարեր առ իս, մանաւանդ 'ի փրկելդ զիս 'ի մեծէ վտանգէ անտի և յայլ ամենայն նեղութեանց։ Եւ զայսմանէ որոշակի խօսի 'ի յաջորդ համարն ասելով։

Է. **Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. և ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ.**

Որպէս ասացաք այլուր (մանաւանդ ՚ի սաղ. խէ. 1.) նեղութիւնն առեալ լինի երբեմն փոխանակ պատճառի նեղութեան, որպիսի է սով, հուր, սուր, պաշարումն թշնամեաց, զրկողութիւն, սպառնալիք, նախատինք, ևն. Իսկ երբեմն փոխանակ վշտի կրելոյ ՚ի ներքս, որպէս ցաւ, քաղց, հիւանդութի, երկիւղ, հոգ, ամօթ, տրտմութի, ևն. Արդ դաւիթ յերկոսին ՚ի սոսա ևս ըմբռնեալ էր ՚ի վտանգի անդ իւրում. արտաքուստ պաշարումն թշնամեաց, և սպառնալիք նոցա, ևն. և ՚ի ներքուստ անհնարին երկիւղ, հոգ և տրտմութիւն, ևն. Այլ զի փրկեաց զնա ած յերկաքանչիւրոց ասաի միանգամայն, վասն այսորիկ ասէ.

Յամենայն նեղութենէ իմմէ փրկեցեր զիս. Որպէս թէ ասէր, ով որչափ բարի ես տէր, և որպէս պարտ է ինձ գոհանալ զքէն, որովհետև փրկեցեր զիս յամենայն նեղութէ ասաի իմմէ, հեռացուցանելով յինէն զթշնամիս իմ, և փարատելով ՚ի հոգւոյ իմմէ զտրտմութիւն իմ և զերկիւղ. որով և տեսանեմ զիս յապահովլի և ՚ի զուարճութե. իսկ զթշնամիս իմ, զորս ՚ի բարելաւութե կամէի գտանել՝ տեսանեմ ՚ի թշուառութե. Այլ թէ զիարդ, յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

Եւ ՚ի թշնամիս իմ ետես ակն իմ. Այս բան կրկնակի մեկնի, մի՝ ըստ աներկիւղ հայելոյ ՚ի թշնամիսն. յոր միտս կամի ասել. ՚ի վանել քո զթշնամիս իմ որոց բարի կամէի. աներկիւղ հայէի ՚ի նոսա. և տեսանէի՝ զի հեռացեալ մեկնէին յինէն, և փախչէին առանց կարելոյ առնել ինձ չար ինչ. կամ թէ ակն իմ ետես ըղփախուստ նոցա ՚ի նոսա, առանց կարելոյ նոցա կատարել յիս զչար կամս իւրեանց. Այս մեկնութի երևի համաձայն եբր". և եօթ". զի յեբր". գնի * ետես ակն իմ զթշնամիս իմ ||. Իսկ յեօթ". գնի * հայեցաւ ակն իմ ՚ի թշնամիս իմ ||.

Երկրորդ՝ մեկնի ըստ դիպելոյ չարեաց ՚ի թշնամիսն. Իբր զի զայն չարիս՝ զոր հասուցին դաւթի թշնամիք նորա, ինքեանք կրեցին. և յայս միտս կամի ասել.

յորշաւել թշնամեաց իմոց 'ի վերայ իմ առ 'ի չարիս հասուցանել ինձ, նոյն որշաւանօք հասին առ նոսա 'ի թշնամեաց նոցա, ուստի զոր աչք նոցա տեսին յիս, զայն այժմ ետես ակն իմ 'ի նոսա :

Եւ կամ դարձեալ՝ զայն երկիւղ՝ զոր տեսին յիս, ես զնոյն տեսանեմ այժմ 'ի նոսա : Եւ դարձեալ որպէս նոքա յառաջն համարձակ նայելով 'ի վերայ իմ երկեցուցանէին զիս, ես յերկիւղէ սրտիս գրեթէ կափուցեալ ունէի զաչս իմ առ նոսա, սոյնպէս և այժմ ես համարձակ հայիմ 'ի նոսա, և տեսանեմ 'ի վերայ նոցա զամօթ և զերկիւղ և զփախուստ : Սոքիմբք կամի մարգարէն ցուցանել, թէ որչափ յառաջն երկնչէր 'ի թշնամեաց իւրոց, այնչափ աներկիւղ կայ այժմ 'ի նոցանէ. զի տեսանեմ ասէ զփախուստ նոցին. և ահա զոր կամէին տեսանել յիս թշնամիք իմ, ես 'ի նոսա տեսանեմ զնոյն :

Այս բանք ասին և 'ի դիմաց քսի՝ հայելով 'ի տիրասպան հրէայս : Նոյն դարձեալ և 'ի դիմաց եկեղեցւոյ՝ հայելով 'ի հալածիչս իւր : Նոյն և 'ի դիմաց իւրաքանչիւր հաւատացելոց՝ հայելով յոր և իցէ նեղութիւնս, յորս պաշարեալ տառապին հանապազ, ուստի և այս սաղմս իբր դեղ դարմանոյ ամենայն հաւատացելոց յամենայն յաւուր երգի յամենայն եկեղեցիս քրիստոնէից, ապաւինիլ սովաւ առ ած, և գտանել յաստի կեանս զօգնութիւն նորա և զպաշտպանութիւն, և 'ի հանդերձեալն զփրկութիւն յաւիտենական :

ՍԱՂՄՈՍ. ԾԴ.

Պաղատանք աղաչելոյ 'ի վերայ հասեալ վտանգէ. և փափաք գտանելոյ զթևս աղաւնոյ՝ թռչել և փախչել յամենայն թշուառութենէ. միանգամայն և առաջադրութիւն չարութեան յուդայի օրինակեալ 'ի նենգութիւն աքիտոփելայ և այլոց. ընդ նմին և ապաւինութիւն յուսոյ առ ած, և գուշակութիւն կորստեան թշնամեաց։

Ի կատարած. ընդ օրհնութիւնս. իմաստութեան։ Սաղմոս 'ի դաւիթ։

1 Ունկնդիր լեր ած աղօթից իմոց. և մի անտես առներ զխնդրուածս իմ։ 2 Նայեաց առ իս և լուր ինձ. զի տրտմեցայ ես 'ի յանձրանալ իմում, և խռովեցայ։ 3 'Ի ձայնէ թշնամւոյն և 'ի նեղել մեղաւորին, խոտորեցան յիս անօրէնութիւնք. բարկութեամբ ոխս պահէին ինձ։ 4 Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։ 5 Ահ և դողումն եկն 'ի վերայ իմ, և ծածկեաց զիս խաւար։ 6 Ասէի տայր ոք ինձ թևս որպէս աղաւնւոյ. զի թռչէի՝ վերանայի, հանգուցեալ դադարէի յանապատի։ 7 Անդ ապասէի այ, որ կեցոյց զիս 'ի կարճմտութենէ 'ի զայրանալոյ՝ 'ի մրրկեալ նեղութենէ։ 8 Ընկղ՛ տէր և բաժանեա զլեզուս նոցա. զի տեսի զանօրէնութիւն, և զհակառակութիւն 'ի քաղաքի։ 9 'Ի տուէ և 'ի գիշերի շուրջ եղեն զպարսպօք նորա՝ անօրէնութիւնք. չարիք և մեղք են 'ի մէջ նորա. և ոչ պակասեաց 'ի հրապարակաց նորա վաշխ և նենգութիւն։ 10 Զի թէ թշնամւոյն նախատեալ էր, համբերէի արդեօք. կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ, թաքչէի արդեօք 'ի նմանէ։ 11 Այլ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։ 12 Որ ուտէին՝ 'ի նմին քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր. զի գնայաք միաբանութեամբ 'ի տուն այ։ 13 Եկեսցէ մահ 'ի վերայ նոցա, և կենդանւոյն իջցեն 'ի դժոխս. զի չարութիւն է 'ի բնակութեան նոցա՝ և 'ի մէջ նոցա։ 14 Ես առ ած կարդացի, և տէր լուաւ ինձ յերեկոյս՝ 'ի վաղորդայն՝ և 'ի հասարակ աւուր։ 15 Պատմեցից և ասացից և լուիցէ ձայնի իմում. փրկեսցէ խաղաղութեամբ զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց. զի կարեօք հասին 'ի վերայ իմ։ 16 Լուիցէ ած՝ և խոնարհ արասցէ զնո-

սա. որ յառաջն է քան զյաւիտեանս : 17 Զի ոչ գոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յԱ̅յ : 18 Ձգեաց զձեռն իւր ՚ի հատուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա : 19 Բաժանեցան ՚ի սրտմտութենէ երեսաց նորա. և եհաս ՚ի սիրտ նորա : 20 Ակակուղ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք : 21 Ընկեա՛ ՚ի Տէր զհոգս քո՝ և նա կերակրէ զքեզ. և ոչ տայ յաւիտեան սասանութիւն արդարոյ : 22 Դու Ա̅ծ իջուսցես զնոսա ՚ի գուբ ապականութեան. արք արիւնահեղք և նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես ՚ի քեզ Տէր յուսացայ :

ՎԵՐՆԱԳԻՐ

Ի կատարած, ընդ օրհնութիւնս. իմաստութեան. Սաղմոս ՚ի Դաւիթ :

Ի ՁԵՌԱԳԻՐՍ ԻՆՉ ԱՅՍ ՎԵՐնագիր դնի. * ՚ի կատարած ընդ օրհնութիւնս իմաստութե̃, սաղմոս ՚ի դաւիթ ‖. այսպէս դնի և ՚ի վարդանայն. յայլ ձեռագիրս՝ * ընդ օրհնութե̃ իմաստութե̃ ‖. յայլս՝ * ընդ օրհնութիւն իմաստութե̃ ‖. յայլս՝ * ընդ օրհնութե̃ իմաստութե̃ ‖. յոմանս ևս չիք բառդ իմաստութե̃ : Բայց զոր եդաք աստ ուղղագոյն ևս երևի՝ զի է համաձայն եօթանասնից և երկուց ընտիր ձեռագրաց :

Յեբր՟. փոխանակ բառիդ ընդ օրհնութիւնս՝ դնի բընգինոթ այսինքն նուագարանօք. և փոխանակ իմաստութե̃ դնի մասքիլ. (զորոց տես ՚ի Ներած գլ. Ժ.) Իսկ բառդ սաղմոս՝ ոչ դնի յեբր՟. զի զտեղի այնր ունի բառդ մասքիլ : Եթէ ըստ պարզ նշանակութե̃ բառիցդ առցուք զվերնագիրդ, յարմարական մեկնութ̃ք ցուցանի՝ թէ այս սաղմոս է յօրինեալ ա̃ծային իմաստութ̃ք՝ որպէս և այլք, և դասեալ ընդ օրհնութիւնս :

Այն այս սաղմոս որպէս և յայտնի երևի ՚ի բանիցն, ասացեալ է ՚ի դաւթայ հայելով ՚ի ժամանակ մեծի վտանգի, այլ թէ որո՛յ ժամանակի, պէսպէս կարծիք են. ոմանք ասեն թէ հայի ՚ի ժամանակ ոնեայ որդւոյ ոնեայ քահանայապետին՝ որ կոչեցաւ մենելաւոս (բ. մակ. դ. 32=34։) ևս և կոչեցաւ չիմն (բ. մակ. ժդ. 3=7։) Սա ըստ աւանդելոյ յովսեպոսի (ժբ. 15. և ժդ. 6.) գնացեալ յեգիպտոս շինեաց անդ զտաճար ըստ օրինակի տաճարին երուսաղեմի, և հուսկ յետոյ մոխրահեղձոյց սատակեցաւ։

Բայց հասարակաց կարծիք է՝ թէ զայս ասաց դաւիթ հայելով 'ի ժամանակն յայն՝ յորում զօրացաւ աբեսաղոմ. և ինքն ելեալ յերուսաղէմէ մեկնեցաւ այլուր։ Եւ զի որ ինչ գործեցաւ յայնժամ յաբեսաղոմայ և յաքիտոփելայ ընդդէմ դաւթի՝ եղև օրինակ անցից մատնութեան տեառն մերոյ, բանք սաղմոսիս մարգարէական գուշակութ̃բ յայն ևս հային, ուստի և զայս սաղմոս իբր 'ի դիմաց ք̃ի երգեմք յերեկոյի մեծի հինգշաբաթու, հայելով 'ի մատնութ̃ին յուդայի և 'ի չարութ̃ին հրէից։

Այս սաղմոս ասի և մեկնի ևս և 'ի դիմաց իւրաքանչիւր հաւատացելոյ պաշարելոյ 'ի մէջ նեղութեանց, նաև 'ի դիմաց եկեղեցւոյ։ Բայց քանզի 'ի դիմաց դաւթի մեկնելով մեկնի և 'ի դիմաց հաւատացելոց և եկեղեցւոյ, ոչ համարիմք հարկաւոր առանձին մեկնութեամբ ևս կրկնել զբանն։

Գիտելի է ևս՝ զի այս սաղմոս ըստ բազում բանից ունի զնմանութ̃ի ընդ լ̃դ. սաղմոսի, ևս և ընդ քառասներորդին 'ի վեցերորդ համարոյ նորին սկսեալ. եթէ հաճիս համեմատեա զերեսին ընդ միմեանս. զի յիրս իրս բացատրեն զիրեարս։

ա. Ունկնդիր լեր ա̃ծ աղօթից իմոց. և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ։

բ. Նայեաց առ իս և լուր ինձ. զի տրտմեցայ ես 'ի ջանջրանս իմում, և խռովեցայ։

գ. Ի ձայնէ թշնամւոյն և 'ի նեղէլ մեղաւորին, խոտորեցան յիս անօրէնութ̃բ. բարկութ̃բ ոխս պահէին ինձ։

Նեղեալ անձին դաւթի, և 'ի տրտմութիւն մեծ ըմբռնեալ 'ի պաշարմանէ վտանգից՝ որպէս սովորն էր՝ դիմէ առ ա̃ծ՝ իբր առ բարի դատաւոր, և առաջի նորա տարածէ զկիրս իւր՝ խնդրելով զփրկութի՟ն։ Բայց նախ աղաչէ լսել քաղցրութ՟բ՝ զոր միանգամ ունի ասել. կամ ըստ լամբ՟. * նախ զունկնդրութիւն պահանջէ, և ապա զպաղատանսն ցուցանէ՝ որպէս զի ,, քաղցրութ՟բ լուիցէ ‖. վասն որոյ ասէ։

Ո՛ւնկնդիր ա՟ծ աղօթից իմոց։ Ունկն դնել ա՟յ աղօթից մերոց՝ է ընդունել զայն. բայց զի ըստ մարդկային տարազու խօսի, ունկնդիր ասէ. որպէս թէ եղեալ էր. ով դատաւոր արդար՝ աղաչեմ զքեզ՝ լուր զամենայն՝ զոր ունիմ ասել առաջի քո. և զի մի՛ յետ լսելոյն ո՛չ կատարեսցէ զոր խնդրէ, վասն այնորիկ՝ յաւելու ասել։

Եւ մի՛ անտես առներ զխնդրուածս իմ։ Կամի ասել. մի՛ սոսկ լուիցես զոր ասեմ, և մի՛ յետ լսելոյդ անտես արասցես զոր խնդրեմ, այլ կատարեսցես զոր լսես։ Բայց հայեցեալ մարգարէին և յանձն իւր՝ կասկածի, զի մի՛ իբր անարժան երևելով՝ վասն իւրոյ անարժանութեան անլսելի լիցի. ամին իրի յարէ զկնի և ասէ։

Բ. **Նայեա առ իս և լուր ինձ։** Այսինքն քաղցրութ՟բ քով նայեա առ իս իբր առ ծառայ քո. և քաղցրութ՟բ լուր ինձ, և մի՛ վասն իմոյ անարժանութեան արհամարհեր զխնդրուածս իմ։

Երիցս առաջի դնելով զբանն, այսինքն ունկնդիր, նայեա, լուր, դիտէ նախ՝ ազդու կացուցանել զասացեալսն, զի երիցս կրկնումն խնդրոյն ազդողականագոյն լինի. ըստ որում գրեալ է և վասն տեառն մերոյ՝ թէ * եկաց յաղօթս երրորդ անգամ, և զնոյն բան ասաց ‖. (մատ. ի՟զ. 44։)

Դիտէ երկրորդ լսելի առնել զբան իւր. ո՛չ 'ի վիշտան նայի, և ո՛չ սպառնալեօք թշնամեացն նահանջի, այլ աղաղակելով աղաղակէ. մինչև հասուսցէ զձայն իւր յականջս բարձրելոյն։ Բարտիմէոս կոյր աղաղակէր առ ք՟ս. * որդի դաւթի յ՟ս ողորմեա ինձ ‖. (մարկ. ժ՟. 47.) ամբոխն սաստէր նմա, այլ նա ո՛չ 'ի սաստ նոցա նայէր, և ո՛չ սպառնալեօք նոցին կասէր, այլ կրկին կրկին աղաղակէր. * որդի դաւթի ողորմեա ինձ ‖. մինչև լսելի արար զձայն իւր. որ և 'ի կոչելն 'ի ք՟սէ՝ վաղվաղակի 'ի բաց եթող զձորձս իւր. և ըն՟

թացեալ առ նա՝ լուսաւորեցաւ ։ Որով օրինակ տուաւ մեզ՝ զի յաղօթել մեր առ ա՟ծ մի՛ անսասացուք սաստից կռից և ախտից, և փորձութե՟ց դիւին, այլ 'ի բաց թողեալ զձործս երկրայութեան աղաղակեսցուք առ փրկիչ մեր. և մի՛ դադարեսցուք յաղաղակելոյ և 'ի կրկնելոյ զաղաղակ մեր ։

Դիտե՛ երրորդ՝ յօգուտ աղօթից իւրոց վայելել. զի որ սրտի մտօք և բարի կամօք յաճախ աղօթէ՝ վայելէ 'ի պտուղ նորին, թէև յաղօթելն անդ չառնուցու ինչ համ ։ Հիւանդն յորժամ ուտէ զօգտակար ինչ կերակուր բռնադատելով զինքն՝ թէպէտ և ոչ առնու զհամ, բայց 'ի կրկնելն յուտել՝ առնու զզօրութիւն. սոյնպէս իմն և զընդունելութե՟ օգտի աղօթից. մանաւանդ 'ի յաճախելն 'ի նոյն, և 'ի համապաղորդելն. որպէս տեսանի յաղօթս մարգարէին, և յեղանակ բանից նորին. (տես և 'ի սաղ. Է. 1. 2.)

Խորհրդաբար ըստ ասելոյ ոմանց 'ի սրբոց հարց՝ այս երրեակ կրկնութիւն հայի յերրեակ անձինս ամենասուրբ երրորդութեան՝ 'ի հայր և յորդի և 'ի սուրբ հոգին 'ի միում ա՟ծութե՟ ։ Այլ թէ զինչ էր այն՝ որոյ վասն աղաչէր մարգարէն զա՟ծ լսել, սկսանի պատմել. և նախ ասէ ։

Գ. Եւ տրտմեցայ ես 'ի ձանձրանալ իմում և խռովեցայ ։ Այս ձանձրանալ ցուցանէ զանձկութի՟ սրտի 'ի յաճախելոյ նեղութե՟ն, և 'ի ծանրանալոյ տարակուսանացն՝ թէ զիարդ լինիցի նմա զերծանել, մինչև տաղտկանալ և ըմբռնել 'ի տխրութիւն սաստիկ. սմին իրի տրտմեցայ ասէ 'ի ձանձրանալ իմում. որպէս թէ ասէր. յառաւել պաշարել անձին իմոյ 'ի վտանգից և 'ի վշտաց՝ ձանձրացեալ և տաղտկացեալ ընկղմեցայ 'ի տրտմութե՟. և յառաւելուլ տրտմութե՟ս խռովեցայ ես ։ Իսկ թէ ուստի եղև նմա այս, յայտ առնէ ասելով ։

Դ. Ի ձայնէ թշնամւոյն և 'ի նեղչէ մեղաւորին ։ Որ ձայնիւ ոչ իմանայ զհնչումն բարբառոյ, այլ զյոխորտումն սպառնալեաց. որպէս թէ ասէր. այն տրտմութիւն և խռովութիւն՝ զոր յիշեցի, եկն 'ի վերայ իմ 'ի սպառնալեաց թշնամւոյ իմոյ, և 'ի նեղելոյ զիս մեղաւորի. որպիսի էր աբեսաղոմ, և աքիտոփէլ, և այլք որք ընդ նոսա. որոց մատուցեալ զբարեբարութիւնն դաւթի՝ անիրաւութ՟բ վարեցան ընդ նմա, վասն որոյ յաւելու ասել։

Խոտորեցան յիս անիրաւութ՟բ ։ Աստանօր զօրութ՟բ խնացեալ լինի դերանունդ որք՝ 'ի յարաբերել զայնս՝ զորս կոչեաց թշնամի և մեղաւոր․ որպէս թէ ասէր․ զորս թշնամի կոչեցի և մեղաւոր, նոքա խոտորեցան յիս անիրաւութ՟բ, որ է ասել․ անիրաւեցան յիս, կամ անիրաւութ՟բ դարձան ընդդէմ իմ, և պնդեցան յանիրաւութեան իւրեանց։ Իսկ թէ ուստի՛ ծնաւ այն անիրաւութ՟ի նոցա՝ յայտ առնէ ասելով։

Բարկութ՟բ ոխս պահէին ինձ ։ Այսինքն՝ 'ի յանկարծ բարկութենէ սրտին չար ընկալան 'ի սիրտս իւրեանց ընդդէմ իմ․ որով յղացան զոխս, և զնոյն պահեցին յինքեանս, մինչև ծնան զայսպիսի անիրաւութ՟ի 'ի մերժել զիս յաթոռոյ իմմէ, կամ 'ի փառաց թագաւորութ՟ե իմոյ կամ 'ի խաղաղութ՟է անձինս։

Բանք երից տանցս այսոցիկ ուղղակի ասին և 'ի դիմաց ք՟րի առ հայր․ ըստ որում նա ինքն 'ի հասանել ժամու չարչարանաց՝ կամովին արկեալ զանձն 'ի տրտմութիւն մեծ՝ զայսպիսիս ասաց այլով բանիւ և այլով կարգաւ․ զի յետ ասելոյ՝ տրտում է անձն իմ մինչև 'ի մահ, կացեալ յաղօթս առ հայր՝ ասաց․ աբբայ հայր նայեա՛ց առ իս և լո՛ւր ինձ․ անցո՛ զբաժակս զայս յինէն․ բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ որպէս դու․ ահաւասիկ ձայն թշնամւոյ իմոյ յուդայի, ահա և ամբոխք մեղաւորաց՝ որք խոտորեցան յիս անիրաւութ՟բ՝ գան 'ի վերայ իմ, որք և բարկութեամբ ոխս պահէին ինձ (մարկ․ ժդ․ 34 = 42։)

Այսոքիկ բանք կարեն և յիւրաքանչիւր հոգւոյ ասել 'ի տառապիլ և 'ի ձանձրանալ իւրեանց 'ի թիւր խորհրդոց և 'ի դիւաց, ըստ մեկնելոյ լամբ″։ Այլ կամելով մարգարէին առաւել ևս բացատրել և սաստիկ ցուցանել զխռովիլն և զերկնչիլն իւր, այլովք բանիւք պարզագոյն առաջի դնէ զնոյն և ասէ։

Դ. Սիրտ իմ խռովեցաւ յիս, և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։

Ե. Ահ և դողումն եկն 'ի վերայ իմ. և ծածկեաց զիս խաւար։

Սրտիւ բազում ինչ մարթ է իմանալ. (որպէս ասացեալ է մեր 'ի սաղ. Ծ. 11. և այլուր.) բայց աստ հայելով 'ի միտս բանին՝ սիրտն դնի փոխանակ ստորին մասին բանականին, և կամ փոխանակ զգայական մասին, որոյ աթոռ է սիրտն. զի ո՛ և իցէ զգայական կիրք ըստ նիւթականին 'ի սրտի ունին զկայարան՝ եթէ՛ տրտմութիւն իցէ և եթէ ուրախութիւն, եթէ՛ քաջութիւն իցէ և եթէ երկիւղ։

Իսկ երկիւղ մահու կոչի այն որ լինի 'ի վերայ հասեալ վտանգէ մահու, մինչև երբեմն պատճառ եւս լինել մահու։ Յայսպիսի երկիւղէ պատճառի նախ ընկճող խռովութիւն մեծ 'ի ներքս, մանաւանդ 'ի կայարանի անդ իւրում այսինքն 'ի սրտի. և այս է հասարակ գործ երկիւղի։ Երկրորդ՝ դողումն յարտաքին անդամս. և այս լինի 'ի սաստկութէ երկիւղի. Երրորդ՝ մթագնութիւն 'ի միտսն և պղտորութի 'ի կամս. և այս լինի յոչ կանոնաւորիլ կամ յոչ զսպել սաստկութեան երկիւղի։ Արդ նախ զառաջին գործոյ երկիւղին խօսելով ասէ։

Սիրտ իմ խռովեցաւ յիս. և երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ։ Այսինքն ստորին մասն բանական յօժարութեան, և զգայութիւնք իմ տագնապեցան, և այս վասն այնորիկ՝ զի երկիւղ մահու անկաւ 'ի վերայ իմ, որպէս թէ ասէր. վասն տեսանելոյ առաջի իմ զ'ի վերայ հասեալ վտանգ մահու՝ եկն յիս այնպիսի երկիւղ՝ որ կարէր մահացուցանել զիս, կամ պատճառել յիս զմահ։

Եւ որպէս զի ցուցցէ զմեծութիւն երկիւղին՝ ոչ ասէ եկն 'ի վերայ իմ երկիւղ մահու, և կամ թէ երկեայ 'ի մահուանէ, այլ թէ անկաւ 'ի վերայ իմ. որով կամի ասել՝ թէ այնչափ մեծ եղև երկիւղն այն, մինչ գրեթէ իբրև լեառն մի մեծ անկանել 'ի վերայ իմ և ծածկել զիս։

Զայսպիսի երկիւղ կրեաց տէրն մեր 'ի պարտիզի 'ի թոյլտուութենէ կամաց իւրոց. մինչև անկանիլ նմա 'ի վերայ երեսաց իւրոց, և 'ի տագնապ մտանել, և զարեան քրտունս հոսել. որպէս է տեսանել յաւետարանի. (ղուկ. իբ. 44.) Օրմէ բազում ինչ գրեաց իմաստութեամբ մեծիմաստ վարդապետն մեր Թէոդորոս՝ քաթենաւորն ասացեալ: Այս երկիւղ մահու զոր կրեաց տէրն մեր՝ խաբեաց զմահ և զիշխանն մահու զսատանայ. որով համարձակեցաւ նա դիմել 'ի վերայ տեառն մերոյ և կլանել զնա ըստ կիտին. այլ ոչ կարաց ունել յինքեան. ուստի ասէ ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. իզ.) թէ քս * կարթ էարկ զերկիւղն մահու. զի խաբեսցէ զմահ. որով համարձա- ,, կեսցի կլանել զնա, և փութասցի թքանել զնա ||: Այլ զի յորժամ 'ի խաչին էր տէրն մեր՝ խաւար կալաւ զաշխարհ, վասն այնորիկ ասէ 'ի յաջորդ համարն. * և ծածկեաց զիս խաւար ||. ըստ որում ինքն որ լոյս էր՝ եկաց 'ի խաւարի անդ զերիս ժամս: Այլ արդ քանզի որպէս ասացաք այժմ՝ 'ի մեծէ երկիւղէ պատճառի 'ի մարդն իբր երկրորդ գործ դողումն մարմնոյ, զայն ևս յայտ առնէ մարգարէն հայելով յանձն իւր, և ասէ:

Դող և դողումն եկն 'ի վերայ իմ: Ահն հասարակօրէն նշանակէ զարտաքին երկիւղ, այսինքն զդեղումն ներքին երկիւղին արտաքս. և զի յայնժամ արտաքին զօրացուցիչ ջերմութիւնք 'ի ներքս դիմեն, արտաքին մասունք մարմնոյ սկսանին ցրտանալ և տկարանալ, որով և լինի 'ի նոսա դողումն կամ դողդոջումն: Զայս հայելով ասէ. 'ի սաստիկ երկիւղէ անտի՝ զոր կրեցի 'ի ներքս 'ի վտանգէ մահու՝ տիրեաց և արտաքին երկիւղ 'ի մարմնի իմում, և անդամք իմ սկսան դողալ: Այլ զի յառաւելուլ երկիւղի՝ պատճառի և պղտորութիւն յոգիս և մթութիւն 'ի խորհուրդս իբր երրորդ գործ նորին՝ զայն ևս յայտ առնէ ասելով:

Եւ ծածկեաց զիս խաւար: Այս բան եթէ 'ի բերանոյն քսի ասասցի՝ նշանակէ զանհնարին տրտմութիւն նորա և զերկիւղ: Իսկ եթէ 'ի բերանոյ դաւթի, նշանակէ զմթագնիլ մտացն և զվտանգիլ կամացն. ըստ որում խաւարն բերի յօրինակ մթութեան մտաց. և երբեմն նաև յօրինակ պատճառ լինելոյ սասանման կամաց. զի յայտ է թէ խաւարն լինի պատճառ սասանելոյ կամ երկնչելոյ ։ Արդ ասէ 'ի սաստկանալ երկիւղի մահու 'ի վերայ իմ ծածկեաց զիս խաւար ։ Այսինքն պաշարեաց զիս յամենայն կողմանէ մթութիւն մտաց, և յայնմանէ նաև սասանութ̅ի կամ պղտորութ̅ի անձնիշխան կամաց ։ Իբր ծածկեաց ասելով ցուցանէ թէ ըստ ամենայնի մթագնեցան միտք նորա, և պղտորեցան կամք նորին ։

Եւ սորա պատճառն է՝ զի կամքն հետևի մտաց, և միտքն 'ի գործելն նպաստի յերևակայութեանց, որ կարէ պղտորիլ յայլևայլ կրից, մանաւանդ յերկիւղէ. զի 'ի սաստկանալ երկիւղի՝ բնական ջերմութիւն մարդոյ և ոգիքն (որպէս ասացաք) թողեալ զարտաքին զգայութիւնս՝ 'ի ներքս դիմեն առ 'ի զերծուցանել զինքեանս 'ի չարէ անտի ։ Եւ 'ի դիմել նոցա 'ի ներքս զգայութ̅իք ներքինք և արտաքինք պղտորին, և երբեմն անզգայանան. 'ի մէջ որոց երևակայութիւնն ամենևին ամբոխի և մթագնի ։ Եւ յայնժամ միտքն չունելով իւր նպաստ յերևակայութ̅եց՝ ինքն ևս մթագնի և խաւարի. յորմէ և կամքն աղէկոծի յինքեան իբր անառաջնորդ ։ Յայսպիսի երկիւղ ըմբռնեալ բազմաց, ոմանք խելագարեցան, և ոմանք գահավէժ կորեան, ոմանք 'ի խաւարային տեղի ծածկեցան, և ոմանք 'ի մահացու հիւանդութիւն ըմբռնեցան ։

Այսպիսի սաստկութ̅ի երկիւղի յերկուց կարէ պատճառիլ. մի՝ 'ի զօրութենէ առթի երկիւղին այսինքն 'ի մեծութ̅է վտանգին որ երկեցուցանէ. և մի ևս՝ 'ի տկարութենէ հոգւոյ երկնչողին, այսինքն այնր որ երկնչի ։ Արդ որպէս և յայտ է՝ այն սաստկութիւն երկիւղին՝ որ եղև 'ի դաւիթ՝ ոչ եղև 'ի տկարութենէ հոգւոյ նորա, այլ 'ի զօրութ̅է առթին, որ մեծ գոլով՝ երկիւղ մեծ պատճառեաց 'ի դաւիթ. բայց նա գոլով զօրացեալ յա̃յ, 'ի կրելն զգործս երկիւղի, այսինքն զխռովիլ սրտի, զդողալ անդամոց, և զխաւարիլ մտաց, ըղգաստ մնաց և անմոլար ։

Իսկ թէ զիա՛րդ, օրինակ տայ լամբ". ասելով. * որպէս
„ կիրթն (ճանապարհի) բազում անգամ և 'ի գիշերի
„ կարէ ընտրութիւն առնել ուղիղ շաւղայն. իսկ ան-
„ կիրթն դիւրաւ մոլորի ||, այսպէս և դաւիթ և այլ

ո՛ և իցէ առաքինի անձն կիրթ գոլով իրացն, և ճանաչելով թէ թիւր է սրտին խոկումն, թէ և 'ի խաւարի իցէ, ոչ կամի հաւանիլ. որով և մնայ անմոլար։ Այլ զի մեծ էր զոր կրէր Դաւիթ, վասն որոյ և առ անմոլար մնալոյ՝ ազատութե՟ն փափաքէր, և ցանկայր տեսանել զանձն իւր հեռացեալ յայնպիսեաց անտի։ Եւ զայս կամելով յայտ առնել յարէ զկնի 'ի յաջորդ համարն, և ասէ.

Է· Ասէի, տա՞յր ոք ինձ թևս որպէս աղաւնւոյ. զի թռչէի՝ վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի։

Աղաւնւոյ թռիչ 'ի գոլութիւն առեալ է ըստ երից. մի՝ ըստ վայելչութե՟ն. զի չքնաղ թռչի, և երբեմն 'ի թռիչսն անդ 'ի բարձրութե՟ն օդոյ գեղեցիկ ճախրէ։ Երկրորդ՝ ըստ արագութե՟ն. և թէպէտ քան զաղաւնի արագաթռիչք բազում գտանին, բայց աղաւնոյն արագութիւն է անխոնջ. մանաւանդ 'ի տեսանել նորա ընդգալ բազէի 'ի վերայ իւր։ Երրորդ՝ ըստ բարձրութե՟ն. զի երբեմն այնչափ բարձրանայ, մինչև աներևոյթ լինել յաչաց՝ մանաւանդ յորժամ հեռի իցէ 'ի բունոյ իւրմէ. և ոչ տայ հանգիստ ինքեան, մինչև ոչ հասցէ յայն. որոյ զարմանալի փորձն յայտնի տեսանի յաղաւնիսն յայնոսիկ՝ որք պահին 'ի կողմանս բաբելոնի 'ի պաղտատ։ Եւ նա ինքն աղաւնին որ անմեղ քարոզի, աւետաբեր ևս ցուցաւ առ Նոյիւ. որոյ վասն թևք նորա արծաթապատ համարին, յայս իսկ և հոգին սուրբ 'ի ձև աղաւնւոյ երևեցաւ։

Այսպիսի նշմարելով մարգարէին զթռիչս աղաւնւոյ՝ զայն բերէ 'ի մէջ. վասն զի տեսեալ զանձն պաշարեալ 'ի ներքոյ և արտաքոյ 'ի բազմապատիկ փորձութեանց՝ իբր 'ի յարձակմանց բազէից, փափաքէ արագութ՟բ հեռանալ 'ի նոցունց, և իբրև թէ թռչելով բարձրանալ յամենայն ստորաքարշ խռովութեանց 'ի վեր. վասն որոյ ասէ։

Ասէի, տա՞յր ոք ինձ թևս որպէս աղաւնւոյ. զի թռչէի, վերանայի, հեռացեալ դադարէի յանապատի։ Այսինքն տեսեալ զիս յայնչափ վիշտս տառապանաց և յորոգայթս փորձութե՟ց պաշարեալ, խորհէի 'ի միտս իմ և ասէի. իցէ՞ թէ տայր ոք ինձ զթևս ոչ ո՛ և իցէ թռչնոյ, այլ որպէս աղաւնւոյ . որով ըստ կարգի և ըստ օրինի թռչէի ։ Եւ զի որ թռչի՝ վերանայ , վասն այնորիկ ասէ , և վերանայի . որպէս թէ ասէր . ելանելով 'ի վշտաց աստի՝ 'ի վերոյ լինէի քան զասս ։ Բայց զի ոչ ամենայն որ վերանայ՝ հեռանայ , վասն որոյ յայն ևս հառաչէ , և հեռանայի ասէ ։

Այլ քանզի հնար է հեռացելոյն 'ի վշտաց՝ յայլ վիշտ մտանել՝ յաւելու ասել . դադարէի յանապատի . որպէս թէ ասէր . ազատ լեալ յամենայն հոգոց՝ դադարեալ մնայի յանապատի , այսինքն յայնպիսի տեղւոջ , ուր ոչ կայցէ առիթ փորձանաց ։ Եւ թէպէտ յայնպիսի տեղիս ոչ գտանի և ոչ իսկ արտաքին մխիթարութիւն , բայց զայն ևս յանձն առնու , միայն թէ տեսցէ զինքն ազատ 'ի խռովութեանց և յութից մեղաց և 'ի վտանգից չարաց ։

Այս հառաչանք է 'ի սիրտ ամենեցուն նոցա՝ որք ոչն գտանեն զհանգիստ անդորրական կենաց . և եթէ ոչ ունիցես զայսպիսի բանս 'ի բերանս նոցա , ընթերցցիս 'ի սիրտս նոցին , յորս տեսանի նախ փափաք զերծանելոյ 'ի խռովութեանց . և զայս փափաքիլս թռանիլ համարի մարգարէն . երկրորդ՝ փափաք թեթևանալոյ և ազատ մնալոյ յութից . և զայս՝ վերանալ կոչէ . երրորդ՝ փափաք ապահովանալոյ յո՛ և իցէ չարէ . և զայս՝ հեռանալ դնէ . չորրորդ՝ փափաք հանգչելոյ , զոր դադարիլ յանապատի անուանէ ։

Արդարև ամենայն սիրտ 'ի այն բերի . բայց սակաւք են՝ որք հասանեն՝ վասն կրկին ներհական պատճառաց . մին է այն՝ զի ոչ մեկնին յայնոցիկ խռովութե̃ց և յութից , և ոչ մեկուսանան յանապատ , այսինքն յառանձնութիւն կենաց . վասն որոյ 'ի չփոթս տագնապին . ոչ են սոքա յինքեանս , այլ 'ի չփոթիս . ոչ կան միաւորական , այլ բազմաւորական . ոչ են իւրեանց , այլ այլոց . եթէ յինքեանս միայն լինէին , անդորրանային . և ծանուցեալ զանդորրութ̃ի իւրեանց ասէին . * ոչ երբէք եմ այնքան միայն , որքան յորժամ ես „ եմ միայն ‖։ Երկրորդն է այն՝ զի ոչ կան 'ի զգաստութ̃ե . և որում փափաքեն՝ ոչ կամին . զի թէ տիրապէս կամէին՝ յամենայնի գտանէին , և 'ի նոյն հաստատէին , եթէ 'ի քաղաքի , և եթէ յանապատի . զի զգաստութիւն մտաց, և սրբութիւն կամաց՝ հաստատուն պահէ զմարդն իբրև զանդամանդ. իսկ անդամանդն եթէ յարկեղս իցէ և եթէ յաղբևս՝ զիւր պնդութիւնն պահէ։ Այսմ օրինակ տալով սարգիս շնորհալի ('ի մեկն. բ̃. պետ. բ̃. 6. Ճառ. դ̃.) ասէ. * Որօրինակ մարգարիտն 'ի տղմին զիւր պատուականութիւնն ոչ կորուսանէ, նմանապէս և արդարն (զուլտ) ,, 'ի մէջ տղմոյն անօրէնութեան կալով զիւր սրբութիւնն ոչ կորոյս ||։ Եւ յաւելու ասել անդ. * Եթէ ,, իցես 'ի քաղաքի, և միտք քո արթուն իցէ, ոչ վնասէ ,, զքեզ քաղաքն. և եթէ իցես յանապատի, և միտս ,, արթունս ոչ ունիցիս, չօգտեցուցանէ զքեզ անապատն ||։

Առ 'ի ժամանել մարդոյ յայսպիսի վիճակ՝ հարկ է ունել զթևս աղաւնոյ ըստ առաջիկայ բնաբանիդ. իսկ այսորիկ թևք աղաւնոյ 'ի կողմանէ աստուծոյ մատուցեալ՝ են շնորհք հոգւոյն սրբոյ, և ներգործական նպաստք նր̃, որովք հոգին իբր երկոքումբք թևօք թռչի 'ի վտանգից և 'ի չարեաց, և վերանայ քան զինքն, այսինքն թէ վերանայ յանձնասիրութենէ իւրմէ. և հեռանայ 'ի սնոտի ունայնութեանց, այսինքն 'ի ցանկալոյ սնոտեաց, և դադարեալ հանգչի 'ի հոգևորական կեանս։ Դարձեալ՝ երկու այս թևք են ա̃ծային աւետիք և սպառնալիք. մին իբր աջ, և միւսն իբր ահեակ, զորս ոչ միայն իբրև զթևս, այլ իբրև զդաստիարակս եցոյց մեզ ա̃ծ։ Զոր միտս ասէ լուսաւորիչն մեր 'ի յաճախապատում գիրս. (Ճառ բ̃. երես 12.) * Ետ (ա̃ծ) ,, անձնիշխանութի արարածոցս երկուս դաստիարակս՝ ,, որպէս որդւոյ, զսպառնալիս և զաւետիս. երկնչել 'ի ,, սպառնալեացն և փախչել 'ի վնասակարացն. ցան- ,, կալ աւետաւոր բարւոյն և երթալ զհետ արդարու- ,, թեան ||։

Իսկ 'ի կողմանէ մարդոյ մատուցեալ՝ առաջին և իբր աջ թևն է մտաւորական աղօթք. երկրորդ թև է կամաւորական նուաճութիւն զգայութեց. եթէ երկոքին սոքա լիցին յումեք՝ նա արագ թռչի, վերանայ, հեռանայ, և հանգչի 'ի յանապատի, այսինքն 'ի խաղաղութեան։ Դարձեալ՝ մտածութի և աղօթք են երկու թևք. մին ուսուցանէ՝ թէ զինչ պակաս իցէ 'ի մարդն.

իսկ միւսն խնդրէ և ընդունի 'ի լնուլ զպակասութ՟ին ։ Դարձեալ միտք և կամք իւր երկու թեւք են . միտքն խոկայ , և կամքն հետեւի՝ ընդգրկել զբարին և խորշել 'ի չարէ ։ Սոքիմբք լինի թռչիլ և վերանալ և գտանել յանապատի՝ այսինքն 'ի հոգեւորական կեանս ։ Սէր աստուած խօսի ընդ հոգւոյն . ըստ այնմ . (ովս . բ . 14 .) * կարգեցից զնա իբրև զանապատ , և խօսեցայց 'ի ,, սրտի նորա || . ևս և լնու զնա մխիթարութ՟բ . ըստ որում յաւելու ասել . * և տաց նմա զստացուածս իւր ,, անտի || ։ Յայսպիսի առանձնութեան մարտեաւ ա՟ծ ընդ յակոբայ , մինչև յաղթել 'ի նմանէ և օրհնել զնա .

(Ծնն . լբ . 26 ։)

Այլ 'ի կողմանէ ա՟յ և մարդոյ միանգամայն մտածեալ՝ յերկուց այսոցիկ թեւոց մին է նոյն ինքն շնորհք հոգւոյն սրբոյ , զոր յիշեցաք այժմ . և միւսն գործակցութ՟ի մեր . զի գործակից եմք շնորհացն ա՟յ առ փրկութիւն ։ Այսոքիւք թեւօք անցանեմք ընդ ամենայն ալիս վշտաց անձկաց և հասանեմք 'ի խաղաղութ՟ի . զորոյ զօրինակն տեսանեմք 'ի հողամաղ թռչունն . զի ասի զնմանէ՝ թէ 'ի գնալ 'ի վերայ ծովու 'ի հեռաւոր տեղիս , նստեալ 'ի վերայ ջուրց՝ պարզէ զաջ թեւ իւր առաջի հողմոյ , և 'ի վարել զնա հողմոյն՝ ինքն ևս ձախու թեւով 'ի ջուր մխելով՝ իբր թիով վարէ զինքն ըստ վարելոյ հողմոյն , և հասեալ յանմարդաբնակ տեղի՝ տարածի առաջի արեւու ։

Սոյնպէս և որ միանգամ կամի անցանել ընդ ծով աշխարհիս և ընդ ալիս տառապանաց սորա և փորձութ՟եց սատանայի և անձկութ՟եց սրտի , պարտի պարզել զհպատակութ՟ի կամաց իւրոց առաջի շնորհաց հոգւոյն սրբոյ . և ինքնին ևս գործակից լինել , և այնու հասանել յանդորրութիւն կենաց և 'ի փրկութիւն հոգւոյ , ևս և յերանութ՟ի յաւիտենական . ուր ունի վայելել զքաղցրութ՟ի անստուեր արեւուն ։

Այլով իմն համառօտ բանիւ կամելով ասել , ծանիր . զի ամենայն որ միանգամ ունի յինքեան զայսոսիկ թեւս աղաւնոյ զորս յիշեցաք , նա փութայ 'ի տապան իւր , այսինքն 'ի խաղաղութիւն հոգւոյն սրբոյ ոստով ձիթենւոյ՝ այսինքն գործով՝ և ոչ սոսկ բաղձանօք .

(Ծնն . ը . 9 = 11 .)

Օ այսպիսի տեսցաք հայելով 'ի ներքին մարդն կամ 'ի խաղաղութիւն ներքին մարդոյն. իսկ հայելով 'ի տառապանս և 'ի փորձանս արտաքինս, ասելի է, թէ այսպիսի փորձանք եթէ իցեն վտանգաւորիչք հոգւոյ, պարտ է մարդոյ առնուլ թևս և թռչիլ. այսինքն օգնականութ̄ն ա̄յ, և ջանիւք անձին հեռանալ նաև ըստ տեղւոյ։ Իսկ եթէ չիցեն վտանգաւորիչք հոգւոյ՝ պարտ է աղօթիւք և համբերութ̄բ առ ա̄ծ դիմել, և նմա յանձնել, կամ 'ի նմանէ խնդրել՝ զի նա ինքն արասցէ որպէս և գիտէ։

Այլ քանզի զոր ասէ աստ դաւիթ, էր վտանգաւորիչ հոգւոյ, յորմէ ծնանէր և 'ի հոգին կործանիչ պղտորութ̄ն, վասն այսորիկ ցանկայր վերանալ և ազատիլ յայնմանէ օգնականութեամբն ա̄յ. ըստ որում և ազատեցաւ իսկ. և յետ ազատելոյն ասաց զայս բան։ Ասացի * օգնականութ̄ն ա̄յ ‖. զի առանց այնր՝ ազատութիւնն գերութիւն է. և ըստ ասելոյ լամբ″. առանց այնր ոչ ամրապատ օգնէ և ոչ քաղաք. քանզի * առանց նորին (ասէր) ամրապատականք գլորեցան. իսկ նովաւ բազումք 'ի քաղաքի արդարացան ‖։

Այս մեկնութիւն հայի յայն՝ զոր 'ի հասարակի գիտէ մարգարէն. իսկ եթէ կամիցիմք հայիլ և յանցս չփոթութեանցն աբեսաղոմայ, մարթ է ասել, թէ այսու բանիւ առաջի դնէ մարգարէն ոչ միայն զփախաք ազատելոյ իւրոյ 'ի չփոթութեանց անտի՝ հեռանալով յանապատ տեղի, և մնալով անդ անվրդով, այլև զփախաք դառնալոյ իւրոյ վերստին 'ի քաղաք իւր իբր յանապատ 'ի դադարել, և իբր 'ի հանգիստ իւր. որպիսի է դարձ աղաւնւոյ 'ի տեղի բունոյ իւրոյ. յոր միտս ասաց նա ինքն ցսադովկ 'ի փախչիլ իւրում. * դարձո զտապանակդ ա̄յ 'ի քաղաք... եթէ գտից շնորհս առաջի „ տեառն, դարձուսցէ զիս ‖։ (բ̄. թագ. ժե̄. 25։) Եւ թերևս յայս հայելով՝ ոչ զարծուոյ թևս՝ կամ զայլ թռչնոյ, այլ զաղաւնւոյն խնդրէ։

Այլաբանօրէն, թևք աղաւնւոյ եղեն առաքեալքն, որովք թռեաւ մարդկայինս բնութ̄ի յանապատ փրկութ̄ե. կամ եկեղեցի՝ 'ի հնութէ 'ի նորութիւն՝ 'ի հրէից 'ի հեթանոսս, որք անապատացեալ էին յերկնային բարեաց. և դադարեցաւ 'ի նմա իբր յանապատի. զի

որպէս ասէ գէորգ վարդապետ . ('ի մեկն . եսայ .) * ան-
„ ապատ կոչի անգործ երկիր . որ է եկեղեցի հեթա-
„ նոսաց , որ չէր 'ի գործ անկեալ պատուիրանացն այ՟ ‖ .
Ունի ևս վերանալ յարքայութիւն երկնից , որ անապատ կոչի յաւետարանի (ղուկ . ԺԵ . 4 .) զի ոչ կայր ոք անդ 'ի մարդկանէ . նա զի անապատ է , այսինքն ազատ է և մեկնեալ յամենայն խռովութեանց ։ Իսկ թէ քանի խռովութ՟ք լի իցէ աշխարհս , մանաւանդ մարդն՝ որ է փոքրիկ աշխարհ , ամ՟ ոք ինքնին կարէ չափել , և փորձիւ տեսանել . յորոց և զերծանիլ փափաքէր մարգարէն . որոյ վասն իսկ ասաց . ո՜ տայր ինձ , և այլն . և զի որում փափաքէր ակն ունէր ընդունել յայ՟ ,
սմին իրի յարէ զկնի և ասէ ։

Է . Ան ունէի թ՟ս , որ թռչէի չուով 'ի հորձմանութենէ , 'ի զայ-
րանալոյ՝ 'ի մրրկեալ նեղութենէ ։

Վեշտասան կիրք ըստ վեշտասան հողմոց անհանգիստ առնեն զնաւարկութիւն կենաց մերոց 'ի ծովու կենցաղոյս . և զի տագնապիչ են 'ի սաստ կարծմնութիւն և զայրացութիւն՝ զայսոսիկ 'ի մէջ բերէ աստ մարգարէն ։ Կարծմնութիւնն է կիրք այնպիսի՝ որով անձկանայ հոգին 'ի շփոթմանէ խորհրդոց վասն յապաղելոյ իրիք . որում զհետ գայ գանձութիւն 'ի սրտի , ևս և արհամարհութիւն յապաղեցելոյն ։ Այսմ կրից ուղղակի հակադրի երկայնմտութիւնն , որ ոչ իւիք նահանջի 'ի սպասելոյ բարւոյ իմիք , այլ հանդարտ մնայ , թէ և պա-
շարեսցի 'ի փորձութեանց ։

Իսկ զայրացումն է վառումն բարկութեան հանդերձ տրտմութ՟ք . որով խանգարի խաղաղութիւն հոգւոյն . որպիսի է և ներգործութ՟ի ժանտաբարոյութ՟ն (այսինքն թիթիզութ՟ն) ։ Այսմ կրից հակադրի հանդարտութիւն հեզութ՟ն . որ յոր և իցէ առիթս բարկութեան
անպղտոր պահէ զհոգին ։

Յանկարծ ախտիցս յայսցանէ պատճառի նեղսրտութ՟ի . որով մրրկի և նեղի սիրտն , մինչև երևիլ թէ հոգին ոչ ևս կարէ ունել անդ զտեղի . և յառաւելուլ այսր առաւել ևս տագնապի հոգին , և յայնժամ լինի 'ի մարդն հոգևորապէս այն ինչ , որ ինչ լինի զգալապէս
յօդս 'ի մրրկէ և 'ի փոթորկէ ։

Այսպիսի կիրք յայտ է թէ լինին յայր անկատար. և սակայն որովհետև արմատ այսոցիկ կրից կայ յամենայն ոգիս մարդկան յանիծից անտի սկզբնական մեղաց, յայր կատարեալ ևս շարժին այսպիսիք, և դառնագինս ներգործեն, բայց առանց տիրելոյ: Եւ արդ քանզի յայսպիսի փորձանս պաշարեցաւ և Դաւիթ, վասն որոյ ցանկանալով ազատ լինել` ցաւագին ոգւով ասէ:

Ակն ունէի այ՟, որ փրկէր զիս 'ի կարճմտութենէ, 'ի զայրանալոյ` 'ի մրրկեալ նեղութենէ: Կամի ասել. ըմբռնեալ եղէ 'ի փորձանս ծանունս. և տեսի զիս 'ի կարճմտութ՟ե և 'ի զայրացման. յորմէ եհաս յիս նեղութ՟ի մրրկեալ կամ մրրկօղ. այլ որ ցաւալին է` յայսմ դառնութեան չունէի զոք` որ ապրեցուցանէր զիս. զինչ ապա` յա՟ծ ապաւինեալ ակն ունէի, թէ նա փրկեսցէ զիս:

Մարթ է այլազգ ևս մեկնել զայս` հայելով 'ի փոքրկութիւն հոգւոյ կրողին և 'ի մեծութ՟ի փորձութ՟եց. ըստ առաջնոյն դնէ * 'ի կարճմտութ՟է ||. իսկ ըստ երկրորդին դնէ * 'ի զայրանալոյ ||. յորոց ծնանի մրրիկ նեղսրտութ՟ե. ըստ որոյ կամի ասել. ակն ունէի յա՟ծ` զի փրկեսցէ զիս 'ի փոքրկութ՟է հոգւոյ, և 'ի մեծութենէ փորձութ՟եց, և այնու նաև 'ի նեղսրտութ՟է:

Այս կարգ բանի ըստ պատշաճի առաջի դնի. վասն զի եթէ ըստ փոքրկութ՟ե հոգւոյն փոքր լինէր փորձութիւնն, կամ ըստ մեծութ՟ե փորձութ՟ե մեծ լինէր զօրութ՟ի հոգւոյն` դիւրին լինէր տանել: Իսկ յորժամ փոքր է զօրութ՟իւն և մեծ է փորձութ՟իւն, դժուարին է տանիլ և անհնարին. վասն որոյ հարկ է ակնկալութ՟բ մեծաւ դիմել յայն` որ կարէ զփոքրկութ՟ի հոգւոյն մեծացուցանել, և զմեծութ՟ի փորձութ՟եցն փոքրկացուցանել, կամ զվտանգեալն զօրացուցանել և պաշտպանել, և զվտանգիչսն տկարացուցանել և վանել:

Յարեաւ հողմ 'ի ծովուն տիբերեայ և վտանգեաց զառաքեալսն. դիմեցին առ քս՟, և նա * սաստեաց հողմոյն և ծովուն. և եղև խաղաղութիւն մեծ ||. (մատ. ը. 26:) Իսկ չարք առաւել կամին յախտս ալէկոծիլ, քան յա՟ծ դիմել և հանգչիլ. * այլ անօրէնք իբրև ըղծով ծփեսցին, և զհանգիստ մի գտցեն ||. (եսայ. ծէ. 20:)

Յարմարական մեկնութիւն մարթ է զբանսդ հարձմութեան և շայրայութեան վերածել առ 'ի կիրս թշնամեացն դաւթի. յոր միտս կամի ասել. 'ի հալածիլ իմում ակն ունէի ա̃յ՝ զի փրկեսցէ զիս 'ի կարճմտութենէ թշնամեաց իմոց, և 'ի կատաղի զայրացմանէ նոցա, և 'ի մրրկայոյզ նախանձուէ նեղսրտութե՛ նոցին, որովք վառեալ են, և յարձակեալ են 'ի վերայ իմ. ընդդէմ որոց մաղթէ առ ա̃ծ, և ասէ.

Ը. Ընկլ՛ տէր, և բաժանեա զլեզուս նոցա. զի տեսի զանօրէնութիւն, և զհակառակութիւն 'ի քաղաքի.

Բառդ ընկլուզանել՝ որոյ հրամայականն է ընկլ՛, նշանակէ սուզանել 'ի խորս ջրոց՝ մինչև անհետ առնել յաչաց. Արդ մարգարէն ոչ խնդրէ յա̃յ՝ զի 'ի խորս ջուրց ընկղմեսցէ զթշնամիս իւր, այլ զի անհետ արասցէ զթշնամութիւն նոցա, և զխորհուրդ չարութե՛ նոցին. և յայս միտս ասէ.

Ընկլ՛ տէր (զնոսա): Այսինքն արա զի դադարեսցին նոքա 'ի թշնամութենէ՝ կամ դադարեսցին յերևելոյ թշնամի. կամ թէ անհետ արա զչարութիւն նոցա, որպէս թէ ոչ էին. Իսկ թէ զիարդ պարտ էր առնել զայս, խորհուրդ տայ ասելով.

Եւ բաժանեա զլեզուս նոցա: Այսինքն 'ի ժողովիլ նոցա վասն իմ 'ի խորհուրդ՝ և յասել նոցա զայս ինչ և զայն՝ բաժանեա զլեզուս նոցա, որպէս արարեր 'ի բաբելոն. (Ծնն. ԺԱ. 17.) այսինքն թէ, արա զի մի միաբանեսցին 'ի մի բան. այլ յասել միում զայս ինչ՝ միւսն զայլ ինչ ասիցէ, և 'ի բաժանիլ բանից նոցա՝ նոքա ևս բաժանեսցին, և չկարիցեն առնել ինչ.

Այսմ խնդրուածոց ձեռն ետ, և ստորագրեաց ա̃ծ, (որպէս յայտնի տեսանի 'ի Բ. Թագ. ԺԵ. և ԺԷ.) Քանզի որպէս պատմի անդ՝ 'ի լսել դաւթի թէ նաև աքիտոփէլ ընդ աբեսաղոմայ է՝ աղաղակեաց առ ա̃ծ և ասէ. բաժանեա և * ցրեա զխորհուրդն աքիտոփէ-
,, լայ տէր ա̃ծ իմ ||. (Բ. Թագ. ԺԵ. 3.)

Եւ երբև 'ի խորհուրդ ժողովեցան նոքա, 'ի տալ աքիտոփէլայ խորհուրդ զօրաւոր, քուսի արաքացի զայլ խորհուրդ ետ առաջի՝ ընդդէմ խորհրդոյն աքիտոփէլայ, և այնու բաժանեցան լեզուք նոցա, և եղծա գլխումն նոցին ։ Ուր վկայէ և գիրն, թէ * տէր ետ „ հրաման ցրել զքաջ խորհուրդն աքիտոփելայ ‖ ․ (Բ․ Թագ․ ԺԷ․ 14։) Ուր քաջ ասելովն ոչ ցուցանէ՝ թէ բարի էր այն խորհուրդ, այլ յաջող էր․ զի նովաւ 'ի գլուխ ելանէր կամք նոցա․ իսկ 'ի ցրել այնր՝ ցրեցաւ և գործ նոցին, զոր անօրէնութիւն և հակառակութիւն կոչէ, ասելովն։

Զի տեսի զանօրէնութիւն և զհակառակութիւն 'ի քաղաքի։

Ասելովն զի՝ կամի նախ ցուցանել՝ թէ արժան էր խափանել զխորհուրդս նոցա, զի էր այն 'ի վերայ անօրէն գործոց, որով կամէին անօրինել 'ի դաւիթ․ և էր ևս հակառակութիւն չար՝ բաժանիչ ազգին․ և այս ոչ եթէ 'ի ծածուկ կամ արտաքոյ 'ի դաշտի, այլ 'ի քաղաքի այ̃, կամ 'ի քաղաքի իւրում։

Երկրորդ կամի ցուցանել (ըստ առաջին տեսութեան տանն) թէ արժան է տալ ինքեան զայն զոր խնդրեաց, այսինքն զթևս որպէս զաղաւնւոյ՝ հեռանալ 'ի քաղաքէ․ որովհետև 'ի քաղաքի այսպիսի չարիք գործին, այսինքն անօրէնութիւն և հակառակութի։

Երրորդ բարոյապէս առեալ կամի ցուցանել, թէ որովհետև 'ի քաղաքի մարմնոյ իւրոյ անօրէնութ̃իք և հակառակութիւնք ոչ պակասին՝ արժան է կամ կործանել զնա, կամ սրբել, և կամ նուաճել ընդ իշխանութեամբ հոգւոյն։

Այս ամենայն ըստ ձայնին հայի 'ի գործս տիրասպան հրէից․ որոց թէպէտև լեզուք բաժանեցան, զի այլ և այլ սուտ վկայութ̃իք խօսեցան 'ի վերայ տեառն մերոյ, բայց սիրտք նոցա 'ի յանօրէնութիւն և 'ի հակառակութիւն ըմբռնեցան 'ի քաղաքի տեառն․ և ինքեանք զտէր քաղաքին հանին արտաքոյ քաղաքին՝ և սպանին․ յորմէ և ընկղմեցան՝ ինքեանք և տաճար իւրեանց այլովքն հանդերձ․ և լեզուք նոցա այսինքն ցեղք նոցա կրկին բաժանեցան, զի ցրուեցան յայլ և այլ ազգս։ Իսկ թէ քանի մեծ եղև անօրէնութ̃ի սոցա և նոցա՝ յայտ առնէ մարգարէն յաջորդ բանիւն ասելով։

Ժ. **Ի տուէ և 'ի գիշերի շուրջ եղեն պարսպաց նորա անօրէնութիւնք. չարիք և վիշտք են 'ի մէջ նորա. և ոչ պակասեցան 'ի հրապարակաց նորա վաշխ և նենգութիւն:**

Ի հաստատել մարդոյ յանօրէնութե̃՝ ոչ ներգործէ 'ի նա բարի ինչ իբրև 'ի մեխաւ պողովատիկ, կամ մանաւանդ իբրև 'ի պարսպապատ քաղաք. որպէս յայտ է 'ի յուդա. զի թէպէտև բազում ինչ արար ընդ նա տէրն մեր, բայց այնպէս պաշարեալ էր զնա անօրէնութիւն նորա՝ մինչև չթողուլ նմա մտանել 'ի հոգի իւր գոնէ միոյ իմիք յայնցանէ՝ զոր եցոյց տէր: Նոյնպիսի վիճակ չարութեան թշնամեաց իւրոց հայելով մարգարէին՝ ասէ:

Ի տուէ և 'ի գիշերի շուրջ եղեն պարսպաց նորա անօրէնութիւնք: Փոխաբերական բանք են այսոքիկ, որովք կամի ասել, թէ 'ի տուէ և 'ի գիշերի անօրէնութիւն խորհէին թշնամիք իմ 'ի քաղաքի անդ՝ յորմէ հալածեցին զիս, և այնչափ բազմացան և մեծացան անօրէնութիւնք այնր քաղաքի, մինչ գրեթէ իբրև զէնք և իբրև զօրք շրջապատեցին զպարիսպ նորա, և ամրացուցին զնա՝ չթողուլ արդարութե̃ մտանել 'ի ներքս: Նաև զի մի կարծեսցի՝ թէ ինքն խօսի զնիւթական քաղաքէն, կամ թէ բանք իւր իցեն զայնպիսի անօրէնութե̃ց, որք համարիցին արտաքոյ, և ոչ 'ի ներքս 'ի քաղաքացիս, յաւելու, և ասէ:

Չարիք և վիշտք են 'ի մէջ նորա: Այս բան կարէ նախ իբր պատճառ դնիլ նախընթաց հատուածոյն, որպէս թէ ասէր. որովհետև պէսպէս չարիք և ծանր ծանր մեղք գործին 'ի մէջ թշնամեաց իմոց, որք բնակին 'ի քաղաքի անդ, վասն այնորիկ և անօրէնութիւնք նոցա մեծացան և խստացան, մինչև չանսալ իրաւանց:

Կարէ երկրորդ իբր հետևութիւն դնիլ, և ըստ այսմ բառդ **չարիք**՝ առեալ լինի փոխանակ թշուառութեանց ժողովրդեանն, և բառդ **վիշտ**՝ փոխանակ մեծամեծ եղեռնագործութեանց եղելոց յիշխանաւորս. որպէս թէ ասէր. վասն խստանալոյ և պարսպապատելոյ նոցա անօրէնութեամբք՝ բազում թշուառութի̃ք պատահին 'ի հասարակ ժողովրդեան նոցա, և բազում եղեռնութի̃ք գործին յիշխանս նոցին: Այլ մի ինչ զարմասցիս ասէ, ընդ այս՝ զի նոքա արդէն իսկ անօրէնք էին և զրկօղք , չարք և նենգաւորք . և առ այս յարէ ։

Եւ ոչ պակասեաց 'ի հրապարակաց նորա վաշխ և նենգութիւն ։

Զերկուս հնացեալ չարիս թշնամեաց իւրոց առաջի առնելով՝ այսինքն զյայտնին և զգաղտնին՝ տայ իմանալ և զայս . զմին 'ի չարեաց դնէ լինել յայտնի վաշխառութիւն . զերկրորդն դնէ լինել նենգութիւն ։ Երկոքին այսոքիկ ասէ ոչ պակասեցան 'ի հրապարակաց նոցա ։ Հրապարակօք իմացեալ լինին աստ եթէ փողոցք և եթէ ընդարձակ տեղիք քաղաքին . որով ցուցանի թէ յամենայն վայրս քաղաքին լի էին այսպիսի անիրաւութ՟իք ։

Վաշխիւ թէպէտ իմացեալ լինի անիրաւ շահ դրամոց 'ի փոխ տուելոց՝ բայց իմացեալ լինի ևս ո՛ և իցէ անիրաւ զրկողութիւն արարեալ ընդդէմ այլոց . զի որ 'ի հրապարակի վաշխառուն է՝ այնպիսին համարձակ է 'ի զրկողութիւնս . արդ ասէ սոքա որովհետև այսպիսի զրկողութեանց զհետ էին՝ 'ի նոյն սովորեալ գոլով՝ դիւրաւ միաբանեցան ընդ այնոսիկ՝ որք կամեցան զրկել զիս 'ի թագաւորութենէ իմմէ ։ Եւ զի նենգութեամբ ևս սովորեալ էին վարիլ, նովին նենգութեամբ համակամ ցուցին զինքեանս խնդրողաց անձին իմոյ ։ Սոքիմբք կամի ևս ցուցանել զագահութիւն նոցա , և զանողորմութ՟ի նոցին ։

Երկրորդական մեկնութեամբ հնար է աստ հրապարակօք իմանալ զժողովս նոցա կամ զքաղաքութիւն նոցին . յորոց ոչ պակասեցաւ վաշխառութիւն բանից և նենգութիւն գործոց . զի զբանս իւրեանց իբր վաշխ հաճոյական ընծայէին միմեանց 'ի կատարումն չարութ՟ե իւրեանց . և զոր խօսէին ընդ միմեանս՝ նենգութեամբ 'ի գլուխ տանէին ։

Այս բանք նկարագրեն և զչարութիւն տիրասպան հրէից , որք իբրև աւազակք արտաքոյ պարսպաց արդարութեան շրջելով զարան գործէին տեառն մերոյ ևս և աշակերտաց նորա , և վասն ագահութեան իւրեանց՝ նենգութ՟ե վարէին , և յանդիմանեալ 'ի տ՟նէ՝ անգոնէին զնա , և փութային կորուսանել (ղուկ . ժզ . 14 .) որոյ վասն հանապազ խորհուրդ վատ խորհէին զնմանէ՝ թէ զինչ արասցեն ընդ նա ։ Դատին առս ինքեանց ձեռնտու և առաջնորդ զորդին կորստեան զյուդայ, որ գնացեալ առ նոսա՝ չարիս խօսեցաւ զնմանէ՝ ցուցանելով զնա ոչ իբրև այնպիսի՝ որպիսի ճանաչէր, այլ իբրև անարգ ոք. որով և գլխաւորքն վաճառեաց զնա. և այնու նախատինս եդ ՚ի վերայ նորա. սմին իրի զանգատի զնմանէ տէր, և խօսելով առ նա բերանով մարգարէին, ասէ.

ժ. Զի թէ թշնամոյն նախատեալ էր, համբերէի արդեօք. կամ ատելոյն մեծաբանեալ էր ՚ի վերայ իմ, թաքչէի արդեօք ՚ի նմանէ.

ժա. Այլ դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ.

ժբ. Ապաքէն՝ ՚ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր. զի գնայաք միաբանութբ ՚ի տան այ.

Բազումք են որք տանին և համբերեն նախատանաց և զրկանաց թշնամեացն, բայց մինչև ցայսօր ոչ ոք գտաւ՝ որ կարաց տանիլ իսկական նախատանաց բարեկամին. զի թէև արտաքուստ կարիցէ ծածկել, սակայն վէրքն զոր ընդունի ՚ի բարեկամէ, մնայ ՚ի ներքս բերանաբաց, և հոսէ զարիւն, այսինքն զխորհուրդս շառագնիչս, և վնասակարս. զի թէպէտև նախատինքն նոյն է, բայց յանձն թշնամեաց հայելով ոչ երևի մեծ, իսկ յանձն բարեկամին՝ մեծ յոյժ. որպէս նոյն վէրք կամ նոյն աղտ ՚ի յոտսն չէ զզուելի, իսկ յերեսն զզուելի տեսանի. սոյնպէս նոյն գործ ՚ի թշնամին, և ՚ի բարեկամին.

Ասացի՝ * իսկական նախատանաց ‖. որով իմացեալ լինին՝ ոչ ո՛ և իցէ նախատական բանք, այլ այնպիսիք որք ՚ի չար կամաց յառաջ գան ընդդէմ ուրուք՝ պարսաւելի և անարգ ցուցանելով զնա, կամ գիտութբ ասացեալ բանք այնպիսիք՝ յորոց յառաջ գան գործք նախատանաց, այսինքն որով ոք մտանի ՚ի նախատինս, կամ ՚ի նախատական գործս. որպիսի եղեն բանք Աքիտոփելայ ընդդէմ Դաւթի, և առաւել ևս բանք մատնչին Յուդայի, ևս և բանք այլոց սուտ բարեկամաց. յայսոսիկ ակնարկելով ասէ.

Ոչ թէ թշնամոյն նախատել էր, համբերէի արդեօք. Այսինքն, եթէ թշնամի իմ յայտնապէս չարիս խօսէր առ իս կամ զինէն առ այլս, և մատնէր զիս 'ի նախատինս, յիրաւի տանէի համբերութբ̃, զմտաւ ածեալ, թէ որովհետև թշնամի է, չէ ինչ զարմանք՝ թէ զգործ թշնամեաց գործեսցէ. որ է նախատել, մատնել, և այլն։ Նա առ առաւել պարզ իմացուցանելոյ զասացեալսն իւր՝ յաւելու ասել։

Կամ ատելոյն մեծաբանեալ էր 'ի վերայ իմ, թագչէի արդեօք 'ի նմանէ։ Այսինքն թէ նա որ ընդդէմ իմ յոխորտալով և զանձնէ իւրմէ մեծամեծս խօսելով՝ կամէր անարգ ցուցանել զիս, և խոստանայր՝ այլոց մատնել զանձն իմ, այնպիսին եթէ ատեցող իմ էր, և կամ եթէ պատճառ ունէր ատելոյ զիս, և զայսպիսիս խօսելոյ, ես յիրաւի թագչէի 'ի նմանէ, այսինքն ծածկէի զերեսս իմ, և ոչ երևեցուցանէի զիս և ոչ նախատէի զնա, զի մի առիթ եղէց առաւել ևս մեծաբանելոյ նորա, այլ մանաւանդ գուցէ պատճառ գիջանելոյ, որով մեղմացուցանէր նա թերևս զմեծաբանելն իւր. իսկ թէ ո՛ իցէ՝ առ որ խօսի, յայտ առնէ ասելով։

ժդ̃. **Բայց դու մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ և ծանօթ իմ։** * Բայցն ստուգութեան է տարացոյց ‖. որպէս ասէ ծործորեցին ('ի մեկն. մատ. իդ̃.) ըստ որոյ 'ի դնելն աստ. **բայց դուն** ցուցանէ թէ ստոյգ էր լինելն նորա հաւասար և առաջնորդ, և ծանօթ։ Արդ այսքիկ երեքին բառք միապէս յարմարին աքիտոփէլայ և յուդայի. զի աքիտոփէլ որպէս յայտ է (բ̃. թագ. ժե̃. 12 = 31. և ժզ̃. 23.) գոլով իշխան մեծ՝ իբր հաւասար արքայի նստէր 'ի խորհուրդ և 'ի սեղան ընդ նմա, և իբր խորհրդական առաջնորդ լինէր նմա 'ի բազում գործս, և էր ծանօթ, այսինքն ընտանի բարեկամ նորա։ Նաև սեմէի էր սոյնպիսի. ուստի առ նա ևս կարէ հայիլ այս բան։ Սոյնպէս և յուդայ իբր հաւասար ընկեր՝ վարէր ընդ տեառն, և էր կացուցեալ 'ի նմանէ առաջնորդ, այսինքն առաքեալ. և էր ծանօթ նորա այսինքն բարեկամ։ Արդ ասէ դու այսպիսի գոլով, զիարդ նախատինս արարեր զիս մարդկան, և յարեաւ 'ի վերայ իմ մեծարանութ՟ք այսինքն պարծելով 'ի կորուսանել զիս, կամ 'ի մատնել և 'ի վաճառել անարգ գնոյ. Եւ կամելով առաւել ևս սաստկացուցանել զապերախտութիւն նորա՝ յաւելու ասել.

ԺԵ. Ապաքէն 'ի նոյն քաղցրացուցեր ինձ և քեզ կերակուր.

Այսինքն թէ ոչ ապաքէն 'ի միասին նստելով 'ի նոյն սեղան՝ իբր իմ հաւասար և իմ ընտանի քոյին սեղանակցութ՟ք քաղցրացուցանէիր ինձ և քեզ կերակուր, որ է ասել. յորժամ 'ի բարեկամութեան էիր՝ այնու պատճառ լինէիր՝ զի քաղցր լինէր ինձ և քեզ ուտել կերակուր 'ի միասին, որպէս դնի յերր″. և յեօթ″. Եւ այս՝ եթէ մասնաւորապէս հայիցի 'ի դէմս յուդայի՝ ոչ միայն իմացեալ լինի զհասարակ կերակրոյ, այլ և զանմահական կերակրոյն՝ զոր բաշխեաց ք՟ս յընթրիսն անդ. և որչափ քաղցր էր այն հոգևորապէս, այնչափ դառն եղև 'ի քիմս մատնչին. Յետ առաջի դնելոյ մարգարէին զսեղանակցութ՟ին՝ յառաջ բերէ և զուղեկցութիւնն ասելով.

Ուէ գնայաք միաբանութեամբ 'ի տան ա՟յ. Կամի ասել. ոչ գոյր 'ի միջի մերում տարաձայնութիւն կամ անմիաբանութիւն յընթանալ մեր 'ի տունն ա՟յ, և անդ 'ի տանն ա՟յ գնալ. ուր բառդ գնալ՝ դնի փոխանակ վարելոյ, գործելոյ, և այլն, որպէս թէ ասէր. 'ի տանն ա՟յ կամ յեկեղեցւոջն ա՟յ 'ի միասին վարէաք և 'ի միասին գործէաք զգործս ա՟յ 'ի պաշտելն զնա, և 'ի խօսիլն զնմանէ.

Վարդան 'ի դէմս ք՟ի ես վերածէ զայսոսիկ բանս. իբր թէ ասել դաւթի առ ք՟ս. մարդ եղեր հաւասարելով մեզ, առաջնորդ եղեր կենաց և ծանօթ հովիւ. նաև 'ի վերնատանն պատրաստեցեր ինձ կերակուր. և զառաքեալսն կացուցեր քեզ տուն և տաճար. յորս գնայաք 'ի միասին, ես մարգարէութեամբս, դու ճշմարտութ՟ք. այլ այս մեկնութիւն արտաքոյ կարգի է. Լամբ″. զայս ամենայն 'ի բարոյական միտս առնու յասել հոգևոր մարդոյն ցշնչաւորն. դու էիր մի ընդ իս՝ ծանօթ և առաջնորդ և սեղանակից. զմարդ ապա՛ նախատինս արարեր զիս առաջի ա՟յ և հրեշտակաց նորա, են. Եւ առ այս բերէ օրինակ զայլի կենն այսինքն զներքին մարդն՝ որ թախանձէր զդատաւորն այսինքն զմիտսն՝ դատ առնել ինքեան յոսոխէ իւրմէ 'ի շնչաւոր մարդոյ ։

Ըստ այսմ հնար է և իւրաքանչիւր մարդոյ յինքն հպեցուցանել բարոյապէս զայս բան ։ Իսկ մարգարէն դնէ զայսոսիկ հայելով տիրապէս յաքիտոփել և նովաւ 'ի յուդայ , ևս և 'ի թշնամիս իւր . և ապա գուշակէ զչարիսն՝ որք հանդերձեալ էին գալ 'ի վերայ նոցա . սմին իրի յարէ զկնի և ասէ ։

ժզ . Եկեսցէ մահ 'ի վերայ նոցա . և կենդանւոյն իջցեն 'ի դժոխս . զի չարութիւն է 'ի բնակութեան նոցա և 'ի մէջ նոցա ։

Մահն թէպէտև պակասութիւն է , որպէս և խաւարն , բայց զի աղետալի է գործ նորա՝ որ է բարձումն կենաց , 'ի խօսելն զնմանէ՝ իբրև զգոյօղ ինչ և իբրև ըզգործօղ առաջի առնեմք զնոյն . վասն որոյ և այնպիսի բանիւք վարիմք՝ որովք ընծայի մահու գործողութիւն ինչ կամ շարժումն . որպէս յասելն . * մահ մեկնեսցէ ընդ իս և ընդ քեզ ||. (հռութ . ա . 17 .) * մահ հովուեսցէ զնոսա ||. (սաղ . խը . 15 .) * կերիցէ մահ զգեղեցկութիւն նորա ||. (յոբ . ժը . 13 .) * կորուստ և մահ ասացին՝ լուաք զփառաւորութենէ նորա ||. (յոբ . իը . 22 .) * եմուտ մահ յաշխարհ ||. (իմաստ . բ . 24 ։) Ըստ այսմ ոճոյ խօսի և աստ մարգարէն յասելն ։

Եկեսցէ մահ 'ի վերայ նոցա ։ Որպէս թէ ասէր . որովհետև թշնամիք իմ չարիս նիւթեցին ինձ , և կամեցան 'ի մահ մատնել , ասելով . * պնդեսցուք զհետ դաւթի , և հասցուք 'ի վերայ նորա և սպանցուք զնա միայն ||. և այլն (բ . թագ . ժէ . 1 = 4 .) նոյն չարիք հասցեն 'ի վերայ նոցա . և որ լրումն է չարեաց՝ մահ եկեսցէ 'ի վերայ նոցա՝ այսինքն թէ անտարակոյս հասցէ նոցա մահ , և մեկնեսցէ զնոսա 'ի միմեանց , և կորուսցէ զնոսա . որպէս և եղեն իսկ ։ Բայց թէ որպիսի էր այն մահ , յայտ առնէ ասելով ։

Եւ կենդանւոյն իջցեն 'ի դժոխս ։ Այս ոճ , այսինքն կենդանւոյն իջանել 'ի դժոխս՝ երբեմն կարէ իմացեալ լինել ։ Մի՝ յորժամ ոք իջանէ 'ի դժոխս ներքինս. այսինքն 'ի գեհեանն, զի անդ մնայ կենդանի 'ի տանջանսն յաւիտենականս։ Երկրորդ՝ յորժամ որ կենդանի գոլով ընկղմի կամ թաղի յերկիր իբր 'ի դժոխս արտաքինս՝ որ լինի իբր գերեզման, որպէս եղև դադանայ և աբիրոնի հակառակողացն մովսէսի և աչարոնի (Թուոց. ժզ. 33։) Երրորդ՝ յորժամ մեռանի որ ոչ եթէ բնական մահուամբ, այլ այլով, այսինքն կամ սրով, կամ սովով, կամ խեղդելով. ո-րով և առանց հիւանդութիւն կրելոյ իջանէ 'ի գերեզման։

Այսպիսի մահուամբ կորեան թշնամիք դաւթի ըստ մեծի մասին, զի բազումք սրով անկան, և բազումք կենդանւոյն 'ի մէջ անտառի կորեան և թաղեցան. ըստ այնմ. * յաճախեաց անտառն ուտել 'ի զօրուէն՝ քան զոր եկեր սուրն յաւուր յայնմիկ ||. (բ̃. Թագ. ժը̃. 8։) Նոյնպէս և աբեսաղոմ կենդանւոյն կախեցաւ ընդ երկինս և ընդ երկիր զկաղնւոյն մեծէ. որպէս գրի անդ։ Նմանապէս և աքիտոփէլ որ խեղդեարկ և մեռաւ. (բ̃. Թագ. ժէ. 23։) Այլն նման կորեան և տիրասպան հրէայք 'ի պաշարմանն երուսաղէմի, ոմանք սրով և ոմանք հրով, ոմանք ընդ պարիսպն հոսելով և ոմանք ընդ փլատակաւ թաղելով։ Եւ այս պատահեաց նոցա վասն այնր պատճառի՝ զոր եդ 'ի վերոյ, զոր և կրկնէ այլով բանիւ ասելով։

Զի չարութիւն է 'ի բնակութեան նոցա և 'ի մէջ նոցա։ Այսինքն՝ թէ վասն այնր այսպիսի մահուամբ կորիցեն և զբնակութի̃ իւրեանց 'ի դժոխս դնիցեն՝ վասն զի չարութի̃ սիրեցին, և 'ի տեղիսն՝ յորս ինքեանք բնակեին՝ զնոյն սնուցին. և բնաւ ոչ յիշեցին, թէ գոյ վրէժխնդիր չարեաց իւրեանց։ Այլ թէ ինքն դաւիթ զինչ խորհէր յայնժամ 'ի միտս իւր, և զինչ բերէր. յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով։

ժզ. Ես առ ա̃ծ կարդացի, և տէր լուաւ ինձ յերեկոյս՝ 'ի վաղորդայն և 'ի հասարակ աւուր։

Կարգալն պէսպէս նշանակութի̃ վարի. նախ՝ փոխանակ վերծանելոյ զգիրս. ըստ այնմ. (ա̃. եզր. ը̃. 26.) * կարդացի զթուղթ ձեր ||. ևն։ Երկրորդ՝ փոխանակ անուանելոյ. ըստ այնմ. (բ̃. մակ. ա̃. 36.

* կարդացին զանուն նորա բազումք եփրաթա ‖ ։ Երրորդ՝ փոխանակ կոչելոյ զանուն ուրուք . ըստ այնմ . (Ծնն . ժգ . 4 .) * կարդաց անդ աբրամ զանուն տեառն ‖ ։ Չորրորդ՝ փոխանակ բարձրաձայն աղաղակելոյ առ ոք , մանաւանդ առ ա̃ծ . ըստ այնմ . (սաղ . ճժը . 145 .) * կարդացի առ քեզ բոլորով սրտիւ իմով ‖ ։ Յայսպիսի տեղիս թէպէտ և յայլ թարգմանութիւնս աղաղակել դնի , բայց թարգմանիչք մեր 'ի միտս բանին հայելով , և զառաւելութիւն նշանակութեանն յայտնել կամելով՝ կարդալ եդին . զի աղաղակելն նաև 'ի յիմարաց և յանզգամից կարէ լինել . իսկ կարդալն 'ի մէջ բերէ և զուշադրութիւն 'ի միտս , և զյօժարութիւն 'ի կամս . վասն որոյ յաւէտ կամեցան դնել զբառդ կոչման քան աղաղակել ։ Եւ ահա ըստ այսմ նշանակութեան . դնի և աստ բառս կոչման յասելն ։

Ես առ ա̃ծ կարդացի և տէր լուաւ ինձ ։ Այսինքն 'ի հալածիլ և 'ի տառապիլ իմում ոչ 'ի մարդ ոք եդի զյոյս իմ , այլ յա̃ծ , և առ նա աղաղակեցի ։ Իսկ թէ զինչ էր՝ զոր յաղաղակելն ասէր՝ ոչ դնէ . բայց յաջորդ բանին ցուցանէ՝ թէ այնու տարածէր առաջի ա̃յ զտառապանս իւր , և խնդրէր զայցելութիւն նորա , զոր և եգիտ իսկ . յոյր սակս ասէ ։ * Եւ տէր լուաւ ինձ ‖ . այսինքն անսաց աղաղակի իմոյ , որ է ասել . հաճեցաւ ընդունել զաղօթս իմ , և այց առնել առ իս և փրկել զիս ։ Այլ թէ երբ եղև նմա կարդալ առ ա̃ծ , և քանիցս , յայտ առնէ ասելով ։

Երեկոյս , 'ի վաղորդայն , և 'ի հասարակ աւուր ։ Կամ որպէս գրէ սարգիս շնորհալի ('ի մեկն . ա̃ . պետ . գ . 7 . ճառ է .) * ընդ երեկս , 'ի վաղորդեան , և 'ի հասարակ աւուր ‖ ։ Առ եբրայեցիս յերեկոյէ սկսանի օրն , վասն այսորիկ նախ զերեկոյն դնէ . և զի յետ երեկոյի յաջորդէ վաղորդայն , և յետ վաղորդայնի կէս աւուր , սմին իրի շարայարէ զկնի երեկոյի զվաղորդայն՝ և ապա զհասարակ աւուրն . (վասն վաղորդայնի տես 'ի սաղ . խե . 5 ։) Իսկ հասարակ աւուրն նշանակէ զմէջ աւուրն՝ որ է կէս օր , որ գոլով 'ի մէջ հաւասար ժամուց՝ կոչի հասարակ աւուր , այսինքն հասարակ երկուց մասանց աւուրն . զի որչափ ժամք գտանին յաւուրն նախ քան զկէս օրն , նոյնչափ ժամք գտանին և յետ կէս աւուր ։

Ա՛րդարէն վասն այնորիկ զերիսին մասունս աւուրն միայն յիշէ, վասն զի յայսոսիկ յերիս ժամս սովորութի̃ն էր երբայեցւոց կալ յաղօթս. զոր և առ դանիէլի տեսանեմք. զի ասի (դան. Զ. 10.) * երիս ժամս յաւուրն (այսինքն յերիս ժամանակս յաւուրն) դնէր ծունր և կայր յաղօթս, և գոհանայր առաջի ա̃յ իւրոյ, որպէս առնէր յառաջագոյն ‖ ։ Այս իսկ և եկեղեցի քրիստոսի թէպէտև յաւուրն զեօթն ժամերգութիւնս կատարէ, բայց հասարակօրէն երիցս ժողովի ՚ի տաճարի. ՚ի վաղորդայն, ՚ի հասարակ աւուր, և յերեկոյի ։ Ուրեք ուրեք չորիցս ևս ժողովին, և ուրեք ուրեք երկիցս միայն. այսինքն յառաւօտու և յերեկոյի ։

Արդ այս ասացուած * յերեկոյն, ՚ի վաղորդայն և ՚ի հասարակ աւուր ‖. հայի նախ յայն զոր ասաց. * Ես առ ա̃ծ կարդացի ‖. որպէս թէ ասէր. յաւուրն երիցս կարդացի առ ա̃ծ ։ Երկրորդ հայի ՚ի յաջորդ բանն զոր ասէ. * պատմեցի և ասացի ‖. որպէս թէ ասէր. յաւուրն երիցս պատմեցի առաջի ա̃յ, և յայտ արարի նմա զտառապանս իմ ։ Երրորդ հայի համանգամայն ՚ի կարդալն և ՚ի լսելն. որպէս թէ եղեալ էր. Ես առ աստուած կարդացի յերեկոյս, և լուաւ ինձ. կարդացի և ՚ի վաղորդայն, և յայնժամ ևս լուաւ ինձ. կարդացի նաև ՚ի հասարակ աւուր, և ՚ի նմին ժամու ևս լուաւ ։ Որպէս և դիցի՝ ուղղութեամբ իմացեալ լինի ։

Իսկ յոհան իմաստասէր և խոսրով, և վարդան միաւորեն զայս ընդ լսելոյն այսպէս. միանգամ կարդացի առ աստուած, և նա երիցս լուաւ՝ յերեկոյս, ՚ի վաղորդայն և ՚ի հասարակ աւուր ։ Զոր յաւելու անդ յոհան իմաստասէր (երես 316.) և զայլ խորհրդաւոր իմն իմաստ. և գրէ այսպէս. * Ես առ աստուած
„ կարդացի և լուաւ ինձ. ՚ի մի ժամանակի ասէ կար-
„ դացի, և յերիսին լուաւ ինձ. յերեկոյս՝ յայսմ աշ-
„ խարհի, զի կարճեալ է օրս. ՚ի վաղորդեան՝ ՚ի յա-
„ րութեանն. ՚ի հասարակ աւուրս՝ յորժամ դատաս-
„ տանն դնի անստուեր լուսով երրորդութե̃ն. և սաստ-
„ կանայ տապն յանցաւորաց ‖ ։

Խորհրդաբար՝ այս երրեակ կարգացումնս Հայի 'ի խորհուրդ ամենասուրբ երրորդութեան , երեկոյեան կարգալն առ Հայր , ըստ որում մթին է մեզ Հասանել յըմբռնումն նորա . վաղորդայնն որ ունի յինքեան զմասն ստուերի՝ առ որդին , որ զգեցաւ զստուեր՝ այսինքն զմարդկայինս բնութիւն . Հասարակ աւուրն առ Հոգին , որ փայլատակմամբ էջ յառաքեալսն և լուսաւորեաց զնոսա ։

Այլաբանօրէն երեկոյեան կարգալն Հայի 'ի ժամանակ բնական օրինաց՝ յորում գրեթէ խաւար էր ընդ տիեզերս ։ Վաղորդայնն 'ի ժամանակ գրաւորական օրինաց՝ յորում գրական օրինօք փոքր մի լուսաւորեցաւ աշխարհ ։ Հասարակ աւուրն 'ի շնորհաց օրէնս՝ յորում իսպառ լուսաւորեցան մարդիկ և ջերմացան ։ Բարոյապէս , երեկոյեան կարգալն Հայի 'ի ժամանակն յայն՝ յորում խաւարեն միտք . վաղորդայնն 'ի ժամանակն յայն՝ յորում միտքն զերծեալ գտանի 'ի խաւարէ , այլ չև է լուսաւորեալ ամենևին . իսկ Հասարակ աւուրն 'ի ժամանակն յայն՝ յորում իսպառ լուսաւորեալ է միտքն , և բորբոքեալ կամքն . կամ դարձեալ մին 'ի վիճակ մաքրողական կենաց՝ որ է սկսանողաց . երկրորդն 'ի վիճակ լուսաւորչական կենաց՝ որ է զարգացելոց . իսկ երրորդն 'ի վիճակ միաւորչական կենաց՝ որ է կատարելոց ։

Վերածաբար , երեկոյն Հայի 'ի վիճակ աստի կենաց . վաղորդայն 'ի վիճակ ննջեցելոց՝ չև ևս Հասելոց յարքայութիւն , կամ ըստ վարդանայ՝ 'ի վիճակ յարութե և դատաստանի . Հասարակ աւուրն 'ի վիճակ արքայութեան՝ ուր կարգալն առ ա̃ծ է փառաւորել զնա , և օրհնել յաւիտեան ։ Օ այս ամենայն եղեալ մարգարէին յայտ առնէ այժմ՝ զայն ևս որում ակն ունէր 'ի կարգալն առ ա̃ծ և 'ի պատմելն առաջի նորա զոր կրէր . վասն որոյ ասէ ։

ԺԸ . Պատմեցի և ասացի . և լուիցէ ձայնի իմում . փրկեսցէ խաղաղութե̄ զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց , զի չարեօք Հասին 'ի վերայ իմ ։

Այս պատմելս և ասելս դաւթի յայլևայլ ինչ կարէ Հայիլ . բայց ըստ նկարագրին Հայի յայն՝ զոր ասաց

նա 'ի փախստեան իւրում. * Ահաւասիկ որդի իմ
,, որ ելեալ է յորովայնէ իմմէ՝ խնդրէ զանձն իմ, որ-
,, չափ ևս որդին Յեմինեայ. թո՛յլ տուք նմա, անիծցէ.
,, զի տէր ասաց նմա. Թերևս տեսցէ տէր զտառա-
,, պանս իմ, և հատուսցէ ինձ բարիս փոխանակ անի-
,, ծից նորա յաւուր յայսմիկ‖. (Բ. Թագ. ժզ. 10=12:) Զայսպիսիս ասելով դաւթի և զայնպիսիս խորհելով 'ի սրտի՝ տարածէր 'ի ներքուստ առաջի այ՝ զոր արտաքուստ կրէր, յուսալով թէ լուիցէ նմա. ուստի ասէ.

Պատմեցից և ասացից. և լուիցէ ձայնի իմում. Այսինքն. 'ի կարդալ իմում առ նա՝ պատմեցի նմա զկիրս իմ. և ասացի, այսպէս հաճեցար դու տէր և 'ի քոյ թոյլտուութենէդ եկն 'ի վերայ իմ այս ամենայն. Ոչ գործուցեալ զդէմս բանին՝ յաւելու ասել. այլ ակն ունիմ ևս թէ լուիցէ ինձ. Իսկ թէ զինչ էր այս լսելն՝ յայտ առնէ ասելով.

Փրկեսցէ խաղաղութեամբ զանձն իմ 'ի մերձաւորաց իմոց, զի չարեօք հասէին 'ի վերայ իմ. Ուր խաղաղութեամբ ասելով՝ երկու ինչ տայ իմանալ. մի՝ թէ առանց ծանր աշխատութե, և առանց կատարածի իւրոցն, ինքն 'ի տան կալով, փրկեսցէ զնա այծ. (որպէս յայտ է Բ. Թագ. ժը. 3=16:) Երկրորդ՝ թէ փրկելով ժամանեցուսցէ զնա 'ի խաղաղութիւն, և 'ի նոյն հաստատեսցէ, ևս և խաղաղացուսցէ զերկիրն. (որպէս յայտ է Բ. Թագ. ժթ. 22. և այլն:)

Սոյնպէս և բառիւդ 'ի մերձաւորաց՝ երկու ինչ մարթ է իմանալ. մի՝ զմերձաւոր բարեկամս՝ որք յարեան 'ի վերայ նորա, որպէս թէ ասէր. փրկեսցէ զիս 'ի ձեռաց նոցա, որք բարեկամք էին, և այժմ կարեօք հասեն 'ի վերայ իմ. Երկրորդ՝ զմերձեցող թշնամիս. որպէս թէ եղեալ էր. փրկեսցէ զիս 'ի թշնամեաց իմոց՝ որք մերձեալ են կորուսանել զիս. Այս երկրորդ ասացուած համաձայն ելանէ այլոց թարգմանութեանց. ըստ որոց ծործորեցին ('ի մեկն. մատ. գլ. ժբ.) զայս բան ընթեռնու առանց դերանուանս իմոց. յասելն * դաւիթ աղօթէր... փրկեա զանձն իմ 'ի մերձաւորաց‖. բայց առաջին մեկնութիւնն երևի ընտիր և ստուգագոյն.

Հանգոյն սոցին և բառդ չարեօք՝ ըստ կրկին մտաց կարէ իմացեալ լինել. մի՝ ներգործաբար՝ որպէս թէ ասէր. տագնապաւ, կամ անհնարին կատաղութեամբ (կամ խըշմով) հասին 'ի վերայ իմ. և մի ևս՝ կրաւորաբար, որպէս թէ ասէր. 'ի կարիս վշտաց իմոց հասին 'ի վերայ իմ. կամ յորժամ 'ի կարիս կամ 'ի կարօտութեան տաժանելի՝ հասին 'ի վերայ իմ. և վտանգեցին զիս ։

Զայսօրինակ հասին 'ի վերայ անդրէի զօրավարի սպանիացւոյ մերձաւորք նորա. զի մինչդեռ տագնապէր նա 'ի կարիս այսինքն 'ի վիշտս հոգեվարութեան՝ մերձաւորք նորա կամ մերձակայ ծառայք նորա հատին ըզմատն նորա՝ զի առնուցուն զմատանին որ 'ի մատին. որով և յաւելին զկարիս 'ի վերայ կարեաց նորա ։ Սարդան կարեօք իմանայ զկիրս մարմնոյ՝ զցանկութիւն, զքաղց, զքուն, ևն. սոքիմբք ասէ հասանեն դեք 'ի վերայ մեր ։ Սոյնպէս և հրեշտակք ասէ կարեօք հասին, իբր զի թողեալ զպէտս կարեաց՝ զքուն և զկերակուր՝ գիշերային հասին 'ի վերայ տեառն մերոյ ։

Այս կարէ հայիլ և յայնոսիկ՝ որք հասեալ 'ի վերայ տկարի՝ տագնապէին զնա. և նա թէպէտ ապաւինելով յա՛ծ՝ մնայ յապահովի, բայց միանգամայն ևս տագնապի, և ըստ կարեաց բնութե՛ սարսի և դողայ ։ Եւ 'ի ծաղր առնել զնա ամպարշտաց՝ առաւել ևս տանջի՝ մինչև ապրեցուցէ զնա ձեռն տեառն ։ Հասին երբեմն շունք 'ի վերայ նապաստակի միոյ 'ի դաշտի, ուր էր սուրբն անսելմոս. յապաւինիլ 'ի նա նապաստակին՝ կացին շունք զնովաւ, և մանչէին ։ Ի ծիծաղիլ տեսողացն՝ ասաց սուրբն. դուք արդարև ծիծաղիք, բայց սա ոչ ծիծաղի ։ Եւ 'ի սարսիլ նապաստակին՝ հալածեաց սուրբն զշունսն, և ազատեաց զնա. և ասէ ցտեսօղսն. սա անբանութեամբ իւրով խրատեաց զմեզ. զի որպէս ինքն անբան գոլով 'ի բանաւորս ապաւինեցաւ, սոյնպէս և մեք բանաւոր գոլով՝ ապաւինեսցուք յա՛ծ 'ի հասանել թշնամեաց և փորձանաց 'ի վերայ մեր, և նա ապրեցուսցէ զմեզ ։

Այս հնգետասաներորդ համար՝ ամենևին այլազգ և այլով շարադրութեամբ դնի 'ի ժամագիրս մեր յերեկոյեան ժամուն. զի գրի այսպէս ։ [illegible] և [illegible]

ՈՒՆԷԻ ԿԵՆԱՐԱՐԷՆ. ՈՐ ՓՐԿԷ ԶԾԱՌԱՅՍ ԻՒՐ և ԿԵՑՈՒՑԱՆԷ։

Որոց միտ բանին է այս. 'ի նեղութեան իմում, կամ յո՛ և իցէ դիպուածս սպասէի այցելութեանն այ, և հպատակէի հաճութեան կամաց նորա, և 'ի սաստկանալ վշտացս ոչ յուսահատէի, այլ ակնունէի նմա. քանզի նա է կենարար ամենայնի՝ այսինքն տուօղ և պահօղ կենաց յամենայնի. և գիտեմ զի որք միանգամ հաւատարմութբ ծառայեն նմա, և պաշտեն զնա, և զհաճոյս նորա առնեն, փրկէ զնոսա յո՛ և իցէ վտանգէ, և կեցուցանէ 'ի մահուանէ հոգւոյ, երբեմն ևս 'ի մահուանէ մարմնոյ։

Բայց գիտելի է՝ զի այս բան ոչ է առանձին տուն սաղմոսի, զի ոչ գտանի 'ի սաղմոսս, այլ հաւաքումն բանից ինչ յայլ և այլ սաղմոսաց, իբր մաղթանք, որպիսի է և այն որ 'ի խաղաղականն դնի. * տէր մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն. տէր բարերար աղաչեմ զքեզ օգնական իմ լեր տէր մի՛ անարգեր զիս, և մի՛ թողուր զիս աստուած փրկիչ իմ ‖. ըստ այսմ դնի և աստ այս բան. ՍՊԱՍԷԻ ԱՅ ԻՄՈՅ. ևն։ Իսկ զի այս սպասելս կամ այս ակնկալութիւն, և խնդրուած մարգարէին հայեր յայն՝ զի ած պաշտպանեսցէ զինքն՝ նուաճելով զթշնամիս իւր, 'ի սոյն սակս յարէ զկնի և ասէ։

ԺԹ. ԼՈՒԻՑԷ ԱԾ՝ և ԽՈՆԱՐՀ ԱՐԱՍՑԷ ԶՆՈՍԱ. ՈՐ ՅԱՌԱՋՆ Է ՔԱՆ ԶՅԱՒԻՏԵԱՆՍ։

Զլսելն եդ 'ի վերոյ՝ հայելով յանձն իւր, իսկ աստ դնէ՝ հայելով 'ի թշնամիս, յասելն.

ԼՈՒԻՑԷ ԱԾ և ԽՈՆԱՐՀ ԱՐԱՍՑԷ ԶՆՈՍԱ։ Այսինքն լուիցէ ած զբանս ամբարտաւանութեան թշնամեաց իմոց, և խոնարհեցուսցէ զնոսա։ Որպէս և որդին այ լսելով զհայհոյանս ամբարտաւան հրէից՝ 'ի լրանալ ժամանակի խոնարհ արար զնոսա, զրկելով 'ի փառաց, 'ի քահանայութենէ, 'ի տաճարէ, և յայլ ո՛ և իցէ իշխանութենէ ‖։

Արժ է ևս զլսելն 'ի դէմս դաւթի վերածել, որպէս թէ եդեալ էր. լուիցէ ինձ ած որ յայտնեցի նմա թէ 'ի զուր տարապարտուց հալածիմ. և լսելով՝ նա ինքն նուաճեսցէ զթշնամիս իմ, որք հպարտութեամբ յարուցեալ են 'ի վերայ իմ ։ Եւ զի ցուցէ թէ չէ ինչ դժուարին ա̅յ զայս առնել, և ոչ իսկ ժամանակի կարօտ 'ի գործել՝ յարէ զկնի և ասէ ։

Որ յառաջն է քան զյաւիտեանս ։ Կամի ասել. նա՛ առ որ ես ապաւինեցայ, և յոր ակնունիմ թէ խոնարհեցուսցէ զթշնամիս իմ, ոչ է առժամանակեայ ոք, որպէս են մ̅ծքն հեթանոսաց, այլ յառաջ քան զյաւիտեանս՝ այսինքն թէ 'ի յաւիտենից է, և յառաջ քան զառնել զյաւիտեանս զայս՝ այսինքն զաշխարհս. և կայ յաւիտեան անփոփոխ 'ի բարութեան իւրում. և որ ինչ արդարութի̅ է՝ զայն առնէ. ուստի ակնունիմ թէ և ինձ արասցէ իրաւունս իւրով արդարութի̅ ընդդէմ թշնամեաց իմոց, մանաւանդ ընդդէմ այնոցիկ, որք առաւելեալ են 'ի չարիս, և անպատուհաս կան 'ի նոսին. զորոց երկար խօսի 'ի յաջորդ համարն մինչ 'ի վերջն. և նախ ասէ ։

ԺԷ. Զի ոչ գոյր նոցա փոխանակ. և ոչ երկեան յա̅յ ։

Բառդ զի՝ շաղկապէ զայս բան ոչ միայն ընդ նախընթացին, այլ և ընդ յաջորդին. ընդ նախընթացին շաղկապելով դնի 'ի տեղի բառիս վասն զի, որպէս թէ եղեալ էր. խոնարհեցուսցէ զնոսա. քանզի ոչ գոյր նոցա փոխանակ և ոչ երկեան. ևն ։ Իսկ ընդ յաջորդին շաղկապելով դնի 'ի տեղի բառիս որովհետև. որպէս թէ եղեալ էր. որովհետև ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ երկեան յա̅յ, վասն այսորիկ ձգեաց ա̅ծ զձեռն իւր ևն ։ Եւ այս առաւել ևս համաձայն երևի մտաց բանին՝ ըստ որոյ և ասէ ։

Զի ոչ գոյր նոցա փոխանակ, և ոչ երկեան յա̅յ ։ Բառս փոխանակ՝ երկրակի կարէ նշանակել աստ. մի՝ ճարտասանօրէն ըստ նշանակութե̅ բառիս հաւասար կամ պատասխանող. և ըստ այսմ կամի ասել. ոչ գոյր հաւասար չարութե̅ թշնամեաց. կամ ոչ գտանիւր այնպիսի չար ինչ, որ փոխանակէր կամ լնոյր զտեղի չարութե̅ նոցա. կամ թէ ոչ գոյր այնպիսի չար՝ որ փոխանակիցի ընդ նոսա. որ է ասել. ամենևին չարացան և ոչ երկեան յա̅յ 'ի գործել զչար ։ Կամ թէ ոչ գոյր ընդդէմ նոցա հաւասար ոք 'ի նուաճել զնոսա, և դարձուցանել 'ի չարն 'ի բարին. վասն որոյ և ոչ երկեան նոքա յա̃յ, որով և առաւել ևս համարձակեցան 'ի չարիս:

Երկրորդ ըստ նշանակութեան բառիս փոխանակութիւն, կամ փոխարինութիւն, որ է փոխանակ հատուցումն, և ըստ այսմ կամի ասել. զոր միանգամ գործէին թշնամիք իմ, ոչ գոյր նոցա նոյնժամայն փոխարէն հատուցումն պատժոյ, վասն որոյ և ոչ երկնչէին յա̃յ գործել զայնպիսիս:

Երրորդ ըստ նշանակութն̃ բառիս փոփոխութիւն՝ և ըստ այսմ կամի ասել. ոչ գոյ նոցա փոխանակել զչարն ընդ բարւոյ՝ կամ ոչ գոյ նոցա փոփոխութիւն 'ի չարութէ 'ի բարութիւն, կամ 'ի յաջողութենէ չարի 'ի ձախորդութիւն. որ է ասել. ոչ փոփոխեցան նոքա 'ի չարեաց և ոչ զգաստացան. այլ յամառեալ մնացին 'ի նմին. և բնաւ ոչ երկեան յաստուծոյ. յոր միտ սիւմաքոս թարգմանէ *ոչ փոխեցին զբարս իւրեանց||. վասն որոյ և ա̃ծ խորտակեաց զնոսա. իսկ թէ զինչ, յայտ առնէ ասելով:

ԺԸ. Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա:

ԺԹ. Բաժանեցան 'ի սրտմտութէ երեսաց նորա. և եհաս 'ի սիրտս նոցա:

Ո՛ր գիրս ուր ուրեք ասի զա̃յ ձգել զձեռն իւր, 'ի մէջ բերել սաստկութիւն ինչ՝ կամ մեծութիւն 'ի գործս՝ մանաւանդ 'ի պատուհասելն բարկութ̃. ըստ այնմ. *Ձգեալ զձեռն իմ հարից զեգիպտոս ամենայն սքանչելեօք իմովք||. (Ելից. Գ. 20.) Եւ թէ *Ձգեցից զձեռն իմ յեգիպտոս||. եւն. (Ելից. Է. 5.) սոյնպէս և յայլ բազում տեղիս. որով նշանակի բարկութ̃ հարկանելն ա̃յ. ըստ այսմ գնի և աստ յասելն:

Ձգեաց զձեռն իւր 'ի հատուցանել նոցա. և նոքա պղծեցին զօրէնս նորա: Այսինքն թէ բարկութեամբ յարձակեցաւ ա̃ծ 'ի վերայ թշնամեացն դաւթի հատուցանել նմ̃ ըստ գործոց նոցին. որովհետև պղծեցին նոքա զօրէնս ա̃յ, (որպէս տեսանի Բ. Թագ. ԺԶ. 21: ԺԵ. 2. եւն.) Ըստ այսմ մեկնութն̃ բառդ եւ՝ գնի փոխանակ շաղկապին՝ զի, որպէս թէ ասէր. կամեցաւ ա̃ծ չարաչար պատուհասել զնոսա, զի և նոքա չարաչար եղծին զօրէնս նորա ։

Ձեռամբ մարթ է իմանալ աստ այլաբանօրէն զորդին այ՟՝ զոր առաքեաց հայր 'ի փրկել զմարդիկ՝ հատուցանելով թշնամեաց նոցա, այսինքն դիւաց՝ զհատուցումն նոցին բարկութ՟բ ։ Այլ թէ զիարդ եղև հատուցումն այն, և պատուհաս 'ի բարկութ՟է անտի այ՟՝ յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով ։

ժթ. Բաժանեցան 'ի սրտմտութենէ երեսաց նորա ։ Այս յայտնի տեսանի 'ի պատերազմին յայն՝ զոր արարին աբեսաղոմեանք ընդդէմ դաւթի. զի բաժանեցան յիմարաբար, և կորեան թշուառաբար. և այս յայտ է թէ եղև 'ի սրտմտութ՟էն այ՟ ։ Բայց կամելով մարգարէին զառաւելն ևս ցուցանել, յաւելու ասել ։

Եւ եհաս 'ի սիրտս նոցա ։ Այսինքն սրտմտութ՟ին այ՟ եհաս 'ի սիրտս նոցա. և այս իմացեալ լինի երեքկին. մի՝ ըստ փոխաբերութեան, ըստ որում սրտմտութ՟ին աստուծոյ լքոյց զսիրտս նոցա և տկարացոյց զզօրութ՟ի սրտից նոցա. որով և մատնեցան նոքա 'ի կորուստ ։ Երկրորդ՝ ըստ իրին, որով հարան նոքա 'ի սիրտս իւրեանց 'ի նետից և 'ի նիզակաց զօրացն դաւթի. որպէս յատկաբար եղև 'ի սիրտ գլխաւորի նոցա, այսինքն աբեսաղոմայ. (բ. թագ. ժը. 14.) Երրորդ՝ ըստ բարոյական մտաց՝ ըստ որում 'ի հասանել 'ի վերայ նոցա բարկութեանն այ՟՝ եհաս 'ի սիրտս ոմանց դառնութ՟ի, և ոմանց ապաշաւ, թէ զիարդ ձեռն արկաք յայսպիսի գործս ։

Այս ամենայն յայտնի գուշակութ՟իք են զթշնամեացն ք՟ի, զորս կարէ տեսանել ընթերցօղն յաւետարանի, և 'ի պատմութեան հարուածոցն երուսաղէմի ։ Զայսոսիկ եդեալ մարգարէին՝ խօսի ապա մասնաւորապէս և զայնցանէ՝ որք 'ի մէջ թշնամեաց իւրոց գոլով՝ նենգութ՟բ վարէին ընդ ինքեան և ընդ այլս, և յառաջ բերելով զհանգամանս բանից նոցա ասէ ։

ի. Կակղեալ էին բանք նոցա քան զձէթ, և ինքեանք որպէս սլաք ։

Այս բան ուղղակի հայի յաբեսաղոմ և յաքիտոփէլ. զի երկոքեան ևս 'ի սկզբան կակղութ՟բ խօսէին, մանաւանդ թէ քաղցրութ̃, առ 'ի յանկուցանել յինքեանս զսիրտս այլոց, ևս և առ 'ի խաբել զդաւիթ. (տե՛ս բ̃. թագ. ժե̃. 2 = 13։) Վայի և յորդին կորստեան յուդայ, որոյ բանք ընծայեալք առ քս̃ կակուղ էին 'ի համբուրելն և յասելն * ո՛ղջ եր վարդապետ ‖։ Վայի և առ նոսա, զորս առաքեցին փարիսեցիք առ քրիստոս ասելով * վա՛րդապետ գիտեմք՝ զի ճշմարիտ ես ‖. և այլն. (մատ. իբ̃. 16։) Վայն և յայնոսիկ՝ զորոց ասէ առաքեալն՝ թէ * քաղցրաբանութեամբ և օրհնութեամբ պատրեն զսիրտս անմեղաց ‖. (հռովմ. ժզ̃. 18.) քանզի քաղցրութիւնք բանից և ողոքանք կարի իմն ազդեն 'ի մարդն. ըստ որոյ ասէ ծործորեցին. ('ի մեկն. մատ. գլ. ժզ̃.) * քան զբռնութիւն ողոքանքն ,, զօրագոյնք իցեն ‖։ Ի սոսա և 'ի սոցին նմանս ակնարկելով ասէ։

Կակուղ էին բանք նոցա քան զձէթ. և նոքեանք որպէս սլաք։

Այսինքն այն բանք՝ զորս խօսէին բերանով իւրեանց, կակուղ երևէին և քաղցր իբրև զձէթ, զի որպէս ձէթն վասն կակղութեան և թափանցողութե̃ն առանց ցաւեցուցանելոյ ընդմտանէ 'ի ծակտիս, սոյնպէս և բանք նոցա ընդմտանէին յականջս լսողաց և թափանցէին 'ի սիրտս նոցա։ Բայց նոքեանք, այսինքն նոյն բանք նոցա՝ որք այսպիսի համարեալ լինէին՝ ո՛չ էին բանք, այլ գրեթէ սլաք կամ նետք սրեալք. զի խոցէին չարաչար զսիրտս լսողաց և որսային։

Այսպիսի են այն ամենայն շողոքորթութիւնք մարդելուղաց, և այն ամենայն քաղցրաբանութիւնք մատնիչաց, ևս և այն ամենայն բամբասանք, զորս բարեպաշտ կարծեցեալ անձինք՝ իբր ցաւակցելով կամ իբր օրինաց վրէժխնդիր լինելով յառաջ բերեն. այլ բանք նոցա քան զսլաք զօրագոյնս խոցեն զլսելիս, և սպանանեն զանձն բամբասեցելոյն ըստ համբաւոյն։ Սոյնպիսի են և մեղկութիւնք բանից աղանդաւորացն, մինչև զիմաստունս ևս որսալ. զի իբրև զխմոր արկանեն զանոյշ զրոյցս 'ի սիրտս լսողաց զաղանդիս իւրեանց, և խմորեն զհոգիս նոցա. վասն որոյ գրէ ծործորեցին 'ի վերոյիշեալ տեղին. * քանզի, ասէ, ա֊
,, ղանդք օտարոտիք յոյժ ձգողական զօրութիւն ու֊
,, նին. մինչ զի զյոյժ իմաստունսն, թո՛ղ թէ զպար֊

„ զամբոխն պատրել կարէ, և առ ինքն յօդել իբր „ զխմոր ‖։ Արդ տաղտկացեալ մարգարէին 'ի խօսելոյ զայսպիսեաց՝ առաջի առնէ յիւրմէ զբանս անոյշս և բարիս առ 'ի քաջալերս տալ անձին իւրոյ, և այնոցիկ՝ որք լսեն նմա՝ և ասէ ։

իա. Ընկեա 'ի տէր զհոգս քո, և նա կերակրեսցէ զքեզ. և մի տացէ յաւիտեան սասանութիւն արդարոյ ։

Այս այն է՝ զոր առեալ պետրոսի առաքելոյն առաջի մատուցանէ հաւատացելոց՝ ասելով. * Զամենայն „ հոգս ձեր ընկեցէք 'ի նա, զի նա է որ հոգայ վասն „ ձեր ‖. (ա. պետ. ե. 7.) ուր փոխանակ ասելոյ կերակրէ, դնէ հոգայ. այլ որպէս ասէ անդ սարգիս շնորհալի, հոգալն ևս յայն վերածի. * հոգալն (ասէ) „ փոխանակ ողորմելոյ և տալոյ եդեալ է ‖։ Զսոյն եդ առաջի և տէրն մեր յաւետն. * Մի հոգայք վասն „ ոգւոց ձերոց զինչ ուտիցէք, կամ զինչ ըմպիցէք. և „ մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ագանիցիք. ո՞չ „ ապաքէն ոգի առաւել է քան զկերակուր, և մարմին „ քան զհանդերձ ։ Հայեցարո՛ւք 'ի թռչունս երկնից՝ „ զի ո՛չ վարեն, և ո՛չ հնձեն, և ո՛չ ժողովեն 'ի շտե„ մարանս, և հայրն ձեր երկնաւոր կերակրէ զնոսա. „ ո՞չ ապաքէն դուք առաւել էք քան զնոսա ‖. (մատ. զ. 25. 26։ և ղուկ. ժբ. 22։) ըստ բանիցս ըստ այսոցիկ և մարգարէս ասէ ։

Ընկեա 'ի տէր զհոգս քո՝ և նա կերակրեսցէ զքեզ։ Հոգս ասելով իմանայ նախ՝ զայն հոգայողութիւն, որով տատանի մարդ 'ի նեղութեան. կամ որով 'ի պաշարելն 'ի ներքին վշտաց և յարտաքին հալածանաց և 'ի թշնամեաց՝ վարանի թէ զինչ պարտ է առնել. և յոչ գտանելն զելս, գրեթէ հեղձնու 'ի խորհուրդս մտաց. և ընկղմի 'ի պղտորմունս կամաց ։

Երկրորդ՝ իմանայ զաւելորդ հոգացողութիւն զիրաց ապագայից, ևս և զներկայից և զանցելոց. զապագայից՝ թէ զինչ արասցէ, զինչ խօսեսցի, զիարդ լինիցի, զիարդ դիպեսցի, և այլն. զներկայից՝ թէ զինչ է՝ զոր ունի, և զոր առնէ, կամ զոր կրէ, ևն. զանցելոց՝ թէ ընդէ՞ր եղև, զի՞ եղև, և այլն ։

Երրորդ՝ իմանայ զհոգս խնամելոյ զանձն և զտուն իւր, խորհելով՝ թէ արդեօք գտանի՞ զայս ինչ, լինիցի արդեօք այն ինչ, որչափ արդեօք, որպէս արդեօք, և այլն։

Զայս ամենայն հոգս առ՝ ընկեա՛ 'ի Տէր. այսինքն յանձն արա նմա, որ է տէր քո. և նա կերակրէ զքեզ. այսինքն խնամէ զքեզ, և զամենայն պիտոյս քոյ, առնել ևս զկերակուր քո. զի թէ կարաց նա ստեղծել զքեզ, կարէ ևս խնամել զքեզ՝ ոչ ըստ քո թիւր հաճութեան կամացդ՝ և ոչ ըստ քո մոլար ձանձրական մտացդ, այլ ըստ իւրում ամենաբարի կամաց և ամենիմաստ խորհրդոց. * զի որ զկարիք բնութեան արար (առ ծոր-
,, ծորեցին 'ի մեղն. մատ. գլ. Ղ.) նաև զպակասու-
,, թիւնն լնու, ըստ այնմ. ընկեա՛ 'ի Տէր զհոգս քո,
,, և նա կերակրէ զքեզ||։

Այս բանիւ ոչ կամի ցուցանել մարգարէն՝ թէ չէ պարտ գործել ինչ 'ի մէնջ, կամ կալ միայն դատարկ, ևն. այլ թէ պարտ է զաւելորդութիւն հոգոց և զխռովեցուցիչ զբաղմունս մտաց 'ի բաց թողուլ, և զամենայն ինչ զմեր յանձնել նմա։

Աստանօր արժան է քննել՝ զի ոչ առէ մարգարէն, յանձնեա՛ 'ի Տէր զհոգս քո, այլ ընկեա՛։ Եւ այս ըստ երկուց. մի՝ 'ի կողմանէ ծանրութեան հոգոյն, որպէս թէ ասէր. ծանր են հոգք՝ ընկեա՛ զայն 'ի քէն. որպէս հիւանդն ընկենու զհոգ իւր 'ի բժիշկն. նաւորդն 'ի նաւապետն, զօրականն 'ի զօրագլուխն. ևն։ Իսկ եթէ ասիցես ուր կամ յո՛ ընկեցից, պատասխանէ. ընկեա՛ 'ի Տէր։ Երկրորդ՝ 'ի կողմանէ մեծութեան գթոյն նորա, վասն զի այնչափ մեծ է գթութիւն նորա, մինչ զի իբր յովկիանոսի ընկղմին 'ի նմին ամենայն հոգք մեր, և մեք միայն անհոգք 'ի հոգւոց. զի յընկենուլ մեր 'ի նա զհոգս մեր, այնուհետև նա ինքն հոգայ զմէնջ, և լնու զամենայն զպէտս մեր։

Իւր որպէս տեսանի 'ի նախադրելոցդ՝ մարգարէն կերակրէ ասելով տալ իմանալ զայն ամենայն խնամս նորա, որով պահէ նա զկեանս մեր 'ի խաղաղութեան ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, օրհնելով զամենայն զգործս մեր, և յաջողելով 'ի բարիս. և զի առ պահպանութիւն կենաց առաջինն և զլխաւորն է կերակուրն՝ եթէ ըստ հոգւոյ և եթէ ըստ մարմնոյ, զայն 'ի մէջ բերելով՝

զայս ես լսելեայն առաջի մատուցանէ. և սովաւ կամի ցուցանել՝ թէ ա̃ծ զամենեսին խնամէ, մանաւանդ զայնոսիկ՝ որք 'ի նա յուսալով՝ նմա յանձնեն զամենայն հոգս իւրեանց, ես և զանձինս բոլոր։ Զայսպիսիս ոչ միայն կերակրէ ա̃ծ, և զպիտոյսն խնամէ, այլ և յամենայն չարէ պահէ և պաշտպանէ. սմին իրի յարէ զկնի մարգարէն և ասէ։

Եւ ոչ տայ յաւիտեան սասանումն արդարոյ։ Կամի ասել. թէպէտև թոյլ տայ ա̃ծ արդարոյ կրել երբեմն զնեղութիւնս ազգի ազգի իրօք, աղքատութ̃, հիւանդութեամբ, հալածանօք, նախատանօք, զրկողութ̃, ես և որ ծանրն է՝ ներքին փորձութեամբք, և տխրական տուայտութ̃, բայց ոչ տայ սասանումն յաւիտեան։ Իսկ բառդ յաւիտեան՝ երրակի կարէ իմացեալ լինել. մի՝ ըստ նշանակութ̃ն բառիս միշտ կամ երկար. որպէս թէ եդեալ էր. ոչ միշտ այնպէս թողու՝ մինչև վտանգիլ նմա և սասանիլ, և կործանիլ։

Երկրորդ՝ ըստ նշանակութ̃ն բառիս ոչ երբէք. որպէս թէ ասէր. ա̃ծ 'ի կողմանէ իւրմէ ոչ երբէք թողու զարդարն սասանիլ յարդարութ̃է իւրմէ, այլ միայն 'ի թողուլ արդարոյն զա̃ծ՝ ա̃ծ ևս ըստ արդարութ̃ն թողու զնա. զայսմանէ տես և 'ի բանն յայն, որ ասի ('ի սաղ. ճ̃ի. 3.) * մի տար 'ի սասանութիւն զոտն քո, և մի ննջեսցէ պահապան քո ‖։

Երրորդ՝ ըստ նշանակութ̃ն յաւիտենական տևողութեան. որպէս թէ եդեալ էր. սասանութիւն արդարոյ կամ նեղութիւն նորա ժամանակաւոր է և ոչ յաւիտենական. զի յաւիտենական նեղութ̃ին ոչ է վասն արդարոց, այլ վասն ամբարշտաց. զորոց խօսի 'ի յաջորդ համարն ասելով։

իե̃. Դու ա̃ծ իջուսցես զնոսա 'ի գուբ ապականութեան. արք արիւնահեղք և նենգաւորք մի հասարակեսցեն զաւուրս իւրեանց. այլ ես 'ի քեզ տէր յուսացայ։

Այս բանք ուղղակի հայեին յայնոսիկ՝ զորոց խօսեցաւ 'ի վերոյ. 'ի մէջ որոց բազումք էին արք արիւնահեղք և նենգաւորք։ Բայց հային և յամենայն ամբարիշտս ըստ իւրաքանչիւր կարգի նոցին. զորոց 'ի հասարակի խօսելով ասէ։

Դու ած իջուսցես զնոսա ՚ի գուբ ապականութեան. Գուբ ապականութեան իմացեալ լինի աստ նախ գերեզմանն՝ յորում ապականի մարմինն խոպան. Երկրորդ՝ սանդարամետն անդնդոց, յորում է ապականութիւն յաւիտենական. Երրորդ՝ փոխաբերութեամբ՝ խորութիւն կամ յաճախութիւն թշուառութեան աստի կենաց, յորում է ապականութիւն խաղաղութեան հոգւոյ և մարմնոյ. Այսպիսի գուբ ասէ իջուսցես զնոսա. ոչ զի ած իբր պատճառ կորստեան նոցա իջուցանէ զնոսա անդ, այլ զի իբրև վրէժխնդիր ամբարշտութեան նոցա՝ որովք անձամբ անձին լինին պատճառ կորստեան և իջանելոյ ՚ի գուբ ապականութեան՝ մատնէ զնոսա ՚ի նոյն, մանաւանդ զայնոսիկ որք այլոց ևս պատճառ լինին այսպիսի կորուստեան, և կամ ոչ կարկառեն ձեռն առ փրկանգեալսն. Առ որ հայելով Նարեկացւոյն՝ տխրագին խօսի (՚ի բանն ԺԹ.) ասելով. * և զի ոչ ձեռն կարկառեցի առ „ կիրս փրկանգաւորին՝ այց առնել նմին, ՚ի դէպ իսկ „ ըստ գծագրութեան այսր օրինակի՝ ապականութեան գբոյ „ նուիրեալ մատնիմ ‖.

Իսկ հայելով ՚ի գուբ գերեզմանի թէպէտև հասարակաց է իջանելն անդ, բայց ամբարշտացն լինի չարաչար մահուամբ. զոր և յայտ առնէ յաջորդ բանիւն ասելով.

Արք արիւնահեղք եւ նենգաւորք մի՛ հասարակեսցեն զաւուրս իւրեանց. Մէ հասարակել զաւուրս երկուքումբք կարէ լինել. մի՝ յորժամ մարդն մինչև իցէ հասեալ ՚ի հասարակ սահման կենաց, այսինքն ՚ի կէս աւուրց կենաց իւրոց՝ մեռանի. յոր միտս ասէ մարգարէն (՚ի սաղ. ՃԲ. 25.) * Մի՛ հաներ զիս ՚ի կէս աւուրց իմոց ‖. Երկրորդ՝ յորժամ մարդն չև ևս հասեալ ՚ի կէս այնր՝ որում ցանկայ՝ հասանէ ՚ի մահ. որպէս ագահն չև հասեալ ՚ի կէս բաղձանաց՝ անկանի ՚ի մահիճս և մեռանի. Որպէս և ՚ի թուել պատուասիրի զամիսս՝ ՚ի հասանել յայս կամ յայն պատիւ, հասանէ նմա այնպիսի ամիս՝ որ ոչ հասուցանէ զնա յամիսն պատուոյ. յոր միտս ասի ՚ի գիրս Յոբայ. (իա. 21.) * Թիւ ամսոց նորա բաժանեցի ‖.

Ըստ այսոցիկ նշանակութեանցս իմացեալ լինի ասելն.

* մի՛ հատարակեսցեն զաւուրս իւրեանց ‖ : Եւ զայս ոչ է պարտ առնուլ ճշդիւ ըստ կանոնի չափաբերական արհեստի. որպէս թէ յորժամ մերձեալ լինի կէս աւուրց՝ անվրէպ յայն կէտ հասանէ մահ. այլ պարտ է առնուլ փոխանակ այնպիսի ասացուածոյ՝ որ ցուցանէ զարագ հասանիլ մահու, կամ զոչ երկարել մարդոյ 'ի կեանս :

Եւ զայս գնէ պատահել նոցա՝ որք են արք արիւնահեղք եւ նենգաւորք. որոյ պատճառն է այս՝ զի արիւնահեղք որովհետեւ հասարակօրէն 'ի հասակի երիտասարդութեան զհետ լինին այսպիսի գործոյ, յաւուր միում անկանին եւ ինքեանք 'ի ձեռս այլոյ, մանաւանդ 'ի ձեռս դատաւորի, եւ կամ 'ի ձեռս ա̃յ կենդանւոյ, որ վրէժխնդիրն է այսպիսեաց, զի ինքն ասաց. * որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա „ հեղցի արիւն նորա ‖. (ծնն. թ. 6.) Յոր միտս ասէ տէրն մեր. * ամենեքեան որ սուր առնուցուն՝ սրով „ անկանիցին ‖. (մատ. իզ. 52.) որպէս եղեւ աբեսաղոմայ եւ որոց ընդ նմա : Նոյնպէս պարտ է իմանալ եւ զնենգաւորաց. զի 'ի նենգել նոցա զայլս չարաչար, եւ 'ի լարել վասն այլոց զորոգայթ, յաւուր միում անկանին եւ ինքեանք եւ կորնչին, որպէս եղեւ աքիտոփելայ եւ այլոց բազմաց :

Եւ թէպէտ չէ յայտ՝ թէ երբ հասանէ մարդոյ մահ, բայց 'ի հասարակի խօսելով՝ վաղվաղէ առ ամպարիշտս. զի մահն հեծեալ է 'ի ձի. (որպէս գրի 'ի յայտ. Զ. 1.) որով ցուցանել կամի, թէ մահն ոչ գայ ոտիւք, այլ ձիով : Եթէ խայթոց մատուցես ձիոյ, առագէ յընթացս. ապա եթէ եւ մահու մատուցէ ոք զխայթոց՝ առագէ եւ նա. արդ ամպարիշտք անդադար խայթոց մատուցանեն մահու 'ի ձեռն մեղաց. զի * խայթոց մահու մեղք են ‖. (ա̃. կոր. ժե. 56.) Ապա եւ մահ նոցա առագէ հասանել առ նոսա, մինչեւ չկարել նոցա հասարակել զաւուրս իւրեանց :

Եւ թէպէտ այս այսպէս է, բայց ա̃ծ գոլով երկայնամիտ՝ բազում անգամ թոյլ տայ այսպիսեաց՝ կալ 'ի յաջողութեան, եւ մնալ յերկայն աւուրս, սպասելով դարձի նոցա եւ ապաշխարութեն. կամ դիտելով զայնպիսի ինչ՝ զոր ինքն գիտէ : Այլ ոչարի եւ կեցցեն նոքա՝ 'ի հասանել մահու՝ յոյժ նուաղ լինին աւուրք նոցա՝ համեմատութիւն յաւիտենական աւուրն. վասն որոյ և ոչ իսկ երկարութիւն կենաց առնին հասարակել զաւուրս իւրեանց՝ այլ առաւել ևս նուազեցուցանել. մինչզի թէև հարիւրեմեան ևս իցեն 'ի մեռանելն, եթէ 'ի մեղս մեռցին՝ անիծեալ համարին առաջի աստուծոյ, որպէս ընդ հակառակն արդարն եթէ կրտսեր ևս մեռցի, իբր հարիւրեմեան համարի առաջի աստուծոյ (Եսայ. կե. 20.) Յայտնիկ հայեցեալ մարգարէին, և տեսեալ թէ այսպիսի չարք վասն վայելելոյ զանցաւորս՝ զհետ լինին չարեաց, և 'ի յուսալ 'ի զօրութիւն իւրեանց՝ անյոյս կորնչին, 'ի սոցունց խրատի, և գլուխ իւր բոլոր յա̃ծ դնէ, և կնքէ զաղմոս զայս այնու հասարակական կնքով՝ զոր յամենայնի 'ի կիր առնու՝ յասելն.

Բայց ես 'ի քեզ տէր յուսացայ. Ար բառդ այս՝ վերածէ զայս բան յայն ամենայն՝ զոր եդ 'ի վերոյ. որպէս թէ ասէր. առ 'ի զերծանիլ յայնմ ամենայնէ՝ զոր ասացի, և առ 'ի հասանել այնմ ամենայնի՝ զոր խնդրեցի, գլուխ իմ 'ի քեզ եդի տէր. և ակն ունիմ ոչ միայն 'ի չարեաց անտի ազատիլ, այլ և մեծամեծ բարութեան անցուցեալ, ժամանել առ քեզ՝ և վայելել զքեզ յաւիտեան.

ԱԶԳ. ԳՐԱԴԱՐԱՆ